4/ 29

1p.

384.568

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

N 68

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՀԱՒԱՔԵԱԼ,
ՅԱՐԺԱՆԱՀԱՒԱՏ ՄԱՏԵՆԱԳՐԱՑ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ
ՏԵԱՌՆ ԻԳՆԱՏԻՈՍԻ Վ. ՓԱՓԱԶԵԱՆՑ
ՅԱՐՕՆՈՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ
Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

A/692



Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1848.

ՀԱՍՌ ԳԱ
ՀՆԵՑԻԿ ԽՎ Հ[illegible]
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

Гос. Библиотека
ՀՍԽՀ-ССР А.
им. А. Мясникяна

5745
38

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ԶՆԿԱՐԱԳԻՐ աստուածահրաշ անցից արիական նահատակութեան զինուորեալս Եկեղեցւոյ ածել 'ի հանդէս տեսութեան, պարծանք մեծ են և հաստատութիւն ճշմարտութեան հաւատոյս մերոյ, և յաւերժ մխիթարութիւն որոց բարեպաշտ աստուածասիրաց։ Զի 'ի նմա տեսանի նախ առաջին պարագլուխ նահատակաց հանդիսացեալ քահանայապետն խոստովանութեան մերոյ Յիսուս Քրիստոս, առաջնորդն, գաղափարն, հովիւն և վարդապետ․ որ իւրով նախաշաւիղ ընթացիւք անարատութեան վարուց և կենարար քարոզութեամբ, որպէս և մշտակիր կենօքն և փրկագործ չարչարանօք եղև կանոն և խրախոյս քաջալերութեան առ հասարակ հօտին իւրում ընտրելոյ։

Նոյն օրինակ վարուց ընթացից ներակրթեալ և աշակերտաց երկնաւոր վարդապետին յետ ընդունելութեան շնորհաց Հոգւոյն սրբոյ արիացան 'ի մարտս, զօրացան 'ի վաստակս քարոզութեան աւետարանին, աներկիւղ և անվեհեր ընծայեալ զանձինս 'ի գործ աստուածային պաշտաման շահելոյ զհոգիս, և ցուցանելոյ զշաւիղս փրկութեան 'ի ձեռն քրիստոսաւանդ կրօնիցն սրբոյ, և եղեն նուիրական պատարագք 'ի հոտ անուշից, 'ի կեանս իւրեանց անդուլ նահատակեալք քրտնաջան աշխատութեամբ, և 'ի մահուան կենդանացեալք անթառամ պսակօք՝ ստացան փառս անմահականս յօրինակ գործոց և նմանող լինելոյ բարենախանձ առաքինեաց ։

Նախանձաւոր գտան հետոց նոցա և առաքելաշնորհ դասք նախնի հայրապետաց, հովիւք և առաջնորդք կարգեալք քրիստոսական հօտին, և հոգեջան տքնութեամբ վաստակեալ 'ի խնամս անմոլար առաջնորդութեան հաւատացելոց՝ զօրացան 'ի մարտս դժնդակ հալածանաց. անբերելի տանջանօք կանգնեցին նշան յաղթութեան ընդդէմ հեթանոսաց, հերքեցին զդիւահնար հրապոյրս դիցապաշտ մոլորութեան, խլեցին զբոյս չարարմատ ուսմանց նոցա, արեամբ չափ նահատակեալ 'ի պաշտպանութիւն քրիստոսական կրօնից, կամաւոր յօժարութեամբ ընծայելով զանձինս 'ի հուր, 'ի սուր, 'ի բանտ և 'ի մահ, որով ամրացուցին զանշարժելի հիմունս դաւանութեան սուրբ եկեղեցւոյ ։

Նոցին արիական հանդիսից եղեն հետևող և խնամարկեալքն 'ի նոցունց՝ անհամար խումբք մարտիրոսաց, որք յերեսին նախնի դարս եկեղեցւոյ ըստ օրինակի հովուաց իւրեանց անձնանուէր պատարագօք հանդիսացան վկայք ճշմարտութեան կրօնիցս, և զորոց զյիշատակն յաւերժական օրհնութեամբ տօնէ եկեղեցի սուրբ ։

Զկնի երեցունց դարուց առաջնոց՝ յորս տագնապեցաւ եկեղեցի յերեսաց դառն հալածանաց, և յորս մեծապայծառ ցուցաւ արիական հանդիսի նահատակութեան սրբոց վկայից, իբրև կամք եղեն Աստուծոյ շնորհել զանդորրութիւն եկեղեցւոյ, քրիստոնէական կրօն ընկալաւ առ 'ի յԱստուծոյ թիկունս օգնականութեան՝ նուաճելով զսիրտս թագաւորաց և զմիտս անհրահանգ ժողովրդոց 'ի հնազանդութիւն հաւատոյն Քրիստոսի, որով ծաղկեցան տիեզերք ճշմարիտ աստուածպաշտութեամբ, և ընդ ամենայն երկիր ծաւալեալ լուսոյ կենարար աւետարանին՝ պայծառացան եկեղեցիք նորանոր կարգօք բարեզարդութեան, կանգնեցան երկնաբերձ տաճարք փոխանակ գետնափոր մատրանց. զարդարեցան պաշտամունք եկեղեցական հանդիսից առ 'ի յորդոր եռանդեան քրիստոսասէր հաւատացելոց, յորս այնպէս առաւելեալ զօրացաւ սէրն Քրիստոսի, մինչեւ նուիրել նմա ոչ միայն զինչս եւ զըստացուածս, այլ եւ զանձինս գլխովին. հրաժարեալք յաշխարհէ եւ մեկուսացեալք յանապատս առանձնութեան, կանգնելով մենաստանս արանց եւ կուսաստանս կանանց, մոռացեալ զաշխարհ եւ զվայելչութիւնս նորա, եւ դէտ ակն կալեալ անանց եւ անպատում բարեացն երկնայնոց՝ եղեն կենդանի օրինակք եւ յորդորք որոց միանգամ ցանկացեալ ընդ հետս նոցին ճանապարհորդել.

Օ հանդէս այսպիսւոյ նախանձելի բարեպաշտութէ հաւատացելոց տեսեալ բանտարկութիւն եւ մախացեալ ընդ յաջողութիւն պայծառութեան եկեղեցւոյ, ջանահնար եղեւ խափանել զայն 'ի ձեռն մոլորամիտ արքունեկաց իւրոց, խնդիրս երկբայութեան յուզեալ զմասանց ինչ հաւատոյ, կամելով խախտել զհիմունս դաւանութեան նորա. Սակայն արթնամիտ հսկողութիւն աստուածաշնորհ հովուաց 'ի խնամս հօտին Քրիստոսի, առաջնորդեալ յապենիազ շնորհաց Հոգւոյն սրբոյ, եւ նպաստաւորեալ 'ի ձեռնտուութենէ բարեպաշտ թագաւորաց, 'ի զանազան ժամանակս տիեզերական ժողովոց գումարմամբ հերքեաց զմոլար վարդապետութիւնս նոցա, եւ հաստատեաց զժողովուրդ տեառն յուղիղ դաւանութեան անմոլար հաւատոյ, զգուշացուցանելով զգառինս 'ի գիշատիչ գայլոց.

Խաղաղութիւն եկեղեցւոյ եւ միաբանական սէր համօրէն քրիստոնեադաւան ազգաց տեւեաց մինչեւ ցեօթներորդ դար, յորում ժամանակի 'ի զօրանալ Հագարացւոց վերստին մատնեցան հաւատացեալք 'ի բռնութիւն հեթանոսաց, եւ նորոգեցան կռիւք եւ անողոքելի հալածանք 'ի վերայ հաւատացելոց: Միանգամայն եմուտ և ուռճեալ հերձուած և բաժանումն 'ի մէջ արևելեան և արևմտեան եկեղեցեաց, զորոյ զօրաւոր հետևանսն յամենայն տեղիս կրեն ուղղափառ հաւատացեալք մինչև ցայսօր։

Յայնմ պահու և ցայսօր ժամանակի հերձուածոց և բռնութեան հեթանոսաց, ոչ պակասեցան 'ի շնորհացն Աստուծոյ անընդհատ մխիթարութիւնք հոգևոր յառաջադիմութեամբ եկեղեցւոյ 'ի քաջալերութիւն հօտին Քրիստոսի. զի յետ աւերելոյ անապատաբնակ նախնի Ճգնաւորաց Եգիպտոսի՝ փոխանակեցին մենաստանք զանազան կարգաց կրօնաւորաց, որք ընդ հոգևոր կենաց ծառայութեանն Աստուծոյ՝ խնամ կալան բանիւ և օրինակաւ վառել զհոգի բարեպաշտութեան 'ի սիրտս հաւատացելոց, միանգամայն ծաղկեցուցանել և զուսումն գիտութեանց, յոր սակս կանգնեցան դպրոցք և ուսումնարանք յամենայն քաղաքս 'ի պէտս հրահանգութեան մանկանց եկեղեցւոյ, և 'ի նոցանէ ծաղկեցան վարդապետք և քարոզիչք ականաւորք, զարդարեալք աստուածային գիտութեամբ, որք զօրացան մարտ դնել ընդդէմ մոլորութեանց 'ի պաշտպանութիւն ուղղափառ հաւատոյ։ Յայս հանդէս գիտնամարտութեան արիացան վարդապետք 'ի յետին դարս՝ յաւուրս մանաւանդ նորահնար հերձուածոյն Լուտերի և Կալվինոյ և այլոց անաստուած աղանդաւորաց, որք ոչ ինչ նուազ քան զհեթանոսս մարտեան ընդդէմ եկեղեցւոյ, սակայն յամենայնի գտան վատթարեալք 'ի զինուց անտի անշարժելի վիմին հաւատոյ, որում խոստացաւ փրկիչն անսասան պահպանութիւն 'ի դրանց դժոխոց։

Յայս ուրեմն յառաջելոյս է, զի բովանդակութիւն գործոյս ունի յինքեան զյիշատակութիւն ամենայն կարևորաց պատշաճելոց առ կրօնս աստուածպաշտութեան. և զի հիմնադիր, վարդապետ և հեղինակ հաւատոցս եղև Տէրն մեր Յիսուս Քրիստոս, արժան էր իբր նախաշաւիղ պատմութեանս եկեղեցւոյ՝ նախ առաջին կարգել զպատմութիւն վարուց և զվարդապետութիւն Քրիստոսի, ծաղկաքաղ ՚ի չորից աւետարանչացն առնելով։ Յետ այնորիկ ՚ի մուտս առաջին դարու, որ սկսանի զկնի Համբարձման տեառն յերկինս, կարգել նախ զվաստակս և զնահատակութիւն աշակերտացն Քրիստոսի, որք եղեն անսասանելի սիւնք հաստատութեան և պայծառութեան եկեղեցւոյ։

Երկրորդ՝ յիշատակել զանունս գլխաւոր մոլորութեանց առ ՚ի ցոյց ճշմարիտ և անմոլար վարդապետութեան հաւատոյ։

Երրորդ՝ նշանակել զկեանս անապատաւորաց և կարգաց կրօնաւորաց, ՚ի յորդոր հաւատացելոց՝ մնալ անդրդուելի ՚ի հիմունս բարեպաշտութեան՝ ՚ի քաղեալս առ ՚ի սրբոց հայրապետաց, և ՚ի գործադրեալս յառաքինական մարդկանէ, որք մտադիր յանձն առին զվարս առանձնութեան և հրաժարեցին յաշխարհէ, առ ՚ի ձեռնհաս լինելոյ զիւրաքանչիւր կատարել զխրատս աւետարանին։

Չորրորդ՝ վիպագրել զանունս ժողովոց հանրականաց և մասնաւորաց, որովք երբեմն հոգք և խնամք եկեղեցւոյ յանարատ պաշտպանութիւն ուղիղ դաւանութեան հաւատոյ և բարեկարգութեան վարուց։

Հինգերորդ՝ յիշատակագրել զանունս նահատակութեան սրբոց ՚ի տալ ամենեցուն զօրինակ ազգի ազգի առաքինութեանց, զորս մարթ է՝ մանաւանդ թէ և պարտ իսկ է ամենայն հաւատացելոց ՚ի վեր արկանել. իբր զի տեսեալ ՚ի նոսա զանձինս մինչև ցհեղումն արեան նահատակեալս ՚ի ճշմարտութիւն վարդապետութեան հաւատոյ՝ ընդդէմ հալածչաց իւրեանց, և զկեանս կամաւոր ճգնութեամբ յանձինս իւրեանց իբր անընդհատ մարտիրոսութեամբ մարտուցեալս ընդդէմ ախտաւոր յօժարութեանց և հրապուրանաց դիւին, նախանձաւորք նոցա լինիցին։

Վեցերորդ՝ նշանակել զանուանս եկեղեցական մատենագրաց, յայտ առնելով թէ ո՛յք ոմանք կացին ախոյեանք 'ի ջատագովութիւն հաւատոյ, և առ ո՛րս պարտ իցէ դիմել 'ի խնդիրս կանոնաց եկեղեցւոյ։

Եօթներորդ՝ պատմագրել զկարգ և զյաջորդութիւն նախապատիւ աթոռոյ քահանայապետացն Հռովմայ, յորում երևին խնամք աստուածային տեսչութեանն ըստ խոստման տեառն առ սուրբն Պետրոս՝ զի մնասցէ հաստատուն և անպարտելի 'ի դաւանութեան հաւատոյ, և լինի նեցուկ հաստատութեան համօրէն հաւատացելոց։

Ութերորդ՝ համառօտել և զանցս Հայաստանեայց եկեղեցւոյ, յիշատակութեամբ ազգային ժողովոց և յաջորդութեան կաթուղիկոսաց ըստ իւրաքանչիւր դարուց։ Ահա այսոցիկ ամենայնի և այլոց անբաւ պիտանի տեղեկութեանց ուսուցիչ է և յայտարար՝ պատմութիւն զինուորելոյ եկեղեցւոյ, զորոյ զօգտութիւնն գիտելով մեր 'ի սիրտ և 'ի հոգիս բարեպաշտ ընթերցասիրաց, որպէս և զբազմամեայ տենչ նոցին առ այսպիսի ախորժելի ուսումն, խնամ կալաք լնուլ զըղձումն խնդրոյ նոցին, բովանդակելով զպիտանին և զկարևորս 'ի գիտութիւն մերազնեից։ Եւ որպէս հանրական նպատակ պատմութեանս ոչ այլ ինչ է՝ բայց յայտ յանդիման կացուցանել զճշմարտութիւն ուղղափառ հաւատոյ, այսպէս և յամենայն մասունս պատմութեանս փոյթ յանձին կալաք պատկառ կալ ճշմարտութեան, և անսխալ դատաստանի հռովմէական սուրբ եկեղեցւոյ։

Ի բազմապատիկ համառօտագիր մատենագրաց եկեղեցական պատմութեան ընտրելագոյն դատեցաք զկարճառօտ հաւաքումն յօրինեալ յընկերութենէ գաղղիացի հմուտ գիտնականաց ոմանց, որ 'ի սկիզբն դարուս առ 'ի պէտս հրահանգութեան ուսումնասէր համբակաց ընծայեալ 'ի լոյս, և յիրաւի հաճոյ եղեալ հասաբակաց , փոխաբերեցաւ յայլ և այլ լեզուս և ստէպ տպագրութեամբ ծաւալեցաւ յուսումն գալոցաց ։ Նոցին գովելի երկասիրութեանն հեռաւոր լեալ և մեր , հանդերձ հետազօտ քննութեամբ հայելով և յայլ մատենագիրս , խնամ կալաք յաւելուլ ոչ միայն զեկեղեցական ազգային անցս , այլ և ինչ ինչ նորս և պիտանիս յուսումն մանկանց եկեղեցւոյ , որոց ընծայի սա 'ի վայելումն հոգևոր օգտից , և 'ի փառս բարերանութեան երկրպագելի անուան փրկչին Յիսուսի ։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՆԱԽԱՇԱՒԻՂ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՐՈՒՑ ՔՐԻՍՏՈՍԻ

ԳԼՈՒԽ Ա·

Ծնունդ Յովհաննու Մկրտչի, և Յիսուսի Քրիստոսի տեառն մերոյ։

ՄԻՆՉԴԵՌ Օգոստոս կայսր աշխարհակալ՝ խաղաղարար իշխանութեամբ տիրապետէր 'ի Հռովմ, Բանն Աստուած համագոյակից Հօր՝ կամեցաւ մարդանալ 'ի փրկութիւն մարդկան։ Եւ 'ի սահմանեալ ժամանակի ծննդեան իւրոյ՝ երևեցոյց նախ զՅովհաննէս Մկրտիչ՝ իբրև զարուսեակ որ կարապետէ ծագմանն արևու։

Հրեշտակապետն Գաբրիէլ երևեալ 'ի ժամ աղօթից սրբոյ քահանային Զաքարիայ հօր Կարապետին, աւետաւորեաց նմա 'ի պտուղեալ յամուլ արգանդէ ամուսնոյ նորին Եղիսաբեթի զհանդերձեալ ծնունդ որդւոյն, որ կոչեսցի, ասէ, Յովհաննէս, և գնասցէ առաջի տեառն հոգւով Եղիայի՝ պատրաստել զմարդիկ առ գալուստ փրկչին։ Յետ այն պատգամ՝ թերահաւատեալ Զաքարիայ, ընկալաւ զպատուհաս համրութեան լեզուին, և բանք հրեշտակին առին զկատարումն. զի Եղիսաբեթ մայրացեալ ընծայեաց 'ի լոյս զաւուրն Յովհաննէս Մկրտիչ. յայնժամ լուծեալ կապանաց լեզուին Զաքարիայ՝ աստուածաբանեալ օրհնութեամբ յայտ արար ինքնին զհրաշալի ծնունդ որդւոյ իւրոյ։

Յանցանել ամսոց վեցից զկնի աւետեաց հանդերձեալ ծննդեանն Յովհաննու, նոյն ինքն Գաբրիէլ հրեշտակ Աստուծոյ առաքեցաւ առ սուրբ կոյսն Մարիամ որ էր՝ի տանէ Դաւթի, և խօսեալ էր և պսակեալ ընդ Յովսէփայ առն արդարոյ՝ի նմին ազգատոհմէ, զի նմա անկ էր լինել վկայ և հաւատարիմ պահապան անարատութեան կուսին, ընդ որում պահէր զողջախոհութիւն ամբիծ։ Ողջոյն Գաբրիէլ սրբոյ կուսին, զի անապական մնալով կուսութեան նորա՝ անքննին զօրութեամբ Հոգւոյն սրբոյ հանդերձեալ էր յղանալ և ծնանել զորդի, որում կոչեսցի՝ ասէ՝ անուն Յիսուս. նա եղիցի մեծ, և անուանեսցի որդի բարձրելոյն. ընկալցի՝ի տեառնէ զաթոռն Դաւթի հօր իւրոյ, և թագաւորեսցէ յաւիտեան՝ի վերայ տանն Յակոբայ։ Հնազանդեցաւ Մարիամ երկնաւոր պատգամացն, և Բանն Աստուած յաւիտենական որդին Աստուծոյ՝ եղև որդի Աբրահամու և Դաւթի՝ի ժամանակի, ընկալեալ յարգանդի կուսին զհոգի և զմարմին մարդկային։

Իբրև իններորդ ամիս եղև յղութեան Մարիամու, ըստ նախակարգ տնօրէնութեանն Աստուծոյ՝ Օգոստոս կայսր յորդորեալ՝ի քաղաքական անտեսութենէ, պատուէր ետ ՝ի Հրէաստան աշխարհագիր առնել ամենայն հպատակաց տէրութեան իւրոյ. վասն որոյ և Յովսէփ և Մարիամ, որք բնակէին ՝ի Նազարէթ քաղաքի, ստիպեցան գնալ ՝ի Բեթղեհէմ՝ տալ նշանակել զանուանս իւրեանց ՝ի մատեանս այնր քաղաքի։ Նոր փրկիչ աշխարհի՝ ըստ նախաձայն քարոզութեան մարգարէից՝ անսահման խոնարհութեամբ իւրով ծնաւ յաղքատին վայրի, և եդաւ ՝ի մսուր անասնոց։

Ծնունդ փրկչին ըստ համարակալ հաշուի՝ եղև յամի արարչութեան աշխարհի 4000, թէպէտ և թուականութիւն նորին չորիւք ամօք յետոյ սկսանի։ Այն ամ առաջին էր ճղդ ողիմպիադին, և հիմնարկութեան քաղաքին Հռոմայ, 747. և ինքնիշխան տէրութեան Օգոստոսի 38։

ԳԼՈՒԽ Բ.

Երկրպագութիւն Հովուաց և Մոգուց: — Կոտորումն անմեղ Մանկանց: — Մահ Հերովդի:

Ծնունդ փրկչին, որ եղև 'ի գիշերային պահու, նախ առաջին յերկնային զուարթնոց լուսապայծառ տեսլեամբ և ցնծալից աւետեօք աւետարանեցաւ հովուաց, որք մտադիւր եկին նմա յերկրպագութիւն, և ապա քարոզելով ընդ ամենայն սահմանս այնր գաւառի զգալուստ Մեսիային՝ եղեն նորա նախկին առաքեալք: Զկնի աւուրց ութից եմուտ փրկիչն ընդ օրինօք թլփատութեան, յորում կոչեցաւ անուն նորա Յիսուս՝ որ նշանակէ եբրայեցերէն փրկիչ. նկարագրեալ նովաւ զվախճան առաքելութեան իւրոյ, որ էր փրկութիւն մարդկան. որպէս և Քրիստոս, որ նշանակէ Օծեալ Աստուծոյ, յայտ առնելով զարքայական իշխանութիւնն և զաստուածային քահանայապետութիւնն:

Ընդ ծննդեամբ փրկչին աստղ նորատեսիլ՝ 'ի նշանակ աստուածային լուսոյն զոր ունէր ծաւալել ընդ տիեզերս՝ երևեցաւ յարևելեան կողմն աշխարհի. ուր մոգք ոմանք, այսինքն իմաստունք (զորս ճոխութիւն և արժանայարգ պատիւն զոր ունէին ետ անուանել թագաւորս), հետևելով այնմ նորանշան աստեղ՝ եկին յերկրպագութիւն Աստուծոյ մարդացելոյ, և մատուցին նմա յընծայս զոսկի, զկնդրուկ և զմուռս:

Արքայական գաւազանն Յուդայի էր յայնժամ բռնակալեալ 'ի ձեռս օտարազգւոյ. զի թագաւորէր 'ի Հրէաստան Հերովդէս եդովմայեցի, իշխան կասկածոտ և անգութ բնաւոր. որոյ առեալ զլուր նորածին արքայի, զոր եկեալ էին մոգքն խնդրել յԵրուսաղէմ, խռովեցաւ յոյժ. մանաւանդ զի զայնու ժամանակաւ 'ի բերանս ամենեցուն կայր աւանդութիւն ինչ իբր նախագուշակութիւն, թէ հանդերձեալ է թագաւորել 'ի վերայ Իսրայէլի իշխան ոք մեծազօր, որոյ տէրութիւնն տարածեսցի 'ի վերայ ամենայն ազգաց երկրի: Վասն որոյ Հերովդէս ժողովեալ զքահանայս և զվարդապետս օրինացն՝ հարցանէր գիտել 'ի նոցանէ, թէ ուր ծնանիցի Քրիստոսն ։ Եւ իմացեալ թէ 'ի Բեթղեհէմ Հրէաստանի, պատուէր ետ վաղվաղակի կոտորել զամենայն արու մանկունս յերկեմենից և 'ի խոնարհ, զեղեալսն 'ի Բեթղեհէմ քաղաքի և յամենայն սահմանս նորա ։

Աւանդի 'ի հեթանոս մատենագրէ ումեմնէ, թէ Հերովդէս 'ի նմին կոտորածի սպանեալ իցէ և զմին յորդւոց իւրոց, յորս սակս պատմի ասացեալ Օգոստեայ կայսեր՝ թէ «Լաւագոյն է ծնանիլ խոզ, քան որդի Հերովդի»։ Զի առ սմին ժամանակաւ ետ սպանանել զԱնտիպատրոս զորդի իւր, որպէս և նախ քան զնա զԱղեքսանդրոս և զԱնտիգոնոս ։

Հերովդէս, ըստ աւանդելոյ Յովսեպոսի եբրայեցւոյ, յետ սպանութեանն Անտիգոնոսի, որում անկ էր ժառանգել ըստ իրաւանց ծննդեան իւրոյ զաթոռն հայրենի, ետ կոտորել և զաւագանին որք միանգամ յօժարամիտքն էին թագաւորութեան սպանելոյն ։ Կրտսերն Արիստաբուղոս, որում անկ էր թագաւորութիւնն, գոլով ժառանգ Հիրկանոսի և երիցուն Արիստաբուղեայ, 'ի չարամիտ կասկածանաց անգութ բռնաւորիս խեղդամահ եղև 'ի նմանէ. զի յերկուս նուագս 'ի մեկնել իւրում 'ի Հրէաստանէ գնալ առ Օգոստոս կայսր յարդարացուցանել զանձն, ետ հրաման 'ի ծածուկ ջնջել զնա ամենայն ընտանեօքն ։ Որպէս և 'ի վաղվաղել զմահ Հիրկանոսի՝ ոչ հայելով յութսնամեայ վիճակ հասակի նորա, անհիմն զրպարտութեամբ փութայր բառնալ զնա 'ի կենաց ։

Յաղագս այսպիսի և այսչափ անգթութեանց պատուհասեցաւ Հերովդէս և 'ի կենդանութեան իւրում. զի դժնդակ և անբերելի ախտ ակարութեան ած զնա յեղկելի պայման. տապացեալ մարմնոյն 'ի կարմրաշէկ որդանց 'ի կարևորսն, տանջէր զնա անհանդուրժելի ցաւովք. և յայնպիսի դառն տագնապի 'ի պատուհաս մեծեղեան անօրէնութեանց իւրոց, փախճանեցաւ 'ի կենաց 'ի հասակի եօթանասուն ամաց, յետ թագաւորելոյ զամս քառասուն ։

Գուշակելով բռնաւորիս՝ եթէ օր մահուան իւրոյ լինիցի աւուր ցնծութեան Եբրայեցւոց, պատուէր ետ զգլխաւորս ազգին փակել 'ի կրկէսն Երիքովի՝ ուր բնակէր, և 'ի ժամ մահու իւրոյ կոտորել զամենեսին զնոսա ։ Այս պատուէր գաղտնական խափանեցաւ 'ի գործադրութենէն . նմին իրի չեղև ումեք կոծել զհրէշն զայն կերպարանեալ խորամանկ և անագորոյն, զզահիճն սեպհական ազգատոհմին, և զբռնաւորն ժողովրդեան իւրոյ ։ Սա ինքն եղև առաջին 'ի խախտել զհիմն հասարակապետութեան Հրէից . խառնակեաց զյաջորդութիւն քահանայապետաց՝ նուաղելով և զպատիւ իշխանութեան նոցա . տկարացոյց և զիշխանութիւն խորհրդականաց կամ զծերակուտին, զերիս առնելով զնոսին իւրոց հաճոյից ։ Յայսր ամենայնի վերայ ոմանք 'ի զառանցելոց այնր ազգի պատրեալք 'ի մեծութենէ իշխանութեան նորա, և 'ի հոյակապ շինուածոց ինչ կանգնելոց 'ի նմանէ, խնամ կալան քարոզել զնա Մեսիա . և 'ի սոցանէ ծագեցաւ աղանդն Հերովդիանոսաց, որ և ընդ նմին 'ի սկզբան անդ փութապէս շիջաւ ։

Հերովդէս կտակաւն իւրով հաստատելով յՕգոստոս կայսերէ (որում յամենայնի գտաւ անարգ շողոմաբար), բաժանեաց զթագաւորութիւն իւր յերեսին որդիս իւր ։ Արքեղայոս անդրանիկ նորա եկաց չորրորդապետ կամ արքայ Երուսաղեմի և շրջակայ սահմանաց նորա ։ Գալիլեա վիճակեցաւ Հերովդի Անթիպայ, Իտուրեա և Տրաքոնիա Փիլիպպոսի ։ Եւ ինչ եթող Ագրիպպայ և Հերովդի թոռանց իւրոց ծնելոցն յԱրիստաբուղեայ՝ զոր սպանեալն էր . սակայն յետ ժամանակաց ինչ առաջինն եղև թագաւոր Երուսաղեմի, իսկ երկրորդն ընկալաւ զիշխանութիւն Քաղկիսական գաւառին ։

ԳԼՈՒԽ Գ.

Յիսուս 'ի տաճարին: — Քարոզութիւն Յովհաննու Մկրտչի: — Մկրտութիւն Քրիստոսի, և առաջին հրաշագործութիւն:

Նախ քան զկոտորած մանկանցն Բեթղեհեմի սուրբն Յովսէփ և կոյսն Մարիամ ազդեցայք 'ի հրեշտակէ Տեառն, առեալ զՅիսուս փախեան յԵգիպտոս. ուր կացեալ զամս երկուս, կամ ըստ այլոց եօթն, յետ մահուանն Հերովդի դարձան յետս 'ի Նազարէթ քաղաք, և անդ կեցին աշխատութեամբ ձեռաց սրբոյն Յովսէփայ։ Եւ քանզի էր նոցա սովորութիւն ամի ամի գնալ յԵրուսաղէմ 'ի կատարել զտօն զատկին, 'ի միում նուագի տարեալ ընդ իւր զՅիսուս, որ էր ամաց երկոտասանից, նա մեկուսացեալ 'ի նոցանէ մնաց 'ի տաճարին, ուր յետ երից աւուրց գտին զնա՝ զի խօսէր ընդ վարդապետս օրինացն, և խնդիրս պէսպէս առաջի առնէր նոցա 'ի զարմացումն լսելեաց։ Դարձ արարեալ Յիսուսի ընդ ծնողս իւր 'ի Նազարէթ, եկաց անդ մինչև ցերեսներորդ ամ հասակին, որ 'ի թաքուն և յանանձնական վիճակի անդ կենացն պատրաստելով 'ի քարոզութիւն կենարար առաքելութեան իւրոյ, յոր սակս իջեալ էր յերկնից, մինչ սահմանեալ ժամն յայտնելոյ զանձն աշխարհի։

Ի հնգետասաներորդի ամի տէրութեան Տիբերեայ կայսեր, որ յաջորդեաց հայրագրին իւրում Օգոստոսի, և թերութեանցն նորա քան ընտիր բարեխնամութեանցն զառ ժառանգորդ, սուրբն Յովհաննէս Մկրտիչ յառաջընթաց կարապետ Յիսուսի սկսաւ քարոզել զապաշխարութիւն։ Եկեալ անապատն յառաջին ափոյն յանանձնութեան անապատի Յորդանական վարուք՝ այլ զանձն 'ի խստամբեր կեանս, զոր և քարոզէր մկրտութեամբն յապաշխարութիւն. և պայծառ առաքինութեամբքն յայտնութիւն կրթէր զժողովուրդն, մինչև տեսանել նոցա 'ի նմա նոր զնին Եղիա, և յօժարել դաւանել զնա իւր Մեսիա, եթէ նա ինքն Յովհաննէս չէր քարոզեալ նոցա թէ ձայն բարբառոյ եմ ես յաւետարանել զպատգամաւորն Եսայեայ, զորս չեմ արժանի՝ ասէ՝ լուծանել զկօշիկսն և ծառայանել զընթացս անհուն և անքնին խորհրդոյ մարդեղութեան նորա ։ Նոյն վասն իւր յաւել․ «Ես մկրտեմ զձեզ ջրով, բայց որ զկնի իմ գալոցն է՝ հզօրագոյն է քան զիս․ նա մկրտեսցէ զձեզ Հոգւով սրբով »։

Արդարութիւնն Յովհաննու օրինակ էր և իւր պատրաստութիւն մկրտութեանն զոր Քրիստոս հանդերձեալ էր ուսուցանել․ զոր և կամեցաւ ինքն իսկ ընդունել ՚ի Յովհաննէ՝ ականեղ յանձնառութեամբ սրբոյ Կարապետին ։ Նոյն իջանելն Յիսուսի ՚ի Յորդանան, և ահա բացան երկինք, ուստի երևեցաւ Հոգին սուրբ ՚ի վերայ նորա նմանութեամբ աղաւնոյ, և ձայն հայրական վկայեաց նմա յերկնից, եթէ «Դու ես որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ »։

Քրիստոս մկրտութեամբն իւրով սրբեալ զջուրսն և տուեալ նմին զզօրութիւն սրբելոյ զմեղս մարդկան, ածաւ յանապատ ՚ի Հոգւոյն սրբոյ, ուր եկաց զաւուրս քառասուն ոչ ինչ ճաշակելով և ոչ ջուր ըմպելով․ ուսուցանելով մեզ թէ պահօք և խստամբերութեամբ պարտիմք պատրաստել զանձինս մեր ՚ի գործս պաշտաման եկեղեցւոյ ։ Թոյլ ետ սատանայի փորձել զնա․ այլ յաղթեցաւ դևն յաստուածային զօրութ̃է նորա, որով յաղթութիւն երկրորդն Ադամայ եղև զարման պարտեաց առաջնոյն ։ Յիսուս սաստեաց դիւին նախանձոտ յետս, զի գրեալ է ասէ, «Տեառն Աստուծոյ քում երկիր պագցես, և զնա միայն պաշտեսցես »։ Յայնժամ մատեան հրեշտակք և պաշտէին զնա ։

Յետ փորձութեանցս այսոցիկ, յորս ետ մեզ օրինակ զօրանալոյ ՚ի փորձութիւնս, էջ յանապատէ և գնաց առ Յովհաննէս Մկրտիչ․ որոյ տեսեալ զՅիսուս՝ աղաղակեաց ասելով․ «Ահա գառն Աստուծոյ, որում ես ինքն եկի վկայել »․ զոր լուեալ բազումք յաշակերտաց սրբոյ Կարապետին գնացին զհետ Յիսուսի, որ զաստուածութիւն իւր սկսեալ էր ստուգել նշանագործութեամբ․ և զառաջին հանդէսն եցոյց ՚ի Կանա Գալիլեացւոց, ուր ընդ մօր իւրում և ընդ աշակերտսն հրաւիրեալ ՚ի հարսանիս, փոխարկեաց զջուրսն ՚ի գինի՝ ՚ի բարեկարգ զուարթութիւն կոչնականացն ։

ԳԼՈՒԽ Դ.

Կոչումն և ընտրութիւն առաքելոց ։ — Քարոզութիւն 'ի լերինն, և բովանդակութիւն վարդապետութեանն Քրիստոսի ։

ՆՈՐԱՆՈՐ հրաշագործութիւնք հռչակեցաւ վարդապետութիւն Քրիստոսի. ժողովուրդքն զարմացեալք զհետ նորա խուռն ընթանային յամենայն կողմանց հրահանգիլ յաստուածային խրատուց նորա, և լինել ընդունակ և վկայ սքանչելեացն. մինչև երբեմն ստիպիլ Յիսուսի ծածկիլ յամբոխէն՝ խոյս տուեալ յանապատս և 'ի լերինս ։ Ի միում նուագի յետ հանելոյ զգիշերն 'ի գլուխ յաղօթս Աստուծոյ, արկ զհիմն եկեղեցւոյ իւրոյ ընտրութեամբ երկոտասանից գլխաւոր աշակերտացն, զորս և Առաքեալս անուանեաց՝ իբրու պանդուխտս և ուղևորս. զի սահմանեալ էր նոցա շրջել ընդ ամենայն երկիր, և քարոզել զաւետարանն ։ Բազումք 'ի նոցանէ ռամիկք էին և առանց դպրութեան. սակայն առանձնական պարգևօք ճոխացուցեալ զամենեսին՝ ետ նոցա և շնորհս սքանչելագործութեան ։

Անուանք առաքելոցն էին Պետրոս, Անդրէաս, Յակոբոս, Յովհաննէս, Փիլիպպոս, Բարթողիմէոս, Մատթէոս, Թովմաս, Յակոբ Ալփեան, Յուդա Յակոբեան, Սիմոն և Յուդա Իսկարիովտացի ։ Սուրբն Պետրոս կացուցաւ 'ի Քրիստոսէ նախապատիւ քան զայլ առաքեալսն. և առանձնական այս շնորհ այնպէս քաջայայտ էր ամենեցուն նոցա, զի և աւետարանիչք 'ի թուել անդ զառաքեալսն՝ առ հասարակ զսուրբն Պետրոս կարգեն 'ի գլուխ ամենեցուն, նախ առաջին զնա յիշատակելով ։

Եւ քանզի նախկին նշուլից լուսոյ աւետարանին սահմանեալ էր սփռիլ առ իսրայէլեանն ազգ, վասն որոյ առաքեալք ըստ հրամանի փրկչին սկիզբն արարին պաշտաման իւրեանց քարոզութեամբ Հրէից և բնակչաց մերձաւոր գաւառացն, աւետաւորելով զգալուստ փրկչին, որ լուսաւոր բանիւն և փրկական վարդապետութեամբ հրահանգելով զնոսա՝ զարթուցեալ էր 'ի սիրտս առաքելոց զնախանձ փրկութեան հոգւոց յետ կոչման և ընտրութեան իւրեանց, տպաւորելով 'ի միտս նոցա զկենսայորդոր խրատս և զաւանդս հոգեշահս, որք անուանին Քարոզութիւնք 'ի լերինն, և որոց բովանդակութիւն, որպէս և համօրէն աւետարանական խրատուց, էր լուսաւորել զմիտս մարդկան, և ուղղել զսիրտս ազխտաց և մարմնասիրաց։

Քաղուած իմաստից վարդապետութեան Քրիստոսի յայս բովանդակի, եթէ ստեղծեալ եմք յԱստուծոյ վասն անանց և երանելի կենացն հանդերձելոց, առ որ պէտք են ձգել յօժարութեան մերոյ յաստի կեանս։ Այս իսկ են, ասէ, յաւիտենական կեանք, ստանալ զգիտութիւն միոյ ճշմարտին Աստուծոյ, և Յիսուսի Քրիստոսի որդւոյ նորա, զոր առաքեաց յերկնից։ Եւ թէ հոգի է Աստուած, վասն որոյ և երկրպագուաց նորա պարտ է հոգւով և ճշմարտութեամբ երկիր պագանել։ Եւ թէ միակ և կարևոր գործ մեր է սիրել զԱստուած. և ապաշնորհ գտանիմք՝ եթէ բաց 'ի նմանէ սիրեսցուք և զստեղծականս։ Ի կնիք բանից յուշ առնէր՝ թէ ամենայն օրէնք աստուածայինք բովանդակեալ կան յերկուս պատուիրանս, 'ի սիրել զԱստուած յամենայն սրտէ, և զընկերս իբրև զանձինս մեր։

Եբրայեցիքն աշխարհասէրք և մարմնախորհուրդք շատ համարէին մարմնապէս և գրաւորաբար իմանալ և կատարել զպատուէրս օրինացն. սակայն Քրիստոս ուսուցանէ պահել զայն հոգւով, դիտելով զմիտս պատուիրանին. զի ոչ միայն պարտ է զգուշանալ յարգելեալ գործոց, այլ և սանձել զխորհուրդս մտաց և զյօժարութիւնս սրտի, և համեմատ արտաքին շարժմանց բարեկարգել և զներքին զգածմունսն։

Մարդկային Բնութիւնս յետ յանցանաց նախահօրն զերեցաւ յանձնասիրութենէ, յոր սակս ուսոյց Քրիստոս ուրանալ զանձինս, և խոնարհիլ այլոց։ Բնութիւն մեր անձնատուր է 'ի բարիս կենցաղոյս, ցանկայ հանգստեան, և խորշի 'ի վշտաց. ուսուցանէ Քրիստոս հրաժարել յամենայնէ և 'ի կենաց իսկ գլխովին առ 'ի միանալ ընդ Աստուծոյ։ Խոստմունք և սպառնալիք աւետարանին քարոզեալք 'ի խրատ մարդկան՝ պատշաճին կենացն և եթ հանդերձելոց. իսկ 'ի կենցաղումս փառք, նեղութիւնք, ցաւք և արտասուք՝ իբրու հայրենի ժառանգութիւնք են Յիսուսի հաւատացելոց։ Մարդ մարմնասէր խնդրէ զճոխութիւն, զպայծառութիւն զգեստուց, զշքեղութիւն կահուց և կարասեաց, որպէս և զառանձնաւոր խորութիւնս, որք առ հասարակ կարգին 'ի մարդահաճութիւն. սմին հակառակ՝ երանելի անուանէ Քրիստոս զվիճակ աղքատութեան, և զնուաստութիւն տոհմի նախապատիւ քարոզէ քան զաշխարհական ճոխութիւն. որպէս և զբարձրագոյնն առաջի մարդկան՝ պիղծ համարի յաչս Աստուծոյ։ Մարդ մարմնաւոր և աշխարհասէր զհետ երթայ բուռն կրից ապականեալ սրտի իւրոյ. նմին հակառակ՝ քարոզէ Քրիստոս, թէ բանադատութիւն և սանձահարութիւն անձին ժառանգ առնէ զմարդ յանվախճանին երանութեան։ Ապականութեամբ սրտի է խնդրել զհանգիստ և խորշել յամենայն վշտաց. իսկ Քրիստոս ոչ դասէ 'ի թիւս աշակերտաց իւրոց՝ բայց զորս տեսանէ 'ի վիշտս աշխատութեան։ Մարմնասէրն զգուշանայ և խուսէ 'ի թշնամեաց որ խոցեն զնա, և կամ խափանեն 'ի վայելից կենցաղական բարեաց. իսկ Քրիստոս պատուիրէ սիրել զթշնամիս, և յօժարամիտ համբերութեամբ տանել վշտաց և հալածանաց։ Կնիք ամենայնի, պատուիրէ Յիսուս տանել և պահպանել զսէրն առ Աստուած և առ ընկերն, որ է տիրապէս գանձ քրիստոնէի, պատրաստ գոլով 'ի կորուսանել և 'ի նուիրել նմին իւր զամենայն ինչ։

ԳԼՈՒԽ Է.

Անարատութիւն վարուցն Քրիստոսի։

ՀՐԱՇԱԼԻ վարդապետութե՟ն փրկչին համընթացեալ ցուցանէ սքանչելի օրինակք առաքինական վարուցն անդստին 'ի մանկութէ իւրմէ։ Քանզի նա ինքն եկաց օրինակ ամենեցուն հլու և մատչիւր հնազանդութեամբ ծնողացն. սիրելի ընծայեալ զանձն առ ամենեսին, որքան զօր աճէր հասակաւ և զարգանայր շնորհօք և իմաստութեամբ։ Յառաջնում հասակին ընդ ամն երեսուն եկաց յառանձնութեան, թէպէտ և եկեալ էր 'ի լուսաւորել զաշխարհ. որդի հիւսան համարեալ 'ի ժողովրդենէն՝ կայր 'ի նոյն վաստակս լռութեամբ, վարէր կեանս բարեկարգ և գործօն, որով և ընտրելագոյն քան զմանկութիւն ծնելոյն 'ի մեծութեան և 'ի ճոխութեան։

Ի սկզբան անդ պաշտաման աստուածային առաքելութեան իւրոյ՝ յինքն ձգեաց զյարգ պատկառանաց և զսէր ժողովրդեան քրտնաջան աշխատութեամբն յուսուցանել և 'ի շահել զսիրտս նոցա, ամենեցուն բարիս առնելով և սքանչելի բժշկութիւնս կատարելով։ Բանիւ նորա լոկով ողջանային ցաւք, հալածական լինէին դեւք, յառնէին մեռեալք, հանդարտէին մրրիկք. և թէպէտ և ամենայն բնութիւնք արարածոց հնազանդէին նմա իբրև տեառն իւրեանց, սակայն և այնպէս երևէր 'ի նմա սքանչելի խոնարհութիւն և արհամարհութիւն կենցաղականաց, մինչ զի մտադիւրագոյն ծածկէր նա զհրաշագործութիւնս իւր քան զմարդիկ՝ որք գուն գործեն թագուցանել զյանցանս իւրեանց։ Քանզի բազում անգամ 'ի խնդրել Հերովդի Անթիպայ տեսանել զնա՝ խոյս ետ և չերևեցաւ առաջի նորա. որպէս և 'ի ժամանակս չարչարանացն իբրև յանդիման եղև նմա, ոչ ինչ նշանս սքանչելեաց եցոյց՝ որում փափաքէրն Հերովդէս. զի չէր նա եկեալ 'ի լնուլ զսնոտի հետաքննութիւն մարդկան, այլ 'ի դատապարտել զայն։

Արհամարհութիւն կենցաղական բարեաց և սէր աղքատութեան՝ այնչափ առաւելեալ էին 'ի նմա, մինչև ըստ վկայելոյ իւրոյ՝ չունէր տեղի ուր դիցէ զգլուխ իւր։ Յօժարամիտ տանէր քաղցոյ և ծարաւոյ, կերակրելով լոկ զկարևորն՝ որ դնէր առաջի նորա. յուղևորութիւնս իւր իջևանէր առ որս տային նմա տեղի պատսպարութեան, ոչ ինչ խտիրս առնելով ընդ աղքատ և ընդ մեծատուն. ցուցանէր առանձին իմն նշան սիրոյ առ չքաւորսն, իբր զի նոքա աներկբայ իմն ունէին իրաւունս յանխախճան երանութիւն հանդերձելոյ։

Ի նուազէ անտի զոր ունէրն՝ առնէր ողորմութիւն, առանց ինչ խնդրելոյ երբէք յումեքէ՝ և կամակար մտօք հրաշագործեաց 'ի հատուցանել զհարկ վասն աշակերտացն՝ քան առնուլ յումեքէ զերկդրամեանն 'ի փոխ, քանզի սովոր էր առնել. ˝ Սքանչելի է մանաւանդ սոյն քան զամենայն „ ։ Անպակաս զհետ նորա գնային ժողովուրդք, և ոչ որ երբէք մերժեցաւ 'ի նմանէ. բազմութիւնք աղքատացելոց, չքաւորաց և կարօտելոց խուռն ընթանային առ նա. և որ մեծն է, յորժամ դէպ լինէր դարձի խոտորելոցն յուղղութենէ՝ ոչ խորշէր կենակից և սեղանակից ընդ մեղաւորս լինել։

Ըստ արտաքնոյն չունէր ինչ տարազ առանձինն յորոշումն 'ի հասարակ ժողովրդենէ. սակայն և այնպէս երևէր 'ի նմա մեծարոյ տեսիլ պատկառելի, ըստ որում վկայէ աւետարանագիրն. “ Խօսէր իբրև իշխանութեամբ, և զարմանային ընդ բանս շնորհացն՝ որ ելանէին 'ի բերանոյ նորա „ ։ Քարոզութիւնքն պարզք և բացայայտք չունէին այլ զարդ բաց յեղանակէ խօսիցն և յազդուութենէն որ ստիպէ զլսողս 'ի հաւանութիւն. զի “ Ոչ իմաստասէր որ էր, ասէ սուրբն Յուստինոս, այլ Բան Աստուծոյ „ ։ Անաղօտ լոյս ճշմարտութեան այնպէս ծաւալէր 'ի քարոզութենէն Քրիստոսի, մինչև առանց կամաւոր կուրութեան անհնար էր ումեք հաւանել նմին։ Ի կշտամբութիւն խստասրտացն սակաւ խօսէր ազդու առակօք. սակայն առ դիւրահասացն զլսողս զգալիս դիւրըմբռնել օրինակօք առաջի առնէր՝ հաստատելով զբանն և 'ի ձեռն սքանչելեաց, և հզօրագոյնս ազդելով 'ի լսելիս քան զիմաստութիւն փիլիսոփայից։

ԳԼՈՒԽ Զ.

Բանտումն և մահ սրբոյն Յովհաննու Մկրտչի։

ՍԿՍԵԱԼ սրբոյ Կարապետին յաղագս սքանչելահրաշ առաքելութեանն Քրիստոսի, յետ ոչ բազում ժամանակի արկաւ 'ի բանտ հրամանաւ Հերովդի Անթիպայ։ Քանզի ունէր ամբարիշտն այն զՀերովդիա՝ զկին եղբօր իւրոյ Փիլիպպոսի. և զայս գայթակղութիւն 'ի պատճառս ազգապղծութեան մեղացն թէպէտ և ստգտանօք պարսաւէր ժողովուրդն, սակայն առ երկիւղի ցասմանն և պատուհասի բռնաւորին՝ ոչ ոք իշխէր ինչ ասել ընդդէմ։ Բայց Յովհաննէս Մկրտիչ առ ոչինչ գրելով զսպառնալիս՝ աներկիւղ առաջի արար բռնաւորին զծանրութիւն յանցանացն. ընդ որ ցասուցեալ նորա՝ եւ կապել զնա ծանր շղթայիւք, եւ առաքեաց յամուրն Մաքերոն։ Իսկ Հերովդիա կին Փիլիպպոսի, որ կենակից էր անօրէնութեանն Հերովդի, ոչ շատացեալ բանտարգելութեամբ սրբոյն՝ խնդրէր վաղվաղել զմահ նորա. եւ զի Հերովդէս զանգիտէր, զի մի մահ արդարոյն սպանուելոյ 'ի բազմանդակ ազգէն Հրէից՝ պատճառս տայցէ խռովութեան եւ ապստամբութեան, նա զուն գործէր գտանել հնարս պատշաճականս 'ի կատարել զվրէժխնդրութիւն իւր։ Յաւուր ծննդեան իւրոյ արար Հերովդէս կոչունս՝ հրաւիրելով զնախարարս եւ զհազարապետս իւր յամրոցն Մաքերոն. եւ իբրեւ հրաւիրեալքն զուարթացան 'ի գինւոյ, Սալոմէ դուստր Հերովդիայ յառաջնոյ առնէն իւրմէ 'ի Փիլիպպոսէ՝ մտեալ 'ի սրահ կոչնոյն կաքաւեաց լկտութեամբ, եւ յիմարեցոյց զթագաւորն, մինչեւ ասել ընդ նմա. ‶Խնդրեա յինէն զոր ինչ եւ կամիս„. եւ երդմամբ եւս խոստացաւ տալ նմա մինչեւ ցկէս թագաւորութեան իւրոյ։ Յայնժամ Սալոմէի երթեալ առ մայրն՝ ծանոյց զխոստումն թագաւորին. իսկ քինախնդիրն Հերովդիա յորդորեաց զդուստրն գնալ խնդրել զգլուխն Յովհաննու Մկրտչի. վասն որոյ փութացեալ աղջկանն եմուտ անդրէն 'ի սրահ կոչնոյն եւ ասէ ցթագաւորն. ‶Տուր ինձ այսր 'ի վերայ սկտեղ զգլուխն Յովհաննու Մկրտչի„։ Այս խնդիր տրտմեցոյց յոյժ զթագաւորն, զի մեծարէր զսուրբն վասն առաքինի եւ անստգիւտ վարուց նորա. բայց քանզի խոստացեալ էր երդմամբ առաջի բազմաթիւ կոչնականացն, նախատինս համարեցաւ անձին յետս կալ 'ի խոստմանէն. վասն որոյ առաքեաց զմի 'ի թիկնապահաց իւրոց, եւ ետ հատանել զգլուխ սրբոյ Կարապետին. զոր եւ եդեալ 'ի վերայ սկտեղն մատուցելոյ յաղջկանէն՝ ետուն 'ի ձեռս նորա, եւ նա տարաւ ետ մօր իւրում։ Ըստ վկայելոյ սրբոյն Հերոնիմոսի, անօրէնն Հերովդիա 'ի վրէժխնդրութիւն աներկիւղ յանդիմանութեանց սրբոյն՝ ասղամբ ծակոտեաց, ասէն, զլեզու սրբոյ Կարապետին։

Մահ Յովհաննու Մկրտչի եղեւ յետ երեսներորդի առաջներորդի, եւ 'ի սկիզբն երեսներորդի երկրորդի ամի ծննդեանն Քրիստոսի։ Լուեալ զմահ Յովհաննու Կարապետին՝ աշակերտք նորա հաւատարիմք եկին և թաղեցին զմարմին նորա ։

ԳԼՈՒԽ Է.

Հրաշագործութիւնք Քրիստոսի ։

ՄԱՀ սորոյն Յովհաննու պատճառս ետ կարեկից վշտակցութեան Քրիստոսի. վասն որոյ խոյս ետ յանապատ, և զհետ չոքան նորա ոգք միանգամ 'ի պատճառս սքանչելեացն և բարերարութեանն առ ամենեսին՝ խանդակաթք էին սիրով նորա. և նա բժշկեաց ըզհիւանդս նոցա, և քարոզեաց նոցա զարքայութիւն երկնից ։

Ի միում նաւակի յերեկոյանալ աւուրն՝ չև ևս հմուտ գոլով աշակերտացն ամենակալ զօրութեան վարդապետին իւրեանց, ծանուցին նմա զպակասութիւն կերակրոյ խուռն բազմութեանն որ կայր 'ի տեղւոջն, զի էին աւելի քան զհինգ հազար ։ Եւ 'ի ծանուցանել Անդրէի առաքելոյ՝ թէ է աստ պատանեակ մի որ ունի հինգ գարեղէն նկանակ և զերկուս ձկունս, ասէ Յիսուս. “Բերէք առ իս զնոսին, և բազմեցուցէք զժողովուրդն դաս դաս„ ։ Ապա առեալ 'ի ձեռս զհացսն՝ օրհնեաց և ետ աշակերտացն՝ բաշխել ժողովրդեանն. որովք ոչ միայն յագեցան ամենեքին, այլ և յաւելան անտի կոտորակք երկոտասան զամբիւղ ։

Սքանչացեալ ընդ այն առ հասարակ ժողովրդեանն՝ խնդրէին առնել զնա իւրեանց թագաւոր. սակայն թագաւորութիւնն Քրիստոսի անզուգական՝ հոգևոր էր և աստուածային. վասն որոյ խոյս տուեալ յամբոխէ անտի բազմութեանն՝ պատուիրեաց աշակերտացն իւրոց մտանել 'ի նաւակ 'ի ծովակին Գեննեսարեթայ, և ինքն առանձնացաւ 'ի լեառն ։

Յայնմ պահու քանզի գիշեր էր, մինչդեռ աշակերտքն Յիսուսի 'ի նաւարկել անդ 'ի ծովուն տագնապէին 'ի սաստկութենէ հակառակ հողմոյ, տեսին յանկարծակի զի գնայր 'ի վերայ ջրոյն ահաւոր և սքանչելի ինչ գիտեալ առ իւրեանս. զահի հարեալ սկսան աղաղակել՝ թէ առ աչօք ինչ իցէ. սակայն Յիսուս հանդարտեցոյց զնաւորն՝ ասելով. ՚՚ Ես եմ, մի երկնչիք..։ Յայնժամ Պետրոսի համարձակեալ ասէ. ՚՚ Եթէ դու իցես, հրամայեա ինձ գալ առ քեզ 'ի վերայ ջրոցս..։ Եւ յասել Յիսուսի՝ թէ եկ, էջ Պետրոս 'ի նաւէն և գնայր 'ի վերայ ջուրցն. սակայն անդէն առ նմին 'ի շնչել սաստկագոյն հողմոյ՝ երկեաւ և սկսաւ ընկղմել. վասն որոյ աղաղակեաց և ասէ. ՚՚ Տէր փրկեա զիս..։ Յայնժամ Յիսուսի կալեալ զձեռանէ նորա, ասէ. ՚՚ Թերահաւատ, ընդէ՞ր երկմտեցեր..։ Եւ ել առ նոսա 'ի նաւն, և դադարեաց հողմն, և հասին անվտանգ 'ի ծովեզրն։

Շրջեցաւ Յիսուս ընդ ամենայն գաւառն՝ կատարելով զպաշտօն առաքելութեան իւրոյ. և ընդ ամենայն տեղիս ընդ որս անցանէր՝ մատուցանէին առ նա զախտացեալս, որոց և մերձեցեալ 'ի քղանցս հանդերձի նորա՝ առժամայն բժշկէին։ Գործէր սքանչելիս առանց պարծանաց և յայտնի առնելոյ. և էր երբեմն զի ինքն իսկ գլխովին հաւատոյ ախտացելոցն քան իւրումն զօրութեան թուէր ընծայել զբժշկութիւնն։

ԳԼՈՒԽ Բ.

Իղձ կնոջն Քանանացւոյ։ — Բժշկութիւն խլին և համրի։ — Նախադասութիւն սրբոյն Պետրոսի։

ԵՒ ԵԼԵԱԼ փրկչին յերկրէն Գենեսարէթ, ուր ցուցեալ էր զաստուածային զիւր զօրութիւնս, անց 'ի Փիւնիկէ 'ի կողմանս Տիւրոսի և Սիդոնի, ուր նախ առաջին յայտնի արար՝ եթէ հեթանոսք համանման Իսրայելացւոց հրաւիրեալ էին 'ի հաղորդակցութիւն երկնային բարեաց։ Քանզի կին մի քանանացի զհետ ընթանայր նորա՝ աղաչելով բժշկել զդուստր իւր զնեղեալն յայսոյ պղծոյ։ Իսկ Յիսուս որպէս թէ չլսիցէ պաղատանաց նորա, առ փորձելոյ զհաւատս նորին չառնէր պատասխանի. սակայն կինն անձանձրոյթ զնոյն շնորհս ստէպ աղերսէր, մինչև գթասիրեալ առաքելոցն միջնորդ եղեն վասն նորա առ Յիսուս՝ ասելով. Տէր, կատարեա զխնդրուածս դորա, զի աղաղակէ զհետ մեր։ Յիսուս առ 'ի յայտնի առնելոյ զնախանձեռն հաւատոյ կնոջն՝ յապաղեաց կատարել զհայցուած նորա ասելով թէ «Առ ոչխարն Իսրայելի եւեթ առաքեցայ»․ և 'ի կրկնել կնոջն քանանացւոյ՝ թէ «Տէր օգնեա ինձ», ետ պատասխանի Յիսուս՝ թէ «Չէ իրաւացի զհացն բաշխելն սեպհական որդւոց՝ շանց ընկենուլ»․ առ որ յաւել կինն խոնարհական մաղթանօք արժանաւոր լինելոյ ընդունելութեան շնորհին, եթէ «Եւ շունք կերակրին 'ի փշրանաց անկելոց 'ի սեղանոյ տեառն իւրեանց»։ Յայնժամ ասէ Յիսուս․ «Ո՛վ կին դու, մեծ են հաւատք քո․ եղիցի քեզ որպէս և կամիս»․ և անդէն առ նմին ընկալաւ դուստր նորա զբժշկութիւն։

Մ՝եկնեալ Յիսուսի 'ի սահմանացն Սիդոնի, գնաց շրջել ընդ ծովեզրն Գալիլեացւոց՝ առողջացուցանելով զհիւանդս։ Ի բժշկել երբեմն խուլ մի և համր, պատուիրեաց նմա չասել յայտնի զհրաշագործ զայն բժշկութիւն․ սակայն որչափ Յիսուս պատուիրէր զլռութիւն, այնչափ առաւել ժողովուրդն գուն գործէր քարոզել զքանչելիս նորա։ Այլ ըստ յաճախել սքանչելեացն յաւելոյր և թիւ աշակերտելոցն, մինչև երկրորդ անգամ եւս 'ի շնորհս ժողովրդեան որք երթային զհետ՝ բազմացոյց զհացն 'ի կերակուր, եօթն հացիւ յագեցուցեալ ոգիս չորս հազար։

Յետ այնորիկ կամեցաւ Յիսուս գնալ 'ի կողմանս Կեսարեայ․ և 'ի ճանապարհին եհարց ցաշակերտսն, եթէ զինչ զրոյցք իցեն զնմանէ 'ի ժողովրդեանն․ և յասել նոցա՝ թէ ոմանք կարծեն զնա թէ Եղիա իցէ, կէսք համարին զնա Յովհաննէս Մկրտիչ, և այլք Երեմիաս, Յիսուս առ նոսա դարձուցեալ զբանն՝ ասէ․ «Եւ դուք զո՞ ասէք զինէն՝ թէ իցեմ»։ Առ այն ետ պատասխանի Պետրոս, եթէ «Դու ես Քրիստոսն որդի Աստուծոյ կենդանւոյ»։ Որում լուեալ Յիսուսի 'ի բերանոյ նորա, ասէ ցնա․ Եւ ե՛ս քեզ ասեմ, զի դու ես վէմ․ և 'ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ, և դրունք դժոխոց զնա մի յաղթահարեսցեն․ և զոր կապեսցես կամ արձակեսցես յերկրի, եղիցի կապեալ կամ արձակեալ յերկինս»։ Սոյն բանիւ փորձահատոյց եղև վկայութեան Պետրոսի, և ըստ բանից սրբոյ Ոսկեբերանին՝ եղև նա այսուհետև ոչ միայն բերան և պետ առաքելոց, այլ և գլուխ եկեղեցւոյ։

ԳԼՈՒԽ Թ.

Պայծառակերպութիւն Քրիստոսի։

Յետ աւուրց ինչ կամելով փրկիչն մեր ցուցանել առաքելոցն զնշոյլ ինչ աստուածային փառաց իւրոց, առեալ զՊետրոս, զՅակոբոս և զՅովհաննէս եհան 'ի գլուխ լերինն՝ որ կարծի լեառն Թաբոր։ Անդ 'ի ժամ աղօթիցն պայծառացան երեսք նորա իբրև զարեգակն, և հանդերձք նորա եղեն սպիտակ իբրև զձիւն։ Առաքեալքն քանզի 'ի քուն էին՝ սթափեալք 'ի թմրութենէն՝ վկայք եղեն այլակերպութեան վարդապետին իւրեանց. տեսին անդ զՄովսէս և զԵղիա զմարգարէս, որք խօսէին ընդ Յիսուսի յաղագս չարչարանաց և մահուն զոր հանդերձեալ էր կրել յԵրուսաղէմ։

Յափշտակեալ Պետրոսի 'ի չքնաղ սքանչելեացն, յօժարամիտ առաջի առնէր փրկչին կանգնել անդ 'ի լերինն երիս տաղաւարս. զմին վասն Յիսուսի, զերկրորդն Մովսէսի, և զերրորդն Եղիայի։ Բայց մինչդեռ զայն խօսէր՝ անյայտացան մարգարէքն երկոքին, և ամպ լուսաւոր հովանի եղև աշակերտացն՝ որք և լուան յամպոյ անտի, եթէ «Դա է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ»։ Ի ձայնէ անտի զարհուրեալ առաքելոցն անկան յերկիր, այլ անդրէն կանգնեաց զնոսա Յիսուս։

Ընդ առաւօտն մինչդեռ իջանէին 'ի լեռնէ անտի, պատուիրեաց նոցա Յիսուս մի պատմել ումեք զտեսիլն զայն մինչև ցժամ յարութեան իւրոյ 'ի մեռելոց. սակայն առաքեալքն ոչ կարացին իմանալ զխորհուրդ յարութեանն՝ որ հանդերձեալ էր լինել յետ մահու նորա. նմին իրի հարցանէին ընդ միմեանս, թէ զինչ իցէ 'ի մեռելոյն յառնել։ Ապա հարցին զՅիսուս, եթէ զիարդ դպիրքն քարոզեն՝ թէ Եղիայի նախ պարտ է գալ. իսկ Յիսուս ետ պատասխանի, թէ մարմնաւոր գալուստն Եղիայի թէպէտ և սահմանեալ է նախ քան զվերջին օրն 'ի յարդարել զամենայն, սակայն հոգւով

38
642

և զօրութեամբ եկեալ խոկ է յանձին Յովհաննու Մ՚կրտչի, զոր ոչ ծանեան Հրեայք, այլ մերժեցին զանզուգական զայն մարգարէ, և արարին ընդ նմա զոր ինչ և կամեցան ։ Եւս նախապատմեաց նոցա և զոր հանդերձեալ էին առնել ընդ ինքն, Որդի մարդոյ զանձն անուանելով, քողարկութեամբ աստուածային իւրոյ մեծութեանն ։

ԳԼՈՒԽ Ժ.

Քահանայք, Փարիսեցիք և Սադուկեցիք թշնամիք Յիսուսի ։

ԵԿԵԱԼ էր փրկիչն ՚ի խափանել զխտրանս օրինաց հնոյն, և ուսուցանել մարդկան զիրապէսն աստուածպաշտութիւն հոգւով և ճշմարտութեամբ, առնուլ ՚ի բաց զպատրուակ ստապատիր առաքինութեանց, և զճշմարիտն հաստատել անկեղծ սիրով ։ Այլ զի այս աստուածային վարդապետութիւն ՚ի վնաս էր քահանայից և փարիսեցւոց, նոքին իսկ շարժեցան նորա յատելութիւն. քանզի քահանայք զշահ օգտի իւրեանց լիաձեռն քաղէին ՚ի բազմաթիւ զոհից և ՚ի պատարագաց՝ զոր ժողովուրդն յորդորէին, իսկ փարիսեցիք պատուասէրք՝ ճգնազգեաց կեղծաւորութեամբ փառս որսային ՚ի մարդկանէ, և իշխէին ՚ի վերայ ժողովրդեան ։

Փարիսեցւոյն աղանդ զօրաւորագոյն էր քան զայլսն, զի խստութեամբ վարուց, պահեցողութեամբ, արտաքին ճգնութեամբ և օրինապահութեամբ ձգէին յանձինս զգովեստ և զակնածութիւն առ հասարակ զամբոխին. որպէս և համբաւ սրբութեան տարածեալ զնոցայն ՚ի ժողովրդեանն՝ մեծարգոյ առնէր զնոսա իբրու ճնաշխարհիկս [illegible], և խորամանկ հնարիւք արտաքին խստութեան այնպէս զօրացեալ էր տիրապետութիւն նոցա, մինչև իշխանաց անգամ զգուշութեամբ վարել ընդ փարիսեցիսն ։

Իսկ աղանդ և վարդապետութիւն Սադուկեցւոց ամենայնիւ հակառակ էին փարիսեցւոց. զի Սադուկեցիք չհաւատային յարութեան, և թէ գոյցեն անմարմին հոգիք. վասն որոյ ոչ պատուհաս և ոչ հատուցումն վարձուց դնէին ՚ի հանդերձեալսն ։ Յանդգնէին քարզեր, եթէ նախախնամութիւնն ոչ ինչ ազդիցէ 'ի գործողութիւնս և 'ի կամս մարդկան, որպէս թէ մարդ կարող իցէ ինքնին առանց երկնային նպաստից կատարել զօրէնս։ Այլոյն հակառակ՝ Փարիսեցիքն ընդունէին զգոյութիւն հրեշտակաց և անմարմին հոգւոց. հաւատային 'ի հանդերձեալ կեանս և 'ի յարութիւն մեռելոց. սակայն թուի թէ յարութիւն կոչէին զհոգեփոխութիւն մարմնոց 'ի մարմինս. զի ըստ Յովսեպոսի՝ հաւատային եթէ հոգիք չարագործաց արգելեալ կայցեն 'ի բանտի յաւիտենական տանջանաց, իսկ հոգիք առաքինեաց վերստին դառնալով 'ի կեանս՝ յայլ մարմինս մտանիցեն։

Արդ քանզի վարդապետութիւն սոցա առ երեսս ոչ յայտ առնէր ինչ երևելով քան զՍադուկեցւոյն՝ կարի յայտ վտանգաւոր էր, մանաւանդ զի յանդուգն և նախանձախնդիր բարք նոցա մեծապէս խոչընդոտն լինէին որոց միանգամ՝ կամէին ածել զմարդիկ յողջմտութիւն առաքինութեան. վասն որոյ 'ի պատճառս չարեացն և մնասուց զոր գործէին, և բարեացն որոց խափան լինէին, Յիսուս վարելով զիրաւունս առաքելութեան իւրոյ՝ անուանեաց զնոսին ծնունդս իժից, կեղծաւորս, և գերեզմանս բռեալս։ Ոչ 'ի սկզբանէ անտի քարոզութեանն Յիսուսի գուն գործեցին Փարիսեցիք գրգռել զժողովուրդն ընդդէմ նորա. սակայն մինչև պատմեալ մեր զօրինակ դաւանայն, որով յորդորեցան ժողովուրդք 'ի թշնամութիւն ընդդէմ Յիսուսի, ասասցուք ինչ ինչ ևս զհոգեջան վարդապետաց նորա։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Բժշկութիւն գիւահարին։ — Խրատք խոնարհութեան և հեզութեան։

ՅԻՍՈՒՍ իջեալ 'ի լեռնէ անտի՝ ուր եցոյց զփառս աստուածութեան իւրոյ, դարձաւ առ աշակերտսն որք 'ի տափարակի կային առ չկարելոյ բժշկել զդիւանեալն հանի, լուսնոտ և դիւահար. ընդ երևել փրկչին՝ ժողովուրդն առ հասարակ խռնեցաւ առաջի նորա, և հայր ախտացելոյն ոտ աղերսանօք խնդրէր զբժշկութիւն որդւոյն՝ ընկալու զշնորհն 'ի Յիսուսէ։ Իսկ աշակերտ-

տայն զարմացեալ ընդ տկարութիւն իւրեանց 'ի հալածել զդեւն, խնդրէին գիտել զպատճառն. որոց պատասխանի տուեալ Յիսուսի՝ յայտ արար զթերահաւատութիւն նոցա. "Զի այս ազգ դիւաց, ասէ, չհալածի երբէք՝ եթէ ոչ աղօթիւք և պահօք":

Յետ այնորիկ եկն Յիսուս 'ի Կափառնաում, ուր հարկապահանջք տաճարին մատեան առ սուրբն Պետրոս հարցանել վասն Յիսուսի՝ թէ յանձն առնուցու՞ հատուցանել զերկդրամեան անուանեալ հարկն: Սակայն Յիսուսի կանխելով քան զհարցումն առաքելոյն՝ ծանոյց, թէ իբրև որդի Աստուծոյ կարող էր ազատանալ 'ի հարկէ անտի. բայց պատուիրեաց նմա գնալ 'ի ծովեզրն առ երի քաղաքին, և ընկենուլ զկարթ, և առաջին որս ձկանն բաւական լիցի 'ի հատուցումն հարկին վասն երկոցունց: Կամակար հնազանդեալ Պետրոսի՝ եգիտ 'ի բերան ձկանն ըմբռնելոյ զսիկղ կամ զստատեր արծաթոյ, զորոյ զկէսն հատոյց վասն իւր, և զկէսն վասն վարդապետին, ընկալեալ այնու զվարձս միամիտ և անընդդիմակ հնազանդութեան իւրոյ:

Մինչդեռ գնային աշակերտքն 'ի Կափառնաում, խորհէին յուղին յաղագս նախապատուութեան՝ թէ ով 'ի նոցանէ համարիցի մեծ. և 'ի փարատել զերկմտութիւն իւրեանց՝ հարցանեն զՅիսուս, թէ ո՞ ոք 'ի մէնջ լինիցի մեծ յարքայութեանն երկնից: Իսկ տէրն կամելով տալ նոցա խրատ խոնարհութեան՝ ասէ. Առ 'ի լինելոյ նախադաս և առաջին՝ պարտ է խնդրել զյետինն լինել: Եւ առ այս յօրինակ զգալի՝ կալեալ զձեռանէ մանկան փոքու, յաւել ասել. Եթէ կամիք մտանել յարքայութիւն Հօր իմոյ, հարկ է ձեզ լինել իբրև զմանուկս զայս: Եւ 'ի սոյն փոխական յորդոր յաւել և զկանոն եղբայրական խրատու և յանդիմանութեան: Յայնմ պահու 'ի հարցանել Պետրոսի զՅիսուս, եթէ եղբօր մեղուցելոյ օրէն իցէ ներել մինչև չեօթն անգամ, նա պատասխանի, թէ "Մինչև չեօթանասնեկին եօթն": զոր և ստուգեաց առակաւ ծառային, որում ներեալ էր տէր նորա զպարտս տասն հազար տաղանդաց. իսկ ծառայն այնպէս յետ ընդունելութեան այնր ներման՝ վարեցաւ անգութ խստութեամբ ընդ ծառայակցին իւրում, որ պարտէր *նմա հարիւր դահեկան։ Ի լսել տեառն նորա զանգթութիւնն, եւ արկանել զնա 'ի բանտ, մատնելով 'ի ձեռս դատաւորին մինչեւ հատուսցէ զամենայն ըզպարտսն։ "Այնպէս եւ Աստուած արասցէ, ասէ, եթէ ոչ թողուցուք իւրաքանչիւր եղբօր իւրում 'ի սրտից ձերոց զյանցանս նոցա"։*

ԳԼՈՒԽ ԺԲ.

Անխտրականութիւն Յիսուսի։ — Բժշկութիւն տասանց բորոտից։ — Իրք կնոջն շնացելոյ։

Ի մերձենալ տօնի տաղաւարահարաց՝ խուռն բազմութիւն Հրէից 'ի պատճառս հանդիսին դիմէին յԵրուսաղէմ. եւ այս տօն դիպաւ յերեքտասաներորդի աւուր ամսեանն հոկտեմբերի, յամին երեսներորդի երկրորդի։ Ազգակիցքն Յիսուսի, որք տակաւին չէին հաւատացեալ 'ի փրկիչն, յորդորէին զնա գնալ անդր եւ յայտնել զանձն աշխարհի. սակայն Յիսուսի հրաժարեալ 'ի գնալոյ ընդ նոսա, կամեցաւ ինքնին առանձինն ելանել յԵրուսաղէմ, ոչ յայտնի՝ այլ իբրեւ 'ի ծածուկ։ Եւ յանցանելն ընդ Սամարիա՝ քանզի բնակիչք տեղւոյն չկամեցան տալ նմա օթեւանս, զայրացեալ Յակոբայ եւ Յովհաննու խնդրեցին 'ի Յիսուսէ թոյլ տալ նոցա, զի երկնաւոր հրով պատուհասեսցեն զբնակիչսն որպէս արար Եղիա։ Սակայն Յիսուս՝ աղբիւրն բարութեան եւ մարդասիրութեան քաղցր՝ արգել եւ անգոսնելի եցոյց զցասումն նոցա, ասելով. "Ոչ գիտէք որոյ հոգւոյ էք դուք. զի ես ոչ եկի կորուսանել զմարդկան ոգիս, այլ կեցուցանել"։ Օտարատեցութիւն բնակչաց երկրին ոչ խափանեաց զնա 'ի ցուցանելոյ զբարերարութիւն իւր առ տասն բորոտս, որք հայցէին 'ի նմանէ զբժշկութիւն ախտին. զի միով բանիւ բժշկեաց զամենեսին զնոսա, թէպէտ եւ անշնորհակալ գտան իննունքն, որք երբայեցիք էին, բաց 'ի միոջէ անտի սամարացւոյ։

Ապա ժամանեալ Յիսուսի յԵրուսաղէմ, իբրեւ սկիզբն արար ուսուցանել զժողովուրդն 'ի տաճարին, զարմանային ընդ վարդապետութիւն նորա. բայց քա-

հանայապետացն և Փարիսեցւոց զչարեալ նախանձու ընդ շահ հոգևոր օգտին զոր առնէր, գուն գործէին հանապազ դաւաճանել զնա: Յաւուր միում ածին առաջի նորա կին մի ըմբռնեալ 'ի շնութեան, և ասեն ցնա. Վարդապետ, ըստ օրինացն Մովսէսի պարտ է քարկոծել զայսպիսիս. իսկ դու զի՞նչ դատաստան առնիցես: Յայնժամ Յիսուս ետ նոցա պատասխանի, թէ “Անմեղն 'ի ձէնջ. նախ նա ընկեսցէ զքար 'ի վերայ դորա”. զոր 'ի լսելն զամօթի հարեան և խոյս ետուն մի ըստ միոջէ: Ապա ասէ Յիսուս ցկինն. “Քանզի ոչ ոք զքեզ դատապարտեաց, և ոչ ես դատապարտեմ. երթ յայսմ հետէ մի մեղանչեր”: Ամօթապարտ մեկնեցան թշնամիքն Յիսուսի, զի խորհէին ստգտանել զնա իբրև զքակտիչ օրինացն՝ եթէ անդատապարտ արձակէր զկինն. և կամ այլ անգութ համբաւել՝ եթէ վրէժխնդիր պահպանութեան օրինացն լինէր:

ԳԼՈՒԽ ԺԳ.

Բժշկութիւն 'ի ծնէ կուրին: — Առակք Սամարացւոյն, Անառակին և Մեծատան:

ՓԱՐԻՍԵՑԻՔՆ նախանձաւոր համարեալք օրինաց զորս ոչն պահէին՝ եղին 'ի մտի սպանանել զՅս, կամ գէթ 'ի բանս արկանել. իսկ փրկիչն գիտելով զնենգամիտ խորհուրդս նոցա, վկայեաց անպատրուակ՝ եթէ օտարացեալքն յԱստուծոյ չհաւատան աւետարանեալ ճշմարտութեանն: Ընդ այս կշտամբութիւն զայրացեալ կեղծաւորացն այնոցիկ՝ կամէին քարկոծ առնել զնա, և սպանանէին արդեօք՝ եթէ Յիսուս, քանզի չև էր հասեալ ժամ մահուն, ոչ էր խուսեալ 'ի ցասմանէ նոցա: Սակայն առ 'ի դերև հանելոյ զթշնամութեան գրգիռն զոր յուզէին Փարիսեցիք՝ ստել կամելով զհրաշս սքանչելեացն Յիսուսի, տէրն մեր ետ զլոյս աչաց 'ի ծնէ կուրին, առնելով զայն նորագործ բժշկութիւն յաւուր շաբաթու. յորմէ պատճառս առին նոքա զդատապարտութեան և բամբասելոյ զնա իբր յանցաւոր օրինացն Աստուծոյ, և լուծիչ շաբաթու: Բայց բարեմիտքն 'ի նոսա և ուղղադատքն քան զյոգունս, ստիպեցան խոստովանել՝ թէ այսպիսի սքանչելիս անհնար է թէ գործեսցէ այր չարագործ։

Իսկ թշնամիքն Յիսուսի կամելով ստել զհրաշսն, կոչեցին զծնողս կուրին բժշկելոյ՝ ստուգել 'ի նոցանէ թէ կուրութիւն որդւոյ նոցա 'ի ծնէ՞ իցէ, և թէ զիարդ անակնկալ ստացեալ զբժշկութիւն։ Եւ 'ի վկայել նոցա ճշմարտութեան եղելոյն՝ ոչ կարացեալ Փարիսեցւոց նսեմացուցանել զանաղօտ զօրութիւն փրկչին, տարագիր 'ի ժողովրդենէն արարին զկոյրն շնորհընկալ. զորմէ իբրև լուաւ Յիսուս, եգիտ զնա և եհարց՝ թէ Հաւատա՞ս յորդի Աստուծոյ. և յասել կուրին բժշկելոյ, թէ Տէր ո՞վ է, զի հաւատացից 'ի նա, ասէ փրկիչն աշխարհի. Ես եմ։ Իսկ նորա անդէն առ նմին դառնեալ ասէ. Հաւատամ տէր. և խոնարհեալ երկիր եպագ նմա։

Յաւուր միում մինչդեռ խօսէր Յիսուս յաղագս սիրոյ ընկերին, մի ոմն յօրինականաց եհարց ցնա՝ թէ Ո՞վ իցէ իմ ընկեր. իսկ տէրն խրատել զնա կամելով՝ առակս 'ի մէջ բերեալ ասէ. Այր մի ուղևոր կողոպտեալ և վիրաւորեալ յաւազակաց՝ անկեալ դնէր 'ի ճանապարհի. և եղև անցանել ընդ այն քահանայի միոջ, որոյ տեսեալ զվիրաւորն անփոյթ եղև զնմանէ. նոյնպէս և Ղևտացի մի անց առ նովաւ, ոչ ինչ խնամս գթասիրութեան ցուցանելով 'ի վերայ նորա։ Զկնի նոցա Սամարացի ոմն ճանապարհորդեալ ընդ այն, ետես և գթացաւ 'ի նա. վասն որոյ բարձեալ 'ի վերայ գրաստու՝ ած զնա 'ի պանդոկի մի, պատեաց զվէրս նորա, և պատուիրեաց պանդոկապետին մատակարարել նմին զկարևորսն, թողլով առ նմա գումար ինչ դրամոց 'ի խնամարկել զվիրաւորն։ Ապա 'ի վերայ եած փրկիչն, թէ Ո՞ 'ի սոցունց աստի ուղևորաց համարիցի բարեսէր ընկեր վիրաւորելոյն։ Եւ 'ի պատասխանի տալ օրինականին՝ թէ Որ արարն զողորմութիւն, յաւել փրկիչն, թէ Երթ և դու արա նոյնպէս։

Այսպիսի օրինակաւ վարժէին 'ի Յիսուսէ բարեմիտքն 'ի ժողովրդենէն, և ափ 'ի բերան լինէին վարդապետքն օրինաց. զի ըստ իւրաքանչիւր վիճակի կենաց յարմարէր զհրահանգս փրկական վարդապետութեան իւրոյ։ Գթասիրեալ կարեկցութեամբ ընդ անուղղայ ընթացս մեղաւորաց, այդու և զգալի օրինակօք ցուցանէր նոցա զպտուղ ճշմարիտ դարձի առ Աստուած, նկարագրելով զանձն իւր մերթ իբր հովիւ բարի, որոյ գտեալ զմոլորեալ ոչխարն, և բարձեալ յուս ամփոփի 'ի փարախ. և մերթ առեալ իւր 'ի նմանութիւն զօրինակ կնոջ որ 'ի գիւտ կորուսեալ դրամոյն ցնծայր մեծապէս ։ Սակայն քան զամենայն օրինակս զորս եբեր 'ի յորդոր դարձի մեղաւորաց՝ ազդողագոյն է նկարագիր դարձի անառակ որդւոյն ։

Առն միոջ էին, ասէ, երկու որդիք. կրտսերն 'ի նոցանէ խնդրեաց զբաժինն որ 'ի հայրենի ժառանգութենէն անկ էր նմա. զոր և առեալ գնաց յաշխարհ հեռի, և անդ վատնեաց զինչս իւր անառակ վարուք ։ Ապա հասեալ 'ի յետին թշուառութիւն, ստիպեցաւ խոզարած լինել. և յայն դառն և յանբերելի վիշտս 'ի միտս եկեալ, խորհեցաւ դառնալ 'ի տուն հօր իւրոյ ։ Իբրև եհաս 'ի հայրենիսն, ընդ առաջ ել նմա հայրն իւր, և տեսեալ զորդին գորովեցաւ ընդ վիճակ թշուառութեան նորա. անկաւ զպարանոցաւն և համբուրեաց զնա ։ Յայնժամ որդին սրտառուչ պաղատանօք եկեալ 'ի զղջումն՝ ասէ. “ Հայր իմ, մեղայ յերկինս և առաջի քո. ոչ ես եմ արժանի կոչել որդի քո „ ։ Զոր իբրև լուաւ հայրն, առաւել ևս խանդաղատեալ զնովաւ՝ հրամանս ետ ծառայից զգեցուցանել նմա զառաջին պատմուճանն, և զենուլ զեզն պարարակ, զի մեծահաց կոչնովք յայտնի արասցէ զառաւելութիւն խնդութեան սրտին ։ Յայնմ պահու ցնծալից բերկրութեան՝ երէց որդին որ էր յագարակի՝ դարձ արարեալ 'ի տուն, ետես զհանդէս ուրախութեանն, և խնդրեալ զպատճառն՝ սկսաւ մեղադիր լինել բարեսէր գթութեան հօրն, որ խնդամիտ քաղցրութեամբ ընկալեալ էր զանառակ որդին ։ Իսկ հայրն ետ պատասխանի. “ Որդեակ, դու հանապազ ընդ իս ես, և ամենայն որ ինչ իմ է՝ քո է. այլ ուրախ լինել և խնդալ պարտ էր, զի եղբայր քո այս մեռեալ էր և եկեաց, կորուսեալ էր և գտաւ „ ։

Ոչ ինչ նուազ ազդողագոյն է և առակ աղքատաց օրինակն Ղազարու, և անգութ մեծատանն, 'ի հրահանգութիւն խստասրտաց և անողորմից, ունելով բանին այսպէս · Այր ոմն էր մեծատուն, որ ձոխաբար զգենոյր և ուրախ լինէր հանապազ առատապէս · և աղքատ ոմն Ղազարոս անուն՝ անկեալ դնէր առ դրան նորա վիրաւոր, և ցանկայր յագել 'ի փշրանաց սեղանոյ մեծատանն ։ Եւ եղև մեռանել աղքատին, և զհոգի նորա տարան հրեշտակք 'ի տեղի հանգստեան, ուր էր և Նահապետն Աբրահամ ։ Մեռաւ և մեծատունն արժանին տանջանաց գեհենի, ուր և ընկեցաւ 'ի պատուհաս իւրոց մեղանաց · և մինչդեռ 'ի տանջանս էր՝ տեսեալ զԱբրահամ 'ի հեռաստանէ՝ սկսաւ աղաղակել առ նա խնդրելով ողորմութիւն, առաքել զՂազարոս՝ զի ծագիւ մատին իւրոյ տացէ կաթիլ մի ջրոյ 'ի զովացումն պապակեալ լեզուին ։ Յայնժամ Աբրահամ ետ պատասխանի · Որդեակ իմ, ասէ, զոր օրինակ դու ընկալար զբարիս 'ի կեանսն քում, նոյնպէս և Ղազարոս զչարչարանս · արդ սա աստ ունի զիւր վարձս մխիթարութեան վասն վշտացն որոց տարաւ 'ի կեանս, իսկ դու պատուհասեալ կաս անշէջ հրով սակս վայելից զուարճութեանդ ։ Այլ և զայն գիտասջիր, զի վիհ մեծ է ընդ քեզ և ընդ նա, որով չկարէ նա ձեռն տալ քեզ ։ Ապա յաւել մեծատունն աղաչել, զի գէթ յուղարկեսցէ զնա 'ի տուն հօր իւրոյ առ հնգեսին եղբարս իւր, ազդել նոցա՝ զի զգուշասցին չհասանել ընթացից զոր իւր կալեալ էր · զի մի՛ ասէ և նոքա գայցեն յայս տեղի տանջանաց ։ Եւ պատասխանի Աբրահամ· “Ունին զՄովսէս և զմարգարէս, նոցա լուիցեն„ · զի եթէ՝ ասէ, օրինացն Մովսեսի և մարգարէից ոչ հնազանդին, զի՛նչ շահ խրատու լինիցի նոցա 'ի քարոզութենէ մեռելոյ ուրուք որ երթայցէ առ նոսա ։

Առակքս քարոզեալք առ պատրաստականն սրտիւք՝ բաւականք էին յառնուլ 'ի միտ զգիտումն վարդապետութեան փրկչին · և այսքիկ թէպէտ և պատմեցան 'ի Նմանէ յայլ և յայլ դէպս և 'ի ժամանակս, սակայն մեք հաւաքեցաք 'ի մի գլուխ՝ յառաւել լուսաւորութիւն բանիցն որք կարգին յուսումն պարտուց մարդկան ։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Ընտրութիւն եօթանասուն և երկու աշակերտաց: — Յարութիւն Ղազարու:

Յետ բժշկելոյ զ'ի ծնէ կոյրն՝ խնամ կալեալ Յսի հրահանգել զժողովուրդն, ընտրեաց զեօթանասուն և զերկու աշակերտս, զորս առաքեաց երկուս երկուս քարոզել 'ի տեղիս յորս ինքն հանդերձեալ էր գնալ. պատուիրելով նոցա պաղատիլ առ տէր զի պարգևեսցէ քրտնաջան մշակս յայգի իւր. զի "Հունձք բազում են, ասէ, և մշակք սակաւք": Ապա յաւել 'ի վերայ զյորդոր խրատու. Համարեսջիք, ասէ, զանձինս ձեր իբրև զգառինս 'ի մէջ գայլոց. եղերուք խորագէտք իբրև զօձս, և միամիտք իբրև զաղաւնիս. զկենցաղականն արհամարհելով՝ զմարմնոյ հանգիստ և զճոխութիւն ընչից, զէտակն կալեալ վերին նախախնամութեանն ևեթ, կերայք զոր ինչ առաջի դնիցեն ձեր հիւրընկալքն, առանց ցանկանալոյ իմիք և տրտնջելոյ զիրաց ինչ: Պատուիրեաց նոցա զկայ առնուլ և նստել 'ի տան՝ որ հիւրասէր մտօք ընկալցի զնոսա, և կատարել անդ զպաշտօն առաքելութեան իւրեանց: Յուշ արար նոցա բարիս առնել ամենեցուն, և ետ զզօրութիւն բժշկելոյ զցաւս 'ի շահել զմիտս բարեսէր հիւրընկալաց, զհոգի խաղաղութեան և սիրոյ ցուցանելով յամենայնի յանձինս: Իսկ առ հակառակորդն թօթափել ևեթ զփոշի ոտից իւրեանց, յայտ արարեալ թէ յաւուրն դատաստանի վրիժապարտք գոլցին այնպիսիքն քան զբնակիչս երկրին Սոդոմացւոց. Որ ձեզ լսէ, ասէ, ինձ լսէ. և որ զձեզ անարգէ, զիս անարգէ. և անարգանքն իմ առ Աստուած ելանեն՝ որ զիսն առաքեաց:

Մարթա և Մարիամ ընդ եղբօր իւրեանց Ղազարու բնակէին 'ի Բեթանիա աւան փոքրիկ երկուք մղոնօք հեռի յԵրուսաղեմէ առ ոտս լերինն Ձիթենեաց: Յիսուս քանզի սիրէր զնոսա սակս բարեկրօնութեան և ազնուատոհմութեան նոցին, 'ի գնալ իւրում յԵրուսաղէմ, որպէս և 'ի զանազան ամսի, սովոր էր օթեւանել առ նոսա ։ Ի միում նուագի Մարիամ նստեալ առ ոտն Յիսուսի ունկն դնէր կենսաբեր խրատուց նորա ․ և ահա Մարթա զբաղեալն ՚ի բազում սպասու՝ եկն եկաց առ Յիսուսի, և մեղադիր լինէր քեռ իւրում՝ որ զբեռն աշխատութեան թողեալ էր յիւր վերայ ։ Յիսուս ետ նմա պատասխանի ․ Մարթա, դու հոգաս և զբաղում իւիք զբաղեալ ես յանօգուտս ․ ուր աստ սակաւ ինչ բաւական է ․ սմին իրի Մարիամ ընտրող գտաւ լաւագունին, որ ոչ բարձցի ՚ի նմանէ ։

Մեկնեալ փրկչին ՚ի Բեթանիոյ՝ գնաց ՚ի կողմանս Յորդանանու, ՚ի տեղին ուր երբեմն Կարապետն Յովհաննէս մկրտութիւն տանէր ․ և յետ երից կամ չորից աւուրց ընկալաւ ՚ի Մարեմայ և ՚ի Մարթայէ զլուր հիւանդութեանն Ղազարու սիրեցելոյ ՚ի նմանէ ․ զոր իբրև լուաւ՝ ասէ ․ Հիւանդութիւնն այն պատճառ տացէ յայտնութեան փառացն Աստուծոյ ․ վասն որոյ զտեղի կալաւ անդ այլ ևս աւուրս երկուս՝ մինչև մեռաւ Ղազարոս, և ապա դարձաւ Յիսուս ՚ի Բեթանիա ։ Որում ընդ առաջ եկեալ Մարթայի, ասէ ․ «Տէր, եղբայրն իմ չէր մեռեալ՝ եթէ դու աստ լեալ էիր »։ Ասէ ցնա Յիսուս ․ «Յարիցէ եղբայրն քո »։ Առ այն բան յաւել Մարթա ․ «Գիտեմ զի յարիցէ յաւուրն յետնում »։ Իսկ ՚ի հարցանել փրկչին, թէ Հաւատայցես զի ես եմ յարութիւն և կեանք, պատասխանի ետ Մարթա ․ «Այո տէր, ես հաւատացի, եթէ դու ես Քրիստոսն որդի Աստուծոյ կենդանւոյ »։ Յետ բանիցս այսոցիկ գնաց Մարթա կոչել զՄարիամ զքոյր իւր ․ որոյ եկեալ թախծագին սրտիւ և արտասուօք անկաւ առ ոտն Յիսուսի՝ խնդրելով զշնորհս ողորմութեան նորա ։ Գթացեալ փրկչին ընդ կիրս ցաւոց նոցա, գնաց ՚ի գերեզմանն Ղազարու ․ և ձայնեալ զնա յանուանէ աստուածային բարբառովն՝ ետ նմա զկենդանութիւն ։

Նորանշան այս սքանչելիք, որ ՚ի վեր էր քան զչափ մարդկային կարողութեան, ապշեցոյց զմիտս ամենեցուն ․ բայց քահանայք առ նախանձու չարութեան խորհեցան ոչ միայն զՅիսուս՝ այլ և զՂազար բառնալ ՚ի կենաց ։ Կամաւոր կուրութիւն բերելով յանձինս՝ անգանէին զնշանն որք բաւական էին ՚ի շահել զխոնարհամիտս պատրաստականս յընդունելութ՟ի աստուածային շնորհաց· իսկ ինքնահաւան օրինականքն և կեղծաւոր քահանայք՝ ամօթապարտեալք յարտաքին աղքատութեանն Յիսուսի, յամառեալք 'ի չարիս չկամէին անսալ և հաւանել հրաշիցն, որովք ամենակարողութիւնն Աստուծոյ պայծառ փայլէր 'ի միածնին Յիսուս։ Խորհեցան սպանանել և զՂազար՝ որ ակներև համօրէն ազգին յետ չորեքօրեայ մահուան և հոտոյ 'ի գերեզմանի՝ ստացեալ էր զառողջու՟ի կենդանութ՟ե· զի զայրոյթ մախանաց իւրեանց չներէր տեսանել զանստելի վկայ ճշմարտութեան մեսիային, զոր նոքա չկամէին ընդունել։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Յիսուս մտանէ փառօք յԵրուսաղէմ, և արտաքսէ զվաճառականսն 'ի տաճարէն։

ԳԻՏԵԼՈՎ փրկչին զպարամիտ խորհուրդս թշնամեաց իւրոց, առանձնացաւ յԵփրայիմ 'ի կողմանս Յորդանանու, ուր եկաց մինչև ցքսան և չորս ամսեանն մարտի յերեսներորդի երրորդի ամի հասակին իւրոյ։ Ի հասանել ժամանակի կատարման խորհրդոյ փրկութեան մերոյ, կամեցաւ գնալ յԵրուսաղէմ. և անցեալ ընդ Երիքով՝ եցոյց անդանօր զազդումն շնորհաց իւրոց առ մաքսաւորն Զաքէոս, որոյ կարճ՝ գոլով հասակաւ՝ 'ի ծառ ելեալ անձկայր տեսանել զՅիսուս· ընդ որ հաճեալ փրկչին՝ հրամայեաց նմա իջանել 'ի վայր, և կամեցաւ ագանել 'ի տան նորա· ուր քաղցր և ազդուբանիւք այնպէս զգածեցոյց զսիրտ նորա, մինչև Զաքէի եկեալ 'ի զղջումն՝ խոստացաւ տալ զկէս ընչից իւրոց աղքատաց, և զրկեցելոցն յիւրմէ հատուցանել չորեքկին։

Տէրն մեր յետ գործելոյ զփրկութիւն տանն Զաքէի՝ ելեալ յԵրիքովէ գնաց 'ի Բեթանիա վեց աւուրբք յառաջ քան զտօն զատկին, և պատուեաց զՍիմոն զբորոտն գնալով 'ի տուն նորա· որ և արար ընդունելութիւն մեծ 'ի տան իւրում, և Ղազար մի էր 'ի հրաւիրելոցն։ Յայն կոչունս կին մի մեղաւոր Մարիամ անուն, յորդորեալ 'ի սիրոյ փրկչին և յապաշաւանաց սրտին ընդ մեղս իւր, եկեալ անդր յորդառատ արտասուօք թանայր զոտսն Յիսուսի, և օծանէր իւղով նարդոսի, որ էր բազմագին և անուշահոտ յոյժ։ Զայն տեսեալ Յուդայի, որ մի էր յառաքելոց, և խորհէր մատնել զիւր վարդապետ, զայրացաւ ընդ այն. և կամելով անգոսնելի ցուցանել զգործս կնոջն, պատճառս յօդէր՝ եթէ խնամածու երևեալ աղքատաց, թէ մարթ էր զայդ իւղ վաճառել մեծագնի, և զգինսն բաշխել աղքատաց։ Սակայն Յիսուս ետ պատասխանի. «Զաղքատս, ասէ, յամենայն ժամ ընդ ձեզ ունիք, բայց զիս ոչ հանապազ առ ձեզ ունիցիք»։ Սոյին բանիւ 'ի գովեստ առեալ զարենախանձ փոյթն Մարիամու՝ յայտ արար զգաղտնի խորհուրդ չարութեանն Յուդայի, որ ընդ քօղով աղքատասիրութեան պատրուակեալ էր զիւր ագահութիւն։

Ի վաղիւ անդր որ էր կիւրակէ, հեծեալ Յիսուսի 'ի վերայ իշոյ կամեցաւ յաղթանակաւ մտանել յԵրուսաղէմ։ Իբրև ծանեաւ ժողովուրդն զմերձենալ նորա 'ի քաղաքն, ել նմա ընդ առաջ խնդալից ցնծութեամբ. ոմանք տարածանէին զհանդերձս իւրեանց 'ի վերայ ճանապարհին, և այլք հատանէին ոստս 'ի ծառոց և սփռէին զճանապարհաւն ընդ որ անցանէր, աղաղակելով առ հասարակ. «Օրհնեալ եկեալդ անուամբ տեառն, ովսաննա որդւոյ Դաւթի, օրհնութիւն 'ի բարձունս»։

Այսպիսի ցնծալից հանդիսիւ եմուտ Յիսուս 'ի քաղաքն Երուսաղէմ. սակայն իբրև ետես զայն՝ շարժեցաւ 'ի գորով գթոյ վասն պատուհասին զոր հանդերձեալ էր կրել այն քաղաք 'ի սպառ կործանմամբն ըստ նախագուշակութեանն. վասն որոյ ելաց 'ի վերայ նորա, զի ոչ ծանեաւ նա զժամանակ աստուածապարգև այցելութեանն 'ի բարիս։

Իբրև եմուտ Յիսուս յԵրուսաղէմ, նախ առաջին յայց ելեալ 'ի տաճարն Աստուծոյ՝ արտաքս եհան անտի զվաճառականսն և զսեղանաւորս, որք պղծէին զսրբութիւն տանն Աստուծոյ. զի չէ արժան, ասէ, տան Հօր իմոյ լինել բնակարան աւազակաց։ Եւ 'ի ցասնուլ քահանայապետիցն ընդ յաղթանակաւ մուտն նորա

Յերուսաղէմ, և ընդ արտաքսել զվաճառականսն 'ի տաճարէն, հարցին զՅիսուս, թէ ուստի ունիցի զայն իշխանութիւն օրինապահ խստութեան։ Նա պատասխանի հարցողական բանիւ, եթէ Յովհաննէս Մկրտիչ որով իշխանութեամբ մկրտէր զմարդիկ յանապատին. յայտ արարեալ՝ թէ աստուածահաղորդ իշխանութիւնն անհետաղօտելի է, և անկարօտ մարդկային հրամանաց։

Յայնմ պահու հեթանոսք ոմանք՝ եկեալ 'ի տաճարն յերկրպագութիւն պաշտամանն Աստուծոյ, փափաքէին տեսանել զՅիսուս, որ յանձն առ երևել նոցա, և եցոյց զփառս իւր երկնաւոր ձայնիւ իբր ահեղ որոտման՝ լսելի առնելով ամենեցուն։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Հարկատուութիւն առ կայսր։ — Հրահանգք խրատու և յանդիմանութեան առ փարիսեցիսն և Սադուկեցիս։ — Լումայք այրի կնոջն։

ՓՐԿԻՉՆ մեր յերկուսին աւուրսն որ յետ յաղթանական մտիցն Յերուսաղէմ, խնամ կալաւ հրահանգել զառաքեալսն իւր, զաշակերտս և զժողովուրդն։ Իսկ դպիրքն անդադար խորհէին գտանել հնարս մահապարտ ցուցանելոյ զնա օրինաց աշխարհակալ տէրութեանն. վասն որոյ 'ի ձեռն աշակերտաց իւրեանց առաջի արարին նմա զնենգաւոր հարցումն, խնդրելով զլուծումն երկմտութեանն՝ թէ արժան իցէ հարկս տալ կայսեր՝ թէ ոչ։ Գիտացեալ Յիսուսի զդաւաճան միտս նոցա, ետ բերել զդահեկան մի, և ասէ. Ո՞յր է պատկերս այս գրոշմեալ։ Որում իբրև ետուն դպիրքն պատասխանի՝ թէ կայսեր, յաւել տէրն մեր. «Լաթայք, տուք զկայսերն՝ կայսեր, և զԱստուծոյն Աստուծոյ»։ Սովին ամենիմաստ պատասխանեաւ, որ ոչ Հրէից և ոչ հեթանոսաց անգամ սանանէր, յապուշ կրթեաց զամենեսին. զի չարգելցը զժողովուրդն 'ի

---

1 Հեթանոսս այսպէս թուին լինել դեսպանքն Աբգարու թագաւորին Հայոց. որք եկեալ էին անդր 'ի խնդրել զհնարս բժշկութեան ախտի տեառն իւրեանց. զորոյ զպատմութիւնն կարդասցուք յառաջին դարու։

տալոյ զկարեւոր հարկս իշխանին. բայց յուշ արար նոցա չմերժանալ և 'ի պարտուպատշաճ՝ պատուոյն որ անկ է Աստուծոյ. որով բանադատեցան կուսակիցքն Փարիսեցւոց լի ամօթով և զարմացմամբ դարձան յետս։

Սադուկեցիք որ չհաւատային անմահութեան հոգւոյ, յօժարեցան նոյնպէս փորձել զՅիսուս. առաջի արարին նմա զխնդիր ինչ իբր ընդ կատակս՝ քան յուսումն ճշմարտութեան. Կին մի, ասեն, եղև հետ զհետէ ամուսին արանց եօթանց. արդ 'ի յարութեանն հանդերձելոյ ո՞ր 'ի նոցանէ լինիցի կին։ Առ որս տէրն մեր ետ պատասխանի՝ թէ 'ի յարութեան անդ ոչ եւս լինիցին ամուսնութիւնք. զի մարդիկ յայնժամ իբրև զհրեշտակս կացցեն մնացեն անմահք, և չունիցին պէտս ծննդագործութեան։ Ոչ ապաքէն, ասէ, և Մովսէս գրեաց զոր ասացն ցնա Աստուած 'ի մորենւոյն, թէ ես եմ Աստուած Աբրահամու, Իսահակայ և Յակոբայ. արդ՝ Աստուած կենդանեաց է, և ոչ մեռելոց։

Առ սոքօք և այլ ոմն 'ի Փարիսեցւոց մատեաւ հարցանել առ Յիսուս, թէ ո՞ր պատուիրան յօրէնսն մեծագոյն իցէ. իսկ Յիսուս ետ պատասխանի, թէ առաջին քան զամենայն պատուիրան՝ դաւանելն է զմիութիւն Աստուծոյ, և սիրելն զնա յամենայն սրտէ. իսկ երկրորդն՝ սիրել զընկերն իբրև զանձն։ Վարդապետք օրինացն, որք առաջիկայ գտան՝ և ունկնդիր բանիցն Յիսուսի, զարմացեալք ընդ պատասխանիսն՝ լուեցին, և ոչ եւս իշխէին հարցանել ցնա և ոչ ինչ։

Սակայն և այնպէս յանդուգն հակառակութիւն, և գաղտնի թշնամութիւն նոցա առ Յիսուս օր ըստ օրէ զայրանայր. իսկ փրկիչն խնդրելով յաւէտ զհնարս դարձի նոցա՝ քան գրգռել զժողովուրդն ընդդէմ իշխանութեան այնպիսեաց, ասէ ցաշակերտս իւր յանդիման ժողովրդեան. «Դպիրք և Փարիսեցիք նստեալ կան յաթոռն Մովսէսի. զոր ասիցեն ձեզ՝ արարէք, բայց մի առնիցէք ըստ գործոց նոցա, որք ասեն և ոչ առնեն»։ Եւ զի մի կեղծաւորութիւն նոցին զօրեսցէ խաբել զպարզամիտս, ակներև նկարագրեաց զգործս նոցա. բառնան, ասէ, յայլոց վերայ բեռինս ծանունս, և ինքեանք մատամբք իւրեանց ոչ կամին հպել 'ի կատարումն։ Ամենայն խնամք և փոյթ նոցա է զրաւել զյառաջագահս, և կոչել 'ի մարդկանէ վարդապետս. սոքին վասն լայնեն զգրապանակս իւրեանց՝ յորս գրեալ կան պատգամք օրինացն Աստուծոյ, և երկայնեն զքղանցս հանդերձից։ Բայց դուք, ասէ, մի խնդրէք փառս և մնոտի անուանս պատուոյ. այլ որ մեծն է 'ի ձէնջ՝ գուն գործեսցէ լինել սպասաւոր. զի որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի, որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեսցի։ Յաւել դարձեալ կշտամբել զՓարիսեցիսն, նախ զի առաջնորդք էին կոյրք, և փակէին զարքայութիւն երկնից առաջի մարդկան. ինքեանք չկամէին մտանել, և այլոց խափանարարք մտիցն լինէին։ Երկրորդ՝ պատրուակաւ ընդերկար աղօթից՝ յափշտակէին զստացուածս այրեաց։ Երրորդ՝ զի շրջէին ընդ ծով և ընդ ցամաք որսալ զմարդիկ 'ի հաւատս, որք ընդ դաստիարակութեամբ նոցա չար ևս լինէին քան զառաջինն։ Չորրորդ՝ զի հատուցանէին զտասանորդս չնչին և դուզնաքեայ իրաց, մոռացեալ 'ի սպառ զկարևոր մասունս օրինացն, որք են արդարութիւն, ողորմութիւն և հաւատարմութիւն. խնամով միայն զնէին արտաքին մաքրութեան բաժակի և անօթոց, թողլով զներքինն իւրեանց լի աղտեղութեամբ։ Համանմանք էին վայելչայարդար գերեզմանաց, զորս 'ի ներքուստ լի ոսկերաւք մեռելոց և ապականութեամբ։ Շինէին զգերեզմանս մարգարէից, և ժպրհէին ասել. եթէ էաք յաւուրս հարցն մերոց, ոչ հաղորդէաք արեանարբու ատելութեան նոցա ընդդէմ մարգարէից. յայտ առնելով՝ եթէ որդիք են արանցն որք սպանին զառաքեալսն յԱստուծոյ, և ինքեանք իսկ փութան 'ի կատար ածել զչափ հարցն իւրեանց։

Իբրև աւարտեաց Յիսուս զհրահանգս խրատուցն՝ դարձոյց զաչս իւր հայել 'ի գանձանակ տաճարին, ուր արկանէին զտուրս ողորմութեան. և ահա բազում ընչաւէտք արկին զդրամս արծաթիս. ապա եկն աղքատ կին մի այրի, որ արկ երկուս պղնձի դրամս. զոր տեսեալ Յիսուսի՝ յայտ արար աշակերտաց իւրոց, եթէ չնչին տուրք այրւոյն առաւելեալ գտաւ քան զայլոցն ամենեցուն. զի նա ընծայեաց Աստուծոյ զպիտանին ինքեան, ուր այլ մեծատունք յաւելորդաց իւրեանց մատուցին զընծայսն Աստուծոյ։

ԳԼՈՒԽ ԺԸ.

Սահմանադրութիւն սուրբ խորհրդոյ Հաղորդութեան, և լուացումն ոտից առաքելոցն ։

ՅԵՏ միջոց ժամանակի քահանայապետք և գլխաւորք ժողովեցան 'ի պալատ քահանայապետին Կայիափայ՝ գտանել հնարս, թէ զիարդ կորուսցեն զՅիսուս ։ Հրապարակաւ բանադրել առնել զնա զանգիտէին, զի մի ժողովուրդն պաշտպան կացցէ նմին. սակայն մատնիչն Յուդա դիւրացոյց զդժուարութիւնն, յանձն առեալ ինքնին տալ 'ի ձեռս նոցա զիւր վարդապետ, վարձս խնդրելով 'ի նոցանէ դահեկանս երեսուն ։ Չնչին և դուզնաքեայ այն արծաթ կանխաւ գուշակեալ 'ի Զաքարիայ մարգարէէ, ըստ հաշուի այժմեան դրամոց առնէ իբր. քառասուն և ութ դահեկան Գաղղիոյ ։ Արդ անարգն այն և անարժան տուրևառութիւն կատարեցաւ 'ի նմին իսկ յաւուր չորեքշաբաթու. յորում առ ժամանակօք սրբոյն Օգոստինոսի՝ յամենայն եօթնեակս սովոր էին հաւատացեալք ծոմապահել 'ի նոյն խորհուրդ, ըստ որում և ցարդ պահի սովորութիւնն այն յարևելեան եկեղեցիս ։

Իսկ յաւուրն երկրորդի առաքեաց Յիսուս զերկուս յաշակերտաց իւրոց պատրաստել զզատկական ընթրիս 'ի տան զոր ինքն իսկ նշանակեաց ։ Եւ իբրև կազմ էր և պատրաստ ամենայն ինչ 'ի վերնատան սեղանոյ պասեքին, զոր ցանկանալով ցանկայր ուտել ընդ աշակերտս իւր, գնաց անդր ընդ նոսա. ապա 'ի ժամ ընթրեացն յոտն կացեալ սփածաւ զենջակ, և առեալ կոնք մի ջրալից կամեցաւ լուանալ զոտս աշակերտացն ։ Սուրբն Պետրոս տեսեալ առաջի իւր զվարդապետն 'ի ծունկս, ասէ. "Տէր՝ դու զիմ զոտս լուանաս „ ։ Սակայն Յիսուս 'ի հրահանգել զաշակերտսն՝ հարկեցոյց զնա անսալ խոնարհական այնմ իւրոյ պաշտաման, որով ուսոյց նոցա կամակար մտօք հարկանել միմեանց զամենայն սպասաւորութիւնս սիրոյ և գթութեան ։

Ապա վերստին բազմեալ 'ի սեղան, առ զհաց 'ի ձեռին, զոր և օրհնեալ բաշխեաց 'ի մասունս և ետ աառաքելոցն ասելով. «Այս է մարմին իմ, որ վասն ձեր բաշխի»։ Յետոյ առեալ զբաժակ լի գինւով գոհացաւ առ Հայր, և տուեալ աշակերտացն իւրոց՝ ասէ. «Արբէք 'ի դմանէ ամենեքին, զի այդ է արիւն իմ նորոյ ուխտի, որ հեղցի վասն բազմաց 'ի թողութիւն և 'ի քաւութիւն մեղաց»։ Ահա այս եղև սահմանադրութիւն խորհրդոյ հաղորդութեան. յորում բանքն Յիսուսի 'ի կատարելն և 'ի սահմանել զայս խորհուրդ՝ այնպէս մեկնիք են և բացայայտք, միօրինակ աւանդեալ յերեսին աւետարանագիրս, և 'ի թղթի անդ սրբոյն Պօղոսի, մինչև անհնար է կամակորել զայն յայլաբանական միտս, կամ յօրինակական իմաստս առնուլ ըստ հերեսիովտաց. այլ բռնադատիմք իմանալ ըստ ձայնին 'ի նկարագրական միտս, ըստ որում դաւանէ ուղղափառ եկեղեցի ընդ համօրէն արևելեան ազգաց քրիստոնէից։

Յետ սահմանադրութեան խորհրդոյս 'ի նշան անսպառ սիրոյ իւրոյ առ մարդիկ՝ սկսաւ Յիսուս խօսել ընդ աշակերտս իւր քաղցր և ազդու բանիւք յաղագս սիրոյ և միաբանութեան, զոր և կնիք աշակերտութեան իւրոյ աւանդեաց նոցա։ Խօսեցաւ և յաղագս ապաւինութեանն զոր պարտ էր նոցա ունել 'ի հայրագութ տեսչութիւն Աստուծոյ։ Խոստացաւ ևս առաքել առ նոսա զմխիթարիչ սուրբ Հոգին, և նախապատմեաց Պետրոսի զհանդերձեալ ուրացութիւն նորա և զօտարանալն 'ի նմանէ յառաջ քան զհաւուն խօսել։

Ծանոյց ևս՝ թէ մի ոմն 'ի նոցանէ հանդերձեալ է մատնել զինքն, զոր և նշանակաւ պատառոյն յայտ արար թէ Յուդա է, զի օգտեսցի նա և զգաստասցի այնու յետին նշանաւ բարութեան իւրոյ։ Սակայն դևն ագահութեան, որ տիրեալ էր 'ի վերայ սրտին Յուդայի, ստիպեաց զնա ելանել արտաքս 'ի կատարումն խորհրդոյն անօրէնութեան. և իբրև ել՝ ասէ ցնա Յիսուս. «Զոր ինչ առնելոց ես՝ արա վաղվաղակի»։

Ապա Յիսուս յոտն եկաց 'ի սեղանոյն, և մատուցեալ զաղօթս գոհութեան՝ ել 'ի քաղաքէն ընդ աշակերտս իւր գնալ 'ի պարտէզն Գեթսեմանի, որ է ձորն Ձիթենեաց, և 'ի ճանապարհին արար նոցա դարձեալ յորդոր և խրախոյս հաւատարմութեան՝ հսկել և *անմեկնելի մնալ 'ի նմանէ ։ Յուշ արար նոցա և զվիշտս զորս համբերձեալ էին կրել, և զընդունելութիւն պարգևաց Հոգւոյն սրբոյ, և վասն չարչարանաց իւրոց և մահուն և յարութեանն, որք յետ սակաւուց հանդերձեալ էին լինել. որպէս և վասն գայթակղութեան և երկմտութեան նոցա 'ի պատճառս մահուան իւրոյ, և յաղագս ուրացութեանն Պետրոսի ։ Այս ամենայն նախագուշակութիւնք յայտնի ցոյցք էին՝ եթէ կանխագէտ էր նա ամենայնի, և կամաւոր յօժարութեամբ գնայր 'ի մահ ։*

ԳԼՈՒԽ ԺԲ.

Յիսուս աղօթէ 'ի պարտիզին Ձիթենեաց ։ — Մատնեալ ածի 'ի տուն Աննայի և Կայիափայ ։ — Ուրացումն սրբոյն Պետրոսի ։

ՅԵՏ *այնորիկ անցեալ Յիսուսի ընդ հեղեղատն Կեդրոնի՝ եմուտ 'ի պարտէզն Ձիթենեաց ընդ Պետրոսի, Յակոբայ և Յովհաննու, որք վկայք լեալ էին պայծառակերպութեան իւրոյ ։ Եւ պատուիրելով նոցա հսկել և յաղօթս կալ, մեկնեցաւ 'ի նոցանէ քարընկէց մի հեռի՝ միտ դնել աղօթից, և յաղօթս անդ սաստկապէս զգածեալ 'ի վշտայն, յերկիւղէ և 'ի տրտմութենէ, քրտունս յորդահոս իբրև զկայլակս արեան ցօղէր 'ի գետին, նկարեալ յանդիման հոգւոյն զահաւորութիւն մահուն ։ Յայնժամ խնդրեաց աղերսանօք 'ի հօրէ իւրմէ հեռացուցանել զբաժակն պատրաստեալ նմին 'ի հաճութենէ նորա ։ Սակայն յաւել և զայն 'ի վերայ, թէ "Ոչ իմ կամք, այլ քոյդ լիցին„ ։ Եւ ահա երևեցաւ նմա հրեշտակ յերկնից՝ զօրացուցանել զնա ։*

Յայնմ պահու ժամանեալ Յուդայի հանդերձ զինեալ ամբոխիւ, զոր ետուն նմա քահանայքն, գնաց Յիսուս ընդ առաջ նոցա. իսկ մատնիչն, որ իւրոց արբանեկացն տուեալ էր նշան զհամբոյրն, իբրև մերձեցաւ առ Յիսուս, ասէ ցնա փրկիչն. Բարեկամ, վասն որոյ եկիր. և զիա՞րդ համբուրելով մատնես զորդի մարդոյ ։ Ապա դարձեալ առ զօրականսն՝ ասէ. Զո՞ խնդրէք ։ Իսկ նոքա ասեն. ԶՅիսուս Նազովրեցի ։ Եւ ընդ ա-

սէր Յիսուսի աստուածաբար՝ թէ Ես եմ, յետս յետս չոգան և առ հասարակ զարկան զգետնի ։ Եւ ապա 'ի կրկնել Յիսուսի զնոյն հարցումն, և հաւաստի առնել թէ ինքն է, կամաւորապէս ետ զանձն 'ի ձեռս նոցա ։

Յայնժամ Պետրոս սրովն զոր ունէր առ իւր՝ եհատ զաջոյ ունկն Մաղքոսի, որ էր մի 'ի ծառայից քահանայապետին ։ Իսկ Յիսուս յուշ արարեալ նոցա՝ թէ այն ամենայն գործի յիւրոց կամացն հաճութենէ, չափ եդ նախանձու առաքելոյն, և վաղվաղակի բժշկեաց զհատեալ ունկն ծառային ։

Ի նմին ժամանակի աշակերտքն ամենեքին թողին զՅիսուս և փախեան. իսկ զինուորքն կալան զփրկիչն և տարան նախ առ Աննա, որ էր աներ Կայիափայի, և քահանայապետ կացեալ 'ի նախընթաց ամին. և 'ի հարցանել նորա զՅիսուս վասն վարդապետութեանն և աշակերտաց իւրոց, պատասխանի արար տէր ամենայն համարձակութեամբ և ասէ. Ոչ ուսուցի ես ինչ երբէք 'ի ծածուկ. կարէք հարցանել և տեղեկանալ 'ի նոցունց՝ որք լուանն 'ի տաճարի անդ, որպէս և 'ի ժողովրդանոցս ։ Երբև զայն ասաց, մի ոմն 'ի ծառայից Աննայի ուժգին ապտակ ածեալ Յիսուսի՝ ասէ. Այդպէս պատասխանի տաս քահանայապետին ։ Իսկ Յիսուս ասէ ցնա. «Եթէ չար ինչ խօսեցայ, վկայեա վասն չարին. իսկ եթէ բարի, ընդէ՞ր հարկանես զիս »։ Այս պատասխանի անխռով հեզութեամբ հաւասար է իւրում աւետարանական խրատու, որպէս թէ մատուցեալ էր զմիւս ծնօտ իւր յապտակս ։

Յետոյ ածաւ Յիսուս յԱննայէ առ Կայիափա, որ քահանայապետ էր տարւոյն, և բնակէր 'ի տան անդ աներոյ իւրոյ ։ Սա ինքն ջանահնար եղև գտանել սուտ վկայս 'ի մահապարտ առնել զՅիսուս. թէպէտ և մատուցան 'ի մէջ բազում սուտ վկայք, սակայն անհամաձայնութիւն բանից նոցա չէր բաւական 'ի ստուգութիւն ։ Ի վախճանի քահանայապետն ինքնին յանդըգնեցաւ երդմնեցուցանել զՅիսուս յանուն Աստուծոյ կենդանւոյ՝ ասել, թէ ինքն իցէ Քրիստոսն և որդի Աստուծոյ ։ Պատասխանի ետ Յիսուս. Դու ասացեր՝ թէ ես եմ. բայց տեսանիցէք յաւուր միում զորդի մարդոյ եկեալ ընդ ամպս երկնից, և նստեալ ընդ աջմէ Աստուծոյ։ Առ այսոսիկ բանս Յիսուսի պատառեալ քահանայապետին զհանդերձս իւր՝ աղաղակեաց և ասէ. Հայհոյեաց, զի ևս պիտոյ են մեզ վկայք։ Եւ վաղվաղակի գտեալ զնա պարտաւոր մահու, ետուն 'ի ձեռս զինուորաց, որք բազմապատիկ օրինակաւ սկսան անարգել զնա, թքանելով ընդ երեսն և կապտելով, կոփելով և հարկանելով. ձորձ զգլխովն արկեալ՝ ապտակս հանէին նմա և ստիպէին մարգարէանալ զհարկանողն, և այլ բազում ինչ հայհոյութեամբ խօսէին 'ի նա։

Մինչդեռ տէրն մեր զայն գիշեր 'ի չարչարանս էր, սուրբն Պետրոս երիցս անգամ 'ի ծանօթութիւն եկեալ սպասաւորաց քահանայապետին՝ իբրև զմի յաշակերտացն Յիսուսի, երիցս ուրացաւ զնա երդմամբ. սակայն անդէն առ նմին 'ի միտս եկեալ՝ յանդիմանեցաւ 'ի տկարութենէ իւրմէ։ Քանզի փրկիչն հայեցաւ 'ի նա աչօք գթութեան. որով սրբոյն Պետրոսի հարեալ 'ի խղճէ և բեկեալ սրտիւ՝ յիշելով զաստուածային կանխասացութիւն իւրոյ վարդապետին, ել 'ի տանէ անտի արտաքս և ելաց դառնապէս։

Իսկ մատնիչն Յուդա անկեալ յանհանդուրժելի տագնապ յերեսաց յանդուգն ապիրատութեան իւրոյ, տարաւ և ընկէց 'ի տաճարին զերեսուն արծաթին զոր ընկալեալն էր վասն մատնութեան, և յանդիմանս քահանայիցն վկայեաց զանմեղութենէն Յիսուսի։ Բայց յաւել յառաջին յանցանսն և զմեղս անձնասպանութեան, զի յուսահատեալ չոգաւ խեղդ արկ անձին և մեռաւ։ Իսկ քահանայիցն ոչ կամելով զայն դրամ դնել 'ի գանձանակ տաճարին, գնեցին այնու զագարակ բրտի՝ թաղել անդ զօտարականս։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Յիսուս եղանի յատեանս Պիղատոսի և Հերովդէի ։ — Մատնի 'ի ձեռս թշնամեաց իւրոց ։

ԻԲՐԵՒ այգ եղև՝ քահանայք և ծերակոյտն Հրէից համդերձ վարդապետօք օրինացն ժողովեալք 'ի միասին, հանին զՅիսուս յատեան իւրեանց, և հարցին ցնա՝ եթէ ինքն իցէ Քրիստոսն։ Պատասխանի ետ Յիսուս՝ թէ Տեսանիցէք զորդի մարդոյ նստեալ ընդ աջմէ զօրութեանն Աստուծոյ ։ Առ այն յայտնի ցոյց բանիցն Յիսուսի ասացին ամենեքեան. Ուրեմն դու ես որդին Աստուծոյ ։ Եւ յասել փրկչին, թէ Ես եմ, հատին զխօսն իբր անկարօտս վկայութեան այլոց ուրուք, քանզի խոստովանութիւն բերանոյ նորա, ասեն, առնէ զնա պարտապան մահու ։

Բայց քանզի Հռովմայեցիք 'ի տիրել անդ Հրէաստանի բարձեալ էին 'ի Հրէից զիշխանութիւն կենաց և մահու, հարկեցան տանել զՅիսուս առ Պիղատոս դատաւոր այնր գաւառի, մոլեգին կատաղութեամբ ամբաստանելով զնմանէ յաղագս երից յանցանաց. նախ զի խռովարար է հասարակաց խաղաղութեան. երկրորդ զի արգելու 'ի տալոյ հարկս կայսեր. երրորդ զի ասէ զանձնէ թէ Քրիստոսն իցէ, և որդի Աստուծոյ ։ Պիղատոս եհարց զՅիսուս, կամելով տեղեկանալ 'ի նմանէ՝ թէ իցէ թագաւոր Հրէից կամ մեսիա ։ Իսկ փրկիչն պատասխանի արար և յայտնեաց թէ թագաւոր է, բայց արքայութիւնն իմ, ասէ, չէ յայսմ աշխարհէ ։ Հրեայք չարախօսքն զՅիսուսէ քանզի համդերձեալ էին ուտել զզատն զատկին, առ ահի պղծելոյ ոչ մտին 'ի տուն Պիղատոսի. վասն որոյ ել նա արտաքս յետ հարցանելոյ զՅիսուս, և յայտ արար նոցա զանմեղութիւն Յիսուսի. Զգտանեմ 'ի նմա՝ ասէ, յանցանս արժանի մահու և դատապարտութեան ։ Բայց մոլեգին ցնորեալքն այնոքիկ բազմամբոխ աղաղակաւ ոչ դադարէին յամբաստանութենէ. և Յիսուս ոչ արժան դատեցաւ առնել պատասխանի ամբաստանութեան նոցա ։

Իմացեալ Պիղատոսի թէ գալիլեացի է Յիսուս, առաքեաց զնա առ Հերովդէս արքայ կամ չորրորդապետ այնր գաւառի, որ յԵրուսաղէմ էր յաւուրսն յայնոսիկ։ Ցանկայր և Հերովդէս 'ի բազում ժամանակաց տեսանել զՅիսուս, զորոյ զբազմապատիկ նշանս սքանչելեացն լուեալ էր 'ի բազմաց. սակայն փրկիչն չարար երբէք պատասխանի հարցուածոց նորա. ընդ որ զարմացեալ և զայրացեալ Հերովդի, արհամարհեաց զՅիսուս, և առ 'ի ծաղր առնելոյ զանուն թագաւորութեան նորա՝ ետ նմա զգեցուցանել զհանդերձ սպիտակ, և դարձոյց անդրէն առ Պիղատոս։

Արդ գիտելով Պիղատոսի զանմեղութիւն փրկչին, և զչարութիւն նախանձու ամբաստանողացն, պատճառս առեալ զգործն Հերովդի՝ ջանահնար եղև ցուցանել Հրէից՝ թէ և ոչ Հերովդէս գտեալ իցէ զնա յանցաւոր արժանի մահապարտութեան։ Սակայն և այնպէս ոչ կարելով ցածուցանել զկատաղութիւն Հրէից, և զերծուցանել զՅիսուս 'ի դատապարտութենէ մահու, ձեռն արկ յայլ կրկին հնարս ազատութ՟ե։ Վասնզի ամ ըստ ամէ 'ի տօնի զատկին շնորհեալ էր նոցա 'ի Հռովմայեցւոց ազատութիւն առնել ումեմն յանցաւորի, Պիղատոս առաջի արար նոցա տալ ազատութիւն կամ Յիսուսի, և կամ Բարաբբայի ումեմն նշանաւոր աւազակի, որ և մարդասպան լեալ էր 'ի խռովութեան ինչ։ Յայս անհանգէտ համեմատութիւն զառածա դատաւորն, ակն ունելով եթէ երկիւղ ժողովրդեանն 'ի չարագործ մարդասպանէ անտի՝ յորդորեսցէ զնոսա խնդրել զազատութիւն Յիսուսի։ Բայց քանզի տէրն մեր իջեալ էր յերկնից 'ի հեղուլ զարիւն իւր վասն փրկութեան ազգի մարդկան, սորին վասն Հրեայք նախապատիւ արարեալ զԲարաբբա քան զՅիսուս՝ խնդրեցին զնա 'ի խաչ հանել։ Տեսեալ Պիղատոսի՝ եթէ 'ի դերև ել առաջին հնարք ակնկալութեան իւրոյ, ձեռն արկ յերկրորդն՝ որ ոչ 'ի դէպ էր՝ գիտելով նորա զանմեղութիւն առն յանիրաւի զրպարտելոյ։ Զի 'ի շիջուցանել զբորբոք կատաղութեան թշնամեաց փրկչին, և 'ի շարժել զնոսա 'ի գթութիւն՝ ետ զՅիսուս սաստիկ գան հարկանել։ Զինուորքն գործադիրք հրամանացն՝ կամելով թերևս հաճոյական ինչ առնել Հրէից, 'ի հարուածս գանիցն յաւելին և այլ անողորմ տանջանս. զի 'ի վերայ արիւնաներկեալ մարմնոյն Յիսուսի արկին քղամիդ կարմիր, և եդին 'ի գլուխ նորա պսակ արարեալ 'ի փշոյ. ետուն և զեղէգն 'ի ձեռս նորա իբր գաւազան արքունի. ապա 'ի ծունր իջեալ առաջի նորա, հարկանէին եղեգամբ զգլուխն, և ծաղր առնելով թքանէին ընդ երեսն և ասէին. Կեցցէ արքայ Հրէից.

Յետ այսչափ դառն տանջանաց եցոյց Պիղատոս զՅիսուս ժողովրդեանն և ասէ. "Ահա այրդ ցձեզ,,. որով ակն ունէր՝ թէ տեսեալ նոցա զկարեկցութեան արժանի կերպարանն Յիսուսի, և զհամբերութիւնն որով տարու ամենայնի, հանդարտեսցի կատաղութիւն մոլեգնելոյն. Բայց անողորմ՝ տեսիլն այն առաւելապէս սաստկացոյց զդառնութիւն նոցա. վասն որոյ աղաղակէին մեծաձայն. "Ի խաչ հան զդա,,. Եւ Պիղատոս ասէ ցնոսա. Առէք զդա և ձեզէն հանէք 'ի խաչ. զի ես 'ի դմա յանցանս ինչ մահու ոչ գտանեմ: Այլ նոքա առաւել ևս մոլեգնեալ աղաղակէին. "Մեք օրէնս ունիմք, և ըստ օրինաց մերոց պարտի մեռանել, զի զանձն իւր որդի Աստուծոյ արար,,. Ի զիւազրգիռ աղաղակէ անտի զարհուրեցաւ վատասիրտ դատաւորն, վասն որոյ մտեալ անդրէն յապարանս իւր՝ սկսաւ վերստին հարցանել զՅիսուս, եթէ յորմէ՞ գաւառէ իցէ, և ո՞ր ծնեալ. սակայն 'ի չտալ փրկչին զպատասխանի՝ զարմացեալ ընդ այն Պիղատոսի, ասէ. Ընդ իս ո՞չ խօսիս. չգիտիցես թէ կարող եմ ես մահապարտ առնել զքեզ, և իշխանութիւն ունիմ արձակել զքեզ. Յայնժամ Յիսուսի յայտ արարեալ նմա՝ թէ ունի համարս տալ Աստուծոյ վասն իշխանութեանն զոր ընկալեալ է 'ի նմանէ, խելամուտ արար լսելեացն՝ թէ մահապարտ առնելով զնա՝ յանցաւոր զանձն իւր կացուցանէ. և Որ մատնեցինն զիս, ասէ, 'ի ձեռս քո, նոցայն յանցանք ծանրագոյն են քան զքոյդ.

Պիղատոս եղեալ 'ի մտի ջանալ բուռն մոլեգնութեան թշնամեացն Յիսուսի, ել արտաքս յատենէն. բայց Հրէիցն հասու եղեալ զխաւարութեան նորա, ձեռն արկին հաւանեցուցանել զնա ահիւ կայսեր. վասն որոյ սկսան աղաղակել թէ ներողամտութիւնդ քո առ

Յիսուս՝ յանցաւոր առնէ զքեզ առաջի կայսեր՝ զորոյ զպատիւն ջան գործէ Յիսուս յափշտակել, մտանելով զանձն իւր թագաւոր։ Այս յետին աղաղակ Հրէից բաւական եղև Պիղատոսի առ ահի կայսեր մատնել զանմեղ զառնն Յիսուս 'ի չարութիւն նոցա. սակայն կամելով ևս յայտնի առնել զանմեղութիւն Յիսուսի, և 'ի վերայ Հրէից արկանել զանիրաւութիւն այնր մեծի մահապարտութեան, լուաց զձեռս իւր առաջի ամենեցուն՝ իբրու եթէ անպարտ իցէ յարենէն Յիսուսի։ Յայնժամ ժողովուրդքն առ հասարակ աղաղակեցին և ասեն. “Արիւն դորա 'ի վերայ մեր, և 'ի վերայ որդւոց մերոց„։ Սոյին բանիւ կամակար ընկալան յանձինս իւրեանց զանէծս զառնացինս, զորոյ զցաւալից արկածս պատուհասի զոլին մերձ ընդ մերձ, և դեռ ևս տանին անպակաս յետ իննևտասն դարուց յանդիման ամենայն ազգաց երկրի։ Իսկ Պիղատոսի լուացեալ զձեռսն, և դատապարտեալ զՅիսուս 'ի մահ, ետ զնա 'ի ձեռս Հրէից՝ զի խաչեսցի։ Սակայն պատուհաս վրէժխնդրութեան անբերելի յանցանաց անիրաւ դատաւորին ոչ յապաղեաց ժամանել նմա. զի որ զգուշանայրն չլինել անհաճոյ Տիբերեայ կայսեր, գործադիր եղև այնպիսւոյ անթագչելի անիրաւութե՛, յոր սակս ընկալաւ զպատուհասն և 'ի կենդանութեան իւրում. քանզի և յաչս Հրէից գտաւ անարգեալ, մինչև յետ իբր միոյ ամի զկնի մահու փրկչին՝ սակս ագահութեան իւրոյ և յանդուգն կառավարութեան ամբաստանութիւնս ծանունս մատուցին զնմանէ Հրեայք առ կայսրն, որ և տարագրեաց զնա յաքսոր 'ի Վիեննա Գաղղիոյ, ուր տագնապեալ 'ի յուսահատութենէ՝ յետ երկուց ամաց չոգաւ զիւրովին։

ԳԼՈՒԽ Ի.

Խաչելութիւն Յիսուսի :

ՄԱՏՆԵՑԱՒ Յիսուս 'ի ձեռս Հրէից՝ երեք ժամու յառաջ քան զօր հասարակ, և ետուն զնա զինուորաց դատաւորին տանել 'ի լեառն Գողգոթա, ուր փրկիչ աշխարհի կամաւոր խաչելութեամբ և մահուամբ իւրով հանդերձեալ էր ջնջել զմեղս մարդկան, և պատարագաւ մարմնոյն պարգևել մեզ կենդանութիւն: Երբև ել 'ի դուրս յԵրուսաղեմէ, առ սաստիկ տկարութեան իւրոյ ոչ կարելով բառնալ զխաչն, զինուորք դատաւորին բռնի կալան զՍիմոն զոմն անուն կիւրենացի՝ զի ձեռնտու լիցի նմա:

Եւ քանզի խուռն բազմութիւն ժողովրդեան զհետ ընթանայր նորա, տեսեալ Յիսուսի զոմանս 'ի կանանց որք կոծէին և աշխարէին ընդ տարապարտ մատնութիւն նորա 'ի ձեռս անօրինաց, ասէ ցնոսա. Մի լայք 'ի վերայ իմ, դստերք Երուսաղեմի, այլ լացէք 'ի վերայ անձանց և 'ի վերայ որդւոց ձերոց. եկեսցէ ժամանակ՝ յորում ասասցեն, երանի ամլոց որք ոչ ծնան. զի ասասցեն յայնժամ լերանց՝ թէ անկերուք 'ի վերայ մեր, և բլրոց թէ ծածկեցէք զմեզ. եթէ ընդ փայտ դալար զայս առնեն, ընդ չորն զի՞նչ լինիցի:

Հասեալ Յիսուսի 'ի Գողգոթա, խաչեցաւ անդ 'ի մէջ երկուց աւազակաց. և 'ի գլուխ խաչին եդաւ տախտակ գրեալ իբր յայտարարութիւն յանցանաց նորա, “Յիսուս Նազովրեցի թագաւոր Հրէից„: Զոր և Պիղատոս ինքնին թելադրեաց՝ կամ 'ի նախատինս ազգին Հրէից, և կամ յանգթութենէ սրտին, որով անողորմ իշխանք սովոր էին երբեմն ծաղր առնել զմահապարտն 'ի դառն տանջանս նոցա: Այսմ գրոյ յայտարարութեան հակառակ կացեալ քահանայապետք, զի փոխանակ գրելոյ Թագաւոր Հրէից, գրեսցի՝ թէ նա ինքն ասաց, Թագաւոր եմ Հրէից: Սակայն Պիղատոսի մերժելով զբանս նոցա, ետ պատասխանի. “Զոր ինչ գրեցի, գրեցի„. անխափոխ պահելով զարձանագրութիւնն իրաւանց պատշաճեալ յաստուածային կարգադրութենէ :

Յիսուս 'ի սեղանոյ անտի խաչին յորում պատարագէրն՝ անյիշաչար սրտիւ և անոխակալ մարդասիրութեամբ աղաղակէր առ Աստուած վասն իւրոց խաչահանուաց . “ Հայր , ասէ , թող դոցա , զի ոչ գիտեն զինչ գործեն ,, :

Հանդերձք փրկչին բաժանեցան 'ի մէջ զինուորաց . բայց զպատմուճան նորա՝ քանզի էր առանց կարանի փորանկեալ՝ չկամեցան պատառել, այլ վիճակաւ սեփականել ում և ելցէ . որով լնուին առ մարգարէագուշակ բան սաղմոսին[1] :

Ժողովուրդն որ կայր առընթեր խաչին՝ հայելով 'ի Յիսուս այպանէր զնա , և որք անցանէինն հայհոյէին զնա : Իսկ քահանայապետք և վարդապետք օրինացն հանդերձ իշխանօք և զինուորօք շարժէին զգլուխս իւրեանց , և ասէին ընդ միմեանս . Եթէ նա իցէ Քրիստոսն, իջցէ այժմ 'ի խաչէդ , և հաւատասցուք 'ի նա . և եթէ՝ քանզի զյոյս իւր եդեալ է յԱստուած , փրկեսցէ զդա՝ եթէ աստուածահաճոյ ոք իցէ :

Նոյնպէս և մին յերկուց անտի խաչակից աւազակաց խորհելով ըստ խեղաթիւր մտի խաժամուժ ամբոխին՝ յանդգնեցաւ ասել առ Յիսուս . “ Եթէ դու ես Քրիստոսն , փրկեա զանձն քո և զմեզ ,, : Իսկ ընկեր նորա սքանչացեալ ընդ կամակար համբերութիւն փրկչին սկսաւ սաստել խաչակցին իւրում՝ ասելով . Ոչ երկնչիս դու յԱստուծոյ , զի 'ի նմին պատժի կաս . մեք արժանապէս ընդունիմք զպատուհաս չարութեան գործոց մերոց . այլ սա ապիրատ ինչ ոչ գործեաց : Եւ անդէն դարձուցեալ զաչս իւր առ Յիսուս , ասէ . Յիշեա զիս տէր յորժամ գայցես արքայութեամբ քով : Յայնժամ Յիսուս 'ի խաչէ անտի վարելով դատողական իշխանութեամբ , զոր յաւուր միում հանդերձեալ է վարել 'ի տեսիլ համօրէն ազգաց , պատասխանի արար աւազակին . “ Այսօր ընդ իս իցես 'ի դրախտին ,, :

Յայն հանդէս աղիողորմ կային առ ոտս խաչին Մարիամ մայրն Յիսուսի , Մարիամ դուստր Կղէոփայ և

---

[1] . Սաղմոս ԻԱ :

Մարիամ Մագդաղենացի. տեսեալ Յիսուսի զմայր իւր և զսուրբն Յովհաննէս, ասէ ցՄարիամ. «Կին դու, ահա որդի քո». ցուցանելով զաշակերտն զոր սիրէր։ Ապա դարձեալ և առ նա ինքն աշակերտն՝ ասէ. «Ահա մայր քո»։ Յայնմ ժամանակէ և առ յապա սուրբն Յովհաննէս եկաց ընդ մօր տեառն, յարգելով զնա իբր անգին և անզուգական մասն ժառանգութեան Յիսուսի։ Կոյսն սուրբ յայն աղէտս անբերելի ցաւոց, լի հաւատով և վառեալ սիրով զկիրս աղէխորով վշտայն զուգակից առնէր պատարագին զոր մատուցանէր Յիսուս 'ի հաշտութիւն մարդկան ընդ Աստուծոյ։

ԳԼՈՒԽ ԻԱ.

Մահ և թաղումն Յիսուսի։

ՓՐԿԻՉՆ մեր բևեռեցաւ 'ի խաչին նախ քան զմիջօրեայն, և զհասարակ աւուրբ խաւարեցաւ արեգակն, և օդն մնաց խաւարամած մինչև ցերրորդ ժամ յետ միջօրէին. յորում պահու աղաղակեաց Յիսուս 'ի ձայն մեծ. «Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս»։ Ապա յաւել ասել. «Ծարաւի եմ». և վաղվաղակի մի ոմն 'ի զինուորաց մատոյց 'ի բերան նորա զսպունգ լի քացախով։ Տեսեալ Յիսուսի զլրումն պատարագի իւրոյ, ասէ. «Ամենայն ինչ կատարեալ է». և խոնարհեցուցեալ զգլուխն՝ աւանդեաց զհոգին ընդ երեկս աւուր ուրբաթու յ3 աւուր ապրիլի, յամին 33։

Այսօրինակ մեռաւ Յիսուս ակնկալութիւնն Հրէից և հեթանոսաց, բարերարն ամենեցուն, և անարգեալն 'ի բազմաց։ Ի տեսիլ տկարութեան մահուն եցոյց յայտնապէս՝ եթէ տէր է համօրէն բնութեան արարածոց, ստուգելով զայն 'ի սքանչելեաց անտի որք ցուցան, զի վարագոյր տաճարին հերձաւ յերկուս ծուէնս, երկիր սասանեցաւ, վէմք պատառեցան, գերեզմանք բացան, և բազում մարմինք սրբոց յարուցեալք 'ի գերեզմանաց՝ մտին 'ի քաղաքն Երուսաղէմ և երևեցան բազմաց։

Իսկ հարիւրապետն և զինուորք որք պահէին զՅիսուս, զահի հարեալք 'ի սքանչելեաց անտի, ասեն. «Արդարև Աստուծոյ որդի էր սա»։ Նոյնպէս և ամենք *'ի ժողովրդենէն տեսեալ զտեսիլն զայն և զգործ աչաւոր նշանաց, բաղխէին զկուրծս իւրեանց 'ի նշան ցաւոց, և դառնային յԵրուսաղէմ։ Սակայն ամբոխ բազմութեան Հրէից քահանայապետօքն հանդերձ եկաց միայն 'ի խստասրտութեան իւրում։*

Եւ կամելով Հրէից՝ զի մարմինք կախելոցն մնասցեն 'ի խաչի մինչև 'ի վաղիւն՝ որ էր շաբաթ և տօն պասեքին, ընկալան 'ի Պիղատոսէ զհրաման 'ի բաց բառնալոյ զխաչեալսն, և առ 'ի վաղվաղել զմահ նոցա՝ կամեցան տալ խորտակել զսրունս ոտից կախելոցն. զոր և արարին իսկ ընդ երկուս աւազակսն. բայց քանզի Յիսուս մեռեալ էր, ոչ խորտակեցին զբարձս նորա. այլ մի ոմն 'ի զինուորաց շատ համարեցաւ խոցել տիգաւ զկող նորա, յորմէ ել վաղվաղակի արիւն և ջուր։

Նոյն ընդ երեկս աւուրն Յովսէփ Արիմաթացի, մի 'ի գաղտնի աշակերտացն Յիսուսի, նախարար երևելի յազգին իւրում, խնդրեաց և ընկալաւ շնորհս 'ի Պիղատոսէ թաղել զմարմին փրկչին նախ քան զմուտս արեւու. և իջուցեալ 'ի խաչէն՝ եդ 'ի նորափոր տապանի, որ կայր 'ի պարտիզի մօտ 'ի Գողգոթա։ Իսկ թէպէտ դուռն գերեզմանին փակեալ կայր կափարիչ վիմաւ, սակայն կասկածելով քահանայից՝ եթէ աշակերտք Յիսուսի գողասցին զմարմինն և համբաւեսցեն՝ թէ յարեաւ 'ի մեռելոց, կնքեցին զվէմն և եդին զօրականս 'ի պահպանութիւն, զի մի ոք համարձակեսցի մերձենալ անդր։ Զգուշութիւնս այս եղև աներկբայելի հաւաստիք փառաւոր յարութեանն Յիսուսի, և ապացոյց ստուգութեան խոստմանն նորա։

ԳԼՈՒԽ ԻԲ.

Յարութիւն Յիսուսի և երևել նորա։

ՄԱՐՄԻՆ փրկչին եդեալ 'ի գերեզմանի ընդ երեկս ուրբաթուն, եկաց անդ զօրն շաբաթ և 'ի վաղիւն ևս ըստ մասին։ Հոգին Յիսուսի անջատեալ 'ի մարմնոյն էջ 'ի ստորին վայրս երկրի մխիթարել զհոգիս արդարոցն, որք սպասեալ մնային գալստեան նորա, և աւետաւորեաց նոցա զազատութիւն։

Ընդ առաւօտս միաշաբաթի աւուրն եղև շարժումն մեծ՝ ազդարար յարութեան Որդւոյն Աստուծոյ՝ որ յաղթեաց մեղաց և մահու։ Յայնժամ հրեշտակ Աստուծոյ իջեալ յերկնից ՚ի բաց թաւալեցոյց զվէմն ՚ի դրաց գերեզմանին, և նստեալ ՚ի վերայ նորա յանդիման պահապանացն զարհուրեցոյց զնոսա, մինչև առ ահի ստիպեցան փախչել ՚ի տեղւոջէ անտի։ Իսկ Յիսուս ՚ի տապանէն փառաւորեալ մարմնով. զոր ոչ գիտելով երանելի կանանց՝ վաղ քաջ ընդ առաւօտն Մարիամ մագդաղենացի և այլ երկու կանայք փութացան գալ անդր՝ յօծանել և ՚ի խնկել զմարմինն տէրունական, և ոչ գտին զայն ՚ի գերեզմանի. այլ տեսին եւեթ զհրեշտակն լուսապայծառ, որ աւետէր նոցա զյարութիւնն Յիսուսի. Ո՞ր խնդրէքն աստ՝ յարեաւ ՚ի մեռելոց, ընկալեալ զանմահ կենդանութիւն։

Իբրև դարձան կանայքն զուարճախառն կասկածանօք առ առաքեալսն, և պատմեցին զբանս հրեշտակին, սուրբն Պետրոս և սուրբն Յովհաննէս փութացան գնալ ՚ի գերեզմանն. սակայն և նոցա առեալ պատգամ ՚ի հրեշտակէն՝ երթալ ՚ի Գալիլիա, և անդ տեսանել զտէր, չոգան յետս։ Բայց Մարիամ մագդաղենացի եկաց անդ միայնակ, և ՚ի վարձ եռանդագին սիրոյն և համբերութեանն և յորդահոս արտասուաց՝ արժանի եղև նախ առաջին տեսանել զյարուցեալն Յիսուս, այլ ոչ կարաց մերձենալ առ նա ՚ի համբոյր ոտիցն, զի արգելաւ ՚ի փրկչէն։

Յետ այնորիկ երևեցաւ տէրն մեր և առաքելոց իւրոց առ ծովեզերբն Տիբերեայ, ուր ապշեալք յերկիւղէ և ՚ի պատկառանաց՝ ոչ համարձակեցան խօսել ընդ նմա։ Յայլում նուագի մինչդեռ առաքեալքն զգուշացեալ կային ՚ի տան վասն ահին Հրէից, յանակընկալս երևեցաւ նոցա տէր ասելով. « Խաղաղութիւն ընդ ձեզ. ես եմ, մի երկնչիք. զի՞ խռովեալ էք. ոգի՝ մարմին և ոսկերս ոչ ունի »։ Իսկ ՚ի հաւատարմացուցանել նոցա զյարութիւն իւր՝ խնդրեաց կերակուր, և եկեր ընդ նոսա ձուկն խորովեալ և խորիսխ մեղու։ Ապա եհարց ցսուրբն Պետրոս երիցս անգամ զստուգութենէ սիրոյ նորա առ ինքն. և իբրև պատասխանի արար Պետրոս՝ աներկբայ ցուցանելով զհաւատոյ սէր իւր, յանձն արար նմին Յիսուս զհոգ արածելոյ զհօտ իւր. որով կացոյց զնա գլուխ և առաջնորդ եկեղեցւոյ իւրում։

Սուրբն Թովմաս, որ յերկուս յառաջին երևմունս Յիսուսի ոչ մերձ գոլոյ անդանօր, թերահաւատէր իմն ընդ յարութիւն Յիսուսի. ընդ որ վշտացեալ էին յոյժ այլ առաքեալք։ Զկնի ութից աւուրց դարձեալ երևեցաւ նոցա Յիսուս. և 'ի փարատել զերկմտութիւն Թովմայի՝ ասաց ցնա շօշափել ձեռամբ զխոցուածս տիգին և զբևեռացն. զոր իբրև արար, ծանուցեալ զփրկիչն գոչեաց. “Տէր իմ և Աստուած իմ„։ Յայնժամ ասէ ցնա Յիսուս. “Այդ զի տեսերդ զիս և հաւատացեր. երանի որոց ոչ իցէ տեսեալ և հաւատասցեն„։

Եւ եղև իբրև առաքեալքն ամենեքին միաբան կային յԵրուսաղէմ, երևեցաւ նոցա Յիսուս և ասէ. “Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս և յերկրի. գնացէք այսուհետև աշակերտեցէք զամենայն հեթանոսս. մկրտեցէք զնս յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ„։ Խոստացաւ պարգևել նոցա զշնորհս սքանչելեաց, որպէս և որոց ընդ ձեռն նոցին հաւատասցեն 'ի նա. և ձեռնտու լինել նոցա մինչև ցվախճան յաւիտենից. “Ես ընդ ձեզ եմ, ասէ, մինչև 'ի կատարած աշխարհի„։ Եւ սովին հաւաստի խոստմամբ ոչ թողու Աստուած երբէք զեկեղեցի իւր. պաշտպան կայ անսխալութեան նորա, և դիմամարտ համօրէն թշնամեացն։ Եւ քանզի ցայն վայր բազումք յառաքելոցն պարզամիտք էին և անտեղեակք գրոց, տէրն մեր եբաց յայնժամ զմիտս նոցա իմանալ զզօրութիւն և զիմաստս գրոց։ Յայտնեաց նոցա և զանյապաղ գալուստ Հոգւոյն սրբոյ, և պատուիրեաց նստել յԵրուսաղէմ մինչև առնուցուն զզօրութիւն յերկնից 'ի Հոգւոյն այցելութենէ։

Ապա զայսօրինակ հաստատեալ զնոսա 'ի հաւատս, և զօրացուցեալ զյոյս նոցա, ած զնոսին մինչև 'ի Բեթանիա, և անտի 'ի գլուխ լերինն Ձիթենեաց։ Անդ ամբարձեալ զձեռս իւր ետ նոցա զօրհնութիւն. և եղև մինչդեռ օրհնէրն՝ սկսաւ վերանալ ընդ օդս, և ամպն ծածկեաց զնա 'ի տեսութենէ առաքելոց։ Եւ մինչդեռ պշուցեալ էին ընդ շուրջս ընթացից նորա, ահա հրեշտակք երկու 'ի հանդերձս սպիտակս մարդկեղէն կերպարանօք երեւեալք առաջին ցնոսա. « Այդ Յիսուս, որ վերացաւ 'ի ձէնջ յերկինս, նոյնպէս եկեսցէ յաւուր միում զոր օրինակ տեսէք զդա երթալ յերկինս »։ Յայնժամ առաքելոցն երկիր պագեալ փրկչին Յիսուսի՝ դարձան յԵրուսաղէմ ուրախութեամբ մեծաւ, և էին հանապազ 'ի տաճարին, գովէին և օրհնէին զԱստուած փառաբանութեամբ անդադար աղօթից։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ Ա.

Ընդունելութիւն Մատաթիայ առաքելոյ: — Գալուստ Հոգւոյն սրբոյ:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ Քրիստոսի՝ որ վերջին է 'ի յաղթանակս զօրս փրկչին մեր եցոյց մարմնով 'ի վերայ երկրի, համարի սկիզբն առաջնոյ դարու եկեղեցական պատմութեանց: Իբրև համբարձաւ տէրն մեր յերկինս՝ առաքեալքն և աշակերտք ժողովեցան յԵրուսաղէմ, ուր նախ առաջին խնամ կալան ընտրել զոք 'ի տեղի որդւոյն կորստեան ամբարտաւին Յուդայի, որ չարաչար մահուամբ վախճանեալ զկեանն՝ պակասեցաւ 'ի դասէ առաքելոց: Վասն որոյ Մատաթիաս և Յովսէփ Բարսաբայ ընտրեալք 'ի թուոյ աշակերտաց մատուցան 'ի մէջ ժողովոյն, և յետ խնդրելոյ նոցա 'ի տեառնէ յայտնել զմին 'ի նոցունց արժանաւոր առաքելութեան, անկաւ վիճակն 'ի վերայ Մատաթիայ, որ և համարեցաւ ընդ մետասան առաքեալսն՝ 'ի լրումն թուոյ երկոտասանից:

Յետ այնորիկ հաւատացեալքն ամենեքին միաբան կային յառանձնութեան վերնատան հանապազորդեալք 'ի սրտառուչ պաղատանս առ ընդունելութիւն շնորհաց Հոգւոյն սրբոյ. և ահա 'ի գալ աւուր պենտեկոստէին եղև յանկարծակի հնչիւն յերկնից իբրև սաստիկ հողմոյ, որով լցաւ տունն յորում աշակերտք հարիւր և քսան թուով ժողովեալք էին ։ Երևեցան 'ի վերայ նոցա լեզուք հրեղէնք, և առ ժամայն լցեալ Հոգւով սրբով սկսան խօսել յայլ և այլ լեզուս ։ Եւ քանզի 'ի հանդէս կատարման տօնի պէնտէկոստէին բազմութիւնք Հրէից յամենայն կողմանց աշխարհի եկեալ էին յԵրուսաղէմ, սուրբն Պետրոս ընդ այլոց առաքելոց՝ համարձակեալ 'ի Հոգւոյն՝ սկսաւ աւետարանել նոցա զքանչելիս մահուան և զյարութեանն Քրիստոսի, որով ած 'ի հաւատս քրիստոնէութեան զերիս հազար անձինս . որպէս և յերկրորդում քարոզութեան յետ բժշկելոյ զկաղն առ դրան տաճարին, դարձոյց ոգիս հինգ հազար ։

ԳԼՈՒԽ Բ.

Վարք նախնի հաւատացելոց 'ի Քրիստոս ։

Ի քարոզութենէ անտի առաքելոց լցաւ քաղաքն վաղվաղակի բազմութեամբ հաւատացելոց, որոց բարեկրօն ընթացք հրեշտակային կենաց նախանձելի էր ամենեցուն . զի իբր հարազատ որդիք նորոյ Սիոնի՝ միաբանեալք 'ի նոյն հաւատս, և դէտակն կալեալ 'ի նոյն նպատակ վերին հայրենեաց, ունէին զմի սիրտ և զմիաբան հոգի, վասն որոյ և ամենայն ինչ էր նոցա հասարակաց ։ Վաճառեալ զստացուածս իւրեանց բերէին զգինս առ առաքեալս, զի ըստ պէտս բաշխեսցեն ամենեցուն ։ Եւ քանզի օր ըստ օրէ աճէր և առաւելուր թիւ հաւատացելոց, ընտրեցին առաքեալքն եօթն սարկաւագունս՝ կալ 'ի պաշտօն սպասաւորութեան սրբոյ սեղանոյն, յորում բաշխէր հաց խորհրդական մարմնոյն Քրիստոսի . միանգամայն 'ի նոսա յանձն արարին և զսպասաւորութիւն հասարակաց սեղանոյ, 'ի նոսա և զամենայն ստացուածս եկեղեցւոյն . որով ազատեալ առաքեալք յարտաքին հոգոց և 'ի զբաղմանց՝ առ 'ի միա դնել պաշտաման խորհրդոց և քարոզութեան բանին Աստուծոյ ։

ԳԼՈՒԽ Գ.

Սկիզբն հալածանաց եկեղեցւոյ : — Նահատակութիւն սրբոյն Ստեփաննոսի : — Դարձ սրբոյն Պօղոսի .

ՉԱՐԱՆԱԽԱՆՁ հակառակութիւն քահանայապետաց զայրացեալ յոյժ 'ի յաջողութենէ աւետարանին քարոզութեան . վասն որոյ պատուէր ետուն առաքելոց չաւետարանել զՅիսուս Քրիստոս . և առ ահ արկանելոյ եդին զնոսա 'ի բանտի , յորմէ զերծան նոքա հրաշիւք 'ի ձեռն հրեշտակի Աստուծոյ , և սկսան ամենայն համարձակութեամբ քարոզել զոր տեսին և լուան : Վասն որոյ կրկին անգամ կոչեցան յատեան Հրէից , ուր անօրէնն դատաւորքն խորհէին մահապարտս առնել զառաքեալսն . բայց մի ոմն յատենակալաց անտի Գամաղիէլ անուն՝ մարդասէր խորհրդով արգել զնոսա , յորդոր զգուշաւորութ̃ մատուցեալ նոցա՝ յասելն '' Ի բաց կացէք յարանցդ յայդցանէ և թոյլ տուք դոցա . զի եթէ 'ի մարդկանէ իցէ գործդ այդ , փութով քակտեսցի . իսկ եթէ յԱստուծոյ , զուր ջանահնար լինիք խափանել ,, : Ի բանից աստի հաւանեալ Հրէից արձակեցին զառաքեալսն . բայց նախ զան հարեալ պատուիրեցին նոցա մի ևս խօսել և ուսուցանել յանուն Յիսուսի : Սակայն առաքեալքն անխռով մտօք ընկալան զպատուհասն , երանելիս համարելով զանձինս իւրեանց՝ զի վասն անուան տեառն արժանի եղեն անարգելոյ . և շատ համարեցան զայս առնել նոցա պատասխանի , եթէ '' Հնազանդել պարտ է Աստուծոյ առաւել քան մարդկան ,, : Վասն որոյ և ոչ դադարէին ուսուցանել և աւետարանել զՅիսուս Քրիստոս :

Սուրբն Ստեփաննոս առաջին և նախապատիւ յեօթանց անուանի սարկաւագաց՝ սքանչելագործութեամբ իւրով և նախանձու փառացն Աստուծոյ նշանաւոր , աներկիւղ յանդիմանէր զանհաւան խստասրտութիւն Հրէից , յոյր սակս կոչեցաւ յատեան և դատակնքեցաւ 'ի պատուհաս քարկոծ լինելոյ : Յայն տանջանս կատարեցաւ 'ի Քրիստոս՝ աղօթելով վասն իւրոց սպանողաց .

և պատուեցաւ 'ի հաւատացելոց իբրև առաջին վկայ աւետարանական օրինաց ։

Յաւուրսն յայնոսիկ եղև հալածումն մեծ 'ի վերայ եկեղեցւոյն, վասն որոյ ամենայն հաւատացեալքն 'ի Քրիստոս ցրուեցան արտաքոյ Երուսաղեմի՝ բաց յառաքելոցն ։

Երիտասարդ ոմն Սօղոս անուն փարիսեցի, որ դաժանագոյն էր 'ի թշնամիս քրիստոնէից, մտանէր 'ի տունս տունս յորս թագուցեալ կային հաւատացեալք, քարշէր զարս և զկանայս և մատնէր 'ի բանտ ։ Յորդորեալ սորա յառաւելութենէ նախանձու օրինաց և վրէժխնդրութեան՝ ընկալաւ թուղթ 'ի քահանայապետէն գնալոյ մինչև 'ի Դամասկոս 'ի խնդիր քրիստոնէից և ածելոյ զնոսին կապեալս յԵրուսաղէմ․ և եղև 'ի մերձենալ նորա յայն քաղաք, յանկարծակի երևեցաւ նմա լոյս սքանչելի փայլատակեալ զնովաւ, յորմէ կուրացեալ անկաւ 'ի գետնի․ ապա լուաւ և ձայն ահաւոր, “Սաւուղ Սաւուղ, զի հալածես զիս, ես եմ Յիսուս․ 'ի զուր ջգնիս զխմամարտ ինձ հանդիմանալ„ ։ Ի ձայնէ անտի զարհուրեալ Սաւուղայ՝ եհարց զտէր՝ խնդրեալ զկամս հաճութեան նորա․ յայնժամ պատուիրեաց նմա տէր մտանել 'ի քաղաքն Դամասկոս և խնդրել զոմն Անանիա անուն, յորմէ մկրտեալ՝ ստացաւ անդրէն զտեսութիւն աչաց ։

ԳԼՈՒԽ Գ․

Սկիզբն հաւատացելոց 'ի Սամարիա ։

ՍԱՒՈՒՂ ընդ հաւատալն 'ի Քրիստոս՝ գտաւ 'ի շնորհացն Աստուծոյ հրահանգեալ յամենայն խորհուրդս տնօրէնութեանն Քրիստոսի․ վասն որոյ սկսաւ քարոզել զաւետարանն, և եղև վաղվաղակի մի 'ի գլխաւոր առաքելոց ։ Ընդ այն ժամանակս սուրբն Փիլիպպոս մի յեօթանց անտի սարկաւագաց քարոզելով 'ի Սամարիա քաղաքի, դարձոյց զբազումս 'ի Քրիստոս, որք և ընկալան զմկրտութիւն ։ Զայն լուեալ առաքելոցն յԵրուսաղէմ՝ առաքեցին անդր զՊետրոս և զՅովհաննէս տալ նոցա զխորհուրդ դրոշմի, և հաստատել զնոսա 'ի *հաւատս որով ընկալան զՀոգին սուրբ և զշնորհս սքանչելագործութեան ։*

Ի հաւատացելոցն յայտնի էր ոմն մոգ Սիմոն անուն, որոյ տեսեալ զառաքելոցն՝ զի ձեռն դնելով հաղորդս առնէին զմկրտեալսն երկնաւոր և աստուածային պարգևաց, մատոյց նոցա զրամ՝ խնդրելով առնուլ ՚ի նոցանէ զնոյն իշխանութիւն. բայց խնդիրք նորա և տուրք անարժանք՝ կշտամբութեամբ մերժեցան ՚ի սրբոյն Պետրոսէ ։ Յոր սակս վաճառումն հոգևոր և աստուածային իրաց Սիմոնականութիւն կոչեցաւ յանուանէ անտի Սիմոնի ։

Սա ինքն Սիմոն՝ գլուխ համարի նախկին հերձուածոյ մոլորութեան. զի ասէր զանձնէ ինքնիշխան զօրութիւն երևեալ ՚ի Հրէաստանի՝ իբր որդի Աստուծոյ, ՚ի Սամարիա՝ իբրև Հայր, և առ այլ ազգս իբր Հոգի սուրբ ։ Աւանդի զնմանէ, թէ զինքն և զհոմանի իւր զկին պոռնիկ՝ ետ ՚ի պաշտօն առնուլ ընդ անուամբ առասպելեալ եթերական աստեղաց ։ Ոչ շատ համարեցաւ զինել ընդդէմ մովսիսական օրինաց, այլ ուրացաւ և զյարութիւն մարմնոց, ուսուցիչ եղեալ նորօրինակ մոլորութեանց՝ զորոց դժուարին է տալ զնկարագիր, զի ցնորական զրոյցք են խելայեղ ախտացելոյ ։ Սակայն և այնպէս ՚ի սկզբան անդ եգիտ իւր համախոհս մինչև ցգար մի ողջոյն. յետ որոյ անհետացաւ ՚ի սպառ ։

ԳԼՈՒԽ Ե.

Սկիզբն դարձի հեթանոսաց ՚ի հաւատս Քրիստոսի ։

ՅՈՅՍ *աւետարանին՝ որ մինչև ցայնժամ լուսաւորէր եւեթ զորդիս Աբրահամու, սկիզբն արար ծագելոյ և ՚ի հեթանոսս. յորոց առաջին մարթ է համարել զդարձ Աբգարու թագաւորին մերոյ յԵդեսիա քաղաքի. որոյ լուեալ կանխաւ զսքանչելիս բժշկութեանց տեառն մերոյ, և փափաքելով առողջութեան անբուժելի ախտին զոր ունէր ՚ի մարմնի, առաքեաց հրեշտակս առ Յիսուս հանդերձ թղթով. յորում դաւանեալ զնա Որդի Աստուծոյ, խնդրեաց զբժշկութիւն ախտացեալ մարմնոյն ։ Պատուէր ետ դեսպանաց իւրոց մատուցա-*

նել և զոհս Աստուծոյ 'ի տաճարին որ յԵրուսաղէմ. Գնացեալ հրեշտակացն՝ իբրև հասին անդր , հանդիպեցան հանդիսի մեծի տեառն մերոյ յԵրուսաղէմ. և 'ի կամելն մատուցանել նմա զԹուղթն Աբգարու՝ մատեան առ Փիլիպպոս առաքեալ. իսկ նորա խորհրդակցեալ ընդ Անդրէի առաքելոյ՝ երկոքին 'ի միասին ծանուցին Յիսուսի. Յայնժամ տէրն մեր ցուցեալ յանձին զուրախութիւն , հրամայեաց Թովմայի առաքելոյ գրել զպատասխանի թղթոյն Աբգարու , յորում խոստացաւ յետ համբարձման իւրոյ առաքել զմի յաշակերտացն բժշկել զցաւս նորա , և կեանս պարգևել նմին և որոց ընդ նմա. Աւանդի ևս թէ ընդ թղթոյն յաւել տէրն մեր առաքել և զանձեռագործ պատկեր աստուածային դիմացն. զորս առեալ Աբգարու՝ երկիր եպագ պատկերին , և սպասէր կատարման խոստացեալ շնորհացն Քրիստոսի. Արդ յետ համբառնալոյ տեառն՝ Թովմաս առաքեալ ըստ յանձնելոյ նմա փրկչին՝ առաքեաց զԹադէոս զմին յեօթանասնից յԵդեսիա քաղաք առ Աբգար. Եւ նորա եկեալ լուսաւորեաց զԹագաւորն 'ի հաւատս Քրիստոսի՝ բժշկեալ զնա յախտից. և մկրտեաց ոչ միայն զնա լոկն զԱբգար , այլ և զբազում ժողովուրդս Եդեսիոյ. Շինեաց եկեղեցի և ձեռնադրեաց նոցա 'ի տեղի իւր եպիսկոպոս զմետաքսագործ ոմն խոյրարար Թագաւորի , և անուանեաց զնա Ադդէ. որ յետոյ յամին 39 նահատակեալ յորդւոյն Աբգարու՝ դասեցաւ ընդ տօնելի սուրբս.

Սուրբն Թադէոս զկնի լուսաւորելոյ զԱբգար և զամենայն Եդեսացիս՝ գնաց 'ի վերին Հայս առ Թագաւորն Սանատրուկ քեռորդի Աբգարու , որ և 'ի քարոզութենէ սրբոյն հաւատաց 'ի Քրիստոս հանդերձ դստերբ իւրով Սանդխտով և բազում ժողովրդովք. որոց եպիսկոպոս կարգեցաւ 'ի սրբոյն այր ոմն բարեպաշտ Զաքարիա անուն. Այս անցեալ սրբոյն Թադէի 'ի կողմանս Աղուանից՝ անդ ևս քարոզեաց զՔրիստոս , և անտի անց 'ի Կապադովկիա վասն քարոզութեան աւետարանին.

Աստուածապարգև շնորհք հաւատոյ ըստ օրինակի երջանիկ Թագաւորիս մերոյ զեղաւ և 'ի կողմանս Պաղեստինոյ 'ի քաղաքին Կեսարիոյ, ուր հարիւրապետ անն Կոռնելիոս անուն 'ի խաւարի անդ կռապաշտութեան ծանուցեալ զճշմարիտն Աստուած՝ աղօթիւք և ողորմութեամբ իւրով արժանացաւ պարգևացս ։ Զի յաւուր միում յաղօթելն՝ երևեցաւ նմա հրեշտակ Աստուծոյ, և պատուիրեաց խնդրել զսուրբն Պետրոս, և լսել 'ի նմանէ զոր պարտ իցէ նմա գործել ։ Ի նմին ժամանակի յայտնեցաւ և առաքելոյն Պետրոսի 'ի ձեռն երկնաւոր տեսլեան՝ թէ 'ի ստեղծուածս չիք ինչ պիղծ յաչս Աստուծոյ. որով ծանեաւ նա եթէ չէ պարտ հրէական խտրութեամբ խորշել 'ի հեթանոսաց. վասն որոյ մտադիւր գնաց 'ի տուն Կոռնելիոսի և մկրտեաց զնա հանդերձ ընտանեօքն և բարեկամօք ։

Առաքեալքն և հաւատացեալք իբրև լուան զգնալ սրբոյն Պետրոսի 'ի տուն անթլփատի և ուտել անդ զկերակուր, չփոթեցան մտայոյզ կասկածանօք. բայց 'ի լսել անդ զտեսիլ յայտնութեանն, զարմացան ընդ երկնաւոր պարգևսն Աստուծոյ անխտիր հաղորդեալս և հեթանոսաց ։

ԳԼՈՒԽ Զ.

Առաքելութիւն, ուղևորութիւնք, անցք և վիշտք սրբոյն Պօղոսի ։

ԽՈՐՀՈՒՐԴ կոչմանն հեթանոսաց 'ի հաւատս ճշմարտութեան՝ առաւելապէս յայտնեալ տեսաւ ընդ ձեռն սրբոյն Պօղոսի, յոյր սակս անուանեցաւ նա Առաքեալ հեթանոսաց ։ Ոչ ո՛ կարիցէ պատմել զոր արարն և զոր կրեաց 'ի քարոզութեան աւետարանին. զի յետ իբր երից ամաց դարձի իւրոյ 'ի հաւատս, մինչդեռ գնայր 'ի Դամասկոս հրահանգել և հաստատել զհաւատացեալսն, ամբաստանեցաւ 'ի Հրէից առ քաղաքապետն. որ և կարգեաց պահապանս 'ի դրունս Դամասկոսի կալանաւորել զնա. սակայն հաւատացեալք քաղաքին կախեալ զՊօղոս վանդակաւ ընդ պարիսպն, ապրեցուցին 'ի չարախորհուրդ հալածչաց ։

Հասեալ նորա յԵրուսաղէմ սկսաւ քարոզել անդ, և անդ գնաց 'ի հայրենիս իւր 'ի Տարսոն քաղաք, և անտի սուրբն Բառնաբաս ած զնա յԱնտիոք։ Զօրաւոր էր Պօղոս բանիւք 'ի քարոզութեան, իսկ Բառնաբաս քաղցրութեամբ իւրով շահէր զմիտս այնոցիկ՝ որք 'ի քարոզութենէն Պօղոսի պատրաստեալ կային 'ի հաւանութիւն ճշմարտութեան։

Յայնմ քաղաքի իբր յ38 ամի փրկչին, այնչափ բազմաթիւ եղեն հաւատացեալքն 'ի Քրիստոս, զի հետեւողք աւետարանին նախ յԱնտիոք անուանեցան Քրիստոնեայք։ Հաւատացեալք քաղաքին առաքեցին զՊօղոս տանել զտուրս ողորմութեան իւրեանց առ հաւատացեալս Երուսաղեմի. վասն որոյ գնաց նա անդր ընդ Բառնաբայ, և անդ դարձ արարեալ ընդ նմա վերստին յԱնտիոք՝ ուղեւորեցան անտի 'ի Կիպրոս յամին իբր 43. ուր 'ի Պափոս քաղաքի փոխանակն բդեշխի Սերգիոս Պօղոս անուն դարձաւ 'ի հաւատս քարոզութեամբ նոցա։ Իշխանաւորս այս մոլորեալ կայր 'ի պատրողական նշանաց ուրումն Հրէի Բարյեսու անուանելոյ, որ և կոչի Եղիմաս մոգ։ Սուրբն Պօղոս վստահացեալ 'ի զօրութիւնն Աստուծոյ՝ զորոյ զհաւատոյն քարոզէր, հրապարակաւ դիմամարտեալ այնմ նենգաւորի առն. «Ո՛վ լի ամենայն նենգութեամբ և խարդախութեամբ որդի սատանայի, թշնամի ամենայն արդարութեան, ո՞չ լռես 'ի թիւրելոյ զճանապարհս տեառն զուղիղս. և ահա եղիցիս կոյր չտեսանել զարեւ մինչեւ 'ի ժամանակ մի»։ Եւ անդէն կուրացաւ մոգն, մինչև 'ի շրջել իւրում խնդրէր առաջնորդս ձեռնապարհի։ Ի սքանչելեաց աստի հաստատեցան հաւատք փոխանակի բդեշխին։ Ենթադրութիւն է հաւանական՝ թէ առաքեալն անդէն պատեհաւ զՍաւուղ անուն իւր փոխեաց յանուն իշխանին՝ որ ընդ ձեռն նորա եկն 'ի հաւատս, այսինքն 'ի Պօղոս, նմանեալ նախնի զօրավարացն Հռովմայեցւոց, որք սեպհականէին զանուն ազգին նուաճելոյ ընդ ձեռն իւրեանց։

Յետ այնորիկ սուրբն Պօղոս և Բառնաբաս գնացին յԱնտիոք Պիսիդիոյ, յԻկոնիոն և 'ի Լիւստրա։ Ի վերջնումն յայնմ քաղաքի բժշկեաց Պօղոս զայր կաղ յոտից 'ի ծնէ. զոր տեսեալ բնակչաց քաղաքին և սքանչացեալ ընդ գործն՝ հայէին 'ի Պօղոս և 'ի Բառնաբաս իբրև յաստուածս կերպարանեալս 'ի մարդիկ, մինչև կամէին կանգնել առաջի նոցա բագին և զոհս մատուցանել. սակայն Հրէայք ոմանք եկեալք յԱնտիոքայ և յԻկոնիոն՝ չփոթեցին զմիտս ժողովրդեանն, մինչև տալ նոցա քարկոծել զառաքեալն Պօղոս, և քարշել արտաքոյ քաղաքին իբրև զմեռեալ։

ԳԼՈՒԽ Է.

Նահատակութիւն Ադդէի հայրապետին, Թադէոսի առաքելոյ և Սանդխտոյ կուսին։

Յետ մահուան որդւոյ Թագաւորին Աբգարու յաջորդեալ յաթոռն Անանէի որդւոյ նորա, եթող զհաւատս Քրիստոսի, վասն որոյ կշտամբեալ 'ի սրբոյն Ադդէէ հայրապետէն Եդեսիոյ՝ ետ սպանանել զնա յամին իբր 39, բայց և ինքն պատուհասեալ յԱստուծոյ՝ մեռաւ յետ սակաւուց։ Զկնի նորա զիշխանութիւն թագաւորութեանն Հայոց կալաւ Սանատրուկ քեռորդի Աբգարու. և թողեալ զհաւատս Քրիստոսի՝ խորհեցաւ տիրել 'ի վերայ ամենայն աշխարհին. յոր սակս զինեալ զօրք յԵդեսիա քաղաք՝ ջնջեաց զազգատոհմն Աբգարու, և ետ համարձակութիւն պաշտաման կռոց։ Զայն լուեալ սրբոյն Թադէի 'ի Կապադովկիա, կամեցաւ դառնալ անդրէն 'ի Հայս առ Սանատրուկ արքայ. և եղև 'ի մտանել սրբոյն 'ի սահմանս Միջագետաց՝ պատահեցին նմա հինգ դեսպանք Հռոմայեցւոց՝ արք ականաւորք՝ որք գնային առ Սանատրուկ արքայ. զորս տեսեալ սրբոյն Թադէի՝ քարոզեաց նոցա զՔրիստոս, և դարձուցեալ 'ի հաւատս՝ մկրտեաց զամենեսին, և զգլխաւորն 'ի նոցանէ Խրիւսի անուն, որ թարգմանի Ոսկի, ձեռնադրեաց քահանայ. յորմէ և ընկերք նորա Ոսկեանք կոչեցան, որք և նահատակեցան 'ի սկիզբն երկրորդի դարուն յամին 107։

Իմացեալ Սանատրկոյ զհաւատալ Ոսկեանց 'ի ձեռն Թադէի առաքելոյ՝ կոչեաց զնա 'ի Շաւարշան քաղաք և սպան անդ։ Ընդ նմին նահատակեցաւ և սրբուհին Սանդուխտ դուստր Սանատրկոյ վասն հաստատուն ձնալց իւրոյ 'ի հաւատս Քրիստոսի. և 'ի լինել սքանչելեաց 'ի վերայ սրբուհւոյն՝ բազումք 'ի ժողովրդենէն հաւատացին 'ի Քրիստոս և նահատակեցան.

ԳԼՈՒԽ Ը.

Ժողով առաքելոց յԵրուսաղէմ։ — Հալածանք Ագրիպպայ և պատուհաս նորա։

ԱՌՈՂՋԱՑԵԱԼ սրբոյն Պօղոսի 'ի վիրաց անտի քարկոծմանն որ 'ի Լիւստրա, սկսաւ կատարել զպաշտօն առաքելութեան իւրոյ, և դարձաւ յԱնտիոք Ասորւոց ուր կային բազմութիւնք հաւատացելոց, և էր 'ի նոսա հակառակութիւն մեծ. զի ոմանք 'ի նորադարձ Հրէից ուսուցանէին՝ թէ պարտ է ամենեցուն ընդ քրիստոսական հաւատոյ պահել և զմովսիսական օրինաց խըստութիւնս.

Ի խափանել զխնդիր հակառակութեանն՝ Պօղոս և Բառնաբաս առաքեցան յԵրուսաղէմ, ուր խմբեցաւ ժողով հանրական առաքելական դասուն և երիցանց յամի տեառն 49 կամ 54. և սահմանեցաւ չդնել զլուծ պահպանութեան մովսիսական օրինաց 'ի վերայ նորադարձ Հրէից և հեթանոսաց, այլ պատուիրեցաւ զգուշանալ 'ի պոռնկութենէ, 'ի զոհելոյ կռոց, 'ի հեղձուցեալ կենդանեաց և յարենէ։ Զայս սահման ժողովոյն Պօղոս և Բառնաբաս իբրև տարան յԱնտիոք՝ միաբանեցին զսիրտս ամենայն հաւատացելոց.

Ամօք ինչ յառաջ Հերովդէս Ագրիպպաս յարուցեալ էր հալածանս յԵրուսաղէմ 'ի վերայ քրիստոնէից, յորում ժամանակի սպանաւ Յակոբոս մեծն եղբայր Յովհաննու աւետարանչի. որպէս և սուրբն Պետրոս արկաւ 'ի բանտ հրամանաւ անօրէն իշխանին. և յետ տօնի բաղարջակերաց՝ յամին իբր 44, հանդերձեալ էր մատնել 'ի մահ 'ի խնդրոյ Հրէից, սակայն 'ի նախընթաց գիշերի աւուրն՝ յորում սահմանեալ էր մահ առաքելոյն, հրեշտակ Տեառն բացեալ զդրունս բանտին՝ ազատեաց զնա 'ի ձեռաց Հերովդի և յակընկալութենէ Հրէից. Ընդ առաւօտն ծանուցեալ բռնաւորին զսքանչելիսն, որով լուծան շղթայք Պետրոոի, դառնացեալ սրտիւ յանցաւոր համարեալ զպահապանսն՝ ետ սպանանել զամենեսին. սակայն ընկալաւ զպատուհաս խւրոց չարագործութեանց, զի գնացեալ նորա 'ի Կեսարիա կատարել զտօն մեծահանդէս 'ի պատիւ Կղօդիոսի կայսեր, կամեցաւ ինքնին ատենախօսել զգովեստ զրաստամիտ կայսերն. և մինչդեռ զուն գործէր պերճ՝ և պայծառ բանիւք գեղազարդել զխօսսն, զարմացեալ ժողովրդեանն սկսան աղաղակել, թէ „Աստուծոյ բարբառ է և ոչ մարդոյ„։ Որ լուեալ Հերովդի, և համարեալ զանձն արժանի այնմ գովեստի զոր տային նմա առ ահի բռնաւորութեանն, փոխանակ սաստելոյ նոցա՝ ախորժանօք ընկալաւ. վասն որոյ անյապաղ եհաս նմին պատուհաս ամբարտաւանութեանն. զի հարուածեալ 'ի հրեշտակէ Աստուծոյ 'ի հանդիսի անդ, կալաւ զնա ցաւ անբերելի, և եղև որդնալից. որով Աստուած իբրու մատամբ եցոյց ամբոխին, թէ աստուած անուանեալն 'ի նոցանէ՝ մարդ մահկանացու է, որ և յետ հնգից աւուրց չարաչար տանջանաց և յուսահատութեան պակասեցաւ 'ի կենաց։

Իբրև փչեաց նա զշունչն յետին, նոքին իսկ ժողովուրդքն որք երբեմն կեղծեօք պատուէին զնա, արարին ցնծութիւն հասարակաց, և խորհեցան անարգել զդըստերս նորա, ըստ որում վկայէ Յովսեպոս եբրայեցի։ Լուեալ Կղօդիոսի կայսեր զանարգանս ժողովրդեանն առ Հերովդէս՝ զոր սիրէր նա, ծանրացաւ իմն եղև ընդ ապերախտութիւն Կեսարացւոց. վասն որոյ առաքեաց ստիկանս պատուհասել զնոսա. մանաւանդ զի եդեալ ևս էր 'ի մտի զթագաւորութիւնն զայն տալ որդւոյն Ագրիպպայ՝ որ էր եօթնևտասան ամաց. սակայն խորհրդականք կայսեր հակառակ կացեալ՝ զհրէաստան արարին միւսանգամ մասն և գաւառ հռովմէական տէրութեան։

ԳԼՈՒԽ Թ.

Վիշտք և վտանգք քարոզութեան սրբոյն Պօղոսի։

ՍՈՒՐԲՆ Պօղոս զատուցեալ 'ի Բառնաբայ առաքելոյ, առ ընդ իւր զՇիղա և գնաց յԱսորիս, 'ի Կիլիկիա, 'ի Փռիւգիա, 'ի Գաղատիա և 'ի Մակեդոնիա, հալածելով զդեւս յայսահարաց, և հրաշագործելով զբժշկութիւն մարմնոց, փոյթ տարեալ այնու՝ 'ի խնամս հոգւոյն ախտակրութեան։ Յաթէնս խօսեցաւ յատենի Արիսպագին ամենայն Հարտարութեամբ, և դարձոյց 'ի հաւատս զմի յատենակալացն Դիոնեսիոս անուն։ Իսկ 'ի քաղաքի անդ սեղան կանգնեալ յանուն Անծանօթի Աստուծոյ. յորմէ պատճառս առեալ առաքելոյն՝ քարոզեաց զՔրիստոս Աստուած, զոր նոքայն յանծանօթս պաշտէին։ Ի հոգեշարժ բանիցն Պօղոսի յորդորեալ տիկին ոմն անուն Դամարիս, որ կարծի լինել կին Դիոնեսիոսի, ընկալաւ զքրիստոնէութիւն։

Նոյնպէս քարոզեաց առաքեալն 'ի Կորնթոս և 'ի Փիլիպպէ, ուր ոսկերիչ ոմն դիցապատկեր դրօշելոյ գործով՝ զայրացեալ ընդդէմ Պօղոսի, զի յորմէ հետէ եկեալ էր անդր առաքեալն՝ պակասեաց շահ օգտի նորա, յարոյց աղմուկ 'ի ժողովրդեանն. վասն որոյ արտաքսեցաւ Պօղոս 'ի քաղաքէ անտի, և դիմեաց 'ի փոքրն Ասիա։ Ապա իբրև կամեցաւ գնալ վերստին յԵրուսաղէմ, Ագաբոս ոմն մարգարէ նախապատմեաց զհակառակութիւնս զորս կրելոց էր առաքեալն յԵրուսաղէմ, սակայն և այնպէս ոչ կասեցաւ Պօղոս գնալ անդր աներկիւղ։

Իբրև եհաս յԵրուսաղէմ՝ յայց ել սրբոյն Յակոբայ, որ եպիսկոպոս էր քաղաքին. որոյ գիտելով զամբաստանութիւնս Հրէից զՊօղոսէ՝ որպէս թէ քակիչ օրինացն Մովսէսի իցէ, խորհուրդ ետ նմա գնալ և սրբիլ ըստ հրէական օրինաց, և ընդ նազովրացիս ոմանս մտանել 'ի տաճարն և պատարագս մատուցանել։ Հաւանեալ Պօղոսի ընդ խորհուրդն՝ կատարեաց զայն. սակայն սովին պահպանութեամբ օրինաց ոչ միայն ոչ հանդարտեցին Հրեայք, այլ և զայրացին եւս ցասուցեալ յարձակեցան 'ի վերայ նորա, և բռնի քարշեալ զնա արտաքոյ տաճարին՝ փոքր միւս ևս և սպանանէին, եթէ Լիւսիաս հազարապետ չէր հասեալ 'ի վերայ՝ և զՊօղոս կալեալ և արկեալ 'ի բանտ։ Ի խնդրել մոլեգնեալ ժողովրդեանն զմահ Պօղոսի, Լիւսիաս կամելով խաղաղել զնոսա՝ հրամայեաց գանահարել զՊօղոս. և 'ի կապել զնա զինուորացն՝ եհարց Պօղոս ցհարիւրապետն, եթէ օրէ՞ն իցէ տալ պատուհաս զանից առն հռովմայեցւոյ. զոր իբրև լուաւ Լիւսիաս հազարապետ՝ ետ լուծանել զնա վաղվաղակի 'ի կապանացն, և ածել 'ի բանակ Հռովմայեցւոց։

Ի վաղիւ անդր վերստին կացոյց զՊօղոս առաջի Հրէից ոխերիմ թշնամեաց նորա։ Բայց նորա ոչ կարելով բանիւք քարոզութեան հանդարտել զխռովեալ սիրտս ամբոխին, իբրև ծանեաւ թէ կային 'ի ժողովրդեան անդ փարիսեցիք՝ որք ընդունէին զյարութիւն մարմնոց, էին և Սադուկեցիք՝ որք ուրանային զայն, աղաղակեաց յատենին և յայտ արար զդաւանութիւն իւր յուսոյ յարութեան. և յայս սակս, ասէ, խնդրեն կորուսանել զիս, զի հաւատամ 'ի յարութիւն մեռելոց։ Ի բանից անտի մեծագոյն մասն ժողովրդեանն՝ որք փարիսեցիք էին, առժամայն պաշտպան կային Պօղոսի, և այլք խոյս ետուն անտի։

Բայց Սադուկեցիք խորհուրդ 'ի մէջ առեալ՝ եդին 'ի մտի ծածուկ հնարիւք սպանանել զՊօղոս. զոր իմացեալ քեռորդւոյ նորա՝ ազդ արար հազարապետին. իսկ նորա կամեցեալ ապրեցուցանել զՊօղոս, ետ պատրաստել զօրականս, և նոքօք յուղարկեաց զնա գիշերայն 'ի Կեսարիա, ուր Փելիքս դատաւոր Հրէաստանի ունէր զիւր աթոռական բնակութիւն։ Այլ Փելիքսի ոչ կարացեալ մահապարտ առնել զՊօղոս, և արձակել ևս չըկամելով, կալաւ զնա 'ի բանտի զամս երկուս։

Յետ Փելիքսի իբրև եհաս յայն իշխանութիւն Փեստոս, նորոգեցին Հրէայք զհալածումն 'ի վերայ սուրբ առաքելոյն։ Տեսեալ Փեստոսի թէ խռովութիւն նոցա է յաղագս խնդրոյ հաւատոյ՝ յօժարամտեալ էր արձակել զՊօղոս. սակայն 'ի բողոքել նորա առ կայսրն՝ հրամայեաց տանել զնա 'ի Հռովմ, ուր եհաս առաքեալն բազում վշտօք ուղևորութեան՝ յամին իբր 62։

Ընդ 'ի Հռոմ ոչ դադարէր Պօղոս 'ի քարոզելոյ զաւետարանն, և 'ի վարելոյ զգաստ անձնդրութեան իրոյ. վասն որոյ ոչ միայն ուսուցանէր զորս գային առ նա, այլ և գրէր ստէպ առ այնոսիկ՝ որք բանիւ քարոզութեան իւրոյ 'ի զանազան քաղաքս հաւատացեալ էին 'ի Քրիստոս։ Զի թուղթքն առ եկեղեցիս Գաղատացւոց, Եփեսացւոց, Փիլիպպեցւոց, Կողոսացւոց, որպէս և երկրորդ թուղթն առ Տիմոթէոս սիրելի աշակերտ իւր, և որք առ Փիլիմոն և առ Եբրայեցիս, գրեցան 'ի Հռոմայ յաւուրս բանտարգելութեան իւրոյ, որ տևեաց զամս երկուս։

ԳԼՈՒԽ Ժ.

Հալածումն Ներոնի, և նահատակութիւն գլխաւոր առաքելոցն Պետրոսի և Պօղոսի։

ՔԱՐՈԶԻՉՔ հաւատոյն Քրիստոսի և աւետարանական վարդապետութեան հալածեցան 'ի հակառակորդաց իբրև թշնամիք մարդկային ընկերութեան. թէպէտ և փոյթ քարոզչացն էր մխիթարութիւն ընծայել ազգի մարդկան։ Ներոն առաջին եղև 'ի կայսերս Հռոմայեցւոց որ յարոյց հալածանս ընդդէմ քրիստոնէից. և այնչափ առաւել մեծ եղեն պարծանք եկեղեցւոյ, որչափ զի նախկին իւր սոսկ եկաց բռնաւորն այն որ անձնատուր էր յամենայն ազգս մոլութեանց։ Հալածումն նորա սկսաւ յամի փրկչին իբր 65. յորում ժամանակի եղև հրդեհ մեծ 'ի Հռոմ, որով յաճիւն դարձաւ երրեակ մասն քաղաքին, և Ներոն բամբասեալ 'ի ժողովրդենէն իբրև պատճառ եղեալ վնասուն, կամեցաւ արկանել զյանցանսն 'ի վերայ քրիստոնէից, որք ատելի էին Հռոմայեցւոց սակս նորակրօն վարդապետութեան որ անծանօթ էր 'ի նոցանէ։

Ի ժամանակին յայնմիկ ըստ վկայելոյ Տակիտոսի հեթանոս պատմագրի՝ ըմբռնեցան բազմաթիւ քրիստոնեայք, և 'ի հրամանաց Ներոնի մատնեցան 'ի դառն և յանբերելի տանջանս մահու՝ ազգի ազգի օրինակաւ։ Ոմանց զգեցուցանէին մորթս անասնոց, զի շունք կատաղիք պատառեսցեն զնոսա կենդանւոյն. զայլս բևեռեալ 'ի խաչի և օծեալ զմարմինս նոցա այրէին նիւթովք, վառէին իբրև զջահս լուսատու գիշերոյ։

Գլուխն առաքելոց Պետրոս, որ յետ քարոզելոյ 'ի կողմանս Պոնտացւոց, Կապադովկացւոց և Բիւթանացւոց, և հիմնելոյ զաթոռն Անտիոքայ՝ եկեալ էր 'ի Հռովմ յամին 46, ըմբռնեցաւ յաւուրս այսր հալածանաց. ըստ որում և սուրբն Պօղոս կալանաւորեալ 'ի նմին քաղաքի, երկոքեան 'ի միասին արկան 'ի խոր բանտն Մամերտինեան առ ոտս Կապիտոլինի, և կացին անդ արգելեալք զամիսս ինն։ Անդանօր երկուք 'ի պահապանաց տեսեալ զսքանչելիսն զոր գործէին առաքեալքն սուրբք, դարձան 'ի հաւատս և մկրտեցան 'ի սրբոյն Պետրոսէ՝ հանդերձ քառասուն և եօթն արամբք որ կային արգելեալք 'ի նմին բանտի։

Հաւատացեալք քաղաքին խնամ կալան ազատութեան առաքելոցն. որով սուրբն Պետրոս ել 'ի բանտէ անտի, և խուսել կամելով՝ իբրև եհաս 'ի դուռն քաղաքին՝ երևեցաւ նմա Յիսուս, զի մտանէր 'ի քաղաք անդր։ Զնա տեսեալ Պետրոսի մատեաւ առ նա և ասէ. “Յո՞ գնաս տէր„։ Նա իբրև լուաւ 'ի նմանէ, թէ “Գնամ 'ի Հռովմ զի վերստին 'ի խաչ ելից„, ծանեաւ եթէ կամք տեառն են մեռանել նմա 'ի խաչի, վասն որոյ դարձաւ անդրէն 'ի բանտ՝ նուիրել զանձն յողջակէզ մահու։ Ի ժամանակին յայնմիկ քանզի Ներոն կայսր յԱքայիս էր, դատաւորք Հռովմայ ետուն զվճիռ մահու առաքելոցն. վասն որոյ և երկոքին միանգամայն 'ի միում աւուր ընկալան զպսակ նահատակութեան յամի տեառն 66, ըստ հասարակ կարծեաց 'ի 29 յունիսի։

Զսուրբն Պօղոս, քանզի ունէր զպատիւ հռովմէական քաղաքակցութեան՝ գլխապարտ արարին. որոյ 'ի գնալ իւրում 'ի մահ՝ յընթացս ճանապարհին դարձոյց զերիս զօրականս 'ի հաւատս Քրիստոսի, որք և յետոյ նահատակեցան վկայական մահուամբ։ Ածաւ սուրբն 'ի տեղի կառափման՝ երիւք մղոնօք հեռի 'ի Հռովմայ, 'ի տեղին որ անուանեալ կոչէր Սաղուեան ջուրք, ուր և ցարդ տեսանին աղբիւրք երեք, որք աւանդին սքանչելեօք բղխեալք 'ի ժամ նահատակութեանն։ Անդ գլխատեցաւ սուրբն Պօղոս, և զմարմին նորա տիկին ոմն հռովմայեցի Լուկինա անուն՝ ետ թաղել յիւրում ագարակի առ Ճանապարհաւն որ ածէ յՈստիա քաղաք:

Իսկ զսուրբն Պետրոս տարան յայնկոյս Տիբերիս գետոյ 'ի վայրն բնակութեան Հրէից, ուր 'ի գլուխ Յանիկողեան բլրին հանին զնա 'ի խաչ: Դահիճքն կամէին ըստ սովորական օրինակի բեւեռել զնա 'ի խաչի. սակայն սուրբն ոչ համարելով զանձն արժանի բեւեռելոյ ըստ նմանութեան փրկչին, խնդրեաց խաչել գլխ'ի վայր: Զմարմին սրբոյն Պետրոսի առին հաւատացեալք և թաղեցին 'ի Վատիկանեան դաշտին առ ոտս բլրակի: Կայ և այլ աւանդութիւն, թէ յետ նահատակութեան սրբոց առաքելոցս ոմանք յարեւելեան քրիստոնէից առեալ զմարմինս նոցա տարան թաղուցին 'ի ստորերկրեայ դամբարանս կրկին փարսախաւ հեռի 'ի Հռովմայ, և յետոյ հաւատացեալք քաղաքին ըզպատուական նշխարսն զայնոսիկ փոխադրեալ հանգուցին յայլում տեղւոջ, ուր կային մինչև ցխախճան վեցերորդի դարուն:

Եղեն և այլ վկայք բազմաթիւք որք առ կայսերութեամբ Ներոնի նահատակեցան վասն 'ի Քրիստոս հաւատոյ: Սուրբն Մարկոս աւետարանիչ յԱղեքսանդրիա, որ եղև առաջին եպիսկոպոս այնր քաղաքի. և 'ի Մեդիոլան՝ սուրբքն Գերուասիոս և Պրոտասիոս:

Դադարեցաւ հալածումն չարաչար մահուամբ բռնաւորին, որ յետ սպանանելոյ և զմայրն իւր և զՍենեկա զուսուցիչ իւր, անձնասպան եղև յամի տեառն 68:

ԳԼՈՒԽ ԺԱ.

Վաստակք քարոզութեանց և կատարումն այլոց Առաքելոց:

ՍԱՀՄԱՆ քարոզութեան համօրէն առաքելոց՝ ըստ իշխանութեանն զոր ունէին 'ի Քրիստոսէ՝ ոչ ինչ նուազ էր քան զընդարձակութիւն վայրացն յորս աշխատ եղեն երկոքին գլխաւոր առաքեալքն Պետրոս և Պօղոս. բայց արդիւնք վաստակոց նոցա թէպէտ և բազմաշահք՝ գրեթէ անծանօթք են մեզ. զի մատեանքն յորս աւանդէին վէպք գործոց նոցա՝ ընդ անհարազատ պատմութիւնս համարեալ են։ Այլ մեք զստուգագոյն 'ի միաձայնութենէ հասարակաց կարգեսցուք կարճ 'ի կարճոյ։

Սուրբն Յովհաննէս աւետարանագիր եկաց 'ի փոքրն Ասիա, և հիմնեցոյց զեկեղեցին Եփեսոսի. յորում և 'ի հարիւրեմեան հասակի լի արդեամբք վախճանեաց զկեանս իւր։

Սուրբն Անդրէաս՝ ըստ մարմնոյ եղբայր սրբոյն Պետրոսի, շրջեցաւ 'ի քարոզութիւն աւետարանին առ Սկիւթացիս, Եթովպացիս և Թրակացիս։ Մանրամասն յիշատակագրութիւնք մահուան նորա աւանդեալք 'ի թղթին որ յանուն եկեղեցւոյն Աքայեցւոց՝ եթէ չիցեն բաւական յստուգութիւն եղելոց իրացն, գէթ հաւանեցուցանեն զընթերցողս աներկմիտ լինել ընդ սաստկութիւն սիրոյն որով տենչացաւ սուրբն խաչակից լինել Քրիստոսի։

Սուրբն Փիլիպպոս յետ քարոզելոյ Սկիւթացւոց գնաց 'ի Տրապոլիս Փռիւգիոյ. և անդ նահատակեցաւ յաւուրս Տրայիանոսի կայսեր, 'ի հասակի ութսուն և եօթն ամաց։ Պողիկրատէս եպիսկոպոս Եփեսոսի 'ի վախճան երկրորդի դարուն հաւաստէ, թէ սուրբն Փիլիպպոս զտօն պասեքին կատարէր 'ի չորեքտասանն լուսնի։ Նմին առաքելոյս և դստերք երկու, որք սրբութեամբ վարուց կատարեցին զկեանս իւրեանց։

Սուրբն Թովմաս գնաց 'ի քարոզութիւն Մարաց և Պարսից, և անտի անց 'ի Հնդիկս, ուր և յետ առաքելական վաստակոց կատարեցաւ վկայական մահուամբ, և թաղեցաւ անդ. զորոյ զպատուական նշխարսն աւանդեն Լուսիտանացիք գտեալ 'ի Մալապար յաւերակս եկեղեցւոյն կանգնելոյ 'ի նորին անուն, զորս և փոխադրեալ 'ի Գոա՝ ունին արդ 'ի պատուի։ Գտանի և այլ աւանդութիւն 'ի Յայսմաւուրս Հայոց՝ թէ յետ կատարելոյ սրբոյն 'ի Հնդիկս՝ մասունք ոսկերաց նորա բերեալ եղեն նախ յԱսորիս, և անտի 'ի Հայս յաշխարհն Աղձնեաց։

Սուրբն Բարթողիմէոս քարոզեաց 'ի մեծն Հայս, 'ի Լիկայոնիա և յայլ գաւառս Ասիոյ։ Հասարակաց

---

1 Օգոստ. ԻԴ։

աւանդութիւն է, եթէ մորթեղերծ մահուամբ նահատակեցաւ նա յԱղուանս: Յազգային աւանդութենէ ունիմք և զայս յիշատակ[1], թէ սուրբն Բարթողիմէոս յետ փոխմանն Աստուածածնին ժամանեալ յԵրուսաղէմ, փափագեաց տեսութեան մարմնոյ կուսին. և իբրև բացին առաքեալք զտապանն՝ գտին վերափոխեալ զնա յերկինս. և 'ի մխիթարութիւն թախծեալ սրտին Բարթողիմէոսի ետուն նմա զպատկեր կուսին զտպաւորեալն 'ի նմանէ հրաշիւք 'ի վերայ տախտակի: Զայն պատկեր առեալ Բարթողիմեայ եկն 'ի Հայս, և նովաւ առնէր սքանչելիս: Անդ 'ի Վասպուրական աշխարհի աւետարանեալ զՔրիստոս՝ դարձոյց զբազումս, և շինեալ եկեղեցի և մենաստան կանանց՝ եդ 'ի նմա զպատկեր տիրամօրն: Ապա շրջեալ 'ի ստորին Հայս՝ դարձոյց զբազում ժողովուրդս, ընդ որս և զքոյրն Սանատրկոյ արքայի, որպէս և զհազարապետ տանն նորա. զոր իբրև լուաւ Սանատրուկ արքայ՝ ետ հանել զմորթ սրբոյն և խաչել զնա 'ի կողմանս Աղբակայ:

Սուրբն Մատթէոս աւետարանիչ, որ երբեմն մաքսաւոր՝ Ղեւի Ալփեայ կոչեցեալ, նախ քան զգնալն 'ի քարոզութիւն գրեաց զաւետարան իւր 'ի խնդրոյ եկեղեցւոյն Երուսաղեմի, և ապա շրջեալ ընդ բազում ազգս եհաս յաշխարհն բարբարոսաց, ուր և վկայութեամբ նահատակեցաւ: Իսկ սուրբն Սիմոն և Յուդա յակոբեան քարոզեցին 'ի ժողովուրդս Միջագետաց Ասիոյ: Առաջինն կոչի և Շմաւոն նախանձայոյզ, որպէս և Կանանացի, որ ըստ աւանդելոյ յայսմաւուրաց մերոց կատարեցաւ 'ի գաւառին Ռշտունեաց մօտ 'ի քաղաքն Որմի, թէպէտ այլք 'ի Բրիտանիա ասեն զնա նահատակեալ: Իսկ երկրորդն՝ որ կոչի և Ղեբէոս, որպէս և Թադէոս, նահատակեցաւ յՈրմի քաղաք: Պատմութիւնք գործոց և վկայութեան նոցա հիմնեալ կան 'ի վերայ երկբայելի աւանդութեանց, զորս անօգուտ է 'ի քնին մատուցանել և վէճս զնոցանէ յուզել. այլ լաւ ևս է զմիտս մեր 'ներքոյ արկանել աստուածային անհաս խնամութեան, որ յոլովակի ծածկէ առ 'ի մէնջ զվարս մեծամեծ սրբոց՝ 'ի խրատ անյայտս և զգուշս պահելոյ զանձինս մեր 'ի սնոտի փառաց և 'ի պարծանաց ։

---

[1] Խորէն. 'ի Թուղթն առ Սահակ արծր:

Սուրբն Յակոբ Կրտսերն կոչեցեալ 'ի Լատինացւոց, և յարևելեայց Յակոբ Ալփեան անուանեալ, համարի եղբայր Մատթէոսի աւետարանչի․ որ յետ քարոզելոյ Հրէից և հեթանոսաց՝ կատարեցաւ յերկրին Ասորւոց ։

Սուրբն Մատաթիա՝ որ աստուածային վիճակաւ ընտրեցաւ 'ի մետասանից, յետ շրջելոյ ընդ զանազան աշխարհս 'ի քարոզութիւն աւետարանին, դարձ արար 'ի Հրէաստան, և անդ կատարեցաւ ։

Սուրբն Յակոբ Երէցն՝ որդի Զեբեդեայ և եղբայր Յովհաննու աւետարանչի, 'ի պատճառս աներկիւղ քարոզելոյն զՔրիստոս 'ի Պաղեստին, թելադրութ̅բ Հրէից կալեալ եղև 'ի Հերովդէ չորրորդապետէ, և սպանաւ սրով 'ի Կեսարիա ։

Եթէ 'նուազութիւն պատմական ծանօթութեանց հրաշալի գործոց առաքելոցն Քրիստոսի չիցէն բաւական 'ի հանգուցանել զհետաքննութիւն մեր, թղթագրութիւնք 'նոցին կարեն լիով հրահանգել զմիտս մեր, 'ի պտղոյն ճանաչելով զծառն, և 'ի հոգեբուղխ բանիցն զաստուածակիր աղբիւրս 'նոցին ։ Բայց 'ի չորից աւետարանացն՝ Մատթէոսի և Յովհաննու առաքելոց, և Մարկոսի և Ղուկասու աշակերտաց, ունիմք և չորեքտասան թուղթս սրբոյն Պօղոսի, երկուս սրբոյն Պետրոսի, և երիս սրբոյն Յովհաննու, որ եթող մեզ և զգիրս Յայտնութեան ։ Այլ և թուղթ սրբոյն Յակոբայ, որպէս և թուղթ մի սրբոյն Յուդայի, որ ըստ ասից Որոգինեայ՝ 'ի սակաւ տողսն լի է բազմապատիկ իմաստիւք ։ Ի թղթոց աստի, որք համարին կաթն տղայոց, և հաստատուն կերակուր կատարելոց, իբրու յառատահաս աղբերաց բղխեն ամենայն ճշմարտութիւնք՝ որոց հարկ է հաւատս ընծայել, և կանոնք վարուց՝ զորս պարտիմք յանձինս մեր ցուցանել ։

Զարմանան բազումք ընդ 'նուազութիւն յիշատակաց սրբոց առաքելոց և աշակերտացն Քրիստոսի ․ զի ցանկալի էր արդեօք՝ եթէ մանրամասն աւանդեալ էր 'նոցա զամենայն արարողութիւնս արտաքին պաշտաման կրօնից, և զկանոնս եկեղեցւոյ․ միանգամայն և որոշ որոշ 'նշանակեալ էր 'նոցա 'ի գրութիւնս անդ զգլխաւոր և զսքանչելահրաշ դիպուածս քարոզութեան իւրեանց ։ Սակայն ըստ ասելոյ ուրումն վարդապետի՝ պարտ է մեզ խորին խոնարհութեամբ՝ առանց յերկուանալոյ երկիր պագանել աստուածային տնտեսութեան, որ տնօրինեաց անմասն մնալ մեզ յայսպիսի գրաւոր տեղեկութեանց, թէպէտ և ոչ յանգիր առաքելական աւանդութենէ՝ որ ընդ ամենայն եկեղեցիս ։ Ահա և Քրիստոս տէրն մեր ոչ անպատճառ չկամեցաւ թողուլ մեզ բանս ինքնագիրս, առաքեալքն ևս կարի սակաւս թողին. զի 'ի յոգնաթիւ բազմութենէ նոցա զեօթանցն ևեթ գիտեմք գրուածս. սակայն զոր միանգամ պատմեն մեզ պրակք առաքելոցն զՊետրոսէ և զՊօղոսէ, շատ իսկ են առ ուղղութեամբ գուշակելոյ և զայլոցն գործս ։ Զի ակներև տեսանի 'ի նոսա՝ եթէ զիարդ քարոզէին նոքա Հրէից և հեթանոսաց, տգիտաց և իմաստնոց, և որպիսի օրինակաւ գործէին զսքանչելիսն, և վշտաց տանէին, և 'ի հալածանս արիանային ։

Առաքելոցն լռութիւն ազդէ մեզ հրահանգս պիտանիս և զապացոյց աներկբայելի՝ թէ ոչ խնդրէին նոքա զփառս անձանց իւրեանց, յոր սակս և անփոյթ եղեն թողուլ յետնոց զյիշատակս մեծամեծ գործոցն զորս կատարեցին ։ Շատ համարէին վասն փառացն Աստուծոյ և 'ի խրատ յետնոց՝ եթէ մասն մի 'ի գործոց իւրեանց ծանիցի. իսկ մնացելոցն անյիշատակութիւն պանծալի ևս էր նոցա քան զամենայն պատմաբանութիւն ։ Քանզի չէր տարակոյս՝ եթէ դարձուցին նոքա անհամար ժողովուրդս 'ի զանազան ազգաց, և կանգնեցին բազմաթիւ եկեղեցիս, ըստ որում տեսցի 'ի հետագայ դարու. և ոչ էր մարթ հիմն առնուլ նոցին առանց սքանչելագործ հիմնարկուաց՝ որպիսի առաքեալքն էին ։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Քահանայապետք Հռովմայ յաջորդք սրբոյն Պետրոսի։

ՅԵՏ վկայելոյ սրբոյն Պետրոսի կալաւ զաթոռ քահանայապետութեան սուրբն Լինոս, որ և զկնի երկուց ամաց հովուապետութեան՝ վկայական մահուամբ վախճանեաց զկեանսն։ Նմին յաջորդեաց սուրբն Կղեմէս, որ եկաց 'ի քահանայապետութեան զամս ինն։ Սմա ընծային գրութիւնք առաքելական կանոնաց, զորս ասասցուք զկնի 'ի գլուխ եկեղեցական մատենագրաց։ Յետ նորա կալաւ զաթոռ հայրապետութեան սուրբն Անակղետոս զամս երկոտասան։

Նուազութիւն աներկբայ յիշատակագրութեանց վաղնջուց ժամանակացն, միանգամայն և համառօտութիւնն զոր գիտեմք յառաջիկայ գործս՝ չներեն մեզ երկարապատում լինել յաղագս առաջնոց քահանայապետացն Հռովմայ, որք ըստ հասարակաց աւանդութեան ամենեքին կատարեցան վկայական մահուամբ։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Պատերազմ Հրէից, և կործանումն Երուսաղեմի։

ԺՈՂՈՎՈՒՐԴՔ հեթանոսաց առաքելական քարոզութեամբք ժառանգորդ եղեն արքայութեան Աստուծոյ, յորմէ անհաւան Հրեայք կամակար հրաժարեցին, որոյ վասն հասին 'ի վերայ նոցա պատուհասքն սպառնացեալք 'ի մարգարէից, և նախապատմեալք 'ի Քրիստոսէ։

Հրէաստան քանզի գաւառ էր հռովմէական տէրութեան, զատաւորքն կարգեալք 'ի վերայ ազգին՝ բուռն հարստահարութեամբ շարժեցին 'ի ստահակութիւն զժողովուրդն խստապարանոց, որ ինքնին իսկ դիւրամէտ էր յապստամբութիւն։ Ընթեռնուին նոքա 'ի մարգարէս՝ թէ 'ի զաւակէ Դաւթի հանդերձեալ է յառնել ազատարար ազգին 'ի հարստահարութենէ հեթանոսաց. համարեցան թէ հասեալ իցէ ժամանակ ազատութեան, վասն որոյ և ոչ ինչ հայեցեալ 'ի տկարութիւն իւրեանց՝ որ ըստ օրէ աճէր և աւելոյր 'ի նոսա ստահակութիւն, որով և անընդհատ 'ի վեր երևէին ազդուկք շփոթի ապստամբութեանց . և դատաւորացն նուաճել կամելով զնոսին՝ սաստկացուցանէին զխստութիւն իւրեանց 'ի վերայ նոցա ։

Պիղատոս դատաւոր յետ զիջանելոյ 'ի կամս Հրէից՝ տալով զՅիսուս 'ի մահ խաչի, սկսաւ վարել ընդ նոսա այնպիսի դառն դաժանութեամբ, մինչև 'ի նոցանէ իսկ 'ի Հռոմայեցւոց ամբաստանեալ պատուհասեցաւ աքսորանօք 'ի Գաղղիա ։ Յետ նորա Փադոս, Տիբերիոս և Կումանոս միմեանց զկնի յաջորդեալ 'ի դատաւորութեան Հրէաստանի, միտ եդին ամենայն հնարիւք կեղեքել զժողովուրդն յանձնեալ 'ի խնամարկութիւն նոցին ։ Փելիքս դատաւոր մեծահամբաւն և ականաւոր 'ի կայսերութեան Կղօդիոսի՝ տիրեաց 'ի վերայ Հրէից արքունական իմն իշխանութեամբ, և անգութ բռնաւորութեամբ իբրև 'ի վերայ ստրկաց ։ Նմա յաջորդեցին Փեստոս, Ալբինոս և Փլորոս, որոց հետ զհետէ կալեալ զիշխանութիւն դատաւորութեան՝ քան զմին ծանրացան 'ի վերայ ժողովրդեան ։ Այսպէս ուրեմն բանային դրունք առաջի ամենայն անօրէնութեանց . և անձնարձակ ազատութիւն և անպատուհաս չարագործութիւն թագաւորէր 'ի Հրէաստան, մինչև գողոց և աւազակաց աներկիւղ մնալ 'ի տաճարն . քանզի և օրէնք պաշտաման տաճարին ոչինչ ընդհատ էին 'ի քաղաքական տնտեսութենէն . քահանայապետք անօրէնք և անյագք 'ի զօշաքաղութեան՝ նմանեալ էին յաւէտ գազանամիտ զօրականաց քան պաշտօնէից Աստուծոյ ։

Մինչդեռ այս պայման էր առ հասարակ երկրին Հրէաստանի, յամի տեառն իբր 66 յանդգնեցան Հրեայքն և 'ի յայտնի ապստամբութիւն ընդդէմ Հռոմայեցւոց . վասն որոյ առաքեցաւ Կեստիոս զօրավար 'ի պաշարել զԵրուսաղէմ, այլ ոչ կարաց առնուլ զայն ։ Ներոն կայսր՝ որ զայնու ժամանակաւ 'ի կողմանս Աքայիայ էր, լուեալ զզոյժ ապստամբութեան Հրէից և զպարտութիւն Կեստիոսի, առաքեաց զՎեսպասիանոս 'ի բառնալ զխախտանս զնոյն Հռոմայեցւոց ։ Մտեալ Վեսպասիանոս 'ի Գալիլեայն բազմախուռն զօրօք՝ մատնեաց զամենեսին 'ի հուր և 'ի սուր, առանց խնայելոյ յոք յարանց և 'ի կանանց և 'ի մանկտւոյ։ Այն ինչ պատրաստեալ էր առնուլ զԵրուսաղէմ, եհաս լուր մահուան Ներոնի և քաղաքական շփոթութեանց Հռովմայ․ զի երեքին յաջորդք նորա զհետ իրերաց յութևտասն ամիս վախճանեցան 'ի կենաց, և գահ կայսերութեանն մնայր անյաջորդ․ վասն որոյ ընտրեցաւ 'ի կայսր Վեսպասիանոս 'ի բանակի անդ զօրաց․ որ և 'ի դարձին իւրում 'ի Հռովմ՝ փութացոյց զորդի իւր զՏիտոս գնալ և աւարտել զգործ պատերազմին և տիրել Երուսաղեմի։

Չկարէր Վեսպասիանոս գտանել դէպս պատեհագոյնս քան զայն 'ի ժամանել վախճանին զոր գիտէրն․ զի 'ի ժամանակին յայնմիկ սկսեալ էին ներքին պատերազմունք քանդել զՀրէաստան՝ որ կայր յաւարի արանց մոլեգնելոց իշխանասիրութեամբ, որք և գուն գործէին քաղել զօգուտ 'ի հասարակաց թշուառութենէ առ 'ի տիրապետել ազգին։ Քաղաքն Երուսաղէմ յար 'ի խռովութեան կայր յերեսաց ապստամբաց ոմանց, որոց առեալ զանուն նախանձաւորութեան՝ գործէին անգթութիւնս անտանելիս։ Յովհաննէս Գիսգաղեան, և Շմաւոն և Եղիազարոս ջանահնար լինէին առնուլ զպատիւ գլխաւորութեան քաղաքին և զազգին․ այլ ոչ կարացեալ միաբանել զամենայն քաղաքացիս ընդ դրօշաւն իւրեանց՝ բաժանեցան յերիս խումբս, և քաղաքն իբրև որս անզօր պատառեցաւ 'ի բազում կատաղի գազանաց։ Խոհեմագոյնքն 'ի ժողովրդենէ անտի փափաքէին հպատակել Հռովմայեցւոց, սակայն 'ի զօրբանցն նախանձաւոր անուանեալքն բռնադատէին ընդդէմ կալ նոցա, և հարստահարէին զժողովուրդն՝ կոչելով զամենեսին 'ի վրէժխնդրութիւն թշնամեաց։

Այլք 'ի քաղաքաց աշխարհին կրել կրեցին զխստութի պաշարման, զսով և զմահ, սակայն չեղև երբէք լսել՝ թէ պաշարեալքն միմեանց ընդդէմ զինելով 'ի յետին թշուառութիւն հասուցեալ իցեն զմիմեանս, որպէս տեսանեմք լեալ 'ի պաշարման Երուսաղէմի․ յորում ապստամբք միմեանց ոսոխք՝ առաւել քան զարտաքին թշնամին անհանդուրժելի չարիս գործեցին յափշտակութեամբ, սպանութեամբ և գառն տանջանօք ծերոց և տղայոց և կանանց. և անողոքելի մարտս յարուցեալ ընդդէմ միմեանց, վարեալքն 'ի յուսահատութ̃՝ և զայլս ևս ընդ իւրեանս 'ի նոյն ածէին. Ոչ գիտելով յինչ ինչ լինել ձեռնամուխ, մերժէին զամենայն խորհուրդս բարեաց. և խստասրտեալք 'ի գլուխ կորստեան անձանց, եղեալ էին 'ի մտի քանդել և աւերել զհայրենիս՝ զազգն և զբուն իսկ զպաշտամունս կրօնի, որոց համարէին զանձինս իւրեանց նախանձաւոր պաշտօնեայս.

Ահա յայսպիսում թշուառութեան ժամանակի եղև պաշարումն Երուսաղեմի 'ի Տիտոսէ յամի տեառն 70. Եւ քանզի պաշարեալքն բազմութիւք 'ի քաղաքին գուն գործեցին զամիս չորս տևել 'ի պաշտպանութիւն, պակասեցին պաշարք նոցա այնչափ՝ զի 'ի հատանել ըղձիցս իւրեանց ձեռն արկին ուտել և զանձաշակելի գարշելիս, մինչև ումանց կերակրիլ մարդկային մարմնով. Կին ոմն զենեալ զորդի իւր զստնդիաց՝ զաւուրս ինչ յերկարեաց զկեանսն՝ մահուամբ որդեկին. Սովն սաստիկ և անհնարին այնպէս նեղէր զնոսա, մինչև ստիպել նոցա զէն 'ի ձեռին գիշերայն ելանել արտաքս 'ի քաղաքէն, և որոնել 'ի դաշտս զխոտ դալար 'ի կերակուր, սակայն փոխան կերակրոյ զմահ գտանէին. զի պատուիրեալ էր Տիտոսի զամենայն ըմբռնեալսն 'ի խաչ հանել յանդիման քաղաքին, որոց թիւ օր ըստ օրէ ժամանէր 'ի հինգ հարիւր. թող զմեռեալսն 'ի քաղաքին հազարաւորս, որք աշխարհու մահուամբ սատակէին 'ի սաստկութենէ սովոյն.

Հասեալ պաշարելոցն 'ի յետին վտանգ, և տիրեալ Հռովմայեցւոց երեցունց պարսպաց քաղաքին, փափաքելով Տիտոսի անխնայ պահել զտաճարն, յորում ըստ ասելոյ Տակիտոսի՝ գանձեալ պահէին անհամար ճոխութիւնք, առաջի արար Հրէից զպայման հաշտութեան 'ի խաղաղութիւն. սակայն 'ի մերժել ապիրատացն զպայմանն, առին և զայն յութերորդի աւուր օգոստոսի ամսոյ, և այրեցին զմեծագործ շինուածն. և որք միանգամ պատսպարեալ էին 'ի նմա՝ կոտորեցան 'ի բերան սրոյ. Զկնի ամսոյ միոյ առաւ և վերին քաղաքն՝ Սիոն անուանեալ, ուր որջացեալ կային ապստամբքն. և յետ աւար հարկանելոյ զվերին և զստորին քաղաքն՝ ետուն զնոսին առ հասարակ 'ի ճարակ հրոյ, որով եղև դաշտ արօրագրութեան, և կատարեցան բանքն Քրիստոսի, թէ «Մի՛ մնասցէ քար 'ի քարի վերայ»։ Այսքէն աստուածասաստ էր պատուհասն, մինչև նմին ինքեան Տիտոսի վկայել, եթէ ես լոկ գործածագիր եղէ վերին հրամանացն ընդդէմ ազգին՝ որ նշաւակ էր աստուածային բարկութեան ։ Ըստ Յովսեպոսի 'ի նմին պաշարման կորեան մետասան հարիւր հազար Հրէայք, թող զմնացեալսն յայլևայլ քաղաքս Հրէաստանի. ը՟ ամենայն հազարք հազարաց և երեք հարիւր երեսուն և եօթն հազար՝ չորեքհարիւր և իննսուն ոգիք ։ Իսկ վարեալքն 'ի գերութիւն և վաճառեալքն հանգոյն գրաստուց՝ էին իննսուն և եօթն հազարք ։ Աւար և կողոպուտ յաղթողացն այնչափ ձոխ եղև, զի յԱսորիս կիսով չափ նուազեցաւ գին ոսկւոյ ։

Տիտոս զօրավար յետ աւարտելոյ զգործ պատերազմին, և լինելոյ գաւազան բարկութեանն Աստուծոյ 'ի վերայ ազգին Հրէից, թողեալ զգունդ մի զինուորաց 'ի պահպանութիւն աւերակաց անշքացեալն Երուսաղեմի, փութացաւ դառնալ 'ի Հռովմ, ուր և արարան նմա և հօր նորա հանդէս յաղթանակի ։ Ի նմին հանդիսի տարան առաջի յաղթականացն զխորան տաճարին, զաշտանակն ոսկի եօթնաջահեան, զմասն ինչ 'ի կահուց և յանօթոց տաճարին, զծիրանի վարագոյր սրբութեան տաճարին և զգիրս օրինաց, որք և յետոյ պահեցան 'ի կայսերական պալատանն ։

Զայնու ժամանակաւ կանգնեցին և զկամար 'ի յիշատակ այնր յաղթութեան, որ և կայ ցարդ 'ի Հռովմ. և 'ի ներքին կողմնական որմունսն քանդակեալ երևին աշտանակն և խորանն ։ Ի նմին ժամանակի հատան և դրոշմանք կամ պատկերք պղնձիք 'ի պատիւ Վեսպասիանոսի և Տիտոսի . յորոյ 'ի մի կողմն քանդակեալ կայր կին մի նստեալ 'ի բուն հատեալ արմաւենւոյ, և քօղեալ լայնարձակ վերարկուաւ, մակագիր ունելով այսպիսի . «Հրէաստան պարտեալ»։

Յայս ամենայն աղետալի անցս Երուսաղեմի արժան է մտադիր աչօք հայել յանքննին դատաստանն Աստուծոյ 'ի չափելն զպատուհաս մեղապարտից՝ յետ բազում դարուց երկայնամիտ ներողութեան՝ սպասելով դարձի նոցա յապաշխարութիւն . զի իբրև անպտուղ եղէն խնամք մարգարէութեան իւրոյ առ մերձեալսն, եթող զտունն և զժառանգութիւն. Հիմնայատակ արար զտեղին զոր ընտրեաց, և զաշխարհն ողջոյն՝ որ հակառակ զինեցաւ արարչին իւրոյ ։ Ժողովուրդք որք երբեմն կենդանի տաճարք էին Աստուծոյ, յայնմ ժամանակի եղեն նշաւակք բարկութեան նորա. և ահա հանօրէն ազգ Հրէայեցւոց ընդ ամենայն երկիր անարգեալ եւս է քան զտաճար և զքաղաք իւրեանց. չէք 'ի նոսա հոգի ճշմարտութեան. դադարեցին մարգարէութիւնք, սպառեաց յոյս յոր խարսխեալ էին խոստմունքն լեալք առ նոսա, զի ոչ ծանեան զժամանակ այցելութեան իւրեանց ։ Կոխեցաւ Երուսաղէմ ըստ բանիցն Քրիստոսի, յորժամ Հռոմայեցիք աւարեալ յատակեցին զնա, և վարեցին զմնացեալսն 'ի գերութիւն յամենայն ազգս. և որք կոխեցանն յայնժամ յաւուր քաղաքին՝ նոյնք մինչև ցայսօր կոխեալ են յազգաց յորս ցրուեցան 'ի նոսա ։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Հալածումն Դոմետիանոսի կայսեր ։

ԵԿԵՂԵՑԻՆ Քրիստոսի խաղաղացաւ մինչև ցամ տեառն 92. յորում ժամանակի Դոմետիանոս նախանձաւորն անգթութեանց Ներոնի վրդովեաց դարձեալ զխաղաղութիւն նորին ։ Խոյզք և խնդիրք 'ի վերայ Հրէից սակս հարկացն զորս պարտէին հատուցանել տէրութեան՝ պատճառք եղեն այնր հալածմանց ։ Ըստ ասելոյ Սուետոնիոսի քննութիւնքս այսպիսիք եղեն 'ի վերայ այնոցիկ որք առանձինն օրինօք և սովորութեամբք միաբանեալ բնակէին 'ի Հռոմ՝ համանմանք Հրէայեցւոց. որով բանիւ յայտ առնէ զժողովուրդս քրիստոնէից, զորս ռամիկ քաղաքին՝ որպէս և մեծամեծք նոցա խառն կարծէին ընդ Հրէայս ։

Եղեն և այլ պատճառք նախանձաւորութեան 'ի շարժել զԴոմետիանոս 'ի գազանութիւն՝ յոր յօժարեալն էր 'ի բնէ ։ Քանզի կասկածեալ նորա թէ վերըստին յաջողեսցի կանգնումն թագաւորութեան արքային Դաւթի, երկեաւ զի մի մնացորդք սերնդոց նորին դարձեռալ ապստամբեցուցեն զՀրեայս · մինչզամէն լսելով և զհամբաւ երկնաւոր և հոգևոր թագաւորութեանն Քրիստոսի, որ զլխովին օտար էր և անհաս յերկրաքարշ մտաց նորա, առաւելաւ երկիւղն, և նորոգեաց զխնդիր Վեսպասիանոսի ընդդէմ ազգատոհմին Դաւթի, որք թագուցեալ կային առ ահի հալածանաց։ Սակայն կալան զերկուս ոմանս 'ի նմին ցեղէ և ածին 'ի Հռովմ. որք էին եղբօրորդիք Յուդայի առաքելոյ, և ազգակիցք Յիսուսի։ Դոմետիանոս ետ բերել զնոսին առաջի իւր, և 'ի հարցանելն զպայման կենաց նոցա՝ ետուն պատասխանի՝ ցուցանելով զձեռս իւրեանց կոշտացեալս յաշխատութենէ երկրագործութեան, ըստ որում սովոր է լինել որոց պարապին 'ի վաստակս հողոյ։ Զայն տեսեալ Դոմետիանոսի՝ ծանեաւ զանվնասն լինել նոցա տէրութեան Հռովմայեցւոց · սակայն կամեցաւ լսել 'ի նոցանէ և զհամբաւ թագաւորութեանն Քրիստոսի որ յածէր 'ի բերանս ամբոխին։ Յայնժամ երկոքեան կալանաւորքն ետուն պատասխանի, թէ թագաւորութիւնն Քրիստոսի ոչ է երկրաւոր և ժամանակեան, այլ հոգևոր և երկնային, և յայտնեսցի 'ի վախճանի աշխարհիս՝ յորժամ եկեսցէ նա փառօք իւրովք առնել դատաստան կենդանեաց և մեռելոց, և թէ 'ի նոյն կէտ արդարադատ քննութեան մտցեն իշխանք և ժողովուրդք առ հասարակ։ Յանպատրուակ պատասխանւոյն փարատեցան կասկածանք երկիւղին Դոմետիանոսի, որ և անգոսնեալ զնոսա իբր ռամիկս եղկելիս՝ եթող յազատութիւն։

Բայց ոչ զնոյն ներողամտութիւն եցոյց և առ այլս 'ի քրիստոնէից · զի զսուրբն Յովհաննէս աւետարանիչ յետ արկանելոյ 'ի կաթսայ եռացեալ ձիթոյ, (յորմէ պրծանելեօք ել նա ողջ և անվնաս), աքսորեաց յաքսորս 'ի կղզին Պատմոս, ուր գրեաց նա զգիրս Յայտնութեան։ Սպան և զերանելին Կղեմէս զմերձաւոր ազգական իւր վասն 'ի Քրիստոս հաւատոյն · թէպէտ և Սուետոնիոս 'ի պատմելն զայն՝ պարսաւ առնէ վասն ակարամտութեան իւրոյ, որով անգոսնեալ էր յամենեցունց։ Իսկ Դիոն ստգտանէ զերանելին իբր զյիմար և զանաստուած ոք, զի ոչ պաշտէր զդիս · որով յայտ լինի՝ թէ կուրութիւն հեթանոսաց զխորդ անմտութիւն անուանէր զայն՝ զոր յոյս երկնային բարեաց ազդէր 'ի սիրտս քրիստոնէից, անգոսնել զկենցաղականն, և լուսով աւետարանին դիմամարտ լինել մտօք պաշտամանց նոցա ։

Հալածումն այս բուռն հրատարակեալ յամին 95 , և տարածեալ ընդ ամենայն սահմանս տէրութեան Հռովմայեցւոց , դադարեցաւ մահուամբն Դոմետիանոսի , զոր սպանին 'ի միւսում տարւոջ ։ Ներուա՝ որ յաջորդեաց նմին , կոչեաց յետս զամենայն աքսորեալսն . վասն որոյ և սուրբն Յովհաննէս ել 'ի Պատմոսէ , և գնաց բնակել ընդ հաւատացեալսն յԵփեսոս ։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Պատճառք թշնամութեան Հռովմայեցւոց ընդդէմ քրիստոնէից . և օրինակք չարչարանաց նոցա ։

ՀՌՈՎՄԱՅԵՑԻՔ որք սովոր էին ներել և թոյլ տալ ամենայն օտար մտօք պաշտամանց , անհնարին թշնամութեամբ հակառակէին ընդդէմ քրիստոնեական հաւատոյ . զի 'ի սկզբան անդ եկեղեցւոյ հաւատացեալքն 'ի Քրիստոս խառն բնակէին ընդ Հրէից . և քանզի սոքա 'ի պատճառս ապստամբութեան իւրեանց ատելի էին և անարգեալ 'ի բովանդակ տէրութեանն , վասն որոյ զգուշութիւնն և կասկած երկիւղի նենգութեան զոր ունէին զնոցանէ Հռովմայեցիք՝ ոչ ներէր զանազանել զնոսա 'ի միմեանց . և ոչ գէթ ուշադիր քննութեամբ 'ի միտ առնուլ զտարբերնի վարս քրիստոնէից և զստահակութիւն Հրէից ։ Թող զի և անդստին 'ի սկզբանէ 'ի տարածել քրիստոնեական հաւատոյ՝ անհնարին զրպարտութիւնք համբաւեցան ընդդէմ նոցա . և այսոցիկ անիրաւ չարախօսութեանց պատճառս ետ և թագնութիւնն՝ որով քրիստոնեայք գաղտ կատարէին զխորհուրդս եկեղեցւոյ . նմին իրի այնպէս կարծեալ եղև , որպէս թէ խորամանկութեամբ ծածկեն նոքա զհաւատս և զսովորութիւնս իւրեանց , զի մի յայտնութեամբն խայտառակեսցին ։

Ի վերայ այսոցիկ յաւելաւ և թշնամութիւն քրմաց և պաշտօնէից կռոց , որպէս և արուեստաւորաց , որք 'ի զիւրն պաշտամանէ, ունէին զիւրեանց շահս օգտի․ յայսպիսեաց սակի էին ճարտարապետք մեհենից, երգեցիկք, խնկավաճառք, անդրիագործք, որք զինեցան ընդդէմ քրիստոնէից՝ պատճառս զնոսա քարոզելով զժբաղդութեան տէրութեանն, եւ 'ի նոցին վերայ բարդելով զամենայն ազգս հասարակաց թշուառութեան առ ատելիս ցուցանելոյ զնոսա։ Իսկ դատաւորք կենցաղագէտքն համարեալք 'ի Հռովմայեցիս խորհելով թէ քրիստոնէութիւնն իցէ նորահնար ինչ մնապաշտութիւն՝ որ անգոսնէ զհասարակաց պաշտամունս իբրեւ զանկրօնութիւն, պատճառս համարեցան զայն խռովելոյ զհասարակաց խաղաղութիւնն, եւ զինելոյ զքաղաքացիս ընդդէմ միմեանց․ որոյ վասն իբրեւ 'ի խռովարարս ոմանս հայէին 'ի քրիստոնեայսն։

Ահա այսպիսեօք 'ի թելադրութենէ բանսարկուին ատելի երեւեցան քրիստոնեայք յաչս Հռովմայեցւոց․ զի ոմանք համարէին զնոսա խաբեբայս, անօրէնս, խըռովիչս ժողովրդեան, եւ այլք անարգէին զնոսին իբր կեղծաւորս, տխմարս, յամառս եւ խստասիրտս վ̃ս կամակար եւ աներկիւղ զիմելոյ նոցա 'ի մահ․ ը̃ որ ցասուցեալ եւ դատաւորաց՝ արկին 'ի գործ զամենայն տեսակս տանջանաց 'ի վերայ վկայիցն Քրիստոսի, համարելով զնոսա թշնամիս մարդկային ազգի։ Սորին վասն յահարկութիւն ամենեցուն հրապարակաւ յանդիման ժողովրդեան տային տանջել զքրիստոնեայս, ըստ որում սովորութիւն էր եւ հրապարակաւ առնելոյ զդատաստանս։

Նստէր դատաւորն 'ի բարձրաւանդակ աթոռի ընդ հովանեաւ, ունելով շուրջ զիւրեւ զպաշտօնեայս եւ զնուիրակս՝ որք կրէին տապարս եւ թուրս․ զի գաղտնի դատաստան առնելն անպատուութիւն էր առ Հռովմայեցիս, թէպէտ եւ դատելն հրապարակաւ՝ ոչ դոյզն անպատշաճութեան պատճառք։ Այլ քանզի ժողովուրդն ստահակ էր եւ կատաղի, բանի սովորէին զդատաւորն պատուհասել անողորմ զամբաստանեալսն, զորս ոչն արդեօք պատուհասէր՝ եթէ առանձին դատաստանաւ ունկն մատուցանէր արդարութեան իրաւանց եւ ազդեցութեան խղճի։ Զայս դառն փորձ մոլեգնութեան ամբոխին առին եւ երանելի վկայքն Քրիստոսի․ յորոց զոմանս տարածեալ 'ի գետնի՝ հրով, որով և հարուածովք գանից ՚ի դրունս մահու հասուցանէին, մինչև բազմաց ՚ի նոյն իսկ ՚ի տանջանսն մեռանել. զոմանս կախեալ զփայտէ՝ երկաթի ժանեօք քերէին և պատառոտէին զմարմինս նոցա. զայլս դնելով ՚ի վերայ կասկարայից՝ բորբոքէին հուր ՚ի ներքոյ նոցա, զի ծխով փայտիցն և բոցով հրոյ հեղձամղձուկ լիցին: Մերթ ևս ՚ի սաստկացուցանել զցաւս վիրաւոր մարմնոց նոցա՝ շփէին աղիւ և քացախով և նորոգէին զվէրսն:

Յայնպիսի դառն և յանբերելի չարչարանս, որովք ոչ զօրեցին երբեք յաղթել համբերատար հաստատութեան վկայից, լինէր նոցա անպակաս հարցումն ՚ի դատաւորէն, և առ նմա ատենադպիրք պատրաստականք յիշատակագրէին համառօտագրութեամբ զամենայն հարցմունսն, և զպատասխանիս նահատակաց, և ապա դատաւորն ՚ի գրելոյ անտի կազմէր զդատակնիք մահուն բանիւք բերանոյ վկայիցն: Զօրինակ այնր դատակնքոյ մեծաւ խնամով առնուին քրիստոնեայք ՚ի գրագրաց անտի ՚ի վաւերական յիշատակ մարտիրոսական մահուան եղբարց իւրեանց. զոր և արձանագրէին ՚ի պատմելն զվկայական նոցին կատարումն:

Յետ հարցաքննութեան զորս միանգամ գտանէին դատաւորքն հաստատունս ՚ի դաւանութեան քճ՟ական հաւատոյ մատնէին ՚ի տանջանս և ՚ի մահ: Պատուհասքն այնոքիկ թէպէտ և սահմանեալ կային ըստ յանցանաց, սակայն խստագոյնք էին առ ստրուկս և առ գերիս՝ քան առ ազատս, որպէս և առ օտարազգիս քան առ քաղաքացիս Հռովմայեցւոց: Սմին իրի սուրբն Պօղոս՝ քանզի ունէր զպատիւ հռովմէական քաղաքակցութեան, հատաւ գլուխ նորա. իսկ սուրբն Պետրոս իբրև զՀրեայ կախեցաւ զխաչէ, որ անարգագոյնն էր ՚ի տանջանս. և զորս միանգամ հանդերձեալ էին ՚ի խաչ հանել՝ սովոր էին նախ գանակոծ առնել, և հրացեալ երկաթով այրել զկողս նոցա:

Յոլովակի ևս զխոստովանողս Քրիստոսի փոխանակ սպանանելոյ արկանէին ՚ի բանտ՝ առնուլ զչափ հաստատութեան նոցա, և ապա վերստին մատուցանէին ՚ի տանջանս: Սակայն և բանտն ոչ ինչ նուազ խիստ էր և անտանելի քան զայլ պատուհասս. զի էր տեղի խաւարին և գարշահոտ՝ ուր փակեալ մնային ծանր ծանր շղթայիւք ՚ի ձեռս և յոտս և ՚ի պարանոցս · և այնպէս հարկ էր նահատակաց անշարժ նստել ՚ի գետնի , յորոյ վերայ տարածեալ կային խեցիք և կոտորակք ապակւոյ , զորս սփռէին հալածիչքն ընդ նոքօք առ ՚ի չտալոյ սրբոցն հանգիստ ։ Ոմանց զվէրսն թողուին անխնամ որդնահարս լինել , և զայլսն սովամահ առնէին ՚ի բանտի ։ Երբեմն ևս ՚ի խախտել զհաստատութիւն սրբոց վկայիցն առաքէին առ նոսա զծնողս , զորդիս և զկանայս նոցա · որոց ողբք և արտասուք դառնագոյն էին քան զնոյն իսկ զտանջանսն զորս կրէին ՚ի մարմնի ։

Ոչ պակասէին յեկեղեցւոյ առանձին խնամք առ երանելի բանտարկեալսն · զի բաց ՚ի սարկաւագաց որք ստէպ յայց ելանէին մատուցանել զհնարաւոր դարմանս վշտաց նոցա , փութային և հաւատացեալքն լնուլ զպէտս կարօտութե՟ նոցին · տանէին առ նոսա անկողինս , համդերձս և կերակուր ՚ի կազդուրումն , համբուրէին զշղթայս նոցա , դարմանէին զվէրսն , և հաղորդակից ցաւոցն լինելով մխիթարէին զսիրտս վկայից ։ Հաւատացեալքն ՚ի Քրիստոս աներկիւղ զհետ գնային մարտիրոսաց ՚ի հրապարակական ատեանսն , ուր լինէր հանդէս նահատակութեան նոցա ։ Ոչ զանգիտէին մերձենալ առ նոսա ՚ի տանջանս անդ և հաւաքել կտաւովք և սպնգօք զարիւնն հոսեալ ՚ի վերայ նոցա ։ Եւ ոչ նուազ էր հոգ խնամոցն ՚ի բառնալ և ՚ի թաղել զմարմինս սրբոցն , կամ ՚ի հաւաքել զմնխիրս այրեցեալ մարմնոց ։ Բազումք ևս ՚ի հաւատացելոց եդին զանձինս իւրեանց ՚ի վտանգ մահու՝ կամելով պահպանել զնշխարս նահատակաց · որպէս և յաղօթեն առ գերեզմանս վկայից ։

Բազումք ՚ի վկայից անդատապարտ մնացեալք ՚ի տանջանս մահու , տարագրեալ լինէին յանբնակ կղզիս , և կամ յազգս օտարս և յերկիր բացական · ոմանք ևս վարէին յարքունի աշխատութիւնս և ՚ի մետաղս , որոց կեանք դառնագոյն լինէին այնուհետև քան զմահ՝ եթէ հաւատացեալք ՚ի ձեռն նպաստից կերակրոյ և համդերձից ոչ թեթևացուցանէին զվիշտս պատուհասի նոցա ։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Բարեկարգութիւն նախնի քրիստոնէից, և օրինակ խստամբեր վարուց նոցա։

ՀԵՂԳԱՍԻՐՏ թուլութիւն յետին դարուցս անհնարին համարեցաւ զլինելն նմանող վարուց նախնի քրիստոնէից, որ զօդեալք ընդ միմեանս կապանօք սիրոյ՝ կային միաբան ձեռնտուութեամբ միմեանց ընչիւք և ստացուածովք, որով և ազատք էին 'ի համարակաց թշուառութենէ, ըստ որում 'ի մէջ բերէ Յուստինոս վկայ 'ի թուղթն առ Դիոգնիդէս, յայտ արարեալ զօրինակ կենցաղոյ նոցա։ Ըստ արտաքին տեսութեան, ասէ, չունին ինչ առանձին՝ որով 'ի քաղաքական կեանս որոշիցին յայլ մարդկանէ. համարին զաշխարհս տեղի պանդխտութեան իւրեանց. ամենայն ուրեք կենցաղին ըստ օրինաց տէրութեան, և համարակաց սովորութեան յարմարեն զանձինս։ Սիրեն զամենեսին և զհալածիչս անգամ. և զմահն զոր կրեն՝ համարին առիթ կենդանութեան իւրեանց։ Որչափ և աղքատք իցեն երկրաւոր ստացուածովք՝ ոչ վերջանան 'ի բարիս առնելոյ այլոց. ամենայնիւ ուրախ են և անխռովք 'ի վիշտս աղքատութեան իւրեանց։ Անարգանք և թշնամանք փառք են նոցա. զրպարտութիւնք վկայեն արդարութեան նոցին. նախատանաց և քամահանաց ընդ որովք անկեալ դնին՝ քաղցրահամբոյր հեզութեամբ առնեն պատասխանի։

՝Նախապատիւքն 'ի քրիստոնէայս անուանեալքն Երիցունք, Եպիսկոպոսք, Քահանայք և Սարկաւագունք, խնամատարք էին ընչից համարակաց, հոգային զպէտս հաւատացելոց, մատակարարէին աղքատաց զկերակուր, և դարմանէին զհիւանդս։ Յորդորէին զմեծատունսն որդեգրել զորդիս տնանկաց. ժողովէին զդրամ վասն որբոց և այրեաց և աքսորելոց։ Եւ այս ամենայն խնամք և ձեռնտուութիւնք զորս առնէին առ միմեանս՝ յօդէին զնոսա անլոյծ կապանօք սիրոյ[1]։

---

[1] Զստուերագիր նմանութեան քրիստոնէից բերէին երբեմն և Եսսեան աղանդաւորք, որ նուիրեալք էին զանձինս միակեցական վարուց՝

Յօդ միաբանական և եղբայրական սիրոյ կապէր ՚ի մի զամենայն հաւատացեալսն ՚ի Քրիստոս. և թէ երբէք ուրեք ծագէր ՚ի նոսա գժտութիւն ինչ, ըստ խրատու առաքելոյն Պօղոսի լինէր դատաստանն ՚ի մէջ նոցին իսկ եղբարց. և զի ոչ ամենեքին բաւական էին յընտրութիւն դատաստանաց, նմին իրի երիցունք սովոր էին դատաւոր լինել առ ՚ի բառնալոյ զգժտութիւնս։

Պահք և աղօթք լինէին նախ քան զձեռնադրութիւն պաշտօնէից եկեղեցւոյ։ Առաքեալք խնամով միտ դնէին ընտրել զայնոսիկ ևեթ որք յԱստուծոյ կոչեցեալք իցեն յաստիճան քահանայութեան։ Խրատէր Պօղոս ընտրել զտանուտեարսն բարեկարգս վարուք և զբարեհամբաւսն ոչ միայն ՚ի հաւատացեալս այլ և առ հեթանոսս. նմին իրի արգել Տիմոթեայ չձեռնադրել զոք առանց զգուշաւոր քննութեան, և չընդունել զբամբասութիւնս ընդդէմ քահանայի առանց երկուց կամ երից վկայից։ Միանգամայն օրինադրէր կրկին վարձուց արժանաւորս համարել զայնոսիկ որք աշխատէին քարոզութեամբ աւետարանին. որովք յայտ առնէր և զհիմունս եկեղեցական բարեկարգութեան։

Յաւուրս կիւրակէից ժողովէին հաւատացեալք ՚ի տուն սոսկականի ուրուք, ուր հարկ էր ամենեցուն համախումբ լինել առաջիկայ. և ընթեռնուին անդ նախ զսուրբ գիրս, ապա առաքեալքն կամ երիցունք, և մերթ ևս մարգարէք ազդեալք ՚ի հոգւոյն՝ խրատէին

պարապելով ՚ի ճգնութիւնս մարմնոյ, և միաբանական կեանս վարէին՝ խորշելով ՚ի հեշտալեաց. զգուշանալով յերդմանէ, և լոկ ջրով շատանային։ Զգենուին սպիտակս, և պահէին զօր շաբաթու ամենայն զգուշաւորութեամբ, մինչև ակամայ բերել ՚ի կատարումն կարևոր պիտոյից բնութեան։ Որք առաւել խստակրօնք էին ՚ի նոսա՝ ՚ի սպառ հրաժարեալ կային ՚ի կանանց. և ամուսնացեալքն յետ միանգամ որդեծնութեան ոչ ևս մերձենային ՚ի կանայսն։ Ոմանք յաղանդաւորացս բնակէին ՚ի քաղաքի՝ միտ դնելով կենցաղական զբաղմանց. իսկ այլք մեկուսացեալք յանապատ՝ պարապէին յաղօթս և յուսումն օրինաց։ Սակայն յամենեսին ՚ի նոսա տիրեալ կայր ոգի գիտական ամբարտաւանութեան, որով արհամարհէին զամենայն իմաստութիւն մարդկային՝ զԱստուած ևեթ խոստովանելով մի միայն տէր ինքնիշխան։ Մոլորութիւնք նոցա բազմապատիկք յաղագս Աստուծոյ և աստուածայնոց, որպէս և անհամար ամպարշտութիւնք և առ երևոյս կեղծաւորեալ բարեպաշտութիւնք խայտառակեցան ՚ի յայտնել լուսոյ քարոզութեան աւետարանին Քրիստոսի։

և հրահանգէին զժողովուրդն ։ Յետ այնորիկ սրբագործեալ զհացն նուիրական՝ բաշխէին հաւատացելոց . և ապա ամենեքին միաբան առնէին կերակուր հասարակաց , զոր և Սէր կամ Ագապ անուանէին ։

Սուրբն Պօղոս պատուիրէր 'ի նմին համախմբութեան՝ առնել աղօթս և վասն թագաւորաց և իշխանաց ։ Յուշ առնէր և եպիսկոպոսաց պահել խնամով մեծաւ զաւանդ վարդապետութեանն , և հաղորդել զայն հաւատարիմ արանց , որք կարող իցեն և զայլս ուսուցանել . զի առ անընդհատ պահպանութիւն ուղիղ վարդապետութեան պէտք են ընտիր և հաւատարիմ անձանց՝ յաջողամիտ և նախանձաւոր եղելոց փրկութեան մարդկան , որպէս զի առանց փոփոխելոյ ուսուցեն զայն և այլոց ։

Բաց յեօթանց անտի սարկաւագաց զորս կացուցին առաքեալքն 'ի պէտս հոգւոր և մարմնաւոր սպասաւորութեան ժողովոյ հաւատացելոց , էին և կանայք Սարկաւագուհի անուանեալք , որոց ընտրութիւն՝ նոյնպէս լինէր դրութեամբ ձեռաց . և էին սոքա կարգեալք 'ի գործ կրօնական պաշտաման կանանց . քանզի համեստութեան աղագաւ ոչ էր հրաման արանց սարկաւագաց՝ սպասաւոր լինել կանանց ։

ԳԼՈՒԽ ԺԸ.

Հերձուածք և մոլորութիւնք ։

ԲԱՆՍԱՐԿՈՒՆ սատանայ 'ի խռովել զխաղաղութիւն եկեղեցւոյ՝ ոչ շատ համարեցաւ շարժել զհեթանոսս 'ի հալածումն , այլ և հնարեցաւ սերմանել զորոմն թիւր վարդապետութեան 'ի հաւատացեալս Քրիստոսի 'ի ձեռն հերետիկոսաց ։

Կերինթոս և Եբիոն ուրացան զաստուածութիւնն Քրիստոսի , և զյարութիւն մարմնոց . կամեցան 'ի նոր օրէնս պահել և զխտրութիւնս հնոյ օրինաց ։ Եւ ես պնդէին Եբիոնիտք՝ եթէ Աստուած զիշխանութիւն տիեզերաց բաժանեալ իցէ 'ի Քրիստոս և 'ի բելիար . զհանդերձելոյն շնորհելով Քրիստոսի , և զաստեացս թողեալ 'ի կամս սատանայի ։

Նիկողայոսեանք, որոց աղանդապետ համարի մին յեօթանց անտի առաջին սարկաւագաց, օրինաւոր համարէին զբազմակնութիւն, և անառակութեամբ պղծալից կեանս վարէին։ Այս աղանդ մոլորութեան ծանուցեալ էր և յաւուրս սրբոյ առաքելոյն Պետրոսի, որ յիշատակէ զայն յերկրորդ կաթուղիկէին իւրում։

Աղեքսանդրոս սամարացի զհետ երթեալ մոլորութեանցն Սիմոնի մոգին և Նիկողայոսեանց՝ վարդապետէր, եթէ աշխարհս ստեղծեալ իցէ ՚ի հրեշտակաց, և զանձն իւր քարոզէր լինել ամենակալ զօրութիւն Աստուծոյ, հայր ընտրելոց և միակ փրկիչ նոցա, որք և ընդ ձեռն մոգութեան իւրոյ ևեթ մարթին ստանալ զերկնային փառսն։ Աշակերտեալքն այսմ ցնորելոյ ՚ի գաղտնի ժողովս իւրեանց անձնատուրք էին և մոլեալք յանսանձ անառակութիւնս։

Սատուռնինոս և Բասիլիդս աշակերտք Սիմոնի մոգին, անգոսնէին զհին օրէնս, և ասէին՝ թէ Քրիստոս էր հրեշտակ որ ՚ի մարդ կերպարանեալ։ Սատուռնինեանք զամուսնութիւն և զծննդագործութիւն գիւտս սատանայի համարէին։

Սակայն ՚ի մէջ ամենայն մոլորելոց որք ՚ի թելադրութենէ դիւին յայսմ դարու ՚ի վեր երևեցան առ ՚ի խափանել զընթացս յառաջադիմութեան աւետարանին, ականաւոր եղև Ապողոնիոս Տիանացի ՚ի Կապադովկիա։ Էր սա փիլիսոփոս պիւթագորեան, որ ըստ օրինակին Պիւթագորայ զհետ եղև ընդերկար ուղևորութե՟ց. և կենակցութեամբն ընդ Գնոստիկեանս Եգիպտոսի, և ընդ քուրմս Հնդկաց, որպէս և ընդ մոգս Քաղդէացւոց, ուսաւ զախտարաց զաղտնիս, որովք և վարեցաւ ՚ի խաբել զպարզամիտս։ Յեփեսոս, ՚ի Զմիւռնիա, յԱթէնս, ՚ի Կորնթոս և յայլ գլխաւոր քաղաքս Յունաստանի շրջեցաւ իբրև քարոզիչ և օրէնսդիր մարդկային ազգի, անգոսնելով զքաղաքական հանդէսս, և բանիւք խրատուց՝ որպէս և օրինակաւ վարուց կամելով ուղղել զբարս ժողովրդեան։ Կերակուր նորա էին ընդեղէնք ևեթ. ժուժկալէր ՚ի գինւոյ և խորշէր ՚ի կանանց, ձեռնտու լինէր կարօտութեան աղքատաց և խաղաղէր զգժտեալսն։ Այսպիսի վարուք և ազդու եղանակաւ խօսից շարժէր զմիտս ռամկին, մինչև զհետ նորա ընթանալ խուռն բազմութեան. արհեստաւորք փակէին զկրպակս իւրեանց՝ գնալ յունկնդրութիւն բանից նորա, Ճարտարախօսք համբաւէին զգովեստն, և քաղաքք դեսպանս առաքէին առ նա։ Ի խաբել զպարզամիտս յանդգնեցաւ երևեցուցանել յանձին և զոգի գուշակութեան, որպէս և նշանս պատիր սքանչելեաց, որովք առաջի խաժամուժ ամբոխին ստացաւ զյարգ աստուածական, թէպէտ և յաչս իմաստնոց համարեալ էր դաւաճան և նենգաւոր ոք։ Յետ շրջելոյ 'ի Հնդիկս և յԱրաբիա՝ եկն 'ի Հռոմ յաւուրս Ներոնի կայսեր՝ տեսանել 'ի մօտոյ, որպէս ինքն ասէր, եթէ որպիսի գազան իցէ բռնաւորն այն։ Որով բանիւ եցոյց՝ թէ 'ի կեղծեալ իմաստութենէ անտի որպիսի իւրն էր՝ զիարդ սովոր են վիժել զրոյցք անխոհեմք ընդդէմ իշխանաւորաց։ Այս աղանդաւոր՝ որ գտեալ էր շնորհս առաջի Վեսպասիանոսի, առ տէրութ̃բ որդւոյ նորա Դոմետիանոսի ամբաստանեցաւ յաղագս մոգութեանն և խորհրդոց ապըստամբութեան. վասն որոյ ածեալ 'ի Հռոմ՝ խօսեցաւ առ բռնաւորն ամենայն համարձակութեամբ, և անպատուհաս զերծաւ 'ի ձեռաց նորա։ Յետ ընդերկար ժամանակս պատրելոյ զմարդիկ սուտ նշանօք և արուեստիւք, մեռաւ 'ի զառամեալ հասակի յամի տեառն 90։ Եւ զի 'ի ժողովրդենէն որպէս և յիշխանաց ոմանց համարեալ էր աստուած ոմն, Կարակալլա կայսր ետ կանգնել նմին մեհեան աստուածական։ Յետ ամաց իբր հարիւր և քանից առասպելապատումն Փիլոստրատոս գրեաց զվարս նորա. և է գրուածն այն խուռն կուտակութիւն անհաւատալի հրաշալեաց, յորում պակասէ ճշմարտութիւն եւեթ առ 'ի դասել զայն ընդ գերբնականս։

Հերակղէս փիլիսոփայ հեթանոս առ Դիոկղետիանոսիւ՝ 'ի գիրսն Ճշմարտասէր անուանեալ՝ յանդգնեցաւ ընդ հրաշագործութիւնս Քրիստոսի համեմատել զԱպողոնիոսին. հանդգնութիւն անհեթեթ, զորոյ զանմտութիւնն յայտ յանդիման ցուցեալ է Եւսեբի. քանզի սքանչելագործութիւնք Քրիստոսի հաստատեան յետ ծանր և սաստկապահանջ քննութեանց թըշնամեաց, և այնչափ զօրացան՝ մինչև դարձուցանել *բազում ազգս և զժողովուրդս, յորս արք իմաստունք և զգաստք հայէին 'ի նոսա իբրև 'ի գործս Աստուծոյ. ուր արուեստք Ապողոնիոսի ընդ նմա ծնան և ընդ նմին անհետացան 'ի սպառ, մինչև չմնալոյ յիշատակի կամ բնաւ խոկ աւանդութեան նորին 'ի ռամիկս։*

ԳԼՈՒԽ ԺԸ.

Եկեղեցական մատենագիրք։

ԲԱՑ յառաքելական մատենից ունիմք և այլ ևս արժանայարգ գրաւոր յիշատակս նախնի ժամանակաց քրիստոնէութեան։ Ի թուղթն սրբոյն Կղեմայ քահանայապետի առ Կորնթացիս, տեսանի նոյն եռանդն սիրոյ և աստուածային նախանձու, որովք լի են թուղթք սրբոյն Պօղոսի. որոյ վասն 'ի յետոյն դարս այն գրուածք սրբոյն Կղեմայ՝ համարեցան յետ կանոնական գրոց հընագոյն քան զայլսն։ Այնպէս կարծէին՝ եթէ նորա շարադրածք են կամ գէթ 'ի նմանէ հաւաքեալք՝ Կանոնք առաքելոց և սահմանադրութիւնք առաքելականք, որք են բովանդակութիւնք ամենայն կանոնաց եկեղեցւոյ պատշաճելոց առ արևելեայս. սակայն թուին գրեալք յերրորդում դարու։ Նոյն և այլ բազում գիրք անհարազատք ընդ անուամբ Կղեմայ, որք ընծայեցան այսմ սրբոյ։

Գիրք Հերմասայ Հովիւ անուանեալ, գրեալ 'ի քահանայապետութեան սրբոյն Կղեմայ, բովանդակէ խրատս բարոյականս, բացայայտեալ մեկին ոճով ըստ ոճոյ առաջին դարուց։

Յերոթէոս աթենացի՝ մի 'ի նախնի հաւատացելոց, վարդապետ Դիոնեսիոսի արիսպագացւոյ. գրեաց ճառս խորինս և աստուածաբանականս, զորս գովութեամբ յիշատակէ սուրբն Դիոնեսիոս 'ի գիրս իւր։ Ասպանիացիք ճանաչեն զնա ընդ առաջինս յեպիսկոպոսաց իւրեանց։

Սուրբն Դիոնեսիոս արիսպագացի, որ քարոզութեամբ սրբոյն Պօղոսի հաւատաց 'ի Քրիստոս, և կարգեցաւ եպս Աթենացւոց. գրեաց զանազան թուղթս, ճառս և գիրս աստուածաբանականս, յորոց զբաղում այրեցին և կորուսին հեթանոսք. իսկ մնացեալքն յայտնեցան յետ ժամանակաց, զորոց յիշատակ առնէ մեծն Գրիգոր պապ 'ի վախճան վեցերորդ դարու. որպէս և առ Հայս ծանուցաւ 'ի սկիզբն ութերորդի դարու 'ի ձեռն Ստեփաննոսի սիւնեցւոյ որ եբեր զայն 'ի Հռովմայ։

Են և երկու Հրեայք ականաւորք, որք դասին 'ի կարգս եկեղեցական մատենագրաց։ Առաջինն Փիլոն աղեքսանդրացի, որ զհետ երթեալ պղատոնական դպրոցի, նորին ոճովն վարեցաւ 'ի բարոյական և յայլաբանական ուսմունս։ Երկրորդն է Յովսեպոս Փլաւիոս եբրայեցի, որ եթող եօթն գիրս յաղագս պատերազմին Հրէից ընդդէմ Հռովմայեցւոց, և քսան գիրս Հնախօսութեց Եբրայեցւոց։ Ճարտարահիւս եղանակ գրութեանն և ազնուութիւն ազգատոհմին արգոյ արարին զնա յաչս Տիտոսի և Վեսպասիանոսի։ Զաւեր հայրենեաց իւրոց գրեաց նա իբրև ականատես վկայ, յիշատակ անզուգական թողեալ 'ի հաստատութիւն աւետարանին և նախագուշակութեանց տեառն մերոյ։

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա.

Հալածումն առ ժամանակօք Տրայիանոսի կայսեր։

ՄԻՆՉԴԵՌ եկեղեցին Քրիստոսի 'ի վայելս անդորր խաղաղութեան ծաղկէր 'ի սահմանս տէրութեան Հռովմայեցւոց, մանաւանդ 'ի Բիւթանիա, Կրտսերն Պլինիոս՝ որ էր փոխանակ բդեշխի գաւառին 'ի սկիզբն երկրորդ դարու, գրեաց նամակ առ կայսրն Տրայիանոս յաջորդ Ներուասայ, առնուլ 'ի նմանէ տեղեկութիւն՝ եթէ զինչ և որով օրինակաւ պարտ իցէ նմա վարել ընդ քրիստոնեայս. "Ես ինքն, ասէ, չեղէ երբէք առաջիկայ դատաստանի և քննութեան ուրուք 'ի քրիստոնէից. վասն որոյ չգիտեմ թէ զինչ յանցանք իցեն նոցա, և որում պատուհասի արժանաւորք։ Արդ ես այսպէս վարիմ ընդ ամբաստանեալ քրիստոնեայսն մատուցեալս յատեան իմ։ Որք միանգամ խոստովանեցան զանձինս քրիստոնեայս գոլ՝ հարցաքննեցան յինէն երկիցս և երիցս հանդերձ սպառնալեօք տանջանաց. զի պարտ համարեցայ պատուհասել զանհնազանդութիւն նոցա և զանընկճելին խստասրտութիւն։ Մատուցաւ առ իս անանուն գիր ամբաստանութեան, յորում նշանակեալ կային բազումք իբրև քրիստոնեայք. և 'ի հարցաքննիլ իւրեանց յատենի՝ ասացին թէ չեմք այնպիսիք, և չընկալաք երբէք զայն հաւատս. և յիրաւի, զի իմ իսկ առաջի նովին բանիւ որ յինէն նոցայն թելադրեցաւ՝ խոստովանեցան զաստուածս մեր. սակայն զորս իցենն ստուգապէս քրիստոնեայ՝ ոչինչ բռնութիւն կարէ ածել յերկրպագութիւն դիցն մերոյ։ Վասն որոյ զառաջինսն արժանիս համարեցայ 'ի բաց արձակելոյ. իսկ այլքն որք ստգտեալ էին 'ի նոյն՝ զառաջինսն խոստովանեցան լինել քրիստոնեայս, և յետ սակաւուց ուրացան թէ իցեն այնպիսիք, յայտ արարեալ թէ յիրաւի քրիստոնեայ էին, բայց յետս կացին անտի՝ և սոքա ամենեքեան երկիր պագին քանդակ պատկերի և ա̃ծոցն մերոց, նզովս կարդալով Քրիստոսի։ Հաստատեալ վկայէին, թէ մոլորութիւնք և յանցանք իւրեանց էին՝ յաւուրս ինչ սահմանեալս ժողովել 'ի միասին նախ քան զծագումն արեգական, նուագել երգս 'ի գովեստ Քրիստոսի իբրև Աստուծոյ, և երդմամբ խոստանալ՝ ոչ եթէ 'ի գործել չարիս, ըստ որում համբաւի, այլ զգուշանալ 'ի գողութենէ, 'ի շնութենէ, չպակասել 'ի հաւատարմութենէ և չնենգել զոք։ Եւ գտի 'ի պաշտամանն նոցա այլ ինչ, ասէ Պլինիոս, բայց եթէ տարապայման իմն սնապաշտութիւն. նմին իրի անգործ թողի զամենայն ինչ առ 'ի տալ ձեզ տեղեկութիւն, և սպասել հրամանաց տէրութեանդ։ Մեծ են իրքս և արժանի ձերում քննութեան և հասուն խորհրդոյ՝ սակս բազմութեան այնոցիկ՝ որք 'ի նոյն վտանգ պարանեալ կան. զի կարի յոյժ բազում է թիւ նոցա յամենայն հասակէ և 'ի վիճակէ, յարանց և 'ի կանանց, որք ենն արդ և որք օր ըստ օրէ գայցեն ամբաստանութեամբ յատեան դատաստանի„։

Այս թուղթ Պլինիոսի ակներև ցուցանէ զյաջողութիւն յառաջադիմութեան քրիստոնէական կրօնից, մինչև մեհենից կռոցն գրեթէ դատարկանալ 'ի ժողովրդենէ։ Նոյն այս նամակ տայ մեզ բազում ինչ իմաստասիրել և գովեստին զոր առնէ զանարատութենէ վարուց նախնի քրիստոնէից՝ յաղագս բազմութեան թուոյ հաւատացելոց յամենայն վիճակէ մարդկան, որպէս և վասն բացայայտ վկայութեանն զոր 'ի մէջ բերէ այլն հեթանոս զհաւատոց աստուածութեանն Քրիստոսի։

Պատասխանին Տրայիանոսի առ Պլինիոս լեալ էր ընդդիմախօս բանիւ. զի ոչ ընդ հալածանաց հաճէր նա, և ոչ ընդ անպատուհաս թողլն քրիստոնէից. վասն որոյ գովելով զգործ Պլինիոսի ասէր. „Կարի յոյժ իմաստութեամբ վարեցար 'ի գործդ, զի չէ օրէն հալածել զքրիստոնեայս , այլ միայն պատուհասել զայնոսիկ՝ որք միանգամ ամբաստանեալ՝ ստուգեսցին լինել այնպիսիք ,, ։ Այսու բանիւս համարձակութիւն ետ անըզգամաց աներկիւղ մատնել զհաւատացեալսն ․ յոյր սակս յարեաւ հալածումն մեծ 'ի վերայ եկեղեցւոյն , և 'ի յանցանս համարեալ էր քրիստոնէից , ըստ նշանակելոյ նորին իսկ Պլինիոսի , զաւանելն զաստուածութիւն Քրիստոսի , անպարտութիւն վարուց , բարեգործութիւն և զգուշութիւն յանիրաւութենէ ։

Ի ժամանակս այսր հալածմանց սուրբն Իգնատիոս աստուածազգեաց՝ եպիսկոպոս Անտիոքայ՝ վկայական մահուամբ պսակեաց զերկս քրտնաջան աշխատութե̃ց իւրոց վասն հաւատոյ ։ Կատարեցաւ 'ի Հռոմ յանդիման բազմաց ժողովրդոց կացելոց 'ի զնին արիական նահատակութեան նորա՝ պատառեալ 'ի գազանաց ։ Պանծալի է յոյժ նամակն գրեալ 'ի նմանէ առ հաւատացեալս 'ի Հռոմ, զի մի խնամ կալցին խափանելոյ զմարտիրոսութիւն իւր ․ “ Աղերսեմ, ասէ , 'ի սրտոյ ձերմէ , զուցէ միամիտ լինէք ինձ ․ զի ձեզ դիւրին է զոր ինչ կամիք առնել , այլ ինձ դժուարին է միւսանգամ Աստուծոյ պատահել, եթէ այժմ խնայիցէք դուք յիս ։ Չկամիմ զձեզ մարդահաճոյս լինել, այլ մանաւանդ աստուածահաճոյս , որպէս և էքդ իսկ ․ քանզի ոչ երբէք ժամանակ գտանելոց եմ այսպիսի՝ պատահել Աստուծոյ ․ և ոչ դուք լաւագոյն գործոյ ունիք գործօնեայս վերագրել եթէ լռիցէք ։ Քանզի եթէ լռէք յինէն , ես բան եմ (կամ ես Աստուծոյ եմ) ․ ապա եթէ ցանկայք մարմնոյ իմոյ , դարձեալ եղէց սոսկ ձայն (կամ դարձեալ եղէց ընթացող) ։ Արդ ոչ առաւել ինչ ունիցիք շնորհել ինձ քան զայս , զի եղէց սպանդ մինչդեռ սեղանն պատրաստ է ․ զի սիրով բաժ առեալ ձեր՝ երգիցէք Հօր 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի , և ասիցէք , եթէ զեպիսկոպոսն Ասորւոց արժանի արար Աստուած յարեմտաս գտանիլ՝ յարևելից կոչեցեալ ․ բարւոք իմն է մտանել յաշխարհէս առ Աստուած , զի 'ի նա ծագեցից ։ Ոչ երբէք նախանձեցայք ընդ մեզ , և ոչ զայլս ուսուցիք ․ և արդ ես կամիմ զայն հաստատել՝ զոր ձեր ուսեալն է , և այլոց պատուիրէք ․ միայն այժ խնդրեցէք ինձ ներքոյ և արտաքոյ , զի մի ասացից միայն , այլ և կամեցայց. և ոչ անուանեցայց միայն քրիստոնեայ, այլ և գտայց. զի եթէ գտայց, և անուանիլ կարեմ. և յայնժամ հաւատացեալ կարեմ լինել, յորժամ աշխարհի չերևիմ։ Ոչ ինչ բարւոք է երևեալն. քանզի Աստուածն մեր Յիսուս Քրիստոս ՚ի Հայր գոլով մանաւանդ՝ երևի։ Ոչ հրապուրանաց է գործ, այլ մեծութեան՝ քրիստոնէութիւն, յորժամ ատիցի յաշխարհէս։ Ես գրեմ ամենայն եկեղեցեաց, և պատուիրեմ ամենեցուն, թէ յօժարութեամբ մեռանիմ վասն Աստուծոյ, միայն եթէ դուք ոչ արգելուցուք։ Աղաչեմ զձեզ, մի ընդվայրահար խնամս ցուցանել յիս. Թոյլ տուք ինձ գազանակուր լինել, որով է պատահել Աստուծոյ։ Ցորեան եմ ես Աստուծոյ, և ժանեօք գազանաց աղացեալ լինիմ, զի հաց սուրբ գտայց Աստուծոյ „։

Սուրբն Շմաւոն ազգական Քրիստոսի նոյնպէս կատարեցաւ առ Տրայիանոսիւ։ Էր սա եղբայր և յաջորդ սրբոյն Յակոբայ յեպիսկոպոսութեան Երուսաղեմի. և ՚ի հասակի հարիւր և քսան ամաց ամբաստանեցաւ ՚ի հերետիկոսաց առ Ատտիկոս դատաւոր կողմանցն Ասորւոց՝ վասն լինելոյ նորա քրիստոնեայ և ՚ի զաւակէ Դաւթի։ Եւ քանզի կայսերք Հռովմայեցւոց ՚ի բառնալ զամենայն պատճառս ապստամբութեան Հրէից՝ եդեալ էին ՚ի մտի ջնջել զազգատոհմն Դաւթի, մատնեցաւ սուրբն Շմաւոն ՚ի տանջանս. անդ ծերունին բազմամեայ եցոյց զայնպիսի արիութիւն նահատակութեան, մինչև ապշիլ ամենայն տեսողաց, որպէս և նմին իսկ դատաւորին։ Ապա հանին զնա ՚ի խաչ, յորոյ վերայ կատարեցաւ ՚ի Քրիստոս յամին 107, յետ քառասուն ամաց եպիսկոպոսութեան իւրոյ յԵրուսաղէմ։

Զայս անողորմ հալածումն թէպէտ և Տրայիանոսի չէր պատուիրեալ առանձին հրովարտակաւ, սակայն քանզի արգելեալ էին ՚ի նմանէ միաբանական ժողովք, վասն որոյ հիւպատոսք և դատաւորք գաւառաց՝ զնոյն հրաման ՚ի գործ դնէին ընդդէմ հաւատացելոց՝ որք սովոր էին միաբանութեամբ կատարել զաղօթս առ Աստուած։ Բայց լուեալ Տրայիանոսի զթիւ բազմութեան քրիստոնէից, որք կամակար դիմէին ՚ի մահ, և թէ բազմութիւնք դահճաց չէին բաւական ՚ի սպանանել զնոսա, դադարեցոյց զհալածանն յամին 116։

Մրրիկ հալածմանցս չեղև ինչ խափան յառաջադիմութեան քրիստոնէական հաւատոյ. զի անպարտութիւն վարուց քրիստոնէից, մխիթարութիւնք աւետարանեալ ճշմարտութեանց, արիական նահատակութիւն յօժարակամ դիմելոցն 'ի մահ, ակնկալուի՟ հանդերձելոյ անվախճան երանուեն՟ և շնորհք սքանչելեաց՝ զօրացուցանէին յոյժ զխրախոյս հաւատացելոց 'ի բազմանալ՝ քան զամենայն խստուի՟ և զհնարս հեթանոսաց 'ի նուազել զթիւ նոցա. մինչև 'ի նմին իսկ 'ի հալածման ծաւալել քրիստոնէութեան ընդ ամենայն կողմն աշխարհի յԱսիա, յԱփրիկէ և յԵւրոպա. և մանաւանդ 'ի մայրաքաղաքն՝ 'ի Հռովմ, յԱթէնս և յԱղեքսանդրիա, յորս ծաղկեալ էին համբաւաւոր դպրոցք հեթանոս փիլիսոփայից, և մոլեգին նախանձ և հպարտութիւն նոցա նուաճեցաւ ընդ լծով քրիստոնէական կրօնիցս.

ԳԼՈՒԽ Բ.

Նահատակութիւն սրբոց Ոսկեանց և Սուքիասեանց 'ի Հայաստան.

ՍԵՐՄԱՆՔ քարոզութեան սրբոյն Թադէի ոռոգեալքն վկայական արեամբ նորա՝ սկիզբն արարին աճման և պտղաբերութեան 'ի Հայաստան աշխարհի. զի Ոսկեանքն սուրբք՝ էին պտուղք քարոզութեան նորա, որք յետ կատարման սրբոյն Թադէի գնացեալք յականս Եփրատայ 'ի Ծաղկոտն գաւառի՝ շինեցին խուցս, և կրօնաւորեցան անդ զամս իբր քառասուն և երիս. Ապա յամին 92 ազդմամբ տեառն իջեալ 'ի լեռնէ անտի գնացին յԱրտաշատ քաղաք քարոզել զՔրիստոս յարքունիս Թագաւորին. Անդ ոմանք յազգականաց Թագուհւոյն Հայոց Սաթինկան, որք եկեալ էին յԱլանաց աշխարհէ, հաւատացին 'ի Քրիստոս, և ընդ որոց Ոսկեանցն գնացեալ յանապատ նոցա՝ մկրտեցան յականս Եփրատայ. Էին ընդ ամենայն եօթնևտասն ոգիք, որոց գլխաւորն կոչէր Սուքիաս, և կացին ընդ Ոսկեանց զամս հնգետասան ճգնողական վարուք. Ապա յամին իբր 107, Արտաւազդ արքայ Հայոց պատահեալ նոցա 'ի լերինն՝ խնամ կալաւ ողոքանօք և սպառնալեօք դարձուցանել զնոսա 'ի կռապաշտութիւն. և իմացեալ թէ պատճառք քրիստոնէութեան Սուքիասանց եղեալ իցեն Ոսկեանքն, ետ խողխողել զնոսա, թողեալ առ ժամն կենդանի զՍուքիասանս. որք և ամփոփեցին զնշխարս Ոսկեանց և կրօնաւորեցան անդ. Այլ յետոյ եկեալք անտի փոխադրեցին զբնակութիւն իւրեանց 'ի լեառն Սուկաւ 'ի Բագրևանդ գաւառի, ուր կացին զամս աւելի քան զքսան անապատաւոր կենօք՝ մինչև իբրև գրօշս վայրիս երևել մարմնոց նոցա, և առէպ աղօթէին նոքա վասն խաղաղութեան և լուսաւորութեան աշխարհիս Հայոց.

Յայնու ժամանակաւ Գիղխանոս որդի արքային Ալանաց իմացեալ զանցս քրիստոնէութեան Սուքիասանց՝ առաքեաց զզօրագլուխ ոմն դարձուցանել զնոսա յաշխարհ իւրեանց, ապա թէ ոչ կամիցին՝ կորուսանել. Եկեալ զօրագլխին և գտեալ զնոսա հաստատուն 'ի հաւատս Քրիստոսի, յետ սաստիկ տանջանաց ետ կոտորել զնոսա 'ի բերան որոյ յամին իբր 130. Ի տեղի կատարման որոցս բղխեաց աղբիւր ջրոյ 'ի բժշկութիւն ամենայն ախտաժետաց.

ԳԼՈՒԽ Գ.

Նորանոր արկածք թշուառութեան ազգին Հրէից.

ՅԵՏ հիմնայատակ առնելոյ Տիտոսի զԵրուսաղէմ, ստիպեցան Հրեայք լքանել զհայրենիս իւրեանց, և 'ի գաւառն յորս ցրուեցան՝ առին զփորձ աստուածասաստ պատուհասի անբերելի վշտաց. Անկեալքն 'ի Կիւրէն և 'ի Կիպրոս տագնապեալք 'ի լծոյ դառն գերութեան՝ ապստամբեցին առ տէրութեամբն Տրայիանոսի յամին 115, և յանդգնեցան կոտորել զՅոյնս և զՀռոմայեցիս, վարելով ընդ նոսա ազգի ազգի անգթութեամբք՝ մինչև ընկենուլ զնոսա առաջի գազանաց 'ի կերակուր, որով կորուսին աւելի քան զերկուհարիւր հազար ոգիս. Իսկ էին խրախուսեալք յայն խժդժութիւն յառնէ ումեմնէ Անդրէաս անուանելոյ, որ էր նոցա գլուխ և առաջնորդ. Վասն որոյ հարկ եղև Հռոմայեցւոց առաքել 'ի վերայ նոցա բանակ մեծ զօրաց , և յետ բուռն և սաստիկ պատերազմաց նուաճեցին զնոսա 'ի հնազանդութիւն ․ և այնուհետև առ հասարակ ազգն Հրէից համարեցաւ իբր թշնամի ազգի մարդկան յաչս Հռովմայեցւոց ։ Ի պատճառս այսր ապստամբութեան և կոտորածի , այնպէս դատարկացաւ Ելիա 'ի բնակչաց , մինչև հարկ եղև առաքել անդր հատուածս ժողովրդեան առ վերստին շինութիւն երկրին ։

Ընդ նոյն ժամանակաւ յաւուրս Ադրիանոսի կայսեր յաջորդի Տրայիանոսի՝ նոյն անցք անցին և 'ի Պաղեստին , ուր բազմացեալ էր Հրէից ․ զի խաբեբայ ոմն Բարքոքեբաս անուն , որ քարոզէր զանձն թէ մեսիայն իցէ , ստիպեաց զամենեսին միաբանգամ յապստամբութիւն ։ Իբր զի Ադրիանոս կայսր առաքեալ էր յԵրուսաղէմ հատուած ինչ ժողովրդեան բնակել յաւերակս նորա , զոր և անուանեաց Հեղիա կամ Հեղիուպօլիս ․ և 'ի տեղւոջ՝ ուր էր տաճարն Աստուծոյ , կանգնեաց մեհեան յանուն Արամազդայ ։ Եւ զի դառն էր Հրէից տեսանել զքաղաքն սուրբ լցեալ հեթանոսօք և կռապաշտութեամբ , խորհեցին հնարս ազատութե ․ մանաւանդ զի արգելեալ ևս էր նոցա առնել զթլփատութիւն ըստ օրինացն Մովսէսի ․ և յերկիւղէ անտի Ադրիանոսի՝ որ էր 'ի կողմանս յայնոսիկ՝ թէպէտ և լռեալ կային , սակայն 'ի ծածուկ զհետ էին պատրաստութեան յապստամբութիւն ․ և թագնաբար պեղէին փապարս ստորերկրեայս 'ի թագուստ և 'ի պատսպարութիւն անձանց՝ եթէ յանկարծ ոչ յաջողեսցի նոցա զդէմ ունել զօրուն Հռովմայեցւոց ․ և էին 'ի գետնափոր փապարսն ուրեք ուրեք և լուսամուտք 'ի շնչառութիւն օդոյ ։ Այս ամենայն գաղտնի պատրաստութիւնք առ ժամանակ ինչ ծածկելի խաղարկութիւնք թուէին յաչս Հռովմայեցւոց ․ այլ յորժամ յանկարծակի յայտնեցաւ ապստամբութիւնն 'ի Պաղեստին , և Հրեայք խորհրդակիցք խռովութեան ցրուեալք յայլ և յայլ տեղիս՝ սկսան 'ի նմին ժամանակի գործել զայնպիսի մեծամեծ չարիս , մինչև տալ կասկած վտանգի կործանման տէրութեան Հռովմայեցւոց , կայսրն Ադրիանոս որ 'ի Հռովմ էր , առաքեաց 'ի վերայ նոցա զՅուլիոս Սեւերոս ․ և նորա եկեալ 'ի Պաղեստին՝

յետ սաստիկ և ընդոստ պաշարման քաղաքին Բիթթերայ, յորում պատսպարեալ կայր չարեացապարան Բարքոքեբաս, էառ զայն և սպան զարժանաւորն պատուհասի, և ընդ նմա վեցհարիւր հազար անձինք հետևողք նորին կոտորեցան 'ի պատերազմունս, և բաց 'ի նոցանէ և այլ ևս անհամար բազմութիւնք Հրէից սպառեցան 'ի սրոյ 'ի սովոյ և 'ի հրդեհէ։ Ամրոցք յիսուն զօրաւորք յատակեցան 'ի հիմանց, և իբր հազար քաղաքք 'ի շէն կողմանն Պաղեստինոյ յետ մատնելոյ յաւար՝ հրով յաճիւն դարձան։ Իսկ կոտորած ազգին առ հասարակ եղև այնպիսի, զի ըստ ժամանակակից պատմագրաց՝ անապատացաւ երկիրն Հրէաստանի։

Յետ այնորիկ Ադրիանոս կայսր կամելով զառաջս առնուլ ապստամբութեանց, զամենայն Եբրայեցիս արտաքսման տայր 'ի Պաղեստինոյ, պատուէր 'ի վերայ եդեալ՝ զի մի ոք 'ի նոցանէ իշխեսցէ մտանել յԵրուսաղէմ. և որք միանգամ կամիցին գնալ՝ թոյլ ետ զի երթիցեն 'ի տարեդարձի ևեթ աւերման Երուսաղեմի 'ի Տիտոսէ՝ տեսանել զաւերակս նորա։ Եւ առ 'ի տալ նոցա մոռանալ 'ի սպառ զհայրենիս իւրեանց՝ ետ կանգնել արձան խոզի 'ի վերայ դրանն, որ անէր 'ի Բեթղեհէմ։ Յայս յետին արկած եբրայական ազգին՝ ցիր և ցան եղեն նոքա յամենայն կողմանս երկրի. զի որովհետև զօրք Հռովմայեցւոց էին յամենայն ազգաց տէրութեան իւրեանց, ամենեքին առ հասարակ եղեն գերեվարք Եբրայեցւոց, և տարան 'ի նոցանէ ընդ իւրեանս 'ի Յունաստան, 'ի Գերմանիա և յԻտալիա։ Ադրիանոս կայսր՝ քանզի 'ի Սպանիոյ ունէր զիւր ծագումն, ետ փոխադրել անդր զբազմութիւն ժողովուրդս Հրէից. զի զայնու ժամանակաւ համարէին զՍպանիա եզր աշխարհի յարևմտից կուսէ։

ԳԼՈՒԽ Դ.

Ջատագովութիւնք 'ի նպաստ քրիստոնէից 'ի դէպս զանազան հալածանաց ։

ՀԱՒԱՏԱՑԵԱԼՔՆ 'ի Քրիստոս բազմապատիկ վըշտաց տարան առ կայսերութեամբ Ադրիանոսի . զի թէպէտ և ինքն Ադրիանոս ոչ էր անգութ ոք 'ի բնէ , սակայն նոյն համարելով զքրիստոնեայս ընդ ազգին Հրէից , զորս ատեայր մեծապէս վասն ապստամբութեան նոցա , գուն գործէր պատուհասիւք նուաճել զստամբակութիւն նոցին ։ Յամի տեառն 125 եհան հրովարտակ որով արգելոյր զնոր կրօնս պաշտաման , թէպէտ և առանց յանուանէ յիշատակելոյ զքրիստոնէութիւն . սակայն պաշտօնեայքն կռոց պատճառս կալեալ զայն պատուէր , ամբաստանեցին զբազումս 'ի քրիստոնէից . քանզի և խաժամուժ ամբոխք հեթանոսաց թշնամի գոլով հաւատացելոցն 'ի Քրիստոս , զրգռէին զդատաւորս ընդդէմ նոցա , յոյր սակս բազումք նահատակեցան վասն անուանն Քրիստոսի ։

Յայսու ժամանակս երկու ականաւոր քրիստոնեայք Կուադրատոս կամ Կոդրատոս և Արիստիդէս՝ մատուցին առ կայսրն Ջատագովութիւն զօրաւոր և պանծալի բանիւք վասն քրիստոնէից ։ Որպէս և Գրանիոս Սերենոս իշխան՝ երևելի ազնուատոհմութեամբ և նշանաւոր արդարասէր մտօք բարելաւութեան՝ յանդիման կացոյց զանիրաւութիւնն , որով առ սուտ նախանձու ամբոխին սպանեալ լինէին անմեղք , և չէ մարթ , ասէ , վերագրել նոցա այլ յանցանս՝ բաց 'ի կրօնափոխութենէ իւրեանց ։ Կայսրն շարժեալ 'ի ճշմարտութենէ բանից նոցա , յամին 126 արգել Մինուկիոսի Փունդանոսի , որ էր փոխանակ բդեշխի յԱսիա , հալածել զոք որոյ յանցանք չիցեն արդարադատ քննութեամբ ստուգեալ ։ Նոյնպէս պատուիրեաց պատուհասել իբր զրպարտիչս զորս միանգամ յանդգնեսցին չարախօսել զքրիստոնէից ։ Յարդարացի հրամանէ աստի 'ի նպաստ քրիստոնէից՝ եղեն ոմանք որ զԱդրիանոս կայսր անհրին կարծեօք համարեցան 'ի ծածուկ քրիստոնեայ լինել ։

Ի ձեռն այսոցիկ հրովարտակացս կայսեր թէպէտ և դադարեցաւ հալածումն, սակայն և այնպէս բազումք 'ի քրիստոնէից սպանան յատելութենէ քրմաց, ընդ պատրուակաւ այլ և այլ յանցանաց՝ ամբաստանեալք առ դատաւորսն չարակամ ընդդէմ քրիստոնէից ։ Ի Հռովմ վկայեաց սուրբն Եւստաքէոս հանդերձ ընտանեօքն, և Սրբուհի Սիմփորոզա եօթն զաւակօք ։ Ի Բրեսքիա, որ է Պրեշիա, հեղին զարիւնս իւրեանց վասն 'ի Քրիստոս հաւատոյ՝ սուրբն Փաւստինոս և Հովիտաս ։

Մահուամբ Ադրիանոսի որ եղև յամին 138, ոչ վերջացան աղէտք տառապանաց նորածին եկեղեցւոյն Քրիստոսի ։ Անտոնինոս Պիոս արդարակորով կայսր՝ որ եղև յաջորդ Ադրիանոսի, թէպէտ և չկամէր հալածել զքրիստոնեայս, սակայն նախանձ և թշնամութիւն քրմաց՝ որք տեսանէին օր ըստ օրէ զդատարկանալ մեհենից 'ի ժողովրդենէ, ուրեք ուրեք յարուցին հալածանս յորս նահատակեցան բազում հաւատացեալք 'ի Քրիստոս ։

Յաւուրս Անտոնինոսի Պիոսի սուրբն Յուստինոս պերճախօս փիլիսոփայ՝ 'ի նպաստ քրիստոնէից մատոյց կայսեր զերկուսին պանծալի գիրս իւր որք դասեալ են 'ի կարգս շքեղ յիշատակաց հնութեան ։ Յառաջնումն գրի՝ պատասխանի տանէ զխնդրութեանցն հեթանոսաց, յայտ առարեալ զսկզբունս հաւատոյ, և զարժանահաւատ հաստատութիւն նորին . ապա ցուցեալ զանիրաւութիւնն որով հեթանոսք վարէին ընդ քրիստոնեայս առանց ինչ նոյին յանցանաց, և առանց ըստ կարգի քննութեան սահմանելոյ օրինաց, նկարագրէ զարարողութիւնս անմեղ միաբանութեան հաւատացելոց 'ի Քրիստոս . և ստէպ յուշ առնելով նմա զարդարախոհութիւն Ադրիանոսի 'ի նմանօրինակ դիպուածս, խնդրէ 'ի կայսերէն վարել առ քրիստոնեայս զնոյն արդարութիւն ։

Հաւանեալ Անտոնինոսի ընդ իրաւացի փաստս նորա, յամին 151 գրեաց առ դատաւորս համօրէն գաւառաց, և առաւելապէս կողմանցն Ասիոյ՝ զգուշանալ 'ի չարչարելոյ զհետեւողս քրիստոնէութեան, պատուիրելով նոցա սանձել զյանդգնութիւն խաժամուժ ամբոխին, եւ չտալ պատճառս խռովութեան ընդդէմ քրիստոնէից։ Ի հրովարտակին ուղղեալ 'ի գաւառս փոքուն Ասիոյ՝ պաշտպան կայ քրիստոնէից առանձին օրինակաւ, գովելով զհաւատարմութիւն նոցա առ Աստուած, եւ զանվեհեր արիութիւնն՝ որով առ ոչինչ համարին զմահ։ Նոյնպէս յաւելու գովեստ զբարեկրօնութենէ վարուց քրիստոնէից 'ի կշտամբութիւն անօրէնութեանց հալածչաց նոցին։ Սակայն 'ի վերայ այսոցիկ ամենայն գովեստից եւ հրովարտակաց, տակաւին բազում վկայք նահատակեցան 'ի խռովութենէ ըմբոստ եւ աղմկայոյզ ժողովրդեան հեթանոսաց, որպէս եւ 'ի թոյլտուութենէ չարակամ դատաւորաց՝ որք սաստնախանձու պաշտօնեայք էին կռոց։

Յայս միջոց ժամանակի սուրբն Տելեսփորոս Հռովմայ հայրապետ, որպէս եւ սրբուհին Նշանեակ հանդերձ եօթն որդւովք իւրովք ընկալան 'ի Հռովմ զպսակ նահատակութեան 'ի Քրիստոս։

ԳԼՈՒԽ Ե.

Հալածումն Մարկոսի Աւրելիոսի։

ՀՐԴԵՀ հալածանաց վերստին արծարծեցաւ յԱսիա յետ մահուան Անտոնինոսի Պիոսի, որ մեռաւ 'ի Հռովմ՝ յամին 160։ Զի Մարկոս Աւրելիոս յաջորդ նորա ոչ միայն վրիպանօք շփոթէր զքրիստոնեայս ընդ Գնոստիկեան աղանդաւորսն, որք գեղծ վարուք վատահամբաւք էին, այլ եւ համարէր զքրիստոնեայսն ցնորեալս անմիտս՝ սակս կամակոր եւ խնդամիտ 'ի մահ դիմելոյ նոցա։ Նա զի ճկուն մնեալ էր ուսմանց Ստոյիկեանց՝ որք պարտս անձանց համարէին խնամել եւ անկորուստ պահել զկենդանութիւն զպարգեւեալն 'ի բնութենէ, մինչեւ ցսահմանեալ ժամանակին յօրինաց բնութեան, վասն որոյ զեռանդն քրիստոնէից առ 'ի մահ համարէր անբերելի յանցանս կրօնականս եւ քաղաքականս. եւ սովին վրիպակ խորհրդով ոչ ուղիղ տեղեկացեալ ըզքրիստոնէից, թոյլ ետ հալածել զնոսա։ Նա թէպէտ չհրատարակեցան 'ի նմանէ յայտնի հրովարտակք ընդդէմ նոցա, սակայն առաքեցան պատուէրք առ դատաւորս գաւառաց՝ արգելուլ և խափանել զյառաջադիմութիւն նորոյ կրօնին. յոյր սակս բազմաթիւ քրիստոնեայք մատնեցան 'ի մահ, ընկալեալ զպսակն նահատակութեան հաւատոյն 'ի Քրիստոս։

Ի ժամանակս այսր հալածմանց ըմբռնեցաւ սուրբն Պողիկարպոս եպիսկոպոս Զմիւռնիոյ, աշակերտ և հետևող առաքինութեանց սրբոյն Յովհաննու աւետարանչի, արկին զնա 'ի հուր բորբոքեալ, և 'ի մնալ նորա անկիզելի՝ խոցեցին սրով, և աւանդեաց զհոգին յամի տեառն 166։ Նոյնպէս և սուրբն Յուստինոս, այն որ յաւուրս Անտոնինոսի Պիոսի գրով ջատագովութեան պաշտպան եկաց քրիստոնէական հաւատոց, ըմբռնեցաւ 'ի Հռոմ և կացուցաւ առաջի Հռուստիկոսի դատաւորին. և հարցեալ 'ի նմանէ թէ յոր ազգ դպրութեան աշակերտեալ իցէ, ետ պատասխանի սուրբն. “ Ջանահնար եղէ ուսանել զամենայն տեսակս գիտութեան, և յետոյ ընտրեցի զհաւատս քրիստոնէութեան, թէպէտ և չիցէ այն հաճոյ որոց միանգամ 'ի կուրութեան են և պաշարեալք 'ի մոլորութենէ „ ։ Զոր իբրև լուաւ Հռուստիկոս՝ գոչեաց մեծաձայն. “ Ապա դու ինքն, ո՛վ թշուառական, զհետ գնաս այդմ վարդապետութեան „ ։ Սուրբն ասէ. “ Այո՛, և կարի հաճեալ եմ ընդ այն. զի 'ի նմա գտանեմ զճշմարտութիւն „ ։ Ապա 'ի հարցանել դատաւորին՝ թէ ո՛ր իցէ ժողովատեղի քրիստոնէից, ետ պատասխանի սուրբն Յուստինոս. “ Ամենայն ուրեք ուր և կամեցին կամ հնարաւոր իցէ. թերևս կարծիցէք եթէ միշտ 'ի միում վայրի ևեթ խմբիցիմք։ Աստուածն քրիստոնէից ոչ է պարփակեալ ուրեք. այլ զոր օրինակ անմարմին է նա և լնու զերկինս և զերկիր, նոյնպէս ամենայն ուրեք պաշտեն և փառաւորեն զնա հաւատացեալքն 'ի Քրիստոս „ ։ Յետ այնորիկ եհարց դատաւորն և ցայնոսիկ որք ընդ Յուստինոսի էին կալանաւորեալք, և նոքա ևս խոստովանեցան զքրիստոնէութիւն իւրեանց։ Յայնժամ դատաւորն ասէ սպառնալեօք. “ Զոհեցէք աստուածոց մերոց, հնազանդեալ հրամանաց կայսեր. ապա թէ ոչ՝ մատնեցից զձեզ յանողորմ տանջանս „ ։

Նա պատասխանի սուրբն Յուստինոս. «Այնմ եւեթ փափագեմք եւ մեք, չարչարիլ վասն Քրիստոսի, որ է պատճառ կենդանութեան մերոյ, եւ տայ համարձակութիւն երեւել առաջի ահաւոր ատենին Աստուծոյ, յորում հարկ է եւ ամենայն մարդկան յանդիման լինել յորժամ նա կամեսցի »։ Զնոյն վկայութիւն աներկիւղ տուեալ եւ այլոց նահատակաց, Ռուստիկոս դատաւոր արար վասն նոցա զայս վճիռ մահապարտութեան. «Սոքա՝ որք չկամեցան զոհել աստուածոց, եւ հնազանդել հրամանաց կայսեր, ըստ կարգադրութեան օրինացն բրածեծք լիցին եւ գլխատապարտք »։ Գոհացան վկայքն զԱստուծոյ յաղագս այնր պարգեւաց, եւ տարեալք 'ի տեղի տանջանաց կատարեցան 'ի Քրիստոս յամին 167։

Զայնու ժամանակաւ իբր ամ երիս եղեւ դադարումն հալածանաց հռովմայական կայսեր։ Սա ինքն Աւրեղիոս՝ թէպէտ եւ խաւարամած հեթանոսութեամբն ոչ հաւանէր ընդ հրաշագործութիւնն՝ որովք Աստուած հաստատէր զճշմարիտ հաւատս, սակայն անձամբ գտաւ ականատես նորանշան սքանչելեաց 'ի պատերազմին որ ընդդէմ Կուադեան ժողովրդոյն Գերմանիոյ։ Զի բազմութիւն անթիւ բարբարոսաց պաշարեալ զբանակ Հռովմայեցւոց 'ի լեռնամէջս, տագնապէին զօրքն 'ի սաստկութենէ ջերմութեան օդոց եւ 'ի պակասութենէ ջրոյ, եւ առ դուրս կային կորստեան 'ի ծարաւոյ եւ 'ի սրոյ թշնամեաց։ Յայնմ յետին վտանգի լեգէոնախումբն երկոտասաներորդ, որ անուանեալ կոչէր Շանթաձիգ, յորում զինուորեալքն մեծաւ մասամբ՝ քրիստոնեայք էին, ջերմեռանդն աղօթիւք դիմելով առ Աստուած՝ ընկալան յերկնից զառատահոս անձրեւ, յորում պահու 'ի բանակ թշնամեացն սկսան տեղալ կարկուտք եւ շանթիք։ Արդ այսպիսի անակնկալ հրաշիւք զօրացեալ Հռովմայեցւոց՝ յարձակեցան 'ի վերայ բարբարոսաց. որոց զահի հարեալ՝ փախստական պատերազմելոյ սկսան փախչել։ Այս հրաշալի դիպուած վկայեալ եւ հաստատեալ էր առ հասարակ յամենեցունց. բայց հեթանոսք համարեցան զայն պարգեւ ամպրոպայնոյն Արամազդայ՝ 'ի շնորհս երկուց մոգուց որ էին ընդ կայսեր. սակայն Աւրեղիոս 'ի գրել անդ առ ծերակոյտն Հռովմայ, զպատիւ եղելոցն ընծայէ քրիստոնէից. մանաւանդ զի ըստ կարծելոյ ոմանց՝ յորդորեալ 'ի սքանչելեաց անտի՝ արգել սպառնալեօք մահապարտութեան չարչարատանել զքրիստոնեայս. թէպէտ և վրիպակ կարծիք իւր զնոցանէ ոչ թողին նմա նպաստել քրիստոնէութեան. վասն որոյ յետ երից ամաց 'ի թելադրութենէ դատաւորաց և 'ի բուռն մոլեգնութենէ ժողովրդեան վերստին բորբոքեցաւ հրդեհ հալածանաց. որով բազումք 'ի քաղաքաց շաղախեցան արեամբ վկայից։

Թուղթք եկեղեցւոյն Լուգդոնի, որպէս և Վիեննայի Գաղղիոյ, զորս վասն վկայից իւրեանց գրեցին՝ առ եկեղեցին Ասիոյ, չքնաղք են և ազդողականք հանդերձ պարզութեամբն։ Քաղաքն Լուգդոնի որչափ մեծ էր և ընդարձակ, այնչափ առաւել էր անդ և իշխանութիւն քրմաց. զի ունէին իւրեանց թիկունս և պաշտպան և զատենակալսն քաղաքին, մինչև չկարել հաւատացելոց յայտնի երևել 'ի հրապարակս առանց թշնամանս ընդունելոյ և քարկոծ լինելոյ 'ի հեթանոսաց։ Քաղաքապետին տեսեալ զթիւ բազմութեան քրիստոնէից և զհաստատութիւն նոցա 'ի հաւատս, զբազումս 'ի նոցանէ արկ առաջի գազանաց 'ի կերակուր. և զորս միանգամ անուանեալն էին քաղաքացիք Հռովմայեցւոց՝ հրամայեաց գլխապարտ մահուամբ կորուսանել։ Տանջէին զվկայսն, և յետ մահուան նոցա այրէին զմարմինսն, և զմոխիրսն արկանէին 'ի գետն Հռոդանոս, կարծելով զրկել զնոսին յամենայն յուսոյ վերստին յարուե՟. «Այսու ակնկալութեամբ, ասէին, դիմեն նոքա 'ի մահ խնդամիտ. տեսցուք այժմ թէ զիարդ մարթասցին յառնել»։ Որպէս թէ դժուարին իցէ արարչին հաւաքել 'ի մի զցրուեալ մոխիրսն՝ քան զհաստելն յոչնչէ զաշխարհս ամենազօր բանիւ։

Ի ժամանակս այսր հալածանաց բազումք նահատակեցան 'ի Քրիստոս. ընդ որս և սուրբն Պոթինոս եպիսկոպոս Լուգդոնի՝ որ անցեալ էր զիննսնամենիւք յորժամ ըմբռնեցաւ 'ի հեթանոսաց, և էր այնչափ տկար և հիւանդ՝ զի հազիւ կարէր յոտին կալ, այլ զօրացաւ նախանձու փառացն Աստուծոյ և 'ի բաղձանաց նահատակութեան. զոր չարաչար և յանխնայ քարշելով նախատանօք և հայհոյութեամբ տարան յատեան, ուր պատկառելի ծերունին 'ի տալն զվկայութիւն ճշմարտութեան՝ փաղփաղակի առանց ինչ ակնածութեան հարուածեցաւ անողորմ յամբոխէն. Որք մերձն կային՝ ոչինչ պատկառելով 'ի հասակէ սրբոյն՝ ձեռօք և ոտիւք կոխէին և հարկանէին զնա. իսկ հեռաւորքն ձգէին 'ի նա զոր ինչ միանգամ անկանէր 'ի ձեռս, անօրէնութիւն մեծ համարելով զդադարելն 'ի տանջելոյ զնա, իբր վրէժխնդիր լինելով անարգութեան դից. Յետ դառն և անգութ տանջանաց, մինչդեռ տակաւին կենդանի էր սուրբն արկին զնա 'ի բանտ, ուր վախճանեցաւ զկնի երկուց աւուրց.

Յետ մահուան նորա սուրբն Իրենէոս՝ հետևող առաքելոց անուանեալ, ազգաւ յոյն՝ աշակերտեալ սրբոյն Պողիկարպոսի, կալաւ զաթոռ եպիսկոպոսութեան Լուգդունի, և վառեալ առաքելական նախանձու՝ եղև քարոզ ճշմարտութեան գրով և բանիւ. Նա յետ բազում վաստակելոց վասն անուանն տեառն, ընծայեցաւ 'ի հալածանս Սևերոսի կայսեր, և նահատակեցաւ սրով յամին 203. ընդ որում վկայեցին և բազմութիւնք ժողովրդեան. Ի բազում գրաւոր աշխատութեանց նորա մնացին հինգ գիրք ևեթ յաղագս հերձուածոց.

ԳԼՈՒԽ Զ.

Մոլորութիւնք հերձուածողաց յերկրորդ դարու.

ԵԿԵՂԵՑԻ Քրիստոսի յորժամ դիմամարտ հանդիսիւ յաղթական լինէր հալածչացն, 'ի չարութենէ բանսարկուին սկսաւ հերձանիլ յիւրոց որդեկաց. զի այլ և այլ խումբք մոլեգնելոց՝ շառաւիղեալք 'ի հերետիկոսաց նախընթաց դարուն սկսան ծաւալել զանհեթեթ ցնորս մոլորութեանց. Գլխաւորքն 'ի նոսա եղեն Կարպոկրատէս, Պրոդիկոս, Վաղենտինոս, Մարկիոն և Մոնտանոս.

Կարպոկրատէս աղեքսանդրացի փիլիսոփոս պղատոնական առաջնորդ աղանդոյն Գնոստիկեանց՝ այսինքն գիտնոց կամ քաղդէից, ընկալաւ զկարծիս մոլորութեան այլոց ուրումն աղխոյ Բասիլիդէս անուանելոյ, որ նախ սկսաւ քարոզել՝ թէ մարմինն Քրիստոսի առաչօք իցէ, որպէս և խաչելութիւն նորա։ Ուրանայր և զյարութիւն մեռելոց, ուսուցանելով զօրինակ ինչ հոգեփոխութեան մարմնոյ 'ի մարմին։ Ջնորեալս այս կարևոր համարէր զմեղսագործութիւն 'ի կատարելութիւն հոգւոյ. զի հոգի ինքնին անմեղ գոլով, ասէր, չկարէ սրբիլ և մաքրագործիլ. այսպիսի թիւր և անօրէն վարդապետութեամբ թոյլ տայր աղանդաւորաց իւրոց գործել զամենայն պղծութիւնս։

Պրոտիկոս գլուխ Ադամեանց՝ զհետ երթեալ հետոյն Կարպոկրատեայ՝ նորոգեաց զմոլորութիւնս նորա։ Հետևողք սորա Ադամեանք անուանեցան, զի 'ի ժողովս իւրեանց մերկք էին գլխովին, կարծելով այնու նմանող լինել վիճակի անմեղութեան նախահօրն Ադամայ։ Ամօթ և նախատինք վարուց նոցա և վարդապետութեան՝ պատճառս եղեն անարգանաց հաւատացելոց, ընդ որս խառն բնակէին։ Նմանօրինակ էին և մոլորութիւնք Վաղենտինոսի և Մարկիոնի։

Մարկիոն՝ զառաջինն նախանձայոյզ քրիստոնեայ, նզովեալ 'ի հօրէ իւրմէ որ էր եպիսկոպոս, յարեցաւ 'ի հերետիկոսական Կերդոն. յորմէ ընկալաւ զուսումն վարդապետութեան երկուց սկզբանց բարւոյ և չարի, զոր կամեցաւ մուծանել 'ի քրիստոնեական կրօնս հանդերձ պղատոնական և ստոյիկեան վարդապետութեամբք։ Ուրանայր զճշմարիտ մարդեղութիւն և զծնունդն Քրիստոսի. սակայն խոստովանէր զչարչարանս նորա զորս առ աչօք համարէր։ Կեղծիս ասէր զյարութիւն մարմնոյ. և զամուսնութիւն իբր աղգ ինչ պոռնկութեան, որպէս և զկուսակրօնս ևեթ արժանիս ասէր մկրտութեան, և պնդէր եթէ մարթ է երիցս կրկնել զայս խորհուրդ։

Եւ զի սովոր էր եռանդագին և անձանձրոյթ քարոզել և ուսուցանել, նմին իրի բազում որսաց իւր հետևողս, որոց մոլեգնեալ մտօք՝ կամակար դիմէին 'ի մահ իբր 'ի նահատակութիւն. և 'ի նոսա համբաւաւոր եղև Ապեղէս ոմն անուն, որ այլայլեաց ինչ ինչ 'ի մոլորութեանց վարդապետին իւրոյ։ Եդ սա զմի միայն սկիզբն յաւիտենական և հարկաւոր էակ. վասն որոյ 'ի բացայայտել զծագումն և զլինելութիւն չարեաց, ասէր՝ թէ էակն այն ինքնիշխան և բարի բնութեամբ՝ ոչ խառնի 'ի մարդկային և 'ի կենդանական գործս. այլ ստեղծեալ նորա զհրեշտակս, մին 'ի նոցանց կերպարանեաց զաշխարհ, զաղափարեալ զայն 'ի գերագոյն և 'ի կատարեալ նախատիպէն. այլ քանզի առ ակարութեան հաստչին ոչ բարւոք կերպացաւ աշխարհս, Յիսուս Քրիստոս, զոր որդի ասէր ինքնիշխան Եոնին, եկն 'ի յետին ժամանակս հոգւով սրբով փրկել զայնոսիկ՝ որք 'ի նա հաւատասցեն, ծանուցանել նոցա զերկնային բարիս, և խելամուտ առնել զնոսա ատելութեան և արհամարհանաց աշխարհաստեղծ հաստչին, և որոց 'ի նմանէն հաստեցան։ Ապեղէս զմարմին Քրիստոսի ոչ ասէր առ աչօք իբրև զՄարկիոն, այլ կերպացեալ յերկնային մասանց յիջանել նորա յաշխարհս։

Տատիանոս և աշակերտք նորա անգոսնէին զհարսանիս և զամուսնութիւն. խորշելի համարէին զմիս անասնոց և զգինի, յորս աւելանեցան և Ժուժկալք։ Եւ զի արգելեալ էր առ նոսա կիրառութիւն գինւոյ, զխորհուրդ պատարագի կատարէին լոկ ջրով, վասն որոյ և Ջրամատոյցք եւս կոչեցան։

Մոնտանոս փոխեցաւ անկաւ 'ի մոլորութիւնս դժնդակագոյնս քան զառաջինսն։ Զի խելայեղ ցնորիւք վարդապետէր՝ թէ Աստուած կամելով փրկել զմարդիկ Մովսիւ և մարգարէիւք, և չկարելով առնել զայն 'ի ձեռն նոցա, ինքնին յանձն առեալ իցէ մարդանալ. սակայն և այնպէս 'ի չյաջողել կամացն՝ իջեալ իցէ Հոգւովն սրբով 'ի Մոնտանոս, 'ի Պրիսկիղղա և 'ի Մաքսիմիլլա յերկոսին կանայս արամբիս, զորս ինքն Մոնտանոս ընդ իւր շրջեցուցանէր։ Ջան գործէր հաստատել՝ թէ ինքն ազդմամբ Հոգւոյն սրբոյ կամ իբր Հոգի Աստուծոյ՝ կարգեալ իցէ ուսուցանել մարդկան զկանոնս վարուց սրբագոյնս և կատարելագոյնս քան զոր աւանդեցանն։ Զմեղուցեալսն ծանր յանցանօք՝ իբր անքաւելիս սպառ համարէր 'ի սպառ մերժել և հատանել 'ի հաղորդութենէ եկեղեցւոյ, որպէս թէ չիցէ յեկեղեցւոջ իշխանութիւն արձակելոյ զծանր յանցանս։ Օրինադրեաց երկու քառասնորդական պահս՝ հանդերձ այլովք շաբաթական անսովոր պահօք, անբաւական համարելով զմի քառասնորդն և զայլ պահս կարգեալս յեկեղեցւոյ։ Զկրկին ամուսնութիւն համարէր իբրև զմեղս շնութեան։ Զփախչել և զթաքչել 'ի հալածանս՝ արգել ամենայն խստութեամբ ։ Եւ զի սովոր էն մարդիկ արգոյ համարել զխստութիւն վարուց, և մտադիւր ունէին մատուցանել գուշակական զրուցաց, և հասու լինել անտեսից և հանդերձելոց՝ թէպէտ և չիցեն ստոյգք, նմին իրի Մոնտանոս զառաջինն ՚ի ձեռն այսպիսեաց ստացաւ իւր հետևողս. սակայն յետոյ ՚ի յայտնել ճշմարտութեան՝ ՚ի սպառ անհետացան վարդապետութիւնք նորա ։

Պրիսկիլլա և Մաքսիմիլլա, որք թողեալ զայրս իւրեանց զհետ երթային Մոնտանոսի, համարեցան ընկալեալք զհոգի մարգարէութեան, և ՚ի նոցունց հաղորդեալ հոգւոյն յայլս՝ բազմացան յոյժ Մոնտանեան գուշակք այր և կանայք ։ Այլ ՚ի խափանել զաղմուկ խռովութեան նոցա՝ եպիսկոպոսունք Ասիոյ յետ ընդ երկար քննութեան յայտ արարին զստութիւն դիւահնար մոլորութեանն. վասն որոյ և դատապարտեալ նզովեցին զառաջնորդս նոցա ։ Հերքեալ Մոնտանեանց ՚ի հաղորդութենէ եկեղեցւոյ, կազմեցին նոր խումբ ընկերութեան, որ ընդ երկար ժամանակս ծաւալեցաւ յԱսորիս՝ բաժանեալ ՚ի զանազան աղանդս ։

ԳԼՈՒԽ Ի.

Քահանայապետք Հռովմայ ։

ՀԱՅՐԱՊԵՏՔ սորա աթոռոյն՝ ծանուցեալք յամենեցունց իբր գլուխք ընդհանուր եկեղեցւոյ, ջանահնար եղեն խափանել զգայթակղութիւնս ծագեալս ՚ի հերետիկոսութեանց, գրով և բանիւ հերքելով զմոլորութիւնս գլխագրգիռ աղանդաւորաց ։ Որք միանգամ յայնմ դարու առաջնորդք կացին եկեղեցւոյ, ամենեքին դատակարգեալ կան ՚ի թիւս սրբոց ։

Սուրբն Եւարիստոս ազգաւ յոյն՝ նստեալ յաթոռ քահանայապետութեան յամին 95, յետ երկոտասան ամաց ընկալաւ զպսակ նահատակութեան ՚ի 108, յաւուրս Տրայիանոսի կայսեր ։ Նմին յաջորդ եղև սուրբն Աղեքսանդր Ա. որ կալաւ զաթոռ հայրապետութեան մինչև ցամն 117. յետոյ սուրբն Քսեստոս Ա. զամս տասն. ապա Տեղեսփորոս զամս մետասան. զկնի Հիգենոս զամս չորս։ Սոքա ամենեքին նշանաւորք են և երևելիք սակս արիական նահատակութեան քան վասն այլ ինչ գործոց կատարելոց յաւուրս քահանայապետութեան իւրեանց։ Նոյնպէս և սուրբն Պիոս Ա, որ կալաւ զաթոռ սրբոյն Պետրոսի ՚ի 142 ամէ ցամն 150. սուրբն Անիկետոս զամս տասն. սուրբն Սոտեր զամս ինն. սուրբն Եղեւթերիոս զամս չորեքտասան. սուրբն Վիկտոր զամս երկոտասան, մինչև ցամ տեառն 197, յաջորդք և հետևողք եղեն գեղեցիկ բարեմասնութեանց առաջնոցն։

ԳԼՈՒԽ Ը.

Վէճք և հակառակութիւնք յաղագս տօնի Զատկին։

ՅԱՒՈՒՐՍ քահանայապետութեան սրբոյն Վիկտորի յուզեցաւ վէճ և խնդիր ՚ի հաւատացեալս յաղագս տօնի զատկին, զոր եկեղեցիք Ասիացւոց կատարէին ՚ի չորեքտասանն լուսնոյ ամսեանն մարտի. իսկ այլ եկեղեցիք տօնէին զայն ՚ի կիւրակէի յետ չորեքտասաներորդի աւուր լուսնի գարնանային հաւասարածին, որով հարկ լինէր ումանց ՚ի հաւատացելոց սգալ ընդ չարչարանս Քրիստոսի, և այլոց ՚ի նոյն աւուրս ցնծալ ընդ հրաշափառ յարութիւնն։ Այսմ անպատշաճութեան խորհելով զարմանս տանել սրբոյն Վիկտորի՝ ՚ի նստելն յաթոռ քահանայապետութեան կամեցաւ սահմանել զհամաձայնութիւն համօրէն հաւատացելոց. վասն որոյ գումարել ժողով յեպիսկոպոսաց և ՚ի քահանայից եկեղեցւոյն Հռովմայ յամի տեառն 196, հերքեաց զսովորութիւն եկեղեցեացն Ասիոյ։ Սակայն չեղև զարմանն անպատշաճութեանն. զի ոմանք յեկեղեցեացն Ասիացւոց հակառակ կացեալ սրբոյն Վիկտորի, այլով ժողովով զընդդէմն հաստատեցին. և Պողիկրատէս որ եպիսկոպոս էր Եփեսացւոց՝ գումարեալ զառանձին ժողով՝ սահմանեաց անփոփոխ կատարել զտօնն ՚ի չորեքտասան լուսնի ամսեանն մարտի, յորում աւուր և դիպեսցի այն։ Յայնժամ սուրբն Վիկտոր յամին 197 վերստին գումարեալ ՚ի Հռովմ ժողով երկրորդ, սպառնացաւ նզովել զեպիսկոպոսն Եփեսոսի և զհետևողս նորա. սակայն բազումք յարեւմտեան եպիսկոպոսաց, և մանաւանդ սուրբն Իրենէոս եպիսկոպոսն Լուգդունի՝ զուշակելով զվտանգաւոր հետեւութիւնն՝ որոց մարթ էր ծագել 'ի հակառակութենէ անտի, գրեցին առ պապն՝ յորդորելով զնա չխռովել զխաղաղութիւն եկեղեցւոյ 'ի պատճառս խնդրոյն որ ոչ է 'ի մասանց հաւատոյ ։ Սուրբն Վիկտոր իբրև հայր գորովագութ ունկն մատուցեալ ազդարար խրատու որդւոց իւրոց, թոյլ ետ եկեղեցեացն Ասիացւոց, վարել սովորութեամբ իւրեանց. որ և տեւեաց զամս յոլովս մինչև ցառաջին ժողովն Նիկիոյ, յորում միաբան հաւանութեամբ կանոնադրեցաւ տօնել 'ի կիւրակէի որ յետ չորեքտասաներորդի աւուր լուսնոյ ամսեանն մարտի ։

ԳԼՈՒԽ Թ.

Եկեղեցական մատենագիրք ։

ՄԱՏԵՆԱԳԻՐՔ երկրորդի դարու յոլովք եղեն առաւելեալք պայծառ և ողջամիտ վարդապետութեամբ եկեղեցւոյ ։ Ի բազմաց անտի յառաջնոյ հարց՝ ունիմք զսրբոյն Իգնատիոսի աստուածազգեաց հայրապետին Անտիոքայ զառաքելաշնորհ նամակսն գրեալս առ այլ և այլ եկեղեցիս. առ Յոյնս զամենին քսանեւերկու թուով, զորոց զերեքտասանն տեսանեմք թարգմանեալ 'ի հայ բարբառ, իսկ առ Լատինս յիշատակին եօթանեքին եւեթ ։

Ի սմին դարու պանծալի են յոյժ և կրկին ճառք սրբոյն Յուստինոսի վկայի 'ի ջատագովութիւն քրիստոնէական կրօնի. որպէս և սրբոյն Իրենէոսի եպիսկոպոսին Լուգդունի, որ եղև ջահ լուսապայծառ եկեղեցւոյն Գաղղիոյ ։

Աթենագորաս՝ ըստ օրինակի սրբոյն Յուստինոսի վկայի մատոյց կայսերաց գիրս ջատագովութեան զքրիստոնէից ։ Այլ նորա և ճառ յաղագս յարութեան՝ պերճ և զօրաւոր բանիւք ։

Տատիանոս 'ի գիրս իւր որ ընդդէմ հեթանոսաց՝ կարի նպաստաւոր եղև քրիստոնէութեան. որպիսիք եղեն և Կուադրատոս եպիսկոպոս Աթենայ, և Արիստիդէս փիլիսոփայ նոյնպէս աթենացի․ զի երկոքին ևս գրեցին ճառս զօրաւորս 'ի ջատագովութիւն քրիստոնէական հաւատոյ ։

Մելիտոն սարդիացի, արժանաւոր դասակարգութեան 'ի թիւս եկեղեցական մատենագրաց, արար ճառս նպաստաւորս քրիստոնէութեան և այլ բազում գիրս, զորոց զհատուածս ևեթ ունիմք ։ Ի միումն 'ի նոցանէ գտանի ցուցակ կանոնական գրոց հին կտակարանաց՝ ոչ ինչ ընդհատ յեբրայական ցուցակէն, բայց պակասի 'ի նմա գիրքն Եսթերայ ։

Թէոփիլոս եպիսկոպոս Անտիոքայ՝ ականաւոր գիտութեամբ և բարեպաշտութեամբ, գրեաց ճառս 'ի ջատագովութիւն քրիստոնէութեան, որ տպագրեալ կան զհետ գործոց սրբոյն Յուստինոսի վկայի ։

Հերմիաս փիլիսոփաս քրիստոնեայ․ սա թէպէտ և չէ կարի ծանուցեալ ըստ վարուցն, սակայն յանկատար գրուածոյ անտի նորա զոր ունիմք՝ երևի հանճար մատենագրին, յորում կարծիք փիլիսոփայից, կամ լաւ ևս ասել ցնորք նոցա՝ խայտառակին հեգնական զուարճաբանութեամբք ։

Հեգեսիպպոս գրեաց զպատմութիւն սկզբնաւորութեան և յառաջադիմութեան քրիստոսական կրօնի, որով սկսաւ քրիստոնէութիւնն պատկառելի լինել յաչս հեթանոսաց․ սակայն հնութեամբ ժամանակի կորեաւ մատեանն այն՝ մնալով ևեթ քանի մի հատուածոց՝ զորս 'ի մէջ բերէ Եւսեբի ։

ԳԼՈՒԽ Ժ․

Եկեղեցական բարեկարգութիւնք քրիստոնէից․ և օրինակ պաշտաման խորհրդոց նոցա ։

Ի ԴԱՐՈՒՍ և 'ի սաստիկ հալածանս ընդ որովք անկեալ կայր եկեղեցի, կարգաւորութիւն հասարակաց աղօթից պաշտաման չէր հանդիսական՝ որպիսի առ մեօքս է․ զի հաւատացեալք չունէին յայնժամ զառանձնական ժողովարանս, այլ 'ի թագուն վայրս կատարէին զպաշտամունս իւրեանց ։ Առաքելաբար սահմանադրութեամբ սկիզբըն լինէր աղօթից պաշտաման, ապա ընթեռնուին քանի մի գլուխս 'ի հին կամ 'ի նոր կտակարանաց, զորս յետոյ եպիսկոպոսն մեկնէր և բացայայտէր 'ի լուր ժողովրդեան՝ պարզ և ընտել բանիւք առանց ինչ պաճուճանաց: Եւ յետ այնր արարեալ աղօթս ինչ և մաղթանս (յաւուրս կիւրակէից յոտին կալով, իսկ յայլ աւուրսն 'ի գուճս) կատարէր պատարագն օրհնութեամբ սրբոյ հացին, որում հաղորդէին ամենայն հաւատացեալք:

Ամենայն կիւրակէ համարեալ էր նոցա օր տօնական հանդիսի, զոր և անթերի անցուցանէին աստուածային պաշտամամբք: Նոյնպէս 'ի յարգի ունէին զօր չորեքշաբաթու որպէս և զուրբաթուն. զառաջինն իբրև օր մատնութեան տեառն, և զերկրորդն օր խաչելութեան և մահու փրկչին: Զատիկ և Պենտեկոստէ՝ էին տօնք երևելիք և գլխաւորք: Ի բազում եկեղեցիս կատարէին և զտօն նահատակութեան սրբոց վկայիցն՝ որոց չարչարանք և մահ առաւել ծանուցեալք էին, կամ թէ նահատակեալ էին 'ի նմին քաղաքի:

Զայնու ժամանակաւ թէպէտ և չէին քրիստոնէից հոյակապ եկեղեցիք և մեծագործ տաճարք, սակայն և այնպէս ժողովէին 'ի տեղիս տեղիս, ուր մարթ էր նոցա ամենայն վայելչութեամբ կատարել զգործս պաշտաման իւրեանց. զորս և անուանէին եկեղեցիս կամ ժողովանոցս, աղօթարանս, և տունս Աստուծոյ: Ի ժամանակս հալածանաց թագչէին և առանձնանային 'ի ստորերկրեայ փապարս և 'ի դամբարանս սրբոց վկայից՝ 'ի գետնափոր տեղիս:

Մկրտութիւն դուռն համարեալ էր քրիստոնէութե՟, և տուեալ լինէր մանկանց և յարբունս հասելոց: Զորս միանգամ 'ի Հրէից կամ 'ի հեթանոսաց յօժարէին դառնալ 'ի հաւատս, նախ քան զմկրտութիւնն դնէին զնոսա ընդ երախայս 'ի հրահանգս քրիստոնէական վարդապետութեան, և յետ վարժելոյ ըստ բաւականին՝ տային նոցա զմկրտութիւն պատրաստութեամբ պահոց և աղօթից, որպէս յայտ է և 'ի պատմութենէ լուսաւորութեան ազգիս Հայոց:

Եկեղեցական բարեկարգութիւն ժամանակացն այնոցիկ պայծառ փայլէր խստակրօն սրբութեամբ. զի թէ գործէր ոք ծանր ինչ յանցանս կռապաշտութեան կամ ուրացութեան կամ մարդասպանութեան և կամ շնութեան , անկանէր ընդ սաստիկ և երկարատև ապաշխարութեամբ ․ զի նախ պարտէր հրապարակաւ խոստովանել զյանցանսն առաջի ամենայն հաւատացելոց , և ապա ընդունել զխստամբեր հրահանգս ճգնութեան ընդ ամս ինչ , զրկեալ մնալով ’ի հաղորդութենէ սուրբ խորհրդոյն ․ և յետ կատարման կարգի ապաշխարութեան՝ լինէր թոյլտուութիւն մտանելոյ ’ի ժողովս հաւատացելոց , և կալ առընթեր ’ի պաշտաման աղօթից ։

ԴԱՐ ԵՐՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա.

Հալածումն Սեւերոսի կայսեր։

ՍԵՒԵՐՈՍ կայսր՝ վիճակեալն 'ի բնէ զովելի ձրից, թէպէտ և ոչ անմասն 'ի հեթանոսական վատթար յոժարանութեանց, թագաւորէր 'ի սկիզբն այսր դարու, և էր նպաստամատոյց քրիստոնէութեան 'ի շնորհս Պրոկղոսի Տորպակիոնի քրիստոնեայ բժշկի, որ զերծուցեալ էր զնա 'ի ծանր ախտակրութենէ. վասն որոյ 'ի նշան սիրոյ և հաճութեան ընդ Պրոկղոս՝ տուեալ էր նմա տեղի բնակութեան յարքունիս իւր։ Նոյնպէս և անդրանկանն իւրոյ Կարակաղղայի դայեակ՝ կին քրիստոնեայ էր։

Օ քաղցրաբեր բարս Սեւերոսի ժամանացոյց պատիր և մոտի կասկած քաղաքական. զի թէև բազմութեան հաւատացելոց առաւելեալ էր յոյժ 'ի խաղաղութեանն յոր վայելեաց եկեղեցի ընդ տէրութեամբ Կոմոդոսի կայսեր։ Քանզի հրաշալի օրինակ վարուց և առաքինութեանց նոցա, միանգամայն և նշանք պանծալեացն գործեցելոց ընդ ձեռն քրիստոնէից, ձգէին 'ի հաւատս զբազմութիւն հեթանոսաց. զոր գեղեցիկս նկարագրէ մեծն Տերտուղիանոս 'ի գրեն առ հեթանոսս. „Մեք եմք, ասէ, որ լնումք զքաղաքս ձեր, զաւանս, զատեանս և զբանակս զօրաց, 'ի ձեզ թողեալ զմեհեանս եւեթ և զթատերս „։ Արդ այսպիսի յաջողութեամբ աճելով քրիստոնէութեան՝ հեթանոսական պաշտամանցն տէրութեան կային 'ի վտանգի կործանման. յորմէ զանգիտեալ Սեւերոսի՝ նորոգեաց զանգթութիւնն որով սմանք 'ի կայսերաց վարեցան ընդդէմ քրիստոնէից ։ Յամի տեառն 202 եհան հրովարտակ առ ամենայն հպատակս տէրութեան՝ խորշել 'ի հրէական և 'ի քրիստոնէական հաւատոց ․ որ պատճառ եղև սաստիկ և երկարատև հալածմանց ։

Նշանաւորքն 'ի վկայս այնր ժամանակի եղեն սուրբն Վիկտոր քահանայապետ Հռովմայ, Լեոնիդէս՝ հայրն Որոգինեայ, որ գլխատեցաւ յԱղեքսանդրիա քաղաքի, և այլք յոլովք ։ Զայնու ժամանակաւ Որոգինէս պատանի եօթնևտասն ամաց՝ օրինակաւ նահատակութեան հօր իւրոյ յորդորեալ մեծափափաք սիրով ժամանել պսակի մարտիրոսութեան, այն ինչ կամէր գնալ յանդիման լինել դահճացն և հալածչաց, մայր նորա խափան եղև նմա՝ թագուցանելով զհանդերձսն ․ թէպէտ և յետոյ յալիս ծերութեան իւրոյ՝ յաւուրս Դեկոսի կայսեր տարաւ անտանելի տանջանաց վասն հաւատոց, զորմէ ասասցուք զկնի ։

Հալածումն կարի սաստիկ եղև 'ի կողմանս Գաղղիոյ, մանաւանդ 'ի Լուգդուն քաղաքի, յորում տեսեալ կայսեր զբազմանալ թուոյ հաւատացելոց 'ի ձեռն ժրաջան վաստակոց քարոզութեան սրբոյն Իրենոսի, հրաման ետ զօրաց շրջապատել զքաղաքն և անխնայ կոտորել զորս միանգամ խոստովանեսցին զքրիստոնէութիւն ։ Կոտորածն եղև գրեթէ հասարակաց, և սուրբն Իրենոս կապանաւորեալ՝ ածաւ յանդիման կայսեր ․ հրաման ետ կայսրն սպանանել զնա, կարծելով ահ արկանել հօտին մահուամբ հովուին իւրեանց ։ Տևեաց հալածումն մինչև ցմահ Սեւերոսի, որ մեռաւ յԱնգղիա 'ի քաղաքին Եորք յամին 211, առ զայրոյթ դառնութեան որդւոյն, զի որդի նորա խնդրէր բառնալ զնա 'ի կենաց ։ Զկնի մահուան Սեւերոսի կալաւ զիշխանութիւնն որդի նորա Կարակաղղա ․ առ որով թէպէտ և տևէր հալածումն, այլ ոչ նովին սաստկութեամբ ։

ԳԼՈՒԽ Բ.

Խաղաղասիրութիւն Աղեքսանդրի Սեւերոսի ։

Ի ԹԱԳԱՒՈՐԵԼ Աղեքսանդրի յամի տեառն 222, միւսանգամ յաջողեցաւ քրիստոնէից կալ ՚ի խաղաղութեան. յորմէ պատճառս առին ոմանք ասել կարծեօք, թէ կայսրն Աղեքսանդր ՚ի ծածուկ պաշտէր զՔրիստոս. և թէ յօժարեալ իցէ կանգնել ՚ի Հռոմ տաճար յանուն նորա. սակայն ոչ ինչ հաւաստիք են ստուգութեան իրայն ։ Այլ որպէս թուի՝ հաճեալ էր նա յոյժ ընդ վարս քրիստոնէից, թէպէտ և անհաւան հաւատոց նոցա. ըստ որում յայտ արար ՚ի դէպս հակառակութեան և վիճի հեթանոսաց ը̅ քրիստոնէից. զի ունելով սոցա դատ ընդ հեթանոս գինեվաճառս Հռոմայ վասն տեղւոյն՝ ուր հաւատացեալք սովոր էին ժողովիլ ՚ի կատարել զպաշտամունս իւրեանց՝ Աղեքսանդրոս կայսր իրաւացուցեալ զբանս քրիստոնէից՝ արար վճիռ նըպաստաւոր նոցա, ասելով. „ Լաւագոյն ևս է սեպհականել զտեղին ՚ի պաշտօն Աստուծոյ՝ քան առնել զայն տուն գինեվաճառի „ ։ Յորմէ յայտ է, թէ Աղեքսանդր առաքինասէր գոլով ՚ի բնէ՝ յարգէր զքրիստոնեայս, գիտելով զվարս բարեպաշտութեան նոցա ։

Այս վճիռ թոյլտուութեան ազօթատեղւոյ քրիստոնէից՝ համարի հնագոյնն ՚ի յիշատակս վկայութեանց զոր ունին արևմտեայք յաղագս շինութեան եկեղեցեաց, յորս հաւատացեալք սկսան ակներև հեթանոսաց կատարել յայտնապէս զպաշտամունս Աստուծոյ. քանզի մինչև ցայնժամ ՚ի տունս իւրեանց ծածկապէս պաշտէին առ ահի հեթանոսաց ։

ԳԼՈՒԽ Գ.

Հալածումն առ Մաքսիմինոսիւ։

ԵԿԵՂԵՑԻՆ Քրիստոսի 'ի խաղաղութեան կայր ընդ ամս երեքտասան մինչև ցթագաւորել Մաքսիմինոսի կայսեր։ Սա ինքն առ ատելութեան և թշնամութեան ընդդէմ Աղեքսանդրի Սևերոսի, զի քաղցրութեամբ վարէր նա ընդ քրիստոնեայս, վրդովեաց զանդորրութիւն հաւատացելոց՝ յարուցանելով հալածանս յամի տեառն 235։

Անգութս այս բռնաւոր գիտելով եթէ եպիսկոպոսունք են առաւել նախանձաւորքն և խնամածուք 'ի ծաւալել զքրիստոնէութիւն, զատակնիք մահու եդ 'ի վերայ նոցա, սակայն հրամանն բռնաւորին անխտիր տարածեցաւ 'ի վերայ համօրէն հաւատացելոց. զի քահանայք և ժողովուրդք առ հասարակ զոհեցան կատաղի մոլեգնութեան իշխանաց և դատաւորաց ընդ ամենայն սահմանս տէրութեան։ Հալածումնն՝ կարի դառն և անբերելի եղև 'ի գաւառն յորս Մաքսիմինոս ինքնին առընթերակայ գոյր ժամանակս ինչ։ Եւ զի առ ագահութեան մանաւանդ անգթանայր 'ի կողոպտել զմեծատունսն, նմին իրի զհետ եղև հալածել զառաւել ճոխսն, որոց ինչք և ստացուածք գրաւեցան յարքունիս և բաշխեցան 'ի վարձս զօրականաց։

Յաւուրս սորա նահատակեցան Պոնտիանոս հայրապետն Հռոմայ՝ որ մեռաւ յաքսորս 'ի կղզին Սարդինեայ, որբուհին Սաղաւէ 'ի Նիկոմիդիա և այլք բազումք։ Սակայն Աստուած վրէժխնդիր եղև արեան ծառայից իւրոց չարաչար մահուամբ բռնաւորին, որ սպանաւ յամի տեառն 238։ Ոխքն հեթանոսաց 'ի ջնջել զուրբ հաւատս՝ պատճառք եղեն առաւելապէս աճմանն, ըստ նմանութեան ծառոյ՝ որոյ 'ի քշտիլ ոստոյն առաւել ևս պտղաբերէ։

ԳԼՈՒԽ Դ.

Հալածումն Դեկոսի կայսեր։

Ընդ միջոցս իբր մետասան ամաց առ կայսերութեամբ Գորդիանոսի և Փիլիպպոսի, եկեղեցին Քրիստոսի յանդորրաւէտ խաղաղութեան կեցեալ, որ քան զօր բազմանային որդիք նորա. սակայն ստիպեցաւ վերստին տանել բուռն հալածմանց յաւուրս կայսերութեանն Դեկոսի, որ ատելութեամբ ընդդէմ քրիստոնէից՝ ոչինչ ընդհատ գտաւ քան զՆերոն։ Կայսրն Փիլիպպոս իբրև սպանաւ 'ի զօրաց իւրոց 'ի Վերոնա քաղաքի յամի տեառն 249, Դեկոս ընկալաւ զգաւազան իշխանութեան, և զի գթառատն Փիլիպպոս քաղցրութեան ակամբ հայէր 'ի քրիստոնեայս, նմին հակառակ Դեկոս եդ 'ի մտի դառն տանջանօք նեղել և հալածել զնոսա։ Տագնապ անհանդուրժելի վշտաց հաւատացելոցն ընդ ամենայն սահմանս հռովմէական տէրութեան տևեաց զամիս ութետասան։

Սուրբն Փաբիանոս հայրապետ Հռոմայ եղև մին յառաջին նահատակաց որք պսակեցան վկայական մահուամբ 'ի Հռոմ։ Սուրբն Բաբելաս երեք աշակերտօքն նահատակեցաւ յԱնտիոք քաղաքի որոյ էր եպիսկոպոս։ Սուրբն Պօղիկտոս՝ մի յականաւոր իշխանաց փոքուն Հայոց՝ վկայեաց 'ի Մելիտինէ քաղաքի, ոչինչ մեղկացեալ յարտասուաց Պաւղինայի կողակցի իւրոյ, և ոչ 'ի թախանձանաց Փելիքսի աներոյ իւրոյ, կամակար մտօք ընծայեալ Քրիստոսի զանձն իւր, զպատիւ և զստացուածս ճոխութեան. և 'ի մնալ իւրում 'ի տանջանս մահու՝ յորդորէր զփրկելի բարեկամ իւր զՆէարխոս հետևել իւրումն օրինակի, ըստ որում և եղեն իսկ։ Ի Նիկիա բիւթանացւոց վկայեցին սուրբն Տրիփոն և Ռեսպիկիոս. 'ի Կատանիա Սիկիլեայ սրբուհին Ագաթա նահատակեցաւ արիական մահուամբ։ Նոյնպէս և յայլ բազում տեղիս. մինչև ըստ ասելոյ Նիկեփորոսի՝ դիւրագոյն է թուել զհատս աւազոյ ծովու, քան 'ի համար արկանել զորս միանգամ նահատակեցան վասն որ 'ի Քրիստոս հաւատոյն։

Ի բռնադատել զքրիստոնեայս յուրացութիւն ածող էր Դեկոս յերկարել զտանջանս վկայից առանց ողորմանելոյ · փակէին զնոսա ընդերկար 'ի խաւարչտին բանտի, և մերթ ընդ մերթ մատուցանէին 'ի փորձ տանջանաց, որով հաստատութիւն և արիութիւն վկայից պանծալի փառօք յաղթականք երևէին ։ Մեծահամբաւն Որոգինէս՝ հանճարով և իմաստութեամբ արժանապատիւ առ ամենեսին, նախանձելի ուսմամբն ատելի եղեալ հեթանոսաց, տարաւ ծանունց և անբերելի տանջանաց ։ Ծերունի պատկառելի վաթսունեօթն ամաց՝ ըմբռնեալ 'ի Կեսարիա Պաղեստինոյ արկաւ 'ի բանտ խաւարչտին և անհանդուրժելի ։ Դատաւորն զուն գործեաց տանջել զնա անողորմ՝ առանց ողորմանելոյ · ուր 'ի վիշտս ահաւորութեան բանտին յաւելան շղթայք երկաթիք 'ի պարանոցն, կապանք ցաւալիք և հրափորձութիւնք 'ի խախտել զնա 'ի քրիստոնէական հաւատոց, որում պաշտպան նախանձայոյզ էր և անդրդուելի ջատագով ։ Բայց ոչինչ կարացեալ առնել արիական հաստատութեան սրտի նորա, արձակեաց զնա 'ի բաց · որ և առանձնացեալ 'ի Տիւրոս քաղաք, յետ սակաւուց վախճանեաց զկեանս իւր ։

Նորէն կայսրն 'ի խախտել զհաստատութիւն քրիստոնէից՝ կամեցաւ վարել հնարիւքն զոր փորձեցին ոմանք 'ի նախնի կայսերաց · իբր զի կարծելով՝ եթէ հօտք զրկեալք 'ի խնամոց հովուի իւրեանց՝ դիւրաւ նուաճեսցին 'ի հնազանդութիւն, խորհեցաւ ջնջել և սպանել զամենայն եպիսկոպոսունս · վասն որոյ յետ սպանանելոյ զսուրբն Փաբիանոս հայրապետ Հռովմայ՝ արգել զընտրութիւն յաջորդի նորա, որով աթոռն մնաց 'ի պարապութեան ամ մի և աւելի, մինչև կղերոյ և ժողովրդեան պատեհ կալեալ զապստամբութիւնս և զպատերազմունս յորս զբաղեալ էր բռնաւորն, մարթացան ընտրել զսուրբն Կոռնելիոս ։

Ահարկու մրրիկ հալածանացս հանդարտեցաւ փոքր ինչ առ մօտալուտ վտանգի կործանման տէրութեան զոր սպառնային Գոթայք, սակայն ոչ դադարեցաւ մահուամբ Դեկոսի, որ բարձաւ 'ի կենաց յամի տեառն 251, այլ նովին սաստկութեամբ տևեաց և առ կայսերութեամբ Գաղղոսի և Վոլուսիանոսի յաջորդաց նորա՝ մինչև ցմահ նոցին, որք և սպանան 'ի զօրաց իւրեանց։

Յաւուրս կայսրութեան սոցա նահատակեցան 'ի Հռոմ սուրբ քահանայապետքն Կոռնելիոս և Լուկիոս, որպէս և սուրբն Հիպպողիտոս քահանայ։ Պատճառք հալածանաց որ առ կայսրութեամբ Գաղղոսի կարծին լինել կատարած ժանտամահուն, որ ընդ ամս երկոտասան անապատացոյց զմի մասն տէրութեանն․ զի հեթանոսաց տագնապեալ յահաւոր պատուհասէ անտի, խնդրէին զոհիւք և նուիրօք հաշտ առնել զաստուածս իւրեանց, և ստիպէին զքրիստոնեայս 'ի հաղորդակցութիւն պաշտամանն զոր մատուցանէին կռոց․ սակայն հաւատացեալքն Քրիստոսի երկիւղածք յԱստուծոյ և նախանձաւորք օգտի հասարակաց՝ հրաժարեալ 'ի հրապուրանաց նոցա, զգուշանային չգրգռել անօրէն գործովք զցասումն բարկութեան Արարչին Աստուծոյ, որոյ տեսչութեամբն է մատակարարութիւն բարեաց և չարեաց։

ԳԼՈՒԽ Ե․

Քրիստոնէից բազմաց գթել 'ի հաւատս առ մարդկային տկարութեան։

Ի ԺԱՄԱՆԱԿՍ հալածանաց Դեկոսի յոլովք 'ի հաւատացելոց յաղթահարեալք յերկարատև փորձոց, և առ ահի սպառնացեալ տանջանացն տկարացան 'ի հաւատս, մատուցանելով խունկս դրօշելոց, և հաղորդելով զոհեալ կերակրոց նոցա։

Ոմանք երկիւղիւ պաշարեալ փութային ինքնակամ յանդիման լինել ատենի դատաւորաց․ այլք բռնադատեալ յընտանեաց և 'ի բարեկամաց՝ խոնարհէին 'ի հնազանդութիւն անօրէն հրամանին։ Սակայն ըստ ասելոյ Եւսեբեայ՝ տեսիլ կերպարանաց նոցա վկայէր զսրտից թաղծութիւն և զտանջանս մտացն խղճի․ տրտմեալք, կորացեալք, գունատեալք, ամօթալիցք և նախատեալք 'ի հեթանոսաց, թուէր իմն գնալ նոցա առ կուռս՝ ոչ իբր 'ի մատուցումն զոհից, այլ իբր 'ի զոհաբերութիւն անձանց իւրեանց։ Ի հեգնել հեթանոսաց զտկարութիւն կնոցն և զխղճահար երկիւղ, այլք ոմանք յանդուգն համարձակութեամբ բարձրաբարբառ ուրանային չգիտել բնաւ թէ զինչ քրիստոնէութիւնն իցէ ։ Բազումք ուրացան զհաւատս 'ի բանտարկել իւրեանց . ոմանք ևս յետ արիութեամբ տանելոյ առաջին տանջանացն, տկարացան 'ի փորձ երկրորդին ։ Եղեն և եպիսկոպոսունք որք նոյին տկարութեամբ անկան 'ի հաւատոց, և յօրինակէ նոցուն գայթակղեցին յոլովք 'ի հօտէ իւրեանց ։

Արդ քանզի զթելոցն 'ի մարդկային տկարութենէ միակ դարման ապաշխարութիւնն էր, խնամ՝ կալան հոգեշահ առաջնորդք տանել զնոսա վերստին 'ի ծոց սուրբ եկեղեցւոյ ։ Որք միանգամ՝ 'ի գղերց և 'ի ժողովրդենէն արտաքուստ ցուցեալ էին նշանս հեթանոսութեան առանց կռապաշտելոյ, և փափաքէին անդրէն միանալ ընդ հաւատացելոցն, եդան նոցա մայրական գթով համապատշաճ ապաշխարութիւնք ։ Իսկ որք ուրացութեամբ պակասեալ էին 'ի հաւատոց՝ յերկուս դասս բաժանէին . ոմանք անուանէին Ազատագրեալք . որք 'ի ձեռն դրամոց ստացեալ ունէին 'ի դատաւորաց գիր յայտարարութեան, որպէս թէ զոհեալ իցեն կռոց ։ Սոքա չհամարէին ներքոյ անկեալ ծանր ապաշխարութեան, յոր սակս տուեալ լինէր նոցա 'ի վկայելոցն և 'ի խոստովանողաց գիր վկայութեան, որով աղերսէին զեպիսկոպոսունս ներողամիտ գթով շնորհել կամ նուազել զմասն ինչ 'ի պատժոցն որ անկ էին նոցա ։

Եւ քանզի բազումք 'ի խոստովանողաց սկսան չարաչար վարել ներողամտութեամբս՝ անխտիր շնորհելով ամենեցուն զվկայագիր իւրեանց, սուրբն Կիպրիանոս տեսեալ զանկարգութիւնն և զթուլութիւն բարեկարգութեան եկեղեցւոյ մուտ գտեալ 'ի նորաձև հաղորդակցութենէ անտի, առ խափանելոյ զայն՝ գրեաց սաստիկս առ գղերն Հռոմայ . միանգամայն ազդ արար և 'ի Կարթագենէ առ գղեր իւր՝ ոչ ումեք 'ի սահելոցն ներողամիտ լինել մինչև ցդարձ իւր . զի ինքն յայնժամ հեռի էր 'ի վիճակէ անտի իւրմէ, խոյս տուեալ 'ի հալածչացն, որք եպիսկոպոսաց մանաւանդ 'ի խնդիր էին քան սոսկական ժողովրդեան ։

ԳԼՈՒԽ Զ.

Հերձուած Փեղիկկիսսիմոսի.

ԻՐԱՒԱՑԻ *խստութիւն սրբոյն Կիպրիանոսի զայրացոյց զՓեղիկկիսսիմոս սարկաւագ Կարթագինոյ, որ ընդ այլոց հնգից ապստամբ երիցանց՝ Նովատոսի, Փորտունատոսի, Փեղիքսի, Յովլիանոսի և Մաքսիմոսի՝ յամին 251, հերձան 'ի հաղորդութենէ եպիսկոպոսին իւրեանց. և խրախուսեալ 'ի նախանձաւորութենէ և 'ի հոգւոյ վրէժխնդրութեան՝ միաբանեցին ընդ քրիստոնեայսն տկարացեալս 'ի հաւատս, և մեկուսացեալք 'ի գլուխ միոյ 'ի լերանցն հուպ 'ի Կարթագինէ արարին գաղտնի ժողով ընդդէմ սրբոյն Կիպրիանոսի. զոր լուեալ սրբոյն՝ առաքեաց առ նոսա զդատակնիք բանադրանաց.*

Ի դադարել հալածանացն խնամ կալաւ սուրբ եպիսկոպոսն գումարել ժողով 'ի Կարթագինէ 'ի խաղաղել զվէճ խռովութեանն սակս տկարացելոցն 'ի հաւատս, յորոց ոմանք խունկս մատուցեալ էին կռոց, և այլք ընկալեալ զգիրս յայտարարութեան 'ի դատաւորաց. Հարք ժողովոյն սահմանեցին՝ ներողամտութեամբ ընդունել զամենեսեան 'ի հաղորդակցութիւն ընդ եկեղեցւոյ, պայմանաւ՝ զի ապաշխարեալքն ընկալեալ լիցին անյապաղ 'ի միաբանութիւն, իսկ պաշտօնատարացն կռոց չլինել ընդունելի մինչև իցեն կատարեալ զարժանաւոր գործս ապաշխարութեան եդեալս 'ի վերայ նոցա. Քահանայք և երիցունք որք զոհեալ էին կռոց՝ անարժան դատեցան պաշտօնատարութեան Ճշմարտին Աստուծոյ, վասն որոյ կարգընկէց լեալք դասեցան ընդ աշխարհիկս. Ի նմին ժողովի նզովեցան Փեղիկկիսսիմոս և համախոհք նորա.

ԳԼՈՒԽ Է.

Առաքելութիւն ’ի Գաղղիա։

’ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ սրբոյն Իրենէոսի, զոր գրեցաք վերագոյն ’ի վէպս հալածմանց Սեւերոսի կայսեր, զօրացոյց և եւս զնախանձ աստուածպաշտութեան ’ի Գաղղիա։ Ժողովուրդ նորա պատրաստական և բարեյօժար յառաջ պտղաբերութիւն հոգևոր հնձոց, պէտս ունէր աւետարանական մշակաց. վասն որոյ առաքեցան ’ի Հռովմայ արք առաքելաշնորհք, ամբարձեալք յեպիսկոպոսութիւն՝ առանց որոշելոյ զվիճակ Թեմի նոցա՝ որոց երթեալ անդր իբրև քարոզք աւետարանին, եղեն նախկին եպիսկոպոսունք քաղաքացն, յորս եղև և վախճան կատարածի իւրեանց։

Գլխաւորքն ’ի նոցանէ էին եօթն, որոց անուանք են սուրբն Դիոնեսիոս եպիսկոպոս Փարիզ քաղաքի, սուրբն Տրոփիմոս Արլեատայ, սուրբն Պօղոս Նարբոնայ, սուրբն Սատուռնինոս Տոլոսայ, սուրբն Մարտիալէս Լիմոկեսեայ, սուրբն Աստրեմոնիոս Կլերմոնտեայ, սուրբն Գրատիանոս Տուրոնի։ Առաքելութիւն նոցա ’ի Գաղղիա թուի լեալ յաւուրս սրբոյն Փաբիանոսի Հռովմայ հայրապետի առ կայսերութեամբ Փիլիպպոսի, յորում ժամանակի ’ի խաղաղութեան վայելէր եկեղեցին Քրիստոսի։ Սուղեկից և վաստակակից սրբոցս գտան և այլ բազում պաշտօնեայք եկեղեցւոյ ’ի Հռովմայ, որք միաբան ջանութեամբ աստուածային նախանձու ’ի քարոզութիւն աւետարանին՝ արժանի եղեն պսակի պսակաց նահատակութեան։

Ի մէջ աստուածաշնորհ և առաքելաջան արանցս մեծապէս պայծառացաւ արդեամբք սուրբն Դիոնեսիոս, որ խնամ կալաւ զլոյս աւետարանին ծաւալել ’ի հեռաւոր գաւառս։ Սորա յիշատակ պատմութեան վարուցն և գործոց թէպէտ կարի՛ նուազ է, սակայն մարթ է աներկմիտ հաստատել, թէ կատարեցաւ նա յաղթանակաւ նահատակութեան՝ գլխատեալ երկոքումբք ընկերօքն, որոց մին էր քահանայ և միւսն սարկաւագ։

‘Նոյնպէս և սուրբն Սատուրնինոս՝ ականաւորն յընկերս սրբոյն Դիոնեսիոսի ընկալաւ զպսակ նահատակութեան 'ի Տոլոսա ։ Զի քուրմք հեթանոսաց զչարեալք ընդ յաջողութիւն քարոզութեան նորա, շարժեցին զամբոխ ժողովրդեանն ընդդէմ սրբոյն, և յետ չարաչար հարուածոց գանից կապեցին յագի կատաղի ցլու, որով ընդ քարշ ածեալ յօշոտեցաւ յամին 257 ։

Զայսու ժամանակաւ աւանդի հիմնարկութիւն զանազան եկեղեցեաց 'ի սահմանս Գաղղիոյ, որոց նախկին առաքեալք՝ թէպէտ և յանուանէ չիցեն մեզ յայտնիք, սակայն ճանաչին յաւանդութենէ՝ եթէ քրտունք աշխատութեան նոցա չեղեն անպտուղք · քանզի 'ի միջոցի այսր երրորդ դարու ծաւալեալ լուսոյ աւետարանին, ըստ մասին փարատեալ էր յաշխարհէ անտի խաւար հեթանոսութեան ։

ԳԼՈՒԽ Ը·

Հերձուած Նովատիանոսի, և յաջորդութիւնք քահանայապետաց Հռովմայ ։

Ի ԺԱՄԱՆԱԿԻՆ յորում առաքելաշնորհ քարոզիչք հիմնարկու լինէին եկեղեցեացն Գաղղիոյ, աթոռն Հռովմայ վրդովէր 'ի դժպատեհ դիպուածոց ։ Զի յետ սրբոյն Սիկտոսի կալաւ զաթոռ քահանայապետութեան Զեփիւռինոս զամս քսան · յետ նորա Կալիստոս Ա, զամս հինգ · ապա Ուրբանոս Ա, զամս եօթն, յետոյ Պոնտիանոս զամս հինգ · զկնի նորա Անտերոս զամ մի, և ապա Փաբիանոս զամս չորեքտասան ։ Ամենեքին սոքա արք ականաւորք առաքինական վարուք՝ միմեանց զկնի կալան զաթոռ սրբոյն Պետրոսի ։

Եկեղեցի հաւատացելոց տագնապեալ 'ի հալածանաց Դեկոսի կայսեր, յետ մահուան սրբոյն Փաբիանոսի զրկեցաւ յընդհանուր հովուապետէ իբր ընդ ամս երկուս, յորում ժամանակի ‘Նովատիանոս երէց՝ այր ճարտարախօս և անհանդարտ բարուք՝ 'ի ձեռն զանազան հնարից հետամուտ եղև կորզել յինքն զաթոռ քահանայապետութեան · սակայն 'ի դերև ելեալ ակնկալութեան նորա, յամի տեառն 251 ընտրեցաւ յայն պատիւ Կոռնելիոս երէց եկեղեցւոյն Հռոմայ.

Յաստուցեալ՝ Նովատիանոսի՝ զի ոչ կարաց ՚ի ձեռս բերել զայն պատիւ պաշտաման, որում մեծապէս փափաքէր, և միաբանեալ ընդ իւր զՆովատոս՝ յանդգնեցաւ ձեռնադրիլ եպիսկոպոս Հռոմայ յերից տգէտ և ՚ի վարձկան եպիսկոպոսաց զորս նենգութեամբ յինքն յանկուցեալ էր. Յանկանոն ձեռնադրութենէ անտի ծագեցաւ հերձուած գայթակղական. յորմէ Նովատիանոս անց ապա ՚ի հերետիկոսութիւն՝ ուսուցանելով թէ եկեղեցին չունի իշխանութիւն թողլոյ զմեղս ծանունս, որպիսի է ուրացութիւն հաւատոյ. Անարժան և պարսաւելի համարէր զերկրորդ ամուսնութիւն, և վերստին մկրտէր զմիանգամ մկրտեալսն յեկեղեցւոջ. Բազմապատիկ ժողովք գումարեցան Հռոմայ և Ափրիկոյ արարին նզովս և բանադրանս ընդդէմ Նովատիանոսի և հետևողաց նորա, այլ ոչ կարացին յուղղութիւն ածել. զի աղանդ նորա և թիւր վարդապետութիւնք երևէին մինչև ՚ի հինգերորդ դար եկեղեցւոյ.

Զկնի Կոռնելիոսի որ կալաւ զաթոռ քահանայապետութեան զամս երկուս, ընտրեցաւ Լուկիոս իբր զամ մի, ապա սուրբն Ստեփանոս Ա. զամս երիս, յետոյ սուրբն Քսիստոս Ա. իբր զամ մի. զկնի Դիոնեսիոս զամս չորեքտասան. ապա Փելիքս Ա. զամս հինգ. յետ նորա Եւտիքիանոս զամս ութ, և զկնի Կայիոս զամս երկոտասան, որք նստան յաթոռ քահանայապետութեան յայսմ դարու, և ամենեքին առ հասարակ վկայական մահուամբ փոխեցան յաստեացս.

ԳԼՈՒԽ Թ.

Հակառակութիւն ՚ի վերայ մկրտութեան հերետիկոսաց. և վէճ յուզեալ ընդ սուրբն Ստեփաննոս Հռոմայ հայրապետ, և ընդ սուրբն Կիպրիանոս։

ԽՆԴԻՐ հակառակութեան որ սկսաւ յուզիլ ՚ի սկզբան հերձուածոյ Նովատիանոսի՝ ոչ սակաւ նպաստամատոյց եղև զօրանալոյ համամիտ կուսակցացն եղելոց յԱփրիկէ, ուր կարծիք էին եթէ ՚ի դառնալ հերետիկոսաց ՚ի մոլորութենէ և ՚ի միանալ ընդ եկեղեցւոյ՝ պարտ իցէ վերստին մկրտել զնոսա. որպէս և սուրբն Կիպրիանոս ՚ի նոյն միտս հաստատեալ՝ պնդէր զկարևորութիւն կրկնութեանն։ Միանգամայն և ՚ի զօրացուցանել զիւր կարծիս հակառակ մտաց սրբոյն Ստեփաննոսի, յամի տեառն 252 և 253 գումարեաց ՚ի Կարթագինէ երկուս ժողովս, որք սահմանեցին համաձայն կարծեաց նորա։

Սահմանք ժողովոցս յուղարկեցան ՚ի Հռովմ ընդ ձեռն գործակալաց. սակայն սուրբն Ստեփաննոս հաստատեալ յառաքելական աւանդութիւնս՝ չկամեցաւ ոչ միայն լսել, այլ և տեսանել անգամ զգործակալսն, և արգել իսկ հաւատացելոց չընդունել զնոսին և ՚ի տունս իւրեանց։ Ապա գրեաց առ սուրբն Կիպրիանոս և առ կուսակից նորին եպիսկոպոսունս նամակ ազդու և զօրաւոր, որով արգելոյր յայտնապէս չհետևել կարծեաց որ հակառակն է աւանդութեան հռովմէական եկեղեցւոյ և առաքելական աւանդից։ Այս նամակ սրբոյն Ստեփաննոսի կարի խիստ և ծանր թուեցաւ արևելեան եպիսկոպոսաց. վասն որոյ դիւրին եղև սրբոյն Կիպրիանոսի ձգել զնոսին յիւր կողմն, և յամի տեառն 256 գումարեալ ՚ի Կարթագինէ զերրորդ ժողով՝ խօսեցաւ ճառ վայելչահիւս պերճ և ճարտար բանիւք, որով հաւանեցոյց զամենայն հարս ժողովոյն միաձայն մերժել զմկրտութիւն հերետիկոսաց՝ իբր անօգուտ փրկութեան։

Սուրբն Կիպրիանոս ՚ի հաստատելն զիւր կարծիս՝ թուի թէ համարէր զայն խնդիր իբր մասն եկեղեցական բարեկարգութեանց, զոր իւրաքանչիւր հովիւ կարող իցէ առնել յիւրում վիճակի որպէս և զիարդ պէտք իւրայն պահանջեսցեն. նմին իրի յերկարեցաւ վէճն ընդ սմա բազում մինչև ցորոշումն առաջին ժողովոյն Նիկիոյ յամին 325, յորում արգելաւ կրկին մկրտութիւն:

Սուրբն Ստեփաննոս Հռովմայ հայրապետ կատարեցաւ նահատակութեամբ յամի տեառն 257 առանց ընդունելոյ զաւետիս միաբանութեան դարձի սրբոյն Կիպրիանոսի 'ի վերայ կարծեացն: Զի 'ի նմին ամի առաքեցաւ յաքսորս և սուրբն Կիպրիանոս, որ և 'ի յաջորդ ամի պսակեցաւ վկայական մահուամբ յաւուրս Վաղերիանոսի կայսեր:

Սուրբն Կիպրիանոս հաւաքաւոր է յամենայն եկեղեցիս քրիստոնէից իբրև զմի յիմաստուն վարդապետաց և 'ի պայծառափայլ մարտիրոսաց կաթողիկէ եկեղեցւոյ, որում անընդհատ գտաւ ջատագով պերճ և ազդու ճարտարխօսութեամբն: Ի չարախօսէն Դեմետրիանոսի դատաւորին Կարթագինոյ զքրիստոնէից, որպէս թէ նոքա իցեն պատճառք հասարակաց թշուառութեան և ձախորդութեան, սուրբ վարդապետն պատասխանի առնէ 'ի միում 'ի ճառիցն՝ ցրելով զզրպարտութիւն նորա, յաւելու, թէ Աստուած 'ի վրէժ արեան ծառայից իւրոց անմեղաց պատուհասէ զտէրութիւնն բազմադիմի վշտօք, թէ և հաղորդակիցք գոցեն աղետիցն և անմեղք: Ընդ որ տարադէպ արկածք կենցաղոյս պատուհասք են այնոցիկ՝ որք 'ի զբօսանս և 'ի վայելս աշխարհիս եդեալ իցեն զկուրեանց մխիթարութիւն. իսկ առ մեզ ոչինչ ազդեն թշուառութիւնք, և ոչ կորուստք կամ խօթութիւնք և ցաւք զօրեն ձգել զմեզ 'ի տրտունջ: Կեամք մեք յաւէտ հոգւով քան մարմնով, գիտելով՝ եթէ բովք մաքրութեան են մեզ, զորս դուք տանջանս համարիք: Անհամբերութիւնն տագնապէ զձեզ ցաւովք և հեծութեամբ, ուր մեք զինեալ սուրբ և արիական ժուժկալութեամբ՝ կամք անխռով և շնորհապարտ առ Աստուած: Ոչ որ 'ի մէնջ խնդրէ զաստեացս մխիթարութիւն կամ զյաջողութիւն, այլ մնամք անդորր և անսասան 'ի կենցաղական վիշտս, ակն կալեալ այցելութեան յաստուածային խոստմանց: Ի մեր ամրութիւն հաւատոյ, հաստատութիւն յուսոյ, անդորրութիւն սրտի 'ի վիշտս, արիական քաջութիւն մտադիւր տանելոյ հալածմանց, և անխռով տոկալոյ։

ԳԼՈՒԽ Ժ.

Հալածումն Վաղերիանոսի կայսեր։

ԶԱՅՍՈՒ ժամանակաւ յարեաւ հալածումն 'ի վերայ հաւատացելոց 'ի Վաղերիանոս կայսերէ, որ 'ի սկզբան թագաւորութեան իւրոյ՝ յամին 254 այնչափ բարեսէր գտաւ առ քրիստոնեայս, մինչև ըստ ասելոյ Եւսեբեայ՝ բազումք 'ի նոցանէ կային յարքունիս և համարձակ պաշտէին զՔրիստոս։ Ոչ ոք 'ի նախորդաց իւրոց եցոյց երբեք զայնպիսի քաղցրութիւն սրտի և բարերարութեան, որպիսում ինքն եղև գործադիր. սակայն այնպիսի որ իշխան գթասիրտ՝ 'ի չարամիտ թելադրութենէ ոսոխաց քրիստոնէութեան՝ եկաց ապա մի յանողորմ՝ և 'ի դառն հալածչաց եկեղեցւոյ։ Զի խարեբայ ոմն եգիպտացի Մակրիանոս անուն՝ մոգութեան անձնատուր՝ հաւանեցոյց զնա, թէ 'ի վերածել զկայսերութիւնն յառաջին վիճակ պայծառութեան՝ հարկ է կանգնել և կազդուրել զնախնի պաշտամունսն, և անհետ առնել զնորսն։ Զաղէտս անօրէնութեան յերեսաց ժանտամահու, և զխուժն յարձակումն բարբարոսաց, պատճառս էառ Մակրիանոս մոգ բռնադատել զտկարութիւն կայսերն տանելոյ 'ի թախծութենէ սրտին, և 'ի խղճէ անտի սնոտի պաշտամանց յորս յօժարեալն էր 'ի բնէ։ Սկիզբն արար ժանտութեան ընդդէմ հաւատացելոց, ոչ խնայելով 'ի հասակ և 'ի վիճակ, յայր և 'ի կին. ազնուականք գանակոծ և բրածեծ լինէին իբրև զգերիս ըստ կամս անգութ դատաւորաց, գահիճք անողորմք հատանէին զգլուխս նահատակաց և զմարմինս այրէին բոցով։

Ի բազմաթիւ վկայից անտի որք ընկալան զպսակս յաղթութեան, երևելիք եղեն սուրբն Կիպրիանոս եպիսկոպոս ընդ Յուստինեայ կուսի, որպէս և քահանայապետ Հռոմայ՝ սուրբն Ստեփանոս, և յաջորդ նորին սուրբն Սիքստոս, որոյ սարկաւագ էր սուրբն

Լաւրենտիոս գանձապետ եկեղեցւոյն Հռովմայ, որ կատարեաց զընթացս բազմարդիւն պաշտաման իւրոյ խորովեալ 'ի վերայ կասկարայի, զի անհնար եղև քաղաքապետին Հռովմայ իմանալ 'ի նմանէ զտեղի գանձուն աղքատաց։ Արժանի յիշատակաց են և երեքհարիւր վկայքն 'ի Մասսա Կանտիտա, որոց ոչ կամելով մատուցանել խունկս դրօշելոց՝ կամակար ընկեցին զանձինս 'ի գուբ կրալից պատրաստեալ 'ի տանջանս նահատակաց, ուր և հեղձան 'ի ծխոյ և 'ի հրակէզ բոցոյ։

Տևեաց հալածումն յ257 ամէ մինչև ց260, յորում ամի Վաղերիանոս պատուհասեցաւ յԱստուծոյ վասն անպարտ արեան ծառայից նորա. զի անկեալ 'ի ձեռս Շապհոյ Պարսից արքայի՝ կենդանւոյն մորթեզերծ եղև, և զմորթ նորին կազմեցին ծածկոյթ աթոռոյ նորա։ Ընդ այն ժամանակս սահմանք կայսերութեան առ հասարակ մատնեցան 'ի փորձ անհնարին տանջանաց, որովք մարթ էր հեթանոսաց սթափիլ և գալ 'ի զգաստութիւն. քանզի ցաւ մահաբեր՝ սաստիկ և երկարատև սկսեալ յամէ 252, 'ի սահմանացն Եթովպիոյ տարածեալ ընդ ամենայն գաւառս տէրութեան արար կոտորած անխնայ։ Այս 'ի դադարիլ այնր հարուածոյ՝ և ահա երևեցան 'ի ծագաց հիւսիսոյ անհամար զօրք և ամբոխ բարբարոս ազգաց, որոց զեղեալ 'ի շէն և 'ի բարեբեր գաւառս տապաստակեցին յամենայն տեղիս, և եղեն պատճառ փառանջելոյ բազմաց. որով 'ի յաճախելոյ բռնակալաց կործանեցաւ տահռովմէականն պետութիւն։

Յայսմ ժամանակի Գոթացիք և Սկիւթացիք յարձակեցան 'ի գաւառս Լիւրիկիոյ, Թրակիոյ և Ասիոյ՝ յետ կողոպտելոյ զերկիրն, վարեցին 'ի գերութիւն զյոլովս 'ի բնակչացն յորս գտան և առաքինազարդ քահանայք, զորս սահմանեալ էր Աստուծոյ 'ի քարոզութիւն աւետարանին հեթանոս ժողովրդեանն այնմիկ. զի մեծարոյ պաշտօնեայքն Աստուծոյ անաղարտ վարուք իւրեանց և զուարթամիտ համբերութեամբն շահեցան զսիրտս գերչացն, մինչև յորդորեալ 'ի պատկառելի օրինակէ պաշտօնէից քրիստոնեական հաւատոյ, յօժարեցան ընդունել զկրօնս սրբութեան, և մկրտեցան բազմաթիւ անձինք։ Սակայն և այնպէս լոյս քրիստոսական կրօնիցս ոչ 'ի սպառ փարատեաց զխաւար հեթանոսութեան, և զկռապաշտութիւն բռնանայր անդ դեռ ևս ընդ երկար ժամանակս. որով 'ի հեթանոս ազգայն այնոցիկ ստացաւ եկեղեցի բազում վկայս որք կատարեցան վասն ճշմարտութեան հաւատոյ։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Հալածումն առ Աւրելիանոսիւ։

Յետ գերութեան Վաղերիանոսի թագաւորեալ Գաղղիենոս որդի նորա 'յամի տեառն 260, դադարեցոյց զհալածումն, տուեալ հրովարտակ՝ զի վերստին դարձուսցեն 'ի քրիստոնեայս աղօթատեղիքն զորս հեթանոսք յափշտակեալ էին 'ի նոցունց. սակայն այս հանդարտութիւն եկեղեցւոյ կարի սակաւատև եղև։ Զի յետ իբր տասն ամաց ընկալաւ զիշխանութիւն Աւրելիանոս, որ 'ի սկզբան գահակալութեան իւրոյ աննախանձ էր ընդ յառաջադիմութիւն քրիստոնէութեան, միօրինակ և անխտիր արդարադատ առ հաւատացեալս՝ որպէս առ այլս 'ի հպատակաց տէրութեան իւրոյ։ Յաւուրս սորա Պօղոս Սամոստացի եպիսկոպոս Անտիոքայ 'ի պատճառս մոլորութեանց իւրոց ընկեցեալ յաթոռոյ, 'ի կամակորելն և 'ի խստանալ չմեկնել յեպիսկոպոսարանէ անտի, այլ եպիսկոպոսունք դիմեցին առ կայսրն՝ խնդրելով զհրաման իշխանութեան նորա 'ի գործադրութիւն խնդրոյ իւրեանց։ Յայնժամ Աւրելիանոսի անսացեալ արդարահայց խնդրուածոյ նոցա, հրամայեաց զի եպիսկոպոսարանն տացի այնմ որ յեպիսկոպոսացն Իտալիոյ և 'ի Հռոմայ հայրապետէն արժանաւոր ծանուցեալ իցէ։

Բարեսէր խնամք Աւրելիանոսի 'ի վերայ հաւատացելոց չեղեն մշտատևք, զի մօտ 'ի վախճան թագաւորութեան իւրոյ թուլացաւ 'ի բարեսրտութենէն. և թէպէտ չեհան յայտնի հրովարտակ ընդդէմ քրիստոնէից, սակայն ըստ աւանդելոյ եկեղեցական մատենագրի ուրուք՝ 'ի կամիլ Աւրելիանոսի ձեռնագրել հրամանաց ինչ ընդդէմ հաւատացելոց, յանկարծահաս ցաւով բարձաւ 'ի կենաց յամի տեառն 275։

Յաւուրս կայսերութեան սորա նահատակեցաւ 'ի Հռոմ սուրբ քահանայապետն Փելիքս. 'ի Կեսարիա Կապադովկացւոց սուրբն Մամաս. 'ի Սէնս քաղաք սրբուհին Կոլումբիա և սուրբն Սաբինիանոս առաջին եպիսկոպոս այնր քաղաքի.

ԳԼՈՒԽ ԺԲ.

Հալածումն 'ի ժամանակս Դիոկղետիանոսի, Մաքսիմիանոսի և Գաղերիոսի.

ԱՌՆԱՒՈՐԱԿԱՆ *սովորութիւնն հալածելոյ զանմեղ քրիստոնեայս առանց ինչ նախընթաց յայտարարութեան արքունի հրամանաց, եկաց անխափան և յաւուրս Դիոկղետիանոսի. Սա ինքն զառաջինն մինչև առեալ իւր գահակից զՄաքսիմիանոս Հերկուլէս կամ Հերակլէս, չեցոյց զատելութիւն ընդդէմ քրիստոնէից. այլ իբրև անուանեաց զնա իւր աթոռակից, և ետ զպատիւ կայսերութեան Կոստանդեայ Քղորոսի, և Գաղերիոսի, քրիստոնեայք առ հասարակ անկան 'ի տագնապս մեծաց յանգթութենէ անտի երկոցունց բռնաւորացն Մաքսիմիանոսի և Գաղերիոսի.*

Մրրիկ հալածմանցս որ սկսաւ յամի տեառն 286, թեթև էր զառաջինն առ սաստկութեան յետին ամացն. սակայն և այնպէս 'ի գլխաւոր քաղաքս արևմտեան կողմանց բազում արք ականաւորք կատարեցան վկայական մահուամբ. Ի Հռոմ նահատակեցան սուրբն Գենեսիոս դերասան. սուրբքն Մարկոս, Մարկեղինոս, Պրիմոս, Փելիկիանոս և Սեբաստիանոս. Ի Փարիզ քաղաքի սուրբն Դիոնեսիոս առաջին եպիսկոպոս նորա հանդերձ երկոքումբք ընկերօքն Ռուստիկոսիւ և Ելևթերիոսիւ. որպէս և այլք յոգունք 'ի զանազան տեղիս. Սակայն թիւ վկայից կարի սակաւ է առ բազմութեամբ նահատակելոցն յետ ամին 303, յորում ել բուռն հրովարտակ հալածելոյ զքրիստոնեայս. Այլ քանզի 'ի չորրորդումն դարու պատահեցին իրքս, անդ զվէպս նոյին կարգեսցուք, շատ համարեալ աստէն զհամառօտ զայս յիշատակութիւն.

ԳԼՈՒԽ ԺԳ.

Այցելութիւն Աստուծոյ առ ազգս Հայոց.

ՊԱՐԳԵՒ լուսաւորութեան աւետարանին շնորհեալ ազգիս յաւուրս թագաւորութեան որդւոյն Աբգարու 'ի ձեռն քարոզութեան առաքելոցն Թադէոսի և Բարթողիմէոսի, աղօտացաւ 'ի զօրանալ վերստին հեթանոսական իշխանութեան յաջորդացն Սանատրկոյ արքայի. որով հալածեալքն 'ի Քրիստոս արգելեալք 'ի հրապարակական պաշտամանց, ծածկեցան 'ի թագուն վայրս առ ահի խստութեան դիցապաշտ թագաւորաց Հայոց, որք ըստ օրինակի Պարսից և Հռովմայեցւոց թշնամիք էին քրիստոնէութեան, մինչև Խոսրովու արքայի հօրն Տրդատայ յամին 214, կալանաւորել զհաւատացեալսն և անխնայ վարել 'ի գործ արքունի ծառայութեան, և զբազումս 'ի նոցանէ սպանանել վասն 'ի Քրիստոս հաւատոյն։ Այլ քանզի հասեալ էր ժամանակ այցելութեան Աստուծոյ 'ի վերայ ազգիս, արիւնք նահատակացն 'ի մշակեալ անդաստանս սուրբ առաքելոցն՝ պատրաստեցին մեզ լուսաւորիչ զսուրբն, Գրիգոր որոյ յղութիւնն աւանդի լեալ յԱրտազ գաւառի առ տապանաւ սրբոյն Թադէի, իսկ ծնունդն 'ի Վաղարշապատ քաղաքի՝ յամին, 257 ընծայեալ իբր ծաղիկ վարդի 'ի փշաբեր մորոց, որ բուրեաց յաշխարհս մեր զանուշահոտութիւնն Քրիստոսի։

Հայր նորա էր հեթանոս Անակ անուն՝ իշխան պարթևացն 'ի ցեղէ Պահլաւունեաց. որ 'ի թելադրութենէ Արտաշրի Պարսից արքայի եկեալ էր 'ի Հայաստան սպանանել զԽոսրով թագաւոր Հայոց։ Նա իբրև 'ի գլուխ եհան զգործ սպանութեանն, ոչ կարացեալ փախստեամբ զերծանել, պաշարեցաւ 'ի զօրացն Հայոց, և հեղձաւ 'ի գետն Երասխ. իսկ ընտանիք նորա և որդիք կոտորեցան սրով, բայց 'ի միոյն. որ հանդերձեալ էր լինել լուսաւորիչ ազգիս. զի սնոտու նորա Սոփիա անուն հաւատով քրիստոնեայ՝ զերծոյց զմանուկն և տարաւ 'ի Կեսարիա, ուր մկրտեալ՝ կոչեցին զանուն նորա Գրիգոր։ Անդ 'ի Կեսարիա առ դայեկի իւրում մնաւ 'ի վարս բարեպաշտութեան մինչև ցհասակ ութևտասան ամաց. և ապա ամուսնացեալ ծնաւ երկուս որդիս, զՎրթանէս և զԱրիստակէս, զորոց ասասցուք 'ի յաջորդ դարու:

Ի սպանանել Անակայ զԽոսրով արքայ զօրացաւ Արտաշիր թագաւոր Պարսից, և տիրեաց աշխարհին Հայոց. ուր 'ի կոտորելն զտոհմն Խոսրովու՝ մի ոմն 'ի նախարարաց Հայոց առեալ զմին յորդւոց նորա Տըրդատ անուն զերծոյց 'ի Կեսարիա, և անդ սնուցեալ զնա՝ տարաւ 'ի Հռովմ քաղաք. ուր եկաց Տրդատ 'ի դրան կայսեր ընդ ձեռամբ Լիկիանեայ իշխանի մինչև ցամն տեառն 286: Նոյնպէս և այլ ոմն նախարար Օտայ անուն զերծուցեալ զդուստր Խոսրովու զԽոսրովիդուխտ՝ տարաւ յամուրն Անի, և անդ սնոյց զնա 'ի ծածուկ:

Յայնմ ժամանակի մինչդեռ Տրդատ 'ի Հռովմ կայր, Գրիգոր՝ զոր պատրաստեալ էր Աստուած 'ի լուսաւորութիւն ազգիս, լուեալ զանցս պատմութեան հօր իւրոյ Անակայ, և զանիրաւ սպանութիւն Խոսրովու արքայի, հետաքննին եղև իմանալ թէ ուր գտանիցի որդի նորա Տրդատ, եդեալ 'ի մտի կամակար գնալ առ նա, և մտանել 'ի ծառայութիւն 'ի փոխարէն վնասու հօր իւրոյ՝ սպանութեամբն Խոսրովու: Իսկ իմացեալ եթէ Տրդատ արքայորդի 'ի Հռովմ կայ, գնաց անդր յանծանօթս, և եղև նմին սպասաւոր:

Արդ առ ժամանակօք Դիոկղետիանոսի կայսեր 'ի ցուցանել Տրդատայ զքաջութիւն մենամարտութեան ընդ Հռչէի արքային Գոթաց, փառաւորեալ 'ի կայսերէ ընկալաւ զթագ արքայութեան հօր իւրոյ, և առեալ զզօրս 'ի Հռովմայեցւոց եկն 'ի Հայաստան յամի տեառն 286: Հասեալ Տրդատայ յԵկեղեաց գաւառ կամեցաւ մատուցանել անդ զոհս գոհութեան աստուածուհւոյն Անահտայ, և 'ի հրաւիրելն զԳրիգոր ընծայատար լինել դրօշելոյն՝ չէառ նա յանձն, ծանուցանելով զքրիստոնէութիւն իւր զոր ցայն վայր 'ի ծածուկ պաշտէր: Վասն որոյ բարկացեալ Տրդատայ, յետ բազմադիմի հրապուրանաց և սպառնալեաց ետ զնա յերկոտասան ազգս դառն տանջանաց. և իմացեալ՝ եթէ Գրիգոր որդի է Անակայ սպանողի հօր իւրոյ, հրամայեաց տանել զնա յԱրտաշատ քաղաք, ուր կայր վիրապ խոր, և ընկենուլ զնա անդ, ուր եկաց աւուրս զամս իբր հնգետասան՝ խնամօքն Աստուծոյ կերակրեալ 'ի ձեռն բարեպաշտ կնոջ միոյ։ Իսկ 'ի վիրապի անդ իբր 'ի դըպրոցի Հոգւոյն սրբոյ՝ վարժեալ 'ի հրահանգս քարոզութեան աւետարանին, պատրաստեցաւ լինել լուսաւորիչ ազգիս 'ի սկիզբն չորրորդ դարու, ըստ որում ունիմք կարգել անդանօր։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Նահատակութիւն սրբոց Հռիփսիմեանց։

ԸՆԴ ժամանակին ընդ այնոսիկ կայսրն Դիոկղետիանոս կամեցեալ առնել զօրինակ մի կնութեան՝ վասն որոյ արձակեաց նկարիչս ընդ ամենայն սահմանս տէրութեն իւրոյ յուղել զօրինակ որ ազնուական և գեղեցկատեսիլ։ Իսկ յայնժամ 'ի Հռոմ քաղաքի արգելավանք մի որ անէր կուսանաց ընդ խնամատուն տեսչութեամբ Գայիանեայ աբբայուհւոյ, յորս էր և սանն իւր Հռիփսիմէ յազգէ թագաւորացն Հռոմայեցւոց, գեղով գեղեցիկ և վայելչութեամբ զարմանալի. ընդ որ սխրացեալ նկարչաց հատուցին վաղվաղակի զդէմն յանձն արքայի։

Զայն իմացեալ երանելոյն Գայիանեայ էառ զՀռիփսիմէ և զեօթանասուն և հինգ ընկերս նորա և փախեաւ յԵգիպտոս, և անտի յԵրուսաղէմ յերկրպագութիւն անօրինական տեղեացն Քրիստոսի։ Անդ 'ի Գեթսեմանի յանձն արարեալ զՀռիփսիմէ 'ի հզօր պաշտպանութիւն սրբոյ Կուսին՝ անցին յԵդեսիա և երկրպագեցին փրկչական պատկերին. և բազում տառապանօք հասեալ 'ի Աղտունեաց գաւառ, երթեալ բնակեցան 'ի հնձանայարկս Վաղարշապատ քաղաքի։

Լուեալ Տրդատայ արքայի զգալուստ նոցա, և իմացեալ ևս յազդագրութենէ Դիոկղետիանոսի զՀռիփսիմեայ և զգեղեցկութենէ նորա՝ պատուէր ետ զօրաց պաշարել զտեղին, և բռնի առնել զկոյսն առ ինքն. քանզի կամէր առնուլ զնա իւր կնութեան։ Սակայն 'ի չհաւանիլ սրբուհւոյն անսալ կամացն Տրդատայ, ետ կոչել զհօզեր խնամածու նորին զսուրբն Գայիանէ, յորդորել զնա ՚ի հաճել զկամս իւր․ բայց նորա ընդ հակառակս բանից Տրդատայ սկսաւ քաջալերել զսրբուհին կալ հաստատուն ՚ի կրօնս աստուածպաշտութեան, և անարատ պահել զնուէր կուսութեան իւրոյ առ Աստուած, արհամարհելով զամենայն կեանս աշխարհիս։ Զայն տեսեալ Տրդատայ արքայի, և յուսահատ լեալ ՚ի զանագլուան լինելոյ, հրամայեաց դառն տանջանօք սպանանել զսրբուհին Հռիփսիմէ։ Սա որոյ հատին զլեզուն, և բոցով հրոյ խորովեալ՝ անդամ անդամ յօշեցին զմարմինն։ Ապա կոտորեցին և զընկերս նորա ոգիս երեսուն և երեք։ Նոյնպէս և զսուրբն Գայիանէ, հանդերձ երկու ընկերօքն յետ բազմօրինակ տանջանաց սպանին սրով՝ հատեալ զգլուխս նոցա։

Նահատակութիւն սրբոց կուսանացս եղև յամի տեառն 301, սակաւ աւուրբք յառաջ քան զելս սրբոյն Գրիգորի ՚ի խոր վիրապէն, որ և առեալ ամփոփեաց զսուրբ ոսկերս նոցա յառանձին վկայարանս, ըստորում՝ նշանակեսցուք ՚ի յաջորդ դարու։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Եկեղեցական մատենագիրք։

ԶՈՐՕՐԻՆԱԿ մարտիրոսք վկայական մահուամբ իւրեանց հաստատեցին զեկեղեցին Քրիստոսի, նոյնպէս և վարդապետք գրաւոր արդեամբք եղեն խնամարկուք պայծառութեան նորա։ Ի բազմաց անտի նշանակեսցուք զանոնս։

Աթենոդորոս՝ որ էր մի ՚ի վարժապետացն Որոգինեայ, առաքինաւէտ վարուքն զասու արժանապատիւ և առ հեթանոսս։ Սա ինքն ըստ օրինակի Եբրայեցւոց՝ որք ՚ի զուրդ վայելչութեան աստուածայնակին Աստուծոյ վարեցին զպատուական աթոռն Նէոկեսարացւոց, խնամ կալու զերբել և ՚ի կիր առնուլ զսկզբունս պղատոնական փիլիսոփայութեան ՚ի ջատագովութիւն քրիստոնէական կրօնի։ Արար և զհամաբարբառս չորեցունց աւետարանագիր պատմութեանց, զոր մեծապէս գովէ սուրբն Հերոնիմոս։

Կղեմէս՝ աղեքսանդրացի անուանեալ, զի 'ի նմին համբաւաւոր քաղաքի եղև ուսուցիչ սուրբ գրոց, թէպէտ և ինքն ծննդեամբ աթենացի էր։ Յաճախապատում մատեանս սորա՝ հետաքննին ժողովածոյ է սրբազան և արտաքին հմտութեանց։

Որոգինէս աղեքսանդրացի՝ որդի Լեոնիդեայ վկայի, եղև մի 'ի մեծահամբաւ աշակերտացն Կղեմայ, և 'ի գիտութեան մասին առաւելեալ գտաւ յոյժ քան զվարդապետ իւր։ Եւ քահանայ և ուսուցիչ կամ դասատու սուրբ գրոց յԱղեքսանդրիա քաղաքի, որում 'ի հասակի ութևտասն ամաց աւանդեցաւ պաշտօն և պատիւ վարժապետութեանն սակս հանճարեղ մտացն և յորդաբուղխ բանից։ Քաջքննասէր գոլով 'ի բնէ՝ ըստ ձայնին իմացեալ զբան խրատուցն Քրիստոսի, թէ ոմանք արարին զանձինս իւրեանց ներքինիս վասն արքայութեան երկնից, գործադիր եղև յանձին, զորոյ զվրիպակն անբասիր առնէն խոնարհութիւն նորա և արհամարհութիւն կենցաղական բարեաց։ Վախճանեցաւ 'ի Տիւրոս քաղաքի 'ի հասակի եօթանասուն և մի ամաց, թողեալ զանձնէ կասկածելի անուն սակս մոլորական վարդապետութեանց ինչ որք 'ի մատեանս նորա երևին, և բառ ոմանց աղարտեալ կամ մուծեալ են 'ի թշնամեաց նորին։ Բազմարդիւն գտաւ եկեղեցւոյ աշխատութեամբն 'ի սուրբ գիրս, զի զբնագիրն եբրայական հին կտակարանաց հանդերձ յունական նախնի թարգմանութեամբք հաւաքեալ 'ի մի, կարգեալ 'ի վեց զաւազանս, որ կոչի վեցիջեան աստուածաշունչ։ Սակաւք 'ի մատենագրաց հաւասարեցան ճարտարութեան նորա. այլ 'ի գրուածս իւր կարի յաճախէ զայլաբանական իմաստս։

Տերտուղիանոս Ափրիկեցի՝ երէց Կարթագինոյ, մօրինակ նշանաւոր 'ի ճարտարութեան մտաց և 'ի վրիպակս իւր։ Եւ սա որդի հեթանոս ծնողաց, սակայն յորդորեալ յարիական հաստատութենէ սրբոց վկայից, որպէս և 'ի սքանչելեացն գործեցելոց յԱստուծոյ 'ի ձեռն նոցա, հաւատաց 'ի Քրիստոս և եղև համբաւաւոր նախանձու դիմամարտութեան ընդդէմ հեթանոսաց, Մարկիոնեանց, Վաղենտինեանց և այլոց հերետիկոսաց։ Յօժարամտութիւն նորա 'ի խստակրօնութիւն՝ ընկէց զնա 'ի վիհս մոլորութեանց Մոնտանոսի, և զինեցաւ հակառակ ճշմարտութեանն որում զառաջինն կացեալ էր պաշտպան և ջատագով. եհաս յայն սահման ապշութեան՝ մինչև անսալ և հաւանել սնոտի յայտնութեանց երազապատում այնր մարգարէի, որ եւս կոչէր զանձն իւր Հոգի Աստուծոյ. նոյնպէս հաւատս ընծայէր և անսայր ցնորից երկոցունց կանանցն մոլորելոց 'ի Մոնտանոսէ։ Ի պատուէրսն ժուժկալութեան, հսկման, պահոց և նախանձու մարտիրոսութեան համախոհ գտաւ Մոնտանոսի։ Զհոգի համարեցաւ նիւթական լինել թանձր և շօշափելի, սակայն թափանցիկ և մարդատեսիլ։

Չէ յայտ օրինակ վարուց նորա յետ անկմանն 'ի մոլորութիւն. որպէս և եղանակ մահուն անյիշատակ է 'ի պատմութիւնս։ Բայց ծանուցեալ է նա 'ի պերճախօս ջատագովութեանն զոր գրեաց վասն քրիստոնէից ազդու և զօրաւոր բանիւ, թէպէտ և ուրեք ուրեք մթին և մանուածոյ։ Առ ամբաստանութիւնն զոր առնէին հեթանոսք զքրիստոնէից եթէ թշնամիք իցեն տէրութեան և անարգողք կայսերաց, Տերտուղիանոս շքեղ զննութեամբ առաջի առնէ նոցա՝ թէ ոչ ոք ցարդ 'ի քրիստոնէից գտաւ հաղորդ դաւադիր գաղտնի նենգութեանց որք ստէպ նիւթէին ընդդէմ ինքնակալաց։ Որպէս և այլում ամբաստանութեան՝ եթէ հաւատացեալքն 'ի Քրիստոս անօգուտք իցեն քաղաքական ընկերութեան, պատասխանի առնէ Տերտուղիանոս. "Զիա՛րդ մարթ իցէ ճշմարտութ՟բ ասել զայդ զմէնջ՝ որք կենակից ձեզ գտանիմք, զնոյն ազգ կերակրոց, զգեստուց և կարասեաց վարելով։ Ոչինչ 'ի ստեղծուածոցն Աստուծոյ անարգ համարիմք, այլ բարեկարգութեամբ եւեթ վարիմք նոքօք՝ փառս տալով արարչին։ Մեք իսկ անխտիր նաւարկեմք և զինուորիմք ընդ ձեզ, վաստակիմք յերկրագործութիւնս և 'ի տուրեւառս, պարապիմք յարհեստս յորս և դուք, և արդիւնք քրտանց մերոց կարգեալ են յօգուտ հասարակաց։ Ապաքէն ճշմարիտ է և այն, եթէ նուազեն տուրք և եկամուտք մեհենից ձերոց, զի ոչինչ առ 'ի մէնջ ընծայի նոցա. սակայն 'ի բաշխելն մեր զառատ ողորմութիւն առ աղքատս փողոցաց՝ քան զոր դուքդ մատուցանէք մեհենից ձերոց, օգտակարագոյն գտանիք հասարակաց։ Իսկ եթէ քննեսցի հաւատարմութիւն մեր 'ի հատուցանել զհարկս արքունի, գտցին այնոքիկ՝ սակս անկեղծութեան մերոյ կարի յոյժ առաւելեալ քան զոր դուքդ խորիք նենգամտութեամբ ձերով և ստայօդ պատճառանօք »։ Յետ բանիցս այսոցիկ ցուցանէ ակներև, եթէ սպանանելն զքրիստոնեայս է վնաս տէրութեան, այնչափ առաւել զի 'ի մէջ բազմութիւ չարագործաց, որք օրըստօրէ սակս յանցանաց դատապարտին 'ի մահ, և ոչ մի ոք գտանի որ զքրիստոնէական օրէնս պաշտեսցէ. և ապա բերէ 'ի վերայ. « Ո՛ ձեզ կոչեմ 'ի վկայ բանիցս ճշմարտութեան ո՛ դիւանադպիրք. առ ձեզ բողոքեմ որք դատէք զյանցաւորս. գտանիցէ՞ք զոք 'ի նոցանէ որ քրիստոնեայ իցէ։ Եւ եթէ գտցի ոք 'ի բանտս ձեր արգելեալ սակս յանցանաց ինչ, նա ոչ է քրիստոնեայ. զի անմեղութիւնն է վասն մեր հարկ անհնարինելի, իբր հետևանք սրբութեան օրինաց մերոց, որք այնպէս սուրբք են և անարատք՝ մինչ զի և ձեր ուշադիր մտօք առեալ զնոսին 'ի քննութիւն՝ դիւրաւ 'ի միտ առջիք՝ զի աստուածայինք են և զանազանեալք յոյժ յօրինաց արտաքնոյն զգաստից։ Իսկ եթէ անխրատեալ՝ իբրև նորաղանդ իմաստասէրս զմեզ բամբասանէք, ընդէր ոչ նոյն ակնածութեամբ և ընդ մեզ վարիք։ Ոչ ոք զնոսին բռնադատէ 'ի չարագործութիւն. թոյլ տուեալ է նոցա համարձակ բողոքել ընդդէմ սնապաշտութեանց »։

Մինուկիոս Փելիքս՝ Ճարտարախօս հռովմայեցի, և Առնոբիոս, նշանաւորք հանդիսացան 'ի պաշտպանութիւն քրիստոնէական կրօնի՝ որ անխնայ հալածէին 'ի հեթանոսաց. որում և իմաստութեամբ իւրեանց նեցուկք եղեն հաստատութեան։

Յաղագս պանծալի վարուց և արդեանց սրբոյն Կիպրիանոսի խօսեցաք վերագոյնդ. վասն որոյ շատ համարեսցի աստանօր յիշատակութիւն անուան նորա 'ի կարգս մատենագրաց։ Եղեն և այլ յոլովք արժանաւորք յաւերժական յիշատակաց, որպիսի է սուրբն Հիպպողիտոս վկայ, սուրբն Դիոնեսիոս աղեքսանդրացի, Մեթոդիոս եպիսկոպոս Տիւրոսի 'ի Փիւնիկէ, սուրբն Գրիգոր նէոկեսարացի՝ Սքանչելագործ անուանեալ, որք զարդարեցին զեկեղեցի գործովք իւրեանց, և պայծառացուցին սքանչելի վարուք առաքինութեան։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Հերետիկոսք։

Առ նովին ժամանակօք՝ յորում ականաւոր մատենագիրք հոգեջան երկասիրութեամբ խնամ տանէին պայծառութեան եկեղեցւոյ, բազում աղանդք հերետիկոսաց զինեցան ընդդէմ ուղիղ վարդապետութեան հաւատոյ։ Գլխաւորքն 'ի նոցանէ եղեն՝ Նովատեանք, զորոց յիշատակեցաք վերագոյնդ, Սաբելեանք, Պաւղիկեանք, Մանիքեցիք և Արոգինեանք։

Սաբելեանք, որոց առաջնորդ ճանաչի Սաբէլ լիբէացի, որ ըստ Պրաքսեայ և Նովատեայ ուսուցանէր՝ եթէ երրեակ անձինք Աստուածութեան ոչ զանազանին իրապէս 'ի միմեանց, այլ մի և նոյն էութիւն Աստուծոյ զայլ և այլ անուանս ընդունի։ Այս մոլորութիւն եղև իբր սկիզբն և արմատ հերետիկոսութեան Պօղոսի Սամոսատացւոյ, որ էր եպիսկոպոս Անտիոքայ Ասորւոց, այր ապականեալ հոգւով և մտօք։ Սակայն այս ինչ խտիր էր ընդ Սաբէլ և ընդ Պօղոս, զի ուր առաջինն զինէր ընդհանրապէս հակառակ երրորդութեան անձանց, յետինն ունայնացուցանէր զաստուածութիւնն Քրիստոսի, համարելով զնա լոկ մարդ ընտրեալ յԱստուծոյ։

Պօղոս Սամոսատացի վասն մոլորութեան իւրոյ և անառակ վարուցն նզովեցաւ յերկուս ժողովս՝ յամի տեառն 265 և 270, և ընկեցաւ յաթոռոյ. սակայն յըմբոստանալ նորա, և 'ի չանսալն հրամանաց ժողովոյն հեռանալ յեպիսկոպոսարանէն Անտիոքայ՝ որպէս և 'ի տանէ անտի եկեղեցւոյն յորում բնակէր, քրիստոնեայք քաղաքին բողոք կալան զնմանէ առ կայսրն Աւրելիանոս, որ հրամայեաց արտաքսել զնա, և տալ զտունն ում ումեք պատշաճ դատեսցին եպիսկոպոսունք միաձայնութեամբ հայրապետին Հռոմայ, որպէս պատմէ Եւսեբի։ Ի հրամանէ աստի կայսեր գուշակի՝ թէ յայտնի էր և հեթանոսաց իսկ նշան ճշմարիտ քրիստոնէութեան միաբանութիւն հաւատացելոց ընդ եկեղեցւոյն Հռովմայ, և թէ 'ի ստիպել հարկին օրէն է եկեղեցւոյ խնդրել զաշխարհական օգնութիւն 'ի նպաստ բարեկարգութեան։ Մոլորութիւն Պօղոսեանց չեղև երկարատև իբր զՄարկիոնեանցն․ սակայն պատրաստեաց շաւիղ մոլորութեան Արիոսեանց։

Առ հետևողս Պօղոսի սամոսատացւոյ մարթ է պատշաճել զբան Տերտուղիանոսի, զոր ասէ վասն խօթամտաց այնր դարու․ “Միմին վարս ապականեալս ըստ վարդապետութեան և ուսման իւրեանց, չերևի ինչ յընթացս կենաց նոցա որ չէցէ մարդկային, անարգ և աշխարհական։ Ոչ է մարթ որոշել 'ի նոսա զերախայն և զհաւատացեալ․ անկեղծութիւն և պարզութիւն համարեալ է առ նոսա տապալումն ամենայն բարեկարգութեանց, և զնախանձ մեր 'ի նոյնս համարին եռանդն տղայական։ Անխտիր շնորհեն զարձակումն յանցաւորաց, և ձեռնադրութիւնք նոցա լինին վայրապար առանց քննութեան, կոչելով 'ի քահանայութիւն երբեմն զնորակնունս, և երբեմն զաշխարհաւորս՝ զմոլեալսն զհետ կենցաղականաց։ Ոչ է նոցա փոյթ դարձուցանել զհեթանոսս 'ի մոլորութենէ՝ ջանացեալ մոլորեցուցանել զճշմարիտ հաւատացեալս„։

Մանիքեցիք, աշակերտք Մանեայ պարսկի, որ զառաջինն մոգ էր՝ և հրահանգեալ յուսմունս ախտարաց, և ապա քրիստոնեայ և քահանայ։ Աղանդաւորքս նորոգեցին զմոլորութիւնս Գնոստիկեանց և այլոց հերետիկոսաց նախկին երկուց դարուց։ Մանէ եդեալ 'ի մտի միաբանել զհմտասիրութիւն արտաքին փիլիսոփայից ընդ բարոյական խրատու և վարդապետութեանն Քրիստոսի, գլորեցաւ 'ի չարաչար մոլորութիւնս, յորոց գլխաւորն եղև դնել զերկու սկիզբն և արարիչ․ մին բարի՝ աղբիւր լուսոյ և բարեաց, իսկ միւսն չար՝ պատճառ և արմատ չարեաց։ Ցնորք նորա անհեթեթք ընդունելի եղեն սակս ծանրաբարոյ կենցաղավարութեանն, որպէս թէ նորօք գուն գործեցէ բարեկարգել զբնաւորութիւն մարդկան․ և վեր 'ի վերոյ խստութեամբ վարուցն և ճգնաւորական կենօք մոլորեցոյց զբարեպաշտս։

Յայս գլխաւոր մոլորութիւն Մանեայ յաւելին աշակերտք նորա և այլս յոգունս։ Արգելուին և ամուսնէին զամուսնութիւն . ուրանային զանձնիշխանութիւն մարդկան, զսկզբնական մեղս, զկարեւորութիւն մկըրտութեան և զհաւատոյ ։ Մերժէին զհին օրէնսն՝ որպէս թէ չիցեն աստուածաւանդք ։ Ընծայէին Քրիստոսի մարմին առ աչօք ։ Մանիքեցիք յերկուս դասս բաժանէին, յորոց կէսքն անուանէին Ունկնդիրք և այլքն Ընտրեալք . առաջինքն վարէին կեանս միջասահմանս իբր ժողովրդականի . իսկ յետինքն՝ ուխտադիրք էին ժուժկալութեան և աղքատութեան, որոց արտաքին տեսիլ խստութեան վարուցն զիւրաքար մոլորեցուցանէր զպարզամիտս, սակայն զաղտնի վատթարութիւնք նոցա առիթ եղեն ծաւալելոյ այսր աղանդոյ, որոյ ծաւալումն եղև ապականարար և վախճանն մահաբեր ։ Մոլորութիւնք սոցա կային միայն ընդ երկար՝ յետ վախճանի աղանդապետին Մանեայ, զորս սուրբն Օգոստինոս և այլ սուրբք հարք հերքեցին զօրաւոր բանիւք, ընդ որս և աստուածիմաստ վարդապետն մեր Եզնիկ կողբացի՝ մի յերանաշնորհ մերոյն թարգմանչաց ։ Սակայն և այնպէս 'ի զանազան ժամանակս ընդ այլ և այլ անուամբք վերստին 'ի վեր երևեցան ։

Որոգինեանք էին հերետիկոսք, որք վարէին անուամբ Որոգինեայ 'ի տարածել զմոլորութիւնս, կամ զի յիրաւի ինքն իսկ Որոգինէս վարդապետեալ էր զայնոսիկ, և կամ թէ մատեան ինչ նորա ոչ յուղիղ միտս իմացեալ ։ Ըստ մոլորութեան սոցա հոգիք ամենեցուն նախագոյականք էին քան զմարմինս իւրեանց, և ապա կապեալ 'ի նոսին իբր 'ի բանտի ։ Ասէին եթէ բանական հոգին Քրիստոսի էր միացեալ ընդ յաւիտենական բանին Աստուծոյ նախ քան զմարդանալն . և թէ մեռեալ իցէ Քրիստոս ոչ միայն վասն մարդկան, այլ և վասն դիւաց ։ Հաստատէին թէ պատիժք դժոխոց են հայրական խրատք, որք չունին տևել անվախճան ։ Այսպիսի իմն ընծայէին զօրութիւն անձնիշխանութեան, մինչև տկարանալ ազդուութեան շնորհաց . զոր և 'ի հրեշտակս անգամ առդնէին՝ համարելով զնոսին ընդունակս մեղանչելոյ ։

ԳԼՈՒԽ ԺԷ.

Սովորութիւնք և կարգք քրիստոնէից.

ԵԿԵՂԵՑԻՆ Քրիստոսի մշտակիր 'ի յաճախելոյ զանազան հերետիկոսաց այսր դարու, մխիթարեցաւ ոչ սակաւ 'ի սկզբնաւորութենէ միաբանական կենաց, որոյ սկիզբն և առաջնորդ եղև սուրբն Պօղոս եգիպտացի։ Երկուցեալ սորա զի մի մատնեսցի 'ի ձեռս հեթանոս հալածչաց 'ի դաւաճանութենէ քեռաւն իւրոյ, որ ցանկայր զրաւել յինքն զստացուածս ժառանգութեան զոր ունէր, յամի տեառն իբր 250 թողեալ զաշխարհ խոյս ետ յանապատն Թեբայիդայ, ուր ընդ ամս իննսուն և երկու եկաց յանծանօթ առանձնութեան՝ սպառելով յաղօթս և յաստուածային խոկմունս, քաղցրացեալ 'ի վայելս հոգևորական կենաց. և խնամրկեալ յաստուածային տեսութիւնսն ընդունէր զհացն օրըստօրեայ սպասաւորութեամբ ագռաւու։ Յետ 'ի վախճան կենացն յայց ել նմա սուրբն Անտոն, որով և ծանուցաւ ամենեցուն նախանձելի առաքինութիւն և երջանիկ փոխումն նորա յաստեացս։

Օրինակ սրբոյն Պօղոսի, զոր եկեղեցի նախասկիզբն համարի անապատական կենաց, յորդոր եղև բազմաց հետևել վարուց բարեաց ընդ նոյն շաւիղ ճգնութեան. մանաւանդ զայնու ժամանակաւ յորում սկսեալ էր զաղջութիւն բարեպաշտութեան 'ի հաւատացեալս Քրիստոսի։ Որ 'ի տևել խաղաղութեան եկեղեցւոյ յետ հալածմանցն Սևերոսի մինչև ց'Դեկոս, երևէին մեղկութիւնք վարուց և բարեկարգութեան։ Քանզի եպիսկոպոսունք 'ի հոգալ զպէտս հոգևոր օգտի հաւատացելոց վիճակի իւրեանց՝ ստիպեալք երբեմն երթալ գաւառէ 'ի գաւառ, ըստանձնէին և զաշխարհական հոգս. ոմանց ևս 'ի բաց թողեալ զգործ առաջնորդութեան հօտին՝ եղեն գործակալք ժողովրդեան։ Սակայն և այնպէս էին միշտ 'ի նոսա և արժանաւորք պատուոյ և անուան եպիսկոպոսութեան, զի անընդհատ հսկէին 'ի խնամս հաւատացելոց, օրինակ բարի ընծայեալ ամենեցուն 'ի յորդոր առաքինութեան։

Ի նախնի դարս եկեղեցւոյ ոչ կային սահմանեալ թոշակք ժառանգաւորաց. այլ հաւատացեալք ըստ իւրաքանչիւր կարի ինքնակամ մատուցանէին զտուրս ողորմութեան, զոր աւանդէին 'ի ձեռս եպիսկոպոսին. իսկ նա կամ ինքնին և կամ 'ի ձեռն այլոց բաշխէր զայն ըստ պէտս կարօտութեան ոչ միայն ժառանգաւորաց, այլ և աղքատաց ժողովրդեան։ Ի ժամանակին յայնմիկ այնպիսի էին խնամք հովուաց 'ի վերայ հաւատացելոց առ հասարակ, զի երբեմն յետ խնամելոյ զսեպհական հօտս իւրեանց՝ առաքէին յողորմութենէ անտի և 'ի քաղաքս անհովիւս, ուր կային հաւատացեալք։

Ըստ բարեկարգութեան եկեղեցւոյ լինէին սոքա սինհոդոսք կամ ժողովք գաւառականք, յորս սահմանէին զկարգապետութիւնս հաւատոյ և զբարի վարուց. սակայն 'ի մեծամեծ և 'ի ծանր գործս սովորութիւն էր գումարել առ եպիսկոպոսունս երևելի քաղաքաց, յորս զառաջին տեղին ունէր քահանայապետն Հռոմայ, իբր արժանաժառանգ աթոռակալ սրբոյն Պետրոսի առաքելապետի։

Սրբութիւն հոգևոր երգոց և միաբանական աղօթից առ Աստուած՝ ըստ իւրաքանչիւր ժամուց աւուրն գիշերոյ և տուընջեան, միշտ և անպակաս եկաց յեկեղեցւոջ. ըստ որում տեսանեմք 'ի զանազան ժողովս կանոնօք սահմանեալ, յորմէ և կոչին կանոնական ժամերգութիւնք։

Պահք և ժուժկալութիւնք՝ առանձնականք և հանրականք, սակաւօրեայք և ընդերկարատևք, անընդհատ արկան 'ի գործ, խստագոյնք քան զմերոց ժամանակաց. զի յաւուրս պահոյն հաւատացեալք հրաժարէին ոչ միայն 'ի մսոյ, այլ և 'ի ձկանց և 'ի գինւոյ. որպէս երևի ցարդ յեկեղեցիս արևելեան ազգաց։

Աղօթէին ընդ արևելս, և կանգնել զտաճար և զսեղան ընդ այն կողմն, 'ի զատկի և յաւուրս կիւրակէից ոտնակայութեամբ աղօթել, խնկարկութիւն յերեկոյս կիրակամտից 'ի յիշատակ պատրաստութեան իւղաբեր կանանց 'ի խնկել զմարմին տեառն Յիսուսի, զգուշանալն յարենէ և 'ի մսոյ հեղձուցեալ կենդանեաց՝ սովորութիւնք էին նախնի հաւատացելոց. այլ քանզի այսոքիկ պատշաճէին յաւէտ 'ի բարեկարգութիւն ատաքին արարողութեանց քան 'ի հաւատս, նմին իրի առաջնորդք եկեղեցւոյ ուրեք ուրեք ըստ պէտս ժամանակին փոփոխութիւնս ինչ 'ի նոսա գործեցին ։

ԳԼՈՒԽ ԺԸ․

Համառօտ բովանդակութիւն վարդապետութեան հաւատոյ որով վարէին յերիս նախկին դարս եկեղեցւոյ ։

ԱՐՏԱՔԻՆ պաշտամունք եկեղեցւոյ թէպէտ և փոփոխեցան ըստ պահանջելոյ ժամանակին, սակայն ոչ նոյնպէս և վարդապետութիւն հաւատոյ, որ միշտ եկաց միօրինակ, և կացցէ անփոփոխ մինչև ցկատարած աշխարհի․ զի է վարդապետութիւն Քրիստոսի քարոզեալ ընդ ամենայն երկիր 'ի ձեռն առաքելոց որք ուսուցին հաւատացելոց՝ եթէ սուրբ գիրք և աւանդութիւն աղբերականք են հաւատոյ, և թէ խորհուրդք աստուածայինք՝ թէպէտ և անհասք մարդկային մտաց, աներկբայ դաւանելիք են, ըստ որում կնքեանք հաւատացին զանբաժանելի միութիւնն Աստուծոյ յաւիտենական և անփոփոխ ։ Հաւատով ստուգութեամբ յայտ արարին, եթէ ամենայն էակք առ հասարակ՝ ստեղծուածք են Աստուծոյ․ ծանեան 'ի միութեանն Աստուծոյ զերիս անձինս, զաստուածութիւն և զյաւիտենականութիւն Բանին, որպէս և զՀոգւոյն սրբոյ ։ Եւ թէ Քրիստոս էր նոյն ինքն Բանն մարդացեալ, Աստուած և մարդ կատարեալ, որ իւրով կամաւոր մահուամբն ազատեալ զազգս մարդկան 'ի դատապարտութենէ՝ յարեաւ ապա 'ի մեռելոց ։ Հաւատացին և յաւիտենական հատուցման արդարոց և մեղաւորաց ։

Զնոյն խոստովանութիւն հաւատոյ ընկալան և ամենայն վարդապետք եկեղեցւոյ՝ եպիսկոպոսունք և քահանայք․ վկայելով աներկմիտ թէ վարդապետեալքն յառաքելոց՝ են բանք Քրիստոսի, և կարևորք 'ի փրկութիւն հոգւոց ։ Սակայն ուրեք ուրեք 'ի Ճառս իւրեանց վարէին եղանակս ինչ խօսից կամ բառից յաղագս անձնաւորութեան բանին Աստուծոյ, որք նուազել իմն թուէին զաստուածութիւն նորա․ իբր այն՝ թէ ծնաւ 'ի սկիզբն յաւիտենից կամ աշխարհի․ և թէ՝

Բանն տեսանելի է, Հայրն անտեսանելի. և թէ իցէ մասն էութեան Հօր, և որ նոյն ազգի։ Այլ այս ասացուածք բանից անպարտաւ բերեն զիմաստ 'ի գիրս նախնի հարց եկեղեցւոյ. քանզի յասել անդ զբանն ծնել 'ի սկզբան յաւիտենից, ոչ էին նոցա կամք ցուցանել՝ թէ յայնժամ սկսաւ էանալ. զի յամենայն գիրս իւրեանց քարոզեն զէութիւն նորա 'ի յաւիտենից. այլ ծնունդ ասելով զառաքումն իմն իմանան բանին լեալ անդստին 'ի ստեղծագործելն Աստուծոյ զաշխարհ։ Ընծայեն Որդւոյ զտեսանելութիւն, ըստ որում ընծայի Հօր ամենակարողութիւնն։ Իսկ ասելն թէ Աստուած 'ի ձեռն Որդւոյ ստեղծ զամենայն արարածս, 'ի բանից անտի սաղմոսին առեալ է եթէ “Բանիւ տեառն երկինք հաստատեցան„։ Նոյնպէս և յասելն՝ Բանն Աստուած է մասն էութեան Հօր, իմանային զՀայր իբր աղբիւր և արմատ աստուածութեան, զոր նա հաղորդէ Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

Սակայն եղեն ոմանք 'ի նախնի վարդապետաց, որոց զհետ երթեալ վրիպակ կարծեացն Պապիասայ՝ համարեցան եթէ Քրիստոս հանդերձեալ իցէ թագաւորել 'ի վերայ երկրի հազար ամ։ Չեղև նոցա դըժուարահաս քննութիւնն և ճանաչումն թէ զինչ երանութիւնն իցէ։ Այլինչ երկմտութիւն ծնաւ 'ի նոսա վասն խորհրդոյ հաղորդութեան մարմնոյ և արեանն Քրիստոսի։ Գովելի վարկան զվիճակ կուսութեան առանց պարսաւելոյ զամուսնութիւն։ Պատուեցին զսուրբսն և զնահատակս իբրև ծառայս Աստուծոյ, և մեծապարգ պատուով խօսեցան զսրբոյ կուսէն Մարիամայ Աստուածածնէն։ Հաւատով մեք հաստատուն կալան՝ եթէ սուրբ գիրք ազդմամբ Հոգւոյն սրբոյ իցեն գրեալք և աւանդեալք, և թէ 'ի նոսին բովանդակին ամենայն ճշմարտութիւնք հաւատոյ մերոյ. յոյր սակս պարտ է աներկմիտ հաւատալ զոր ինչ միանգամ ուսուցանեն մեզ գիրք սուրբք, աւանդութիւն և եկեղեցի։ Ի հին կտակարանաց ընդունելի համարեցան զայն գիրս եեթ, որք էին 'ի կանոնս Հրէայեցւոց. իսկ 'ի նոր կտակարանաց ընկալան զչորեսին աւետարանս, զգործս առաքելոց, զերեքտասան թուղթս սրբոյն Պօղոսի, զառաջին թուղթն սրբոյն Յովհաննու, և զառաջինն սրբոյն Պետրոսի։

Իսկ մնացեալ թուղթք որոյն Յակոբայ և Յուդայի, որպէս և երկրորդ թուղթ որոյն Պետրոսի, նոյնպէս և երկոքին կաթուղիկեայք որոյն Յովհաննու՝ ոմանց ընդունելի էին և այլոց ոչ. 'ի սոյն կարգի դասեցաւ և Յայտնութիւն Յովհաննու աւետարանչի. Սակայն ոչ յետ բազում ժամանակաց ընդունելի եղեն և այնոքիկ 'ի միաձայն հաւանութենէ ընդհանուր եկեղեցւոյ.

Բարոյական խրատք աւետարանին միօրինակ ընդ վարդապետութեան հաւատոյ կային միշտ անփոփոխք, և չգտաւ որ երբէք նոցին զխախտմունս. Փոյթ մեծ էր քրիստոնէից պահել զբնական օրէնս և զաւետարանեայ պատուիրանս Քրիստոսի. Ամէն քարոզութիւն լինէր նոցա՝ եթէ պարտ է նուիրել Քրիստոսի զանձինս իւրեանց, և ծառայել Քրիստոսի որդիական սիրով և ոչ ծառայական երկիւղիւ, սիրել զընկերս իբրև զանձինս, և հատուցանել բարիս փոխանակ չարեաց. Այլ որ սքանչելին է, բարոյական խրատքս՝ նշանակեալք 'ի գիրս նախնի հաւատացելոց՝ պայծառ եւս փայլեն 'ի վարս և 'ի գործս նոցա.

ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա.

Լուսաւորութիւն ազգիս Հայոց.

ԱՅՍ դար պայծառութեան փառացն Քրիստոսի ընդ տիեզերս՝ առանձնաշնորհ խնամօքն Աստուծոյ սկիզբն կալաւ 'ի լուսաւորութենէ ազգիս. Զի 'ի վերջին ամի ձգնութեան սրբոյն Գրիգորի 'ի խոր վիրապին յամի տեառն 301, եղև նահատակութիւն սրբոց Հռիփսիմեանց. որոց մարմինք մինչդեռ անթաղ կային յերեսս դաշտին, այսահարեալ արքայն Տրդատայ՝ կերպարանափոխ եղև 'ի նմանութիւն վարազի, և կատաղեալ մոլեգնութեամբ դիւաց յանմարդաբնակ տեղիս. Ի նոյն կերպ դիւահարութեան ըմբռնեցան և բազումք յիշխանաց և յընտանեաց նորա. Յայն աղէտ աստուածասաստ պատուհասի՝ մինչ Խոսրովիդուխտ քոյր Տրդատայ արքայի թաղծեալ կայր տրտմութեամբ, ետես զտեսիլ հրեշտակի Աստուծոյ, որ ասէր ցնա. «Ի գտանել զբժշկութիւն ախտացելոյն՝ փութասջիք հանել 'ի գբոյ վիրապէն Գրիգոր, որ եկեալ բժշկեսցէ զամենեսին»։ Այս տեսիլ անհաւատալի հեթանոսաց՝ կրկնեցաւ հնգիցս. վասն որոյ 'ի հաճել զԽոսրովիդուխտ՝ առաքեցաւ Օտայ նախարար բազմութեամբ ծառայից 'ի ստուգել զիրսն. որոց երթեալ յԱրտաշատ քաղաք 'ի բերան գբոյն կախեցին զպարան՝ կոչելով զանուն սրբոյն. և յըմբռնել նորա զպարանն և 'ի շարժել՝ ծանեան եթէ կենդանի է, և փութացեալ հանին զնա արտաքս. Այլ քանզի տեսիլ մարմնոյ նորա և զինոյն այլագունեալ և սևացեալ էր, լուացեալ զնա՝

զգեցուցին հանդերձս մաքուրս, և առեալ խնդութեամբ տարան 'ի Վաղարշապատ քաղաք։ Անդ առ դուրս քաղաքին ժողովեալ նախարարաց՝ անկան առ ոտս սորայն. իսկ Տրդատ Թագաւորն, որպէս և այլ հարուածեալքն 'ի դիւաց դիմեցին ընդ առաջ սորայն. և նորա ծունր եդեալ եկաց յաղօթս վասն բժշկութեան հոգւոց և մարմնոց նոցա. որով առժամայն եկեալք 'ի զգաստութիւն գոհացան զԱստուծոյ։ Ի մխիթարել սորայն զամենեսին, և ըստ հայցուածոց նոցա 'ի ներելն յանցանաց որ առ ինքն՝ յորդոր լինէր ճանաչել զճշմարիտն Աստուած զարարիչ իւրեանց, և զնա միայն պաշտել։

Այս խնդիր արար սուրբն ցուցանել նմա զտեղի նահատակութեան սրբոց Հռիփսիմեանց, որք ինն աւուրբք յառաջ նահատակեալ էին, և գնացեալ անդր գտին զմարմինս վկայիցն Քրիստոսի մաքուր և անարատ պահեալ առ յԱստուծոյ. զորս և ամփոփեալ սրբոյն Գրիգորի տարաւ 'ի հնձանն, ուր էր տեղի բնակութեան նոցա։ Անդ առ հանգստեամբ սրբոց կուսանացն վասն կալեալ սրբոյն Գրիգորի զաւուրս վաթսուն և վեց՝ արար քարոզութիւն առ հասարակ ամենայն ժողովրդեան որք ոչ կամէին մեկնել 'ի նմանէ. և պատուիրեաց նոցա ծոմապահել զաւուրս հինգ։ Եւ 'ի լնուլ ընդ քարոզութեանն՝ արքայն Տրդատ անկեալ յոտս սրբոյն՝ խնդրեաց արտասուօք զբժշկութիւն այլակերպեալ մարմնոյն. իսկ սուրբն յորդորեաց շինել նախ զվկայարանս սրբոց կուսանացն, և ապա բարեխօսութեամբ նոցին ընդունել զշնորհս բժշկութեան. վասն որոյ Թագաւորն և ամենայն աւագանին հանդերձ ժողովրդեամբք կանգնեցին երիս վկայարանս, յորս ամփոփեցան նշխարք կուսանացն, և կան մինչև ցայսօր 'ի յիշատակ ստուգութեան եղելոյն։

Յետ այնորիկ ըստ աստուածային յայտնութեան որ առ սուրբն Գրիգոր, պատեցաւ որմով տեղի ինչ, ուր ետես սուրբն զմիածին Որդին Աստուծոյ իջեալ յերկնից, և կանգնեցաւ անդ խաչն Քրիստոսի. որում երկրպագեալ ջերմեռանդն հաւատով ընկալան 'ի տեառնէ ընդ ձեռն սրբոյն Գրիգորի զբժշկութիւն ամենայն հարուածեալքն 'ի սատանայէ՝ Թագաւորն և ժողովուրդք, և գոհացեալ փառս տային Աստուծոյ ։ Նոյնում օրէ Տրդատ արքայ ըստ յորդորելոյ սրբոյ Լուսաւորչին՝ սկսաւ ջնջել և անհետ առնել զամենայն կուռս և զպաշտօն հեթանոսութեան 'ի Հայաստան աշխարհէ, շրջելով ընդ ամենայն գաւառս և քաղաքս ։

ԳԼՈՒԽ Բ.

Ձեռնադրութիւն սրբոյ Լուսաւորչին 'ի քահանայութիւն և յարքեպիսկոպոսութիւն ։

Արդ. քանզի նոր հօտն Քրիստոսի պէտս ունէր առաջնորդութեան հովուի՝ 'ի մկրտել զնոսա և 'ի մատակարարել զամենայն խորհուրդս եկեղեցւոյ, թագաւորն Տրդատ ըստ աստուածային յայտնութեան՝ հանդերձ իշխանօք և նախարարօք ընտրեցին զսուրբն Գրիգոր կացուցանել իւրեանց հովիւ և առաջնորդ ։ Վասն որոյ յամին 302 առաքեցին զնա 'ի Կեսարիա քաղաք փոքուն Հայոց ձեռնադրել 'ի քահանայապետութիւն համօրէն ազգիս. անդ ընկալեալ սրբոյն Գրիգորի զձեռնադրութիւն 'ի Ղեւոնդեայ հայրապետէ, բազում շքով դարձաւ յաշխարհն Հայոց, բերեալ ընդ իւր և զմասունս նշխարաց սրբոյ Կարապետին և զԱթանագինեայ եպիսկոպոսի զորս 'ի պարգեւի մասին ընկալեալ էր 'ի Ղեւոնդեայ. միանգամայն առ ընդ իւր 'ի Կեսարիոյ երկուս սրբակեաց կրօնաւորս զԱնտոն և զԿրօնիդէս, 'ի վարժապետութիւն միակեցական կենաց, զոր կամէր հաստատել 'ի Հայաստան ։ Նա 'ի դառնալ իւրում ընդ Սեբաստիա քաղաք, միաբանեաց ընդ իւր բազում արժանաւոր անձինս վկայեալս յաստուածպաշտութեան և յիմաստութեան՝ լինել օգնական 'ի քարոզութիւն աւետարանին ։ Նոյնպէս և յայլոց քաղաքաց կոչեաց առ ինքն զբազմութիւն պաշտօնէից եկեղեցւոյ և եպիսկոպոսաց. ընդ որս ելեալ 'ի ճանապարհ՝ իբրև հասին 'ի Տարօն, ուր տակաւին կային հեթանոս պաշտօնատարք կռոց, յետ բազում հակառակութեան և զինամարտութեան զխռագրգիռ քրմաց՝ զօրացեալ սրբոյ Լուսաւորչին կանգնեաց զնշան խաչին, և ապա եկեալ յԱշտիշատ աւան՝ ըստ յայտնութեան Աստուծոյ շինեաց անդ վկայարան, յորում հանգոյց զմասունս ինչ 'ի նշխարաց սրբոցն Յովհաննու Կարապետին և Աթանագինեայ եպիսկոպոսին : Անդ կանգնեցաւ առաջին տաճար Աստուծոյ, և 'ի նմին տեղւոջ մկրտեաց սուրբն զուղեկիցս իւր զնախարարսն և զզօրս, որպէս և զբնակիչս երկրին. ուր եթող և զսուրբ կրօնաւորսն զԱնտոն և զԿրօնիդէս, տալով նոցա առաջնորդ զԶենոբ եպիսկոպոս : Ապա եկեալ անտի սրբոյն Գրիգորի՝ գնաց յԱրարատեան աշխարհ, քարոզելով զճանապարհայն և մկրտելով զհաւատացեալսն 'ի Քրիստոս :

ԳԼՈՒԽ Գ.

Մկրտութիւն Տրդատայ թագաւորի և ընտանեաց նորա : — Բարեկարգութիւնք հայաստան աշխարհի :

Ի ԼՍԵԼ Տրդատայ զդարձ սրբոյն Գրիգորի, առեալ ընդ իւր զԱշխէն տիկին և զԽոսրովիդուխտ քոյր իւր բազմութեամբ զօրաց եկն 'ի Բագաւան քաղաք Բագրեւանդ գաւառի, և սպասէր գալստեան սրբոյն. և 'ի ժամանել նորա անդր՝ ընդ առաջ ելեալ խնդութեամբ մեծաւ ընկալաւ զնա : Անդ սկսաւ երանելին Գրիգոր վերստին քարոզութեամբ ամսօրեայ մի ժամանակ մաքել զթագաւորն և զամենեսին յարժանաւոր ընդունելութիւն խորհրդոյ մկրտութեան. և ըստ սովորութեան նախնի հաւատացելոց եդ նոցա պահս նախ քան զմկրտութիւնն՝ զաւուրս ինչ, յորոց 'ի կատարելն՝ առեալ սրբոյն զթագաւորն և զամենայն ընտանիս նորա տարաւ յեզր Եփրատ գետոյ, ուր սքանչելի և աստուածահրաշ նշանաց երեւմամբ մկրտեաց զթագաւորն և անուանեաց զնա Յովհաննէս. նոյնպէս մկրտեաց և զընտանիսն համօրէն աւազանաւ և այլ անթիւ բազմութեամբ ժողովրդեան, իբր անձանց չորեքհարիւր բիւրուց, ձեռնտու ունելով մատակարարութեան խորհրդոյն զբազում պաշտօնեայս եկեղեցւոյ :

Ապա դարձ արարեալ թագաւորաւն հանդերձ 'ի Վաղարշապատ քաղաք, յամի տեառն 303, ձեռն արկ շինութեան հոյակապ եկեղեցւոյն Էջմիածնի, զորոյ զտեղին կանխաւ տեսեալ էր սրբոյն : Առ նովին ժամանակաւ սուրբն Գրիգոր ըստ օրինակի Յունաց սահմանեաց տօնս տէրունականս, և զսրբոյ Աստուածածնին, որպէս և զսրբոց վկայիցն Քրիստոսի, և առանձինն զտօն յիշատակի նահատակութեան սրբոց Հռիփսիմեանց և զԳայիանեանց։

Նա յետ այնորիկ ընդ բարեպաշտ արքային Տրդատայ սկսաւ շրջել յամենայն գաւառս և 'ի քաղաքս աշխարհին Հայոց, յորս քարոզէր, մկրտէր և հաստատէր զամենեսին 'ի հաւատս Ճշմարտութեան, կանգնելով յամենայն տեղիս զեկեղեցիս. ձեռնադրէր եպիսկոպոսունս, քահանայս և պաշտօնեայս եկեղեցւոյ 'ի հրահանգել զժողովուրդն։ Թիւ եպիսկոպոսաց որք զայնու ժամանակաւ կարգեցան 'ի սրբոյ Լուսաւորչէն, եղեն աւելի քան զչորեքհարիւր, թող զանթիւ քահանայս, որովք լցաւ Հայաստան պաշտօնէիւք Աստուծոյ։ Յոլովք 'ի նոցանէ էին որդիք քրմաց, զորս հրահանգեալ ուսմամբ աստուածպաշտութեան և դպրութեամբ կարևորաց՝ արար վարժիչս օրինացն Աստուծոյ։ Կարգեաց նոցա ռոճիկս 'ի ժողովրդենէն և 'ի նուիրաց եկեղեցւոյ՝ զոր մատուցանէին հաւատացեալք, նոյնպէս սահմանեաց և զհասոյթ եպիսկոպոսաց։ Շինեաց և բազում վանորայս, կուսաստանս և հիւրանոցս, և ելից զաշխարհս մեր լուսով աստուածգիտութեան և երկնային խնամութեամբ, գործակից իւր ունելով յամենայնի զերանելին Տրդատ. որոյ խնամ կալեալ ծաւալելոյ քրիստոնէական հաւատոյ, եհան հրովարտակ առ համօրէն ժողովուրդս սահմանաց տէրութեան իւրոյ՝ յորդորելով զամենեսին յաստուածպաշտութիւն և 'ի հաւատս Ճշմարտութեան։

ԳԼՈՒԽ Դ.

Հալածումն առ Դիոկղետիանոսիւ։

Ի ԺԱՄԱՆԱԿԻՆ յորում հայաստան աշխարհ նորատունկ աստուածգիտութեամբ սկսեալ էր ծաղկել, բարխատեաց բանսարկուն մախացեալ ընդ փառս Քրիստոսի՝ շարժեաց զհռովմէական տէրութիւնն 'ի դառն հալածանս քրիստոնէից, իբր յետին փորձ հաստատութեան որդւոյն Աստուծոյ և 'ի հանդէս արիական նահատակութեան նոցա։

Յետ արկածից կալանաւորութեան Վաղերիանոսի կայսեր, զոր նշանակեցաք վերագոյն, եկեղեցի հաւատացելոց եկաց ընդ երկար 'ի վայելս խաղաղութեան. զի ըստ ասելոյ Եւսեբեայ, աւետարանն Քրիստոսի արգոյ էր առ ամենեսին և պատուեալ 'ի մէջ Յունաց և բարբարոսաց. թագաւորք բազում սիրով և քաղցրութեամբ վարէին ընդ քրիստոնեայս, և 'ի նոցանէ կարգէին իշխանս 'ի վերայ հեթանոսաց, ազատ կացուցանելով զնոսին 'ի բռնադատութենէ զոհից։ Արքունիք կայսերաց լի էին հաւատացելովք, որք համարձակ և պարծանօք պաշտօն տանէին անուանն Քրիստոսի։ Նոյնպէս և հեթանոս դատաւորք և վերակացուք գաւառաց պատուէին զառաջնորդս և զգլխաւորս քրիստոնէից։ Առ յաճախութեան խռնելոյն յեկեղեցիս հաւատացելոց՝ անձկացեալ նախնի աղօթատեղեացն, սկսան կանգնել զընդարձակագոյնս։ Անդորր այս կենցաղ քրիստոնէից տևեաց ցորչափ ժամանակս սուրբ և անապական վարուք արժանաւոր գտան աստուածային խնամոց։

Այլ անդորր խաղաղութեան արգասիք են յաճախ գաղջութիւն վարուց բարեպաշտութեան և անկարգութիւն յառաջնորդս եկեղեցւոյ, որպէս դիպաւ և աստ, ըստ որում գրէ և Եւսեբի. զի մուտ գտին, ասէ, 'ի մեզ նախանձ, ամբարտաւանութիւն, կեղծաւորութիւն։ Տարաձայնութիւնք 'ի պաշտօնեայս եկեղեցւոյ և 'ի ժողովրդականս՝ պատճառք եղեն զխռովութեան ընդ միմեանս, թէ ոչ զինուք՝ սակայն բանիւք և գրովք։ Հովիւք և առաջնորդք եկեղեցւոյ ոչինչ միտ դնելով աստուածային պատուիրանաց, չարախօսութեամբ և հակառակութեամբ զայրացուցանէին զմիմեանս, կռուելով սակս գահերէց պատուոյ վիճակաց եկեղեցւոյն Քրիստոսի, որպէս թէ աշխարհականութեան էին մարդք։ Նմին իրի յանցանք մեր, ասէ, շարժեցին զցասումն Աստուծոյ 'ի պատուհասել զմեզ և միանգամայն յորդորել յապաշխարութիւն։

Հալածումն քրիստոնէից յայտնեցաւ հրովարտակաւ Դիոկղետիանոսի կայսեր՝ յամի տեառն 303, յիննետասներորդի ամի տէրութեան նորա, որ ըստ որում կանխեցաք ասել՝ գահակից իւր ունէր զՄաքսիմիանոս Հերակղէս, զԿոստանդ Քղորոս՝ զհայրն Մեծին Կոստանդիանոսի և զԳաղերիոս։ Կոստանդ քանզի գթասիրտ որ էր և քաղցրաբարոյ կամեցաւ խնայել՚ի քրիստոնեայս. սակայն երկոքին գահակիցք իւր նշանաւորք եղեն անգթութեամբ իւրեանց։ Գաղերիոս՝ նախ քան զհրատարակումն հալածանաց, յամին 298, սկըսեալ էր նեղել և չարչարել զքրիստոնեայ զինուորսն որ կային ՚ի խումբս զօրաց իւրոց, և զբազումս ՚ի նոցանէ այլ և այլ պատուհասս սպան անողորմ։

Ի սփռել հրովարտակաց ընդ ամենայն սահմանս տէրութեան, կայսերութիւնն առ հասարակ տեսարան եղև վայրենի անգթութեան. զի զատակնքեցան՚ի մահ և ՚ի կորուստ որք միանգամ չառնուցուն յանձն ծխել խունկս դրօշելոց։ Մարկեղինոս Հռովմայ հայրապետ՝ որ երբեմն առ տկարութեան զոհեալ էր կռոց, սրբեաց զնախատինս յանցանացն փառաւոր և զանձայի նահատակութեամբ յութերորդի ամի քահանայապետութեան իւրոյ։ Մարկոս և Մարկեղիանոս ազնուատոհմ հարազատք հռովմայեցիք, Եւթիմիոս, Վինկենտիոս, Սեբաստիանոս, սրբուհին Ագաթա և Լուկիա, որպէս և այլք բազումք ընկալան զդափնին նահատակութեան։ Ի միում ևեթ գիշերի ծննդեան տեառն ծախեցան հրով երկու բիւրք քրիստոնէից, որք կային յեկեղեցւոջ՚ի Նիկոմիդիա։ Յայս մրրիկ անգութ հալածանաց նահատակեցան և ՚ի կողմանս Եգիպտոսի հարիւր քառասուն և չորք հազարք և եօթնհարիւր մարտիրոսք, յորմէ սկսաւ թուական Եգիպտացւոց կամ Ղփտոց, որ կոչի ևս թուական մարտիրոսաց կամ Դիոկղետիանոսի։

Յայլ և այլ դիպաց յորդորեցաւ կայսրն յայսպիսի անգթութիւն, որ հակառակ ասի լինել իւրում բնաւորութեան և խորհրդոց մտացն։ Սա ինքն Դիոկղետիանոս՝ յօժարամիտ և հետաքննին ՚ի գիտել զապագայս, հաստատեալ էր ՚ի մտի՝ թէ հնար է գուշակել կամ ընթեռնուլ զայնս ՚ի փորոտիս կենդանեաց։ Յաւուր միում ՚ի կամելն ստուգել զմտաւորն զայն իւր հետաքննութիւն՝ իբրև մատուցանէր զոհս կռոց, ոմանք ՚ի սպասաւորաց իւրոց՝ գաղտնի քրիստոնեայք՝ արարին զնշան խաչի. յորմէ խռովեալ քրմանց՝ ոչ ևս գտին 'ի զոհս զերևոյթս, յորոց ասէին ճանաչել զկամս աստուածոց. կամ թէ կամաւ կեղծեցին չգտանել զնշանսն՝ 'ի գրգռել զկայսրն ընդդէմ քրիստոնէից, զորս ատէին իբր քանդիչս բագնաց և անարգուս անհեթեթ պաշտաման իւրեանց: Վասն որոյ ծանուցին կայսեր՝ թէ առաջիկայութիւն օտարազեն անձանց խափանարար է պաշտաման հանդիսին և յաջողութեան իւրացն. յորմէ Դիոկղետիանոս շարժեցաւ 'ի ցասումն ընդդէմ նոցա, զի 'ի պատճառս նոցա ոչ կարաց խնամել զոր խնդրէրն: Ահա այս եղև առիթ նախկին հրովարտակին ընդդէմ հաւատացելոց. յորում թէպէտ և չկայր պատուհաս մահու, սակայն էին ամենայն ազգք տուգանաց և տանջանաց, քանդումն եկեղեցեաց, զրկումն յիշխանական պատուոյ մեծատանց, և բարձումն անխափան ազատութեան ժողովրդականաց. հրամայէր զամենայն հաւատացեալսն 'ի Քրիստոս անխտիր մատնել 'ի տանջանս: Եղան և օրէնք ատենակալաց զգուշանալ 'ի գործոց որ նպաստաւոր իցեն քրիստոնէից:

Զկնի այսր առաջնոյ հրովարտակի տուաւ և միւս այլ խստագոյն ընդդէմ եպիսկոպոսաց, քահանայից և այլոց պաշտօնէից քրիստոնէութեան, յորում պատուիրէր դատաւորաց արթնամիտ զգուշութիւն և փոյթ 'ի ստիպել զնոսին կապանօք բանտից և տանջանաց զոհել դրօշելոց իւրեանց: Ապաքէն երկոքին հրամանագիրքս թէպէտ շատ էին դատաւորաց 'ի վարել անխնայ մոլեգին կատաղութեամբ 'ի վրէժխնդրութիւն սնոտի պաշտաման հեթանոսաց, սակայն յանդգնագոյն ևս զինեցան 'ի հրատարակել յայտնի հրամանաց մահապարտութեան ընդդէմ այնոցիկ՝ որք դաւանիցեն զքրիստոնէական կրօնս:

Եղեն և այլ կրկին դէպք 'ի բորբոքել ևս քան զևս զբարկութիւն Դիոկղետիանոսի, իրաւացի համարելով զպատուհաս քրիստոնէից: Առաջինն եղև անխոհեմ արիութիւն ուրումն քրիստոնէի 'ի Նիկոմիդիա, որ 'ի հրատարակիլ հրամանագրոյ հալածանացն՝ համարձակեալ յանդիման ամենեցուն զնոյն պատառել զայն. վասն որոյ ըմբռնեալ մատնեցաւ 'ի ձեռս դահճաց, որք տարածեցին զնա 'ի վերայ կակարայի, և այրեցին հրով։ Հաստատութիւն սրտի նորա, և անխռով հանդարտութիւն դիմացն 'ի տանջանսն՝ աներկմիտ արժանացոյց զնա թողութեան յանցանացն ըստ չափին համարձակութեան, որով 'ի վտանգ դնէր զհաւատակից եղբարս իւր։ Իսկ երկրորդն եղև 'ի նենգութենէ Գաղերիոսի, որ զրպարտելով զքրիստոնեայս եղև պատճառ անտանելի աղետից։ Զի անօրէնս այս որդի քրմուհւոյ և գլխովին անձնատուր 'ի պաշտօն կռոց՝ զաղտնի նենգութեամբ ընդ ձեռն սպասաւորաց իւրոց ետ հուր արկանել 'ի մի կողմն կայսերական ապարանից, և ստութեամբ չարախօսել զքրիստոնէից՝ որպէս թէ նոքա գործեալ իցէ զայն առ 'ի վրէժխնդրութիւն երկուց իշխանացն որք պատճառ եղեն հալածանաց. զորոց և զկեանս իսկ կամէին բառնալ յաշխարհէ։

Ի զրպարտութենէ աստի առաւել ևս զայրացեալ Դիոկղետիանոսի առաքեաց զյետին հրամանագիրն սաստկութեան հալածանաց առ Մաքսիմիանոս և առ Կոստանդոս։ Մաքսիմիանոս՝ անգութն 'ի բնութենէ, որոյ ձեռք կանխաւ իսկ շաղախեալ էին արեամբք հաւատացելոց, յօժարամիտ ընկալաւ զազդարարութիւն Դիոկղետիանոսի, և անխնայ սկսաւ տանջել և 'ի մահ մատնել զքրիստոնեայս։ Սակայն Կոստանդոս՝ քանզի բարեսիրտ ոք էր, թէպէտ և զիջաւ ընդ քանդումն եկեղեցեաց քրիստոնէից, բայց խնայեաց 'ի կեանս նոցա։ Իսկ թէ ուրեք երբեք 'ի Գաղղիա և 'ի Սպանիա թոյլ տուեալ իցէ և վնաս կենաց, համարելի է զայնոսիկ առ հարկի և 'ի բռնադատութենէ հրամանացն Դիոկղետիանոսի, յորմէ ակն ածէր։ Սակայն և 'ի թոյլ տալն գործել զանգթութիւն հեռի 'ի տեսութենէ իւրմէ, պաշտպան լինէր քրիստոնեական օրինաց յիւրում պալատան, համարելով զքրիստոնեայսն հաւատարիմս և արժանաւորս վստահութեան, մանաւանդ զայնոսիկ որք առաւել հաստատունք իցեն և անդրդուելիք 'ի հաւատս. զոր և ստուգել կամեցեալ՝ ձեռն արկ երբեմն փորձել զնոսին այսպիսի օրինակաւ։ Կեղծեօք սպառնացաւ զրկել 'ի պատուոյ և 'ի սպասաւորութենէ իւրմէ զորս միանգամ չառնուցուն յանձն զոհել կռոց. և ահա բազումք 'ի չկորուսանել զիշխանական պատիւ իւրեանց հրաժարեցան 'ի հաւատոց. զոր տեսեալ Կոստանդեայ և խելամուտ լեալ, եթէ որք անհաւատարիմ գտան առ Աստուածն իւրեանց՝ չկարեն հաւատարիմ մնալ առ երկրաւոր իշխանս, վաղվաղակի արտաքսեաց զնոսա 'ի պալատէն. և կալաւ առ իւր զայնոսիկ միայն, որք զհաւատս նախադասելի համարեցան քան զամենայն կենցաղական բարիս։

Ի ժամանակս զառն և սաստիկ հալածանացս բազմաթիւ եղեն յայտ վկայք Քրիստոսի ընդ ամենայն սահմանս տէրութեան։ Սուրբն Ադրիանոս 'ի Հռոմ, սուրբն Բարեղաս դպիր ութսուն և չորս աշակերտօք 'ի Նիկոմիդիա, Բասսա, Եւսեբիոս և Պամփիլեղս պալատական իշխանք Դիոկղետիանոսի, որք տեսեալ զնահատակութիւն սրբոյն Թէոպամպայ եպիսկոպոսի՝ հաւատացին 'ի Քրիստոս և նահատակեցան, Գենարիոս եպիսկոպոս Բենեւենտ քաղաքի, սուրբն Գէորգ զօրավար, սուրբքն Գուրիաս և Սամոնաս քահանայք, որպէս և Աբիբոս սարկաւագ յԵդեսիա քաղաքի, սուրբն Դեմետրիոս 'ի Թեսաղոնիկէ, սուրբն Պանտեղէս բժիշկ 'ի Նիկիա կատարեցին զկեանս իւրեանց վկայական մահուամբ։ Եղեն և այլք բազումք զորս փոքր 'ի շատէ նշանակէ Եւսեբիոս յեկեղեցական պատմութեան, և յիշատակ նոցա օրհնութեամբ կատարի յամենայն եկեղեցիս քրիստոնէից։

ԳԼՈՒԽ Է.

Պատուհասք յորոց տագնապեցաւ տէրութիւնն հռովմէական։

ՍԱՍՏԿՈՒԹԻՒՆ հալածանացն Դիոկղետիանոսի տեւեաց զամս ութ, սկսեալ յամէ 303 մինչև ցամն 311. յորում ժամանակի Դաղերիոս կայսր եհան հրովարտակ հանդարտութեան և դադարելոյ հալածանացն։ Քանզի Աստուած 'ի վրէժխնդրութիւն արեան ծառայից իւրոց՝ ահաւոր պատժովք պատուհասից սասանեցոյց զհալածիչսն, որպէս և զհամօրէն պետութիւնն հռովմէական։

Սովամահն՝ սաստիկ և դժնդակ կոտորածս մեծամեծս արար 'ի ժողովրդեան։ Սասանութիւնք երկրի անպակաս էին ընդ ամենայն գաւառս տէրութեան ։ Սպասաւորք բարկութեանն Աստուծոյ, որ ը՟ ժամանակս ժամանակս երևէին, ազգք բարբարոսաց (յորոց շրջապատեալ կայր տէրութիւնն Հայկազեան), 'ի լրումն վրէժխնդրութեանն Աստուծոյ յորդեցին ընդ համօրէն գաւառս, յորս գործեցին մեծամեծ և անհնարին աւերութիւնս, մինչև յետ իբր հարիւր և յիսուն ամաց 'ի տեղիսն ուր կանխաւ կային քաղաքք բարեշէնք և բազմամարդք՝ հազիւ երևէին քանի մի հիւղք աղքատիկք ։ Անբերելի աւերիցս այսոցիկ՝ թոյլատուութեամբն Աստուծոյ զհետ եկին քաղաքական մարտք 'ի նոսին իսկ 'ի Հռոմայեցիս, որով 'ի սպառ յատակեցան և անշէնս մնացեալքն 'ի բարբարոսաց ։

Ի յետին ամս Հալածանաց եղև երաշտ անսովոր, որում զհետ եկն սով սաստիկ, և ընդ պատուհասիս հարան մարդիկ նորանշան ցաւովք աչաց, յորմէ կուրացան բազումք ։ Սաստկութիւն սովոյն այնչափ սաստկացեալ էր, զի դոյզն չափ գարւոյ վաճառէր ինն հարիւր դահեկանաց ։ Բազումք 'ի գտանել զաւուրն պարէն՝ ստիպեցան վաճառել մեծատանց զորդիս իւրեանց, և այլք առ փոքր փոքր վաճառելով զկարասածս անկան 'ի յետին անանկութիւն ։ Թող զի և ազնուատոհմ ընչաւէտք առ նուազութեան կերակրոց երևէին հիւծեալք և մաշեալք իբրև զկմախս մեռելոց ։ Հրապարակք և փողոցք լի էին մերկանդամ դիակք անթաղ մեռելոց 'ի կերակուր շանց ․ և առ երկիւղի՝ զի մի սովորեալ նոցա ուտել զմարմին մարդկային՝ կատաղեսցին, հարկ եղև սպանանել զամենայն շունս ։ Ահա այսպիսի օրինակաւ հեթանոսք ընկալան յԱստուծոյ զպատուհաս անիրաւութեանն, որով զրաւեցին զինչս և զստացուածս քրիստոնէից ․ որպէս և անգթութեանն իւրեանց առ վկայսն Քրիստոսի, զորս և զերեզմանի անգամ չկամեցան առնել արժանիս ։ Ժանտամահն և այլ աղէտք անբերելիք տագնապէին յաւէտ զմեծատունսն, որք ճոխութեամբ իւրեանց զերծք էին 'ի սովէ ։ Պատուաւորք և դատաւորք քաղաքաց, որպէս և այլ ականաւոր անձինք, մեռանէին անակնկալ մահուամբ՝ տանջեալք 'ի դժնդակ ցաւոց ։ Ընդ ամենայն տեղիս լսելի լինէին ողբք և կոծ, զի անհնարին էր թիւ բազմութեան մեռելոց, որով շիջան և յոլով զերդաստանք ։

Այս ամենայն սակայն աղէտք հասարակաց և ահաւոր պատուհասք տէրութեանն՝ պատճառք բարեաց եղեն քրիստոնէից, որք խնամ կալան յայնպիսում տագնապի ցուցանել հեթանոսաց զառաջս բարեպաշտութեանն իւրեանց առ Աստուած, և զգթասիրութիւնն առ մարդիկ. նոքա միայն կարեկցաբար մարդասիրէին առ նոսա յանբերելիս այնոսիկ թշուառութիւնս. քանզի զօր ամենայն զբաղեալ կային ոմանք 'ի թաղել զմեռեալսն՝ զորս ոչինչ փոյթ էր հեթանոսաց, այլք 'ի ժողովել զաղքատս քաղաքաց և գիւղից, և բաշխել նոցա կերակուր 'ի կազդուրումն կենաց։

Սակայն և այնպէս 'ի փոխարէն այսոցիկ բարերարութեանցս քրիստոնէից՝ Մաքսիմիանոս յամին 312 կամեցաւ վերստին բորբոքել զհուր հալածանաց. բայց Կոստանդիանոսի հրապարակեալ զանձն պաշտպան քրիստոնէութեանն՝ հանդարտեցոյց զմրրիկն։ Զայս ամենայն լիագոյն բանիւ նշանակէ Եւսեբի յեկեղեցական պատմութեան իւրում։

ԳԼՈՒԽ Զ.

Թագաւորութիւն Կոստանդիանոսի։

Էր սա որդի Կոստանդեայ Քղորոսի, որ կենցաղագէտ ճարտարութեամբ և զինուորական արութեամբ իւրով անդստին 'ի մանկութենէ ցուցաւ արժանաւոր արքայական պատուոյ։ Զի յամի տեառն 312 յետ նուաճելոյ զՄաքսենտիոս բռնաւոր՝ եղև ինքնիշխան կայսր հռովմէական տէրութեան. և անպղտոր խորհրդով խելամուտ եղեալ ծանեաւ ստուգիւ եթէ սակս իւրոց յաղթութեանց պարտական գտանի առ Աստուածն քրիստոնէից. յուշ ածեալ և զայն, թէ որք միանգամ 'ի նախորդացն իւրոց կարծէին հաշտ առնել զաստուածս իւրեանց արեամբ քրիստոնէից՝ չընկալան զայլ փոխարէն՝ բայց 'ի ստայօդ պատգամաց և 'ի դժընդակ պատուհասից մահու. յորոց յորդորեալ կարդաց առ Ճշմարիտն Աստուած, և յաւուր միում մինչ կայր 'ի գլուխ լեգէոնախումբ զօրաց իւրոց, ետես յօդս զնշան խաչին՝ մակագրութեամբս, « Այսու յաղթեսցես »: Իսկ 'ի նոյն ապաւինեալ՝ տարաւ 'ի գլուխ զյաղթութիւնն. վասն որոյ 'ի ցուցանել զերախտագիտութիւն իւր առ պարգևսն Աստուծոյ, եհան երկուս հրովարտակս, ազատութիւն շնորհելով պաշտաման քրիստոնէից. և նմին ընդգրկելով զնոյն հաւատս, թէպէտ և զընդունելութիւն մկրտութեան յապաղեաց մինչև ցօր մահուան իւրոյ:

Նախանձաւոր գտաւ յոյժ 'ի յառաջադիմութիւն քրիստոնէութեան, իւրովք իսկ ծախիւքն կանգնելով տաճարս և շնորհելով կալուածս եկամտի 'ի պահպանութիւն նոցին, որպէս և պաշտօնէից Ճշմարտին Աստուծոյ, զորս ոչ միայն Ճոխացոյց ստացուածովք, այլ և հաստատուն օրինօք արժան համարեցաւ զընծայաբերութիւն հաւատացելոց 'ի տաճարս Աստուծոյ և առ պաշտօնեայս նորա: Ի ցուցանել զյարգ մեծարանացն զոր ունէր առ փրկական նշան խաչին՝ ոչ շատ համարեցաւ արգելուլ, զի մի ոք յայնմ հետէ դատապարտեսցի յայն պատուհաս, այլ և դրօշս խաչանիշս հրամայեաց առնել զինուորաց, և 'ի դրամս զնոյն քանդակել:

Յետ մահու հակառակորդաց իւրոց իբրև եղև նմին իշխան կայսր, ետ փակել զբազմութիւն մեհենից՝ մերկացուցեալ զայնոսիկ 'ի հեթանոսական զարդուց. արգել զհրապարակական և զառանձնական զոհագործութիւնս և զանվայել հանդէսս խաղարկութեանց, որպէս և զահարկու տեսարանս մենամարտութեանց:

Պատուաւորք և քաղաքապետք՝ յաւէտ առ մարդկան ականէ քան 'ի նախանձու առ Ճշմարիտ աստուածպաշտութեն, ամենայն խնամով ջանային նպաստել կամաց թագաւորին, քանզի չէին ձեռնհաս դիմամարտելոյ:

Յամին 324 'ի ծագել գժտութեան ընդ մէջ Կոստանդիանոսի և Լիկինիանոսի քեռայն նորա, որ անուանեալ էր գահակից կայսերութեան, և նստէր 'ի Նիկոմիդիա, հարկ եղև Կոստանդիանոսի դիմել անդր զօրու ծանու, և կրկին մարտիւ խորտակեալ զզօրս Լիկինիանոսի՝ ձերբակալ արար զնա, և մերկացուցեալ յանրաւ զանձոյն՝ առաքեաց յաքսորս 'ի Թեսաղոնիկէ. և 'ի յաջորդ ամի 325 խնդրեալ զգաղտնի խորհուրդ չարութեան Լիկինիանոսի ընդդէմ իւր, ետ բառնալ զնա 'ի կենաց. որով խաղաղացաւ ինքնակալ տէրութիւն նորա։ Յետ այնորիկ հաճեալ ընդ Բիւզանդիոն քաղաք, և զարդարեալ զայն արքայավայել շինուածովք՝ փոխադրեաց անդր զաթոռ կայսրութեան՝ յամին 328, յորմէ և քաղաքն այն անուանեցաւ Կոստանդնուպոլիս և Նոր Հռոմ։

ԳԼՈՒԽ Է.

Վիճակ եկեղեցւոյն Հայաստանեայց։ — Ուղևորութիւն սրբոյն Գրիգորի և Տրդատայ 'ի Հռոմ։

Յետ պայծառացուցանելոյ սրբոյն Գրիգորի զՀայաստան աշխարհ կողմօք աստուածպաշտութեան, և կացուցանելոյ զառաքելաշնորհ հովիւս յառաջնորդութիւն հօտին Քրիստոսի, այնուհետև ինքն ստէպ ստէպ, է զի առանձինն և է զի քանի մի ճգնաւոր ընկերօք մեկուսանայր յամբոխէ մարդկան, և գնալով 'ի լերինս և յանապատս՝ միտ դնէր ճգնութեան, աղօթից և պահոց. սակայն ոչ դադարէր ստէպ այց առնել հօտին Քրիստոսի 'ի հաստատել զնոսա 'ի հաւատս ճշմարտութեան։ Ի գնալ նորա երբեմն ընդ կողմն Դարանաղեաց 'ի լեառն Սեպուհ, ըստ աստուածային յայտնութեան եգիտ անդ զսուրբ կոյսն Մանէ, որ էր մի յընկերաց սրբոց Հռիփսիմեանց և բնակէր յայրի միում ճգնաւորական կենօք, և յաղաչանաց սրբուհւոյն դադարեալ անդ զաւուրս երիս, իբրև վախճանեցաւ նա զկեանսն՝ երանելին Գրիգոր թաղեաց զմարմին նորա, կալաւ զփապարն զայն իւր 'ի բնակութիւն։ Յայս ճգնարան սրբոյն Գրիգորի ստէպ գայր յայցելութիւն Տրդատ թագաւոր փափաքելով լինել նմին կենակից։

Նորադարձ հօտն Քրիստոսի ճանաչելով զերախտիս սրբոյ հայրապետին, և խնդրելով յաւերժացուցանել զյիշատակ նորա, փոյթ կալաւ գիտել զազգատոհմն. և իմացեալ իշխանաց ումանց՝ եթէ իցեն նորա երկու որդիք 'ի Կեսարիա, ծանուցին Տրդատայ արքայի. և յարձակել նորա անդր զեսպանս՝ զոմն զՎրթանէս զերէց որդին ամուսնացեալ 'ի Կեսարիա, իսկ զկրտսերն Արիստակէս՝ զի ցանկացեալ ճգնաւորական կենաց՝

յառանձնութեան կայր յանապատի ուրեք. վասն որոյ 'ի հրամանէ թագաւորին բռնադատեալ ածին զնա առ Տրդատ արքայ. որոյ տեսեալ զնա և խնդամնեալ յոյժ՝ տարաւ զերկոսին ևս առ սուրբն Գրիգոր 'ի լեառն Սեպուհ 'ի փառաւոր ճգնութեան նորա։ Անդ երանելին Տրդատ մեծաւ աղերսանօք խնդրեաց 'ի սրբոյն Գրիգորէ, զի իւր փոխանորդ իւր ձեռնադրեսցէ զճգնաւորն Արիստակէս նստել 'ի քաղաքի ընդ նորադարձ ժողովրդեան։ Զիջեալ սրբոյն 'ի պատշաճական աղերս թագաւորին, իջ 'ի լեռնէ, և եկեալ 'ի Վաղարշապատ քաղաք՝ ձեռնադրեաց եպիսկոպոս զերանելին Արիստակէս յամի տեառն 318, և ապա առեալ զնա շրջեցաւ յայցելութիւն բազում քաղաքաց, հաստատելով զամենեսին 'ի հաւատս ճշմարտութեան. յայնժամ եցոյց և զառ յապա արժանաժառանգ յաջորդութիւն որդւոյ իւրոյ, ըստ որում եղեւ՝ յետ իւր չորեքտասան ամաց փոխանորդ և վաստակակից լինելոյ հօրն իւրում։

Զայնու ժամանակաւ լուեալ Տրդատայ արքայի զդարձ մեծին Կոստանդիանոսի 'ի հաւատս, քանզի մտերիմ էր նորա կանխաւ և բարեկամ, յօժարեցաւ գնալ առ նա 'ի խնդակցութիւն. և առեալ զսուրբն Գրիգոր հանդերձ բազմութեամբ իշխանաց գնաց 'ի Հռոմ յամին 319, ուր պատուեցան մեծապէս 'ի կայսերէն և 'ի սրբոյն Սեղբեստրոսէ Հռոմայ հայրապետէն, և յետ ամսօրեայ ցնծալից կենակցութեան նոցա ընդ միմեանս՝ 'ի մեկնելն անտի՝ սուրբն Գրիգոր եպիսկոպոսապետ և կաթողիկոս Հայոց անուանեալ, ընկալաւ 'ի պարգևս 'ի սրբոյն Սեղբեստրոսէ զանազան նշխարս սրբոց առաքելոց և զայլոց վկայից. միանգամայն հաստատեցաւ 'ի նոսա, որպէս և 'ի մէջ երկուց թագաւորացն, դաշնադիր սիրոյ և միաբանութեան։ Յայնժամ մեծն Կոստանդիանոս 'ի նշան սերտ մտերմութեան արժանապատիւ հիւրոյն՝ բազում և մեծագին ընծայիւք մեծարեաց զնոսին, և ոսկեպատ արքունի կառօք եդ զնոսա յուղի։

ԳԼՈՒԽ Բ.

Յառաջադիմութիւն քրիստոսական հաւատոյ։

Ի ՓԱՐԱՏԻԼ թանձրամած ամպոց խաւարի հեթանոսութեան՝ պայծառութիւն լուսոյ աւետարանին Քրիստոսի սկսաւ ծաւալիլ ընդ համօրէն տիեզերս. զի առ ժամանակօք լուսաւորութեան ազգիս և տէրութեան Հռովմայեցւոց՝ եկին 'ի հաւատս Վիրք, Պարսք, Հնդիկք և այլ ազգք հեռաւորք։

Յաղագս դարձին Վրաց 'ի հաւատս քրիստոնէութեան ունիմք հաւաստի աւանդութիւն 'ի Մովսիսէ Խորենացւոյ, եթէ սրբուհին Նունէ մի յընկերաց սրբոց Հռիփսիմեանց փախուցեալ յաշխարհն Վրաց, սրբութեամբ վարուցն և նշանօք զանազան սքանչելեաց դարձոյց զնոսա 'ի հաւատս։ Սակայն Յոյնք, յորոց և Լատինք, անտեղեակք անցից Հռիփսիմեանց, զնոյն պատմեն յայլոյ դիմէ զրէն. որպէս թէ կին ոմն էր նա քրիստոնեայ գերեալ 'ի ժողովրդոց Վրաստանի, և բնակէր 'ի Մծխիթա, և սրբակրօն վարուք առնէր սքանչելիս 'ի վերայ ախտաժետաց։ Իսկ 'ի հիւանդանալ թագուհւոյն Վրաց հիւանդութիւն ծանր և վտանգաւոր, կոչեաց զկինն զայն, յորմէ և բժշկեալ՝ լուաւ զքարոզութիւն աւետարանին, և համոզեալ ընդ այն՝ խնամ կալաւ դարձուցանել զայր իւր զթագաւորն Վրաց։ Իսկ նորա մտադիւր ընկալեալ զսուրբ հաւատսն՝ խնդրեաց 'ի մեծէն Կոստանդիանոսէ առաքել եպիսկոպոսունս 'ի հրահանգել զժողովուրդ իւր. ընդ որ խնդամտեալ Կոստանդիանոսի առաւել քան ընդ տիրել մեծամեծ գաւառաց, առաքեաց անդր առաքելաջան հովիւս 'ի քարոզութիւն աւետարանին։ Ըստ պատմելոյ Մովսիսի Խորենացւոյ՝ սրբուհին Նունէ յետ լուսաւորելոյ զՎիրս եղև առաքելուհի և այլոց գաւառաց մինչև 'ի սահմանս Մազքթաց։

Ընդ այն ժամանակս տարածեցաւ քրիստոնէութիւն և յաշխարհին Պարսից՝ մինչև բազմանալ յոյժ քրիստոնէից և շինել զանազան եկեղեցիս. ընդ որ զայրացեալ մոգուց՝ գրգռեցին զՇապուհ թագաւոր ջնջել զքրիստոնէայս. իսկ նորա վառեալ նախանձու հայրենի օրինաց կրակապաշտութեան՝ յարոյց հալածումն 'ի վերայ հաւատացելոց, յորում նահատակեցաւ Շմաւոն եպիսկոպոս Տիզբոնի, Ակեփսիմէ եպիսկոպոս, Յովսէփ քահանայ և Այիթալաս սարկաւագ. որպէս և Աբրահամ եպիսկոպոս Արբաւիլ քաղաքի՝ ձեռնադրեալն 'ի սրբոյ Լուսաւորչէն մերմէ։ Նոյնպէս և Միլէ եպիսկոպոս, և Աուր քահանայ և Շինա սարկաւագ, թող և զայլ բիւրաւորս որք նահատակեցան յաւուրս Շապհոյ արքայի, մինչև թուոյ նոցին ժամանել ըստ ասելոյ ոմանց ցերկերիւր հազար ոգիս։ Սակայն տեսեալ Շապհոյ թէ ոչինչ օգուտ 'ի կոտորելոյ զքրիստոնեայս, դադարեցաւ 'ի հալածելոյ, և թոյլ ետ ամենեցուն անխտիր պաշտել զիւրեանց հաւատս. մանաւանդ զի և ընկալաւ նամակ 'ի մեծէն Կոստանդիանոսէ որ յորդոր լինէր նմա զթութեամբ վարել ընդ քրիստոնեայս։

Ի նոյին ժամանակս յամի տեառն իբր 318 տարածեցաւ քրիստոնէութիւն և 'ի Հնդիկս. զի սուրբն Փրումենտիոս 'ի մանկութեան հասակի գերի վարեալ յԵթովպիա՝ Ճարտարամիտ յաջողակութեամբն և բարեպաշտութեամբ վարուցն՝ եհաս անդ 'ի պատիւ աշխարհական իշխանութեան, որով առ փոքր փոքր ջանահնար եղև կոչել անդր զքրիստոնեայս 'ի սահմանաց տէրութեան Հռովմայեցւոց։ Եւ եղև 'ի Ճանապարհորդել նորա յԵգիպտոս, սուրբն Աթանաս՝ որ յայնժամ ունէր զաթոռ եպիսկոպոսութեան Աղեքսանդրիոյ, ձեռնադրեաց զնա եպիսկոպոս, և յորդորեաց դառնալ անդրէն 'ի նոյն կողմանս, ուր զառաջինն տացեալ ունէր զհաւատացեալս 'ի Քրիստոս. ընդ որ հաւանեալ Փրումենտիոսի՝ հաստատեաց զաթոռ իւր 'ի Հապէշս, և դարձոյց զնոսին 'ի հաւատս քրիստոնէութեան։ Ի ժամանակէ անտի և այսր սովորութիւն եղև նոցա ընդունել զձեռնադրութիւն յեկեղեցւոյն Աղեքսանդրիոյ։

Ազգք Սարակինոսաց (որք յետ ժամանակաց յերևել Մահմետի համբաւաւորք գտան) 'ի չորրորդ դարու բնակէին յայլևայլ կողմանս Արաբիոյ, տարածեալք ափիւ մինչև ցՄիջագետս Ասորւոց։ Ժողովուրդս այս բազմաթիւ և բազմատոհմիկ՝ բաժանեալ 'ի զանազան ցեղս, սովոր էր վարձուք անձնամատոյց լինել 'ի ծառայութիւն Հռովմայեցւոց, և երբեմն եւս Պարսից։ Բազումք 'ի նոցանէ յորդորեալք յանարատութենէ վարուց և 'ի պանծելի խոստովանութենէ կենաց անապատաւոր միանձանց՝ առ ժամանակօք Թագաւորութեանն Վաղեսի ընկալան զճշմարիտ հաւատս քրիստոնէութեան, և սուրբն Հիլարիոս կանգնեաց նոցա եկեղեցի 'ի քաղաքն Հեղուսա։

Արաբացի ժողովուրդք՝ որք բնակէին 'ի ծայրս սահմանաց երջանիկն Արաբիոյ, յայսմ չորրորդ դարու ընկալան զքրիստոնէութիւն՝ 'ի պատճառս դեսպանութեանն զոր Կոստանդոս որդի մեծին Կոստանդիանոսի յղեալ էր նոցա։ Քանզի Թէոփիլոս անուն՝ Հնդիկ ազգաւ, որ յԱրիանեանց առեալ էր զձեռնադրութիւն եպիսկոպոսութեան՝ լինելով գլուխ այնր դեսպանութեան, 'ի ժամանակին անդր խնամ կալաւ ուսուցանել իշխանին Արաբացւոց զվարդապետութիւն քրիստոնէական հաւատոյ․ զոր և ընկալեալ իշխանին՝ եթող զկրօն նախնեաց իւրոց, և ետ կանգնել եկեղեցիս, որք օծան 'ի Թէոփիլոսէ։ Յետ այնորիկ գնաց Թէոփիլոս 'ի հայրենիս իւր 'ի կղզին Դիու, և անտի յայլ կողմանս Հնդկաց քարոզելով զՔրիստոս։

ԳԼՈՒԽ Թ.

Ծագումն Արիոսեան մոլորութեան։

ԽՆԱՄՔ Կոստանդիանոսի 'ի ջնջել զկռապաշտութիւն ընդհատեցան առ ժամանակ մի 'ի խռովութենէ մոլար վարդապետութեան իրիք, որ ոչ նուազ վնասակար էր եկեղեցւոյ քան զհեթանոսութիւն։ Ծնող և սկզբնահայր մոլորութեանս եկաց Արիոս երէց աղեքսանդրացի, այր վարժ 'ի մարդկային գիտութիւնս, սթափ, նրբամիտ և խորագէտ, որ 'ի բացատրելն զիմաստս մտաց իւրոց զիւրընտել բանիւ՝ համարեալ էր անյաղթելի 'ի վէճս։ Խորամանկս այս և յանդուգն այր՝ ճարտար էր որսալ զմիտս ունկնդրաց և ձգել զնոսա 'ի հաւանութիւն բանից իւրոց։ Բայց աւելի ուրումն *մատենագրի՝ թէպէտ և ծնեալ էր 'ի խռովել զաշխարհ, սակայն և այնպէս ցուցանէր զանձն խաղաղասէր, քաղցր և պարզամիտ, հեռի յամենայն նենգութենէ, որում նպաստաւոր գոլ և արտաքին տեսիլ կերպարանացն 'ի խաբել զայլս. զի բարձրահասակ էր անձամբ և նիհար մարմնով, լուրջ դիմօք, գունատեալ տեսլեամբ և ճգնաւորն. կենցաղավարէր ընդ ամենեսին շնորհալից բանիւք 'ի հաճոյել և 'ի շահել զնոսին. այնպէս իմն թուէր 'ի խօսս՝ որպէս թէ ճշմարտութեան միայն իցէ հետամուտ և նախանձաւոր աստուածպաշտութեան:*

Ի շահիլ կուսակիցս՝ սկսաւ յԱղեքսանդրիա քաղաքի յամին 324 ուսուցանել զնոր վարդապետութիւն իւր, և հաճոյելով զտկարութիւն մարդկային մտաց՝ 'ի դոյզն ժամանակի որսացաւ զբազումս: Իսկ մոլորութեան հերեսիովտապետիս Որդին Աստուծոյ ոչ էր հաւասար Հօր, ոչ ևս նմին բնութենակից, այլ և ոչ Աստուած, այլ ստեղծուած յոչնչէ, որ թէպէտ և ունէր, ասէ, կատարելութիւնս ըստ իրաց ինչ հաղորդակցս աստուածութեան, սակայն մեղանչական էր և ներքոյ անկեալ մարդկային տկարութեանց:

Ամբարիշտս այս այր գուն գործէր հաստատել զմոլորութիւնս իւր իմաստասիրական նրբախօսութեամբք, որք սովոր են պատրել զմիտս 'ի քննութեան աստուածային անհաս խորհրդոյն: Զկարծիս մոլորութեան իւրոյ ընդունելի արար բազմաց 'ի պարզամիտ ժողովրդենէն, 'ի սարկաւագաց, 'ի քահանայից, ևս և յեպիսկոպոսաց: Սակայն առաւելապէս պատրեցան կանայք յարտաքնայարդար բարեպաշտութենէ նորա, որով գիտաց կեղծաւորիլ Արիոս, մինչև եօթնհարիւր կուսանք հաւատաւորք Աղեքսանդրիա քաղաքի և մօտաւոր տեղեաց յարեցան 'ի նա իբր 'ի հոգևոր հայր և 'ի վարժապետ իւրեանց:

Աշակերտք Արիոսի զմոլորութիւնս նորա սկսան յայտնի և համարձակ քարոզել 'ի հրապարակս և յեկեղեցիս. զառաջինն ճարտար պերճախօսութեամբ պաշտպանեալ զթիւր վարդապետութիւն իւրեանց, և ապա թափէին և զթոյնս յունկն հասարակաց: Ի քաղաքս և 'ի գիւղս Եգիպտոսի, Ասորւոց և Պաղեստինոյ ոչ այլ ինչ լսել լինէին, բայց վէճք և հակառակութիւնք ։ Ժողովուրդն քննիչ էր և դատաւոր հակառակութեանց · ընտանիք և գերդաստանք հերձեալ բաժանէին 'ի միմեանց սակս հաւատոյ և դաւանութեան, որում անկ էր լինել զօդ սիրոյ և միաբանութեան ամենեցուն ընդ միմեանս ։

Ի խափանել զվնաս մոլորութեանս՝ կրկին ժողովք մի զկնի միոյ գումարեալք յԱղեքսանդրիա, նզովեցին զուսուցիչն և զառաջնորդ այնպիսի չարեաց · սակայն նորա ունելով իւր կուսակիցս զանուն զօրեղ, զճարտարմտութիւն՝ գուն գործէր զխափանել հնարիւն, որովք ուղղափառ առաջնորդք փութային անդէն 'ի սկզբան շիջուցանել զհուր մոլորութեանն ։ Առաւել համբաւաւորքն 'ի համախոհս Արիոսի էին երկուքին Եւսեբիոսք, յորոց մին էր եպիսկոպոս Նիկոմիդեայ, և միւսն Կեսարիոյ · երկոքեան ևս միօրինակ մարդելսգք, որք գիտէին քաջ յարմարել զանձինս հանգամանաց ժամանակին · սակայն առաջինն յանդգնագոյն էր և կամակոր, իսկ երկրորդն մեղմ և զգուշաւոր, այլ զուգաձայնք միմեանց 'ի գործս ։ Նա յորժամ առաքեցաւ Արիոս մեկնել յԱղեքսանդրիոյ, ընկալաւ զնա Եւսեբիոս Նիկոմիդացի, և ետ նմա տեղի ապաստանի ։

Յաքսորանս իւր յայս շարագրեաց Արիոս զգրեթուած իւր Թալիա անուանակոչեալ, այն է Ուրախութիւն խնճոյից · Զոր և տաղաչափեալ չափաբերութ̅բ Սոտադեայ հանճարաւոր ցոփ տաղիցն, արկ 'ի նմին զամենայն սերմանս իւրոյ թիւր վարդապետութեանցն · և առ հեշտընկալ առնելոյ զայն և տխմարագունիցն, յաւել 'ի նմա երգս ըստ հաճոյից և ըստ ախորժակաց՝ ամենայն կարգաց ռամկին · յորս էին և վասն ուղևորաց, նաւաստեաց և վասն որոց վաստակեն յաղօրիս յարմարագիր տաղաչափութիւնք ։ Զաղէտս պանդխտութեան և զհալածանաց իւրոց՝ այնպէս նկարագրէր, մինչև շարժել 'ի կարեկցութիւն ոչ միայն զռամիկս, այլ և զեպիսկոպոսունս ։

Եւսեբիոս Նիկոմիդացի՝ ընդդէմ երկուց ժողովոյն Աղեքսանդրիոյ գումարեաց զայլ ժողով 'ի Բիւթանիա, պաշտպան կալ մոլորութեան Արիոսի · և ոչ շատ համարեալ զայն, գուն գործեաց խառնել զեկեզեցին Եգիպտոսի, Լիբիոյ և արևելեայց առ հասարակ, զի զօր ամենայն յաճախէր նամականի ընդդէմ միմեանց։

ԳԼՈՒԽ Ժ.

Ժողով Նիկիոյ։

ԿԱՆԽԱՏԵՍ մտօք խնդրեալ Կոստանդիանոսի զարգասխս բառնալու հակառակութեանցն, զրգռելոց 'ի նոր մոլորութենէն, գրեաց նամակ առ Արիոս և առ Աղեքսանդր հայրապետ, յորում ըստ թելադրութեանն տուելոց նմա յայլոց՝ բանս 'ի մէջ առեալ զհակառակութենէ նոցա՝ ասէ. « Խնդիրքն, որովք բաժանեալ կայք, չեն 'ի կարևորաց անտի, այլ թուին վայրապար յառաջ եկեալք 'ի դատարկութենէ։ Պա՛րթին լինել այդպիսիք առանձինն 'ի հրահանգս հանճարոյ, այլ ոչ յունկն ժողովրդեան. և 'ի վէճ այսպիսի՝ պէտք են զսպել զմարմաջս խօսելոյ։ Երկոցուն ձեր նոյն են միտք, և հեշտութեամբ մարթ է ձեզ միաբանել. իսկ եթէ չիցէ հնար միաբանել յայսպիսի վէճ ինչին՝ գէթ լռեջիք 'ի խօսելոյ »։

Այս նամակ, յորում պատուիրէ զլռութիւն երկոցունց կողմանց, թուի շարադրեալ յԵւսեբիոսէ Նիկոմիդացւոյ. բայց խնդիրն՝ զորմէ ասէ լինել ինչին, էր զաստուածութենէն Քրիստոսի, եթէ արդարև Աստուած իցէ թէ արարած. որում զհետ գայր, թէ բազմաթիւ վկայք և այլ սուրբք որք զկնի քարոզութեան առաքելոցն պաշտեցին զնա, կռապաշտք իցեն՝ պաշտօն տուեալ արարածոյ. կամ թէ պաշտեալ իցեն զերկուս աստուածս. համարելով թէ Քրիստոս Աստուած իցէ, այլ ոչ նոյն ընդ Աստուծոյ Հօր։

Տեսեալ Կոստանդիանոսի զի 'ի դերև ելին բանք նամակին, հարկ համարեցաւ գումարել ժողով հանրական ամենայն գործակալաց եկեղեցւոյ. վասն որոյ առաքեաց նամակ շրջաբերական յամենայն գաւառս քրիստոնէից՝ հրաւիրելով զեպիսկոպոսունս և զգահերէցս եկեղեցւոյն գալ ժողովել 'ի Նիկիա քաղաք Բիւթանացւոց։ Ընդ սոսա առանձին գրով կոչեցաւ և սուրբ Գրիգոր լուսաւորիչն մեր. այլ նա վասն խոնարհութեան իւրոյ հրաժարեալ անտի, փոխանակ իւր առաքեաց զսուրբն Արիստակէս։

Երեքհարիւր ութևտասն հայրապետք՝ ընդ որս և բազմաթիւ քահանայք և սարկաւագունք գտան յայն ժողով. ուր ոչ կարելով գալ որոյն Սեղբեստրոսի Հռովմայ հայրապետի վասն ծերութեան հասակին, առաքեաց անդր զղեսպանս իւր։ Առաջիկայ գտաւ ժողովոյն և Կոստանդիանոս Թագաւոր՝ լինել միջնորդ խաղաղութեան եկեղեցւոյ. և թէպէտ տակաւին լոկ երեխայ էր, սակայն նստաւ 'ի մէջ եպիսկոպոսաց 'ի վերայ ոսկեղէն աթոռոյ։ Սկիզբն եղև ժողովոյն 'ի պալատն արքունի յամին 325 յ 19 յունիսի։ Կոչեցաւ անդր Արիոս. որոյ վստահացեալ 'ի պաշտպանութիւն եպիսկոպոսաց ոմանց յանդգնեցաւ ջատագովել զմոլորութիւնս իւր. սակայն ամօթապարտ եղև 'ի սրբոյն Աթանասէ որ 'ի ժամանակին յայնմիկ սարկաւագ ևեթ էր։ Ժողովն յետ յայտ յանդիման ցուցանելոյ զանհանդուրժելի վէհ մոլորութեանն Արիոսի, կամեցաւ սահմանել զուղղափառ վարդապետութիւն եկեղեցւոյ՝ սկիզբն առնելով 'ի յայտարարութենէ անտի, եթէ «Քրիստոս է Ճշմարիտ Աստուած՝ հաւասար Հօր իւրում երկնաւորի, զօրութիւն, պատկեր և էակից Հօր, որպէս և Ճշմարիտ Աստուած։ Եւ քանզի արիոսեանք յաջողակք 'ի նրբախօսութեան՝ գտանէին միշտ նորանոր եղանակս մեկնաբանելոյ զյայտարարութիւնս հարցն, ժողովն ոչ եգիտ բառ յարմարագոյն 'ի բացատրել զանբաժանելի միութիւն բնութեան՝ քան զբառն Համագոյակից, զոր առաջի արար սուրբն Աթանաս՝ զգլխաւոր ջախջախիչ մոլորութեան արիոսեանց։

Ի միաբանել համօրէն ժողովականաց 'ի վերայ այսր բանի, որպէս և 'ի վերայ այլոց պատշաճականաց առ բացայայտութիւն ուղղափառ հաւատոյ, Ովսիոս փոխանորդ պապին ընթերցաւ զհանդիսական դաւանութիւն, զՆիկիականն անուանեալ հանգանակ հաւատոյ, բովանդակեալ 'ի բանս յայսոսիկ. «Հաւատամք 'ի մի Աստուած Հայր ամենակալ արարիչ ամենայն երևելեաց և աներևութից. և 'ի մի միայն Տէր Յիսուս «Քրիստոս միածին որդին Աստուծոյ, ծնեալ 'ի Հօրէ՝

այսինքն՝ 'ի բնութենէ Հօր. Աստուած յԱստուծոյ, Լոյս 'ի լուսոյ, Աստուած ճշմարիտ՝ յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ և ոչ արարած, համագոյակից Հօր, որով ամենայն ինչ եղև յերկինս և 'ի վերայ երկրի: Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից մարմնացաւ, մարդացաւ, չարչարեցաւ և յարեաւ յերրորդ աւուր. համբարձաւ յերկինս, և գալոց է 'ի դատել զկենդանիս և զմեռեալս.. և որ 'ի կարգին: Այս լուր խնդրոյ ժողովոյն Արիոս ընդ գլխաւոր համախոհս իւր վաղվաղակի արտաքսեցաւ յաքսորս, որով յանդուգն համարձակութիւն նորա 'ի մուտս ժողովոյն՝ եղև նմա 'ի նախատինս անարգութեան:

Զկնի հաստատելոյ ժողովոյն զվարդապետութիւն համագոյակցութեան Բանին, սկիզբն արար բարեկարգութեան եկեղեցւոյ և սահմանեաց զպասեքն մի եւս տօնել 'ի չորեքտասանն լուսնի, այլ 'ի կիւրակէին որ զհետ գայ լման լուսնոյ յետ գարնանային հաւասարակածի. որով վերջացաւ խնդիր հակառակութեանն յուզելոյ յաւուրց անտի քահանայապետութեան սրբոյն Վիկտորի: Այս եղեն և այլ քան կանոնադրութիւնք՝ 'ի բարեկարգութիւն եկեղեցւոյ, յորս արգելաւ ձեռնադրութիւն նորադարձից 'ի հաւատս, որպէս և ուրացողաց, թէպէտ և զղջացեալք իցեն: Արգելան և սահմանք տարածութեան վիճակի եպիսկոպոսաց. միանգամայն տուաւ մետրապօլտական պատիւ արքեպիսկոպոսաց եղելոց 'ի մայրաքաղաքս: Եւ զի 'ի ժամանակէ անտի մնացեալ էր անկարգութիւն վիճակափոխութեան, արգելաւ եպիսկոպոսաց, քահանայից և սարկաւագաց չթողուլ զեկեղեցիս իւրեանց և չանցանել յայլ՝ որով և իցէ պատրուակաւ: Սահմանեցաւ եւս, զի եպիսկոպոսունք երեցունց ականաւոր քաղաքաց աշխարհի, այսինքն Հռոմայ, Աղեքսանդրիոյ և Անտիոքայ՝ ունիցին իշխանութիւն 'ի վերայ մերձաւոր գաւառացն:

Յետ կատարման ժողովոյն՝ կայսրն Կոստանդիանոս նախ քան զարձակել զսուրբ հայրսն՝ ետ նոցա պարգևս, համբուրելով զայլս վիրացն, զորս յօժարական սիրով ընկալեալ էին նոքա 'ի տանջանսն վասն խոստովանութեան հաւատոյն Քրիստոսի: Այս առաջին տիեզե-

բակման ժողով աւարտեցաւ 'ի 25 *օգոստոսի յամի տեառն* 325 ։

ԳԼՈՒԽ ԺԱ․

Դարձ Արիոսի յաքսորանաց, և մահ նորա ։

Ի ԲԱԶՄԱԹԻՒ *կուսակիցս Արիոսի 'ի դրան կայսեր' էր և քահանայ մի մեծարոյ յաչս Կոստանդիանոսի. զի Կոստանդիա քոյր նորա' կին Լիկինիանոսի, 'ի մեռանել իւրում նմա յանձն արարեալ էր զքահանայն զայն ։ Արդ 'ի թելադրութենէ այնր երիցու յետս կոչեցաւ Արիոս զկնի երեքամեայ աքսորանացն, և մատոյց Կոստանդիանոսի դաւանութիւն ինչ հաւատոյ, յորում համաձայն բանիւք ծածկեալ ունէր զթոյն չարութեան իւրոյ. իսկ կայսրն համարելով զնա ուղղադաւան' թոյլ ետ նմա դառնալ յԱղեքսանդրիա ։ Բայց քանզի սուրբն Աթանաս' յաջորդ Աղեքսանդրի հայրապետի, և հզօր ախոյեան աստուածութեան Բանին, ոչ կամեցաւ ընդունել զնա 'ի հաղորդութիւն եկեղեցւոյ, արիոսեանք ամբաստան եղեն զնմանէ առաջի ժողովոյն, որ նախ գումարեցաւ 'ի Կեսարիա, և ապա յամին* 335 *փոխադրեցաւ 'ի Տիւրոս. և ետուն ընկենուլ զնա յաթոռոյ' սուտ և անհեթեթ զրպարտութեամբ ։ Այս ժողովակ ընկալաւ զդաւանութիւն հաւատոյ Արիոսի' զյօրինեալն պատիր և երկդիմի բանիւք. միանգամայն և նորաստամանոյց նմին եղեալ' գրեաց առ եկեղեցին Աղեքսանդրացւոց, սակայն չեղև ընդունելի ժողովրդեան, զի զայն ժողով համարեցան պատճառ աքսորանաց սրբոյն Աթանասի ։*

Լուեալ Կոստանդիանոսի զխռովումն Աղեքսանդրացւոց 'ի գնալոյ անդր Արիոսի, կոչեաց զնա 'ի Կոստանդնուպօլիս. և 'ի հարցանելն զնա' եթէ անսայցէ Նիկիական հաւատոյ, Արիոս երդմամբ պատասխանի արար' եթէ դաւանութիւն իւր իցէ ուղղափառական, և չունիցի զմոլորութիւնս որոց վասն 'ի զանազան ժողովս դատապարտեցաւ ։ Յայնժամ կայսրն հրամայեաց Աղեքսանդրի հայրապետին Կոստանդնուպօլսոյ անյապաղ ընդունել զնա 'ի հաղորդութիւն հաւատացելոց ։

Եւ 'ի խորհիլ սրբոյ հայրապետին մերժել զհերետիկոսապետն որ համդերձեալ էր բազմութեամբ զինելոց բռնի մտանել յեկեղեցին, զճանապարհայն ստիպեալ Արիոսի 'ի կարեաց բնութեան սատակեցաւ 'ի գարշելւոյն յամին 336:

ԳԼՈՒԽ ԺԲ.

Գիւտ սրբոյ խաչին. և բարեպաշտութիւն սրբուհւոյն Հեղինեայ:

Ի ՊԱՐԾԱՆՍ եկեղեցւոյ սրբոյ և 'ի փառաւորութիւն յաւելան և զքանչելի դէպք գիւտի սրբոյ խաչին յամին տեառն 327, 'ի խնդութիւն մեծ և 'ի մխիթարութիւն հաւատացելոց: Արքուհին Հեղինէ մայր Կոստանդիանոսի՝ դշխոյ զարդարեալ ամենայն բարեպաշտութեամբ և արիական հոգւով՝ 'ի հասակի եօթանասնեկին ամաց, կամելով կանգնել յԵրուսաղէմ տաճար հոյակապ՝ ել 'ի ճանապարհ գնալ անդր, յամենայն տեղիս ընդ որս անցանէր ցուցանելով զձիրս ողորմութեան իւրոյ: Իւրաձեռն առատութեամբ պարգևաբաշխ լինէր ամենեցուն, մանաւանդ զինուորաց և կարօտելոց. ամանց զրամս, և այլոց հանդերձս մատակարարելով: Միանգամայն վարելով և զիշխանութիւնն զոր ընկալեալ էր յորդւոյ իւրմէ, ազատութիւն շնորհէր բանտարկելոց, և ներումն յանցաւորաց և դատապարտելոյն 'ի մահու, որով ողորմութիւն դշխոյին եղև անընդհատ շնորհաբաշխութիւն և բարերարութիւն:

Հասեալ յԵրուսաղէմ, և տեսեալ զողորմ հանգամանս յորս կային սուրբ տեղիք աստուածակոխ քաղաքին, շարժեցաւ 'ի գութ: Որ հեթանոսք առ 'ի խափանել զքրիստոնեայս զի մի այլ եւս յաճախեսցեն 'ի Գողգոթա, կանգնեալ էին անդ մեհեան Ափրոդիտեան կռոց, որով կորուսեալ էր զոգցես և անհետացեալ յիշատակ տեղւոյ գերեզմանին Քրիստոսի: Արքուհին Հեղինէ ընկալեալ տեղեկութիւն յաւանդութենէ Եբրայեցւոյ ուրումն, ետ կործանել զմեհեանն և եգիտ անդ զտապան փրկչին: Ապա 'ի բաց պեղեալ զաւերակսն որ առ տապանաւն, գտան երեք խաչք, և 'ի ձեռն հրաշից յարութեան մեռելոյ պատանւոյ ուրաք յայտնեցաւ խաչն Քրիստոսի։ Օր սրբուհւոյն Հեղինեայ գանձ անգին հանդերձ, երկիր եպագ խաչեցելոյն 'ի նմա. ապա զմասն ինչ 'ի պատուական գանձէ անտի առաքեաց առ Կոստանդիանոս, և զմնացեալն եթող յԵրուսաղէմ՝ ամփոփեալ զայն յարծաթի տապանակի։ Միանգամայն հիմն էարկ հոյակապ տաճարին որ յանուն Յարութեան Քրիստոսի. և առ նովին ժամանակաւ կանգնեցան 'ի նմանէ և այլ երկու եկեղեցիք, մին 'ի Բեթղեհէմ՝ 'ի պատիւ ծննդեանն Քրիստոսի, և միւսն 'ի լեառն Ձիթենեաց առ 'ի յիշատակ համբարձմանն Քրիստոսի։

Յետ վայելչագարդ պայծառացուցանելոյ զսուրբ տեղիսն՝ դարձաւ անդրէն առ որդի իւր, և անդ առ նմա փոխեցաւ 'ի կենաց աստի առ ցանկալին իւր Քրիստոս յամին 327 յամսեանն օգոստոսի 'ի պատուեալ հասակի՝ լի արդեամբք առաքինութեան աստուածահաճոյ վարուց։ Պարզութեամբ և անշքութեամբ հանդերձից, որպէս և խոնարհական գործովք, թէպէտ և ծածկեալ ունէր զփառս չքնաղութեան, սակայն մեծանձնութիւն արքայական երևէր 'ի դէմսն և 'ի գնացս։ Յեկեղեցիս 'ի ժողովս կանանց որոշէր 'ի նոցունց ջերմեռանդութեամբն եւեթ։ Ի մեռանել անդ իւրում՝ յորդոր եղև որդւոյն ծառայել Աստուծոյ, և հաստատուն կալ 'ի հաւատս ճշմարտութեան։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Մահ մեծին Կոստանդիանոսի։ — Կոստանդ որդի նորա կուսակից արիոսեանց։

ԵՐԱՆԵԼԻՆ Կոստանդիանոս զկնի մահուան մօր իւրոյ կեցեալ զամս տասն, վախճանեցաւ յամին 337, ընկալեալ զշնորհս մկրտութեան, զոր յապաղեալ էր առնուլ 'ի յետին հիւանդութեան իւրում։ Հոգեռանդն սիրով ճշմարիտ աստուածպաշտութեան՝ խնամ կալաւ ազատութեան, յառաջադիմութեան և պայծառութեան սուրբ եկեղեցւոյ, կանգնելով բազմաթիւ վկայարանս և եկեղեցիս 'ի Հռոմ, 'ի Կոստանդնուպօլիս և յայլ բազում տեղիս ։ Պանծալի փառք յաճախեցին նմա 'ի գումարել անդ զառաջին տիեզերական ժողովն Նիկիոյ առ 'ի հաստատութիւն ուղղափառ հաւատոյ ։ Այլ զի 'ի պատճառս յանդուգն և նենգամիտ խառնակութեանց արիոսականաց թոյլ տուեալ իցէ աքսորել զսուրբն Աթանաս, պարտ է արդարեւ զայն համարել խաղաղասէր հոգւոյն, որով 'ի հանգստութիւն եկեղեցւոյ հոկէր. բայց 'ի մեռանել իւրում պատուիրեաց դարձուցանել զնա յետս, և պաշտպանել զուղղափառսն ։

Նոյնպէս պատուիրեաց 'ի մահուան իւրում բաժանել զտէրութիւն յերեսին որդիս իւր՝ 'ի Կոստանդին, 'ի Կոստանդ և 'ի Կոստաս, որպէս և Դեղմատիոսի և Աննիբաղինոսի եղբօրորդւոց իւրոց հանել բաժին իշխանութե ։ Սակայն յետին կամք և կտակք իշխանաց սովոր են անգործ մնալ յետ մահու նոցա. նմին իրի եղբօրորդիքն առ կենդանութեամբ եւեթ Կոստանդիանոսի վարելով զարքայական իշխանութիւն, զրկեցան զկնի մահու նորա ։ Քանզի և զինուորք չառին յանձն հնազանդել ումեք՝ բայց յորդւոցն Կոստանդիանոսի. վասն որոյ և կայսերութիւնն բաժանեցաւ յերեսին 'ի նոսա ։ Կոստանդին անդրանիկ նորա էառ զԳաղղիս, զՍպանիս և զԲրիտանիս. Կոստանդ կալաւ զարեւելս. իսկ Կոստասայ վիճակեցաւ Իտալիա, Իլիւրիկէ և Ափրիկէ ։

Կոստանդին որ զերախայրիս աւուրց թագաւորութեան իւրոյ իբր ընդ ամս երիս անցուցեալ էր 'ի պաշտպանութիւն ուղղափառաց, յամին 340 սպանաւ 'ի կողմանս Աքուիլէա քաղաքի 'ի հասակի քսան և չորից ամաց ։ Վասն որոյ Կոստաս՝ յետ մահու եղբօրն իւրոյ տիրեալ բովանդակ արեւմտեան սահմանաց, ժառանգեաց ընդ տէրութեան և զնախանձ բարեպաշտութեան նորա ընդդէմ հերեսիովտաց ։

Իսկ Կոստանդ՝ զարտուղեալն 'ի բարեկրօն գնացից եղբարց իւրոց, սկիզբն արար թագաւորութեան սպանութեամբ գահակցացն, և ձեռն արկ հալածել զուղղափառս ։ Արիոսեանք օգնականութիւն գտեալ 'ի թագաւորէս՝ գումարեցին ժողով յԱնտիոք. յորում վերստին ընկեցեալ յաթոռոյ զսուրբն Աթանաս, կացուցին 'ի տեղի նորա զոմն 'ի կուսակցաց իւրեանց՝ Գրիգոր անուն. որոյ կամեցեալ մտանել յԱղեքսանդրիա, յարեաւ խռովութիւն և ապստամբութիւն 'ի ժողովրդեան, որով բազումք վիշտս անհնարինս կրեցին ։ Զայն աղմուկ խռովութեան պատրուակ իւրեանց առեալ հեթանոսք պղծեցին զեկեղեցիս քրիստոնէից, աւար հարեալ զսուրբ խորհուրդս, և անարգեալ զկուսանս նուիրեալս Աստուծոյ ։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Սուրբն Աթանաս վերստին հաստատի յաթոռ իւրում։

ԿՈՍՏԱՍ քանզի ատէր զարիոսականս, և մեծարեալ պատուէր զսուրբն Աթանաս յաղագս անդրդուելի սրբութեան նորա և աներկիւղ համարձակութե՟ 'ի ջատագովել զճշմարտութիւն, եդ 'ի մտի դարձուցանել զնա յիւր աթոռ և 'ի պատիւ. վասն որոյ աղաչեաց զեղբայր իւր ժողով գումարել 'ի դարման իրացս ։ Կոստանդ քանզի զբաղեալ էր 'ի պատերազմ ընդդէմ Պարսից, զանգիտեալ զի մի նոր թշնամի յարուցէ 'ի չկատարելն զկամս եղբօր իւրոյ, գրեաց առ արևելեան եպիսկոպոսունս գումարիլ 'ի Սարդիկէ քաղաք Իլիւրիկիոյ ։ Անդր գումարեցան աւելի քան զեօթանասուն եպիսկոպոսունս. սակայն տեսեալ արիոսականաց՝ եթէ հարք ժողովոյն չեն համամիտ ընդ իւրեանս, զատուցեալք 'ի նոցունց հաւաքեցան 'ի Փիլիպպուպօլիս Թրակիոյ, ուր կանգնեալ ժողովակ՝ ընդ բանիւ արարին զսուրբն Աթանաս և զհամախոհս նորա ։ Սակայն հզօր ախոյեանն այս համագոյակցութեան Բանին՝ պաշտպանեալ 'ի հարց Սարդիկեան ժողովոյն դարձաւ առ հօտ իւր յամին 349, յետ երկուց ամաց գումարելոյ այնր ժողովոյ ։

Զժողովն Սարդիկեայ 'ի յարգի ունի եկեղեցին Հռովմայ, նախ՝ վասն մերժելոյ նորա զամբարշտութիւն Արիոսի. և երկրորդ՝ վասն կանոնաց բարեկարգութեան որք սահմանեցան 'ի նմա ։

ԳԼՈՒԽ ԺԵ·

Խաղաղութիւնք պետութեան, և նորանոր հալածանք 'ի վերայ ուղղափառաց:

ԿԱՐԻ սակաւատև եղև խաղաղութիւնս այս եկեղեցւոյ. զի Կոստաս որ տիրէր յարևմուտս՝ ատելի եղև ժողովրդեան 'ի պատճառս հարստահարութեանց որովք պաշտօնեայք նորա անօրէնք նեղէին զհպատակս:

Մագնենտիոս ոմն անուն՝ յաջողաձեռն զինուոր, գերմանացի յազգէ, ժամ՛ գտեալ համարեալ զտրտունջ ժողովրդեան՝ 'ի գրաւել յինքն զարքայական պատիւ յամին 350, 'ի քաղաքն Աւտուն յաւուր տօնական հանդիսի զգեցեալ զթագաւորական ծիրանիս, և կայսր անուանել զանձն իւր: Կոստաս լքեալ յընտրելագոյն խմբէ անտի զօրաց իւրոց, ստիպեցաւ խոյս տալ 'ի Սպանիա, սակայն կալանաւորեալ սպանաւ 'ի Պիրենեան լերինս յետ երեքտասան ամաց թագաւորութեան:

Սուրբն Աթանաս՝ պաշտպանեալն 'ի բարեգութ խնամոց նորա, դամբանական ներբողինիւ պատուեաց զնա, 'ի գովեստ առեալ զնախանձն հաւատոյ, զառատաձեռնութիւն նորա առ եկեղեցիս Աստուծոյ, և զմահ նորա համարեալ իբր զմարտիրոսութիւն: Ոմանք 'ի մատենագրաց յետին դարուց ընդհակառակս գովեստից որոյն Աթանասի՝ զակատեալ ասեն զնա յանպատշաճ՝ մեղկութիւնս և 'ի զեղխութիւնս, և համարին զնա իւրովի անձնասպան առ չանկանելոյ կենդանւոյն 'ի ձեռս թշնամեաց իւրոց. սակայն արժանահաւատ վկայութիւն և դատաստան որոյն Աթանասի նախադասելի է քան զայլոցն:

Ընդ այն ժամանակս Կոստանդ յետ յաղթելոյ Պարսից՝ զօրաժողով լեալ դիմեաց 'ի վերայ Մագնենտիոսի, զոր և կրկին պատերազմաւ խորտակեալ ցրուեաց զմիաբանեալսն ընդ նմա: Իսկ Մագնենտիոս փախուցեալ 'ի Լուգդուն քաղաք՝ առ 'ի զերծանելոյ 'ի վրէժխնդրութենէ թշնամեաց, յետ սպանանելոյ զհամախոհս իւր, զբարեկամս և զմայրն ինքնին, չոգաւ և ինքն զիւրովի յամին 353 ։

Զկնի մահուան տարաժամին Կոստանդ միահեծան ինքնակալ լեալ համօրէն տէրութեան՝ սկսաւ հալածել զուղղափառ եպիսկոպոսունս ։ Հրամայեաց ածել զնոր քննութիւն 'ի վերայ սրբոյն Աթանասի, ոչ իբր 'ի վերայ մոլորելոյ 'ի հաւատս, այլ որպէս յանցաւորի յօրէնս տէրութեան. յոյր սակս գումարեցաւ ժողով յԱրելատ քաղաքի յամին 353, ուր 'ի բուռն զաւագիր նենգութենէ արիոսականաց՝ մին 'ի դեսպանաց Լիբերիոսի քահանայապետին Հռոմայ ստիպեցաւ ձեռնագրել դատապարտութեան սրբոյն Աթանասի, որով հատաւ նա 'ի հաղորդութենէ եկեղեցւոյ ։

Քահանայապետն Լիբերիոս վշտացեալ ընդ անիրաւ դատապարտութիւն սրբոյն՝ խնդրեաց 'ի Կոստանդեայ գումարել զնոր ժողով, որ եղև 'ի Մեդիոլան քաղաք Իտալիոյ՝ յամին 355 ։ Յայս ժողով թէպէտ և կային բազմաթիւ եպիսկոպոսունք ուղղափառք, սակայն և այնպէս Արիոսականք գողացան զյաղթութիւնն. զի որք միանգամ ոչ կամեցան դատապարտել զսուրբն Աթանաս, աքսորեցան յաքսորս, որպէս և նոյն ինքն Լիբերիոս պապ տարագրեցաւ 'ի Թրակիա ։ Յետ այնորիկ սկսան հերետիկոսք համարձակ քարոզել զմոլորութիւնս իւրեանց, զբազումս յուղղափառ եպիսկոպոսաց որսացեալ դրամովք, և զայլս սաստ ահացուցեալ սպառնալեօք ։ Եկեղեցական պատիւք և իշխանութիւնք տուեալ լինէին միայն արիոսականաց և կուսակցաց նոցին. իսկ ժողովք գումարեալք յայնպիսի եպիսկոպոսաց՝ էին իբր քաղաքական ժողովակք. զի սահմանք նոցա և կանոնք կարգադրէին յաշխարհական իշխանութենէ ։ Բայց սակայն 'ի մէջ այսպիսի և այսչափ խռովութեանց եկեղեցին Քրիստոսի ունէր զիւր մխիթարութիւն յանդրդուելի հաստատութենէ ողջամիտ եպիսկոպոսաց բազմաց, որք եղին զանձինս իւրեանց 'ի պաշտպանութիւն նիկիական հաւատոյ. յորս սուրբն Աթանաս՝ անպարտելի ախոյեանն ճշմարտութեան՝ զրկեալ յաթոռոյ, ստիպեցաւ ծածկել զերեսս իւր յառանձնութեան ուրեք. և սուրբն Իղարիոս եպիսկոպոս Կապադովկացւոյ սակս նախանձու ողջամիտ վարդապետութեան աքսորեցաւ 'ի Փռիւգիա։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Երկպառակութիւնք արիոսականաց, և զանազան ժողովք։

ԱՐԻՈՍԵԱՆՔ որպէս զայլս 'ի հերձուածողաց, սկսան բաժանիլ յայլ և այլ աղանդս։ Գլխաւոր աղանդապետք զինի Արիոսի եղեն Աէտիոս և Եւնոմիոս, յորոց և հետևողք նոցա անուանեցան Արիոսեանք և Կիսարիոսեանք։ Առաջինքն կուսակիցք և ձայնակիցք էին Արիոսի․ իսկ յետինքն ասէին, թէ որդին Աստուծոյ ունիցի զնմանութիւն էութեան ընդ Հօր․ այլ չկամէին միաձայնիլ ընդ ուղղափառս, թէ ունիցի զնոյն անբաժան էութիւն։ Երկոքին հակառակամարտ կողմանքս ունէին զմուտ և զընդունելութիւն յարքունիս կայսեր ըստ յողդողդ մտաց Կոստանդեայ, որ անխտիր զիջանէր երկոցունց կողմանցն գումարել ժողովս ըստ կամի, զոր գործեալ յաւէտ խառնակել քան պայծառացուցանել զճշմարտութիւնն։

Կրկին ժողովք այսպիսիք գումարեցան առ նովին ժամանակօք՝ յամին 359, մին յԱրիմինի քաղաք Իտալիոյ յԱդրիական ծովեզերս, և միւսն 'ի Սելևկիա քաղաք Իսաւրիոյ առ սահմանօք Կիլիկեցւոց․ առաջինն յարևմտեան եպիսկոպոսաց, իսկ երկրորդն յարևելեայց․ երկոքին ևս չունելով զազատ իշխանութիւն կամ համարձակութիւն սահմանելոյ ինչ, զանգիտեալ կամ պատրեալ 'ի հերետիկոսաց՝ զինեցան ընդդէմ ուղիղ վարդապետութեան ընդհանուր ժողովոյն Նիկիոյ։

Եպիսկոպոսունք գումարեալք յԱրիմինի՝ զառաջինն հերքեալ և նզովեալ զմոլորութիւնս Արիոսի, յետոյ ձեռնագրեցին համաձայն դաւանութեան ինչ հաւատոյ առանց հասու լինելոյ որ 'ի նմին ծածկեալ թունոյ արիոսեան մոլորութեան։ Յայնժամ աղանդաւորք Արիոսի 'ի բաց առեալ զպատրուակն, համարձակեցան յամենայն տեղիս, մինչև ըստ ասելոյ սրբոյն Հերոնիմոսի՝ քրիստոնեայք առ հասարակ հեծեցին ընդ անակնկալ դաւանն, և զարմացան ընդ լինելն արիոսական։ Թէպէտ և յայնժամ շնորհիւն Աստուծոյ ազատ էր և անմասն յայնմ մոլորութենէ նորածին եկեղեցի Հայոց, որ եկաց հաստատուն 'ի դաւանութեան Նիկիոյ, զոր սուրբն Արիստակէս եբեր անդր։

Արդ յետ ժողովոյն Արիմինոյ 'ի դառնալ եպիսկոպոսաց 'ի վիճակս իւրեանց՝ բացան աչք նոցա, և զայրացեալ ընդ վրիպակն՝ մերժեցին զսահման դաւանութեան հաւատոյ Արիմինեան ժողովոյն, և միաբանեցան ընդ Լիբերիոսի քահանայապետին Հռովմայ, և ընդ ուղղափառ եպիսկոպոսունս որք զատուցեալ յԱրիմինեան ժողովոյն խոյս տուեալ էին յանքոյթ տեղիս՝ չունելով մասն և բաժին 'ի նոյն վրիպակ։ Հերքումն մոլորամիտ դաւանութեան Արիմինեան ժողովոյն եղև նոր առիթ հալածանաց, յորում սուրբն Գաւդենտիոս եպիսկոպոս Արիմինոյ հարուածովք գանից և քարանց սպանաւ 'ի զօրաց Մարկիանոսի քաղաքապետին։

Մոլորութիւնս այս կարի նուազ խոչընդոտն եգիտ 'ի Սելևկիա, ուր սկսաւ ժողովն 'ի 27 սեպտ. և 'ի մէջ հարիւր և վաթսուն եպիսկոպոսաց՝ միայն սուրբն Հիլարիոս աքսորեալն 'ի Փռիւգիա, և երկոտասան եպիսկոպոսունք Եգիպտոսի պաշտպան կացին և ջատագովք համագոյութեան բանին։ Յայսմ ժողովի արիոսականք յօրինեցին առանձնական դաւանութիւն ինչ հաւատոյ իւրեանց, իսկ կիսարիոսեանք յառաջ մատուցին զդաւանութիւն ժողովոյն Անտիոքայ՝ գումարելոյ յամին 341. և յետ բազում վիճից և նզովելոյ զմիմեանս, ցրուեցան առանց ինչ որոշելոյ։

Գլխաւորք երկոցունց կողմանց գնացին 'ի Կոստանդնուպօլիս, ուր էր կայսրն զայնու ժամանակաւ. որոյ յօժարամիտ գոլով միշտ 'ի մոլորութիւն, գուն գործեաց մերթ բանիւք ողոքանաց և մերթ սպառնալեօք տալ ձեռնադրել դեսպանացն Սելևկիոյ, որպէս և այլոց եպիսկոպոսաց, դաւանութե՟ Արիմինեան ժողովոյն։ Եւ դատակնիք տարագրութե՟ արար որոց միանգամ հրաժարեցան 'ի ձեռնադրելոյ այնմ դաւանութեան, որ էր ութևտասներորդն յօրինեալ յարիոսականաց։ Զի կարի դժուարին է անփոփոխ հաստատութիւն 'ի հաւատս՝ որոց օտարանան 'ի վարդապետութենէ սուրբ եկեղեցւոյ։

Յետ այնորիկ խնամ կալաւ Կոստանդ գումարել ժողով 'ի Կոստանդնուպօլիս, յորում ինքնին եղև կարգադիր ամենայն կանոնաց և սահմանաց, վերստին ստիպելով զեպիսկոպոսս ձեռն դնել դաւանութեան Արիմինեան ժողովոյն՝ կուսակից և ձայնակից եղելոյ մոլորութեան Արիոսի. իսկ որք միանգամ հրաժարեցան 'ի կատարելոյ զկամս նորա, համարեցան թշնամիք տէրութեան։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Մահ Կոստանդեայ։

ՕԱՅՆՈՒ ժամանակաւ յարեաւ ալմուկ խռովութեան յարեւմուտս. զի Յուլիանոս ուրացող ազգակից և գահակից Կոստանդեայ՝ արհամարհեալ զպատիւ գահակցութեան զոր ընկալեալ էր 'ի նմանէ, յանդգնեցաւ 'ի Փարիզ քաղաքի կայսր անուանել զանձն իւր. վասն որոյ Կոստանդ զօրաժողով լեալ գնաց 'ի պատերազմ ընդդէմ նորա։ Յայնմ ուղևորութեան կալաւ զնա ջերմ մահաբեր, և առ սաստիկ ցաւոյն վտանգեալ կենաց նորա՝ վախճանեաց զաւուրսն յամի տեառն 361, յետ ընդունելոյ զմկրտութիւն ըստ օրինի արիոսականաց յԵւզոիոսէ եպիսկոպոսէն Անտիոքայ։

Ոմանք 'ի մատենագրաց ջանահնար լինին անբասիր առնել զԿոստանդ՝ համարելով զնա իշխան ոք ազնիւ և բարեբարոյ, սակայն պատրեալ 'ի շողոքորթութենէ պալատականաց, որք որսացեալ զսիրտ նորա՝ առ փոքր փոքր թիւրեցին զմիտս, և զվարդապետութիւն համագոյակցութեան Բանին ետուն նմա համարել իբր մնոտի նորախօսութիւն աստուածաբանական, և որպէս զանպէտ հետազօտութիւն՝ յուզեալ յանհանդարտ մտաց։

Պատմեն ոմանք 'ի քրիստոնեայ մատենագրաց, թէ Կոստանդ 'ի յետին պահու կենացն երկուցեալ յարդարադատ դատաստանացն Աստուծոյ՝ ապաշաւէր յաղագս երից այսոցիկ գործոց իւրոց. նախ՝ զի եհեղ զարիւն գահակցացն. երկրորդ զի գահակից իւր արար զՅուլիանոս, և 'ի կայսերականն ամբարձ պատիւ. և երրորդ անգամ՝ զի հաղորդ գտաւ և դաշնակից մոլորելոց. Սակայն վէպքս այսորիկ ընդ երկբայութեամբ են. այս ինչ ևեթ հաւաստի է, զի մինչև ցյետին աւուրս կենացն խաղաղիկ եղև արիոսականաց, դառն խստութեամբ վարեցաւ ընդ ուղղափառ եպիսկոպոսունս, և ընդ հակառակն զառաջնորդս հերետիկոսաց մեծարեալ պատուեաց.

ԳԼՈՒԽ ԺԲ.

Թագաւորութիւն Յուլիանոսի.

ՅՈՒԼԻԱՆՈՍ յաջորդ Կոստանդեայ մեծապէս ատեր զգլխաւոր գործակալս արքունեացն, մանաւանդ զԵւսեբիոս սենեկապետ, որ յարքունիս Կոստանդեայ գտաւ պաշտպան արիոսեանց. Եւ 'ի տալ Յուլիանոսի ամենայն քրիստոնէից զհամարձակութ՟ի վարելոյ զհաւատոյն զոր կամիցին, նիկիականն դաւանութիւնն ստացաւ զիւր պայծառութիւն, որով հերետիկոսութիւն կորոյս զբազում կուսակիցս. Սակայն թոյլտուութիւնս այս Յուլիանոսի ոչ էր 'ի սիրոյ ճշմարտութեան, այլ 'ի նենգամիտ կամաց սրտին հաստատելոյ դարձեալ զհեթանոսութիւն. Անօրէնս այս սնեալ և վարժեալ 'ի քրիստոնական հաւատս՝ առանց սիրելոյ զայն երբէք, յարմարէր զհաւատս իւր ըստ քաղաքական կարգի և կենակցութ՟է. Յետ յակամայ կամս մատնելոյ 'ի դասս դպրաց՝ առ զերծանելոյ յանգթութենէ, և 'ի նախանձուէ Կոստանդեայ կայսեր, որ սպան զԳաղղոս զեղբայր ն՟ր, զգեցաւ և զհանդերձ մոնազնի. Ապա յելանելն 'ի մենաստանէ, առ 'ի կնութիւն զՀեղինէ՝ զքոյր Կոստանդեայ, և առաքեալ 'ի նմանէ 'ի Գաղղիա, անուանեցաւ անդ կեսար.

Ի մեռանել Կոստանդեայ՝ Յուլիանոս խաղաղութեամբ և անկախ յաջորդեալ զնա, եբաց զմեհեանս կռոց, և հաստատեաց զպաշտամունս նոցին, և ըստ հեթանոսական օրինաց ընկալաւ յանձն իւր զպատիւ մեծի քրմապետութեան. Այլև առ նմին սկսան զոհագործութիւնք յամենայն տեղիս, և յորդել արեանց աստուածոց, մինչև պալատն կայսերական և պարտէզք նորա եղեալ էին իբր սպանդանոց, և մեհեան ընդարձակ։ Ընդ Յուլիանոս 'ի ծունկս անկեալ առաջի ոտիցն և քարակոփ կռոց մատուցանէր փայտս, լուցանէր հուր և արծարծէր և ինքնին ձեռամբ խըռով զենոյր զնուէրս աստուածոց։ Սակայն յայսմ ամենայնի չկամեցաւ բանի ստիպել զոք 'ի հաղորդակցութի՛ զոհագործութեանցն։ Գալիլեացիք (ասէ, զի այսպէս սովոր էր անուանել զքրիստոնեայս,) տխմարք են յաւէտ քան չարամիտք. հարկ է չահել զնոսա բանիւք և քաղցրութեամբ։ Բաւ է նոցա թշուառութիւնն յորում կան. զաւազիր խաբէութեամբ մոլորեալք 'ի մեծ և 'ի կարևոր յայսպիսում իրողութեան, համարիմ զնոսա կարեկցութեան՝ քան եթէ ատելութեան արժանիս։

Անգամիտս այս կարեկցութիւն որպէս և առ երեսս բարերարութիւնք նորա՝ պատճառք եղեն բազմաց, մանաւանդ որոց էին յարքունիս, թողուլ 'ի բաց զքրիստոնէական հաւատս. և յօժարամիտքն 'ի սոսա այնոքիկ եղեն որք զքրիստոնէութիւնն զգեցեալ էին իբր զնորաձև հանդերձ, յորմէ փութով մերկացան՝ յերևել նորագունին. որք առ Կոստանդիանոսիւ եղեն ուղղափառք, առ Կոստանդեաւ արիոսականք, և առ Յուլիանոսիւ դիցապաշտք։ Սակայն 'ի զարտուղել անդ բազմաց 'ի ճշմարիտ աստուածպաշտութենէ, եղեն և արիասիրտ քրիստոնեայք յամենայն վիճակէ մարդկան՝ յօժարամիտք 'ի սուրբ կրօնս, և կամակար հրաժարեցան յամենայն ակնկալութենէ կենցաղական բարեաց. յորոց սակի են Յովիանոս և Վաղենտիանոս, որք յետոյ միմեանց զկնի եղեն յաջորդք Յուլիանոսի, ընկալեալ և յաստիս զփոխարէնս հարիւրապատիկ քան զոր կորուսեալ էին առ սէրն Քրիստոսի։

Յուլիանոս զի չկամէր երբէք կոչել հալածիչ, ոչ երբէք յայտնապէս դիմամարտեցաւ հաւատոց. այլ շատ համարեցաւ վարել 'ի գործ զկենցաղական հնարս, որպէս զհարստահարութիւն այլևայլ պատճառանօք զարուեստս հնարիմացս և զշաւիղս նենգաւորս։ Դարձոյց յետս զամենայն եպիսկոպոսունսն աքսորեալս յաւուրս Կոստանդեայ. և զի Գաղղոս եղբայր իւր մեռեալ՝ ունէր զմտերիմ սիրելութիւն ընդ Աթաախտի մոլեգին կուսակցի արիոսականաց, պատիւ անարժան մատոյց նմա։ Ուղղափառս և զհերետիկոս միօրինակ 'ի պատուի ունելով կարծէր անօրէնն, թէ յանխառն կենակցութենէ հակառակորդ կուսակցաց ծագիցի 'ի ծոց քրիստոնէութեան ընտանի պատերազմ, յորմէ փեռեկտեալ կրօնի՝ անգանելի լիցի վարդապետութիւն հաւատոյ նորա և բարի վարուց։

Կարծելով Յուլիանոսի՝ թէ բազումք յազգաց ընդգրկէին զուղղափառ հաւատն զի ճոխ է նա և փարթամ 'ի ստացուածս, մերկացոյց զեկեղեցին յեկամտից, բարձեալ զայնոսիկ 'ի զօրականս, և զրաւելով 'ի գանձ արքունի. “Կամիմ, ասէր, օգնել Գալիլեացւոց, և առնել նոցա զսքանչելի օրէնս իւրեանց, որով և դիւրել զնոսա երկնից արքայութեան„։ Խափանեաց զշնորհս ազատութեան եկեղեցեաց, եբարձ և զթոշակն սահմանեալս 'ի Կոստանդիանոսէ առ կղերս, առ կուսանս և առ այրիս. և բուռն խստութեամբ սաստեաց զնոսին հատուցանել յետս զնախկին առեալսն։ Եւ զի 'ի դատս մարթ էր քրիստոնէից ցուցանել զիրաւունս իւրեանց յատենի դատաւորաց, արգել նոցա զդատսն և զվարել իշխանական պաշտօն. “Ըստ պատուիրանաց, ասէր, աւետարանին, որ հրամայէ՝ տանել զրկանաց, և փախչել 'ի փառաց„։

Մ՝անկտաղիքք քրիստոնէից 'ի հերքել և 'ի քանդել զպաշտամանս կռոց՝ տուեալ էին 'ի մէջ բերել զանհեդութիւնս առասպելեաց հեթանոսութեան, որպէս և զիմաստասիրական փաստս Պղատոնի առնուին 'ի ձեռին՝ հաստատել նորօք զվարդապետութիւն խրատուցն Քրիստոսի։ Յուլիանոս զի զրկեսցէ զնոսա յօգտաշահ գործոյ աստի, արգել նոցա զուսումն և զվարժապետութիւն իմաստասիրութեան. “Հոմերոս, Հեսիոդոս, Հերոդոտոս, Թուկիդիդէս, Իսոկրատ և Լիւսիաս՝ ծանեան (ասէ) զաստուածս ուսուցիչ վարդապետութեան իւրեանց. և ընդէր է մեզ տալ զնոսին 'ի ձեռս ազգաց իբր զխանոց, որով և մանուկ լինել կրօնի։ Դառն զործեսցեն Գալիլեացիքն նմանող լինել բարեպաշտութեան նոցա առ աստուածս. այս թէ համարիցին զնոսա մոլորեալս անմիտս, մեկնեսցեն յեկեղեցիս իւրեանց զՄատթէոս և զՂուկաս ։ Բազումք ՚ի քրիստոնէից ուսուցչաց կամաւոր յանձն առին թողուլ զաթոռ վարժապետութեան քան հրաժարել ՚ի հաւատոյ ։ Վիկտոր Ափրիկեցի մեծահամբաւ ուսուցիչ հռետորութեան, որում կանգնեցաւ արձան ՚ի Հռովմ քաղաքի, յառաջադէմ գտաւ յարքունական հանդիսին և հետևողք եղեն նորա և այլք բազումք, յորոց էր և Պարոյր կամ Պրոյերեսիոս հայկազն համբաւեալ ուսուցիչ յԱթէնս, որպէս յիշատակէ Եւնապիոս ։

Յուլիանոս՝ թէպէտ և ոխերիմ թշնամի քրիստոնէից, սակայն ճանաչէր զյարգ պայծառ առաքինութեան նոցա. և կամելով յօրինակէ առնել վարուց քրիստոնէից բարեկարգել զհեթանոս, յորդորէր զքուրմս և զամենայն նախանձաւորս հեթանոսութեան ջան գործել նմանող լինելոյ վարուց Գալիլեացւոց ։ «Քրմապետք, ասէ, այնպէս խիստ վարեսցեն զկեանս իւրեանց, որպէս թէ առաջի աստուածոց իցեն հանապազ. խնամ կալցին սուրբ և անարատ պահել զմիտս իւրեանց, գէթ յառաւօտուն և ընդ երեկս պաշտեսցեն զաղօթս հրապարակաւ և առանձինն. մի որ ՚ի նոցանէ իշխեսցէ յաճախել ՚ի քաղաքական հանդէսս տօնից, զի մի պատճառս տացէ համարձակութեան և չարեաց ։ Այլ ՚ի վեր քան զամենայն՝ հիմնեսցին, ասէ, անկելանոցք յամենայն քաղաքս ՚ի ցուցանել զմարդասիրութիւն օտարաց և անանկաց. ապաքէն ամօթ մեծ է մեզ զի չիք որ հրէայ մուրասցի, և զի ամբարիշտ Գալիլեացիք բաց ՚ի դարմանելոյ զաղքատս իւրեանց, մատուցանեն և մերոյն նպաստս կարևորս ։

Կեղծակերպ պատիր քաղցրութեամբն ընդ քրիստոնէից, զորս կամէր զրկել ՚ի փառաց նահատակութեան, ոչ գիտաց միօրինակ ՚ի չափու ունել զգազանի ատելութիւնն զոր սածէր ՚ի սրտին ընդդէմ քրիստոնէութեան. քանզի զբարձ իշխանութեան և զդատաւորութեան մատուցանէր ոխերիմ թշնամեաց քրիստոնէական հաւատոյ, որք ընդ պատճառանօք ջան գործէին հալածել զառաւել հաստատունս և զհաւատարիմս ՚ի հաւատս ։

Օպատուէրան առեալ ՚ի Յուլիանոսէ նորոգել զհեթանոսութիւն և կանգնել զտաճարս կռոց՝ պատուական առնուին հեթանոսք խռովել և վրդովել զամենայն քաղաքս. որով բազումք նահատակեցան յայլևայլ տեղիս. Սուրբն Բասիլիոս քահանայ Անկիւրիոյ սքանչելի արիութեամբ մեռաւ 'ի տանջանս. 'ի Փիւնիկէ սպանին զսարկաւագ մի, որ առ Կոստանդիանոսիւ խորտակեալ էր զբազում կուռս. և յետ սպանանելոյ զորովայն որոյն հանեալ զլեարդն՝ արարին իւրեանց կերակուր. Ահա յայս ծագ գազանութեան ժամանակաց մոլեգնութիւն ժողովրդեան 'ի թշնամութենէ անտի իշխանաց. Յաւուրս սորա նահատակեցան 'ի Կիլիկիա Հայոց սուրբն Ստեփանոս Սելեւկի երեսուն և երեք ընկերօք.

Յուլիանոս յանդգնեցաւ փորձել և զայլ հնարս ընդդէմ քրիստոնէական հաւատոյ. զի կամելով 'ի սուտ հանել զկանխասացութիւն Քրիստոսի վասն Երուսաղեմի, կամեցաւ կանգնել վերստին զտաճարն. սակայն երկնաւոր հրաշիւք սքանչելեաց խափանեցաւ գործն, զորոյ զվէպս պատմութեան աւանդեն ժամանակակից մատենագիրք. Ի պատրաստել նորա վերստին մարտնչել ընդդէմ քրիստոնէութեան՝ աներևոյթ ձեռամբ խոցեալ 'ի պատերազմին որ ընդ Պարսիկս, սատակեցաւ յամի տեառն 362, 'ի հասակի երեսուն և մի կամ երեսուն և երկուց ամաց.

Իշխան էր սա արիասիրտ, ժուժկալ, առատաձեռն և արդարակորով՝ մինչև յաւելեալ 'ի մոլեգնութենէ կրից. սակայն ունայնասէր, անհեթեթ, սնապաշտ և անձնատուր 'ի մոգութիւն և յայլ ամենայն ցնորս հեթանոսութեան. փառամոլ անչափ իբր զանզգամ ընչասէրս, բաղանդակեալ առնելով յանձին զհամօրէն նկարագիրս ունայնամտութեան. Պատրաստեալ էր և հրամանագիր՝ առաքել յԱփրիկէ վասն հալածելոյ ըզհաւատացեալս. յոյր սակս հեթանոսք սպասեալ մնային դարձի նորա 'ի պատերազմէ առ 'ի հեղուլ զարիւն քրիստոնէից. Ի ժամանել լրոյ նախկին յաջողութեան գնդաց Յուլիանոսի 'ի Պարս, Լիբանիոս իմաստակ յԱնտիոք քաղաքի պատահեալ ծանօթի ումեմն քրիստոնէի հարցանէ ի կատակս. ‶Զի՞նչ գործէ արդ որդի հիւսանն„. Իսկ նորա պատասխանի տուեալ ասէ. ‶Տապան պատրաստէ գիւցազին ձեռամբ„.

Պատմէ սուրբն Հերոնիմոս, թէ 'ի յաւուրն որտունջս հեթանոսաց վասն մահուն Յուլիանոսի, նորին իսկ լսեալ է յումեմնէ ասել. « Օ՜ խորդ քրիստոնեայք մարթին պարծել երբէք ընդ երկայնմտութիւն Աստուծոյ իւրեանց, որ այդպէս դիւրապատրաստ է ՝ի ցասումն. զի ոչ կարաց առ վայր մի ամենձել զբարկութիւն իւր »։

Ի նախնի մատենագիրս՝ որք միանգամ խօսին զՅուլիանոսէ՝ ամենք կարի յոյժ գովեն զնա. իսկ այլք պատմեն զամենայն ընթացս կենաց նորա։ Նաւջինքն պաշտօնատարք են Յուլիանոսի՝ իբր գրոշելս. իսկ յետինքն՝ որոց վկայութիւնք արժանահաւատք են և նախապատիւք, նկարագրեն զնա թշնամի Ճշմարտին Աստուծոյ։ Սակայն ամենեքին առ հասարակ միաբան գտանին ՝ի վկայել, թէ եղև նա անհաշտ ոսոխ ընդդէմ քրիստոնէից, բանիւք ևեթ խնայելով ՝ի կեանս նոցա. իսկ ՝ի հրովարտակս իւր եղև նենգամիտ զաղափար հալածիչ իշխանացն, որք ընդ քօղով խորամանկեալ քաղցրութեան և արդարախոհութեան անպարտս կամին լինել։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Թագաւորութիւն Յովիանոսի և Վաղենտինիանոսի.

ՕՈԽԵՐԻՄ թշնամին քրիստոնէութեան յաջորդեաց Յովիանոս որդի Վարոնիանեայ կոմսին, այր խնամակալ հաստատութեան ուղղափառ հաւատոյ, և քաջամարտիկ զօրավար։ Սա ՝ի բանակէ անտի զինուորաց երթելոց ընդ Յուլիանոսի ՝ի Պարսս, ընտրեցաւ և անուանեցաւ կայսր. սակայն Յովիանոս ոչ կամեցաւ յանձն առնուլ զպատիւն՝ եթէ ոչ խոստասցին ընդունել զքրիստոնէական հաւատս։ Եւ ՝ի կատարել զօրաց զխնդիր նորա, արար հաշտութիւն ընդ Շապհոյ արքային Պարսից, և սկսաւ ամենայն խնամով միտ դնել վերստին հաստատութեան ուղղափառ հաւատոյ և վարդապետութեան, նորոգելով զամենայն օրէնս Կոստանդիանոսի ընդդէմ կռապաշտութեան, և յուղեալ ՝ի նոսին և զայլ խոստացեալս։ Եւ քանզի անօրէնն Յուլիանոս նենգամիտ խորհրդով շնորհեալ էր անխափ ազատութիւն ամենայն աքսորելոյն ՝ի Կոստանդեայ առ երկփեղկելոյ զուղղափառս և զհերետիկոսս որպէս զի թուլասցին քրիստոնեայք, Յովիանոսիւ հակառակս այնմ՝ կուսակից և պաշտպան եղև տարագրելոցն վասն ուղղափառ հաւատոյ. յորս առանձին իմն օրինակաւ փառաւորեաց զսուրբն Աթանաս, որ պարագլուխ համարեալ էր նոցին։ Նա մինչդեռ այսպիսի բարեպաշտութեամբ և արիական գործովք պայծառացուցանէր զիւր թագաւորութիւն, յեղակարծ հարուածով մահաւիթ հոտոյ ածխոյ վախճանեցաւ զկեանս յամի տեառն 346, թագաւորեալ զամիսս ութ։

Ի մեռանել Յովիանոսի բաժանեցաւ տէրութիւնն յերկուս եղբարս՝ 'ի Վաղէս և 'ի Վաղենտինիանոս. առաջնոյն վիճակեցան արևելք, իսկ երկրորդին արևմուտք. և զի յետինս ուղղափառ էր հաւատով, արևմտեան եկեղեցին մարթացաւ վայելել յանվրդով խաղաղութեան. զի սակաւաթիւ արիոսականքն ոչ գտին համարձակութիւն առաջի նորա։ Բայց ոչ նոյնպէս բարեբաստիկ եղև և արևելեան եկեղեցի. զի կին Վաղէսի արիոսական գոլով խոտորեցոյց զսիրտ նորա 'ի նոյն մոլորութիւն. վասն որոյ հերետիկոսք առ տէրութեամբ նորա սկսան վարել զանգթական բռնութիւնս իւրեանց ընդդէմ ուղղափառաց՝ զոր յիշելով սրբոյն Բարսղի՝ յաւելու ասել, թէ առ սովաւ ողջամիտքն 'ի հաւատս տանէլով վշտաց ծանունց քան ընդ դիցապաշտ կայսերօք. զրկեալք էին և 'ի պսակաց մարտիրոսութեան։ Ի սմանէ աքսորեցաւ և մեծն Եւսեբէս երանելի ընդ երկուց սարկաւագաց իւրոց. զորմէ նշանակեսցուք 'ի կարգս հայրապետաց Հայոց։ Բազումք յեպիսկոպոսաց խնդրելով յաւէտ զհանգիստ իւրեանց քան զփառս Աստուծոյ և զճշմարտութեան, որպէս և զառաջնորդութեան հօտւոց, տկարացան 'ի հալածանս, որով արիոսականք մուտ գտին մինչև յանապատս Թեբայիդոյ՝ հալածել անտի և զմիայնակեացսն, որք խորշէին 'ի մոլորութենէ նոցա։

Մրրիկս այս աղմկայոյզ՝ սակաւատև եղև մահուամբ Վաղէսի, որ կալանաւորեալ 'ի Գոթաց՝ յամի տեառն 378, այրեցաւ կենդանւոյն մերձ յԱդրիանուպօլիս։

ԳԼՈՒԽ Ի.

Թագաւորութիւն Թէոդոսի մեծի։ — Ժողով Կոստանդնուպօլսոյ։

ԹԷՈԴՈՍ ականաւոր զօրավարն Հռովմայեցւոց՝ ազգաւ սպանիացի, զոր Գրատիանոս կայսր յետ մահուան Վաղէսի անուանեալ էր իւր գահակից, օտար և հեռի 'ի կամակցութենէ անօրէն խորհրդոյն Վաղէսի, աներկիւղ յայտ արար զկուսակցութիւն իւր ընդ ուղղափառս։ Ի սկզբան թագաւորութեան իւրոյ եհան հրամանագիր, յորում պատուիրէր զհետ երթալ դաւանութեան հաւատոյ նիկիական ժողովոյն, զոր հաստատուն ունէր հռովմէական եկեղեցին. միանգամայն ունայնացուցեալ զամենայն հրովարտակս նախորդաց իւրոց՝ նպաստաւորս հերետիկոսաց, դարձոյց անդրէն յուղղափառս զամենայն յափշտակեալ եկեղեցիս նոցա, և կոչեաց յետս զսուրբ հայրապետսն աքսորեալս 'ի Վաղէսէ, ընդ որս և զմեծն Ներսէս։ Եւ որք միանգամ՝ ոչ կամէին հնազանդել հրամանացս, ապստամբք համարէին 'ի տէրութենէն։

Իմամ՛ կալեալ օգուտ եկեղեցւոյ և անդորրութեան նորա և խաղաղութեան, յամի տեառն 381, հաւանութեամբ սրբոյն Դամասոսի Հռովմայ հայրապետին ետ գումարել զժողով 'ի Կոստանդնուպօլիս, որ երկրորդ եղև յընդհանրական սինհոդոս. անդր հաւաքեցան յարևելեան գաւառաց հարիւր և յիսուն հայրապետք, յորոց մի էր և մեծն Ներսէս կաթողիկոս Հայոց։ Եւ զի գլխաւոր նպատակ ժողովոյն էր միաբանութիւն եկեղեցւոյ և հերքումն հերետիկոսութեանց Մակեդոնեանց, Եւնոմեանց և Ապողինարեանց, սահմանեցաւ անդ հանգանակն զոր այժմ Լատինք վարեն 'ի պատարագի, և է նոյն իսկ նիկիական դաւանութիւն, յորում ընդդէմ հոգեմարտից յաւելին զբանն, թէ « Հոգին սուրբ է տէր և կենդանարար, որ 'ի Հօրէ ելանէ »։ Եւ ընդդէմ Ապողինարեանց, թէ « Յղացաւ հոգւով սրբով 'ի Մարիամայ կուսէն »։ Իսկ յետ ժամանակաց յերկոտասաներորդ դարու յաւելաւ 'ի նմա բանն և յՈրդւոյ։

Յետ դատապարտելոյ զհերետիկոսութիւնս ժամանակին, եղան և քանի մի կանոնք բարեկարգութեան՝ բայց կանոնն վեցերորդ, յորում շնորհեցաւ առանձնական պատիւ պատրիարգութեան աթոռոյն Կոստանդնուպօլսոյ զկնի Հռովմայ, պատճառք եղև ապա բազմադիմի հակառակութեանց ’ի մէջ երկուց աթոռոց։

Ընդ հանրական ժողովս անհաւան գտեալ հերետիկոսաց իբրև ոչ կամէին միաբանել ընդ եկեղեցւոյ սրբոյ, խորհեցաւ Թէոդոս կայսր գումարել և զայլ երկուս մասնաւոր ժողովս ’ի Կոստանդնուպօլիս· զմին յամի տեառն 382, և զմիւսն ’ի հետևեալ ամի· յորս առաջիկայ գտան ամենայն գլխաւորք Արիոսեանց, Եւնոմեանց և Մակեդոնեանց· սակայն չեղև հնար կակղել զխստասրտութիւն նոցա գալ ’ի հպատակութիւն ուղղափառ հաւատոյ՝ ընդ որ զայրացեալ Թէոդոսի օրէնս սաստիկս եհան ընդդէմ նոցա· բայց սովին այսու առաւել ևս զայրացոյց զնոսա, վնասուց քան եթէ օգտի եղեալ պատճառք։

ԳԼՈՒԽ ԻԱ·

Նախանձ Թէոդոսի ’ի ջնջել զկռապաշտութիւն։

ԿԱՅՍՐՆ Թէոդոս զնոյն եռանդն աստուածպաշտութեան, որով գուն գործեաց խափանել զհերձուածս, ’ի կիր էարկ և առ ’ի սպառ անհետ առնել զհեթանոսութիւն։ Յամին 384, Սիւմաքոս նախագահ իշխան քաղաքին Հռովմայ ’ի զուր ջանահնար եղև առնուլ հրաման ’ի Թէոդոսէ կանգնել բագին ’ի պատիւ դիցն Յաղթութեան· զի կայսրն չէառ յանձն հաճել զկամս Հռովմայեցւոց· և յամի տեառն 389 ’ի գնալ իւրում ’ի Հռովմ, յորդոր մատոյց ծերակուտին թողուլ զհեթանոսութիւն, և ընդունել զքրիստոնեական հաւատս, որոյ վարդապետութիւնք խրատուց, ասէ, դիւրահասք և սքանչելիք՝ դիւրագոյն հրահանգեն և իմաստունս առնեն զյետինն պարզամիտս քան թէ մեծամեծ փիլիսոփայք հեթանոսաց։ Տարապար յուշ առնէր Սիւմաքոս՝ եթէ Հռովմ իբր՝ յերկոտասան դարուց հետէ հանդիսացաւ փառօք՝ խնամակալ պաշտպանութեամբ աստուածոյ խռոյ. զորոյ զբանսն ցրելով որդոյն Ամբրոսիոսի՝ կարի վայելուչ առնէ պատասխանի, յասել անդ իրում, եթէ յաղթութիւնք դիցակրօն Հռովմայ չեն ընծայելիք աստուածոցն նոցա, որոց և թշնամիք՝ իրեանց պաշտօնատարքն էին, այլ արիութեան քաջամարտիկ զօրաց, և հրահանգութեան նոցա 'ի զինուորական մարզս.

Այսպէս Թէոդոս տեսեալ զխստասիրտ յամառութիւն իշխանացն, արձակեաց զծերակոյտն, յայտ առնելով նոցա՝ եթէ հռովմէական պետութիւնն կարօտի զօրաց, և ոչ զոհից և ողջակիզաց. վասն որոյ արգել այնուհետև զի մի այլ ևս յարքունի գանձուց մատակարարեսցին ծախք անօրէն զոհից. Պատուէրս այս հրամանի շատ եղև 'ի խափանել զամենայն հեթանոսական պաշտամունս. զի զրաւէին յարքունիս զկալուածս սահմանեալս 'ի պէտս զոհագործութեան՝ էր քանդել զտաճարսն և զմեհեանս, որպէս յետ սակաւուց բազումք 'ի մեհենից փակեալ աւերեցան.

Բարեպաշտ կայսրն ոչ միայն արտօնէր, այլև հրաման տայր քանդել և ջնջել համարձակ զյիշատակս հեթանոսութեան, պահելով եւեթ զարուեստակերտ արձանսն 'ի վայելչազարդ պայծառութիւն քաղաքին. Հրովարտակ եհան ընդ ամենայն սահմանս տէրութեան անհետ առնել զսնոտի պաշտամունս կռոց. զոր 'ի փութալն անյապաղ կատարել Թէոփիլոսի եպիսկոպոսին Աղեքսանդրիոյ՝ պատճառս ետ խռովութեան և ապստամբութեան հեթանոսաց. քանզի 'ի քանդել նորա զտաճարս Սպանդարամետական և Սերապիս կռոց, և 'ի կանգնելն 'ի նոյն տեղւոջ զերկուս եկեղեցիս, Աղեքսանդրացիքն պաշտօնեայք նոցա՝ մոլեգին զայրացեալ ը̄ այն՝ աղմուկ մեծ յարուցին 'ի քաղաքին վասն աւերածոյ մեհենիցն, զի խայտառակեալ յայտնեցան նոքա նենգութիւնք քրմաց, որք 'ի դատարկ ձուլածոյ արձանաց պատգամս տալով պատրէին զժողովուրդն. Ուրեք ուրեք առ սաստիկ հակառակութեան խաժամուժ ամբոխին ընդ պատուէր հրամանի կայսեր՝ շատ համարեցան փակել եւեթ զտաճարս.

Թէոդոս կայսր կամելով անյիշատակ առնել զհետս անգամ կռապաշտութեան, յամի տեառն 392 այլով հրովարտակաւ արգել ամենայն հպատակաց տէրութեան իւրոյ զգուշանալ 'ի զոհելոյ կռոց՝ ոչ միայն յայտնի, այլ և 'ի ծածուկ յառանձին բնակութիւնս իւրեանց. չլուցանել մոմս, չծխել խունկս, և ոչ ծաղկապսակ մեծարել զտնային թերափոնս. պատժապարտ և յանցաւորս տէրութեան համարելով զայնոսիկ որք միանգամ՝ յանդգնեսցին զոհել կամ՝ ընդերահմայ լինել։ Հրաման ետ զի տուն յորում՝ խունկ արկցի, և ապարանքն յորս ծառք երևեսցին նուիրականս զարդուք, գրաւեսցին յարքունիս։ Պատուէր հրամանի եդու քաղաքապետաց և դատաւորաց ապառնալեօք ծանր տուգանաց եթէ անփոյթ լինիցին հսկել պահպանութեան օրինացս։

Ի սաստկութենէ հրամանացս զարհուրեալ բազումք 'ի հեթանոսաց՝ ընկալան զճշմարիտ կրօնս աստուածպաշտութեան, յորս գտան և ականաւոր ազնուականք 'ի հռովմէական ծերակուտէն, որպիսիք էին Անիկեանք, Պրոբոսեանք, Պաւղինեանք, Գրակկեանք, որք ընտանեօք համագերձ դարձան 'ի քրիստոնէութիւն։ Իսկ թէպէտ էին տակաւին բազումք պաշտպանք հեթանոսութեան, սակայն և այնպէս ժողովուրդն Հռովմայ խուռն ընթանայր 'ի Վատիկան 'ի յարգել զգերեզմանս առաքելոյն, որպէս և 'ի Լատերանեան տաճար յընդունել զմկրտութիւն։ Յաղագս այսր մեծի երախտեաց Հռովմայեցիք շնորհապարտ զանձինս դաւանեն որոյ թագաւորիս։

ԳԼՈՒԽ ԻԲ·

Ապաշխարութիւն Թէոդոսի, և մահ նորա։

ԲԱՐԵՊԱՇՏ կայսրն Թէոդոս ոչ վերջացաւ ցուցանել անպակաս զիւր նախանձ աստուածպաշտութե, յամենայնի հպատակելով կարգաց և կանոնաց եկեղեցւոյ՝ զոր և յայտ արար 'ի դէպս ապաշխարութեան յանցանաց իւրոց՝ յօրինակ ամենայն իշխանաց։

Ի Թեսաղոնիկէ քաղաք Մակեդոնիոյ յամի տեառն 388 ապստամբեալ ժողովրդեան ընդդէմ՝ իշխանաց և տեառնակալաց՝ արտաքսեցին զամենեսին 'ի քաղաքէն.

զոր լուեալ Թէոդոսի և շարժեալ 'ի ցասումն բարկութեան, առաքեաց անդր զօրս սատակել զամենայն քաղաքացիս ։ Եւ յաւուր միում մինչդեռ ժողովուրդն ամենայն 'ի մի վայր խռնեալ էր 'ի տես քաղաքական հանդիսի, յարձակեալ զինուորացն՝ սուր 'ի վերայ եդեալ կոտորեցին աւելի քան զեօթն հազար ոգիս ։

Հանդերձ անողորմ կոտորածիւ զայրացոյց զամենայն հպատակս անիրաւութեան, զի ընդ յանցաւորս և անմեղք բազումք սպառահանեցան ։ Յետ զառն և ուշաբերու զղջացս յաւուր միում 'ի հանդիսաւոր տօնի կամելով Թէոդոսի գնալ յեկեղեցին 'ի Միղիոլան, սուրբն Ամբրոսիոս ընդ առաջ ելեալ նմա առ դրուն եկեղեցւոյն՝ արգել զնա մտանել անդր, յուշ արարեալ զյանցանսն անխորհուրդ հրամանին, և զի չև էր սրբեալ մեղքն 'ի ձեռն ապաշխարութեան. յայնժամ խոնարհեալ Թէոդոսի 'ի հպատակութիւն՝ յանձն առ զամենայն ապաշխարանս զորս միանգամ տայր նմա սուրբ հայրապետն. որպէս և կատարեաց անթերի ըստ կարգաց եկեղեցւոյ և կանոնաց ։ Սակայն սուրբ եպիսկոպոսն նախ քան զընդունել զնա 'ի հաղորդութիւն ընդ հաւատացելոց՝ ետ նմա սահմանել օրէնս՝ չտալ ումեք վճիռ մահու, մինչև անցեալ իցեն աւուրք երեսուն ։ Այս օրէնք ապրեցուցին յետոյ զԱնտիոքացիս, որք ընդ փողոցս քաղաքին անարգանօք քարշեցին զարձան Թագուհւոյն Պղակիղեայ զի զնոյն պատուհաս Թէսաղոնիկեցւոց կրէին արդեօք, եթէ կայսրն չունէր ժամանակ հանդարտելոյ զիւր ցասումն ։

Վախճան կենաց և Թագաւորութեան մեծին Թէոդոսի գտաւ համեմատ պանծալի փառաց սկզբնաւորութեանն. զի յետ ականաւոր հանդիսանալոյ յաշխարհի սրանչելի բարեպաշտութեամբ, արիական քաջութեամբ, առատաձեռնութեամբ և արդարութեամբ, մեռաւ յամի տեառն 395, լի արդեամբք գործոց բարեաց յօրինակ ամենայն իշխանաց ։ Նախքան բաժանեալ էր զԹագաւորութիւնն յերկուս որդիս իւր յԱրկադէոս և յՈնորիոս. որոց ժառանգեալ զգաւազան իշխանութեան հօրն իւրեանց, չեղեն ժառանգք և հետևողք հայրենի բարեմասնութեանցն ։

Երբև լցան աւուրք քառասուն մահուան մեծին

Թէոդոսի՝ սուրբն Ամբրոսիոս խօսեցաւ ճառ գամբանական յեկեղեցւոջ Միդիլանու. յորում գովէ զհաւատն նորա, այնմ ընծայելով և զամենայն արքական յաղթութիւնս զխոնարհութիւնն՝ զոր եցոյց 'ի հրապարակական ապաշխարութեան, և որ մեծն է՝ զպատրաստակամութիւն սրտի նորա 'ի ներել յանցանաց. «Համարէր, ասէ, ընդունել յումեքէ զշնորհակալութիւն՝ յորժամ խնդրէր որ 'ի նմանէ շնորհս ինչ պարգևաց։ Եւ երբեք այնպէս դիւրապատրաստ էր 'ի ներել, որպէս 'ի շարժիլ ցասմամբ իւրով, որով բարկութիւնն նորա պատճառ լինէին յաջողելոյ բազմի յանցաւորաց, և վասն իւր յորդոր պարգևելոյ նոցա շնորհս.»։

Համառօտ յիշատակութիւն գովելի արդեանց որդւոյ Թագաւորին՝ յայտ առնեն զփոյթ խնամոյն 'ի հաստատել զքրիստոնէութիւնն 'ի վերայ աւերակաց կռապաշտութեան. Յաւուրս իշխանութեան նորա, որպէս և այլոց նախանձաւոր գործակցացն, մեծապէս առաւելան յառաջադիմութիւնք հաւատոյ, ոչ միայն 'ի սահմանս հռովմէական տէրութեան, այլ և արտաքոյ 'ի բազում և յընդարձակ աշխարհս, ուր նախանձ առաքելաջան քարոզչաց ծաւալեաց զլոյս աւետարանին Քրիստոսի.

ԳԼՈՒԽ ԻԳ.

Հերետիկոսք առ ժամանակօք Արիոսի որք խռովեցին զեկեղեցի։

ՀՐՈՎԱՐՏԱԿՔ Թէոդոսի թէպէտ և բազմօք տկարացուցին զաղանդն Արիոսի և զկռապաշտութիւն, սակայն ծագեցան այլ մոլորութիւնք 'ի խռովել զեկեղեցի. Մոլորեալք ոմանք պատճառս առեալ զխաղաղութիւնն յոր ընդ քրիստոնեայ Թագաւորօք վայելէին հաւատացեալք, արկին յեկեղեցի զքաղաքական մոլորս, որ վնասակարագոյնք են քան զարտաքին պատերազմունս. Նոր թշնամիքս ճշմարտութեան ոչ միայն կամեցան այլայլել զաւանդ հաւատոյ, այլ և ոմանք 'ի նոցանէ ջանահնար եղեն նորոգել զմոլեգնութիւն նախնի բռնաւորացն 'ի հալածել զողջամիտս.

Ի բազմաթիւ աղանդոց այսր դարու նշանաւորք եղեն

Դոնատեանք, Մակեդոնեանք, Անոմեանք, Աէրիոսեանք, Փոտինեանք, Մեսաղեանք, Կողլիրիդեանք, Լուկիփերեանք, Ապողինարեանք, Պրիսկիղղեանք և Յովինիանեանք, զորոց մի ըստ միոջէ տեսցուք հակիրճ բանիւք.

ԳԼՈՒԽ ԻԴ.

Դոնատեանք.

ԳԼՈՒԽ աղանդոյս եղև Դոնատոս եպիսկոպոս 'ի Նումիդիա, որ յետ մահուան Մենսուրիոսի եպիսկոպոսին Կարթագինոյ, յամի տեառն 311 եմոյծ հերձուածս յԱփրիկէ. քանզի Կեկիլիանոս աւագ սարկաւագ այնր եկեղեցւոյ՝ օրինաւոր ընտրութեամբ իբրև յաջորդեաց զվախճանեալն, ցասուցեալ Դոնատոսի՝ զի ոչ տուաւ նմա այն աթոռ, սկսաւ նիւթել հնարս յափշտակելոյ զայն պատիւ. և կացեալ 'ի գլուխ խռովութեանն՝ պնդէր թէ Կեկիլիանոս ձեռնադրեալ 'ի մատնիչ եպիսկոպոսաց՝ (զի այսպէս անուանէին զայնոսիկ, որք միանգամ յաւուրս հալածանաց զսուրբ գիրսն տուեալ էին 'ի ձեռս հեթանոսաց.) ոչ կարէ կատարել զեպիսկոպոսական պաշտամունս. Վասն որոյ գումարեալ ժողով ընկեցին յաթոռոյ զեպիսկոպոսն Կարթագինոյ զԿեկիլիանոս, և կացուցին 'ի տեղի նորա զՄայորինոս.

Կուսակիցք նորա եպիսկոպոսին, որպէս և Դոնատեայ պաշտպանի նորա, այնչափ բազմացան մինչև ժողովուրդք գրեթէ ամենայն քաղաքաց Ափրիկոյ բաժանեալ էին յերկուս հօտս և յերկուս հովիւս, մին ուղղափառաց և միւսն Դոնատեանց. Ապարապար եղեն խնամք մեծին Կոստանդիանոսի 'ի գումարել ժողովս 'ի Հռոմ՝ յԱրելատ քաղաք և 'ի Մեդիոլան, յորս նզովեցան հերձուածողքս. զի ոչ միայն մերժեցին նոքա զամենայն հնարս քաղցրութեան, և անարգեցին զհրովարտակն արքունի, այլ և զայրացեալ մոլեգին ընդ պատուհաս նզովիցն, ձեռն արկին 'ի յետին յանդգնութիւն. կողոպտել զեկեղեցիս, անարգել զհաց սրբութեան, թափել 'ի գետին զսուրբ իւղն օծութեան կամ մեռանի, կործանել զսեղանս և խորտակել զսուրբ անօթս։ Ապա սկսան քարոզել եթէ պարտ է վերստին մկրտել զհերձուածողս, և թէ պակասելով ճշմարիտ եկեղեցւոյ ընդ ամենայն երկիր՝ բաց 'ի խմբէ իւրեանց, հարկ է վերստին ձեռնադրել զամենայն եպիսկոպոսունս և զքահանայսն, որք չլինէին իւրեանց կուսակից և համախոհ։

ԶՄայօրինոս յաջորդեաց այլ ոմն Դոնատոս, և ոչ աղանդապետն. որ թէպէտ ոչ այնչափ խռովեցոյց էր որպէս զհամանունն իւր, սակայն վտանգաւորագոյն քան զնա սակս ճարտարամտին լինելոյ։ Էր սա այլ իմաստուն, պերճախօս և ճգնազգեաց, սակայն ամբարտաւան և անարգու եպիսկոպոսաց և իշխանաց։ Ջանահնար եղև հանդիսանալ իբր գլուխ այսր աղանդոյ, զոր և յանդգնութեամբ ջան գործեաց հաստատել գրովք և վերերևոյթ առաքինութեամբ անձին։ Ի սաստել և 'ի հրամայել իւրում պատկառեցուցանէր զհամախոհս իւր, մինչև երդնուլ նոցա յանուն նորա, և այն երդումն շատ էր 'ի խրախոյս արութեան և մոլեգնութեան իւրեանց։ Ի սոյնս ծագեցաւ յԱփրիկէ աղանդն Սիկարեանց։

ԳԼՈՒԽ ԻԵ.

Սիկարեանք կամ Թափառականք։

ԴՈՆԱՏԵԱՆՔ առ հասարակ բանիւ զգածեալ էին բուռն մոլեգնութեամբ, 'ի նոյնսն երևեցաւ աղանդն կատաղի մոլեգնելոյ, որք անուանեցան Թափառականք կամ Շրջմոլիկք, որոց գործ էր թափառել 'ի շէնս և յագարակս։ Բազումք 'ի սոյնսն էին այրք գռեհիկք անտաշք և վայրենիք, որք Ափրիկեցւոց լեզուաւ ևեթ խօսէին. խրախուսեալք սուտ նախանձու կեղծ բարեպաշտութեան՝ յետս կային յերկրագործութենէ, և միաբան արարեալ զուխտ ժուժկալութեան, անուանեցին զանձինս վրէժխնդիրս արդարութեան և պաշտպանս նեղելոցն 'ի բռնութենէ իշխանաց։ Ի կատարել զպարտս պաշտաման իւրեանց՝ ազատութիւն տանէին ստրկաց, և ընթացեալք ընդ լայնարձակ փողոցս քաղաքաց՝ սովորէին զմեծատունսն իջանել 'ի կառաց և գնալ հետիոտս առաջի ծառայից, և զծառայսն բռնադատէին ելանել բազմել 'ի կառս ։ Չառնուին 'ի կիր զսուսեր, զոր արգել Քրիստոս Պետրոսի, այլ զէնք նոցա էր ցուպ ստուար, գաւազան իսրայէլի առ 'ի նոցունց անուանեալ. և 'ի հարկանել զոք նովաւ՝ խորտակեալ փշրէին զոսկերս նորա ։ Ի յախոյս մարտի նոցա էր աղաղակելն Գոհութիւն Աստուծոյ. և համարեալ էր նոցա այն նշան մահու ։ Մին 'ի պատժոց որովք տանջէին զուղղափառս՝ էր ծեփել զաչս նոցա քացախախառն կրով, և թողուլ զնոսա վիրալիցս ։

Մոլեգնեալքս այսոքիկ թէպէտ և առնէին զուխտ ժուժկալութեան, սակայն անձնատուրք էին 'ի գինի և յայլ ամենայն ազգս պղծութեան. շրջէին ընդ կանայս և ընդ աղջկունս գինեհարս, զորս անուանէին սրբակրօն կուսանս, և բազում անգամ ցուցանէին ևս զանժուժկալութիւն իւրեանց ։ Գլխաւորք անօրինացս կոչէին Սրբագլուխք կամ Պարագլուխք սրբոց, ընդ որոց առաջնորդութեամբ մարտնչէին մոլեգնեալքս բռուն կատաղութեամբ դիմելով 'ի մահ ։ Մեռանելն կամակար համարեալ էր առ նոսա ողջակէզ մատուցանել Աստուծոյ. վասն որոյ բազումք ելանէին 'ի գլուխ ժայռից և հոսէին զանձինս 'ի վայր՝ ոմանք ծովակուր լինէին և այլք հրակէզ ։ Որք միանգամ փափաքէին փառաց մարտիրոսութեան, յառաջագոյն ազդ առնէին ամենեցուն. յոր սակս սովորութիւն էր պարարել զնոսա առատ կերակրովք՝ և յորժամ տեսանէին զանձինս գիրացեալս, իբր զցուլս նուիրականս գնային զահավիժել զանձինս 'ի բարձանց ։

Ընդ յետ իբր հարիւրամեայ բռուն կատաղութեան սոցա՝ Հոնորիոս կայսր կամելով ածել զնոսա 'ի զգաստութիւն, հրաման ետ գումարել յԱփրիկէ զժողով եպիսկոպոսաց ուղղափառաց և առաջնորդացն Դոնատեանց, որք յամի տեառն 411 հաւաքեցան 'ի Կարթագինէ քաղաք, ուր գտան երկերիւր և ութսուն եպիսկոպոսունք ուղղափառք, և հարիւր և յիսուն Դոնատեանք ։ Ընդ սուրբն Օգոստինոս սովորեալ յայլոց հարց ողջամտաց վիճաբանել ընդ հերձուածողս, պերճախօս բարբառովն իւրով և խորին հանճարով զիտութեանն յամօթ արար զհետեալսն 'ի Ճշմարտութենէ· որով ոմանք յաղթահարեալ 'ի բանից որոյն՝ եկին 'ի հաւանութիւն· սակայն բազմաց խստասրտեալ մնացին 'ի մոլորութիւնս իւրեանց։ Այլ առ սակաւ սակաւ տկարացեալ այսր աղանդոյ՝ անհետացաւ 'ի սպառ, որպէս է այս յաճախ կատարած որոց ապըստամբութեամբ զինեցան ընդդէմ հաւատոյ սուրբ եկեղեցւոյ։

ԳԼՈՒԽ ԻԶ.

Մակեդոնեանք։

ՄԱԿԵԴՈՆ արիոսեան, որ նստէր յաթոռ պատրիարգութեան Կոստանդնուպոլսոյ, կամեցաւ առնել իւր անուն նորահնար վարդապետութեամբ զատուցեալ յայլոց արիոսականաց։ Մոլորութիւն նորա եղեւ վարդապետել, եթէ Հոգին սուրբ չիցէ Աստուած, այլ հրեշտակ ոք յառաջին դասուց։ “Եթէ Հոգին սուրբ՝ Աստուած իցէ, ասէ, և բղխեալ 'ի Հօրէ, ապա լինէր Որդի, և եղբայր Քրիստոսի, որում չէ մարթ լինել, զի հաւատոյ է՝ թէ Քրիստոս է միածին որդի։ Իսկ եթէ եղէ յՈրդւոյ, յայնժամ Հայրն Աստուած լինի հաւ Հոգւոյն որդւոյ։ Այս յայտ է, ասէ, թէ Հոգին սուրբ ոչ է Աստուած„։ Անմիտ և ծաղրական խնատակութիւնս այս խարդաւանեաց զյոլովս, զի բազմաթիւ էին յայն մոլորեալքն յորժամ յամի տեառն 381 դատապարտեցան 'ի ժողովն Կոստանդնուպօլսոյ։ Սոքա կոչին անխտիր և Մարաթոնեանք, զի Մարաթոնիոս եպիսկոպոս Նիկոմիդեայ ուժգին ջատագով եկաց կարծեացն Մակեդոնի։ Մոլորութիւնս այս և յետ նզովից ընդհանրական ժողովոյն տարածեցաւ 'ի ժողովուրդս և 'ի մենաստանս, սակայն աղանդաւորքն ոչ ունէին առանձին եպիսկոպոս կամ եկեղեցի մինչև ցաւուրս Թագաւորութեան Արկադեայ։

ԳԼՈՒԽ ԻԷ.

Եւնոմեանք. Այետեանք և Փոտինեանք ։

ԵՒՆՈՄԵԱՆՑ և զԱյետեանց նշանակեցաք վերագոյնդ 'ի խօսելն զաղանդոց արիոսական մոլորութեան. նոյն մեզ ասել և զՓոտինոսէ ։

Էր սա եպիսկոպոս Սմիւռնիոյ սնեալ և վարժեալ յարիոսական մոլորութեան. սակայն յանդուգն և անօրինագոյն գտեալ քան զԱրիոս՝ անպատրուակ քարոզէր, թէ չիք յաստուածութեան այլ անձն բայց 'ի միոյ միայնոյ. և թէ Քրիստոս իցէ լոկ մարդ, որ էառ զգոյութիւն 'ի ծնանել անդ յարգանդէ Մարիամու ։ Դատապարտեցաւ մոլորութիւնս 'ի զանազան ժողովս, և ապա գումարեալ այլ ժողով 'ի Սմիւռնիա քաղաք յամի տեառն 351, ընկեցաւ Փոտինոս յաթոռոյ ։

ԳԼՈՒԽ ԻԸ.

Մեսաղեանք ։

ԱՂԱՆԴՈՅՍ այսմիկ հերետիկոսաց, մանաւանդ թէ ցնորելոց, որ սկսաւ երեւել յամի տեառն իբր 360, խանձարուրք կային Միջագետք ։ Անուն նոցա 'ի լեզու Ասորւոց նշանակէ Աղօթականս, զի զկատարելութիւն առաքինական վարուց համարէին 'ի հանապազորդութեան անդադար աղօթից. որում զհետ եկին մոլորութիւնք և անհեթեթ ցնորք նոցա, որովք տուեալ էին զանձինս 'ի մտաւոր յափշտակութիւնս և յերեւակայեալ յայտնութիւնս ։

Վարդապետութիւնք որոց աւետարանին, որ առ 'ի լինել կատարեալ հրամայէ ուրանալ զանձն, վաճառել զինչս և տալ աղքատաց, և հրաժարել յամենայն կենցաղական զբաղմանց, յորդոր եղեն ազխափ ումեմն Սաբբա անուանելոյ՝ ժամանել աւետարանական կատարելութեան, վասն որոյ խեղաթիւր մտօք իմացեալ զբանն Քրիստոսի, ետ ներքինացուցանել զանձն, և վաճառեալ զոր ունէրն՝ զգինն բաշխեաց աղքատաց ։

Նա զի Քրիստոս ուսուցեալ էր մի գործել զկորստական կերակուրն, այլ զոր մնայն ՚ի կեանս յաւիտենից, գուշակեաց Սաբբա՝ թէ կենցաղական աշխատութիւնք մեզ իցեն, վասն որոյ սահմանեաց զանգործութիւն կենաց ։

Ըստ այսոցիկ իմացեալ և զայլ բանս սուրբ գրոց, համարեցաւ զմարդիկ պաշարեալս շուրջանակի ՚ի դիւաց, և զամենայն մեղս մարդկան կարծէր գործեալս ՚ի թելադրութենէ բանսարկուին, եդեալ ՚ի մտի՝ թէ ՚ի ծնանիլ ուրուք կարգիցի նմին սատանայ առանձին՝ զրգռել զնա ՚ի մոլութիւնս, և տալ գործել զամենայն զմեղսն յորս և գթիցէ ։

Յառաջին գործոյ անտի Սաբբայի, ՚ի ներքինացուցանելոյ զանձն, երևի նա տագնապեալ գոլ հանապազ ՚ի մարմնաւոր փորձութենէ, որում հնարս զարմանոյ համարեցաւ զգործն ։ Գիրք սուրբք ուսուցանեն, եթէ դեն պղծութեան հալածի աղօթիւք ։ Սակայն Սաբբա ապահովագոյն վարկաւ զմիջնորդիւս հնարն՝ իբր միակ զարման յաղթելոյ փորձութեանց, և անվտանգ մնալոյ ՚ի մեղաց ։ Ըստ փորձառութեան Սաբբայի՝ խորհուրդք եկեղեցւոյ թէպէտ և սովոր են ջնջել զմեղս, այլ քանզի պատճառք մեղացն ոչ ՚ի սպառ անհետանան, նմին իրի տկար և անզօր համարէր զխորհուրդս եկեղեցւոյ, ՚ի դէմ ածեալ զօրինակ ածելւոյ որ սրբէ զհերսն առանց արմատախիլ առնելոյ ։

Գիրք սուրբք քանզի նկարագրեն զսատանայ իբր զառիւծ ամեհի որ շրջի զմեօք, ածեալ զայն զմտաւ Սաբբայի սարսէր հանապազ և ըկէր յանձին որպէս դիւահար, տառապէր յաղօթսն իբր հալածական, և թուէր իմն մարտ դնել ընդդէմ նոցա, և իբրև զաղեղնաւոր ոլորս արձակէր ընդդէմ այսոց չարաց ։ Յորեալ այս և ՚ի ննջել իսկ տագնապէր անտի յաղմկէ խորհրդոց և անուրջոց զորս համարէր տեսիլս և երկնաւոր յայտնութիւնս ։ Վասն որոյ պատուեցաւ նա իբրև մարգարէ, և յինքն ձգեաց զխումբս խառնիճաղանջ ամբոխին, մոլորեցոյց զտկարամիտսն ազդելով ՚ի նոսա զխելայեղ մոլութիւնս իւր, մինչև բազմութեան արանց և կանանց վաճառել զստացուածս իւրեանց, և անգործ և թափառական վարել կենցաղ, աղօթելով անդադար, և առ ագահութեան իւրեանց նստելով և ննջելով 'ի փողոցս ։

Կարծելով սոցա՝ եթէ սահմանք տարածութեան օդոց լի իցեն դիւօք, և 'ի շնչել զօդս ընդ բերանն կլանեն զդեւս, առնուին զշունչ ընդ ռնգունս, զոր և ստէպ մաքրէին առ զերծանելոյ 'ի դիւաց ․ երբեք երբեք մարտնչէին ընդ այսս աղեղնաձիգ սլաքօք, և երբեմն ևս յափշտակեալք 'ի ցնորս գանգատէին, և կարծէին տեսանել զերրորդութիւն աստուածութեան ։

Ոչ կամեցան սոքա մեկնել զանձինս յուղղափառաց, զորս կարեկից գթոյ արժանիս համարէին, իբր զի տգէտք են և թանձրամիտք, որք անմտութեամբ իւրեանց, սակայն, 'ի ձեռն խորհրդոց եկեղեցւոյ խնդրէին նպաստ և զօրութիւն առ 'ի զդէմ ունել յարձակմանց բանսարկուին ։

Մեսաղեանք քանզի բազմացեալ էին յոյժ յԵդեսիա քաղաք, տարագրեցան անտի 'ի Փլաւիանոսէ եպիսկոպոսէն Անտիոքայ ․ վասն որոյ մեկուսացան 'ի կողմանս Պամփիլիայ ․ սակայն և անդ դատապարտեալ 'ի միում ժողովի, անցին 'ի փոքրն Ասիա, և մոլորութեամբ իւրեանց ապականեցին զբազում մենաստանս ․ յոր սակս Լետոյիոս եպիսկոպոս Մելիտինոյ հրակէզ կորոյս զնոսին 'ի մենաստանս անդ իւրեանց, և ապրեալքն 'ի հրոյ՝ խոյս ետուն առ այլ եպիսկոպոս Հայաստանեայց, որոյ քաղցրութեամբ ընկալեալ զնոսին՝ զբազումս 'ի նոցանէ ած 'ի զգաստութիւն ։

Եւ թէպէտ պատմողք անցիցս ոչ ինչ յիշատակեն զանուանէ եպիսկոպոսին, սակայն հայելով 'ի ժամանակն և յանցս պատմութեան ազգիս, երևի լինել մեծն Ներսէս հայրապետ Հայոց, որ յամի տեառն 365, ըստ աւանդելոյ մատենագրաց ազգիս խնամ կալաւ զդատարկաշրջիկ կրօնաւորս՝ զբնակեալսն 'ի գիւղս և 'ի քաղաքս, հաւաքել 'ի վանս, և սահմանեալ նոցին կարգս և կանոնս միաբանական և միանձնական վարուց՝ կարգեաց 'ի վերայ նոցա տեսուչս և առաջնորդս, որով նորոգեցան ամենայն կարգք կրօնաւորաց 'ի Հայաստան ։

Զնոյն խնամ հոգեջան վանականաց 'ի դարձուցանել զմոլորեալս եցոյց և սուրբն Մեսրոպ 'ի սկիզբն հինգերորդ դարու, զոր և նշանակեսցուք անդէն ։

ԳԼՈՒԽ ԻԹ․

Լուկիփերեանք ։

ՅԸՆԴ ԵՐԿԱՐ բանակռուութիւնն յուզեալս յարիոսականաց՝ եղեն և տրտունջք առանձնականք 'ի պատճառս կարի ներողամտութեան կամ սաստիկ խըստութեան առաջնորդաց ոմանց ։ Յայսպիսեաց առաւել եղև և Լուկիփերոս եպիսկոպոս Կալիարեայ որ 'ի կղզին Սարդինիկեայ, այր բարի և խստակրօն, սակայն միձնկեալ անհամբոյր բարուց․ վասն որոյ մերժեաց 'ի հաղորդութենէ եկեղեցւոյ ոչ միայն զարիոսականս և զկիսարիոսեանս, այլ և զամենայն ուղղափառս որք իւիք իրօք մասնակից կամ կենցաղակից գտեալ էին եպիսկոպոսաց երկոցունց կողմանց ։ Սակայն անընտրող նախանձայուզութեամբս գլուխ եկաց աղանդոյ, զի Լուկիփերեան անուանեցան որք միանգամ զատուցեալք 'ի հաղորդութենէ ուղղափառաց յամառեալ գտան յայսպիսի հերձուածս ։

Սոցա ընծայեն և մոլորութիւնք ինչ, իբրու զի մարմնաւոր ասէին զհոգի մարդոյ, և մարմնապէս ծնեալ ։ Սակայն այս կարծիք զնոցանէ՝ թերևս զրպարտութիւն իցէ, բայց այս ինչ հաւաստի է՝ թէ պնդէին վերստին մկրտել զարիոսականս զդարձեալսն 'ի գոգ սուրբ եկեղեցւոյ ։

ԳԼՈՒԽ Լ․

Ապողինարեանք ։

ԱՊՈՂԻՆԱՐ եպիսկոպոս Լաւոդիկեայ՝ մի 'ի նախանձաւոր պաշտպան կացելոյն համագոյակցութեան Բանին, այր ականաւոր բարեպաշտութեամբ և վարդապետութեամբ՝ կարի վստահացեալ յիմաստս գիտութեան իւրոյ՝ կործանեցաւ 'ի մոլորութի ։ Համարէր՝ եթէ Բանն Աստուած 'ի մարդանալն առեալ իցէ լոկ մարմին մարդկային առանց բանական հոգւոյ․ կամ թէ հոգին բանական՝ ընդ որում միացեալ էր Բանն Աստուած , թէպէտ և զգայուն էր, այլ զերծ 'ի բանէ և յիմացութենէ : Ըստ մոլորութեան նորա՝ Բանն Աստուած հոգիւորէր՝ զմարմինն Քրիստոսի, որպէս թէ 'ի Բանէն Աստուծոյ և 'ի մարմնոյն զանգեալ էր մի գոյացութիւն : Վասն այսպիսի անհեթեթ կարծեացն նմա ընծայի և՝ մոլորութիւնն աստուածաչարչարութեան . սակայն ըստ բազմաց իսկ վկայելոց չէ յայտ եթէ այն իցէ միտք Ապողինարի :

ԳԼՈՒԽ ԼԱ.

Պրիսկիղեանք:

ՆԱԽԿԻՆ խշտի հերետիկոսաց եղև Եգիպտոս, ուր Մարկոս ոմն Մեմփացի յօրինեալ զայլանդակ խառնուրդ ինչ յայլ և այլ մոլորութեանց, և յաւելեալ 'ի նոսա ինչ ինչ 'ի պիղծ սովորութեանց Գնոստիկեանց և Մանիքեցւոց, սկսաւ սերմանել 'ի ժողովրդեան . զոր առեալ եպիսկոպոսաց կողմանցն Եգիպտոսի, տարագրեցին զնա անտի . վասն որոյ անցեալ նորա 'ի Գաղղիա և 'ի Սպանիա՝ մոլորեցոյց անդ զՊրիսկիղիանոս զեպիսկոպոսն Աւիլա քաղաքի, որ և եղև գլուխ և առաջնորդ այսր աղանդոյ :

Եպիսկոպոսս այս ազնուատոհմ ոք էր, մեծատուն, ճարտարախօս, պերճախօս և իմաստուն : Խստակրօն վարք նորա առ երեւս խոնարհութիւնն, արհամարհութիւն ստացուածոյ, պահք և անխափան աշխատութիւնք մեծարոյ առնէին զնա յաչս ժողովրդեան . սակայն ընդ պատրուակաւ խստակրօնութե՟ ծածկեալ ունէր ներքս զեղծ և ապականեալ, ունայնամտութիւն և խոտորակէր բարս : Իսկ զի մարդելոյզ ոք էր և չարագրգիռ, հեշտեաւ յինքն որսաց զբազմութիւն Սպանիացւոց յամենայն վիճակէ մարդկան, առաւելապէս կանայս թեթեւամիտս, հետաքննիս և նորասէրս, մինչև 'ի դոյզն ժամանակի՝ մոլորութիւնք նորա սփռեալ տարածեցան ընդ բովանդակ Սպանիա :

Նմանապէս իբրև զՄանիքեցիսն՝ ուսուցանէր զգոյութիւն միոյ չար սկզբան, և իբրև զԳնոստիկեանս՝ թոյլ տայր անօրէն պղծութեանց, մինչ զի աւանդէ՝ 'ի գիշերային ժողովս իւրեանց մերկանդամ կալ նոցա յաղօթս ։ Այլ զի պղծասէրքս ճանաչէին քաջ թէ հարկ 'ի վերայ կայ ծածկութեան ամօթալից գործոյն, նմին իրի պատուիրէին ստախօսել և սուտ երդնուլ՝ քան յայտնել զգաղտնի անօրէնութիւնս իւրեանց ։

Երբև յայտնեցան մոլորութիւնք Պրիսկիղիանոսի, նզովեցաւ ինքն յեպիսկոպոսացն Սպանիոյ, և տարագրեցաւ անտի. սակայն 'ի հանապազորդել նորա տակաւին ուսուցանել զմոլորութիւնս իւր, հնարիւք Իտակիոսի եպիսկոպոսի սպանիացւոյ և գործակցացն նորա հրամանաւ Մաքսիմոսի բռնաւորին հատաւ գլուխ նորա յամին 385 ։ Նորօրինակ պատուհասս անհաւան գտեալ սրբոյն Մարտինոսի տուրոնեցւոյ խորշեցաւ 'ի հաղորդակցութենէ Իտակիոսեանց, և յատենախօսել իւրում առ բռնաւորն Մաքսիմոս՝ ասէ. « Պրիսկիղեանք ընկալան զարժանին պատուհաս 'ի նզովից անտի եպիսկոպոսացն՝ որոնք հատեալ մերժեցան 'ի հաղորդութենէ եկեղեցւոյ ։ Նա չէր մեր լսեալ երբէք զի աշխարհիկ ոք այր կանգնեսցի դատաւոր յիրս պաշտամանս հաւատոյ » ։

Մահ Պրիսկիղիանոսի պատճառք եղեն բազմադիմի վնասուց. քանզի ևս քան զեւս զայրացան աղանդն 'ի ձեռն տանջանաց, և որք միանգամ աշակերտեալ էին նմա իբր առաքելոյ՝ սկսան այնուհետև պատուել զնա որպէս մարտիրոս, և զմարմին նորա՝ որպէս և զընկերացն սպանելոց ընդ նմա՝ տարան 'ի Սպանիա, ուր պաշտէին իբր նշխարս սրբոց, և երդնուին յանուն Պրիսկիղիանոսի ։

Յամի տեառն 400, թէպէտ եղեն ընդդէմ նոցա դատակնիք Տոլեդեան ժողովոյն, և օրէնք սաստիկք յՈնորիոսէ և 'ի կրսերոյն Թէոդոսէ յարևելս և յարևմուտս, սակայն սփռեալ գոլով նոցա ընդ աշխարհ ամ՟ մոլորեցուցին զբազումս, և տևեաց մոլորութիւնս այս մինչև ցվեցերորդ դար ։

Հատուածք 'ի սոցանէ թուին լինել՝ որք 'ի հինգերորդ դարու անակնկալ երևեցան 'ի Հայս, զորս և եբարձ սուրբն Մեսրոպ ։

ԳԼՈՒԽ ԼԲ.

Յովինիանոսեանք։

ԳԼՈՒԽ աղանդոյս եղև Յովինիանոս միայնակեաց Մեդիոլանեցի, որ ուսուցանէր ազգի ազգի մոլորութիւնս։ Զամուսնական վիճակն եւ կատարեալ համարէր ոչինչ ընդհատ 'ի կուսութենէ և յայրիութենէն։ Եդեալ սորա 'ի մտի՝ թէ մկրտութիւնն առնիցէ զմարդ անմեղանչական, անօգուտ և վայրապար համարէր զպահեցողութիւն և զայլ գործս խստամբերութեան։ Հաւասարս համարէր զամենայն մեղս, և զբաժանումն նոցին 'ի մահուչափս և 'ի ներելիս՝ մոռացածին գիւտ. և 'ի լրումն ամբարշտութեան իւրոյ քարոզէր եթէ Քրիստոս ոչ է ծնեալ 'ի կուսէ։ Աղանդաւորքս այսորիկ դատապարտեալք 'ի միում ժողովի գումարելոյ 'ի Հռովմ յամին 390, ընկճեցան արքայական սաստիւ և իշխանութեամբ, սակայն 'ի յետին ժամանակս գտան ոմանք հետևողք մոլորութեանցս։

ԳԼՈՒԽ ԼԳ.

Կոլլիրիդեանք։

ՍՈՔԱ էին խառնամուժ ամբոխ տխմարաց, որք անչափ բարեպաշտութեամբ համարէին զսուրբ կոյսն Մարիամ հաւասարակից Աստուծոյ։ Ընկալեալ զանուն 'ի յունական անուանէ հացին նուիրելոյ՝ զոր մատուցանէին սրբոյ Կուսին, և սպասաւորք այսր պաշտաման էին կանայք՝ քահանայուհիք առ 'ի նոցանէ անուանեալք։

ԳԼՈՒԽ ԼԴ.

Մարդակերպեանք։

ԱՅՐ ոմն տգէտ և թանձրամիտ յերկրէն ասորւոց Աւդիոս անուն մոլորեալ մտօք պնդէր, թէ Աստուած ունիցի մարմին մարդկային և անդամս համանմանս մերոյն, յորս սակս աշակերտք նորա անուանեցան Մարդակերպեայք ։ Էին սոքա միայնակեացք տխմարք՝ անհեթեթ ըղձակերտք սրբութեան վարուց. բաժանեցան 'ի հաղորդութենէ եկեղեցւոյ, ասելով թէ կան 'ի նմա յայտնի մեղաւորք ։ Աղանդս այս ծաւալեցաւ յԵգիպտոս, ուր և տևեաց ժամանակս ինչ ։

ԳԼՈՒԽ Ե։.

Եկեղեցական մատենագիրք ։

ԱՆՈՒԱՆՔ նախակարգեալ աղանդապետացն զոգցես առ հասարակ թաղեալ կան այսօր 'ի մոռացօնս անյիշատակութեան. սակայն կացցեն յաւէրժ պանծալի յիշատակք արանց ականաւորաց, յորոց պայծառացաւ եկեղեցի յայսմ չորրորդ դարու ։ Եթէ կամիցաք մի ըստ միոջէ զամենեսին 'ի համար արկանել, ընդարձակ բանից պէտք էին, զոր ոչ թոյլ մեզ ընթացք համառօտագիծ պատմութեանս. վասն որոյ զգլխաւորսն ևեթ և զարժանաւորս մեծաց գովեստից կարգեմք աստանօր ։

Լակտանտիոս՝ մականուանեալն Կիկերոն քրիստոնէայ, որ ըստ սրբոյն Երոնիմոսի գերազանց պերճախօս էկաց յիւրում դարու, եղև աշակերտ Առնոբիոսի և հետևեալ ոճոյ ընթացից նորա, որ և զհանճար իւր և զգիտութիւն արկ 'ի գործ գրելով ընդդէմ հեթանոսաց ։ Ճառք նր անուանեալքն Հրահանգք աստուածաբանականք, որպէս և գիրքն Յաղագս մահու կամ պատուհասի հալածչաց, արժանայարգք են և սիրելիք կրօնասիրաց, թէպէտ և յընթացս անդ բանիցն քանդել կամի յաւէտ զկռապաշտութիւն, քան զօրաւոր բանիւք հաստատել զքրիստոնէութիւն. յորս ոչ անմասն զտաւ և 'ի մոլորութենէ ։ Սա կարգեալ 'ի դաստիարակութիւն Կրիսպեայ որդւոյ Կոստանդիանոսի. և 'ի ճոխութեան անդ արքունեաց սակաւապէտ էր և ընչատեաց ։ Յեկեղեցական մատենագիրս երևելի է սա ընտիր լատինաբանութեամբն ։

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ, առաջինն 'ի սուրբ հարս և 'ի սրբազան մատենագիրս Հայոց, որ 'ի վաստակս առաքելաջան քարոզութեան իւրոյ արար ճառս հոգե-

շահս, ընդհագիրս յուսումն և 'ի հրահանգս նորադարձ ազգիս, մարգարէական և աւետարանական բանիւք ճըշմարտութեան՝ 'ի յորդոր աստուածպաշտութեան, և յուսոյ յարութեան և կենացն հանդերձելոց: Բովանդակութիւն ճառիցս կոչի Յաճախապատում, որ և տպագրեալ է 'ի Կոստանդնուպօլիս և 'ի Վենետիկ:

Ագաթանգեղոս՝ ատենադպիր Տրդատայ արքային Հայոց, որ 'ի հրամանէ նորա գրեաց զպատմութիւն դարձի ազգիս 'ի քրիստոնէութիւն 'ի ձեռն սրբոյ Լուսաւորչին: Տպագրեալ է 'ի Կոստանդնուպօլիս և 'ի Վենետիկ:

Սուրբ Յակոբ հայրապետ Մծբնայ, հօրաքեռորդի սրբոյ Լուսաւորչին, մին 'ի հարց առաջին ժողովոյն Նիկիոյ: Յօրինեաց ճառս իմաստալիցս և հոգեշահս 'ի վերայ հաւատոյ և բարի վարուց, որք տպագրեցան 'ի Հռոմ հանդերձ լատին թարգմանութեամբ, յամի տեառն 1756:

Եւսեբիոս եպիսկոպոս Կեսարիոյ Պաղեստինացւոց. այր բազմահմուտ՝ թակարդեալ 'ի պատրանս մոլորութե՟ արիոսականաց, որոց նպաստաւոր գտաւ առաջի մեծին Կոստանդիանոսի, ը՟ որում ունէր զընտանութիւն մեծ: Ի գրաւոր վաստակս նորա մեծարոյ են յոյժ Նախանկար ապացոյցք աւետարանին Քրիստոսի, Ժամանակագրութիւն ընդհանուր, և Պատմութի՟ եկեղեցական, որք անխիստակ առնէին արդեօք զմոլորամտութիւն նորա՝ եթէ երկրորդ ժողովն Նիկիոյ չէր նզովեալ զնա յանուանէ:

Սուրբն Անտոն հայր միայնակեցաց՝ հոգեջան վաստակօք դաստիարակութեան կրօնաւորական վարուց՝ արժանաւոր համարի դասելոյ 'ի կարգս եկեղեցական մատենագրաց: Ծնաւ 'ի Կոման քաղաք վերին Եգիպտոսի կամ 'ի Թեբայիդ յամի տեառն 254. և 'ի ժամանակին յորբունս հասակի քսան ամաց՝ եղև ժառանգ ճոխութեան հայրենական ստացուածոց. սակայն յորդորեալ 'ի լոյս բանից աւետարանին, " Եթէ կամիս կատարեալ լինել, վաճառեա զինչ քո, և տուր աղքատաց,, յօժարեցաւ կատարել զբան գրոյն և առանձնացաւ յանապատ, ուր դեն բազմադիմի հնարիւք գուն գործեաց պատրել զնա և յետս նահանջել 'ի բարւոք առաջադրութեանն . բայց նա յետ քանի ամաց արիաբար ժուժկալութեամբ մենամարտելոց ընդդէմ չարին, գնաց մեկուսանալ 'ի ներքնագոյն կողմն անապատին յանծանօթ վայրի . սակայն լոյս պայծառութեան նորա ոչ ծածկեալ մնաց 'ի թագստեան, քանզի յաճախեցին առ նա բազումք յաշակերտութիւն, ցանկալով նմանող լինել վարուց առաքինութեան նորա : Սուրբն Անտոն երկիցս էջ յանապատէն յԵգիպտոս և յԱղեքսանդրիա՝ ժամանել յօգնութիւն և 'ի քաջալերութիւն հաւատացելոց ընդդէմ բռնաւորութեան հալածչաց և արիոսականաց : Մեռաւ յամի տեառն 359, 'ի հասակի հարիւր և հինգ ամաց : Կան նորա եօթն նամակք, և նմին ընծայի կանոն ինչ միակեցական վարուց :

Սուրբն Հիլարիոս եպիսկոպոս Պիկտաւ քաղաքի՝ համբաւեալ զուտ նախանձու ուղղափառութեան ընդդէմ արիոսականաց, որք ետուն աքսորել զնա 'ի Փռիւգիա : Անվեհեր ախոյեանս հաւատոյ 'ի դառնալն յիւր աթոռ յետ չորեքամեայ աքսորանաց, մեծահամբաւ փառօք իբր յաղթական ընկալեալ եղև 'ի Գաղղիա, ուր և կատարեաց զբազմարդիւն կեանս իւր յամին 368 : Ծնեալ էր սա 'ի հեթանոս ազնուական տոհմէ, և վարժեալ 'ի մնոտի մոլորութիս նոցին պաշտաման, բայց 'ի մանկութեան ծանեաւ զունայնութիւն նոցին : Եկաց ժամանակս ինչ յամուսնական վիճակի, և ապա իբրև ստիպեցաւ ակամայ ընդունել զաստիճան եպիսկոպոսութեան, կամակար հաճութեամբ կողակցին իւրոյ՝ բաժանեալ 'ի նմանէ, խնամակալ եղև հօտին իւրում : Սրբութիւն վարուց նորա և գրաւոր երկասիրութիւնք ոչ նուազ նպաստաւորք եղեն յառաջադիմութեան ուղղափառ հաւատոյ : Կան նորա ազգի ազգի գրուածք ընդդէմ մոլորութեանց հերքելոց 'ի նմանէ 'ի բազում ժողովս : Երկոտասան գիրք նորա յաղագս սրբոյ Երրորդութեան՝ յայտ յանդիման ցուցանեն զերկնատուրն նմա պարգևեալ գիտութիւն 'ի խորագոյնն ճշմարտութիւնս հաւատոյ :

Սուրբն Աթանաս հայրապետ Աղեքսանդրիոյ՝ ժամանակակից սրբոյն Հիլարիոսի, ախոյեան ճշմարտութեան հաւատոյ, և վտանգիւք 'ի դառն զրպարտութենէ հերետիկոսաց : Ոչ ոք 'ի վարդապետաց որք կացին առ *նորա ժամանակօք գրեաց իբրեւ զնա խորագոյնս եւ պայծառս զխորհրդոյ ամենասուրբ երրորդութեան եւ աստուածութեան Քրիստոսի. եւ գրութիւնք նորա առ մեօք եւս են լուսաբուղխ աղբիւրք խորհրդոց հաւատոյ։ Կատարեաց խաղաղութեամբ զկեանս իւր յԱղեքսանդրիա յիւրում վիճակի յամի տեառն 371, 'ի հասակի ութսուն ամաց։ Տարագրեալ բազում անգամ յաքսորս օտարութեան, ամենայն ուրեք եգիտ զիւր հայրենիս՝ զուարթամիտ հոգւովն, աղօթական բարուքն եւ քաղցրասէր կենցաղավարութեամբն. Թէպէտ եւ օտար էր ազգաւ, եւ խստակրօն վարուք, սակայն ստացաւ իւր կուսակիցս եւ կարեկիցս եւ 'ի վերին սահմանս Գաղղիոյ, որպէս թէ լինէր յիւրում վիճակին յԱղեքսանդրիա։ Ընդ այսպիսի բարեմասնութեանց լծորդեալ ունէր եւ զպերճախօսութիւն ազդու եւ զօրաւոր, որով առանց բազմաբանութեան շարժէր զունկնդիրսն. վասն որոյ առանձնաշնորհ պարգեւօք անուանի է 'ի վարդապետս Յունաց այնր ժամանակի։*

Սուրբն Բարսեղ՝ ծնեալ 'ի Կեսարիա Կապադովկիոյ, անդստին յառաջին տիոց հասակին եցոյց յանձին զապագայ ակնկալութիւն հրաշալի արդեանցն զորս ունէր ընծայել եկեղեցւոյ, աւարտեալ զընթացս ուսման իւրոյ 'ի Կոստանդնուպօլիս, գնաց կատարելագործել զայն յԱթէնս, ուր ստացաւ սերտ մտերմութիւն ընդ սրբոյն Գրիգորի Նազիանզացւոյ։ Սուրբն Բարսեղ եթէ սիրէր համբաւաւոր լինել յաշխարհի, ոչ պակասէին նմա հնարք եւ հանճար առ այն, սակայն ազդեալ նորա 'ի շնորհաց Հոգւոյն սրբոյ՝ կամակար հրաժարեցաւ յունայնութեանց կենցաղոյս, եւ յետ յայց ելանելոյ մենաստանացն Եգիպտոսի եւ երկրին Ասորւոց, ակամայ կամօք ընտրեցաւ յեպիսկոպոս Կեսարիոյ եւ բազմադիմի հալածանս կրելով յարիոսականաց եւ յայլոց հերետիկոսաց՝ 'ի հրահանգս առաքինութեան եգիտ զիւր մխիթարութիւն։ Կան նորա ճառք եւ մեկնութիւնք հոգեշահք, որպէս եւ կանոնք վասն հրաժարելոցն յաշխարհէ, որովք վարին հասարակաբար միայնակեացք ազգին Յունաց, որոց հիմնադիր ճանաչի յարեւելս սուրբն Բարսեղ, ըստ որում յարեւմուտս սուրբն Բենեդիկտոս աբբայ։

Սուրբն Գրիգոր Նիւսացի, և սուրբն Գրիգոր Նազիանզացի՝ մականուանեալն Աստուածաբան, եղեն կրկին շնորհաղորդ վարդապետք այսր դարու:

Առաջինն էր հարազատ եղբայր սրբոյն Բարսղի Կեսարացւոյ, որ նախ գոլով աշխարհիկ երէց եկեղեցւոյն Նէոկեսարիոյ՝ վասն իմաստութեան և առաքինի վարուցն ընտրեցաւ եպիսկոպոս այնր քաղաքի. և զի յաջողակ էր բանիւ և գործով 'ի յաղթահարել զարիոսականս և զայլ հերձուածողս ժամանակին, աքսորեցաւ 'ի Վաղեսէ յարիոսեան կայսերէ, և յետ դարձին իւրոյ գնաց 'ի ժողովն Կոստանդնուպօլսոյ: Յօրինեաց ճառս իմաստալիցս և գիրս հոգեշահս. և յետ տանելոյ ազգի ազգի վշտաց 'ի պաշտպանութիւն ճշմարտութեան՝ հանգեաւ 'ի տէր յամին 396:

Իսկ երկրորդն՝ որ է Գրիգոր Աստուածաբան, յաշխարհէն Կապադովկիոյ 'ի Նազիանզ քաղաքէ, որդի հօր հեթանոսի, այլ յետոյ հաւատացելոյ 'ի Քրիստոս և կարգելոյ եպիսկոպոս Նազիանզու: Սուրբն Գրիգոր նուիրեալ Աստուծոյ ուխտիւք 'ի մանկութենէ՝ մնաց 'ի վարս առաքինութեան, և զարգացաւ աստուածային և արտաքին գիտութեամբ. շրջեալ յուսումնարանս Կեսարիոյ, Աղեքսանդրիոյ և Աթենայ գնաց 'ի Կոստանդնուպօլիս և դարձաւ 'ի հայրենիս իւր, ուր ձեռնադրեալ քահանայ 'ի հօրէ իւրմէ՝ ձեռնտու եղև նմա յամենայնի 'ի խնամել զժողովուրդն: Ապա ցանկացեալ առանձնել զանձն իւր զսուրբն Բարսեղ՝ գնաց առ նա, վարել ընդ նմա զկեանս միայնակեցութեան. սակայն 'ի կարգել սրբոյն Բարսղի արքեպիսկոպոս Կեսարիոյ, ձեռնադրեաց զԳրիգոր եպիսկոպոս Սասիմայ: Յետոյ 'ի հրամանէ ժողովոյ եպսաց՝ չոգաւ 'ի Կոստանդնուպօլիս առաջնորդել ուղղափառաց տեղւոյն. ուր իբր արի ախոյեան ուղիղ հաւատոյ՝ զինեցաւ ընդդէմ արիոսականաց և ապոլինարեանց՝ ցուցեալ զհանդէս աստուածաբանութեան իւրոյ. վասն որոյ ընտրեցաւ պատրիարգ քաղաքին: Սակայն 'ի կատարել ժողովոյն Կոստանդնուպօլսոյ՝ կամակար հրաժարեցաւ յաթոռոյն սակս օգտի եկեղեցւոյ, և երթեալ առանձնացաւ յԱրիանզն հուպ 'ի Նազիանզ, ուր յետ կալոյ զամս ութ՝ բազում ճգնութեամբ, փոխեցաւ առ Աստուած յամին 389: Սա է *սա 'ի լուսափայլ վարդապետաց եկեղեցւոյն Յունաց. որ թէպէտ անընդհատ պարապէր յուսմունս սուրբ գրոց, սակայն ջանայէր քաջ թէ և ընթերցուածն ընտիր մատենագրաց Աթենացւոց և Հռովմայեցւոց մարթել ձեռնտու լինել օգտի եկեղեցւոյ: Զի որպէս ասէ սուրբն Բարսեղ, արտաքին գիտութիւնք են իբր տերեւք կանաչագեղք, որք պիտանի են ծառոց 'ի զարդ և 'ի պահպանութիւն պտղոյն: Նմին իրի 'ի բազմօրինակ հրամանբանս իւր զորս արար առ ուրացողն Յուլիանոս, ազդողագոյնքն ուղղին առ հրովարտակ նորա, որով անօրէնն արգել ուղղափառաց զուսումն բանասիրական դպրութեանց: Եւ 'ի դարման վնասուն որում հնար էր ծագել 'ի հրովարտակէ անտի, յօրինեաց գիրս և ճառս չափաբերականս 'ի վերայ նիւթոց հաւատոյ, գուն գործելով փոխադրել կամ գաղափարել ըստ կարի զգեղազարդութիւն արտաքին մատենագրաց, և 'ի գրուածս իւր պահել զնոյն իբր սրբազան աւանդս:*

Զնոյն փոյթ յանձին կալեալ և կրսերն Ապողինար 'ի քերթուածս բանահիւսութեան իւրոյ, յողբերգութիւնս, 'ի կատակերգութիւնս և 'ի քնարերգակ տաղսն, գաղափարեալ ճարտարութեամբ որպէս մարթն էր՝ զպիտանիսն 'ի հեթանոսական մատենից:

Յայսմ դարու պարծանք եկեղեցւոյն Լատինացւոց եկաց սուրբն Ամբրոսիոս, որ 'ի քաղաքապետական պատուոյ Մեդիոլանու ակամայ բռնադատութեամբ ընտրեալ կարգեցաւ եպիսկոպոս այնր քաղաքի, և սքանչելի վարուքն և առաքինութեամբք օրինակ բարի եղեւ ամենայն առաջնորդաց: Վախճանեցաւ 'ի հասակի յիսուն և եօթն ամաց, յամի տեառն 397, յետ քսանևերկուց ամաց եպիսկոպոսութեան իւրոյ:

Նախանձայոյզ էր նա մեծապէս օգտի եկեղեցւոյ, սիրող աղքատաց, և կարեկից մեղաւորաց. զարմանալի ցուցաւ և արիութեամբն իւրով, զի 'ի գրեն առ Թէոդոս կայսր՝ ասէ. „Ոչ այլ 'ի մարդկանէ համարձակեսցի ասել քեզ զճշմարտութիւնն, եթէ եպիսկոպոսն ոչ իշխեսցէ ասել զայն„: Գրաւոր երկասիրութիւնք նր՟ հաւաքեալք 'ի Բենեդիկտեանց որ 'ի կարգէ սրբոյն Մաւրոսի՝ յերկուս մեծամեծ հատորս, բաժանին 'ի կրկին մասունս, որոց առաջինն բովանդակէ զճառս նորա և զմեկնութիւնս 'ի վերայ սուրբ գրոց, իսկ երկրորդն [illegible] 'ի վերայ զանազանութեանց։ Սա գրութեան որոյ վարդապետիս քաղցր և ախորժական գոլով կոչեցաւ Մեղրածորան վարդապետ։

Սուրբն Կիւրեղ Հայրապետ Երուսաղեմի՝ հայրենեօք 'ի Պաղեստինոյ՝ մնեալ յԵրուսաղէմ և ձեռնադրեալ քահանայ 'ի սրբոյն Մաքսիմոսէ, կարգեցաւ քարոզ բանին 'ի հրահանգել զերախայացեալսն և 'ի յաղթահարել զմոլորեալս։ Իսկ սորա վասն իմաստութեանն և առաքինի վարուցն ընտրեցաւ պատրիարգ Երուսաղեմի. և 'ի հակառակութենէ արիոսականաց, երիցս աքսորեալ՝ հաստատեցաւ անդրէն յաթոռ իւր, ուր փոխեցաւ առ Աստուած յամին 386։ Սորա է սքանչելի մեկնութիւնն ընթերցուածոց՝ անուանեալ Կոչումն ընծայութեան։

Ընդ սմա պարտ է դասել և զսուրբն Եփրեմ Խորի կամ ընթերցող անուանեալ, ծննդեամբ յԱմիդ քաղաքէ, որդի հեթանոս ծնողաց, որ 'ի զարգանալ իւրում յարեցաւ 'ի քրիստոնեայս և մկրտեալ 'ի նոցունց առանձնացաւ յանապատ Ճգնութեան։ Իսկ լուեալ զանուն սրբոյն Յակոբայ Մծբնայ հայրապետի գնաց աշակերտել նմա, և ընդ նմա հրաւիրեցաւ 'ի ժողովն Նիկիոյ. և յետ վախճանի նորա երթեալ առ սուրբն Բարսեղ Կեսարացի՝ ձեռնադրեցաւ 'ի նմանէ սարկաւագ, ըստ ոմանց և քահանայ. և դարձեալ անդրէն յԵդեսիա ուսուցանէր զբանն կենաց յորդաբուղխ վարդապետութեամբ, և լի աւուրբք հանգեաւ 'ի Քրիստոս։ Կան սորա զանազան ճառք, մեկնութիւնք և աղօթք հոգելիցք, որպէս և կանոնք միայնակեցաց։

ԳԼՈՒԽ ԼԶ.

Քահանայապետք Հռոմայ.

ԸՆԴ եկեղեցական մատենագիրս չորրորդի դարու մարթ է դասել և զքահանայապետս Հռոմայ զծաղկեալսն 'ի նմին ժամանակի. զի կոնդակք բազմաց 'ի նոցանէ լի են աստուածային նախանձու և իմաստուն վարդապետութեամբ։ Յայսմ դարու ամբարձան 'ի պատիւ քահանայապետութեան՝ Հռոմայ սուրբն Մարկեղլինոս հռոմայեցի, նահատակեալ յամին 304, զոր յաջորդեաց սուրբն Մարկեղոս հռոմայեցի Ա., զամս հինգ և զամիս նոյնչափ ։ Ապա սուրբ Եւսեբիոս յոյն՝ զամ մի ։ Յետոյ սուրբն Մելքիադէս ափրիկեցի՝ զամս երիս ։ Զկնի սուրբն Սեղբեստրոս հռոմայեցի Ա., զամս քսան և մի և զամիս մետասան ։ Ապա սուրբն Մարկոս հռոմայեցի՝ զամիս ութ ։ Յետոյ սուրբն Յուլիոս Ա., հռոմայեցի՝ զամս հնգետասան․ ապա Լիբերիոս հռոմայեցի՝ զամս չորեքտասան ։ Մինչև ցդարձ սորա յաքսորանաց կալաւ զաթոռն սուրբն Փելիքս Բ., հռոմայեցի իբր զամ մի ։ Ապա սուրբն Դամասոս Ա., սպանիացի՝ զամս ութուտասն ։ Եւ զկնի նորա սուրբն Սիրիկիոս հռոմայեցի, վախճանեալ յամի տեառն 398 ։

Համբաւաւոր գտաւ 'ի սոսա սուրբն Դամասոս սակս իմաստութե՟ իւրոյ և արիական համբերութե՟ 'ի վիշտս․ Թէպէտ և մեծագոյն մասն զղերց և ժողովրդեանն Հռոմայ ողջամիտքն 'ի հաւատս՝ ընտրեալ էին զնա 'ի քահանայապետութիւն յամին 366, յետ մահուան Լիբերիոսի, սակայն Ուրսինոս կամ Ուրսիկինոս անուն սարկաւագ յինքն որսացեալ զբազումս 'ի հռոմայեցւոց՝ սկսաւ խռովս յուզել ընդդէմ Դամասոսի 'ի յափշտակել զքահանայապետական պատիւն․ նմին իրի քաղաքապետն Հռոմայ զառաջս առնուլ կամեցեալ փութոյ այնր խռովութեան՝ առաքեաց յաքսորս զՈւրսիկինոս համախոհ կուսակցօքն․ սակայն զերծեալ նոցա 'ի ձեռաց սպասաւորացն որք տանէին յաքսորս՝ դարձան 'ի Հռոմ, և տարեալ զՈւրսիկինոս 'ի մեծ եկեղեցին սրբոյն Մարիամու Աստուածածնի՝ օծին զնա իբր դերապապ Դամասոսի ։ Յայնժամ կուսակիցք օրինաւոր քահանայապետին Դամասոսի միաբանեալք՝ սուսերօք և բրօք պաշարեցին զեկեղեցին․ ուր 'ի միում կռուի սպանան հարիւր երեսուն և եօթն անձինք, և մասն ինչ այնր տաճարի այրեցաւ հրով ։ Իսկ քաղաքապետին ոչ կարացեալ իւիք զդէմ ունել անդադրելի խռովութեանն, խոյս ետ 'ի քաղաքէն մինչև ցհանդարտիլ ամբոխին ։

Դամասոս պապ 'ի խաղաղել եկեղեցւոյ գումարեաց ժողով եպիսկոպոսաց և երիցանց, յորում իմաստնախոհ սահմանադրութեամբ արգել զշռայլութիւն և զզօշաքաղութիւն եկեղեցականաց, որոց համարձակեալ յընտանութիւն կամ 'ի բարեմտութի խոստովանորդաց իւրեանց՝ սովոր էին կորզել 'ի նոցանէ զրամս և ընծայս . Եհաս յայնժամ և 'ի կայսերէ առ պապն հրաման արքունի արգելուլ եկեղեցականաց մի ինչ ընդունել յումեքէ իբր 'ի պարգևս, կամ 'ի ժառանգութիւն, մանաւանդ 'ի կանանց, զորոց զհոգևոր խնամս առաջնորդութեան յանձին ունիցին . զի և նախնի հարք և ժողովք տրտունջ ունէին զայսօրինակ բարեպաշտութենէ կանանց, որք ընդ պատրուակաւ ջերմեռանդութեան զրկէին զընտանիս 'ի կարևոր պիտոյից իւրեանց .

Քահանայապետք Հռովմայ՝ թէպէտ և անպարսաւք 'ի վարս, ըստ առաքելոյն փոփոխելով զնախնի օրինակ պարզութեան կենաց՝ պատճառք եղեն անիրաւ շարախօսութեան հեթանոսաց . Ամմիանոս Մարկեղինոս որ եկաց յաւուրս Յուլիանոսի ուրացողի, ամբաստանէ զնոսին վասն կառաց, շքեղ հանդերձից և մեծահաց սեղանոց, համեմատելով զճոխութիւն նոցա ընդ աղքատութեան և սակաւապիտութե բազմաց 'ի գաւառական եպիսկոպոսաց . Սակայն յայտ է զի խեղաթիւր մտօք անկարանայ նա խորհել զպատշաճն քահանայապետական իշխանութեան, որում անկ է առանձինն պատուով և վայելչական ճոխութեամբ որոշիլ յայլոց . Զի և չէ ինչ անհնարին ընդ առաքինի վայելչութեանն, յոր ստիպէ զնա բարձրապատիւ իշխանութիւնն, կրել 'ի սրտի և զհամեստ չափաւորութիւն .

Պատրիարգունք Կոստանդնուպօլսոյ՝ որ էր երկրորդ արքայանիստ քաղաք կայսերութեան, սկիզբն արարին 'ի ժամանակէ անտի նախանձիլ ընդ իշխանութիւն և ընդ յարգ պատուոյ գլխաւորութեան քահանայապետացն Հռովմայ . Սակայն կոնդակք նոցա և հրամանք չեղեն երբէք այնպէս արդիւնք որպիսի էին քահանայապետացն Հռովմայ՝ զլուխ համարելոց կաթողիկէ եկեղեցւոյ ընդ ամենայն տիեզերս .

ԳԼՈՒԽ ԼԸ.

կաթուղիկոսք և վիճակ եկեղեցւոյն Հայոց :

ՍՈՒՐԲՆ Գրիգոր լուսաւորիչ պայծառացուցեալ զՀայաստան աշխարհ կարգօք և կրօնիւք աստուածպաշտութեան, իբրև ընդ Տրդատայ թագաւորի ուղևորեցաւ 'ի Հռոմ, Սեղբեստրոս Հայրապետ զարմացեալ ընդ իմաստութիւն նորա և ընդ առաքինութիւնս՝ կացոյց զնա եպիսկոպոսապետ և կաթուղիկոս համօրէն Հայաստանեայց : Իսկ նա յետ կարգելոյ զորդի իւր զսուրբն Արիստակէս յեպիսկոպոսապետութիւն ազգին յամի տեառն 331, կամեցաւ առանձնանալ, և երթեալ նախ 'ի Տարոն 'ի վանս Գլակայ եկաց անդ զամիս ինչ, և ապա չոգաւ վերստին 'ի Դարանաղեաց գաւառ 'ի լայրն Մանեայ որ 'ի Սեպուհ լերին, ուր յանծանօթս 'ի մարդկանէ սրբակրօն ճգնութեամբ պարապեալ անընդհատ յաստուածային տեսութիւնս՝ փոխեցաւ առ Քրիստոս վայելել յարդիւնս բազմարդիւն վաստակոց իւրոց, կացեալ 'ի հայրապետութեան զամս երեսուն : Եւ գտեալ հովուաց զմարմին նորա թաղեցին 'ի նմին տեղւոջ. և յետ իբր յիսուն ամաց յայտնութեամբ տեառն ճգնաւոր ոմն Գառնիկ անուն գտեալ զայն՝ տարաւ հանգոյց 'ի Թորդան. և անտի փոխադրեցաւ 'ի Վաղարշապատ քաղաք յեկեղեցին հայրապետական, և՝ զկնի ժամանակաց սփռեցան մասունք նորա յայլ և այլ կողմանս աշխարհի :

Սուրբն Արիստակէս համանման հօրն սրբութեամբ վարուց և իմաստութեամբ՝ յաջորդեալ 'ի հայրապետութեան յամին 332, խնամ կալաւ պայծառութեան և բարեկարգութեան ազգին, շինելով վանորայս միանձանց և եկեղեցիս : Անընդհատ հսկելով 'ի վերայ հօտին խրատէր և ուղղէր զամենեսին 'ի վարս բարեպաշտութեան և 'ի հաւատս ճշմարտութեան. և 'ի կշտամբել նորա երբեմն զանուղղայս, ոխացեալ ընդ նա իշխանաց, մի ոմն 'ի նոցանէ զարան եդեալ նմա 'ի ճանապարհի՝ սպան զնա. զորոյ զմարմինն բարձեալ աշակերտացն տարան և հանգուցին 'ի Թիլն աւան։ Եկաց 'ի հայրապետութեան զամս եօթն։

Սուրբն Վրթանէս երէց եղբայր սրբոյն Արիստակեայ յաջորդեաց զնա յամի տեառն 339, և ըստ նախանձելի գնացից հօրն և եղբօրն խնամարկու էր պայծառութեան հօտին 'ի վարս ճշմարիտ աստուածպաշտութեան և բարեկարգութե՟ եկեղեցական պաշտամանց. յոյր սակս խնդրեաց և ընկալաւ 'ի սրբոյն Մակարիոսէ պատրիարգէն Երուսաղեմի զկանոնական Թուղթ կարգաւորութեան սրբոյ խորհրդոյն, յոր յաւել և ինքն զպատշաճաւորն ազգին, և առաքեաց առ ամենայն եպիսկոպոսունս վիճակի իւրոյ։ Եւ ապա յորդորեալ 'ի Տրդատայ արքայէ և 'ի խնդրոյ ժողովրդեանն Աղուանից, ձեռնադրեալ զերէց որդի իւր զԳրիգորիս յարքեպիսկոպոսութիւն՝ առաքեաց յԱղուանս, յորմէ սկիզբն կալաւ կաթուղիկոսութիւն Աղուանից։ Սակայն իշխանք երկրին կապեալ զնա յաղի ձիոյ նահատակեցին անդ յԱղուանս 'ի Վատնեան դաշտի, յամին 342։ Ոչ սակաւ աշխատ եղև սուրբն Վրթանէս 'ի զերծուցանել զազգն 'ի բռնութենէ Պարսից, գրելով առ կայսրն Կոստանդին, և ընդունելով 'ի նմանէ զօգնականութիւն։ Ապա լցեալ զաւուրս իւր ամենայն սրբութեամբ՝ յետ վարելոյ զիշխանութիւն հայրապետութեան զամս հնգետասան՝ փոխեցաւ յաշխարհէ և թաղեցաւ 'ի գեօղն Թորդան։

Սուրբն Յուսիկ կրտսեր որդի սրբոյն Վրթանեսի՝ յետ ամուսնանալոյ և ծնանելոյ զերկուս որդիս զՊապ և զԱթանագինէ, հրաժարեալ յաշխարհէ պարապէր յաղօթս և 'ի ճգնութիւնս հոգևորական կենաց, և յընթերցումն և 'ի քննութիւն աստուածային գրոց. վասն որոյ 'ի վախճանել հօր իւրոյ յամին 355, ընտրեցաւ 'ի տեղի նորա յաթոռ կաթուղիկոսութեան։ Յաւուրս սորա Յուլիանոս ուրացող առաքեաց 'ի Հայս զդիւանկար պատկեր իւր դնել յեկեղեցւոջ. զոր 'ի կամելն կանգնել Տիրանայ արքայի Հայոց՝ սուրբ հայրապետն Յուսիկ յափշտակեալ զայն 'ի ձեռաց նորա, ընկէց 'ի գետին և ոտիւքն խորտակեաց. ընդ որ ցասուցեալ թագաւորին՝ հրամայեաց գանակոծ առնել զնա, մինչև յայն տանջանս աւանդել սրբոյն զհոգի իւր, կացեալ 'ի հայրապետութեան զամս վեց։ Իսկ մարմին նորա թաղեցաւ 'ի Թորդան առ հօրն իւրում։

Սուրբն Դանիէլ ծերունի ասորի յազգէ՝ աշակերտ սրբոյ Լուսաւորչին, ձեռնադրեալ 'ի նմանէ քահանայ և կարգեալ քորեպիսկոպոս, ընտրեցաւ յաթոռ հայրապետութեան 'ի տեղի սրբոյ Յուսկան, և իբրև յանդիմանն եղև թագաւորին Տիրանայ, կշտամբեալ զանօրէնութիւն նորա և զանգթութիւնն 'ի սպանանել զսուրբն Յուսիկ, յորդորեաց զնա յապաշխարութի̃. ընդ որ զայրացեալ արքային՝ հրամայեաց անդէն խեղդամահ առնել զնա. և զի ոչ յերկարեաց յիշխանութեանն՝ բազումք չդասեն զնա 'ի կարգս կաթուղիկոսաց ազգիս։ Ապա ընտրեցաւ 'ի տեղի նորա Փառներսէհ ոմն անուն յԱշտիշատ քաղաքէ 'ի վանաց սրբոյն Յովհաննու որ 'ի Տարօն, և կացեալ 'ի հայրապետութեան զամս երիս վախճանեցաւ։

Սուրբն Ներսէս մեծ, որդի Աթանագինեայ որդւոյ սրբոյ Յուսկան, որ էր ամուսնացեալ 'ի Կոստանդնուպօլիս, հաւանութեամբ Արշակայ արքայի Հայոց և ամենայն նախարարաց՝ որպէս և համօրէն ազգին՝ ընտրեցաւ յաթոռ հայրապետութեան՝ իբր արժանաւոր ժառանգ սրբոյ Լուսաւորչին. վասն որոյ յամի տեառն 364 կոչեցեալ 'ի Կեսարիա քաղաք օծաւ 'ի քահանայապետ և 'ի կաթուղիկոս Հայոց, և խնամ կալաւ նորոգել զամենայն բարեկարգութիւնս աշխարհին ըստ վայելուչ կարգացն զորս տեսեալ էր 'ի Կոստանդնուպօլիս։ Գումարեաց ժողով յԱշտիշատ քաղաքի, և սահմանեաց ազգի ազգի կանոնս 'ի դարման անկարգութեանց երևելոց յաշխարհին մերում։ Կանգնեաց վանորայս իբր երկու հազար, շինեաց որբանոցս, այրեանոցս և անկելանոցս՝ սահմանեալ նոցա ռոճիկս 'ի գիւղից և 'ի քաղաքաց. և ինքն յայց ելանէր հանապազ խնամել և սփոփել զնոսա։ Տեսեալ թագաւորին և համօրէն աւագանւոյն զքանչելի գործս սրբոյ հայրապետին՝ միաբան հաւանութեամբ եպիսկոպոսաց ստիպեցին զնա վարել զիշխանութիւն պատրիարգութեանն, զոր սուրբ Լուսաւորիչն ընկալեալ էր 'ի սրբոյն Սեղբեստրոսէ. և յայնմ հետէ հայրապետք

Հայոց ոչ ևս յաւելին առնուլ զձեռնադրութիւն 'ի Կեսարիոյ, այլ յեպիսկոպոսաց իւրեանց ։

Իսկ ապա յամին 366 ստիպեալ 'ի թախանձանաց թագաւորին Հայոց գնաց դեսպանութեամբ առ կայսրն Վաղէնտիանոս, և մեծարեալ 'ի նմանէ միջնորդ եղև խաղաղութեան ընդ արքային Հայոց ։ Որպէս և յամին 378, 'ի գնալն վերստին առ Վաղէս կայսր արիոսեան՝ աքսորեցաւ 'ի նմանէ, սակա̀յն յամին երկրորդի թագաւորեալ մեծն Թէոդոս դարձոյց զնա յաքսորանաց, և պահեալ առ իւր զամս երկուս մինչև ցկատարումն ժողովոյն Կոստանդնուպօլսոյ, յամին 381 յուղարկեաց փառօք 'ի Հայաստան ։ Իսկ եղև 'ի դառնալ իւրում տեսեալ սրբոյն զաւեր աշխարհին Հայոց յերեսաց Պարսից և ուրացեալ իշխանաց՝ յաւել 'ի խնամս իւր խրատել զամենեսին յապաշխարութիւն և 'ի միաբանութիւն սիրոյ. արար և ժողով 'ի Վաղարշապատ քաղաքի, և հաստատեաց զուխտ խաղաղութեան թագաւորին և իշխանաց՝ վարել նոցա կեանս արդարութեամբ և աստուածպաշտութեամբ. բայց թագաւորն հաստատեալ 'ի չարութեան իւրում զայրացաւ ընդ կշտամբութիւնս և ընդ խրատս սրբոյն ՙՆերսիսի, և գաղտնի նենգութեամբ արբոյց նմա դեղ մահու, որով շիջաւ լուսափայլ ջահն յաշխարհէս Հայոց, կացեալ 'ի հայրապետութեան զամս քսան կամ երեսուն և երիս ։

Յետ մահուան սրբոյն ՙՆերսիսի՝ յամին 384, կալաւ զաթոռ հայրապետութեան Շահակ 'ի Մանազկերտոյ՝ զամս երկու ։ Զկնի նորա̀ Զաւէն յազգականութենէ Շահակայ՝ զամ մի ։ Յետոյ Ասպուրակէս ազգական Զաւէնի՝ զամս երիս ։ Իսկ 'ի վախճանել Ասպուրակիսի յամին 390, ընտրեցաւ սուրբն Սահակ պարթև՝ որդի սրբոյն ՙՆերսիսի, այր պանծալի սրբութեամբ վարուց և ականաւոր իմաստութեամբ, ուսեալ և վարժեալ 'ի Կոստանդնուպօլիս 'ի հրահանգս հելլէն դպրութեանց, զորոյ գլխաւոր հոգեշահ արդեանց կարգեսցուք 'ի վերայ անցից հինգերորդի դարուն ։

ԳԼՈՒԽ ԼԸ.

Սովորութիւնք և պաշտամունք քրիստոնէից 'ի չորրորդ դարու։

ՅԵՏ դարձին Կոստանդիանոսի 'ի հաւատս՝ բազումք 'ի հպատակաց տէրութեան ընկալեալ զքրիստոնէութիւն, սկսան զեղծանիլ հեթանոսական սովորութեամբք. զի բազումք 'ի հաւատացելոց խառն և անխտիր առաջիկայ լինէին հանդիսի հեթանոսական թատերց և հաղորդակից զեղխութեան նոցա, մինչև վարել և զանարժան արուեստ կատակերգութեան 'ի թատրոնս։ Անպարկեշտ գնացք, ագահութիւն, որկորստութիւն և քինախնդրութիւն՝ ըստ ասելոյ սրբոց հարց այնր դարու՝ էին սովորական մոլութիւնք և քրիստոնէից և անհաւատից, յոր սակս երևէին սահմանեալ կանոնք բարեկարգութեան Նիկիոյ, Սարդիկեայ և այլոց բազում գաւառական և ազգային ժողովոց։ Եւ զի Կոստանդիանոս ջերմեռանդն աստուածպաշտութեամբ կուսակից և պաշտպան եկաց քրիստոնէութեան, խնամ կալաւ ժողովուրդն ամենայն յարմարել զանձինս ընդ նմա 'ի հաւատս. որով 'ի խումբս նորադարձ քրիստոնէիցն յոլովք այնպիսիք էին որք յաւէտ ակնկալութեամբ կենցաղական օգտի քան 'ի ճշմարիտ սիրոյ աստուածպաշտութեան եղեալ էին քրիստոնեայ. իսկ զի յորդոր դարձի նոցա 'ի հաւատս էր հաճոյական ինչ առնել թագաւորին, կամ բարեկամաց իւրեանց և ընտանեաց, և կամ առ հասանելոյ աւագութեան պատուոյ և պաշտաման յարքունիս, որք ստիպէին զմարդիկ 'ի կեղծաւորեալ բարեպաշտութիւն։ Եւ առ բազմութեան երախայացելոցն՝ արթուն և աշալուրջ խնամք առաջնորդաց եկեղեցւոյ՝ առ մարդկային տկարութեան անբաւական էին ժամանել 'ի քննութիւն նորահաւատիցն, և հասու լինել գաղտնի դիտմանն՝ զոր ունէին 'ի սրտի։ Այսպէս 'ի ժամանակս հալածմանց որ միանգամ յանձն առնոյր զքրիստոնէութիւն, վշտաց եւեթ և չարչարանաց, խաչի, կորստեան ընչիցն և կենացն գլխովին ակն ունէր 'ի կենցաղումն. զի և զայսոսիկ մասն բաժնի ասաց Քրիստոս աշակերտելոցն նմա.

նմին իբր յօժարեալն յայնժամ 'ի քրիստոնէութիւն՝ հասուն խորհրդով մտախորհ լինէր, եթէ ունիցի զբաւական արիութիւն տոկալոյ այնպիսեաց։ Քանզի միայն աներկմիտ հաւատք և ակնկալութիւն հանդերձելոց բարեաց, որպէս և երկիւղ անտի տանջանացն, յորդորէր զնոսին արիանալ ընդդէմ ամենայն դժուարութեանց որք ընդ առաջ լինէին յընդգրկելն զքրիստոնէութիւն։ Սակայն 'ի տարածել քրիստոսական հաւատոցն, և յապահովս լինել մարդկան 'ի վտանգից կորստեան ընչից և կենաց, զօրացաւ յոյս ակնկալութեան կենցաղական օգտի՝ ընդունելութեամբ քրիստոսական հաւատոց․ վասն որոյ մտադիւր դիմեցին բազումք ընդունել զհաւատսն զոր պաշտէր թագաւորն՝ առ 'ի հաճել զկամս նորա։ Յոլովք ևս տեսեալ զյարգ և զպատիւ զոր թագաւորն ցուցանէր առ պաշտօնեայս Աստուծոյ, յօժարեցան դասիլ 'ի կարգս եկեղեցականաց, ակնկալութեամբ ստանալոյ զճոխութիւն և զաստիճանս պատուոյ և գահերիցութեան։ Եւ թէպէտ էին և բազումք ականաւորք առաքինութեամբ, սակայն հայելով 'ի պատմութիւնս այնր ժամանակի՝ պարսաւելի ստգտանք զօրացեալ երևին յեկեղեցականս, յօժարամտութիւն բարձի և աւագութեան, և խնամք հաճոյ լինելոյ իշխանաւորաց․ քանզի և գլխաւոր պատճառք ընտրութեան նոցա յեկեղեցական պատիւ՝ համարեալ էր ճոխութիւն և ազնուատոհմութիւն․ որով նախապատիւ առաջնորդութիւնք եկեղեցւոյ գրաւեցան 'ի մեծատանց, և սեպհականեցին զնորանոր պատուանուանս պատշաճականս վիճակի և իշխանութեան իւրեանց։

Ի չորրորդ դարու միակեցական վարք ծաղկեալ էին յոյժ յԵգիպտոս և 'ի կողմանս Ասորւոց որպէս և ընդ ամենայն արևելս։ Նախնի միայնակեացք սովոր էին անցուցանել զկեանս իւրեանց յաղօթս, 'ի պահս, յաշխատութիւնս ձեռագործաց և 'ի խստամբեր ճգունս․ որք և կամաւոր նահատակութեամբ ճնշելով զմարմինս իւրեանց, յօրինակ կացին սրբութեան հրաժարելոցն յաշխարհէ, քաջալերեալ խրախուսեցին զմարդ տկար անվեհեր ընթանալ յերկինս նովին ճանապարհաւ։ Սակայն իբրև սկսան միաբանական վարել կեանս, և թողեալ զանապատս ցրուեցան 'ի քաղաքս, առ սակաւ սակաւ եմուտ 'ի նոսա թուլութիւն. մինչև հարկ եղև 'ի վերջ կոյս չորրորդի դարուն սահմանել կանոնս առ վերածելոյ զնոսին յառաջին վիճակ բարեկարգութեան։

Ի ծաղկիլ քրիստոնէութեան և 'ի զարգանալ՝ առաւելուին տակաւ և պայծառութիւնք արտաքին պաշտամանց նորա. եկեղեցիք զարդարեցան մեծագործութեամբք, գեղանկար պատկերօք և քանդակօք. զոր և է տեսանել ցարդ 'ի նախնի տաճարս։ Յաւելան և թիւք հանդիսաւոր տօնախմբութեանց, զորս կատարէին ամի ամի։

Մատակարարութիւն խորհրդոյ մկրտութեան լինէր միայն 'ի նաւակատիս զատկին և պենտեկոստէին. սակայն և 'ի գաւառս ինչ կատարէին զայն 'ի միջոցս յինանց մինչև ցպենտեկոստէ։ Սովորաբար այս խորհուրդ պաշտեալ լինէր 'ի գաւիթս տաճարաց, ուր կանգնէին աւազանք մկրտութեան։ Բազումք 'ի բարեպաշտից փափաքէին առնուլ զմկրտութիւն 'ի Յորդանան գետ, զի սովորութիւն էր առաջնոցն յապաղել զմկրտութիւն իւրեանց մինչև ցծերութիւն, և ոմանց անդր ևս մինչև ցօր մահուան։

Պաշտամունք և մատակարարութիւն խորհրդոց եկեղեցւոյ զոգցես զնոյն օրինակ պաշտէին յամենայն ազգինս, թէպէտ և իւիք իւիք զանազանեալ 'ի միմեանց 'ի թեթև և յանտարբեր իրս զորս ազգ իւրաքանչիւր կատարէր ըստ սովորութեան իւրոյ և ըստ աւանդուե̃ց։

Ի հրապարակական քարոզս հրահանգութեան երեխայից՝ արգելեալ էր բացայայտ առաջի առնել զանքննելի էութիւն խորհրդոյ մարմնոյ և արեանն Քրիստոսի, որպէս և զմկրտութեան. նմին իրի վարդապետութիւնք նախնի հարց սրբոց չէին այնպէս պայծառք՝ որպիսիք եղեն առ յապա յետ խափանելոյ 'ի սպառ կռապաշտութեան, յորմէ զանգիտէին առաջին հարք եկեղեցւոյ։

ԳԼՈՒԽ ԼԹ.

Ազգային ժողովք ։

Ի ԾԱԳԵԼ քրիստոնեական հաւատոյ 'ի Հայաստան աշխարհի, առաքելաջան հայրապետք ազգիս զի յանդորրու ունիցին զհաւատացեալս՝ սովոր էին երբէք երբէք միաբան հաւանութեամբ եպիսկոպոսաց և վարդապետաց ժողովս գումարել 'ի հաստատել կանոնս բարեկարգութեան և կամ մերժել զհերձուածս, զորս և համառօտիւ յիշատակել ըստ դարուց իւրաքանչիւր՝ պատշաճ վարկաք ։

Ժողով Վաղարշապատու Ա. յամի տեառն 325 ։

Ի ՏԱՐԱԾԵԼ արփաւեան մոլորութեան իբրև հրամանաւ Սեղբեստրոսի Հռոմայ հայրապետի և Կոստանդիանոսի թագաւորի երեքհարիւր ութուտասն հայրապետք հաւաքեալ ժողովեցան 'ի Նիկիա Բիւթանացւոց հերքել զհերձուածն, առանձինն նամակաւ Կոստանդիանոսի թագաւորի հրաւիրեցաւ և մերն Լուսաւորիչ երանելին Գրիգոր ։ Այլ նա առ անչափ խոնարհութեանն հրաժարեալ 'ի պատուոյն՝ առաքեաց ընդ իւր զկրտսեր որդին զԱրիստակէս ։ Եւ 'ի լուծանել ժողովոյն առեալ նորա զքսան կանոնս բարեկարգութեան սահմանեալս 'ի ժողովոյն և զհանգանակն Նիկիական՝ դարձ արար առ հայր իւր 'ի Վաղարշապատ քաղաք ։ Ընդ որ կարի ցնծացեալ մերոյ Լուսաւորչին գումարեաց անդէն ժողով եպիսկոպոսաց, և 'ի կանոնսն Նիկիոյ յաւելեալ և ինչ ինչ յիւրմէ վասն առաւել զգուշութեան իւրոց վիճակին, ընկալաւ և զհանգանակն Նիկիական. զոր և կնքեաց բանիւքս այսոքիւք . “Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս, երկիր պագանելով սրբոյ Երրորդութեան և մի աստուածութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն „ ։

Ժողով Աշտիշատու Ա. յամի տեառն 365 ։

ԻԲՐԵՒ տակաւ խրթնանային 'ի հայաստան աշխարհի բարեկարգութիւնք քրիստոնական կրօնից յանկարգ և 'ի մեղկ գնացից Արշակայ և Պապայ և նախարարաց սմանց, սուրբն Ներսէս խնամ կալեալ շինութեան և խաղաղութեան աշխարհին՝ գումարեաց զեպիսկոպոսս և զքահանայս և զաշխարհականս յԱշտիշատ քաղաք ։ Այլ զի արհամարհեալ էին յոյժ յայնժամ բորոտք և ուրուկք, և չէր ոք 'ի ժողովրդենէն որ ձեռն տայր նոցա, և հալածական վարէին 'ի քաղաքաց, և բազումք 'ի նոցանէ 'ի չարութիւն և յանկարգութիւնս մտաբերէին, սահմանեաց շինել վասն նոցա տունս և անկելանոցս և կարգեաց հասս կալուածոց 'ի գիւղից և 'ի գաւառաց իւրաքանչիւր, յանձն արարեալ զնոսա 'ի խնամս Խադայ սարկաւագի որ 'ի գաւառէն Կարնոյ ։ Նոյնպէս կարգեաց և հիւրանոցս վասն պանդխտացն և եկաց, զի մի անյարկ և բացօթեայ մնասցեն ։ Այլ որպէս 'ի վերագոյնդ կանխեցաք ասել 'ի պատմութեան, էին յայնժամ կրօնաւորք դատարկակեացք՝ որք առ 'ի չգոյէ վանաց բնակութեան սովոր էին օթել 'ի տունս աշխարհականաց . ետ շինել և վասն նոցա վանս, միայնանոցս և խրճիթս ։

Արգել ապա նզովիւք և զմերձաւոր խնամութիւն նախարարաց, որք պահել կամեցեալ զսեպհական ազատութիւն ցեղի իւրեանց՝ զմերձաւորս սովոր էին առնել կնութեան . Նոյնպէս արգել և զհեթանոսականն զայն սովորութիւն որ դեռ ևս երևէր 'ի մերում աշխարհիս՝ մեծաձայն կական բարձեալ անմխիթար լալ զմեռեալս ։

“Այլ էր տեսանել յայնմ հետէ զաշխարհս մեր, ըստ Խորենացւոյն իսկ վկայելոյ, ոչ որպէս բարբարոս այլանդակեալս, այլ որպէս զքաղաքացիս համեստացեալս„[1] ։

[1] Գիրք Գ. Ի ։

Ժողով Վաղարշապատու Բ. յամի տեառն 366 ։

ԶՋԵՐՄԵՌԱՆԴՆ փոյթ մեծին՝ Ներսեսի և զառաքելաջան վաստակս նորա տեսեալ նախարարաց Հայոց՝ միաբան հաւանութեամբ եպիսկոպոսաց և քահանայից ժողովեցան յարքայանիստ քաղաքն Վաղարշապատ յամի տեառն 366, և սահմանեցին զի մի՛ ևս այլ կաթողիկոսք Հայոց առնուցուն զձեռնադրութիւն յարքեպիսկոպոսէն Կեսարիոյ, այլ յեպիսկոպոսաց ազգին. և մեծահանդէս փառօք կացուցին զՆերսէս յեպիսկոպոսապետ Հայոց, զի փառաւորագոյնս վարեսցէ այնուհետև զիշխանութիւնն զոր Սեղբեստրոս Հռովմայ հայրապետ շնորհեաց մերոյ Լուսաւորչին, որպէս յիշատակեցաք վերագոյն։

Զգումարմանէ ժողովոյս թէպէտ ոչինչ որոշակի աւանդէ Մովսէս Խորենացի, սակայն Յովհաննէս կաթողիկոս և Վարդան յայտնագոյն գրեն ՚ի դիւանաց և ՚ի գաւազանագրոց կաթողիկոսարանին առեալ։

Ժողով Վաղարշապատու Գ. յամի տեառն 383 ։

ՈՉ շատ համարեալ սրբոյն՝ Ներսեսի զկանոնս ուղղութեան որովք ջանացաւ զաստուածպաշտութիւն և զխաղաղութիւն հաստատել ՚ի Հայս, յամի տեառն 383 գումարեցաւ այլ ժողով ՚ի Վաղարշապատ քաղաք իշխանօք և եպիսկոպոսօք հանդերձ յորդորել զթագաւորն և զնախարարս առ հասարակ ՚ի սէր և ՚ի փոյթ կրօնից աստուածպաշտութեան։ Որոց ուրախ լեալ ընդ այն՝ խոստացան հպատակել միմեանց և չզրկել զոք. և սուրբն՝ Ներսէս երդմնի արարեալ զնոսա հաստատուն կալ ՚ի խոստմունսն՝ արձակեաց զժողովն։

ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա.

Հանգամանք հռովմէական պետութեան, և աւեր քաղաքին Հռովմայ։

ԵԿԵՂԵՑԻՆ Քրիստոսի 'ի ծագմանէ անտի իւրմէ մինչև ցմեծն Կոստանդիանոս տարաւ ծանունց վշտաց' նշաւակ ատելութեան եղեալ գոգցես ամենայն կայսերաց որք յառաջ քան զԿոստանդիանոս կացին իշխան, որք և ընդդէմ քրիստոնէից այնպիսի դառն և քստմնելի տանջանօք վարեցան' յորոց զարհուրեալ սոսկայ մարդկային բնութիւն։ Սաստկութեամբ ահարկու հալածանացն կամէր իմն ցուցանել Աստուած եթէ հիմնարկութիւն քրիստոնէութեան ոչ է գործ մարդկային, այլ իւրոյ ամենահզօր ձեռին յօրինուած։ Քանզի իբրև պարտեցաւ Մաքսենտիոս բռնաւոր' խաչն Քրիստոսի եղև վայելչագեղ զարդ կայսերական պսակին, և արքայական իշխանութիւնն պաշտպան եկաց կրօնից աստուածպաշտութեան։ Յաջորդք մեծին Կոստանդիանոսի, բաց 'ի Յուլիանոսէ ուրացողէ, զնոյն ատելութիւն ցուցին ընդդէմ կռապաշտութեան' զոր նախորդք իւրեանց ընդդէմ աշակերտաց աւետարանին, զգուշանալով և եթ 'ի հեթանոսական արիւնհեղութենէ, յորմէ խորշի մեծապէս եկեղեցի հաւատացելոց։

Քրիստոսական հաւատք, ընկալեալ 'ի կայսերաց և պաշտպանեալ 'ի նոցանէ, 'ի չորրորդ դարու եկաց մնաց անվրդով 'ի վաղանցուկ մրրկաց անտի յարուցելոց 'ի հերձուածոց ժամանակին, յանդորրու ունելով զհաւատացեալս։ Սակայն 'ի հինգերորդ դարու աճեցին վնասք հերետիկոսաց 'ի պատճառս տկարութե և ձախորդութեանց հռովմէական պետութե՟ն . քանզի երկոքին որդիք Թէոդոսի Արկադէոս և Ոնորիոս կայսերք , յորոց առաջինն ունէր զարևելս և երկրորդն զարևմուտս , որպէս և փոքրն Թէոդոս որդի Արկադեայ , ոչ կարացին զդէմ ունել արշաւանաց բարբարոս ազգաց 'ի սահմանս կայսերութե՟ն :

Ալարիկոս թագաւոր Գոթաց յամի տեառն 410 եկն պաշարել զՀռովմ և յաւարի առնուլ զգանձս բազմաճոխ այնր քաղաքի , պատուէր տուեալ զօրաց իւրոց խնայել 'ի բնակիչսն և չմերձենալ յեկեղեցիս և 'ի սուրբ անօթս նոցին , սակայն անխնայ մերկանալ զտունս 'ի ստացուածոց : Յայնմ ժամանակի , և առ յապա մայրաքաղաքն տիեզերաց եղև իբր աւերակ և ամայի առ նախնի իւրոյ պայծառութեամբ , և ըստ ասելոյ սրբոյն Հերոնիմոսի կորեաւ Հռովմ 'ի սովէ նախ քան զսպառելն 'ի սրոյ , և գերեցան բազումք 'ի բնակչացն :

Ի սոսկալի և յանգութ աւարառութեանն յայսմիկ երևեցան սքանչելիք տեառն . զի թէպէտ Ալարիկոս պատուիրեալ էր զօրացն չխնայել տաճարաց սրբոց առաքելոցն Պետրոսի և Պօղոսի իբր նուիրական տեղեաց , սակայն պաշտօնէիցն եկեղեցւոյ ոչ ակն ունելով այնպիսում ներողամտութե՟ն յանյագ բռնաւորէ անտի , զարծաթի և զոսկեղէն անօթսն թագուցեալ էին 'ի տան ուրեք : Այլ 'ի գտանել զայնոսիկ զօրականաց ումանց և 'ի կամելն աւարել , կին որ 'ի պահեստի ունէր զայնոսիկ ասէ . Անօթքս նուիրականք են տաճարի սրբոյն Պետրոսի , զորս առէք թէ իշխիցէք : Երբև զայն լուաւ Ալարիկոս՝ ետ վաղվաղակի տանել զայնոսիկ մեծահանդէս յաղթանակաւ և երգովք օրհնութեան 'ի տաճար սրբոյն . «Յայս գործ զարմանալի որ միանգամ ոչ ծանիցէ, զզօրութիւն անուանն Քրիստոսի , կոյր է նա . իսկ որ տեսանէ և ոչ փառաւորէ զԱստուած , ապաշնորհ է առ երախտիս նորա . և որ ոչն կամի փառաւորել , անզգայ է գլխովին », ասէ սուրբն Օգոստինոս : Թուի ինձ եթէ առնումն քաղաքին Հռովմայ զմերձին վրէժս եղեւ Աստուած զարեան քրիստոնէից զոր հեղին Հռովմայեցիք , և ըստ վարդապետացն իսկ ասելոյ՝ մարթ է համարել զայն մի 'ի գաղանի խորհրդոցն Աստուծոյ նախագուշակելոյ 'ի յայտնութեան առն Յովհաննու աւետարանչի :

Նախ քան զպաշարումն քաղաքին Հռովմայ՝ մինչդեռ Ալարիկոս 'ի պատրաստի կայր դիմել անդր, պապն Ինովկենտիոս Ա., գնաց 'ի Հռաւեննա քաղաք առ կայսրն Ոնորիոս՝ խնդրել 'ի նմանէ թիկունս օգնականութեան, և մնաց անդ յարքունիս կայսեր մինչև ցաւարառութիւնն Հռովմայ. զորոյ զգոյժ կործանմանն 'ի վաղվաղել զօրականի ուրուք բերել առ կայսրն Ոնորիոս, ընդարմացաւ թագաւորն. Զիա՞րդ հնար իցէ, ասէ, այդմ լինել. զի արդ ես իսկ ինքնին ետու նմա ուտել և յագենալ: Կարծէր նա եթէ զվառեկէն իւրմէ իցեն բանքն, զոր Հռովմայ անուամբն ձայնէր:

Բարբարոսքն այնոքիկ ոչ շատացեալ աւարառութ՟ն Հռովմայ՝ յարձակեցան և 'ի շրջակայ սահմանս նորա 'ի Կամպանիա, 'ի Լուկանիա և 'ի Սամնիա, որ է Աբրուտիոն: Նա մինչդեռ յաւեր դնէին և յապականութիւն զբարեշէն գաւառն զայնոսիկ, մեռաւ Ալարիկոս 'ի Կոսենտիա քաղաքի, և յաջորդեաց զնա Աթոլփոս ազգական նորա. որ միւսանգամ յարձակեալ 'ի վերայ Հռովմայ, յաւարի էառ զոր միանգամ թողեալ էր Ալարիկոս: Ապա ընդվզեալ ապստամբեցան և բռնաւորք ոմանք, որք տիրելով գաւառաց կայսրութեան՝ յարուցին աղմուկս խռովութեան և կոտորածի ընդ ամենայն տեղիս:

ԳԼՈՒԽ Բ.

Հերետիկոսութիւն Պեղագիոսի:

ԸՆԴ զխռովս և զվտանգս քաղաքական պատերազմաց՝ կարի դառն և անբերելիք եղեն հերետիկոսութիւնք որք հերձուածս և անմիաբանութիւն արկին յեկեղեցի. յորս զառաջին տեղին ունի մոլորութ՟ին Պեղագեանց, որոց առաջնորդ և վարդապետ եկաց Պեղագիոս միայնակեաց անգղիացի, այր խստակրօն վարուք՝ այլ ամբարտաւան մտօք: Սա 'ի սկիզբն հինգերորդի դարու եկեալ յԱնգղիոյ եկն 'ի Հռովմ, և մտերիմ սիրելութեամբ կապեցաւ ընդ Հռուփինոսի, որ ըստ ասելոյ ոմանց՝ ելից զնա մոլորամիտ վարդապետութեամբ 'ի վերայ մարդկային ազատ անձնիշխանութեան: Պեղագիոս անդստին 'ի ընէ հոգեւորոյն գոլով՝ ցուցանէր նախանձ մեծ առ աստուածպաշտութ՟ի, եւ համարէր զանձն յետնեալ եւ թերացեալ 'ի սեպհական պարտուց՝ եթէ անփոյթ լինիցի ժամանել 'ի ծայր կատարեալ առաքինութեան ։ Եւ այսպիսօրէն առաքինացեալքն սովոր են փափաքել եւ գուն գործել՝ զի եթէ հնար ինչ իցէ զամենեսեան իւրեանց տարազու կենացն արտացեն հեռւոցս ։ Զորս միանգամ յորդորէրն Պեղագիոս 'ի փոյթ կատարելութեան վարուց, պատասխանի առնէին նմա՝ թէ ոչ ամենեցուն տուեալ են այդ շնորհք՝ ժամանել 'ի կատարելութիւն, եւ խնդրէին եւս անբասիր առնել զանձինս՝ այնու զի տկար եւ ապականացու է մարդկայինս բնութ՟ի ։ Ի բանից աստի շարժեալ Պեղագիոսի հետամուտ եղեւ գտանել 'ի սուրբ գիրս՝ որպէս եւ 'ի բանս սրբոց հարց՝ զլուծումն երկմտութեան եւ անբաւութեան մեղաւորաց, առեալ 'ի ձեռին զճառսն յորս սուրբ հարքն պաշտպան կացեալ մարդկային ազատութեան՝ զինեցան ընդդէմ այնոցիկ որք բաղդից եւ ճակատագրի հաւատս ընծայէին ։ Եւ նոքօք համարեցաւ զանձն Պեղագիոս ոչինչ զարտուղեալ 'ի վարդապետութենէ եկեղեցւոյ յուսուցանել անդ եթէ “Կարէ մարդ իւրովի եւեթ սեպհական զօրութեամբ ժամանել 'ի ծայր կատարելութեան, եւ թէ չէ մարթ հրաժեշտ տալ յայնմանէ պատճառելով զապականութիւն բնութեան, զյօժարամտութիւնն 'ի կարիս կենցաղոյս, եւ զհեղգութիւն 'ի ջանս առաքինական կենաց„ ։

Զայսոսիկ թիւր վարդապետութիւնս իւր արձանագրեաց 'ի չորեսին գիրսն որ յաղագս ազատ անձնիշխանութեան, եւ հանդիսացոյց 'ի լոյս ընդդէմ սրբոյն Հերոնիմոսի ․ յորս մեկին բացայայտէ զայն ամենայն վարդապետութիւն իւր յաւելուածովք նոր մոլորութեանց ․ յորոց սակի են նախ՝ թէ Ադամ ստեղծաւ մահկանացու, եւ մեռանէր հարկաւ՝ եթէ չէր մեղուցեալ ․ երկրորդ՝ թէ մեղքն Ադամայ նմա միայնոյ համարեցաւ 'ի վնաս եւ ոչ եթէ ամենայն մարդկան ․ երրորդ, օրէնք մովսիսականք զուգահաւասար աւետարանին Քրիստոսի առաջնորդէին մարդկան 'ի փրկութիւն յաւիտենից ․ չորրորդ՝ թէ նախ քան զգալուստն Քրիստոսի մարդիկ չէին ընդ մեղօք ․ հինգերորդ՝ թէ նորածին մանկունք են 'ի նմին վիճակի յորում էրն Ադամ նախ քան զպատուիրազանցութիւնն. վեցերորդ՝ թէ մարդիկ ոչ մեռանին 'ի պատուհաս մահու և յանցանացն Ադամայ, որպէս և ոչ յարիցեն 'ի մեռելոց վասն յարութեանն Քրիստոսի. եօթներորդ՝ թէ ծնանի մարդ առանց մեղաց, և եթէ կամիցի՝ կարէ հեշտեաւ հնազանդել աստուածային պատուիրանաց։

Ընդ այն ժամանակս իբրև առաւ Հռովմ 'ի Գոթաց, Պեղագիոս մեկնեցաւ անտի և գնաց յԱփրիկէ ընդ Կեղեստիոսի աշակերտի իւրում ճարտար և յաջողամիտ առն. սակայն ոչ եկաց անդ ընդ երկար, այլ թողեալ զԿեղեստիոս 'ի Կարթագինէ, ինքն դարձաւ անդրէն յԵւրոպա. իսկ Կեղեստիոսի կացեալ յԱփրիկէ՝ դուռն գործեաց սերմանել անդ զմոլորութիւնս վարդապետին իւրոյ։ Սակայն 'ի պատճառս հերձուածոյս յարեաւ խռովութիւն սաստիկ յԱփրիկէ, և յերկարեալ ձգեցաւ և յետ մահու աղանդահնարին Պեղագեայ, զի Կեղեստիոս նրբամիտ ճարտարախօսութեամբ ստացեալ իւր հետևողս՝ մոլորեցոյց զբազումս յԱփրիկեցւոց. թէպէտև զօրաւոր բանիւք մերժեաց զհերձուածն սուրբն Օգոստինոս վարդապետն շնորհաց։ Սակս սորին իրաց զանազան ժողովք գումարեցան 'ի Կարթագինէ յամին 412 և 413, 'ի Դիոսպոլիս Պաղեստինոյ յամին 415, 'ի Միղեւիս քաղաք՝ յամին 416. և յամենեսին 'ի նոսա հերքեցան մոլորութիւնքս։ Իննովկենտիոս Ա. դատապարտեաց զայնս յամին 417, և յետ նորա զնոյն արարին և քահանայապետքն Զոսիմոս և Կեղեստինոս։ Հուսկ յետոյ ընդհանուր ժողովն Եփեսոսի գումարեալ յամի տեառն 431, նզովեաց զհետևողս Պեղագիոսի. որպէս և կայսերք սպառնալիս պատժոց կարգեցին այնոցիկ, որք մղեցին նախանձու իւրեանց յարուցեն աղմուկս և խռովութիւնս 'ի տէրութեան։

ԳԼՈՒԽ Գ.

Կիսապեղագեանք։

Որք միանգամ ջանահնար եղեն գտանել միջին ինչ շաւիղ ընդ վարդապետութիւնս որոյն Օգոստինոսի և Պեղագիոսի զշնորհաց՝ անուանեցան Կիսապեղագեանք. սակայն նպաստամատոյցք եղեն բանիւք մոլորութեանց հերձուածողապետին. զի ընդ քօղով ճշմարտութեան ծածկեալ ունէին զվրիպակ կարծիս նորա։ Նա թէպէտ խոստովանէին թէ են սկզբնական մեղք, և կարևոր են շնորհք, բայց ասէին և՛ թէ հնար է մարդոյ առանց աստուածային օգնականութեան ուղիղ ընթանալ 'ի ճանապարհս կատարելութեան. որպէս թէ ինքնին առանձինն փափաքել բարեգործութե՟, և սեպհական զօրութեամբ արժանանալ շնորհաց որք կարևոր են 'ի փրկութիւն. և սոյն այսու սկիզբն փրկութեան կախեալ կայ ասէին զկամաց մարդոյ։

Մոլորամիտ վարդապետութիւնս հաճոյ թուեցաւ և յաչս բազում ականաւոր և իմաստուն արանց, որք ջանացան պաշտպան կալ կարծեացն։ Յովհաննէս Կասիանոս հռչակեալն 'ի մատենագիրս հինգերորդի դարուն՝ ուսոյց զայն 'ի Մարսիլիա, և բազումք 'ի Գաղղիացւոց յօժարամիտ ընկալան զայն։ Սուրբն Օգոստինոս, որ յետ դարձի իւրոյ առ Աստուած՝ հզօր ախոյեան արձանացաւ ընդդէմ ամենայն հերձուածոց, մինչդեռ ըզհետ էր 'ի հերքել և զկարծիս կիսապեղագեանց՝ վախճանեցաւ զկեանս։ Սուրբն Պրոսպեր, սուրբն Փուլգենտիոս և սուրբն Աւիտոս որ յՎիեննա քաղաքէ. ընդ շաւղաւ որոյն Օգոստինոսի զկնի մահու նորա զինեցան ընդդէմ մոլորութեանս։ Նոյնպէս և Կեղեստինոս Ա. Հռովմայ հայրապետ 'ի կոնդակին զոր գրեաց յամի տեառն 432 առ եպիսկոպոսունս Գաղղիոյ, պարզաբար յայտ արար զուղղամիտ վարդապետութիւն եկեղեցւոյ։ Նաև որոյ քահանայապետն Գելասիոս յամին 464 դատապարտեաց զգիրս Կասիանոսի և Փաւստոսի եպիսկոպոսին՝ որ էր 'ի կարգէ կիսապեղագեանց, բազմադիմի գովութեամբ մեծարեալ զսուրբն Օգոստինոս և զվարդապետութիւնս նորա, որք արհամարհ էին յաչս հերձելոց։

Այսպէս սոքօք հանդերձ մոլորամիտ վարդապետութիւնք կիսապելագեանց ծաւալեալ էին՚ի Գաղղիա, և բանք սրբոյն Օգոստինոսի ընդ հակառակութեամբ էր մինչև ցվեցերորդ դար, յորում ժամանակի սուրբն Կեսարիոս եպիսկոպոս Արելատ քաղաքի տեսեալ եթէ զհզօր համախոհս մոլորութեանն ոչ կարէին սանձել աշակերտք սրբոյն Օգոստինոսի, զիմեաց յիշխանութիւն առաքելական աթոռոյն. վասն որոյ և Փելիքս Դ. քահանայապետ Հռոմայ առաքեաց առ նա զբազում հատուածս բանից ողջամիտ վարդապետութեանն՝ զի կանոն և առաջնորդ լիցին նմա յայսմիկ բանակռուութիւնս. զորս ընկալեալ Կեսարիոսի գումարեաց ժողով եպիսկոպոսաց յԱրաւսիկոն քաղաքի, և ետ ստորագրել ժողովականաց յամին 529։ Հերքեցան՚ի ժողովէն մոլորութիւնք աղանդոյն և հանդիսացան ողջամիտ վարդապետութիւնք՚ի քսան և հինգ կանոնս, յորս սահմանեցաւ իբր վարդապետութիւն հաւատոյ՝ իսկութիւն սկզբնական մեղաց, կարևորութիւն շնորհաց, և շնորհք ձրիական որ կանխէ քան զփրկութիւն։ Միանգամայն և զայն յայտ արար, եթէ ամենայն մկրտեալ քրիստոնեայք կարեն և պարտին փոյթ ունել՚ի փրկութիւն անձանց, զի Աստուած չէ սահմանեալ զոք՚ի դատապարտութիւն։

Բոնիփակիոս Բ. քահանայապետ Հռոմայ հաստատեաց զսահմանս ժողովոյս, և զի ընդունելի եղեն համօրէն եկեղեցւոյ, համարին վարդապետութիւնք և կանոնք հաւատոյ։

ԳԼՈՒԽ Դ.

Վիճակ եկեղեցւոյն Հայոց։ Գիւտ հայկական գրոց՚ի սրբոյն Մեսրովպայ, և թարգմանութիւն սուրբ գրոց։

Ի ՍԿԻԶԲՆ հինգերորդի դարուս յորժամ Եւրոպա ամենայն տագնապեալ կայր՚ի խուռն ապստամբաց և՚ի հերձուածոց, խնամք աստուածայինն նորանշան պարգևս պատրաստէին հայաստան ժողովրդոց՚ի ձեռն երանաշնորհ վարդապետաց Սահակայ և Մեսրովպայ, որք լուտարածեալ ջանք կային յաշխարհիս մերում, և պատճառք եղեն ծաւալելոյ յազգիս անզուգական գանձու աստուածաշունչ պատգամաց:

Սուրբն Մեսրովպ տարօնացի 'ի Հացեկաց գեղջէ՝ վարժեալ հելլէն դպրութ՟ 'ի մանկութ՟է, և աշակերտեալ սրբոյն Ներսիսի մեծի՝ եղև նօտար նորա. ապա 'ի վախճանել սրբոյ հայրապետին ընտրեցաւ յատենադպիր թագաւորացն Հայոց. զի ճարտար էր մտօք, և հմուտ յոյն, ասորի և պարսիկ բարբառոյ: Իսկ յետ կալոյ նորա 'ի դրան արքունի զամս իբր եօթն, ածեալ զմտաւ զունայնութիւն աշխարհի՝ հրաժարեցաւ 'ի պատուոյն, և մեկուսի առանձնացեալ 'ի Գողթն գաւառ եմուտ 'ի վանս, և ետ զանձն 'ի հրահանգս բարեկրօն կենաց. ստացաւ ապա և աշակերտս յոլովս վարժել զնոսա 'ի վարս բարիս և յուսումն աստուածային գրոց:

Ողջ էր 'ի նմին ժամանակի և սուրբն Սահակ Պարթև որդի մեծին Ներսէսի, ուսեալ և վարժեալ 'ի Կոստանդնուպօլիս հելլէն դպրութեամբ. ուր և մնեալ ապա 'ի կարգ աշխարհի՝ ծնաւ դուստր մի Անոյշ անուն. սակայն 'ի վախճանիլ ամուսնոյն հրաժարեալ յաշխարհէ, ետ զանձն 'ի պաշտամունս Աստուծոյ՝ ճգնաւոր կենօք, հաւաքելով առ ինք աշակերտս իբր վաթսուն: Իսկ 'ի վախճանել Ասպուրակէս կաթուղիկոսի՝ թագաւորն Հայոց հաւանութեամբ ազգին ետ ձեռնադրել զերանելին Սահակ 'ի հայրապետութիւն աշխարհին յամի տեառն 390: Իսկ զի նախարարք ոմանք թշնամութեամբ էին ընդ թագաւորին, ամբաստան եղեն զնմանէ առ Շապուհ արքայն Պարսից՝ եթէ առանց հաւանութեան նորա կացուցեալ իցէ կաթողիկոս զՍահակ. ընդ որ ցասուցեալ Շապհոյ ընկեց զսուրբն յաթոռոյ. սակայն Արտաշիր որդի նորա մեծարեալ կացոյց զնա դարձեալ յիշխանութեան: Յայնժամ սուրբն Սահակ նորոգեաց զտաճար սրբոց Հռիփսիմեանց զկործանեալն 'ի Շապհոյ արքայէ, և խնամ կալաւ բարեկարգել զեկեղեցի: Զայն լուեալ սրբոյն Մեսրովպայ, խնդալից թողեալ զմենաստան ճգնութեանն եկն յաղջոյն սրբոյ կաթուղիկոսին, և նորին հաճութեամբ սկսաւ քարոզել զապաշխարութիւն, և աջակից գտաւ նմա 'ի խնամս հօտին:

Յայնու ժամանակաւ լուեալ սրբոյն Մեսրովպայ՝ թէ 'ի Գողթն գաւառի և յաշխարհին Սիւնեաց է աղանդ ինչ գիւտահնար մոլորելոց, փութացաւ գնալ անդր և ձեռնտու օգնականութեամբ իշխանաց տեղւոյն սրբել զվայրսն 'ի մոլորութենէ ։

Փոյթ մեծ էր նորա ուսուցանել ժողովրդեան զաստուածաշունչ գիրս. և զի չէին յայնժամ դպրութիւնք Հայոց, խորհեցաւ հնարել զայնսիկ, և ապա թարգմանել զսուրբ գիրս 'ի հայ բարբառ և տալ յընթերցումն ժողովրդեան. զի ցայնժամ 'ի պաշտամունս եկեղեցւոյ ասորի և յոյն բարբառով ընթեռնուին զսուրբ գիրս 'ի վանորայս և յեկեղեցիս, սակայն ոչինչ օգտէր ժողովրդեանն, զի բազումք 'ի նոցանէ չիմանային իսկ զայն։ Զայն խորհուրդ և իղձ սրտի իւրոյ 'ի վեր հանեալ սրբոյն Մեսրովպայ առ սուրբն Սահակ հայրապետ, եգիտ զնա համախոհ և յօժարակամ 'ի կատարումն խնդրոյն. վասն որոյ միաբան ջանիւ միտ եդին գիւտի հայերէն գրոց, անընդհատ պաղատանօք դիմելով առ Աստուած, զի ոչ դոյզն ինչ էր գործն, և պէտս ունէր աստուածային շնորհաց։

Եւ ապա իբրև զամս երկուս քրտնաջան աշխատութեամբ վաստակէր սուրբն Մեսրովպ ընդ Դանիէլի եպիսկոպոսի Ասորւոց 'ի Միջագետս, և ապա ընդ Պղատոնի կամ Պղատանի ուրումն հեթանոս հռետորի յԵդեսիա քաղաքի, որպէս և ընդ Հռուփանոսի գրագրի 'ի Սամոսատ քաղաք. իբրև հատաւ յոյս հնարիցն առ 'ի մարդկանէ՝ դիմեաց առ Աստուած ընդունել 'ի նմանէ զփափաքելին, որպէս և եղև իսկ։ Զի յափշտակեալ մտօք յաղօթս, երևութացան նմա ձևք տառիցն և հնչմանց, սերտ տպաւորութեամբ 'ի սիրտ և 'ի խորհուրդս մտացն՝ բովանդակեալ ունելով զամենայն տառս բաղմահնչիւն լեզուիս։ Ընդ որ մեծապէս գոհացեալ զԱստուծոյ, անդէն 'ի Սամոսատ քաղաքի ձեռն արկ թարգմանել 'ի յունաց զգիրս Առակացն Սողոմոնի. և ապա սկսաւ զնոր կտակարանն յեղուլ 'ի հայ բարբառ, ձեռնտու իւր ունելով երկուս ոմանս 'ի հանճարեղ և յարագամիտ աշակերտաց իւրոց, զՅովհան Եկեղեցացի և զՅովսէփ Պաղնացի։

Այս առեալ սրբոյն Մեսրովպայ զհայագիր թարգմանեալն՝ եւ 'ի Միջագետաց գնալ 'ի Հայաստան. զոր լուեալ թագաւորին Հայոց Վռամշապհոյ և սրբոյն Սահակայ՝ եկին ընդ առաջ նորա ուրախութեամբ մեծաւ և փառս ետուն Աստուծոյ ընդ անզուգական ձիրս պարգևացն. զոր 'ի ձեռն սրբոյն Մեսրովպայ շնորհեաց ազգիս.

Յետ այնորիկ ըստ խնդրոյ սրբոյն՝ հրաման ետ թագաւորն հաճութեամբ սրբոյ կաթուղիկոսին կանգնել վարժարանս յամենայն տեղիս, և ժողովեալ մանկունս ուշիմս՝ ուսոյց նոցա զգրութիւն հայերէն գրոց, հրահանգելով զնոսա յարուեստ դպրութեան. և ետ հայագիր զաղափարել զամենայն մատեանն գրեալս յոյն և ասորի գրով.

Ի լսել Վրաց և Աղուանից զշնորհս պարգևացն Աստուծոյ առ Հայս 'ի ձեռն սրբոյն Մեսրովպայ, խնդրեցին 'ի նմանէ հաղորդ առնել և զազգ իւրեանց այնմ պարգևաց, զի և նոքեանք ունիցին սեփական նշանագիրս. վասն որոյ սուրբն Մեսրովպ յօժարական ձեռնտու եղև նոցա՝ ստեղծեալ գիրս ըստ յատկութեան լեզուի իւրեանց, որպէս պատմէ լիով երանելին Կորիւն աշակերտ սրբոյն.

Յայնմ ժամանակի՝ յամին 411, մինչդեռ սուրբն Մեսրովպ 'ի Վիրս էր, երանելին Սահակ կաթուղիկոս ձեռն արկ թարգմանել զհին կտակարանն յասորի բարբառոյ. զի զյունագիր մատեանս ջնջեալ էին յաշխարհէս Հայոց Պարսիկք, զի դիւրագոյնս դարձուցեն զազգ մեր 'ի կռապաշտութիւն. Իսկ 'ի մեռանել Վռամշապհոյ թագաւորին Հայոց, Յազկերտ արքայ Պարսից կացոյց 'ի վերայ Հայոց զՇապուհ զորդի իւր. և յարոյց հալածանս 'ի վերայ քրիստոնէից եղելոց 'ի Պարսս. ուր վկայական մահուամբ կատարեցան սուրբն Աբդաս եպիսկոպոս, Որմիզդան, Սայլին և Բենիամին սարկաւագ յամին 418.

Զհրդեհ հալածանացս մեղմացոյց սուրբն Սահակ, որ ինքնին գնացեալ առ Յազկերտ արքայ՝ եցոյց զվնաս տէրութեանն եթէ իւիք իրօք պատճառս տացէ բուռն խռովութեան հպատակաց. Սակայն 'ի մեռանել Յազկերտի բարձաւ և խաղաղութիւն աշխարհիս Հայոց 'ի մասն բաժնի Պարսից. վասն որոյ սուրբն Սահակ և սուրբն Մեսրովպ միաբան խորհրդով մեկնեցան անտի, և գնացին 'ի մասն բաժնի Յունաց, զոր հայ և յոյն իշխանք ունէին յանդորրու ։ Այլ 'ի կամել երանելեացն բանալ վարժարանս դպրութեան արգելին զնոսա Յոյնք, վասն որոյ խորհրդով նախարարացն Հայոց առաքեցին զսուրբն Մեսրովպ 'ի Կոստանդնուպօլիս առ կայսրն Թէոդոս փոքր, և առ Ատտիկոս պատրիարգ Յունաց ։

Այլ նորա ընկալեալ զհաճութիւն հաւանութեան կայսերն և զպատրիարգին վասն խնդրոյ իւրեանց, ցնծութեամբ դարձաւ անդրէն առ սուրբն Սահակ յամին 421, և ըստ բաղձանաց սրտի իւրեանց կանգնեցին դպրոցս յուսումն հայերէն գրոց ։

Բայց սուրբն Մեսրովպ 'ի մեկնել անտի իւրում 'ի Կոստանդնուպօլսոյ՝ եթող անդէն զաշակերտս իւր վարժել 'ի յոյն լեզուս . ուր կացին նոքա զամս իբր տասն, մինչև ցաւարտումն ժողովոյն Եփեսոսի յամին 431, զորմէ տեսցուք զկնի ։ Այլ սոքա առեալ աշակերտաց զմիաբանական թուղթ եպիսկոպոսաց ոմանց, զոր գրեցին առ Հայս զգուշանալ 'ի մոլորութենէ Նեստորի, և զընտիր օրինակ մի աստուածաշունչ գրոց, զոր սուրբն Մեսրովպ կանխաւ խնդրեալ էր 'ի պատրիարգէն, և զայլ մատեանս ինչ, դարձան յաշխարհն Հայոց ։

Տեսեալ սրբոյն Սահակայ և Մեսրովպայ զստուգագիր մատեան աստուածաշունչ գրոց՝ խնդամիտ սրտիւ ձեռն արկին թարգմանութեան, յոր քաջ հանդիսացաւ սուրբն Սահակ, զի վարժ և հմուտ էր հելլէն բարբառոյ, ձեռնտու օգնականութեամբ սրբոյն Մեսրովպայ և աշակերտաց նորա ։ Որ թէպէտ և 'ի գլուխ հանին ամենայն զգուշաւոր ընտրութեամբ և բաղդատութեամբ, բայց զի երկբայութիւնք ինչ էին զբառից ինչ և զբանից՝ խորհուրդ արարեալ առաքեցին զոմանս յաշակերտաց յԱղեքսանդրիա Եգիպտոսի, որպէս և յԱթէնս, որք ծաղկեալ էին յայնժամ գիտութեամբ, զի առաւել ևս հմտացեալ կարևոր տեղեկութեամբ՝ լրացուցեն զթերին թարգմանութեան ։ Այլ նոքա յօժարամիտ ուղևորեալ ըստ խորհրդոյ վարդապետաց իւրեանց՝ զամս եօթն պարապելով 'ի կարևոր ուսմունս յԱղեքսանդրիա և յԱթէնս, որպէս և ոմանք 'ի Հռովմ ևս, դարձան անդրէն 'ի հայրենիս իւրեանց . ուր թէպէտ գտին փախձանեալ զերկոսին երանելի վարդապետս իւրեանց զսուրբն Սահակ և զսուրբն Մեսրովպ, սակայն զիղձս սրտի նոցա կատարեցին անվրէպ, լրացուցանելով զթերութիւն թարգմանութեան աստուածաշունչ մատենից ։

ԳԼՈՒԽ Ե․

Մոլորութիւն Նեստորի ։

ՅԵՏ դատապարտութեան Պեղագեանց 'ի զանազան ժողովս, 'ի վեր երևեցաւ և այլ հերձուած ոչինչ նուազ վտանգաւորագոյն քան զայն, յաղմկել զեկեղեցի։ Յամի տեառն 430 յարեաւ խնդիր 'ի Կոստանդնուպօլիս, եթէ պարտ իցէ զսուրբ Կոյսն անուանել մայր Աստուծոյ, թէ լոկ մայր Քրիստոսի։ Նեստոր պատրիարգ այնր քաղաքի, որ ասէր 'ի Քրիստոս երկու անձինս, քարոզեաց յեկեղեցւոջ իւրում 'ի լուր ժողովրդեան վասն սրբոյ կուսին Մարիամու, թէ պարտ է կոչել զնա մայր Քրիստոսի․ և մնոտի նորախօսութեամբ կամէր հաստատել զկարծիս իւր․ որով և զբազումս 'ի պարզամտաց և 'ի տգիտաց յինքն որսացաւ․ « Մինթէ մարթիցի Աստուծոյ ունել մայր․ մինթէ հնա՞ր ինչ իցէ ստեղծուածոյ ծնանել զստեղծողն։ Մարիամ ո՞րպէս մարթիցի ծնանել զայն որ յառաջ իսկ էր քան զինքն․ թերևս հաղորդակից իցէ աստուածային էութեան․ և արդարև լինէր այնպէս՝ եթէ ինքն ծնեալ էր զԱստուած ոք․ զի ճշմարիտ մօրն հարկ է լինել բնութենակից որդւոյն․ իսկ Մարիամ եղև մայր Քրիստոսի իբր մարդոյ լոկոյ․ զի զօրութեամբ Հոգւոյն սրբոյ յղացաւ զնա մարդ սակական, և ընդ այնմ մարդոյ միացաւ Քրիստոս, կամ Բանն Աստուած․ և զնա 'ի ձեռն էառ իբր գործի՝ կատարել նովաւ զփրկութիւն մեր »։

Վարդապետութիւնք Նեստորի մոլորեցուցին զբազումս ոչ ճարտարահիւս պերճախօսութեամբ նորա եւեթ, այլ և կեղծաւորեալն նորա նախանձու ուղղափառ դաւանութեան, որով երևէր զինեալ ընդդէմ հերետիկոսաց, և արտաքին տեսիլ խստութեան վարուցն և առերևս կեղծաւորեալ առաքինութիւնք նորա, որովք *զառաջինն հասեալ էր յայն աստիճան նախապատիւ աթոռոյ արևելեան եկեղեցւոյ, նպաստաւորք լինէին մտադիւր ընդունել զկարծիս նորա և պաշտպան կալ բանիցն ։*

Ընդդէմ նորածին մոլորութեանս զինեցան բազումք յեպիսկոպոսաց, և 'ի նոսա համբաւաւոր և ախոյեան հանդիսացաւ սուրբն Կիւրեղ պատրիարգ Աղեքսանդրիոյ, որ 'ի միում ժողովի կարգեաց երկոտասան դատակնիքս՝ նզովք անուանեալս առ 'ի նմանէ ։ Իսկ քանզի Նեստոր պատասխանի արար այնոցիկ՝ նմանօրինակ նզովիւք, վասն որոյ սուրբն Կիւրեղ հարկ համարեցաւ ընդ բանիւ առնել զնա, և 'ի նոյն յորդորեաց և զայլ եպիսկոպոսունս ։ Ապա գրեաց թուղթ առ Կեղեստինոս Ա. քահանայապետ Հռոմայ, և առ կայսրն Կոստանդնուպօլսոյ Թէոդոս փոքր, ցուցանել զչարս մոլորութեանն, և զի հարկ 'ի վերայ կայ փութալ 'ի դեղ դարմանոյ՝ գումարելով ժողով ընդհանրական և արմատաքի խլելով զընձիւղ անիծից չարին ։

ԳԼՈՒԽ Զ.

Ժողով Եփեսոսի, որ է երրորդ տիեզերական ։

ՓՈՔՐՆ *Թէոդոս որ թագաւորէր յայնժամ յարևելս, հրամայեաց գումարել ժողով յԵփեսոս քաղաք՝ յամսեանն յունիսի յամի տեառն 431 ։ Սակայն առ բարւոք խելամտել իրացն որք գործեցան 'ի նմին ժողովի, համառօտիւ կարգեսցուք աստէն զվիճակ նեստորական վարդապետութեանն յառաջ քան զգումարել ժողովոյն ։*

Մոլորութիւն Նեստորի ծաւալեալ էր յոյժ յայնժամ, և կայսրն կուսակից և պաշտպան էր կարծեաց նորա ։ Չորեք յեպիսկոպոսաց համամիտք էին մոլորութեանն և մերձինք հերեսիովտապետին, որովք ակն ունէր նա անաշխատ աշակերտել զբազումս 'ի պարզամտաց ։ Բազումք ևս անփորձք էին և ոչ գիտէին խտիր ինչ ընդ վարդապետութիւն նորա և եկեղեցւոյ. որպէս և ոմանք քանզի աշակերտակիցք էին Նեստորի՝ փոյթ յանձին ունէին պաշտպան կալ մոլորութեանն նորա, և սփռել զայն ընդ բնաւ ։

Նեստոր մոլեգին կատաղութեամբ յանդգնեալ՝ հաստատեալ ասէր 'ի մտի, թէ ժողովն առաւելապէս մտադիցէ ամբաստանութեանցն որ ընդդէմ Կիւրղի՝ քան վարդապետութեան հաւատոյ, վասն որոյ ասէր համարձակ. « Առ 'ի քննել զճշմարտութիւն զի՞նչ պէտք իցեն վիճել զբառից: Սուրբ կոյսն Մարիամ է մայր Քրիստոսի. և ո՞ ընդ այն երկմտեսցէ. սակայն զարմանք մեծ այն են զի այր որ եգիպտացի զինեցի ինձ ընդդէմ. և ո՞ ոչ գիտիցէ, եթէ 'ի քանի՝ ժամանակաց հետէ եպիսկոպոսունք Աղեքսանդրիոյ մախանօք են ընդ պատրիարգունս Կոստանդնուպօլսոյ: Իցէ՞ ոք որ անգիտասցի, թէ սուրբն Յովհան Ոսկեբերան որչափ անարգանօք թշնամանեցաւ յերանելոյն Թէոփիլոսէ 'ի քեռւոյ անտի Կիւրղի »: Եւ 'ի նուաղեցուցանել զյարգ պատուոյ և զիշխանութեան սրբոյն Կիւրղի՝ ամբաստան եղև զնմանէ, թէ ջան գործէ զբազմունս ստանալ իւր կուսակիցս: Սակայն Կիւրղի 'ի գերև հանեալ զամբաստանութիւնն՝ խնամակալաւ փութացուցանել զգումարումն ժողովոյն:

Յամենայն սահմանաց քրիստոնէութեան հաւաքեցան յԵփեսոս քաղաք երկերիւր և վաթսուն եպիսկոպոսունք: Սուրբն Կիւրեղ նախագահ բազմեցաւ ժողովոյն՝ յանուն քահանայապետին Հռոմայ. անդր կոչեցաւ և Նեստոր պատասխանի տալ և ցուցանել զվարդապետութիւն իւր, բայց 'ի չկամել նորա երևել յանդիման ժողովոյն՝ ամենայն եպիսկոպոսունք յետ առաջի առնելոյ զդաւանութիւն հաւատոյ եկեղեցեաց իւրեանց, միաբան հաւանութիւ հաստատեցին զնախնի վարդապետութիւն եկեղեցւոյ, և հերքեցին զնորն: Ապա հարիւր յիսուն և ութ եպիսկոպոսունք ձեռն եդին դատակնքոյ դահընկեցութեանն զոր արարին ընդդէմ Նեստորի, զոր և առաքեցին առ հերեսիովտապետն: Կանդիդիանոս՝ զոր կայսրն Թէոդոս առաքեալ էր 'ի ժողովն խնամ ունել խաղաղութեան և բարեկարգութեան նորա, շատ հակառակ եկաց այնմ դատակնքոյ՝ սակայն ոչ լսելի եղեն բանք նորա, որպէս և բողոք Նեստորի և այլոց վաթսուն եպիսկոպոսաց կուսակցացն նորա, որք կամէին յապաղել զառաջին գումարումն մինչև ցգալուստ Յովհաննու անտիոքացւոյ, որպէս և այլոց եպիսկոպոսաց, որք տակաւին չէին հասեալ յԵփեսոս:

Ժամանեալ Յովհաննու եպիսկոպոսին Անտիոքայ 'ի պահու անդ, յորում զատապարտեցաւ Նեստոր, ժողովն առաքեաց առ նա զանձինս յեպիսկոպոսաց ծանուցանել նմա զոր միանգամ գործեալ էին 'ի նպաստ ողջամիտ վարդապետութեան հաւատոյ. այլ նա ոչ ընկալաւ զնոսա սիրով։ Միանգամայն լուեալ եւս 'ի Կանդիտիանոսէ, թէ ժողովն նախ քան զօրինաւոր քննութիւն 'ի վերայ Նեստորի դատապարտեալ իցէ զնա, փութացաւ եւ ինքն գումարել նոր ժողովս 'ի նմին իսկ պանդոկի՝ ուր իջեւանեալն էր, եւ միաբան հաւանութեամբ եպիսկոպոսաց կուսակցացն Նեստորի արդարացոյց զնա, եւ դատապարտեալ զսուրբն Կիւրեղ՝ ունայնացոյց զսահմանս ժողովոյն։

Կայսրն Թէոդոս խաբեալ 'ի ստայօդ բանից Կանդիտիանոսի, անհաւան գտաւ զառաջինն տեղեկական ժողովոյն. բայց ապա խնդրեալ զեղեալսն՝ արտասահման արար զԿանդիտիանոս, նոյնպէս եւ զՆեստոր արգել 'ի մենաստանն Անտիոքայ, ուր բնակեալն յառաջ քան զընտրութիւն իւր 'ի պատրիարգ Կոստանդնուպօլսոյ։ Բայց քանզի եւ անդ ոչ դադարէր ծաւալել զմոլորութիւնս իւր՝ աքսորեցաւ յԵգիպտոս, ուր ոչ սակաւ ժամանակս գուն գործեալ սերմանել զաղանդն՝ կատարեցաւ անդէն թշուառութեամբ զաւուրս կենաց իւրոց։

Կուսակիցք Նեստորի որք մահու չափ ատէին զԿիւրեղ, ապա առ երեւս կեղծաւորեցան հաշտիլ ընդ նմա, յանձն առեալ արհամարհել զՆեստոր եւ զվարդապետութիւն նորա։ Նուազունք արարին զայն առ երկիւղի, զանգիտեալք զի մի գուցէ յանաստանել անդ իւրեանց եւ յընդդէմ դառնալ՝ տարագրեսցին 'ի հայրենեաց. բայց յոլովք եւս որք ոչն կամեցան անսալ ճշմարտութեան՝ ընկեցեալք 'ի պատուոյ եւ յիշխանութենէ իւրեանց տարաքեցան յաքսորս արտաքոյ քան զսահմանս կայսերական տէրութեան, եւ նոքա մեկուսացեալ յարեւելեան գաւառս որ ընդ իշխանութեամբ Պարսից կանգնեցին անդէն եկեղեցիս, եւ բազմացան անդ։ Նա ապա 'ի Պարսից էանց մոլորութիւնս մինչեւ ցծայրս Ասիոյ. եւ արդ իսկ գտանին 'ի կողմանս Ասորւոց արք տգէտք եւ անզօրք Քաղդէացիքն անուանեալ, եւ յանուն վարդապետին իւրեանց կոչին Նասթուրէք կամ Նեստորականք։

Զպատմութիւն ժողովոյն Եփեսոսի հանդերձ կանոնագրութեամբքն ընկալեալ սրբոյն Սահակայ և Մեսրովպայ 'ի ձեռն աշակերտաց իւրեանց՝ որք առաջիկայ գըտան ժողովոյն, յամին 432 ազգային ժողովով հաստատեցին զսահմանեալսն 'ի նմանէ, և զոր ինչ դատապարտեցան՝ դատապարտեցին և ինքեանք ։ Նոյն յետ երից ամաց լուեալ սրբոյն Սահակայ թէ Նեստորականք 'ի սերմանել զմոլորութիւն իւրեանց սկսեալ են սփռել զգիրս Թէոդորի Մոպսուեստացւոյ վարդապետին՝ Նեստորի, զոր և թարգմանեալ են 'ի հայ բարբառ, փոյթ յանձին կալաւ 'ի քնին առնուլ զգիրսն, և ստուգեալ զմոլորամիտ վարդապետութիւն՝ վերստին ազգային նոր ժողովով հերքեաց զայն, և ծանոյց նամակաւ սրբոյն Պրոկղի պատրիարգի Կոստանդնուպօլսոյ. որոյ ուրախ լեալ ընդ այն՝ առանձինն նամակաւ քաջալերս և յորդոր մատոյց նմա մերժել զստապատիր մոլորութիւնն ։

ԳԼՈՒԽ Է.

Հերձուած Եւտիքեայ ։

Ի ՋԱՏԱԳՈՎՍ ճշմարտութեան ընդդէմ նորահնար մոլորութեանն՝ Նեստորի՝ համբաւաւոր գոլ Եւտիքէս վանահայր կամ՝ արքիմանդրիտ միոյ 'ի հռչակաւոր մենաստանացն Կոստանդնուպօլսոյ ։ Սա 'ի հերքել անդ զվարդապետութիւն՝ Նեստորի՝ անցեալ ըստ չափն՝ անկաւ 'ի նոր մոլորութիւն . զի ցուցանել կամեցեալ 'ի Քրիստոս մի եւեթ անձն, խառնակեաց զերկոսին բնութիւնսն ։ Եւ 'ի դաւանել զկոյսն Մարիամ մայր Քրիստոսի՝ որպէս Աստուծոյ, ասէր՝ թէ մարմինն յղացեալ 'ի նմանէ էր իբր աստուածացեալ, որով յետ մարդեղութեան՝ բնութիւնքն աստուածային և մարդկային եղեն իբր մի բնութիւն ։ Ըստ որոյ ըստ Եւտիքեայ կարծեացն՝ ա՟ծային բնութիւնն՝ յորում խառնեցաւ մարդկայինս, թէպէտ և անայլայլակ, սակայն և այնպէս տարաւ քաղցու, ծարաւոյ և մահու իսկ գլխովին ։

Մոլորամիտ այս վարդապետութիւն 'ի նախանձ շարժեաց զբազումս յեպիսկոպոսաց . վասն որոյ Փլաբիանոս պատրիարգ Կոստանդնուպօլսոյ ընդ բանիւ արար զԵւտիքէս 'ի ժողովին որ գումարեցաւ յամին 448 ։ [illegible] Եւտիքեայ երեւել առաջի հարցն ժողովելոց, դատապարտեալ նզովեցաւ անդ ։ սակայն կուսակիցք նորա զայրացան յոյժ ընդ դատակնիքն ։ վասն որոյ Դիոսկորոս հանձնառու Եւտիքեայ, որ յաջորդեալ էր զսուրբն Կիւրեղ 'ի պատրիարգութ. աթոռոյն Աղեքսանդրիոյ, փութացաւ գումարել այլ ժողով յԵփեսոս քաղաքի. ուր հաստատեալ զԵւտիքեականն վարդապետութիւն, դատապարտեաց զՓլաբիանոս, զոր և աքսորեցին ապա՝ պատրեալ զկայսրն Թէոդոս անիրաւ զրպարտութեամբ ։

Սուրբն Լեւոն Ա. քահանայապետ Հռոմայ լուեալ զաղմուկ շփոթին՝ անդէն գումարեաց ժողով 'ի Հռոմ և հերքեաց զժողովականն Եփեսոսի, մերժեաց զսահմանադրութիւնս նորա , և հաստատեաց զճշմարտութիւն ։

ԳԼՈՒԽ Ը.

Ժողով Քաղկեդոնի, որ է չորրորդ տիեզերական ։

ԻԲՐԵՒ մեռաւ կայսրն Թէոդոս առանց ինչ ձեռնհաս լինելոյ խաղաղել զեկեղեցի, Մարկիանոս յաջորդեալ նմա 'ի կայսերութեան՝ զարմանն հնարաւոր համարեցաւ 'ի խաղաղել զամենայն հակառակութիւն՝ զհրամայելն ժողով ընդհանրական գումարել 'ի Քաղկեդոն քաղաքի որ կայ առ երի Կոստանդնուպօլսոյ յամին 451 ։ Անդր ժողովեցան վեցհարիւր երեսուն և վեց հայրապետք յարևելից և յարևմտից ։ յորս նախագահք բազմեցան նուիրակք քահանայապետին Հռոմայ ։ Ի սկսանել ժողովոյն Դիոսկորոս և հանձնառուք նորա համբաւեալքն նենգութեամբ և աղմկայոյզ բարուք՝ ընկալան զարժանին պատուհաս ։ Ամօթապարտեալ Դիոսկորոսի 'ի բազմադիմի յանցանաց, նզովեցաւ և ընկեցաւ յաթոռոյ ։ ապա դատապարտեցան մոլորութիւնք Եւտիքեայ, և հաստատեցաւ ուղղափառ վարդապետութիւն հաւատոյ ։

Այս են սահմանք ժողովոյն Քաղկեդոնի ըստ աւանդութեան սրբոց հարց ։ « Մեք ամենեքին միաձայն հաւանութեամբ յայտ առնեմք, եթէ պարտ է խոսդաւանել զմի միայն զտէր մեր Քրիստոս կատարեալ աստուածութեամբ և կատարեալ մարդկութեամբ , նոյն ինքն Աստուած ճշմարիտ՝ և մարդ ճշմարիտ . նոյն ինքն ունելով զհոգի բանական և զմարմին . նոյն ինքն համագոյակից Հօր ըստ աստուածութեան , և նոյն ինքն համագոյակից մեզ ըստ մարդկութեան , ամենայնիւ նման մեզ առանց մեղաց . ծնեալ ՚ի Հօրէ ըստ աստուածութեան նախ քան զյաւիտեանս , իսկ ըստ մարդկութեան ՚ի յետին ժամանակս յԱստուածածին Մարիամայ կուսէն ծնեալ վասն մեր և վասն մերոյ փրկութեան : Մի միայն՝ և նոյն ինքն Քրիստոս միածին Որդի տէր յերկուս բնութիւնս , անշփոթ , անայլայլակ , անբաժանելի , անանջատելի . միութեանն ոչինչ բառնալով զզանազանութիւն բնութեանցն , այլ ընդ հակառակն յատկութիւն երկաքանչիւրոցն պահեալ և յօդեալ ՚ի մի միայն անձն և յէնթակայութիւն . որով ոչ է նա յերկուս անձինս բաժանեալ , այլ է մի միայն . և նոյն ինքն միածին Որդի , Աստուած , Բան և տէր մեր ,, :

Այս հաստատեցաւ դաւանութիւն միաձայնութեամբ ամենայն հարց ժողովոյն . որով յայտնի եղանի՝ թէ եկեղեցին ընդդէմ Նեստորի ուսուցանէ , թէ ՚ի Քրիստոս է մի միայն անձն . և ընդդէմ Եւտիքեայ թէ երկու բնութիւնք են նորա աստուածային և մարդկային : Աստի իսկ յայտ յանդիման երևի ուղղափառ դաւանութիւն ժողովոյս , և զի յանիրաւի զրպարտեցաւ ՚ի տգիտաց ոմանց :

Յաւարտիլ ժողովոյն ՚ի սկիզբն նոյեմբեր ամսոյ՝ յամի տեառն 451 , կայսրն Մարկիանոս արքունի հրովարտակաւ պատուէր ետ ամենեցուն հաստատուն ունել զսահմանս ժողովոյն . և ապա այլով հրովարտակաւ պատուհաս սաստիկս սպառնացաւ կուսակցացն Եւտիքեայ, որպէս և միայնակեցացն այնոցիկ որք պատճառք եղեն բազմապատիկ շփոթից :

Ժողովն Քաղկեդոնի հաստատեաց զայն ամենայն զոր արար Փլաբիանոս ՚ի ժողովին Կոստանդնուպոլսոյ ընդդէմ Եւտիքեայ . զոր ընկեցեալ ՚ի պատուոյն արտաքսեցին ՚ի մենաստանէն և աքսորեցին յաքսորս , ուր ժամանակս ինչ պաշտպան կացեալ կարծեաց իւրոց՝ վախճանեաց զկեանսն :

Ողջամիտ վարդապետութիւն եկեղեցւոյ սահմանեալն ՚ի ժողովոյն Քաղկեդոնի պահեցաւ անընդհատ յուղղափառ ժողովուրդս. բայց եւտիքականք բաժանեցան յայլ եւ այլ աղանդս, յորս համբաւաւորք եղեն Անգլուխ անուանեալքն, որք ՚ի բաց կացին ոչ միայն յուղղափառ եկեղեցւոյ, այլ եւ ՚ի կուսակցացն Պետրոսի Թափչի բռնակալ պատրիարգին Աղեքսանդրիոյ՝ որ պաշտպան էր եւ ջատագով եւտիքական մոլորութեան։ Հետեւողք աղանդոյս այսր տղէտք եւ մոլիք բազմացան յոյժ թուով ՚ի զանազան գաւառս, մանաւանդ յԵգիպտոս եւ յԱսորիս, որք եւ անդուլ նախանձայուզութեամբ ստանէին զբազումս յուղղափառաց։

ԳԼՈՒԽ Թ.

Խռովութիւնք հայաստան աշխարհի յերեսաց Պարսից։ — Նահատակութիւն սրբոց Վարդանանց եւ Ղեւոնդեանց։

Ի ԺԱՄԱՆԱԿԻՆ յորում խռովութիւնք նեստորականաց եւ մոլորութեանն Եւտիքի յուզէին զսահմանս կայսերութեան, Յազկերտ արքայ Պարսից որդի Վռամայ՝ տեսեալ զառաջնակ շփոթ ի ազգին Հայոց, եւ զնուաճումն Արշակունի թագաւորութեան, խորհեցաւ յօրէնս կրակապաշտութեան դարձուցանել զՀայս, զՎիրս եւ զԱղուանս. գործակից խորհրդոյս առեալ զՄիհրներսեհ հազարապետ իւր, որ քան զթագաւորն յօժարամիտ էր առ այն։ Եւ զի դժուարին թուէր թագաւորին հասանել ըղձից իւրոց ցորչափ նոքա յիւրեանց աշխարհին ամփոփեալ իցեն, կոչեաց առ ինքն զնախարարս Հայոց, որպէս եւ զիշխանսն Վրաց եւ զԱղուանից զօրօք իւրեանց, որպէս եթէ օգնել նմա ՚ի մարտին որ ընդդէմ Հոնաց։ Հրամայեաց եւ Վասակայ Սիւնեաց տեառն զպատիւ մարզպանութեան. եւ զՎարդան Մամիկոնեան կացոյց սպարապետ աշխարհին Հայոց։ Նախարարք Հայոց թէպէտ եւ իմացան զնենգաւորիր խորհուրդս մտաց Յազկերտի, սակայն զմտաւ ածեալ զառաքելոյն բան եթէ «Ծառայք, հնազանդ լերուք տերանց ձերոց մարմնաւորաց», կազմեցին գունդ մեծ զօրաց, եւ քահանայիւք հանդերձ հասին յԱրեաց աշխարհ. անդր եկին եւ զօրք Վրաց և Աղուանից. ընդ որ զուարճացեալ արքայն՝ նորօք հանդերձ խաղաց 'ի վերայ Հռոմոց. և յերկարել պատերազմին զամս երկուս, զանգիտեալ թէ մի գուցէ տագնապեցեալ զօրաց յերկարութենէ մարտին ցրուեալ երթիցեն, հրաման ետ փոխանակել զայլս 'ի տեղի առաջնոցն. և ապա սկսաւ յորդորել զՀայս յօրէնս կրակապաշտութեան. և 'ի մերժել նոցա աներկիւղ զբանս թագաւորին, զայրացեալ անօրէնն ետ սպանանել զերանելին Ատոմ գնունի և Մանաճիհր ռշտունի միաբանեալ զօրօք նոցա: Սաստկացոյց ապա զխստութիւն հրամանին՝ յայտնի ստիպելով զՀայս յուրացութիւն հաւատոյ, մինչև տանջել և 'ի բանտ արկանել զբազումս. տակայն վրիպեցաւ 'ի յուսոյն և ոչ զոք կարաց խախտել 'ի հաւատոյն Քրիստոսի:

Ապա յամին 450 յետ յաղթելոյ Հռոմոց իբրև դարձաւ 'ի Պարսս՝ հրամայեաց Միհրներսեհի հազարապետի գրել նամակ առ ազգն Հայոց՝ յորում նկարագրէր նա զուսումն մոլար դենի իւրեանց: Յայնժամ ուրեմն Յովսէփ կաթուղիկոս ետ գումարել ժողով ազգային, յորում գտան և իշխանք Հայոց. որք միաբան հաւանութ̃ և հոգելից հանճարով գրեցին զպատասխանի թղթոյ թագաւորին՝ զօրաւոր բանիւք հերքելով զօրէնս կրակապաշտութեան: Իբրև էառ Յազկերտ զայն թուղթ, զայրացեալ յոյժ՝ գրեաց հրովարտակ և կոչեաց առ ինքն զնախարարս. և գնացին առ նա Վասակ մարզպան, Վարդան սպարապետ, և ամենայն նախարարք. զորս տեսեալ Յազկերտի կշտամբեաց զնոսա խստիւ և էարկ 'ի բանտ, և սպառնացաւ առաքել յաքսոր՝ եթէ յաւուրն երկրորդին առաւօտն չառնուցուն յանձն երկրպագանել արեգական: Յայն տագնապ վտանգի մինն 'ի պաշտօնէից Յազկերտի Խուժիկ անուն 'ի ծածուկ քրիստոնեայ՝ խորհուրդ ետ նախարարացն առ երեսս հաճել զկամս թագաւորին, և ապա դարձ արարեալ 'ի հայրենիս իւրեանց ազատել զազգն և զաշխարհն 'ի մերձաւոր վտանգէ անտի կորստեան:

Ամենեան նախարարքն թէ և ոչ ուղիղ էր խորհուրդն, բայց ածեալ զմտաւ զարգասիս աքսորանաց իւրեանց, յակամայ կամս յանձն առին երկիր պագանել արեգական յանդիման թագաւորին. և պատուեալ 'ի նմանէ՝ դարձան 'ի Հայս, ընդ իւրեանս ունելով և զբազմութիւն մոգուց զորս առաքեաց Յազկերտ ուսուցանել Հայոց զօրէնս կրակապաշտութեան ։

Իբրև հասին 'ի Շաղկոտն գաւառ, կամեցան մոգպետին կործանել զեկեղեցի գեղջն. յայնժամ սրբն Ղևոնդ երէց ուխտիւն հանդերձ ընդ առաջ ելեալ՝ փախեաց զմոգպետն պաշտօնէիւք իւրովք ։ Ի սփռել համբաւոյ գալստեան մոգուցն ժողովեցան ամենայն բազմութիւնք Հայոց սպառազինելոց, ընդ որս եհաս և Յովսէփ կաթողիկոս և այլ եպիսկոպոսունք՝ պատրաստեալք դնել զանձինս 'ի մահ վասն հաւատոյ և եկեղեցւոյ սրբոյ ։ Յայս հանդէս բազմութեան եպիսկոպոսաց մատեաւ Վարդան սպարապետ, և անկեալ յոտս նոցա արտասուօք խնդրէր զթողութիւն մեղաց առ երեսս ուրացութեանն, և ծանուցանէր նոցա զներքին կամս իւր և զնախարարացն, որով խնդրէին զփրկութիւն աշխարհիս Հայոց ։

Բայց Վասակ մարզպան, որ 'ի սուտ ուրացեալ էր զՔրիստոս, նենգամիտ խորհրդով և պատրողական բանիւք հանդարտեցոյց զեպիսկոպոսունս և զժողովուրդն՝ լռել առ ժամն, և ապա մեղմով յուղարկել յետս զմոգսն ։ Ըստ խորհուրդ մարզպանին, և զաւակս ինչ խաղալիկ ժողովրդեան՝ պատրուակ իւրեանց առեալ մոգուցն՝ սկսան ծառայել զմոխրապաշտութի՟. ընդ որ ոչ հանդուրժեալ Վարդանայ սպարապետի՝ էառ զընտանիս իւր և նոքօք հանդերձ մեկնեցաւ յաշխարհէն Հայոց. զոր լուեալ նախարարաց փութացան առաքել հրեշտակս զկնի նորա, և բազում պաղատանօք դարձուցին յետս, խոստանալով զինել միաբան ընդդէմ անհաւատից, և հաստատուն պահել զքրիստոնէութիւն յաշխարհիս Հայոց ։

Ապա ժողով արարեալ 'ի Շահապիվան բազմութի՟ եպիսկոպոսաց՝ ուխտ եդին վասն փառացն Աստուծոյ և 'ի պարծանս եկեղեցւոյ սրբոյ մարտնչել մահու չափ ընդդէմ անհաւատից, և երդուան յաւետարանն սուրբ ։ Յետ այնորիկ Հայք ամենայն խրախուսեալ անուանիտեսան՝ զինեցին 'ի վերայ Պարսից, և կործանեալ զկրակատունս վանեցին զմոգսն յաշխարհէն Հայոց. և սպանեալ զուրացողսն՝ նորոգեցին զաւերեալ եկեղեցիս ։

Եւ զի դժուարին էր յոյժ գործն և կարօտ ձեռնտուութեան, խնդրեցին զօգնութիւն՝ ի փոքրն Թէոդոսէ, որպէս և ՝ի Մարկիանոսէ յաջորդէ նորա. այլ ոչ ընկալան ՝ի նոցանէ նպաստ ինչ, զի զբաղեալ էին և նոքա ՝ի կռիւս խռովութեան եւտիքականաց։ Վասն որոյ ապաւինեալ Հայոց ՝ի խնամս ամենազօրն Աստուծոյ, և յերիս բաժանեալ զգունդն իւրեանց զինեցան ընդդէմ Պարսից. և ՝ի խորտակել արիաբար զզօրութիւնս նց̄, ուրացողն Վասակ մարզպան կամելով խափանել զքաջութիւնս ուխտապահ նախարարաց, միաբանեցաւ ընդ Պարսս և սկսաւ վերստին աւերել զաշխարհս Հայոց. քանդէր զեկեղեցիս և զբազում աւանս, և գերեալ զորդիս նախարարաց տանէր առ Յազկերտ արքայ։ Այն իբրև լուան միաբանեալքն ը̄ Վարդանայ սպարապետի, դիմեցին յաշխարհն Սիւնեաց ՝ի կալուածս ուրացողին Վասակայ, և աւերեալ քանդեցին զկրակատունս և նուաճեցին զընդդիմադարձս։

Սակայն տեսեալ զանհաւատարմութիւն ուխտանենգ արանց, խորհուրդ արարին և դեսպան առաքեցին առ Յազկերտ զպարսիկ ոմն, յայտ առնել եթէ պատրաստ են հնազանդել նմա, եթէ՝ ոչ ստիպեսցէ զնոսա դառնալ յօրէնս կրակապաշտութեան։ Այն իբրև լուաւ Թագաւորն, նենգամիտ խորհրդով յանձն առ զպայմանն. և եհան հրովարտակ պաշտել համարձակ զօրէնս քրիստոնէութեան. և ապա գումարեալ զօր բազում, առաքեաց զՄիհրներսեհ հազարապետ իւր յաւարի առնուլ զաշխարհս Հայոց։ Եկեալ Միհրներսեհի ՝ի փայտակարան գաւառ, խորհեցաւ ՝ի ձեռն ուրացողին Վասակայ և երկուց սուտ երիցանց քակտել զմիաբանութիւն Հայոց. և ապա թողեալ զբանակն ՝ի ձեռս սպարապետին Պարսից և Վասակայ, դարձաւ ինքն առ Յազկերտ։

Բայց ուխտապահ նախարարք Հայոց՝ կամելով գուշակեալ զխորհուրդ չարութե̄ Թագաւորին և զՄիհրներսեհի, ոչ բաժանեցան ՝ի միաբանութենէ իւրեանց. այլ ժամանակ տեսեալ Վարդանայ սպարապետի զչարութիւն Վասակայ և զահեղ պատրաստութիւն Պարսից, կոչեաց առ ինքն զյօժարամիտս ՝ի նահատակութիւն առ սէր Քրիստոսի։ Յայնժամ ժողովեցան յԱշտիշատ քաղաք վաթսուն և վեց հազար անձնանուէր նահատակք . ընդ որս և սուրբն Յովսէփ, Սահակ եպիսկոպոս Ռշտունեաց, Ղևոնդ երէց, և այլ քահանայք և աշխարհականք :

Իբրև եհաս բանակն Պարսից 'ի դաշտն Աւարայր գեղջ, հասին անդր և Վարդանանք, և բանակեցան առ Տղմուտ գետով . ուր քաջն Վարդան զօրացեալ աստուածային շնորհօք, որպէս և սուրբն Ղևոնդ երէց՝ խօսեցան 'ի սուրբ գրոց յորդորական բանս քաջալերութեան միաբանելոցն 'ի նահատակութիւն . որք և 'ի գիշերին յայնմիկ զինեալ խորհրդով առաքինութեան և սրբոյ հաղորդութեան արեանն և մարմնոյն Քրիստոսի : Ապա յաւուրն երկրորդի ընդ առաւօտն, որ օր եօթներորդ էր տօնի Հոգեգալստեան՝ յամին 451 յերկրորդ աւուր ամսեանն յունիսի, անվեհեր արիութեամբ անցեալ ընդ գետն Տղմուտ՝ յարձակեցան 'ի վերայ բանակի Պարսից, յօժարական յանձն առեալ զմահ վասն սիրոյն Քրիստոսի և յաղթութիւն եկեղեցւոյ սրբոյ : Եւ իբրև արիական քաջութեամբ սատանեցուցանէին զզօրս թշնամեաց, ծածուկ խորհրդակիցքն Վասակայ ուրացողի որք կային 'ի բանակի Հայոց՝ սկսան փախչել և շփոթս յուզել, որով և պատճառք եղեն վտանգելոյ բանակին : Ընդ երանելին Վարդան սպարապետ բուռն զօրութեամբ քաջայաղթ հանդիսացեալ՝ անկաւ 'ի նմին մարտի, և ընդ նմա ինն նախարարք և երկերիւր ութսուն և վեց զօրականք որք մեծաշուք փառօք կատարեցան : Եւ 'ի ցրուիլ բանակին՝ զօրքն Հայոց փախուցեալ ամրացան 'ի քաղաքս իւրեանց, բայց Պարսիկք զհետ մտեալ փախստէից սպանին այլ ևս իբր եօթնհարիւր և քառասուն ոգիս . որովք թիւ ամենայն նահատակելոցն եղև հազար երեսուն և վեց :

Զկնի այսր մարտի և նահատակութեան սրբոյ Վարդանանց՝ տեսեալ սպարապետին Պարսից թէ չկարէ հանել 'ի գլուխ զկամս թագաւորին, գրեաց առ նա զեղեալն ամենայն, և զմեղս իրացն արկ 'ի վերայ ուրացեալն Վասակայ . ընդ որ տրտմեալ թագաւորին՝ յղեաց պատգամ՝ առ սպարապետն խնամ տանել խաղաղութե ազգին Հայոց, խոստանալով թողուլ զնոսա յօրէնս քրիստոնէութեան . և կարգեաց նոցա զայլ մարզպան պարսիկ Ատրորմիզդ անուն, որ գուն գործեաց նենգութեամբ ըմբռնել զՍահակ եպիսկոպոս Ռշտունեաց, զՄուշէ երէց, և զքահանայսն Սամուէլ և զԱբրահամ. և ընդ սոսա ուղեկից արարեալ զսուրբն Յովսէփ, զՂևոնդ երէց, զԱրշէն քահանայ և զսարկաւագն Քաջաջ, որպէս և զԽորէն և զԱբրահամ զաշակերտս նոցին, զորս յառաջագոյն կալեալ էր ուրացողն Վասակայ, առաքեաց զամենեսին զնոսա 'ի Պարս, ուր եղան 'ի բանտ մահապարտաց։

Ապա նենգաւորն յորդորեաց և զերևելի նախարարս Հայոց գնալ առ Յազկերտ, և զերդումն և զխոստմունս թագաւորին 'ի մէջ ածեալ ապահովս առնէր զնոսա։ Յանձն առեալ նախարարաց անձկալութեամբ բարեաց գնացին 'ի դուռն արքունի. ուր Միհրներսեհ առ երեսս պատուեալ զնոսա, ապա ետ արկանել 'ի բանտ ընդ երանելի քահանայսն, և կային նոքա անդ զամս երկուս։ Եւ 'ի գնալ Յազկերտի 'ի պատերազմ ընդդէմ Հոնաց, առաքեաց զամենայն կալեալսն տանել 'ի Նիւշապուհ քաղաք. յանձն արարեալ մոգպետի տեղւոյն դարձուցանել զնոսա 'ի կռապաշտութիւն։ Ջանահնար եղև մոգպետն կատարել զկամս թագաւորին. բայց տեսեալ զսքանչելիսն Աստուծոյ 'ի վերայ երանելի կալելոցն, հաւատաց և ինքն 'ի Քրիստոս. և ապա արժանի եղև տեսլեան փառաց սրբոց Վարդանանց, որք ցնծային ընդ հաւատալ նորա 'ի Քրիստոս։

Օ այնու ժամանակաւ՝ յամին 454, իբրև պարտեցաւ Յազկերտ 'ի Հոնաց, դառնացեալ հոգւով 'ի յորդորելոյ մոգուցն ետ սպանանել զերանելի քահանայսն զՍամուէլ և զԱբրահամ որք էին առ նմա 'ի բանակին, առաքեաց պատուէր և առ Դենշապուհ սպանանել և զայլսն։ Իսկ նորա երթեալ 'ի Նիւշապուհ քաղաք՝ էառ անտի զերիցունս, և տարեալ 'ի հեռաւոր ինչ տեղի, սպան զնոսա անդ յամին 454, յ31 աւուր ամսեանն յուլիսի. որք և յանուն Ղևոնդեայ երիցու արիասիրտ և առաքելաջան վաստակաւորի՝ կոչեցան Ղևոնդեանք։ Ապա յամին երկրորդի զերծան նախարարքն յետ չորեքամեայ վշտաց և տառապանաց բանտարկութեանն, որում տարան գոհութեամբ վասն 'ի Քրիստոս հաւատոյն։

ԳԼՈՒԽ Ժ.

Հրովարտակ Զենոնի կայսեր ։

Ի ՅԱՃԱԽԵԼ շփոթից և 'ի սաստկանալ աղմկայոյզ խռովութեան եւտիքականաց, իբրև ոչ կարացին խաղաղել զնոսա Մարկիանոս կայսր և երկոքին յաջորդք նորա անուանեալքն Լևոն, Զենոն կայսր՝ յամին 474 համարեցաւ եթէ և ուղղափառք և հերետիկոսք մեղապարտք իցեն և ստգտանելիք, վասն որոյ եդ 'ի մտի արքունի հրովարտակաւ, զոր եհան յամին 482, խաղաղել և միաբանել զամենեսին ։ Յայսմ համբաւաւոր հրովարտակի 'ի յորդորելն զամենայն հաւատացեալս միանալ անդրէն 'ի գոգ եկեղեցւոյ որոյ, վարդապետութիւն հաւատոյ այնպիսի օրինակաւ կայր գրոշմեալ, զի 'ի վերին երեսս բովանդակն թուէր ուղղափառական. բայց չերևէր 'ի նմա յիշատակութիւն ժողովոյն Քաղկեդոնի՝ 'ի շնորհս եւտիքականաց որք ոչ ընդունէին զայն սինհոդոս. նա և ոչ բառքս "Երկու բնութիւն,, յիշատակեալ էին 'ի նմա ։

Քահանայապետն Հռոմայ Փելիքս Գ., անպատշաճ համարելով զի աշխարհական ոք իշխան համարձակեսցի սեպհականել զեկեղեցական իրաւունս, և մխել 'ի դատս հաւատոյ, ընդ բանիւ արար զամենեսին որք միանգամ ընդունիցին զայն հրովարտակ ։ Ընդ որ ցասուցեալ Զենոնի, առ 'ի ձեռին զարքայական իշխանութիւն 'ի սանձել զհպատակս իւր ընդունել զհրովարտակն ։ Եւ թէպէտ չտայր ումեք թոյլ յայտնապէս դատապարտել և հերքել զուղղափառ վարդապետութիւնս զսահմանեալս 'ի ժողովոյն Քաղկեդոնի, սակայն ոչ միայն անպատուհաս թողոյր զհակառակողսն սահմանաց այնր ժողովոյ, այլ և պաշտպան կայր և ոխերիմ թշնամեաց նորա. որով կասկածելի եղև հրովարտակ նորա՝ որ վասն միաբանութեան հերձուածոյ. և յորժամ առ կայսերութեամբ Յուստինոսի Ա., հաստատեցաւ խաղաղութիւն ընդ արևելեան և արևմտեան եպիսկոպոսս, 'ի խնդրոյ քահանայապետին Որմզդայ ոչ ևս այլ յիշէին զանուն Զենոնի որպէս զայլոց ուղղափառ կայսերաց յաղօթս հասարակաց ։

Կայսրն Յուստինոս աննենգ կուսակից ճշմարիտ եկեղեցւոյ, տարագրեալ զեւտիքականն յեպիսկոպոսական աթոռոց զորս գրաւեալ էին, փոխանն նոցա կարգեաց զուղղափառս, և զհետ երթեալ փութոյ քահանայապետացն Հռովմայ 'ի ջնջել զհերձուածն, խափանեաց զհրովարտակն Զենոնի, որ պատճառք եղև երկպառակութեան և խռովութեան 'ի մէջ եկեղեցեաց · սակայն ոչ այնչափ երկարատև եղև խաղաղութիւնս այս, զի արևելեան եկեղեցին ծածկեալ ունէր 'ի ծոց իւր զսերմանս խռովութեան, որք յետ ոչ բազում ժամանակաց արմատս ընձիւղեալ՝ անդրէն մարտս յարուցին, որպէս տեսցի յընթացս համառօտ պատմութեանս ։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Վիճակ եկեղեցւոյն Հռովմայ ։ — Կործանումն հռովմէական պետութեան ։

Ի ՎԵՐՈՅ անցից նախընթաց դարուց տեսաք յայտնապէս, զի յամենայն հակառակութիւնս և 'ի խնդիրս հաւատոց ապաստեալ մնային խորհրդոյ քահանայապետացն Հռովմայ, որք և խնամ տանէին դարման մատուցանել և վախճան տալ խնդրոցն, կամ 'ի ձեռն միջնորդի՝ և կամ պարզ և յայտնի սահմանադրութեամբք իւրեանց · որովք յընդհանուր եկեղեցւոյ համարեալ էին իբր պատգամախօսք · զի աթոռ սրբոյն Պետրոսի ունէր զնախագահութիւն 'ի վերայ այլոց պատրիարքական աթոռոց ։ Քահանայապետք որք կային յայսմ դարու՝ զիրաւունս նախագահութեան իւրեանց ոչ միայն անվթար պահեցին, այլ և խոհական համարձակութեամբ վարեցին զայն 'ի գործ ։

Սուրբն Իննոկենտիոս Ա. ալբանացի՝ զամս հնգետասան · սուրբն Զոսիմոս յոյն՝ զամս իբր երկուս · սուրբն Բոնիփակիոս Ա. հռովմայեցի՝ զամս իբր չորս · սուրբն Կեղեստինոս Ա. հռովմայեցի՝ զամս իբր տասն · սուրբն Սիքստոս Գ. հռովմայեցի՝ զամս իբր ութ ։ Սոքա ամենեքին կալան զաթոռ քահանայապետութեան յառաջին քառասուն ամս հինգերորդ դարու, և թէպէտ մեծարց ցուցան աստուածային նախանձու, ուղիղ վարդապետութեամբ և սրբակրօն վարուք, բայց առաւելեալ զատու քան զոսա սուրբն Լեւոն մականուանեալն Մեծ, որ էր ծննդեամբ Տոսկանացի. և յորժամ սարկաւագ եւեթ էր առ Սիքստոսի երրորդի, առաքեցաւ դեսպանութեամբ ՚ի Գաղղիա՝ հաշտեցուցանել զԱյետիոս և զԱլբինոս զօրագլուխն Հռովմայեցւոց, և մինչ պարապէր ՚ի գլուխ հանել զայն գործ, յամի տեառն 440 վախճանեցաւ Սիքստոս երրորդ, և ՚ի տեղի նորա ընտրեցաւ նա ինքն Լեւոն ՚ի քահանայապետութիւն ։ Մանիքեցիք, պեղագեանք, նեստորականք և եւտիքականք զգաղտնի հարան ՚ի նմանէ՝ իբր յախերիմ թշնամւոյ, որ ջաղխիչ եկաց մոլորութեանց նոցա ՚ի բազում ժողովս ։ Ատտիղաս թագաւոր Գոթաց և Գենսերիկոս արքայ Վանդալաց՝ յետ արշաւանացն յԻտալիա և դեռ էին ՚ի մտի յագեցուցանել զցասումն կատաղութեան իւրեանց ՚ի Հռովմ քաղաք. բայց սուրբն Լեւոն հանդարտեցոյց զգազանութիւն բարբարոսացն այնոցիկ ։ Վախճանեցաւ յամին 461 յետ քսան ամաց և մետասան ամսոց իմաստութեամբ և արիութեամբ վարելոյ զիշխանութիւն հովուապետութեանն ։ Մականունս Մեծ՝ տուեալ նմա ՚ի ժամանակակից մատենագրաց սակս պանծալի առանձնաշնորհ ձրից և առաքինութեանց նորա, պահի ցարդ արժանայարգ պատուով ։

Յետ որոյ Լեւոնի ընտրեցաւ ՚ի քահանայապետութիւն սուրբն Հիղարիոս սարկաւագ սարդենիացի, այր իմաստուն և սրբակեաց, որ կալաւ զաթոռ հայրապետութեան զամս իբր վեց. զկնի նորա սուրբն Սիմպլիկիոս տիբուրացի ամբարձեալ ՚ի քահանայապետութիւն յամին 468, և ցուցաւ հանճարեղ և խոհական որպէս հանգամանք ժամանակին պահանջէին ։

Յաւուրս սորին քահանայապետի յետին սասանումն վեր ՚ի վայր տապալեաց զարեւմտեան կայսրութիւն, որ արդէն իսկ յերերի կայր ։ Ոդոակր թագաւոր Հերուլեանց յամի տեառն 476 բուռն և ահարկու բռնակալ իբրև նոր զոմն Աննիբաղ եմուտ յԻտալիա. և զի չէին անդ նախնի Հռովմայեցիք, կալաւ զաթոռ իշխանութեան վերջին կայսերն Հռոմուլոսի Օգոստուղեայ զոր եթող կենդանի. սակայն առամբք Հռովմայ՝ ետ զվերջին հարուածն 'ի կործանումն կայսերութեան. և զանուն նորա անհետ արար յարեւմուտս, յինքն ընկալեալ զպատիւ Թագաւորի Իտալիոյ՝ զոր պանծալի համարէր քան զանուն կայսերութեան ։

Զայնու ժամանակաւ սուրբն Սիմպլիկիոս քահանայապետ՝ յետ վարելոյ զիշխանութիւն հովուապետական զամս հնգետասան, վախճանեաց զվշտակիր կեանսըն յամին 483, ականատես եղեալ թշուառ կատարածի մարդկային կարծեցեալ իշխանութեան ։ Զկնի մահուան Սիմպլիկիոսի՝ կալաւ զաթոռ քահանայապետութեան սուրբն Փելիքս Գ. հռովմայեցի զամս իբր ինն. և յետ նորա սուրբն Գելասիոս Ա. հռովմայեցի զամս իբր հինգ ։ Իսկ ապա սուրբն Անաստաս Բ. հռովմայեցի զամս երկու ։ Յետոյ սուրբն Սիմմաքոս սարդենիացի՝ զամս իբր վեշտասան ։ Սոքա ամենեքեան նստան յաթոռ սրբոյն Պետրոսի մինչև ցվախճան հինգերորդի դարուս ։

Լաւրենտիոս ոմն անուն ընդդէմ եկաց ընտրութեան սրբոյն Սիմմաքոսի, այլ հաստատեցին զնա յիշխանութեանն ժողովն գումարեալ 'ի Հռովմ, և արքայն Ոստրոգոթաց կամ Գոթաց որ թագաւորէր յայնժամ յԻտալիա ։ Զնոյն խռովութիւն և հերձուած յարոյց կանխաւ Եւլալիոս ոմն 'ի սկիզբն հինգերորդի դարուս առ ժամանակօք ընտրութեն Բոնիփակիոսի Ա. յամին 418, նենգութեամբ կալեալ զաթոռն, բայց կայսրն Ոնորիոս մերժեաց զնա յիշխանութենէն ։

Գելասիոս քահանայապետ խնամ կալեալ ողջամիտ վարդապետութեան հաւատոյ՝ ծանոյց հաւատացելոց եթէ յորոց աղբերաց պարտ իցէ հաւաքել զայն ։ Քանզի գումարեալ ժողով 'ի Հռովմ յամին 494, սահմանեաց կանոն և ցուցակ Աստուածաշունչ մատենից, զոր ցարդ պինդ ունի եկեղեցի, և հերքէ զմերժեալսն 'ի նմանէ ։ Յետ այնորիկ արար և զայլ երկու ցուցակս. յորոց 'ի միումն բովանդակին մատեանք սրբոց հարց ընկալեալք յեկեղեցւոյ, իսկ 'ի միւսումն երկբայելիք և անյայտք, յորս գոլով յիշատակէ զբազում եկեղեցական մատենագիրս, որպէս զսուրբն Կիպրիանոս, զսուրբն Աթանաս, զսուրբն Գրիգոր նազիանզացի, զսուրբն Կիւրեղ Աղեքսանդրիոյ, զսուրբն Յոհան Ոսկեբերան, զսուրբն

Ամբրոսիոս, զսուրբն Օգոստինոս, զսուրբն Հիլարիոս, զսուրբն Պրոսպեր, զսուրբն Հերոնիմոս և զայլս ։ Յ կոնդակէս աստացին ունիմք 'ի յետնոց՝ եթէ չիցէ Գելասիանի, սակայն հնաւանդ վկայութիւն հաստատեաց որ սրբոյ քահանայապետիս ընծայէ զայն՝ հաւաստի է և ամենայն հաւատարմութեան արժանի ։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Վիճակ եկեղեցւոյն Գաղղիոյ ։ — Կղովիս արքայ. — Մկրտութիւն, թագաւորութիւն, և մահ նորա ։ — Սրբուհին Ժընուիէւ ։

ՅԱՄՍ իշխանութեան սրբոյն Գելասիոսի հռչակեալ պայծառացուցին դէպք ինչ սքանչելի պատահեալ 'ի Գաղղիա. զի Կղովիս արքայ նոցա՝ ամուսնացեալ գոլով ընդ Կղոտիլդեայ դստեր Կիլպերիկոսի թագաւորին Բուրկոյնի, որ քրիստոնեայ էր հաւատով, և զարդարեալ ամենայն առաքինութեամբք աստուածպաշտութեանն զոր դաւանէր, դարձաւ յորդորանօք նորա 'ի քրիստոնէութիւն ։

Ընդ ժամանակս ը̃ այնոսիկ Գերմանացիք խուռն բազմութեամբ արշաւեցին 'ի սահմանս Գաղղիոյ ։ Կղովիս արքայ 'ի դիմի հարաւ նոցա 'ի Տոլբիակ աւանի, առ երի Կողոնիոյ. և 'ի սաստկանալ մարտին իբրև տեսանէր զզօրս իւր տկարացեալս և մերձ 'ի պարտութիւն, ամբարձ զձեռան յերկինս, և ուղղեալ զաղերսն առ Աստուածն քրիստոնէից ասէ. « Աստուած Կղոտիլդեայ, եթէ շնորհեսցես ինձ զյաղթութիւն, խոստանամ ընդունել զքրիստոնեական հաւատս, և զուն գործեմ ծաւալել զայն և յիմում ժողովրդեան »։ Եւ մինչև կատարեալ զբանսն՝ անդէն առ նմին արիացեալ էր զինուորաց իւրոց՝ 'ի փախուստ դարձուցին զթշնամիս ։

Կղովիս արքայ հաւատարիմ կացեալ 'ի խոստման իւրում՝ կոչեաց առ ինքն զսուրբն Հռեմիգիոս արքեպիսկոպոսն Ռեմս քաղաքի՝ զայրն մեծարոյ բարեպաշտութեամբ և իմաստութեամբ. և յետ վարժելոյ 'ի նմանէ 'ի հրահանգս հաւատոյ և բարի վարուց, ընկալաւ 'ի սուրբ եպիսկոպոսէն զմկրտութիւն յաւուր ծննդեան /

Քրիստոսի յամին 496 : Սոյնպէս և Գաղղիացիք յորդորեալք յօրինակէ անտի թագաւորին՝ ընկալան զհաւատս Քրիստոսի, որով և քրիստոնէական կրօնք պայծառացան յոյժ 'ի Գաղղիա. և սուրբն Ռեմիգիոս խնամ կալաւ հաստատել զարքայն 'ի վերայ բարեպաշտութեան և յանթերի լրումն պարտուց : Ի նամակի միում զոր գրեաց առ նա, “Ընտրեա, ասէ, քեզ խորհրդակից զայրս իմաստունս և խոհականս : Պատուեա զպաշտօնեայս Աստուծոյ և ունկնդիր լեր խրատուց նոցա, խնամակալ լեր ժողովրդեան քում : Մխիթարեա զվշտակիրս, և օգնեա որբոց և այրեաց : Ջան գործեսջիր սիրելի և պատկառելի զանձն ընծայեցուցանել : Արդարադատ լեր առ ամենեսին, և թէ հնար ինչ իցէ՝ մի՛ որ մեկնեսցի 'ի քէն ակնկոր „ : Այլ ոչ յանթերի լրումն խրատուցս ջանացաւ թագաւորն. զի գրգռեալ 'ի գահասիրութենէ՝ սպան զազգակից իշխանս իւր և նսեմացոյց այնու զնշոյլ պայծառութեան քրիստոնէական գովելի առաքինութեանցն զորս ստացեալ ունէր. սակայն եռանդու բարեպաշտութեամբն նպաստամատոյց գտաւ եկեղեցւոյ և օգտի հաւատացելոց : Վախճանեցաւ յամի տեառն 511, յերեսներորդ ամի թագաւորութեան իւրոյ, 'ի հասակի քառասուն և հինգ ամաց : Իսկ զկնի մահու նորա չորեքին որդիքն 'ի չորս մասունս բաժանեալ զտէրութիւնն՝ ժառանգեցին զթագաւորութիւն նորա, ոչ ինչ փոյթ յանձին կալեալ նմանող լինել գնացից հօրն իւրեանց :

Քլովիս թաղեցաւ 'ի Փարէզ քաղաքի յեկեղեցւոջ սրբոց առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, զոր ինքն սկսեալ էր տալ կանգնել ըստ խնդրոյ և թախանձանաց սրբուհւոյն Ժընուիէւի : Եւ քանզի երանելիս այս կուսանեայ սքանչելագործ վարուքն պայծառացոյց զթագաւորութիւն Քլովեայ, համառօտեսցուք աստէն զպատմութիւն վարուց նորա : Ծնաւ Ժընուիէւ 'ի Նանթերրա աւանի մօտ 'ի Փարէզ քաղաք. և մինչդեռ ութամեայ էր հասակաւ, սուրբն Գերմանոս եպիսկոպոս Օգերոյ տեսեալ զնա երբեմն 'ի ժողովրդեան և լուեալ զպատասխանիս բանից նորա, ծանեաւ քաջ եթէ շնորհք աստուածայինք են 'ի նմա. և յուխտել նորա զկուսութիւն, ինքն հանդիսադիր եղև ուխտադրութեանն : Ընդ աճել հասակին զարգացաւ 'ի Ժընուիէւ և առաքինութիւք. փորձեցաւ ազգի ազգի վշտօք հալածմանց և հիւանդութեան. բայց հեզութեամբն իւրով և համբերութեամբն և սքանչելեօք զոր Աստուած գործէր 'ի նմա, հանդարտեցոյց զթշնամիսն :

Ընդ այն ժամանակս՝ յամին 451, Ատտիղաս թագաւոր Հոնաց հզօր և խուժն բանակաւ եմուտ 'ի Գաղղիա, և յահէ նորա երկուցեալ բնակչաց քաղաքին Փարիզու կամէին փախչել անտի. բայց սրբուհին Ժընուիէւ արգել զնոսա 'ի խորհրդոյն, քանզի չկարէին լինել, ասէր, բարբարոսքն այնոքիկ վնասել քաղաքին. որպէս և եղև իսկ. և յայնմ հետէ և առ յաւէտ մեծացաւ յոյժ անուն նորա մինչև 'ի հեռաւոր աշխարհս, մինչև սրբոյն Սիմէոնի Սիւնակեցի ևս հարցանել զնմանէ որոց միանգամ գնային անդր 'ի Գաղղիա : Վախճանեցաւ սրբուհիս յամի տն իբր 512, լի աւուրբք և արդեամբք, և թաղեցաւ 'ի տաճար սրբոց առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, զոր սկսաւ շինել Կղովիս թագաւոր, և արքայական մեծագործութեամբ աւարտեաց Կղոթիլդէ թագուհի : Սակայն յետ ժամանակաց կոչեցաւ եկեղեցին յանուն սրբուհւոյս, որպէս և ցարդ իսկ անուանի, ուր և կան նշխարք ոսկերաց նորա, և պատուեն զնա հաւատացեալք իբրև զպաշտպան փարէզ քաղաքի :

ԳԼՈՒԽ ԺԳ.

Վիճակ քրիստոնէութեան յայլ կողմանս աշխարհի :

Ի ԺԱՄԱՆԱԿԻՆ յորում ծաւալէր 'ի Գաղղիա լոյս աստուածպաշտութե̃ հաւատոյն Քրիստոսի, տագնապէին արևելք 'ի հալածանս սաստիկս վասն քրիստոնէութեան : Ի Պարսս յետ նախկին հալածանացն՝ որ եղև յաւուրս Շապհոյ երկայնակեցի 'ի չորրորդ դարու զոր նշանակեցաք անդանօր, վերստին արծարծեցաւ 'ի հինգերորդ դարուս առ թագաւորութեամբ Վռամայ որդւոյ Յազկերտի առաջնոյ : Սուրբն Աբդաս եպիսկոպոս Շօշ քաղաքի՝ յամին 419, վառեալ նախանձու աստուածպաշտութեան՝ կործանեալ էր զատրուշան մի մոգուց. և 'ի տխրել թագաւորին կանգնել զայն վերըսալին, չէառ յանձն. ընդ որ ծանրասրտեալ լեալ նորա՝ ետ քանդել զամենայն եկեղեցիս քրիստոնէից, և ձեռն արկ չարչարել և սպանանել զհաւատացեալսն, եդեալ ՚ի մտի ջնջել և անհետ առնել ՚ի սպառ զանուն քրիստոնէութեան ՚ի սահմանաց անտի տէրութեան իւրոյ, և նորահնար տանջանարանօք զուն գործեաց սպառել զհաւատացեալսն ՚ի Քրիստոս. զոր գեղեցիկ նկարագրէ սրբն Եփրեմ իբր ժամանակակից՝ ՚ի ճառն Քրեւելեան վկայից. “Զինչ մահ անհնարին, զոր ոչ ածին անօրէն դատաւորքն ՚ի վերայ մեծազօր վկայիցն. կամ զո՞ր տանջանս դառնութեան թողին թշնամիքն եկեղեցւոյ, որ ոչ այնու զճշմարիտ ծառայսն Քրիստոսի կոտեցին. կամ զո՞ր չարչարանս և զլլկանս թողին թշնամիք ժողովրդեանն Աստուծոյ, որ ոչ այնու զանդամակազմն և զպատուերազգեացն չարչարեցին„: Այս թուելով զազգս տանջանացն ասէ. “Զկէսս ՚ի քաղց և ՚ի ծարաւ ձգնեցուցանէին... զկէսս գլխ ՚ի վայր կախէին.. ակրաքանց առնէին և սպանանէին. զայլս քակելով զօդս թիկանցն.. լուծանէին և սպանանէին, և զայլս ոմանս անհնարին գելոյզք խորտակէին զկողս և զոսկերս և սպանանէին: Զոմանս ՚ի ցուրտ և ՚ի պարզ ընկենուին, մինչև սառուցեալ մարմինքն և մեռանէին. և զկնոց կորզօք առ սակաւ սակաւ քարշէին զմարմինսն և սպանանէին: Զկէսս չարաչար մորթէին... և զկէսս այրէին. զոմանս գայլինոք ծակէին զպարանոցս և սպանանէին ... և զկէսս քարամբք ծեծէին անողորմ և սպանանէին: Թող զայլ կտտանսն որով կոտէին. զի զունչսն հատանէին, զականջսն խլէին, զմատունսն կտրէին, զաչսն փորէին, զբարձս և զծունկս ուռամբք խորտակէին...կնոց քուրձ ճուէին մոխրով և թողէին ՚ի ներքս զգլուխն„: Զայսոսիկ որպէս և զայլ դառն տանջանս վկայիցն Քրիստոսի յիշատակելով սրբոյն Եփրեմի՝ յաւելու ասա. “Այս են չարչարանք սակաւ ժամուց և թուով աւուրց. որ ընկալան զմխիթարութիւն խոստմանցն պատրաստեալ յաւուրն, և առ ՚ի սփոփութի· ժամանակեայ վշտաց: Այս է ժամանակեայ տրտմութիւնն, զոր մնացոյց անվախճան ուրախութիւնն... զի զօրութեամբ հեռաւոր խոստմանցն յաղթեցին մերձաւոր տանջանացն„:

Տեւեաց հալածումն մինչեւ ցաւուրս Յազկերտի երկրորդի՝ ցամ՟ տեառն 460, առ որով նահատակեցան Վարդանանք եւ Ղեւոնդեանք զորոց գրեցաք կանխաւ։ Եւ պատճառք այսպիսի վայրագ կատաղութեան Պարսից այն էր, զի կարծէին՝ եթէ քրիստոնեայք սփռեալք 'ի զանազան գաւառս Պարսկաստանի յորդոր լիցին ժողովրդեան միաբանել ընդ իշխանութեամբ Հռոմայեցւոց։

Ի հինգերորդի դարու յարեաւ եւ յԱփրիկէ հալածումն սաստիկ 'ի վերայ ուղղափառաց. զի Վանդալք հեռեւողք կարծեացն Արիոսի, որք ունէին ը̅ իշխանութեամբ զԱփրիկոս եւ զայլ գաւառս աշխարհին, սկսան հալածել զուղղափառս. յորոց բազումք ականաւոր հանդիսացան նախանձու ողջամիտ վարդապետութեան, եւ ընկալան զպանծալի պսակ վկայական մահուան։ Գենսերիկոս արքայ բարբարոսացն այնոցիկ դառն տանջանօք տառապեցոյց զուղղափառ քրիստոնեայս ընդ ամս իբր երեսուն եւ եօթն։ Եւ զի Պետրոնիոս Մաքսիմոս ոխացեալ ընդ Վաղենտինիանոսի արքային Հռոմայ սպան զնա եւ կալաւ զաթոռ իշխանութեանն, Եւդոքսիա կին Վաղենտինիանոսի կոչեաց գաղտ զԳենսերիկոս գալ 'ի Հռոմ եւ լուծանել զվրէժ մահուան առն իւրոյ. եւ նա յաղթական փառօք եմուտ 'ի Հռոմ՝ կատարել զկամս չարու՟ե իւրոյ. բայց քահանայապետն Լեոն Ա., արգել զնորին զազանութ՟ի, եւ աղաչեաց զնա զի շատացեալ աւարառու՟ք եւեթ քաղաքին՝ խնայեսցէ 'ի բնակիչսն եւ 'ի քաղաք ն՟յ։ Աւար քաղաքին տեւեաց զաւուրս չորեքտասան. եւ ընդ անբաւ ձոխութ՟ին էին եւ նուիրական անօթք տաճարին Երուսաղեմի, զորս Տիտոս կայսր բերեալ էր անտի եւ այլ բազում վարեցան 'ի գերութիւն, ընդ որս էր եւ թագուհին Եւդոքսիա։ Գենսերիկոս թագաւոր զաւառեալքն յԻտալիա՝ ոչ ինչ թուլացաւ 'ի հալածելոյ զուղղափառս. եւ փակել զեկեղեցին Կարթագինոյ, եւ տարագիր արար անտի զքահանայս եւ զպաշտօնեայս. զի 'ի ժամանակին չէր որ անդ եպիսկոպոս։ Վնաս ծանունս եւ բազմադիմի հասոյց ուղղափառաց յայլ եւ այլ գաւառս, 'ի մեծամեծ եւ յանբերելի վիշտս արկ զՍպանիա եւ զԻտալիա. մանաւանդ զհարաւային երկիրսն՝ զՍիկիլիա, զՍարդենիա, զԿ-

պիւռոս և զԴաղմատիոս ։ Այլ յետ մահուանն Վաղենտինիանոսի զօրացեալ օգնականութեամբ Մաւրիտանացւոց կամ Մուղրեայ, ամի ամի 'ի գարնայնի խուռն բազմութեամբ արշաւէր մերթ յԻտալիա մերթ 'ի Սիկիլիա, և երբեմն ևս 'ի սահմանս արևելեան կայսերութեանն՝ յաւարի առնուլ զգանձս նոցա և գերել զընտիրս վայրացն ։

Քրիստոնէութի՟ն յառաջ ժամանակաւ մուտ գտեալ 'ի կղզիս Բրիտանիոյ, սկսեալ էր տարածել 'ի բազում տեղիս. սակայն ազգք Անգղիացւոց հեթանոսք և կռապաշտք, կալեալ զկղզիսն զայնոսիկ, հալածականս վարէին զորս միանգամ ոչ երկիր պագանէին կռոց. որով քրիստոնէութիւնն գրեթէ 'ի սպառ անհետացաւ անտի ։

ԳԼՈՒԽ ԺԳ·

Կաթողիկոսք և վիճակ եկեղեցւոյն Հայոց ։

ՅԵՐԿՈՏԱՍԱՆ *կաթողիկոսաց ազգիս որ 'ի հինգերորդի դարու կալան զաթոռ եպիսկոպոսապետութեան, հինգ 'ի նոցանէ համբաւեալ գտան յոյժ սրբութեամբ՝ և իմաստութեամբ ։*

Սուրբն Սահակ Պարթև, որ յաջորդեաց զԱսպուրակէս 'ի կաթողիկոսութեան յամին 390, *և ժամանակ ընդհատեալ իշխանութեան նորա ձգեցաւ իբր ընդ ամս երեսուն և ութ, խնամ կալաւ օգտի և պայծառութեան ազգին. և ջանիւքն իւրոց ձեռնտու գտեալ զսուրբն Մեսրովբ, խորհեցաւ յօրինել զնշանագիրս Հայոց ։ Նա 'ի շնորհացն Աստուծոյ ընկալեալ զայն ընդ ձեռն սրբոյն Մեսրովպայ, բացին վարժարանս յուսումն մանկանցն ։ Յետ այնորիկ սուրբն Սահակ ձեռն էարկ թարգմանել զաստուածաշունչ գիրս, և կատարեաց զայն օգնականութեամբ սրբոյն Մեսրովպայ և աշակերտաց իւրոց ։ Գումարեաց զերկուս ժողովս 'ի բարեկարգել զեկեղեցի Հայաստանեայց և մերժել զմոլորութիւն Նեստորի, որպէս և զգիրսն Թէոդորոսի Մոպսուեստացւոյ և Դիոդորի Տարսոնացւոյ ։ Այլ 'ի գժտել նախարարացն ընդ թագաւորին Հայոց Արտաշիսի, Վռամ արքայ Պարսից ընկէց 'ի պատուոյն ոչ միայն զթագաւորն այլ և զսուրբն*

Սահակ 'ի կաթողիկոսութենէ. և կարգեալ զայլ ոք 'ի տեղի սորին՝ արկ զնա 'ի բանտ. ուր յետ ամենայն ազգի ազգի վշտաց արձակեալ նր̃ վերստին 'ի Հայս, միանգամ ետ զանձն յաշխատութիւն յօգուտ ազգին, և 'ի խնդրել նախարարաց անբառնալ զնա վերստին 'ի կաթողիկոսութիւն՝ չետ յանձն, այլ մեկուսացեալ 'ի լեառն Բլուր կատարեաց զկեանսն ը̃ արդեամբք՝ յամին 440, ամաց աւելի քան զհարիւրոց, և թաղեցաւ յԱշտիշատ քաղաք։

Սուրմակ երէց՝ 'ի գաւառէ Բզնունեաց 'ի քաղաքէն Արծկեայ. զսա Վռամ արքայ կարգեաց փոխանակ Սահակայ, զոր մերժեալն էր 'ի կաթողիկոսութէ՝ յամին 428։ Սակայն Սուրմակ՝ անարժան վարելով կեանս, մերժեցաւ յիշխանաց ազգին. և յետ միոյ ամի իշխանութեան մեկնեցաւ 'ի գաւառ իւր 'ի Բզնունիս ապաշաւել զմեղսն, որով յանցեաւ յայրն Աստուծոյ 'ի սուրբն Սահակ՝ անիրաւ զրպարտութեամբ։

Բրքիշոյ ասորի նստաւ կաթողիկոս փոխանակ Սուրմակայ յամին 429։ Բայց չարաչար ևս քան զնա վարելով զիշխանութիւնն, մատնեալ 'ի կեղեքել զինչս և զկալուածս եպիսկոպոսաց, մերժեցաւ յաթոռոյ յետ երից ամաց իշխանութեանն։

Յետ նր̃ կացոյց Վռամ զՇմուէլ ասորի յամին 432, որ անարժան վարուք կալաւ զիշխանութիւն զամս եօթն և մեռաւ։ Սոքա երկոքին բռնակալք համարին աթոռոյ, զի ձեռամբ թագաւորին Պարսից նստան կաթողիկոս 'ի կենդանութեան սրբոյն Սահակայ. նմին իրի յաջորդ սրբոյն Սահակայ պարտ է համարել զսուրբն Մեսրոպ, որ և Մաշտոց, զայրն ականաւոր սրբութեամբ վարուց և իմաստութեամբ, աջակից սրբոյն Սահակայ յամենայն վաստակս ազգային հոգևոր օգտի. եկաց տեղապահ աթոռոյ կաթողիկոսութեան զամիս վեց. վախճանեցաւ 'ի Վաղարշապատ քաղաքի, և թաղեցաւ յամուրն Օշականի 'ի վկայարանս սրբոց յամին 441։

Սուրբն Յովսէփ՝ աշակերտ նոյն Սահակայ և Մեսրոպայ, 'ի Վայոց ձորոյ, որ 'ի յանձնելոյ սրբոյն Մեսրոպայ կալաւ զաթոռ կաթողիկոսութեան զամս վեց իբր քահանայ, և յետ այնորիկ ընկալեալ զձ̃ռն եպիսկոպոսութեան՝ իւրովին կատարէր զամենայն հոգս աթուոյն ։ Գումարեաց ժողով 'ի Շահապիւան յամին 447, սահմանել կանոնս վասն բարեկարգութեան եկեղեցւոյ ։ Եւ զի յետ նահատակութեան սրբոց Վարդանանց յամին 451, գտաւ 'ի կալանս Պարսից ընդ սրբոց Ղևոնդեանց, և կատարեցաւ ընդ նոսա վկայական մահուամբ յամին 454, վասն որոյ նախ քան զկատարումն սրբոյն կրկին անգամ յառաջ ժողովեալ եպիսկոպոսաց 'ի Դուին քաղաք, կարգեցին փոխանակ նորա զՄելիտէ 'ի Մանազկերտոյ յամին 452. որ և կացեալ յիշխանութեան զամս հինգ վախճանեցաւ ։

Մովսէս Ա. կալաւ զաթոռ կաթուղիկոսութեան յամին 457. և վարեալ զիշխանութիւն զամս ութ վախճանեցաւ ։

Գիւտ երանելի՝ աշակերտ սրբոյն Սահակայ և Մեսրովպայ 'ի գաւառէն Տայոց, այր առաքինի և իմաստուն՝ քաջավարժ հելլէն դպրութիւն, ընտրեցաւ 'ի կաթուղիկոս 'ի հասակի եօթանասուն ամաց յամի տեառն 465. և բարեկրօն վարուքն յորդոր բարեպաշտութեան եղեալ ամենեցուն, և վայելուչ կարգօք զարդարեալ զպաշտամունս հասարակաց աղօթից հայաստանեայց եկեղեցեաց, վախճանեցաւ յամին 475, կացեալ 'ի հայրապետութեան զամս տասն ։

Քրիստափոր արծրունի կալաւ զաթոռ կաթուղիկոսութեան յամին 475. և կացեալ զամս տասն՝ վախճանեցաւ ։ Եւ զի յաւուրս սորա նեստորականք գուն գործէին սերմանել 'ի Հայս զմոլորութիւն իւրեանց, Քրիստափոր գրեաց նամակ յայլ և այլ գաւառս՝ զգուշանալ 'ի մոլորեցուցչացն, որոց գլուխ էր Բարծումայ եպիսկոպոս Մծբին քաղաքի ։

Յովհան Մանդակունի 'ի գաւառէն Արշարունեաց՝ աշակերտակից երանելւոյն Գիւտայ. յաջորդեաց 'ի կաթուղիկոսութեան զՔրիստափոր յամին 480, 'ի հասակի եօթանասուն և հինգ ամաց ։ Այր էր սա հոգելից և գիտնական, որ կարգաւորեալ ձևացոյց զՄաշտոց գիրքն. յաւել և ինչ ինչ աղօթս և քարոզս 'ի ժամերգութեան ։ Գրեաց և ճառս հոգեշահս զանազանս իրաց, և կեցեալ 'ի հայրապետութեան զամս վեց և զամիս նոյնչափ՝ հանգեաւ 'ի տէր

Բաբգէն 'ի գաւառէն Վանանդայ՝ աշակերտ Յովհաննու Մանդակունւոյ՝ կալաւ զաթոռն յամին 487 ։ Ի չորրորդ ամի կաթողիկոսութեան իւրոյ գումարեալ ժողով 'ի Վաղարշապատ քաղաքի եպիսկոպոսք Վրաց և Աղուանից, նզովեաց զՆեստոր և զԵւտիքէս. բերին ապա 'ի մէջ և զնենգամիտ հրովարտակն Զենոնի կայսեր, յորում չկայր ինչ յիշատակութիւն զժողովոյն Քաղկեդոնի, վասն որոյ երկմտեցան և ինքեանք ընդունել զժողովն զայն. վախճանեցաւ Բաբգէն յամի տեառն 492, կացեալ 'ի հայրապետութեան զամս հինգ ։

Սամուէլ 'ի գաւառէն Արծրունեաց՝ կալաւ զաթոռ կաթողիկոսութեան յամին 492 ։ Յաւուրս սորա արծարծեցաւ վերստին հրդեհ հալածմանց 'ի բռնութենէ Կաւատայ Պարսից արքայի, այլ մեծն Վահան Մամիկոնեան արիական սրտիւ զդէմ կալաւ բռնոյն Պարսից, և ազատեաց զՀայաստան 'ի մոլորութենէ կրակապաշտութեան ։ Ի յոյզս այնց պատերազմաց, յամի տեառն 501, վախճանեցաւ Սամուէլ կաթողիկոս՝ կացեալ 'ի հայրապետութեան զամս տասն ։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Ազգային ժողովք ։ — Ժողով Վաղարշապատու Դ. յամի տեառն 402 ։

ԶՀԱՅՐԵՆԻ դրութեանս մերոյ վրդովութի՞ն տեսեալ սրբոյն Մեսրովպայ և հասու եղեալ աղետիցն որ առ 'ի նմանէ, աղաչեաց զսուրբն Սահակ դեղ դարմանոյ իրացս մատուցանել ։ Ընդ որ հաճեալ սրբոյ կաթողիկոսին գումարեաց ժողով 'ի Վաղարշապատ քաղաք, զի բազմութեամբ իմաստնոց ելս ինչ իրացն մարթասցի գտանել ։ Յայն ժողով հրաւիրեցին և զթագաւորն Վռամշապուհ որ 'ի սերտ սրտէ ցանկացեալ փափաքէր զգիւտ հայերէն գրոց ։ Իսկ 'ի լինել երկար զրուցաց, պատմեաց նոցա թագաւորն եթէ Հաբէլ ումն անուն ասորի քահանայ ասացեալ էր նմա երբեմն եթէ հայերէն նշանագիրք գուցեն առ Դանիէլի ուրումն ասորւոյ եպիսկոպոսի ։ Զայն իբրև լուան միաբան ժողովեալքն թախանձանօք աղաչեցին զարքայն՝ առաքել զոք առ նա զի ստուգագոյն ինչ գիտասցէ զնշանագրացն. և ըստ խնդրոյ նոցա առաքեաց թագաւորն զՎահրիճ իշխան որ քաջ հմտացեալ զամփիլեան տառից՝ դարձաւ 'ի Հայս և եցոյց զայնոսիկ սրբոյ կաթուղիկոսին և սրբոյն Մեսրոպայ ։

Այլ զի թերի նշանագիրքն էին , Մեսրոպայ յաղօթս ապաւինեալ ընկալաւ յերկնից զսիւ զօրայս հայերէն լեզուի , որպէս կանխեցաք ասել 'ի պատմութեան ։

Ժողով Վաղարշապատու Ա. յամի տեառն 426 ։

ՅԵՏ գիւտի հայերէն գրոց իբրեւ անխոնջ ջանիւք վաստակոց երանելւոյն Մեսրոպայ և սրբոց թարգմանչաց ծաղկեալ ծաւալէին 'ի մերում աշխարհիս ընձիւղք բարեկարգութեանց , սուրբն Սահակ զի զայլս եւս 'ի նոյին նախանձ նմանութեան զրգռեսցէ գումարեաց այլ ժողով 'ի հայրապետական քաղաքն Վաղարշապատ , և միաբան հաւանութեամբ եպիսկոպոսաց և քահանայից գրեաց թուղթ ընդհանրական , յորում սահմանէր կանոնս զգուշութեան վասն եպիսկոպոսաց , քորեպիսկոպոսաց և քահանայից ։

Կանոնք ևս հինգերորդի ժողովոյս Վաղարշապատու թուին կարգեալ 'ի սրբոյ Լուսաւորչէն՝ յառաջին ժողովոյն Վաղարշապատու , յընդունել անդ նորա զնիկիական հանգամանսն ։

Ժողով Աշտիշատու Բ. յամի տեառն 432 ։

ՍՈՒՐԲՆ Սահակ կաթուղիկոս իբրեւ արձակեցաւ 'ի Սասնոյ գալ 'ի Հայս , տեսեալ զհօտն 'ի տագնապի , ըստ բանից խորհրդոյ սրբոյն Մեսրոպայ ժողովեաց զեպիսկոպոսս անուանս և զքահանայս յԱշտիշատ քաղաք՝ բանս 'ի մէջ առնուլ բարեկարգել զազգն ։

Հասին յայնժամ 'ի Կոստանդնուպոլսոյ և երանելի թարգմանիչք ազգիս Ղեւոնդ երէց , Յովհան Եկեղեցացի , Յովսէփ պաղնացի , Արձան , Եզնիկ և Կորիւն , ընդ իւրեանս ունելով և զվճիռ դաւանութեան ժողովոյն Եփեսոսի զոր Մաքսիմիանոս պատրիարգ Կոստանդնուպոլսոյ առաքեալ էր նոցա տանել 'ի Հայս ։ Զայն տեսեալ սրբոյն Սահակայ ցնծացաւ 'ի հոգի , և ժողովեալ զայլ եւս եպիսկոպոսունս և վանահայրս Հայաստան աշխարհի, ընթերցաւ նոցա զսահմանս ժողովոյն Եփեսոսի ընդդէմ ամբարշտին՝ Նեստորի, և միաբան հաւանութեամբ հերքեցին զհերքեալն 'ի սրբոյ ժողովոյն, և ընկալան զկանոնադիր սահմանն ։

Ժողով Աշտիշատու Գ. յամի տեառն 435 ։

ԻԲՐԵՒ տիեզերական ժողովն Եփեսոսի դատապարտեաց զՆեստոր, և կայսրն առ բնաջինջ բառնալ և զհետս անգամ մոլորութեանն՝ հրաման պատուիրանի 'ի վերայ դնէր հրով մաշել զգիրս նորա, հետևողք՝ Նեստորի առ 'ի կանգուն ունել զկարծիս նորա՝ զայլ իմն հնարս խնացան ։ Քանզի զգիրս Թէոդորի Մոպսուեստացւոյ զվարդապետին՝ Նեստորի և զԴիոդորի տարսոնացւոյ շրջեալ 'ի հայ, 'ի պարսիկ և յասորի բարբառ, սփռեցին զայն յարևելս ։ Զայն իմացեալ երանելւոյն Սահակայ՝ անդէն և անդ կազմեալ պատրաստեցաւ իբրև զհովիւ քաջ վանել զգայլն 'ի հօտէն, և գումարեալ ժողով մեծ յԱշտիշատ Տարօնոյ, նզովս 'ի վերայ եդեալ հերքեաց զգիրսն „ Զի մի, ըստ Կորեան բանիցն, 'ի լուսաւոր վարդապետութիւն ծուխ ինչ սատանայական յարիցէ ,, ։

Նոյն միաբան խորհրդով գրեալ գիր ուղղափառ դաւանութեան առ Պրոկղ նորընտիր պատրիարգ Կոստանդնուպօլսոյ, առաքեցին զայն 'ի ձեռն աշակերտաց իւրեանց ։ Ընդ որ կարի ցնծացեալ Պրոկղի առաքեաց թուղթ ընդհանրական առ Հայս՝ զգուշացուցանել զնոսա 'ի հերձուածոց ժամանակին, որպէս 'ի վեր անդր նշանակեցաք ։

Ժողով Շահապիվանու Ա. յամի տեառն 447 ։

Ի ԲԱՌՆԱԼ արշակունի թագաւորութեան և 'ի վախճանել Սահակայ կաթուղիկոսի, առ 'ի չգոյէ իշխանաց իբրև տակաւ սպրդեալ մտանէին մեղկութիւնք և թուլութիւնք յեկեղեցական ազգին, Վարդան Մամիկոնեան և Վասակ Սիւնի և այլք 'ի նախարարաց աղաչեցին զսուրբ կաթուղիկոսն Յովսէփ խնամ ունել բարեկարգութեան Հայաստան աշխարհի, յորդորելով *զնա զի զեղեալ կարգս մեծի ուսուցչին և արժանաւժառանգն նորա յաջորդաց վերստին հաստատեսցէ ։ Յայնժամ սուրբն Յովսէփ գումարեաց զեպիսկոպոսս և զքահանայս իշխանօք հանդերձ 'ի Շահապիվան քաղաք , ուր միաբան համաձայնութեամբ հաստատեալ զկանոնս և զկարգադրութիւնս հաւատոյ զոր 'ի նախնեաց աւանդեալս , յաւելին և ինքեանք այլ ևս քսան կանոնս բարեկարգութեան , տուգանս խիստս և ապաշխարութիւնս յանցուցելոցն սահմանեալ ։*

Յաւարտել ժողովոյն աղաչեաց կաթուղիկոսն զիշխանս և զնախարարս խնամ ունել լնուլ անդորրութեան հայաստան ժողովրդոց 'ի բազմամրրկածեան և յաւաղելի դարս անդ նորա ։

Ժողով Արտաշատու յամի տեառն 449 ։

ՅԱԶԿԵՐՏ *արքայ Պարսից յանյոյս լեալ այլ ևս պատրանօք և խաբէութեամբ ձգել զՀայս յուսումն Պարսից , հրամայեաց Միհրներսեհի հազարապետի նամականգիր լինել առ իշխանս և եկեղեցականս Հայոց և ծանօթս առնել զնոսա կրօնիցն Պարսից , և զի մոլորեալք են և 'ի դիւաց խաբեալ , զի զայնպիսի թողեալ կրօնս 'ի խաւարի դանդաչեն զհետ երթեալ խաչելոյ ուրումն հրէի ։*

Զայն թուղթ առեալ Յովսէփայ կաթուղիկոսի անդէն և անդ հրաւիրեաց զեպիսկոպոսունս և զքահանայս ժողով գումարել 'ի դարման իրացս , և եօթնևտասն եպիսկոպոսունք և բազում այլ քորեպիսկոպոսք և երիցունք միահամուռ ժողովեցան յԱրտաշատ քաղաք , ընդ իւրեանս ունելով և զբազումս 'ի նախարարաց , և միաբան համամտութեամբ գրեցին զպատասխանի թղթոյ Միհրներսեհի հազարապետի , և զարմանալի աստուածաբանութեամբ քանդեալ 'ի հիմանց զկրօնս Պարսից , և զքրիստոնէական կրօնիցս անհամեմատ գերազանցութիւն առ նմին եդեալ , խոստովան եղեն անկրկին եթէ « Յայսմ հաւատոյ զմեզ ոչ ոք կարէ խախտել , ոչ հրեշտակք և ոչ մարդիկ , ոչ սուր և ոչ հուր . . . զի ոչ եթէ ընդ մարդոյ է ուխտ հաւատոյ մերոյ , եթէ պատրիցիմք իբրև զտղայս , այլ անլուծութեամբ ընդ Աստուծոյ , որում չէք հնար քակել և ՚ի բաց ելանել, ոչ այժմ և ոչ յապա, և ոչ յաւիտեանս, և ոչ յաւիտենից յաւիտեանս„։

Ընդ այսպիսի աներկիւղ համարձակութիւն Հայոց զարմացեալ Յազկերտի, ՚ի բարկութիւն բրդեալ՝ կոչեաց խառնիւ ՚ի դուռն արքունի զնախարարս և զիշխանս, որպէս կանխեցաք ասել ՚ի պատմութեան։

Զհրաշալի և զպատուական բանս նամակին որ ՚ի ժողովն Արտաշատու՝ գտցեն խնդրողք ՚ի գիրս պատմութեան Եղիշէի վարդապետի։

Ժողով Շահապիվանու Բ. յամի տեառն 450։

ԻԲՐԵՒ նախարարք Հայոց առ հաճելոյ զկամս Յազկերտի ՚ի վերին երեսս երկիրպագեալ արեգական դարձ արարին յաշխարհ իւրեանց, եպիսկոպոսունք և քահանայք ընդ առաջ ելեալ նոցա՝ այն ինչ իրազգածք եղեն անցիցն անցելոց, փութեալ նախանձու ճշմարտութեան դառն բանիւք կշտամբեցին զնոսա. յայնժամ Վարդան սպարապետ անկաւ յոտս կաթուղիկոսին Յովսեփայ և արտասուախառն պաղատանօք յայտնեաց նմա զխորհուրդս մտաց իւրոց, և որոց ընդ նմա միաբանեալ նախարարաց, և խոստացաւ մահու չափ պաշտպան կալ քրիստոսական հաւատոյ։

Բայց զի Վասակ մարզպան ՚ի սրտէ ուրացեալ զՔրիստոս՝ ձեռնտու էր յամենայնի մոգացն և մոգպետին, խնայեալ զայն Հայոց ձերբակալ արարին զնա. այլ Վասակ ընտանօրեայն իւրով կեղծաւորութեամբ աղաչեաց զնոսա խնայել ՚ի կեանս իւր, և երդուաւ յաւետարանն սուրբ մի ևս այլ բաժանել զանձն ՚ի միաբանութենէ սուրբ եկեղեցւոյ։

Յայնժամ սուրբն Յովսէփ ժողովեաց զեպիսկոպոսունս և զքահանայս ՚ի Շահապիվան քաղաք, և կոչեալ անդր զՎասակ մարզպան և զՎարդան սպարապետ և զայլ ամենայն նախարարս յայտնեաց նոցա եթէ հարկ ՚ի վերայ կայ պաշտպան կալ յայտնապէս քրիստոսական հաւատոյ, և մահու չափ խիզախել ընդդէմ անհաւատից։ Եւ երդուեալ ամենեցուն յաւետարանն սուրբ, գրեցին թուղթ երդման հաստատուն կալ ՚ի ճշմարիտ ըկծնս աստուածպաշտութեան։ Եւ ՚ի մի ձայն խրա-

խուսեալ ՚ի մահ աշխարհօրէն դիմեցին առ սպարապետըն Վարդան դնել զանձինս ՚ի մահ քան եթէ՝ թողուլ սպրդել կրակապաշտութեան ՚ի Հայս ։

Ժողով Դըւնայ Ա. յամի տեառն 452 ։

Ի ԳՆԱԼ *սրբոյն Յովսեփայ կաթուղիկոսի ՚ի դուռն Պարսից՝ նախարարք և քահանայք հաւաքեալ ժողովեցան ՚ի Դուին քաղաք և կացուցին ՚ի տեղի նորա զտէր Մելիտէ ՚ի Մանազկերտոյ, և միաբան հաւանութեամբ փոխեցին զաթոռ կաթուղիկոսութեան ՚ի Դուին քաղաք ։*

Ժողով Վաղարշապատու Զ. յամի տեառն 491 ։

Ի ԳՈՒՄԱՐԵԼ *ժողովոյն Քաղկեդոնի նեղեալ Հայոց յանչափ վշտաց և ՚ի պատերազմաց Պարսից չեղէն ձեռնհաս առաքել զոք յայն ժողով՝ ստուգագոյնս ինչ իմանալ զվճռոց նորա և զվարդապետութեանց ։ Զայս տգիտութիւն Հայոց պատրուակ իւրեանց առեալ հակառակորդաց սրբոյ ժողովոյն՝ բանս սուտս և չփոթս հեղին յականջս նոցա, որպէս եթէ յայնմ ժողովի մոլորեալ գումարելոցն՝ ընկալեալ իցեն զթիւր կարծիս Նեստորի և զվարդապետին նորա զԹէոդորի մոպսուեստացւոյ ։ Զայն իբրև լուաւ Բաբգէն կաթուղիկոս, քանզի և ինքն յերկմիտս էր զսրբոյ ժողովոյն, կամեցեալ ստուգագոյնս ինչ գիտել՝ ընթերցաւ զհրովարտակն Զենոնի կայսեր, որ որպէս կանխեցաք ասել՝ ոչ ինչ յիշատակութիւն առնէր զժողովոյն Քաղկեդոնի, այլ յիշեալ զերիս սինհոդոսն գումարեալս ՚ի Նիկիա, ՚ի Կոստանդնուպօլիս և յԵփեսոս՝ յաւելոյր նզովս որ ինչ առաւել քան զսահմանեալսն ՚ի նոսա կամիցի ոք գործել կամ քարոզել ։*

Յայնժամ Բաբգէն կաթուղիկոս խորհեցաւ մերժել զժողովն Քաղկեդոնի իբրև ձեռնտու մոլորութեան նեստորականաց · բայց զի մի՛ առանձինն վճռելով յանդգնութեան ինչ տացէ զանձնէ կարծիս, ՚ի ժողով կոչեաց զեպիսկոպոսունս և զքահանայս ՚ի Վաղարշապատ կամ ՚ի Նոր քաղաք, անդր հրաւիրեալ և զկաթուղի-

կոպոսունս Վրաց և զԱղուանից ։ Եւ նզովեալ զԲարծումա և զԱկակ պարսիկ և զմոլորութիւն եւտիքականաց, ածին 'ի մէջ և զՀրովարտակն Զենոնի կայսեր, և հաւանեալ որ 'ի նմա գրելոյն՝ նզովեցին միաբան զոր ժողովն Քաղկեդոնի իբրու համամիտ մոլորելոց ։ Այլ պարտ էր նոցա զմտաւ ածել՝ զի դիւրին էր յոյժ խնդրեանց սխալել, այլ ոչ և բազմութեան այնչափ աստուածաբեալ հայրապետաց երեւելագոյն եկեղեցեաց ժողովելոցն օրինօք և յանուն Աստուծոյ 'ի սահմանել զուղղափառ վարդապետութիւնս հաւատոյ, և զի հրովարտակք թագաւորաց չկարէին լինել կանոն օրէնսդիր 'ի խնդիրս հաւատոյ. մանաւանդ զի և հրովարտակն ինքնին քանզի լռէր զժողովոյն, թէ աւելի՝ պարտ էր լսել և խնդրեանց, և ստուգագոյն եւս առնուլ տեղեկութիւն, և ոչ եթէ հերքել և նզովել զոր ինչ ոչն գիտէին ։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Եկեղեցական մատենագիրք ։

Ի ՀԻՆԳԵՐՈՐԴԻ դարուս քան յայլ ամենայն դարս եկեղեցւոյ փայլեալ պայծառացան արք ականաւորք գիտութեամբ և գրաւոր երկասիրութեամբ, թողեալ յաւանդ 'ի գանձ եկեղեցւոյ զլուսաւոր վարդապետութիւնս իւրեանց ։

Համբաւեալ գտաւ յոյժ 'ի սոսա սուրբն Յովհան Ոսկեբերան, ծնեալ յԱնտիոք Ասորւոց, և սնեալ 'ի վարս բարեպաշտութեան և յուսմունս գրոց գիտութե՟ ։ Զառաջինն եղև փաստաբան, այլ ապա հրաժարեալ յաշխարհէ՝ մեկուսացաւ առանձինն լինել միայնակեաց. սակայն զհամբաւ առաքինութեանն և զգովելի վարուց նորա և հանճարոյ մտացն և բանից՝ լուեալ Արկադեայ կայսեր, կացոյց զնա պատրիարգ Կոստանդնուպօլսոյ ։ Այլ զի հոգեռանդն էր յոյժ, և նախանձու աստուածպաշտութեան վառեալ սաստիկ բարբառէր 'ի կարճել զախտս և զթուլութիւնս ժամանակին, վասն այսորիկ կծծի մեծատունք, ամբարտաւան իշխանք, զիրգ և փափկասէր կանայք, համայն առեալ՝ աշխարհասէրք ամենայն յուզեցին աղմուկս հակառակութեան ընդդէմ երանելոյն․ և Թէոփիլոս պատրիարգ Աղեքսանդրիոյ անիրաւ զրպարտութեամբք խաբեաց և զսուրբն Եպիփան, և զԿիւրեղ աղեքսանդրացի ։ Վասն որոյ ՚ի միում ժողովի գումարելոյ յամին 403 ՚ի գե՛ւղն Դրեանէ (Ֆընտըգլը) որ կայ առ եզր Կոստանդնուպոլսոյ՝ ընկեցաւ յաթոռոյ սուրբ Հայրապետն և տարաբեցաւ յաքսորս ։

Դշխոյն Եւդոքսիա՝ գործակից տարագրութեան որոյն, զարհուրեալ յահագին երկրաշարժութենէն որ դիպաւ ՚ի նմին իսկ գիշերի յորում մեկնեցաւ ա՛րն Աստուծոյ, փութացաւ յետս դարձուցանել զնա անդրէն ։ Այլ ՚ի կամել սորա թագուհւոյն կանգնել զարձան իւր ՚ի հրապարակին որ առընթեր եկեղեցւոյ սրբուհւոյն Սոփիայ, և զհանդէս նուագարանաց նորա կատարել թատրոնական խաղուք և պարերգութեամբք, սուրբ Հայրապետն ՚ի միում յատենաբանութեան կշտամբեաց զանպարկեշտ խաղարկութիւնս զայնոսիկ․ ընդ որ ցասուցեալ թագուհւոյն՝ երդուաւ վերստին ընկենուլ զնա յաթոռոյ ։

Օյն լուեալ երանելւոյն վառեցաւ նախանձու աստուածպաշտութեան, և ելեալ յատեան՝ ոչինչ փոյթ կալաւ մեղմել զցասումն բարկութեան թագուհւոյն, այլ պատշաճ վարկաւ կշտամբել աներկիւղ զգնացս նորա․ վասն որոյ սկիզբն արար ատենախօսութեանն բանիւքս այսոքիւք․ „Ահա նոր Հերովդիադա՝ դարձեալ կաքաւէ, վերստին խնդրէ նա զգլուխն Յովհաննու„ ։ Յաներկիւղ բանից անտի որոց պատրիարգին զայրացեալ Եւդոքսիայ՝ ետ աքսորել զնա յանշէն քաղաքն Կուկիսոն առ սահմանագլխովք Կապադովկիոյ․ որ և ՚ի վշտաց ուղևորութեանն վախճանեցաւ ՚ի ճանապարհի յամին 407, ՚ի հասակի վաթսուն ամաց, կացեալ ՚ի պատրիարգութեան զամս վեց և զամիս նոյնչափ ։

Եւ զի Նեկտարիոս որ յառաջ քան զՈսկեբերանն եկաց պատրիարգ Կոստանդնուպոլսոյ՝ ազնուատոհմ որ էր պճնասէր և անփութական ՚ի վարչութիւն, բազումք ՚ի հաւատացելոց այնր քաղաքի զակառեալ էին զհետ աշխարհասէր գրգանաց և փափկասուն կենաց․ վասն որոյ սուրբն Յովհան ոգի ՚ի բուռն զուն գործեաց խրատել զնոսա սաստիւ և խնամ՚ածել ուղղուէ և բարեկարգութեան․ և իւրովք իսկ ծախիւք կառոյց անկելանոցս և հիւանդանոցս ։ Ստիպէր զկղերն կանխել ընդ առաւօտս և առաջիկայ դառնալ գիշերայնն պաշտամանց ։ Առաքելական նախանձու և արիութեամբ անձանձիր քարոզէր ընդդէմ ագահութեան մեծամեծաց, անկարգութեան իշխանաց և համօրէն ժողովրդեան ։ Եւ նորա բազմաթիւ ճառք և ներբողեանք, և մեկնութիւնք սուրբ գրոց․ որովք գլուխ համարեցաւ ամենայն սրբազան քարոզչաց և հնոց և արդեաց ։

Ի մատենագիրս այսր դարու որովք պայծառացաւ առեւելեան եկեղեցի՝ մեծարգոյ արդեամբք երևելի հանդիսացան սուրբն Եպիփան եպիսկոպոս Սաղամինա քաղաքին Կիպրոսի, որ եթող զանազան գիրս պիտանիս, յորս նշանաւոր է գործն Պանարիոն կամ Յաղագս հերձուածոց անուանեալ ։

Սուրբն Կիւրեղ պատրիարգ Աղեքսանդրիոյ, ախոյեան ընդդէմ Նեստորի և այլոց աղանդաւորաց ։ Եւ նորա ազգի ազգի երկասիրութիւնք հոգևորք և աստուածաբանականք ։

Սինեսիոս եպիսկոպոս Պտղոմայիդայ, որում երախտապարտ եմք յաղագս գրոցն որ յանուն Դիոնեսիոսի Արիոպագացւոյ ։

Սոզոմենոս սկոլաստիկոս՝ որ գրեաց զպատմութիւն եկեղեցւոյ յամէ տեառն 324, ցամն 439․ նոյնպէս և Սոկրատ որ եկաց նախ քան զՍոզոմենոս ։

Թէոդորետոս եպիսկոպոս Կիւրայ երկասիրեաց զեկեղեցական պատմութիւն իւրոյ ժամանակին, և զայլ գործս աստուածաբանականս ։ Ընդ սոսա պարտ է դասել և զսուրբն Նեղոս աբբայ՝ աշակերտ սրբոյն Ոսկեբերանի․ որոյ են սքանչելի խրատք առ միանձունս, և թուղթք յորդորականք, և այլ գործք պիտանիք ։

Իսկ ինչ նուազ քան զսոսա համբաւեալ հանդիսացան և վարդապետք արեւմտեան եկեղեցւոյ, որպէս սուրբն Հերոնիմոս երէց ծնեալ 'ի Ստրիդոր Դաղմատիոյ՝ յամին 340, և վարժեալ 'ի Հռովմ առ ոտս Դոնատոսի գրամատիկոսի ։ Ջան գործեաց սանձել զբուռն և զանկարգ յօժարութիւնս մարմնոյ՝ պարապելով յուսումն աստուածաշունչ գրոց և 'ի խստամբեր ճգնունս․ որովք 'ի բազմամբոխ քաղաքին Հռովմայ վարէր կեանս միայնակեցի ։ Յանկարծեալ ապա տեսանել զհամբաւեալ այս խռովին ժամանակի, ուղևորեցաւ մինչև յաշխարհն Ասորւոց, ուր զհետ եղև թարգմանել զսուրբ գիրս։

Առանձնացեալ այսպէս 'ի Բեթղահէմ, վախճանեցաւ անդ զկեանսն յամին 420։ Ի յետին պահու կենացն զուարթագին հայեցեալ առ որս շուրջ կային զմահճօքն, ասէ. «Որդեակք, ուրախ լերուք ընդ իս, ահա ժամն ցանկալի. փոքր մի ևս և զերծայց ես յաշխարհէ աստի։ Ո՜հ, խաբին արդարև մարդիկ՝ որ ահաւոր կարծեն զմահ. և յիրաւի այդպիսի է ամբարշտաց և եթ, իսկ արդարոց յորմէ հեռանէ Քրիստոս սիրեաց զայն, քաղցր է և չարատանջ մահ. քանզի աւետաբեր է անվախճան երանութեան։ Կամիցիք և դուք զչափ անուշ քաղցրութեան մահուն՝ փոյթ յանձին կալարուք բարեկրօն վարել կեանս»։

Նրբամիտ էր նա յոյժ և իմաստուն. զի և հեթանոսք և հերետիկոսք առ հասարակ սարսեալ դողային 'ի նմանէ իբր յոխերիմ թշնամւոյ։

Նախ քան զսուրբն Հերոնիմոս արևմտեան եկեղեցին լատինականն վարէր անկատար թարգմանութեամբ սուրբ գրոց. զթերութիւնս նորա տեսեալ սրբոյն Հերոնիմոսի, զհետ եղև ուսանել զեբրայական լեզու, և նորոգ թարգմանեաց զսուրբ գիրս 'ի լատին, զոր և ցարդ վարէ արևմտեան եկեղեցի, Վուլգաթա անուանակոչեալ։ Աշխատ եղև այսպէս պարզել զդժուարիմաց բանս աստուածային տառից, մեկնելով զբազում գիրս։ Ճառք նորա և հոգևոր խրատք զորս արար 'ի Հռովմ հրահանգել նոքօք զհաւատացեալս և զազնուական տիկնայս՝ 'ի գովեստ առեալ են 'ի բարեպաշտ և յիմաստուն արանց. և քահանայապետն Դամասոս յիշատակէ զայնոսիկ ախորժ հաճութեամբ։ Գրեաց Հերոնիմոս և ազգի ազգի ճառս 'ի հերքել զմոլորութիւնս Մոնտանոսի, Հելվետիոսի, Յովինիանոսի, Վիգիլանտիոսի և Պելագիոսի։ Սորին և զառանձին պատմութիւն վարուց և գործոց եկեղեցական մատենագրաց, որք կային յառաջ քան զնա։

Սուրբն Օգոստինոս եպիսկոպոս Հիպպոնայ յԱփրիկէ, ծնեալ 'ի Տագաստէ Նումիդիոյ յամին 354, որ կատարեալ զընթացս ուսմանն 'ի Կարթագինէ քաղաքի, ուր զեղծեալ և 'ի զգաստութենէ վարուց, կեայր անառակութք, ուղևորեցաւ ապա 'ի Հռոմ և 'ի Մեդիոլան՝ վարժապետ կալ անդ հռետորական վարժից. այլ յորդորեալ 'ի հոգեշարժ խրատուց սրբոյն Ամբրոսիոսի, մինչ 'ի վարանս կայր՝ թէ զո՛ր հաւատս ընկալցի, լուաւ ձայն. “Առ և ընթերցիր„. վասն որոյ ետ զանձն յընթերցումն թղթոց սրբոյն Պօղոսի առաքելոյ, որով սթափեալ իբր 'ի խոր և 'ի մահաբեր թմբրութենէ, մկրտեցաւ 'ի սրբոյն Ամբրոսիոսէ, և դարձեալ յԱփրիկէ, ձեռնադրեցաւ քահանայ և եպիսկոպոս Հիպպոնա քաղաքի, և անվեհեր ախոյեան հանդիսացաւ պաշտպանել զճշմարտութիւն քրիստոնեական կրօնից ընդդէմ ամենայն հերետիկոսաց։ Զօրաւոր երկասիրութեամբքն զինեաց նա զեկեղեցի հերքել զմոլորութիւնս ամենայն։ Սակայն համբաւեալ գտաւ յոյժ գրովքն որ Յաղագս քաղաքին Աստուծոյ, յորում լայնածաւալ հմտութք և ազգու պերճախօսութեամբ վեր 'ի վայր տապալէ զհեթանոսական կրօնից պաշտամունս, և բարձրացուցեալ յաղթական ամբառնայ զեկեղեցին Քրիստոսի զոր Քաղաք Աստուծոյ կոչէ։ Հերքեաց զօրաւոր բանիւք և զմոլորութիւնս Պելագեանց և զԿիսապելագեանց, վասն որոյ և վարդապետ շնորհաց կոչեցաւ։ Են նորա և այլ բազում երկասիրութիւնք 'ի պաշտպանութիւն կրօնից, յորս միօրինակ հաւասար փայլէ եռանդն նորա, աստուածպաշտութի և սքանչելի խոնարհութի։

Սուրբն Պրոսպեր ազուխտանացի՝ աշակերտ սրբոյն Օգոստինոսի, համանման վարդապետին իւրում պաշտպան եկաց վարդապետութեան շնորհաց 'ի քերթուածի միում Ընդդէմ ապաշնորհաց անուանեալ։ Եւ որպէս ասաց ոմն՝ կարի իմաստութք 'ի դէպ վարկաւ յօրինել զայն քերթողական բանահիւսութք, քանզի զոր օրինակ զմոլար կարծիս սովոր են սեթևեթել զարդուք բանաստեղծութե, նոյնպէս արժան է երբեմն և զճշմարտութիւնն գեղազարդել, զի զբաղուածս յընթերցումն ածիցեն։ Համբաւեալ գտան յոյժ յայսմ դարու և Հռուփինոս երէց ակուիլէացի, սուրբն Պաւլինոս Նոլայեցի, և սուրբն Լեոն քահանայապետ մականուանեալն Մեծ։ Սակայն փառք անուան Հռուփինոսի ոչ աղօտանայր արդեօք՝ եթէ չէր եռանդագին պաշտպան կացեալ կարծեացն Որոգինեայ։

Յովհաննէս Կասիանոս, Սալվիանոս մարսիլիացի, որպէս և Գեննադիոս երէց 'ի նմին քաղաքէ՝ բարեպաշտութեամբ իւրեանց և գրաւոր երկասիրութեամբք պարծանք կային Փռովանսա գաւառի կամ՝ Նարբոնեանն Գաղղիոյ. Թէպէտ և Կասիանոս խրատուք ամբաստանեցաւ կիսապեղագեան գոլ, իսկ Գեննադիոս գրեաց ըղձուցակ եկեղեցական մատենագրաց:

Ի հինգերորդի դարուս կային և այլ բազում եկեղեցական մատենագիրք, որպէս Սուլպիկիոս Սեւերոս, և Պօղոս Օրոզիոս՝ վիպասանք, Վինկենտիոս Լերինեան, որոյ նամակն յորդորական՝ ամուր պարիսպ է ընդդէմ հերձուածոց, Պրուդենտիոս սպանիացի և Սիդոնիոս Ապողինար եպիսկոպոս Կղերմոնի՝ համբաւեալք 'ի քերթութեան, և այլք բազումք:

Զէ արժան անյիշատակ թողուլ և զբարեպաշտ մատենագիրս ազգիս զծաղկեալսն 'ի հինգերորդի դարու, որք քրտնաջան աշխատութեամբք իւրեանց պատճառք եղեն ճոխանալոյ ազգիս աստուածաշնորհ պարգեւօք գրաւոր ճոխութեան և թարգմանութեամբ սուրբ գրոց: Առաջնորդ և հեղինակ ամենեցուն սոցա պարտ է համարել զսուրբն Սահակ և զսուրբն Մեսրոպ, զորս զգովելի արդիւնս փոքր 'ի շատէ յայտ արարաք 'ի յառաջընթաց պատմութիւնս. Մեզ արդ յիշատակել զանուանս 'ի բազմարդիւն աշակերտաց նոցին, որք գրաւոր երկասիրութեամբ իւրեանց պարծանք կային ազգիս:

Եզնիկ կամ Եզնակ կողբացի եպիսկոպոս Բագրեւանդայ՝ աշակերտ սրբոցն Սահակայ և Մեսրոպայ, աջակից և ձեռնտու նոցին 'ի թարգմանութեան սուրբ գրոց: Գրեաց զեղծ աղանդոցն Պարսից, Մանիքեցւոց և զանաստուածից ազդու և զօրաւոր բանիւք:

Կորիւն աշակերտ և գործակից սրբոց թարգմանչաց, որ գրեաց զպատմութիւն վարուց սրբոյն Մեսրոպայ:

Սուրբ Եղիշէ վարդապետ՝ ատենադպիր Վարդանայ սպարապետի Մամիկոնեան, որ պանծալի և վայելչազարդ բանիւք յօրինեաց զպատմութիւն նահատակութեան սրբոց Վարդանանց և զՂեւոնդեանց: Կան նորա և մեկնութիւնք սուրբ գրոց, և ճառք հոգելիցք, և սքանչելի խրատք առ միայնակեացս:

Սուրբ Մովսէս Խորենացի՝ որ յաջորդեաց զԵզնիկ յեպիսկոպոսէ Բագրեւանդայ, քեռորդի սրբոյն Մեսրոպայ, մնացորդ 'ի գլխաւոր վարդապետաց' թարգմանութեամբ և յօրինմամբք պէսպէս մատենից ։ Գրեաց զպատմութիւն ազգիս 'ի նախնի դարուց մինչև ցբառնալ Արշակունի թագաւորութեան, և զազգի ազգի ճառս և ներբողեանս, որպէս և շարականս ընտիրս . վախճանեցաւ 'ի հասակի իբր հարիւր և քսան ամաց ։ Եւ սորա և եղբայր կրտսեր Մամբրէ Վերծանող անուանեալ, որոյ են ճառք վայելչաշուք և սքանչելիք ։

Սուրբ Դաւիթ Անյաղթ' քեռորդի սրբոյ Խորենացւոյն, հմուտ հելլէն բարբառոյ, որ գրեաց զքերականութիւն և զգիրս սահմանաց, զմեկնութիւն գրոց Արիստոտելի, և ներբողեանս 'ի ծնունդ տեառն, և 'ի խաչն կենարար ։

Ստեփանոս Ա. եպիսկոպոս Սիւնեաց, որ յօրինեաց շարականս ընտիրս և սքանչելիս ։ Ընդ սոսա արժան է դասել և զՂազար Փարպեցի, որ գրեաց զպատմութիւն Հայոց 'ի բարձմանէ Արշակունի թագաւորութեան մինչև ցաւուրս իւր, 'ի վախճան հինգերորդի դարու, և 'ի սկիզբն վեցերորդին ։

ԳԼՈՒԽ ԺԷ.

Յայտարարութիւնք յաղագս կարգի ուսանելոյ և ուսուցանելոյ զվարդապետութիւնս հաւատոյ 'ի չորրորդ և 'ի հինգերորդ դարու ։

ՏԵՍԱՔ մեք ապաքէն ցարդ, թէ որպէս լուսաւորեալ էին վարդապետութիւնք քրիստոնեական կրօնից և յառաջին դարս անդ եկեղեցւոյ . մատիցուք արդ քննել սակաւուք թէ սուրբ հարք զիա՛րդ ուսան զմատեանս հաւատոյ, և որպէս մարզեցին յայն զհաւատացեալս ։

Վարդապետութիւնք հաւատոյ նոյն են ըստ էութեան զոր արդ դաւանէ և ուսուցանէ սուրբ եկեղեցի . որպէս յայտ է 'ի մատենից անտի նախնի հարց զոր ընդդէմ բազմաստուածեանց, որպէս և Մարկիոնեանց և Մանիքեցւոց, հաստատեցին թէ մի ևեթ է արարիչ աշխարհի, և զի 'ի նորին թոյլտուութենէ գործին չարիք ։

Խորհուրդ ամենասուրբ Երրորդութեան յայտնապէս քարոզեցաւ ընդդէմ սաբելեանց, արիոսեանց և մանկեղմնեանց. ոչ եթէ բացայայտելով զայն խորհուրդ որ անհասանելին է մարդկային տկար մտաց, այլ 'ի սուրբ գրոց հաւաստի ցուցանելով թէ հարկաւոր է հաւատալ երիս անձինս 'ի միում աստուածութեան ։ ԶՅիսուս Քրիստոս պաշտեցին միշտ հաւատացեալք իբրև Աստուած. որում վկայեն ոչ միայն Ջատագովական ձայնք նախնի հարց, դիւանական դատակնիք մարտիրոսաց, այլ և վկայութիւնք նոյնին իսկ հեթանոսաց. որպիսիք են նամակ Պլինիոսի առ կայսրն Տրայիանոս, և դիմամարտութիւնք Կելսոսի և Յուլիանոսի ուրացողի ։ Արդ որպէս հաւաստի է, թէ քրիստոնեայք պաշտեցին միշտ և պաշտեն զնա Աստուած, նոյնպէս պարտ է ասել՝ թէ Քրիստոս է նոյն ինքն Աստուած, և հաւասարակից Հօր և ստեղծող երկնի և երկրի ։ Հաւաստի է դարձեալ, թէ Քրիստոս որդի է Աստուծոյ, և ոչ կարէ լինել միանգամայն Հայր և Որդի, ծնող և ծնեալ, որպէս յայտ յանդիման ցուցանէ Տերտուղիանոս ընդդէմ Պրաքսեայ ։ Քանզի յայնժամ զբանսն Քրիստոսի եթէ “Ելի 'ի Հօրէ„ , և թէ “Հայր առաքեաց զիս„ , և “Ես և Հայր իմ մի եմք„ , պարտիմք նոյն համարել ընդ ասելոյն, Ես ինքն ելանեմ յինէն. Ես առաքեցի զիս ինքն, Ես և ես եմք մի Աստուած ։ Այսպիսի յայտնի տեսանեմք բանիւքս, եթէ անձն Քրիստոսի զանազանեալ է 'ի Հօրէ, թէպէտ և Աստուած է և ինքն հաւասարապատիւ Հօր ։ Եւ զի Աստուած է և Որդին՝ հարկ իսկ է նմա հաւասարակից լինել և համագոյ Հօր, որպէս յայտնի ցուցաւ ընդդէմ Արիոսի. ապա թէ ոչ՝ լինէին երկու աստուածք, մին մեծ և միւսն փոքր. այլ զի փոքրն ստեղծուած լինէր և ոչ հաստիչ, չէր պարտ 'ի պաշտօն առնուլ զնա ։ Զի և պատկեր կամ գաղափար ստեղծուածոյ ուրուք՝ որչափ և կատարելագոյն նկարագրեսցի, ոչ հաւասարի նկարագրին որով էակից է Հօր Որդին Աստուծոյ ։

Ընդդէմ մակեդոնեանց, որք ընդունէին զաստուածութիւն Որդւոյն, և հերքէին զՀոգւոյն սրբոյ, յայտ յանդիման ցուցաւ՝ թէ Հոգին սուրբ ելանէ 'ի Հօրէ, և առաքի ևս 'ի Հօրէ իբրև զՈրդին, բայց զանազանի յՈրդւոյ. վասն որոյ ոչ ուրեք է տեսանել 'ի սուրբ գիրս՝ թէ որդի իցէ նա կամ ծնեալ ։ Եւ զի 'ի խորհուրդ միրտութեան հաւասար և համապատիւ Հօր և Որդւոյ անուանի, եթէ « Երթայք . . մկրտեցէք յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ »: որով երրորդ անձն աստուածութեան յայտնի առնէ զնա Քրիստոս։

Նախնի հարք ոչ մարդկային ինչ հանճարով կամ հնարիմաց ճարտարութեամբ բանից ցուցանէին զճըշմարտութիւն քրիստոնեական հաւատոյ, այլ վկայութեամբ ևեթ սուրբ գրոց, և յանընդհատ աւանդութենէ եկեղեցւոյ քարոզէին զխորհուրդ ամենասուրբ Երրորդութեան. և առ 'ի հաստատել զանհասն զայն խորհուրդ՝ ոչ ինչ յիմաստասիրական ձեռնարկութեանց արկին 'ի գործ, այլ զբացայայտ բանս ևեթ Քրիստոսի, որ հրամայէ պաշտել զՈրդին ընդ Հօր, և ընդ նոսին փառաւորել զՀոգին սուրբ։ Եւ զի բազում այն էր զի հերձուածողք յեցեալ 'ի հնարիմացն իւրեանց նրբախօսութիւն՝ 'ի դերև հանել կամէին զվարդապետութիւն անքնին խորհրդոյս, վասն որոյ հարք սուրբք, ըստ այլ և այլ դիմադրութեանցն՝ զայլ և այլ եղանակս բանից 'ի կիր առնուին՝ զի և ընդ հեթանոսս այլազգ պարտ էր խօսել, և ընդ հերետիկոսս այլազգ, և ընդ մի մի 'ի նոցանէ այլ և այլ օրինակաւ։ Եւ թէպէտ ոմանք 'ի յետին մատենագրաց անտեղեակք գոլով այլ և այլ ձևոյ բանից նոցա, համարեցան եթէ հարք սուրբք որք կային յառաջ քան զժողովն՝ Նիկիոյ ոչինչ պայծառս ճառեն զխորհրդոյ ամենասուրբ Երրորդութեան, սակայն հըմտացելոցն յայտ է զի օտար 'ի ճշմարտութենէ են բանքն։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Դարձեալ վարդապետութիւն հարցն սրբոց յաղագս մարդեղութեան Որդւոյն Աստուծոյ, և շնորհաց։

ՍՏՈՒԳՈՒԹԵԱՄԲ փաստիւն որ յաղագս խորհրդոյ ամենասուրբ Երրորդութեան՝ յայտ յանդիման երևի և խորհուրդ մարդեղութեան Որդւոյն Աստուծոյ ընդէմ կարծեացն Եբիոնի, Պօղոսի սամոսատացւոյ և այլոց, որք մարդ լոկ համարեցան զՔրիստոս։ Վասն որոյ և ոչ դժուարին ինչ էր ցուցանել, եթէ արդարև մարմնացաւ Նա՝ ընդդէմ Երևութականաց և Մանիքեցւոց, որք զմարմինն Քրիստոսի առաջօք առէին ։ Իսկ առ նոսա, որք զՔրիստոս համարէին լոկ մարդ, հաւատոյ գոլով 'ի վարդապետութենէ անտի խորհրդոց Երրորդութե̃ թէ է նա Աստուած, շատ էր ցուցանել թէ գոլով Աստուած՝ էր և մարդ կատարեալ, որպէս ցուցու 'ի հարց սրբոց ընդդէմ Ապողինարի, որ ասէր եթէ Բանն Աստուած եկեալ զտեղի բանական հոգւոյն ։ Արդ 'ի ցրել զայդ մոլորութիւն Ապողինարի, Նեստորիոս և համախոհք իւր ըստ չափն անցեալ՝ բաժանեցին զԱստուած 'ի մարդոյն, հաստատեալ թէ որդին Մարիամու տաճար եւեթ էր աստուածութեան, և մարդ լոկ ։ որով վերստին նորոգեցին զթիւր կարծիս Պօղոսի սամոստացւոյ ։ Վասն որոյ հայք սուրբք հաստատեցին ընդդէմ Նեստորի, թէ Քրիստոս Աստուած է և մարդ, մի միայն անձն յերկուս բնութիւնս, սակայն ոչ ըստ Եւտիքեայ բանիցն շփոթեալս ։

Սքանչելի խորհուրդք՝ ամենասուրբ Երրորդութեան և մարդեղութեանն Քրիստոսի հիմունք են քրիստոնական հաւատոյ, վասն որոյ հաւատացեալք ամենայն դարուց զայսոսիկ, և խոստովանին թէ միում եւեթ ամենակարող զօրութեան հարկ 'ի վերայ կայ պաշտօն հարկանել ։ Մարդեղութեան խորհրդոյ արգասիք են և շնորհք ։ Որդին Աստուծոյ առ 'ի փրկութիւն մեր մարդացաւ, բայց ոչ օրինակաւ եւեթ վարուցն իւրոց զփրկագործութեան կատարեաց խորհուրդ, այլ յաւել եւս և հեղմամբ արեան իւրոյ հատուցումն առնել և թողութիւն մեղաց մերոց ։ Առաքեաց զՀոգին սուրբ 'ի լուսաւորել զմեզ և վառել հրով սիրոյն իւրոյ, որով զխոնարհեալ հրապուրանաց ապականեալ բնութե̃՝ զօրանամք 'ի պահպանութիւն աստուածայնոյն պատուիրանաց ։ Զայս ահա սքանչելի վարդապետութիւն քաջայայտ բանիւք ուսոյց առաքեալն Պօղոս, և զօրաւոր փաստիւք հաստատեաց սուրբն Օգոստինոս ը̃դդէմ պեղագեանց, որք համարէին եթէ մարդ բնածին զօրութեամբ և ազատ անձնիշխանութեամբ իւրով կարէ գործել զանձին փրկութիւն, ոչ ինչ իւիք երախտապարտ լեալ Քրիստոսի ։

Սուրբն Օգոստինոս 'ի ցրել զմոլորութիւնս զայս՝ յորինակ 'ի մէջ բերէ զեկեղեցւոյ պաշտամունս ։ քանզի աղօթք և պատրաստք անօգուտ լինէին արդեօք՝ եթէ անձամբ բաւական էաք յառաջադէմ ընթանալ 'ի շաւիղս արդարութեան և սրբութեան. այլ զի յայտնանէ մերձացեալք եմք, աղաչէ եկեղեցի զԱստուած վասն արդեանց Քրիստոսի փրկել զմեզ 'ի փորձութենէ, և զօրացուցանել զմեզ 'ի կատարել անթերի զպատուիրանս նորա, և մտադիւրագոյնս պատրաստել 'ի գործս բարիս ։ Մկրտել քրիստոնէից զմանկունս իւրեանց՝ յայտ յանդիման ցուցանէ զդաւանել նոցա զսկզբնական մեղս ։ Զնոյն փաստս տային 'ի ձեռն և ամենայն հարք վասն համօրէն խորհրդոց, 'ի մէջ ածեալ զնախնի արարողութիւնս եկեղեցւոյ՝ որք հաւաստիք են անընդհատ վարդապետութեան հաւատոյ նորա ։ Սոքօք հաստատեցին զխորհուրդ ամենասուրբ Երրորդութե, յաւէ արարեալ զբանս ձեւոյ մկրտութեան, յորում երեք աստուածային անձինք միօրինակ հաւասար և համապատիւ անուանին. նոյնպէս և յընկղմելոյ անտի երիցս զմանուկն 'ի ջուր, (որ հասարակ էր ամենայն քրիստոնէից յառաջին դարս եկեղեցւոյ,) ցուցանել կամեցան՝ թէ նշանակ է զանազանութեան երից անձանց ։ Ըստ այսմ օրինակի խորհուրդ հաղորդութեան՝ ըստ սրբոց հարց յայտարար է մարդեղութեան Աստուծոյ. զի եթէ Աստուած չէր, զինչ օգուտ էր մեզ ընդունել զմարմին մարդոյ լոկոյ. և ապա իսկ չէր յայտնապէս պաշտօն երկրպագութեան մատուցանել նմա ։ Սոքօք ահա յայտնի տեսանի առանձինն խնամք Աստուծոյ 'ի վերայ եկեղեցւոյ սրբոյ և ամենայն հաւատացելոց, զի զանհաս և զսքանչելի խորհուրդս հաւատոյ կարգեաց նշանակել և արտաքին և զգալի արարողութեամբ, առ զի դիւրըմբռնելի ևս առնելոյ զայնոսիկ գեղջկաց և պարզամտաց ։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Որ ինչ բանք հարցն որոց յաղագս խորհրդոց եկեղեցւոյ ։

ԱՆՍԽԱԼ ուսումն վարդապետութեան խորհրդոց եկեղեցւոյ աներկմիտ հաստատեցաւ 'ի վէճս հակառակութե՟ յուզեալս ընդդէմ Պռոտեստանեանց․ յորս յայտ յանդիմանն ծանուցաւ եթէ յարդեանց կամ յանարժանութենէ պաշտօնէին ոչ ինչ իւիք առաւելու և կամ նուազէ զօրութիւն խորհրդոց․ զի ո՛ ոք և իցէ մատակարար խորհրդոյ մկրտութեան, ինքն ևեթ Քրիստոս ներքսապէս մկրտէ ։ Այլ զի եկեղեցի անդուստ 'ի վերուստ կարևոր համարեցաւ զխորհուրդս զայսոսիկ, յայտնի տեսանի 'ի բանից սրբոյն Յուստինոսի վկայի, սրբոյն Իրենեոսի, Որոգինեայ, սրբոյն Կիպրիանոսի, սրբոյն Ամբրոսիոսի, սրբոյն Կիւրղի Երուսաղեմացւոյ, որպէս և աղեքսանդրացւոյն ։

Ի բանակռուութեանց անտի հարցն որոց ընդդէմ Պռոտեստանեանց․ յայտնի ծանուցաւ և ճշմարտութիւն եկեղեցւոյ սրբոյ ։ Զի ընդ հակառակս բանից նոցա ուսուցին հարք եթէ եկեղեցին Քրիստոսի է կաթուղիկէ կամ ընդհանրական․ այս է ընդ համայն տարածեալ, և ոչ եթէ 'ի գաւառս ինչ ևեթ կամ 'ի սակաւ խումբս մարդկան սահմանեալ, և այն անսպառ ժամանակս ըստ անսուտ խոստմանն Քրիստոսի․ և զի սուրբ է եկեղեցին և անարատ․ և թէ ոչինչ սանանեն սրբութեան նորա արք չարք որք ըստ տեառն բանից որոմանք են բուսեալք և աճեցեալք ընդ բարի ցորենոյ․ այլ 'ի ժամանակի հնձոյն, այս է 'ի կատարածի աշխարհիս, որոշեսցեն զնոսա հրեշտակք ։ Այլ զի առաքելական է եկեղեցի յանընդհատ յաջորդութենէ անտի եպիսկոպոսաց, և 'ի միութենէ նոցա ընդ աթոռոյ սրբոյն Պետրոսի, որ է կենդրոն ուղղափառ հաւատոյ ։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Թէ որպէս հրահանգէին Հարք սուրբք զժողովուրդն 'ի վարդապետութիւնս հաւատոյ :

ՅԱՌԱՋԻՆ դարս անդ եկեղեցւոյ չէր հնար կանգնել առանձինն վարժարանս՝ ուր 'ի մի հաւաքեալ եպիսկոպոսաց զկղերս ուսուցանէին նոցա զվարդապետութիւնս հաւատոյ . այլ յեկեղեցիս ևեթ մեկնաբանէին յաճախ զսուրբ գիրս : Սակայն 'ի համբաւեալ քաղաքամայրս կարգեալ կային կրթարանք 'ի հրահանգել զերախայս, յորս մի ոմն յերիցանց բացայայտէր նոցա զմասունս հաւատոյ, զոր հանդերձեալ էին ընդունել . որպէս յԱղեքսանդրիա քաղաքի Կղեմէս և Որոգինէս վարժապետք կացին այսր դպրութեան : Սովոր էին դարձեալ եպիսկոպոսք առ իւրեանս ունել կղերիկոսունս ոմանս, զորոց իբր զորդւոց փոյթ յանձին ունէին առանձինն օրինակաւ հրահանգել զնոսա 'ի վարժս կարևորս . յայսպիսեաց աստի էր սուրբն Աթանաս՝ առ սրբոյն Աղեքսանդրի հայրապետի, սուրբն Յովհան Ոսկեբերան առ սրբոյն Մելիտոսի, սուրբն Կիւրեղ առ Թէոփիլոսի պատրիարգին . և յաշակերտաց անտի սրբոյն Օգոստինոսի և Փուլգենտիոսի բազումք կացին արք աստուածարեալք անուանիք 'ի սրբութեան և յիմաստութեան :

Ի նախնի դարս յընծայել անդ զոք 'ի քահանայ կամ յեպիսկոպոս, ոչինչ փոյթ յանձին ունէին առնուլ 'ի քըննին, թէ վարժ իցէ արդեօք յարտաքին ուսմունս և յիմաստասիրական հրահանգս, զորս ոչինչ կարևոր համարէին քրիստոնէից՝ 'ի հաւատս, զի և առաքեալք սուրբք և նախնի աշակերտք նոցա չէին երբէք վարժեալք յայնպիսիս, և սակայն հաւատացեալք ամենայն մեծարեալ պատուէին զնոսա : Տեսանեմք դարձեալ ամբարձեալս 'ի պատիւ եպիսկոպոսութեան զանեարս որդւոց և ընտանեաց . որպէս և զարհեստաւորս և զվաճառականս անգէտս և անուս՝ բարեկրօն գնացիւք ևեթ իւրեանց յայն հասեալ աստիճան : Ոչ էր նոցա դարձեալ փոյթ խնամ ունել բազմալեզու հմտութեան, զոր և հեթանոսք անդամ ժամանակին ոչինչ կարեւոր համարէին. Համայեցիք եւեթ՝ վասն յառաջադէմ ընթանալոյ յիմաստասիրական մարզս ուսանէին զլեզու յունաց։ Յամենայն տեղիս աղօթք եւ ընթերցմունք հասարակաց լինէին ըստ սեպհական բարբառոյ ազգաց իւրաքանչիւր եւ գաւառաց. յարեւմուտս ՚ի լատին բարբառ կատարէին պաշտամունք եւ աղօթք եկեղեցւոյ, իսկ յարեւելս ազգ իւրաքանչիւր զիւրն վարէր բարբառ, որպէս ազգն մեր, Յոյնք Ասորիք եւ այլք. եւ զի քահանայք սոցա եւ եպիսկոպոսունք՝ իւրեանց եւեթ բարբառոյ տեղեակք էին, ՚ի բազմաժողով սիւնհոդոսն հարկ լինէր թարգմանաւ խօսել նոցա ընդ միմեանս։

Իսկ ուսումն եւ գիտութիւն քահանայից եւ եպիսկոպոսաց ժամանակին՝ յաճախ վերծանութիւն էր ա̃ծաշունչ տառից, մինչեւ բազմաց ՚ի բերան ածել զայն. Փոյթ յանձին ունէին գտանել ՚ի նոսա փաստս եւ ապացոյցս հաստատել նոքօք զվարդապետութիւնս հաւատոյ, եւ զգլխաւոր կանոնս բարեկարգութեան վարուց, զորս ՚ի լոյս եւ կամ ընթերցմամբ գրոց ուսեալ էին։ Փոյթ մեծ էր նոցա դարձեալ ուսանել զկանոնագիտութիւն, այս է զսահմանս բարեկարգութեանց՝ գրովք կամ անգիր աւանդելոց ՚ի պէտս վարուց եւ պաշտամանց եկեղեցւոյ, զորս ջանային պահել անվրէպ։ Եւ թէպէտ սոքօք եւեթ եւ խոհական գնացիւք եւ բարեպաշտութեամբ վարուց յանդորրու ունէին զհաւատացեալս, սակայն կային յայնժամ եւ բազում եպիսկոպոսունք եւ երիցունք համբաւեալք եւ արտաքին գիտունք. որպիսիք անունք եղեն սուրբն Բարսեղ, Ոգոստինոս եւ այլք, որք զուսումն զէն զօրաւոր ՚ի ձեռն առին պաշտպան կալ ճշմարտութեան, եւ պապանձեցուցանել զպարսաւագիրան արտաքին գիտութեանց։

Իսկ եղանակ հրահանգելոյ նոցա զայլս չէր ինչ միօրինակ, զի այլազգ խօսէին ընդ անհաւատս, այլազգ ը̃ որդիս եկեղեցւոյ եւ այլազգ ընդ հերետիկոսս։ Ը̃ հեթանոսս գուն գործէին ձգել յուղղութիւն վարուց, զի եւ անօգուտ համարէին խօսել զհաւատոց առ յուզեալն յախտաւոր կրից եւ դանդաղեալս ՚ի տապատիր մոլորութիւնս մտաց. վասն որոյ օրինակօք եւեթ բարեաց, աղօթելով վասն նոցա, համբերութեամբ եւ մարմնաւոր ձեռնտուութեամբ ջանային շահել զնոսա ․ և իբրև զգօնացեալս զնոսա տեսանէին՝ յայնժամ ապա ձեռն արկեալ վարդապետէին զհաւատոյն ։ Իսկ եթէ հեթանոսն նորամուտ որ էր և իմաստուն, յայնժամ և հայք ՚ի ձեռն առնուին և զմարդկային գիտութիւնն՝ նոքօք ճանապարհ հորդել նոցա ՚ի ճշմարիտ իմաստասիրութիւն, և ահա ը̄ օրինակիս ըստ այսմիկ Որոգինէս հրահանգեաց զսուրբն Գրիգոր սքանչելագործ ։

Օ հաստատեալ ուղղափառ եկեղեցւոյ քաջալերէին անշարժ մնալ ՚ի թունիցն հերձուածողաց, և հաստատէին զնոսա ՚ի վարս բարեպաշտութեան ։ Այս սակս ամենայն ձեռք նախնի հայոց և վարդապետաց էին զբարոյական խնդրոց և զմոլորութեանց ժամանակին ․ որոց թէ անգէտ ոք իցէ, չիմանայ քաջ զբանս նոցա և կամ յընթեռնուլ անդ չառնու զճաշակ իմաստիցն ։ Վասն որոյ եկեղեցականն պատմութիւն ձեռնտու մեծ է՝ առ ՚ի քաջ խելամուտ լինել և իմանալ որպէս արժան է զբանս սրբոց հայոց ․ քանզի ՚ի գիտել անդ ուրուք թէ երբ այս կամ այն հերձուած ծագեցաւ յեկեղեցւոջ, դիւրաւ հասու լինի թէ ընդէր հարք քարոզէին յաճախ զմասունս ինչ հաւատոյ, և էր վասն հարկ համարէին երբեմն թողուլ ՚ի բաց զնկարագրական իմաստս սուրբ գրոց, և առնուլ ՚ի ձեռս զփոխաբերականն, զբարոյականն և զայլաբանականն ․ քանզի հմուտք էին և կէտ նպատակի իւրեանց եդեալ զօգտակարագոյնն ՚ի հրահանգս հօտին ։

Իսկ ՚ի վիճելն ընդ հերետիկոսս՝ ջան գործէին առնուլ ՚ի ձեռս զնկարագրական իմաստս սուրբ գրոց, և եթէ ուրեք երբեք փոխաբերականսն վարէին, այն էր ըստ միտս հակառակորդաց, զի ՚ի բանից անտի նոցին կարկեսցեն զնոսա ․ և մատեանք նոցա օգտակարք են յոյժ առ ճշմարտիւ ՚ի վերայ հաստատել իմաստից ս̄բ գրոց, և պայծառութեան վարդապետութեան եկեղեցւոյ ։

Նախնի հարք զգուշաւորագոյնք էին յոյժ ՚ի խնդիրս հաւատոյ ․ շատ համարէին լուծանել եթէ զառաջարկեալ դժուարութիւնս, և ոչ եթէ նոր ինչ ածել ՚ի մէջ ․ արթնութեամբ սանձէին զհետազօտութիւն թե թեատրոնաց և անհրահանգից, և ոչ ումեք թոյլ տային բանակռուիլ լինել զհաւատոց, որպէս յայտ է՛ի խրատուց անտի սրբոյն Գրիգորի Նազիանզացւոյ, յորս յայտնի ցուցանէ՝ թէ ոյք ոմանք խօսել կարիցեն զաստուածաբանական նիւթոյ։

ԳԼՈՒԽ Ի.

Յաղագս գիտութեան նախնի հարց։

Որ միանգամ ուշի ուշով ընթերցեալ իցէ զգիրս նախնի հարց և վարդապետաց եկեղեցւոյ, չկարէ յերկբայս լինել՝ թէ չիցեն նոցա իմաստունք և պերճախօսք։ Զիմաստունդ անուն թէպէտ և ըստ մտաց ռամկին իմանայցէ ոք, այն է յաճախ վերծանութեամբ ստանալ զծանօթութիւն բազմապատիկ իրաց, ոչ պակասէր և այդ առ նախնի հարս, զոր հմտութիւն մանաւանդ պարտ է կոչել. և այս գիտութիւն կամ հմտութիւն յաճախ տեսանի 'ի բանս Կղեմայ Աղեքսանդրացւոյ, Որոգինի, Եւսեբեայ կեսարացւոյ, և այլոց յոգունց։ Զի եթէ չէին եկեղեցական մատենագիրք, արդ անուն իսկ բազմաց 'ի նախնի քերթողաց և փիլիսոփայից կորուսեալ և անհետ եղեալ էր։ Ընդառին 'ի մանուկ տիոց թարթափէին 'ի գիրս մատենագրացն այնոցիկ. վասն որոյ բազում այն է զի 'ի վկայութիւն կոչեն զբանս նոցա, և եթէ չիցէ ոք դեգերեալ 'ի հմտութիւնս արտաքին ուսմանց՝ ոչ որպէս արժանն է հասու լինի բանից հարցն սրբոց։

Իսկ եթէ խնդրիցեմք 'ի նոսա ը̄ արտաքին հմտութեն և զճշմարիտ գիտութիւն, ո՛ր այլ մարթ իցէ մեզ գտանել զայն յորդեալ և զեղեալ քան 'ի գործս նախնի հարց։ Գիտութիւն կոչեմ զճշմարիտ իմաստասիրութիւնն, որ զքննելի կարգաւորութիւն բանից և նորին պատճառօք առաջնորդէ մարդկան ժամանել 'ի ծանօթութիւն ճշմարիտ բարւոյն, և հաստատունս առնէ զմիտս յառաքինութիւնս և երանելիս 'ի կեանս։ Յայս ազգ գերագոյն և նուրբ գիտութեան համբաւեալ հանդիսացաւ առ Յոյնս սուրբն Բարսեղ, որ 'ի գիրսն ընդդէմ Եւնոմիոսի խորին վարդապետութեամբ առնէ զնա 'ի հաւա-

նութիւն բանիցն ասացելոց և 'ի նմանիս ինչ իւր եղծանէ զիմաստակութիւնս Կղեստիոսի։ Նոյնպէս և սուրբն Գրիգոր Նազիանզու՝ յաստուածաբանական ճառս իւր, և սուրբն Աթանաս 'ի գիրսն ընդդէմ հեթանոսաց և արիոսեանց։ Իսկ առ Լատինս գերազանցեալ քան զամենեսին անհամեմատ առաւելութեամբ սուրբն Օգոստինոս, որ զարմանալի հանճարովն և նրբագոյն պերճախօսութեամբ բացայայտ և պայծառ բանիւք 'ի լոյս ընծայէ պատճառս բանաւորս և համոզողականս։

Ի պահանջել ևեթ հարկին խօսէին զհաւատոց, և զայն ըստ այլ և այլ հանգամանաց ունկնդրացն. զբանս իւրեանց ոչ անցուցանէին 'ի գիր՝ եթէ ոչ 'ի պատահման առնել անդ ումեք գրով, և կամ 'ի զինել ընդդէմ հերետիկոսաց։ Բազում այն էր զի զիմաստասիրականն վարէին եղանակ բանից, և աքանչելի պերճախօսութեամբ վեր 'ի վայր տապալեալ զխոչընդոտն խափանաբար որ 'ի կրից և 'ի մոլար ուսմանց՝ առաջնորդէին մարդկան ճանաչել զճշմարտութիւն։

ԳԼՈՒԽ ԻԱ.

Յաղագս յատկաբանութեան նախնի Հայոց։

ՆԱԽՆԻ Հայք Յունաց և Լատինացւոց թէպէտ և յաջողակք 'ի բնիկն իւրեանց բարբառ, սակայն չէին վարժեալք յանվթար ոճ և 'ի սեպհական յատկութիւնս լեզուին իբր զնախնի ատենախօսս։ Իսկ թէպէտ սուրբն Պօղոս յառաքելական թուղթս իւր զյունական անհարազատ բարբառն 'ի կիր առնու, սակայն և այնպէս զօրաւոր ձեռնարկութեամբք յաղթահարէ զընդդիմակացս ճշմարտութեան. ահարկու է և սիրելի, միանգամայն քաղցրանոյշ և ազդու։ Վասն որոյ 'ի դատել ուղղութեամբ՝ պարտ է զանազանել զպերճախօսութիւն 'ի յատկաբանութենէ, որ սեթևեթ միայն է և արտաքին տեսիլ պերճախօսութեան. այլ իբր ամենայն լեզու վարեալ 'ի գործ, որչափ և ռամկաբարբառ իցէ՝ պերճ լինի եթէ որ գիտասցէ ընտրել զխօսս զօրաւորս և ըստ կարգի դասաւորել զայնոսիկ, 'ի կիր առնուցու նկարագիրս կենդանիս, ձևս պատշաճականս որք կորով 'ի բանսն յաւելեալ ածէին զունկնդիրս հաւանել բանիցն առաքելոց։

Եթէ որ կամիցի 'ի քնին առնուլ զբանս նախնի հարց, չպարտի 'ի կշիռ համեմատութեան դնել զնոսա ընդ վաղեմի ատենախօսս՝ որք բազում ամօք կացին յառաջ քան զնոսա, այլ պարտ է համեմատել ընդ ատենաւոր մատենագրաց ժամանակակցաց նոցին. որ զօրէն Ամբրոսիոս ընդ Սիւմմաքոսի, զատուրբն Նազարեղ ընդ Լիբանիոսի. որով յայտնի տեսանի՝ թէ ո՛ր խտիրք զանազանութեան լիցեն 'ի նոսա. զի պերճախօսութիւն որոյն Նազարի պարզ է, անմեղ և բնական, իսկ Լիբանիոսին մնապաճոյճ, արուեստակեալ և տղայական։

Ատենախօսութիւնք սորոյն Յովհաննու Ոսկեբերանի թէպէտ և չիցեն արուեստիւ յղկեալք իբրև զԴեմոսթենեայն, սակայն ընթացք ձառիցն ոչ ինչ նուազ արժանի են գովեստից քան զԴեմոսթենեսին։ Գիտէ նա քաջ զպատեհ ժամ խօսելոյ և զլռութեան, և թէ զորո՛ց իրաց պարտ իցէ բանս 'ի մէջ առնուլ, զո՛ր կիրս սանձել, և յո՛րս խրախուսել։ Տես ինձ զիա՛րդ վարեցաւ նա 'ի դէպս արձանիցն յԱնդրիական ձառս իւր, զաւուրս եօթն յառաջին յոյզս խռովութեանն ոչ ինչ խօսեցաւ, և 'ի ժամանել գործակալաց կայսեր ընդհատեաց զձառս իւր. և 'ի սկիզբն առնել բանիցն ամենայնիւ կարեկից լինի աղէտից վշտակիր ժողովրդեանն, և յետ աւուրց ինչ սակաւ սկսանի վերստին մեկնել զսուրբ գիրս։ Ահա յայսմ, և ո՛չ 'ի սեթևեթ ձևս անցման կամ զխնամութեան հանդիսանայ պաճուճելի արուեստ ատենախօսի։

Ըստ այսմ օրինակի և սուրբն Օգոստինոս կամելով խափանել զագապն, որ պատճառք էր բազմադիմի անկարգութեանց, զաւուրս երկուս անընդհատ խօսեցաւ ձառս երկայնս, և անօգուտ համարեցաւ զբանն ցորչափ գովեստք ընդ այնր յաճախէին 'ի ժողովրդենէն. բայց 'ի տեսանելն զարտասուս նոցա՝ ոգի առեալ զօրացաւ և ոչ դադարեաց 'ի խօսից մինչև եհաս բղձիցն։ Այնպէս և սուրբն Ամբրոսիոս հալածեալ 'ի թագուհւոյն Յուստինեայ՝ մխիթարէ զժողովուրդ իւր, քաջալերէ, և սանձէ զնոսին կալ 'ի չափու, յարմարելով զխօսն առ անձինս, առ ժամանակն և առ հանգամանս ունկնդրաց։

Արքայան ատենախօսին պարտ է լինել այր բարեկրօն և առաքինի, որ յօգուտ լսողաց զբանս յարդարիցէ. և զի ունկնդիրք հաւատասցեն՝ եթէ խօսի նա զօգտակարս ՚ի շահ իւրեանց, որով գոգցես յականջս իմն ատակին հաւանել բանիցն ասացելոց։ Իսկ քանզի այսպիսիք ոմանք էին նախնի եպիսկոպոսունք և առաջնորդք ժողովրդեան՝ վկայեալք առաքինազարդ վարուք, ճարտարխօսութեամբ և հոգևոր իշխանութեամբ, շատ էր ելանել եւեթ նոցա յատեան առ ամոքել զլսելեացն միտս։

ԴԱՐ ՎԵՑԵՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա·

Խռովութիւնք ՚ի պատճառս ժողովոյն Քաղկեդոնի ։

Ի ՍԿԶԲԱՆ վեցերորդի դարուս տագնապք խռովութեան եւտիքականաց աղմկեցին զանդորրութիւն եկեղեցւոյ · քանզի յամին 509 երկերիւրիւ չափ եւտիքական միայնակեացք գնացին առ Անաստաս կայսր, և շնորհս գտեալ առաջի նորա՝ բողոք բարձին ընդդէմ պատրիարգին Կոստանդնուպօլսոյ և ժողովոյն Քաղկեդոնի, և համախոհ նոցին Յովհաննէս պատրիարգն Աղեքսանդրիոյ զրամս յոլովս խոստացաւ կայսեր եթէ անհետ արարեալ ջնջեսցէ զանուն ժողովոյն Քաղկեդոնի ։ Սակայն բազումք յուղղափառ վարդապետաց նամակագիր եղեն առ կայսրն պաշտպան կալ որոյ ժողովոյն · և պատրիարգն Կոստանդնուպօլսոյ Մակեդոն երկրորդ՝ ընդ բանիւ արար զՓլաբիանոս եպիսկոպոսն Անտիոքայ, և զԹշնամիս այնր ժողովոյ ։ Զայրացեալ ընդ այն կայսեր կամեցաւ ընկենուլ զպատրիարգն ՚ի պատուոյն · բայց եկեղեցականք և ժողովուրդք բանի հակառակ կացին այնմ, և ոչ թողին մեկնել նմա ՚ի քաղաքէն ։ Սակայն զկնի երկուց ամաց բռնադատեաց զնա կայսրն թողուլ զաթոռն և գնալ յաքսորս յամին 511 · և ՚ի մեկնել նորա՝ յուղեալ գտին առ նմա զմատեան գործոց և զպատմութեան ժողովոյն Քաղկեդոնի, զոր թագուցեալ էր յեկեղեցւոջ · և առեալ զայն այրեցին ՚ի հուր, և կարգեալ կացուցին փոխանակ նորա պատրիարգ Կոստանդնուպօլսոյ զերէց ոմն չարափառ Տիմոթէոս անուն · այլ այս գործ պատճառք եղև անհնարին աղէտից և քաղաքական մարտի, յորում կոտորեցան տասն հազար այր ։ Զնմանօրինակ աղմուկ խռովութե՟ յարոյց յԱնտիոք քաղաքի Փլաբիանոս եպիսկոպոս՝ մերժեալ զժողով Քաղկեդոնի. վասն որոյ տարագրեցաւ ՚ի քաղաքէն և մեռաւ յաքսորս ։

Պաշտպան և ձեռնտու ուղղափառութեան եկաց ՚ի ժամանակիս Վիտալիանոս իշխանն Գոթաց. որոյ կամեցեալ լուծանել զվրէժ չարութե՟ն Անաստասայ՝ զօրաժողով լեալ յարձակեցաւ ՚ի Թրակիա, և եհաս մինչև ՚ի Կոստանդնուպօլիս. յորմէ աճապարեալ կայսեր՝ մեծամեծ պարգևօք հաշտեցոյց զնա և խոստացաւ յետս դարձուցանել զՄակեդոն պատրիարգ և զայլ ամենայն աքսորեալսն ։ Բայց իբրև ստեաց խոստմանն, զայրացեալ Վիտալիանոսի վերստին դիմեաց ՚ի Թրակիա. զայն լուեալ Անաստասայ կայսեր՝ փութացաւ միւսանգամ հաճել զերեսս նորա այլովք ևս ծանրագին պարգևօք, և ամբարձ զնա ՚ի պատիւ զօրավարութեան հեծելազօրուն ։ Աղաչեաց զնա դարձեալ լինել միջնորդ առ քահանայապետն Որմիզդ, և փութացուցանել ՚ի գումարումն ընդհանրական ժողովոյ ՚ի խաղաղել զհակառակութի՟ւ եպիսկոպոսաց ։ Ապա նենգապատիր խաբէութեամբ յամին 516 առաքեաց և գործակալս առ պապն, և բարձեալ ՚ի Վիտալիանոսէ զպատիւ զօրավարութեան՝ ետ զայն Հռուփինոսի ումեմն իւրում սիրելւոյ, որ դառն ոսոխ և հալածիչ եկաց ուղղափառաց ։ Նշանեալն Որմիզդ քահանայապետ հաճել կամելով զկամս կայսեր՝ յամին 517 հրեշտակս առաքեաց ՚ի Կոստանդնուպօլիս. այլ նա փոխանակ մեծարեալ պատուելոյ զեկեալսն՝ անարգանօք ընկալաւ զնոսա, մինչև ստիպել դեսպանացն փութով դարձ առնել անդրէն ՚ի Հռոմ ։ Ապա ժպրհեցաւ Անաստաս գրել և թուղթս թշնամանալից առ սուրբ քահանայապետն, և սկսաւ հալածել զուղղափառս արևելեան կողմանց ։ Այլ յետ սակաւուց պատուհաս երկնաւոր ժամանեալ նմա, կայծակնահար մեռաւ ՚ի մետասաներորդի աւուր ապրիլի յամին 518, ՚ի հասակի ութսուն և ութ ամաց. և յաջորդեաց զնա ՚ի կայսերութեան Յուստինոս Թրակացի, հովանի և պաշտպան ուղղափառաց ։

Տարաձայն հակառակութիւնք Յունաց զուրբ ժողովոյն Քաղկեդոնի յերկմիտս կացուցին զազգ մեր զսրբութենէ նորա և զուղղափառութենէ. և թէ որպէս վրիպեալ գտան յայսմ՝ փոքր 'ի շատէ գրեցաք 'ի վերոյ 'ի պատմութիւնս ազգային ժողովոց Հինգերորդի դարուն ։

ԳԼՈՒԽ Բ.

Դարձ զանազան ազգաց և ժողովրդոց 'ի հաւատս Քրիստոսի ։

ՀՌՈՎՄԷԱԿԱՆ պետութիւնն բուռն սաստկութբ քայքայեալ յարևմուտս, յաւարի առաւ 'ի հիւսիսաբնակ խուժադուժ ազգաց, յորոց սակի էին Հերուլք, Սուեւեանք, Վանդալք, Փրանկք, Գոթք և Անկլոսաքսոնք. որով եկեղեցին Քրիստոսի անկաւ 'ի բազմադէմ վիշտս. սակայն և մխիթարեցաւ ոչ սակաւ 'ի տեսանելն զոմանս 'ի գազանամիտ վայրենի ազգացն այնցիկ մտանել ընդ լծով քրիստոսական կրօնից ։

Յարաբիա 'ի վրանաբնակ ազգս, որք 'ի վերջ կոյս չորրորդի դարուն հեռացեալ 'ի կռապաշտութենէ ընկալեալ էին զքրիստոսական հաւատս, յայսմ վեցերորդ դարու յաւելան 'ի նոսին և այլ բազումք 'ի նոցունց անտի Արաբացւոց ։ Օ այսու ժամանակաւ բազումք յայլազգի ժողովրդոց որ առ ափամբք Սեաւ և Կասպից ծովուց՝ Հերուլք, Պեկք կամ Լազք, Ալանք և Հոնք, որպէս և այլ ազգք անծանօթք՝ լուսաւորեալք քարոզութեամբ առաքելաջան վարդապետաց թէպէտ և ընկալան զքրիստոնէութիւն յաւուրս Յուստինեայ կայսեր, սակայն ոչ յետ բազում ժամանակաց յելանել դենի մահմետականաց բռնի վարեցան 'ի նոյանէ յուրացութիւն ։ Արքայն Հերուլեանց Գրետաս յամին 528 երթեալ 'ի Կոստանդնուպօլիս, հրահանգեցաւ անդ 'ի վարժս քրիստոսական կրօնից, և ընկալեալ զմկրտութիւն՝ յորդոր եղև զօրացն դառնալ 'ի հաւատս ճշմարտութե ։ Նոյնպէս և Կորդաս թագաւորն Պեկաց բնակելոց հուպ 'ի նեղուցն Կոստանդնուպօլսոյ՝ ընկալաւ զքրիստոնէութիւն, և դաշնակից եղև Յուստինեայ կայսեր ։

Սուրբն Պատրիկիոս՝ այր մեծարոյ բանիւ և գործով, 'ի հինգերորդի դարուն հրաշալի փառքն և մեծամեծ սքանչելեօք յինքն ձգեալ զմիտս Իռլանտացւոց, դարձոյց զնոսա 'ի հաւատս Քրիստոսի ։ Ի Գերմանիա՝ Բոյեանք և Տուրինկեանք յետ կացեալ 'ի խաւարէ հեթանոսութեան՝ ընկալան զքրիստոնէութիւն, և յետ ժամանակաց ինչ մեծապէս յառաջադէմ գտան 'ի նմին ։

ԳԼՈՒԽ Գ.

Վիճակ եկեղեցւոյն Հռովմայ ։

ՆՈՐԱՀԱՒԱՏ ժողովուրդք՝ մանաւանդ արևմտեան կողմանց՝ մեծապէս պարտական գտանին հոգեջան խնամոց քահանայապետացն Հռովմայ, 'ի ձեռն որոց ծանեան զճշմարտութիւն քրիստոնէական հաւատոյ ։ Ի սկիզբն վեցերորդի դարուս ունէր զաթոռ քահանայապետութեան սուրբն Սիմմաքոս սարդենիացի, համբաւեալն նախանձու աստուածպաշտութեան, որ վարեաց զքահանայապետութիւն զամս իբր վեշտասան ։ Յետ նորա յամին 514 կալաւ զաթոռն երանելին Որմիզդ փրոզինոնեցի զամս ինն. սա ընկալաւ պսակ ոսկի 'ի Քլովեայ արքայէն Գաղղիացւոց 'ի նշան պատուոյ և մեծարանաց, որով մեծարեացն զփոխանորդն Քրիստոսի ։ Եւ յամին 519, 'ի հինգերորդ ամի քահանայապետութեան իւրոյ հրեշտակս առաքեաց Որմիզդ 'ի Կոստանդնուպօլիս առ Յուստինոս կայսր, և զոր միանգամ խնդրէրն ընկալաւ 'ի նմանէ ։ Մի 'ի խնդրոց նորա էր վերստին յայտարարութիւն դատապարտութեան Թիւր կարծեաց Նեստորի, Եւտիքեայ, Դէոսկորոսի, Տիմոթէոսի, Պետրոսի Թափչի, Ակակիոսի և այլոց մոլորամիտ հերետիկոսաց ։ Խնդրեաց դարձեալ 'ի նմանէ մի ևս յիշատակել յաղօթս զանուանս անանց պատրիարգաց Կոստանդնուպօլսոյ, և զերկոցունց կայսերացն զԶենոնի և զԱնաստասայ ։

Յետ վախճանի սրբոյն Որմիզդայ եկաց քահանայապետ սուրբն Յովհաննէս Ա. մարտիրոս՝ տոսկանացի, յամի տեառն 523 ։ Եւ զի յերկրորդ ամի քահանայապետութեան սորա Յուստինոս կայսր առանձինն հրովարտակօք հալածեալ զարիոսեանսն՝ զեկեղեցիս նոցա պարգևեալ էր ուղղափառաց, արիոսականք բողոք բարձին առ Թէոդորիկոս արքայ Իտալիոյ կուսակից իրեանց, որ ստիպեաց զքահանայապետն գնալ 'ի Կոստանդնուպօլիս առ Յուստինոս կայսր, և յորդոր լինել նմա յետս կոչել զհրովարտակն, և մի ևս այլ զինել ընդդէմ արիոսականաց, ապա թէ ոչ՝ սպառնայր զնոյն անցս անցուցանել ընդ ուղղափառս Իտալիոյ։ Յուստինոս կայսրն արժանաւոր շքով ընկալաւ 'զեկեալն, այլ ոչ կամեցաւ լսել ձայնի խնդրուածոյ նորա. ընդ որ զայրացեալ Թէոդորիկոսի բանտարգել արար զքահանայապետն 'ի Ռաւեննա քաղաք. 'ուր և վախճանեցաւ 'ի 27 մայիսի յամի տեառն 526, կացեալ 'ի հայրապետութեան զամս երիս։ Յետ նորա 'ի նմին ամի նստաւ յաթոռ քահանայապետութեան սուրբն Փելիքս Դ· սամնիեցի, զամս չորս և զամիս երկու։ Ապա կալաւ զաթոռն Բոնիփակիոս Բ· գոթացի յազգէ՝ և ծննդեամբ հռովմայեցի, որ յերկրորդում ամի քահանայապետութեան իւրոյ ընտրեաց իւր յաջորդ զՎիգիլիոս սարկաւագ, սակայն յանձն արար ապա զայն 'ի կամս օրինաւոր ընտրողաց։ Նստաւ 'ի քահանայապետութեան զամս երկու։ Զկնի նորա յամին 532 ընտրեցաւ Յովհաննէս Բ· հռովմայեցի՝ մականուանեալն Մերկուրիոս, և կալաւ զաթոռն զամս երկու և զամիս չորս. 'ի սորա աւուրս նորոգեցան 'ի Պաղեստին վէճք Որոգինեանց և 'Նեստորականաց։ Յետ Յովհաննու եկաց քահանայապետ սուրբն Ագապետոս Ա· հռովմայեցի զամիս տասն և զաւուրս իննևտասն. զսա յորդորեաց դարձեալ Թէոդորիկոս գնալ 'ի Կոստանդնուպօլիս առ Յուստինոս կայսր. այլ և ոչ նմա ինչ լսաւ կայսրն, որպէս և զառաջինն ոչ ինչ անսացեալ էր խնդրուածոյ Յովհաննու Ա։ Վախճանեցաւ 'ի Կոստանդնուպօլիս համբաւեալ սրբութեամբ վարուց և իմաստութեամբ։

Զկնի նորա յամին 536 ընտրեցաւ քահանայապետ սուրբն Սիղուերիոս ծնեալ 'ի Կամպանիա, որ կալաւ զաթոռն զամս երկու։ Ապա Վիգիլիոս սարկաւագ եկեղեցւոյն Հռովմայ ընտրեցաւ 'ի Թէոդորայ թագուհւոյն և 'ի Բելիսարիոսէ՝ խոստումն տուեալ նոցա միաբանել զարևմտեան եկեղեցին ընդ արևելեայս, և բառնալ 'ի միջոյ զժողովն Քաղկեդոնի. բայց անհնարձեալ 'ի պատիւ քահանայապետութեան՝ բարենախանձ հոգւով խնամ կալաւ քաւել զյանցանս որովք ժամանեաց յայն իշխանութիւն։ Վասն որոյ օրինաւոր քահանայապետութիւն նորա ճանաչի յամէ տեառն 538, յետ մահուան սրբոյն Սիլուերիոսի։ Կալաւ զաթոռն զամս վեշտասան և զամիսս վեց։

Յետ Վիգիլեոսի կացին քահանայապետք՝ Պեղագիոս Ա. զամս չորս և զամիսս տասն. ապա Յովհաննէս Գ. Հռովմայեցի, զամս իբր երեքտասան. զնա յաջորդեաց Բենեդիկտոս Ա. Հռովմայեցի, զամս չորս և զամիսս երկու. զկնի նորա Պեղագիոս Բ. Հռովմայեցի, զամս երկոտասան և զամիսս երկու։ Սոքա ամենեքեան կալեալ զաթոռն մինչև ցամ տեառն 590, ոչինչ նոր և երևելիս գործեցին. բայց յետ նոցա ընտրեցաւ սուրբ Գրիգոր մականուանեալն Մեծ։ Զորոյ զվարուցն և զկենաց համառօտութիւն հակիրճ բանիւք առանձինն գլխով դրոշմեսցուք 'ի ստորև։ Այլ արդ խօսեսցուք սակաւուք զմոլորութեանց՝ յորոց տագնապեցաւ այս դար։

ԳԼՈՒԽ Դ.

Յաղագս Եռաստուածեանց, և Ակումիտաց կամ Անհանգստից։

Աղանդ և թիւր վարդապետութիւնք Ապողինարի, Նեստորի և Եւտիքեայ ծաւալեալք 'ի բազում տեղիս՝ երկպառակեալ և հերձեալ էին զժողովուրդս արևելեան կայսերութեան։ Ապողինար ուսուցանէր՝ եթէ Բանն Աստուած առեալ իցէ զմարմին և եթ մարդկային առանց հոգւոյ և մտաց, զորոց զտեղին ինքնին լնու, այսէ, Բանն Աստուած։ Նեստոր հաստատէր զբարոյական զմիաւորութիւն երկուց բնութեանց 'ի միութեան գործոյ և կամաց. իսկ Եւտիքես դնէր 'ի Քրիստոս զմի և եթ բնութիւն։ Մինչև յայս չփոթս խառնակութեան յաւելին արևելեայք, յարեաւ և միւս այլ մոլորութիւն Յովհաննու ուրումն Փիլիպոնի գրամարտիկոսի որ եդեալ յերրորդութեան երիս բնութիւնս և երիս անձինս, ուսուցանէր՝ թէ իցեն երեք Աստուածք. յոյր սակս աշակերտք նորա անուանեցան Եռաստուածեանք ։ Յայս մոլորութիւն յաւել և զայն՝ թէ հոգիք 'ի յարութեան ոչ կարեն յառնել սեպհական մարմնով իւրեանց ։ Սակայն մոլորութիւնքս այսոքիկ չեղեն այնպէս զառնաղէտք՝ որպէս զՆեստորականացն և զԵւտիքեանց ։

Ընդ այն ժամանակս ծագեցաւ և մոլորութիւն Ակումիտ կամ Անհանգիստ անուանեալ միայնակեցաց, որք յերիս դասս բաժանեալ՝ կարգաւ միմեանց զկնի զտիւ և զգիշեր անընդհատ հսկէին յօրհնութիւնս և 'ի փառաբանութիւնս Աստուծոյ ։ Սակայն անկան ապա 'ի զժպատեհ և յանդգնելի մոլորութիւնս ․ զի ոչ կամէին լսել և կամ դաւանել թէ մին յանձանց Երրորդութեան մարմնացեալ իցէ, ծնեալ 'ի կուսէ և չարչարեալ ։ Հռոմայապետն Յովհաննէս Բ դատապարտեալ զկարծիս նոցա, իբրև ետես զի ոչ հպատակէին ուղիղ վարդապետութեան եկեղեցւոյ, ընդ բանիւ արկեալ նզովեաց զնոսա ։

ԳԼՈՒԽ Ե․

Յաղագս Երից գլխոց գրոցն Թէոդորետոսի ։

ՅԱՅՍՄ դարու յուզեցաւ և այլ խնդիր հակառակութեան 'ի պատճառս Երից գլխոց գրոցն Թէոդորետոսի, որ շփոթս անբաւ յուզեաց յեկեղեցւոջ առաւել քան զՆեստորեանս և քան զԱկումիտս ։ Արդ քաջ խելամուտ լինել խնդրոյս հարկ է 'ի ծագումն Նեստորական մոլորութեանն 'ի վեր ելանել ։ Յամի տեառն 436 Թէոդորետոս աշակերտ՝ Նեստորի դատապարտելոյ հինգ ամօք յառաջ 'ի ժողովն Եփեսոսի հնարս հնարեցաւ 'ի չքմեղս առնել զբանս վարդապետին իւրոյ, հաստատելով զայնոսիկ վկայութեամբ Դիոդորի Տարսոնացւոյ, և Թէոդորի Մոպսուեստացւոյ, որք գրովք իւրեանց և առաքինի վարուցն համբաւով պատուեալ էին յոյժ յաչս արևելեայց ․ վասն որոյ խնամ կալաւ առնել բաղդատութիւն գործոց երկոցունց մատենագրացն այնոցիկ, որք համաձայն և համամիտ էին թիւր կարծեացն Նեստորի ։ Արդ նովին ժամանակաւ Իբաս ոմն քահանայ Եդեսացի՝ նախանձաւոր պաշտպան՝ Նեստորի՝ գրեաց առ

Մարիս պարսիկ եպիսկոպոսն նամակ ինչ , յորում զՆեստոր նկարագրէ իբր զայր ոմն ականաւոր , եւ յանիրաւի զրպարտեալ ՚ի նենգութենէ արքունի մարդկան , եւ զի բարուք եւեթ են որ ինչ զնմանէ կարծիք մոլորութեան ։ Այս նամակ Իբասայ եղաւ զինի բովանդակութեան գործոյն Դիոդորի Տարսոնացւոյ եւ Թէոդորի Մոպսուեստացւոյ , եւ այս յաւելան ՚ի նոսին եւ այլ երկու ճառք նորին իսկ Թէոդորետոսի , յորս հերքին նզովք սրբոյն Կիւրղի որ ընդդէմ վարդապետութեանցն Նեստորի ։ Արդ հաւաքածոյ այս մատեան կոչեցաւ գիրք երից գլխոց Թէոդորետոսի , եւ եղին իւր պաշտպանս եւ ջատագովս յուղղափառաց եւ ՚ի հերետիկոսաց միանգամայն . զի բազումք յեպիսկոպոսաց Գաղղիոյ , Սպանիոյ եւ Ափրիկոյ , որպէս եւ ոմանք յեպիսկոպոսացն Իտալիոյ՝ յուղղափառական միտս առեալ զիմաստ երից գլխոցն՝ փոյթ յանձին կալան հաստատել զայնոսիկ , զանգիտելով զի մի ՚ի դատապարտելն հերքեսցի եւ ողջամիտ վարդապետութիւն հաւատոյ ։ Իսկ հերետիկոսք գիտելով քաջ եթէ երեք այն գիրք համաձայնք էին մոլորամիտ վարդապետութեանն Նեստորի , պաշտպանէին զայնոսիկ իբր ուղղափառականս , որպէս զի մարթասցին այնու ծաւալել ընդ բնաւ զկարծիս Նեստորի ։

ԳԼՈՒԽ Զ .

Երկրորդ ժողով կոստանդնուպօլսոյ , որ է հինգերորդ տիեզերական ։

Ի ՏԱԳՆԱՊՍ խռովութեան որով յուզեալ շփոթէր կայսերութիւնն եւ եկեղեցին Քրիստոսի վասն այլ եւ այլ կարծեաց եւ տարաձայնութեանց զմատենիցն երից գլխոց , կայսրն Յուստինիանոս որ կանխաւ յամին 546 գրեալ էր հրովարտակ առ ամենայն եպիսկոպոսունս դատապարտել զմատեանն , եւ չէր ինչ լեալ ձեռնհաս խափանել զվէճն , խորհեցաւ լռեցուցանել զամենայն հակառակութիւնս գումարելով ժողով ընդհանրական , որ եւ սկսաւ ՚ի 4 մայիսի , յամին 553 ՚ի Կոստանդնուպօլիս , ուր ՚ի մի ժողովեալ էին հարիւր յիսուն եւ մի եպիսկոպոսունք ։

Քահանայապետն Վիգիլիոս մնացեալ բազմապատիկ տառապանօք, թէպէտ և 'ի Կոստանդնուպօլիս էր 'ի ժամանակին, այլ ոչ կամեցաւ գտանել 'ի ժողովի անդ. վասն որոյ խոյս տուեալ 'ի Քաղկեդոն, գրեաց զկարծիս իւր, յորում առանց պարտաւորելոյ զմատենագիրն զայնոսիկ՝ դատապարտեաց զմոլորութիւնսն բովանդակեալս 'ի գործս նոցա ։

Աւարտեցաւ ժողովն 'ի 4 յունիսի. ուր 'ի զանազան գումարմունս ժողովոյն բերելով 'ի մէջ որ ինչ միանգամ խնդիրք ելեալ էին կանխաւ 'ի քննութիւն երից գլխոցն (յորս յիշատակի և թուղթ սրբոյն Սահակայ Հայոց հայրապետի առ Պրոկղ, իբր 120 ամօք յառաջ գրեալ 'ի հերքումն մոլորանաց վարդապետութեանն Թէոդորի Մոպսուեստացւոյ,) 'ի վերջէ ուրեմն 'ի յետին համախմբութեան հերքելով զասացեալսն՝ 'ի նոցանէ երից գլխոց մատենիցն կնքէ ժողովն զբանս իւր սահմանելով այսպէս. « Ընդունիմք զչորեսին ժողովսն՝ զգումարեալս 'ի Նիկիա, 'ի Կոստանդնուպօլիս, յԵփեսոս և 'ի Քաղկեդոն. ուսուցանեմք զոր ինչ նոքայն սահմանեցին սակս հաւատոյ. և յայտ առնեմք՝ թէ հերձեալ է 'ի կաթուղիկէ եկեղեցւոյ, որ ոչ ընդունի զայնոսիկ ։ Այլ մեք դատապարտեմք զԹէոդորոս Մոպսուեստացի և զամբարիշտ գիրս իւր. և զանօրէն մատեանս Թէոդորեատի ընդդէմ ճշմարտութեան հաւատոյ, ընդդէմ երկոտասան նզովից սրբոյն Կիւրղի, ընդդէմ ժողովոյն Եփեսոսի, և 'ի պաշտպանութիւն Թէոդորի և Նեստորի. դարձեալ նզովեմք և զթուղթն որ գրեալ ասի յԻբասայ առ Մարիս պարսիկ, որ ուրանայ զմարմնանալ և զմարդանալ Բանին 'ի Մարեմայ կուսէն, և ամբաստանէ զսուրբն Կիւրեղ իբր հերետիկոս և ապողինարեան, և անարգէ զժողովն Եփեսոսի՝ որպէս թէ առանց քննութեան ընկեց յաթոռոյ զՆեստոր ։ Այլ արդ դատապարտեմք զերիս գլուխսն և զջատագովս նոցին, որք գուն գործեն հաստատել զայնոսիկ վկայութեամբ հարց՝ կամ ժողովոյն Քաղկեդոնի »։

Յայս վճիռ յաւել ժողովն և չորեքտասան նզովս, յորս համառօտիւ բովանդակին ամենայն ուղղափառ վարդապետութիւնք խորհրդոյ մարդեղութեան ընդդէմ մոլորութեանցն Թէոդորի Մոպսուեստացւոյ և Նեստորի ։ Յետ այնորիկ հաստատեցան սահմանք ժողովոյն *ձեռնագրովք վաթսուն և հինգ եպիսկոպոսաց, որոց առաջին եկաց Եւտիքիոս պատրիարգ Կոստանդնուպօլսոյ, և ստորագրութիւն նորա գոյցէս համառօտութիւն իմն է վճռոց ժողովոյն: Այսպէս կատարեցաւ հինգերորդ ժողովն ընդհանրական, որ է երկրորդ տիեզերական սիւնհոդոս Կոստանդնուպօլսոյ:*

Բազումք յարևմտեայց համարելով թէ դատապարտութիւն երից գլխոց հերքումն իցէ և ժողովոյն Քաղկեդոնի, մերժեցին զայն: Սակայն անգէտ գոլով բարբառոյ Յունաց՝ ոչ գիտէին զմոլորութիւնս Թէոդորի Մոպսուեստացւոյ. և հեռաւորութիւն վայրացն խոչ մեծ էր նոցա իմանալ զգայթակղութիւնն՝ զոր յարևելեան կողմանս գործէին գիրք նորա և Թէոդորետոսի. որպէս և ոչ զօգուտն զոր 'ի գրոց անտի նոցունց քաղէին նեստորականք կողմանցն Ասորւոց, ուր զօրացեալ էին յոյժ, որպէս և այժմ իսկ նոյնպէս բազմաթիւ են անդանօր:

Բազումք յարևմտեան եպիսկոպոսաց կարծելով թէ 'ի դատապարտութեան երից գլխոց ժողովն Կոստանդնուպօլսոյ հակառակ իցէ ժողովոյն Քաղկեդոնի, որոշեցին զանձինս 'ի միաբան հաղորդութենէ պապին և արևելեայց որք ընկալեալ էին զայն: Բայց քահանայապետք Հռովմայ Պեղագիոս Բ. և սուրբն Գրիգոր Մեծն առ սակաւ սակաւ խրատուք և քաղցրութեամբ ածին զնոսա 'ի հաւանութիւն ճշմարտութեան. որով արևելեայք և արևմտեայք առ հասարակ միաբանեցան 'ի դատապարտել զերեքգլխեան մատեանն՝ յորժամ գումարեցաւ 'ի Կոստանդնուպօլիս վեցերորդ ժողովն ընդհանրական ընդդէմ միակամադաւանից, զորոյ զվէպս հանդերձեալ եմք դրոշմել յեօթներորդ դարու:

ԳԼՈՒԽ Է.

Թագաւորութիւն Յուստինիանոսի և Յուստինոսի փոքու և Տիբերիոսի կայսերաց:

ԿԱՅՍՐՆ Յուստինիանոս որ հրամանահան և պատճառք եկաց հինգերորդ ընդհանուր ժողովոյն Կոստանդնուպօլսոյ, հաղորդ գտաւ և յեկեղեցական խնդիրս բանակռուութեանցն. զի ցանկացեալ հմուտ երևել յաստուածաբանական վարժս, գրեաց ճառ զխորհրդոյ մարդեղուե̃. և եթէ դէպ լինէր ումեք 'ի հերետիկոսաց ընդունել զհաւատս ճշմարտութեան, 'ի փառաց իւրոց և 'ի պատճառաց ստիպեալս զնոսա համարէր և ընկճեալս. ջան գործէր դարձեալ ուսուցիչ և վարժապետ կալ և եպիսկոպոսաց անգամ. յորոց ոմանք կամ առ պարզմտուե̃, կամ առ մարդահաճութեան և կամ առ երկիւղի զարմացեալ սքանչանային ընդ այնպիսի գիտութիւն կայսեր: Զանգիտէին վիճել ընդ նմա և կամ հակառակել բանիցն. զի յետին և զօրաւորագոյն փաստ կայսեր սպառնալիք էին տարագրութեան. քանզի և չէր իսկ 'ի նոսա արիութիւն սրբոյն Ագապետոսի Ա. Հռոմայ քահանայապետի. որ 'ի հաստատել անդ զվարդապետութիւն եկեղեցւոյ ընդդէմ նորին իսկ կայսեր, ոչինչ զանգիտեաց 'ի սպառնալեաց անտի նորա, որ ասէր եթէ „Հարկ 'ի վերայ կայ հպատակել քեզ բանից իմոց, ապա թէ ոչ' տարագիր արարից զքեզ 'ի յետին սահման պետութեանս իմոյ„:

Յուստինիանոս 'ի կամելն անմտութեամբ վճռատու լինել 'ի հաւատոյս, 'ի յետին աւուրս կենաց իւրոց գլորեալ անկաւ 'ի մոլորութիւն Յուլիանիտաց, որք ուսուցանէին' եթէ մարմինն Քրիստոսի նախ քան զյարութիւն իւր ոչ էր անկեալ ընդ կարեօք բնութեան, և էր անչարչարելի: Վասն որոյ եդեալ 'ի մտի ծաւալել զանհեթեթս զայս վարդապետութիւն, հրովարտակ եհան յառաջին աւուրս 565 ամին: Եւ 'ի հակառակել եպիսկոպոսաց ոմանց' հալածեալ 'ի նմանէ արտաքսեցան յաքսորս: Բայց 'ի նմին ամի 'ի հնգետասաներորդ աւուր նոյեմբերի մեռաւ կայսրն, ոչ ինչ անուն լաւութեան թողեալ զանձնէ։

Թէոդորա կին Յուստինիանոսի՝ յանաւագ զարմէ անցեալ 'ի պատիւ դշխոյութեան, սկզբնապատճառք եկաց մոլորութեանց առն իւրոյ։ Անտոհմ այս տիկին փոխեաց զվիճակ կենացն ՚առանց փոխելոյ և զբարս. ջերմեռանդն և գթած էր առանց կրօնից և մարդասիրութեան, զեղծ և նախանձայոյզ։ Որսացեալ յեւտիքականաց՝ պաշտպան կայր նոցա. վասն որոյ և փոյթ յանձին կալեալ հաճոյացուցանել զնոսա յաչս կայսեր, և յամին 536 զԱնթիմոս ոմն գլխաւոր ախոյան այնր աղանդոյ ամբարձ 'ի պատիւ պատրիարգութեան Կոստանդնուպօլսոյ, որ փութով դատապարտեալ 'ի միում ժողովի գումարելոյ անդ 'ի մայրաքաղաքին՝ ընկեցաւ յաթոռոյ և առաքեցաւ յաքսոր։

Յուստինիանոս թագաւորեաց զամս երեսուն և ինն և ամք կենաց նորա եղեն ութսուն և չորք։ Թէպէտ և վիշտս և փառս ծանունս հասոյց սա եկեղեցւոյ՝ ձեռներէց յանդգնութեամբն 'ի խնդիրս հաւատոյ, սակայն արքայավայել պերճութիւնք նորա և մեծագործութիւնք պանծալի հանդիսացուցին զաւուրս թագաւորութեան նորա։ Որ ընդ ամենայն սահմանս տէրութեան իւրոյ ետ կանգնել բազմաթիւ եկեղեցիս, զորս յիշատակէ Պրոկոպիոս, և 'ի թագաւորեալ քաղաքին եւեթ թուէ երեսուն և մի եկեղեցիս ընդ նորոգեալսն. յորս հանրաւորն է հոյակապ տաճար սրբուհւոյն Սոփիայ, որ կայ մինչև ցայսօր։ Քսան և մի եկեղեցիք կանգնեցան 'ի փոքրն Ասիա, յԱսորիս և 'ի Պաղեստին. որպէս և յԱփրիկէ բազում մենաստանք։ Թող զերկոտասան անկելանոցս, և զքսան և երիս մենաստանս կառուցեալս առաւելապէս 'ի Պաղեստին։

Փոքրն Յուստինոս քեռորդի Յուստինիանոսի՝ թագաւորեալ ընդ նորա, կոչեաց յետս զաքսորեալ եպիսկոպոսունսն՝ բաց յԵւտիքեայ պատրիարգէն Կոստանդնուպօլսոյ։ Ի հրովարտակի միում առաջի առնէ զդաւանութիւն իւր 'ի խորհուրդ ամենասուրբ երրորդութե՟ և մարդեղութեան, յորդորելով զհերձեալս ամենայն միաբանել ընդ եկեղեցւոյ։ Պատմութիւնս այս հաւատոյ՝ թէպէտ և հաստատեցաւ յուղղափառ եպիսկոպօսաց, սակայն բաժանեալքն 'ի միութենէ եկեղեցւոյ ոչ ինչ անսացին հպատակել հրամանաց կայսեր : Զարդարեաց Յուստինոս զեկեղեցիս նոր, և կարգեաց հասս կալուածոց, և ջանահնար եղև խաղաղել զխռովութիւնս . սակայն ոչ ըստ արտաքնայարդար բարեպաշտութեանցն էին և ներքին գնացք նորա . զի անձնատուր էր յամօթալից ախտս և յանկարգ մոլութիւնս . արծաթասէր էր նա այնչափ՝ մինչև վաճառել յայտնապէս և զվիճակս եպիսկոպոսութեանց : Ունէր սա զոմն իւր մտերիմ՝ Յուստինոս անուն, այր ականաւոր և զօրավար քաջ, ընդ որում դաշն եդեալ էին կանխաւ, զի ում ումեք 'ի նոցունց հասցէ թագաւորել՝ տացէ միւսումն զերկրորդ աթոռ իշխանութեան : Զառաջինն սերտ մտերմութեամբ էր ընդ նմա, այլ ապա զըրկեալ 'ի պատուոյն առաքեաց յԱղեքսանդրիա և ետ գիշերայն սպանանել զնա յանկողնի, պատուէր տուեալ բերել զգլուխ նորա առ ինքն 'ի Կոստանդնուպօլիս, և թագուհեաւն իւրով Սոփիաւ անարգանօք կոխոտեաց զայն :

Առ ժամանակօք Յուստինոսի մինչդեռ օրէնք զինուորութեան գոգցես բարձեալ էին 'ի սպառ, և բանակ սակաւաթիւ զօրացն կայր 'ի տկարութեան, յամին 574 յարձակեցան Պարսք 'ի սահմանս կայսերութե . և յաւարի առնուլ անդ նոցա զերկիրն, Յուստինոս տուեալ էր զանձն յանարգ և յանամական հեշտութիւնս . և թէպէտ լուաւ զյարձակմունս թշնամեաց, սակայն չկամէր երբէք հաւատս ընծայել բանիցն ասացելոց և զգաստանալ . վասն որոյ Պարսք անարգել քանդեալ աւերեցին զերկիրս Հռովմայեցւոց՝ մատնելով զքաղաքս նոցա 'ի հուր և 'ի սուր : Այլ 'ի ժամանել նոցա յԱնտիոք, բացան աչք Յուստինոսի և ծանեաւ քաջ զի յերերի և 'ի դողման կայ պետութիւնն 'ի բուռն զօրութենէ թշնամեաց . վասն որոյ անդէն և անդ փութացաւ զահակից իւր անուանել զՏիբերիոս և յաջորդ . և եկաց ընդ նմա յիշխանութեան այլ ևս ամս իբր չորս և ապա մեռաւ յամի տեառն 578, ատելի և անզգամելի վարուք թագաւորեալ զամս երկոտասան :

Տիբերիոս ազնուամիտ ոք էր և բարեգործ քան զնախորդ իւր . գթասէր, առատաձեռն և ողորմ օգտի հատարակոյս, վասն որոյ իբրև հայր գորովագութ այնպէս խնամէր և յանձանձէր զհպատակս իւր ։ Ի խնդրոյ ժողովրդեանն Կոստանդնուպօլսոյ դարձոյց յաքսորանաց զսուրբն Եւտիքիոս, որ յերկոտասան ամաց հետէ տարագիր կայր 'ի Պոնտոս. ուր 'ի ժամանակս սովու ձեռնտու և նպաստամատոյց գտեալ էր աղքատաց և կարօտելոց, և օրինակ բարի համօրէն երկրին ։ Մեծահանդէս շքով եմուտ 'ի Կոստանդնուպօլիս. զի գայր նա հեծեալ յէշ, և ժողովուրդն ոստս ծառոց 'ի ձեռին ունելով տարածանէին զհանդերձս առ ճանապարհաւն ընդ որ անցանելոց էր նա ։

Տիբերիոս Թագաւորեաց առանձինն զամս չորս և մեռաւ, և յաջորդեաց զնա յամին 588 Մաւրիկիոս կամ Մօրիկ հայկազն ։

ԳԼՈՒԽ Ը.

Յայտնութիւն Դաստառակին Քրիստոսի ։

ՊԱՏԿԵՐ փրկչին առաքեալ 'ի նմանէ առ Աբգար Թագաւոր Հայոց, առ 'ի պահպանութիւն քաղաքին Եդեսիոյ եդեալ կայր 'ի պարսպի 'ի վերոյ դրան քաղաքին. յետ մահուան որդոյն Աբգարու' յամի տեառն 37 'ի կամել որդւոյ նորա Անանէի նորոգել վերստին զպաշտամունս դից, սուրբն Ադդէ հայրապետ խնամ կալաւ լռելեայն թագուցանել զդաստառակն. վասն որոյ ծածկելով զայն 'ի նմին խուկ տեղւոջ, ծեփեաց զխորշ պարսպին, և մնաց այնպէս անյայտ 'ի մարդկանէ մինչև ցամ տեառն 539, յորում ժամանակի Խոսրով արքայ Պարսից դիմեալ 'ի սահմանս Յունաց' յաւարի էառ զբազում քաղաքս, և լուեալ համբաւ զԵդեսիոյ' թէ անառիկ իցէ և ամրացեալ աստուածային գաղտնի իմն զօրութեամբ, յարձակեցաւ 'ի վերայ նորա բազմամբոխ զօրօք ։ Զարհուրեալ Եդեսացւոց յերեսաց Պարսից, դիմեցին առ Աստուած ջերմեռանդն աղօթիւք. և յայտնեցաւ 'ի գիշերի եպիսկոպոսի քաղաքին ծածկեալ տեղի դաստառակին Քրիստոսի, և հրամայեցաւ նմա 'ի տեսլեան առնուլ զայն անտի և զերծանել նովաւ 'ի բուռն զօրութենէ Թշնամեաց ։ Գնաց եպիսկոպոսն և լոյս աստուածային տեսլեան եգիտ զպատկերն անեղծ և անարատ՝ անշէջ ճրագաւն զոր լուցեալ էր Ադդէ հայրապետ 'ի ծածկելն զայն ։ Եւ սովին այսու երկնային զինու և ազգի ազգի սքանչելեօք զօրս գործեաց նա՝ ապրեցաւ Եդեսիա . զի յուսակտուր լեալ Պարսից, մեկնեցան անտի գլխակոր և ամօթալից ։

Պաստառակն Քրիստոսի մնաց յԵդեսիա քաղաքի մինչև ցամ տեառն 944 ցաւուրս Ռոմանոսի կայսեր որ կամեցաւ փոխադրել զայն 'ի Կոստանդնուպօլիս . զորոյ զգիւտն կարգեցուք 'ի տասներորդ դարու ։

ԳԼՈՒԽ Թ.

Կարգ միանձնական վարուց սրբոյն Բենեդիկտոսի ։

ԱՐԵՒՄՏԵԱՆ գաւառք Եւրոպիոյ մատնեալք յաւար բարբարոսաց՝ որպէս զարեւելս կային 'ի տագնապս խռովութե՟ ։ Իտալիա անկեալ էր 'ի ձեռս Լանգոբարդացւոց որք էին վայրենի և արեանարբու արիանեանք եկեալք 'ի Սքանտինաւիոյ, և գործ և զբաղումն նոցա էր աւարառութի՟ և սպանութի՟ ։ Ի դառն և յանբերելի թշուառութիւնն յայնմիկ խնամք աստուածայինք ազդեցին 'ի սիրտ սրբոյն Բենեդիկտոսի հիմնել ապաստանարանս և տեղի առանձնութեան, ուր զերծ յամենայն զբաղմանց՝ կարիցէ մարդ ուշ ունել զխստութեանց և առաքինական վարուց, և ապրել 'ի տառապանաց աղետալից կենցաղոյս ։ Երանելիս այս նահապետ և հիմնադիր բարեկրօն և մեծահամբաւ միանձնական կարգի, ծնեալ էր յամի տեառն իբր 480 'ի Նորչիա քաղաք դքսութեան Սպոլետոյի յազնուական զարմէ . և 'ի պատանեկութեան հասակի ինքնակամ հրաժարեալ 'ի բերկրութեանց աշխարհի առանձնացաւ 'ի լեառն որ առ Սուբլակ աւանաւ՝ հեռի 'ի Հռովմայ իբր յիսուն մղոնաւ . ուր անընդհատ պարապեալ 'ի խոկմունս երկնային և անանց բարեաց, արժանի եղև յԱստուծոյ հիմնադիր կալ միանձնական վարուց որ այնչափ փառս և պայծառութիւն յաճախելոց էր եկեղեցւոյ ։

Տեղի առանձնութե՟ սրբոյն անծանօթ էր 'ի մարդկանէ . այլ միայն Ռոմանոս ոմն միայնակեաց երբէք երբէք յայց երանէր նմին ։ Իսկ յետ երից ամաց իբրև յայտնեցաւ քարայրն յոր մնացեալ կայր՝ եկին առ նա կրօնաւորք ոմանք մերձակայ վանուցն ընտրել զնա վանահայր իւրեանց. բայց քանզի դժուարին էր սրբոյն վարել ըստ սովորութեան միայնակեցացն այնոցիկ, ցանկացաւ վերստին նախկին առանձնութեանն. վասն որոյ հրաժարեալ 'ի նոցունց շրջեցաւ ընդ բազում անապատ վայրս հանդերձ յոգնաթիւ աշակերտօք, որք փափաքէին մտանել ընդ առաջնորդութեամբ նորին, և ապա առանձնացաւ 'ի լեառն Կասինեան. ուր հաստատեաց զկարգ միակեցական վարուց և կանոնաց՝ թողեալ եկեղեցւոյ զանձ հոգևոր արժանի անմահ յիշատակաց ։ Վախճանեցաւ սուրբն Բենեդիկտոս յամին 543 'ի Կասինեան լերին, յետ աւանդելոյ կանոնս յարմարականս և զխրատս ամենայն միայնակեցաց Իտալիոյ, Գերմանիոյ, Գաղղիոյ, Սպանիոյ և Անգղիոյ ։

Ջանացաւ նա ամբողջովին հաստատել զհոգի բարեպաշտութեան 'ի սիրտս աշակերտաց իւրոց, և ընդ չափաւոր խստամբերութեան վարուց՝ յաւել զաղօթս և զաշխատութիւն ձեռաց ։ Լուսափայլ առաքինութիւնք աշակերտաց նորա ձգեցին 'ի մենաստան զբազումս յականաւոր ազնուականաց տէրութեան. Իշխանք Հռովմայ յղէին զորդիս իւրեանց 'ի լեառն Կասինեան հրահանգել անդ 'ի վարս բարեպաշտութեան. որպէս Տերտուղոս պատրիկ՝ ինքնին ած զորդի իւր զՊլակիդոս, որ յետ մահուան հօր իւրոյ՝ զընդարձակ կալուածս իւր 'ի Սիկիլիա ընծայեաց այնմ մենաստանի ։ Նոյնպէս և թագաւորք և իշխանք և ժողովուրդք անդադար ջան գործէին զմիմեամբք ելանել ձօնս և երևելի ընծայիւք յաճումն և 'ի հաստատութիւն նորածին կարգին ։

Իսկ պատճառք այսչափ եռանդեան նոցա՝ աշխատասիրութիւն եւեթ էր նախնի աշակերտաց սրբոյն Բենեդիկտոսի, որք մշակեցին զանարօր անապատս և զխոպանացեալ անդաստանս, որպէս և կարեկից զթութիւն նոցա առ աղքատս. զի անխարդախ և հաւատարիմ հազարապետք և մատակարարք էին եկամտից 'ի խնամել զկարօտեալս և 'ի հիւրընկալել զուղևորս և զպանդուխտս ։ Բայց յետ ժամանակաց այն ամենայն ճոխու-

թինք ստացուածոց զորս մարթ է անուանել ծնունդս բարեպաշտութեան, առ սակաւ սակաւ ըստ չափն անցեալ՝ հեղձուցին զծնողն, այս է զհոգին ջերմեռանդութեան և կրօնաւորական վարուց։

ԳԼՈՒԽ Ժ.

Քահանայապետութիւն սրբոյն Գրիգորի Մեծի։

ՅԱՇԱԿԵՐՏԱՑ *անտի սրբոյն Բենեդիկտոսի կացին արք բազումք ականաւորք սրբութեամբ և իմաստութեամբ. յորոց մի է և սուրբ քահանայապետն Գրիգոր՝ մականուանեալն Մեծ, որդի սենեկլիտոսի ուրումն հռովմայեցւոյ։ Զառաջինն եղև քահանայ եկեղեցւոյն Հռովմայ. ապա ցանկացեալ միակեցական վարուց, առանձնացաւ ՚ի մենաստան սրբոյն Անդրէի առաքելոյ, զոր ինքն ծախիւք կառուցեալ էր ՚ի Հռովմ. ուր և ընտրեցաւ ՚ի պատիւ աբբայական առաջնորդութեան։ Յետ այնորիկ ՚ի քահանայապետէն Պեղագիոսէ Բ առաքեցաւ դեսպանութեամբ առ կայսրն Տիբերիոս, յորմէ ընկալեալ եղև ըստ արժանին շքոյ։ Նա ՚ի դառնալ Գրիգորի անդրէն ՚ի Հռովմ, ՚ի պարապութեան եգիտ զաթոռ սրբոյն Պետրոսի, և միաձայն հաւանութ՟բ ա՟մյն ամբարձաւ ՚ի պատիւ քահանայապետութեան յամին 590։ Զայնու ժամանակաւ սրածութիւն սաստիկ ձորակեալ՝ յԻտալիա, մահուամբ անթիւս գործէր ՚ի ժողովրդեան, զոր սրտառուչ մաղթանօք խրատք և հրապարակական պաղատանօք դադարեցոյց սուրբն Գրիգոր։ Կարեկից գթով իբրև հայր զորովագութ բաշխէր զառատ ողորմութ՟ի կարօտելոց, և կերակրէր զաղքատս. բարեկարգեաց զեկեղեցի, և յաւել յաստուածային պաշտամանն բազում արարողութիւնս յաւել վայելչութիւն հանդիսից։ Զինեցաւ ընդդէմ հերձուածոց ժամանակին, դարձոյց զկապարիչս, և առաքեաց քարոզիչս յԱնգղիա։ Աշխատեցաւ լի արդեամբք սրբութեան վարուց, և գրաւոր սքանչելի երկասիրութեամբքն դասեցաւ ընդ Ամբրոսիոսի, Հերոնիմոսի և Օգոստինոսի իբրև չորրորդ վարդապետ արևմտեան եկեղեցւոյ։ Համբաւեալ է յոյժ*

՚ի մատեանս նորա Հովուականն կանոն առաջնորդաց, յորում գեղեցիկ նկարագրէ զպարտս պաշտաման հովուաց կամ առաջնորդաց եկեղեցւոյ, օգտակար յընթերցումն ամենայն եպիսկոպոսաց խնամակալուաց ժողովրդեան ։

Գթած էր նա և գորովագութ առ ամենեսին. ՚ի դարձուցանել անդ և յուղղութիւն ածել զհերձեալս գուն գործէր քաղցրութեամբ ամոքել զնոսա, և ոչ եթէ բռնի ինչ ստիպել. վասն որոյ արգել զտառապանսն և զվիշտս զոր հասուցանէին Հրէից ՚ի ձգել զնոսա ՚ի հաւատս. « Զանհաւատս շահել պարտ է, ասէր, քաղցրութեամբ խրատուց, և ոչ եթէ ահիւ կամ սպառնալեօք »։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Առաքելութիւն յԱնգղիա, և որ ինչ անդ յաջողութիւնք քրիստոնեական կրօնից ։

ՍՈՒՐԲՆ Գրիգոր քահանայապետ նախ քան զմահ իւր ականատես եղև բարեյաջող ելից քարոզութեան աւետարանին ՚ի կղզին Բրիտանացւոց, որում փափաքէր ՚ի սերտ սրտէ ։ Եւ զի Թագաւորք Անգղիոյ թաղեալք էին ՚ի խաւարի կռապաշտութեան, վասն որոյ սակաւք ոմանք մնացեալ էին անդ ՚ի Բրետոնեան քրիստոնէից, պատսպարեալք յերկիրն Քորնուալլիոյ ՚ի սահմանս իշխանութեանն Կալլէսի ։ Գրիգոր քահանայապետ զի յուղիղն զնոսա ածցէ պողոտայ՝ եդ ՚ի մտի առաքել անդր զսուրբն Օգոստինոս՝ զառաջնորդ աբբայութեան մենաստանի սրբոյն Անդրէի որ ՚ի Հռովմ ։

Ուղևորեցաւ առաքելաշնորհս այս քարոզիչ քառասնիւ չափ ընկերօք յամի տեառն 597, և հրաման ընկալաւ յԵդելբերտոսէ արքայէն Քենթայ քարոզել զաւետարանն Քրիստոսի, և հաստատել զբնակութիւն իւր ՚ի Դուրովէրն քաղաք, որ այժմ անուանի Կանտորբերի ։ Իմաստուն և խոհական առաջնորդութիւն Օգոստինոսի և ընկերաց նորա, անարատութիւն վարուց նոցա, սակաւապիտութիւն և արհամարհութիւն կենցաղական բարեաց, և շնորհք սքանչելեաց գործելոյ 'ի ձեռն նոցա՛, յորդոր եղեն թագաւորին և մեծամեծաց՝ դառնալ 'ի հաւատս Քրիստոսի ։ Նոյին 'ի նախանձ նմանութեան վառեալ և ժողովրդեան առ հասարակ՝ ինքնայօժար առանց ինչ բռնադատութեան ընկալան զուղղ մկրտութիւնն ․ զի Ադելբերդոս արքայ խրատեալ էր 'ի քարոզչաց անտի չբռնադատել զոք , այլ թողուլ 'ի կամս իւրաքանչիւրոյն՝ մտադիւր և ոչ ակամայ ընդունել զլուծ ծառայութեանն Քրիստոսի ։

Սուրբն Օգոստինոս գլուխ և առաքեալ նորոյ եկեղեցւոյն՝ հաստատեալ զաթոռ եպիսկոպոսութե իւրոյ 'ի Կանտորբերի քաղաք , և ընկալաւ 'ի սրբոյն Գրիգորէ զհրաման և զիշխանութիւն ձեռնադրել զայլ եպիսկոպոսունս ։ Պատուիրեաց նմա սուրբ քահանայապետըն չքանդել և չկործանել զմեհեանս կռոց , այլ սրբել զնոսին ջրով օրհնութեան և նուիրել ճշմարտին Աստուծոյ ։ Նոյնպէս հրամայեաց թոյլ տալ նորադարձ քրիստոնէից տօնել ագապս զտաճարօքն , և կատարել հանդէսս կոչնակք զոհս 'ի պատիւ յիշատակի սրբոց մարտիրոսաց ․ զի որպէս և ինքն խոկ ասէ երանելին քահանայապետն , „Ոչ պարտ միահաղոյն խափանել զնախնի սովորութիւնս անսովոր մարդկան , և ոչ ջանահնար լինել յանկարծ ելանել 'ի գլուխ լերին ․ այլ ոտն առ ոտն ժամանել,, ։

Յետ մահուան սրբոյն Գրիգորի մեծի , որպէս և սրբոյն Օգոստինոսի առաջին եպիսկոպոսին Անգղիոյ՝, յամին 604, զժամանակս ինչ վերստին անկաւ Անգղիա 'ի վտանգ կռապաշտութեան ․ զի Արալդոս որդի և յաջորդ Ադելբերտոսի՝ անձնատուր 'ի զեղխ և յանկարգ ցանկս՝ յետ եկաց 'ի հաւատոյն Քրիստոսի , և օրինակաւ իւրով մոլորեցոյց զամենեսին որք առ երես միայն ընկալեալ էին զմկրտութիւն ։ Բայց յետ ամաց ինչ զգաստացեալ Արալդոսի անդրէն հաստատեցաւ 'ի հաւատս , և եպիսկոպոսունքն որ բռնադատեալք էին թողուլ զվիճակս իւրեանց՝ ընկալան զազատութիւն կատարել համարձակ զպաշտամունս եկեղեցւոյ , և զմոլորեալսն ածել 'ի նախնին իւրեանց բարեկարգութիւն ։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Կաթողիկոսք և վիճակ եկեղեցւոյն Հայոց։

Ի ՍԿԻԶԲՆ վեցերորդի դարու՝ յամին 502, յաջորդեաց զՍամուէլ Մուշէ ոմն ՚ի նահանգէն Կոտէից՝ զամս ութ։ Յետ նորա յամին 510 Սահակ Բ. ՚ի գաւառէն Հարքայ՝ զամս հինգ. ապա Քրիստափոր Բ. ՚ի Բագրեւանդայ՝ զամս վեց։ Յաւուրս սորա յամին 415 յարձակեցան Հոնք ՚ի Հայս և անտի ՚ի Կապադովկիա՝ յաւարի առնուլ և աւերել զաշխարհն. այլ ՚ի դիմի հարեալ նոցա Մժէժ գնունի նախարար, վանեաց զնոսա և խաղաղացոյց զաշխարհս Հայոց։ Յետ Քրիստափորի՝ յամին 522, նստաւ կաթողիկոս Ղեւոնդ ՚ի գաւառէն Առբերանւոյ՝ զամս երիս. զկնի նորա յամին 524 Ներսէս Բ. Աշտարակեցի ՚ի գաւառէն Բագրեւանդայ՝ զամս ինն։

Յետ նորա յամին 533 նստաւ կաթողիկոս Յովհաննէս Բ. ՚ի գաւառէն Գաբեղենից, զամս եօթնեւտասն. ՚ի սորա աւուրս յամին 548, տագնապեցաւ Հայաստան ՚ի հալածմանց Խոսրովու Պարսից արքային, յորում ժամանակի կատարեցան բազումք վկայական մահուամբ, ընդ որս էր և Գրիգոր կամ Գրիգորիս Ռաժիկ ազգաւ։

Զկնի Յովհաննու Բ. յամին 551 ընտրեցաւ կաթողիկոս՝ Մովսէս Բ. յԱրագածոտն գաւառէ. այր իմաստուն և հմուտ արտաքին գիտութեանց, որ ժողովով եպիսկոպոսաց ուղղագրեաց զվրիպակս տումարի ազգիս։ Յաւուրս սորին Մովսիսի գումարեցաւ ՚ի Կոստանդնուպօլիս հինգերորդ ընդհանուր ժողովն, զորմէ գրեցաք վերագոյնդ։ Եւ զի ընդ այն ժամանակս ձեռնտուութեամբ Յուստինիանոսի կայսեր սկսեալ էին ոմանք սերմանել ՚ի Հայս զմոլորութիւն Յուլիանիտաց, անդէն և անդ փութացաւ Մովսէս տարագրել զնոսա յաշխարհէն Հայոց, զի մի իւիք ապրդեալ մնացէ մոլորութիւնն և ՚ի հօտ իւր։ Եւ զի Պարսք ջանահնար լինելով դարձուցանել զՀայս ՚ի կռապաշտութիւն, վճարս ծանունս և դառինս հասուցանէին նոցա, Մովսէս կաթողիկոս առաքեաց Թուղթս և դեսպանս առ Խոսրով արքայ, և աղերսանօք հաճեցոյց զնա թողուլ զաշխարհս 'ի խաղաղութեան, որ տևեաց զամս իբր վեց. յետ այնորիկ յամին 558 վերստին բորբոքեցաւ հրդեհ հալածմանցն յերեսաց Պարսից ցամ տեառն 579, յորում ամի մեռաւ Խոսրով արքայ.

Ի սակաւաւոր խաղաղութեան անդ աշխարհիս՝ յամին 552 պատահի իմն Մախոժ անուն որդի մոգպետի ուրումն Պարսից 'ի Դուին քաղաքի՝ տեսեալ զսքանչելիսն Աստուծոյ 'ի շիջանել հրդեհի մեծի՝ կնքելով զայն քահանայից խաչիւ և աւետարանաւ, հաւատաց 'ի Քրիստոս, և մկրտեալ 'ի Սերոբէ արեղայէ անուանեցաւ Յիզտբուզիտ, այն է Աստուածատուր. ընդ որ զայրացեալ Պարսից կալան զնա. և յետ բազմադիմի խոշտանգանաց բևեռեալ 'ի խաչ՝ նետահար սպանին. Զմարմին սորա վկայիս Մովսէս կաթողիկոս բարձեալ պատուով հանգոյց յաւագ եկեղեցւոջ, և կարգեցաւ տօն յիշատակի նահատակութեան նորա ամ ըստ ամէ.

Առ կաթողիկոսութեամբ սորին Մովսիսի՝ յամին 580, վախճանեալ կաթողիկոսին Վրաց, 'ի խնդրոյ նոցա Մովսէս կաթողիկոս ձեռնադրեաց զԿիւրիոն վրացի զքորեպիսկոպոս Աբարատայ զայր իմաստուն և հմուտ բազում լեզուաց, և յուղարկեաց զնա 'ի Վիրս. Եւ զի Կիւրիոն հետաքննին որ էր և յօժարամիտ յողջմտութիւն, ընկալաւ զսուրբ ժողովն Քաղկեդոնի, և հաւանեցոյց զՎիրս և զԵգերացիս, որպէս և զայլ մօտաւոր ազգս ընդունել զայն ժողով և զսահմանադրութիւնս նորա. Ի ժամանակիս յայսմիկ Մովսէս կաթողիկոս 'ի պատճառս ծերութեան իւրոյ՝ յամին 581 կարգեաց փոխանորդ և իբր տեղակալ աթոռոյ զՎրթանէս ոմն վարդապետ, և ընդ ձեռն նորա կատարէր զգործս հայրապետանոցին զամս իբր երեքտասան. և ապա մեռաւ կացեալ 'ի կաթողիկոսութեան զամս երեսուն.

Զկնի նորա յամին 594 կարգեցաւ կաթողիկոս Աբրահամ եպիսկոպոս Ռշտունեաց, որոյ դժպատեհ վէճք և զրաւոր հակառակութիւնք ընդդէմ Կիւրիոնի կաթողիկոսին Վրաց սակս ընդունելոյ նորա զժողովն Քաղկեդոնի՝ պատճառք եղեն բազմադիմի չփոթից, *որպէս տեսցուք սակաւուք 'ի ստորև, 'ի վէպս պատմութեան ազգային ժողովոյ։ Մեռաւ Աբրահամ յամի տեառն 616, կացեալ 'ի հայրապետութեան զամս քսան և երիս։ Զյաջորդս Աբրահամու կարգեսցուք յեօթներորդ դարու։*

ԳԼՈՒԽ ԺԳ.

Եկեղեցական մատենագիրք։

ՄԱՏԵՆԱԳԻՐՔ *վեցերորդի դարուս, որք կային ընդ հետ ընթացից մեծին Գրիգորի, եղեն սուրբն Փուլգենտիոս եպիսկոպոս Ռուսպայ քաղաքի յԱփրիկէ, մին 'ի հզօր ախոյենաց վարդապետութեան սրբոյն Օգոստինոսի որ յաղագս շնորհաց, և ջաղխիչ մոլորութեան արիոսեանց, որ յայսմ դարու զոգցես 'ի սպառ անհետացեալ կորեաւ։*

Բոյեսիոս և Կասսիոդորոս՝ արք ականաւորք բազմահանճար իմաստութեամբ և իշխանական պատուով առ Թագաւորօքն Գոթաց յԻտալիա։ Եւ սոքա իմաստական և բանասիրական գիրք օգտաշահք յընթերցումն, և առաւելապէս Գիրք մխիթարութեան Բոյեսիոսի, զոր գրեաց 'ի բանտարգելս աքսորանացն իւրոց։

Եննոդիոս եպիսկոպոս Պաւիայ քաղաքի, սուրբն Կեսարիոս արքեպիսկոպոս Արելատայ, որպէս և Իսիդորոս Սեւիլլեայ՝ երկասիրութեամբք իւրեանց նպաստամատոյց եղեն օգտի եկեղեցւոյ։

Յորնանդէս ռաւեննացի, Գրիգոր եպիսկոպոս Տուրոնի, Վիկտոր եպիսկոպոս Տուննոնի, Լիբերատոս սարկաւագ Կարթագինոյ, թողին հատուածս ինչ պատմութեանց՝ որք թէպէտ անհարթ ոճով, բայց աւանդապահք են հնոյն պատմութեանց։

Դիոնեսիոս փոքր՝ միայնակեաց և վանահայր, ծնեալ 'ի Սկիւթիա, որ նախ զառաջինն եմուծ յեկեղեցի զգործածութիւն հասարակ թուականին Քրիստոսի, թէպէտ և յետոյ ուրեմն յիններորդ դարու տարածեալ ծաւալեցաւ այն յամենայն հաւատացեալս։ Ի նորա և հաւաքումն եկեղեցական կանոնաց։

Ի վեցերորդի դարուս կային և յեկեղեցւոջ Յունաց ալք համբաւեալք ՚ի սրբութեան վարուց և յիմաստութեան. որպէս Յովհաննէս Պահեցող պատրիարգ Կոստանդնուպօլսոյ, որ գրեաց Ճառս հոգեշահս և կանոնս ապաշխարութեան. Սուրբն Յովհաննէս Կլիմաքոս առբայ ՚ի Սինա լերին, որոյ գիրքն Սանդուխք աստուածային ելից՝ թարգմանեալ կայ գրեթէ յամենայն լեզուս, որպէս և ՚ի մեր բարբառ յերանաշնորհ նախնեաց անտի մերոց. Լեոն բիւզանդացի և Անաստաս սինացի գրեցին ընդդէմ մոլորութեանց ժամանակին իւրեանց.

Եւագրիոս դրագէտ՝ բարեացապարտ ցուցանէ յաղագս եկեղեցական պատմութեան իւրոյ յամէ տեառն 431 ցամն 594, ճշգրիտ կարգաւ քան վայելչահիւս բանիւք. Սճ մատենագրիս՝ որպէս և այլոց օրինակագրաց վեցերորդի դարու՝ յայտ առնէ զնուազել ընտիր գրականութեան և գիտութեանց. զի ըստ յառաջել բարբարոսաց յաւարի առնուլ զաշխարհս կայսերութ՟ե, առ սակաւ սակաւ ՚ի նուազութ՟ի անկանէին և ազգի ազգի մակացութիւնք. Յետ սորոյն Յովհաննու Ոսկեբերանի թուի պակասեալ ՚ի սպառ պերճախօսութ՟ի. զի ճառք և ատենախօսութիւնք բազմաց յեպիսկոպոսաց և ՚ի վարդապետաց Յունաց մնան սեթևեթք և բազմաբանութիւք են, կամ թէ ասել ճառք ստերջք և ցուրտք. Զնոյն զոգցես իմանալ պարտ իցէ և վասն եկեղեցւոյ Լատինաց. Ոչ ինչ ընդհատ ՚ի սոցանէ գտաւ և գրաւորական ճոխութիւն ազգիս մերոյ. զի բռնութիւնք Պարսից և Հագարացւոց միանգամայն ՚ի վերայ հասեալ մոռացուցին և անհետ արարին յաշխարհէս մերմէ և զանուն իսկ գիտութեան՝ որ այն ինչ սկսեալ էր ծաղկեալ բարգաւաճել.

ԳԼՈՒԽ ԺԴ.

Տեսութիւն հանրական ՚ի վերայ վիճակի եկեղեցւոյ.

ՆՈՒԱԶԵԼՈՅ գիտութեանց և զօրանալոյ անուսումնութեան ՚ի վեցերորդի դարու վկայէ և Մեծն Գրիգոր քահանայապետ, նմանեցուցեալ զեկեղեցի նաւու՝ որոյ տախտակք սասանեալ իցեն ՚ի ջուրց. Ընդ այն ժամանակս կայսերք Յունաց՝ ըստ օրինակի թագաւորացն

Գոթաց՝ սկսան յինքեանս գրաւել զիրաւունս հաստատելոյ զընտրութիւն քահանայապետացն Հռովմայ։ Ի պարապութեան առաքելական դահլին՝ երեք ամիսք խնամ ունէին անդորրութեան նորա և խաղաղութեան, Աւագերէց աթոռոյն, Աւագ սարկաւագն և առաջինն 'ի նօտարաց։ Յետ կատարման հանդիսի յուղարկաւորութեան քահանայապետին հանգուցելոյ, զկնի երեքօրեայ պահոց ըստ սովորութեանն՝ ընտրեալ զոք 'ի յաջորդ նորա, ծանուցանէին առ կայսեր 'ի Կոստանդնուպօլիս, և սպասէին հաճութեան նորա 'ի հաստատութիւն. և ժամանակն որ մինչև ցժամանել հաւանութեան կայսեր՝ անուանէր պարապութիւն աթոռոյ։

Բարձրապատիւ իշխանութիւն քահանայապետացն Հռովմայ նախանձելի էր յոյժ պատրիարգացն Կոստանդնուպօլսոյ. վասն որոյ համարձակեցան կոչել զանձինս տիեզերական եպիսկոպոսապետս, և գրաւել զիշխանութիւնն. և նախ առաջին Յովհաննէս Պահեցող պատրիարգ պատուեցաւ սոյին անուամբ. զի վասն ճգնաւոր կենացն նորա և սքանչելագործ վարուցն անուանեցին զնա Յոյնք տիեզերական հայր. յորմէ սկսան և յաջորդք նորա կոչիլ նովին անուամբ։ Այլ քահանայապետք Հռովմայ բազմօք հակառակ կացին այնմ. և Մեծն Գրիգոր յամին 595, յառաքել անդ զոմն դեսպանութեամբ 'ի Կոստանդնուպօլիս, զգուշացոյց զնա չհաղորդել ընդ Կիւրակոսի պատրիարգին՝ եթէ ոչ հրաժարեսցի նա յանուանէ անտի տիեզերական հովուի։ Զնոյն ծանոյց և Բոնիփակիոս Պ. առ կայսրն Փոկաս, և արգել Կիւրակոսի վարել զայն անուն պատուոյ։

Հրապարակական ապաշխարութիւնք առ սակաւ սակաւ պակասեալք յեկեղեցւոջ, փոխանակեցին ընդ այնր առանձնական ապաշխարութիւնք։ Այլ հաւատք ուղղափառ ճշմարտութեան օր ըստ օրէ յառաջադէմ զարգանայր։ Սուրբն Լէանդրոս եպիսկոպոս Սեւիլլոյ դարձոյց յարիոսական մոլորութենէ զՀռեկարեդոս թագաւոր Սպանիոյ, որ ջանահնար եղև ապա արքայական իշխանութեամբն յուղիղ ողջմտութիւն ածել զամենայն հպատակս իւր. գումարեաց ժողովս, և զոր առաքինիս բարձրացոյց յեպիսկոպոսական պատիւ։

Պաշտամունք հասարակաց աղօթից պայծառացան

վայելչութեամբ ձայնաւոր օրհներգութեանց սրբոյն Գրիգորի մեծի, յորմէ և ընկալան զանուն Գրիգորեան երգոց. սահմանեցան և նորանոր տօնախմբութիւնք, և ըստ ասելոյ ոմանց՝ 'ի վեցերորդի դարու սկիզբն եղև տօնից քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի 'ի տաճարն, աւետման սրբոյ Կուսին, և ծննդեան Յովհաննու Մկրտչի՝ առ Լատինս:

Ի պատմութիւնս այսր դարու երևի և յիշատակ կարդինալական պատուոյ, զոր տային եպիսկոպոսաց, երիցանց և սարկաւագաց որոց 'ի վիճակի ուրեք անընդհատ պաշտօնէին 'ի կատարումն պաշտաման իւրեանց, և որոշէին նովաւ յերիցանց անտի՝ որք 'ի յանձնարարութենէ այլոց կամ ըստ դիպաց ժամանակս ինչ ևեթ սովոր էին ծառայել եկեղեցւոյ:

Ի Թղթոց սրբոյն Գրիգորի քահանայապետի թուի իմն թէ զայնու ժամանակաւ մեւս գտեալ էին 'ի ժողովուրդս բազմադիմի սովորութիւնք հեթանոսականք, մինչև 'ի գիւղս և յագարակս միանգամայն տեսանել զանապաշտութիւնս նախնի հեթանոսութեան խառնեալս ընդ քրիստոնական պաշտամունս հաւատոյ:

Յաւուրց անտի մեծին Կոստանդիանոսի իշխանութիւն եկեղեցւոյ ամփոփեալ կայր 'ի խնդիրս հաւատոյ, և 'ի խրատս ուղղութեան վարուց կանոնական պատժովք. իսկ զկարգ և զկռիւ աշխարհական մարթ էր եկեղեցականաց աւարտել իրաւախոհութեամբ: Յուստինիանոս Ա. Թրակացի շնորհեաց եպիսկոպոսաց զառանձին ատեան՝ 'ի դատել ոչ միայն զեկեղեցական գործս, այլ և զաշխարհականս: Ի քաղաքական վէճս՝ կղերիկոսք և կրօնաւորք կոչէին նախ յատեան եպիսկոպոսի իւրեանց, ուր անյապաղ առանց երկար քննութեան սովոր էին փութով վճարել զդատն: Սակայն եթէ 'ի տասն աւուրս մին 'ի դժտելոց անտի դժկամակէր ինչ ընդ դատաստան եպիսկոպոսին, վէճն եղանէր յատեան դատաւորաց քաղաքին. և եթէ վճիռ աշխարհական ատենին համաձայն գտանէր վճռոյ եպիսկոպոսին, հնազանդել հարկ 'ի վերայ կայր յայնժամ. իսկ եթէ ատեանն այլազգ քան զեպիսկոպոսն վճիռ հատանէր, յայնժամ մարթ էր բողոք առնել առ մեծագոյն ատեան:

Ի դատս պատժապարտութեան թոյլ տուեալ էր

անխտիր դիմել առ եպիսկոպոսն կամ առ աշխարհական ատեան ։ Սակայն եպիսկոպոսին ևեթ պահեալ կայր դատ եկեղեցական յանցանաց, որպիսի են մոլար վարդապետութիւնք, սիմոնականութիւնք, և որ 'ի նոյն սակի իցեն ։ Վճիռ տուեալ յաշխարհական ատենէ ընդդէմ եկեղեցականի ումեք՝ չէր պարտ դնել 'ի գործ առանց հաւանութեան եպիսկոպոսին․ այլ եթէ հրաժարէր եպիսկոպոսն 'ի տալ զհաւանութիւն, յայնժամ հարկ 'ի վերայ կայր բողոք առ կայսրն ունել ։ Եպիսկոպոսունք առանձնաշնորհ պատուով ազատք էին յանդիման լինել աշխարհական ատենի յորպիսի և իցէ դատս ։ ՝Նոյն ազատութիւն շնորհեցաւ և կրօնաւորաց որք զայնու ժամանակաւ բազմաթիւք էին յոյժ ։

ԳԼՈՒԽ ԺԵ․

Ազգային ժողովք․ — Ժողով Դըւնայ Բ․, յամի տեառն 527 ։

՝ՆԵՐՍԷՍ կաթուղիկոս աշտարակեցի իբրև հայր գորովագութ խնամ կալեալ վասն անդորրութեան եկեղեցական կարգաց հայաստան աշխարհի, զի քաղաքականն վէր 'ի վայր խառնեալ՝ ոչ դոյզն աղէտս 'ի վերայ ածէր ժողովրդեան, գումարեաց ժողով եպիսկոպոսաց 'ի Դուին քաղաք, անդր կոչեալ և զՊետրոս Քերթող զեպիսկոպոս Սիւնեաց, որ սրբութեամբ վարուց և իմաստութեամբ հռչակեալ պայծառանայր․ և սահմանեաց 'ի նմա երեսուն և ութ կանոնս բարեկարգութեան քահանայից և աշխարհականաց միանգամայն ։

Ժողով Դըւնայ Գ․, յամի տեառն 551 ։

Մ՝ԻՆՉԴԵՌ տակաւին չէր ծաւալեալ ընդ բնաւ կիրառութիւն հասարակ թուականի ծննդեանն Քրիստոսի, և ազգ իւրաքանչիւր զիւրն ունէր առանձին թուական, Մ՝ովսէս կաթուղիկոս եղիվարդեցի՝ յօժարամիտն 'ի բնէ և յարտաքին վարժս մանկութենէ, հասու եղեալ թերուենց մերոյ տումարին, փոյթ յանձին կալաւ նորոգել զայն․ վասն որոյ ժողովեալ զեպիսկոպոսունս և զքահանայս և զիմաստուն աշխարհականս 'ի Դուին քաղաք, միաբան համաձայնութեամբ նորա հաստատեաց նոր թուականն յամի տեառն 551, յորմէ և այսր (1847) միահամուռ գումարին հազար երկերիւր իննսուն և վեց ամք (ՌՄՂԶ):

Ժողով Դունայ Դ., յամի տեառն 596:

ԿԻՒՐԻՈՆ կաթուղիկոս Վրաց աշակերտեալ Ճանապարհի Ճշմարտութեան, և 'ի վերայ հասեալ զի 'ի զուր և տարապարտուց բամբասի սուրբ ժողովն Քաղկեդոնի, համոզեաց բանիւք յորդորեաց զիշխանս և զեպիսկոպոսունս Վրաց ընդունել զայն ժողով: Սակայն Վրթանէս ոմն եպիսկոպոս որ տեղապահ եկաց երբեմն կաթուղիկոսարանին, և Աբրահամ կաթուղիկոս Հայոց, որք 'ի բնէ սերտ մտերմութեամբ էին ընդ Վրաց, 'ի միտս կասկածոտ գոլով զքաղկեդոնականաց, յորդորական բանիւք աղաչեցին զԿիւրիոն մերժել ըզսինհոդոսն, որպէս եթէ ընկալեալ իցէ նա զթիւր կարծիս Նեստորի: Կիւրիոն ոչ ինչ միտ եդեալ բանից նոցա, առաջինն թղթովք ծանոյց զճշմարտութիւն սրբոյ ժողովյն: Իսկ Աբրահամու սրտմտեալ յոյժ ընդ այն, և զի մի ոք 'ի Հայոց զհետ Կիւրիոնի շաւղայն ընթասցի՝ հրամայեաց ժողով մեծ գումարել 'ի Դուին քաղաք և նզովեաց զԿիւրիոն և զամենայն քաղկեդոնականս միանգամայն, և հրաման պատուիրանի 'ի վերայ դնէր զի մի ոք 'ի Հայոց և հաղորդ անգամ գայցէ ընդ Վրաս 'ի տուրևառս վաճառուց. և այսպէս հերձեալ քակեաց զընտանին մտերմութիւն Հայոց և Վրաց:

Ժողով Կոստանդնուպօլսոյ յամի տեառն 597:

ՅԱՆՁԱՓՍ վշտացեալ Կիւրիոնի ընդ ցաւագին և տարապարտ նզովս Աբրահամու Հայոց կաթուղիկոսի, ամբաստան եղև զնմանէ առ Մօրիկ հայկազն կայսր Կոստանդնուպօլսոյ: Զայրացեալ ընդ այն կայսեր՝ հրամայեաց ժողով գումարել 'ի Թագաւորեալ քաղաքն, անդր կոչեալ ընդ եպիսկոպոսաց Յունաց և զընտրեալն եպիսկոպոսունս Հայոց որ 'ի մասն բաժնի կայսեր. և Աբրահամ կաթուղիկոս առաքեաց իւր նուիրակս փոխա յիշատակեալդ Վրթանէս եպիսկոպոս և ընդ նմա զԳրիգոր զայն վարդապետ։ Եւ 'ի լինել երկար բանից, և 'ի յայտնի երևել ողջմտութեան քաղկեդոնականաց, եպիսկոպոսունք Հայոց որ 'ի մասն բաժնին Յունաց՝ ընկալան զսուրբ ժողովն, և նուիրակք ևեթ Աբրահամու կաթողիկոսի առ ազխտութեան և կամ թէ առ հակառակաւէր բարւոյն ոչ գիտեմ՞ մերժեցին զժողովն, և սրտմտեալ յոյժ ընդ այլ եպիսկոպոսունս՝ դարձ արարին յաշխարհ իւրեանց։

Յայնժամ Մօրիկ կայսր որոշեաց զՀայս բաժնին Յունաց 'ի հնազանդութենէ Աբրահամու, և կարգեաց նոցա առանձինն կաթողիկոս զՅովհան զոմն այր բարի և խաղաղարար, որ թէպէտ ջան գործէր յանդորր ունել զհօտն, սակայն խռովք ոչ սակաւ յուզեցան 'ի պատճառս իրացս։

ԳԻՐՔ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա.

Գերել սրբոյ խաչին Քրիստոսի 'ի Պարսից, և անդրէն դարձ նորա յԵրուսաղէմ։ — Նահատակութիւն սրբոց եօթն խոստովանողաց։

ԴԷՊՔ ինչ նորք նշանաւոր հանդիսացուցին զսկիզբն եօթներորդի դարու 'ի պատճառս գերութեան սրբոյ խաչին յԵրուսաղեմէ՝ 'ի Խոսրովայ Պարսից արքայէ, որ կամելով վրէժխնդիր լինել մահուան սիրեցելոյ բարեկամին իւրոյ Մօրիկ կայսեր Հայկազնոյ, զոր յամին 602 սպան անգութն Փոկաս, զօրաժողով լեալ դիմեաց 'ի սահմանս կայսերութեն. և ոչ համարձակեալ Փոկասու զդէմ ունել զօրութեան նորա, եհաս նա անարգել մինչև 'ի Քաղկեդոն, և յաւարի առեալ զբազում քաղաքս՝ դարձաւ 'ի Կարին։ Նա զի ունէր և թշնամութիւն ընդ Մուշեղայ Մամիկոնեան նախարարի Հայոց, առաքեաց զօրս 'ի Տարոն գաւառ գտանել և սպանանել զնա։

Ընդ այն ժամանակս 'ի Տարոն հուպ յԱմենափրկեան վանն Գլակայ բնակէին եօթն ճգնաւորք խոստովանողք, որոց տեսեալ զխուռն բազմութիւն գազանամիտ զօրացն Պարսից, գնացին 'ի վանն և յորդորեցին զկրօնաւորսն խուսել անտի առ ժամանակ մի. այլ նոքեանք կամակար մնացին անդ փոխանակ նոցա, փափաքելով ընդունել զյաղթական պսակ վկայական մահուան 'ի Պարսից անտի. և մինչ կային յաղօթս յեկեղեցւոջ վանացն, հասին անդր զօրք անօրինաց, և յաւարի առեալ զվանսն մտին յեկեղեցին, ուր գտեալ զսուրբ ճգնաւորսն սպանին սրով առաջի սրբոյ սեղանոյն յա-

մի տեառն 604 . և մարմինք նորա թաղեցան ապա առ գերեզմանաւ սրբոյն Մամանտի և Կրօնիդեայ, և կարգեցաւ վասն նորա առանձինն տօն յիշատակի ամ՛ ընդ ամ ։

Յետ այսորիկ ոչ ինչ թուլացեալ Խոսրովու յանհաշտ թշնամութենէն որ ընդ Յոյնս, իբրև յամին 610 Հերակլ իշխան Ափրիկոյ սպանեալ զՓոկաս՝ կալաւ զաթոռ կայսերութեանն, լուեալ Խոսրովու զխռովութիւն Յունաց և զտիրել Հերակլի՝ վերստին զումարեաց զօր բազում և գնաց 'ի Պաղեստին, և առեալ զսուրբ քաղաքն Երուսաղէմ՝ վարեաց 'ի գերութիւն ընդ երեսուն հազար անձանց՝ և զսուրբ խաչն Քրիստոսի . զոր տարեալ 'ի Պարս՝ եդ 'ի մեհենի իւրում, ուր եկաց մնաց այն մինչև ցամ՛ տեառն 629 ։ Սուգ մեծ առին ընդ այն հաւատացեալք ամենայն . և կայսրն Հերակլ զօրաժողով լեալ յարձակեցաւ վանել զՊարսիկս 'ի սահմանաց իւրոց ։ Ի բուռն զօրութենէ նորա զանգիտեալ Խոսրովու փախեաւ 'ի Սելևկիա . ուր և վտանգեալ մահաբեր ախտիւ՝ դարձաւ 'ի Տիզբոն քաղաք, և անդ սպանաւ 'ի Կաւատայ յորդւոյ իւրմէ որ թագաւորեաց ընդ նորա ։ Եւ յետ միոյ ամի վախճանեալ Կաւատայ, նստաւ Արտաշիր մանուկ որդի նորա ։ Զայն իբրև լուաւ Հերակլ՝ խոստացաւ ձեռնտու լինել Խոռեմայ փեսային Խոսրովու թագաւորեցուցանել զնա, եթէ յանձն առնուցու դարձուցանել յետս զսուրբ խաչն Քրիստոսի, զգերեալն 'ի Խոսրովայ արքայէ ։ Յօժարակամ ունկնդիր եղև Խոռեմ բանից Հերակլի, և սպանեալ զԱրտաշիր մանուկ նստաւ յաթոռ թագաւորութեան Պարսից, և վաղվաղակի զսուրբ խաչն Քրիստոսի յուղարկեաց շքով առ Հերակլ, և նա յամին 629 յամսեանն մարտի եկեալ 'ի Կոստանդնուպօլսոյ ուղևորեցաւ յԵրուսաղէմ, և անդ ինքնին յուս իւր բարձեալ զսուրբ խաչն՝ հանգոյց պատուով յառաջին տեղին, և սահմանեաց զտօն Վերացման խաչին 'ի չորեքտասաներորդ աւուր ամսեանն սեպտեմբերի ։

ԳԼՈՒԽ Բ.

Նորոգումն հերետիկոսութեան միակամադաւանից։

ԵՒՏԻՔԱԿԱՆՆ մոլորութիւն զոր ոչ սաստկամբք ժողովոց և մեծաւք քահանայապետաց կարացին ջնջել և բառնալ 'ի միջոյ, յեօթներորդի դարուս այլազգ կերպարանօք 'ի վեր երևեցաւ դարձեալ, և պատճառք եղև բազմադիմի վնասուց։ Բազումք յեւտիքականաց զհետ երթեալ այնր մոլորութեան կոչեցան Միակամադաւանք· զի դնէին կամ դաւանէին 'ի Քրիստոս զմի ևեթ կամս և զմի միայն գործողութիւն։ Սերգիոս պատրիարգ Կոստանդնուպօլսոյ՝ որ նստաւ յամին 610, և եկաց յիշխանութեան զամս քսանևութ, օժանդակութիւն գտեալ 'ի Թէոդորոսէ փառանեցւոյ, յԱնաստասայ պատրիարգէն Անտիոքայ, և 'ի Կիւրոսէ եպիսկոպոսէն Աղեքսանդրիոյ, պաշտպան և ջատագով եկաց կարծեացս զոր և գուն գործէր հաստատել այսու խնամատակական, ձեռնարկութեամբ· ‟Չիք, ասէր, 'ի Քրիստոս բայց մի միայն անձն· իսկ արդ 'ի միում ևեթ անձին չէ հնար լինել բայց միոյ սկզբան, որ կամեսցի և արասցէ· ապա 'ի Քրիստոս անմարթ է լինել՝ բայց միոյ կամաց„։ Այս բանք յեւտիքական մոլորութենէ ունէին զծագումն· զի եթէ 'ի Քրիստոս մի ևեթ կամք իցեն, ապա հարկ է լինել և միոյ բնութեան, որպէս պնդէրն Եւտիքէս։

Յայս մոլորութիւն անկաւ և Հերակլ կայսր, որ դարձեալ յԵրուսաղեմէ՝ յամին 620 գնաց 'ի Միջագետս յԵդեսիա քաղաք, ուր եկաց զամս իբր երիս· յորում ժամանակի Անաստաս եպիսկոպոս առաջնորդ Յակովբիկ անուանեալ ասորի եւտիքականաց՝ մտերմացեալ ընդ Հերակլի՝ ընկալաւ 'ի նմանէ զպատրիարգութիւն Անտիոքայ, և բազմադիմի հնարիւք հաւանեցոյց զկայսրն 'ի կարծիս մոլորութեան իւրոյ· վասն որոյ 'ի դառնալ Հերակլի 'ի Կոստանդնուպօլիս՝ ձեռնտու եկաց մոլորութեանն, որպէս յայտ է և 'ի հրովարտակէ նորա։

ԳԼՈՒԽ Գ.

Կանոն դաւանութեան հաւատոյ Հերակլի կայսեր։

ԶՊԱՏԻՐ և զանզօր փաստս միակամնադաւանից հերքեցին ուղղափառք, ցուցանելով թէ միութիւն կամաց ոչ կարէ յառաջ գալ 'ի միութենէ անձին, այլ 'ի միութենէ բնութեան. զի ահա յԱստուած է մի միայն կամք, թէպէտ և իցեն երեք անձինք. և քանզի երկու բնութիւնս դաւանէ եկեղեցի 'ի Քրիստոս Աստուած, հարկ է լինել և երկուց կամաց։

Այլ զի թուէր իմն եթէ կարծիք և վարդապետութիւն միակամնադաւանից իցէ յարմարագոյն զօդ և հնարք միաբանելոյ ընդ եկեղեցւոյ զեւտիքականս և ըզնեստորականս միանգամայն, յօժարամիտ ընկալան զայն խաղաղասէրք ոմանք, որք զառաջինն ոչ ծանեան զթոյն մոլորութեանն որ ծածկեալ կայր 'ի նմին ։ Յայսպիսւոց աստի գոլով և Հերակլի կայսեր՝ ձեռնտու և նըպաստամատոյց եղև նոցա. վասն որոյ յամին 639 եհան դաւանութիւն ինչ հաւատոյ 'ի ձև հրովարտակի, յորում բացայայտ նշանակէր՝ եթէ 'ի Քրիստոս մի և եթ կամք իցեն և ներգործութիւն. և կոչեցաւ հրովարտակն ԷԿԹԷՍԻՍ, կամ թէ ասել Կանոն դաւանութեան հաւատոյ։ Սերգիոս պատրիարգ Կոստանդնուպօլսոյ կամեցեալ ընդունելի զայն գործել, վաղվաղակի գումարեաց ժողով յեպիսկոպոսաց համամիտ եղելոց ընդ նմա, որք յօժարակամ ձեռն եդեալ հրովարտակին՝ կախեցին զայն 'ի դրունս եկեղեցեաց մայրաքաղաքին. ուր և վաղվաղակի տարածեցաւ մոլորութիւնն, և անտի սփռեցաւ 'ի մերձաւոր գաւառս ։

Սոփրոնիոս միայնակեաց, այր ականաւոր իմաստութեամբ և սրբութեամբ վարուց, արիական հոգւով ընդդէմ զինեցաւ նորահնար մոլորութեանն։ Նա ամբարձեալ 'ի պատիւ եպիսկոպոսութեանն Երուսաղեմի, գումարեաց ժողով յեպիսկոպոսաց վիճակին իւրոյ, և բացէ 'ի բաց հերքեաց զայն։ Յայնժամ Սերգիոս պատրիարգ Կոստանդնուպօլսոյ բողոք կալաւ զնմանէ առ պապն Ոնորիոս Ա., որպէս եթէ անչափ նախանձայուզութեամբ իւրով խռովս յուզիցէ Սոփրոնիոս յարեւելս : Իսկ քահանայապետն Սերգիոս կարծելով եթէ պատրիարգն Կոստանդնուպօլսոյ խաղաղասէր մտօք զանգատի զՍոփրոնիոսէ, գրեաց առ նա, որպէս և առ Կիւրոս և առ Սոփրոնիոս՝ խրատելով և յորդորելով զնոսա չյուզել խնդիրս որ վնասուց մանաւանդ քան թէ օգտի են պատճառք. յուշ առնէր նոցա զոր ինչ կրեաց եկեղեցի յառաջին հերձուածոց անտի, վասն որոյ և օգտակարագոյն համարէր զլռելն և զչխօսել զմիոյ կամ զերկուց կամաց 'ի Քրիստոս :

Զայս բան Սերգիոսի թէպէտ և մարթ իցէ յողջամիտ իմաստս առնուլ, սակայն հերետիկոսք համարելով զնա իւրեանց կուսակից՝ պատճառս առին սերմանել զմոլորութիւնս իւրեանց 'ի բազում գաւառս արեւելեայց :

Բայց հակառակութիւնն յուզեալ 'ի պատճառս հրովարտակին Հերակլի յԷկթեսէ և ուրեք ուրեք յարեւելեան սահմանս, զգաստացոյց զՀերակլ, որ յետ սակաւուց յամին 640, նախ քան զմահ իւր նամակագիր լինելով առ քահանայապետն Յովհաննէս Դ., հերքէ զմոլորութիւնն՝ յայտ առնելով եթէ հրովարտակ իւր և դաւանութիւն յօրինեալ իցէ 'ի Սերգիոսէ պատրիարգէ, և նորին հրապուրանօք ստորագրեալ և հրատարակեալ յիւր անուն : Սակայն զօրաւորագոյն արդեօք լինէր հերքումն այս Հերակլի, եթէ այլով հրովարտակաւ եղծեալ էր կամ յետս կոչեալ զառաջինն :

ԳԼՈՒԽ Դ.

Կանոն կամ Սահման Կոստանդեայ կայսեր.

ՍԵՐՏ միաբանութիւն կամ թէ ասել՝ անչափ վստահութիւն Հերակլի յանձինս յեպիսկոպոսաց որ ջատագով և պաշտպան կային հերետիկոսութեան միակամեանից, պատճառք եղև խռովելոյ զխաղաղութիւն եկեղեցւոյ. վասն որոյ Կոստանդ թոռն Հերակլի խորհեցաւ խաղաղել զխռովութիւնն 'ի ձեռն նոր հրովարտակի՝ զոր արար թելադրութեամբ Պօղոսի պատրիարգին յամի տեառն 648, և անուանեաց զայն Օրինագրութիւն կամ սահման․ յորում արգելեալ զամենայն վէճ և զբանակռուութիւն, պատուիրէր զհետ երթալ վարդապետութեանն սուրբ գրոց և սրբոց հարց, ոչինչ յիշատակեալ զերկուց կամաց որ 'ի Քրիստոս ։ Այլն 'ի նմա և սպառնալիք որոց միանգամ հակառակեսցին այնմ սահմանի, զոր օրինակ զրկել 'ի պատուոյ և յիշխանութենէ, և կամ այլ ինչ պատուհաս մարմնաւոր ։

Թուէր իմն եթէ երկրորդս այս հրովարտակ ոչինչ պատճառք լիցի խռովութե՟ կամ չփոթից․ քանզի անորոշ թողեալ էր նա զխնդիրն, և արգելոյր լինել կուսակից միում կամ միւսում ։ Սակայն նոյն ինքն լռութի՟ զոր պատուիրէր նա 'ի վերայ այսպիսւոյ մեծի և կարևոր խնդրոյ, թէ մարդկային բնութիւն 'ի Քրիստոս իցէ կատարեալ և անթերի, կասկածելի թուեցաւ ուղղափառ եպիսկոպոսաց․ քանզի թագուն պահելով զճշմարտութիւնն՝ տեղի տայր մոլորութեանն ծաւալելոյ ։

Քահանայապետն Մարտինոս Ա․ յամին 649 գումարեաց ժողով աւելի քան զհարիւր եպիսկոպոսաց 'ի Հռովմ յեկեղեցւոջ սրբոյն Յովհաննու Լատերանեան, յորում հանդիսապէս հերքեցան և դատապարտեցան թիւր կարծիք ամենայն հերետիկոսաց, և միանգամայն վարդապետք և առաջնորդք մոլորութեանցն ։ Ընդ սոսա դատեցաւ և կանոնն կամ հրովարտակ Կոստանդեայ կայսեր․ ընդ որ յանհնարինս զայրացեալ նորա, առաքեաց պատուէր առ փոխարքայն Իտալիոյ կալանաւորել զՄարտինոս քահանայապետ և առաքել 'ի Կոստանդնուպօլիս․ ուր ժամանեալ սրբոյ քահանայապետին յետ միամեայ բանտարգելութեան տարագրեցաւ 'ի Քերսոն ։ Նոյնպէս աքսորեցան 'ի Հռովմայ և ամենայն ուղղափառ եպիսկոպոսունք որք ձայնակից գտան երանելւոյն Մարտինոսի ։ Բայց և Կոստանդ ելոյծ զվրէժ յանդգնութեանն և խստասիրտ բարուցն՝ դառն և եղկելի մահուամբ 'ի Սիրակուսա քաղաքի Սիկիլիոյ յամին 668․ անգոսնեալ յամենեցունց իբր իշխան վատ և անարի, որ ոչ կարելով զդէմ ունել Սարակինոսաց, որք յաւարի առնուին զսահմանս կայսերութեանն՝ զհետ էր հալածել զքահանայապետս և զեպիսկոպոսունս զախոյեանս հաւատոյ ։

ԳԼՈՒԽ Ե.

Վեցերորդ ժողով ընդհանրական։

ՅԵՏ մահուան Կոստանդեայ՝ որ խռովս անբաւս յուզեաց յեկեղեցւոջ, կալաւ զաթոռ կայսերութեան որդի նորա Կոստանդին Պոգոնատ, այր բարեխառնած ողջամիտ վարդապետութեան. որ խնամ՛ կալեալ խաղաղել զխռովութիւն եկեղեցւոյ՝ փութայր գումարել զընդհանրական ժողով 'ի Կոստանդնուպօլիս քաղաք։ Սկիզբըն եղև ժողովոյն յեօթներորդ աւուր ամսեանն նոյեմբերի յամին 680, և կատարեցաւ 'ի վեշտասաներորդ աւուր սեպտեմբերի յամին 681։ Այս ժողով՝ որ է վեցերորդն յընդհանրականս, և երրորդն 'ի Կոստանդնուպօլիս, սահմանեաց հաստատութեամբ՝ եթէ եկեղեցին Քրիստոսի միշտ և անընդհատ դաւանէ 'ի Քրիստոս երկուս բնութիւնս անշփոթ միացեալս, որպէս և զերկուս կամս անընդդիմամարտս միմեանց։ Ոչ միայն հերքեաց զամբարիշտ վարդապետութիւնս միականադաւանից, այլ և նզովեաց զառաջնորդս կարծեացն։ Դատապարտեաց և զթուղթ Հոնորիոսի Ա. պապին առ Սերգիոս՝ երբ համախոհ և ձայնակից մոլորութեան նորին Սերգիոսի պատրիարքի։ Զայնու ժամանակաւ Մակարիոս պատրիարք Անտիոքայ պաշտպան եկաց միութեանն հերքելոյ 'ի ժողովոյն, և միայնակեաց ոմն Պօղիքրոն անուն յանդգնեցաւ ձեռներէց լինել՝ որպէս եթէ կարող է ինքն և հրաշս գործել 'ի հաստատութիւն վարդապետութեանն Մակարիոսի։ Վասն որոյ ածին առաջի նորա մեռեալ զոր կոչել զնա 'ի կեանս. բայց 'ի զուր վաստակեցաւ առ նմին կենդանութիւն, և ամօթալից կորացան միականադաւանք ամենայն։ Զսահման այսր ընդհանրական ժողովոյ հաստատեաց քահանայապետն Լևոն Բ. 'ի ժողովին գումարելոյ 'ի Հռոմ։

Կոստանդին կայսր պաշտպան եկաց վճռոց ժողովոյն Կոստանդնուպօլսոյ, զգուշացուցեալ զամենեսին մի ևս բանակռիւ լինել 'ի վերայ սահմանեալ խնդրոյն, սպառնալով եկեղեցականաց զրկել զնոսա 'ի պատուոյ և յիշխանութենէ, և աշխարհականաց՝ տարագրել յանդարձ օտարութիւն։ Արդ այսպիսի խոհական և իմաստուն օրինադրութեամբ դադարեցոյց զընդունայն բանակռուութիւնս՝ որով հերետիկոսք ջանահնար լինէին հաստատել զկարծիս իւրեանց։

Արդ յետ տալոյ զվախճան խռովութեանց, և լինելոյ պատճառք խաղաղութեան եկեղեցւոյ՝ մեռաւ Կոստանդին կայսր յամին 685, կալեալ զիշխանութիւնն զամս եօթնևտասն։ Նա եթէ յերկարէր այլ ևս յիշխանութեանն, անմարթ էր չյուսալ ՚ի նմանէ առաւելագունից բարեաց։

ԳԼՈՒԽ Զ.

Տրուղղեան ժողով, որ կոչի և Հինգվեցեան։

ՎԱՆԶԻ յերկոսին յետին ընդհանրական ժողովս չեղեն ինչ սահմանադրութիւնք եկեղեցւոյ, նմին իրի գումարեցաւ այլ ժողով յամին 691, անուանեալ Հինգվեցեան, զի էր իբր լրումն հինգերորդ և վեցերորդ ժողովոց։ Կոչի ևս Տրուղղեան, զի գումարեցաւ ՚ի գմբեթայարկ սրահի արքունի պալատան Կոստանդնուպօլսոյ։ Յայս ժողով սահմանեցան հարիւր և երկու կանոնք, որոց ձեռն եդին հաւանութեան չորեքին արևելեան պատրիարգունք, և երկերիւր և մետասան եպիսկոպոսունք։

Բազումք ՚ի սահմանադրութեանցս ընտիրք են և ընկալեալք յեկեղեցւոյ. բայց գտանին ՚ի նոսա և ինչ ինչ որք զինամարտին սովորութեանց կաթուղիկէ եկեղեցւոյ. յորս որ առաւել հարկանէ զաչս արևմտեայց՝ է թոյլտուութիւնն ամուսնացեալ քահանայից ՚ի պահել զկանայս իւրեանց։

Արդ ժողովն Տրուղղեան թէպէտ և չիցէ ընդունելի ըստ ամենայն մասանցն, սակայն եկեղեցի ուղղափառաց չմերժէ զկանոնս նորա, զի չիք ինչ ՚ի նոսա հակառակ աւանդութեան հռոմէական եկեղեցւոյ և մեծաց քահանայապետաց, զբանս նոցա ածէ ՚ի վկայութիւն ընդդէմ պատկերամարտից ՚ի ցուցանել զընդհանրական սովորութիւն պատկերաց յեկեղեցւոջ։

Յետ ժողովոյն Կոստանդնուպօլսոյ գրեթէ 'ի սպառ անհետացաւ մոլորութիւն միակամադաւանից. վասն որոյ յետ ժամանակաց 'ի սկիզբն ութերորդի դարուն 'ի զուր ջանացաւ Փիլիպպիկոս կայսր վերստին յարուցանել զայն. քանզի ընկեցաւ յաթոռոյ՝ ոչինչ ձեռնհաս լեալ 'ի կատարումն ածել զխորհուրդս մտացն. և սակաւաթիւ համախոհք նորա ոչ կարելով տևել ընդ երկար 'ի մոլորութեանն խառնեցան ընդ Եւտիքականս.

ԳԼՈՒԽ Է.

Ծագումն Մահմետական դենի:

ՄԻՆՉԴԵՌ Յոյնք ջանահնար լինէին մաքրել զուղղափառ հաւատս 'ի թիւր և 'ի տարաձայն վարդապետութեանց, զորս միակամադաւանք դուն գործէին մուծանել յեկեղեցի, նորահնար ինչ դեն 'ի վեր երևեցաւ յԱրաբիա որ փութով և անաշխատ ծաւալեցաւ յԱսիա և 'ի մասն ինչ Եւրոպիոյ. և յանուանէ անտի հիմնադրին կոչեցաւ Մահմետականութիւն.

Ծնաւ Մահմէտ 'ի Մէքքէ քաղաքի յազնուական զարմէ, զառաջինն լեալ գործակալ այրի կնոջ միոյ մեծատան՝ զոր յետ ամաց ինչ էառ իւր կին. և մինչդեռ 'ի պատճառս տուրևառուէ յաճախեր առ հրեայս և առ քրիստոնեայս՝ ընկալաւ 'ի նոցանէ զտեղեկութիւն հին և նոր կտակարանաց, և եդ 'ի մտի կանգնել նոր դեն բաղկացեալ 'ի հրէութենէ և 'ի քրիստոնեական կրօնից յաւելլով 'ի նոսին և օրէնս ինչ մասնաւորս թոյլտուութեամբ զգայական հեշտութեանց, որովք անդէն և անդ ծաւալեցաւ վարդապետութիւն նորա, և ստացաւ իւր հետևողս. Մատեանն յորում աւանդէ զդեն իւր՝ կոչի Կուրան կամ Գուրան որ բաժանեալ է 'ի հատուածս հատուածս առանց ինչ կապակցութեան բանիցն ընդ միմեանս, իբր հաւաքումն բազմադիմի խուռն նիւթոց, զորս ասէր ընկալեալ յերկնից ընդ ձեռն Գաբրիէլի հրեշտակապետի.

Գլխաւոր մասունք օրինաց նորա են՝ թլփատութի, ամսօրեայ պահք՝ ռամազան առ 'ի նոցանէ անուանեալ, յորում կուրանն ասի աւանդեալ նմա յերկնից, հնգիցս աղօթք օր ըստ օրէ, լուացումն մարմնոյ 'ի քաւութիւն մեղաց, ուխտագնացութիւն 'ի Մէքքէ: Արգել իւրոցն մի ուտել զարիւն կենդանեաց և զխոզենի, նոյնպէս և զարբումն գինւոյ:

Յարգէր Մահմէտ և ընդունելի համարէր զօրէնս Մովսեսի և զաւետարանին. զի ըստ ասելոյ նորա՝ մարգարէք և առաքեալք Քրիստոսի քարոզեցին զճշմարտութիւն, բայց մատեանք նոցա խանգարեցան ապա 'ի Հրէից և 'ի քրիստոնէից: Ընդունէր թէ Քրիստոս իցէ որդի Աստուծոյ՝ շնորհօք և ոչ բնութեամբ. և թէ իցէ բան Աստուծոյ, այսինքն մեծ մարգարէ՝ ծնեալ 'ի կուսէ աստուածային զօրութեամբ առանց մարդկային գործակցութեան. սակայն և այնպէս լոկ մարդ դաւանէր զնա: Եւ համարէր թէ չիցէ մեռեալ և ոչ յարուցեալ. զի Աստուած, ասէր, փոխանակ նորա կացոյց զայլ ոք՝ որ խաչեցաւ 'ի Հրէից, և ինքն անդրէն դարձուաւ առ Աստուած որ առաքեացն զնա: Մերժեաց նա զխորհուրդ ամենասուրբ Երրորդութեան իբր բազմաստուածութիւն. Նմին իրի Կուրանն չփոթէ զքրիստոնեայս ընդ կռապաշտս, և զօրինապահս իւր անուանէ Միապաշտս. որպէս թէ նոքա և եթ իցեն որք պաշտիցեն զմի միայն Աստուած: Աւանդէ ևս՝ թէ Աբրահամ, Մովսէս և Քրիստոս էին առաքեալք յԱստուծոյ յայլ և այլ ժամանակս՝ յուղղել և 'ի բարեկարգել զանկարգութիւնս, որովք եղծեալ և խանգարեալ էր նախնի պաշտօնն Աստուծոյ, և թէ ինքն վերջին իցէ յառաքելոց Աստուծոյ և բերեալ ընդ իւր զկատարելագոյն օրէնս, և զկնի նորա ոչ ևս եկեսցէ այլ ոք մինչև 'ի կատարած աշխարհի:

Ի սփռել հեշտեաւ զօրէնս և զվարդապետութիւնս իւր՝ թոյլ ետ բազմակնութեան. և աշակերտելոցն իւրոց խոստացաւ զդրախտ փափկութեան 'ի հանդերձեալ կեանսն, յորում կայ մնայ նոցա կենակցել ընդ յաւերժահարսունս, ստանալ զանգին և զանսպառ գանձս ճոխութեան, բերկրել և զուարճանալ 'ի հովանաւոր պարտէզս՝ ըմպելով ջուր կենդանի և ականակիտ: Արդ քանզի անկարութիւնք խոստմանցս և քարոզութեանց նորա սիրելի էին յոյժ բնակչաց անջրդի և ապառաժ վայրայն, ընկալան զայն սիրով և անդէն և անդ աշակերտեցան բազումք վարդապետութեան նորա ։

Մահմէտ բնաւորն իւրով աշալուրջ բարեմասնութիւնք 'ի գլուխ տարաւ զխորհուրդս մտաց իւրոց, զոգցես առանց ինչ դժուարուն̃ ։ Յաջողակ էր 'ի զմնել զմիտս և 'ի հաւանութ̃ ածել զունկնդիրս ազդու և համառօտ բանիւք ։ Ի դժուարինս անգամ ձեռներէց էր նա, աներկիւղ և անվեհեր 'ի մեծամեծ վտանգս, երկայնամիտ և խորագէտ ։ Եւ զի աշխեղ էր դիմացն կերպարանօք և փառացի, 'ի սակաւ ժամանակի ստացաւ իւր բազում հետևողս ։ Այլ քանզի կային և Թշնամիք բազումք իշխանութեան նորա՝ ստիպեցաւ Թողուլ զքաղաք ծննդեան իւրոյ զՄէքէ, և խոյս տալ 'ի Մեդինէ յամի տեառն 622 ։ Ի փախստենէ աստի Մահմէտի 'ի Մեդինէ սկիզբըն առնու Թուականն Տաճկաց Հիճրէթն կամ փախուստ առ 'ի նոցանէ անուանեալ ։ Ի ժամանել Մահմետի 'ի Մեդինէ՝ ժողովեցան ընդ դրօշու իւրով զխուռն բազմութ̃ի անձնանուէր աշակերտաց, որք ձեռնտու եղեն նմա և օժանդակք 'ի քարոզել և 'ի ծաւալել զվարդապետութիւնն՝ բանիւ և զինու ։ Յարձակեցան յամենայն մերձաւոր և 'ի հեռաւոր քաղաքս, սրով և հրով ստիպելով զամենեսին հնազանդել Մահմէտի իբր առաքելոյ և մարգարէի. որով հաստատեցան օրէնք և սահմանք դենին նորա ընդ բազում գաւառս Ասիոյ ։

Ի մեռանել Մահմէտի 'ի Մեդինէ յամին 632 'ի հասակի վաթսուն և երից ամաց, Աբուպէքիր աներ նորա կալաւ զաթոռ իշխանութեանն, և զհետ երթեալ շաւղաց փեսայի իւրոյ կալաւ զերկիրն Բաղդատացւոց, Ասորեստանեայց և մասին Միջագետաց հանդերձ շրջակայ գաւառօք ։ Եւ զի ընդ այն ժամանակս կայսերք Յունաց պատաղեալք էին 'ի վէճս հաւատոյ, և անձնատուրք 'ի հեշտութիւնս զեղխութեանց, ոչ ինչ փոյթ յանձին կալան զառաջս առնուլ նորահնար աղանդոյն որ ծաւալէր ընդ բնաւս ։

Յետ երկուց ամաց իշխանութեան Աբուպէքրի՝ կալաւ զաթոռ նորա Օմար յամի տեառն 634, և տիրեաց Հայաստանի, Միջագետաց, Եգիպտոսի, Պաղեստինոյ՝ և քաղաքին Երուսաղեմի ։ Յետ այնորիկ զօրացան տիրել և լայնածաւալ պետութեանն Պարսից ։

Բնակիչք աշխարհացս այսոցիկ առ հասարակ քրիստոնեայք, քանզի զհետ էին մեղկութեան վարուց, չկարացին զդէմ ունել խուռն բազմութեան նոցա, որք և անարգել տիրեցին ընդարձակ աշխարհացն Ասիոյ և Ափրիկոյ, հարկելով կամ 'ի դէնս իւրեանց դարձուցանելով զքրիստոնեայս։ Ի Պարսկաստան, ուր կային բազում քրիստոնեայք, յետ տիրելոյ մահմէտականաց առ սակաւ սակաւ սպառեցան 'ի սպառ։

ԳԼՈՒԽ Ը.

Յայտնութիւն Վարագայ խաչին։

Ի ՄԷՋ ազգիս Հայոց կայր աւանդութիւն յաւուրց անտի նահատակութեան սրբոց Հռիփսիմեանց, թէ առ ժամանակօք հալածմանց Դիոկղետիանոսի՝ 'ի չորրորդի դարուն փախուցեալ նոցա 'ի Հռովմայ, բերեալ իցեն ընդ իւրեանս և մասն ինչ 'ի խաչափայտէն Քրիստոսի. և թէ յանցանել իւրեանց 'ի Տոսբ գաւառէ՝ ոմանք 'ի խմբէ անտի կուսանաց մնացեալ իցեն 'ի լերինն Վարագայ, ունելով առ իւրեանս և զմասն փայտին կենաց. և թէ յետ վախճանի սրբոց կուսանացն՝ անյայտացեալ է այն 'ի մարդկանէ։

Զայս աւանդութիւն գիտելով ճգնաւորի ուրումն Թոդիկ անուն, յամի տեառն 653 մեկուսացեալ յայն տեղի՝ կամ 'ի վանս երանելի կուսանացն, խնդրէր յԱստուծոյ անդադար աղօթիւք՝ յայտնել նմա զսուրբ զանձն զայն։ Արդ 'ի միում գիշերի ետես յաղօթս լոյս պայծառ 'ի բարձու ուրեք լերինն Վարագայ, և առ նմա երկոտասան սիւնս լուսեղէնս, և լսելի լինէին քաղցրաձայն օրհնութիւնք հրեշտակաց։ Այս լուսեղէն նշանն վերացաւ անտի փառօք, և եկն եմուտ յեկեղեցի վանացն, և եկաց առաջի սրբոյ սեղանոյն. զոր տեսեալ ճգնաւորին և աշակերտի նորա՝ ահիւ և խնդութեամբ մտեալ յեկեղեցին, երկիր պագին սրբոյ խաչին և գոհացան զԱստուծոյ։

Իսկ տեսիլ լուսեղէն սեանցն մնաց անդ առ տեղեաւն զաւուրս երկոտասան. զոր տեսեալ 'ի բացուստ ժողովրդեան վայրացն՝ դիմեցին անդր եպիսկոպոսք և քա-

համայնք, և ստուգեալ զքանչելւոյն գոհացան զԱստուծոյ, և փառաւորեալ զհրաշագործ պարգևաց տուողն կանգնեցին երկոտասան մատրունս 'ի տեղիս լուսեղէն սեանցն : Նաև զեկեղեցին՝ ուր հանգեաւ սուրբ մասն խաչափայտին, ընդարձակեալ նորոգեցին, և առ նովաւ շինեցին վանս միանձանց 'ի պաշտել զսուրբ խաչն Քրիստոսի :

Զհրաշալի յայտնութիւն խաչափայտիս լուեալ՝ Ներսեսի Գ. կաթուղիկոսի, և ստուգեալ զայն հաւաստի քննութեամբ, սահմանեաց զառանձին տօն այնր խաչի կատարել ամ ըստ ամէ. վասն որոյ և յօրինեցաւ շարական վայելուչ 'ի խորհուրդ հանդիսաւոր տօնիս : Նաև թէ ուստի կամ զիարդ երանելի կուսանքն Հռիփսիմեանք ստացեալ իցեն զայն մասն խաչափայտի՝ նախ քան զգիւտ խաչին Քրիստոսի ընդ ձեռն Հեղինեայ դշխոյին, չունիմք ստուգագիր պատմութիւն, բայց 'ի հաւաստի յայտնութենէ աստի զոր տօնէ եկեղեցի Հայոց :

ԳԼՈՒԽ Թ.

Վիճակ Եւրոպայ և եկեղեցւոյն Իտալիոյ :

ԹՈՒԼՈՒԹԻՒՆ և մեղկութիւն Եւրոպեան ազգաց յեօթներորդի դարու և 'ի սկիզբն ութերորդին՝ պատճառք եղեն զօրանալոյ Սարակինոսաց 'ի կողմանս յայնոսիկ. զի թագաւորք Սպանիոյ Վիսիգոթքն անուանեալ՝ անձնատուրք 'ի թուլամորթ ցոփութիւնս՝ զրգռեցին զմահմետական Արաբացիս դիմել անդր, և ունել զթագաւորութիւն. զոր և անաշխատ 'ի գլուխ տարան : Նոյն անցք անցանէին և ընդ Գաղղիա, եթէ խոհական տեսչութիւն Մուրճ անուանեալ Կարոլոսի և արիական քաջութիւն զօրաց նորա չէին զառաջս կալեալ բուռն յարձակման ընթացից նոցա, որք զԵւրոպա ամենայն խորհէին զրաւամբ նուաճել : Սակայն և այնպէս բազում՝ վնասք 'ի վերայ հասին քրիստոնեական կրօնից 'ի մուտ գտանելոյ անտի այլազգեաց յԵւրոպա :

Ի սկիզբն եօթներորդի դարու զկնի մեծին Գրիգորի պապին՝ կայր 'ի գլուխ եկեղեցւոյ Սաբինիանոս քահանայապետ Թոսկանացի, որ կալաւ զաթոռն յամին 604, և եկաց յիշխանութեան զամս իբր երիս։ Յաւուրս սորա աւանդի սկիզբն առեալ սովորութեան վարելոյ զզանգակ յեկեղեցւոջ։

Զնա յաջորդեաց յամին 607 Բոնիփակիոս Գ. Հռովմայեցի, զամիսս իբր ինն։ Զկնի նորա յամին 608 կալաւ զաթոռ քահանայապետութեան սուրբն Բոնիփակիոս Դ., 'ի սահմանաց ՝Նէապօլսոյ՝ զամս եօթն. ապա Աստուածատուր Ա. Հռովմայեցի՝ զամս իբր երիս. յետ նորա յամին 619 Բոնիփակիոս Ե. Նէապօլսեցի՝ զամս իբր վեց։ Յաւուրս քահանայապետութեան սորա Պանթէոն կամ Ամենադիցն անուանեալ տաճար կռոց որ 'ի Հռովմ՝ սրբեալ նուիրեցաւ յանուն ամենայն սրբոց։

Զկնի նորա յամի տեառն 625 կալաւ զաթոռ քահանայապետութեան Ոնորիոս Ա. Կամպանիացի զամս երեքտասան։ Սա ինքն հաստատեաց զտօն Վերացման խաչին 'ի յիշատակ յաղթութեան Հերակլի կայսեր ընդդէմ Խոսրովու Պարսից արքայի, և ազատութեան սրբոյ խաչին, որպէս յառաջն կանխեցաք ասել։ Ոնորիոս քահանայապետ ցանկացեալ անդորր խաղաղութեան եկեղեցւոյ՝ կարի ներողամտութեամբ վարեցաւ ընդ միակամողաւանս. բայց յաջորդք նորա ոսոխք և վրէժխնդիրք կացին մոլորութեանն. որպէս Սեւերինոս Հռովմայեցի՝ յերկամեայ քահանայապետութեան իւրում յամին 640։ Յետ նորա Յովհաննէս Ե. Դաղմատացի, որ կալաւ զաթոռն զամս իբր երկուս. ապա Թէոդորոս Ա. Յոյն յազգէ զամս իբր եօթն։ Յետոյ սուրբն Մարտինոս Ա. Տոդեցի զամս վեց։ Սա յառաջնում ամի քահանայապետութեան իւրոյ (649) զինեալ ընդդէմ կասկածելի դաւանութեան Կոստանդեայ կայսեր, տարագրեցաւ 'ի Հռովմայ՝ և գերեցաւ 'ի Կոստանդնուպօլիս. և յետ կալոյ անդ զամ մի 'ի բանտարգելս գերուն, աքսորեցաւ յաքսոր 'ի Խերսոն։ Յայնմ ժամանակի 'ի բռնադատելոյ կայսեր 'ի կենդանութեան նորին իսկ Մարտինոսի (որպէս և կամակար հաւանութեամբ նորա) յամին 654 ընտրեցաւ 'ի Հռովմ սուրբն Եւգինէոս Ա. Հռովմայեցի, որ եկաց քահանայապետ զամս երիս։ Զկնի նորա յամին 657 կալու զաթոռ քահանայապետութեանն սուրբն Վիտալիանոս 'ի Կամպանիոյ զամս հնգետասան ։ ԶՎիտալիանոս յաջորդեաց յիշխանութեանն յամին 672 Աստուածատուր Բ. զամս իբր չորս. ապա յամին 676 Դոնոս հռովմայեցի՝ զամս իբր երկու. յետ նորա յամին 678 սուրբն Ագաթոն սիկիլիացի զամս չորս ։ Առ քահանայապետութեամբ սորա՝ յամին 680 գումարեցաւ վեցերորդ ընդհանուր սինհոդոսն Կոստանդնուպօլսոյ, յոր առաքեաց և ինքն զնուիրակս իւր ։ Ի վախճանել որոյն Ագաթոնի յամին 682, ընտրեցաւ սուրբն Լևոն Բ. սիկիլիացի՝ զամիս մետասան. որ զսակաւօրեայ աւուրս իշխանութեան իւրոյ պանծալի հանդիսացոյց երգովքն զորս յօրինեաց 'ի վայելչութիւն աստուածային պաշտամանց ։ Յետ նորա յամին 484 կալաւ զաթոռ քահանայապետութեան սուրբն Բենեդիկտոս Բ. հռովմայեցի՝ զամիս տասն, զոր յաջորդեաց Յովհաննէս Ե. ասորի՝ զամ մի և եթ ։ Ապա Կոնոն Թրակացի զամիս մետասան, և յետ նորա յամին 687 սուրբն Սերգիոս Ա. անտիոքացի՝ զամս իբր չորեքտասան ։ Սոքա ամենեքին արժանաժառանգ յաջորդք առաքելական գահին ծաղկեցան գիտութեամբ և առաքինութեամբ յեօթներորդի դարու ։

Աւանդի 'ի մատենագրաց՝ թէ սուրբն Բենեդիկտոս Բ. քահանայապետ ընկալեալ իցէ 'ի Կոստանդեայ Պոգոնատէ զարտօնութիւն ազատական ընտրութեան քահանայապետին Հռովմայ առանց ինչ հաւանութեան կամ հաստատութեան կայսեր Յունաց, յորմէ չէին զերծք յառաջին ժամանակս, որպէս յիշատակեցաք 'ի նեղութիւնս վեցերորդի դարու ։ Նոյնպէս և կայսրն Փոկաս 'ի սկիզբն եօթներորդի դարու տուեալ էր քահանայապետին Հռովմայ զպատիւ տիեզերական գլխոյ, զոր պատրիարգունք Յունաց կամէին յինքեանս գրաւել. սակայն աստի յայսմանէ յետոյ ուրեմն ծագեցան հերձուածք և հակառակութիւնք ։

ԳԼՈՒԽ Ժ.

Կաթողիկոսունք, և վիճակ եկեղեցւոյն Հայոց։

Ի ՍԿԻԶԲՆ եօթներորդի դարուս յետ վախճանելոյ Աբրահամու կաթողիկոսի՝ կալաւ զաթոռն Կոմիտաս եպիսկոպոս Տարօնոյ՝ առաջնորդ վանիցն Գլակայ, այր խոհեմ, հեզահամբոյր և իմաստուն։ Կամելով սորա նորոգել զվկայարան սրբոյն Հռիփսիմեայ, եգիտ զտապանն կնքեալ մատանեաւ սրբոյ Լուսաւորչին և սրբոյն Սահակայ, յորս յաւել և ինքն զիւր կնիք առանց բանալոյ. և կանգնեաց եկեղեցի հոյակապ ՚ի վերայ տապանին՝ երգեաց շարական ընտիր ՚ի գովեստ սրբոց կուսանացս, այն է կանոնն սրբոց Հռիփսիմեանց՝ Անձինք նուիրեալք։ Արար և ազգի ազգի շինութիւնս յԷջմիածին, յամենայնի խնամ կալեալ բարեկարգութեան եկեղեցւոյ. և կացեալ ՚ի հայրապետութեան զամս ութ՝ վախճանեցաւ յամին 625։

Քրիստափոր Գ. յԱպահունեաց գաւառէ՝ ընտրեցաւ կաթողիկոս ՚ի նմին ամի։ Եւ զի ճգնազգեաց ոմն էր սա և անաչառ ՚ի կշտամբել զապիրատութիւնս իշխանաց, խորհեցան ընկենուլ զնա յաթոռոյ. զոր իմացեալ նորա՝ կամովին հրաժարեցաւ յիշխանութենէն յետ երից ամաց կաթողիկոսութեանն, և առանձնացեալ յաւան Սահակայ՝ շինեաց վանս միանձանց, ուր եկաց խստակրօն վարուք մինչև ցօր մահուան իւրոյ։

Եզր կաթողիկոս ՚ի Նիգ գաւառէ՝ յաջորդեաց ըզՔրիստափոր յամին 628, որ ժողովով եպիսկոպոսաց ՚ի Կարին քաղաք ընկալաւ զսուրբ ժողովն Քաղկեդոնի։ Շինեաց զվկայարան սրբոյն Գայիանեայ և բնակարանս առ նմա վասն քահանայից և պաշտօնէից։ Եւ զի ընդ այն ժամանակս զօրացեալ Հագարացւոց յաւարի առնուին զհայաստան աշխարհ, առ ցաւոց սրտին մեռաւ Եզր կաթողիկոս յամին 639, կալեալ զաթոռ իշխանութեանն զամս տասն։

Յետ նր՟ յամին 640 նստաւ կաթողիկոս՝ Ներսէս Գ. եպիսկոպոս Տայոց, և անուանեցաւ Շինող՝ ՚ի պատճառս կանգնելոյ զանազան եկեղեցիս և վկայարանս սրբոց յայլ և այլ տեղիս ։ Յուսուս իշխանութն սորա 'ի թըշնամութիւն գրգռեալ Յունաց ընդդէմ ազգիս մերոյ, խորհէին զբռնամբ ածել զՀայաստան աշխարհ, մինչև Կոստանդեայ կայսեր զխմել անդր զօրօք. զոր լուեալ Ներսեսի կաթուղիկոսի՝ բազում աղերսանօք զիջոյց զբարկութի նորա, և 'ի Դուինն քաղաքի յանդիման կայսեր ընկալեալ զժողովն Քաղկեդոնի և դաշն նիզակակցութե եդեալ հաշտեցան ընդ միմեանս ։ Սակայն բռնութի Հագարացւոց և բուռն վէճ հակառակութեան Յունաց ընդ Հայս զայրացոյց զսիրտ բազմաց, մինչև հարկեցուցանել զՆերսէս կաթուղիկոս խոյս տալ 'ի բնիկ գաւառ իւր ։ Յայնժամ ախերիմ թշնամիք Յունաց կացուցին 'ի տեղի նորա իբր տեղապահ աթոռոյ՝ զՅովհաննէս ոմն վարդապետ մանազկերտցի չարախորհուրդ և ժանտ ոսոխ ընդդէմ քաղկեդոնականաց. որոյ միաբանեալ ընդ իւր զոմանս 'ի համախոհ վարդապետաց, յամին 651 արար ժողով 'ի Մանազկերտ, ուր հերքեալ զսուրբ ժողովն Քաղկեդոնի՝ սահմանեաց հինգ կանոնս ընդդէմ ազգային սովորութեան եկեղեցւոյն Յունաց. որք պատճառք եղեն ապա անընդհատ թշնամութեան ընդ մէջ երկուց եկեղեցեաց ։ Յայն տագնապ չփոթի վախճանեցաւ Ներսէս կաթուղիկոս, կացեալ 'ի հայրապետութեան զամս քսան ։

Ապա յամին 661 նստաւ Անաստաս կաթուղիկոս յԱկուռի գեղջէ, և եկաց յիշխանութեան զամս վեց ։ Յետ նորա յամին 667 ընտրեցաւ Իսրայէլ կաթուղիկոս 'ի Ոտմսոյ, և վարեաց զիշխանութիւնն զամս տասն ։

Յետ Իսրայէլի՝ յամին 677 կալաւ զաթոռ կաթուղիկոսութեան երանելին Սահակ Գ. Ձորափորեցի, այր հոգեւանդն և մարզեալ 'ի հրահանգս առաքինական վարուց. վարժեալ միանգամայն և յուսմունս գիտութեանց՝ աշակերտ Թէոդորոսի զխոնականի, և եկաց յիշխանութեան զամս քսան և վեց ։ Առ կաթուղիկոսութեամբ սորա՝ հակառակութեամբ գոլով միշտ Յունաց ընդ ազգիս Հայոց՝ գրգռեցին զՀագարացիս ընդդէմ նոցա. որոյ նենգութեամբ մտեալ 'ի Դուինն քաղաք՝ կալան զկաթուղիկոսն և կապանօք առաքեցին 'ի Դամասկոս, ուր մնաց 'ի գերութեան մինչև ցամ տևան

702։ Յայնու ժամանակս զայրացեալ Հագարացւոց ընդ քաջութիւնս նախարարացն Հայոց՝ իբրև ընաջնջ առնել կամէին զազգն, Սահակ կաթողիկոս խորհեցաւ գնալ առ Ոհմատ զօրագլուխ Հագարացւոց, և հասեալ 'ի Խառան քաղաք վախճանեցաւ անդ. և զի գրեալ էր թուղթ աղերսանաց առ Ոհմատ՝ խնայել յազգն, պատուիրեաց սարկաւագացն իւրոց՝ 'ի մահուան իւրում դնել զայն յաջ ձեռն իւր. լուեալ Ոհմատայ զմահ երանելւոյն, փութապէս եկն առ նա 'ի տեսութիւն, և յողջունելն զնա՝ մարմին որոյն իբր կենդանւոյ ընկալեալ զողջոյնն, մատոյց նմա զթուղթն. ընդ որ զարմացեալ և այլ յայլմէ եղեալ Ոհմատայ՝ առ զթուղթն յարգանօք և ընթերցեալ կատարեաց զխնդիր նորա. և զմարմին երանելւոյն հրամայեաց թաղել ամենայն պատուով։ Ի բարեկարգութիւնս պաշտամանց ժամերգութեան՝ սմա ընծայեն շարականք ինչ խաչի և եկեղեցւոյ։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Պաւղիկեան աղանդաւորք։

ՅԱՒՈՒՐՍ Ներսէսի կաթողիկոսի առ տեղապահութեամբ Յովհաննու մանազկերտցւոյ՝ 'ի վեր երևեցաւ 'ի Հայաստան ընձիւղ մոլորութեան 'ի դառն արմատոյ անտի նախնի Մանիքեցւոց, որում գլուխ և առաջնորդ եկաց ըստ արտաքին պատմչացն վկայելոյ Պաւղոս ոմն հայ յազգէ։ Աշակերտք սորա և հետևողք արք անօրէնք և ժանտագործք, 'ի մոլորութիւնս Մանիքեցւոց յաւելին ևս մերժել զխորհուրդս եկեղեցւոյ, անարգել զպատկերս սրբոց և զխաչն Քրիստոսի։ Հասու եղեալ բարեպաշտ իշխանաց ազգիս դառն արգասեաց մոլորամիտ և թիւր վարդապետութեանց նոցա, անդէն և անդ տարագրեցին զնոսա 'ի հայաստան աշխարհէ. վասն որոյ խոյս տուեալ նոցա ընդ հարաւ՝ միաբանեցան ընդ Հագարացիս ընդդէմ քրիստոնէից. որով այնչափ զօրացան յարևելս՝ մինչև յութերորդ և յիններորդ դարու առ Նիկեփորոս կայսերաւ կազմել բանակ ահարկու ընդդէմ քրիստոնէից.

և ապա անցեալ յԵւրոպա խառնեալ միացան ընդ Սարակինոս ։

Ի սոյն յեօթներորդի դարու հանդիպեցաւ և Սարգիս աշակերտ Մայրագոմեցւոյն, որոյ մոլեալ զհետ ցնորից Յուլիանիտաց, Մարկիոնեանց և Սաբելեանց, վարդապետ և առաջնորդ եկաց նորահնար աղանդոյ, զոր՝ Եղիաս կաթուղիկոս խնամակալու ջնջել յաշխարհէն Հայոց ։ Ընդդէմ սորա որպէս և առաջնոյն զինեցան ազդու գրովք Թէոդորոս վարդապետ Քռթենաւոր, և աշակերտ նորա Յովհաննէս Իմաստասէր, որ նստաւ կաթուղիկոս յութերորդի դարու ։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Եկեղեցական մատենագիրք ։

ՎԱՐԴԱՊԵՏՔ *եկեղեցւոյն Լատինացւոց որք գուն գործեցին յեօթներորդի դարու ուսուցանել և հրահանգել զհաւատացեալս, ծանօթագոյնք են քան զմատենագիրս Յունաց. սակայն կարգ և եղանակ գրութեան երկոցունց ազգաց միանգամայն՝ յայտ առնեն զնուազել զգիտութեան և զանհարթութիւն ոճոյ գրականութեան այնր դարու ։ Քանզի յանընդհատ պատերազմաց անտի Գոթաց, Վիզիգոթաց և Լոնգոբարտացւոց անհետացեալ էր գրեթէ 'ի սպառ յԻտալիոյ ուսումն և գիտութիւն ։ Ի նոյն ողորմ հանգամանս էր և Գաղղիա. և թէպէտ եպիսկոպոսն Փուաթիէ քաղաքի յօրինեաց քերթողական տաղաչափութեամբ զվարս սրբոյն Մարտինոսի և երգս ինչ, սակայն թափուր են նորա 'ի բանաստեղծական աշխուժից ։*

Սուրբն Կոլոմբանոս արար տաղս ինչ չափաբերական բանիւ. բայց առաւել քան տաղիւքն մեծարգոյ և ծանուցեալ եւս է բարեկարգութեամբն զոր արար 'ի բազում մենաստանս, և կանոնադրութեամբքն 'ի պէտս նոցա ։

Մարգուլփոս, Իուլիանոս տոլեդացի, և սուրբն Իսիդորոս Սեւիլլոյ՝ առաւելին պատւոյ և յիշատակաց արժանի են ։ Առաջինն՝ գրեաց զեկեղեցական սահմանս, որ օգտակար է յընթերցումն որոց միանգամ փափա-

րին հասու լինել հանգամանաց և սովորութեանց այնր դարու ։ Երկրորդն արար զցիրան որ յաղագս եկեղեցական մատենագրաց , որ թէպէտ և անկատար է՝ սակայն ձեռնտու մեծ և օգնական եկաց առ յապա եկելոց ։ Իսկ սուրբն Իսիդորոս ՚ի ձեռն գրոց ստուգաբանական գննութեանց, որպէս և պատմագրութեանն յաղագս Գոթաց և Վանդալաց , և այլովք գրուածովք երկասիրութեամբքն համբաւեալ հանդիսացաւ ՚ի մատենագիրս եօթներորդի դարու ։

Եկեղեցի Յունաց ը̃ մատենագիրս իւր հաշուի զՅովհաննէս Մոսխոս զօրինակագիր միակեցական պատմութեան՝ մակադրելով Դաշտ կամ Հովիտ հոգևոր ։ Նոյնպէս և զՍոփրոնիոս զպատրիարգ Երուսաղէմի , և զԹէոփիլակտոս որ գրեաց զպատմութիւն անցիցն որք առ իւրովք ժամանակօք , և զայլս ոմանս ։ Սակայն եթէ յարևելս և եթէ յարևմուտս անշքացեալ էր միօրինակ պանծալին վայելչախօսութիւն ՚ի ձևս , ՚ի խորատեսութիւնս և ՚ի պատմագրութիւնս . վասն որոյ աղքատ և չքաւոր գտաւ դարս ՚ի բարեպատուղ արդեանց ՚ի նուազութենէ ջանից և յօժարամտութեան առ դժուար վաստակս ուսմանց ։ Զի յարևելս կայսերք Կոստանդնուպօլսոյ զբաղեալք յաստուածաբանական բանակռուութիւն՝ թողին ՚ի բաց զբանասիրականն , որովք գոգցես աղօտացաւ իմն մարդկայինն հանճար և ճարտարամտութիւն ։ Նոյնպէս և յարևմուտս պակասեցին ՚ի սպառ իղձք գեղեցիկ դպրութեանց . զի Սարակինոսք Ափրիկոյ բռնացեալ զինուք , յետ տիրելոյ Սպանիոյ ՚ի սկիզբն ութերորդի դարուն՝ զօրացան դիմել մինչև ՚ի Գաղղիա . ՚ի նմին ժամանակի հեծէր և Իտալիա ընդ լծով Լոնգոբարտացւոց , և յահի յերկիւղի տագնապէր ՚ի բուռն զօրութենէ Սարակինոսաց ։

Ի նոյնպիսի վիճակս տառապանաց ընկճեալ և Հայաստան աշխարհի , սակաւ մատենագիրս ընծայեաց ՚ի լոյս ։

Գրիգորատուր վարդապետ անձախեցի՝ որ առ ժամանակօք Եզրի կաթուղիկոսի , ընդդիմամարտ սոսկ եկաց հերձուածոյ և մոլորութեանց Մայրագոմեցւոյն , մինչև խափանել իսկ զաղանդ նորա ։

Յովհաննէս եպիսկոպոս Մամիկոնեանց՝ պատմագիր անցից քաջութեան տանն Մամիկոնեանց և Գայլ Վահանայ ընդդէմ Պարսից, ցամ՛ տեառն 640 ։

Անանիա վարդապետ շիրակացի, որ և անեցի, հետամուտ արտաքին ուսմանց և հմուտ տումարագէտ․ արար ճառս պէսպէս, որպէս և գիրս խրատուց 'ի խնդրոյ Գրիգորի միայնակեցի ։

Թէոդորոս վարդապետ Քռթենաւոր՝ վանահայր միանձանց՝ ուսեալ և վարժեալ հելլէն դպրութեամբ և ուսուցիչ բազմաթիւ աշակերտաց․ յորոց երևելի հանդիսացան երանելին Սահակ կաթողիկոս և Յովհաննէս Իմաստասէր օձնեցի ։ Գրեաց ճառս զօրաւորս ը̃դէմ մոլորութեանց մայրագոմեցւոյն և աշակերտին նորա Սարգսի․ որպէս և ներբող պանծալի 'ի սուրբ խաչն Քրիստոսի ։

Մովսէս եպիսկոպոս Սիւնեաց՝ հմուտ հելլէն դպրութեան, երկրորդ քերթողահայր անուանեալ․ գրեաց ճառս իմաստալիցս և հռետորականս հանգոյն Մովսէսի Խորենացւոյ առաջին քերթողահօր ։ Յաշակերտութենէ սորա ծաղկեցաւ Ստեփանոս սիւնեցի երկրորդն, զոր տեսցես 'ի մատենագիրս ութերորդի դարու ։

Գրիգորիս եպիսկոպոս Արշարունեաց արար մեկնութիւնս ընթերցուածոց եկեղեցական պաշտամանց, և բացայայտութիւն կարգաւորութեան պահոց և տէրունական տօնից՝ 'ի խնդրոյ Սահակայ կամսարականի ։ Ը̃ սովաւ Փիլոն վարդապետ տիրակացի հմուտ հելլէն բարբառոյ՝ թարգմանեաց 'ի հայ զեկեղեցական պատմութիւն Սոկրատայ ։ Սակայն յաւելեալ թուին յետոյ և ինչ ինչ ստայօդ պատմութիւնք օտարք 'ի գրութեանն Սոկրատայ ։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Ազգային ժողովք։ — Ժողով Կարնոյ յամի տեառն 629։

ԿԱՅՍՐՆ Հերակլ հասու եղեալ զի շփոթք ոչ սակաւ յուզին 'ի Հայս 'ի պատճառս սրբոյ ժողովոյն Քաղկեդոնի, առ յանդորրու առնել զնոսա՝ հրամայեաց Եզրի կաթուղիկոսի գումարել ժողով 'ի Թէոդոսուպօլիս կամ 'ի Կարին քաղաք։ Եւ ինքն կայսրն հրամայեաց եպիսկոպոսաց իւրոց գրել զդաւանութիւն հաւատոյ եկեղեցւոյն Յունաց և մատուցանել զայն Հայոց։ Զայն թուղթ ընթերցեալ Եզրի կաթուղիկոսի և ամենայն եպիսկոպոսաց ազգիս, և անաչառ մտօք քննեալ՝ տեսին զի ոչ ինչ օտարոտի դաւանէ եկեղեցին Յունաց քան զոր դաւանեն Հայք, և զի դատապարտ առնեն և նոքա զթիւր կարծիս՝ Եւտիքի։ Վասն որոյ հաստատ խորհրդով և միաբան հաւանութեամբ ընկալան զսուրբ ժողովն Քաղկեդոնի յամի տեառն 629, 'ի լըման առաջնոյ ամի իշխանութեանն Եզրի։ Եւ սուրբ սիրով ողջագուրեալ զմիմեանս Հայոց և Յունաց խոստացան երդմամբ մի ևս այլ 'ի թիւր կարծիս լինել զմիմեանց, և մի բանսարկու հակառակութեամբ նեղել զոք կամ չարչարել։

Ժողով Դըւնայ Ե յամի տեառն 645։

ՆԵՐՍԷՍ Սմբատ Վարազտիրոցեան ահաւոր զօրութեամբ զինուցն յահի մեծի կացուցեալ զթշնամիս ազգիս՝ յանդորրու ունէր զՀայաստան աշխարհ, Ներսէս կաթուղիկոս Շինողն անուանեալ խնամ կալեալ բարեկարգութեան եկեղեցական իշխանութեան ազգիս՝ գումարեաց ժողով եպիսկոպոսաց 'ի Դուին քաղաք։ Եւ զի մուտ գտեալ էին յայնժամ յաշխարհս մեր գրուածք վարդապետութեանց Յովհաննու Մայրագոմեցւոյ և աշակերտի նորա Սարգսի, զորոց կանխեցաք ասել 'ի պատմութեան, միաբան հաւանութեամբ նզովեալ հերքեցին զամենայն գիրս հերձուածոց․ և ապա սահմանեցին երկոտասան կանոնս վասն ժամանդարաց եկեղեցւոյ և իշխանաց։ Նա զի յայնժամ անխտիր երգէին յեկեղեցիս ազգիս պիտանիքն շարականք խառն ընդ անպիտանս, Ներսէս կաթուղիկոս հրամայեաց Բարսղի ումեմն Պալլեւանից առաջնորդի, ընտիր առնել 'ի նոսա, և կարգաւորել զպաշտամանս հասարակաց աղօթից։

Ժողով Դըւնայ Ը. յամի տեառն 648։

Զօդ սիրոյ և միաբանութեան Հայոց ընդ Յոյնս պատճառք եղև առաւ անհնարին դայթակղութեանց և շփոթից։ Քանզի Յոյնք անխտիր իմն զօրով 'ի պահս՝ 'ի նոյն յորդորէին և զիշխանս Հայոց և զժողովուրդն առ հասարակ. դարձեալ և բռնութեամբ վարէին ընդ Հայս. վասն որոյ և նոքա վերստին 'ի թիւր կարծիս լինէին զՅունաց, և իբրև 'ի հերետիկոսաց՝ այնպէս խորշէին 'ի նոցանէ. ընդ որ յանհնարինս զայրացեալ Յունացն եղելոց 'ի Հայս, բողոք ամբաստանութեան առ կայսրն մատուցին։ Յայնժամ Կոստանդ կայսր գրեաց խառն հրովարտակ սպառնալեաց առ կաթուղիկոսն Ներսէս, առ Սմբատ կիւրապաղատ և առ համօրէն եպիսկոպոսունս մերոյ աշխարհիս՝ հրաման պատուիրանի 'ի վերայ եդեալ սէր և միաբանութիւն ունել ընդ Յոյնս, և մի արհամարհել զժողովն Քաղկեդոնի զոր երբեմն ժողովեալ և միաբանութեամբ ընկալան 'ի Կարին. խնդրէր դարձեալ 'ի նոցանէ և թուղթ հաւատութեան։ Զայն հրովարտակ առեալ Հայոց ժողովեցան 'ի հրամանէ կաթուղիկոսին 'ի Դուին քաղաք եպիսկոպոսունքն և իշխանք ամենայն։ Յայնմ ժողովի Դաւիթ ոմն փիլիսոփայ՝ որ բերեալ էր 'ի Կոստանդնուպօլսոյ զհրովարտակն արքայի, առաջի արար նոցա զկամս Կոստանդեայ կայսեր և յորդորեաց մի ևս այլ մերժել զսուրբ ժողովն Քաղկեդոնի։ Յայնժամ 'ի մի ձայն բարբառոյ պատասխանի արարին եպիսկոպոսունքն ամենայն և իշխանք. «Ո՛չ հնար է մեզ այլ ինչ առաւել վարդապետութեանց հպատակել, զոր չեղէ ուսեալ սրբոյն Գրիգորի լուսաւորչի, Թարգմանչացն երանելեաց և երից սուրբ ժողովոց գումարելոց 'ի Նիկիա, 'ի Կոստանդնուպօլիս և յԵփեսոս»։ Նա միաբան հաւանութեամբ գրեալ թուղթ առ կայսրն Կոստանդ՝ թախանձէին պաղատանօք մի ևս այլ առնուլ զնոսա 'ի խնդիր հաւատոյ ։

Այսպէս առ մեծի հակառակութեանն զոր կալան առ Յոյնս, հակառակեալ և առ 'ի նոցանէ ընկալեալ ճշմարտութեանն՝ մերժեցին զսուրբ և զտիեզերական ժողովն ։

Յամին 651 Յովհաննէս վարդապետ Մանազկերտցի գումարեաց ժողով 'ի Մանազկերտ ընդդէմ ժողովոյն Քաղկեդոնի, ուր համախոհ կուսակցօքն նզովեալ մերժեաց զայն ։ Այլ զի հակառակասէր եւեթ բարոյք և ոչ ճշմարտասիրութիւն ինչ յորդոր եղեն նմա առ այն, վասն որոյ ժողովակ մանաւանդ քան եթէ ժողով արժան է կոչել զայն, յոր սակս և ոչ իսկ արժանի համարիմք ընդ ազգային ժողովս թուեալ ուրոյն զրուցել զդէպս նորա ։ Բաւ լիցի զոր կանխաւն ասացաք 'ի պատմութեան 'ի դէպս անցից կաթուղիկոսաց ազգիս ։

ԴԱՐ ՈՒԹԵՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա.

Ծագումն մոլորութեան պատկերամարտից :

ՎԱՐԴԱՊԵՏՔ կամ առաջնորդք հերձուածոց որք յութերորդս այս դար 'ի վեր երեւեցան, բազում այն էր զի անզօրք գոլով կամ նուաստատոհմք՝ առ սակաւ սակաւ և մեղմաբար ածին զանձինս. բայց մոլորութիւն պատկերամարտից անդէն 'ի ծագել անդ իւրում բուռն երեւեցաւ զօրութեամբ՝ թիկունս իւր ունելով զԼեւոն Գ. կայսր իսաւրացի, որ 'ի նուաստ զարմէ ամբարձեալ էր 'ի գահ կայսերութեան : Սա յերիտասարդական հասակի յուղեւորութեանն իւրում՝ հանդիպի Հրէից ումանց թշնամեաց պատկերացն քրիստոնէից, և մի ոմն 'ի նոցանէ տեսեալ զնա 'ի զգեստս գձուձս՝ ասէ ցնա ընդ կատակս. «Եթէ երբէք հասանէր քեզ ելանել 'ի գահ կայսերութեան՝ ոչ արդեօք ջնջէիր 'ի միջոյ զամենայն զայդպիսի անօրէն դրօշեալս» : Որում երդմամբ պատասխանի արար Լեւոն՝ եթէ ջնջէի և անհետ առնէի 'ի սպառ զայնպիսի պատկերս. վասն որոյ յամբառնալն յաթոռ կայսերութեան յամի տեառն 716, կամելով 'ի գլուխ հանել զապիրատ խոստումն՝ ծանոյց ծերակուտին և խորհրդականաց, եթէ 'ի շնորհս աստուածային բարեբարութեանն որ յայն պատիւ բարձրացոյց զնա, կամք են նմա անհետ առնել զկռապաշտութիւնն եկամուտ յեկեղեցիս քրիստոնէից, ջնջելով 'ի սպառ զպատկերս Քրիստոսի, զսրբոյ Կուսին և զայլոց սրբոց՝ իբր զդրօշեալս, զի պաշտօն երկրպագութեան՝ Աստուծոյ եւեթ վայել է, և ոչ եթէ այլում ումեք : Վասն որոյ և հրավարատական արգել զպատիւ և զյարգութիւն պատկերաց ։

Հրամանագիրս այս հաճոյ եղև յոյժ պալատականաց, որք կենդանագրի ևեթ կայսեր պաշտօն տանէին. նմին իրի ամենայն պատկերք սրբոց խորտակեցան և ջնջեցան. մինչև յանդգնիլ ձեռն արկանել և յարձանն Քրիստոսի 'ի կանգնեալն 'ի գլուխ դրան արքունի պալատան 'ի մեծէն Կոստանդիանոսէ՝ 'ի յիշատակ երախտեաց փրկչին՝ որ 'ի խաւարէ կռապաշտութեան առաջնորդեաց նմա 'ի լոյս աստուածգիտութեան ։

Ի լուր այնր հանդերձեալ ժողովուրդն առ հասարակ ընթացան 'ի զէն խափանել զգործ յանդգնութեանն. և յայն ալմուկ չփոթի զօրական մի ճեղքեալ զբազմութիւն ամբոխին՝ իբրև կամեցաւ ելանել ընդ սանդուղսն և կործանել զարձանն Քրիստոսի, կանայք ոմանք յամբոխէ անտի յարձակեալ 'ի վերայ՝ կործանեցին զսանդուղսն, և սպանին անդէն զզօրականն. Ը՟ որ զայրագինս սրտմտեալ Լևոնի, հրամայեաց 'ի բանտ արկանել զգլխաւորս ամբոխին, և բազմադիմի տանջանօք չարչարել զնոսա ։

Էր 'ի Կոստանդնուպօլիս ուսումնարան երևելի՝ կառուցեալ և բազմահարուստ ճոխութեամբ զարդարեալ 'ի նախնի կայսերաց. և զի Լևոն ոչ կարաց յինքն ձգել զվարժապետս դպրոցին, հրամայեաց շուրջ պատել զտունն զայն բազմադէզ փայտիւք, և եռ այրել զնոսա կենդանւոյն բնակարանաւն հանդերձ ։

Անգութս այս գազանութիւն կայսեր յահի և յերկիւղի կացոյց զհպատակս նորա. վասն որոյ զանգիտեալ ժողովրդեանն Կոստանդնուպօլսոյ և այլոց մերձաւոր քաղաքաց՝ յանձն առին կործանել զարձանս և ջնջել զպատկերս ։ Ի զուր ջանացաւ սուրբն Գերմանոս պատրիարգ յուղղութիւն ածել զկայսրն սաստիկ կշտամբանօք. զի աքսորեցաւ 'ի նմանէ, սակս նախանձու փառացն Աստուծոյ ։ Ուր ուրեմն ապա անօրէնս այս կայսր յետ բազմապատիկ օրինակաւ հալածելոյ զպաշտօնս պատկերաց սրբոց, ախտացեալ դառն ցաւովք հիւանդութեան՝ մեռաւ յամի տեառն 741 ։ Ամբարտաւան յանդգնութիւն նորա 'ի կամելն կարգադիր լինել և կրօնական խնդրոց՝ անգամնելի արար զամենայն ընա տուր ձիրս նորա . և փոխանակ հայրաբար յանձանձելոյ զհպատակս, եղև նա անգութ և մարդախոշոշ բռնաւոր ։

Նշանակէ Պաւղոս վարդապետ պատմագիր ութերորդի դարու եթէ Օմար ամիրապետն Հագարացւոց, որ թագաւորեաց յամին 717, յերկրորդ ամի կայսերութեանն Լևոնի խնդրեալ իցէ 'ի նմանէ տեղեկութիւնս վասն քրիստոնէական հաւատոյ ։ Զխնդիր ամիրապետին կատարեալ Լևոնի, ազդու և զօրաւոր բանիւք ետ գրել զջատագովութիւն քրիստոնէական դաւանութեան, զոր քաղուածոյ 'ի մէջ բերէ նոյն մատենագիր ։ Յայսմ վարդապետութեան նշանակի համառօտիւ և յարգութիւն պատկերաց, որոց պատիւն և պաշտօն վերածին, ասէ, առ սկզբնատիպն, և ոչ յարուեստակերտն ։ Այս աւանդութիւն չերևի յարտաքին մատենագիրս այնր դարու վասն Լևոնի . թերևս զանց արարեալ իցեն զայնու՝ սակս յետին ապիրատութեանց նորա ։

ԳԼՈՒԽ Բ.

Ժողովակ Կոստանդնուպօլսոյ ։

ԿՈՍՏԱՆԴԻՆ Կոպրոնիմոս որդի և ժառանգ աթոռոյ՝ որպէս և խեղաթիւր մտացն Լևոնի, քաղաքական և եկեղեցական օրինօք արգել զպաշտօն պատկերաց . և 'ի խափանել զայն 'ի սպառ՝ գումարեաց ժողով 'ի Կոստանդնուպօլիս ուր գտան երեքհարիւր երեսուն և ութ եպիսկոպոսունք անձնասէրք մանաւանդ քան եթէ աստուածասէրք որոց արդարացուցեալ զմիտս կայսեր՝ գովեցին զջանս նորա ։ Յայս ժողովակ՝ զոր անօրէնքն յանդգնեցան կոչել եօթներորդ ընդհանրական սինհոդոս, դատապարտեցաւ իբր կռապաշտութիւն՝ պաշտօնն և պատիւ ընծայեալ առ պատկերս 'ի յիշատակ սկզբնատպին իւրեանց ։

Կոպրոնիմոս՝ ոխերիմ թշնամին ոչ միայն պատկերաց այլ և կրօնաւորաց առ հասարակ, կամէր ջնջել և զնոսա, զի հակառակք էին ձեռնարկեալ գործոյ ամբարշտութեանն ։ Բազումք 'ի նոցանէ մատնեցան 'ի վիշտս հալածանաց, որպէս և ոմանք յեպիսկոպոսաց ընկալան զպսակ նահատակութեան ։ Զօրականք յօժարամիտք և պատրաստք ՚ի կատարել զկամս անօրէն իշխանին իւրեանց, ամբարշտութեամբ անարգէին և պղծէին զեկեղեցիս․ բռնի կորզեալ ՚ի սուրբ տեղեաց զնշխարս սրբոց, ամնայլին զնոսա ՚ի լուալիս, և երբեմն խառնեալ զայնոսիկ ընդ ոսկերս անասնոց և ՚ի մի վայր շեղջակուտեալ այրէին զամենայն, զի անհնար լիցի հաւատացելոց գտանել և զատանել զաճիւն մարտիրոսաց նոցա ։ Նշխարք սրբուհւոյն Եւփիմեայ՝ անզուգական և նախանձելի գանձք Քաղկեդոնի, հրամանաւ կայսերն ընկեցան ՚ի ծով հանդերձ տապանաւն, և եկեղեցին փոխեցաւ ըստ մասին ՚ի լուալիս հասարակաց ։ Նոյն անօրէնն պատուհասեալ յԱստուծոյ անտանելի հիւանդութեամբ՝ մեռաւ յամի տեառն 775, որով և ժամանակս ինչ անդորրացաւ եկեղեցի ՚ի բռուն հալածմանցն ։ Թէպէտ անառակ որ էր սա և զկառեալ զհետ բռուն կրից, սակայն կեղծաւորեալ բարեպաշտութեամբն խօսեցաւ երբեմն և քարոզս ՚ի Կոստանդնուպօլիս ։ Յօրինեալ ունէր և երեքտասան ճառս, որք ընդ աւուրս հնգետասան ընթերցեալ եղեն ՚ի լուր ժողովրդեան ։

ԳԼՈՒԽ Գ.

Թագաւորութիւն Լեւոնի Դ ։

ԶԿՆԻ մահուան Կոստանդինի յամին 775, կալաւ զաթոռ կայսրութեանն որդի նորա Լեւոն Դ. ։ Սա ՚ի սկզբան անդ թագաւորութեանն կուսակից իմն թուէր ուղղափառաց․ զի հրաման պատուիրանի ՚ի վերայ եդ յարգել զպատկերս սրբոյ Կուսին, և դարձոյց յետս զաքսորեալ կրօնաւորս, և հովիւս ողջամիտս կարգեաց յեկեղեցիս ։ Բայց ՚ի հաստատել անդ իւրոյ՝ յաթոռ իշխանութեանն, փոխեցաւ յառաջին բարոյն և ոսոխ դէմ եկաց ողջամտաց ։ Գտեալ երբեմն պատկեր ինչ ՚ի սենեակ թագուհւոյն ամուսնոյ իւրոյ, փաղփաղկի ՚ի բաց արձակեալ զնա ՚ի տիկնութենէն՝ եհեղ զցասումն իւր ՚ի վերայ այնոցիկ որք յայն գործ յորդոր եղեն թագուհւոյն ։ Եւ գերծեալ զհերս նոցա, և անարգանօք գանակոծ արարեալ, հրամայեաց տանել արտաքս քան զքաղաքն, և իբր մեղապարտս եարկ 'ի բանտ խաւարչտին։ Սակաւաւոր եղև Թագաւորութիւն Լևոնի. զի յետ հնգից ամաց դիպեալ ծանր և անբերելի հիւանդութեան՝ ոչ ինչ նուազ քան զհայր իւր և զհաւ, վախճանեցաւ զկեանսն յամի տեառն 780։ Ընդ ամբարշտութեամբ Լևոնի երևելի հանդիսացաւ անզուգական առաքինութեամբ քոյր նորա երանելին Անթուսա, որոյ հրաժարեալ յաշխարհէ՝ աստուածասէր հոգւով և արիական սրտիւ զխանդարտ և ըստ կարի խափանարար եկաց առաւելութեան չարեաց եղբօր իւրոյ. միանգամայն խնամոտն մօր խորհրդատու և օգնական եղև տեսչութեան Իրինեայ դշխոյի յետ մահուանն Լևոնի։

ԳԼՈՒԽ Դ.

Եօթներորդ ժողով ընդհանրական։

Ի ՄԵՌԱՆԵԼ Լևոնի յաջորդեաց զնա որդին նորա Կոստանդին հանդերձ մարբն իւրով Իրինեաւ։ Յաւուրս սոցա ընտրեցաւ պատրիարգ Կոստանդնուպօլսոյ Տարասիոս, այր խոհական և խաղաղասէր. որոյ ցանկացեալ անդորրութեան եկեղեցւոյ՝ գրեաց նամակ առ Ադրիանոս քահանայապետ 'ի Հռովմ, և հաւանութեամբ նորա, որպէս և կայսեր և դշխոյին Իրինեայ, սահմանեցաւ առնել ժողով ընդհանուր. այլ քանզի կասկածէին 'ի հակառակութենէ բազմաց մոլեգնելոց որք էին 'ի Կոստանդնուպօլիս, պատշաճ վարկան գումարել զայն 'ի Նիկիա քաղաք Բիւթանիոյ։ Հաւաքեալ ժողովեցան անդէն երեք հարիւր եօթանասուն և եօթն եպիսկոպոսունք. ընդ որս գտան և յաշխարհէն Հայոց եպիսկոպոսք ոմանք և վանահարք։ Սկիզբն եղև ժողովոյն 'ի Նիկիա յամին 787, 'ի 24 աւուր ամսեանն սեպտեմբերի, և կատարեցաւ 'ի Կոստանդնուպօլիս 'ի 24 հոկտեմբեր ամսոյ։ Բայց նախ քան զսկզբնաւորութիւն ժողովոյն եպիսկոպոսք ոմանք համախոհք մոլորութեան պատկերամարտից, 'ի զղջումն եկեալ՝ հաստատուն երդմամբ ետուն զողջամիտ դաւանութիւն իւրեանց, և ապա մտին 'ի ժողով։ Դեսպանք քահանայապետին Հռռոմայ թէպէտ և չէին եպիսկոպոսք, բայց նախաթոռք բազմեցան 'ի ժողովին ։ Եւ անդ յետ մանրազնին և հետազօտ քննութեան դատապարտեալ հերքեցաւ ամբարշտութիւն պատկերամարտից, և սահմանեցաւ յարգութիւն և պատիւ պատկերաց 'ի յիշատակ այնոցիկ՝ յորոց անուն նկարեալ իցեն, պաշտամանպէս պատուով մեծարելով զայնս, այլազգ յոյժ 'ի պաշտամանէն, որով պատուեմք զԱստուած ։ Աւարտեցաւ ժողովս անշփոթ և անխռով՝ բովանդակեալ յեօթն համախմբութիւնս, յորոց հինգն եղեն 'ի Նիկիա քաղաք, և երկու յետինքն 'ի Կոստանդնուպօլիս ։ Սրահն արքունի յորում եղև վերջին համախմբութիւնն, լի էր բազմամբոխ ժողովրդովք և զինուորօք. վասն որոյ 'ի հրահանգել զնոսա յողջամիտ վարդապետութիւն եկեղեցւոյ՝ ընթերցան 'ի լուր ամենեցուն զբացայայտ և զաներկմտելի բանս սրբոց Հարց ընդդէմ պատկերամարտից. որում ձայնակից գտաւ և ժողովուրդն ամենայն եպիսկոպոսօք և քահանայիւք ։ Յետ այնորիկ վերստին եղան պատկերք յեկեղեցիս ամենայն, և խափանեցաւ 'ի սպառ հակառակութիւնն և կռիւ ծագեալ և յուզեալ 'ի տգիտութենէ ժողովրդեան ։

ԳԼՈՒԽ Ե.

Յաղագս ժողովոյն Փրանկֆորտայ.

Յետ կատարման եօթներորդի տիեզերական սիւնհոդոսին՝ դեսպանք քահանայապետին առեալ զհաստատ օրինակ վճռոյն տարան 'ի Հռովմ, ուր Ադրիանոս քահանայապետ հաւանեալ և հաստատեալ զայն, փութացաւ ազդ առնել և արևմտեան եպիսկոպոսաց որք անդէտք էին գործեցելոյն 'ի ժողովին ։ Բայց քանզի եպիսկոպոսունք Գաղղիոյ կանխաւ պաշարեալք վրիպակ կարծեօք 'ի կասկածանս էին թէ ժողովն Նիկիոյ սահմանեալ իցէ զանչափ իմն պատիւ պատկերաց սրբոց, վասն որոյ զժամանակս ինչ յերկբայս եղեն ընդունել զայն սիւնհոդոս ։ Եւ պատճառք երկմտութեան նոցա էր անհարազատ կամ թիւր թարգմանութիւն սահմանաց ժողովոյն, յորում երևէր ընծայել միօրինակ պատիւ և պաշտօն Աստուծոյ և պատկերաց։ Արդ 'ի թիւր միտս առեալ զսահման ժողովոյն, փութացան հերքել զայն մատենիւն որ կոչի Կարոլեան, և կարծի յօրինեալ հրամանաւ մեծին Կարոլոսի։ Յայս մատեան, որ բաժանի 'ի չորս գիրս, բովանդակին ստայօդ պատճառաբանութիւնք անիրաւք և թշնամանագիրք՝ ոչ այնչափ ընդդէմ ժողովակին պատկերամարտից, որչափ ընդդէմ սինհոդոսին Նիկիոյ՝ զորս անխտիր միօրինակ կշտամբէ։ Ոչ շատ համարեալ զպարսաւագիր մատեանն՝ յօժարեցան և միաբան հաւանութեամբ մերժել զժողովն, վասն որոյ յամին 794 գումարեալ ժողով 'ի Փրանկֆորտ քաղաք, երեք հարիւր եպիսկոպոսօք Գաղղիոյ, Գերմանիոյ, Սպանիոյ և Իտալիոյ, կամ թէ ասել բովանդակ արևմտեան եկեղեցին համարելով զարևելեանն իբր անարգու աստուածային պատուոյ՝ զատապարտեաց զտիեզերական սինհոդոսն Նիկիոյ։ Եւ յայս վրիպակ կարծիս կացին մնացին իբր ընդ ամս հարիւր, և ուր ուրեմն ապա հասու եղեալ ճշմարտութեան եղելոյն՝ ընկալան ամենեքին առ հասարակ զեօթներորդ ժողովն ընդհանրական։

Նա և այլ իմն պատճառք անարգութեան պատկերաց 'ի կողմանս ինչ արևմտից այն էին՝ զի Գաղղիացիք, Փրանկք և նախնի Գերմանացիք անհրահանգք 'ի քաղաքականութեան, տգէտք գոլով ազատական արուեստից նկարչութեան և քանդակագործութեան, խղճէին իմն պաշտօն և յարգանս ընծայել նոցա՝ զորս ոչ ըստ վայելուչ ինչ գեղոյ կարէին նկարել։

ԳԼՈՒԽ Զ.

Նահատակութիւն սրբոց՝ որք յայսմ դարու վկայական մահուամբ փոխեցան յաշխարհէ։

ՄԻՆՉԴԵՌ և մինչ ծանունս հասուցին եկեղեցւոյ հերձուածք և հալածանք անհաւատից, սակայն մխիթարեցաւ նա ոչ սակաւ յաղթական քաջութենէ անթիւ սրբոց վկայից, որք զանձինս իւրեանց ընծայեցին 'ի հաստատութիւն ճշմարտութեան քրիստոնէական հաւատոյ։

Վկայեալքն 'ի հալածանս անհաւատից ։

Ի ՏԻՐԵԼ Հագարացւոց 'ի Հայաստան, և 'ի բռնադատել նոցա զամենեսեան ընդունել զդէն իւրեանց, շնորհքն Աստուծոյ զօրացան շահել 'ի նոցանց ըզսահմանեալսն 'ի փրկութիւն ։ յորոց մին եղև սուրբ վկայն Քրիստոսի Դաւիթ Դւինեցի, որ կոչէր նախ Սուրհան ։ Որդի էր սա հօր պարսկի և մօր քրիստոնէի ։ և 'ի գալն 'ի Խորասանայ 'ի Հայս, տեսեալ զվարս բարեպաշտութեան քրիստոնէից՝ հաւատաց 'ի Քրիստոս, և մկրտեալ կոչեցաւ Դաւիթ ։ Սա բնակեալ էր 'ի Դուին քաղաքի աստուածահաճոյ վարուք մինչև ցծերութիւն, իբրև եհաս անդր Աբդլահ ոստիկան Հագարացւոց՝ կալեալ չարչարեաց զնա վասն քրիստոնէութեանն ։ և տեսեալ զսէր նորա առ խաչն Քրիստոսի, ետ հանել 'ի խաչ, և ապա խոցեալ գեղարդեամբ կատարեցաւ 'ի Քրիստոս յամին 693 ։ և հաւատացելոցն ամփոփեալ զմարմին նորա պատուով առ գերեզմանի սրբոյն Յիզտբուզտի, կարգեցին վասն նորա տօն յիշատակի ամ՛ ըստ ամէ ։

Նոյնպէս առ ամիրապետութեամբ նորին Աբդլահի, որ երբեմն ոստիկան եկաց Հայաստան աշխարհի, 'ի գերել Հագարացւոց զբազումս՝ գտաւ 'ի նոսա և մանուկ մի չորեքամեայ Վահան անուն՝ որդի Խոսրովու նախարարին Հայոց տեառն Գողթան գաւառի ։ զոր տարեալ առ ամիրապետն 'ի Դամասկոս՝ թլփատեցին և անուանեցին զնա Վահապ ։ Եւ զի հանճարեղ որ էր մանուկն՝ այնչափ զարգացեալ վարժեցաւ յուսումն դպրութեան Հագարացւոց, մինչև կարգել զնա դիւանադպիր և խորհրդական արքունեաց ։ Իսկ եղև 'ի տիրել Ոմարայ ամիրապետին և յազատել զգերեալսն Հայոց, դարձաւ և Վահան արքունի հրովարտակաւ տիրել ժառանգութեան իւրում Գողթան գաւառի ։ ուր 'ի միտ առեալ զճանապարհն ճշմարտութե՟ դարձաւ առ տէր, և տուեալ զանձն 'ի պահս և յաղօթս՝ շրջէր 'ի միայնարանս և յուխտատեղիս ։ Լուեալ Հագարացւոց զքրիստոնէութիւն Վահանայ ջան գործէին հնարիւք անել զնա ։

բայց Վահան ինքնակամ յօժարութեամբ գնայ 'ի դուռն արքունի և յայտնեաց զհաւատս իւր, և զի առ սէր Քրիստոսի նաև զանձն իսկ յօժարական պատրաստ է ձօնել: Իշխանք Հագարացւոց բարեկամք նորա յորդորէին խուսել և թաքչել. բայց նա չէառ յանձն, այլ համարձակ ելեալ յատեան ամիրապետին անպատրուակ դաւանեցաւ զճշմարտութիւն հաւատոյն Քրիստոսի. վասն որոյ արկեալ 'ի բանտ, կատարեցաւ սուր գլխատմամբ յամի տեառն 737 'ի Ռուծափ քաղաքի. և գերեզման նորա պայծառացաւ ազգի ազգի սքանչելեօք. վասն որոյ կարգեցաւ տօն յիշատակի նորա ամ ըստ ամէ:

Արիական նահատակութեան երանելոյն Վահանայ նախանձաւոր գտան և երկոքին հարազատքն Սահակ և Համազասպ իշխանք Հայոց արծրունիք, որք յաւուրս ամիրապետութեան Հարոնայ՝ ստայօդ ամբաստանութեամբ, իբրու եթէ խորհրդակիցք և ձեռնտուք իցեն կայսեր Յունաց, արկան 'ի բանտ. և 'ի ստիպելն զնոսա յուրացութիւն հաւատոյ՝ չառին յանձն. այլ կամեցան քաջութեամբ մեռանել վասն Քրիստոսի. և 'ի բազում աւուրս չարչարեալք պէսպէս լլկմամբ՝ իբրև գտան հաստատուն 'ի հաւատսն, հատան գլուխք նոցա յամին 789. և օր յիշատակի նահատակութեան նոցա կարգեցաւ ամ ըստ ամէ: Օ քաջայաղթ և զարմանալի վկայութիւն երկոցունց հարազատացս արծրունեաց՝ երեք հարիւր ամօք յառաջ գուշակեալ էր Մովսէսի Խորենացւոյ 'ի թղթին իւրում որ առ Սահակ իշխան արծրունեաց:

Բաց 'ի նախագրելոցդ եղեն և այլ բազում արի նահատակք 'ի Հայաստան և 'ի զանազան կողմանս լայնածաւալ իշխանութեան Հագարացւոց, որպիսիք յիշատակին երանելի իշխանքն և նախարարք Հայոց, որք 'ի Նախիջևան քաղաքի փակեալք յեկեղեցւոջ այրեցան խմբովին կամակար սիրովն Քրիստոսի: Նոյնպէս և 'ի Խառան քաղաքի նահատակեցաւ երանելին Շուշան դուստր Վահանայ կամսարականի: Յորիս քաջայաղթ հանդիսացաւ երանելին Պետրոս զամանակցի, զորոյ գլուխն հատին վասն քարոզութեան նորա ընդդէմ վարդապետութեան Մանիքեցւոց և Հագարացւոց:

Ըստ նմին օրինակի գլխատեցաւ և Պետրոս մայումացի 'ի պատճառս անարգելոյ իւրոյ զկուրանն ։

Մարտիրոսք 'ի հալածանս պատկերամարտից ։

Ի ԹԻՒՍ վկայից Քրիստոսի կարգին և նահատակեալքն մարտիրոսական խոստովանութեամբ՝ 'ի դառն հալածանս անդ պատկերամարտից ։ Յայսպիսեաց սակի եղև սուրբն Գերմանոս պատրիարգ Կոստանդնուպօլսոյ, որ յութսնամեայ հասակի իւրում զոտս արի ախոյան ընդդէմ մոլորութեան Լևոնի կայսեր իսաւրացւոյ, յորմէ և ընկեցեալ յաթոռոյ՝ առանձնացաւ 'ի գիւղ ուրեք արտաքոյ քաղաքին, ուր յառաջ ժամանակաւ բնակէին նախնիք ազգատոհմի նորա ։

Զնոյն արիութիւն զգեցաւ և սուրբն Յովհաննէս դամասկացի անվեհեր ասոխ մոլորութեան պատկերամարտից. ընդ որ զայրացեալ Լևոնի կայսեր՝ զսն գործեաց ստայօդ ամբաստանութեամբ առ ամիրապետն 'ի Դամասկոս պատուհասել զնա, մինչև եւ հատանել զաջ ձեռն երանելւոյն. սակայն աստուածային սքանչելեօք անդէն հաստատեցաւ ձեռն նորա յիւր տեղի 'ի զարմացումն ամիրապետին ։

Առ կայսերութեամբ Կոստանդիանոսի քաջայաղթ հանդիսացաւ սուրբն Անդրէաս կրետացի միայնակեաց Կալիպիդա անուանեալ, զոր դառն տանջանօք սպանեալ անօրինին՝ զմարմին նորա ետ առնել 'ի ծով ։ Զնոյն անգթութիւն արար և ընդ Յովհաննէս վանահայր Մոնագրիոյ, զոր կենդանւոյն փակեալ 'ի քուրձ ետ ընկղմել 'ի ծով ։ Որպէս և 'ի Կրետէ Պօղոս ոմն վանահայր ստիպեալ 'ի Մեծոփանեայ քաղաքապետէ ոտնակոխ առնել զխաչն Քրիստոսի, իբրև չէառ յանձն, կախեցաւ գլխիվայր և այրեցաւ հրով ։ Յեփեսոս քաղաքի երեսունեւութ միայնակեացս փակեցին 'ի կամարակապ շինուած ինչ վաղեմի, և զդրունս հիւսեալ որմովք՝ թաղեցին անդ զնոսա կենդանւոյն ։

Պանծալի ևս ընծայեցաւ յողջակէզ պաշտաման Քրիստոսի սուրբն Ստեփանոս վանահայր մենաստանին որ 'ի գլուխ լերինն Աւսենտիոյ՝ հուպ 'ի Նիկոմիդիա, այր ճգնաւոր և սքանչելի վարուք, զոր Կոստնիմոս ջանահնար եղև որսալ յիւր մոլորութիւն, և հաւանեցուցանել զնա ձեռն դնել վճռոյ ժողովականին իւրոյ, որով և ընդունելի առնել զայն ապա համօրէն միայնակեցաց· բայց այրն Աստուծոյ մերժեալ զամենայն հրապոյրս նորա խորշեցաւ 'ի նմանէ։ Ընդ որ ծանրացասումն եղեալ Կոպրոնիմոսի՝ կամեցաւ վատահամբաւ առնել զայրն՝ անիրաւ և սուտ զրպարտութեամբ, այլ ոչ յաջողեցաւ 'ի կամս չարութեան իւրոյ· վասն որոյ շարժեալ 'ի մոլեգին ցասումն՝ ետ բերել զայրն 'ի Կոստանդնուպօլիս, և արգեալ 'ի շղթայս արկ 'ի բանտ· և յետ աւուրց ինչ յառաքել առ նա զոմանս յիւրոց կուսակից եպիսկոպոսաց հանդերձ իշխանօք բռնադատել զայրն 'ի հաւանութիւն կամաց կայսեր, նա իբրև չետու յանձն՝ տարագիր աքսորեցաւ 'ի կղզի ինչ Հելլեսպոնտեայ։ Ուր առանձնացեալ սրբոյն պայծառացաւ սքանչելի հրաշիւք 'ի ծովու և 'ի ցամաքի· և համբաւ սքանչելագործութեանցն հասեալ յունկն կայսեր, հրամայեաց ածել զնա վերստին 'ի Կոստանդնուպօլիս· և ինքնին հարցափորձ արարեալ՝ իբրև ծանեաւ զհաստատութիւն մտաց սրբոյն, արգեալ 'ի շղթայս արկ 'ի բանտ։ Ընդ 'ի բանտին էին քառասուն և երկու այլ միայնակեացք, որոց չառեալ յանձն հաստատել կամաց կայսեր 'ի գործն անբարշտութեան և արկեալ 'ի բանտ, ոմանց 'ի նոցանէ փորեալ էին աչք, այլք ընչաւք, կէսքն վիրաւորք 'ի գանակոծութենէ· զորս տեսեալ սրբոյն գոհացաւ զԱստուծոյ, և եկաց անդ ընդ նոսա իբր զամ մի։ Յայնմ ժամանակի երանելիքն այնոքիկ արարեալ էին զբանտն իբր եկեղեցի, անդադար սաղմոսերգութեամբ և օրհնաբանութեամբ առ Աստուած· զոր լուեալ Կոպրոնիմոսի կայսեր, և այլ յայլմէ եղեալ յանհնարին ցասմանէն՝ հրամայեաց սպանանել զայրն Ստեփանոս։ Վասն որոյ երթեալ դահճաց 'ի բանտն կապեցին չուանաւ զոտս նորա շղթայակապս, և 'ի քարշելն զնա անգթութեամբ ընդ փողոցս քաղաքին՝ յանդգնեցաւ ոմն յանօրինաց հաստ բրօք խորտակել զգլուխ սրբոյն, որով կատարեցաւ 'ի Քրիստոս։

ԳԼՈՒԽ Է.

Ցնորք Երկոցուն բանդագուշելոյն Ագալլերոսի և Կղեմայ.

ԳԱՂՂԻԱՑԻՔ դիւրահաւանք 'ի բնէ նորանշան ըսքանչելեաց՝ հեշտալուր ունկն մատուցին երկուց ումանց կեղծաւորեալ խաբեբայից, որք յութերորդի դարու 'ի վեր երեւեալք՝ չփոթս ոչ սակաւս յուզեցին 'ի ժողովրդեան: Առաջինն Ագալլերոս անուն՝ ազգաւ Փռանկ, անդստին 'ի մանկութենէ զուն գործեալ ստանալ իւր համբաւ, հնարիմաց հարստութեամբ քարոզէր՝ եթէ հրեշտակ երկնաւոր բերեալ իցէ առ նմին ազգի ազգի նշխարս սրբոց, որովք ընդունի յԱստուծոյ զոր ինչ և խնդրէ. և սովին խաբէութեամբ յինքն որսայր զկանայս և զռամիկն: Սա 'ի ձեռն կաշառոց ձեռնադրեալ եպիսկոպոս, այնչափ ընդվզեալ հպարտացաւ իշխանութեամբն՝ մինչև մեծ քան զառաքեալս համարել զանձն: Կառոյց և օծ աղօթատեղիս յիւր անուն. կանգնեաց խաչս և շինեաց մատուռս, անդր հաւաքել զժողովուրդն՝ որք յօժարամիտ խուռն ընթանային առ նա՝ աճելով ցմիլեանս. Անշուշտ ժամանեսցուք փրկութեան՝ արդեամբք սրբոյն Ագալլերոսի: Բաշխէր նոցա զեղնգունս իւր և զհերսն՝ պահել առ իւրեանս իբր զնշխարս սրբոյն Պետրոսի: Ի դիմել առ նա ռամկաց և յանկանել յոտս նորա 'ի խոստովանութիւն մեղաց իւրեանց, ձեռն տայր նոցա կանգնել և ասէր. ‶Գիտեմ ես զմեղս ձեր, զի յայտնեցան ինձ գաղտնիք, և ոչ ինչ է պիտոյ թէ խոստովանեսջիք. մեղք ձեր քաւեալք են. աներկիւղ լերուք և դարձջիք խաղաղութեամբ 'ի տունս ձեր„:

Համանման գտաւ սմա և Կղեմէս ոմն քահանայ սկովտացի, որ զնոյն քարոզէր մոլորութիւն և զնոյն վարէր կենցաղ: Սովոր էր մերժել զաւանդութիւնս եկեղեցւոյ, և արհամարհէր զկանոնս բարեկարգութեան ժողովոց և սրբոց հարց: Քարոզէր թէ յիջանել Քրիստոսի 'ի դժոխս ազատեալ իցէ և զդատապարտեալս ամենայն. վասն որոյ և հայհոյութեամբ անարգէր զխորհուրդ նախասահմանութեան արդարոց: Երկոքին մաըրեալքս այսոքիկ միանգամայն դատապարտեցան 'ի ժողովին Սուասոնի յամին 744, որպէս և 'ի սինհոդոսին գումարելոյ 'ի Հռովմ յամին 745 յաւուրս քահանայապետութեան սրբոյն Զաքարիայ ։ Ադալբերտոս արկաւ 'ի բանտ հրամանաւ մեծին Կարոլոսի և Պիպինոսի, որով աշխարհիկ լեալ հեռացեալ նորա՝ կարկեցան, և բարձաւ 'ի միջոյ գլխաւոր խաբէութիւնն ։

ԳԼՈՒԽ Ը.

Մոլորութիւնք Փելիքսի ուրգելացւոյ ։

ՓԵԼԻՔՍ ոմն եպիսկոպոս Ուրգել քաղաքի սպանիացւոց և Եղիպանդոս եպիսկոպոս Տոլետոյ համամիտք և մտերիմք միմեանց ջան գործեցին նորոգել զմոլորութիւն Նեստորի, զի ընդ հակառակս ողջամիտ վարդապետութեան եկեղեցւոյ՝ ուսուցանէին թէ Քրիստոս ըստ որում մարդ՝ իցէ լոկ որդեգրական որդի Աստուծոյ, և ծառայ Հօրն երկնաւորի ։ Այսմ մոլորութեան ընդդէմ զինեցան զօրաւոր բանիւք Եդերիոս եպիսկոպոս Ոզմայի, և սուրբն Բենեդիկտոս երկրորդ՝ հիմնարկու և առաջին աբբայ Անիանեան մենաստանին ։ Եւ փութեռանդն խնամով Ադրիանոսի Ա. քահանայապետին Հռովմայ և մեծին Կարոլոսի դատապարտեցաւ մոլորութիւնս 'ի ժողովին Նարբոնայ յամին 788. եղեն ապա և այլ բազում ժողովք 'ի հերքել զվարդապետութիւն փելիքսի ։ Աւանդի թէ յամին 794 'ի ժողովին Աքուիսկրանայ զղջացեալ իցէ սա և յետս կացեալ 'ի մոլորութենէն. բայց զկնի մահուանն գտան առ նմա ինքնագիր հաստատուածք մոլար վարդապետութեանն, որովք յերկբայս եթող զդարձ իւր և զապաշաւ ։

ԳԼՈՒԽ Թ.

Խնամք Մեծին Կարոլոսի 'ի նպաստ քահանայապետացն Հռովմայ և այլոց եպիսկոպոսաց, որպէս և 'ի տարածումն քրիստոնական հաւատոյ։

ՆԱԽԱՆՁ բարեպաշտութեան Մեծին Կարոլոսի յայտ յանդիման երևէր 'ի դէպս ամենայն. զի պաշտպան կայր և ձեռնտու քահանայապետացն Հռովմայ՝ յաւելուլ զիշխանութիւն նոցա և զճոխութիւն։ Զնոյն սէր խնամոց եցոյց և առ ամենայն եպիսկոպոսունս, մանաւանդ որք առաքինի վարուք և իմաստութեամբ պարծանք էին թագաւորութեան իւրում։ Ազատս կացոյց զեպիսկոպոսունս 'ի զինուորական պաշտամանց ինչ զոր հարկ 'ի վերայ կայր նոցա անձամբ կատարել։ Ի մենաստանս առ կրօնաւորական ուխտադրութիւն օրիորդաց՝ սահմանեաց զհասակ քսան և հինգ ամաց։ Նոյնպէս կամեցաւ՝ զի և երիտասարդք նախ քան զհանդիսական ուխտադրութիւն իւրեանց հրաման առցեն 'ի թագաւորէն։ Արգել կրօնաւորաց ընդունել կամ խնդրել դրամս 'ի մտանել ուրուք 'ի մենաստան վասն կրօնաւորութեան. և զի սովորութիւնն թաղելոյ զմեռեալս յեկեղեցւոջ՝ պատճառք լինէր պէսպէս հիւանդութեանց, արգել և խափանեաց զայն խստիւ։ Պատուէր հրամանի 'ի վերայ եդ մի ումեք 'ի մոյր շրջել. այլ զի քաղաքք իւրաքանչիւր խնամ տարցին աղքատաց իւրեանց։ Սակայն որք կարէին շահել անձամբ զաւուրն պարէն, սաստիւ սպառնալեաց ստիպեաց զնոսա յաշխատութիւն։ Եւ զի չարագործք ոճիրս անհնարինս գործեալ փախչէին ապաստանել յեկեղեցիս, հրամայեաց զի այլք բարեպաշտք երթեալ անդր՝ առանց ինչ բռնութեան ածցեն զնոսա յատեան դատաւորի։ Պատուէր ետ ամենայն հպատակաց իւրոց՝ 'ի հոգևոր և յեկեղեցական գործս հպատակել կամաց եպիսկոպոսաց և փոխանորդաց նոցա։ Եւ դարձեալ՝ յունել անդ ուրուք վէճս կամ դատ ընդ այլում, եթէ խնդրիցէ ելանել յատեան եպիսկոպոսի, անխափան թոյլ տացի նմա։ Հաստատեաց զպրոցս երևելիս 'ի քաղաքս քաղաքս, զի պարապով միտ դիցեն անդ կենցաղօզուտ գիտութեանց ։ Թշնամի և ատեցող էր տգիտութեան, և պատուհաս համարէր զայն կրօնի և բարեկարգութեան վարուց. վասն որոյ ջանահնար եղև խրախուսել զամենեսին 'ի գիտութիւն, վարձս մեծամեծս կշռելով գիտնականաց, և պատուելով զնոսա մտերիմ ընտանութեամբ՝ որ պատուականագոյն է քան զյոլով ճոխութիւն ստացուածոց ։

Զխնամս աշխարհաշէն բարեկարգութեանց ոչ շատ համարեալ առնել 'ի Գաղղիա և եթ, այլ և յետ ընդերկար և բուռն պատերազմաց ընդ իւրև նուաճեալ զՍաքսոնիա և զմասն ինչ Սլաւոնաց՝ փոյթ յանձին կալաւ զի հեթանոս ժողովուրդքն այնոքիկ ընկալցին զհաւատս քրիստոնէութեան ։ Բարենախանձ յօժարութեան նորա նպաստամատոյց եղեն և քարոզութիւնք առաքելաջան մշակաց աւետարանին, որք զայնու ժամանակաւ վաստակէին 'ի գաւառն Թուրինկիոյ, Պաւերայի, Հասսիոյ և Փրիսիայի 'ի դարձուցանել զհեթանոսն զայնոսիկ 'ի հաւատս ճշմարտութեան ։ Գլխաւորն 'ի քարոզիչս այնց ազգաց եղև սուրբն Բոնիփակիոս անգղիացի, որոյ քրիստոնէաջան աշխատութիւնք պսակեցան մարտիրոսական մահուամբ անբերելի տանջանաց, որոց տարաւ համբերութեամբ 'ի բարբարոս ժողովրդենէ անտի Փրիսեաց յամին 757 ։

ԳԼՈՒԽ Ժ։

Վիճակ եկեղեցւոյն Հռովմայ ։

ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՔ Հռովմայ խնամարկուք պայծառութեան քրիստոնեական հաւատոյ, քարոզս բանին յուղարկեալ առաքէին 'ի հեռաւոր և 'ի մերձաւոր ազգս հեթանոսաց, որք զայնու ժամանակաւ գտանէին 'ի կողմանս կողմանս Եւրոպիոյ ։

Որք միանգամ յութերորդի դարու ամբարձան 'ի պատիւ քահանայապետութեան յաթոռ սրբոյն Պետրոսի՝ եղեն Յովհաննէս Զ յոյն, որ կալաւ զաթոռն յամին 701 և եկաց զամս երիս և զամիս երկու. ապա Յովհաննէս Է 'ի նմին ազգէ, զամս երկու և զամիս եօթն. յետոյ Սիսիննիոս աւուրս քսան. զկնի նորա յամին 708 Կոստանդին նոյնպէս ասորի՝ զամս եօթն և զաւուրս երկոտասան։ Առ քահանայապետութեամբ սորա չեղև ինչ գործ արժանի յիշատակաց. բայց 'ի յաջորդել սրբոյն Գրիգորի Բ. հռովմայեցւոյ, որ կալաւ զաթոռն յամին 710 և եկաց 'ի քահանայապետութեան զամս հնգետասան և զամիս իբր ինն, բնակիչք Հռովմայ և որ շուրջ զգաւառօքն էին ժողովուրդք՝ թօթափեալ զլուծ կայսեր Յունաց Լևոնի իսաւրացւոյ դաշնակից եղեն ընդ Լոնգոբարդացւոց։ Զի յամին 726 լուեալ Գրիգորի քահանայապետի զհրովարտակն Լևոնի, դատապարտեաց զայն, և խնամ կալաւ անարատ պահել զԼատինս 'ի մոլորութենէ անտի. և զնոյն փոյթ առաքելաջան խնամոց յայտ յանդիման երևեցոյց 'ի յետին ամի քահանայապետութեան իւրոյ՝ նզովելով զԼևոն և զհամախոհս նորա։ Յայնմ հետէ տակաւ օտարացան քահանայապետք Հռովմայ 'ի Յունաց և յիշխանութենէ նոցա, ստացեալ իւրեանց թիկունս զարևմտեան թագաւորս։ Յաջորդեաց զսա համանունն նորա սուրբն Գրիգոր Գ. ասորի յամին 731, որ կալաւ զաթոռն զամս տասն և զամիս ութ։ Յաւուրս քահանայապետութեան սորա Ինա թագաւոր արևմտեան Սաքսոնաց Անգղիոյ՝ բաժանեալ յամուսնոյ իւրմէ և հրաժարեալ 'ի փառաց թագաւորութեն եղև միայնակեաց, եդեալ հարկս 'ի վերայ ժողովրդեան վճարել ամ ըստ ամէ գումար ինչ դրամոց, անուանեալ Դրամ սրբոյն Պետրոսի. զոր յետ ժամանակաց վերստին հաստատեաց և Ադոլփոս թագաւոր Անգղիոյ։

Սուրբն Զաքարիա յոյն՝ յամին 741 կալաւ զաթոռ քահանայապետութեան զկնի Գրիգորի, և եկաց զամս տասն և զամիս երիս։ Սա 'ի վերջին ամի քահանայապետութեան իւրոյ նպաստաւոր եղև Պիպինոսի իշխանին, որ 'ի հազարապետութենէ տանն Քիլդերիկոսի արքայի՝ յինքն էառ զաթոռ թագաւորութեն Գաղղիոյ. յոր սակս շնորհապարտ եղեալ նորա առ քահանայապետն սուրբ՝ մեծարեաց զնա բազմապատիկ ընծայիւք, զի խաղաղարար եղև ազգին Գաղղիացւոց և հաւանեցոյց զնոսա հպատակել իշխանին Պիպինոսի։

Ստեփանոս Բ. հռովմայեցի, ընտրեցաւ քահանայապետ յամին 752. այլ յետ երից աւուրց՝ չև ևս ընկալեալ զօծումն՝ փախճանեցաւ յանկարծահաս մահուամբ ։ Յետ նորա 'ի նմին ամի կալաւ զաթոռն Ստեփանոս Գ. Հռովմայեցի՝ զամս հինգ և զաւուրս քսանևմին ։ Սա առաջին զահաւորակաւ եբարձ ժողովուրդն 'ի վերայ ուսոց իւրեանց , և անտի և այսր սկսաւ սովորութ՟ի զահաւորակի 'ի տօնական հանդէսս քահանայապետաց ։ Յաւուրս նր Պիպինոս արքայ ետ նմա և յաջորդաց նորա 'ի ժառանգութիւն զփոխարքայութիւնն Հռաւեննայ , զոր կորզեաց յարևելեան կայսերութենէ ։ Պարգևս այս արքայական հաստատեցան ապա և 'ի մեծէն Կարոլոսէ՝ յաւուրս Ադրիանոսի Ա. որպէս վկայեն ամենայն մատենագիրք ։

Սուրբն Պօղոս Ա. Հռովմայեցի , որ յամին 757 կալաւ զաթոռ քահանայապետութեան զամս տասն և զմի ամիս , յերրորդ ամի քահանայապետութեան իւրոյ կառոյց 'ի Հռովմ զառանձին մենաստան , զի 'ի յոյն բարբառ կատարեսցին անդ սաղմոսերգութիւնք ։ Ի փախճանել քահանայապետիս յամին 767 Դեսիդերիոս թագաւոր Լանգոբարտացւոց կամեցաւ բռնութ՟ կարգել զոք ընդ նորա՝ Կոստանդին անուն . և զի աշխարհիկ ոք էր այրն՝ 'ի սակաւ աւուրս ետ ձեռնադրել զնա քահանայ . բայց ժողովուրդն և կղերն Հռովմայ ընդդէմ ելեալ հրաժարեցուցին զնա 'ի պատուոյն . և ապա օրինաւոր ժողովով ընտրեցաւ յաջորդ սրբոյն Պօղոսի Ստեփանոս Դ. սիկիլիացի , որ եկաց զամս երիս և զամիսս վեց ։ Յետ նորա կալաւ զաթոռն Ադրիանոս Ա. Հռովմայեցի յամին 772 , և եկաց 'ի քահանայապետութեան զամս քսանևերիս և զամիսս իբր տասն . 'Ի հրամանէ սորին Ադրիանոսի փոխադրեցան յարևելից նշխարք սրբոց Եւստրատիոսեանց , և եդան 'ի Հռովմ յեկեղեցւոջ սրբոյն Ապողինարի , ուր պատուով պահին մինչև ցայսօր ։ Յաւուրս սորա Դեսիդերիոս արքայ՝ քանզի թշնամութ՟ էր ընդ քահանայապետս , կամեցաւ տիրել Հռովմայ և ամենայն քաղաքաց եկելոց ընդ իշխանութ՟ սրբոյ աթոռոյն ։ Բայց մեծին Կարոլոսի ժամանեալ 'ի թիկունս օգնականութե՟ քահանայապետին՝ նուաճեաց զԴեսիդերիոս վերջին թագաւոր Լանգոբարտացւոց , և զերծոյց զսահմանս իշխանութեան սրբոյ աթոռոյն ։ Վասն որոյ քահանայապետք Հռով-

մայ 'ի նշան մեծարանաց և երախտագէտ սրտի կամեցան պսակել զնա կայսր արևմտեան. զոր և մեծաշուք հանդիսիւ կատարեաց 'ի Հռովմ սուրբն Լեոն քահանայապետ՝ յամին 800: Եւ յայնմ հետէ և առ յապա՝ քաղաքն Հռովմ, որ մինչև ցայնժամ էր ընդ իշխանութեամբ արևելեան կայսերաց, եղև ազատ և անկախ 'ի ձեռս քահանայապետաց:

ԳԼՈՒԽ ԺԱ.

Կաթուղիկոսք և վիճակ եկեղեցւոյն հայոց:

ՅՈՒԹԵՐՈՐԴՈՒ *դարուս յետ մահուան երանելւոյն Սահակայ կաթուղիկոսի նստաւ յաթոռ հայրապետութեան Եղիա եպիսկոպոս Արճիշեաց՝ զամս չորեքտասան. որ հակառակասէր ոմն գոլով բարուք՝ մոլար նախանձաւորութեամբ յարոյց հալածանս ընդդէմ քաղկեդոնականաց, և 'ի ձեռն բռնութեան Հագարացւոց ետ աքսորել զՆերսէս կաթուղիկոս Աղուանից:*

Զկնի նորա յամին 718 ընտրեցաւ կաթուղիկոս Յովհաննէս Գ. մականուանեալն Իմաստասէր, 'ի գաւառէն Տաշրաց՝ յՕձ գեղջէ. վասն որոյ կոչի և Օձնեցի: Աշակերտ էր սա Թէոդորոսի վարդապետի Քռթենաւոր կոչեցելոյ, վարժ և հմուտ յամենայն ազգս գիտութեանց: Փոյթ յանձին կալաւ յանդորրու ունել զհօտ իւր 'ի ձեռն բազմապատիկ բարեկարգութեանց: Երկին ժողովով նզովեաց հերքեաց զաղանդաւորս և զհերձուածողս. գրեաց և ճառս սքանչելիս զխորհրդոյ մարդեղութեան Որդւոյն Աստուծոյ, որպէս և ընդդէմ մոլար կարծեաց Պաւղիկեանց և Երեւութականաց. արար և քաղուածս մեկնութեան ժամակարգութեանց, և շարականս ինչ. եկաց 'ի հայրապետութեան զամս մետասան:

Յետ նորա յամին 729 նստաւ կաթուղիկոս Դաւիթ Ա. 'ի գաւառէն Կոտէից զամս երկոտասան: Զկնի նորա յամին 741 յաջորդեաց Տրդատ Ա. 'ի գաւառէն Ոտմնդայ, զամս քսանևերիս: Իսկ յամին 764 Տրդատ Բ. 'ի գաւառէն Դասնաւորից՝ զամս երիս: Յաւուրս սոցա չեղև ինչ գործ արժանի յիշատակաց:

Ապա յամին 767 նստաւ Սիոն կաթողիկոս յԱրագածոտն գաւառէ զամս ութ, որ ժողովեալ եպիսկոպոսաց 'ի Պարտաւ քաղաք և կանոնադիր սահմանովք փոյթ յանձին կալաւ բարեկարգութեան հօտին։

Ի վախճանել Սիոնի յամին 772 ընտրեցաւ կաթողիկոս Եսայի վարդապետ 'ի Նիգ գաւառէ, դաստիարակեալ 'ի վարս բարիս և վարժեալ 'ի կաթողիկոսարանի. սակայն տառապանք թշուառութեանց աշխարհիս Հայոց 'ի բռնութենէ Հագարացւոց՝ կարճեցին զկեանս նորա՝ յետ կալոյ յիշխանութեն զամս երեքտասան։

Զկնի նորա յամի տեառն 788 կալաւ զաթոռն Ստեփանոս Դունեցի զամս երկու, ապա Յովաբ կամ Յովէլ՝ զամիսս վեց. և յետ նորա Սողոմոն ծերունի 'ի գաւառէն Գեղարքունեաց՝ իբր զամ մի. ապա Գէորգ Հոլորրուկ յԱրագածոտն գաւառէ զամս երիս։ Եւ ապա Յովսէփ Բ. Կարիճն կոչեցեալ 'ի նոյն գաւառէ՝ զամս մետասան։ Սոքա կացին կաթողիկոսք Հայոց մինչև ցամ տեառն 806։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Եկեղեցական մատենագիրք։

ՄԱՏԵՆԱԳԻՐՔ ութերորդի դարուս նուազք են յոյժ և սակաւայարգք. զի չեղեն երևելիք ճարտարմտութեամբ և ձրիւք պերճախօսութեան։ Ընդ եւրոպեան մատենագիրս դարուս դասի սուրբն Ադհելմոս առաջին եպիսկոպոս Շերպոռն քաղաքի, որ գրեաց ընդդէմ մոլորութեանց Բրիտանացւոց, և գովեստ 'ի վերայ բազում սրբոց քերթողական բանիւք։

Բեդա քահանայ և միայնակեաց անգղիացի՝ առ սրբակրօն բարեպաշտութեան վարուցն Երանելի անուանեալ՝ եթող մեկնութիւնս ինչ զսուրբ գրոց, և հատուածս պատմութեանց պիտանիս 'ի տեղեկութիւն անցից այնր ժամանակի։

Սուրբն Բոնիփակիոս առաջին եպիսկոպոս Մագունտիոյ՝ գրեաց զվարս քանի մի սրբոց, և ճառս ինչ հոգեշահս։ Կան և նամակք ինչ նորա, յորոց քաղին պատմութիւնք այնր ժամանակի։

Եղբերտոս արքեպիսկոպոս Եորք քաղաքի գրեաց ճառ զխորհրդոյ ապաշխարութեան, և մատենիկ մի զեկեղեցական սահմանաց։

Պօղոս սարկաւագ աքուիլէացի, Փրեգեգարիոս գրագէտ և Եգինարդոս նոտար մեծին Կարոլոսի և գրիչ վարուց նորա, մատենագրեցին զանցս պատմութեան ժամանակին իւրեանց։ Եգինարդոս վախճանեցաւ ըղկեանսն յիններորդի դարու յամին 844։

Ի մատենագիրս Յունաց յիշատակին սուրբն Յովհաննէս դամասկացի՝ պանծալի անուանեալ ընդդէմ պատկերամարտից, որ գրեաց ազգի ազգի ճառս աստուածաբանականս ըստ ոճոյ ճեմականաց։

Անդրէաս արքեպիսկոպոս Կրետայ, որոյ ճառք խրատականք՝ հրահանգիչք են բարուց։ Գրիգոր Սինկեղոս և Թէոփանէս դասին ընդ յոյն պատմագիրս ութերորդի դարուս։

Եղեն և 'ի Հայս վարդապետք անանք ծաղկեալք գիտութեամբ, որպէս Ստեփաննոս սիւնեցի երկրորդ՝ ուսեալ և վարժեալ 'ի Կոստանդնուպօլիս յամենայն ազգս դպրութեանց, որ թարգմանեաց զգիրս Դիոնեսիոսի արիսպագացւոյ և զԳրիգորի Նիւսացւոյ։ Նար և մեկնութիւնս գրոց ինչ մարգարէից, որպէս և շարականս։ Գնաց 'ի Հռոմ, և ապա դարձ արարեալ 'ի Հայս՝ ձեռնադրեցաւ եպիսկոպոս Սիւնեաց, ուր վասն նախանձու աստուածպաշտութեան իւրոյ սպանաւ նենգութեամբ։

Ղեւոնդ վարդապետ պատմագիր, որ 'ի խնդրոյ Շապհոյ Բագրատունւոյ գրեաց զանցս Հայաստանեայց, սկսեալ յեկելոյն Մահմետի մինչև ցաւուրս իւր՝ ցամ տեառն 788։ Ընդ սմա պարտ է համարել և զՅովհաննէս Իմաստասէր և զՍիոն կաթուղիկոս, զորոց գրեցաք կանխաւ։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Պատճառք անշքութեան վիճակի ութերորդի դարուս.

ՏԱԳՆԱՊՔ աշխարհաւեր խռովութեանց՝ զօրացեալք ընդ ամենայն արեւելեան և արեւմտեան կողմանս, խափան եղեն բարգաւաճելոյ ուսմանց։ Երեւելք պատաղեալ ՚ի խնդիրս կրօնական բանակռութեանց, որք պատճառք եղեն ապա և քաղաքական մարտից, բաժանեալ էին զկայսրութիւնն Յունաց ՚ի հերձուածս անուղղելիս։ Թող և զբուն արշաւանս Հագարացւոց առ անհետ առնել զկրօնս աստուածպաշտութեան, որք ստիպելով զամենեսին ՚ի դէն իւրեանց, աշխարհաւեր ասպատակութեամբ ջանացան բառնալ ՚ի սպառ զգիտութիւնս ամենայն. և քանզի ինքեանք անճաշակք էին ՚ի դպրութեանց ցրուեալ կործանեցին ոչ միայն զուսումնարանս, այլ ընդ նոսին և զմատեանս ամենայն հրոյ ետուն ճարակ։

Զնոյն վիճակ թշուառութե՟ էր տեսանել և յարեւմուտս ՚ի պատճառս դառնակսկիծ պատերազմաց Մեծ անուանեալ Կարոլոսի ընդդէմ սարակինոսաց և այլոց ժողովրդոց Եւրոպիոյ։ Թող զհարստահարութիւնս նորա ՚ի զրաւել զստացուածս եկեղեցւոյ, զորս բաշխէր աշխարհականաց և վատնէր ՚ի զօրականս. վասն որոյ եկեղեցականք կարօտեալք աւուրն պարենի՝ թուլացան ՚ի բարեկարգութենէ, որպէս և միայնակեացք գաղջացան ՚ի ճգնողական վարուց և ՚ի պիտանի ուսմանց, և բռնացաւ յամենեսին ՚ի նորա աւաղելին տգիտութիւն։ Այն նուազութիւն հասեալ էր ախորժ գիտութեանց և պերճախօսութեան, մինչև ՚ի մատենագիրս այսր դարու չիք տեսանել զինքնաստեղծ օրինակագիրս բեղնաւորս և ճոխաբանս. այլ ամուլս, կրկնաբանս առանց ինչ վայելուչ կարգի և կանոնաց, և ճառք նոցա աղքատ իմաստք բարդութեամբք անպիտան բառից սեթեւեթեալք։ Չերեւի ՚ի նոսա ճարտարահնար խորագիտութիւն հանճարոյ ՚ի ձգել զունկնդիրս, այլ բարեմիտ դիւրահաւանութիւն ՚ի պահել անկորուստ զաւանդութ՟ս նախնեաց. յոյր սակս բազումք ՚ի գրաւորաց ութերորզի դպրուս մեր եղին խնամով զաղափարել զնախնի մատեանս, որք թողան յետնոց յիշատակ յաւերժական։

Եղեն և այլ պատճառք անկարգութեանց, զի յաճախեցին յայսմ դարու ուխտադրժութիւնք 'ի հեռաւոր վայրս, և փոխանակ քաղելոյ 'ի նոցունց զպտուղ գործոց բարեպաշտութեան, պատճառս առին զեղծանելոյ յեկեղեցական բարեկարգութեանց։ Միայնակեացք՝ որպէս և հաւատաւորք ելանէին 'ի մենաստանաց իւրեանց գնալ յուխտ 'ի Հռոմ, յԵրուսաղէմ և յայլ ուխտատեղիս, կարծելով քաւել այնու զմեղս իւրեանց։ Նոյնպէս և աշխարհիկ իշխանք ապրել համարէին նովին յարժանահաս պատուհասից հարստահարութեանց իւրեանց և եղեռնագործութեանց. իսկ աղքատք առ հարկի կարօտութեան պանդխտանային հայթայթել մուրողութեամբ զպէտս անձանց։

Սակայն յայսմիկ աւաղելի հանգամանս ութերորդի դարու՝ եկեղեցին Քրիստոսի արիացաւ հաստատուն պահել զանմոլար վարդապետութիւն հաւատոյ ընդդէմ հերետիկոսաց ժամանակին, և յայս խնամս առաւել ժրաջան հանդիսացան քահանայապետք Հռոմայ վերակացուք և աւանդապահք բարեկարգութեան եկեղեցւոյ։ Եղեն և ոմանք 'ի բարենախանձ եպիսկոպոսաց, որք հոգեջան խնամովք հրահանգեալ զկղերս իւրեանց, օրինակ բարի ընծայեցին 'ի խրատ և 'ի յանդիմանութիւն հեղգամիտ գաղջացելոց, օրինադրելով կարգս և կանոնս 'ի դարման տգիտութեան և սնապաշտութեանց յաճախելոց 'ի դպրուս։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Ազգային ժողովք։ — Ժողով Պարտաւայ Ա. յամի տեառն 709։

ՆԵՐՍԷՍ Բակուր կաթուղիկոս Աղուանից խելամուտ լեալ ողջամիտ վարդապետութեան սրբոյ ժողովոյն Քաղկեդոնի, համոզէր բանիւք յորդորեալ զգլխոյն Աղուանից ընդունել զայն ժողով և հպատակել սահմանաց նորա և վճռոյ։ Եւ գլխոյն միաբանութեամբ կաթուղիկոսին եբարձ յԱղուանից զթիւր կարծիս որ զորոց ժողովոյն ։ Սակայն Եղիայի Հայոց կաթուղիկոսի 'ի միտս կասկածոտս գոլով զժողովոյն, ամբաստան եղև զնոցանէ առ Աբդլմէլիք ամիրապետ, իբրու եթէ 'ի գրգռելոյ նոցա վտարանջեալ իցէ Աղուանից 'ի Հագարացւոց ։ Եւ ամիրապետին ունկն եդեալ ամբաստանութեանցն՝ արգել առ ինքն զիշխոյն և զկաթուղիկոսն ։ Յայնժամ Եղիայի ժողով գումարեալ յեպիսկոպոսաց և 'ի քահանայից 'ի Պարտաւ քաղաք, զՍիմէոնն կացոյց կաթուղիկոս փոխանակ ՙՆերսեսի, և սահմանեալ ապա կանոնս ինչ բարեկարգութեան՝ ելոյծ զժողովն ։

Ժողով Դըւնայ Է. յամի տեառն 719 ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ կաթուղիկոս Իմաստասէրն անուանեալ, 'ի դառն ժամանակի անիշխանութեան ազգիս ամբարձեալ 'ի հայրապետականն աթոռ, նորանոր ուղղութեամբք ջանացաւ խնամ ունել բարեկարգութեան հայաստան ժողովրդոց ։ Վասն որոյ յերկրորդում ամի իշխանութեան իւրոյ 'ի մի գումարեալ զեպիսկոպոսունս և զքահանայս 'ի հայրապետական քաղաքն Դուին, գեղեցիկ ատենախօսութեամբ և պերճ բանիւք առաջի արար համագումար ժողովելոցն զողորմ բաղդ ազգիս, և յորդորական բանիւք աղաչէր զնոսա 'ի գլուխ հանել զազգն և զերծուցանել 'ի տառապանաց ։ Եւ ապա միաբան հաւանութեամբ ամենեցուն հաստատեաց երեսուն և երկու կանոնս բարեկարգութեան. նոյնպէս նզովիւք հերքեաց և զդիւահնար աղանդն Պաւղիկեանց՝ յոր անզգուշութեամբ խարդաւանէին բազումք յողջամտաց ։

Ժողով Դըւնայ Ը. յամի տեառն 726 ։

ՅԱՄՍ իշխանութեան նորին Յովհաննու Իմաստասիրի ասորիք երկու Սարշապուհ և Գաբրիէլ անուն՝ շփոթս և խռովս յուզէին 'ի Հայս, իբրու թէ մերժեալ նոցա՝ ընկալեալ իցեն զաղանդն Յուլիանիտոսաց ։ Եւ Յովհաննու առանձինն խրատեալ զնոսա, իբրև ետես թէ ոչինչ օգնէ, հալածական վարեաց զնոսա յաշխարհէն ։ Որոց երթեալ յԱսորիս ամբաստան եղեն զազգէն մերմէ առ Աթանաս պատրիարգ իւրեանց. և նորա գրեալ թուղթ առ Իմաստասէրն՝ աղաչէր զնա ժողովով մերժել զչար աղանդն. և առաքեաց առ նա վեց այր յեպիսկոպոսաց անտի իւրոց ։ Յայնժամ Յովհաննու ժողովեալ և զիւրսն 'ի Դուին քաղաք, միաձայնութեամբ ամենեցուն մերժեաց զպիղծ վարդապետութիւնն ։

Ոմանք 'ի Վաղարշապատ համարին գումարեալ զերկրորդս զայս ժողով Յովհաննու Իմաստասիրի ։

ժողով Պարտաւայ Բ., յամի տեառն 768 ։

ՍԻՈՆ կաթուղիկոս տեսեալ յոմանս յառաջնորդաց եկեղեցւոյ թուլութիւնս և մեղկութիւնս, ժողովով եպիսկոպոսաց խորհեցաւ դեղ զարմանոյ նոցին մատուցանել. վասն որոյ նամականիր եղև առ ամենայն եպիսկոպոսունս գալ ժողովել 'ի Պարտաւ քաղաք Աղուանից ։ Բայց զի դժուարին էր 'ի պատճառս խռովութեան հայաստան աշխարհի ամենեցուն միահամուռ անդր ժողովել, բազումք յեպիսկոպոսաց առանձինն նամականաւ խոստացան հաստատել սահմանաց ժողովոյն ։ Յայնժամ Սիոնի եպիսկոպոսօքն որք առ իւր՝ գումարեալ զժողովն կարգեաց ինչ ինչ կանոնս բարեկարգութեան ։ Անդ սահմանեցաւ և թիւ կանոնական գրոց աստուածաշունչ տառից, որք են Հնգամատեանն Մովսէսի, Դատաւորք, Հռութ, չորք գիրք Թագաւորութեանց, Մնացորդք երկու, Ա. և Բ. Եզր, Տոբիթ, Յուդիթ, Եսթեր, երեք գիրք Մակաբայեցւոց, Յովբ, Սաղմոսք Դաւթի, չորք գիրք Սողոմոնի, երկոտասան փոքր մարգարէք, Եսայի, Երեմիա՝ ընդ նմա և Բարուք, Եզեկիէլ, Դանիէլ և Սիրաք ։

ԳԻՐՔ ԻՆՆԵՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա.

Մահ մեծին Կարոլոսի և Թագաւորութիւն Լուդովիկոսի Պիոսի։

Մեծն Կարոլոս յամի տեառն 800 պսակեալ կայսր արեւմտից, և պանծալի փառօք կալեալ զիշխանութիւն տէրութեանն մինչև ցվախճան, մեռաւ յամի 814. և 'ի վերայ տապանի նորա եդաւ արձանագիր ըստ այսմ օրինակի. "Աստ հանգչի մարմին Կարոլոսի մեծի' ականաւոր և ուղղափառ կայսեր, որ շքեղ փառօք ընդարձակեաց զտէրութիւն Գաղղիոյ, և զամս քառասուն և եօթն անդորր խաղաղութեամբ կալաւ զիշխանութի նորա„։ Արձանագիրս այս Թէպէտ և դոյզն ինչ ումեք Թուիցի առ անչափ մեծութեամբ, նորա սակայն բաց 'ի գերահռչակ անուանէն, որ մեծ փառս յաճախէ նմա, Թուի ինձ եթէ յօրինող արձանագրիս հասու եղեալ իցէ թէ 'ի գովեստ առն այնպիսւոյ չէ պարտ յերկուսին մեծապայծառ հանգամանսն' 'ի բազմայաղթ ինքնակալութիւն նորա ասեմ և յեռանդն կրօնից աստուածպաշտութեան, յաւելուլ այլ ինչ պանծալի։ Ուրեք ուրեք կատարեն պատուով զյիշատակ նորա իբրև զսրբոյ։

Այսու ևեթ Թերացաւ Կարոլոս 'ի շքեղ փառացն, զի ոչ արժանաւոր պայազատ և յաջորդ անձին յարոյց 'ի պահպանութիւն գաղղիական պետութեան։ Լուդովիկոս Պիոս որդի նորա և ժառանգ աթոռոյ և իշխանութեանն' Թէպէտ ըստ օրինակի հօրն մտադիր խնամածու էր օգտի եկեղեցւոյ և աստուածպաշտութեան, բայց պակասեալ 'ի վեհանձնութենէ և յարիասրտութենէ, որով հոյակապ շինուածն զոր բազմաշխատ երկօք կառոյց Կարոլոս՝ վաղ ընդ փոյթ սկսաւ սարսել զկնի մահու նորա ։ Լուդովիկոս 'ի կենդանութեան անդ իւրում անխորհուրդ մտօք յօժարեցաւ բաժանել զտէրութիւն յերեսին որդիս իւր 'ի Կղոթարիոս, 'ի Պիպինոս և 'ի Լուդովիկոս ։ Բայց քանզի էր նոցա և չորրորդ որդի 'ի Յուդթայ յերկրորդ ամուսնոյ իւրմէ, կամեցաւ և նմա մասն հանել 'ի հայրենի ընչիցն. ընդ որ զայրացեալ երիցագոյն որդւոյն որք կամէին զրկել զկրտսերն իբրև զօտարածին, յամի տեառն 833 միաբանեցան 'ի խորհուրդ ընդ ոմանս 'ի չարակամ իշխանաց՝ պատժապարտ կացուցանել զհայր իւրեանց. և յայն մեծեղեռն չարիս յանդգնեցան, զի 'ի ձեռն եպիսկոպոսաց ոմանց կուսակցաց իւրեանց զըրկեալ զԼուդովիկոս 'ի պատուոյն, և զգեցուցեալ նմա քուրձ կամ սքեմ միայնակեցի, առաքեցին զնա յարգելանս բանտի 'ի մենաստան սրբոյն Մեդարտոսի 'ի Սուասոն ։ Եւ կալաւ զինքնակալութիւնն անդրանիկն նորա Կղոթարիոս ։

Ապստամբութիւնս այս որդւոց Լուդովիկոսի Պիոս այս է Բարեպաշտ անուանելոյ 'ի սակս բարեկրօն վարուցն, (որում պատշաճ իսկ էր փոքրոգի կոչել մանաւանդ վասն յողդողդ բարուցն, որով անձեռնհաս գտաւ զհետ երթալ պանծալի արքայական կառավարութեան հօր իւրոյ,) յայտնեցաւ երիւք ամօք յառաջ՝ նմանօրինակ ինչ դիպուածով, զոր առ ոչինչ համարեալ նորա յայնժամ, եհաս ապա 'ի յետինս յայս անպատուութիւն՝ զրկիլ յիշխանութենէն և միակեցական ձեւով տարագրիլ 'ի մենաստան ։ Նոյնպէս և դշխոյն Յուդիթ արգելաւ 'ի վանս սրբուհւոյն Ռադեգոնդայ 'ի Պուաթիէ քաղաքի ։

Իշխանք Գերմանիոյ շարժեալք 'ի գութ ընդ վշտալիցս այս կենցաղ Լուդովիկոսի Պիոսի՝ հանին զնա յարգելանէն և հաստատեցին վերստին յաթոռ թագաւորութեան ։ Յայնժամ Պիպինոս և Կղոթարիոս որդիք նորա իմացեալ զվրիպակ յանցանացն իւրեանց՝ եկին խնդրել զներումն յամին 834. Լուդովիկոս յետ վերըստին հաստատելոյ յիշխանութեան իւրում, թագաւորեաց այլ ևս ամս վեց, և մեռաւ բարեպաշտութեամբ յամի տեառն 840 ։

Թէպէտ պերճացեալ որ էր սա գովելի բարեմասնութեամբք, սակայն նուաղեալ գտաւ յոյժ 'ի հոգս տեսչութեան։ Հետամուտ էր յոյժ գիտութեանց և փոյթ 'ի լուր աստուածաշունչ գրոց․ օր ըստ օրէ ընդ առաւօտս կանխէր յեկեղեցի 'ի պաշտամունս աղօթից, և արտասուախառն պաղատանօք թանայր զծնրադրեալ տեղին․ սիրող էր դարձեալ աղքատաց և ձեռնտու տնանկաց։ Եւ որ յիշխանաց գտաւ իմաստուն օրէնսդիր քան զնա, սակայն անչափն իւրով հլու հաւանութ̅բ չկարաց հաստատուն ունել զօրինադրեալսն։ Գթած էր նա և առ այնոսիկ 'ի յանցաւորաց որք քաղաքական օրինօք գլխապարտք էին և կամ պատժապարտք․ անբաւական դարձեալ 'ի խելամուտ լինել իրաւանց իշխանութե̅ իւրոյ և եկեղեցւոյ, թէպէտ և լուսաւորեալ որ էր միտք, և զնոյն պահանջէր և յեկեղեցականաց։ Ջանամ՛ կալաւ կոչել 'ի սահմանս տէրութեան իւրոյ զհմտագոյնսն 'ի վարժապետաց ուսուցիչ լինել աստուածային և արտաքին գիտութեանց․ գումարեաց ազգային և գաւառական ժողովս 'ի նորոգել զնախնի կանոնս բարեկարգութեան։

Փոյթ յանձին ունէր Լուդովիկոս առաքել գործակալս յայլ և այլ գաւառս և 'ի քաղաքս 'ի քննութիւն ատենակալաց և եպիսկոպոսաց, թէ զիա՛րդ լնուցուն ըզպարտս պաշտաման իւրեանց․ յորդորէր հանապազ զեպիսկոպոսունս հսկել 'ի վերայ հօտին և խնամ ունել պահպանութեան կանոնաց 'ի մենաստանս, քանզի ինքն իսկ յօրինակ բարի էր ամենեցուն։

Նմա պարտի եկեղեցի զազատութիւն կանոնական ընտրութեան․ զի 'ի միում հրովարտակի պատուիրէ զի եպիսկոպոսունք ընտրեսցին 'ի կղերց և 'ի ժողովրդենէ, և առցեն 'ի նմին թեմական վիճակէ․ և մի հայեսցին յայլ ինչ՝ բայց եթէ յարժանաւորութիւն ընտրելեայն առանց ինչ ակնառութեան․ և թէպէտ ձեռնտու էր յամենայնի եկեղեցականաց, սակայն արգել նոցա ընդունել յումքէ պարգևս ինչ կամ ընծայս՝ վաստուք որդւոց և ազգականաց պարգևատուին։

Նախանձ աստուածպաշտութեանն՝ որով վառեալ էր նա 'ի ծաւալել զուղղափառ հաւատս, օգտակար եղև Կիմբրացւոց, Դանեաց և Շուեդաց, որք ընդ ձեռն խնամոյ նորա ընկալան զլոյս աւետարանին Անսգարի։

ԳԼՈՒԽ Բ.

Յետին խռովութիւնք պատկերամարտից և 'ի սպառ նուազել մոլորութեանն ։

ԱՐԵՒԵԼԵԱՆ եկեղեցին տագնապեալ ոչ դոյզն ինչ ժամանակս 'ի դառն բաջաղանաց անտի պատկերամարտից, համանգեան ուր ուրեմն զինի եօթներորդի ընդհանուր ժողովոյն ։ Իշխոյն Իռինէ որ յամին 797 ինքնին առանձին կալեալ զիշխանութիւն կայսերութեանն՝ ջանահնար եղև շքեղ և պանծալի գործովք անհետ առնել 'ի սպառ զառաջին ունայնասէր բարուց իւրոց թերութիւնս ։ Մեծարէր յոյժ զնախնի աւանդս պաշտամանց եկեղեցւոյ, փոյթ յանձին ունէր ծաւալել անդրէն ըզպաշտօն յարգութեան պատկերաց և պաշտպան կայր ուղղափառաց, մինչև տկարանալ առաջնորդաց մոլորութեանն 'ի գրգռել զպալատականսն ընդդէմ ուղղափառաց ։ Եւ այս դշխոյ՝ խնամութեամբ և գգուութեամբ իւրով յաջողութիւն և 'ի բարեկարգութիւն աճեալ ըզպետութիւնն ողջոյն, իբրև այն ինչ խորհէր միացուցանել զարևելեան և զարևմտեան կայսերութիւնս ամուսնութեամբ ընդ մեծին Կարոլոսի, յամին 802 յեղակարծ ընկեցաւ յիշխանութենէն և աքսորեցաւ յաքսորս. ուր տախծեալ 'ի դառն աղքատութենէ, պարապէր 'ի ձեռագործս՝ մանելով զասր 'ի հայթայթել նովաւ զաւուրն պարէն ։

Վշտացան յոյժ ընդ անկումն այս Իռինեայ ողջամիտ մարդիկ և որ պաշտպան կային ճշմարտութեան ։ Զի Նիկեփորոս՝ գանձապետ թագուհւոյն՝ որ ապըստամբեցուցեալ զիշխանսն և զժողովուրդն առ հասարակ ետ ընկենուլ զԻռինէ, ապա յինքն գրաւեաց զաթոռ կայսերութեանն, թէպէտ ուղղափառ թուէր առ արտաքս, բայց անման էր 'ի հաւատոց ։ Բազումք յեկեղեցական մատենագրաց գովեն զնա իբր ազնուական զոք, կրօնասէր և ճշմարտախնդիր. զի խնամ կալաւ յանդորրու պահել զամենեսին, ուր 'ի ժամանակս նախորդաց նորա հալածումն սաստիկ էր եկեղեցւոյ. սակայն խաղաղասիրութեամբն յայտ յանդիման երևեցոյց թէ անխտիր բին է նա առ ամենայն կրօնս ։ Եհաս նա յայն ծագ անբարշտութեան՝ մինչև ուրանալ զամենայն պաշտամունս, ծաղր առնել զուղղափառս և զհերետիկոսս միանգամայն ․ և կեղծելով զանձն ուղղափառ գոլ՝ 'ի ծածուկ ձեռնտու էր պատկերամարտից, տալով նոցա ազատութիւնս ինչ զորս սահմանք երկրորդ ընդհանուր ժողովոյն Նիկիոյ արգելեալ էին ։ Պատմաբանք Յունաց նկարագրեն զնա անագորոյն քան զնախորդս իւր, կեղծաւոր, անհաւատ, զեղծ վարուք և անչափ ագահ ։ Կորեաւ չարաչար մահուամբ 'ի պատերազմին որ ընդ Բուլղարս, և զաւազան իշխանութեանն տուաւ Միքայէլի կիւրապաղատի փեսայն նորա ․ որոյ կալեալ զաթոռ կայսրութեան յամին 811, կերպարանափոխ արար զհանգամանս տէրութեանն որպէս և զեկեղեցւոյ ։ Յետ առնելոյ նորա զդաւանութիւն հաւատոյ ըստ վճռոյ եօթն ընդհանրական ժողովոց, աքսորեաց 'ի Կոստանդնուպօլսոյ զպատկերամարտս ամենայն, և զյանդգնագոյնսն 'ի նոցանէ զանխիւք պատուհասակոծ արար ։ Տեսեալ հերետիկոսացն՝ եթէ մոլորութիւն իւրեանց 'ի վտանգի կայ բնաջինջ կործանման, ջանացան կանգուն առնել զայն նորահնար դաւով՝ 'ի յուզել և 'ի խռովել զժողովուրդն դիւրանաց ։

Նիկեփորոս պատրիարգ Կոստանդնուպօլսոյ՝ կամեցեալ խնդրել զօգնականութիւնն Աստուծոյ վասն յաջողութեան զինուց կայսեր, հրամայեալ էր մատուցանել աղօթս հանդիսական թափօրիւ յեկեղեցիս ուրեք ։ Յաւուր միում՝ մտեալ ժողովրդեան յեկեղեցի սրբոց Առաքելոց, ուր թաղեալ էր Կոստանդին Կոպրոնիմոս՝ որ ջատագով և պաշտպան եկաց մոլորութեան պատկերամարտից, և ահա յանկարծակի ահաւոր դղրդմամբ բացաւ տապանն, և պատկերամարտք որք մերձենայեալ էին զայն՝ միաբան զաղաղակ բարձին ․ ״ Արի կանգնեա իշխանդ մեծ, և հաս 'ի թիկունս պետութեանդ, որ 'ի կործանումն դիմէ „ ․ լսելի եղեն յայնժամ և այլ աղաղակք ցնորից իբր մատամբ ցուցանելով զնա, ״ Ահա նա ինքն, տեղի տուք նմա ․ ահա նստեալ կայ 'ի վերայ պատերազմական երիվարի իւրոյ, պատրաստեալ յարձակել ընդդէմ թշնամեաց տէրութեան „ ։ Զարհուրեալ ժողովրդեանն 'ի ձայնէ անտի, իբր ուշք կործէին տեսանել զայն որ չէր 'ի միջի. և յայնժամ եւեթ ծանեան զնենգն, յորժամ գործադիրք մեքենայիցն սպառնալեօք տանջանաց խոստովան եղեն՝ թէ զաղտնի հնարիւք շարժեալ իցեն զվէմն կափարիչ շիրմին։

Բայց զի դեռ ևս 'ի յոյզս ծփանաց էր ժողովուրդն, և օր ըստ օրէ 'ի վեր երևէին ապստամբութիւնք, ոչ կարացեալ Միքայելի կայսեր զդէմ ունել նոցա, ստիպեցաւ հրաժարել յիշխանութենէն, յանձն արարեալ զայն Լեւոնի հայկազնոյ, որ չէր կարի կուսակից և նպաստաւոր ուղղափառաց։ Ջան գործեաց թագաւորն յորդորել զիշխանս և զժողովուրդն 'ի միաբանութիւն իւրոց կարծեաց. և 'ի հաճելն զամենեսին 'ի նոյն, կուսակից ցուցաւ պատկերամարտից։ Եւ յամին 815 գումարեալ ժողով կոչեաց զպատրիարգն, զեպիսկոպոսունս և զվանահայրս բանակռիւ լինել առաջի իւր ընդ այնոսիկ որք հակառակ կային պաշտաման պատկերաց։

Նստաւ կայսրն 'ի ժողով հանդերձ ծերակուտիւ, պատրիարգօք և գլխաւոր աւագանւոյ տէրութեան, ը̄ն իւր ունելով և զբազումս 'ի պատկերամարտից։ Ընդ 'ի ծանուցանել անդ կայսեր զխորհուրդս միտացն, ուղղափառք առ հասարակ միաբան ձայնիւ պատասխանի ետուն, թէ ոչ իսկ պարտ է վիճել 'ի վերայ այնր խնդրոյ, զոր Հ̄գիւ սահմանեաց տիեզերական սինհոդոսն։ Յոլովք յեպիսկոպոսաց երևելի հանդիսացան աներկիւղ համարձակութեամբ, որով 'ի դէմ հարին կայսեր զանիրաւ կուսակցութիւն նորա, մինչև Թէոդորոսի ուրումն Ստուդիտոս անուանելոյ ասել ցկայսրն. "Իշխանդ՝ մի այլայլեալ վեր 'ի վայր տապալեսցես զսահմանս, զոր տէր ինքնին հաստատեաց. 'ի քեզ յանձն եղեալ են խնամք տէրութեան, իսկ հովուաց՝ խնամք եկեղեցւոյ։ Առաքեալն Պօղոս 'ի թուել անդ զդասակարգութիւն եկեղեցւոյ՝ ոչ ինչ յիշատակեաց զկայսերս"։

Զայրացեալ Լեւոնի ընդ անչափ համարձակութիւն եպիսկոպոսաց՝ եհան զնոսա արտաքս, պատուիրեալ լռել և զգուշանալ 'ի վիճաբանութենէն, որով բաժանեալ կայր եկեղեցի։ Ապա յամին երկրորդի առանձինն հրովարտակաւ ընդ պատժով աքսորանաց և սաստիկ սպառնալեաց արգել զոր և է պաշտօն պատկերաց։ Նիկեփորոս պատրիարգ ոչ կամելով ընդունել զհրրովարտակն զայն, աքսորեցաւ 'ի վանսն զոր ինքն տըւեալ էր կանգնել առ ծովեզերբն Սափորանի 'ի Քաղկեդոն. ուր և եկաց զերեքտասան ամ առաքինի վարուք։ Յաջորդեաց զնա 'ի պատրիարգութեան Թէոդոտոս, որ միաբանեալ ընդ այլոց եպիսկոպոսաց համախոհից կայսեր՝ արար ժողովս յեկեղեցւոջ սրբուհւոյն Սոփիայ, և յանդգնեցաւ դատապարտել զերկրորդ ժողովն Նիկիոյ։

Ի վճռոյ անտի անիրաւ ժողովոյն համարձակութիւն առեալ պատկերամարտից, բուռն և սաստիկ հալածանս յարուցին ընդդէմ ուղղափառաց։ Ընդ ոտիւք կոխեալ այրեցին արհամարհանօք զպատկերս եկեղեցեաց, և փշրեցին զորբազան անօթսն յորս դամնէր պատկեր ինչ սրբոյ։ Սպառնային հատանել զլեզուս այնոցիկ որք յանդգնեցին անգոսնել զոր առնէինն. և զորս միանգամ անսաստէին հպատակել բանից նոցա՝ հարուածովք գանից խոշտանգէին անխտիր զարս և զկանայս։ Յայսպիսի անգթութիւնս յաւելին զրաւել և զտացուածս ուղղափառաց. իսկ զաքսորեալսն առաքէին յաշխարհս բարբարոսաց, ուր և անուն իսկ քրիստոնէութեան ատելի և խորշելի էր ընակչաց տեղեացն։

Դառն և անհանդուրժելի յոյժ էին տանջանքն որովք նեղէին զեպիսկոպոսս և զմիաբանակեացս. յորոց կէսք մեռան 'ի հարուածս գանից, և այլք փակեալք 'ի պարկս ընկեցան 'ի ծով։ Այնպէս դառն էր վիճակ Կոստանդնուպօլսոյ, զի ոչ ոք վստահէր յընկեր իւր. որդիք ամբաստան լինէին զծնօղաց, և գերիք զտեարանց իւրեանց սակս պատկերաց ինչ կամ գրոց նպաստաւորաց պաշտաման նոցին։ Իսկ մխիթարել կամ սփոփել զաքսորեալսն կամ ծառայել բանտարկելոց՝ յանցանք էին արժանաւորք տարագրութեան։ Ուր ջանայր մայրն Լեւոնի կայսեր մեղմել զխստութիւն անգթութեանն, զի բացէ 'ի բաց մերժեաց նա զպաղատանս նորա։

Սակայն յետ իբր եօթն ամաց կայսերութեան հատուցին նմա երկինք զչարութիւնս նորա և զանօրէնութիւնս, զի սպանաւ յամի տեառն 820. և եթէ չէր նորա թակարդեալ 'ի մոլեգնութիւն պատկերամարտից, յիշատակ բարի թողեալ էր յետնոց սակս ալիատիրս քաջութեանն, արթուն հսկողութեանն, և ուշիմ փութոյն ՚ի բարեկարգ վարչութիւն կայսերութեան ։ Նիկեփորոս պատրիարգ յաքսորանս իւր լուեալ զմահ Լևոնի՝ վկայեաց ուղղութեամբ, յաւել անդ եթէ «Եկեղեցի զերծաւ յոսոխէ մեծէ, բայց արևելեանն պետութիւն կորոյս զիշխան ոք քաջ և արի, որ գեղեցիկ բարեմասնութեամբքն փառս նմա յաճախէր և պարծանս »։

Մահ Լևոնի չեղև պատճառ խաղաղութեան եկեղեցւոյ . զի պատկերամարտք նոյնպէս բուռն էին զօրութեամբ և առ կայսերութեամբն Միքայէլի Թըլուատ անուանելոյ . որպէս և ընդ տէրութեամբ յաջորդի նորա Թէոփիլոսի ։ Բայց զկնի մահուան նորա յամին 842 Թէոդորա թագուհի խնամակալ կացեալ որդւոյ իւրում Միքայէլի մանկան, գուն գործեաց հաստատել վերստին զպաշտօն պատկերաց . վասն որոյ ՚ի նմին ամի ետ գումարել ժողով ՚ի մայրաքաղաքին, յորում նախագահ բազմեցաւ Մեթոդիոս պատրիարգ Կոստանդնուպօլսոյ, և ըստ սահմանադրութեան երկրորդ ժողովոյն Նիկիոյ՝ նզովեաց զայնոսիկ որք խռովութիւնս յուզեալ էին ընդդէմ սրբոց պատկերաց ։ Իշխանք և մեծամեծք որք զառաջինն անհետ առնել կամէին զպատկերս ամենայն՝ առ հաճոյանալոյ Թէոդորայ դշխոյին, ջերմեռանդն պաշտպանք կացին յարգութեան պատկերաց . և օրինակ բարենախանձ պաշտաման նոցա յորդոր եղև ժողովրդեանն ՚ի նոյն եռանդն . որով ուղիղ դաւանութիւնն հաստատեալ ծաւալեցաւ ընդ բովանդակ արևելս ։ Կրօնաւորութիւն կնոջն բարեպաշտի վախճան արար հակառակութեանն յուզելոյ ընդ ամս հարիւր և քսան ՚ի պատճառս անօրէն և անգութ բռնութեան իշխանաց ։

ԳԼՈՒԽ Գ.

Արիական նահատակութիւն սրբոց վկայից:

Զվկայեալսն ուղղափառ դաւանութեան 'ի նախկին հալածմանց պատկերամարտից՝ փոքր 'ի շատէ գրեցաք 'ի վերս ութերորդի դարուն. մնայ արդ ասել սակաւուք և վասն նոցա որք արիացան 'ի յետին աղմուկս խռովութեանց յուզելոց 'ի հերետիկոսաց և 'ի Հագարացւոց:

Առ կայսերութեամբ Լեւոնի Հայկազնոյ սուրբն Մեթոդիոս միայնակեաց, որ պատրիարգ եկաց ապա Կոստանդնուպօլսոյ, քանզի պաշտպան էր ուղղափառ հաւատոց և ջատագով պաշտաման պատկերաց, ընկալաւ եօթն հարիւր հարուածս գանից: Սուրբն Եւթիմիոս եպիսկոպոս յետ կրկին աքսորանաց վախճանեցաւ 'ի գանս տանջանաց: Սուրբ վանահայրն Թէոդորոս Ստուդէ՝ որ յաւուրս Միքայելի Թլուատի յետս կոչեցեալ էր յաքսորանաց, գնացեալ 'ի Քաղկեդոն առ Նիկեփորոսի պատրիարգին, սկսաւ բազմապատիկ գրովք մաքառիլ ընդդէմ պատկերամարտից, և որպէս թէ զէն 'ի ձեռին վախճանեցաւ անդ 'ի հասակի վաթսուն և եօթն ամաց: Թող և զայլ յոգնաթիւ նահատակսն, որք ողջակէզ եղեն կատաղի ցասման անօրէն կայսերաց:

Զայնու ժամանակաւ յորում պատկերամարտք հալածէին զուղղափառս, նոյնպէս և Հագարացիք ջանահնար լինէին տարածել զզէն իւրեանց, և բռնագոյն քան զկայսերս նեղէին զքրիստոնեայ հպատակս իւրեանց, որով բազումք անուանիք յազգէս Հայոց վկայական մահուամբ ելին յաշխարհէ: Առ ամիրապետութեամբն Հարունի՝ յամին 808 նահատակեցան երկու հարազատքն Սահակ և Յովսէփ կարնեցիք: Էին սոքա որդիք հօր հագարացւոյ և մօր քրիստոնէի հայկազնոյ. յորմէ ուսեալ զօրէնս բարեպաշտութեան՝ զառաջինն 'ի ծածուկ վարէին զքրիստոնէութիւնն, և ապա յայտնելով զհաւատս իւրեանց՝ մատնեցան 'ի ձեռս այլազգի իշխանին և արկան 'ի բանտ. ուր յետ բազմադիմի հրապուրանաց և սպառնալեաց յուրացութիւն հաւատոյ, իբրև հաստատուն կացին 'ի շնորհն Աստուծոյ, հատին *գլուխս նոցա, և ծագեաց լոյս մեծ 'ի վերայ մարմնոյ նահատակացն. յորմէ զանգիտեալ իշխանին հրաման ետ վաղվաղակի թաղել զնոսա պատուով: Կատարի տօն յիշատակի նոցա ամ' ըստ ամէ:*

Նոյն արտաքին քաջութեամբ կատարեցան վասն 'ի Քրիստոս հաւատոյ և եօթն ընտիր զօրականք երիտասարդք հասակաւ, որք յամին 857 խաչեցան հրամանաւ Բուղայ ոստիկանին հագարացւոյ: Գլխաւոր նոցա էր Ատոմ անձևացի, յորմէ անուանեցան Ատոմեանք, և յիշատակ նոցա կատարի ընդ առաջին Ատոմեանցն, որք վկայեցին առ հալածանօքն Յազկերտի Պարսից արքայի 'ի հինգերորդի դարուն: Յաւուրս ոստիկանութեան նորին Բուղայի կատարեցաւ և երանելին Ստեփանոս Կոն անուանեալ, որպէս և Սմբատ Բագրատունի Խոստովանող, որ ժամանակս յոլովս մնացեալ 'ի բանտի, աւանդեաց զհոգին առ Աստուած: Թող և զայլս յոգունս յիշխանաց և 'ի ռամկաց միանգամայն, որք 'ի բռնութենէ Հագարացւոց հեղին զարիւն իւրեանց 'ի փառս քրիստոնէական հաւատոյ:

Սակայն քան զամենեսին զսոսա պանծալի հանդիսացաւ սքանչելի մահուամբ և գերապանծ վկայութ՟բ երանելի թագաւորն մեր Սմբատ Բագրատունի, թոռն Սմբատայ Խոստովանողի, որդի Աշոտոյ արքայի առաջին թագաւորի 'ի ցեղէ Բագրատունեաց: Սա 'ի թագաւորել անդ իւրում յամին 890 անվեհեր արիութ՟բն խնամակալ գտաւ աշխարհին Հայոց, որ հեծէր 'ի բռնութենէ աւարառու թշնամեաց. սքանչելի համբերութեամբն և առ Աստուած ապաւինութեամբ անպարտելի ցուցաւ 'ի բազմադէմ վիշտս յաճախեալս 'ի բռնութենէ օտարաց և 'ի չարակամութենէ ազգայնոց: Այր վեհանձն՝ անոխակալ առ թշնամիս և բարերար առ ամենեսին, նախանձելի օրինակաւ վարուցն յորդոր եղև ամենեցուն 'ի բարեպաշտութիւն: Աստուածասէր փութովն խնամարկու էր շինութեան եկեղեցեաց և վանորէից, և արդարև հայր ժողովրդեան անձնանուէր գթովքն յազատութիւն նոցա և 'ի պաշտպանութիւն: Ի յետին ամս թագաւորութեան իւրոյ 'ի պաշարել ամրոցին Կապուտոյ, յորում պատսպարեալ կայր երանելին Սմբատ արքայ, Յուսուփ ոստիկան Հագա-

բացւոյ առ 'ի ձեռս բերել զնա , սաստկացոյց զմարտն՝ յանխնայ կոտորելով զժողովուրդն . զայն տեսեալ երանելոյն և խնայեալ թէ 'ի պատճառս իւր լինին այնչափ անողորմ հարուածք , յանձն էառ ինքնակամ տալ զանձն 'ի փրկութ̃ի ժողովրդեան , յորդորեալ առ այն 'ի ճշմարիտն աստուածսիրութ̃է և յարքայավայել մարդասիրութենէ , որով արժանի եղև մարտիրոսական պսակի ։ Օի յանձնատուր լինելն առ Յուսուփ բռնաւոր , զառաջինն առ երեսս պատուեցաւ 'ի նմանէ , բայց յետոյ նենգանօք զրկեալ 'ի փառաց և արկեալ 'ի շղթայս եդաւ 'ի բանտ խաւարչտին , ուր կամեցաւ անօրէնն սովամահ լլկել զնա զի թերևս մարթասցի խախտել 'ի հաւատոցն . և ոչ կարացեալ լինել կամագիւտ , տարաւ զնա 'ի Գողթն գաւառ , և անդ յանդիման ամրոցին Երնջակայ կարգեալ զդահիճն 'ի վերայ նորա , ետ խոշտանկել զնա և անբերելի տանջանօք՝ յայտնապէս ստիպելով յուրացութիւն հաւատոյ . սակայն արի նահատակն Քրիստոսի հաստատուն կացեալ 'ի սուրբ հաւատս ճշմարտութ̃ե , ընդ ձեռն ծպտեալ քահանայի ուրումն ընկալաւ զսուրբ խորհուրդ հաղորդութեան , որով զօրացաւ տանել անհնարին տանջանացն . և 'ի կամել անօրինին քամնելի օրինակաւ խեղդամահ առնել զնա , նախ քան զաւանդելն զհոգին հատին զգլուխն , և զմեռեալ մարմինն տարեալ 'ի Դուին քաղաք բևեռեցին 'ի խաչափայտի , ուր երևեցաւ լոյս մեծապայծառ 'ի վերայ մարմնոյն ։ Եւ տեղի նահատակութեանն և հեղման արեան նորա սրբանչելիս հրաշագործելով՝ յորդոր եղև բազում այլազգեաց ընդունել զհաւատս Քրիստոսի ։ Կատարեցաւ արի նահատակս յամին 914 ։

ԳԼՈՒԽ Գ.

Հերձուած փոտայ։

ԲԱԺԱՆՈՒՄՆ հռովմէական տէրութեան՝ առ ինքնակալութեամբ մեծին Կոստանդիանոսի յարևելեան և յարևմտեան, զարթոյց իմն և զեկեղեցականս Յունաց և Հռոմոց առանձինն ունել փառս և պատիւ. զի թէպէտ և հօտն Քրիստոսի առ հասարակ ծանուցեալ էր մի եկեղեցի կաթուղիկէ ընդ միով երևելի գլխով, սակայն պատրիարգունք Կոստանդնուպօլսոյ խորհեցան երբեմն հաւասարապատիւ երևել քահանայապետացն Հռովմայ, ոչ ըստ իշխանութեանն՝ կանոնադիր լինել այլոց, այլ ըստ պատուոյն եւեթ։

Յետ փոխադրելոյ կայսերութեանն 'ի Կոստանդնուպօլիս, եպիսկոպոսք այնր քաղաքի ընկալան զիշխանութիւն 'ի վերայ Թրակիոյ, փոքուն Ասիոյ և Պոնտոսի. որոց տակաւ ձգեալ զբազուկ իշխանութեան իւրեանց և 'ի վերայ պատրիարգացն Աղեքսանդրիոյ և Անտիոքու, որք չէին երբեմն ընդ իշխանութեամբ նոցա, ընկալան զանուն և զպատիւ Տիեզերական պատրիարգի։ Եւ թէպէտ շատ հակառակ կացին այսմ քահանայապետք Հռովմայ, որպէս և վերագոյնդ յիշատակեցաք, սակայն պատրիարգունք Յունաց զնոյն գործեցին պահել զիրաւունս պատուոյ զոր ստացեալ ունէին։ Գլխաւորութիւն և նախագահութիւն աթոռոյն Հռովմայ ծանուցեալ էր միշտ և խոստովանեալ մինչև ցութերորդ դար, բայց յիններորդի դարու հերձուածք ոչ սակաւ և հակառակութիւնք 'ի վեր երևեցան, զորոց զդէպս համառօտ բանիւ կարգեսցուք յառաջիկայդ։

Արքայազն մանուկն Միքայէլ ժառանգեալ յաթոռն հայրենի՝ ընկալաւ զգաւազան իշխանութեան յամին 855. սակայն զականեալ յաշխարհային զբօսանս և 'ի հաճոյս՝ յանձն արար զկառավարութիւն Բարդասայ քեռւոյ իւրում, առն ամբարշտի և յանդուգն բանակալի, որ անամօթ համարձակութեամբ էառ 'ի կնութիւն զորդեգրեալն իւր զդուստր։ Եւ զի երանելին Իգնատիոս պատրիարգ Կոստանդնուպօլսոյ չէր հաւան ընդ այն ազգապիղծ ամուսնութիւն, յամին 858 անօրէն ժողովական ընկէց զնա Բարդաս յաթոռոյ և տարագիր աքսորեաց 'ի կղզի ինչ Պրոպոնտոսի ։ Իսկ ապա 'ի տեղի նորա ընտրեցաւ Փոտ ներքինի, այր աշխատահամ, մտավարժ և բազմահմուտ, որ 'ի հինգ աւուրս յաշխարհական կարգէ ամբարձաւ 'ի պատիւ քահանայութեան, և յաւուրն վեցերորդի ընկալեալ զաստիճան պատուոյ արևելեան պատրիարգի, փութացաւ անդէն յամին 861, ժողովով 'ի Կոստանդնուպօլիս հաստատել զընտրութիւն իւր ։ Յայնմ ժողովի ստայօդ զրպարտութեամբ դատապարտեալ նզովեցաւ երանելին Իգնատիոս պատրիարգ. որում միաբան ձայնակից գտան և դեսպանք պապին Հռոմայ՝ պատրեալք 'ի ճարտարախօսութենէ և 'ի նենգաւոր բանից նորընտիր պատրիարգին ։

Լուեալ պապին Նիկողայոսի Ա. զվրիպակ դեսպանաց իւրոց, յամին 863 գումարեաց ժողով 'ի Հռոմ, և վերստին հաստատեալ զերանելին Իգնատիոս յաթոռ պատրիարգութեան՝ նզովեաց զՓոտ ։ Զայրացեալ ընդ այն Փոտայ և կամելով բարձակից և հաւասարպատիւ երևել քահանայապետացն Հռոմայ, գումարեաց և ինքն ժողովակ յամին 866, յորում յանդըգնեցաւ նզովս կարդալ ընդդէմ պապին Նիկողայոսի իբր պատժապարտ առն. զի 'ի գրգռելոյ սորին Փոտայ՝ արք ոմանք անօրէնք ստայօդ ամբաստանութեամբ բարուրս յօդեցին զքահանայապետէն ։ Ապա ձեռն արկ Փոտ գրել ընդդէմ Լատինացւոց, 'ի մոլորութիւնս պէսպէս զրպարտելով զնոսա ։ Հերետիկոսութիւն համարեցաւ զդաւանելն՝ թէ Հոգին սուրբ ելանէ 'ի Հօրէ և յՈրդւոյ. անգոսնէր զայլ և այլ սովորութիւնս եկեղեցւոյն Լատինաց, որպէս զհացն անխմոր, զկաթեղէն կերակուրս 'ի քառասնորդական պահսն, և զայլ այսպիսիս ։ Այսպէս ահա սէր փառաց և պատուոյ էարկ զնա 'ի թիւր կարծիս և 'ի յանդուգն ըմբոստութիւնս ։

ԳԼՈՒԽ Ե.

Անպատիւ արհամարհութիւն Փոտայ: — Ութերորդ ժողով ընդհանրական:

ՆԵՆԳՈՒՊԱՏԻՐ և դառաճան հնարագիտութիւնք Փոտայ ունայնացան 'ի սպառ 'ի սատակամահ լինել Բարդասայ մօրեղբօր իւրոյ, որով և նուազեցաւ յարգ պատուոյ նորա 'ի դրան կայսեր: Իսկ յորժամ Վասիլ հայկազն սպանեալ զՄիքայէլ կալաւ զաթոռ իշխանութեանն, կամեցեալ յանդորրու ունել զեկեղեցի՝ բանտարգել արար զՓոտ 'ի մենաստան ուրեք, և վերստին հաստատեալ զսուրբն Իգնատիոս յաթոռ պատրիարգութեանն, յղեաց դեսպանս առ պապն Ադրիանոս Բ, ստիպել զնա բառնալ 'ի միջոյ զհերձուածն՝ գումարելով ժողով ընդհանրական: Եւ 'ի հաւանել քահանայապետին՝ հաւաքեցաւ սինհոդոսն 'ի Կոստանդնուպօլիս յեկեղեցւոջ սրբոյն Սոփիայ, և սկսաւ 'ի հինգերորդ աւուր հոկտեմբերի յամին 869, և կատարեցաւ 'ի 28 փետրուարի յամին 870: Եւ թէպէտ Փոտ 'ի ձեռն կուսակցացն և հնարիմաց ճարտարութեամբ իւրով կարծէր անպարտ և անբասիր երևել ժողովելոցն, սակայն ընկեցաւ նա յաթոռոյ և բանադրեցաւ, և կացուցաւ 'ի տեղի նորա սուրբն Իգնատիոս: Յետ այնորիկ սահմանեցան քսան և օթն կանոնք՝ ըստ կարևորագոյն թուոյ պատշաճեալք 'ի դարման հերձուածոյն եղելոյ 'ի բռնակալութենէն Փոտայ: Ի վախճան ժողովոյն եղև մանրամասն և ընդարձակ դաւանութիւն հաւատոյ, և նզովեցան հերետիկոսք և առանձինն միակամադաւանք և պատկերամարտք: Ապա միաբան հաւանութեամբ հաստատեցան եօթնեքին նախընթաց տիեզերական սինհոդոսք, յորս յաւելաւ և յետինս այս ութերորդ: Նստին 'ի ժողովին երեք դեսպանք պապին, պատրիարգունք Կոստանդնուպօլսոյ, Աղեքսանդրիոյ, Անտիոքայ և Երուսաղեմի, և հարիւր վաթսուն և երկու հայրապետք: Եւ նուազութեան թուոյ եպիսկոպոսաց այն են պատճառք, զի Փոտ զյոգունս յեպիսկոպոսաց՝ որք ձեռնադրեալ էին 'ի նա-

խորդաց իւրոց՝ մերժեալ յաթոռոյ, ինքնին կարգեալ էր 'ի տեղի նորա զայլ, զորս ժողովն ոչ ընկալաւ իբր օրինաւոր հովիւ ։

ԳԼՈՒԽ Զ․

Հաստատել միւսանգամ Փոտայ յաթոռ պատրիարգութեան ։

ԿԱՐԻ *սակաւատև եղև միաբանութիւն արևելեան եկեղեցւոյ ընդ արևմտեայց, զոր հաստատեաց ութերորդս այս ժողով Կոստանդնուպոլսոյ ։ Զի երանելի պատրիարգն Իգնատիոս՝ լի աւուրբք և առաքինութեամբ ամաց հասակին վախճանեալ զկեանսն յամին* 878, *Փոտ որ 'ի մենաստանի անդ իւրում ամենայն հնարիւք խնդրէր հաճոյ լինել յաչս կայսեր, նորօրինակ հնարիւք 'ի գլուխ տարաւ զայն․ քանզի յօրինեաց սուտյօդ ազգաբանութիւն ինչ, յորում ցուցանէր զնա լինել 'ի սերնդոց Տրդատայ արքայի Հայոց ։ Յաւելոյր գուշակել 'ի նմին, թէ տէրութիւն նորա հանդերձեալ է լինել կարի բարեբաստ և երկարատև քան զկայսերացն ամենեցուն որք կացին յառաջ քան զնա ։ Զայս գործ իւր մատենագրեաց հին գրչութեամբ 'ի վերայ սևացեալ մագաղաթի, և ապա պատեալ զայն պահարանաւ հնագիր մատենի, ետ դնել յարքունի գրատան 'ի ձեռն Թէոփանեայ գրապետի խորհրդակցի իւրոյ․ և նորա պատեհ գտեալ եցոյց կայսեր զմատեանն ։*

Ի *տեսանել Վասլի զգիրսն, ցանկացեալ խմանալ թէ զինչ ինչ իցեն 'ի նմա, յաւելին ասել ցկայսրն եթէ Փոտ և եթ կարէ ընթեռնուլ և մեկնել զմատեանն․ յորմէ շարժեալ կայսեր կոչեաց զնա յարքունիս ։ Յայնժամ Փոտ շողոմաբար բանիւք յինքն ձգեալ զՎասիլ և զիշխանսն ամենայն, վերստին հաստատեցաւ յաթոռ պատրիարգութեան յամի տեառն* 879 ։ *Եւ վաղվաղակի ետ գումարել 'ի Կոստանդնուպոլիս ժողով իբր 'ի չորեքհարիւր եպիսկոպոսաց, որոց միաբանեալ արդարացուցին զՓոտ յամբաստանեալ յանցանաց նորա ։ Յայս ժողով դեսպանք պապին Յովհաննու Ը․ պատրեալք 'ի Փոտայ՝ ձեռն եդին ամենայնի զոր միանգամ առաջի արարին նոցա․ 'ի վճարել ժողովոյն եղև գաւա-*

նութիւն հաւատոյ սահմանեալն 'ի Նիկիա, բացատրեալ և հաստատեալ 'ի վեցեցունց ընդհանուր ժողովոց որք գումարեցան յետ ժողովոյն Նիկիոյ. իսկ ութերորդն' որ եղև ինն ամօք յառաջ, մերժեցաւ և դատապարտեցաւ, և փոխանակ նորա համարեցան Յոյնք ամենայն զյետինս զայս ժողով: Ի ձեռն այսպիսի նենգութեան գուն գործեաց Փոտ հիմնել զաւաղելի հերձուածն որ բաժանեաց զբազումս 'ի կենդրոնէ միութեան եկեղեցւոյ, ընդ որում միացեալ էին երբեմն:

Կրկին եղեն հնարք դաւանոյն Փոտայ առ 'ի գլուխ հանել զայս բաժանումն. նախ' զի հրամանաւ կայսեր յինքն գրաւեալ զիշխանութիւն մատակարարութեան բարեպաշտական եկամտից, ստանայր այնու իւր կուսակիցս զայնոսիկ որոց միանգամ բարերարէրն: Երկրորդ' զի էին նորա բազում աշակերտք յուսմունս արտաքին գիտութեանց, վասն որոյ 'ի հրահանգել անդ զնոսա' բռնադատէր խոստանալ ձեռնագրովք միաբան կալ միշտ ընդ նմա. որով թիկունս իւր ստացաւ զյոգունս 'ի պալատականաց, և զայլս յոլովս 'ի թեմակցաց իւրոց կարգելով եպիսկոպոսունս, միանգամայն նպաստս մատուցանելով բազմաթիւ աղքատ գերդաստանաց' սքանչալի հանդիսացաւ' որպէս 'ի յաջող ելս բաղդին նոյնպէս յարկածս անակնկալ թշուառութեանց: Թող զի խորագէտ ոմն էր նա, և առ երեսս զբարեպաշտութիւն կեղծաւորեալ յինքն որսացաւ զբազումս 'ի պարզամտաց:

ԳԼՈՒԽ Է.

Աքսոր և մահ Փոտայ:

Ի ՑԱՃԱԽԵԼ Փոտայ նորանոր հնարիւք երկփեղկել բաժանել զեկեղեցի Յունաց' քահանայապետք Հռովմայ' յաջորդք Յովհաննու ութերորդի' ջանահնար եղեն մերժել զնա յիշխանութենէն. վասն որոյ յամի 882 Մարտինոս պապ վերստին նզովեալ զՓոտ, ունայնացոյց զայն ամենայն զոր գործեալ էր նորա ցայնժամ իբրև եպիսկոպոս և պատրիարգ: Իբրև նստաւ Լևոն կայսր անուանեալն Իմաստասէր' որդի և յաջորդ Վասլի յամին 886, տեսեալ զերկպառակութիւն եկեղեցւոյ' ընկէց զՓոտ յիշխանութենէն, և տարագրեաց զնա 'ի մենաստան ուրեք, ուր մեռաւ նա և թաղեցաւ յանծանօթս։ Հերձուածն սկզբնաւորեալ 'ի նմանէ ընդ մէջ երկուց եկեղեցեաց՝ թէպէտ և դադարեցաւ յաքսորել անդ նորա, սակայն եղև սերմն ընդ հողով, որ յետոյ բուսոյց պտուղս դառնահամս ատելութեան և թշնամութեան, որ տևէ մինչև ցայժմ։

ԳԼՈՒԽ Բ.

Աղանդ Թոնդրակեցւոց, և նորոգութիւն աղանդոյ Պաւղիկեանց։

Ի ժամանակս խռովութեան պատկերամարտից երևեցաւ 'ի Հայաստան աղանդ ինչ նոր 'ի սերմանց անտի պաւղիկեան աղանդոյն։ Յամին 840 Սմբատ ոմն անուն 'ի Զարեհաւան գաւառէ աշակերտեալ պարսկի ուրումն բժշկի, ուսաւ 'ի նմանէ զարուեստ մոգութեան և զանաստուածութեան. և եկեալ 'ի գաւառն Ապահունեաց յաւանն Թոնդրակ, բնակեցաւ անդ։ Եւ թէպէտ աշխարհիկ ոք էր սա, բայց 'ի խաբել զռամիկս՝ ձևացեալ եպիսկոպոս, վարդապետէր զանհաւատութիւն։ Ուրանայր զնախախնամութիւնն Աստուծոյ և զշնորհս Հոգւոյն սրբոյ. արհամարհէր զխորհուրդս եկեղեցւոյ, ստէր զյոյս հանդերձելոյ, և ինքն կեղծաւորէր զբարեպաշտութիւն՝ անուամբ գոլով 'ի բարեկրօնութենէ։ Եւ այսպէս առ սակաւ սակաւ նենգութեամբ իւրով տարաւ իւր թևակիցս և հետևողս յարանց և 'ի կանանց, մինչև մոլորեցուցանել զբովանդակ աւանն Թոնդրակ, որ եղև որջ բնակութեան աղանդաւորացս, յորմէ և անուանեցան Թոնդրակեցիք։

Ի յայտնել չարութեան գիւտհնար աղանդոյս, յամին 847 Յովհաննէս կաթուղիկոս Ովայեցի նզովեաց զՍմբատ և զհետևողս նորա։ Եւ զի թագնաբար սերմանէին զմոլորութիւն իւրեանց, գրեաց թուղթ կաթուղիկոսն առ ամենայն առաջնորդս զգուշանալ յորոգայթից անօրինացն։ Զնոյն խնամ զգուշութեան կալան և այլ կաթուղիկոսք Հայոց մինչև ցՊետրոս Գետադարձ, ոչ միայն նզովիւք դատապարտելով զաղանդաւորսն զայնոսիկ, այլ և 'ի ձեռն իշխանաց պատուհասելով զբաղումս 'ի նոսանէ ։ Սակայն և այնպէս ոչ կարացին 'ի սպառ ջնջել զարմատ և զցեղն նոցա, այլ սփռեցան գաղտ և յաւանսն Թոնդրակ և 'ի Խնուն կամ Խնուս, ուր բազմացեալ առաւելան 'ի չարութիւն և յամենայն ազգս պղծութեանց ։ Յամի տեառն 1002 յորոգայթ մոլորութեան սոցա ըմբռնեցաւ և առաջնորդն Հարքայ Յակոբոս եպիսկոպոս, որ և կեղծաւորեալ խստակրօն վարուք որսաց զմիտս բազմաց և սկսաւ քարոզել զանաստուածութիւն ։ Ի թիւր վարդապետութենէ անտի նորա ծագեցաւ խռովութիւն մեծ 'ի մէջ ազգիս Հայոց ․ վասն որոյ Սարգիս կաթուղիկոս քաղցրութեամբ կոչելով զնա առ ինքն, յետ ստուգելոյ զամենայն ամբաստանութիւնն՝ զրկեաց զնա յամենայն իշխանութենէ և 'ի պատուոյ, և արկ 'ի բանտ ․ բայց յետ սակաւուց գաղտնի հնարիւք զերծեալ նորա 'ի բանտէ, փախեաւ 'ի Կոստանդնուպօլիս, և անտի գնաց 'ի Թոնդրակ, ուր առեալ եղեալ և իւրոց աղանդաւորաց՝ մեկնեցաւ անտի և յարեցաւ առ աղանդի մանիքեցիս, և անդ սատակեցաւ չարաչար մահուամբ ։

Ի նմին մետասաներորդի դարու յաւուրս կաթողիկոսութեան Պետրոսի Գետադարձի զնոյն աղանդ մոլորութեան վերստին յարուցին և անօրէնք ոմանք, բայց Գրիգոր Մագիստրոս՝ որ ունէր յայնժամ զդքսութիւն Միջագետաց՝ խնամ կալաւ ամենայն փութով սրտութեամբ ջնջել և անհետ առնել զյիշատակ նոցա 'ի հայաստան աշխարհէ՝ քանդելով զաւանն Թոնդրակ և զայլ որջս նոցա, յորս գաղտ թաղուցեալ կային ։ Տեւեաց աղանդս իբր զամս երկերիւր, որպէս յայտ առնէ և ինքն Գրիգոր Մագիստրոս։

Զոր ինչ միանգամ գործեցին Թոնդրակեցիք 'ի Հայս, զնոյն առաւելութեամբ արարին համախոհք նոցա ընդ ամենայն սահմանս տէրութեան Յունաց ։ Նորէն աղանդաւորքս՝ ծնունդք Պաւղիկեանց, որոց ծագումն եղև յեօթներորդի դարու, որպէս յիշեցաք անդ, յամի իբր 804 պատճառս և թիկունս իւրեանց առեալ զմեղկ գնացս Նիկեփորոսի կայսեր՝ վերստին սկսան բազմանալ և ծաւալիլ յամենայն տեղիս ։ Նոքին և անգոսնէին զամենայն կրօնս բարեպաշտութեան, թշնամիք էին խաչին Քրիստոսի, և անարգանօք արհամարհէին զայն . սակայն յախտանալ անդ ուրուք՝ առեալ զխաչն դնէին 'ի վերայ ցաւագնեալ անդամոցն, և 'ի գտանել նորա զբժշկութիւն խորտակէին զխաչն:

Ի յաճախել թուոյ նոցա և 'ի բազմանալ անկարգութեանց, թագուհին Թէոդորա՝ մայրն Միքայելի կայսեր մանկան, զոր օրինակ խնամ կալաւ անհետ առնել զպատկերամարտս, նոյնպէս զինեցաւ սաստիկ և ընդդէմ Պաւղիկեանց: Վասն որոյ յամին 845 տեսեալ թէ նզովք և պատուհասք՝ եկեղեցւոյ ոչ ինչ զօրեն ընդդէմ բազմութեան արանց անսաստից և մոլեգնելոց, պատշաճ համարեցաւ վարել զիշխանական գաւազան տէրութեան. Նմին իրի յերևելի քաղաքս Ասիոյ կարգեաց ատենակալս հետամուտ լինել աղանդաւորացս, պատուէր տուեալ նախ առաջին յորդորել զնոսա դառնալ 'ի մոլորութենէ, և յանսաստել նոցա՝ բանտարգել առնել. իսկ զառաւել յամառսն և զլրբս բառնալ և 'ի կենաց: Ապաքէն ախտ մոլորութեանն կարի դժնդակ էր և արժանաւոր պատուհասից, բայց սաստկութիւն սպեղանեացն և պաշտօնեայք իշխանութեանն Թէոդորայ անցին ըստ չափ օրինաց գթու՟ն. զի զայրացեալք յամառութենէ մոլորելոցն՝ սկսան վարիլ ընդ նոսա իբր զբռնաւոր հալածիչս, և ոչ որպէս քրիստոնեայ նախանձաւորս: Զբազումս 'ի նոցանէ հանին 'ի խաչ, և զայլս յոգունս անողորմ տանջանօք սպանին. յորոց իբր հարիւր հազարք մեռան 'ի տանջանս պատուհասից, իսկ 'ի մնացելոցն քառասուն հազարի չափ խոյս տուեալ անկան առ Հագարացիս, և միացեալք ընդ նոսա դաշնակցութեամբ՝ եղեն անհաշտ թշնամիք կայսերութեան, քանզի զինուորեալք ընդ դրօշակաւ ամիրապետաց՝ զուն գործեցին կործանել զպետութիւնն: Յարձակեցան սպա 'ի սահմանս կայսերութեանն սպանանել, կողոպտել և աւար հարկանել զամենայն յանխնայ:

ԳԼՈՒԽ Թ․

Մոլորութիւնք յարեմուտս։

ԸՆԴ այն ժամանակս յորում արեւելք տագնապէին յերեսաց բուռն մոլեգնելոց, զնոյն տագնապ խռովութեան կրեցին եւ արեւմուտք 'ի հերետիկոսաց յարուցելոց յայլ եւ այլ տեղիս։ Կղօդիոս եպիսկոպոս Տաւրինոյ նորոգեաց զմոլորութիւնս Վիգիլանտիոսի որ վասն յօգնութիւն կոչելոյ զսուրբսն Աստուծոյ, որպէս եւ վասն յարգութեան պատկերաց։ Մոլորութիւնք սորա համաձայն էին գոգցես վարդապետութեանցն զորս յետ ժամանակաց ջանահնար եղեն հաստատել Կալվինականք, բայց առ ժամն չեղեն կարի վնասակարք։

Նոյնպէս եւ Բողոքարկուք կամ Բրոթէսթանթք յետին դարուց՝ առ ժամանակօքս կարապետ մոլորութեան իւրեանց ստացան զՅովհաննէս Սկոտոս որ յաւուրս Կունդն Կարոլոսի արկ զսերմանս մոլար կարծեաց եւ երկբայութեան 'ի վերայ իսկական ներկայութեան Քրիստոսի 'ի սուրբ հաղորդութեան, որպէս եւ 'ի վերայ նախասահմանուե̃ արդարոց եւ անարգուե̃ մեղաւորաց։ Այս խնդիր մեծ եւ կարեւոր ոչ սակաւ ժամանակս յուզեցաւ 'ի սմին դարու 'ի պատճառս զրուածոց ինչ սփռելոց 'ի Կոտեսքալքեայ միայնակեցէ Օրբայեան մենաստանի որ 'ի վիճակին Սուասոնի։ Միայնակեցս այս ամբաստանեցաւ սակս վարդապետելոյ իւրոյ՝ թէ նախագիտութիւնն Աստուծոյ բռնանալով զազատութի մարդկան 'ի գործել, փրկէ զնոսին կամ դատապարտ առնէ յակամայ կամս նոցին, որով ոմանք անդստին 'ի յաւիտենից սահմանեալ են 'ի մահ եւ ոմանք 'ի կեանս։

Մոլորամիտ կարծեացս այսոցիկ ընդդէմ զինեցան Ռաբանոս Մաւրոս արքեպիսկոպոսն Մոգունտիոյ, եւ Հինկմարոս արքեպիսկոպոս Հռեմայ. վասն որոյ եւ դատապարտեցաւ մոլորութիւնս 'ի Մոգունտիա՝ յամին 848, որպէս եւ յետ այնր յերկուսին ժողովսն գումարեալս 'ի Քերսի քաղաք յամին 849 եւ 855։ Կոտեսքալքոս միայնակեաց սակս յամառութեան իւրոյ գանակոծ պատուհասեալ արգելաւ 'ի մենաստանն ուրեք, և անդ վախճանեցաւ զկնի ամին 866։ Հինկմարոս արքեպիսկոպոս մերժեաց զնա 'ի հաղորդութենէ եկեղեցւոյ մինչ կենդանին էր, և յետ մահուն չեղև նմա թաղումն եկեղեցական. զի Գոտեսքալքոս զայրագին ցասմամբ մերժեալ էր զդաւանութիւնն հաւատոյ, զոր առաջի արարեալ էր նմա եպիսկոպոսն ձեռն դնել հաւանութեան։

ԳԼՈՒԽ Ժ.

Հինկմարոս արքեպիսկոպոս Հռեմսայ։

ՅԻՆՆԵՐՈՐԴԻ դարու ականաւոր ցուցաւ Հինկմարոս արքեպիսկոպոս ոչ միայն աստուածաբանական ուսմամբ և հմտութեամբ, այլ և օրէնսդէտ և դատաւոր կացեալ յեկեղեցական դատս որք եղեն առ իւրովք ժամանակօք, զորոց զվարան համառօտեսցուք աստանօր։

Ծնաւ յազնուական տոհմէ, և սնեալ 'ի մենաստանն սրբոյն Դիոնեսիոսի՝ ընկալաւ զքեմ կանոնիկոսի ըստ սովորութեան կրօնաւորացն որք միաբանական կեանս վարէին յայնմ արքայութեան։ Ի ժամու կալաւ բարեկարգութեան այնր մենաստանին, ուր էր սովորական իւր բնակութիւն, թէպէտ և ստէպ յաճախէր յարքունիս. մինչև յամին 844 ընտրեցաւ յարքեպիսկոպոսութիւն Հռեմսայ, որ 'ի տասն ամաց հետէ կայր անհովիւ՝ յետ զրկելոյ Եբբոնի յաթոռոյ անտի։ [illegible] վիճակի խնամարկու եղև Հինկմարոս ամենայն պատուով ընդ ամս երեսուն, պահելով զայն 'ի բարեկարգութե՛ զարմանալի արիութեամբ ընդդէմ աշխարհական իշխանաց, և յիւր իրս ընդդէմ հաճութեան իսկ քահանայապետացն Հռովմայ։

Եռանդն նախանձու բարեպաշտութեան Հինկմարոսի՝ պատճառք եղև դժտութեան ընդ Հռոթադոսի եպիսկոպոսին Սուասոնի. զորմէ ամբաստան եղև 'ի միում ժողովի գումարելոյ հուպ 'ի Սէնլի՝ յամին 863, և կամէր ընկենուլ զնա յաթոռոյ, զրպարտեալ զնա՝ որպէս եթէ վատնեալ իցէ զստացուածս եկեղեցւոյ, վաճառելով զայնոսիկ և դնելով 'ի գրաւ զսուրբ անօթս և զայլ կաշս ։ Յաւել 'ի սոսին և զայն թէ յանիրաւի զրկեալ իցէ զքահանայս զոմն 'ի պաշտամանէ, և թէ չիցէ կամեցեալ անդրէն հաստատել զնա յառաջին պաշտօնն՝ հակառակ կալով հրամանաց և վճռոյ առաքելակաթոռին ։ Յետինս այս ամբաստանութիւն էր արդարև պատճառք գժտութեան նոցա․ զի Հինկմարոս անչափ նախանձայուզութեամբ պաշտպան կացեալ իւրոյ իրաւանց՝ յարոյց կռիւ ընդդէմ Հռոդադոսի ։ Զանգոսնեալ սորա զի մի գուցէ Հինկմարոս զրկեսցէ զնա 'ի պատուոյն, քանզի և ձեռնհաս իսկ էր, բողոք կալաւ առ սուրբ գահն Հռովմայ, և խնդրեաց հրաման գնալոյ 'ի Հռովմ․ սակայն թելադրութեամբ Հինկմարոսի արգել զնա արքայն Գաղղիոյ Կարոլոս Կունդն՝ կոչեալ 'ի դատ յայլ ժողով 'ի Սուասոն քաղաք․ ուր չկամելով երևել Հռոդադոսի՝ ընկեցաւ յաթոռոյ, և արկաւ 'ի բանտ․ փոխան որոյ կարգեցաւ այլ եպիսկոպոս 'ի տեղի նորա ։ Զայն ամենայն լուեալ քահանայապետին՝ Նիկողայոսի զայրացաւ յոյժ ընդ գործս ժողովոյն, զի առանց ակն ածելոյ 'ի պատուոյ և յիշխանութենէ սրբոյ աթոռոյն, առ որ բողոք կալեալ էր Հռոդադոս, համարձակեցան գործել զայն․ փոխան որոյ գրեաց թուղթ կշտամբանաց առ Հինկմարոս, և աղաչեալ զթագաւորն ետ ածել զՀռոդադոս եպիսկոպոս 'ի Հռովմ․ ուր յետ քննութեան 'ի միում ժողովի գումարելոյ յամին 864 կարգեաց զնա դարձեալ յիշխանութեանն, որով դարձ արար նա վերստին 'ի Գաղղիա յիւր վիճակ, խնդամիտ ընդունելութեամբ այլոց եպիսկոպոսաց․ քանզի և վաձանեալ էր այն որ փոխանակ նորա ունէր զաթոռ իշխանութեանն ։

Առաւել բուռն և երկարատև եղև կռիւն և հակառակութիւն Հինկմարոսի 'ի պատճառս եղբօրորդւոյ իւրոյ եպիսկոպոսին Լայոն քաղաքի, որ նոյնպէս Հինկմարոս անուանէր ։ Սա անխոհեմ և անիրաւ վարուքն ատելի եղեալ կղերցն և ժողովրդեան՝ ամբաստանեցաւ առ թագաւորն Կարոլոս Կունդ․ և յամին 868 'ի կոչիլն յարքայէ յատեան ժողովոյ, չկամեցաւ նա անսալ հրամանին անդէպ իմն վարկուցեալ՝ զի եկեղեցական ոք յանդիման լիցի աշխարհական ատենի ։ Վասն որոյ Կարոլոս իբրև կամեցաւ արքայ գրաւել յարքունիս զամենայն եկամուտս նր̃, Հինկմարոս արքեպիսկոպոսն Ռեմսայ պաշտպան կացեալ եղբօրորդւոյ իւրում, արգել զգրաւումն ստացուածոց նորա մինչև ցքննութիւն և 'ի դատաստան օրինաւոր դատաւորաց վճռակին.

Բայց սակայն քննութիւն և վճիռ դատաւորացն այնոցիկ անհաճոյ եղեալ եպիսկոպոսին Լայոնի, գրեաց գաղտ առ պապն Ադրիանոս՝ ամբաստան լինելով զԹագաւորէն իբրև զաւարառու ստացուածոց եկեղեցւոյ. Զայն լուեալ Կարոլոսի և զայրացեալ ընդ գործն, կոչեաց զնա առ ինքն. և 'ի չանսալ նորա, մանաւանդ թէ 'ի յանդգնիլն նզովս սպառնալ ընդդէմ Թագաւորին, խորհեցաւ Կարոլոս յամին 869 գումարել ժողով 'ի Վերբերիա, յորում գտան քսանևինն եպիսկոպոսունք ընդ Թագաւորին, և նախագահ ժողովոյն բազմեցաւ Հինկմարոս արքեպիսկոպոսն Ռեմսայ. Յայն ժողով եպիսկոպոսն Լայոնի ստիպեալ յանդիմանն լինել, իբրև ոչ կարաց 'ի չքմեղս լինել, բողոք կալաւ առ պապն և խնդրեաց հրաման գնալ 'ի Հռոմ և անդ վարել զդատ իւր. բայց ոչ ոք ունկն մատոյց բանիցն, այլ ներողամիտ գտեալ առ ժամն՝ յապաղեցին տալ զվճիռ պատուհասին. Թէպէտ և չէր իսկ արժանի և այնմ ներողամտութեան՝ որպէս յայտնի եցոյց 'ի յետին գործոց անտի իւրոց. Զի զկնի սակաւուց սրտմտեալ նորա 'ի վերայ զղերց իւրոց որք անգոսնէինն զնա՝ նզովեաց զամենեսին, և ընդ բանիւ արար զհամօրէն վիճակ իւր. արգել զպատարագելն և զմկրտել, որպէս և զմատակարարութիւն խորհրդոց հաղորդութեան և ապաշխարութեան առ հիւանդս, և զթաղումն մեռելոց.

Անիրաւ նզովից նորա արժանի պատուհաս համարեալ Թագաւորին, բանտարգել արար զնա ուրեք յիւրում վիճակի. բայց յետոյ միջնորդ և աղերսարկու լինելով վասն նորա արքեպիսկոպոսին Ռեմսայ՝ առեալ 'ի նմանէ զուխտ և զերդումն հաւատարմութեան, ետ արձակել զնա 'ի կապանացն. Սակայն և այնպէս ապաշնորհ եղեալ նորա առ բարերարն իւր, ընկալաւ 'ի հաղորդութիւն եկեղեցւոյ զմերժեալսն յարքեպիսկոպոսէն յազգակցէ իւրմէ, որպէս և զեկեղեցական ոմն զառաջարկեալն 'ի նմանէ՝ չկամեցաւ ձեռնադրել. ապա այնչափ վշտացոյց զնա նորանոր անկարգութե̃ք, մինչև բռնադատիլ արքեպիսկոպոսին գումարել ժողով յԱտտինի քաղաք յամին 870, և կոչել զնա անդր։ Ի կըշտամբիլ անդ եպիսկոպոսին Լայոնի՝ խնդրեաց վերստին 'ի ժողովոյն հրաման երթալ՝ 'ի Հռովմ. և զի ամբաստանութիւնքն զնմանէ էին սակս անհնազանդութեան առ թագաւորն և առ արքեպիսկոպոս իւր, միաբանգամ խոստացաւ երդմամբ հպատակել նոցա յամենայնի. բայց կասկածելով նորա թէ հարք ժողովոյն չիցեն իւր նպաստաւորք և բարեկամք, խոյս ետ գաղտ և գնաց միաբանել ընդ մեծին Կարոլոսի, որոյ ապստամբեալ 'ի հօրէ իւրմէ՝ թիկունս օգնականութեան խնդրեալ էր 'ի քահանայապետէն Հռովմայ։

Կարոլոս արքայ զայրացեալ յոյժ ընդ այն գործ եպիսկոպոսին Լայոնի, ետ գումարել ժողով 'ի Տուզի աւան որ 'ի վիճակին Հռեմայ յամին 871. յորում գտան քսան եպիսկոպոսունք, և նախագահ բազմեցաւ արքեպիսկոպոսն Հինկմարոս։ Յայն ժողով յանդիման ածան ամենայն յանցանք եպիսկոպոսին Լայոնի քաղաքականք և եկեղեցականք, որոց չկամելով կամ չկարելով առնել պատասխանի՝ անընդհատ բողոքէր երթալ 'ի Հռովմ. վասն որոյ տեսեալ ժողովոցն զյամառութիւն նորա, նզովեալ ընկեցին զնա յաթոռոյ, և գրեալ թուղթ 'ի Հռովմ առ պապն՝ խնդրեցին զհաստատութիւն դատակնքոյ իւրեանց. և ապա զեպիսկոպոսն պարտաւոր արկին 'ի բանտ, և յետ սակաւուց բրեցին զաչս նորա գաղտնի հաւանութեամբ արքային։

Զայս ամենայն լուեալ Ադրիանոսի քահանայապետին՝ զանգատս ծանունս կալաւ առ թագաւորն և առ եպիսկոպոսունս ժողովոյն. միանգամայն խնդրեաց՝ զի ըստ անընդհատ թախանձանաց և բողոքման եպիսկոպոսին Լայոնի՝ պահպանութ՟բ զօրականաց առաքեսցի նա առ ինքն 'ի Հռովմ։ Եւ զի նամակ զանգատանացն կարի խիստ էր և դառն, զայրացեալ թագաւորին՝ խստագոյնս արար պատասխանի, մինչև հարկեցաւ քահանայապետն մեղմել զխստութիւն բանից իւրոց։ Իսկ յաջորդ նորա Յովհաննէս ութերորդ՝ փութացաւ արդարացուցանել զդատակնիք ժողովոյն որ 'ի Տուզի՝ իբր համաձայն կանոնական իրաւանց։ Եւ յորժամ գնաց սա 'ի Գաղղիա, ետ գումարել ժողով յամին

878, ուր եկն և եպիսկոպոսն Լայոնի բողոք ունել զհօրեղբօրէն իւրմէ զարքեպիսկոպոսէն Հռեմսայ և զեպիսկոպոսացն որք պատժապարտ արարին զնա. միանգամայն խնդրեաց 'ի պապէն վերստին հաստատել զինքն յաթոռ իշխանութեան իւրոյ: Այլ քանզի եպիսկոպոսն որ փոխանակ նորա ունէր զաթոռն արժանաւոր ոք էր և մեծարոյ՝ չկամեցաւ պապն մերժել զնա յաթոռոյ անտի, այլ հաճեցաւ տալ նմա հրաման պատարագելոյ, և լինել բաժանակից մասին եկամտից այնր աթոռոյ. բայց նուագք եղեն աւուրք վայելելոյ նորա յայն, զի 'յետ սակաւուց վախճանեաց զկեանս:

Նոյնպէս և արքեպիսկոպոսն Հռեմսայ յետ մահու եղբօրորդւոյն իւրոյ՝ 'ի դիմել Նորմանդացւոց մինչև 'ի Հռեմս քաղաք, խոյս ետ յԷպառնա, և մեռաւ անդ յամին 882, ծանրացեալ և լի աւուրբք, կալեալ զիշխանութիւն տեսչութեանն զամս աւելի քան զերեսուն և եօթն: Մնեալ 'ի միակեցական վարս՝ էր այր առաքինի և ըստ չափն նախանձախնդիր բարեկարգութեան և իրաւանց եկեղեցւոյ իւրոյ. որով պատճառք եղև ուղղութեան վարուց եկեղեցականաց, ժողովրդեան և իշխանաց. արիութեամբ իւրով գիտաց և ընդդէմ կալ նոցա որ ուրեք օգուտ եկեղեցւոյ և բարի վարուց յայն զնա յորդորէր:

ԳԼՈՒԽ ԺԱ.

Բանակռուութիւնք 'ի վերայ սրբոյ Հաղորդութեան:

ՅԱՄԵՆԱՅՆ հակառակութիւնս որք յուզեցան յայսմ դարու, ծանրագոյն էր խնդիրն որում պատճառք եղեն Ռադբերտոս Պասքասիոս միայնակեաց և աբբայ մենաստանին Կորպիոյ՝ գրովքն որ Յաղագս մարմնոյ և արեանն Քրիստոսի, զոր յօրինեաց յամին 831 'ի հրահանգել զպատանիս Սաքսոն դաստիարակեալս յիւրումն մենաստանի: Յայնմ ճառի այնպէս պայծառ նկարագրէ զիսկական գոյութիւն Քրիստոսի 'ի Հաղորդութեան, զի բանք նորա և վարդապետութիւնք ընկալեալք եղեն իբրև ըստ ամենայնի համաձայնք սահմանաց կաթուղիկէ եկեղեցւոյ: Եւ զի 'ի հրահանգս մանկուսոյն յօրինեալ էր զգիրսն, զվարդապետութիւն իւր համեմատէ կաթին ՚ի սնունդ տղայոց։

Յետ իրր երեսուն ամաց ՚ի լոյս ընծայելոյ այնր գրոց, Փրուդեգարդոս ոմն կրօնակից նորա և բնակակից՝ առաջի արար Պասքասիոսի երկբայութիւնս ինչ ՚ի վերայ խնդրոց այնր վարդապետութեան. և Պասքասիոս ուշադիր քննութեամբ հետազօտեալ զայնոսիկ, ջանահնար եղև հաստատել՝ թէ ՚ի սուրբ խորհուրդ հաղորդութեան մարմինն Քրիստոսի է նոյն իսկ ինքն որ ծնաւ ՚ի սրբոյ Կուսէն, խաչեցաւ և յարեաւ. թէպէտ և յետ սրբագործութեանն տակաւին երևեսցի տեսիլ հացի և գինւոյ, սակայն է իսկապէս մարմին և արիւն Քրիստոսի։

Զայս ողջամիտ վարդապետութիւն թէպէտ և դաւանէին ամենայն ուղղափառք և նախ քան զհրատարակութիւն Պասքասիոսի, խոստովանելով զիսկական ներկայութիւն Քրիստոսի և զգոյափոխութիւն հացին և գինւոյ ՚ի մարմին և յարիւն նորա, բայց քանզի չէին սովոր մեկնօրէն ասել՝ եթէ մարմին Քրիստոսի ՚ի սուրբ հաղորդութեան՝ իցէ նոյն մարմինն կերպացեալ յարգանդի Կուսին, խաչեալ և յարուցեալ, վասն որոյ եղանակ բացատրութեանս անախորժ թուեցաւ ոմանց ՚ի մատենագրաց։ Իսկ զի տարաձայնք էին ՚ի միմեանց կարծիք երևելի արանց այնր ժամանակի, ոչ եթէ ՚ի վերայ ուղղափառ դաւանութեան, այլ ՚ի վերայ բառից ինչ և եղանակի բացատրութեան, նմին իրի բազմադիմի ձայնք հանդիպացան ՚ի հակառակութիւն և ՚ի ջատագովութիւն բացատրութեանն զոր ՚ի կիր արկեալ էր աբբայն Պասքասիոս։

Յայնմ բանակռուութեան նշանաւոր գտաւ Ռատրամնոս միայնակեաց, որ գրեաց ճառ ինչ Յաղագս մարմնոյ և արեան Քրիստոսի։ Վարդապետութիւն նորա ողջամիտ է ըստ ասելոյ ոմանց, և նշանաւոր հերետիկոսաց՝ ըստ վկայելոյ այլոց։ Յայն գիրսն ձգնի ցուցանել՝ թէ մարմին և արիւն Քրիստոսի ընկալեալքն ՚ի հաւատացելոց՝ եթէ նկատեսցին ըստ երևելի և արտաքին տեսակաց հացի և գինւոյ, թէպէտ են օրինակք և յիշատակք, սակայն տիրապէս մարմին և արիւն են Քրիստոսի կարողութեամբ բանին Աստուծոյ։ Իսկկրորդ՝ թէ մարմին փրկչին ոչ յինքեան ըստ գոյացութեան, այլ ըստ եղանակի լինելութեան զանազանի 'ի մարմնոյն Քրիստոսի՝ որպէս էրն յերկրի, և որպէս էն յերկինս առանց քօղոյ և օրինակի։

Արդ քանզի Ռատրամնոս ոչ այնպէս պարզ և որոշ մեկնաբանէ զայն խորհուրդ, որպիսի օրինակաւ վարեցաւ Պասքասիոս, ողջամիտքն 'ի վարդապետս՝ ոչ սակաւ ժամանակս յերկմիտս էին 'ի դատս գրոց նորա։ Բայց յետոյ մերժեցաւ 'ի ժողովոյն Տրիդենտեայ՝ իբր նպաստաւոր համարեալ մոլորութեան Կալվինականաց, թէպէտ և այլք ականաւորք պաշտպան կացեալ էին այնմ իբր ողջամիտ վարդապետութեան։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Քահանայապետք Հռովմայ։

ՀԱՆՐԱԿԱՆ իշխանութիւն քահանայապետաց Հռովմայ իբր նախագահ դատաւորաց կաթուղիկէ եկեղեցւոյ՝ թէպէտ և ծանուցեալ էր միշտ ընդ տիեզերս ամենայն, բայց 'ի զօրանալ մեծին Կարոլոսի և 'ի լինել կայսր արևմտեան՝ մեծապէս ճոխացաւ ձեռնտուութ՟բն, որպէս չէր յառաջ յիշխանութ՟ անդ արևելեան կայսերաց։

Քահանայապետք իններորդի դարու եղեն՝ սուրբն Լևոն Գ. հռովմայեցի, որ նստաւ յամին 795 և եկաց զամս քսան և զամիս վեց։ Էր սա այր առաքինի և սրբակրօն 'ի մանկութենէ անտի իւրմէ. բայց զի ազգականքն նախորդին իւրոյ թշնամութեամբ էին ընդ նմա, ոչ դոյզն վշտաց տարաւ առ 'ի նոցանէ, մինչև մեծին Կարոլոսի կոչել զնա առ ինքն 'ի Գերմանիա, և առ սա փառօք դարձուցանել անդրէն 'ի Հռովմ, և հաստատել յաթոռ իւր. վասն որոյ 'ի շնորհս երախտեաց Կարոլոսի՝ յամին 800 քահանայապետն Լևոն պսակեաց զնա կայսր արևմտեան։ Յաւուրս սորա յամին 801 սահմանեցաւ թափոր երեքօրեայ պաղատանաց նախ քան զտօն համբարձմանն Քրիստոսի 'ի պատճառս երկնաւոր պատուհասից և սասանման երկրի յաճախելոց 'ի կողմանս Եւրոպայ. նոյնպէս կարգեաց յարևմտեան եկեղեցւոջ և զտօն վերափոխման Կուսին։

Ընդ քահանայապետութեամբ սորին Լեւոնի երրորդի եկեղեցին Գաղղիոյ ինքնակամ հաճութեամբ սկսաւ յաւելուլ 'ի հանգանակին հաւատոյ և զբանն և յորդւոյ. զոր յամին 809 հաստատեցին 'ի ժողովն Աքուիսգրանա քաղաքի։ Եւ 'ի կամել մեծին Կարոլոսի առնուլ զհաստատութիւն այնր և 'ի սրբոյ աթոռոյն, սուրբն Լեոն քահանայապետ հրաժարեցաւ առնել զայն յաւելուած, ոչ եթէ յերկմիտս ինչ լինելով զճշմարտութենէ իրացն, այլ զի չկամէր ինքնորէն առանց ընդհանուր ժողովոյ յաւելուլ ինչ 'ի հանգանակն՝ վասն որոյ 'ի պահել զհնութիւն նորա ետ փորագրել զայն առանց յաւելուածոյ՝ յերկուս արծաթի տախտակս, 'ի միումն լատիներէն՝ և 'ի միւսումն յունարէն. զորս և հրամանեաց կախել առ գերեզմանի սրբոյն Պետրոսի։

Ի յետին ամս քահանայապետութեան նորա յարեաւ ապստամբութիւն 'ի Հռոմ ընդդէմ սրբոյն, զոր 'ի խաղաղացուցանել արդարակորով արիութեամբն ետ սպանանել զգլխաւորս քաղաքին. և 'ի ստգտանելն զնա Լուդովիկոսի Պիոսի արքային Գաղղիոյ վասն այնր գործոյ, արդարացոյց զոր արարն, և ապա յամին 817 հանգեաւ 'ի Քրիստոս։

Յետ նորա 'ի նմին ամի կալաւ զաթոռն Ստեփանոս Դ. Հռոմայեցի զամիս իբր ութ։ Ի սակաւօրեայ աւուրս քահանայապետութեան իւրոյ յօժարեցաւ գնալ 'ի Գաղղիա և ընդունել զհաստատութիւն ընտրութեան իւրոյ, և անդ զԼուդովիկոս Պիոս արքայ Գաղղիոյ օծ 'ի կայսր արեւմտեան, և դարձեալ անդրէն 'ի Հռոմ յետ երից ամսոց վախճանեցաւ զկեանսն։

Զկնի նորա յամին 817 ընտրեցաւ յաթոռ քահանայապետութեան սուրբն Պասքաղէս Ա. Հռոմայեցի. այր հոգևոր, ճգնաւոր, պահեցող, աղքատասէր և գորովագութ առ պանդուխտս, որ և կալաւ զաթոռն զամս եօթն։ Ի յետին ամի քահանայապետութեան նորա Կղոթարիոս որդի Լուդովիկոսի Պիոսի եկն 'ի Հռոմ, և օծաւ 'ի նմանէ կայսր արեւմտեան։

Յետ Պասքաղեսի յամին 854 կալաւ զաթոռն Եւգինէս Բ. Հռոմայեցի. և թէպէտ Զիզինոս ոմն կամեցաւ յինքն գրաւել զիշխանութիւն, բայց Կղոթարիոսի կայսեր անդէն ժամանեալ 'ի Հռոմ խաղաղացոյց զաղմուկն, և հաստատեաց զԵւգինէս յաթոռ քահանայապետութեան։ Միանգամայն սահմանեաց կանոն, զի ընտրութիւն քահանայապետաց լինիցի 'ի նոցանէ ևեթ՝ որք ունիցին իրաւունս ընտրութեան, և ոչ յօտարաց. Եւգինէս եկաց յիշխանութեան զամս երիս և զամիս ինչ։

Ապա յամին 827 ընտրեցաւ Վաղենտինոս հռովմայեցի. այլ սակաւօրեայ եղեն կեանք նորա, զի վախճանեցաւ զկնի քառասուն աւուրց, և աթոռն մնաց 'ի պարապութեան զամիս ինչ։

Ապա կալաւ զաթոռն Գրիգոր Դ. հռովմայեցի, որ ոչ սակաւ վշտաց տարաւ յիշխանութեան անդ իւրում 'ի պատճառս բազմապատիկ աւերութեանց զոր արարին Սարակինոսք յԻտալիա։ Ամրացոյց զՕստիա քաղաք գրաւեալն 'ի Սարակինոսաց. և յամին 833 ըստ խնդրոյ Կղոթարիոսի գնաց ընդ նմա 'ի Գաղղիա լինել միջնորդ հաշտութեան ընդ հօր իւրում Լուդովիկոսի Պիոսի, բայց ոչ կարացեալ առնել ինչ և հաճել զնա, դարձաւ յետս 'ի Հռովմ, ուր և վախճանեցաւ յամին 844 կալեալ զաթոռն զամս վեշտասան։

Ի նմին ամի 844 յեօթնեւտասներորդի աւուր ամսեանն ընտրեցաւ քահանայապետ Սերգիոս Բ. հռովմայեցի, որ զառաջինն անուանէր Պետրոս. այլ առ խոնարհութեան իւրոյ կամեցաւ կոչիլ Սերգիոս, 'ի պահել զառանձնական պատիւ առաքելապետին սրբոյն Պետրոսի։ Եւ պատճառք անյապաղ ընտրութեան նորա 'ի յաջորդ Գրիգորի այն էր, զի գոյր կասկած հակառակութեան 'ի Յովհաննիսէ սարկաւագէ. այլ ազնուականք Հռովմայ խնամ կալան խափանել զպատճառս խռովութեանն. եկաց 'ի քահանայապետութեան զամս երիս։

Յաջորդ Սերգիոսի եղեւ սուրբն Լեւոն Դ. հռովմայեցի, որ կալաւ զաթոռն յամին 847, և հանքուեալ գոու 'ի քահանայապետութեան և յիշխանական տեւչութեան։ Ի պատսպարել զՀռովմ քաղաք յարշաւանաց և յաւարառութենէ Սարակինոսաց կանգնեաց պարիսպ շուրջ զարուարձանաւ տաճարի սրբոյն Պետրոսի. շինեաց զամրոց սրբոյ հրեշտակապետին, արար և զայլ բազում շինութիւնս. ճոխացոյց զզարդս տաճարի սորոյն Պետրոսի, որպէս և զայլոց եկեղեցեաց. և կացեալ 'ի քահանայապետութեան զամս ութ և զամիս երիս վախճանեցաւ յամին 855 ։ (¹)

Յաջորդ Լեւոնի եղև Բենեդիկտոս Գ. հռովմայեցի. որում հակառակապաշ կամեցաւ երևել Անաստասիոս՝ նզովեալն 'ի Լեւոնէ չորրորդէ, թիկունս իւր ունելով և զԳաղղիացիս. սակայն 'ի հասարակաց հաւանութենէ հաստատեցաւ Բենեդիկտոս յաթոռ քահանայապետութեան, և կալաւ զաթոռն իբր զամս երկու և զամիս վեց ։

Յետ հնգետասան աւուրց մահուան Բենեդիկտոսի ընտրեցաւ սուրբն Նիկողայոս Ա. հռովմայեցի. և զի Լուդովիկոս կայսր առաջիկայ էր ընտրութեան նորա, անդէն և անդ հաստատեցաւ 'ի քահանայապետութեան ։ Ծանրաբեռն և տաժանակիր եղեն աւուրք կենդանութեան նորա 'ի պատճառս հերձուածոյն Փոտայ, ընդ որում ոգւով չափ մաքառեցաւ. զնոյն արիութիւն եցոյց և 'ի պաշտպանութեան երանելւոյն Իգնատիոսի պատրիարգին Կոստանդնուպոլսոյ ։ Յաւուրս իշխանութեան նորա եղեն և այնպէս բանակռուութիւնք վասն իրաւանց վիճակին Բուլղարաց, զոր պատրիարգունք Կոստանդնուպոլսոյ զրաւեալ էին ընդ իշխանութեամբ իւրեանց ։ Համբաւեալ գտաւ քահանայապետս վասն առաքինազարդ վարուցն և հայրագութ բարերարութեան առ ամենայն կարօտեալս ։ Եւ կացեալ 'ի քահանայապետութեան զամս ինն և զամիս վեց, վախճանեցաւ յամին 867 յերեքտասաներորդ աւուր նոյեմբերի ։

Զկնի նորա 'ի նմին ամի կալաւ զաթոռն Ադրիանոս Բ. հռովմայեցի. որ կանխաւ 'ի կրկին նուագս կամակար հրաժարեալ էր 'ի պատուոյ անտի, բայց յերրորդումն նուագի բռնի յանձն էառ 'ի թախանձելոյ ամենեցուն առ հասարակ, և էր յայնժամ եօթանասուն և վեց ամաց ։ Եկաց 'ի քահանայապետութեան զամս հինգ

---

[1] Զկնի այսր քահանայապետի ոմանք 'ի թշնամանագիր մատենագրաց կարգեն զմտացածին անուն Յովհաննու՝ իբր կնոջ մարդոյ ամբարձելոյ 'ի պատիւ քահանայապետութեան. բայց բաց վկայելոյ այլոց նմանօրինակ թշնամեաց եկեղեցւոյ՝ վիպական մատենագիրքն ոչ միայն 'ի սորոյ ստապատելն, այլ և 'ի ժամանակին՝ զոր յանդգնելս կարգեն յայս միջոց, զորմէ ասացի զնէն ։

յորս երևելի հանդիսացաւ սրբական գործովն 'ի ստիպել անդ զարքայն Լոթարիոս թողուլ զհարճն և առնուլ վերստին զօրինաւոր ամուսին իւր ։

Յետ Ադրիանոսի յամի տեառն 872 կալաւ զաթոռն Յովհաննէս Ը․ հռովմայեցի զամս տասն ։ Յաւուրս սորա 'ի յաճախել խռովութեանց Իտալիոյ յերեսաց Սարակինոսաց, և Լամբերտոսի դքսին Սպոլետոյի, որպէս և Ադալբերտոսի մարգիզին Թոսկանայի, յամին 878 խոյս տուեալ քահանայապետին 'ի Հռովմայ՝ գնաց 'ի Գաղղիա, ուր զարքայն Լուդովիկոս Թըլուատ էօծ կայսր արևմտեան ։ Այս յերկրորդումն ամի զիջեալ յաղաչանս Վասլի կայսեր Կոստանդնուպօլսոյ արձակեաց զՓոտ 'ի նզովից անտի՝ որով ընդ բանիւ արկեալ էին զնա նախորդք իւր, և հաճեցաւ ընդ վերստին նստիլ նորա յաթոռ պատրիարգութե․ բայց յետ երկուց ամաց ստիպեցաւ կրկնել զնզովսն ընդդէմ Փոտայ ։ Յաւուրս քահանայապետութեան սորա կարգեցան պատիւք և իրաւունք իշխանութեան կարդինալաց եկեղեցւոյն Հռովմայ, և սահմանեցաւ թիւ նոցա լինել եօթանասուն․ իսկ պաշտամանցն՝ դատել և առնել զիրաւունս 'ի մէջ գժտելոց՝ ըստ օրինակի եօթանասուն և երկու դատաւորացն Իսրայէլի առ Մովսէսիւ ։ (¹)

Յետ մահուան Յովհաննու՝ յամի 882 ընտրեցաւ յաթոռ քահանայապետութեան Մարինոս Ա․ կալէսացի, որ երբեմն դեսպանութեամբ գնացեալ էր 'ի Կոստանդնուպօլիս վասն խնդրոյն Փոտայ ։ Ջանահար եղև սա նզովել և դատապարտել զՓոտ ։ Կալաւ զաթոռն զամիս չորեքտասան, և սահմանեաց վճռաւ զի ըն-

---

[1] Քաղցրամիտ և դիւրահաւան բնաւորութիւն քահանայապետիս Յովհաննու ութերորդի պատճառս ետ տալոյ բանջաղանացն, զոր թշնամիք եկեղեցւոյ երգիծական գրովք հանդիսացուցին ընդդէմ նորին՝ Յովհաննա և պապուհի անուանելով զնա, որպէս է տեսանել և 'ի Դրախտ ցանկալի անուանեալ գիրսն Ղազարայ Ջահկեցւոյ ։ Զի ըստ վկայելոյ ժամանակագրաց այնր ժամանակի՝ քահանայապետս կարի դիւրաւանոյ անձն էր և հեզահամբոյր՝ առանց այրական վեհանձնութեան․ յորմէ և յետին թշնամիք սորա Աթոռոյն յանդգնեցան յաւելուլ 'ի պատմութիւնս նորա զանհեթեթ առասպելն՝ ծաւալեալ 'ի բերանս բազմաբարբառ յետին դարու ։ Բայց գիտնականքն 'ի նոսա համարին զայն խիր առած և օրինակ նմանութեան քաղցր բնաւորութեան քահանայապետիս ։ (Պէրթէլ․)

տութիւն քահանայապետաց առ յայս լիցի անկախ 'ի տէրութենէ արեւմտեան կայսերաց։

Յաջորդ Մարինոսի եղեւ Ադրիանոս Գ. Հռովմայեցի, որ զամիս վեշտասան եկաց յիշխանութեանն։ Ապա յամին 885 կալաւ զաթոռն Ստեփանոս Զ. Հռովմայեցի զամս վեց։ Եւ յետ նորա յամին 891 ընտրեցաւ Փորմոսս եպիսկոպոս Փորթոյի, որ առաջին յեպիսկոպոսական վիճակէ ընտրեցաւ 'ի քահանայապետութի Հռովմայ. զի առ նախնիս հաստատեալ չէր սովորութիւն փոխել զվիճակս եպիսկոպոսաց. բայց ընտրեցաւ սա վասն իւրոց գեղեցիկ բարեմասնութեանց, վարժ և հմուտ գոլով յեկեղեցական հրահանգս։ Առաջին գործ նորա 'ի քահանայապետութեան իւրում եղեւ հաստատել զվճիռ դատապարտութեան Փոտայ։ Եւ սա 'ի գալն Առնուլփոսի արքայի 'ի Հռովմ, եօծ զնա կայսր արեւմտեան. եկաց 'ի քահանայապետութեան զամս հինգ, և վախճանեցաւ յամին 896։

Ապա նստաւ Բոնիփակիոս Զ. Հռովմայեցի, բայց վախճանեցաւ զկնի հնգետասան աւուրց։ Սմանց հակառակ համարեալ զսա, ոչ դասեն 'ի կարգս քահանայապետաց։

Յետ նորա կալաւ զաթոռն Ստեփանոս Է. Հռովմայեցի զամիս իբր չորեքտասան։ Բռնկեցաւ սա յառանձնական դատս իւր ընդդէմ Փորմոսի քահանայապետի, զորոյ զփոխադրութիւնն յեպիսկոպոսական վիճակէ 'ի քահանայապետութիւն՝ աններելի յանցանս համարեալ իբր հակառակ կանոնաց եկեղեցւոյ, ետ հանել զմարմին նորա 'ի գերեզմանէ և ընկենուլ 'ի գետն Տիբերիս։ Միանգամայն կամեցաւ ոչնչացուցանել զամենայն ձեռնադրութիւնս նորա. բայց յաջորդք իւր արդարացուցեալ՝ զՓորմոսս, արժանաւոր պատուով թաղեցին զնա։

Ապա յամին 897 ընտրեցաւ Ռոմանոս կալլեսացի, և եկաց 'ի քահանայապետութեան զամիս չորս։ Յետ նորա նստաւ Թէոդորոս Բ. Հռովմայեցի զաւուրս քանի, որում յաջորդ եղեւ յամին 898 Յովհաննէս Թ. Տիբուրացի զամս երկու։

Սակայն յաջորդութիւնք քահանայապետացս միմեանց զկնի՝ պտուղք էին խռովայոյզ դարուս, զի 'ի միջոցս իբր ութեւտասն ամաց ութ քահանայապետք կալան զաթոռ սրբոյն Պետրոսի ։

ԳԼՈՒԽ ԺԳ․

Հալածանք 'ի վերայ քրիստոնէից ։ — Յառաջադիմութիւնք քրիստոնէութեան ։

Յընդարձակ սահմանս տէրութեան աշխարհին Անգղիացւոց յութերորդի դարուն քարոզեալ քրիստոնէական հաւատոյ, յառաջադէմ զարգանայր 'ի բազում տեղիս. բայց 'ի վերջ կոյս իններորդի դարուս հաւատացեալքն 'ի Քրիստոս սկսան տանել մեծամեծ վըշտաց 'ի պատճառս ասպատակութեան Նայիշու սպարապետին արքունի զօրաց, որ յամին 877 տիրեաց քաղաքին Քանթմնի, եւ 'ի մոլեգին կատաղութենէ զօրականաց նորա կոտորեցան բազմաթիւ քրիստոնեայք ։ Զնոյն վիշտս կրեցին հաւատացեալք եւ յայլ գաւառս եւ 'ի քաղաքս Անգղիացւոց. սակայն ստուգագոյն անցք պատմութեան նոցա չեն յայտ ։

Սաստկագոյն եւս եղեն հալածանքն որոց տարան հաւատացեալք Սպանիոյ 'ի Սարակինոսաց, զի աւելի քան զհարիւր ամ տառապէին ընդ իշխանութեամբ նոցա ։ Եկեղեցին Սպանիոյ ծաղկեալ էր յոյժ ընդ այն ժամանակս. զի յամենայն երեւելի քաղաքս կային եպիսկոպոսունք, որպէս եւ յաւանս մանունս բազմութիւնք քահանայից ։ Կորդովա քաղաք ասպարէզ եկաց նահատակութեան հաւատացելոց, եւ բազում վկայք արեամբք իւրեանց պայծառացուցին զաւետարանն սուրբ. յորս հռչակաւոր հանդիսացաւ սուրբն Եւլոգիոս, որ եթող մեզ զանուանս եւ զպատմութիւն նահատակութեան երանելեացն այնոցիկ ։ Սա ինքն թէպէտ եւ լոկ քահանայ էր, բայց քրտնաջան աշխատութեամբն խնամարկու եղեւ հաւատացելոց 'ի դառնագոյն ժամանակին, մինչեւ փափաքել ամենեցուն փոխարէն նախամեծու աստուածպաշտութեանն ընտրել զնա յարքեպիսկոպոսութիւն Տոլեդոյ. սակայն կամեցաւ տէր առ ինքն կոչել զնա մարտիրոսութեամբ մինչ չեւ բարձրացեալ էր 'ի պատիւ եպիսկոպոսութեան ։ Ինչափ դառն եւ սաստիկ էր հալածումն, մինչև մաւրիտանացի Սարակինոսաց խորհուրդ ՚ի մէջ առնուլ արտաքսել ՚ի Սպանիոյ զամենայն քրիստոնեայս. բայց յետոյ հայեցեալ ՚ի նուազութիւն թուոյ իւրեանց առ համեմատութեամբ ընդարձակութեան երկրին, և զի ՚ի տարագրել անտի հաւատացելոց՝ հարկ էր անապատանալ սահմանաց տէրութեանն, ընտրեցին փոխանակ արտաքսելոյ զքրիստոնեայս աւելուլ ՚ի վերայ նոցա զհարկսն, և քանդել զբազումս յեկեղեցեաց։

Եկեղեցին Քրիստոսի յարխական նահատակութենէ սրբոց վկայից պայծառանայր ՚ի հարաւային և յարևմտեան կողմանս Սպանիոյ, որ էր ընդ իշխանութեամբ Սարակինոսաց. իսկ արևելեան մասն թէպէտ ՚ի ձեռս Գոթաց էր և զանգեալ արիոսական աղանդով, սակայն և այնպէս հաւաստիս մեծամեծս ետ անդրդուելի հաստատութեանն յուղղափառ դաւանութեան։ Իշխանք գումարելով յաճախ ժողովս ՚ի Տոլեդոն, և պաշտպան կալով եպիսկոպոսաց, ձեռնտուք եղեն պահպանութեան ուղղափառ հաւատոյ և բարեկարգութեան եկեղեցւոյ։ Թող զհոգեղէն խնամն առաջնորդաց այսր դարու որք անխոնջ վաստակօք պայծառացուցին զՍպանիա։

Բայց ՚ի վշտաց անտի որոց արևմտեան քրիստոնեայք տարան յանգթուէ՟ Սարակինոսաց, յաւելաւ և այլ պատուհաս անակնկալ. զի ՚ի վերին կողմանց Հիւսիսոյ երևեցաւ բազմուի՟ զազանամիտ արանց՝ Նորմանկան՝ Նորմանդացի անուանելոյ, որք բնակէին ՚ի ծովեզերս Դանեաց, Շուետաց և Նորվեկիոյ։ Աւազակքս այսորիկ ածին զհուր և զսուր յամենայն սահմանս քրիստոնէուե՟, կողոպտելով և աւար հարկանելով զմենաստանս և զեկեղեցիս։ Գաղղիա և Անգղիա յաւար մատնեցան աւազակութեան նոցա ժամանակս ոչ սակաւ, մինչև ՚ի հաստատել նոցա զբնակութիւն իւրեանց ՚ի գաւառն յայնոսիկ, որք և առ սակաւ սակաւ թողեալ զզազանութիւնն՝ ընկալան զքրիստոնական հաւատս։

Յայսմ իններորդի դարու լոյս աւետարանին Քրիստոսի ծագեցաւ ՚ի կողմանս Հիւսիսոյ. զի Հերիոլդոս թագաւոր Դանեաց վտարեալն յիւրոց սահմանաց՝ իբրև խնդրեաց թիկունս օգնականութեան ՚ի Լուդովիկոսէ Պիոսէ յարքայէն Գաղղիոյ, կամակար մտօք յանձն էառ և զօրէնս քրիստոնէութեան և ընկալաւ զմկրտութիւն դշխոյին հանդերձ 'ի սրբոյն Անսկարիոսէ կրօնաւորէ մենաստանին Կորբիոյ, որ և ուղեկից լեալ ընդ արքային մինչև 'ի Դանիա, եկաց առաքեալ և լուսաւորիչ այնր տէրութեան որպէս և երկրին Շուետաց։ Ի մէջ այսր դարու յամի տեառն իբր 845 յաջողեցաւ և դարձ Բուլղարաց և այլոց Սլաւեանց, որպէս և Ռուսաց 'ի հաւատս Քրիստոսի։

Այլ սոքա ազգք վայրենամիտք անգութք և ահարկուք քրիստոնէից, զորս չէր լեալ երբէք հնար մարտինուաճել. վասն որոյ խորհեցան կայսերք Յունաց բարեկամութբ̃ և քաղցրութեամբ շահել զսիրտս նոցա։ Բուլղարք և Սլաւեանք մերձաւոր գոլով սահմանաց կայսրութեան՝ դիւրանք գտան քան զՌուսս, որք որպէս աշխարհաւ հեռի էին՝ նոյնպէս և բարուքն անընդելք յոյժ. բայց մտերիմ ընտանութ̃ի Վասլի կայսեր հայկազնոյ և խնամութ̃ին զոր արար ընդ արքային նոցա Վլատիմիրայ, տալով նմա զքոյր իւր զԱննա 'ի կնութ̃ի, այնպէս որսաց զսիրտ Թագաւորին Ռուսաց, մինչև խնդրել նմա զոք ուսուցիչ քրիստոնեական կրօնից. վասն որոյ երանելին Իգնատիոս պատրիարգ Կոստանդնուպոլսոյ առաքեաց առ նա զարքեպիսկոպոս մի առաքինի և իմաստուն։ Իսկ 'ի հասանել նորա 'ի Ռուսս փութացաւ Թագաւորն գումարել ժողով մեծ ազգային 'ի ծերոց անտի ժողովրդեան. ուր առաջի կացոյց նոցա զեկեալ արքեպիսկոպոսն, և յանդիման ամենեցուն եհարց ցնա՝ թէ առ ինչ եկեալ իցէ, և զինչ կամիցի ուսուցանել. իսկ նորա ցուցեալ զաւետարանն՝ սկսաւ պատմել զսքանչելիս ինչ Քրիստոսի, որպէս և 'ի հին կտակարանաց զանցս հրաշից երից մանկանցն Բաբելոնի, զորս 'ի նկարագրելն պայծառ և ազդու բանիւք՝ յապուշ կրթեալ ժողովականացն, համարձակեցան խնդրել յարքեպիսկոպոսէն զնմանօրինակ սքանչելիս 'ի հաստատութիւն բանիցն ասացելոց. և ստիպեցին զնա ընկենուլ զաւետարանն 'ի հուր բորբոքեալ, յորմէ թէ ելցէ անկէզ, խոստացան ընդունել զհաւատս քարոզութեան նորա։ Յանձն էառ արքեպիսկոպոսն վստահացեալ 'ի մարդասէր խնամս սքանչելեացն Տետուծոյ, և ամբարձեալ զաչս իւր յերկինս առէ. ՚՚ Տէր Յիսուս Քրիստոս, փառաւորեա՛ զանուն քո առաջի ժողովրդեանս այսորիկ ,, ։ Ապա լուցին խարոյկ մեծ իբրև զհնոց, և ընկեցեալ զաւետարանն 'ի մէջ հրոյն՝ մնաց անծախ մինչև ցշիջանել հրոյն. ընդ որ զարմացեալ բարբարոսաց՝ անյապաղ խնդրեցին զմկրտութիւն՝ ազգովին ընկալեալ զհաւատս Քրիստոսի ։ (¹)

ԳԼՈՒԽ ԺԴ.

Խնամք բարեկարգութեան միայնակեցաց, կանոնիկոսաց և հաւատաւորաց ։

Ընդ այն ժամանակս 'ի տարածել քրիստոնէութեան 'ի նորանոր գաւառս հեթանոսաց, մի ոմն յառաքելաշնորհ սրբոց ջուն գործէր նորոգութեան կարգի մենաստանացն օտարացելոց 'ի նախնի բարեկարգութենէ ։ Առաքինասէրս այս Բենեդիկտոս անուն՝ յազնուականաց անտի Լանկրդոք քաղաքի, յետ գովելի ծառայութեանց յարքունիս և 'ի բանակս զինուորութեանց Պիպինոսի և մեծին Կարոլոսի առանձնացեալ 'ի մենաստան ուրեք՝ աբբայացաւ 'ի նմին. յետոյ 'ի սեպհական կալուածի իւրում հիմնեաց զայլ մենաստան աբբայութեան, որ 'ի մերձաւոր վտակէ անտի ջրոյ անուանեցաւ Անիանեան ։ Յորդորեալ բազմաց 'ի սքանչելի օրինակէ վարուց նորա, կամակար մտօք հպատակեալ կային ընդ առաջնորդութեամբ նորա. և 'ի նոյնմէ առաքեաց Բենեդիկտոս զբազումս 'ի մենաստանն՝ որք փափաքէին նորոգութեան կրօնաւորական կարգաց ։ Ջուն գործէին պահել զկանոնս սրբոյ հօրն Բենեդիկտոսի աբբայի ըստ ամենայն խստութեանցն, որոց նախանձաւոր յոյժ էր երանելի առաջնորդն Անիանեան մենաստանին՝ յառաջադէմ 'ի խրախուսել զայլս բարի օրինակաւ իւրով ։

Լուդովիկոս Պիոս արքայ Գաղղիոյ կոչելով առ ին-

---

1 Զպատմութիւն դարձի Ռուսաց 'ի հաւատս Քրիստոսի՝ ոմանք դնեն 'ի Թ դարու, յաւուրս Ռոմանոսի կայսեր հայկազնոյ. բայց այլք ստուգագոյնս 'ի ժամանակս Վասլի երկրորդի և Կոստանդեայ, յամին 989 ։

քըն զերանելին Բենեդիկտոս՝ յանձն արար նմա խնամ ունել ’ի վերայ ամենայն մենաստանաց տէրութեան իւրոյ․ որով զոգցես մենաստանք ամենայն բնակարանք եղեն սրբոց և իմաստնոց։ Այն ինքն Լուդովիկոս արքայ ետ կանգնել մենաստան՝ կրկին փարախաւ հեռի յԱքուիսկրանա քաղաքէ․ և ’ի միում ժողովի գումարելոյ յաբբայից յայնմ քաղաքի՝ յամին 817 երանելին Բենեդիկտոս ետ նոցա կանոնս՝ ըստ կանոնաց մենաստանացն՝ որք ընդ առաջնորդութեամբ նորա էին։

Զայնու ժամանակաւ՝ յորում Լուդովիկոս արքայ ընդ ձեռն երանելոյն Բենեդիկտոսի բարեկարգէր զկրօնաւորս, կամեցաւ զի ժողովն Աքուիսկրանայ սահմանեսցէ կանոնս և վասն կանոնիկոսաց։ Ամալարիոս սարկաւագ եկեղեցւոյն Մէսեայ՝ այր ականաւոր գիտութեամբ և նախանձու աստուածպաշտութեան՝ յանձն էառ զայն յօժարակամ, և հաւաքեաց ’ի հարիւր քառասուն և հինգ յօդուածս զայն ամենայն հատուածս բանից սրբոց հարց և սահմանաց՝ որք պատշաճէին առ կանոնիկոսական կեանս և ’ի վիճակ։ Հաւաքումն կանոնադրութեանցս նման է յոյժ այնմ, զոր սուրբն Կրոդեկանգոս բարեկարգիչ վարուց կղերիկոսաց գրեալ էր յութերորդի դարու։

Սահմանեցաւ կանոնիկոսաց առանձնանալ ’ի մենաստանս, ուտել և ննջել անդ իբրև զայլ միայնակեացս։ Ի բազում եպիսկոպոսանիստ քաղաքս տակաւին երևին շինուածք ինչ ’ի ձև մենաստանաց ’ի պէտս կանոնիկոսաց․ յորոց իմանամք թէ ’ի նախնի ժամանակս կանոնիկոսք և միայնակեացք էին միօրինակք ը՟ նովին կանոնօք։ Զկանոնազանցս խրատէին երիցս․ և յետ այնր թէ չերևէր ’ի նոսա ուղղութիւն ինչ, հրամայէին հացիւ և ջրով անցուցանել զօրն, կամ վարէին հարուածս ձաղկանաց՝ եթէ հասակն և վիճակ պատուոյն ներէին զայն, և կամ փակէին յարգելանս մենաստանին։ Ազնուատոհմք մտանէին ’ի ժողովս խորհրդոյ, այլ և աղքատք իսկ առաւելեալքն գիտութեամբ և բարեպաշտութեամբ չէին մերժեալք ’ի պատուոյ անտի․ զի իմաստութիւն և առաքինութիւն ոչ միշտ զուգընթաց են ընդ ազնուատոհմութեան։

Ընդ սահմանադրութիւնս վասն կանոնիկոսաց՝ յաւելու և այլ առանձին կանոն վասն հաւատաւորաց քսան և ութ յօդուածովք։ Առնէին սորա զուխտ աղջկութեան. ուտէին միաբան, ննջէին յառանձին սենեակս, բնակէին 'ի մենաստանս սեւագոյն քօղով և զգեստու։ Այս կանոն, որ է հաստատած ինչ խրատուց սրբոց հարց յաղագս քրիստոնէական կուսութեան, յայտ առնէ՝ թէ հաւատաւորք ժամանակացն այնորիկ էին տիրապէս միանձնուհիք։

ԳԼՈՒԽ ԺԷ.

Կաթուղիկոսք և վիճակ եկեղեցւոյն Հայոց։

Ի ՍԿԻԶԲՆ իններորդի դարու յամի տեառն 806 նստաւ կաթուղիկոս Դաւիթ Բ. 'ի գաւառէն Մազազայ, զամս քսանեւօթն, յորոյ աւուրս նահատակեցան Սահակ և Յովսէփ կարնեցիք։ Յետ Դաւթի յամին 833 կալաւ զաթոռ կաթուղիկոսութեան Յովհաննէս Ե. ովայեցի, այր բարի և ճգնազգեաց։ Բայց խռովութիւնք աշխարհիս Հայոց 'ի բռնութենէ Հագարացւոց՝ չետուն նմա թոյլ նստել 'ի Դուինն քաղաք, և նա շրջէր պանդխտութեամբ յայլ և յայլ տեղիս, բայց ունէր ստէպ զիւր բնակութիւնն 'ի Գեղարքունիս 'ի վանս Մաքենոցաց, ուր և կատարեաց զկեանս իւր վշտալից ցաւովք յամին 854, կացեալ 'ի կաթուղիկոսութեան զամս քսան և երկու։

Զաքարիա 'ի գաւառէ Կոտայից ընտրեցաւ կաթուղիկոս յամին 854. և զի չէր յեկեղեցական կարգէ, զանգիտեալ 'ի խռովութեանց ժամանակին փութացան վաղվաղակի ձեռնադրել զնա. վասն որոյ 'ի միում եւեթ աւուր ընկալաւ զաստիճան սարկաւագութեան, զկարգ քահանայութեան և զկաթուղիկոսութեան։ Նստաւ 'ի Դուինն քաղաքի զամս քսան և մի, և արար բազում օգտութիւնս յազգին յաւուրս Աշոտոյ Բագրատունւոյ. և խնամ կալեալ խաղաղութեան ազգին՝ օրինակ բարի եկաց համօրէն հօտին. որով պատուեցաւ ոչ միայն յազգէն, այլ և յիշխանէն այլազգեաց։ Գրեաց զանազան ճառս ողջամիտ բանիւք և փայլուն շարադրութեամբ զտէրունական տօնից։

Գէորգ Բ. 'ի Գառնոյ նստաւ յաթոռ կաթուղիկոութեան յամին 876 ։ Յաւուրս սորա Աշոտ բագրատունի օծաւ թագաւոր Հայոց՝ ընկալեալ զթագ յամիրապետէն Հագարացւոց և 'ի Վասիլ կայսերէ Յունաց ։ Նա յամին 889 'ի հիւանդանալն Աշոտոյ արքայի կոչեաց առ ինքն զԳէորգ կաթողիկոս · և արարեալ զյետին խոստովանութիւնն ընկալաւ 'ի նմանէ զթօշակ հաղորդութեան և աւանդեաց զհոգին առ Աստուած ։ Ապա 'ի յաջորդ ամի որդի նորա Սմբատ օծաւ թագաւոր 'ի կաթողիկոսէն · և յետ հնգից ամաց 'ի պատճառս թշնամութեան Հագարացւոց ընդ Սմբատայ արքայի՝ Գէորգ կաթողիկոս կալանաւորեցաւ 'ի Հագարացւոց, և զամիս երկուս համբերեալ տառապանաց բանդարգելութեան ազատեցաւ ծանր տուգանօք ։ Յետ այնորիկ տեսեալ կաթողիկոսին զաղէտս թշուառութեան աշխարհին Հայոց՝ առանձնացաւ 'ի Վասպուրական գաւառ, և անդ վախճանեցաւ յամին 897, կացեալ 'ի հայրապետութեան զամս քսան և մի ։

Մաշտոց Ա. 'ի գաւառէն Կոտայից այր սուրբ և իմաստուն, նստաւ յաթոռ կաթողիկոսութեան յամին 897 և վախճանեցաւ զկնի եօթն ամսոց ։ Սա նախ քան զկաթողիկոսութիւնն առանձնացեալ կայր 'ի վանս Մաքենոցաց, ուր վարժեալ յուսումն աստուածային գրոց և 'ի վարս բարիս, նորոգեաց զմենաստան Սևանայ, և արար զայն վարժարան հոգևոր ուսմանց 'ի վարս աստուածպաշտութեան ։ Գրեաց և ճառս ընդդէմ թշնամեաց ժողովոյն Քաղկեդոնի ։

Յովհաննէս Ե. պատմաբան, աշակերտ և ազգական Մաշտոցի, եղև յաջորդ նորա յամին 897, և զի կեանք նորին ձգեցան մինչև ցամն 924, կարգեսցուք զնա 'ի հետևեալ դարու ։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Եկեղեցական մատենագիրք:

Առ կենդանութեամբ մեծին Կարողոսի, որ իմաստութեամբն և առատաձեռնութեամբ պատճառք եկաց բարգաւաճելոյ ուսմանց, ակնկալութիւն մեծ էր յառաջադէմ զարգանալոյ ամենայն գիտութեանց. բայց 'ի վախճանել անդ նորա 'ի սկիզբն դարուս՝ յամին 814 կալաւ զԵւրոպա թանձրամած խաւար տգիտութեան, և սակաւք կացին արք անուանիք 'ի մատենագրութեան:

Ալկուինոս սարկաւագ, որ սերտ մտերմութեամբ գոլով ընդ մեծին Կարողոսի՝ պատուեցաւ 'ի նմանէ, մեռաւ 'ի սկիզբն դարուս՝ յետ ընծայելոյ 'ի լոյս ձեռս ինչ աստուածաբանականս և մեկնութիւնս 'ի վերայ սուրբ գրոց. և թէպէտ անխոնջ ոք էր 'ի վաստակս գրականութեան, սակայն ոչ նոյնպէս ձեռնտու էին նմա հանճար, գիտակ և ընտրութիւն նիւթոց: Ի համանման երկասիրութիւս պարապեցան Ռաբանոս Մաւրոս մեծահամբաւ աստուածաբանն Մոգունտիոյ, Հինկմարոս արքեպիսկոպոս Ռեմսայ, սուրբն Ագոբարդոս արքեպիսկոպոս Լուգդունի, և Փլորոս սարկաւագ նորին եկեղեցւոյ:

Պատմաբանական մատեանք աշխատասիրեցան յԷգինարդոսէ, զոր յիշատակեցաք 'ի մատենագիրս նախընթաց դարու: Ի նոյն պատմական գործս մտադիր եղեն սուրբն Ագոնէս վեննացի, Անաստասիոս գրապետ եկեղեցւոյն Հռոմայ, Հռեգինոն աբբայ, և Ուսուարդոս բենեդիկտեան: Սակայն մատենագրութիւնք սոցա սակս դիւրահաւան բարոյից այնր ժամանակի որերոյն լի են առասպելական և անստոյգ պատմութեամբք:

Կացին և այլ մատենագիրք յեկեղեցւոջ Լատինաց, բայց չգտաւ որ երբէք 'ի նոսա համանման Փոտայ պատրիարգին Յունաց. զի սա գերագոյն իմն օրինակաւ բազմարդիւն ցուցաւ 'ի գիտնական մակացութիւս Մատենադարանաւն իւրով, յորում բովանդակին քաղուածք աւելի քան զերեքհարիւր և ութսուն մատենագրաց, որոց մնացեալք մեծագոյն մասունք չերեւին այսօր 'ի մէջ ։

Յիններորդի դարուս զաւելի ջանից մեծին Կարոլոսի նախանձաւոր գտաւ եւ Ալփրեդոս թագաւոր Անգղեաց, որ 'ի յխաւն եւ աւելի եւս ամենայ հեռաւ զաւերեալ եւ զխափանեալ զդպրոցն 'ի պատճառս խառնակութեան երկրին եւ յասպատակութենէ Դանեաց, սկսաւ վերստին ծաղկեցուցանել 'ի ժամանակս թագաւորութեան իւրոյ ։ Նա ինքն Ալփրեդոս զարդարեալ անձնային ձրիւք արքայավայել բարեմասնութեանց՝ քաջավարժ էր 'ի բազմադիմի ուսմունս . եւ զի բարեպաշտութիւն եւեթ էր կանոն գործոց իւրոց, անձնային փութով խնամ՝ տանէր զգիտութիւն իւր փարել յօգուտ հասարակաց ։ Հանճարով իւրով կազմեաց նաւատորմիղ, ամրացոյց զքաղաքս, սահմանեաց օրէնս իմաստալիցս . եւ քաջ խելամուտ լեալ եթէ գիտութիւնք եւ աստուածպաշտութիւն որչափ օգտակարք իցեն քաղաքական ընկերութեան, կանգնեաց դպրոցս աստուածաբանութեան, թուաբանութեան, աստղաբաշխութեան, երաժշտական արուեստի, յորս որոշեաց զերեւելի երեւելի գիտնականս յատար ազգաց՝ հրահանգել նոքօք զբնակիչս տէրութեան իւրոյ . անդր կոչեաց եւ զճարտար արուեստաւորս ոչինչ խնայելով 'ի ծախսն, զի հպատակք իւր յորդորեսցին ստանալ զախորժ եւ զճաշակ գիտութեանց ։

Նախ քան զթագաւորել Ալփրեդոսի չէր որ 'ի քահանայս Անգղեաց հմուտ լատին բարբառոյ . վասն որոյ ինքնին նախ աւագին խնամ կալաւ ուսանել զայն լեզու եւ 'ի նոյն յորդորեաց այլս եւ զայլս ։ Ոկնի հիմնեալ զհամալսարանն Ոքսփորտի իշխանն լեալ թէ, սակայն զոյգ չէ հնար յառաջել յանթագս գիտնոց, եւ բերել զնա 'ի Համլինց եւ շինեաց զդպրատուն . այլ ինքնին ընթերցմամբ գործոց ընտիր մատենագրաց ստացեալ ոճ՝ փայլելոյ շարադրութեան, դասեցաւ ընդ մատենագիրս իններորդի դարուս ։ Յօրինեաց զՀաւաքումն ժամանակագրական, թարգմանեաց զպատմութիւն Որոսիոսի, զԲեդային, զՀովուականն եւ զՏրամախոսութիւս սրբոյն Գրիգորի, զսաղմոսս Դաւթի, եւ զգիրս մխիթարութեան Բոյետիոսի ։ Թէպէտ այսչափ հետամուտ էր նա գիտութեանց, սակայն ոչ երբեք թեբայց 'ի պատուոյ պաշտամանն իւրոյ 'ի տեսչութիւն տէրութեանն։

Յաղթութեան դարու յիշատակին և յազգին Հայոց մատենագիրք ոմանք, որպէս՝ Լևոն ատրի սարկաւագապետ, որ 'ի խնդրոյ Բագրատայ իշխանի արար զմեկնութիւն Յովհաննու աւետարանի, քաղեալ յՈսկեբերանէ, 'ի բարբառ արաբացւոց. զոր յետոյ Սմբատ Բագրատունի ետ թարգմանել 'ի հայ լեզու։

Համամ՝ վարդապետ յաւուրս Զաքարիայ կաթողիկոսի. զորմէ ասեն յօրինեալ զմեկնութիւն առակացն Սողոմոնի, և զհարիւր ութուտասներորդ սաղմոսին, եւս և ինչ ինչ քերականական ուսմունս, որպէս և զպատմութիւն Հայոց. բայց ոչինչ մնաց 'ի գրեանց նորա. և միայն գտանի այժմ առ մեզ մեկնութիւն «Ով է գայլն» որ 'ի գիրս Յոբայ։

Գագիկ վարդապետ վանահայր ուխտի սրբոյն [illegible] և սարկաւագ նորա Գրիգոր արարին զհաւաքումն վարուց սրբոց՝ [illegible] անուանեալ, որ և եղև իբր սկիզբն Յայսմաւուրց Հայոց։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Հանրական տեսութիւնք 'ի վերայ բարուց ինչ և սովորութեանց իններորդ դարու։

ԲԱԶՄԱՊԱՏԻԿ օրինադրութիւնք եկեղեցւոյ սահմանեալք 'ի զանազան ժողովս վասն բարեկարգութեան և ուղղութեան վարուց, և նախանձ աստուածպաշտութեան հոգեկիր առաջնորդաց, որպէս և հրովարտակք աւագինի իշխանաց ոչ կարացին զդէմ ունել զմեղկակենաց, որ օր ըստ օրէ ընդ մտաւորս աղխտութիւն առաւելոյր յամենայն տեղիս։ Բռնաձիգն բռնաւորք անկախք 'ի միմեանց ընդ ձեռամբ ունէին զԱշխարհս համօրէն, և բաց 'ի կեղեքելոյ յանչափս զժողովուրդն՝ պատճառք լինէին և բազմադիմի վնասուց եկեղեցւոյ։ Ի ժողովսն գումարեալս յայսմ դարու՝ [illegible] տեսանեմք ազդարարութիւնք և սպառնալիք առ Թագաւորս, որք խռովէին ըզխաղաղութիւն Հասարակաց, և չարաչար վարէին զեխանութիւն իւրեանց ընդդէմ գղեկոց և ժողովրդոց ՚ի ձեռս ամենեցուն։ Նոյն աբբայութիւնք գրաւեալ կային յաշխարհականաց, և երբեմն նոքին իսկ թագաւորք առնուին զայնոսիկ ՚ի կալուածս իւրեանց. որպէս և արքունի մարդիկ առանց ինչ իրաւանց լոկ ՚ի պարգևելոյ թագաւորաց տիրէին ստացուածոց մենաստանաց, մինչև վարել երբեմն և զանուանումն Աբբայ. որպէս է տեսանել զայս և ՚ի թագաւորս անդ Գաղղիոյ։

Յարևելս կայսերք և պատրիարգունք Կոստանդնուպոլսոյ՝ զի յանդորրու ունիցին զմենաստանս ՚ի բռնաւորուէ և յափշտակութէ պատկերամարտից՝ զհոգ խնամոց նոցին յանձնեցին եպիսկոպոսաց և զօրաւոր իշխանաց, որոց գործ էր պահպանել զեկամուտս, կորզել զկորուսեալ և զյափշտակեալ ստացուածս, նորոգել զշինուածսն և անդրէն հաւաքել միայնակեացս։ Սակայն բարեպաշտ համարեալ հազարապետքս այսոքիկ եղեն բռնաւորք անյագք, որք ընդ կրօնաւորսն իբրև ընդ գերիս վարէին, տուեալ նոցա այնչափ ինչ միայն՝ որչափ բաւական էր ՚ի պարէն կենաց։

Ամենայն եպիսկոպոսաց յարևելս և յարևմուտս զհետ երթեալ անկարգ գնացից իշխանացն, վարէին կեանս շռայլ զեղխութեամբ հակառակ հոգւոյ եկեղեցական վիճակի և պատուոյ պաշտաման իւրեանց։ Բազումք ՚ի նոցանէ լինելով տէր կալուածոց և աշխարհական իշխանութե՝ վճարէին հարկս թագաւորին. այլք ամենք պարտական էին օթևանս տալ նմա և իւրոց սպասաւորաց. ամենք ևս հատուցանէին զահմանեալ տուրս ինչ դրամոց, և կամ՝ պաշարս զօրաց. յոլովք ՚ի նոցանէ առ հաճելոյ զկամս թագաւորին՝ հարստահարէին զժողովուրդ իւրեանց։ Եւ զի ՚ի ժամանակին յայնոսիկ չէին թոշակաւոր զինուորութիւնք, հարկ էր եպիսկոպոսաց իբրև զայլ իշխանաւորս տալ ՚ի զինուորութիւն զբազումս ՚ի հպատակաց իւրեանց զարդարեալ զինուք և ամենայն կարևոր կահիւք։ Սոքա ևս անձամբ գնային ՚ի բանակս մարտի, որպէս է տեսանել ՚ի պատմութիւնս այնց ժամանակաց եպիսկոպոսունս զէն ՚ի ձեռին կալանաւորեալս՝ ՚ի պատերազմի։

Արդ յոյժ ընդարձակ էր իշխանութի եպիսկոպոսաց այնր ժամանակի. զի մինչև ցութերորդ դար եկեղեցական ստացուածք իւրաքանչիւր վիճակի մատակարարեալ լինէին ընդ ձեռն նոցա. զի չկային յայնժամ որոշեալ ժառանգաւորք առանձինն թոշակօք, նմին իրի եպիսկոպոսաց անկ էր բաշխել զամենայն հաս եկեղեցեաց վիճակի իւրեանց։ Բայց և բազումք յեպիսկոպոսաց յայնպիսում զեղծ և 'ի վատթար ժամանակի ցուցանելով յանձինս իւրեանց պանծալի օրինակս առաքինի վարուց՝ եղեն արժանապատիւք և ակնածելիք յաչս թագաւորաց։

Ստացուածք և եկամուտք մենաստանաց թէպէտ և ազատք էին յիշխանութենէ եպիսկոպոսաց, սակայն և նոցա սպառ էր ամի ամի հարկս հարկանել թագաւորին։ Ոմանք պարտական էին վճարել զհաս կալուածոց իւրեանց, այլք ընծայաբեր լինել առ թագաւորն, և նպաստել զինուորական պիտոյից. իսկ ոմանք 'ի մենաստանաց սովոր էին տալ ընծայս եւեթ. կային և այլք որք ազատ գոլով յընծայատուութենէ և 'ի զինուորական ծառայութենէ՝ աղօթօք եւեթ էին կենաց թագաւորին և ընտանեաց նորա։ Ընծայս զայսոսիկ բազում այն էր զի 'ի հանդէս ինչ տօնից մատուցանէին արքային, որպէս զումար ինչ դրամոց կամ երիվարս ընտիրս։ Իսկ միանձնուհիք ընծայէին հանդերձս ձեռակերտեալս յիւրեանց։

Հրապարակական ապաշխարութիւնք յաճախեալք 'ի նախնի դարս եկեղեցւոյ՝ տակաւին 'ի կիր արկանէին և յիններորդի դարու։ Ապաշխարողք խորգ զգենուին, և հացիւ և ջրով լոկով ծոմապահէին. իսկ եթէ ոք առ հարկի ըմպէր զինի, պատուհաս նորա էր վճարել գանկս երկուս։ Նստէին առ դրունս եկեղեցեաց, ոչ կարէին զգենուլ սպիտակս և վարել զգործ պաշտաման մինչև ցլրումն ժամանակին ապաշխարութեան՝ զոր կարգէին ըստ չափոյ մեղացն։ Սովորական յանցանք այնր ժամանակի էին գողութիւնք և յափշտակութիւնք. չէր ուրեք ապահովութիւն պանդխտաց և ուղեւորաց. վասն որոյ առ կարճելոյ զամենայն պաճառս յափշտակութեան՝ պատուէր հրամանի տուաւ երիցանց կամ ծխատէր քահանայից հիւրընկալել զանցաւորս՝ օրինակ բարի տալով ժողովրդեան իւրեանց։

Այս քանզի յանցանքս այսպիսիկ իրք հասարակաց էին, և յանցաւորքն անյայտք, պատշաճ համարեցան նոր հնարս հանճարել՝ 'ի ստուգել և յորոշել զյանցաւորսն յանմեղաց։ Հնարք այսպիսիք կամ փորձք զորս սովորաբար վարէին, էին երդումն, մենամարտութիւն, ջուր եռացեալ, երկաթ հրացեալ, հաղորդութիւն մարմնոյն Քրիստոսի և այլն, և զփորձս զայսոսիկ յորջորջէին Դատաստան Աստուծոյ։

Փորձն 'ի ձեռն երդման, զոր կոչէին կանոնական արդարացուցումն, լինէր այլ և այլ օրինակաւ։ Ամբաստանեալն որ հանդերձեալ էր երդնուլ՝ առեալ 'ի ձեռին բուռն մի յարդ՝ ցանէր ընդ օդս, կոչելով զԱստուած 'ի վկայութիւն անմեղութեան իւրոյ։ Երբեմն ևս զինեալ զաշնակաւ՝ մահուամբ չափ պատրաստական ցուցանէր զանձն 'ի ստուգել զինուք զվկայեալն երդմամբ։ Բայց բազում այն էր զի երդնուին յաւետարանն սուրբ, 'ի խաչն կամ 'ի նշխարս սրբոց. զի ծանր եղեալ երդմնադրաց՝ ամբաստանեալն զձեռն, և մերձեցուցեալ 'ի սեղանն սուրբ, յորոյ վերայ կայր աւետարանն և խաչ, առնէին զերդումն 'ի ծոմ և անճաշակ բերանով. և ըստ ծանրութեան յանցանացն սովորութիւն էր տալ երդնուլ և այլոց բազմաթիւ անձանց ընդ ամբաստանելոյն. և թէպէտ ինքնին միայնակ ամբաստանեալն առնէր զբանս երդմանն, բայց կուսակիցք նորա միաձայնեալք ընդ նմա 'ի բանսն՝ վկայէին ճշմարտութեան ասացելոյն։ Յորժամ ոմանք վկայէին սակս իրիք գործոյ ժխտելոյ յայլոց, յայնժամ դատաւորք հրամայէին մտանել 'ի մենամարտութիւն, և 'ի կողմանց իւրաքանչիւր ընտրէին մի մի քաջամարտիկ այր պատերազմիլ ընդ միմեանս բրօք և վահանաւ, և յաղթեալն 'ի մարտին ստերդումն համարեալ 'ի դատաւորաց՝ պատուհաս ընդունէր զհատումն ձեռաց, իսկ կուսակիցք նորա առ զերծանելոյ յայնպիսի պատուհասէ տուգանս հատուցանէին։

Եթէ զինամարտ գժտելոց անհաճոյ էր փորձն երդման, դատաւորք հրամայէին զանձնական մենամարտութիւն որով յայտարար զայն համարեալ անմեղութեան և մեղապարտութեան նոցա։ Բարբարոսական սովորութիւնս այս հիւսիսաբնակ ազանց՝ նախ առաջին անց 'ի Պիէմոնտիա . անտի 'ի Բուրգոնտիա, 'ի Գաղղիա, և ընդ ամենայն գաւառս Եւրոպիոյ ։ Այսու մեծամասնութբ զատէին և որոշէին 'ի Գաղղիա զամենայն քաղաքական և քրէական յանցանս՝ բայց 'ի գողութեց ինչ կամ 'ի գժտութեանց՝ որք ոչ առաւելուին քան զարժէս հնգից փողոց ։ Անխտիր յամենայն վիճակէ մարդկան հնար էր դատաստանական օրինօք կոչել 'ի մենամարտութիւն . և եկեղեցականաց անգամ և քահանայից և միայնակեցաց հարկ 'ի վերայ կայր հպատակել օրինացս . այլ սոցա՝ 'ի չաղծել զձեռս արեամբ՝ ներհեալ էր կացուցանել զայլ որ քաջամարտիկ փոխանակ իւրեանց ։ Սովորաբար նախ քան զմտանելն 'ի մենամարտութիւն յորդորէին զգժտեալսն 'ի խաղաղութիւն, և 'ի չլինելն այնմ հնարաւոր՝ ածեալ զնոսա առաջի դատաւորաց, խնդրէին երդումն խոստովանելոյ զճշմարտութիւն իրայն ։ Ապա տային նոցա կերակուր 'ի կազդուրումն, և յետոյ հրապարակաւ պատրաստէին 'ի զէնս . մերկացուցանէին զնոսա չորեքին խնամակալքն ընտրեալք հանդիսաւոր պաշտամամբք, որք օծանէին զմարմինս նոցա իւղով . գերծէին զմօրուս նց, և զհերս գլխոյն պսակաձև հատանէին . ապա երթեալ գժտելոյ 'ի վայրն պատնշափակ՝ ծունր դնէին հանդէպ միմեանց, և խաչանիշ յօդեալ զմատունսն՝ երդնուին չլինել պաշտպան ստութեան և չխնդրել հնարս յաղթութեան դաւով կամ կախարդութեամբ ։ Իսկ յետ 'ի ծունկս կատարելոյ նոցա զաղօթս և զխոստովանութիւն, պատգամաւոր ոմն 'ի պատնշէ ասպարիզին ձայն արձակէր երիցս . “ Թո՛ղ տուք գնալ քաջամարտիկացդ „ . և անդէն առժամայն բուռն հարկանէին ախոյեան զընկերէն ։ Յաղթեալն 'ի նոցունց վատահամբաւ համարեալ՝ պատուաստուն չարկու նստէր 'ի վերայ հնոտի փախաթի, և ապա ելանէր 'ի կախաղան կամ հրով ծախէր, և էր երբեք զի հատանէին զմի յանդամոց նորա ։ Առաջնորդք և եպիսկոպոսունք ժամանակին 'ի զուր բողոքէին ընդդէմ անհնարին զեղծմանց և անկարգութեանց իններորդի դարուս . և բուռն զօրութիւն նոյին իսկ աշխարհական իշխանաց անբաւական գտաւ զդէմ ունել կատաղի մոլեգնութեան այսր մենամարտութե ։ Սուրբն Լոդովիկոս արքայ Գաղղիոյ նախ առաջին խնամ կալաւ ջընջել զայն 'ի սպառ, բայց և այնպէս բանք նորա ոչ ինչ զամենևին եղեն 'ի սիրտ ժողովրդեան ։

Զփորձն ցուրտ ջրոյ թէպէտ արգել Լուդովիկոս Պիոս արքայ Գաղղիոյ յամին 829, բայց տակաւին 'ի կիր առնուին զայն ։ Ամբաստանեալքն սկիզբն առնէին զատին ունկնդրութիւն պատարագի. ապա օրհնելով և երդմնեցուցանելով զջուրն ընկենուին յայն զամբաստանեալն կապեալ ձեռօք և ոտիւք ։ Յանցաւոր և մեղապարտ համարէին զայնոսիկ որք մնային յերես ջրոյն. և ընդհակառակն՝ յանմեղս համարէր որ միանգամ խորասոյզ լինէր 'ի ջուր անդր ։ Քահանայն կատարիչ արարողութեանս, որպէս և առընթերակացք այսմ փորձոյ, պարտէին լինել նօթիք և անսուաղք ։ Բարեմիտ խորհրդով կարծէին, եթէ ջուրն երդմնեցուցմամբ մաքրագործեալ՝ չընդունիցի յինքն զաղտեղիս և զանմաքուրս, որպէս թէ մերժիցէ և 'ի բաց վտարիցէ յիւրմէ զյանցաւորն ։

Ի փորձ ստուգելոյ զյանցանս սովոր էին վարել և զջերմաջերմ ջուր ։ Ամբաստանեալն յետ պաշտամանն աղօթից ինչ զմերկ բազուկ իւր մխէր յանօթ եռացեալ ջրոյ, առնուլ զմատանին կամ զօղակ ինչ արկեալ 'ի խորս անօթոյն ։ Ապա դատաւորն յանդիման կղերն և ժողովրդեան զմխեալ ձեռն ամբաստանելոյն փակեալ 'ի պարկի կնքէր մատանեաւն. և յետ երից աւուրց 'ի հանել անդ զպարկն 'ի բազկէն՝ եթէ չերևէր 'ի նմա նշան խարշատելոյ՝ համարեալ լինէր անմեղ. իսկ եթէ խղխայթեալ տեսանէին զմարմին բազկին, արժանաւոր պատուհասի պատժէին զնա ։ Յոլովակի մարթ էր 'ի ձեռն զրամից զերծանել 'ի փորձոյ աստի ։

Քահանայք և ազնուականք, որք միանգամ ազատք էին 'ի մենամարտութենէ, մատչէին 'ի փորձ հրացեալ երկաթոյ ։ Յաւուրն յորում առաջի կայր կատարել զայս հանդէս, ամբաստանեալն յետ զերիս աւուրս հացիւ և ջրով ծոմապահելոյ, և մատչելոյ 'ի խորհրդական խոստովանութիւն, լսէր զպատարագ. և մերձեալ 'ի սեղան սուրբ խորհրդոյն, նախ քան զհաղորդիլն՝ յայտ առնէր բարձրաձայն զանմեղութիւն իւր ։ Ապա տանէին զնա յեկեղեցի 'ի սահմանեալ տեղին փորձոյ, ուր սրսկմամբ օրհնեալ ջրոյ և տալով նմա ըմպել 'ի ջրոյ անտի, և նաբուռն հարեալ ձեռօք զհրացեալ երկաթոյ երից լտերց ծանրութեանք՝ ամբառնայր 'ի վեր երկիցս կամ՝ երիցս , ըստ չափու առաւելութե՛ կամ՝ նուազութեան ամբաստանեալ յանցանացն ։ Երբեմն եւ արկանէին զձեռս ամբաստանելոյն 'ի հրացեալ ձեռնս երկաթիս ։ Ապա 'ի կատարել փորձոյն սովոր էին առնել զնոյն գործողութիւն՝ որ լինէր յաւուրս փորձոյ եռացեալ ջրոյ ։

Փորձն հաղորդութեան սեպհականեալ էր եպիսկոպոսաց եւ քահանայից ամբաստանելոց սակս իրիք յանցանաց ։ Տային նոցա մատուցանել զպատարագ , եւ նախ քան զհաղորդելն ասել բարձրաձայն . "Մարմին տեառն լիցի ինձ այսօր 'ի փորձ " ։ Իսկ առ աշխարհիկս սովորութիւն էր յառաջ քան զհաղորդելն զնոսա ասել քահանային . "Եթէ յանցաւոր իցես՝ յետս կացջիր 'ի սուրբ սեղանոյս . իսկ եթէ անմեղ , ընկալ զմարմին Քրիստոսի , որ լիցի դատաւոր խղճի մտաց քոց " ։ Այս փորձ քանի սուտերդմանց եւ ամբարշտաց պատճառս տուեալ իցէ մահուչափ մեղաց ։

Էր եւ այլ փորձ՝ զոր անուանէին Խաչի , քանզի պարտ էր յանցաւորին անհանգիստ դիրք՝ ծնրադրութեամբ կամ ոտնակացութեամբ եւ խաչաձեւ տարածեալ բազկօք կալ առաջի խաչելութեան . եւ որ մնանգամ ընդ երկար ժուժկալէր յայնմ , համարեալ լինէր անմեղ ։ Այս ազգ փորձոյ՝ առաւելապէս 'ի կիր արկեալ 'ի մենաստանս առ 'ի պատուհաս կանոնազանցից , ակուստ եղեւ յաշխարհական ատեանս ։

Զայս ամենայն օրինակս փորձոյ 'ի յայտնել զանմեղութիւն կամ զմեղապարտութիւն ուրուք՝ սնապաշտութիւն մանաւանդ պարտ է կոչել քան ճշմարիտ կրօնս աստուածպաշտութե , որք եւ ապա տակաւ խափանեալ բարձան 'ի միջոյ ։ Չորրորդ ժողովն Լատերանու յամին 1215 թէպէտ արգել զայնպիսի իրս սնապաշտութիւնս , բայց սովորութի երկարժամանակեայ դժուարաւ ջնջի եւ խլի 'ի մտաց ռամկին ։

Զկնի ծանօթութեանց՝ որ յաղագս սովորութեանց դարուս , կամելով ասել ինչ եւ վասն մատակարարութեան խորհրդոց եկեղեցւոյ , գտանեմք զի մկրտութիւն տակաւին կատարէր 'ի զատկին եւ 'ի պենտեկոստէի . զխորհուրդ զղջման եպիսկոպոսունք եւեթ պաշտէին յայցելութիւնս առն իւրեանց . մատուցմունք ձայնաւոր և օրըստօրէ թիւ պատարագաց սովորականք էին յայսմ դարու . զխորհուրդ վերջին օծման մատակարարէին հիւանդաց . զձեռնադրութիւնն եղեալս առանց հաստատութեան օրինաւոր առաջնորդաց՝ անվաւեր համարէին . արգելեալ աստիճանք ամուսնութեան տարածեցան մինչև 'ի չորրորդ ազգ . նոյնպէս զգուշութիւն մեծ էր հոգևոր ազգակցութեան 'ի մէջ կնքահօր և կնքամօր, սանից, ուստերաց և դստերաց : Իսկ զպաշտամունս խորհրդոց եկեղեցւոյ բազումք յազգացն Եւրոպիոյ սովոր էին կատարել ըստ արարողութեան հռովմէական եկեղեցւոյ :

Լատին բարբառ յաճախեալն երբեմն 'ի ժողովրդեան Գաղղիոյ, առ ժամանակօքս սեպհականեալ պահեցաւ աստուածային պաշտամանց եւեթ . իսկ յընտանի զրոյցս սկսան վարել զգաղղիականն անուանեալ բարբառ՝ որ խառնուրդ իմն է փրանկ, գերմանացի և լատին լեզուաց :

Թագաւորք Գաղղիոյ ունէին իւրեանց մատուռն առանձին, յորում բազում քահանայք որ ըստ օրէ կատարէին զաստուածային պաշտամունսն, և անուանէին կղերիկոսունք, յորոց զգլխաւորն կոչէր Պատգամաւոր, և երբեմն Աւագերէց Գաղղիոյ, և էր հոգևոր վերատեսուչ ամենայն պալատականաց . իսկ այժմ անուանի Մեծ ողորմաբաշխ Գաղղիոյ :

ԳԼՈՒԽ ԺԲ.

Ազգային ժողովք : — Ժողով Երնջակոյ յամի տեառն 841 :

ՅԱՒՈՒՐՍ կաթուղիկոսութեան Յովհաննու Ովայեցւոյ այրք ոմանք անօրէնք բարուք անհաստատութեան յօգեալ զկաթուղիկոսէն՝ ամբաստան եղեն զնմանէ առ իշխանն Բագարատ, և ստիպէին ընկենուլ զՅովհաննէս յաթոռոյ և զայլ ոք կարգել ընդ նորա : Իսկ Բագարատայ ունկն եդեալ բարբառոյն առաքեաց հրովարտակ առ ամենայն Հայս 'ի բաց կալ 'ի նմանէ, և զայլ ոք կացուցանել կաթուղիկոս : Զայն իբրև լուաւ Յովհաննէս՝ ընդ բանիւ արարեալ զԲագարատ խոյս ետ յերկիրն Գեղամայ։ Յայնժամ 'ի մի վայր ժողովեալ նախարարացն յԵրնջակ քաղաք, կոչեցին անդր զեպիսկոպոսունս Հայոց 'ի քննել առնուլ զամբաստանութիւն որ զկաթուղիկոսէն, և 'ի վերայ հաստատել ստութեան նոցա՝ հաստատեցին զնա անդրէն յաթոռին իշխանութեան իւրում։

Ժողով Շիրակաւանայ Ա. յամի տեառն 854։

ԱՆՀՆԱՐԻՆ և անչափ տառապանաց ազգիս մերոյ 'ի ներքին և յարտաքին թշնամեաց ականատես եղեալ Յովհաննու կաթուղիկոսի Ովայեցւոյ, առ ցաւոց սրտին վախճանեցաւ զկեանսն 'ի վանս Մաքենոցաց։ Իմացեալ զայն Սմբատայ կիւրապաղատի գումարեաց վաղվաղակի ժողով եպիսկոպոսաց յԵրազգաւորս 'ի Շիրակաւան քաղաք, յընտրութիւն նորոյ կաթուղիկոսի։ Եւ միաբան հաւանութեամբ կացուցին զԶաքարիա 'ի Կոտայս գաւառէ 'ի Ձագ գեղջէ. և 'ի սուղելոյ կարճութեան ժամանակին 'ի միում և եթ աւուր ձեռնադրեցին զնա սարկաւագ, քահանայ, եպիսկոպոս և կաթուղիկոս։

Սորին Զաքարիայի են ճառք բանի մի 'ի տէրունական տօնս, յորս փայլէ հանճար մտաց նորա և եռանդն հոգեւոր։

Ժողով Շիրակաւանայ Բ. յամի տեառն 862։

ՓՈՏ պատրիարգ Յունաց ցանկացեալ սէր և միաբանութիւն հաստատել ընդ Հայս, նամակագիր եղև առ կաթուղիկոսն Զաքարիա և առ Աշոտ ասպետն թագաւոր բագրատունի, ցուցանել նոցա զողջամիտ վարդապետութիւն սրբոյ ժողովոյն Քաղկեդոնի և զեկեղեցւոյն Յունաց. և զթուղթն զայնոսիկ տարեալ 'ի Հայս 'ի ձեռն Սահակայ ուրումն կամ Յովհաննու հայոյ։ Ընթերցեալ կաթուղիկոսին և թագաւորին զբանս նոցա՝ խորհեցան ժողովել եպիսկոպոսաց դարման իւրեանց մատուցանել. վասն որոյ յամի տեառն 862 եպիսկոպոսունք և վարդապետք և կրօնաւորք բազումք ժողովեցան 'ի Շիրակաւան քաղաք, թագաւորն և իշխանօք համդերձ ։ Յայնմ ժողովի խօսեցաւ Սահակ ճառ սքանչելի զխորհրդոյ ամենասուրբ Երրորդութեան և մարդեղութեան, որպէս և յաղագս ուղղափառ ողջմտութեան ժողովոյն Քաղկեդոնի. և ապա առաջի արարեալ 'ի դիմաց ժողովոյն հնգետասան գլուխս բանից, յաւել կարգել և նզովս ընդդէմ այնոցիկ որք միանգամ զհակառակս վարդապետութեանցն ժպրհեսցեն քարոզել։ Զայս ամենայն խօսեցեալ Սահակայ դարձ արար անդրէն 'ի Կոստանդնուպօլիս. և 'ի խնդրել Զաքարիա կաթուղիկոսին թղթով զլուծումն երկբայութեանց ինչ զծիսից և զարարողութեանց եկեղեցւոյն Յունաց, պատասխանի գրեաց առ նա քաղցրութեամբ և իմաստութեամբ ։ Յետ այնորիկ Զաքարիա կաթուղիկոս ողջամիտ եռանդեամբ փոյթ յանձին կալաւ 'ի միութեան և 'ի խաղաղութեան ունել զհօտն, ձեռնտու և թիկունս իւր ստացեալ յամենայնի զբարեպաշտ և զառաքինասէր Աշոտ արքայն ։

Ժողով Շիրակաւանայ Դ. յամի տեառն 892 ։

ՍՄԲԱՏ առաջին հաստատեալ յիշխանութեան իւրում փոխանակ հօր իւրոյ Աշոտոյ, հրեշտակագնաց եղև առ ամիրապետն Հագարացւոց՝ խնդրել 'ի նմանէ թագ և զաւազան արքայական. և նորա խնդացեալ յոյժ առաքեաց զայն ընդ ձեռն մտերմի իւրոյ Աֆշինի ուրումն իշխանի Ատրպատական աշխարհի, որ և իւրով ձեռամբ եդ զթագն 'ի գլուխ Սմբատայ ։ Ապա 'ի հրամանէ նորին Սմբատայ ժողովեցան եպիսկոպոսունք ամենայն և իշխանք յԵրազգաւորս 'ի նորակերտ տաճար Փրկչին, ուր օրհնեալ կաթուղիկոսին զթագն՝ կրկին պսակեաց զնա, և էարկ զնովաւ զարքայական ծիրանին զոր նորին ամիրապետի շնորհեալ էր, և ապա երգովք օրհնութեան և արքայաշուք պերճութեամբ տարաւ զնա յապարանս արքունի ։

ԴԱՐ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա.

Քահանայապետք Հռովմայ.

ՏԱՍՆԵՐՈՐԴՍ այս դար պարաւեալ 'ի մատենագրաց ոմանց՝ իբր միջոց ժամանակի խաւարամած տգիտութեան, ոչ դոյզն օգտութիւնս և պտուղս գեղեցիկս ծնաւ եկեղեցւոյ. քանզի բազում ազգք հիւսիսական կողմանց ընկալան զքրիստոնէական հաւատս ճշմարտութեան. և մենաստանք անշքացեալք յառաջինական վայրուց՝ նորոգեցան բարեկարգութեամբ 'ի ձեռն նախանձու աստուածպաշտութեան լուսաւորեալ արանց։ Որպէս և աթոռ սրբոյն Պետրոսի պատուեցաւ արժանաժառանգ գահակալօք, յորս բաց 'ի սակաւուց ոմանց՝ այլքն ամենեքին երևելի հանդիսացան սրբութեամբ վարուց և իմաստութեամբ։

Ի սկիզբն դարուս յետ մահուան Յովհաննու իններորդի յամին 900 ընտրեցաւ Բենեդիկտոս Դ. Հռովմայեցի, որ կալաւ զաթոռն զամս իբր երիս, յորս ջանահնար եղև պահել զպատիւ սրբոյ աթոռոյն՝ առաքինազարդ գործովք իւրովք, և առատաբաշխ ողորմութեամբն առ աղքատս։

Յետ նորա յամին 903 կալաւ զաթոռն Լևոն Ե. 'ի մերձաւոր սահմանացն Հռովմայ, որոյ յետ քառասուն աւուրց գահակալութեան վախճանեալ 'ի բանտի, բռնութեամբ զրաւեաց զաթոռն Քրիստափոր ոմն Հռովմայեցի զամիս իբր վեց։ Յետ նորա յամին 904 կալաւ զաթոռն Սերգիոս Գ. Հռովմայեցի, զոր յԱդաւերտոսէ մարգիզէ առեն կարգեալ քահանայապետ միաձայն հաւանութեամբ ժողովրդեանն Հռովմայ։ Եկաց 'ի քահանայապետութեան զամս եօթն, տարեալ բազմադիմի հակառակութեանց։ Սորա յամին 911 կալաւ զաթոռն Անաստասիոս Գ. Հռովմայեցի՝ զամս երկու և զամիսս երկուս. և յաջորդեաց զնա Լանդոն կամ Լանդոնէս սաբինացի՝ զամիսս վեց և զաւուրս տասն։

Ի փոխանակ սորա յամին 913 Թէոդորա տիկին Հռովմայեցի՝ կրտսեր քոյր մեծահամբաւ իշխանուհւոյն Մարոզիայի ետ ընտրել 'ի քահանայապետութիւն զՅովհաննէս Ժ. Հռովմայեցի, որ կալաւ զաթոռն իբր զամս չորեքտասան և զամիսս երկուս։ Եւ քանզի չէառ նա յանձն վարիլ ըստ հաճոյից անօրէն իշխանուհւոյն Մարոզիայ, խեղդեցաւ հրամանաւ նորա յամին 918։

Իշխանուհիս այս անբարհաւաճ, յանդուգն և անվեհէր 'ի գործս, զակատեալ զհետ աշխարհային գրգանաց, տիրապետեալ մեծակառոյց ամբարտակին Ադրիանոսի կայսեր, որ այժմ կոչի Ամրոց սրբոյ Հրեշտակապետին, անտի իշխէր քաղաքին Հռովմայ։ Նա էր օրէնսդիր եկեղեցական և աշխարհական դատից և վճռոց, մինչև 'ի մոռացօնս գրել նախնի կանոնաց և սահմանադրութեանց հարց և ժողովոց։ Յետ մահուան առաջնոյ առն իւրոյ Ալբերիկոսի՝ ամուսնացաւ ընդ Գուիդոնի դքսին Թոսկանայ, յորմէ վերստին այրիացեալ՝ պսակեցաւ ընդ Հուգոնի եղբօր առն իւրոյ մեռելոյ։ Հուգոն ցանկացեալ փառաց կայսերութեան, ակն ունէր 'ի ձեռս բերել զայն օժանդակութեամբ կնոջ իւրոյ Մարոզիայ, որ 'ի քաղաքին Հռովմայ վարէր զինքնիշխան տէրութիւն։ Ալբերիկոս որդի Գուիդոնի և անօրէն տիկնոջն՝ ընկալեալ երբեմն ապտակ 'ի Հուգոնէ, բողոք կալաւ զնմանէ առ գլխաւորս ազնուականացն Հռովմայ. և նոքա զայրացեալ յոյժ ընդ այն՝ միաբանեցան զինել ընդդէմ Հուգոնի. որոյ զանգիտեալ յահէ նոցա ստիպեցաւ փախչել զիշերայն 'ի կողմանս Լոմպարտիոյ։

Զայս ամենայն ժամ դիպաւոր համարեալ Հռովմայեցւոց 'ի թօթափել զլուծ բռնաւորութեան Մարոզիայ, զպատիւ հիւպատոսութեան և զպատրկութեան ետուն պատանւոյն Ալբերիկոսի, որ անդէն և անդ արգել զմայր իւր 'ի խաւարչտին բանտի։

Յետ աւաղելի մահուան Յովհաննու յամին 928 ընտրեցաւ Լեւոն Զ. Հռովմայեցի, որ կալաւ զաթոռն զամիս եօթն. զկնի նորա նստաւ Ստեփաննոս Ը. Հռովմայեցի, զամս երկու եւ զաւուրս երեսուն. ապա՝ յամին 931 Յովհաննէս ԺԱ. Հռովմայեցի 'ի Կոմսեան զարմէ որդի Մարոսիայ, եւ հարազատ եղբայր Ալբերիկոսի, յորմէ եւ վիշտս ծանունս կրեալ վախճանեցաւ 'ի բանտի յամին 936, կացեալ 'ի քահանայապետութեան զամս չորս եւ զամիս տասն։ Յետ սակաւ աւուրց վախճանի նորա առաւ քահանայապետութիւն Լեւոնի Է., որ կալաւ զաթոռն զամս երիս եւ զամիս վեց։ Ի ցուցակս ինչ քահանայապետաց Լեւոն այս նշանակի վեցերորդ, զի զնախընթացն Լեւոն համարին անկանոն ձեռնադրեալ։ Զկնի սորա Ստեփաննոս Թ. գերմանացի, որ կալաւ զաթոռն զամս երիս, զամիս չորս եւ զաւուրս հնգետասան։ Յաւուրս քահանայապետութեան սորա չեղեն ինչ դէպք արժանիք յիշատակաց։

Յետ նոցա յամին 943 կալաւ զաթոռն Մարտինոս Բ. Հռովմայեցի զամս երիս եւ զամիս վեց։ Յաջորդեաց զնա Ագապետոս Բ. Հռովմայեցի զամս ինն եւ զամիս իբր եօթն։ Սոցա երկոցուն՝ հոգեջան խնամածուաց քահանայապետական պաշտամանն՝ կատարեալ փառօք զաւուրս իւրեանց, ընտրեցաւ յամին 956 Յովհաննէս ԺԲ. Հռովմայեցի 'ի Կոմսեան զարմէ՝ 'ի հասակի ութեւտասն ամաց, եւ վարեցաւ պապական իշխանութեամբ իբր զամս ութ։ Թշնամանեալ սորա 'ի Բերենգարիոսէ արքայէն Իտալիոյ՝ կոչեաց 'ի Հռովմ զՕթոն կայսր արեւմտեան. եւ նորա եկեալ՝ եհան զվրէժ անարգանացն Բերենգարիոսի, զրկեալ զնա 'ի թագաւորութենէն. բայց քահանայապետն ապաշնորհ գտեալ բարերարին՝ արհամարհեաց զնա եւ ընդդէմ դարձաւ նմա. որ վասն միւսանգամ դարձ արարեալ Օթոնի 'ի Հռովմ, գումարեաց անդ ժողով յամին 960, յորում պարտաւոր գտեալ Յովհաննու մերժեցաւ յիշխանութենէն, եւ փոխանակ նորա ընտրեցաւ Լեւոն Ը., զոր՝ յետ մեկնելոյ կայսերն 'ի Հռովմայ՝ մերժեալ հալածեաց Յովհաննէս, զի ոչ ըստ կանոնաց եկեղեցւոյ լեալ էր ընտրութիւն նորա։ Բայց յետոյ յամին 964 Լեւոն բռնութեամբ սպառնալեաց Օթոնի վերստին գրաւեալ զայն պատիւ, կալաւ զիշխանութիւնն մինչև ցմահ իւր, որ դիպաւ յամին 965. յոյր սակս մնանէ 'ի դասակարգս քահանայապետաց ընդ անուամբ Լևոնի Ը։

Զկնի մահուանն Յովհաննու ԺԲ. յամին 964 կալաւ զաթոռն Բենեդիկտոս Ե. հռովմայեցի՝ զամ մի և զամիսս ինչ։ Սորա Յովհաննէս ԺԳ. հռովմայեցի՝ զամս վեց և զամիսս մետասան։ Սորա յամին 972 Բենեդիկտոս Զ. զամ մի և զամիս երիս. յետ նորա Դոմնոս Բ. հռովմայեցի, որոյ քահանայապետութիւնն կարճատև եղև յոյժ։ Յաջորդեաց զնա Բենեդիկտոս Է. հռովմայեցի 'ի Կոնտեան զարմէ՝ զամս ութ և զամիսս ինչ. և ապա յամին 983 Յովհաննէս ԺԴ. եպիսկոպոս Պաւիոյ զամիսս ինն։ Սա զրկեցաւ 'ի քահանայապետութենէն, որպէս և 'ի կենաց միանգամայն, բռնակալութեամբ Փրանգոնեայ ուրումն՝ որ ընդ անուամբ Բոնիփակիոսի Է., որպէս սովոր են կոչել զնա պատմաբանք, զրաւեաց զաթոռ իշխանութեն այս երկրորդ անգամ. զի և զառաջինն բռնակալեալ էր յետ տալոյ սպանանել զԲենեդիկտոս Զ. բայց և ինքն մեռաւ յետ երից կամ մետասան ամսոց, յամին 985։ Ի նմին ամի ընտրեցաւ քահանայապետ Յովհաննէս ԺԵ. հռովմայեցի. բայց նախ քան զօծումն իւր՝ յետ ամսոց ինչ կամ աւուրց վախճանեցաւ զկեանս։ Յաջորդեաց զնա Յովհաննէս ԺԶ. հռովմայեցի, զամս իբր տասն։

Սա միանգամ կալան 'ի ժամանակս զաթոռ քահանայապետութեան, տարան ծանունց վշտաց և ազգի ազգի հակառակութեանց. զի Կրեսկենտիոս հռովմայեցի այր ականաւոր յափշտակեալ զիշխանութիւն տէրութեան Հռովմայ, վարէր ընդ նմա իբր բռնաւոր ընդ ստրուկս։ Իսկ յորժամ յամին 995 ընտրեցաւ քահանայապետ Գրիգոր Ե. գերմանացի՝ որդի Ոթոնի դքսին Փրանկոնիոյ և Կարինթիոյ, Կրեսկենտիոս բռնաւոր ոխացեալ ընդ այն՝ զի ոչ ըստ կամաց իւրոց եղև ընտրութիւնն, յետ իբր երից ամսոց քահանայապետութեանն Գրիգորի՝ յամին 997 կացոյց զայլ պապ Յովհաննէս Փիլագաթոս անուն կաղաբրիացի, որ էր եպիսկոպոս Պլակենտիա կամ Փիաչենցա քաղաքի, ընդ անուամբ Յովհաննու ԺԷ.։ Եւ զի Ոթոն կայսր արևմտեան ազգական էր Գրիգորի քահանայապետի, ևկեալ զօրօք 'ի Հռոմ, և պաշարեալ զԿրեսկենտիոս յամրոցի որոց Հրեշտակապետին՝ կալաւ և սպան զնա․ նոյնպէս և զՅովհաննէս տարագրեալ յաթոռոյ քահանայապետութեան, հաստատեաց անդրէն զԳրիգոր․ այլ նորա ոչ յերկարեալ յիշխանութեանն՝ յետ սակաւուց վախճանեցաւ յամին 999 ։

Զկնի նորա ընտրեցաւ Գերբերտոս բենեդիկտեան կրօնաւոր աւվերնացի, որ զառաջինն սակս արժանաւոր արդեանց իւրոց ամբարձեալ յարքեպիսկոպոսութիւն Հռեմսայ, և ապա Հռաւեննայի, բարձրացաւ յիշխանութիւն քահանայապետութեան և անուանեցաւ Սեղբեստրոս Բ ։ Սա եղև առաջինն յազգէ Գաղղիացւոց ընտրեալ 'ի քահանայապետութիւն, որ ամենայն իմաստութեամբ և խոհական զգօնութեամբ վարեաց զիշխանութիւն իւր զամս չորս և զաւուրս քառասուն ։

ԳԼՈՒԽ Բ․

Վիճակ եկեղեցւոյն Գաղղիոյ ։

ՅԱՒՈՒՐՍ յաջորդաց մեծին Կարոլոսի ինքնակալութիւնն գաղղիական կորոյս բազմօք զփառս մեծութեան իւրոյ, զընդարձակութիւն սահմանացն և զիշխանութիւն ։ Առ հասարակ 'ի շփոթս և 'ի խռովութեան գոլով այն տէրութիւն, անշքացաւ 'ի խուռն արշաւանաց անտի Հոնաց և Նորմանեաց, որք անխընայ յաւարի առին զերկիրն ։ Առանձինն տանուտեարք կանգնեալ իւրեանց փոքրիկ տէրութիւնս և ինքնիշխանութիւնս անկախս 'ի թագաւորէն՝ ընդարձակեցին ըզսահմանս իւրեանց ծախիւք և ստացուածովք եկեղեցականաց, որովք գործեցին անիրաւութիւնս մեծամեծս ։ Ի պատճառս պատերազմաց և անհնարին աւարառութեանց իշխանաւորաց տէրութեանն՝ արուեստք և գիտութիւնք նուաղեցան գոգցես 'ի սպառ և թանձրացեալ տգիտութիւն կալաւ զամենայն Գաղղիա ։

Յայսմիկ ժամանակս անկայութեան չեղեն ինչ անցք արժանիք յիշատակաց, բայց յերկուց անտի բանակռուութեանց որք դիպան 'ի վերջ կոյս տասներորդի դարու ։ Առաջինն եղև դէպք Առնուլփոսի արքեպիսկոպոսին Հռեմսայ, որ էր որդի Կղոթարիոսի արքային Գաղղիոյ. սորա ամբաստանեալ 'ի Հուգոնէ Կափեթայ՝ զարքեպիսկոպոսական քաղաք իւր ետ 'ի ձեռս Կարողոսի դքսին Լորենայ քեռւոյ իւրոյ։ Զայս գործ նորա յանցանս համարեալ թեմական ժողովոյ այնր գաւառի՝ ընկէց զնա յաթոռոյ, և 'ի տեղի նորա ընտրեցաւ Գերբերտոս կրօնաւոր բենեդիկտեան։ Պատաստան ժողովոյս թէպէտ և թուէր համեմատ կանոնական օրինաց, բայց քահանայապետքն Յովհաննէս ԺԶ. և Գրիգոր Ե. ոչ միայն չկամեցան հաստատել զայն ընտրութիւն, այլ և 'ի միում յառաջնական ժողովի Յովհաննէս քահանայապետ ունայնացուցեալ զմերժումն Արնոլփոսի և զձեռնադրութիւն Գերբերտոսի, ընդ բանիւ արար զամենայն եպիսկոպոսունս որք հաղորդ գտան գործոյն։ Ստգտանէր զնոսին առաւելապէս վասն այնր զի ոչ սպասեցին դատաստանի և որոշման քահանայապետին յայն գործ։ Դժուարեալ ընդ այն Գերբերտոսի գրեաց առ եպիսկոպոսունս արգելեալս յեկեղեցական պաշտամանց՝ մերժելով զվճիռ քահանայապետացն Հռովմայ. “Հասարակաց օրէնք եկեղեցւոյ, ասէ, են սուրբ գիրք, և կանոնք և վճիռք որոց աթոռոյն՝ համաձայնք սուրբ գրոց։ Որ արհամարհութեամբ զանցանիցէ զնոքօք, յիրաւի է նմա ըստ նոցունց դատիլ. բայց որ պահէն զայնոսիկ, անկ է նմա վայելել յանդորր խաղաղութեան„։

Այսպէս խօսէր Գերբերտոս առ երիցակիցս իւր զի մի հպատակեսցեն վճռոյ քահանայապետին. բայց յետ ժամանակաց ինչ ինքն իսկ հարկեցաւ մտադիր ցուցանել զիւր հպատակութիւն. զի քահանայապետն առաքեաց դեսպան 'ի Գաղղիա՝ վախճան առնել բանակռուութեանցն։ Վասն որոյ յամին 995 գումարեցաւ ժողով 'ի Մոսոն, յորում Գերբերտոս յերկարագոյն նուագօք խօսեցեալ եցոյց յաւէտ զճշմարտախօսութիւն քան զհիմնական փաստս հաստատութեան բանիցն, սակայն և այնպէս ընկալաւ զհաճութիւն ժողովականաց՝ յապաղել զորոշումն խնդրոյն մինչև գումարեսցի այլ ժողով 'ի Հռեմս քաղաք՝ յառաջին աւուր ամսեանն յունիսի, արգելեալ զնա մի կատարել զսուրբ պաշտամունս եկեղեցւոյ. զոր և կամակար յանձն էառ Գերբերտոս ։ Իսկ զումարումն ժողովոյն խափանեցաւ այլով պատճառաւ ․ և ցորչափ կենդանի էր Հուգոն, Գերբերտոս եկաց եպիսկոպոս Ռեմսայ, իսկ Արնուլփոս կայր արգելեալ առ դքսին ․ սակայն յետ մահուան թագաւորին՝ յամին 996 Ռոբերտոս որդի նորա և յաջորդ զիջեալ յաղաչանս քահանայապետին, որ նզովս սպառնայր համօրէն թագաւորութեանն Գաղղիոյ, հաստատեաց զԱրնուլփոս յաթոռ իւրում յամին 998 ․ իսկ Գերբերտոս հրաժարեալ յաթոռոյ անտի՝ քանզի սիրելի էր և մեծարու յաչս Օթոնի կայսեր, ընդ ձեռն նորա ընկալաւ զարքեպիսկոպոսութիւն Ռաւեննա քաղաքի, և ապա ամբարձաւ 'ի պատիւ քահանայապետութեան զկնի Գրիգորի ։ Թշնամանագիր մատենագիրք ոմանք բազում ինչ անդէպս յօդեն 'ի վերայ առնս մեծի, զճարտարութիւն նորա բանիւք և գործովք՝ կախարդութիւնս անուանելով ։

Երկրորդ բանակռուութիւնն՝ պատճառք խռովութեան եկեղեցւոյն Գաղղիոյ, եղև յամուսնութենէ անտի Ռոբերտոսի թագաւորին ընդ Բերտայի ազգականի իւրում, որոյ ազգականութիւնն թէպէտ չէր կարի մերձաւոր, բայց քահանայապետն Գրիգոր Ե ոչնչացուցեալ զայն ամուսնութի, քանզի Ռոբերտոս կնքահայր էր Բերտայի, հրամայեաց թագաւորին անյապաղ արձակել զկինն, և եդ երկոցունց միանգամայն զապաշխարութիւն եօթն ամաց ։ Ի չառնալ Ռոբերտոսի հրամանաց քահանայապետին, բազմագոյնք յեպիսկոպոսաց ընդ բանիւ արարին զնա, վասն որոյ լքաւ թողաւ յամենայն պաշտօնէից իւրոց ։ Մնացին առ նմա երկու սպասաւորք եւեթ, որք նոյնպէս խորշէին և գարշէին յամենայնէ յորս միանգամ թագաւորն մերձեալ էր ձեռօք ․ յոյր սակս խնամ տանէին մաքրել հրով զանօթս ամենայն որովք վարէր նա յուտելն և յըմպել ։

Յաւուր միում ընդ առաւօտն յաղօթել թագաւորին առ դրան եկեղեցւոյ սրբոյն Բարթուղիմէոսի, Աբբոն աբբայ Փլէօրեայ երկոքումբք նաժշտօք պալատանն որք բարձեալ տանէին զսկուտեղ արծաթի ծածկեալ պատատառաւ, մատեաւ առ թագաւորն ծանուցանել նմա զլուր նորանշան ծննդեան որդւոյն այլանդակ գլխօք երեւաց, զոր Բերտայի ամուսնոյ նորա այն ինչ ծնեալ էր. և 'ի բաց առեալ զպատուան, եցոյց նմա զհրէշն զայն, տեսանել զպտուղ անհնազանդութեան իւրոյ առ պատուէրս եկեղեցւոյ։ Հայեցեալ Սոբերոսի յայն ահարկու տեսիլ՝ զարհուրեցաւ յոյժ. միանգամայն ածեալ զմտաւ զբարձի թողի լինելն 'ի հպատակաց իւրոց, և զանընդհատ տանջանս մտացն խղճի, զօրացաւ յաղթել անկարգ սիրոյն առ Ներսա. վասն որոյ բաժանեալ 'ի նմանէ՝ կատարեաց զապաշխարանս օրինադրեալս 'ի վերայ նորա, և այնուհետև խնամ՝ կալաւ վարել զկեանս իւր 'ի գործս բարիս։

ԳԼՈՒԽ Գ.

Վիճակ եկեղեցւոյն Անգղիոյ։

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ Ալփրետոսի և ջանք նորա 'ի պայծառութիւն Անգղիոյ, որպէս կանխեցաք ասել 'ի նախընթաց դարու, եղև կանխածաւալ լոյս 'ի փարատել զխաւար տգիտութեան՝ զմայրն ամենայն ախտից և զմոլորութեանց. զի յայնմ հետէ ծաղկեցան յԱնգղիա եպիսկոպոսունք անուանիք գիտութեամբք և բարեկրօն վարուք։ Էդուարդ Ա. և յետ նորա Էդմունդ և Էդրեդոս թագաւորք բարենախանձք և առաքինիք զեպիսկոպոսական վիճակս տային բարեպաշտից ևեթ և արժանաւորաց։ Մեծարեալ պատուէին զայնոսիկ որք միանգամ զեկեղեցական պաշտամունս իւրեանց անթերի կատարէին. իսկ որք գայթակղական վարուք աղտեղեալ էին զսրբութիւն վիճակի իւրեանց, նախատանաց ևեթ և անարգութեան պարտ էր նոցա ակն ունել։ Բազումք յիշխանաց շարժեալք 'ի բարեսէր յօժարութենէ իւրեանց, կամ 'ի գործելոյ ինչ հաճոյական յաչս թագաւորաց, ըստ օրինակի նոցա գուն գործէին նուաճել զանզգամնելի մոլութիւնս, և պատկառ կալ բարեպաշտութեան։

Բազումք յիշխանաց աստի կամակար յանձն առին անսալ առաջնորդութեան սրբոյն Ոդոնի արքեպիսկոպոսին Կանտորբերիոյ, որ էր որդի ազնուականի ուրումն Դանիացւոյ դարձելոյ 'ի քրիստոնեական հաւատս։ Արժանապատիւ առաջնորդս՝ խնամոտն խորհրդով իրով և սքանչելի գնացիւքն զբազումս 'ի բնակչաց վայրայն ձգեաց 'ի կրօնս բարեպաշտութեան։ Նա յամին 992 իբրև ամբարձաւ 'ի պատիւ եպիսկոպոսէ, սահմանեաց կանոնս իմաստալիցս 'ի հրահանգել զժողովուրդն, յայտ առնելով թէ որք իցեն պարտք թագաւորաց, իշխանաց, եպիսկոպոսաց, դպրաց և միայնակեցաց։ Թագաւորն Էդմունդ որ անսայր խորհրդոց և խրատուց սրբոյ եպիսկոպոսին, կարգեաց ազգի ազգի օրէնս պատշաճեալս 'ի բարեկարգութիւն վարուց. և զի 'ի ժամանակին յայնմիկ բարեկրօն ժուժկալութիւն կարի նուազ էր յեկեղեցականս, հարկ համարեցաւ սահմանել վասն նոցա օրէնս ամբծութեան ընդ պատժովք կորուսանելոյ զամենայն կենցաղական ստացուածս 'ի կենդանութեան, և զրկելոյ յետ մահու յեկեղեցական թաղմանէ։

Սուրբն Դունստանոս ոգւով չափ ջանահնար եղև գնալ զհետ շաւղաց սրբոյն Օթոնի, 'ի յաջորդել անդ իբրու զկնի ժամանակաց յարքեպիսկոպոսութիւն Կանտըրբերիոյ։ Մերձաւոր և արենակից գոլով սորա Ադելստանի արքային՝ ինքնակամ հրաժարեալ յարքունեաց մեկուսացաւ յառանձնութիւն, և բնակէր յայնպիսում անձուկ սենեկի յորում չէր հնար տարածանել զոտն 'ի հանգիստ քնոյ։ Էդրէդոս արքայ սքանչացեալ ընդ առաքինի վարս երանելւոյս, արար զնա իւր մտերիմ, առաջնորդ և գործակալ։ Ջանացեալ ապա Դունստանոսի յօգուտ 'ի կիր արկանել զմտերիմ սիրելութիւն արքային՝ խնամ կալաւ ծաղկեցուցանել յԱնգղիա զկարգ միայնակեցութեան։ Հաւաքեաց զբազմութիւն կրօնաւորաց 'ի Գլաստենբուրեան մենաստանն, որ առաջին վարժարան եկաց քահանայից և եպիսկոպոսաց Անգղիոյ։ Հիմնեցան ապա և այլ մենաստանք, յորս սկսան պայծառանալ գիտութիւնք զոյգ ընդ բարեպաշտութեան վարուց։ Դունստանոս զառաջինն կարգեալ յեպիսկոպոսութիւն Վորսեստր քաղաքի՝ չէթող 'ի ձեռաց զխստամբերութիւն կենացն զոր կամակար ստանձնեալն էր։

Մահ արքային Էդմունդայ նուաղեցոյց յարքունիսն զյարգ եպիսկոպոսին. զի Էդուիգոս յաջորդ նորա յայտնի և համարձակ վարելով ընդ ումեմն հարճի, գայթակղեցուցեալ էր զժողովուրդ իւր · վասն որոյ նախանձ բարեպաշտութեան Դունստանոսի եպիսկոպոսի վառեալ 'ի ցաւոց ժողովրդեանն , յաւուր միում համարձակեալ եմուտ 'ի սենեակ թագաւորին , և բռնութեամբ եհան արտաքս զտարփածուն նորա · ընդ որ զայրացեալ Էդուիգոսի առաքեաց զնա յաքսոր ։

Արքեպիսկոպոսն Ոթոն մտերիմն Դունստանոսի տեսեալ զթագաւորն անլուր խրատուց և ազդարարութեանց իւրոց , առաքեաց զինուորս բռնի կորզել 'ի պալատէն զառիթ գայթակղութեանն , և յետ շանթիւ զրոշմելոյ զդէմն՝ եւ տանել զնա յԻռլանտիա ։ Բայց անամօթ մոլին այն զկնի բժշկութեան խարանացն կամեցաւ վերստին դարձ առնել յԱնգղիա , այլ ըմբռնեալ 'ի սպասաւորաց արքեպիսկոպոսին՝ հատան կըրկունք ոտիցն , և վախճանեցաւ 'ի կենաց ։

Ի մեռանել Էդուիգոսի արքայի յամին իբր 960 Դունստանոս եպիսկոպոս դարձեալ յաքսորանաց՝ ընտրեցաւ յարքեպիսկոպոս Կանտորբերիոյ , և վերստին ստացաւ զառաջին յարգ պատուոյ և մեծարանաց յԷդգարդայ արքայէ 'ի յաջորդէ նորին Էդուիգոսի ։ Անչափ 'ի յարգի էին խրատք և խորհուրդք նորա , մինչև 'ի մեծամեծ և 'ի կարևոր գործս տէրութեան խնդրէին լսել և զկարծիս նորա ։ Միայնակեացք որոց պատճառք եկաց նա բարեկարգութեան , ընդ ձեռն նորա ստացան զճոխ և զընտիր մենաստանս ։ Արդ յետ լիացուցանելոյ զԱնգղիա բազմապատիկ պտղովք գործոց բարեաց՝ վախճանեցաւ սրբութեամբ յամի տեառն 988 ։ Զարմանալի ինչ էր և անհամեմատ անզրդուելի արուի՞ որոյ արքեպիսկոպոսիս , և այս որպէս երաշխաւորեն դէպք · զի զիշխան զոմն ընդ բանիւ արարեալ սրբոյն , նա ետ բերել կոնդակ 'ի քահանայապետէն Հռովմայ , յորում պատուիրէր արձակել զիշխանն 'ի կապանաց անտի · յայնժամ Դունստանոսի պատասխանի արարեալ ասէ՝ “ Ոչ որ 'ի մահկանացուաց կարէ արգելուլ զիս 'ի կատարելոյ զօրէնս Աստուծոյ „ ։

ԳԼՈՒԽ Դ.

Վիճակ քրիստոնէութեան 'ի հիւսիսային կողմանս Եւրոպիոյ և 'ի Գերմանիա ։

ԶԱՅՆՈՒ ժամանակաւ՝ յորում կարգ միակեցական վարուց պայծառանայր յԱնգղիա, Մաճառք որք երբեմն ոխերիմ թշնամիք էին հաւատացելոց՝ ընկալան զքրիստոսական հաւատս. և առաջին քրիստոնեայ թագաւոր նոցա եղև սուրբն Ստեփանոս յամին 997, որ ծաղկեցոյց զկրօնս աստուածպաշտութեան՝ շինելով եկեղեցիս, վանորայս և անկելանոցս, յորս ինքնին ծառայէր և դարմանէր զհիւանդս, յօրինակ բարի ամենայն հպատակաց իւրոց 'ի գործս բարեպաշտութեան ։

Ի սմին դարու դարձան 'ի հաւատս Քրիստոսի և Լեհք, զի Միեչիսլաւ Ա. դուքս նոցա կամելով ածել կնութեան զՀոմբրաւա դուստր Բոլեսլաւայ դքսին Բոհեմիոյ, յօժարամիտ յանձն էառ լինել քրիստոնեայ. և յետ մկրտութեան արիացեալ նախանձու աստուածպաշտութեան՝ խնդրեաց 'ի Յովհաննէ ԺԳ. քահանայապետէն Հռովմայ առաքել յերկիր իշխանութեան իւրոյ քարոզս բանին Աստուծոյ, որոց քրտնաջան աշխատութիւն՝ առատաբեր եղև բազմապատիկ հոգևոր արդասեօք ։ Զի կրօն աստուածպաշտութեան քրիստոսական օրինաց ոչ միայն անարատ պահեցաւ յերկրի անդ բարբարոսաց, այլ և որ ըստ օրէ պայծառացեալ աստուածային լուսով փարատեաց զխաւարն որ պատեալ ունէր զանտառս և զվայրենամիտ ազինս հիւսիսային կողմանց ։

Եկեղեցին Գերմանիոյ ծաղկեցաւ առ կայսերութեամբ Հենրիկոսի Հաւորսն անուանելոյ, քանզի էր նա այր նախանձաւոր 'ի ծաւալել զհաւատս Քրիստոսի ։ Մաթիլդէ դշխոյ Հենրիկոսի՝ սնեալն յԵրփորդեան մենաստանի, համբաւեալ գոլով յոյժ անհամեմատ վարուքն սրբութեան. զի զօդեալ իւր զխոնարհութիւն ընդ պայծառափայլ հանդերձիւք՝ գիտաց պահել զպատիւ արքայական վիճակին առանց կորուսանելոյ զքրիստոսաւանդն խոնարհութիւն ։ Յետ մեռանելոյ կայսեր՝ առն իւրոյ, ետ զանձն 'ի կրթութիւնս գործոց բարեպաշտութեան, կանգնելով եկեղեցիս և հինգ մենաստանս, յորս մեծակառոյց և հոյակապ հանդիսացու Պոլցենեանն որ 'ի սահմանս դքսութեան Պրոնսուիքայ, ուր ժողովեաց երիս հազար կրօնաւորս։ Նա ինքն ցանկացեալ երկնային օթեւանաց՝ փոխեցաւ յաստեացս վայելել զանանց բարիս յամի տեառն 968։

Կայսրն Օթոն՝ անուանեալն Մեծ, որդի Մաթիլդեայ, սնեալն և դաստիարակեալ 'ի նմանէ 'ի վարս բարեպաշտութե̃, եցոյց զգովելի արդիւնս ընկալեալ հրահանգացն յընթացս երկար և պանծալի թագաւորութեան իւրոյ։ Յօժարամիտ հաճութեամբ գիտեաց յօգնականութիւն եկեղեցւոյն Հռովմայ՝ պաշտպան կացեալ քահանայապետաց, և առաքինի վարուքն տուեալ ամենեցուն օրինակ բարեպաշտութեան կենաց։ Նոյն 'ի Հռովմ թագաւորդ պսակեալ 'ի Յովհաննէ ԺԲ՝ յամին 956, դարձոյց յետս զամենայն ստացուածս եկեղեցւոյ՝ զյափշտակեալսն 'ի ժամանակս խռովութեան, և հաստատեաց զշնորհս պարգեւատուութե̃ցն Պեպինոսի, Մեծին Կարոլոսի և Լուդովիկոսի Պիոսի, զորս ընծայեալ էին սրբոյ աթոռոյն։ Նոյնպէս և դշխոյն Հեդիտա՝ ամուսին Օթոնի, յանձին բերէր զսրբակրօն վարս բարեպաշտութե̃. որպէս և Ադելայիդէ երկրորդ ամուսին նորա համբաւեալ հանդիսացաւ խնամտուն խրատուքն և խորհրդովք զորս տայր որդւոյ իւրում Օթոնի երկրորդի, որպէս և սքանչելի առաքինութե̃քն՝ որովք մարզէր զնա 'ի վարս բարիս. Թող զբազմապատիկ նպաստս ընձեռեալս 'ի նմանէ եկեղեցեաց, որովք կատարեաց զաստուածահաճոյ կեանսն յԱլսացիս յամին 999, յետ կանգնելոյ բազմաթիւ մենաստանս։

ԳԼՈՒԽ Է.

Հիմնարկութիւն կրօնաւորական կարգաց.

Ի ՏԱՍՆԵՐՈՐԴԻ դարու, զոր մատենագիրք ոմանք դար երկաթի կամ կապարի անուանեն, ուռճացեալ ծաղկեցան 'ի Գաղղիա միակեցական բարեկարգութիւնք, պակասեալքն 'ի սպառ 'ի պատճառս քաղաքական և արտաքին պատերազմաց.

Աբբայութիւն Կլունեան 'ի վիճակին Մակոնի՝ հիմնեալ յամի տեառն 910 'ի Գուլիելմոսէ դքսէն Աքուիտանիոյ և Փուաթիէի, ասպնջական եկաց առաքինութեան և անդորրութեան 'ի խռովութիւնս անդ որք տագնապէին զբնակիչս գաւառացն այնոցիկ. Գուլիելմոս առաջնորդ կացոյց մենաստանին զԲեռնոն բուրգոնտացի՝ զայրն համբաւեալ 'ի վարս բարիս. Ոթոն, Ադեմարոս, Մայոլոս և Ոդիլոն պատճառք եղեն բարգաւաճելոյ նորածին միաբանութեանն՝ կանգնեալ բազում մենաստանս. Սուրբն Մայոլոս վախճանեցաւ յամին 994, հրաժարեալ սորա յարքեպիսկոպոսութենէ Բեսանսոնի, որպէս և 'ի քահանայապետական աթոռոյ, կեայր յառանձնութեան. զօրաւոր էր նա բանիւք և արդեամբք՝ պատկառելի և խորհրդատու իշխանաց ժամանակին. Ոթոն կայսր արևմտեան կամելով յօգուտ 'ի կիր արկանել զխորհուրդս նորա՝ կոչեաց առ ինքն և կալաւ զնա յարքունիս. նոյնպէս և Հուգոն Կապետ նմա յանձն արար զնորոգութիւն բարեկարգութեան մենաստանաց թագաւորութեան իւրոյ.

Յետ հիմնարկութեան Կլունեան կարգին՝ եկեղեցականք առանձնացեալք 'ի մենաստանս սկսան պայծառանալ սրբութեամբ վարուց և իմաստութեամբ. իսկ քահանայք բնակեալք 'ի քաղաքի առ հասարակ 'ի խոր տգիտութեան կային՝ և յոլովք 'ի մեղկութեան վարուց. վասն որոյ և 'ի մենաստանաց անտի ընտրեցան եպիսկոպոսունք և քահանայապետք մեծահամբաւք.

Եւ քանզի կրօնաւորք միայնակեացք յառաջադէմ էին յոյժ 'ի գիտութիւնս և յարտաքին գործս որպէս և 'ի վարս բարիս, նմին իրի յաջողեալ էր նոցա ստանալ և գանձել անբաւ մեծութիւնս, զոր մտադիւր պարգեւէին իշխանք եւ ժողովուրդք առ հասարակ։ Ճոխութիւնք մենաստանաց թէպէտ եւ պատճառք էին յարգի եւ պատուոյ կրօնաւորաց, որպէս եւ յորդոր բազմաց յընտրումն այնր վիճակի, սակայն յետ ժամանակաց առ սակաւ սակաւ պատճառք եղեն գաղջութեան նոցա յառաջին եռանդանէն. զի վարատեցեալ խոտորեցան 'ի շաւղաց անտի զոր կալան նախնի միայնակեացք։

Ի վախճանս տասներորդի դարուս յաճախեաց եւ կարգ Կամաղդուլեցւոց, որոյ հիմնարկութիւնն եղեւ յԻտալիա՝ մերձ 'ի քաղաքն Արեցցոյ 'ի լերինն տանձնուէ Կամաղդուլի անուանելոյ, յորում սուրբն Ռոմուալդոս Ռաւեննացի յազնուական տոհմէ՝ զարդարեալ ամենայն բարեպաշտութեամբ, հաստատեաց ըզդասս կրօնաւորացն՝ որք յանուանէ տեղւոյն կոչեցան Կամաղդուլեցիք. զի էր կալուած ազնուական տոհմին կոմսանն Մալդուլեանց շնորհեալ սրբոյն Ռոմուալդոսի։ Կարգ եւ կանոնք միայնակեցացս գաղափարեալք 'ի կանոնաց սրբոյն Բենեդիկտոսի՝ բարեխառնեալ ունէին զօրինակ միաբանական եւ անապատական կենաց. զի առանց 'ի սպառ հրաժարելոյ 'ի միաբանական ընկերութենէ, վարէին եւ զանապատական կեանս։ Առաջին աշակերտք սրբոյն Ռոմուալդոսի բնակէին առանձնացեալք 'ի սենեակս իւրեանց, բայց սովոր էին օր ըստ օրէ հաւաքել յեկեղեցւոջ, եւ միաբան պաշտել զաղօթս հասարակաց։

Այս կարգ յետոյ ուրեմն 'ի մետասաներորդի դարու հանդիսացաւ առաւել եւս խստակրօն վարուք՝ 'ի սրբոյն Բրունոնէ հիմնադրութեամբ Կարթուսեան կրօնի։

ԳԼՈՒԽ Զ.

Վիճակ եկեղեցւոյն Յունաց:

Ի ԴԷՊՍ արեւելեան եկեղեցւոյ արժանի յիշատակաց են անցք բանակռուութե՟ն, դիպեալք 'ի սկիզբն դարուս ընդ մէջ Լեւոնի կայսեր Իմաստասիրի եւ Նիկողայոսի պատրիարգին Կոստանդնուպոլսոյ: Կայսրն Լեւոն համբաւեալն գիտութեամբ եւ ճարտարութեամբ՝ չունելով որդիս պայազատս գահուն յերից անտի կանանց՝ որք միմեանց զկնի եղեն նորա ամուսինք, կամեցաւ առնուլ կին չորրորդ զԶոյի: Իսկ քանզի կանոնք արեւելեան եկեղեցեաց արգելուին զչորրորդ ամուսնութիւն, Նիկողայոս պատրիարգ շատ հակառակ եկաց այնմ, մինչեւ բանադրանօք նզովել զկայսրն. ընդ որ զայրացեալ Լեւոնի ընկէց զնա յաթոռոյ եւ առաքեաց յաքսորս, կացուցեալ 'ի տեղի նորա զԵւթիմիոս: Սակայն 'ի մեռանել կայսեր փաղփաղակի ընկեցին զնա յաթոռոյն՝ հաստատեալ զՆիկողայոս յիշխանութեան իւրում, որ անդէն եւ անդ հերքեալ խափանեաց ոչ միայն զչորրորդն, այլ եւ զերկրորդ եւ զերրորդ պսակս ամուսնութեան:

Պատրիարգական աթոռն Կոստանդնուպոլսոյ՝ ցանկացեալն յիշխանաւորութենէ յոգունց, եւ շնորհեալն անխտիր ըստ հաճոյից, ստէպ վիճակեցաւ անձանց անարժանից: Ռոմանոս կայսր՝ որ եկաց թագաւոր յընդմէջել դարուս, զպատիւ պատրիարգութեան ետ որդւոյ իւրում Թէոփիլակտոսի, որ էր պատանի ութեւտասան ամաց անձնատուր 'ի հեշտութիւնս եւ 'ի զօշաքաղութիւն, մինչեւ վաճառել եւ զնուիրական սպաս եկեղեցւոյ 'ի լնուլ զախորժս իւր: Սովորական զբաղմունք նորա էին վատնել զժամանակն 'ի խնամս շանց եւ երիվարաց. եւ այնչափ սիրելի էր նմա այս՝ մինչեւ երբեմն թողուլ թերի զաստուածային պաշտամունս եւ գնալ 'ի տեսութիւն այնոցիկ 'ի գայթակղութիւն ժողովրդեան:

Ի սմանէ ասեն կարգեալ եւ զօրէնն 'ի մեծահանդէս տօնս թափօրիւ խումբ առեալ պարելոյ յեկեղեցւոջ. զոր Եւրոպացիք թէպէտ եւ գայթակղական արարողութիւն համարին, բայց թուի լինել հնաւանդ սովրութիւն արեւելեան եկեղեցեաց, զոր և է տեսանել և 'ի մեր երգս խնկարկութեան 'ի սկսանել պաշտաման պատարագին. « Այս յարկ նուիրանաց . . . խումբ առեալ պարեմք 'ի վերնայարկ սրահս խորանիս », որ նշանակէ զբոլորածիր պարբերութիւն պաշտօնէից եկեղեցւոյ հանդերձ երգովք օրհնութեան.

Եկեղեցին Յունաց յայսմ դարու թէպէտ և վիճակեցաւ անկարգ առաջնորդաց ումանց, սակայն կացին 'ի նմա և ոչ սակաւք այք երեւելիք, անուանիք 'ի վարս բարեպաշտութեան, որպէս յիշատակին յանուանէ առ Յոյնս և առ Լատինս՝ Նիկոն միայնակեաց ազնուատոհմ պոնտացի՝ քարոզ ապաշխարութեան 'ի կղզին Կրետէ, զոր ումանք վրիպակաւ հայազգի համարին և քարոզիչ 'ի Հայաստան. սուրբն Պօղոս Լատրացի անուանեալ. զի յառաջին տիոց անտի մտեալ 'ի մենաստանն որ առ Լատրս լերամբ՝ խստակրօն ճգնութեամբ փոխեցաւ 'ի կենաց. սուրբն Ղուկաս Կրտսեր միայնակեաց՝ համբաւեալ յարեւելս ոչ միայն սրբութեամբ վարուց, այլ և նշանօք սքանչելագործութեան. կոչի Կրտսեր վասն որոշելոյ յայլմէ Ղուկայ Աբբայ անուանելոյ որ հարիւր ամօք յառաջ եկաց քան զսա 'ի Սիկիլիա կղզւոջ մօտ 'ի լեառն Ետնա.

ԳԼՈՒԽ Է.

Փոխադրութիւն դաստառակին Քրիստոսի յԵդեսիոյ 'ի Կոստանդնուպօլիս.

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ անձեռագործ պատկերին Քրիստոսի յԵդեսիա քաղաքի՝ գրեցաք կանխաւ 'ի վէպս անցից վեցերորդի դարուն. մնայ արդ ասել և զփոխադրութիւն այնր 'ի Կոստանդնուպօլիս յամի տեառն 944.

Ռոմանոս կայսր հայկազն՝ փափաքելով առ իւր ունել զգանձն զայն հոգեւոր, գրեաց առ քրիստոնեայս Եդեսիոյ որպէս և առ այլազգի իշխան քաղաքին, խնդրելով զդաստառակն զայն և զնամակն զոր առաքեաց Քրիստոս առ Աբգար թագաւոր. և խոստանայր ընդ այնր պարգեւս մեծամեծս. Բայց 'ի չհաւանել ժողովըր.

դեան ընդ այն, և 'ի հակառակել իշխանին, կամեցեալ Ռոմանոսի կայսեր բռնի կորզել զայնուիկ 'ի ձեռաց նոցա, առաքեաց բազում զօրս մարտ դնել ընդ քաղաքին։ Տեսեալ այլազգի իշխանին զբռնութիւն կայսեր, հաճեցաւ կատարել զկամս նորա. վասն որոյ զանազան դաշամբք խաղաղութեան հաւանեցոյց և զժողովուրդն շնորհել կայսեր զխնդրեալն. զոր առեալ երկուց եպիսկոպոսաց մեծահանդէս փառօք պաշտաման, և պէսպէս սքանչելեօք զորս եցոյց տէր զճանապարհայն, ածին 'ի Կոստանդնուպօլիս. ուր ընդառաջ ելեալ Թէոփիլակտոս պատրիարգ և ամենայն աւագանին Հունաց` ընկալան շքով մեծաւ և տարեալ հանգուցին յեկեղեցւոջ սրբոյ Աստուածածնին։ Եւ զի հանդէս փոխադրութեանս եղև 'ի վեշտասաներորդ աւուր օգոստոսի յամին 944, վասն որոյ կարգեցաւ առ Յոյնս տօն ամ ըստ ամէ։ Անգին յիշատակքս տեառն մերոյ պահեցան 'ի Կոստանդնուպօլիս մինչև ցամ տեառն 1325, յորում ժամանակի 'ի պատճառս խռովութեան կայսերաց բազում գանձք յաւարի առան, ընդ որս գողացեալ եղև և արկղն յորում պահեալ կայր Թուղթն Քրիստոսի առ Աբգար Թագաւոր, և չէ յայտ թէ առ որում կայցէ։ Իսկ դաստառակն փոխադրեցաւ 'ի Հռոմ, որպէս պատմէ Բարոնիոս 'ի տարեգրութեան իւրում յամին 944։

Օրինակ փոխադրութե̄ նորին 'ի Հռոմ` աւանդի 'ի ձեռագիր յիշատակարանս մենաստանի կուսանաց սրբոյն Սեղբեստրոսի, ուր պահի ցարդ անձեռագործ դաստառակն, (կամ որպէս կարծի յայլոց` հրաշանկար գաղափար նորին), թէ 'ի չորեքտասաներորդի դարու յամին 1341 յաւուրս խռովութեան երկուց գահակից կայսերաց, կրօնաւորք ոմանք յոյնք Բարսեղեանք` առեալ ընդ սուրբ դաստառակն խոյս ետուն 'ի Հռոմ, ուր ստացեալ նոցա վանս բնակութեան` ամ ըստ ամէ ըստ սովորութե̄ Յունաց 'ի վեշտասաներորդ աւուր օգոստոսի կատարէին անդ զհանդէս փոխադրութեան դաստառակին յԵդեսիոյ 'ի Կոստանդնուպօլիս։ Ապա 'ի պակասել կրօնաւորացն այնոցիկ Յունաց, մենաստանն այն վիճակեցաւ Փրանկիսկեան կուսանաց, որոց ժառանգեալ զանգին գանձն` անխափան ամի ամի կատարեն զնոյն հանդէս փոխադրութեանն 'ի վեշտասան օգոստոսի յեկեղեցւոջ սրբոյն Սեղբեստրոսի.

Բայց առաւելագոյն երեւի պատմութիւնն եւ աւանդութիւն Գենուացւոց, որք պարծին առ իւրեանս ունել զձեռագիր դաստառակն Քրիստոսի, հնագոյն յիշատակագրովք հաւաստելով զօրինակ փոխադրութեան այնր 'ի Կոստանդնուպօլսոյ 'ի Գենուա կամ 'ի Ճենովա քաղաք. որում հաւանեալ երեւի եւ լրացուցիչ պատմութեն Բարոնիոսի, որ 'ի տարեգրութեան իւրում յամին 1384 աւանդէ՝ թէ յաւուրս կայսերութեան մանկահասակ Յովհաննու Պաղէոլոգի եւ խնամակալուի նորա Յովհաննու Կանտակուզենոսի 'ի ծագել խռովութեան 'ի մէջ երկոցունց, եւ 'ի զօրանալ այլազգեաց եւ գրաւել զբազում քաղաքս Յունաց, մանաւանդ Պաղէոլոգ նեղեալ 'ի ներքին եւ յարտաքին թշնամեաց՝ եգիտ ձեռնտուութիւն 'ի Լէոնարդոսէ Մոնտալտոսէ զօրապետէն Գենուացւոց, որ նուաճեաց զթշնամիս եւ խաղաղացոյց զկայսերութիւնն. Ի շնորհս այսր երախտեաց Լէոնարդոսի կամեցաւ Պաղէոլոգ մեծագին ընծայիւ պատուել զնա. վասն որոյ զանձեռագործ դաստառակ փրկչին, որ էր 'ի մատրան կայսերական պալատան, ետ նմա 'ի պարգեւ՝ հանդերձ այլ եւ այլ նշխարօք սրբոց, զոր խնդութեամբ ընկալեալ Լէոնարդոսի տարած արար 'ի Գենուա յամին 1360 կամ 1363. Սակայն նա զայս անգին գանձ 'ի ծածուկ կալաւ առ իւր 'ի պալատին զամս քսան՝ ամենայն պատուով պաշտաման ըստ իւրում բարեպաշտութեան. Իսկ 'ի ժամանել աւուր վախճանի իւրոյ՝ կամեցաւ յայտնել զայն խոստովանահօր իւրում, որ էր մի 'ի հայազգի կրօնաւորաց որք ընդ կանոնօք սրբոյն Բարսղի բնակէին 'ի մենաստանի սրբոյն Բարթողիմէոսի, եւ կտակաւ թողուլ 'ի յիշատակ այնր եկեղեցւոյ. Զկտակ Մոնտալտոսի՝ զոր արար յամին 1388, ցնծութեամբ ընկալեալ հայազգի կրօնաւորացն՝ եդին զայն պատուով յեկեղեցւոջ իւրեանց 'ի ջերմեռանդութիւն ժողովրդեան. ուր յետ մնալոյ զամս իբր հարիւր իննեւտասն, անպակաս հրաշիւք 'ի մխիթարութիւն բարեպաշտից, յամին 1507 ջանահնար եղեն ոմանք գաղտնածածուկ դաւով գողանալ զայն եւ տանել 'ի Գաղղիա. սակայն չեւ ժամանեալ նոցա անդր՝ իմնացեալ Ճենուացւոց, արիացան կորզել 'ի ձեռաց նոցա, և դարձուցանել յետս 'ի տեղի իւր։ Եւ առ 'ի զգուշութիւն առ յապա ժամանաց՝ կազմեցին ամրակուռ պահարան բազմաթիւ բանալեօք 'ի նմին եկեղեցւոջ սրբոյն Բարթուղիմէոսի, ուր և պահի ցարդ և սքանչելեօք պատուի 'ի հաւատացելոց։ Զստուգութիւն պատմութեանս հաւաստեն կրկին վճիռք եղեալք 'ի հասարակապետութենէն Ճենուացւոց յամին 1508 և 1537, որովք սահմանեցան և աւուրք տարեկան տօնախմբութեան սրբոյ դաստառակին։ Զայս պատմութիւն հաւաստի քննութեամբ եհան 'ի լոյս Հայրն Պօղոս Պիրքանի մեծաւոր Բառնաբեանց 'ի Ճենուա՝ յամին 1828։

ԳԼՈՒԽ Ը.

Վիճակ եկեղեցւոյն Հայոց. շինութիւնք վանօրէից և արք ականաւորք։

ՏԱՍՆԵՐՈՐԴՍ այս դար 'ի շնորհացն Աստուծոյ բարեբաստիկ եղև ազգիս Հայոց, զի կանգնեցան վանորայք բազումք, և երևեցան արք նշանաւորք զարմանալիք սրբութեամբ վարուց և սքանչելագործութեամբք։

Յաւուրս իշխանութեան Բագրատունեաց 'ի զօրանալ թագաւորացն Հայոց՝ ոգի առեալ մերոյն 'ի դառն և 'ի սաստիկ հարկապահանջութենէ և յանգութ բռնութեանց Հագարացւոց, փոյթ յանձին կալան նորոգել զվանորայս։ Յամին 932 Յովհաննէս վանահայր շինեաց յԱրշարունիս զվանս Կամրջաձորոյ, ուր եդ զխաչն հրաշագործ զոր բերեալ էր յաշխարհէն Եգերացւոց։

Առ նոյն ժամանակաւ և այլ ոմն Յովհաննէս վարդապետ բազմութեամբ կրօնաւորաց եկեալ յաշխարհէն Հոռոմոց՝ կանգնեաց 'ի Շիրակ գաւառի զվանսն Հոռոմոսի անուանեալ. նոյնպէս և Ճգնաւոր ոմն Սիոն անուն շինեալ վանք մի 'ի Ճերջան գաւառի՝ կոչեաց վանք Խչաձորոյ։

Ընդ այն ժամանակս յամին 935 կանգնեցաւ յՌշտունիս և վանքն Նարեկայ, ուր ժողովեցան բազմու-

թիւնք ձգնաւոր արանց ուսումնասիրաց, յորս երևելի համբաւեցաւ Յովհաննէս վարդապետ, որ գրովք զինեցաւ ընդդէմ աղանդոյն Թոնդրակեցւոց։ Ի նոյն ժամս բնակեցաւ Պետրոս վարդապետ մեկնիչ գրոց, որպէս և սուրբն Գրիգոր Նարեկացի։

Գովելի նախանձու հետևող գտաւ սոցա և Մովսէս վարդապետ Տարօնացի, որ կանգնեաց 'ի Խորբերդ զՄովսիսավանքն. նոյնպէս Սարգիս վարդապետ ըղվանին Հոռոմոց 'ի Կարին. Ստեփաննոս վարդապետ ըղվանքն Ջախոցքար 'ի Վայոց ձոր։ Նորոգեցաւ և մենաստանն Դպրեվանից 'ի Շիրակ գաւառի, որպէս և Կապուտաքար վանք յԱրշարունիս։ Թող զնորոգութիւնս և այլոց բազում մենաստանաց, որք եղեն ձախուք Աբասայ արքայի Հայոց։ Իսկ յաւուրս որդւոյ նորա Աշոտայ Ողորմածի, որ պայծառացաւ քաջութեամբ և բարեպաշտութեամբ, յամին 963 'ի ձեռն նպաստից դշխոյին Խոսրովանուշայ կառուցան երկոքին հռչակաւոր մենաստանքն Սանահին և Հաղբատ՝ միով ժամու հեռի 'ի միմեանց, յորս ծաղկեցան բազում ականաւոր վարդապետք, որպէս և մեծն Խոսրով, որ պատուաքինն մնեալ 'ի կարգ աշխարհի ծնաւ զսուրբն Գրիգոր Նարեկացի, և ապա կրօնաւորեալ 'ի մենաստանս յայս՝ ձեռնադրեցաւ քահանայ և եպիսկոպոս Անձևացեաց. զորմէ տեսցես առաջ և 'ի կարգս եկեղեցական մատենագրաց այսր դարու։

Այլք պանծալագործք։

Ի ՅՈԳՆԱԹԻՒ *մենաստանաց աստի համբաւեցան արք երևելիք և նշանագործք, մեծարոյք և ծանօցեալք ոչ միայն յազգիս Հայոց, այլ և առ Յոյնս և առ Լատինացիս։ Ի սոցանէ աստի է Դաւիթ երանելի՝ եպիսկոպոս աշխարհին Մոկաց, որ նստէր 'ի վանսն Սուխա Ապարանից անուանեալ, պանծալի սրբութեամբ և խստութեամբ. և 'ի մեռանել իւրում յամին 952 պայծառացաւ նշանօք բժշկութեան. որք լինէին 'ի գերեզմանէ նորա. զոր լուեալ Վասլի և Կոստանդեայ կայսերաց առաքեցին ընծայս մեծագինս գերեզմանի սրբոյն 'ի ձեռն Ստեփաննոսի եղբօրորդւոյ նորին Դաւ-*

թի եպիսկոպոսի. Եկեալ Ստեփանոսի 'ի Հայս՝ նորոգեաց զվանսն, և եդ անդ զպարգևս կայսերացն, որք էին մասն ինչ 'ի կենաց փայտէն, 'ի փշեայ պսակէն, 'ի բևեռաց, 'ի սուրբ խանձարրոց և 'ի հանդերձից Տեառն. Ի պատիւ որոց նշխարացս այսոցիկ 'ի խնդրոյ տեառն Ստեփանոսի, սուրբն Գրիգոր Նարեկացի գրեաց զերկանն Խաչին՝ Պատմութիւն խաչին Ապարանից անուանեալ.

Սուրբն Գրիգոր Նարեկացի ծնեալ յամին 951 փայլեցաւ սրբութեամբ և իմաստութեամբ. որ սնեալ և վարժեալ 'ի վանս Նարեկայ, և լեալ վանահայր այնր մենաստանի՝ կոչեցաւ Նարեկացի. զորմէ տեսցես և 'ի կարգի մատենագրաց դարուս.

Ժամանակակից նորին եկաց և երանելի այրն Աստուծոյ Սիմէօն միայնակեաց հայկազն՝ որդի ուրումն 'ի նախարարաց Հայոց՝ սնեալ յառաքինի վարս 'ի մանկութենէ. և 'ի կամել ծնողաց նորա բռնի ամուսնացուցանել զնա 'ի կարգ աշխարհի յաւուր հարսանեացն փախեաւ գաղտ 'ի տանէ ծնողաց իւրոց յամին 986, և առանձնացաւ յանապատն Երասխաձորոյ, ուր խստակրօն ճգնութեամբ պայծառացաւ շնորհօք սքանչելագործութեան՝ մինչև յարուցանել զմեռեալ աշակերտ իւր. Ի ծաւալել համբաւոյ սքանչելեացն ստիպեցաւ փախչել 'ի հայրենեացն, և գնացեալ յԵրուսաղէմ՝ իբրև յայտնեցան և անդ սքանչելիք նորա 'ի հիւանդս և 'ի դիւահարս, հարկ համարեցաւ խուսել և անտի յանծանօթ երկիր. վասն որոյ դիմեալ յարևմուտս գնաց 'ի Հռոմ յամին 1012, ուր 'ի տաճար սրբոյն Յովհաննու լատերանեան թըշնամանեալ 'ի կղերիկոսէ ումեմնէ իբր հերետիկոս, ուղղափառ դաւանութեամբ իւրով արդարացոյց զանձն առաջի քահանայապետին, և զկղերիկոսն զայն թշնամանողն որ այսահարեալն էր 'ի պատուհաս թշնամանացն՝ բժշկեաց աղօթիւք. Եւ զի պայծառացեալ էր նշանօք բժշկութեան և պատուեալ յամենեցունց, կամեցաւ փախչել 'ի Հռոմայ, և պանդխտութեամբ շրջեցաւ 'ի Սպանիա, 'ի Բրիտանիա և 'ի Գաղղիա՝ գործելով մեծամեծ սքանչելիս, եհաս 'ի Մանդուա քաղաք Իտալիոյ, և առանձնացաւ 'ի մենաստան Բենեդիկտեան կրօնաւորաց. ուր օրինակ բարի եղեալ ամենեցուն խստակրօն վարուք՝ փոխեցաւ առ Աստուած յամին 1016 և պայծառացաւ անթիւ սքանչելեօք, վասն որոյ և կարգեցաւ 'ի թիւս սրբոց։

Ի սմին դարու սքանչելի վարուք փայլեցաւ և երանելին Սակար որդի իշխանին Հայոց Միքայէլի, որ 'ի պատճառս խռովութեան հայաստանի աշխարհի խոյս տուեալ էր յԱնտիոք քաղաք համդերձ ընտանեօք, ուր և ծնաւ երանելիս այս Սակար յամին 970։ Նա մկրտեալ 'ի Սակարիոսէ եպիսկոպոսէ քաղաքին, կոչեցաւ յանուն նորա· և սնեալ զարգացաւ յեպիսկոպոսարանի անդ, ուսեալ և վարժեալ 'ի հայկական, 'ի հելլէն և յասորի դպրութիւնս· և այնչափ առաւելեալ գտաւ սքանչելի վարուք՝ զի 'ի մեռանել Սակարիոսի եպիսկոպոսին ընտրեցաւ յայն աթոռ յամին 995։ Նա զի հայրագութ խնամօք առ աղքատս և առ ախտացեալս՝ հրաշագործ համդիսացաւ 'ի քաղաքին և սկսաւ պատուիլ յամենեցունց, առ խոնարհութեան իւրոյ կամեցաւ խոյս տալ անտի, և անծանօթ երեւօք գնաց նախ յԵրուսաղէմ, և 'ի քարոզել անդ զբանն Աստուծոյ՝ արկաւ 'ի բանտ և տանջեցաւ յանհաւատից· բայց ազատեալ հրաշիւք մեկնեցաւ անտի զիմել յարեւմուտս յերկիր օտար· և 'ի շրջելն ընդ Գերմանիա՝ շնորհք սքանչելագործութեան համդիսացուցին զնա յամենայն տեղիս, յորմէ ստիպեցաւ գնալ 'ի Ֆլանտրա 'ի քաղաքն Գանտաւա, և եմուտ 'ի մենաստան մի կրօնաւորաց· ուր վերստին պայծառացեալ հրաշիւք՝ բժշկելով զհիւանդս և զարմանելով զախտացեալսն 'ի ժանտացաւէ, հարաւ և ինքն նովին ցաւով, որով և վախճանեցաւ 'ի կենաց յամի տեառն 1012, գուշակելով թէ 'ի մահուն իւրում դադարեսցի ախտն մահաբեր· որպէս և եղև իսկ։ Յետ մահուան իւրոյ այնչափ փայլեցաւ սքանչելեօք, մինչև յամին 1067 փոխադրեցաւ մարմին նորա յառանձին խորան, և դասեցաւ 'ի թիւս սրբոց։

Ծաղիկ անուշահոտ ցուցաւ 'ի տասներորդի դարու և երանելին Դաւիթ հայկազն, ծնեալ 'ի Հայաստան առ կենդանութեամբ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ։ Հրաժարեալ սորա յամենայն ստացուածոց՝ յօժարեցաւ պանդխտութեամբ շրջել յուխտատեղիս·

գնաց յԵրուսաղէմ և անտի 'ի Հռովմ. և 'ի կամելն գնալ 'ի Սպանիա յուխտ սրբոյն Յակոբայ, զճանապարհայն տկարացեալ մարմնով եհաս 'ի Լուքքա քաղաք Իտալիոյ, և անկաւ 'ի մահճի յանկելանոցի անդ սրբոյ Հրեշտակապետին. Եւ որպէս յամենայն տեղիս ը̃ որս էանց սքանչելի լեալ էր բարեկրօն վարուքն և նշանագործութեամբք, նոյնպէս և 'ի նմին անկելանոցի եցոյց զհրաշալի առաքինութիւնս իւր. մինչև տիկին մի աստուածասէր շարժեալ 'ի տեսութենէ առնն Աստուծոյ ընկալաւ 'ի տուն իւր դարմանել զնա՝ ուր կացեալ զաւուրս քան և մի, և 'ի տկարութեան անդ իւրում պահելով զամենայն կարգս պաշտաման աղօթից և պահոց՝ երեք աւուրբք յառաջ քան զմահ իւր կոչեաց զտիկինն, և օրհնեալ զնա պատմեաց զօր ելից իւրոյ յաստեացս, և յաւուրն երրորդի աւանդեաց զհոգին 'ի ձեռս Աստուծոյ յամին 1050. Իսկ տիկինն ետ թաղել զնա պատուով 'ի հասարակաց գերեզմանատան. և ահա յետ աւուրց ինչ յանակնկալս բուսաւ որթ ողկուզալից 'ի տապանէ սրբոյն, և որք ճաշակեցին 'ի խաղողոյ անտի նորա ընկալան զառողջութիւն 'ի ցաւոց. բուրեաց հոտ անուշութեան 'ի գերեզմանէն, լսելի եղեն բարբառք հրեշտակաց և այլ նշանք երևելիք գործեցան. վասն որոյ Անսելմոս եպիսկոպոս քաղաքին որ յետոյ եկաց քահանայապետ Հռովմայ, և կոչեցաւ Աղեքսանդր Բ. յամին 1060 ետ հանել զմարմին սրբոյն 'ի տեղւոջէ անտի, և հանգոյց յեկեղեցւոջ կարգելով զնա 'ի դաս սրբոց.

ԳԼՈՒԽ Թ.

Կաթուղիկոսունք Հայոց.

ՅՈՎՀԱՆՆԷՍ Ը. պատմաբան 'ի Դրասխանակերտ աւանէ՝ աշակերտ Մաշտոցի, նստաւ կաթուղիկոս 'ի վերջին ամս անցելոյ դարուն յամին 897. Ականատես եղեալ նա զառնաղէտ վշտաց ժամանակին՝ որոց տարաւ ազգս մեր՝ գրեաց զվէպս անցիցն ճոխ բանիւք. Առաքեցաւ դեսպանութեամբ 'ի Սմբատայ արքայէ առ Յուսուփ ոստիկան, յորմէ և արգելաւ 'ի բանտ խաւարին, և ազատեցաւ անտի տուժիւք ոսկւոյ և արծաթոյ։ Հաշտեցոյց զթշնամութիւն նախարարաց ընդ միմեանս, և յետ ազգի ազգի նեղութեանց և աստանդական կեանս վարելոյ 'ի բռնութենէ այլազգեաց, խոյս ետ 'ի Վասպուրական աշխարհ, ուր աւարտեաց զպատմագրութիւն իւր՝ զսկզբնաւորեալն կանխաւ 'ի քանի մի ամաց հետէ, և վախճանեցաւ անդ յամին 924, կալեալ զաթոռ հայրապետութեան զամս քսանևօթն և զամիս ութ։ Ողորմելի է սա վասն ձախողակի նախանձայուզութեանն ընդդէմ սրբոյ ժողովոյն Քաղկեդոնի։

Ստեփանոս Բ. նստաւ կաթողիկոս յԱղթամար կղզւոջ զկնի Յովհաննու յամին 925. և յետ միոյ ամի վախճանեալ, կալաւ զաթոռն 'ի նմին կղզւոջ՝ Թէոդորոս Ա. յորոյ յառաջնում ամի կաթողիկոսութեանն Գագիկ Թագաւոր Վասպուրական աշխարհի գրեաց թուղթ առ Տրիփոն պատրիարգ Յունաց և առ Ռոմանոս կայսր, խնդրելով 'ի նոցանէ միաբանութիւն սիրոյ ընդ ազգիս Հայոց. այլ ոչ լուան նմա Յոյնք։ Իսկ Թէոդորոս կաթողիկոս անցոյց զկեանս իւր յԱղթամար և վախճանեցաւ անդ, յամին 935, կացեալ 'ի հայրապետութեան զամս տասն։

Եղիշէ եղբայր Թէոդորոսի յաջորդեալ նմա 'ի կաթողիկոսութեան՝ նստաւ յԱղթամար, և յետ հնգից ամաց՝ բանսարկութեամբ թշնամեաց ընկեցաւ յաթոռոյն. բայց եպիսկոպոսունք Հայոց ոչ ետուն թոյլ կարգել զայլ կաթողիկոս 'ի կենդանութեան նորա. որ և մեռաւ յետ երկուց ամաց՝ վարեալ զիշխանութիւնն զամս եօթն։

Անանիա մոկացի նստաւ յաթոռ կաթողիկոսութեան 'ի կղզին Աղթամար յամին 943։ Յաւուրս սորա տէր Յակոբ եպիսկոպոս Սիւնեաց ընդ այլ մոլորութիւնս իւր կամեցաւ ապստամբեցուցանել զեպիսկոպոսունս ժողովրդովք հանդերձ 'ի հնազանդութենէ կաթողիկոսին. վասն որոյ նզովեցաւ ինքն և համախոհք իւր 'ի կաթողիկոսէն։ Ապա 'ի մեռանել Յակոբայ՝ Անանիա կաթողիկոս գնացեալ 'ի Սիւնիս և հնազանդեցուցեալ զամենեսին՝ արձակեաց 'ի նզովից, և ձեռնադրեաց նոցա արքեպիսկոպոս և առաջնորդ ըզ Վահան 'ի գաւառէն Բաղաց, տալով նմա իշխանութիւն շրջելոյ խաչակիր պաշտօնէիւք ։ Նա ժամանակօք կաթուղիկոսին յարեաւ թշնամութիւն Յունաց ընդ ազգիս Հայոց . զի ստիպէին նոքա զՀայս փարիլ եկեղեցական պաշտամամբք իւրեանց , մինչև բանի կրկին մկրտել զբազումս և տալ զգրոշմ . ընդ որ զայրացեալ Հայոց՝ սկսան զնոյն առնել ընդ Յոյնս , և սաստ ծագեցաւ ատելութիւն՝ որ տևէ մինչև ցայսօր ։ Սա ինքն Անանիա կաթուղիկոս բազմաժողով հանդիսիւ յԱնի քաղաքի եօծ թագաւոր Հայոց զերևելին Աշոտ , որոյ թագաւորութիւնն պայծառացաւ ոչ միայն աշխարհաշէն տեսչութեամբ և քաջութեամբ զինուց , այլ և բարեպաշտութեամբ յամենայն ազգս առաքինութեան . մանաւանդ 'ի խնամել զաղքատս , զկաղս , զկոյրս և զայլ ցաւագարս . շինեաց աղքատանոցս և հիւանդանոցս , յորս ինքնին դշխոյին իւրով Խոսրովանուշ յայց ելանէր ծառայել և մխիթարել զնոսա . բաշխէր ողորմութիւնս առատս՝ մինչև 'ի մեռանել իւրում ոչ գտաւ դրամ 'ի գանձատան նորա , որով և անուանեցաւ Ողորմած ։ Յաւուրս բարեպաշտ արքային վախճանեցաւ Անանիա կաթուղիկոս՝ կացեալ 'ի հայրապետութեան զամս քսան և երկու ։

Վահան 'ի գաւառէն Բաղաց՝ ձեռնադրեալն յԱնանիայ՝ կաթուղիկոսէ արքեպիսկոպոս Սիւնեաց , ընտրեցաւ կաթուղիկոս յամին 965 ։ Հաստ լեալ սորա ուղիղ դաւանութեան ժողովոյն Քաղկեդոնի , 'ի նստել իւրում կաթուղիկոս՝ հրապարակաւ ընկալեալ զայն , արար միաբանութիւն ընդ Յոյնս և ընդ Վիրս . յորմէ զայրացեալ ազէտ և անապայ անձանց՝ խռովեցին զազգն Հայոց , և գումարեալ ժողով յԱնի քաղաք կամեցան ընկենուլ զնա յաթոռոյ . իսկ նորա խնդրեալ զպաշտօնեայս ազգին , փախեաւ գաղտ և գնաց 'ի Վասպուրական աշխարհ առ Աբուսահլ արքայ , որ սիրով ընկալաւ զնա , քանզի և ինքն հաւանեալ էր ընդ ուղղափառ խորհուրդս կաթուղիկոսին ։ Եկաց անդ Վահան մինչև ցամ տեառն 972 , և արար կրկին միաբանութիւն ընդ Յոյնս . և կացեալ 'ի հայրապետութեան զամս իբր հնգետասան՝ վախճանեցաւ 'ի Վասպուրական աշխարհի ։

Ի վեցերորդ ամի կաթուղիկոսութեան Վահանայ

'ի խուսել իւրում 'ի Վասպուրական, խռովարարք աղգին ընտրեցին կաթողիկոս զՍտեփաննոս Գ. վանահայր Սևանայ, որ 'ի նստել իւրում յամին 970 առաքեաց անդէն նզովս առ Վահան և առ Աբուսահլ արքայ: Զոր լուեալ Վահանայ՝ փութացաւ ընդդէմ նզովից Ստեփաննոսի գրել նոյնպէս նզովս սաստիկս՝ ոչ միայն առ կաթողիկոսն այլ և առ ամենայն համախոհս նորա. ընդ որ զայրացեալ Ստեփաննոսի՝ խաժամուժ ամբոխիւ աբեղայից դիմեաց 'ի վերայ Վահանայ: Զայն տեսեալ Աբուսահլ արքայ՝ ետ վարել զամենեսին զնոսա 'ի կղզին Աղթամար, և զՍտեփաննոս առաքեաց յարգելս 'ի Կոտորոց բերդ, ուր և մեռաւ նա յետ երկուց ամաց ընտրութեան իւրոյ:

Խաչիկ Ա. եպիսկոպոս Արշարունեաց՝ 'ի կենդանութեան Վահանայ ընտրեցաւ կաթողիկոս յամին 972, և եդ զաթոռ իւր 'ի քաղաքն Արգինա հուպ յԱնի, ուր շինեաց եկեղեցի հոյակապ և կանգնեաց գրատուն՝ հաւաքելով անդր մատեանս յոլովս: Ի յետին աւուրս կաթողիկոսութեան սորա վերստին նորոգեցան հակառակութիւնք Յունաց ընդդէմ Հայոց. որք և գրեցին առ միմեանս նամակս թշնամանագիրս, ընդ որս չէր հաճ Խաչիկ կաթողիկոս. որ և 'ի վերջոյ այնր կռուոյ վախճանեցաւ յամի տեառն 990, կացեալ 'ի հայրապետութեան զամս ութեւտասն: Զկնի նորա կալաւ զաթոռն Սարգիս Ա., որոյ կեանք յերկարեցան մինչև ցամն 1019, վասն որոյ կարդեսցուք զնա 'ի յաջորդ դարու:

ԳԼՈՒԽ Ժ.

Եկեղեցական մատենագիրք:

Ի ՏԱՍՆԵՐՈՐԴԻ դարու առ պակասութեան հոգեջան և խնամոտուն առաջնորդաց արևելեան եկեղեցւոյ՝ նուազեալ տեսան և յառաջադիմութիւնք ընտիր և օգտակար գիտութեանց. Նմին իրի չերևին այնպիսի մեծարու մատենագիրք, որոց գլխաւոր աշխատութիւնք՝ օրինակք իցեն յետնոց: Զի որպէս յիններորդի դարու, նոյնպէս և 'ի տասներորդիս յայսմիկ զօրացեալ էր ախորժ հիւսուածոց հոգետեսիլ հրաշանշան պատմութեանց ։ Մատենագիր ոմն ծանուցեալ ընդ անուամբ Սիմէոնի Մետափրաստեայ՝ եթող մեզ զհամառօտութիւն վարուց սրբոց յօրինեալ խառն և անհաւատի պատմութեամբք ․ յորոց երևի անընտրող պարզմտութիւն օրինակագրին, որ առաւել նպաստամատոյց է 'ի զարթուցանել զմտացածին երևակայութիւնս քան 'ի շարժել զսիրտ ։ Թուի թէ հաւաքեալ իցէ զայնափիկ 'ի վաւերական մատենից , սակայն յերկիւրեալ ըստ քմաց մտաւոր ճոխաբանութեամբ , յաւելլով և զօր միանգամ պատշաճ և պիտանի վարկաւ ըստ կամիս ․ և փոխանակ զհետ երթալոյ պարզ և դիւրիմաց ոճոյ նախնի հարց , յօժարեցաւ ճառս նկարողականս յօրինել քան զվիպասանութիւնս ։ Մատեան նորա և յեղանակ գրութեանն եղև օրինակ և այլոց ժամանակակից միայնակեցաց Յունաց , որոց մատեանք լի են հրաշալեօք մտացածին պատմութեանց ։

Եւտիքիոս աղեքսանդրացի արար զհամառօտ բովանդակութիւն ընդհանուր պատմութեան 'ի ստեղծմանէ աշխարհի ․ է 'ի նմա և կարգ յաջորդութեան Մելքիթ պատրիարգաց ցուցակ իւր ։

Սեւերոս եգիպտացի 'ի վերջ կոյս տասներորդի դարուս գրեաց զանցս պատմութեան Սարակինոսաց և զեկեղեցւոյն Աղեքսանդրիոյ ։

Զոր ինչ միանգամ կանխեցաք ասել թերևս յաղագս արևելեան մատենագրաց , զնոյն է խոհմալ և վասն արևմտեայցն ․ համբաւաւոր եկաց 'ի սոսա Ռատերիոս եպիսկոպոս Վերոնա քաղաքի՝ ոչ այնչափ վասն գիտութեանն՝ որչափ սակս յոգնադիմի հակառակուե̃ց որոց տարաւ յընթացս կենաց իւրոց ։ Վասն սորա միայնակեաց լոկ աբբայական մենաստանին Լոբբէսի , բարձրացաւ յաթոռ եպիսկոպոսութեան Վերոնա քաղաքի ․ բայց Հուգոն դուքս՝ որ յայնժամ թագաւորէր Իտալիոյ , ժամանակս ոչ սակաւ թշնամութեամբ գոլով ընդ նմա , ոչ միայն նուաղեցոյց զեկամուտ նորին , այլ և ցասուցեալ ընդ այն՝ զի ոչ վարէր ըստ հաճոյից իւրոց՝ ընկէց զնա յաթոռոյն և աքսորեաց յաքսորս , փոխանակ նորա կացուցեալ զայլ ոմն եպիսկոպոս ։ Ռատերիոս ջանացեալ յինքն ձգել դարձեալ զիշխանութիւնն , 'ի վերջէ ուրեմն ստիպեցաւ մեկուսանալ անգրէն 'ի մենաստան իւր, մինչև կայսրն Օթոն որ տիրեաց Իտալիոյ, հասու եղեալ զաւելի բարեմասնութեանց Հատերիոսի, ազդ արար նմա զնալ առ Բրունոն արքեպիսկոպոս Կողոնիոյ, և կարգեաց զնա եպիսկոպոս Լիէժ քաղաքին։ Բայց Հատերիոսի ցանկացեալ եպիսկոպոսութեան Վերոնայ, ջան գործեաց կորզել զայն 'ի գալստեան Օթոնի կայսեր յԻտալիա, և նստաւ միւսանգամ յայն աթոռ։ Սակայն գժտեալ ընդ կղերին իւրում, հարկեցաւ անդրէն թողուլ զայն, և երթեալ 'ի Կողոնիա՝ գնեաց կալուածս և ստացաւ զաբբայական վիճակին սրբոյն Ամանդոսի, Օմոնի և Օնայի։ Գրաւոր երկասիրութիւնք Հատերիոսի սիրելիք են նոցա, որք միանգամ ցանկան գիտել զհետս նախնի բարեկարգութեանց, որպէս և զախտութեանցն որք էին առ ժամանակօք նորա։ Կարի երգիծականք են նկարագրութիւնք յաղագս անկարգութեանց եղելոց յաւուրս իւր զորս կշտամբէ դառն բանիւ, որովք երեւի պատճառս տուեալ բազմանալոյ թշնամեաց իւրոց։ Կանոնք և ճառք, սահմանադրութիւնք ժողովականք և նամականի։ Վախճանեցաւ 'ի Նամուր քաղաքի յամին 974։

Եթէ 'ի գրուածոց սորա մարթ լիցի գուշակել զհանգամանս բարուց մատենագրին, Հատերիոս երեւի լինել այր առաքինի և արժանապատիւ եպիսկոպոս. սակայն անյագ ցանկութիւն նորա յեկեղեցական ստացուածս՝ յայտ առնէ, թէ վարք նորա անհամեմատք էին խստութեան կանոնացն և գրոց յօրինելոց 'ի նմանէ։

Մատենագրութիք Բրունոնի Վիրգիլեայ, և Ալփրիկոսի բարեհիւսք են և ընտիրք՝ հայելով 'ի վիճակ այնր ժամանակի, և վարդապետութիւնք ուղղափառ հաւատոյ և բարի վարուց յայտնի երեւին 'ի նոսա։

Պատմութիւնք այսր դարու յԵւրոպիա, Լուիտպրանդոս եպիսկոպոս Կրեմոնա քաղաքի, և Նոտկերոս եպիսկոպոս Լիէժեայ՝ երգիծաբանք և յօժարամիտք 'ի պատմութիւնս անսովոր և նորանշան անցից՝ թափուրք են 'ի պերճախօսութենէ և թերացեալք 'ի գեղեցիկ կարգաւորութենէ։

Հաւաքումն եկեղեցական կանոնաց՝ յօրինեալ 'ի Բուրգարդոսէ Վորմեան, թէպէտ և անկատար ինչ երկասիրութիւն իցէ, սակայն արժանապատիւ համարի իբր յիշատակագրութիւն ընթացից բարեկարգութեան դարուս։

Ի մատենագիրս ազգիս արժանի յիշատակաց են՝ Յովհաննէս Ե. կաթուղիկոս պատմաբան, որ գրեաց պատմութիւն Հայոց սկսեալ ՚ի Հայկայ մինչև ցԱշոտ Բ. թագաւոր Բագրատունեաց ցամ տեառն 920։ Հաւատի և վայելուչ բանիւք նկարագրէ զանցսն որք եղեն առ կենդանութեամբ իւրով։

Մեծն Խոսրով եպիսկոպոս Անձևացեաց արար ըզմեկնութիւն ժամակարգութեան և զպատարագամատոյց գրոց ընտիր ոճով և քաղցր բանիւք։

Սուրբն Գրիգոր Նարեկացի որդի մեծին Խոսրովու Անձևացեաց եպիսկոպոսի, սրբութեամբ վարուց և հրաշալի առաքինութեամբ պայծառացեալ, արար ըզգիրս հոգեշունչս աղօթից որ կոչի Նարեկ։ Գրեաց և ճառս և ներբողեանս, գանձս և մեղեդիս. նոյնպէս և զմեկնութիւն երգոց երգոյն Սողոմոնի, և զհրահանգ հաւատոյ և վարուց բարեաց։

Մեսրոպ երէց պատմաբան ՚ի Վայոց ձորոյ՝ արար զպատմութիւն սրբոյն Ներսեսի մեծի ՚ի խնդրոյ Սահակայ Մամիկոնէի տարօնեցւոյ։ Ի նոյնին ժամանակաւ Ստեփանոս վարդապետ տարօնեցի՝ որ և Ասողիկ գրեաց զպատմութիւն Հայոց ՚ի ծագմանէ ազգին մինչև ՚ի ժամանակս իւր՝ ցամ տեառն 1000։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Համառօտ տեսութիւն հանգամանաց տասներորդ դարուս։

Այս դար թէպէտ և անապատ պահեցաւ ՚ի նորահնար մոլորութեանց, սակայն յետնեալ գտաւ և ՚ի պայծառութենէ ուսմանց։ Խոչընդոտք յառաջադիմութեան ուսմանց եղեն անդուլ խռովութիւնք արևելեան և արևմտեան կողմանց, աշխարհաւեր բռնութիւնք Հագարացւոց, արշաւանք և աւարառութիւնք Նորմաննեանց, Սարակինոսաց, Բուլղարաց ընդ ամենայն Եւրոպէ, յԱնգղիա ՚ի Գաղղիա և յԻտալիա, որք պատճառք եղեն ապա համաշխարհական մոլորից. վասն որոյ առն իրաքանչիւր փոյթ յանձին կալեալ մարզել 'ի զինուորական հրահանգս, զի զդէմ ունել կարասցեն խուժն թըշնամեաց, անհետացան զոգցես 'ի սպառ դպրոցք և վարժարանք գիտութեան, մինչև բազմաց անգիտանալ և զընթեռնուլն և զգրել. և 'ի ստիպողական ևեթ հարկի ձեռնամուխ լինէին 'ի գրութիւն մեծամեծ և կարևոր իրաց։ Եւ թէպէտ այսպէս նուազեալ պակասեաց գրաւորական ճոխութիւն, սակայն յեկեղեցականաց և 'ի միայնակեցաց ժամանակին կացին արք ոչ սակաւք համբաւեալք յուսմունս և յիմաստութեան։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Ազգային ժողովք ։ — Ժողով Անւոյ Ա. յամի տեառն 961 ։

Ի ՄԵՌԱՆԵԼ Աբասայ արքայի Հայոց լի աւուրբք և արդեամբք, տեսեալ նախարարաց զիմաստուն արիութիւն անդրանկի նորա Աշոտոյ, խորհեցան օծանել զնա 'ի թագաւոր Հայոց յաթոռ իշխանութեան հօր իւրոյ։ Եւ հրեշտակագնաց եղեալ առ Փիլիպպոս արքայ Աղուանից և առ կաթուղիկոս նոցա Յովհաննէս, հրաւիրեցին զնոսա 'ի հանդէս տօնին։ Եւ այսպէս նախարարացն ամենեցուն և քառասնիւ չափ եպիսկոպոսաց կաթուղիկոսին հանդերձ 'ի մի հաւաքեալ յԱնի քաղաք, մեծահանդէս շքով կացուցին զԱշոտ 'ի թագաւոր ազգիս։

Ժողով Անւոյ Բ. յամին տեառն 965։

ԱՆԱՆԻԱ կաթուղիկոս զամս բազումս կալեալ զիշխանութիւն, իբրև ետես զանձն մերձ 'ի վախճանել, հրամայեաց կացուցանել ընդ իւր զՎահան զոմն 'ի Բաղաց գաւառէ Սիւնեաց, զոր՝ որպէս կանխեցաք ասել 'ի վերայ անցից կաթուղիկոսաց ազգիս՝ ինքնին կարգեալ էր յաթոռ եպիսկոպոսութեան Սիւնեաց։ Վասն այնորիկ յետ մահուան Անանիայ ժողովեցան ամենեքին յԱնի քաղաք, ունելով ընդ իւրեանս և զՅովհաննէս կաթուղիկոս Աղուանից, և միաբան հաւանութեամբ ամբարձին զՎահան յաթոռ կաթուղիկոսութեան Հայոց։

Ժողով Անւոյ Գ. յամի տեառն 970։

ԾԱՆՈՒՑԵԱԼ Վահանայ կաթուղիկոսի զուղղափառ դաւանութիւն սրբոյ ժողովոյն Քաղկեդոնի, սէր և միաբանութիւն հաստատեաց ընդ Յոյնս և ընդ Վիրս։ Զայն տեսեալ հակառակասիրաց ոմանց, որք և թշնամանագիրքն էին սրբոյ ժողովոյն, շփոթս և յոյզս խռովութեանց յարուցին 'ի Հայս։ Յայնժամ Աշոտ արքայ ցանկացեալ անդորրութեան աշխարհին՝ հրամայեաց ժողովել եպիսկոպոսաց խաղաղել զաղմուկն։ Վասն այնորիկ եպիսկոպոսք և քահանայք և բազում միանձունք գումարեցան յԱնի քաղաք, և երկպառակեալ 'ի խորհուրդս և 'ի բանս միանգամայն, ուր ուրեմն ընկեցին զՎահան յաթոռոյն, և փոխանակ նորա կարգեցին զՍտեփաննոս ոմն վանահայր Սեւանայ յազգականութենէ Մաշտոցի։ Սակայն և այնպէս ոչ 'ի սպառ շիջաւ աղմուկն 'ի հակառակութենէ անտի կաթուղիկոսացս երկոցուն Վահանայ և Ստեփաննոսի, որպէս և համառօտիւ ծանուցաք 'ի պատմութեան կաթուղիկոսաց ազգիս։

Ժողով Անւոյ Դ. յամի տեառն 972։

ԿԱՑԵԱԼ Ստեփաննոսի զամն երկու յիշխանութեան իւրում վախճանեցաւ զկեանսն։ Յայնժամ խորհուրդ ետ Աշոտ արքայ առաջնորդաց և եպիսկոպոսաց ազգիս հաստատել միւսանգամ զՎահան յայն աթոռ. այլ յընդդէմ դառնալ ոմանց և 'ի հակառակել՝ ժողովեցան վերստին յԱնի քաղաք և միաձայն հաւանութեամբ կարգեցին յաթոռ կաթուղիկոսութ̃ն զԽաչիկ եպիսկոպոս Արշարունեաց, որ 'ի ձեռն Տրդատայ ուրուեմն բազմարուեստ ճարտարապետի շինեաց զկաթուղիկէն Անւոյ և զայլ եկեղեցիս, և բազմապատիկ սպասուք ճոխացոյց զնոսա։

ժողով Անւոյ Ե., յամի տեառն 987 ։

ԵՐԱՆԵԼԻ հայրն մեր սուրբն Գրիգոր՝ Նարեկացի որ սրբութեամբ վարուց և իմաստութեամբ ծաղկէր ՚ի տասներորդի դարուս, տեսեալ զտարապարտ բաժանումն ազգին յեկեղեցւոյն Յունաց ըստ իւրումն խաղաղասէր բարոյից ջանացաւ ՚ի սէր և ՚ի միաբանութիւն յորդորել և հաստատել զազգսն զերկոսին ։ Սմին իրի և բազումք յանոպայ մարդկանէ ոչ ինչ ամենևին ակն ածեալ ՚ի սրբութենէ նորա և ՚ի հրեշտակակրօն վարուցն, սկսան հերետիկոս զնա ձայնել և թերացեալ յուղիղ հաւատոց ․ և աղմուկ շփոթի յարուցին ընդ բնաւ Հայաստան ։ Վասն որոյ վարդապետք ումանք և իշխանք ժողովեցան յԱնի քաղաք՝ ըստ արժանին պատժոյ պատուհասել զսուրբն եթէ ճշմարիտ իցեն բարուք ամբաստանութեանցն յօդեալք զնմանէ ։ Ապա առաքեցին առ նա հրաւիրակս փորձել և ՚ի վերայ հասանել մտաց խորհրդոյ նորա ․ զոր խնդացեալ Գրիգորի ընկալաւ զնոսա սիրով, և յաւուր ուրբաթու եդ առաջի նոցա ՚ի կերակուր աղաւնիս խորովեալս ։ Եւ ՚ի գայթակղել ընդ այն հրաւիրակացն և ՚ի ծանուցանել նմա զի ուրբաթ է օրն և պահք, նա իբր յանդէտս իմն եղեալ խնդրեաց ներումն, և հրամայեաց աղաւնեացն երթալ անտի ՚ի բաց ․ և նոցա թեւս առեալ անդէն և անդ թռեան ։ Զարմացան յոյժ ընդ այն հրաւիրակքն, և թողութիւն առ ՚ի նմանէ խնդրեալ վասն տարապարտ կասկածանացն, գնացին առ ժողովեալսն և գովութեամբք հռչակեցին զերկնային քաղաքավարութիւն նորա ։

ժողով Անւոյ Զ., յամի տեառն 992 ։

Ի ՎԱԽՃԱՆԵԼ Խաչկայ կաթուղիկոսի, Գագիկ արքայ մականուանեալն Շահնշահ գումարեաց ժողով մեծ յեպիսկոպոսաց և ՚ի վարդապետաց ՚ի քաղաքն Անի, և շնորհեաց զիշխանութիւն Սարգսի ումեմն վարդապետի առն պերճացելոյ ազգի ազգի բարեմասնութեամբք ։ Սա զառաջինն մինչդեռ էր ՚ի կարգս միաբանից Սևանայ վանացն, շնորհս գտեալ յաչս Գագկայ *արքայի, որ չէր տակաւին ամբարձեալ յաթոռ թագաւորութեան, ընկալաւ 'ի նմանէ զվանսն Շաղագայ, և կարգեալ անդ առաջնորդ Սևանայ՝ յետ ա̀յնորիկ ամբարձաւ 'ի կաթողիկոսութիւն ։*

ԴԱՐ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա.

Քահանայապետք Հռովմայ։

ԵՐԵՒԵԼԻ անցք արժանիք յիշատակագրութեան մինչև ցկէս մետասաներորդի դարուս՝ եղեն տագնապք քահանայապետացն Հռովմայ 'ի պատճառս հակառակութեան պապից։ Ի յետին ամ նախընթաց դարու, որպէս կանխեցաք ասել անդանօր, յետ Գրիգորի Ե. յամին 999 նստաւ յաթոռ քահանայապետութեան Սեղբեստրոս Բ. ավերնացի՝ զամս չորս, և զաւուրս քառասուն։ Զկնի նորա յամին 1003 Յովհաննէս ԺԷ. Փասանոս 'ի վիճակէ Ֆեռնայ քաղաքի ընտրեցաւ քահանայապետ, և եկաց զամիսս իբր հինգ։ Առ սովաւ հակառակաթոռ կանգնեցաւ Յովհաննէս Փիղակատոս 'ի Կալաբրիոյ, որ ծանուցեալ է ընդ անուամբ Յովհաննու ԺԶ։ Ապա յամին 1005 կալաւ զաթոռ քահանայապետութեան Յովհաննէս ԺԸ. հռովմայեցի զամս երեք և զամիսս հինգ. յետ նորա յամին 1009 Սերգիոս Դ. հռովմայեցի զամս իբր երիս. ապա յամին 1012 Բենեդիկտոս Ը. հռովմայեցի 'ի Տուսկուղեան զարմէ զամս մետասան և զամիսս ինն. զկնի նորա յամին 1024 նստաւ Յովհաննէս Ի, եղբայր Բենեդիկտոսի ութերորդի, զամս ինն։

Յաւուրս սորա եկին 'ի Հռովմ դեսպանք Յունաց խնդրել 'ի քահանայապետէն զի հաճեսցի շնորհել պատրիարգաց Կոստանդնուպօլսոյ զիշխանութիւն վարելոյ զանուն Տիեզերական հայրապետի, որում հակառակ կացին համօրէն եպիսկոպոսունք Եւրոպայ։

Զկնի մահուան Յովհաննու քսաներորդի՝ Տուսկուլեան զարմն որ զօրացեալ էր յոյժ յայնժամ յԻտալիա՝ ջանահնար եղև ամբառնալ 'ի պատիւ քահանայապետութեան զպատանի ոմն երկոտասանամեայ՝ զեղբօրորդի Բենեդիկտոսի Ը, որ անուանեցաւ Բենեդիկտոս Թ. բայց յետ տասն ամաց և եօթն ամաց հրաժարեցաւ նա 'ի պատուոյն և յիշխանութենէն ։

Առ ժամանակօք ընտրութեան սորա յարեան երկու այլ հակապապք, որք կաշառօք և կամ բռնութեամբ կամեցան յինքեանս գրաւել զաթոռ քահանայապետութեան. և այս հերձուած պատճառք եղև քաղաքական մարտի ։ Յայնմ ժամանակի քահանայ ոմն հռովմայեցի Գրատիանոս անուն ձոխ և ազնուական՝ հաւանեցոյց զերկոսին հակապապսն հրաժարել 'ի բռնաբարեալ պատուոյ անտի, տալով նոցա փոխարէն ստացուածս 'ի պարէն կենաց. և ապա ինքնին կալեալ զաթոռ քահանայապետութեան յամի տեառն 1044, անուանեցաւ Գրիգոր Զ ։ Սա քանզի Բենեդիկտոս Թ. հրաժարեալն յաթոռոյ՝ ընտրեալ էր յառաջ քան զհակապապսն զայնոսիկ, եթող նմա վայելել յեկամուտն, որ 'ի վաղ ժամանակաց հետէ սովոր էր գալ յԱնգղիոյ յանուն սրբոյն Պետրոսի ։

Արդ Գրիգոր Զ, այր խոհական և ողջամիտ յետ երկուց ամաց և ութ ամսոց քահանայապետութեան՝ անարժան համարելով զընտրութիւն իւր վասն կաշառոց յամի տեառն 1046 հրաժարեցաւ 'ի պատուոյն, և ընտրեցաւ ապա 'ի տեղի նորա Սուիտկերոս եպիսկոպոս Բամբերկայ սաքսոնացի, որ անուանեցաւ Կղեմէս Բ, և եկաց 'ի քահանայապետութեան զամիս ինն ։

Ի վախճանել սորա կայսրն Հենրիկոս Գ, որ 'ի ձեռն կուսակցաց իւրոց իշխէր 'ի Հռովմ, ետ ընտրել 'ի քահանայապետութիւն զԴամասոս Բ պաւարիացի, որ կալաւ զաթոռն զաւուրս քսան և երիս ։ Յետ նորա յամին 1049 ընտրեցաւ սուրբն Լեոն Թ յազգականութենէ Կորրադոսի կայսեր, և էր որդի Հուգոնի կոմսին և եպիսկոպոս Տուղեայ. եկաց 'ի քահանայապետութեան զամս հինգ և զամիս երիս ։ Սա եղև առաջին, որ ը̅ քահանայապետական պատուոյ կալաւ և զաթոռ եպիսկոպոսութեան իւրոյ ։ Նա այր առաքինի և զորզարեալ ընտիր բարեմասնութեամբք, թէպէտ և ոչ անմասն ՚ի մարդկային թերութեանց. սակայն և այնպէս արար բազում գործս արժանիս գովութեան ։ Ի մտի կալաւ բարեկարգութեան փարուց, գումարեաց ժողովս և սահմանեաց նզովս սաստիկս ընդդէմ սիմոնականութեան, որ յաճախեալն էր յոյժ ՚ի ժամանակին, և ընկեց յաթոռոյ զընտրեալսն կաշառօք ։ Ստէպ ուղղորդութեամբ ջանահնար եղև հաստատել զհնարաւոր բարեկարգութիւն յայլ և այլ տեղիս, և զարման տանել անկարգութեանց ինչ սպրդելոց յեկեղեցի ։ Նա ոչ շատ համարեալ զբարեկարգութիւն փարուց և զեկեղեցական պաշտամանց, համարձակեցաւ եղանել ՚ի մարտ ընդդէմ Նորմաննեանց և վանել զնոսա և արգելուլ յաւարառութենէ ժողովրդեան. բայց յաղթահարեալ ՚ի նոցանէ եղաւ ՚ի կապանս ։ Մեռաւ ՚ի Հռոմ յամին 1054, և լացին զնա ամենեքեան իբր զգորովագութ հայր աղքատաց ։

Զկնի մահուան Լեոնի Թ. յամին 1055 կալաւ զաթոռ քահանայապետութեան Վիկտոր Բ. զամս երկու և զամիս երիս ։ Նմա Ստեփաննոս Ժ. ՚ի դքսից անուն Լորենայի՝ զամիս իբր ինն ։ Յետոյ յամին 1058 Բենեդիկտոս Ժ. հռովմայեցի Պանթեան Մինչիոյ անուանեալ, որ յետ սակաւ ամսոց հրաժարեցաւ յիշխանութենէ. փոխան որոյ ՚ի նմին ամի ընտրեցաւ Նիկողայոս Բ. գաղղիացի, որ կալաւ զաթոռն զամս երկու և զամիս եօթն ։ Յետ նորա յամին 1061 ընտրեցաւ ՚ի քահանայապետութիւն Աղեքսանդր Բ. Միլանեցի՝ զամս մետասան և զամիս իբր եօթն ։ Յաւուրս սորա չեղեն ինչ գործք արժանիք յիշատակաց մինչև ցԳրիգոր Է., որ կալաւ զաթոռն յամին 1073, և զորմէ հանդերձեալ եմք խօսել ՚ի ստորև ։

ԳԼՈՒԽ Բ.

Յետին հերձուած եկեղեցւոյն Յունաց։

Ի քահանայապետութեանն Լեւոնի Թ. պատահեաց աւաղելի հերձուածն և բաժանումն եկեղեցւոյն Յունաց՝ յընդհանրական գլխոյ անտի քրիստոնէական կրօնից՝ յեկեղեցւոյն Հռովմայ։ Կանխեցաք ասել ՚ի վերոյ անցից իններորդի դարու զփորձ հնարիցն Փոտայ առ ՚ի գլուխ հանել զայս բաժանումն. այլ հուրն զոր եբոյց նա թէպէտ և առ ժամանակ մի շիջեալ թուեցաւ յիմաստուն և ՚ի խոհական տնտեսութենէ քահանայապետացն Հռովմայ, սակայն ծածկեալ կայր ընդ մոխրով և սպասէր առթի վերստին բորբոքելոյ։

Պատրիարգունք Կոստանդնուպօլսոյ յաճախ վերծանութեամբ գրոյն Փոտայ ձգեցին յանձինս զամենայն թոյնս դառնութեան բանից նորա։ Միքայէլ Կերուլարիոս յամին 1043 նստեալ յաթոռ պատրիարգութեան՝ չոգաւ զհետ ամբարտաւան մտացն Փոտայ, և յամին 1053 գրեաց առ Յովհաննէս եպիսկոպոս Տրանիոյ, որ ՚ի Փուլիա գաւառին Իտալիոյ, թուղթ ընդարձակ, պատուիրելով տալ զայն առ պապն և առ ամենայն արեւմտեան եպիսկոպոսունս։ Յայսմ նամակի՝ որ էր դրօշ ամբոխել հակառակութեան և թշնամութեան, ամբաստան լինէր զեկեղեցւոյն Լատինաց՝ յանցանս մոլորութեան հաշուելով նմա զգերծելն զմօրուս, զպահելն յաւուր շաբաթու, զվարելն բաղարջ ՚ի քառասնորդական պահսն, զուտելն զարիւն կենդանեաց և զմիս հեղձուցելոց, և զարգելուլն զամուսնութիւն քահանայից։

Յաւելոյր յայտնի և զայլ չարախօսութիւնս՝ թէպէտ և սուտս և անտի, բայց դիւրահաւանելիս տգէտ և ռամիկ մարդկան։ Զայն ամենայն լուեալ սրբոյ քահանայապետին Լեւոնի Թ. վշտացաւ յոյժ, և փութացեալ առաքեաց դեսպանս ՚ի Կոստանդնուպօլիս՝ զառաջս առնուլ զվնասակար արգասեաց անողոքելի թշնամութեանն։ Ի ժամանել դեսպանացն՝ կայսրն Կոստանդին Մոնոմախ ընկալաւ զնոսա և մեծարեաց պա-

տուով, բայց պատրիարգն Կերուլարիոս չկամեցաւ խօսել ընդ նոսա, և ոչ իսկ տեսանել. ընդ որ զայրացեալ դեսպանացն քահանայապետին՝ ընդ բանիւ արարին զպատրիարգն և զհամախոհս նորա 'ի տաճարի սրբուհւոյն Սոփիայ: Յայնժամ բարկացեալ Կերուլարիոսի ընդ այն գործ դեսպանացն Հռովմայ՝ յանդգնեցաւ և ինքն նզովել զնոսա. ստիպեաց դարձեալ զկղերս իւր և զժողովուրդն առ հասարակ 'ի հերձուած անկարկատելի, և յայնմ օրէ և առ յապա քաղաքք և եպիսկոպոսարանք հանդերձ պատրիարգական աթոռով բաժանեցան յեկեղեցւոյն Հռովմայ: Բայց և միանձունք Լատինաց՝ որք ոչ հրաժարեցան յեկեղեցական ծիսից իւրեանց և յարարողութեանց՝ արտաքսեցան 'ի մենատանացն իւրեանց որ 'ի քաղաքին և 'ի մերձակայ վայրս Կոստանդնուպօլսոյ. և այսպէս 'ի սպառ հերձեալ բաժանեցան կրկին եկեղեցիքն 'ի միմեանց:

Յետ մահուան Կոստանդեայ Մոնոմախի, որ առ հարկի ստիպեալ յանձն էառ զիջանիլ նորահնար փոփոխութեանց զորս եմուծ Կերուլարիոս, իբրև էառ զվարչութիւն տէրութեան թագուհին Թէոդորա, և ապա Միքայէլ Զ. տեսեալ Կերուլարիոսի թէ յաւուրս իշխանութեան սորա ոչ կարէ 'ի գործ դնել զկամս իւր, խորհեցաւ ընկենուլ զնա յիշխանութենէ և կարգել զայլ ոք որ համախոհ և համամիտ իւր իցէ. վասն որոյ գաղտնի հնարիւք յապստամբութիւն յորդորեալ զժողովուրդն, խնամ կալաւ յետոյ 'ի վերին երեսս խաղաղել զնոսա. և որպէս այն թէ ստիպեալ 'ի բռնութենէ ապստամբաց և յերկիւղէ վտանգի կործանման տէրութեանն, ետ բառնալ զգլուխս Կոստանդնուպօլսոյ և ընդունել 'ի ներքս զԻսահակ Կոմնենոս յամին 1057: Յետ մտանելոյ Կոմնենոսի 'ի քաղաքն՝ Կերուլարիոս պատրիարգ առաքեաց չորս մետրապօլիտս առ Միքայէլ կայսր՝ յորդորել զնա հրաժարել յիշխանութենէն: Եհարց Միքայէլ եթէ “ Զինչ խոստանայ ինձ պատրիարգն փոխան արքայական գաւազանիս և իշխանութեանս „: Ետուն պատասխանի, թէ “ Զերկնից արքայութիւնն „: Զայն լուեալ Միքայէլի կայսեր՝ կամակար մերկացաւ յանձնէն զծիրանիսն, և առանձնացաւ 'ի մենաստան ուրեք:

Կոմնենոս՝ որ նենգութեամբ Կերուլարիոսի առեալ էր զիշխանութիւնն, ժամանակս ինչ եթող զնա վարել ըստ մտի, այլ 'ի յանդգնել նորա բռնանալ յոյժ մինչև սպառնալ և կայսեր գլխովին զրկել զնա յաթոռոյ անտի իշխանութեանն՝ եթէ ոչ վարեսցի խորհրդով իւրով, հարկ եղև Կոմնենոսի զաղտնի դաւով բանտարգել առնել զամբարտաւան պատրիարգն և առաքել յաքսորս, ուր և վախճանեաց նա զկեանսն ։

Հերձուածն յուզեալ և նորոգեալ 'ի Կերուլարիոսէ հաստատեցաւ յաւուրս յաջորդաց նորա ։ Ի ժամանակս հերձուածոյն որ եղև առ Փոտաւ՝ հոգի հակառակութեան և ատելութեան ծածկաբար սերմանեալ կայր 'ի Յոյնս ընդդէմ Լատինաց. և թէպէտ միաբանութիւն կեղծէին, սակայն բազումք այնոքիկ էին 'ի Յունաց որք սպասեալ մնային պատեհ ժամու 'ի խզել և զարտաքին կապ սիրոյ և բարեկամութեան ընդ Լատինս ։ Մի 'ի գլխաւոր պատճառաց ատելութեան սոցա պարտ է համարել և զայն զի 'ի բազում՝ ժամանակաց հետէ պատրիարգունք Կոստանդնուպօլսոյ սեպհականեալ էին զանուն տիեզերական եպիսկոպոսի, որ քահանայապետաց եւեթ Հռովմայ անկ էր, և զի չէր մարթ Լատինացւոց ներել զայն Յունաց, և ծանր էր Յունաց հրաժարել անտի, նուաղութիւն սիրոյ երկոցունց միանգամայն՝ հորդեաց զշաւիղ աւաղելի հերձուածոյս ։

ԳԼՈՒԽ Գ.

Քահանայապետութիւն Գրիգորի Է. — Խնդիր յուզեալ զիրաւանց եկեղեցական ժառանգաւորութեան ։

ՀԵՐՁՈՒԱԾՆ արևելեան եկեղեցւոյ թէպէտ և պատճառք եղև բազմադիմի վնասուց եկեղեցւոյն Հռովմայ, սակայն և բռնաբարութիւնք արևմտեան իշխանաց ոչինչ նուազ աղէտաբեր եղեն սորոյ աթոռոյն ։ Կայսերք Գերմանիոյ, որպէս տեսաք վերագոյնդ, սովոր էին խառնել 'ի տեսչութիւն քահանայապետացն Հռովմայ. բայց առ կայսերութեամբ Հենրիկոսի Դ. ամենայն ինչ կերպարանափոխ եղև. զի Գրիգոր Է., որ էր կրօնաւոր Բենեդիկտեան 'ի Կլունեան մենաստանէն, իբրև նորտու յաթոռ սրբոյն Պետրոսի յամին 1073 արիական հոգւով խնամ կալաւ՝ ազատել զաթոռ քահանայապետութեանն յաշխարհական իշխանութենէ. վասն որոյ անդէն և անդ գումարեաց ժողով ՚ի դարման անկարգութեանց. յորս նզովեցան եկեղեցականքն՝ որք ՚ի ստանալ զժառանգաւորութիւն տուեալ էին դրամս. նոյնպէս և աշխարհական իշխանքն՝ որք շնորհեալ էին նոցա իրաւունս ժառանգաւորութեան։

Ի բազում ժամանակաց հետէ կայսերք սովորութիւն ստացեալ ունէին զիշխանութիւն պարգևելոյ այլոց զեպիսկոպոսական մականս և զաբբայութիւնս, և տալ իրաւունս ժառանգաւորութեան որոց միանգամ անուանեալ լինէին յայն պատիւն, որք և նախ քան զօծումն եպիսկոպոսութեան սովոր էին կրել զհովուական գաւազան և զմատանի։ Զայս սովորութիւն արգել խստիւ քահանայապետս՝ համարեալ զայն իբր ազգ ինչ սիմոնականութեան, զի եկեղեցականք ընկալցին ՚ի ձեռաց աշխարհականաց զտէրութիւն ժառանգաւորութեան. և զտուողն և զընդունողն միանգամայն պարտաւէր։ Կայսրն Հենրիկոս Դ., որ զբաղեալն էր ՚ի ժամանակին ՚ի հոգս պատերազմաց, ոչ կամեցաւ ընդդիմախօս բանիւք զայրացուցանել զքահանայապետն. բայց յետ նուաճելոյ զթշնամիս իւր՝ գումարեաց ժողով ՚ի Վորմատիա քաղաք՝ բազմաթիւ եպիսկոպոսօք և աբբայիւք ջանացեալ եղև ՚ի դերև հանել զօրինաւոր ընտրութիւն քահանայապետին, ամբաստան լեալ զնմանէ սակս զանազան յանցանաց, և յանդգնեցաւ կոչել զնա Հիլդեբրանդոս, զի այսպէս իսկ կոչէր նա մինչև էր ամբարձեալ յաթոռ քահանայապետութեան. սահմանեցին դարձեալ ՚ի նմին ժողովակի չհնազանդել զնա ծայրագոյն քահանայապետ։

ԳԼՈՒԽ Դ.

Գահընկէց լինել Հենրիկոսի կայսեր, և մահ Գրիգորի Է։

ԼՈՒԵԱԼ Գրիգորի քահանայապետին զձեռներէց յանդգնութիւն կայսեր, և շարժեալ 'ի նախանձուէ փառաց սրբոյ աթոռոյն, ընդ բանիւ արար զՀենրիկոս, և շնորհեալ հպատակաց նորա զանխիղճ ազատութիւն յերդմանէ հաւատարմութեան իւրեանց առ կայսրն՝ յայս աւելէր զընկեցիկ լինել նորա յիշխանութենէն և 'ի տէրութենէն։ Չեկաց որ քահանայապետ յառաջ քան զԳրիգոր Է., որ սովին այսու ահաւոր զինու 'ի գլուխ հարցէ կայսերաց. վասն որոյ և Օթոն եպիսկոպոս Փրիսինկայ՝ որ անկեղծ կուսակից էր սրբոյ աթոռոյն և քահանայապետաց Հռովմայ, համարձակեցաւ ասել եթէ թագաւորն այնչափ առաւել զայրացաւ ընդ այս գործ քահանայապետին՝ որչափ զի 'ի նախնի ժամանակաց հետէ չէր երբէք լուեալ զի սովին զինու պատուհասեսցի ոք 'ի կայսերաց։ Գրիգոր քահանայապետն՝, որ զոգցես յակամայս իմն ստիպեալ էր յիրաւանց իշխանութեան և աթոռոյ ձեռնամուխ լինել յայն ահաւոր պատուհաս, յետ նզովիցն գրեաց բազում կոնդակս առ եպիսկոպոսունս և առ իշխանս յԻտալիա և 'ի Գերմանիա, յորս ջան գործէ իրաւացի ցուցանել զձեռներէցութիւն իւր 'ի դատակնիք նզովիցն, միանգամայն 'ի կոնդակսն յայնոսիկ երևին հիմունք վարդապետութեան որ անլուր էր մինչև ցայնժամ, թէ ‟Ծայրագոյն քահանայապետն ունիցի իշխանութիւն ընկեցիկ առնելոյ զթագաւորս յիշխանութենէ անտի նոցա„։

Զարհուրեալ ժողովրդեան 'ի նզովից անտի և շարժեալ 'ի կոնդակաց Գրիգորի պապին, որ յորդորէր զնոսա ընտրել զայլ ոք 'ի կայսերութիւն, կային 'ի պատրաստի մերժել զՀենրիկոս յաթոռոյ. յորմէ զանգիտեալ նորա՝ փութացաւ հաշտել ընդ քահանայապետին։ Սակայն պայմանք հաշտութեանն քանզի ծանունք էին յոյժ և նախատականք կուսակցացն Հենրիկոսի, ստիպեցաւ քակտել զայն, և համախոհք նորա եպիսկոպոսունք և արքայք, որք ընկալեալ էին 'ի նմանէ զիշխանութիւն ժառանգաւորութեան եկեղեցւոյ, վերստին յանդգնեցան ընկենուլ յաթոռոյ զԳրիգոր և ընտրել փոխանակ նորա յամին 1080 'ի Մոգունտիա քաղաքի զԳիբերտոս զարքեպիսկոպոսն Ռաւեննայի ըղգլխաւոր սուտ քահանայապետին, որ և անուանեցաւ Կղեմէս Գ.։

Յայնմ ժամանակի Հենրիկոս արքայ հարկեցաւ ելանել 'ի կռիւ ընդդէմ Ռոտուլփոսի դքսին Սուեւիոյ, զոր Գերմանացիք ապստամբեալ 'ի Հենրիկոսէ ընտրեալ էին իւրեանց կայսր, և Գրիգոր Է. հաւանեալ և հաստատեալ էր զընտրութիւն նորա, և ընդ նմին 'ի նշանակ ընկալեալ իշխանութեանն՝ առաքեալ էր առ նա թագ ոսկի, և շուրջ զնովաւ քանդակեալ 'ի լատին բարբառ. “Վէմն ետ Պետրոսի, և Պետրոս զպսակն Ռոդուլփոսի„. որպէս թէ՝ Քրիստոս՝ վէմն խորհրդական՝ ետ Պետրոսի զպսակն, և Պետրոս տայ զնոյն Ռոդուլփոսի։ Շնորհեաց և ժողովրդեան զառատապարգև առաքելական օրհնութիւն յաստի կեանս և 'ի հանդերձեալն, և յաւել մաղթանս աղօթից առ սուրբ առաքեալսն Պետրոս և Պօղոս ըստ բանիցս այսոցիկ. “Ցուցէք արդ մարդկան թէ որպէս կարող էք կապել և արձակել յերկինս, նոյնպէս է ձեր իշխանութիւն և 'ի վերայ երկրի տալ իշխանութիւնս և թագաւորութիւնս„։

Հենրիկոս արքայ հաստատել կամեցեալ զընտրութիւն Գիբերտոսի պապին եդ 'ի մտի գնալ 'ի Հռոմ, և հասեալ անդր յամին 1084, տիրեաց քաղաքին և ընկալաւ թագ կայսերական 'ի ձեռաց անտի Գիբերտոսի։ Իսկ Գրիգոր աքսորեալն յաթոռոյ իւրմէ՝ յետ սակաւուց վախճանեցաւ 'ի Սալեռնոյ քաղաքի յամին 1085, թողեալ զանուն արիութեան և զառաքինի վարուց։ Պերճացեալ էր նա ազգի ազգի բարելաւութեամբք, զորս ոչ կարասցեն աղօտացուցանել թերութիւնք ինչ նորա մարդկայինք. անաղարտ էր նա վարուք, և խնամակալ բարեկարգութեան եկեղեցւոյ։ Ի վերջին պահու անդ կենացն ասաց առ որս մերձն կային. “Սիրեցի զարդարութիւն, և ատեցի զանիրաւութիւն. վասն այնորիկ յաքսորս մեռանիմ„։

ԳԼՈՒԽ Է.

Յաջորդք Գրիգորի Է, և մահ Հենրիկոսի:

ԶԿՆԻ մահուն Գրիգորի Է. յամին 1086 ամբարձաւ յաթոռ քահանայապետութեան Դեսիդերիոս աբբայ Կասինեան լերին, և կոչեցաւ Վիկտոր Գ: Ի բազմավրդով ժամանակին յորում տագնապէր գահն Հռովմայ՝ ոչ ինչ թուլացաւ նա 'ի հայրապետական խնամոց 'ի պայծառութիւն եկեղեցւոյ. զի յետ նորոգելոյ զնզովսն նախորդին իւրոյ ընդդէմ Հենրիկոսի և Գիբերտոսի, խորհրդով և համամտութեամբ կարդինալաց և եպիսկոպոսաց յորդորեաց զԻտալացիս զօրաժողով լեալ դիմել յԱփրիկէ առ զդէմ ունել բուռն արշաւանաց Սարակինոսաց, և ետ նոցա զդրօշ սրբոյն Պետրոսի. որոց երթեալ կալան քաղաքս ինչ, և քաջութիւն նոցա յորդոր եղև արութեան եւրոպեանց, որք 'ի հետևեալ դարուն խմբեցան 'ի խաչակիր զինուորութիւն ընդդէմ անհաւատից յաղագս ազատութեան անօրինական տեղեացն Քրիստոսի: Սա ինքն Վիկտոր քահանայապետ 'ի խաղաղել զաղմուկ խռովութեան հռովմէական աթոռոյ՝ գնաց 'ի Բենեւենտ քաղաք, ուր գումարեալ ժողով վասն խափանելոյ զանկարգութիւն եկեղեցական ժառանգաւորութեան, հիւանդացաւ անդ. և առանձնացեալ 'ի Կասինեան լեառն՝ վախճանեցաւ յամի տեառն 1087, կացեալ 'ի քահանայապետութեան զամ մի և զամիս իբր չորս:

Զկնի մահուան Վիկտորի՝ յամին 1088 ընտրեցաւ Ոթոն կարդինալ եպիսկոպոս Ոստիայ՝ գաղղիացի, և անուանեցաւ Ուրբանոս Բ: Նա զի արտաքոյ Հռովմայ եղև ընտրութիւն նորա 'ի պատճառս բռնակալութեան Գիբերտոսի 'ի Հռովմ, կամեցաւ ելանել իբր յայցելութիւն սահմանաց Նեապոլոյ և 'ի Սիկիլիա. և ապա 'ի հեռանալ Գիբերտոսի 'ի Հռովմայ եկն յաթոռ իւր, և գումարեալ ժողով 'ի հարիւր և հնգետասան եպիսկոպոսաց՝ հաստատեաց զսահմանադրութիւնս նախորդաց իւրոց: Նա յետ այլոց բարեկարգութեանց յայլ և այլ տեղիս՝ գնաց 'ի Բենեւենտ քաղաք, ուր վերստին հաւաքեալ զառաջնորդս եկեղեցւոյ՝ ընդ այլ կանոնս բարեկարգութեան սահմանեաց և զայն, զի ամենայն հաւատացեալք յաւուր առաջին չորեքշաբաթու քառասնորդական պահոց ցանեսցեն մոխիր 'ի գլուխ՝ 'ի նշան աւուրց ապաշխարութե։ Արգել դարձեալ զպսակ ամուսնութե 'ի յիննակաց բարեկենդանէ մինչև ցութերորդ օր աստուածայայտնութե, որպէս և յառաջաւորաց կիւրակէէ մինչև ցութերորդ օր գալստեան Հոգւոյն սրբոյ։ Եւ ըստ օրինակի նախորդին իւրոյ յորդոր մատոյց խաչակիր զինուորութե յազատութիւն տնօրինական սուրբ տեղեացն Երուսաղեմի, զորոյ զվէպսն կարգեցաք համառօտիւ 'ի յաջորդ դպրու։ Կալաւ զաթոռ քահանայապետութեան զամս մետասան և զամիս իբր հինգ։

Յետ մահուն Ուրբանոսի՝ յամին 1099 ընտրեցաւ քահանայապետ Պասքալիս Բ. և յաւուրս նորա զերծաւ եկեղեցի 'ի հակապապէն Գիբերտոսէ, որ յանկարծամահ վախճան ընկալաւ 'ի քանդել անդ իւրում զվիճակ սահմանացն Հռովմայ։ Նոյնպէս կարճեցան և կեանք Հենրիկոսի կայսեր, որ լքեալ 'ի հպատակաց իւրոց ստիպեցաւ տալ զկայսերութիւնն որդւոյ իւրում Հենրիկոսի Ե, քանզի և նորա թշնամացեալ ընդ հօր իւրում՝ մարտնչէր ընդդէմ նորա. և ինքն լքեալ թողեալ յամենեցունց՝ որ պարծէրն աշխարհային ձոխութեամբ՝ մեռաւ 'ի տնանկութեան յամին 1106 'ի քաղաքն Լիէժ յոր եկաց զվերջին երիս աւուրս կենաց իւրոց։ Հենրիկոս Ե ապառամ մտօք և անգութ սրտիւ՝ զկնի մահու հօրն իւրոյ ահաւոր սպառնալեօք գնաց 'ի Լիէժ քաղաք պատուհասել զտեղի ապաւինի հօրն, զի ետուն նմա բնակութիւն, և զի մեծահանդէս շքով թաղեցին զնա. յանհնարս մտեալ քաղաքացւոց 'ի բռուն զօրութենէ զինուց Հենրիկոսի, ստիպեցան դաշն հաշտութեան դնել ընդ նմա. և հանեալ զդի վախճանեալ կայսերն եդին 'ի ձեռս անողորմ որդւոյն, որ և տարեալ զայն 'ի Սպիրա քաղաք Պաւարիոյ. ուր եդաւ 'ի տապան ինչ քարակոփ, և թողաւ զամս հինգ արտաքոյ եկեղեցւոյ, զի չէր արձակեալ 'ի նզովից անտի զոր ընկալաւ 'ի քահանայապետաց Հռովմայ։

ԳԼՈՒԽ Ձ·

Կարդինալական պատիւ։

Ի ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴԻ դարուս սուրբ աթոռն հռովմէական ընկալաւ նոր պայծառութիւն յաւանձնական պատուոյ անտի որ շնորհեցաւ կարդինալական վիճակի։ Այլ թէպէտ, որպէս կանխեցաք ասել յառաջագոյն, 'ի վաղ ժամանակաց հետէ անուն կարդինալութեան շնորհեալ էր աւագերիցանց և սարկաւագաց իբր ժողովրդապետաց քաղաքին Հռովմայ, սակայն յաւուրս քահանայապետութեան Նիկողայոսի Բ. հաստատեցան նոքա ընդ իշխանաւորս եկեղեցւոյ. և 'ի միում ժողովի գումարելոյ 'ի Հռովմ յամին 1059 հաստատութեամբ սահմանեցաւ, զի ընտրութիւն քահանայապետաց 'ի կարդինալաց եւեթ լիցի։ Ի ժամանակէ անտի և առ յապա խորհրդականք եղեն նոքա քահանայապետին, որով կարդինալական անուն մեծարգոյ եղև քան զայլ ամենայն եկեղեցական պատիւս։

Կարդինալական աստիճան պատուոյ բաժանի յերիս կարգս. յառաջին կարգի են վեց եպիսկոպոսունք եւեթ, որք են իբր փոխանորդք քահանայապետին, և ունին իւրեանց առանձին վիճակս զմերձաւոր սահմանօք մայրաքաղաքին Հռովմայ։ Երկրորդ կարգի են յիսուն թուով երիցական անուամբ, իբր խնամակալք զանազան եկեղեցեաց քաղաքին Հռովմայ։ Երրորդ կարգի են չորեքտասան թուով սարկաւագունք անուանեալ՝ նոյնպէս հոգաբարձուք այլ և այլ եկեղեցեաց։ Բովանդակութիւն թուոյ նոցա գումարի յեօթանասուն, իբր յօրինակ եօթանասուն ծերոցն Իսրայելի առ Մովսիսիւ, կամ եօթանասուն և երկուց աշակերտացն Քրիստոսի։

ԳԼՈՒԽ Է.

Զանազան կարգք կրօնաւորաց ծաղկեալք 'ի մետասաներորդի դարու։

ՆՈՐՕՐԻՆԱԿ պայծառացաւ եկեղեցի 'ի հաստատութենէ անուն ազգի ազգի կրօնաւորական կարգաց։ Կամալդուլեցիք, զորոց ասացաք 'ի նախընթաց դարու, հիմնեալք 'ի սրբոյն Ռոմուալդոսէ առաքինազարդ իտալացւոյ, պայծառագոյն հանդիսացան քան զայլ ամենայն միայնակեցս խստամբերութեամբ և Ճգնողական վարուք բարեպաշտութեան՝ յօրինակ ամենայն հաւատացելոց։

Միաբանութիւնն Վալումբրոսեանց՝ որք այսպէս կոչեցան 'ի ձորոյ անուն, ուր զառաջինն կանգնեցաւ մենաստան նոցա, եօթն մղոնաւ հեռի 'ի Փլորենտիոյ, է ազգ ինչ բենեդիկտեան կարգի՝ զոր հիմնեաց սուրբն Յովհաննէս Գուալբերդոս այր սքանչելի և զարդարեալ ամենայն առաքինութեամբք։ Էր սա հայրենեօք Փլորենտացի, և սրբակրօն վարուք փոխեցաւ առ Աստուած յամին 1073։

Սուրբն Բրունոն, զառաջինն կանոնիկոս եկեղեցւոյն Կողոնիոյ, և ապա կանոնիկոս աստուածաբան Ռեմս քաղաքի՝ վախճանեալ յամին 1011, առաջնորդ եղեւ Կարթուսեան կրօնաւորաց, որք ուխտիւք լռակեցութե պարտաւորին 'ի կատարելութիւն միակեցական վարուց։ Կոչեցան սոքա Կարթուսեանք յանուանէ անուն Կարթուսայ անապատին, որ է 'ի վերայ լերանցն Կրընոպլէ 'ի Գաղղիա, ուր հիմնեցաւ միաբանութիւն նոցա. և 'ի նոյանէ ելին արք բազումք հրաշալիք բարեկրօն վարուք սրբութեան։

Կարգ Կիստերսեանց պայծառացեալն յերկոտասաներորդի դարու 'ի հոգեւանդն խնամոց սրբոյն Բեռնարդոսի՝ հաստատեցաւ 'ի մետասաներորդիս յայսմիկ 'ի Ռոբերդոսէ Մոլեմեան. որոյ ընկալեալ զկանոնս սրբոյն Բենեդիկտոսի յաւել 'ի նոսին և ինչ ինչ սահմանս բարեկարգութեան։ Կրօնաւորքս կոչին և Պայծառաձորոյ՝ յանուն Քլարավալլէ ձորոյն, որ 'ի Լինգոն գաւսոյ Գաղղիոյ, ուր 'ի Հռուբերդոսէ աբբայէ կառուցաւ մենաստան և յանձնեցաւ 'ի խնամս առաջնորդութեան սրբոյն Բեռնարդոսի ։

Այլն 'ի Գերմանիա 'ի մետասաներորդի դարու և միայնակեացք վաստակաւորք 'ի ձեռագործս, որք ձեռն արկին մշակել զխոպանացեալ և զմացառախիտ վայրս ։ Իսկ քանզի անխոնջ և քրտնաջան աշխատութիւն նոցա և խնամոտ տնտեսութիւն մշակեցան զաւառս ոչ սակաւս, երկրագործ ծառայք նոցա որք բնակէին 'ի կողմանս յայնոսիկ բազմացուցին զմենաստանս միայնակեցացն, և կանգնեցին առ նոքօք քաղաքս ականաւորս, որք համարեցան սեպհական վիճակք մենաստանացն այնոցիկ, և տէրութիւնք նոցա եղեն իբր իշխանական զաւառապետութիւնք ։ Սակայն անչափ պարապումն միայնակեցացս այսոցիկ յարտաքինս զբաղմունս՝ չեղեն յօգուտ և 'ի շինութիւն նորատարած ժողովրդեանն 'ի հաւատս Քրիստոսի . քանզի ցանկութիւն ձոխանալոյ և անխնայ բռնութիւնք միայնակեցացն 'ի ժողովել զտասանորդս պտղոց երկրին՝ պատճառք եղեն ապստամբութեան ժողովրդոց 'ի Թուրինկիա գաւառի ընդդէմ արքեպիսկոպոսին Մոգունտիոյ, որպէս և այլոց երկուց խռովութեանց որք եղեն 'ի Լեհաստան և 'ի Դանիա, ուր նահատակեցաւ բարեպաշտ թագաւորն Դանեաց Կանուտոս, որոյ կամեցեալ պաշտպան կալ եկեղեցականաց՝ մատնեցաւ 'ի մոլեգին կատաղութիւն ժողովրդեան ։

Յայսմ դարու աւանդեն ոմանք և զհաստատութիւն կարգի կանոնիկոսաց, զորոց զտիպս կենացն և զկանոնս կանխաւ սահմանեալ էր սրբոյն Օգոստինոսի ։ Յամի տեառն 1073 մտին սոքա 'ի ժառանգութիւն աբբայութեան սրբոյն Վիկտորի 'ի Փարիզ, յորում մեծահամբաւն Հուգոն սկսաւ ուսուցանել զաստուածաբանութիւն յառաջնորդութեան անդ առաջնոյ աբբայի վանիցն ։ Թուի ինձ թէ վասն սոցա առանձինն սահմանեցաւ 'ի ժողովքին Հռոմայ յամին 1063 այս բան . « Պատուիրեմք երիցանց և սարկաւագաց պահել զժուժկալութիւն . ուտել և ննջել միաբանական կենօք առընթեր եկեղեցեացն յորոց 'ի սպասաւորութիւն ընկալան զձեռնադրութիւն քահանայութեան . և լինել հասարակաց *որ ինչ միանգամ պարգևի նոցա յեկեղեցւոյ անտի, և յորդորեմք զնոսա նմանողս լինել կենաց նախնի հաւատացելոց.. ։ Յետ վճռոյ աստի եղև նորոգութիւն բարեկարգութեան նոցա, և անուանեցան Կանոնիկոս կրօնաւորք կամ կրօնաւորք կանոնապահք ։*

ԳԼՈՒԽ Ը·

Հերետիկոսութիւնք և սխիզմականութիւն ։

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆՆ *'ի վերայ իսկական գոյութեան Քրիստոսի 'ի սուրբ խորհուրդ հաղորդութեան պատճառս տուեալ էր ազգի ազգի վիճից և բանակռուութեանց յիններորդի դարու · զի Յովհաննէս Սկովտոս իռլանտացի՝ անուանեալն Էրիգենա, որպէս աւանդի՝ ունէր կարծիս ինչ զորոյ խորհրդոյն հակառակս մտաց սուրբ եկեղեցւոյ ։ Բերենգարիոս տուրեցի՝ աւագ սարկաւագն Անժէի հմուտ աստուածաբան՝ այլ յամառ 'ի կարծիսն, նորոգեաց զառաջինն զայն երկմտութիւն Սկովտոսի, բացայայտագոյն ևս մեկնաբանեալ զխնդիրն, որպէս եթէ հացն և գինի 'ի սուրբ խորհուրդ հաղորդութեան ոչ փոխարկիցին 'ի մարմին և յարիւն Քրիստոսի ։*

Այս մոլորութիւն դատապարտեալ հերքեցաւ 'ի բազում ժողովս, մանաւանդ 'ի գումարեալն 'ի Հռոմ, և 'ի բանակռուութենէ աստի ընդդէմ Բերենգարիոսի օգուտ մեծ եղև եկեղեցւոյ · զի աներկբայ ստուգութեամբ հաստատեցաւ թէ 'ի խորհուրդ սուրբ հաղորդութեան է իսկապէս մարմին և արիւն Քրիստոսի, զոր յանդուգն ոմանք այնր ժամանակի ջանահնար լինէին յերկբայս արկանել, որպէս և թշնամիք քրիստոնէական կրօնից հանդերձեալ էին ապա մաքառել ընդդէմ այսորիկ ։

Վարդապետութիւն և հաւատք եկեղեցւոյ 'ի մասին յայսմիկ ոչ միայն հաստատեցան բանիւք աստուածաբանից, այլ և եկեղեցին Քրիստոսի ինքնին սահմանեաց որոշակի զոր պարտ էր հաւատալ ուղղափառաց ։ Նա և քանզի Բերենգարիոս ուրանայր՝ թէ մարմին Քրիստոսի իցէ իրապէս և ճշմարտապէս 'ի սուրբ հա-

զորդութեան, և թէ իցէ նոյն ինքն ծնեալն 'ի սորա Կուսէն, վասն որոյ եկեղեցին ընդդէմ այսոցիկ երկուց մոլորութեանց սահմանեաց զկրկին ճշմարտութիւնս դաւանական. նախ՝ թէ ճշմարիտ մարմին Քրիստոսի է իրապէս 'ի հաղորդութեան, և երկրորդ՝ թէ է նոյն իսկ մարմինն զոր էառ յարգանդի անդ կուսին Մարիամու: Խոստովանութիւնս հաւատոյ որ սահմանեցաւ ընդդէմ Բերենգարիոսի՝ եղև կանոն ամենայն ուղղափառաց:

Բերենգարիոս որ 'ի կեանս իւր գայթ 'ի գայթ գլորեալ անկանէր 'ի բազում մոլորութիւնս՝ առ ահի ըսպառնալեաց ծանր պատուհասի հրաժարեցաւ 'ի թիւր կարծեացն և ընկալաւ զողջամիտ վարդապետութիւն եկեղեցւոյ. բայց զի յերկիւղէ ևեթ պատուհասից յետս եկաց նա 'ի կարծեացն, վասն որոյ անստոյգ համարի ուղղափառ վախճան նորա: Յովհաննէս Սկովտոս յիններորդի դարու հորդեաց զշաւիղ մոլորութեանն Բերենգարիոսի. որպէս և ուղեցոյց եղև Կալվինականաց, որք յառաջադէմ գտան քան զվարդապետն իւրեանց: Գործք Բերենգարիոսի սերմանք եղեն գոգցես ամենայն մոլորութեանց Լութերական կամ Փրոթէսթանթ անուանեալ հերետիկոսաց:

Յայսմ դարու անդորրութիւն հաւատացելոց ահի մեծաւ տագնապեցաւ յաղանդոյ անտի Մանիքեցւոց, որոց եկեալ յարևելեան կողմանց՝ մուտ գտին 'ի Գաղղիա: Լիսոյիս կանոնիկոս Օրեղիանի և Ստեփանոս խոստովանահայր Կոստանդիայ տիկնոջ թագաւորին Ռոբերտոսի յամի տեառն 1017, արկին զսերմն աղանդոյն: Վասն որոյ անդէն և անդ գումարեցաւ ժողով յՕրեղիան խափանել զհերձուածն յորում երկոքին մոլորեալքն աշակերտօք իւրեանց դատապարտեցան 'ի պատուհաս հրոյ. այլ նոցա յամառեալ 'ի մոլորութեան իւրեանց՝ կամակար յանձն առին ժուժկալել տանջանացն քան յետս կալ 'ի թիւր կարծեաց անտի: Սմանք յաղանդաւորաց անտի մուծին զմոլորութիւնս զայս 'ի Բեղգիա կամ 'ի Գեղձիա, սակայն բնակչաց երկրին խրատեալ 'ի Գաղղիացւոց՝ խնամ կալան յուղղութիւն ածել զմոլորեալսն:

Ի սմին դարու Ռոսկեղինոս քահանայ գերազանցեալն 'ի տրամաբանական վարժս՝ անկաւ 'ի մոլորութ եռաստուածեանց. զի ուսուցանէր՝ թէ երեք անձինք ամենասուրբ Երրորդութեան իցեն երեք էակք զանազանեալք 'ի միմեանց ըստ օրինակի երից հոգւոց կամ երից հրեշտակաց. և թէ միութիւն ասելով յերիս անձինս պարտ իցէ իմանալ մի կամս և մի կարողութիւն եւեթ: Մոլորութիւնս այս դատապարտեցաւ 'ի ժողովն Սուասոնի յամին 1092, վասն որոյ և Ռոսկելինոս ստիպեցաւ առ երկիւղի յետս կալ 'ի մոլորութենէն. բայց յետ ժամանակաց ինչ դարձաւ անդրէն 'ի փոխած իւր:

Ի պատճառս խռովութեանց յուզելոց 'ի մոլորամիտ վարդապետութեանց աստի, առ սակաւ սակաւ թուլացեալ հաւատացելոց 'ի բարեկարգութենէ վարուց՝ սկսան յանձնել 'ի մեղս սիմոնականութեան, զպատիւ եկեղեցական պաշտամանց անխտիր վաճառելով և ընչիւք ստանալով: Զժառանգաւորութիւնս եկեղեցւոյ և զառաջնորդութիւն քաղաքաց տային այնոցիկ՝ որք միանգամ խոստանային մատուցանել բազմագումար դրամս: Նա Գրիգոր Է. խափանել կամեցեալ զանհնարին անկարգութիւնս՝ տարաւ ազգի ազգի վշտաց և հալածանաց. սակայն և այնպէս ոչ կարաց 'ի սպառ դարմանս մատուցանել իրացն:

Բաց յայնոցիկ, զօրացեալ և անժուժկալութեան յեկեղեցականս՝ օրէնք կուսակրօնութեան թուլացեալ էին 'ի բազում տեղիս՝ յառիթ գայթակղութեան ժողովրդոց: Քահանայապետքն Լեոն Թ., Նիկողայոս Բ. և Գրիգոր Է., բարենախանձ հոգւով խնամ կալան արգելուլ և յուղղութիւն ածել զմոլորեալսն, սակայն փոխանակ օգտի յուզեցան ապստամբութիւնք: Ի Միլանոյ քաղաքի բազումք յեկեղեցականաց խորհեցան յօժարամիտ բաժանիլ յեկեղեցւոյ քան 'ի հոմանեաց իւրեանց. վասն որոյ սկսան կազմել գաղտնի միաբանութիւնս 'ի վայրն Պատարիոյ, որպէս և յայլ ձորամիջս այնր սահմանի, յորոց եղև ծագումն Պատարենաց և Սալղեանց, որք 'ի բազում իրս կարապետք եղեն բողոքարկու Լուտերականաց և Կալվինականաց:

ԳԼՈՒԽ Թ.

Կաթուղիկոսունք և վիճակ եկեղեցւոյն Հայոց։

Ի ՏԵՍԻՆ ամս նախընթաց դարու՝ զկնի մահուան Խաչիկ կաթուղիկոսի յամին 992, նստաւ յաթոռ հայրապետութեան Սարգիս Ա., որ էր 'ի միաբանից Սևանայ կղզւոյն, այր ճգնաւոր և հեզահամբոյր։ Յաւուրս սորա վերստին բորբոքեցաւ աղանդ Թոնդրակեցւոց, և կաթուղիկոսն և եպիսկոպոսունք առ հասարակ ջանահնար եղեն մերժել և ջնջել զմոլորութիւն չար, և զաղանդաւորսն միանգամայն բառնալ 'ի Հայաստան աշխարհէ։ Այլ նախանձու աստուածպաշտութեան ձեռնտու եղեն և իշխանք Հայոց, յորս յառաջադէմ գտաւ Գրիգոր Մագիստրոս, որ զինու զօրութեամբ անհետ արար զնոսին։ Եկաց Սարգիս 'ի հայրապետութեան զամս քսան և եօթն, և լի արդեամբք կատարեաց զկեանսն։

Պետրոս կաթուղիկոս՝ Գետադարձ անուանեալ, յաջորդեաց զՍարգիս յամին 1019։ Համբաւեալ և մեծարեալ գտաւ առ յաչս Յունաց և այլոց ազգաց վասն իմաստութե՛ իւրոյ և սրբակրօն վարուցն։ Կոչեցաւ Գետադարձ 'ի պատճառս սքանչելեացն որ եղեն 'ի ձեռն նորա յետս դարձմամբ ջուրց գետոյն 'ի ժամ օրհնութեան ջուրց յաւուր յայտնութեան տեառն։ Եւ թէպէտ Յովհաննէս արքայ զժտեալ ընդ Պետրոսի ընկէց զնա յաթոռոյն, փոխանակ նր կացուցեալ զԴէոսկորոս վանահայր Սանահնի, այլ ապա ժողով մեծ գումարեալ եպիսկոպոսաց ընկեցին զԴէոսկորոս յաթոռոյ, և վերստին հաստատեցին զՊետրոս 'ի հայրապետութեան, յորում և կատարեաց նա զկեանսն, կեցեալ ընդ ամենայն զամս երեսուն և հինգ և զամիս վեց։

Խաչիկ Բ. քեռորդի Պետրոսի Գետադարձի՝ նստաւ 'ի տեղի նորա յԱնի քաղաք յամին 1058։ Եւ յետ երկուց ամաց 'ի թագաւորել Կոստանդեայ կայսեր Դուկիծ անուանելոյ, Խաչիկ կաթուղիկոս կոչեցաւ 'ի Կոստանդնուպօլիս, և խնդրեցին 'ի նմանէ Յոյնք զգանձս թագաւորացն Հայոց, զորս կարծէին պահեալ առ Պետրոսի

Պետադարձի. և յոչ գտանելն իւր ստիպեցին զԳագիկ հարկս հարկանել կայսեր. և 'ի չառնուլ նորա յանձն, արգելաւ անդ զամս երիս, և ապա ազատութիւն գտեալ գնաց 'ի Թաւբլուր, որ մշտալից կենօք տառապեալ 'ի վերայ աղէտից ազգին՝ վախճանեցաւ յամի տեառն 1064, կացեալ 'ի հայրապետութեան զամս հինգ։

Գրիգոր Վկայասէր՝ որդի Գրիգորի Մագիստրոսի իշխանին Հայոց, այր սքանչելի և հռետոր՝ որ կամակար հրաժարեալ յիշխանական փառաց և յամուսնոյ իւրմէ մտեալ կայր 'ի կարգ կրօնաւորութեան և առանձնացեալ 'ի վանս՝ ընտրեցաւ կաթուղիկոս միաձայն հաւանութեամբ ամենայն ազգին յամի տեառն 1065։ Ապա յետ ամաց վեցից տեսեալ զտառապանս Հայոց 'ի թշնամութենէ Յունաց և Պարսից՝ կամեցաւ հրաժարել 'ի կաթուղիկոսութենէն, և փոխանակ իւր կացուցեալ զԳէորգ վարդապետ լոռեցի՝ առանձնացաւ 'ի մենաստան Սեաւ լերին։ Բայց 'ի խռովել Գէորգեայ զխաղաղութիւն ազգին՝ ստիպեցաւ վերստին ստանձնել զիշխանութիւնն և խնամել զազգն։ Կացոյց տեղապահ 'ի քաղաքն Անի զքեռորդի իւր զտէր Բարսեղ, որպէս և 'ի Մելիտինէ քաղաքի եդ առաջնորդ զմիւս քեռորդի իւր զԳրիգորիս։ Գրեաց թուղթ սիրոյ և հաստատութեան առ քահանայապետն Հռովմայ Գրիգոր Է. և ընկալեալ 'ի նմանէ պատասխանի՝ չոգաւ 'ի Հռովմ, որ պատուեալ 'ի քահանայապետէն դարձ արար անդրէն 'ի Կիլիկիա։ Ապա 'ի խնդրոյ ազգին հաճեցաւ կարգել յաթոռ կաթուղիկոսութեան զքեռորդի իւր զտէր Բարսեղ 'ի վերին Հայս. սակայն 'ի կենդանութեան իւրում հարազատ կաթուղիկոս ամենայն ազգին ծանուցեալ էր Գրիգոր Վկայասէր, և յետ մահու նորա տէր Բարսեղ։ Ականատես եղև առաջին խաչակիր զինուորութեն, զի յԵրուսաղէմ էր նա յառնուլ անդ Լատինացւոց զքաղաքն. և ապա առանձնացաւ 'ի Կիլիկիա յԱրեգի վանսն, և անդ պարապեալ 'ի գրաւոր երկասիրութիւն վարուց սրբոց, կոչեցաւ Վկայասէր։ Եկաց 'ի 'ի հայրապետութեան զամս քառասուն և վախճանեցաւ յամին 1105։

ԳԼՈՒԽ Ժ·

Եկեղեցական մատենագիրք·

Ի ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴԻ դարու առ 'ի չգոյէ բարեկարգ վարժարանաց՝ սակաւք ոմանք կացին մատենագիրք, յորոց զմեծարումն կարգեսցուք յառաջիկայդ ։

Դիթմարոս եպիսկոպոս Մերսպուրկ քաղաքի (1019) Ադեմարոս կրօնաւոր, և Գղաբրոս միայնակեաց գաղղիացի՝ գրեցին զպատմութիւնս անցիցն որք եղեն առ ժամանակօք իւրեանց ցամ տեառն 1045 ։

Բուրկհարտոս եպիսկոպոս Վորմնս քաղաքի (1026) գրեաց Ճոխ բանիւք զհաւաքումն եկեղեցական կանոնաց, յորս թէպէտ և գաղափարէ զվերիպակ քաղուածս առաջնոցն, սակայն և այնպէս օգտակար է վասն հաւատարմութեան իւրոյ 'ի հաւաքելն ։

Փուլբերտոս եպիսկոպոս Շարթրէի՝ այր իմաստուն և աչալուրջ· մեծարգի են յոյժ նամակք նորա, յորս երեւի հանճար իւր և զգուշութիւն 'ի բանս ։

Հերմաննոս միայնակեաց հմուտ և հետաքննին՝ գրեաց զպատմութիւն ժամանակագրական վեցից դարուց աշխարհի, զոր աւարտէ յամի տեառն 1054 ։ Սմա ընծայեն և զերգս ինչ հոգեշահս, որպէս և զաղօթսն "Ողջ լեր թագուհի.." ։

Սուրբ Պետրոս Դամիանոս՝ ծնեալ 'ի Ռաւեննա, և յետ կատարելոյ զընթացս ուսման, հրաժարեալ յաշխարհէ՝ առանձնացաւ 'ի վանս սրբոյ խաչի յԱւէլլանա մերձ 'ի Կուպպիոյ, և եկաց առաջնորդ և այս սրբոյ մենաստանին ։ Ստեփանոս Թ· սրբազան պապն տեղեկացեալ արժանաւորութեան նորա, արար զնա կարդինալ և եպիսկոպոս Օստիայ քաղաքի յամին 1057, և օգնական իւր զնա կալաւ 'ի յանձանձանս իւրոց սուրբ եկեղեցւոյ․ և նա յաւուրս յաջորդաց իսկ նորա 'ի բազում իրս պիտանի եղև, և մանաւանդ 'ի հրեշտակութիւնս կարեւորս ։ Ջեռ եղև նա կարգաւորութեան կղերց և մենաստանաց, և վախճանեցաւ 'ի Ֆայենցա յամին 1073 ։ Կան նորա ազգի ազգի գրուածոյ երկասիրութիւնք և ճառք և նամակք 'ի չորս հատորս բովանդակեալք յորս գտանին բազմապատիկ հմտութիւնք 'ի խելամտութիւն եկեղեցական պատմութեանց մետասաներորդի դարու ։

Թէոփիլակտոս արքեպիսկոպոս Աքրիդայ 'ի Բուլղարս․ գրեաց զմեկնութիւն նոր կտակարանաց և զչորից փոքր մարգարէից ։

Սուրբն Անսելմոս եպիսկոպոս Լուքքայի․ է նորա ձեռն զօրաւոր ընդդէմ հերձուածոյ Կուիպերտոսի, և հաւաքումն եկեղեցական կանոնաց, և մեկնութիւն սաղմոսաց, և ողբոց Երեմիայ մարգարէի ։

Լանփրանկ արքեպիսկոպոս Կանտորբերիոյ (1089) այր իմաստուն և մեծարու, քաղցրաբան և ճարտարախօս, եթող ձեռն սքանչելի ընդդէմ Բերենգարիոսի, և այլ ազգի ազգի գրուածս և նամակս պիտանիս ։

Ի մատենագիրս Հայոց արժանապատիւքն են Պետրոս կաթուղիկոս Գետադարձ, որ գրեաց շարական ընտիրս՝ որ կոչին Սանկունք ։

Արիստակէս Լաստիվերտցի գրեաց զանցս աղէտից որք անցին 'ի Հայաստան յաւուրս իւր, 'ի Գագկայ յառաջին թագաւորէն Բագրատունեաց մինչև ցառումն Անի քաղաքին՝ ցամ տեառն 1071 ։

Յովհաննէս վարդապետ Կոզեռն որ գրեաց ինչ ինչ 'ի վերայ տումարական արուեստի, թուաբանութեան և շրջանաց ։

Յովհաննէս Վարդապետ Սարկաւագ է մի յերևելի մատենագրաց այսր դարու, և ունի բաց 'ի զանազան գրուածոյ՝ ձեռն գեղեցիկ 'ի վերայ քահանայութեան ։

Ի յետին ամս մետասաներորդի դարուս կային Կիրակոս վարդապետ և Սարգիս երէց համանման աշակերտք Գրիգորի Վկայասիրի ։ Առ նորօք ծաղկեցաւ և Ստեփանոս եպիսկոպոս կողմանցն Բեանց վարժ և հմուտ յունական գիտութեանց, որոյ եղեն աշակերտք Իգնատիոս մեկնիչ աւետարանին Ղուկայ, Սարգիս վարդապետ մեկնիչ թղթոց կաթուղիկեայց, Գրիգոր Պահլաւունի և Ներսէս Շնորհալի ։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Ուխտադիր պանդխտութիւնք և նորահնար ապաշխարութիւնք։

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ ուխտագնացութեան 'ի տնօրինական սուրբ տեղիսն Երուսաղեմի՝ սկզբնաւորեալն 'ի նախնի դարուց հետէ, հանապազորդէր և 'ի մետասաներորդիս յայսմիկ. քանզի միաբանեալ խուռն բազմութեան անձանց հաւատացելոց, ոչ միայն 'ի ռամկաց այլ և 'ի յոգունց ազնուատոհմից՝ պարագլուխ ունելով իւրեանց և զանձինս յականաւոր եպիսկոպոսացն Գերմանիոյ՝ կազմէին բանակ մեծ ուղևորել 'ի սուրբ քաղաքն Երուսաղէմ։

Ուխտաւորացս այսոցիկ փոյթ մեծ էր բազմահարուստ ճոխութեամբ առնել զայն ուղևորութիւն, պատիւ զայն համարեալ եկեղեցւոյ, և զի ակնածելի լիցին այնու բնակչաց քաղաքացն և գաւառաց ընդ որս անցանելոց էին. սակայն անպտուղ ցուցաւ ակնկալութիւն կարծեցեալ բարեացն, զի անբաւ ծախք երկարատև պանդխտութեան ուղևորացն, վտանգք ճանապարհին, օտարութիւն եպիսկոպոսաց 'ի հօտէն և անհոգութիւն 'ի պարտս պաշտաման իւրեանց՝ պատճառք եղեն բազում վնասուց։

Ի մետասաներորդի դարու հոգեջան վարդապետք և այլք առաքինիք բարենախանձ արութեամբ զինեցան ընդդէմ երից յաճախեալ մեղաց, սիմոնականութեան, հարստահարութեան իշխանաց, և անժուժկալութեան եկեղեցականաց։ Բայց տգիտութեամբ ուղիղ խնամոց նախնի բարեկարգութեան կանոնաց եկեղեցւոյ՝ վրիպեցան 'ի մատուցանելն զկարևոր սպեղանիս այնոցիկ. զի մինչև ցվախճան այսր դարու նախնի կանոնական ապաշխարութիւնք տակաւին 'ի կիր առնուին, ընդ որս ոչ միայն հաճեալ էին ժողովուրդք, այլ և փութային իսկ վասն նորահնար օրինադրութեանցն թուլանալոյ նոցին։ Եւ այնպէս իմն համարէր յայնժամ, զի կրկնութիւնք միոյ միոյ 'ի մեղաց՝ արժանաւորք իցեն առանձին ապաշխարութեան, որպէս թէ միում մարդասպանութեան եթէ արժան իցէ ապաշխարութիւն տասն ամաց, ապա տասն մարդասպանութեանց պէտք իցեն հարիւր ամաց, որով անհնարին իմն լեալ ապաշխարութեանն՝ և նախնեացն կանոնաց սահմանք լինէին ծաղրականք։

Զայս ոչ այսպէս իմանային նախնիքն, զի բազմաթիւ կրկնութիւնք մի և նոյն մեղաց առաւելուին զխստութիւն ապաշխարութեան ըստ խոհական դատման եպիսկոպոսին, և ոչ յերկարաձգէին մինչև ցմահ, բայց 'ի ծանր և յաններելի յանցանաց ինչ։ Արդ քանզի բազմացուցանելով զթիւ ամաց ապաշխարանացն անհնարին լինէր կատարումն այնոցիկ, հարկ համարեցան գտանել այլ հնարս դիւրինս բազմամեայ ապաշխարութեանց․ որպէս է տեսանել 'ի վճիռս Բուրկհարդոսի եպիսկոպոսին, և 'ի գիրս սրբոյն Պետրոսի Դամիանոսի։ Դարմանս ապաշխարութեան համարեցան զսաղմոսերգութիւնս, զծնրադրութիւնս, զհարուածս ձաղկանաց, զտուրս ողորմութեանց, զուխտագնացութիւնս, և որ 'ի սոյին սակի իցեն․ որք թէպէտ և գովելի բարեպաշտութիւնք են, սակայն անբաւականք 'ի յայտնել զճշմարիտ ապաշխարութիւն մեղաւորաց։ Զի առ տիրապէս ուղղութիւն վարուց պէտք են գործել զայնպիսի առաքինութիւնս որք հակառակք իցեն և զխափանարարք ախտիցն և մոլութեանց․ իսկ յայսպիսի ապաշխարութիւնս սակաւ էր օգուտն, և նուազագոյն եւ՝ եթէ յայլոց քան 'ի մեղուցելոց լինէր կատարումն ապաշխարանաց․ քանզի սխալ էր և սնոտիութիւն այսպիսի․ զի հարուածք ձաղկանաց մարմնոյ բարեկրօն միայնակեցի ուրուք վասն այլոյ մեղաւորի՝ չէին սպեղանիք ապաշխարութեան մեղուցելոյն․ քանզի մեղք չեն 'ի համարոյ անօթի պարտուց, որք կարիցեն վճարիլ որպիսի և իցէ դրամովք և կամ յումեքէ և իցէ․ այլ է մահացու ախտ տկարութեան, զոր պարտ է բժշկել յանձին ախտացելոյն։

Յառաջ քան զմետասաներորդ դար եկեղեցւոյ ոչ գտանին 'ի պատմութիւնս օրինակք կամաւորական ձաղկանաց․ Պետրոս Դամիանոս եկաց առաջինն 'ի յորդորել զբարեպաշտս յայսպիսի կրթութիւն․ և սուրբն Դոմինիկոս Լորիկատոս զայս ազգ ապաշխարութեան ած կարգ յանհաւատալի չափ և սահման խստութեան գործադիր լինելով այնմ յիւրում իսկ անձին։ Զի ըստ պատմելոյ նորին իսկ Պետրոսի Դամիանոսի՝ երանելին Դոմինիկոս յաճախ աղօթութեամբ երկիցս յաւուրն ասէր ամբողջ զսաղմոսարանն հանդերձ հարուածովք ձաղկանաց մարմնոյ իւրոյ ։ Ի քառասներորդական պահսն, որպէս և յայլ սահմանեալ ժամանակս հարիւրամեայ պարտուց ապաշխարութեան՝ երիցս յաւուրն կրկնէր զսաղմոսարանն հանդերձ ձաղկանօք, ցուցեալ այնու թէ զհարիւրամեայ ապաշխարութի զիարդ կատարել պարտ իցէ ՚ի սակաւ աւուրս․ որով եղև օրինակ հրաշալի ճգնութեանց ՚ի հատուցումն պարտուց բազմամեայ ապաշխարութեանց, անընդհատ պարապելով ՚ի սաղմոսերգութիւնս և ՚ի հարուածս անխնայ ձաղկանաց․ մինչև ՚ի յետին ամս կենաց իւրոց մարմին նորա կոշտացեալ ՚ի սաստիկ հարուածոց՝ ոչինչ զգայր ցաւոյ․ յոյր սակս սկսաւ փարել երկաթի ժանիս և կապանս, որով անուանեցաւ Լորիկատոս, այսինքն Երկաթակիր կամ Զրահակիր, մինչև արիւնաներկեալ մարմնոյն և-րևէր իբր հնդիկ սևամորթ ։ Սակայն և այսպիսի անհանդուրժելի խստութեամբք երկայնակեաց լեալ եհաս ՚ի բարւոք ծերութիւն ։

Նա սահմանօք բնակութեան երանելւոյս՝ որ ճգնէր յԱստալիա ՚ի փապարի միում Ապեննեան լերանց, բազում անձինք բարեպաշտք ՚ի մերձաւոր աւանացն նախանձաւոր լեալ խստամբերութեան վարուցն՝ հետևեցան ճգնութեան նորա ։

ԳԼՈՒԽ ԺԲ․

Ազգային ժողովք ։ — Ժողով Հարքայ Ա․ յամի տեառն 1002 ։

ՅԱԿՈՎԲՈՍ առաջնորդ Հարքայ ըմբռնեալ ՚ի ծուղակս մոլորութեան Թոնդրակեցւոց, արտաքնայարդար բարեպաշտութեամբն յինքն որսայր զբազումս․ և Սարգսի կաթուղիկոսի տեսեալ զչարն՝ կամեցաւ ժողովով բառնալ զչար գայթակղութիւնն․ վասն որոյ ժողովեցան եպիսկոպոսունք ամենայն ՚ի Հարք գաւառ, և ոչ կարացեալ խորհել ինչ լուծին զժողովն․ ապա գումարեցան դարձեալ ՚ի նոյն գաւառ եպիսկոպոսունք բազումք և երիցունք ։ Յակովբոսի վստահացեալ յօգնականութիւն իշխանաց ոմանց, պատգամաւորս առ ժողովն առաքեաց բերել յանձնէ զյանցանսն յորս ամբաստանեալ էր։ Այլ Սարգիս կաթուղիկոս 'ի ձեռն Եսայեայ ուրումն աշակերտին Յակովբայ կալեալ զնա արգել 'ի դիպահոջ. իսկ զոր միանգամ յետ այնորիկ գործեաց Յակովբոս՝ համառօտիւ նշանակեցաք 'ի պատմութեան։

Ժողով Անւոյ Է. յամի տեառն 1036։

ՅՈՎՀԱՆՆԷՍ արքայ ընկեցեալ զՊետրոս Գետադարձ յիշխանութենէն, կարգեաց ընդ նորա զԴիոսկորոս առաջնորդ Սանահնի վանիցն։ Այլ զի ոչ ոք 'ի վարդապետաց և յեպիսկոպոսաց ընկալաւ զնա, և յաւելին ևս ընդ բանիւ առնել զԹագաւորն և զկամակիցս նորա, երկուցեալ Յովհաննէս աղաչեաց զՊետրոս դառնալ յաթոռ իշխանութեան. և 'ի չառնուլ նորա յանձն՝ նամակագիր եղև առ Յովսէփ Աղուանից կաթուղիկոս գալ 'ի Հայս։ Իբրև եկն նա իւրովքն հանդերձ, ժողովեցան յԱնի քաղաք եպիսկոպոսունք և վարդապետք Հայոց թուով իբր չորեքհարիւր. և դատապարտեալ զԴիոսկորոս՝ պատառեցին զքօղ իշխանութեան նորա, և առաքեցին զնա դարձեալ 'ի վանս իւր 'ի Սանահին, և հաստատեցին վերստին զՊետրոս 'ի կաթուղիկոսութեան։

Ժողով Անւոյ Ը. յամի տեառն 1042։

ՍԱՐԳԻՍ Վեստ անմիաբան խորհրդով նշկահեալ զընիկ իշխանութիւն Հայոց, կամեցաւ առանձինն թագաւորել. ապա զուն գործեաց 'ի կամս չարութե՟ իւրոյ որսալ և զնախարարս և զայլ աւագանին. բայց Վահրամայ սպարապետի իւրովքն հանդերձ և Գրիգորի Մագիստրոսի ոչ հաւանեալ անօրէն խորհրդոյն, աղաչեաց զՊետրոս Գետադարձ կաթուղիկոս ածանել 'ի թագաւորութիւն ազգին զԳագիկ զորդի Աշոտոյ եղբօր Յովհաննէս արքայի. վասն որոյ ժողովեալ իշխանայն ամենեցուն օծին զնա 'ի թագաւոր յամի տեառն 1042։

Ժողով Հարքայ Բ. յամի տեառն 1061։

ՅՈՐԿՈՒՔ. սմանք 'ի Թոնդրակեցւոց ծանուցեալ զորտապատիր մոլորութիւն իւրեանց, եկին առ աստուածասէր՝ իշխանն Գրիգոր Մագիստրոս և խնդրեցին 'ի նմանէ զի զինու զօրութեամբ բարձցէ զաղանդն չար։ Այլ Մագիստրոսի փութոյ անգթութեամբ զհետ եղեալ բառնալ զմոլար վարդապետութիւնն 'ի դքսութենէ անտի իւրմէ Միջագետաց՝ զնոյն յԱսպահունիս և աւերեալ կործանեաց զժողովեաղն նոցա որ 'ի Թոնդրակ սանի։ Օահի հարեալ բազմաց յաստուածասէր եռանդանէ՝ անտի Մագիստրոսի, թողին զմոլորութիւն իւրեանց. վասն որոյ ժողովեալ եպիսկոպոսաց և վարդապետաց 'ի Հարք գաւառ, միաձայն հաւանութեամբ մկրտեցին զնոսա յանուն ամենասուրբ Երրորդութեան։

Ժողով Սեաւ լերին Ը. յամի տեառն 1072։

ԳՐԻԳՈՐ Վկայասէր միաձնական կամելով վարել կեանս, յայտնեաց զխորհուրդս մտացն ատենադպրի իւրում Գէորգայ վարդապետի Լոռեցւոյ։ Այլ իշխանայն բազում թախանձանօք ջան գործեալ արգելուլ զնա 'ի խորհրդոյն, իբրև տեսին զհաստատութիւն մտացն նորա՝ համոզկեր բանիւք հաւանեցուցին զԳէորգ լոռեցի առնուլ զիշխանութիւն կաթուղիկոսութեան. և Վկայասէրն ամբարձեալ զնա յայն պատիւ, ինքն գնաց բնակել ընդ միաձանս Սեաւ լերին։ Այլ զի ազգն առհասարակ սիրացեալ ընդ գեղեցիկ բարեմասնութիւնս և ընդ հայրագորով խնամս Գրիգորի՝ առ նա դիմէր իբրև առ աղբիւր առատահոս, զայրացաւ Գէորգ և խորհեցաւ ժողովել եպիսկոպոսաց ընկենուլ զնա յիշխանութենէն. և յոյն անսալ իշխանաց և 'ի տխրել զնոսա Գէորգայ՝ ձանձրացեալ իշխանաց 'ի բազմապատիկ թախանձանացն, աղաչեցին միաբան զՎկայասէրն ընկենուլ զնա յիշխանութենէն։ Յայնժամ Գրիգոր 'ի Սեաւ լերին անդ ժողովեալ սակաւուց սմանց եպիսկոպոսաց և վարդապետաց մերկացոյց զԳէորգ 'ի կաթոզիկոսական քաղցն, և յինքն ստանձնեաց դարձեալ զպարտս պաշտաման նորա։

Ժողով Հռոմայ յամի տեառն 1073։

ՓԻԼԱՐՏԵԱՑ որում Հայոց նենգութեամբ սպանեալ զԹէոդոսիկ Մամիկոնեան, եկն և նստաւ 'ի Թաւբլուր, և երկիցս հրեշտակագնաց եղև առ Գրիգոր Վկայասէր գալ առ ինքն և մի ինչ երկնչել. և խոստանայր եւս մեծարել զնա պատուով։ Այլ զի բռնաւոր ոմն էր Փիլարտոս, երկեաւ կաթուղիկոսն իջանել առ նա. վասն որոյ աղաչեաց կարգել ընդ իւր 'ի կաթուղիկոսութիւն զտէր Սարգիս զքեռորդի Պետրոսի Գետադարձի։ Ժողով արարեալ յայնժամ Փիլարտեայ յեպիսկոպոսաց և 'ի վարդապետաց 'ի Հոնի առ Մելոս գետով, ետ ձեռնադրել զՍարգիս յեպիսկոպոսապետ ամենայն Հայոց։

ԴԱՐ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա.

Առաջին զինուորութիւն խաչակրաց յազատութիւն տնօրինական տեղեացն Քրիստոսի։

Ընդ կայսերաւն մեծին Կոստանդիանոսի՝ իբրև գտաւ սուրբ խաչն Քրիստոսի 'ի ձեռն դշխոյին Հեղինեայ՝ նորոգեցան տնօրինական սուրբ տեղիք, և յաճախեցին անդր ուխտագնացութիւնք յամենայն կողմանց աշխարհի, 'ի Գաղղիոյ, 'ի Սպանիոյ, 'ի Գերմանիոյ և 'ի հեռագոյն ևս աշխարհաց։ Զամս իբր երեք հարիւր չէր ինչ նոցա վտանգ զճանապարհայն. զի թէպէտ և բարձեալ էր արևմտեան կայսերութիւնն, սակայն թագաւորութիւնք հեթանոս իշխանաց կանգնեալք յաւերակաց նորա՝ լի էին բազմաթիւ քրիստոնեայ ժողովրդովք. իսկ տիրապետութիւն Հագարացւոցն Արաբիոյ, որք հաւատով, լեզուաւ և բարուք օտարք էին 'ի քրիստոնական կրօնից, կերպարանափոխ արար զամենայն։

Ամիրապետք Հագարացւոց ընդ որոց իշխանութեամբ էր Պաղեստին՝ ընդ ժամանակս ժամանակս անհանդուրժելի բռնութեամբ նեղէին զքրիստոնեայս աշխարհին։ Ցաւ մեծ էր եկեղեցւոյ տեսանել զբռնաւորն զի տիրեալ սուրբ տեղեացն պղծէին զայնոսիկ անօրէնութեամբք իւրեանց։ Պետրոս ոմն անուն անապատական քահանայ գաղղիացի՝ լուեալ զպատմութիւնս վըշտացն և զտառապանաց յորս հեծէին քրիստոնեայք՝ զայրացաւ 'ի միտս իւր. և յորդորեալ 'ի բարեպաշտութենէ գնաց 'ի Պաղեստին, ուր ինքնին ականատես լեալ վշտացն և վառեալ նախանձու աստուածպաշտութեան՝ եդ 'ի մտի յորդոր մատուցանել քահանայապետին Հռովմայ և քրիստոնեայ իշխանաց Արևելից զինել ընդդէմ այլազգեաց ։ Այլ զի կարասցէ հանել 'ի գլուխ զայս խորհուրդ, էառ զանազան նամակս 'ի պատրիարքէն Երուսաղէմի առ քահանայապետն և առ թագաւորս ։

Յայնու ժամանակաւ 'ի նոյն միտս գոլով և Գրիգորի Է. քահանայապետին Հռովմայ, խորհէր հաստատել 'ի թագաւորս քրիստոնէից միաբանական ինչ դաշնակցութի՛ 'ի զինել ընդդէմ Հագարացւոց, որք խնդրէին տիրել Կոստանդնուպօլսոյ, և յօժարամիտ էր ինքնին լինել պարագլուխ զինուորութեան յազատութիւն սրբոյ գերեզմանին Քրիստոսի. սակայն առ ժամն ոչ 'ի դէպ վարկաւ դնել 'ի գործ զդիտումն իւր զայն՝ զանգիտեալ 'ի հակառակութենէ կայսերն Հենրիկոսի չորրորդի, որ չկամէր մտանել 'ի նոյն դաշնակցութիւն. և կասկածէր դարձեալ թէ մի գուցէ 'ի մեկնել իւրում 'ի Հռովմայ զինեալ անդր Հենրիկոսի՝ ձգեսցէ զբազուկ իշխանութեան իւրոյ 'ի վերայ իրաւանց եկեղեցւոյ ։

Ուրբանոս Բ., որ 'ի ժամանել Պետրոսի անապատականի 'ի Հռովմ նստէր յաթոռ քահանայապետութե՛ չունէր զերկիւղ և զկասկած Գրիգորի եօթներորդի, զի էր իշխան զրեթէ համօրէն Իտալիոյ. վասն որոյ յօժարամիտ ունկնդիր լեալ բանից Պետրոսի անապատականի՝ հնարս խորհեցաւ 'ի գլուխ հանելոյ զխորհուրդն. և յետ գումարելոյ ժողով 'ի Փիաչենցա քաղաք յամին 1095, չոգաւ 'ի Գաղղիա, և 'ի նմին ամի միւսանգամ գումարեաց ժողով 'ի Կլերմոն Ովերնիոյ, ուր գտան զրեթէ ամենայն կարդինալք և երկերիւր եպիսկոպոսունք, և բազում այլ եկեղեցականք իտալացիք և գաղղիացիք ։ Ընդ այն Ուրբանոս ատենախօս եղև ազդու և զօրաւոր բանիւք առաջի արկեալ զխորհուրդ Պետրոսի անապատաւորի, զոր առաքեալ էր 'ի զանազան թագաւորութիւնս Արևելից զարթուցանել զնախանձ բարեպաշտութեան իշխանաց և ժողովրդոց ։ Այլ ոչ սակաւ օգտաւոր եղեն յորդորք քահանայապետին և Պետրոսի անապատականի, քանզի անթիւ բազմութիւն քրիստոնէից յօժարակամ ուխտիւք յանձն առին գնալ 'ի սուրբ երկիրն և ազատել զայն 'ի ձեռաց

Հագարացւոց և Սարակինոսաց ։ Իսկ քանզի զինուորեալքն 'ի միաբանութիւն այնր պատերազմի 'ի հանդերձս իւրեանց կրէին խաչ կարմրաներկ, նմին իրի անուանեցաւ այն Խաչակիր զինուորութիւն ։

Կոդոփրեդոս կամ Կոփրետոս Պուլիոն (որ և Կոնգոյլէ) դուքս Լոռենայի, համբաւեալն 'ի ժամանակին քաջութեամբ իւրով, յամի տեառն 1096 ընտրեցաւ զօրագլուխ այնր բազմութեան, որ ձեռնհաս էր արգեօք ջնջել զբռնաւորսն Ասիոյ՝ եթէ պինդ կալեալ էր զկանոնս բարեկարգ զինուորութեան ։ Այլ այս բանակ խաչակրաց խմբեալ յինքնակամ զինուորաց անխտիր յամենայն ազգաց Եւրոպիոյ՝ մինչև ժամանեալ յերկիր անհաւատից՝ սկսան յաւարի առնուլ զքաղաքս ընդ որս անցանէին ։ Եւ զի բազումք այնոքիկ էին որք յընչիցն ցանկութենէ զրգռեալք երթային 'ի պատերազմ, վասն որոյ կողոպտեալ կեղեքէին զժողովուրդս ․ և զի ոչ ևս ունէին առաջնորդաց յանձնանօթ ուղղութիւն, հարկեցան ապաւինել յառաջնորդութիւն մարդկան, զորս աւարահարութեամբ թշնամացուցեալ էին ընդ իւրեանս ․ վասն որոյ և 'ի դաւաճանութենէ նոցա ակարացան յոյժ, և պակասեաց թիւ բազմութեան իւրեանց ։ Սակայն և այնպէս 'ի ժամանել նոցա յերկիրն Ասորւոց՝ Կոփրետոս առնէր ընդ իւր, որպէս ասեն, երեքհարիւր հազար զինուորս, որովք մարտ եղեալ ընդ Հագարացիս՝ տիրեաց Նիկիոյ և այլոց քառասուն քաղաքաց և երկերիւր շինից և աւանաց ։ Ապա 'ի կամելն խաղալ 'ի վերայ Անտիոքայ, խնդրեաց զձեռնտուութիւն Կոստանդնի իշխանին Հայոց՝ որ տիրէր 'ի սահմանս Կիլիկիոյ, և ընկալեալ 'ի նմանէ ոչ միայն զառաջնորդութիւն ընդ կարճոյ ճանապարհ, այլ և պաշարս զօրաց, դիւրաբար տիրեաց քաղաքին Անտիոքայ ։ Ի յաջողութէ աստի քաջալերեալ խաչակրաց դիմել յԵրուսաղէմ 'ի մայրաքաղաքն Պաղեստինոյ, յետ ամսոց ինչ բուռն մարտի առին զայն 'ի ձեռաց այլազգեաց յամի տեառն 1099 ։ Բնակիչք քաղաքին առ հասարակ կոտորեցան 'ի բերան սրոյ, և այնպէս անխնայ էր կոտորածն՝ մինչև վտակք արեանց հոսէին ընդ փողոցսն ։

Կոփրետոս տիրեալ քաղաքին Երուսաղէմի, միաձայն հաւանութեամբ ամենայն իշխանաց ընտրեցաւ թազաւր․ սակայն հրաժարեալ 'ի կրելոյ թագ ոսկի 'ի քաղաքի՝ ուր տէրն մեր ընկալաւ պսակ փշեղէն՝ դուքս եւեթ կոչեցաւ ։ Յետ այնորիկ պատրաստեալ 'ի պատերազմ ընդդէմ ամիրապետին կամ սուլդանին Եգիպտոսի, որ յօգնութիւն գայր Երուսաղեմի, արիական քաջութեամբ զօրացաւ ընդդէմ այլազգեաց, եւ արար հարուածս մեծամեծս, մինչեւ ըստ աւանդելոյ ոմանց՝ 'ի պատերազմին Ասկաղոնի կոտորել զինուորս հարիւր հազար ։

Խաչակիր զօրացն յաղթական փառօք մտեալ յԵրուսաղէմ, բազումք 'ի նոցանէ դարձ արարին յԵւրոպա 'ի հայրենիս իւրեանց․ իսկ Գոփրեդոս մնացեալ անդ սակաւաթիւ զօրօք՝ համբաւով քաջութեան իւրոյ ոչ միայն գիտաց պաշտպանել զտէրութիւնն, այլ եւ ընդարձակել զսահմանս իշխանութե՟ իւրոյ․ տիրեաց համօրէն Գալիլեայ, ամրացոյց զՅոպպէ, եւ ստիպեաց զթագաւորն Արաբացւոց խնդրել 'ի նմանէ զհաշտութիւն ։ Այլ սակաւուն եղեն ցանկալի աւուրք կենդանութե՟ նորա, զի վաղվաղակի լեալ 'ի դժուարակիր աշխատութեանց մարտի եւ 'ի հոգոց տեւչութե՟՝ վախճանեցաւ յԵրուսաղէմ յամի տեառն 1100, յառաջնում ամի տէրութեան իւրոյ, 'ի հասակի քառասուն ամաց ։ Օրինակ էր նա արութեամբ քաջութեան, վայելչատեսակ անձամբ, պատկառելի զինօք եւ ազնուաբարոյ, սիրելի ամենեցուն, քաղցր եւ զուարթուն ։ Թէպէտ եւ չէր վարժեալ յարտաքին ուսմունս, սակայն արիասիրտ էր, առատաձեռն, վեհանձն եւ առաքինի առանց կեղծաւորութեան եւ վեհերոտութեան ։ Ազնուատոհմութեամբն արժանաւոր գոլով արքայական պատուոյ՝ ստացաւ զայն եւ արդեամբք․ եւ եթէ նմանող լինէին նմա եւ այլ զօրագլուխք խաչակրաց յայս գործ մեծ, զգուշացեալք յանմիաբան տարաձայնութենէ եւ յամբարտաւանութենէ, որպէս եւ զինուորքն յանկարգութենէ վարուց, անշուշտ մարթ էր յաջողել զինուց նոցա եւ աշխարհակալութեան ։

ԳԼՈՒԽ Բ.

Երկրորդ զինուորութիւն խաչակրաց։

Ի ՄԵՌԱՆԵԼ Կոֆրետոսի երկպառակեցան իշխանքն որք երթեալ էին ընդ նմա 'ի Պաղեստին, զի ամենայն որ յանկայր յինքն արկանել զիշխանութիւն նորա։ Օ երկպառակութիւն նոցա պատճառ առեալ անհաւատից՝ կալան դարձեալ զկորուսեալ քաղաքս իւրեանց; և Պաղտուինոս թագաւոր յաջորդն եղեւ Կոֆրետոսի՝ մօտ յԵրուսաղէմ գերեցաւ յիշխանէ ումեմնէ Հագարացւոց։ Պետութիւն Եդեսիոյ հաստատեալ յետ նախկին յաղթութեանցն ընդդէմ Հագարացւոց, ջնջեցաւ յամին 1140, զորոյ զնկարագրութիւնն ողբերգական և ոտանաւոր բանիւ գրէ և սուրբն Ներսէս Շնորհալի. իսկ Անտիոքայն՝ հաստատեալն առ նովին ժամանակաւ, 'ի վտանգի կայր կործանման։ Հագարացիք կալան զիշխանութիւն Դամասկոսի և զայլոց մօտաւոր քաղաքաց, որպէս և զմեծագոյն մասն Պաղեստինոյ։

Կայսերութիւն Կոստանդնուպոլսոյ էր 'ի ձեռս Կոմնենոսեանց, որք ընդ Եւրոպացիս կեղծաւորութեամբ յաւէտ քան բարեկամութեամբ վարէին, և զանգիտեալք յահարկու բազմութենէ նոցա՝ կասկածէին զի մի ընդ պատրուակաւ պաշտպանութեան և մարտնչելոյ ընդ հագարացի թշնամին հաւատոյ, խորհեսցին նոքա նուաճել և զՅոյնս և տիրել կայսերութեանն։

Արդ 'ի վտանգի գոլով Եւրոպացւոց յերեսաց այլազգեաց, և անյոյսք 'ի ձեռնտուութենէ Յունաց, կային յերկիւղի մեծի ոչ միայն կորուսանելոյ զստացեալ զաւառսն, այլ և անձանց կոտորածի՝ եթէ ստիպեսցին ելանել 'ի մարտ ընդդէմ թշնամեաց։ Եւ զի զառաջս առնուլ մարթասցեն այնր վտանգի, գումարեցին յԵւրոպիա նոր զինուորութիւն խաչակրաց, որոյ յորդորիչք եղեն քահանայապետն Եւգինէոս Գ., և սուրբն Բեռնարդոս աբբայ Պայծառաձորոյ վանից։ Երանելին այս վանահայր ամենայն փութով խնամ կալաւ հաւանեցուցանել զԼուդովիկոս Կրտսեր զարքայ Գաղղիոյ, և սոյն 'ի շարժել զնախանձ բարեպաշտութեան իշխանաց և ժողովրդեան՝ եւ ընդ Թագաւորին 'ի բարձրաւանդակ տեղի ինչ յընդարձակ դաշտին Վեզէլա՝ որ 'ի Պուրկօյն գաւառի ։ Ի հոգեշարժ քարոզութենէ սորայն ամենեքին առ հասարակ յորդորեցան առնուլ յանձինս զկարմրաներկ նշան խաչին . և յոչն բաւել բազմաթիւ պատրաստեալ խաչանշանացն՝ ստիպեցաւ սուրբն զհանդերձս իւր բաժանել 'ի ծուէնս , և բաշխել փափաքողաց ։ Պերճախօս ատենաբանութեամբ իւրով զարթոյց ըզսիրտս ամենեցուն 'ի զինուորութիւն , որպէս գրէ և նա ինքն առ Եւգինէոս պապ . “ Սրբութիւն ձեր , ասէ , հրաման ետ , և ես ինքն մտադիւր հնազանդեցայ . և իշխանութիւն ձեր արգասաւոր արար զիմ հնազանդութիւն ։ Քաղաքք և աւանք անապատացան 'ի բնակչաց . յամենայն տեղիս երեւին այրիացեալ կանայք , որոց այր կենդանի են տակաւին „ ։ Կամէին զսուրբն Բեռնարդոս ընտրել 'ի գլուխ զինուորութեանն . սակայն նորա շատ համարեալ զյորդոր քարոզութեան իւրոյ՝ հրաժարեցաւ 'ի տաժանակիր պատուոյ անտի , զոր Պետրոս անապատական յառաջնումն զինուորութեան կամակար մտօք յանձն առեալ էր ։ Ապա ուղեւորեալ սորին և 'ի Գերմանիա , հաւանեցոյց զկայսրն Կոնրադոս Գ. ընդունել զխաչ այնր զինուորութեան , և խրախուսեաց զնա յԱստուած՝ դատանել ելս յաջողութեան գործոյն . վասն որոյ սկսան յամենայն կողմանց Եւրոպիոյ բազմութիւն խաչակիր զօրաց դիմել 'ի բանակ մարտի , և 'ի նախատինս իշխանացն որք յետս կացին 'ի զինուորութենէ անտի՝ առաքեցան առ նոսա աղեկաւք և իլք , կնատս և անզօրս ցուցանելով զնոսա ։

Կոնրադոս կայսր և Լուդովիկոս Թագաւոր Գաղղիոյ կացին 'ի գլուխ խաչակրաց որոց ոչ էր թիւ բազմութեան ։ Յայնմ ուղեւորութեան կայսրն անխոհեմ ընթացիւք յառաջեալ քան զԼուդովիկոս , և 'ի դաւադրութենէ Յունաց անպարէն մնացեալ՝ անկաւ յանշէն վայրս փոքուն Ասիոյ , ուր խորտակեալ յաղեղնաձիգ զօրաց ամիրային Իկոնիոյ , ստիպեցաւ դառնալ յետս 'ի Նիկիա , և անտի իբր մաղապուրծ 'ի մահուանէ եկն 'ի Կոստանդնուպօլիս , և ապա յերկիր իւր 'ի Գերմանիա ։ Իսկ Լուդովիկոս արքայ Գաղղիոյ յետ խորտակմանն Կոնրադոսի ժամանեալ 'ի Նիկիա քաղաք , անտի *անխորհուրդ յարձակմանն 'ի վերայ Հագարացւոց՝ կորոյս զմեծ մասն բանակին իւրոյ առ երի Լաւոդիկեայ Ասորւոց յամին 1149։ Եւ հազիւ ձողոպրեալ զանձն ընդ տիկնոջ իւրում Ելենորայ, դիմեաց ապաստանել յԱնտիոք քաղաք, և անտի սակաւ արամբք դարձ արար 'ի Գաղղիա։*

Սուրբն Բեռնարդոս՝ որ քաջալերեալն էր զնոսա և խոստացեալ զյաջողութիւն զինուց, յետ այնպիսի թշուառ ելից՝ ընկալաւ յանիրաւի զդատն կշտամբութիւնս. քանզի պատճառք այնմ անյաջող թշուառութեան եղև յանդուգն յանձնապաստանութիւն թագաւորաց, և զեղխութիւն և անկարգութիւն խաչակիր զօրաց, որոց առաւել փոյթ էր օգտի և ճոխութեան անձանց քան նպաստամատոյց լինելոյ կրօնի։ Քանզի բազումք 'ի խաչակիր զօրաց անտի երթեալ էին անդր աշխարհային մտօք. ոմանք առ մարդկան ակամնէ, զի մի երևեսցին անարիք. այլք վասն խուսելոյ 'ի պարտատեարց զի մի նեղեսցին 'ի հատուցմանէ պարտուց իւրեանց։ Բազում միայնակեացք համարձակեալք 'ի միաբանական կենաց ելին արտաքս 'ի վանաց, և լքեալ զխաչ մեռելութեան ընդ Քրիստոսի զոր ուխտիւք խոստացեալ էին կրել, ընկալան զխաչ զինուորութեան աշխարհի։ Ստահակք և չարագործք կարծէին քաւել զմեղս իւրեանց յայնմ պատերազմի. սակայն փոփոխութիւն երկրի ոչ կարէ փոխել զոք և 'ի վատթար բարոյից։ Վասն որոյ վիշտ մեծ էր առաքինեաց՝ զզինուորութիւն նախանձուաստուածպաշտութեան տեսանել անպատիւ լեալ 'ի մոլեկան անկարգութենէ վարուց, յագահութենէ և 'ի զեղխութենէ։

ԳԼՈՒԽ Գ.

Երրորդ զինուորութիւն խաչակրաց։

Ի ժամանակօք խաչակիր զինուորութեանց զօրացեալ էր յԱսիա Յուսուֆ Սալահէտտին կամ Սալադին սուլտան Եգիպտոսի, որ պերճացեալն էր ամենայն բարեմասնութիւնք որ յանկաւորք իցեն և պատշաճք թագաւորի. յաղթութեամբք իւրովք ստացաւ զհամբաւ աշ-

խորհրդակցութեան, և յետ նուաճելոյ զԱկորս, զԱբարիս, զՊարոս և զՍիջագեստ՝ դիմեաց և 'ի վերայ Երուսաղեմի, ուր թագաւորէր յայնժամ Գուիդոն Լուսինեան։ Այլ քանզի Ռայմունդոս իշխանն Տրապօլսոյ՝ թոռն Ռայմունդոսի կոմսին Տոլոսայ՝ մախայր ընդ Գուիդոնի, իմացեալ զայն Սալադին սուլթանի՝ ընկերայն խոստացաւ նմա զգահ իշխանութեան Երուսաղեմի, եթէ յանձն առնուցու հրաժարել 'ի քրիստոնէութենէ։

Ռայմունդեայ նախատինս անձին վարկուցեալ փոխել զհաւատն, չկամեցաւ յանձն առնուլ զայն. սակայն առ 'ի մատնել անկասկած դաւով զԳուիդոն՝ առաքեաց և ինքն զօրս յօգնութիւն սուլթանին, որովք պատերազմեալ նորա հուպ Տիբերիայ՝ 'ի գլուխ տարաւ զյաղթութիւնն յամի տեառն 1187։ Կալանաւորեցաւ Գուիդոն, և բազումք յիշխանաց և 'ի մեծամեծաց նորա կոտորեցան սրով բաց 'ի կոմսէն Տրապօլսոյ, որ առանց պատերազմելոյ խոյս ետ զօրօք իւրովք 'ի փոքրիկ սահման իշխանութեան իւրոյ՝ պատճառք եղեալ կործանման բանակին քրիստոնէից։

Սալադին սուլթան յետ այսր յաղթութեան փութացաւ դիմել 'ի վերայ Երուսաղեմի, զոր և էառ 'ի տասն աւուրս։ Այլ զի այր բարեխորհ էր և խորամանկ 'ի գործս իւր, բազում մարդասիրութեամբ վարեցաւ ընդ թագուհւոյն տիկնոջ Գուիդոնի, և ընդ իշխանազուն դստերս նորա, քաջալերելով զնոսա խոստմամբ ազատութեան թագաւորին։ Ապա յառաքելն զնոսա յԱսկաղոն քաղաք, թոյլ ետ տանել ընդ իւրեանս զամենայն կահս պալատանն, և պատուիրեաց պաշտօնէից իւրոց մի ինչ ձեռնամուխ լինել յինչս նոցա և 'ի ստացուածս։ Ամենայն աղախնայք պալատանն զհետ գնային բանակի թագուհւոյն՝ կալեալ զձեռանէ որդւոց իւրեանց, և լային մեծաձայն ողբովք. ընդ որ աղէխորով լեալ սուլթանին՝ կամեցաւ գտանել զպատճառս ողբոցն նոցա։ Յայնժամ կին մի 'ի նոցանէ ետ պատասխանի. « Օ՛ քաջդ, ոչ ողբամք զկորուստ ամենայն ստացուածոց մերոց. սակայն դու ինքն կարող ես միով բանիւ մխիթարել զմեզ, շնորհելով զծնողս մեր և զամուսինս, որք հեծեն 'ի շղթայս արգելանաց բանտից. և փոխանակ նոցա թողումք քեզ կամակար զամենայն ինչս մեր. զի նոքա ձեռնհաս են խնամ ունել մեզ, և Աստուածն մեր որ կերակրէ զթռչունս երկնից՝ նա պատրաստեսցէ կերակուր որդւոց մերոց„ ։ Զայն լուեալ սուլդանին հրամայեաց վաղվաղակի տանել՝ի կալանաւորսն, և տալ խրախճանութիւն զոր խնդրէին. պարգևեաց ամենեցուն և ընծայս ըստ աստիճանի իւրեանց ։ Ապա յաղթանակաւ եմուտ յԵրուսաղէմ ընդ Կուիդոնի արքայի և ընդ երևելի իշխանացն, և քսան հազար կալանաւորօք՝ զորս առաքեաց անտի 'ի Դամասկոս ։

Ի մտանել սուլդանին յԵրուսաղէմ փոխեաց զտաճարն Սողոմոնի 'ի մզկիթ աղօթից պաշտաման. բայց զգերեզմանն Քրիստոսի իբր զմարգարէի մեծի 'ի պատուի կալեալ եթող 'ի ձեռս քրիստոնէից 'ի յորդոր յաճախութեան ուխտաւորաց. սակայն կամեցաւ զի քրիստոնեայք լուասցեն վարդաջրով զմզկիթն՝ զոր փոխարկեալ էր նոցա յեկեղեցի ։ Զկնի այսր յետին յաղթութեան ոչ մնաց 'ի ձեռս քրիստոնէից այլ երկիր, բայց միայն Անտիոք, Յոպպէ և Տիւրոս. զի այլ քաղաքք առհասարակ էին ընդ իշխանութեամբ սուլդանին և փեսայի նորա ամիրային Իկոնիոյ ։

Բուռն զօրութիւն աշխարհակալ իշխանին զարհուրեցոյց զԵւրոպիա համօրէն ։ Քահանայապետն Կղեմէս Գ. լուեալ զաղէտս Երուսաղեմի՝ յարոյց զարձեալ 'ի զինուորութիւն զԳաղղիա, զԱնգղիա և զԳերմանիա ։ Գրեաց և առ կաթողիկոսն Հայոց Գրիգոր Տղայ և առ Լևոն իշխան Կիլիկիոյ՝ ձեռնտու և օգնական լինել խաչակիր զօրացն, որք հանդերձեալ էին անցանել ընդ երկիր նոցա ։

Կայսրն Ֆրեդերիկոս Պարպառոսսա յազգային ժողովի ուրեք գումարելոյ 'ի Մոգունտիա յամին 1188 ընկալեալ զխաչ զինուորութեան՝ կամեցեալ անցանել յԱսիա բազմաթիւ ընտիր բանակաւ զօրաց, պատերազմաւ խորտակեաց զԲուլղարս որք արգելուլ կամէին զճանապարհ նորա ։ Նոյնպէս ընդ առաջ ելին նմա և խոչընդոտք յերկրի իշխանութեան կայսեր Իսահակայ Անգեղոսի, որ թէպէտ զառաջինն խոստացեալ էր նմա ազատ անցս, սակայն յետոյ ժխտեաց բանիցն, կասկածեալ թէ Ֆրեդերիկոս հանդերձեալ իցէ տիբել Կոստանդնուպօլսոյ և թագաւորեցուցանել անդ զորդի իւր զդուքսն Սուէւիոյ։ Տեսեալ Պարպառոսայի զխաբէութիւն Իսահակայ՝ յաւարի էառ զերկիր նորա, և տիրեաց Փիլիպպուպօլսոյ։ Յետ այնորիկ գնացեալ յԱդրիանուպօլիս՝ անց ընդ Նեղուցն Դարդանեան, և յամին 1190 եմուտ յերկիր սահմանաց սուլտանին Իկոնիոյ։ Սա խաբէութեամբ խոստացեալ էր Փրեդերիկոսի թողուլ նմա անցանել ընդ երկիր իւր, բայց 'ի կիրճս լերանց ջանահնար եղև խափանել զընթացսն· սակայն Փրեդերիկոսի կրկին մարտիւ խորտակեալ զզօրութիւն նորա, զիմեաց պաշարել զքաղաքն Իկոնիոն՝ ուր էր սուլտանն, և էառ զայն բուռն յարձակմամբ։

Արիական քաջութիւն Փրեդերիկոսի յուսացուցանէր զամենեսին 'ի ձեռս բերել հաւատացելոց զերկիրն սուրբ· սակայն օրհաս մահու նորա 'ի նմին իսկ ամի (1190) 'ի դերև եհան զակնկալութիւնս զայս։ Քանզի ոչ ինչ փոյթ կալեալ նորա առողջութեան կենացն, կամ որպէս այլք ասեն՝ 'ի լողանալն յանցս գետոյն Սելևկիոյ՝ հեղձաւ անդ։ Հասեալ անդէն և Լևոնի իշխանին Հայոց և Գրիգորի կաթուղիկոսին ընդ Ներսէսի Լամբրոնացւոյ՝ սգացան յոյժ զմահ նորա և զկորուստ հաւատացելոց։

Յետ այնորիկ Փրեդերիկոս որդի նորա դուքսն Սուէւիոյ, որ յաջորդեաց զհայրն 'ի բանակի անդ՝ կամելով լնուլ զտեղի պակասութեան հօր իւրոյ, անցեալ ընդ Կիլիկիա, և զաւուրս ինչ կացեալ անդէն, եգիտ ասպնջականութիւն մեծ 'ի Հայոց, և ապա յառաջ վարեալ զընթացսն եմուտ յԱնտիոք քաղաք իբր ութսուն հազար զինուորօք որք մնացեալ էին 'ի բանակէ անտի հօր նորա, և անդ ժողովեաց առ ինքն զցրուեալ զօրս Կուիդոնի Լուսինեան· սակայն և ինքն Փրեդերիկոս ըստ օրինակի հօրն վախճանեցաւ 'ի նմին ամի մերձ 'ի Պտղոմայիս (որ է Աքքա) դառն ցաւօք որ մահացոյց զբազումս 'ի Գերմանացւոց։ Յայս նուագ զինուորութեան Եւրոպացիք թէպէտ և մեծամեծ քաջութիւնս գործեցին 'ի Պաղեստին, բայց ոչ կարացին առնուլ զԵրուսաղէմ։

ԳԼՈՒԽ Գ.

Չորրորդ զինուորութիւն խաչակրաց։

Ի ՄԵԾԻ տագնապի էին խաչակիրք՝ յորժամ Փիլիպպոս Օգոստոս թագաւոր Գաղղիոյ, և Ռիքարտոս Առիւծասիրտն արքայ Անգղիոյ ընկալեալ զխաչ զինուորութեան յամին 1190 և ուղևորեալ ընդ ծով հասին յերկիրն սուրբ։ Սոցա խոհականագոյն գտեալ քան զայլսն ամենեսին որք միանգամ ձեռնամուխ եղեն յայս գործ՝ սահմանեցին օրէնս զի որ ոք 'ի հպատակաց իւրեանց ոչ կամիցի գրել 'ի խաչակիր զինուորութիւն, պարտական լիցի տալ մի նուագ հատուցանել տասանորդս յամենայն եկամտից և 'ի ստացուածոց իւրոց, որ անուանեցաւ Տասանորդ Սալահադինեան։ Արդ այսպիսի հասարակաց ձեռնտուութեամբ մարթ էր նոցա ակն ունել յաջողակ ելից․ վասն որոյ 'ի ժամանել անդր պաշարեցին զՊտղոմայիս ընդ ծով և ընդ ցամաք՝ իբր երեքհարիւր հազար արամբք, և առին զայն զինու զօրութեամբ յայլազգեաց անտի։ Յայնմ մարտի սակս նախանձաւորութեան փառաց և պատուոյ ընդ մէջ Փիլիպպոսի և Ռիքարտոսի, և յանմիաբան տարաձայնութենէ զօրագլխաց ընդ միմեանս՝ եմուտ երկպառակութիւն 'ի խաչակիր զօրսն, յորմէ գժգմնեալ արքայն Գաղղիոյ ստիպեցաւ դառնալ 'ի թագաւորութիւն իւր։

Իսկ թագաւորն Անգղիոյ մնացեալ միայնակ 'ի Պաղեստին յամին 1191 կամեցաւ մարտնչել ընդ սուլտանին՝ որ յաղթական փառօք դառնայր 'ի Միջագետաց։ Պատերազմեցան սոքա ընդ միմեանս հուպ 'ի Կեսարիա, և յետ բազում մարտից և ճգնաց՝ թուլացեալ խաչակրացն յառաջին եռանդանէ, և տագնապեալ 'ի մահաբեր հիւանդութեանց, ստիպեցան խօսել 'ի հաշտութիւն ընդ սուլտանին Սալահադինայ, և նա յօժարամիտ յանձն էառ, կուելով դաշինս զի ուխտաւորք անարգել մարթասցին գնալ յայցելութիւն սուրբ տեղեաց։ Ապա 'ի կամել Ռիքարտոսի դառնալ յԱնգղիա, խորտակեցաւ նաւ նորա առ ծովեզերբ Վենետկոյ․

վասն որոյ հարկեցաւ յայլակերպս անցանել ընդ սահմանս Լէոփոլտոսի դքսին Աւստրիոյ. բայց կալանաւորեալ ՚ի դքսէն մատնեցաւ ՚ի ձեռս կայսեր Հենրիկոսի Զ., և ապա յետ չորեքտասան ամսոց ծանրագնի եգիտ զազատութիւն։ Ահա այս եղեն արգասիք չորրորդ զինուորութեան խաչակրաց և յաղթութեանց Ռիքարտոսի յԱսիա։

Վիճակ քրիստոնէից յարևելեան կողմանս դառն և դժուարակիր եղև յետ մահու Սալահադին սուլտանին՝ որ դիպաւ յամի տեառն 1192. եթող նա որդիս բազումս որք զամիրութիւն հօրն իւրեանց բաժանեցան յիւրեանս։ Կտակաւ պատուիրեալ էր Սալահադին անխտիր բաշխել ողորմութիւն քրիստոնէից, հրէից և մահմետականաց. և ՚ի ցուցանել զունայնութիւն մարդկային փառաց և զաշխարհական ճոխութեան պատուիրեաց զպատանս մարմնոյ իւրոյ իբր դրօշ շրջեցուցանել ընդ փողոցս Դամասկոսի՝ յառաջագոյն մունետիկաւ, որ ՚ի ձայն բարձր աղաղակէր. «Ահա սեպհական ստացուածք մեծին Սալահադինայ աշխարհակալին Ասիոյ»։ Ամենայն պատմաբանք գովեն զընտիր և զմարդասէր բարս նորա. սակայն նախանձ կրօնի ստիպեաց զնա երբեմն խստութեամբ վարել ընդ քրիստոնեայս, որք յայտնի և հրապարակաւ անգոսնեալ էին զնա։ Թուի ինձ թէ վասն այնորիկ ինքնին եհատ և զգլուխ Ռենալդոսի Կաստիլիոնեան, զի ՚ի հրապուրել զնա յուրացութիւն՝ ոչ ինչ լուաւ նմա Ռենալդոս, լաւ համարեալ զմահ քան զկեանս ուրացութեամբ։

ԳԼՈՒԽ Ե.

Նոր հակառակութիւնք եկեղեցական ժառանգաւորութեան։

ՈՐՊԷՍ ՚ի մետասաներորդի դարու, նոյնպէս և յերկոտասաներորդին յայսմիկ ազգի ազգի վէճք և կռիւք յուզեցան ՚ի պատճառս եկեղեցական ժառանգաւորութեան. զի թագաւորք և իշխանք սովոր էին շնորհել եպիսկոպոսաց հովուական գաւազանս և մատանիս, և վիճակս առանձին։ Քահանայապետն Ուրբանոս Բ. դատապարտեաց զայն յամին 1095 ՚ի ժողովն

Կլերմոնի , յափշտակութիւն զայն համարեալ հոգևոր իրաւանց յաշխարհական տէրութենէ ։ Զնոյն համարեցին և այլ ժողովք յետ նորա ։ Նոյնպէս և Պասքաղէս Բ. 'ի ժողովին գումարելոյ 'ի Գուաստալլա յամին 1105 նորոգեաց զվճիռ նախորդաց իւրոց ընդդէմ բռնաւորողաց իշխանութեանս . և նզովքն կարգեալք առ 'ի նմանէ ընդդէմ օրինազանցիցն . պատճառ եղեն հակառակութեանց ընդ մէջ պապին և կայսերն Հենրիկոսի Ե. ։

Հենրիկոս արքայ , որդի Հենրիկոսի Դ. , յանձին բերէր զամենայն թերութիւնս հօր իւրոյ . կամելով ապա հաստատել յիշխանութեան իւրում՝ խնամ կալաւ զառաջինն քաղցրութեամբ և ակնածութեամբ վարել ընդ քահանայապետացն Հռովմայ . իսկ յորժամ ետես եթէ յաջողեցան իւր խորհրդոյն , ջան գործեաց պաշտպանել զիշխանութիւն իւր զխափանեալն յառաքելական աթոռոյ ։ Պասքաղէս քահանայապետ առ խորշելոյ 'ի բռնութենէ Հենրիկոսի՝ ստիպեցաւ խոյս տալ 'ի Գաղղիա , ուր 'ի Փիլիպպոսէ արքայէ և յորդւոյ նորա 'ի Լուդովիկոսէ եգիտ ասպնջականութիւն մեծ ըստ արժանեաց վիճակի քահանայապետութեանն ։

Տեսեալ Հենրիկոսի զքահանայապետն պատուեալ և պաշտպանեալ 'ի թագաւորէն Գաղղիոյ , ջան գործեաց հաշտիլ ընդ նմա դաշն կռեալ (1113) և խոստացեալ նմա գրով հրաժարել յիշխանութենէ անտի իւրմէ բաշխելոյ վիճակս եպիսկոպոսաց՝ եթէ և ինքն քահանայապետն և եպիսկոպոսունք ամենայն հրաժարեսցին յիրաւանց աշխարհական տէրութեան և պատուոյ զորս ունէին 'ի վերայ դքսութեանց , կոմսութեանց , մարկիզութեանց , կալուածոց երկրի , դատաստանի արեան և ամենայն ինքնիշխան կառավարութեանց , յորս առաւելապէս վայելէին եպիսկոպոսունք Գերմանիոյ՝ ընկալեալ զայն պատիւ 'ի նախնի թագաւորաց և 'ի կայսերաց . և հրաժարել յայնցանէ կարի դառն էր նոցա և անհաճոյ ։

Առաջարկութիւն դաշնադրութեանս Հենրիկոսի եղև 'ի Հռովմ քաղաք՝ ուր փափաքէր ընդունել 'ի քահանայապետէն զօծումն և զթագ կայսերական . բայց 'ի պատճառս այլ և այլ բանակռուութեանց ծագելոց 'ի մէջ նոցա սակս սոցին իրաց, ոչ կամեցաւ քահանայապետն դնել 'ի գլուխ նորա զԹագն. ընդ որ զայրացեալ Հենրիկոսի՝ բանադրել արար զնա և բազում կարդինալս ընդ նմա։ Զայն տեսեալ ժողովրդեանն Հռոմայ, զէն առին և կոտորեցին 'ի բերան սրոյ զամենայն Գերմանացիս զօրաւս անպատսպար 'ի քաղաքին, մինչև Հենրիկոսի անգամ անկանել 'ի վտանգ մահու։ Բայց ոչ կարացեալ ժողովրդեանն ազատել զքահանայապետն 'ի բանտէն, դիմեցին խնդրել զձեռնտուութիւն իշխանացն որք էին 'ի մերձաւոր սահմանս Հռոմայ. սակայն և այնպէս ոչ ինչ օգուտ եղև յօգնականութենէ նոցա. զի քահանայապետն Պասքալէս և կարդինալքն որ ընդ նմա մնացին 'ի բանտի զամիս երկուս. մինչև յանձն առին զիջանել կամաց Հենրիկոսի, զի կարող լիցի պարգևել զիշխանութիւն ժառանգաւորութեան հովուական գաւազանաւ և մատանեաւ, և յօժարեցան պսակել զնա կայսերական Թագիւ։

Ընդ մեկնել Հենրիկոսի 'ի Հռոմայ՝ զերծեալ կարդինալաց 'ի բռնութենէ նորա, վաղվաղակի առանձինն ժողովել 'ի դերև հանին զգաշն միաբանութեան կայսեր ընդ քահանայապետին։ Պասքալէս յետ ընդ երկար հակառակութեան սակս առանձնական վճռոյ կարդինալաց, որ ուրեմն 'ի միում ժողովի գումարելոյ 'ի Հռոմ յետս կոչեաց զարտօնութիւնն շնորհեալ առ 'ի նմանէ Հենրիկոսի արքայի, և սպառնացաւ ընդ բանիւ առնել զնա եթէ վարեսցի նովաւ։

Ի լսել Հենրիկոսի եթէ քահանայապետն ունայնացոյց զգաշն միաբանութեանն՝ դարձ արար զօրօք յԻտալիա, և տիրեալ քաղաքին Հռոմայ՝ կամեցաւ կրկին պսակիլ կայսերական Թագիւ. բայց քանզի Պասքալէս խոյս տուեալ էր անտի, կամեցաւ առնուլ զայն 'ի Մաւրիտիոսէ Փորտինոսէ յարքեպիսկոպոսէն Բրակայ, որ ոխերիմ թշնամին էր Պասքալեսի, զի չէր նորա կամեցեալ տալ նմա զկինդակ արքեպիսկոպոսութեանն Տոլեդոյ։ Յետ հանդիսի Թագադրութեանն՝ մեկնեցաւ Հենրիկոս 'ի Հռոմայ. և քահանայապետն դարձ արարեալ յաթոռ իշխանութեան իւրոյ, վախճանեցաւ յետ սակաւուց, կացեալ 'ի քահանայապետտութեան զամս ութևտասան, զամիս հինգ և զաւուրս մետասան ։

Զկնի մահուան Պասքաղեսի յամին 1118 ընտրեցաւ յաթոռ քահանայապետութեան Կայետանոս կարդինալ Կայետանեան, որ կոչեցաւ Գելասիոս Բ. սա զհետ երթեալ ընթացից նախորդաց իւրոց հաստատեաց զվճիռս նոցին ընդդէմ բռնաբարողաց զիրաւունս եկեղեցւոյ. վասն որոյ վտարանդի լեալ 'ի Հռովմայ պատսպարեցաւ 'ի Գաղղիա՝ որ միակ ապաստանարանն էր հալածեալ քահանայապետաց ։ Զփախուստ Գելասիոսի ժամ դիպաւոր համարեալ կայսեր՝ ետ ընտրել 'ի քահանայապետութիւն զՓորտինոս զարքեպիսկոպոսն Փրակայ, որ անուանեաց զանձն Գրիգոր Ը. սակայն ոչ ընդ երկար վայելեաց յարգասիս նենգամիտ խորամանկութեան իւրոյ ։ Ի մեռանել Գելասիոսի 'ի Կլունեան մենաստանին Գաղղիոյ յամին 1119, հանգամանք ժամանակին ստիպեցին անյապաղ ընտրել զարքեպիսկոպոսն Վիեննայի Գաղղիոյ 'ի տոհմէ իշխանազանց Պուրկօյնի, զազգական կայսեր և զթագաւորին Անգղիոյ, որպէս և զայլոց թագաւորաց. որ թէպէտ և չէր 'ի կարդինալական պատուոյ, սակայն արժանաւոր առաքելական աթոռոյ, և անուանեցաւ Կալիստոս Բ. ։ Ի նստել իւրում յայն աթոռ՝ օգնականութիւն գտեալ 'ի Նորմանեան իշխանաց որք յԻտալիա տիրէին Պուլիոյ և Կալաբրիոյ, յարձակեցաւ 'ի վերայ քաղաքին Սուտրի յորում կայր հակապապն Փորտինոս. և քաղաքացւոց տուեալ զնա 'ի ձեռս Կալիստոսի՝ արգել զնա քահանայապետն 'ի մենաստան ուրեք, յորում և վախճանեաց զկեանս ։

Կուսակիցք Փորտինոսի բռնադատեցան խոնարհել ընդ իշխանութեամբ Կալիստեայ քահանայապետի, վասն որոյ կողմն կայսեր օր ըստ օրէ սկսաւ տկարանալ յԻտալիա. Կալիստոս պապ առաքեաց դեսպանս 'ի Գերմանիա միաբանել զիշխանս յօգնութիւն իւր. զայն տեսեալ Հենրիկոսի երկեաւ թէ մի՛ գուցէ և ընդ իւր իսկ անձն անցցեն թշուառութիւնք հօր իւրոյ. վասն որոյ պատշաճ վարկաւ հաշտել ընդ քահանայապետին յամի տեառն 1122, կռելով դաշինս խաղաղութեան ։

Ի ձեռն այսր դաշնադրութեան սահմանեցաւ զի ընտրութիւն եպիսկոպոսաց և աբբայից լիցի յանդիման կայսեր առանց բռնութեան և սիմոնականութեան. և զի ընտրեալքն զհաս իւրեանց ընկալցին 'ի Թագաւորէն, և մատուցեն նմա զպարտուպատշաճ պատիւ և զերդումն հաւատարմութեան։ Իսկ կայսրն յիւրմէ կողմանէ յանձն էառ թողուլ եկեղեցւոյ և Կալիստոսի զամենայն իրաւունս տալոյ ումեք զվիճակս ժառանգաւորութեան և հովուական գաւազան և մատանի. նոյնպէս թող ետ եկեղեցեաց տէրութեան իւրոյ ըստ սահմանեալ կանոնաց եկեղեցւոյ ընտրել իւրեանց առաջնորդս։

Այսոքիւք դաշամբք դադարեցան ամենայն վէճք և խռովութիւնք որք ժամանակս ոչ սակաւ տագնապեցին զԿայսրութիւն։ Յետ հակառակութեանց և դաշնադրութեանցս սահմանեցաւ յեկեղեցւոջ ազատութիւն ընտրութեան առաջնորդաց, մանաւանդ յԻտալիա. և 'ի ժամանակէ անտի և առ յապա ազատ ընտրութիւն քահանայապետաց՝ որպէս և անկախ իշխանութիւն նոցա ծանուցաւ ընդ տիեզերս և պատկառելի ցուցաւ յաչս ամենայն տէրութեանց։

ԳԼՈՒԽ Զ.

Առաջին ժողով Լատերանու, որ համարի իններորդ տիեզերական Սիւնհոդոս [1]։

Ի ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ դաշանցն կնքելոց ընդ մէջ պապին և կայսեր՝ կամեցան գումարել ժողով 'ի Հռոմ յամին 1123. յորում էին եպիսկոպոսք աւելի քան զերեքհարիւր։ Կայսրն առաքեաց զդեսպանս իւր 'ի նոյն ժողով, և միաբան խորհրդով սահմանեցաւ անդ, զի յետ այնորիկ և առ յապա ընտրութիւն առաջնորդաց լինիցի ազատ, և հասք ժառանգաւորութեան եկեղեցական կալուածոց շնորհեցին 'ի Թագաւորէն ։ Յետ այնորիկ եղան և այլ կանոնք բարեկարգութեան . քանզի արգելան աբբայք և միայնակեացք 'ի հրապարակական մատակարարութենէ խորհրդոց աշխարհութեան, յայցելութենէ հիւանդաց և 'ի տալոյ զվերջին օծումն, որպէս և 'ի հանդիսաւոր մատուցմանէ պատարագի, որք էին պաշտամունք ժողովրդապետական եկեղեցեաց ։ Քանզի 'ի ժողովն անդ բողոք բարձին եպիսկոպոսունք զկրօնաւորաց, զի անխտիր ձեռնամուխ լինէին յամենայն եկեղեցական պաշտամունս . « Պակասի նոցա, ասէին, հովուական գաւազան և մատանի և եթ . զի են նոցա առանձինն եկեղեցիք, կալուածք, տունք, տասանորդք 'ի ժողովրդենէն, և հոգեբաժինք կենդանեաց և մեռելոց »։

---

[1] Լատերանեանն տաճար 'ի Հռոմ քաղաքի, կառուցեալ 'ի մեծէն Կոստանդիանոսէ, և նուիրեալ յանուն սրբոյն Յովհաննու Լատերանեան, առ երի կայ ապարանն զոր կառոյց Պղաւտիոս Լատերանոս ազնուական հռովմայեցի. և է նա առաջին պատրիարքական եկեղեցի արևմտից։

Յայսմ ժողովի ընդ պատժով բանադրանաց պատուիրեցաւ, զի որք միանգամ առեալ իցեն զխաչ զինուորութեան գնալոյ յԵրուսաղէմ կամ 'ի Սպանիա ընդդէմ Սարակինոսաց և չիցեն երթեալ, հարկաւ երթիցեն ։

Կալիստոս քահանայապետս վախճանեցաւ յամի տն 1124 յետ 'ի կատար հասուցանելոյ զամենայն խնդիրս յուզմանց, որովք աԹոռն Հռոմայ և կայսրն ընդ երկար ժամանակս տագնապեալ կային ։ Նոյնպէս և կայսրն Հենրիկոս Ե մեռաւ 'ի յաջորդ ամի, ոչ ինչ անուն բարի Թողեալ զանձնէ . և ինքնին ապա խելամուտ եղև 'ի վերջին աւուրս կենաց իւրոց՝ Թէ զինչ խտիր կայցէ ընդ իմաստուն, գորովագութ, առատաձեռն և արդար Թագաւոր, և ընդ ժանտ, հպարտ, ագահ և անիրաւ բռնաւոր ։ Ոչ մոռացաւ նա երբէք զապառումն անգթութիւնն զոր անցոյց ընդ գլխաւն հօր իւրոյ, և յիշատակաւ և եթ նորին տանջէր 'ի խղճէ մտացն ։

ԳԼՈՒԽ Է.

Հերձուած աթոռոյ յետ ընտրութեան Իննովկենտիոսի Բ.

Զկնի մահուան Կալիստոսի Բ. յամին 1124 կալաւ զաթոռ քահանայապետութեան Ոնորիոս Բ. պոլոնիացի՝ զամս հինգ և զաւուրս քսան և հինգ։ Առ սովաւ յուզեցան կռիւք ընդ քահանայապետն և ընդ Հռուգերիոս կոմս Սիկիլիոյ, որ եղեալ էր ժառանգ Գուլիէլմոսի դքսին Պուլիոյ և Կալաբրիոյ. բայց սակաւաւ եղև հաշտութիւնն 'ի պատճառս մահու քահանայապետին, որ եղև յամին 1130։

Յետ մահու նորա անկաւ երկպառակութիւն 'ի կարդինալս վասն ընտրութեան յաջորդ քահանայապետի. և առ խորշելոյ 'ի կասկածեալ խռովութենէն՝ ոմանք յերևելի կարդինալաց փութացան անյապաղ ընտրել զԳրիգոր կարդինալ հռովմայեցի, որ անուանեցաւ Իննովկենտիոս Բ.։ Ապա 'ի նմին աւուր զկնի ժամուց ինչ այլք ոմանք 'ի կարդինալաց ընտրեցին զՊետրոս Լէոնեան որ կոչեցաւ Անակղետոս Բ., և ճոխութ̄ք ստացուածոց իւրոց և փառօք պատուոյ ազգատոհմին յինքն ձգեաց զկէս ժողովրդեան։ Իննովկենտիոս օրհնաւոր քահանայապետն արգելեալ յիւրում պալատին՝ ստիպեցաւ խնդրել զպաշտպանութիւն Լուդովիկոսի արքային Գաղղիոյ, որ և յօժարամիտ ետ նմա տեղի ապաստանի յիւրում տէրութեան։

Զհեռանալ Իննովկենտիոսի 'ի Հռովմայ ժամ դիպաւոր վարկուցեալ հակապապն Անակղետոսի ջան գործեաց ընդունելի առնել զքահանայապետութիւն իւր ընդ ամենայն Իտալիա։

Ընդ այն ժամանակս սուրբն Բեռնարդոս՝ ծաղկեալն պերճախօսութեամբ և սրբակրօն վարուք, կուսակից օրինաւոր ընտրութեան Իննովկենտիոսի, ստացաւ համախոհս բազումս. զի էր նամակ յամենայն տեղիս առ կուսակիցս և ձեռնտուս Անակղետոսի՝ խորշել 'ի նմանէ. "Եկեղեցին, ասէ, իրաւամբ ընդունի զայն՝ որոյ վաստակք մեծամեծք իցեն և արժանաւորութիւն, և ընտրութիւն նորա իցէ 'ի բազմաց արժանապատիւ անձանց ,, ։ ,,Նոյնպէս և յայլում նամակի գրէ վասն հակառակին ․ ,, Ընտրութիւնն որով պարծի նա, զարտաքին կերպարանս ևեթ ունի զկանոնական ընտրութե̃ ․ ապաքէն հաստատուն սովորութիւն է եկեղեցւոյ, զի յետ առաջին ընտրութեան անտեղի է երկրորդն ։ Սակայն համարեալ թէ յառաջնումն թերակատար իցէ լեալ օրինաւոր ինչ պայման, առ իմէ ձեռնամուխ լինել յերկրորդն առանց կանխաւ քննելոյ զառաջինն, և ըստ կանոնաց ունայնացուցանելոյ զայն ։ Բայց քանզի Աստուած եղև դատաւոր այսմ հակառակութեան, չառ է բանալ զաչս 'ի ճանաչել զդատաստան նորա ։ Իննովկենտիոս ծանուցաւ և հաստատեցաւ 'ի մեծահամբաւ եպիսկոպոսաց, զորոց զբարեկրօն վարս և թշնամիքն անգամ քահանայապետին մեծարեալ պատուեն ․ իսկ մեք՝ որք պատուով և արդեամբք կարի յոյժ նուաստագոյնք եմք քան զնոսա, պարտիմք զհետ երթալ շաւղաց նոցա ,, ։

Կայսրն Լոթարիոս նպաստաւորն Իննովկենտիոսի՝ կամելով նստուցանել զնա յաթոռ իւր, եկն յԻտալիա քահանայապետաւն հանդերձ, ուղեկից ընդ իւր ունելով և զսուրբն Բեռնարդոս ։ Հռովմայեցիք ընկալան զնա ցնծալից խնդութեամբ ․ իսկ կայսրն 'ի մեծարել զյօժարամիտ ընդունելութիւն նոցա՝ կամեցաւ առնուլ թագ կայսերական 'ի ձեռաց Իննովկենտիոսի յեկեղեցւոջ Լատերանու ։ Յետ կատարելոյ հանդիսին և մեկնելոյ Լոթարիոսի 'ի Հռովմայ՝ հակապապն Անակղետոս ձեռնտուութեամբ Ռուգերիոսի արքային Սիկիլիոյ վերստին վտարանդի արար զԻննովկենտիոս 'ի Հռովմայ, որ պատսպարեցաւ 'ի Պիզա քաղաք ։ Զայն լուեալ կայսեր դարձ արար անդրէն յԻտալիա, և միանգամ հաստատեաց զքահանայապետն յաթոռ իւր ․ ընդ որ յուսաբեկ լեալ Անակղետոսի՝ մեռաւ 'ի սկիզբն 1138 ամին, յետ կրելոյ զանուն քահանայապետութեան զամս ութ ։

Զկնի մահուն Անակղետոսի կուսակիցք նորա կացուցին զկարդինալն Գրիգոր, որ 'ի նոցունց անուանեցաւ Վիկտոր ․ բայց սա ինքն յետ երկուց ամսոց ինքնակամ գնաց հպատակել իշխանութեան Իննովկենտիոսի, և օրինակ խոնարհութեան նորա յորդորեաց և զայլ հերձեալսն 'ի հնազանդութիւն, որով քահանայապետն Իննովկենտիոս առաւ 'ի Հռովմ զկատարեալ իշխանութիւն․ Նովին իրի եղեն հանդիսական թափօրք 'ի քաղաքին, և ժողովուրդն եթող 'ի բաց զվէճս իւր վասն լսելոյ զբանն Աստուծոյ։ Քահանայապետն Իննովկենտիոս կարգաւորեաց զպաշտամունս և նորոգեաց զաւերեալսն և զխանգարեալս․ և յետ կոչելոյ զաքսորեալսն, զամայացեալ վայրս Հռովմայ ելից բնակչօք։

ԳԼՈՒԽ Ը․

Երկրորդ ժողով Լատերանու։ — Յաղագս մոլորութեանց Պետրոսի Բրուիսեան և Առնոլդոսի պրեշիացւոյ։

Առ ջնջելոյ 'ի սպառ զհերձուածն՝ որով 'ի պատճառս Անակլետոսի տագնապեցաւ աթոռ քահանայապետութեանն՝ Իննովկենտիոս պապ յամի տեառն 1139 գումարեաց զերկրորդ ժողովն Լատերանու, յորում գտան իբր հազար եպիսկոպոսունք, ամենեքին առ հասարակ խնդամիտ բերկրութեամբ լցեալք, տեսանելով զեկեղեցին միաբանեալ ընդ միով տեսչութեամբ փոխանորդին Քրիստոսի, որպէս պատմեն և ժամանակակից մատենագիրք․ և մին 'ի նոցանէ 'ի մէջ ածեալ զատենախօսութիւն պապին 'ի ժողովի անդ՝ ասէ իբր 'ի դիմաց նորա զայս հատուած բանի․ ‟Գիտէք ամենեքին եթէ Հռովմ մայրաքաղաք է տիեզերաց․ և եկեղեցական պատիւք բաշխին 'ի հաճութենէ քահանայապետաց Հռովմայ՝ իբր սեպհական իրաւունք իշխանութեան նորին․ վասն որոյ և առանց հաճութեան քահանայապետին անմարթ է օրինօք առնուլ զայնոսիկ„։

Ի նմին ժողովի սահմանեցան երեսուն կանոնք բարեկարգութեան, որք նման են կանոնացն սահմանելոց 'ի ժողովն Ռեմսայ յամին 1131․ սակայն ածին 'ի վկայութիւն ընդ անուամբ Լատերանու՝ իբր տիեզերական սինոդոսի։ Ի նմին ժողովի արգելան խաղամարտութիւնք, և կարգեցան սպառնալիք նզովից առ կանոնիկոսս, որք զկրօնաւորսն արգելուին մտանել 'ի ժողովս ընտրութեան թեմական եպիսկոպոսաց։ Այս է առաջին փորձն յոր ձեռնամուխ եղեն կանոնիկոսք եպիսկոպոսանիստ եկեղեցեաց ՚ի սեպհականել յինքեանս եւեթ զընտրութիւն եպիսկոպոսաց․ քանզի կամէին ՚ի բաց մերժել ոչ միայն զաշխարհիկս, այլ և զժողովրդականս, որպէս և զկղերս այլոցն հանդերձ կրօնաւորօք, որք ըստ նախնի կանոնաց և անընդհատ սովորութեան եկեղեցւոյ պարտէին հաղորդ լինել այնմ ընտրութեան։

Յայսմ ժողովի դատապարտեցան և նոր Մանիքեցիք․ մերժեցան և մոլորութիւնքն, զորս Պետրոս Բրուիսեան և Առնաղդոս Պրեշիացի սխալ էին սերմանել զայնու ժամանակաւ։ Վարդապետութի առաջնոյն համանման էր կարծեացն Բերէնգարիոսի սարկաւագին Անժէի, որ ՚ի նախընթաց դարու ուրացաւ զիսկական գոյութիւն մարմնոյ և արեան Քրիստոսի ՚ի սուրբ խորհուրդ հաղորդութեան, և կամէր անհետ առնել զնուէր պաշտաման սրբոյ պատարագին։ Յայս մոլորութիւն յաւելոյր և զայլ այնպիսին՝ ոչ ինչ նուազ վնասակարս վասն խորհրդոյ մկրտութեան, զոր չափահասից եւեթ համարէր հարկաւոր․ մերժէր զպաշտամունս աղօթից և պատարագաց վասն ննջեցելոց, և համարէր զայնոսիկ սնոտի աղաւաղութիւնս։

Եւ քանզի Պաղղիա յանցելումն դարու շաղեալ կայր մոլորութեամբք Մանիքեցւոց, յորոց յաղանդաւորաց մասն այրեցան հրով, և մնացեալքն ՚ի նոցանէ ահաբեկ լեալք ՚ի խստութէ պատուհասից զգուշանային ՚ի յայտնելոյ զանձինս, սակայն ՚ի սիրտ նոցա բորբոքէր ատելութիւն ընդդէմ կղերց եկեղեցւոյ․ վասն որոյ վառեալ նախանձու վրէժխնդրութեան ընդդէմ եպիսկոպոսաց, ժողովրդականաց և կրօնաւորաց, սկսան զինել ընդդէմ այնպիսի իրաց՝ որք պատճառք էին պատուոյ և յարգութեան եկեղեցականաց․ ապա առ սակաւ սակաւ թողեալ ՚ի բաց զվարդապետութիւն և զհաւատս Մանիքեցւոց՝ սկսան պատերազմել ընդդէմ սրբութեան խորհրդոց և ծիսից եկեղեցւոյ, որպէս և խորհրդոյ կարգին, որ զատանէ զաշխարհիկս յեկեղեցականաց․ և հուպ յետոյ զինեցան և ընդդէմ իշխանութեան նախապատուի հայրապետական Հռովմայ։

Յայնու ժամանակաւ՝ ըստ ասելոյ ուրումն մատենադրի՝ տգիտութիւն և չարաչար վարք եկեղեցականաց անցեալ էին ըստ չափ. 'ի բազում եկեղեցիս պաշտամունք աղօթից գնով վաճառէին, որպէս և մատակարարութիւնք խորհրդոց անգամ վարձուք արծաթոյ՝ և 'ի յայտնի վատահամբաւ պաշտօնէից ։ Վասն որոյ ժողովուրդն առ հասարակ գոլով ընդ իշխանութեամբ այսպիսեաց ամենից հովուաց և առաջնորդաց՝ թաղեալ կայր 'ի խոր տգիտութեան, և այնպէս դիւրապատրաստ էր յապստամբութիւն ընդդէմ նոցա, մինչև ճարտարամիտ ոք 'ի ժողովրդենէն՝ ձեռնհաս յընդվայրախօսութիւն ընդդէմ կղերց և եկեղեցական պաշտամանց կարող էր լինել գլուխ աղանդոց և մոլորութեանց ։

Սմին իրի չէր ինչ զարմանք, եթէ Պետրոս Բրուիսեան ռամկական աշխարհիկ ձեռն արկեալ իցէ յաշխարհաւեր գործս. քանզի օգնականութիւն գտեալ 'ի ժողովրդենէ յարձակեցաւ 'ի զանազան գաւառս՝ յաւարի առնուլ զեկեղեցիս, խորտակել զխաչս և աւերել զսեղանս ։ Ի Փրովանս գաւառի ուր առաւելապէս եցոյց զմոլեգնութիւն իւր, տեսան կրկնակնունք քրիստոնեայք և պղծութիւնք եկեղեցեաց. վասն որոյ տարագրեալ անօրինին 'ի գաւառէ անտի գնաց 'ի Լանկըտոք, և 'ի տարածանել անդ իւրում զչար աղանդն կալանաւորեցաւ և այրեցաւ 'ի հուր յամին 1147. սակայն մոլորութիւնք անօրինին ոչ դադարեցին մահուամբ նորա. զի միայնակեաց ոմն Հենրիկոս Բրուիսեան կոչեցեալ՝ արտաքնայարդար խստամբերութեամբ վարուցն գրգռեաց դարձեալ զժողովուրդն ընդդէմ եկեղեցականաց ։ Յանդըգնեցան կործանել զտունս բնակութեան նոցա, յաւարի առնուլ զստացուածս, և անխնայ գանակոծ առնել և սպանանել նոցա և քարկոծումն իսկ ։ Սոյնգին զազանութիւնքս յերկարեալ ձգեցան մինչև ցկալանաւորութիւն անօրէն միայնակեցին, որ արգելաւ 'ի Տոլոզա քաղաքի ։

Արնալդոս պրեշիացի յաշակերտութենէ Պետրոսի Բրուիսեան՝ այր խռովասէր և անհանդարտ, ճարտարամիտ, նենգաւոր և խաբեբայ, ըստ օրինակի վարդապետին իւրոյ ահարկու եղև քահանայապետին Հռովմայ և եպիսկոպոսացն Իտալիոյ ։ Քարոզէր Արնալդոս թէ պարտ իցէ եկեղեցականաց չստանալ տուրք ողրմութիւն առ 'ի ժողովրդեանն, և չունել կալուածս առանձինն. որով զրգռեալ զժողովուրդն Հռովմայ, յորդորեաց յապստամբութիւն ընդդէմ քահանայապետին. ջանացաւ ջնջել և ունայնացուցանել զպատիւ նախագահութեան Հռովմայ, ստիպեաց զգլխաւորս 'ի քաղաքացւոց հպատակել աշխարհական իշխանի ումեք, և հրամայեաց տալ յաւարի առնուլ զապարանս կարդինալաց։

Մոլորութիւնք սորա և Պետրոսի Բրուխեան հերքեալ դատապարտեցան 'ի ժողովին Լատերանու. կամեցան ապա արգելուլ և զԱրնալդոս 'ի բանտի, այլ նա փախուցեալ նախ 'ի Գերմանիա և անտի 'ի Գաղղիա, ցանկայր դառնալ անդրէն 'ի Հռովմ և տարածել զմոլորութիւնս իւր. բայց կալանաւորեալ անդ 'ի Գաղղիա այրեցաւ 'ի հուր՝ յամին 1155։

Յերեսուն կանոնաց անտի բարեկարգութեան որք սահմանեցան 'ի ժողովին Լատերանու, ոմանք պատուականք են յոյժ և բարեյարմարք պիտոյից ժամանակին, քանզի անդ արգելաւ միանձնուհեաց գնալ և երգել 'ի դասս ժամերգութեան արանց կրօնաւորաց։

ԳԼՈՒԽ Թ.

Քահանայապետք, և նոր խռովութիւնք 'ի Հռովմ.

ԳԱՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ հռովմէական աթոռոյ ցանկացեալն յիշխանասիրաց՝ պատճառք եղև նորոգ հերձուածոյ. զի յետ մահուան Ինովկենտիոսի Բ., որ կալաւ զաթոռն զամս երեքտասան և զամիս եօթն՝ ընտրեցաւ յամի տեառն 1143 Կեղեստինոս Բ.. այլ նորա ոչ յերկարեալ յիշխանութեան՝ յետ հնգից ամսոց վախճանեցաւ 'ի նմին ամի։ Զկնի նորա յամին 1144 կալաւ զաթոռն Լուկիոս զամիս մետասան և զաւուրս չորեքտասան. ապա ընտրեցաւ Եւգինէոս Գ., որ եկաց 'ի քահանայապետութեան զամս ութ և զամիս չորս և զաւուրս տասն։

Յառաջին ամի ընտրութեան սորա (1145) մինչ էին 'ի Վիթերպոյ քաղաքի, եկն հրեշտակութիւն 'ի Գրիգոր կաթուղիկոսէ Հայոց Պահլաւունւոյ, որ ցուցեալ զհպատակութիւն իւր և զիւրայն առ սուրբ աթոռն՝ խնդրէր խորհուրդս սակս խնդրոց ինչ և եկեղեցական բանակռուութեանց զորս ունէին ընդ Յոյնս. և առեալ զլուծումն տարակուսանացն՝ դարձան անդրէն դեսպանքն ՚ի Հայաստան։

Յետ մահուան Եւգինէոսի երրորդի կալաւ զաթոռն Անաստասիոս Դ. հռոմայեցի՝ զամիս վեշտասան, և զաւուրս քսան և երիս. զկնի նորա ընտրեցաւ Ադրիանոս Դ. անգղիացի, որ եկաց քահանայապետ զամս չորս և զամիս ինն։ Ապա յամին 1159 միաբան հաւանութեամբ բազմաց ընտրեցաւ կարդինալն Ռոլանտոս Ռայնուչչի Սենացի, որ անուանեցաւ Աղեքսանդր Գ. այլ ինունց ոմանց կարդինալաց հակառակեալ ընտրութեան ՚ի նմին աւուր զայլ ոք կացուցին քահանայապետ՝ ընդ անուամբ Վիկտորի չորրորդի։ Եւ էր սա կարդինալ վերատեսուչ եկեղեցւոյ սրբուհւոյն Կեկիլեայ, այր իշխանասէր և անձնահաճ. և զրգռեալ ՚ի փառասիրութենէ ստանալ զքահանայապետութիւն, կորզեաց զվերարկուն քահանայապետական՝ ՚ի ձեռաց աւագ սարկաւագին՝ յորժամ հանդերձեալ էր նա զգեցուցանել զԱղեքսանդր։

Ի յանդգնութենէ աստի Վիկտորի ՚ի վեր երևեալ ոչ սակաւ հակառակութեանց և շփոթից ՚ի մէջ եկեղեցւոյ, Գաղղիա և Անգղիա կուսակիցք եղեն Աղեքսանդրի. իսկ կայսրն Փրեդերիկոս կամելով ճնշել և ընդունել զՎիկտոր՝ հրամայեաց ժողով գումարել ՚ի Պաւիաքաղաք Իտալիոյ, և ջան գործեաց հաստատել անդ զՎիկտոր յիշխանութեան իւրում։

Աղեքսանդր քահանայապետ կասկածեալ զապահովութենէ կենացն, խոյս ետ ՚ի Գաղղիա, ուր ՚ի ժողովն Տուրոնի յամին 1163 նզովեաց զՎիկտոր և զհամախոհս նորա։ Փրեդերիկոս կայսր ՚ի զուր ջանացաւ զինուք պաշտպան կալ Վիկտորի. զի օրինաւոր քահանայապետն Աղեքսանդր՝ ծանուցաւ յամենայն տեղիս և յարևելս գլխովին. վասն որոյ կայսրն հարկեցաւ խնդրել հաշտութիւն խաղաղութեան ընդ Աղեքսանդրի, և յանդիման եղեն միմեանց ՚ի քաղաքն Վենետիկ, ուր Փրեդերիկոսի անկեալ յոտս քահանայապետին յեկեղեցւոջ սրբոյն Մարկոսի՝ ընկալաւ զարձակումն ՚ի նզովից անտի, որք տուան նմա ՚ի ժողովին Տուրոնի։

Ի ստայօդ և յանստոյգ վէպս համարի պատմութիւնն, զոր յիշեն ոմանք ՚ի մատենագրաց, իբրու զի քահանայապետն առ դրան տաճարի սրբոյն Մարկոսի ՚ի խոնարհել կայսեր յոտս նորա, եդեալ իցէ զոտն իւր ՚ի վերայ պարանոցին Փրեդերիկեայ ասելով. ՝՝Գրեալ է, ՚ի վերայ իժից և քարբից գնասցես դու.., այլովքն հանդերձ. որ նախատինս անարգանաց յաճախէ ոչ միայն կայսեր, այլ և քահանայապետին գլխովին, առն այնպիսւոյ որ խոնարհութեամբն իւրով և սրբութեամբ ընտրեցաւ յայն աթոռ։

ԳԼՈՒԽ Ժ.

Երրորդ Ժողով Լատերանու։ — Դատապարտութիւն Վալդեանց և Ալբիգեանց։

ՕԳՆԷ խաղաղութեան եկեղեցւոյ՝ Աղեքսանդր Գ. քահանայապետ կամելով զարմանս տանել վնասուցն գործելոց ՚ի հերձուածողաց, եւ գումարել զերրորդ տիեզերական ժողովն Լատերանու յամին 1179, ուր գտան իբր երեքհարիւր եպիսկոպոսունք։ Եւ յետ բազմապատիկ կանոնաց սահմանելոց ընդդէմ ամենայն հերձուածոց, ձեռն արկին քննութեան և դատապարտութեան աղանդոյ Վալդեանց և Ալբիգեանց, որոց մոլորութիւնք տարածեալ էին ՚ի բազում գաւառս Գաղղիոյ։

Վալդեանք ընկալան զանուն ՚ի Պետրոսէ Վալդոսէ, որ մի էր ՚ի փառաւոր և ՚ի ճոխ քաղաքացեացն Լուգդոնի կամ Լիոնի։ Սա ինքն առատաձեռնեալ աղքատաց և կարօտելոց ողորմութիւնս յոլովս, և պարապեալ յարտաքին խստամբերութիւնս մարմնոյ, յինքն որսացաւ զաշակերտեալս յիւրմէ։ Ամբարհաւաճ՝ յանդգնութ՟ն պարծէր ընկալեալ յերկնից ՚ի վերուստ առանձնական լուսաւորութիւնս. վասն որոյ ընդդէմ եկաց իշխանութ՟ե քահանայապետին, և շնորհաբաշխութեանց ներողութեան, և պաշտաման խորհրդոյ պատարագին, և նորոգեաց զմոլորութիւն Դոնատեանց վասն մատակարարութեան խորհրդոց եկեղեցւոյ յանարժան պաշտօնէից. նոյնպէս և զմոլորութիւն պատկերամարտից՝ զինելով ընդդէմ պաշտաման պատկերաց . կամէր դարձեալ զի եկեղեցիք մերկացեալք 'ի ժամանակաւոր անցուածոց, Ճոխասցին հոգևոր ձրիւք . և զվարդապետութիւն իւր զայսոսիկ հաստատէր բանիւք ինչ սուրբ գրոց, 'ի թիւր իմաստս յեղաշրջեալ զայնոսիկ ։ Բազումք 'ի նախնի հերետիկոսաց, և որք միանգամ կացին յառաջ քան զՎալդոս, թէպէտ և կալեալ էին զնոյն շաւիղ, սակայն չէղեն երբէք ձեռնհաս գտանել իւրեանց բազում համախոհս . զի քահանայք և ժողովուրդք առաջին դարուցն այնոցիկ լուսաւորեալք աստուածային գիտութբ՝ արթուն մտօք զդէմ ունէին դիւապատիր հրապուրանացն ։ Իսկ զայնու ժամանակաւ՝ եկեղեցականք և ժողովուրդք առ հասարակ ընկղմեալ կային 'ի խոր տգիտութեան . վասն որոյ չնչին և սնոտի իմաստակութիւն հերետիկոսաց՝ ծանր և դժուարալոյծ խնդիր երևէր քահանայից, նոյնպէս և ժողովրդեան փառս զօրաւոր և հեշտալուր ։ Եւ թէպէտ կային և այլք ոմանք ականաւորք գիտութեամբ և բարեպաշտութեամբ որք զինեցան ընդդէմ մոլորութեանց Վալդոսի, սակայն չէղեն ձեռնհաս խափանել զյառաջադիմութիւն ընթացից մոլորելոյն . քանզի և իշխանք՝ որք յափշտակեալ էին զստացուածս եկեղեցականաց՝ պաշտպան կային նոցա . վասն որոյ նախ քան զխորհելն պատրաստս դնել ընդդէմ հեղեղին՝ զեղեալ յորդեցաւ ընդ ամենայն տեղիս ։

Ի բազմանալ յոյժ աշակերտացն Վալդոսի, Աղեքսանդր քահանայապետ ընդ բանիւ արար զնոսա . և ապա 'ի ժողովն Լատերանու 'ի դատապարտելն զմոլորութիւնս նոցին՝ յորդոր և խրախոյս ետ ուղղափառ իշխանաց մարտնչել 'ի դաշն խաչակիր զինուորութեան ընդդէմ հերետիկոսացն և ընդդէմ Աղբիգեանց ։

Աղբիգեանք՝ բնակեալք յԱղբի քաղաք 'ի սահմանս Գենուայի Ը պաշտպանութեամբ Ռոգերիոսի գրոփին, 'ի քաղաքէ անտի զանուն իւրեանց կալան . բայց կոչին և Պատարինեանք ։ Նորոգեցին սոքա զցնորս յիմարութե Մանիքեցւոց, թէպէտ և 'ի բազում իրս վարդապետութիւն սոցա օտար է և այլազգ 'ի մոլորութենէն Մանեայ ։ Համարէին թէ Աստուած զառաջինն ստեղծեալ իցէ զսատանայէլ և զպաշտօնեայս նորա . և թէ նա ինքն սադայէլ յետ արտաքսելոյ յերկնից՝ արարչագործեալ իցէ զայս աշխարհ, յորոյ վերայ թագաւորէ ինքն. Զայս ցնորս յաւելուին և զայն, որպէս թէ Աստուած նորոգել կամեցեալ զկարգ աշխարհիս՝ ծնեալ իցէ զայլ որդի, որ է ինքն Քրիստոս. և 'ի մոլորանս վարդապետութենէ աստի՝ հերետիկոսքս այսոքիկ անուանեցան և Ալբիգեանք. Դարձեալ ուրանային զյարութիւն մեռելոց, և ոչ խոստովանէին յԱստուած զինքնիշխան ազատութիւն.

Ժողովն Լատերանու թէպէտ և զատապարտեաց զմոլորութիւն նոցա, սակայն ժամանակս ոչ սակաւ ահարկու եղեն եկեղեցւոյ՝ նաև յետ 'ի սպառ ընաջինջ լինելոյ նոցա. քանզի նորանոր բողոքարկուաց միաբանեալ ընդ այլ հերետիկոսս, զորս նորագոյն համարին հաւատոյ և ուղղապահս ճշմարտութեան, յօժարեցան պաշտպան կալ վարդապետութեան նոցա 'ի ցուցանել զանընդհատ շարայարութիւն կարծեցեալ աւետարանական ճշմարտութեանն.

Ի կանոնս ժողովոյն Լատերանու կան ինչ ինչ սահմանք արժանիք յիշատակաց. զի անդ հաստատեցաւ նախ՝ զի թէ յընտրութեան քահանայապետի ամենայն կարդինալք ոչ միաբանեսցին 'ի վերայ միոյ ուրուք, օրինաւոր քահանայապետ համարեսցի ընտրեալն 'ի հաւանութենէ երկուց երրորդ մասանց. Աստի յայտնապէս երևի թէ և առ նովին իսկ ժամանակաւ ընտրութիւն քահանայապետաց լինէր 'ի կարդինալաց ևեթ. Դարձեալ արգելաւ չանուանել զոք եպիսկոպոս եթէ չիցէ լցեալ զթիւ երեսուն ամաց. նոյնպէս չձեռնադրել զոք քահանայ կամ սարկաւագ՝ եթէ չիցեն նորա ամք քսան և հինգ, և չունիցի զգանձ բաւական 'ի հայթայթել նմա զկենացն պարէն. Զգուշացոյց զքահանայս չընդունել ինչ իրս 'ի վարձ վասն մատակարարութեան խորհրդոց և թաղման մեռելոց. Արգել ևս զստացումն պաշտաման բազմապատիկ ժառանգութեանց, որ յաճախեալն էր յոյժ 'ի ժամանակին, մինչև միոյ ուրուք ստանձնել զպաշտօն վերակացութեան հնգից և վեցից ժողովրդապետութեանց. որով բազում պաշտօնեայք եկեղեցւոյ զրկէին 'ի կարևոր պիտոյից իւրեանց. Սահմանեցաւ դարձեալ, զի ստացուածք կղերիկոսաց՝ զորս ստացեալ իցեն 'ի պաշտաւորութեան եկեղեցւոյ, յետ մահու նոցին դառնայցեն դարձեալ եկեղեցւոյ, և յոյժ համարեցի կամին՝ եթէ երբէք ապարեալ իցեն զնոցանց։ Առ հրահանգել զաղքատ կղերիկոսն՝ յամենայն եպիսկոպոսանիստ եկեղեցիս կարգեսցին վարժապետք՝ չափաւոր և պատշաճ եկամտիւք, ուսուցանել նոցա ձրի։ Սահմանեցին օրէնս զի հաստատուն պահեսցի այս և յայլ եկեղեցիս ամենայն և 'ի մենաստանս, յորս միանգամ կարգեալ կայցեն եկամուտք 'ի նոյն պէտս։ Եւ դարձեալ 'ի տալ ումեք զվարժապետութիւն կամ զիշխանութիւն ուսուցանելոյ՝ մի՛ պահանջեսցի ինչ 'ի նմանէ, այլ ձրի և անխափան շնորհեսցի ամենեցուն որք միանգամ ձեռնհաս իցեն յանթերի լրումն պաշտաման, և որ զընդդէմն գործեսցէ՝ հակառակի օգտի եկեղեցւոյ։ Արգելան դարձեալ խաղամարտութիւնք, և սահմանեցան պատուհաս նոցիկ՝ որք միանգամ 'ի հաւատացելոց վաճառեսցեն սարակինոսաց զէնս, երկաթ, փայտ նաւակազմութեան, և ծառայեսցեն նոցա իբր նաւաստիք։ Նոյնպէս արգելու առանձնական իշխանաց և ատենակալաց դնել հարկս 'ի վերայ եկեղեցեաց և կալուածոց նոցին առանց հաճութեան կղերաց. քանզի ամենայն մանաւոր կալուածատեարք իրաւունս համարէին անձանց հարկապահանջ լինել։ Եւ եւս նզովեցան վաշխառուք, և պատուհասեցին զեկեղեցականս ոմանս որք ոչ թոյլ տային բորոտաց և ուրկաց մտանել յեկեղեցիս, կամ ստանալ առանձին աղօթատեղիս[1]։

---

[1] Առ նովին ժամանակաւ զնոյն անգամ վճռաց կրկին ուրուք 'ի կողմանս Եդեսիոյ. վասն որոյ սուրբն Ներսէս Շնորհալի գրեաց առ նոսա թուղթ միաբանութեան. յորում զանարգութս վճռակէր ախտացելոյն այնոցիկ ազէոս անուանելով իրաւանցն Աստուծոյ, զմեղս նոցա դատէ արժանաւորս պատուհասի. 'Ն. Շնորհ. Թուղթ առ Եդեսացիս։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Յաջորդութիւն քահանայապետաց Հռովմայ ։

Ի ԼՐՈՒՄՆ թուոյ վեշտասան քահանայապետաց՝ որք յայսմ դարու զմիմեանց կալան զաթոռ սրբոյն Պետրոսի, յաւելումք զանյիշատակ մնացեալսն 'ի նախագրեալ պատմութիւնս յետ Աղեքսանդրի երրորդի, զոր յաջորդեաց Լուկիոս Գ. լուքքացի, որ նստաւ յամին 1191, և եկաց զամս չորս, զամիսս երկուս և զաւուրս քսան և երիս ։

Ի յետին ամի քահանայապետութեան իւրոյ ընկալաւ նամակ 'ի Գրիգորէ կաթուղիկոսէ Հայոց Տղայ անուանելոյ. և խնդրեալ զհանգամանս եկեղեցւոյն Հայոց և զպատճառս ատելութեան և թշնամութեան Յունաց ընդդէմ ազգիս, գրեաց առ նա կոնդակ մխիթարութեան և քաջալերութեան ։ Ընդ նմին առաքեաց և պարգևս, և զնշանս եկեղեցական պաշտամանց եկեղեցւոյն Հռովմայ ըստ խնդրոյ կաթուղիկոսին ։

Ի փոխմանել Լուկիոսի 'ի Վերոնա քաղաքի յամին 1185, ընտրեցաւ քահանայապետ Ուրբանոս Գ. Կրիվելլեան մեդիոլանեցի, որ կալաւ զաթոռն զամս իբր երկուս ։ Յաւուրս սորա յուզեցան վէճք ընդ Փրեդերիկոսի կայսեր յաղագս կալուածոյն զորս Մաթիլտա իշխանուհին կտակաւ թողեալ էր սրբոյ աթոռոյն ։ Նոյնպէս և վասն ընչից փոխմանեալ եպիսկոպոսաց, զորս կամէր կայսրն յարքունիս սեպհականել. որպէս և վասն արքունի հարկաց՝ զոր պահանջէին 'ի մենաստանաց անտի հաւատաւոր կուսանաց ։ Սակայն խաղաղացան հակառակութիւնքն [illegible] միմեանց 'ի Վերոնա քաղաքի ։

Յետ փոխմանն նորա 'ի Ֆերրարա քաղաքի՝ յամին 1187 ընտրեցաւ Գրիգոր Ը. բենեւենտացի, որոյ քահանայապետութիւնն տևեաց զամիս երկուս ։ Նոյն 'ի նմին ամի ամբարձաւ յաթոռ քահանայապետութեան Կղեմէս Գ. Սկողարեան հռովմայեցի, որ եկաց զամս երիս, զամիս երիս և զաւուրս ինն ։ Եւ զի ընդ այն ժամանակս տագնապեալ էին յոյժ խաչակիր զօրքն 'ի

Պաղեստին՝ ՚ի զօրանալոյ Սալահադին սուլտանին որ տիրեաց Երուսաղեմի, քահանայապետն Կղեմէս յորդոր մատոյց համօրէն քրիստոնեայ իշխանաց կազմել նոր բանակ և դիմել ՚ի թիկունս օգնականութեան վտանգելոցն ՚ի Պաղեստին. Գրեաց գործեալ և կոնդակ առ Գրիգոր կաթուղիկոս ձեռնտու լինել ՚ի պէտս կարօտութեան խաչակիր զինուորելոցն.

Ի վախճանել Կղեմայ Գ. յամին 1191 նստաւ Կեղեստինոս Գ. Որսինեան հռովմայեցի, և եկաց զամս վեց, զամիս ինն և զաւուրս տասն. Ի քահանայապետութեամբ սորա իշխանապետն Հայոց Լեւոն Բ. կամեցաւ ընդունել զօծումն թագաւորութեան Կիլիկիոյ՝ հաւանութեամբ Կեղեստինոսի պապին և Հենրիկոսի կայսեր. վասն որոյ եղեն դեսպանութիւնք յերկաքանչիւր կողմանց, զոր կարգեսցուք ՚ի պատմելն զանցս միջակի եկեղեցւոյն Հայոց.

Զկնի Կեղեստինոսի յամին 1198 բարձրացաւ յաթոռ քահանայապետութեան Ինովկենտիոս Գ. Անագնեցի, զորոյ զպայծառ առաքինութեանցն մէկս զրուցեսցուք յերեքտասաներորդի դարու.

ԳԼՈՒԽ ԺԲ.

Կաթուղիկոսունք Հայոց.

ԶՎԱԽՃԱՆ Գրիգորի Վկայասիրի՝ որ եղև ՚ի սկիզբն այսր դարու յամին 1105, կանխեցաք ասել ՚ի մետասաներորդի դարու. սակայն երիւք ամօք յառաջ քան զմահ իւր՝ կոչեաց առ ինքն զաթոռակից իւր զԲարսեղ կաթուղիկոս, և յանձն արար նմա զերկուսին որդիս քեռորդւոյ իւրոյ Ապիրատայ՝ զԳրիգոր և զՆերսէս, զորս ինքն դաստիարակեալ էր յիմաստութեան և ՚ի վարս բարեպաշտութեան, և պատուիրեաց ժողովելոցն առ իւր՝ զի յետ մահուան Բարսղի կաթուղիկոսի կացուսցեն զԳրիգոր ՚ի տեղի նորա, զոր և արարին իսկ. Քանզի Բարսեղ Ա. կաթուղիկոս զկնի մահուն Գրիգորի Վկայասիրի կալեալ առանձինն զաթոռ հայրապետութե զամս ութ, վախճանեցաւ ՚ի Սեաւ լերին ՚ի Շուղր անապատի յամի տեառն 1113.

Գրիգոր Պահլաւունի՝ որդի Ապիրատայ իշխանի 'ի քսանամեայ հասակի իւրում բարեկրօն և զգօն գնացիւքն արժանաւոր ցուցաւ կաթուղիկոսական իշխանութեան. և թէպէտ մերժեաց զիշխանութիւն նորա Արքեպիսկոպոսն Աղթամարայ Դաւիթ, սակայն ազգային ժողովով հաստատեցաւ Գրիգոր յաթոռն. և զամս ինչ նստեալ 'ի Շուղր անապատի՝ եկեալ բնակեցաւ ապա 'ի գղեակն Ծովք, և անդ յամի տեառն 1125 հաստատեաց զաթոռ կաթուղիկոսութ՟են, ուր և ձեռնադրեաց եպիսկոպոս զեղբայր իւր զՆերսէս։ Իսկ յամի 1146 'ի դիմել Սկիւթացւոց 'ի սահմանս Հայոց, և 'ի բռնանալ ամիրային Իկոնիոյ՝ Գրիգոր կաթուղիկոս հանդերձ Ներսիսիւ և ամենայն ուխտիւ աթոռոյն թողեալ զղեղեակն Ծովք գնաց 'ի Հռոմկլայ քաղաք, և անդ հաստատեաց յամին 1147 զաթոռն հայրապետական։ Յաւուրս ծերութ՟ե իւրոյ՝ յամին 1166 գումարեալ ժողով մեծ 'ի Հռոմկլայ, ձեռնադրեաց փոխանակ իւր 'ի կաթուղիկոսութիւն Հայոց զՆերսէս զեղբայր իւր, և յետ երից ամսոց վախճանեալ զկեանս՝ թաղեցաւ 'ի Հռոմկլայ, կացեալ 'ի հայրապետութեան զամս յիսուն և երիս։ Յաւուրս սորա սկզբնաւորեցաւ խորհուրդ միաբանութեան և սիրոյ ընդ ազգին Յունաց, զոր Ներսէս Շնորհալի և Գրիգոր Տղայ ջանացան ապա 'ի լրումն ածել։

Սուրբն Ներսէս՝ կրտսեր եղբայր Գրիգորի Պահլաւունւոյ՝ Շնորհալի մականուանեալ վասն քաղցրախօսութեանն, և Կլայեցի՝ յանուանէ քաղաքին Հռոմկլայ, նստաւ յաթոռ կաթուղիկոսութեան յամին 1166։ Պայծառացեալ շնորհազարդ վարուք առաքինութեան և սրբութեան՝ առաւելեալ գտաւ և յիմաստութեան. և ականատես եղեալ հոգևոր կարօտութեան տառապեալ ազգիս առ նուազութեան առաքելաջան մշակաց աւետարանին՝ խնամ կալաւ առաքել արս իմաստունս քարոզել զբանն Աստուծոյ. գրեաց կոնդակ կամ թուղթ ընդհանրական լի իմաստութեամբ և հոգւովն Աստուծոյ՝ իբր խրատ հովուական առ եկեղեցականս ամենայն և առ աշխարհիկս քաղցր և ազդու բանիւք։ Դարձեալ 'ի բարեկարգութիւն պաշտամանց եկեղեցւոյ և 'ի յորդոր բարեպաշտութեան հաւատացելոց յօրինեաց երգս և շարականս հոգելիցս. գրեաց ոտանաւոր բանիւք զհամառօտ պատմութիւն Հայոց, և զՅիսուս որդի անուանեալ ողբերգական և խրատական տաղաչափութիւնս. Այլ նորա և Թերակատար մեկնութիւն աւետարանին Մատթէի, զոր լրացոյց Յովհաննէս Երզնկացի. նոյնպէս և նամակք ընտիրք առ այլ և այլ անձինս. Յաւուրս կաթողիկոսութեան իւրոյ խաղաղասէր ոգւով ջանահնար եղև միաբանել զազգս մեր ընդ եկեղեցւոյն Յունաց. բայց կանխեալ օրհասին ոչ կարաց ժամանել՚ի լրումն բաղձանացն, զի վախճանեցաւ յամի տեառն 1173՚ի հասակի եօթանասուն և հինգ ամաց, կացեալ՚ի հայրապետութեան զամս եօթն և զամիս չորս.

Գրիգոր Դ. մականուանեալն Տղայ՝ եղբօրորդի սրբոյն Ներսէսի՝ յաւուր թաղման նորա ընտրեցաւ կաթողիկոս. այր խոհական և առաքինի՝ սիրեցեալ և պատկառելի յաչս ամենեցուն, որ հոգեջան փութով խնամ կալաւ ՚ի կատարումն ածել զսէր միաբանութեան ընդ Յոյնս, որպէս տեսցի համառօտիւ ՚ի յաջորդ գլուխ և ՚ի վէպս պատմութեան ազգային ժողովոց. Նա յետ հաստատելոյ զամենայն եկեղեցական բարեկարգութիւնս սահմանեալս ՚ի սրբոյն Ներսիսէ, վախճանեցաւ յամին 1193 ՚ի հասակի վաթսուն ամաց, կացեալ ՚ի հայրապետութեան զամս քսան.

Գրիգոր Ե. եղբօրորդի Գրիգորի Տղայոյ, յամի տեառն 1193 ընտրեցաւ կաթողիկոս ՚ի մանկական հասակի հրամանաւ Լեւոնի իշխանին Հայոց և ՚ի թելադրութենէ հակառակամարտից ոմանց. Բայց յետոյ ՚ի պատճառս անկարգութեան վարուց իւրոց կալանաւորեալ ՚ի Լեւոնէ իշխանէ՝ արգելաւ ՚ի բերդն Կոպիտառ, և ՚ի կամե՞լն փախչել անտի՝ զահավիժեալ ՚ի բարձանց մեռաւ անդէն, վասն որոյ և անուանեցաւ Գահավէժ. Կալաւ զաթոռ հայրապետութեանն զամ մի և զամիս իբր չորս.

Գրիգոր Զ. Ապիրատ կոչեցեալ՝ եղբօրորդի Ներսէսի Շնորհալւոյ՝ ընտրեցաւ կաթողիկոս յամին 1195. Էր սա այր խոնարհ և առաքինի, կատարեալ հասակաւ. որում ընդդէմ յարեան Հաղբատացիք և Սանահնեցիք. որք կամէին կարգել յաթոռ կաթողիկոսութեան ըղ-

Բարսեղ անեցի, բայց Լեւոն իշխան Հայոց մերժեաց զխնդիր նոցա. զայրացեալ ընդ այն հակառակաւորացն սկսան թշնամութեամբ վարել ընդ սրբոյն Ներսեսի Լամբրոնացւոյ, համարելով զնա խափանարար խորհրդոց իւրեանց. վասն որոյ և ընդ ակամբ հայէին 'ի կաթողիկոսն Գրիգոր. այլ նա քաղցրութեամբ իւրով հնարէր շահել զամենեսին: Եկաց 'ի հայրապետութե զամս եօթն, և վախճանեցաւ յամի տեառն 1202:

ԳԼՈՒԽ ԺԳ.

Վիճակ եկեղեցւոյն Հայոց, և խորհուրդ միաբանութեան ընդ եկեղեցւոյն Յունաց:

ՅԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ դարու 'ի դիմել խաչակրաց յԵրուսաղէմ, և 'ի բազմանալ եւրոպէացւոց 'ի կողմանս Ասիոյ, սկսան Հայք սիրով և մտերմութեամբ վարել ը̅ նոսա: Եւ զի ընդ այն ժամանակս նստէր յաթոռ կաթողիկոսն Հայոց Գրիգոր Պահլաւունի՝ այրն սքանչելի, որ բարեկրօն վարուքն և սրբութբ̅ ծանուցեալ էր և 'ի լատին եպիսկոպոսաց և աստիճանաւորաց կողմանցն այնոցիկ, յամին 1141 'ի գումարել ժողովոյ յԱնտիոք քաղաքի հրամանաւ Իննովկենտիոսի Գ., հրաւիրեցաւ 'ի ժողովն և Գրիգոր կաթողիկոս հանդերձ Ներսեսիւ. և 'ի բաժանել ժողովոյն կամեցեալ գեսպանն Իննովկենտիոսի քահանայապետի գնալ անտի յԵրուսաղէմ, ուղեկից եղև նմա և Գրիգոր կաթողիկոս: Անդ վերստին ժողով գումարեալ վասն ինչ ինչ բարեկարգութեանց, եղեն գրոյք և 'ի վերայ դաւանութեան հաւատոյ և ծիսից եկեղեցւոյն Հայոց. զորս ճախ բանիւք բացայայտեալ Գրիգորի կաթողիկոսի՝ հաճեցոյց և հաւանեցոյց զժողովականսն ամենայն աներկմիտ լինել 'ի վերայ ուղղութեան մաքուր ազգին Հայոց. ընդ որ սքանչացեալ Լատինացւոց գրեցին զնմանէ գովեստ առ Իննովկենտիոս քահանայապետ: Իսկ նա 'ի նշան խնդամտութեան իւրոյ առաքեաց առ կաթողիկոսն գաւազան և քող հայրապետական հանդերձ կնդակաւ սրբոց. որպէս և Գրիգոր գրեաց առ նա պատասխանի ամենայն հպատակութեամբ, և առաքեաց 'ի

Հռովմ՝ի ձեռն դեսպանաց իւրոց, որք հասին յԻտալիա յամին 1145 յաւուրս Եւգինէոսի երրորդի, որ էր՝ի Վիթերպայ քաղաքի։ Եւ զի ընդ այն ժամանակս յուզէին կռիւք և հակառակութիւնք՝ի մէջ Հայոց և Յունաց վասն տօնից և արարողութեանց, Գրիգոր կաթուղիկոս զայն ևս գրեալ էր առ պապն, և խնդրեալ՝ի նմանէ զլուծումն երկբայութեանց. իսկ քահանայապետն տուեալ զպատասխանի խնդրոց կաթուղիկոսին՝ մեծաւ պատուով արձակեաց զդեսպանսն։

Ի յետին ամս սորին Գրիգորի Պահլաւունւոյ առաջի արկաւ և խորհուրդ միաբանութեան և սիրոյ ընդ եկեղեցւոյն Յունաց, որում ցանկային գլխաւորք ազգիս առ՝ի բառնալ նովաւ զպատճառս անընդհատ խռովութեան և ատելութեան Յունաց, որք հանապազ թշնամանագիր բանիւք նախատէին զՀայս. բայց՝ի կանխել մահուն Գրիգորի կաթուղիկոսի՝ եղբայր և յաջորդ նորա սուրբն Ներսէս Շնորհալի՝ի թախանձանաց Ալէքսի Կոմնենոսի փեսային Կիռ Մանուէլ կայսեր խնամ կալեալ՝ի գլուխ տանել զառաջարկեալ խորհուրդ միաբանութեան. վասն որոյ գրեաց զանազան նամակս առ կայսրն և առ Միքայէլ պատրիարգ Յունաց, յայտնել զդաւանութիւն հաւատոյ ազգիս և զկարգս պաշտամանց եկեղեցւոյ։ Ի նամակաց սորի յորդորեալ կայսեր և պատրիարգին՝ առաքեցին առ սուրբն Ներսէս զԹէորիանէ աստուածաբան և զՅովհաննէս վանահայր՝ զմանուանեալն Աթման, որոց եկեալ՝ի Հռոմկլայ յերկարագոյն նուագօք խօսեցան՝ի վերայ խորհրդոց հաւատոյ և եկեղեցական արարողութեանց։ Ապա միաբան հաւանութեամբ երկոցունց կողմանց ընկալան նամակ՝ի սրբոյ կաթուղիկոսէն և դարձան՝ի Կոստանդնուպօլիս, ուր ընկալեալ և զհաճութիւն Յունաց՝ առին թուղթս հաւանութեան՝ի կայսերէն և՝ի պատրիարգէն առ՝ի կատար ածել զխորհուրդ միաբանութեանն, և դարձան անդրէն՝ի Հռոմկլայ։

Տեսեալ սրբոյ կաթուղիկոսին զակնկալութիւն յաջողութեան ցանկացեալ գործոյն, միաբան ժողովով գրեաց առ ամենայն եպիսկոպոսունս Հայաստան աշխարհի՝ խնդրել զհաճութիւն հաւանութեան նոցա։ Եւ մինչդեռ մեծաւ անձկանօք սպասէր ցանկալի յաջողութեան ելից իրացն, եհաս օր վախճանի նորա յամին 1173, որով գործն մնաց անկատար: Բայց յաջորդ նորա Գրիգոր մականուանեալն Տղայ՝ 'ի յորդորելոյ Մանուէլի կայսեր, յօժարեցաւ 'ի գլուխ տանել զսկզբնաւորեալն 'ի հօրեղբօրէ իւրմէ 'ի սրբոյն Ներսիսէ. վասն որոյ յետ բազում թղթակցուեց առ եպիսկոպոսունս Հայաստանի՝ արար ժողով 'ի Հռոմկլայ, ուր գեղեցիկ և պերճ բանիւք ատենախօս եղև սուրբն Ներսէս լամբրոնացի եպիսկոպոսն Տարսոնի: Նոյնպէս և մետրապոլիտք Յունաց արարին ժողով 'ի Կոստանդնուպօլիս, և ծանուցին Հայոց զյետին որոշումն իւրեանց, առաջի առնելով զերկուսին զայսոսիկ եւեթ. այս է բացայայտ բանիւք դաւանել 'ի Քրիստոս զերկու բնութիւնս, և ընդունել զժողովն Քաղկեդոնի: Ը՟ այս առաջարկութիւն Յունաց կամակար հաճութեամբ ընկալեալ Գրիգորի կաթուղիկոսի յամին 1179, գումարեաց ժողով ազգային յերեսուն և երից եպիսկոպոսաց և 'ի բազմաթիւ վարդապետաց և վանականաց. և գրաւոր հաւանութիւն ընկալաւ յերեքհարիւր եպիսկոպոսաց, որք ոչ կարացին գալ 'ի ժողովն. ուր միաբան խորհրդով և համաձայն կամօք ընկալան զժողովն Քաղկեդոնի, և սահմանեցին ասել 'ի Քրիստոս երկու բնութիւնս:

Ը՟ այս որոշումն իւրեանց հանդերձ ուղիղ դաւանութեամբ հաւատոյ առաքեցին առ կայսրն և առ ժողովն Յունաց, բայց 'ի պատճառս խռովութեանց ճանապարհին նախ քան զժամանել թղթոյն 'ի Կոստանդնուպօլիս՝ վախճանեցաւ կայսրն Մանուէլ, և խափանումն եղև միաբանութեանն:

Յետ 'ի դերև ելանելոյ ցանկացեալ միաբանութեանն ընդ Յոյնս, զայրացեալ նոցա ընդդէմ ազգիս Հայոց, տեսեալ և զընտանութիւն ազգիս ընդ եւրոպացիս՝ սկսան չարախօսել զազգէս առ Լատինս. նմին իրի Գրիգոր կաթուղիկոս Տղայ՝ խորհրդով և հաւանութեամբ ուխտին իւրոյ յամին 1184 գրեաց նամակ առ Լուկիոս Գ. հայրապետ Հռոմայ, ծանուցանել զվիճակ եկեղեցւոյն Հայոց, և զանբերելի թշնամութիւն Յունաց ընդ ազգիս. և զայն նամակ առաքեաց 'ի ձեռն Գրիգորի եպիսկոպոսին Փիլիպպուպօլսոյ, որոյ եկեալ անձամբ յԻտալիա՝ եգիտ զքահանայապետն 'ի Վերոնա քաղաք, և մատոյց նմա զթուղթն ։ Ապա ընկալեալ 'ի նմանէ կոնդակ մխիթարութեան և քաջալերութեան՝ հանդերձ պարգևօք և մատենիւ պաշտամանց եկեղեցւոյն Հռոմայ, դարձ արար 'ի Տարօն յամին 1185, որպէս պատմէ սուրբն՝ Ներսէս Լամբրոնացի, որ և հմուտ գոլով լատին բարբառոյ՝ թարգմանեաց զկոնդակն ։

Այլ միաբանութեան և մտերիմ ընտանութիւն Գրիգորի կաթուղիկոսի ընդ Յոյնս և ընդ Լատինս՝ պատճառք եղև խռովութեան և թշնամութեան 'ի գրգռելոյ անոպայ Ձորոյգետացւոց և Սանահնեցւոց, և պարապելով եկաց նոցա վանահայրն Գրիգոր Տուտէորդի, որ յանդուգն և թշնամանադիր նամակաւ առ Գրիգոր կաթուղիկոս անգոսնէր զգործս խաղաղասիրութե̄ նորա, որպէս և զխորհրդակցաց նորին ։ Ջանահնար եղև դարձեալ յապստամբութիւն գրգռել զբազումս 'ի հպատակաց նորա. վասն որոյ խորհրդով և կամակցութեամբ հակառակասիրաց ոմանց կացոյց նոր կաթուղիկոս զԲարսեղ եպիսկոպոս Անւոյ. բայց զի ազգն համօրէն զԳրիգոր ճանաչէր օրինաւոր կաթուղիկոս, ոչ յետս եկաց 'ի հնազանդութենէ նորա ։

Ընդ այն ժամանակս իշխանն Հայոց Լևոն որ տիրէր 'ի Կիլիկիա՝ կամեցաւ 'ի Լատինացւոց անտի ընդունել թագ արքայական. վասն որոյ առաքեաց դեսպան առ Կղեմենտոս Գ. քահանայապետ Հռոմայ, և առ կայսրն Հենրիկոս Զ., կատարել զխնդիր փափաքանաց իւրոց. ընդ որ հաճեցեալ երկոցունցն ևս՝ առաքեցին առ նա թագ արքունի և դրօշ առիւծանշան, զորս եբեր արքեպիսկոպոսն Մոգունտիոյ, և առաջի արար նմա 'ի դիմաց սրբազան քահանայապետին փոխել զերիս ևեթ ծիսական պաշտամունս եկեղեցւոյն Հայոց. այս է կատարել զգլխաւոր տէրունական տօնս ըստ աւուրցն յորս կատարեն այլ եկեղեցիք քրիստոնէից. պաշտել զժամերգութիւնս և զպատարագն 'ի մէջ եկեղեցւոյ յանդիման ժողովրդեան, և չլուծանել զպահս յերեկոյի ճրագալուցին ։ Կամակար յանձն առեալ զայսոսիկ Հայոց, ետուն գիր հաստատութեան ստորագրութեամբ երկոտասան եպիսկոպոսաց, յորոց մի էր և սուրբն՝ Ներսէս

Լամբրոնայի ։ Նոյա 'ի կատարել բազմաժողով հանդիսի օծութեան թագաւորին Լեւոնի՝ կամեցաւ արքեպիսկոպոսն Մոգունտիոյ դառնալ 'ի Հռովմ․ վասն որոյ Լեւոն թագաւոր և Գրիգոր կաթողիկոս գրեցին թուղթ շնորհակալեաց և հպատակութեն առ սրբազան պապն․ իսկ նորա հայրապետութ սիրով ընկալեալ զպատախանին, տարեալ առ կաթողիկոսն եմիփորն և մատանի, որպէս և առ Լեւոն թագաւոր զնշանն պատուոյ՝ զանուանեալն սրբոյն Պետրոսի ։

Հպատակութիւն և սէր Գրիգորի կաթողիկոսի և երկոտասան եպիսկոպոսաց առ քահանայապետն Հռովմայ՝ մնացին կատարութեամբ զայրացոյց զՋորոյգետացիս և զհամախոհս նոցին․ վասն որոյ անողորմելի թշնամութեամբ զինեցան բանիւ և գրով ընդդէմ սրբոյն Ներսէսի Լամբրոնացւոյ, զոր առաջնորդ համարէին և խորհրդատու իրացն եղելոց․ սակայն սուրբն Ներսէս Լամբրոնացի հզօր բանիւք պապանձեցոյց զնոսա ։

ԳԼՈՒԽ ԺԴ․

Նորանոր կարգք կրօնաւորաց ։

Ի ՎԻՇՏՍ անդ որովք տագնապէր եկեղեցի 'ի նորանոր հերետիկոսաց՝ սփոփեցաւ ոչ սակաւ յառաջելաջան վաստակոց արանց բարեպաշտից, որք նախանձու աստուածպաշտութեան հիմնադիրք կացին ազգի ազգի կարգաց կրօնաւորաց ։ Իսկ քանզի հերետիկոսք պարծէին ընդ խստակրօն վարս իւրեանց և պարսաւէին ըզպաշտօնեայս եկեղեցւոյ, հարկ համարեցան և ուղղափառք ջլատել զպանծանս նոցա՝ կանգնելով զօրինակս բարեպաշտութեան և զխստակրօն վարուց ։

Ռոբերտոս ժողովրդապետն Ռեդոնք՝ կամ Սենըքազարի որ 'ի Բրեթայն, կանգնեաց երկուս մենաստանս 'ի վիճակին Փուաթիէի, զմին վասն արանց, և զմիւսն վասն կանանց, կարգեալ նոցա կանոնս զսրբոյն Բենեդիկտոսի ։ Տեսչութիւն մենաստանացս այսոցիկ էր 'ի ձեռս մայրապետի կամ աբբատուհւոյ կուսանացն, մինչև արանց միայնակեցաց զխոնարհիլն ուսանել զհնազանդութիւն առ մայրապետն ։ Միաբանութիւն այս թէպէտ նոր և անսովոր ումեք թուեցի, սակայն և այնպէս ժամանակս ոչ սակաւ ընծայեաց եկեղեցւոյ անձինս պայծառացեալս բարեկրօն վարուք և սրբութեամբ։

Սուրբն Նորբերտոս Կողոնիացի՝ զառաջինն կանոնիկոս, և ապա արքեպիսկոպոս Մակտեպուրկ քաղաքի, հիմնադիր եկաց կարգին Պրեմոնտրացւոց՝ որք այսպէս կոչեցան յանուանէ տեղւոյն ուր կանգնեցաւ առաջին մենաստան նոցա 'ի սահմանս անդ վիճակի եպիսկոպոսութեանն Լայոնի։ Նորբերտոս առաքինանայր վարուքն և հոգելից վարդապետութեամբ իւրով տարածեաց ընդ ամենայն տեղիս զսահմանադրութիւն կարգին, և աշակերտք նորա անուանեցան Կանոնիկոս կրօնաւորք. և ապա յայլ և այլ ժամանակս ընկալան պէսպէս նորոգութիւնս։ Սորա անդամքն 'ի սկզբանէ հիմնարկութեան իւրեանց մեկուսացան յանապատս և յանտառախիտ վայրս, որպէս և ցարդ իսկ բազումք 'ի նոցանէ բնակեն յանշէն վայրս։

Կարմեղականք առին զանուն 'ի լերանէն Կարմեղայ, համարելով զանձինս իւրեանց աշակերտս մարգարէին Եղիայի, որով և վաղաժամանակեայս դոլ քան զայլ ամ՟ կարգս կրօնաւորաց։ Սակայն ըստ վկայելոյ հետաքննին մատենագրաց՝ սկզբնաւորութիւն նոցա երևի լեալ յերկոտասաներորդի դարուն յամի տեառն 1170, յորում ժամանակի Ալմերիկոս լատին պատրիարգն Անտիոքայ սահմանեաց զայս կարգ կրօնաւորաց 'ի Պաղեստին. և ապա 'ի հետագայ դարուն փոխեցաւ յԵւրոպա, և յետ ինչ ինչ փոփոխութեանց 'ի կանոնս կարգին՝ հաստատեցաւ 'ի քահանայապետացն Հռոմայ։ Կարմեղականք՝ որպէս և այլ ամենայն մուրացիկ կրօնաւորք, պարապեն 'ի քարոզութիւն բանին Աստուծոյ, և յարգասաւոր մշակութիւն փրկութեան հոգւոց։

Հաստատել կարգին Կիստերսեանց թէպէտ և եղև 'ի նախընթաց դարու 'ի Հռոբերտոսէ աբբայէ՝ որպէս կանխեցաք ասել անդէն, սակայն յառաջիկայ դարուս պայծառացաւ յոյժ 'ի սրբոյն Բեռնարդոսէ աբբայէ վանացն Պայծառաձորոյ։ Այր այս զարմանալի՝ ճոխացեալ ամենայն աստուածաձիր պարգևօք բնութեան և շնորհաց, էր 'ի Պուրկոյն գաւառէ՝ յազնուատոհմ և 'ի բարեպաշտ ծնողաց, վիճակեալ բարետեսիլ և վայելուչ գիտնոց, ճարտարմտութեան հոգւոյ, ազատական սրտի, վսեմութեան խորհրդոց, անվեհեր սրբութեան, ազդու և զուարթ պերճախօսութե՟ հոգելից բանիւք սուրբ գրոց և սրբոց հարց ։ Զայսպիսի ձիրս գովելի բարեմասնութեանց նորա հրաշալի հանդիսացուցանէին խորին խոնարհութիւն նորա, սէր և գթութիւն անսպառելի և հոգի վառեալ աստուածային նախանձու, որպէս և շնորհք սքանչելագործութեան ։ Ընդ դաստիարակութե՟ այսպիսւոյ առն հրաշալի հրահանգեցան բազում արք ականաւորք ՚ի մենաստանին Պայծառաձորոյ, և ծաղկեցաւ միաբանութիւն կարգի նոցա ։ Սքանչելին Բեռնարդոս ընդ բովանդակ կեանս իւր օրինակ եղև ամենայն առաքինութեանց, և առ ժամանակօք իւրովք համարեալ էր իբրև պատգամախօս այր յաստուածակոյս կողմանէ ․ նմին իրի պատկառելի էր առ հասարակ համօրէն եպիսկոպոսաց, իշխանաց և ժողովրդոց ։ Զինեցաւ ընդդէմ ամենայն հերետիկոսաց այնր դարու, և իւրով անձանձրոյթ աշխատասիրութե՟ն որպէս և իմաստուն խորհրդովք ձեռնտու եղև Թագաւորաց և քահանայապետացն Հռովմայ ։ Վախճանեցաւ ՚ի 20 օգոստոսի յամին 1152, ՚ի հասակի վաթսուն և երից ամաց ։

Միաբանութիւն Կլունեան մենաստանին, որ հիմնեցաւ ՚ի տասներորդի դարու, ընծայեաց ՚ի ժամանակի անդ արս ականաւորս համբաւեալս իմաստութե՟ և առաքինասէր վարուք ։ Հուգոն աբբայ՝ սրբակրօն վարուքն և չքնաղ առաքինութեամբք պատուեցաւ յոյժ ՚ի քահանայապետաց և ՚ի թագաւորաց այնր ժամանակի ։ Յորդորանօք խրատու իւրոյ հաւանեցոյց զՓիլիպպոս Ա. զարքայ Գաղղիոյ ՚ի բաց վարել զհարճն զոր առ կենդանութեամբ Բերթայ թագուհւոյն պահէր առ իւր ՚ի գայթակղութիւն ամենայն հպատակաց իւրոց ։ Նա ինքն երանելին Հուգոն յաբբայութեան իւրում աճեցոյց զփառս և զճոխութիւն աստուածոց Կլունեան մենաստանին, և նորանոր բարեկարգութեամբք այնչափ բազմացոյց զմենաստանս, մինչև առ կենդանութեամբ իւրով զթիւ միայնակեացն աւելի լինել տասնհազար ։ Այլ ապա յետ մահուան սրբոյն Հուգոնի կալաւ զիշխանութիւն նորա Պոնտիոս պատանի ազնուատոհմ՝ անձնատուր ՚ի զբօսանս և ՚ի շռայլութի․ որոյ բանդատեալ հրաժարել 'ի պատուոյն՝ յետ ամաց ինչ զուն գործեաց զինուք ստանալ զայն դարձեալ. և զի մարթասցի 'ի գլուխ հանել զխորհուրդն, յանդգնեցաւ առնել աւերս մեծամեծս 'ի Կլունի, վասն որոյ կոչեցաւ 'ի Հռոմ և ծանր բանադրանօք նզովեցաւ անդ. և ապա հրամանաւ քահանայապետին Հոնորիոսի Բ. յամին 1124, բանտարգել եղև յամրոցի ուրեք, և մեռաւ անդ ոչ յետ բազում ժամանակաց: Սա ինքն Պոնտիոս սովոր էր անուանել զանձն Աբբայ աբբայից:

Յետ Պոնտիոսի կալաւ զաբբայութիւն մենաստանին Հուգոն մեծաւոր Մարկինեան վանաց, որ զուն գործեաց բարեկարգել զթուլութիւն կանոնաց մենաստանին. բայց սակաւօրեայ եղեն կեանք նորա, զի յետ հնգից ամաց 'ի վախճանելն իւր՝ տուաւ աբբայութիւն Պետրոսի Մաւրիտիոսի, որ անուանեալ կոչէր Պատուելի: Նորընտիր այս աբբայ՝ ազնուատոհմ ավէրնացի, զօվելի և անբաւական վարուք բերէր յանձին ընդ ազնուատոհմութեան և զբարեկրօն վարս միայնակեցի և զառն իմաստնոյ: Ի ստգտանել զնա երբեմն սրբոյն Բեռնարդոսի սակս ինչ ինչ անսովոր և մեղադրելի իրաց 'ի տեսչութեան Կլունեան մենաստանին, Պատուելին Պետրոս ազդու և զօրաւոր բանիւք պաշտպան եկաց անձին իւրոյ և միաբանութեանն: Օրուան հակառակութիւն երկոցունց աստուածարեալ արանցս՝ արգասիս պարտ է համարել նախանձու աստուածպաշտութեան նոցա:

Սուրբն Բեռնարդոս և աբբայն Սուգերիոս, որպէս և Պատուելին Պետրոս կացին արք ականաւորք և պատուականք յաչս ամենեցուն, և նոցին խորհրդովք և խրատու գործէր ամենայն ինչ յերկոտասաներորդի դարուն: Յերկոցունց աստի սուրբն Բեռնարդոս համբաւեալ հանդիսացաւ քան զայլսն ամենեսին. Սուգերիոս աբբայ ստացաւ մտերիմ ընտանութիւն ընդ թագաւորս Գաղղիոյ, իսկ պատուելին Պետրոս՝ զարդարեալն առանձնաշնորհ պարգևօք որ կարևորքն էին իւրում պաշտաման, հաստատեաց զանհետացեալն խաղաղութիւն և զմիաբանական սէր 'ի կրօնաւորս իւր, քաղցրացուցանելով նոցա զխիստ միակեցական, առանց ահաբեկ առնելոյ զնոսա անսովոր և անչափ խստամբերութեամբք. և այսպէս հոգեսնունդն խնամովք նորա նորոգեցան բարեկարգութիւնք կրօնաւորաց ։ Ի գործն յորս միանգամ կարգեցաւ նա 'ի քահանայապետաց և 'ի Թագաւորաց , եցոյց զյաջողամտութիւն առանց նենգութեան , զյառաջատեսութիւն կամ զաչալրջութիւն առանց ապարդիւնութեան , և խոհեմութի՟ առանց դաւանաց ։ Վարդապետէր նա յաճախ յուսումն սուրբ գրոց և սրբոց հարց , և այսպէս լի արդեամբք վախճանեաց ըզկեանն յամին 1156 ։

ԳԼՈՒԽ ԺԵ․

Կարգ և կրօն զինուորական ։

ԽԱՉԱԿԻՐ զինուորութիւնք պատճառք եղեն սկըզբնաւորութեան զանազան կարգաց , որք ընդ կրօնաւորական վիճակի մարզէին և 'ի զինուորական հրահանգս 'ի պաշտպանութ՟ի անձանց և 'ի ձեռնտուութիւն ուխտաւորացն 'ի Պաղեստին․ յայսպիսեաց աստի եղեն ասպետքն կոչեցեալք Տաճարականք , Հիւրընկալք և Տեւտոնեանք ։

Տաճարականք կոչեցան առաջինքն , զի Բաղդուինոս Բ․ Թագաւոր Երուսաղեմի ետ նոցա տեղի բնակութեան առընթեր սողոմոնեան տաճարին ։ Այս կարգ զառաջինն էր ընկերութիւն ինչ հաւաքեալ ընդ ձեռն երկուց ազնուականաց՝ Հուգոնի Փէյենեան և Գոտոֆրետոսի Սգեմորեան , որք յամին 1118 միաբանեցան ընդ այլոց բարեպաշտ և արիասիրտ ազնուականաց՝ և առանց մտանելոյ ընդ լծով կանոնաց և արկանելոյ զանձամբ զքեմ կրօնաւորական՝ գնային ընդ առաջ ուխտաւորաց և ուղեկից լինէին նոցա յառապարս լերանց՝ մինչև ցժամանել նոցա յուխտատեղին ։

Հուգոն Փէյենեանց բարեխորհուրդ մտօք խնամ կալաւ յորդորել զսուրբ աթոռն՝ հաստատել զայս ընկերութիւն․ վասն որոյ քահանայապետն Ոնորիոս Բ․ յանձն արար ժողովոյն Տրեկայ , որ ընդ այն ժամանակս գումարեալ կայր 'ի Գաղղիա ։ Հարք ժողովոյն յետ քննելոյ և հաստատելոյ զընկերութիւնն զայն , որոյ վախճան և նպատակ գովելի երևէր առ ժամն , յանձն արարին սրբոյն Բեռնարդոսի սահմանել նմին կանոնս վարուց, որ և գրեալ ինչ ինչ պիտանի և յանկատար նոցա գիտութեանն ։ Սահմանեցաւ զգենուլ նոցա հանդերձ սպիտակ, և յետ ամաց ինչ յԵւգինէոսէ երրորդէ յաւելու խաչ կարմրագոյն ՚ի վերարկուի նոցա ՚ի ձախակողմն կոյս ։

Ի փոխման երկոտասաներորդի դարուն Հաճարականքս այսոքիկ սփռեալք ընդ ամենայն կողմանս Եւրոպիոյ՝ ճոխացան ստացուածովք պարգևաց թագաւորաց, եպիսկոպոսաց և իշխանաց ։ Նոքա թուլացեալ ՚ի բարեպաշտութենէ սկսան վարել անառակ կեանս, որ անբաժն է ՚ի յաճախութենէ ստացուածոց. վասն որոյ յանդգնեցան թօթափել զլուծ հպատակութեն պատրիարգին Երուսաղեմի. և յայն հասին յանդուգն ամբարտաւանութիւն, մինչև ՚ի պայքար մտանել և ընդ թագաւորս անգամ ։ Վասն որոյ Փիլիպպոս արքայ Գաղղիոյ միաբանութեամբն Կղեմէսի յետ բազմապատիկ հետազօտ քննութեց և ստուգելոյ զամբարիշտ խորհուրդս նոցա, խնդրեաց հրաման ՚ի սրբոյ աթոռոյն և բնաջինջ եբարձ զկարգ ասպետութեան նոցա ։

Հիւրընկալք, որ և Ասպետք սրբոյն Յովհաննու երուսաղեմացւոց, հաստատեցան յետ մետասաներորդի դարու նախ քան զառնուլ խաչակրացն զԵրուսաղեմ ։ Զառաջինն սկսան սոքա յԵրուսաղեմ քաղաքի ծառայել հիւանդաց յանկելանոցի ուրեք նուիրելոյ Յովհաննու ողորմածին, յօժարական յանձն առեալ խնամել զախտացեալս և զպանդուխտս ։ Ողորմածութիւն և առաքինութիւն նոցա պատճառք եղև հաստատութեան կարգին իւրեանց, և նախանձ բարեպաշտութեն արար զնս զինուորս քաջամարտիկս ։ Յորդորեցան զէն առնուլ առ ՚ի պաշտպանել զուխտաւորս յասպատակութեն անհաւատից, և յայս գործ արիական բարեպաշտութեն միաբանեցան ընդ նոսա և բազում ազնուականք յայլ և այլ ազգաց քրիստոնէից, որով մեծարոյ լեալ ընկերութիւն նոցա՝ ընկալաւ և զանուն պատուոյ Ասպետութեն՝ պայծառացեալ կրօնաւորական ուխտիւք և զինուորական քաջամարտիկ գործովք. և այսպէս հիմնեցին զնորաձև կարգ կրօնաւորաց՝ բաժանեալ յերիս դասս, այս է յասպետս, ՚ի գղերս և յաշխատաւոր եղբարս ։ Եւ երանելին Գերարդոս Թոմ ազնուական Մարտիկեցի ՚ի Փռո վանս գաւառէ, առաջին մեծաւոր եկաց այր հարգի. որ 'ի սկզբանն Հիւրընկալ լեալ և զինուոր, բարձրացաւ ապա 'ի պատիւ առաջնորդութեան։ Վախճանեցաւ յամի տեառն 1118։

Յառնուլ Սալահադինայ զԵրուսաղէմ յամի 1187, ասպետք սորայն Յովհաննու պատսպարեցան 'ի Պտղոմայիս քաղաք, անտի անցին 'ի Կիպրոս, և ապա 'ի Ռոդոս կղզի. և 'ի զօրանալ այլազգեաց մեկուսացան 'ի Մալթա, զոր Կարոլոս Ե. կայսր Գերմանիոյ պարգևեաց նոցա, զի պաշտպանեսցեն զՍիկիլիա յարշաւանաց թշնամեաց։ Մինչև ցայսօր ժամանակի կրեն սոքա զսպիտակ խաչանիշ 'ի վերայ սևագոյն հանդերձից։

Կարգ Տեւտոնեանց սկսաւ յամի տեառն 1119, յորում ժամանակի բարեպաշտ իշխան ոմն գերմանացի խնամ կալաւ ըստ օրինակի Հիւրընկալաց հանդերձել յԵրուսաղէմ առանձինն բնակարան իբր անկելանոց 'ի պէտս ուխտաւորաց գերմանացւոց, զի զկարևոր պէտս իւրեանց գտցեն անդանօր։ Նոյն բարեպաշտութեան հաղորդ եղեն ապա և այլ ազնուականք Գերմանացիք մինչև ցամ տեառն 1189. յորում ժամանակի ծաղկեալ գոլով ընկերութեանս, Կղեմենտոս Գ. քահանայապետ Հռովմայ յամին 1192 հաստատեաց կանոնաւ զկարգաւորութիւն նոցա իբր կարգ և կրօն զինուորական։ Ի տէրութեամբ Փրեդերիկոսի երկրորդի կայսեր Գերմանիոյ՝ յերեքտասաներորդի դարու միաբանութիւն նոցա փոխադրեցաւ յԵւրոպա, ուր կայսրն յորդոր մատոյց նոցա դիմել 'ի Պրուսիա և տիրել գաւառին, զի բնակիչք նորա հեթանոսք էին առ հասարակ և կռապաշտք։ Որք իբրև 'ի գլուխ տարան զառաջարկութիւնն Փրեդերիկոսի, ստացան զգաւառն 'ի կալուածս միաբանութեան իւրեանց իբր պարգևական երկիր՝ ընդ իշխանութեամբ Պողոնիոյ կամ Լեհաց։ Իսկ յետ վարելոյ նոցա զիշխանութիւն զայս զամս երեքհարիւր, Ալբերտ իշխանն Պրանտէպուրկի՝ որ ունէր յայնժամ զառաջնորդութիւն միաբանութեանն՝ մեծ Մագիստրոս անուանեալ, յամի տեառն 1511 յորժամ ընկալաւ զաղանդ Լուտերի, ժամ դիպաւոր համարեցաւ բաժանել 'ի կայսերութենէն և ինքնագլուխ վայելել յիշխանութեանն՝ զոր յառաջն վարէր իբր առաջնորդ միա-

բանութեան ։ Արար դաշնադրութիւն ընդ Սիգիսմոնդեայ արքային Լեհաց, զի այն մասն Պրուսիոյ որ սեպհական կալուածն էր Տեւտոնեանց՝ լիցի աշխարհական դքսութիւն, զոր ժառանգեսցէ ինքն և սերունդք իւր. և զի Ալբերտ ամուսնացեալ էր ընդ ումեմն իշխանուհւոյ Դանեաց՝ եթող որդւոց իւրոց զդքսութիւնն զայն ։

Իսկ Տեւտոնեանք որք ոչ կամեցան բաժանել յուղղափառ հռոմէական հաւատոյ՝ ստիպեցան մեկնել 'ի Պրուսիոյ 'ի սեպհական կալուածոց կարգին իւրեանց, և բնակեցան 'ի Մարիէնթալ քաղաք Փրանգոնիոյ, ուր և ցարդ իսկ նստի գլխաւոր առաջնորդ նոցա ։ Եւ 'ի բազմապատիկ ճոխութեանց ստացուածոցն դոցին ևեթ հատք կալուածոց մնացին նոցա յայլ և այլ գաւառս ։ Նշան որոշիչ կարգի նոցա էր խաչ սեւագոյն 'ի վերայ սպիտակ հանդերձից ։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Եկեղեցական մատենագիրք ։

ԽԱՉԱԿԻՐ *զինուորութիւնք զարթուցանելով 'ի սիրտս մարդկան զցանկութիւն տարաշխարհիկ ուղեւորութեանց, և զհրահանգս զինուորական արուեստի, թէպէտ և խոչ ընդ ոտն եղեն բարգաւաճելոյ դպրութեանց, սակայն և այնպէս երկոտասաներորդս այս դար առաւել ճոխ գտաւ ընտիր մատենագրօք քան զնախընթացն ։*

Զանուն սրբոյն Բեռնարդոսի՝ որ եղև յետին 'ի սուրբ հարս Լատինացւոց, արժանապէս պարտ է դասել 'ի գլուխ մատենագրաց ժամանակիս ։ Կանխեցաք ասել զնմանէ ինչ ինչ 'ի նախընթաց պատմութիւնս կարգաց կրօնաւորաց. իսկ այժմեան վերստին յիշատակութիւն համարեսցի յարժանաւոր գովեստ բազմապատիկ արդեանցն որովք պայծառացաւ նա ։ Հանճարեղ ճարտարամտութեամբն գեր 'ի վերոյ գտաւ քան զայլն ամենեսին որք կային յիւրում դարու ։ Ծանեաւ զթերութիւնս տրամաբանական ոճոյ, զոր վարէին առ իւրովք ժամանակօք, և անգոսնելի եցոյց զմնոտի զայն արուեստ, մինչև պարծել ընդ գլխովին անգիտութիւն իւր յայն հրահանգս ։

Պետրոս Լոմբարդոս եպիսկոպոս Փարէզ քաղաքի Վարդապետ Վկայութեանց անուանեալ, բազմաջան երկոք ընծայեաց ՚ի լոյս զաստուածաբանութիւն իւր, զոր կոչեաց Վկայութիւնս ։ Յայսմ օգտակար մատենի բովանդակին պատասխանիք ամենայն խնդրոց և հակառակութեանց յուզելոց ընդ այն ժամանակս ։ Կալաւ նա զընթացս ոճոյ Աբայելարդոսի վարժապետին իւրոյ՝ առանց զթելոյ ՚ի մոլորութիւնս նորին . վարեցաւ տրամաբանական ոճով Արիստոտելի ՚ի հաստատել զբանս իւր բանիւք Հարց եկեղեցւոյ ։ Վախճանեցաւ Լոմբարդոս յամին 1164, խնդրամիտ գոլով ՚ի մահուն՝ զի պատկեալ եւս զջանս իւր և պատուական ՚ի վարժարանս աստուածաբանութեան, մինչև ոչ ումեք համարիլ աստուածաբան՝ եթէ չիցէ ուսեալ և վարժեալ ՚ի նմին ։ Այնր մատենի եղեն և մեկնիչք բազումք, որոց կամեցեալ բացայայտագոյնս մեկնաբանել զգրեալն՝ յաւելմամբ պէսպէս ծանօթութեանց և դժուարալոյծ խնդրոց, նսեմացուցին յաւէտ զդիւրահաս բանս Լոմբարդոսի ։

Հուգոն՝ սրբոյն Վիկտորի անուանեալ, զի էր կանոնիկոս այնր աբբայութեան ՚ի Փարէզ քաղաքի, աստուածաբանական երկասիրութեամբքն յաճախեաց զպարծանս միաբանութեան իւրոյ, և վախճանեցաւ յամին 1173 ։

Գրատիանոս միայնակեաց գրեաց զհաւաքումն կանոնական իրաւանց, թէպէտ և թերացեալ ՚ի ճիշդ քննութենէ և ՚ի կարեւոր հմտութեանց ։ Հռիքարդոս սրբոյն Վիկտորի, Պետրոս Պլոյեան համբաւեալ հանդիսացան օգտակար երկասիրութեամբք իւրեանց ՚ի վերայ բարոյական խրատուց և բարեպաշտութեան ։ Սիկիբերտոս Կլէմբուր, Օթոն Փրիզինկեան և Գուլիելմոս Տիւրոսեան պատմաբանք արժանաւորք գովութեան՝ հայելով ՚ի հանգամանս այնր ժամանակի ։

Թերութիւն աստուածաբանից երկոտասաներորդի դարու էր զհետ երթալ նորախօսութեանց, որպէս է տեսանել ՚ի գրուածս Գիլպերտոսի Պորրետանոսի, որոյ մոլորութիւնք ՚ի վերայ խորհրդոյ ամենասուրբ Երրորդութեան դատապարտեցան ՚ի ժողովն Հռեմայ յամին 1148 ։ Համանման Գիլպերտոսի գոլով և վարդատապարտութեան Աբեղարդոսի, յամին 1121 'ի ժողովն Սուասոնի ստիպեցաւ իւրովք իսկ ձեռօք այրել զգիրսն իւր որ յաղագս սրբոյ Երրորդութեան։

Սա ինքն Աբեղարդոս համբաւաւոր գոլով յուսումնականս երկոտասաներորդի դարու՝ ոչ միայն բազմահմուտ ճարտարախօսութեամբն, այլ և տաղնապեալ կենացն վարուք։ Սատակամբաւ լեալ սորա անարժան ընտանութիւն ընդ օրիորդի ումեմն 'ի Փարիզ, և առ ամօթոյ նախատանացն ստիպեցաւ առնուլ զքեմ Բենեդիկտեանց 'ի մենաստանի սրբոյն Դիոնեսիոսի։ Համբաւ իմաստութեան նորա և գիտութեան ձգեաց անդր զբազում յաշակերտաց իւրոց. բայց աբբային այնր մենաստանի՝ տեսեալ զի ոչ կարէ նա կալ ընդ կանոնօք, կարգեաց զնա առաջնորդ վանաց 'ի Շամպայն գաւառի, ուր կանգնեաց նա դպրոց համբաւաւոր։ Նոյնպէս կարգեցաւ աբբայ վանաց սրբոյն Գիլդայ 'ի Պրեթայն, ուր բազմադիմի հակառակութիւնք եղեն նորա ընդ կրօնակցացն, որպէս պատմէ նա ինքն 'ի նամակս իւր։ Աստուածաբանական դաւանութիւնք Աբեղարդոսի, և մատենագրութիւնք նորա ընծայեալքն 'ի լոյս թէպէտ և ակներև ցուցանեն զլայնածաւալ հանճար նորա և զնրբամտութիւն, սակայն հետազօտ քննութեամբ տատուածարեալ անձանց յայտնեցան և մոլորութիւնքն որ 'ի նոսա յաղագս սրբոյ Երրորդութեան, խորհրդոյ մարդեղութեան և հատուցմանն Քրիստոսի, որպէս և 'ի վերայ անձնիշխան ազատութեան։ Սուրբն Բեռնարդոս համազօրն նմին 'ի ճարտարախօսութեան և 'ի պերճախօսութեան, և առաւելեալն քան զնա բարեպաշտութեամբ և ուղղափառ վարդապետութեամբ, ամբաստան եղև զնմանէ առ ժողովն գումարեալ 'ի Սեննոն յամին 1140, յորում դատապարտեալ Աբեղարդոսի՝ բողոք կալաւ առ քահանայապետն Հռովմայ Իննովկենտիոս Բ. որ վերստին քննեալ զմիտս վարդապետութեան նորա հերքեաց զնոյն իբր և հերետիկոսական, և պատուիրեաց նմա լռել։ Սակայն պաշտպան եկաց նա գրովք անմեղութեան իւրում, յայտ արարեալ զուղղափառ հաւատս իւր։ Յետ այնորիկ երկարեցան կեանք նորա այլ ևս ամս տասն, զորս անցոյց դառն արտասուօք. և փոխեցաւ 'ի Կլունեան մենաստանին յամի տեառն 1152 'ի հասակի վաթսուն և երից ամաց ։ Մատենագիր վարդապետս եղև մին 'ի գլխաւորաց անտի որք մեծարոյ համարեցան զսնոտի նրբախօսութիւնս իմաստասիրաց քան ըզբանս վարդապետաց եկեղեցւոյ ․ գործեալ ջանահնար եղև մուծանել 'ի վարժարանս խնդիրս անկարևորս զաստուածաբանութեան , զորս այլք մեծարոյք յետին դարուց 'ի չափու եղին ։

Մատենագիրք Հայոց թէպէտ և սակաւաթիւք՝ սակայն համբաւեալ գտան ընտիր արդասեօք գրաւոր երկասիրութեանց ։

Սուրբն Ներսէս Կլայեցի՝ որ և Շնորհալի , կաթուղիկոս Հայոց , զորոյ զբազմարդիւն վաստակս հոգեշահ գրուածոյ կանխեցաք նշանակել համառօտիւ 'ի վէպս կաթուղիկոսաց ազգիս ։

Սարգիս աշակերտակից սորին Ներսէսի Կլայեցւոյ՝ նոյնպէս Շնորհալի կարդացեալ, արար զմեկնութիւն եօթն թղթոց կաթուղիկեայց՝ ընտիր ոճով և ճոխ բանիւք , հանդերձ հոգեշահ և ազդու յորդորակօք ։

Իգնատիոս վարդապետ՝ նոյնպէս աշակերտակից սորին Ներսէսի Կլայեցւոյ , այր հեզաբնին և հանճարեղ , որ 'ի խնդրոյ տեառն Գրիգորի կաթուղիկոսի Պահլաւունւոյ գրեաց զվայելչահիւս մեկնութիւն աւետարանին Ղուկայ , ընտիր ոճով և իմաստալից կարգօք 'ի պէտս իմաստնոց ։

Սամուէլ երէց Անեցի , որ հրամանաւ Գրիգորի կաթուղիկոսի Պահլաւունւոյ արար զաղիւսակեալ ժամանակագրութիւն՝ հանդերձ մասնաւոր ինչ պատմութեամբք ։

Մատթէոս Ուռհայեցի՝ առ ժամանակօք խաչակիր զօրաց , որ գրեաց զպատմութիւն Հայոց սկսեալ յաւուրց Աշոտոյ Ողորմածի արքային Հայոց՝ մինչև ցժամանակս իւր ցամ տեառն 1144 ։ Գտանին 'ի նմա և յիշատակութիւնք ինչ պատմականք զարտաքին ազգաց ։

Մխիթար բժիշկ 'ի Հեր քաղաքէ՝ մտերիմ սորին Ներսէսի Կլայեցւոյ , գրեաց զգիրս բժշկութեան Ջերմանց մխիթարութիւն կոչեցեալ , 'ի խնդրոյ Գրիգորի կաթուղիկոսի Տղայ կոչեցելոյ ։

Սուրբն Ներսէս Լամբրոնացի արքեպիսկոպոս Տարամի՝ որդի մեծի իշխանին Հայոց Օշնի, երկրորդ Պօղոս կարդացեալ, և ազգաւ պերճախօսութեանն Դեմոսթենեայ և Կիկերոնի համգիտապատիւ, որ ընտիր երկասիրութեամբք պարծանս յաճախեաց հայերէն դպրութեան. գրեաց ճոխ բանիւք զմեկնութիւն սաղմոսացն Դաւթի, զԱռակաց Սողոմոնի, զԺողովողի և զԻմաստութեն, որպէս և զերկոտասան մարգարէից։ Արար զմեկնութիւն պատարագամատոյց գրոց՝ նախաշաւիղ խորհրդածութեամբք. են նորա և ճառք ընտիրք, շարականք և ներբողեանք, և նամակք ազգի ազգի գրեալք առ այլ և այլ անձինս։

Մխիթար Գանձակեցի կամ Գետիկայ անուանեալ, որ և Գոշ՝ առ նուաղութեան մօրուացն, գրեաց Դատաստանագիրս, կանոնս և թուղթս խրատականս։

Ի սմին դարու մերձաւորք միմեանց ժամանակաւ եղեն Խաչատուր վարդապետ տարօնացի, Գրիգոր Սկեւռացի, որպէս և Գէորգ վարդապետ Սկեւռացի, ծաղկեալք ազգի ազգի գրաւոր երկասիրութեամբք։

ԳԼՈՒԽ ԺԸ.

Արիական վէճ սրբոյն Թովմայի արքեպիսկոպոսին Կանտուրբերիոյ ընդ Հենրիկոսի Բ. արքային Անգղիոյ.

ՍՈՒՐԲՆ Թովմաս Պեքէթ մականուանեալ՝ որդի էր ուրումն Լոնդոնեցւոյ, և զառաջինն գոլով ատենական ոք փաստաբան, յամի տեառն 1158 սակս ճարտարախօսութեան իւրոյ և այլոց բարեմասնութեանց ընտրեցաւ ատենադպիր թագաւորութեանն։ Յայնմ պաշտաման անաղխտ վարուք գովելի հանգիտացեալ՝ ամբարձաւ ապա յաթոռ արքեպիսկոպոսութեան Կանտուրբերիոյ. թէպէտ և բազմօք հակառակ եկաց այնմ երանելին, գիտելով քաջ զզանազանութի̃ վիճակի եկեղեցական և աշխարհական իշխանութեան. վասն որոյ ասէր իսկ, եթէ "Արքեպիսկոպոսն կարի յոյժ այլազգ քան զարքունի ատենադպիրն տեսանէ զիրս եկեղեցւոյ"։

Իբրև ընտրեցաւ նա յայն աթոռ, ածեալ զմտաւ զդրութիւն վիճակին յոր հանգերձեալ էր մտանել, յուղևորել իւրում 'ի Լոնդոնէ 'ի Կանտուրբերիա վասն ձեռնադրութեան, պատուիրեաց ումեմն 'ի կղերիկոսաց իւրոց կոչեցելոյ Նչերսոս՝ առն համբաւելոյ սրբութեամբ վարուց. «Կամիմ, ասէ, զի 'ի ժամէ աստի և առ յապա ծանուսցես ինձ զոր միանգամ խօսեսցին զինէն. Հաստատեալ գիտեմ զի և ինձ լինիցի որ ինչ սովոր է գիտել այլոց՝ մանաւանդ իշխանաց. զորոց բազմադիմի զրոյցք լինին, և նոքա չեն տեղեակք ասացելոցն. Միանգամայն ազդ արասցես ինձ զվրիպակսն զորս տեսանես յիմ վերայ, զի աչք չորք առաւել տեսանեն քան զերկուս»։

Արդ իբրև ընկալաւ զօծումն ձեռնադրութեան՝ փոխեցաւ յայլ այր, վարելով զկեանս իւր միայն վասն Աստուծոյ. զգեցաւ հանդերձ միայնակեցի, և քուրձ ագանէր 'ի վերայ մերկ մարմնոյն, այլ արտաքուստ զգենոյր ըստ պատշաճ վայելչութեան իւրումն պատուոյ և աստիճանի։ Յերկրորդ ամի եպիսկոպոսութեան իւրոյ ել յԱնգղիոյ գնալ 'ի ժողովն զոր արար Աղեքսանդր Գ. գումարեալ էր 'ի Տուրօն քաղաք. և զի երանելին Թովմաս առ ժամանակօքն պատուական և մեծարոյ էր յաչս ամենեցուն, 'ի մտանելն 'ի Նորմանտիա՝ որպէս և յայլ տեղիս ընդ որս անցանէր, իբրև թագաւորի այնպէս շուք գնէին նմա։

Ի ժամանել երանելւոյն 'ի Տուրօն նախ քան զմտանելն 'ի քաղաքն, եպիսկոպոսունք ընդ առաջ ելին նմա, և ամենայն կարդինալք փութացան ելանել արտաքս քան զքաղաքն՝ յողջոյն գալստեան նորա։ Քահանայապետն Աղեքսանդր որ 'ի բազում ժամանակաց ցանկայր տեսանել զնա սակս բարեհռչակ համբաւոյ երանելւոյն, ընկալաւ զնա մեծարիմ և ընտանի սիրով։ Յետ աւարտելոյ ժողովոյն 'ի դառնալ իւրում յԱնգղիա բազում մարդասիրութեամբ ընկալեալ եղև 'ի թագաւորէն՝ իբր հայր գորովագութ յորդւոյ իւրմէ սիրելւոյ։

Հենրիկոս Բ. այնպէս իմն համարէր եթէ արքեպիսկոպոսն Թովմաս հեշտալուր և դիւրամէտ գտցի առ ամենայն հաճոյս կամաց իւրոց, սակայն ոչ յետ բազմաց ծանեաւ քաջ զվրիպելն 'ի կարծիս իւր. զի երանելին Թովմաս սկսաւ ցուցանել զպատշաճ արիութի պաշտաման իւրոյ։ Քահանայ ոմն ամբաստանեալ 'ի յանցանս մարդասպանութե, կալանաւորեցաւ 'ի տէրունէն, և ըստ կարգի եկեղեցական կանոնաց առաքեցաւ առ եպիսկոպոսն Սալիսբերիոյ, ընդ որոյ իշխանութե՛ էր ամբաստանեալն. Իսկ զի չերևէին պատճառք բաւականք ՚ի ստուգանել ամբաստանեալ յանցանացն, պատուէր ետ եպիսկոպոսն քահանայիցն՝ կանոնական օրինօք այսինքն երդմամբ արդարացուցանել զանձն. և ՚ի զանգիտել քահանայիցն՝ կամեցաւ եպիսկոպոսն խորհուրդ հարցանել յարքեպիսկոպոսէն Կանտորբերիոյ. Իսկ նա արժանաւոր պատուհաս համարեցաւ զրկել զքահանայն յամենայն եկեղեցական հասից իւրոց. Ըստ նմին ժամանակաց կանոնիկոս ոմն ՚ի Պէթֆորտ աւանէ երգիծական բանիւք թշնամանեալ զպաշտօնակալս արքային, զարթոյց զցասումն Հենրիկոսի ՚ի վերայ համօրէն զղերին. և ՚ի բողոք ունելն փութացուց առ արքեպիսկոպոսն՝ փութացաւ երանելին հրապարակաւ գանակոծ առնել զյանցաւորն, և արգել զնա զամս ինչ ՚ի պաշտամանց կանոնիկոսութեան. Բայց ոչ գիջաւ սաստ ցասումն արքային, վասն որոյ կամեցաւ գումարել ժողով ՚ի Լոնտոն քաղաք. յոր հրաւիրեալ զսուրբն Թովմաս և զայլ եպիսկոպոսունս՝ առաջի արար նոցա, թէ ՚ի նուաճել զանկարգութիւնս եկեղեցականաց՝ հարկ ՚ի վերայ կայ յետ կարգընկեց առնելոյ զնոսին մատնել ՚ի ձեռս աշխարհական ատենի պատուհասել ըստ յանցանացն. Իսկ յոչ հաւանել եպիսկոպոսաց այնմ առաջարկութե՛, որ հակառակ էր կանոնաց և եկեղեցական ազատութե՛, ոչ ինչ լուեալ թագաւորին թախանձանացն նոցա, առաջի արար հինգ պայմանս՝ ՚ի կանգնել զպատուար, որպէս ինքն ասէր, ընդդէմ եկեղեցական իշխանութե՛.

Արքեպիսկոպոսն Կանտորբերիոյ՝ որ զառաջինն ընդ այլոց բազում եպիսկոպոսաց ձեռն եդեալ էր պայմանացն, յորդորեալ ապա ՚ի խրատու քահանայապետին Հռովմայ՝ յետս կոչեաց զհաւանութիւն իւր, և արիաբար ընդդէմ եկաց արքային. Այլ ապա երկուցեալ յերեսաց նր ստիպեցաւ խոյս տալ ՚ի Գաղղիա, ուր Լուդովիկոս թագաւոր ընկալեալ զնա սիրով՝ ետ նմա ոչ միայն տեղի բնակութեան, այլ և ջանահոր եղև հաշտեցուցանել զնա ընդ Հենրիկոսի արքային, զոր և բազմաշխատ ջանիւք տարաւ ՚ի գլուխ, որով արքեպիսկոպոսն դարձ արար անդրէն յԱնգղիա.

Հենրիկոս թագաւոր կամեցաւ վերստին բռնադատել զնա 'ի լուծանել զհամադրութիւն, որովք կապեալ էին եպիսկոպոսունք համախոհք արքային յերանելոյն Թովմայէ. այլ նորա վառեալ նախանձու փառացն Աստուծոյ՝ հրաժարեցաւ առ նոյն հրամանն կատարելոյ անգղէն զպաշտամունս իւրեանց. Վասն որոյ եպիսկոպոսունք բազում կային գտանել առ Հենրիկոս, որ առ ժամանակին 'ի Նորմանտիա էր. և 'ի զայրանալ նորա ընդդէմ արքեպիսկոպոսին՝ առաց երբեմն զայս բան. «Որքա՛ն դառն է ինձ, զի յայսչափ ծառայից և սպասաւորաց՝ զորս յագեցուցանեմ կերակրովք՝ չգոյ է, որ ինձ ազատարար 'ի քահանայէ միոջէ, որ միայն վրդովէ զիս առաւել քան զայլ ամենայն հպատակս իմ»։ Լուեալ զայն չորից պաշտօնէութեան արքային՝ համարեցան զբանն իբր սպասուէր հրամանի. վասն որոյ գնացեալ 'ի Կանդերբերի քաղաք և յանդիման եղեալ արքեպիսկոպոսին՝ ծանուցին նմա զխնդիր թագաւորին վասն արձակելոյ զեպիսկոպոսունս 'ի կապանաց նորին բանադրանաց. Ի մերժել երանելոյն զխնդիր արքային, անդէն առ նմին յանդգնեցան չարաչար հարուածովք սրոյ սպանանել զնա, յամի տեառն 1170. Լուեալ Աղեքսանդրի քահանայապետին զմահ Թովմայի նզովեաց զսպանողսն, որք բռնադատեցան ապա գնալ 'ի Հռոմ, և ապաշխարութեամբ ընդունել զարձակումն 'ի նզովից. Մին 'ի նոցանէ թշուառութեամբ մեռաւ 'ի Կոզէնտիա քաղաք Նեապօլոյ. և այլոց երիցն գնացեալ յԵրուսաղէմ պանդխտեցան անդ ջնջել ապաշխարութեամբ զանօրէնութիւն իւրեանց. Սակայն Հենրիկոս թագաւոր ոչ կարաց ընդունել զարձակումն, եթէ ոչ այսու եւեթ դաշամբ, զի մի հակառակեսցի իւիք կամաց քահանայապետին, և զի դարձուսցէ յաքսորանաց զկուսակիցս սրբոյ արքեպիսկոպոսին սպանելոյ, և խափանեսցէ զօրէնս հակառակս իրաւանց եկեղեցւոյ, և զի յանձն առնուցու դարձեալ զամս երիս պատերազմել ընդ անհաւատս 'ի Պաղեստին.

Յետ երից ամաց նահատակութեան երանելի արքեպիսկոպոսին՝ դասակարգեցաւ 'ի թիւս մարտիրոսաց եկեղեցւոյ, զի զարմանալի զօրու ոչ միայն փութով աստուածային նախանձու, այլ և երկնահանգէտ վարուքն սրբութեան։ Սովոր էր երանելին զօր ամենայն կանոնի ընդ առաւօտն յետ կատարելոյ զգիշերային պաշտամունս ածել 'ի տուն իւր աղքատս երկոտասան, զորոց ինքնին լուացեալ զոտսն կերակրէր զնոսա, և տայր բաշխէր իւրաքանչիւր նոցա չորս դահեկանս արծաթիս։ Ի լուսանալ աւուրն կոչէր այլ ևս երկոտասան աղքատս, զորոց զոտսն տայր լուանալ դրանեկացն իւրում և կերակրել զնոսա։ Այնպէս և յերրորդ ժամն աւուրն այլ երկու քահանայք իւր ծառայէին այլոց հարիւր աղքատաց։ Բայց յայտնանէ բազմապատիկ գործոյք բարեպաշտութեան և փառաւոր աստուածային սիրով նուիրեալ էր զանձն 'ի խնամս քրիստոնեական հօտին։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Սուրբն Հուգոն եպիսկոպոս Լինքոլնի։

ՅԵԼՍ երկոտասաներորդի դարու ծաղկեցաւ երանելին Հուգոն ծնեալ 'ի Պուրկոյն գաւառի յամին 1140։ Զառաջինն լեալ Կարթուսեան կրօնաւոր, կոչեցաւ ապա յԱնգղիա՝ առաջնորդել միում 'ի մենաստանաց կարգին, և յետ սակաւուց ամբարձաւ յաթոռ եպիսկոպոսութեան Լինքոլն քաղաքի. ուր զովելի հանդիսացաւ արդարակորով բարուքն և հայրագորով խնամովք 'ի պաշտպանութիւն աղքատաց և զրկելոց, և վասն անվեհեր համարձակութեանն որով ընդդէմ եկաց աշխարհական իշխանութեանց 'ի պահանջել նոցա զանիրաւս։ Յաւուր միում 'ի խօսել նորա աներկիւղ յանդիման արքային Հենրիկոսի, հայեցեալ թագաւորին 'ի պաշտօնեայս իւր՝ ասէ. «Եթէ ամենայն եպիսկոպոսունք իբրև զայր զայս ահաբեկ առնէին զթագաւորս և զիշխանս, ոչ որ արդեօք կարէր բռնանալ 'ի վերայ նոցա»։ Հրամանէր եպիսկոպոսն արգել քահանայից մի ումեք ապաշխարանս տուժից դրամոց 'ի վերայ դնել։ «Ջունիք ինչ փոյթ, ասէր նա, տալ կատարել զապաշխարութիւն՝ որք անհրաժեշտ հարկաւորք իցեն 'ի փրկութիւն, և ոչինչ այլ հոգայք՝ բայց առնել զապաշխարողս հատուցանել զզրկանսն զոր խոստացեալ իցեն»։

Եւ յաւել երբեմն ցնա եթէ, և տէրն Թովմաս արքեպիսկոպոսն Կանտուրբերիոյ տուեալ իցէ ապաշխարանս այդպիսիս, պատասխանի ետ տէրն Հուգոն. «Հաւատացէք ինձ զի երանելին Թովմաս ոչ վասն այնորիկ կարգեցաւ 'ի դասս սրբոց»։ Հուգոն եբարձ ևս զայն ամենայն տուրս ժողովրդեան, զորս նախորդք իւր այլ և այլ պատրուակաւ սահմանեալ էին հատուցանել եկեղեցւոյ։

Յայց ելեալ սորա երբեմն մենաստանաց հաւատաւորաց միաձանգին իւրոյ՝ գնաց 'ի տես աբբայութեան ինչ մենաստանին կուսանաց. և 'ի մտանելն յեկեղեցին աղօթել, ետես 'ի դասի շիրիմ վերամբարձ՝ ծածկեալ մետաքսեայ դիպակաւ, և շուրջ զնովաւ կերոնք և կանթեղք։ Հարցեալ գիտել թէ ում շիրիմն իցէ. իբրև ծանեաւ՝ թէ է գերեզման Ռոսամոնդեայ հարճոյ Հենրիկոսի երկրորդի արքային Անգղիոյ, որ 'ի պատճառս այնր կնոջ մեծամեծ բարիս արարեալ էր եկեղեցւոյ վանացն, հրամայեաց Հուգոն բառնալ զնա անտի և թաղել արտաքոյ եկեղեցւոյն. «Զի մի, ասէ, սուրբ հաւատք քրիստոնէութեան անգոսնելի լինիցին. և զի յօրինակէ աստի ուսցին կանայք զգուշանալ 'ի խառնակ վարուց և 'ի շնութենէ»։ Անդէն և անդ կատարեցաւ հրամանն սրբոյ եպիսկոպոսին. և այսպէս յետ բազում՝ ուղղութեանց վախճանեցաւ երանելին 'ի Լոնտոն յամին 1200 'ի հասակի վաթսուն ամաց։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Ազգային ժողովք. — Ժողով Շուղրոյ յամի տեառն 1113։

ՅԱՆԿԱՑԵԱԼ Բարսղի կաթուղիկոսի գնալ յուխտ յԵրուսաղէմ, 'ի վեր եհան զխորհուրդս մտացն եպիսկոպոսաց ամենից և իշխանաց։ Այլ իբրև տարաժամէր օրն, և եկեղեցականքն ամենեքին կաթուղիկոսին հանդերձ ելեալ 'ի տանիս ուրեք կատարէին զերեկոյին պաշտամունս, ծանրացեալ տանեացն անկաւ 'ի վայր, և բեկաւ ողն կաթուղիկոսին։ Եւ նա մինչդեռ տակաւին կենդանին էր՝ ետ տանել զինքն 'ի Շուղր անապատ, և կոչեալ անդր զեպիսկոպոսունս և զիշխանս

Հայոց, միաձայն հաւանութեամբ նոցա ամենեցուն եւ Գրիգորիսի եղբօր Շնորհալւոյն զքօղն եւ զգաւազան կաթուղիկոսական։ Վասն որոյ յետ մահուն Բարսղի ժողովեալ ամենեցուն 'ի Կարմիր վանս՝ օծին զնա մեծահանդէս շքով։

Ժողով Սեաւ լերին Բ. յամի տեառն 1114։

ԶՏԱՐԱԺԱՄ մահ Բարսղի եւ զկաթուղիկոսութիւն Գրիգորի Պահլաւունւոյ լուեալ Դաւթայ արքեպիսկոպոսին Աղթամարայ զայրացաւ յոյժ. եւ նշկահեալ զիշխանութիւն նորա եղիտ իւր համախոհս եւ կոչեաց զանձն կաթուղիկոս Աղթամարայ։ Զայն լուեալ Գրիգորի կաթուղիկոսի ժողովեաց 'ի Սեաւ լեառն զեպիսկոպոսունս ամենայն, զմիանձունս եւ զվանահայրս աւելի քան երկու հազար եւ հինգ հարիւր. որոց միաձայն հաւանութեամբ մերժեալ զԴաւիթ, ընդ բանիւ արկին զամենեսեան որք միանգամ յանդգնեցին կաշառօք ստանձնել զեկեղեցական պաշտօնս։ Թուի իմն թէ յայսմ ժողովի սահմանեցաւ զի յընտրութեան կաթուղիկոսի միաձայն իցեն արքեպիսկոպոսք Անւոյ, Հաղբատու, Թադէի վանից եւ Սանահնի։

Ժողով Հռոմկլայի Ա. յամի տեառն 1166։

ԳՐԻԳՈՐ Պահլաւունի հասեալ 'ի բարւոք ծերութիւն եւ զմօտել վախճանին տեսեալ՝ թախանձանօք աղաչեաց զհարազատն իւր զՆերսէս Շնորհալի ունել ընդ իւր զաթոռ կաթուղիկոսութեան. եւ նա թէպէտ եւ բազմօք հրաժեշտ տայր 'ի պատուոյն, սակայն ոչ ուրեմն զիջեալ յաղաչանս նորա՝ յանձն էառ զիշխանութիւնն։ Յայնժամ Գրիգորի կաթուղիկոսի ժողովեալ զեպիսկոպոսունս ամենայն եւ զվարդապետս 'ի Հռոմկլայ, էարկ զգլխովն Ներսիսի զքօղն կաթուղիկոսական, եւ տուեալ 'ի ձեռս նորա զգաւազանն հայրապետական՝ երկիր եպագ նմա։ Իսկ Ներսիսի ըստ շնորհելոյ նմա իմաստութեան 'ի վերուստ՝ բացեալ ըզբերան իւր պերճ՝ եւ հզօր բանիւք ատենախօս եղեւ անդէն՝ զՊահլաւունւոյն Գրիգորի զիւրոյ հայրապեոյն առաջի արարեալ նախ զերկնային քաղաքավարութիւն, և զլուրն ապա առ նմին խոստովանեալ նուաստութիւն, և թէ յոր փառս ամբարձին զնա շնորհք աստուածային։

Նա ապա յետ լուծանելոյ ժողովոյն իբրև ամիսք երեք 'ի վերայ անցին՝ փոխեցաւ 'ի կենցաղոյս Գրիգոր Պահլաւունի։

Ժողով Հռոմկլայի Բ. յամի տեառն 1172։

ՈՒՂՂԱՄԻՏ վարդապետութիւն և զերկնահանգէտ քաղաքավարութիւն Ներսէսի Շնորհալւոյ՝ իմացեալ մեծի և բարեպաշտ կայսերն Մանուէլի Կոմնենոսի, քանզի և ինքն 'ի բնէ ցանկացող էր խաղաղութեան և սիրոյ՝ փոյթ յանձին կալաւ բառնալ 'ի միջոյ զտարապարտ հերձուած և զանմիաբանութիւն Հայոց և Յունաց։ Նա որոյ նամակաղիր եղև առ Ներսէս Շնորհալի, և 'ի գլխոյ եկեղեցւոյն Յունաց առաջի արարեալ նմա ինն գլուխս բանից, աղաչէր զի ժողովով եպիսկոպոսաց մարթասցի ընդունելի առնել զայնոսիկ ամենայն Հայոց։ Ի ժամանել դեսպանաց կայսեր 'ի Հռոմկլայ, մեծաւ մարդասիրութեամբ ընկալաւ զնոսա Շնորհալին, և ապա հրաւիրեաց առ իւր զեպիսկոպոսունս ամենայն աշխարհին Հայոց զբնակեալսն առ Տօրոս լերամբ և առ սահմանօք Միջագետաց. և նոքա թէպէտ յանձին կալան հնազանդել բանից Յունաց, այլ կասկածեալ թէ մի գուցէ եպիսկոպոսունք Արևելից Հայոց հակառակիցին ինչ սահմանելոյն 'ի ժողովին, խորհեցան զնոսա ևս կոչել 'ի ժողովն։ Նա մինչդեռ 'ի պատրաստի էր Ներսէս Շնորհալի առանձինն թղթով հրաւիրել զնոսա առ իւր, եհաս նմա երկնահրաւէր կոչումն, և յանցաւոր կենցաղոյս յանանցն փոխեալ ուրախութիւն՝ ոչ կարաց լրումն տալ ցանկացեալ գործոյն։

Ժողով Հռոմկլայի Դ, յամի տեառն 1178.

ԳՐԻԳՈՐ Տղայ եղբօրորդի Շնորհալւոյն միաձայն հաւանութեամբ ամենեցուն ամբարձեալ յաթոռ իշխանութեան նորա, զի և զնորին զառաքինի և զբարեկրօն վարս յանձին բերէր, 'ի յորդորելոյ և 'ի թախանձանաց Մանուէլի Կոմնենոսի և Միքայէլի պատրիարքին՝ Յունաց. 'ի կատար ածել զսկսեալն 'ի Շնորհալւոյն զխորհուրդ միաբանութեան. Իսկ զի անհնարին համարէր հաւանել Հայոց փոխել զծէսս արարողութեանց յորս 'ի սկզբանէ հաստատեալ էին, աղաչեաց զկայսրն և զպատրիարքն միանգամայն մի այլ ևս ստիպել զՀայս 'ի փոխել զայնոսիկ, այլ գոն գործել բաւական զարարողութիւնն ամենայն զխոսաբերան ուղղափառ հաւատոյ. Իսկ 'ի հաւանել ընդ այն կայսերն և պատրիարքին, Գրիգոր կաթողիկոս լցեալ հոգևորական ուրախութեամբ՝ կոչեաց առ ինքն 'ի Հռոմկլայ ընդ գեսպանացն Յունաց և զեպիսկոպոսունս ամենայն և զվարդապետս և զմիանձունս և զգաւառական զգլխն Հայաստան աշխարհի, ժողով գումարել նոքօք և լրումն տալ խորհրդոց միաբանութեան. Ուր երանելին Ներսէս Լամբրոնացի սքանչելի պերճախօսութեամբ և զօրաւոր բանիւք ատենաբանեալ զհանգամանաց քրիստոնէական եկեղեցւոյ, առաջի արար զվնաս որ 'ի չմիաբանութենէն 'ի հաւատոյս, և զմեծամեծ օգտակարութիւնս 'ի միաբանութենէն. Իսկ բանիւն իւրոյ կորովութեամբ գերեալ իմն զամենայն միտս, այր իւրաքանչիւր փութայր 'ի կատար հասցանել զսկսեալն զայն խորհուրդ միաբանութեան. Իսկ որպէս յառաջնում նուագին տարաժամ վախճանն Ներսէսի Շնորհալւոյ խափան արկ գործոյն, նոյնպէս և յերկրորդումն յայսմիկ արգելաւ 'ի սպառ 'ի մահուանէ անտի բարեպաշտին կայսերն Մանուէլի Կոմնենոսի[1].

---

[1] Բանզի զամս երկուս տևեաց երրորդս այս Ժողով Հռոմկլայի, ոմանք զյետին գումարումնն՝ յորում և ատենաբանեաց Լամբրոնացին՝ չորրորդ Ժողով համարին Հռոմկլայու. այլ զի մի էր խնդիրն, և վասն արտաքին եւեթ պատճառաց այնչափ յերկարեալ՝ մեք 'ի մի համար դրեցաք զնոսին.

Ժողով Սսոյ Ա., յամի տեառն 1193։

ՎԱԽՃԱՆԵԱԼ Գրիգորի Տղայ լի աւուրբք և արդեամբք զպանծալի աւուրս կենաց իւրոց, Լևոն իշխանն Հայոց և Ձորոյգետացիք և Հաղբատացիք և Սանահնեցիք կամէին կարգել յաթոռ իշխանութեան նորա զեղբօրորդին իւր կամ զքեռորդի զԳրիգոր Ե., որ դեռ ևս մանուկ էր հասակաւ։ Բայց Ներսէսի Լամբրոնացւոյ տեսեալ ի նմա անբարի վարս՝ ընդդէմ եկաց բազմօք ընտրութեան նորա, որպէս զայս ինքնին իսկ ի միում ուրեք ի գրոյն յիշատակէ։ Սակայն այլոցն ոչինչ ունկն եղեալ արդարացի բանից Լամբրոնացւոյն կարգեցին զնա յաթոռն. և թէ զինչ ինչ յետ այնորիկ գործեաց Գրիգոր կամ որպէս վախճանեաց զկեանսն, հակիրճ բանիւք նշանակեցաք ի կարգի յաջորդութեան կաթուղիկոսաց ազգիս։

Ժողով Տարսոնի Ա., յամի տեառն 1198։

ՔԱՆԶԻ որք միանգամ յառաջ քան զԼևոն Բ. կացին իշխանք ի տանէ Ռուբինեանց՝ չէին պատուեալ արքայական թագիւ, Լևոնի տեսեալ զյաջողութիւնս գործոց իւրոց և զյառաջադէմ զարգանալ Հայաստանեայց՝ ցանկացաւ օծանիլ թագաւոր. վասն որոյ գրեաց թուղթ առ Կեղեստինոս Հռովմայ հայրապետ և առ Հենրիկոս Զ. արքայ գերմանացւոց. և ի հաւանել նոցա արդարացի հայցուածոյն Լևոնի՝ ժողովեցան եպիսկոպոսունք ամենայն և վարդապետք և վանահարք Հայոց, Յունաց և Լատինացւոց ի Տարսոն քաղաք և Գրիգոր Ապիրատ կաթուղիկոս Հայոց ի տաճարի սրբուհւոյն Սոփիայ մեծահանդէս շքով եօծ զԼևոն ի թագաւոր Հայոց։

ԴԻՐ ԵՐԵՔՏԱՍՆԵՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա.

Նոր զինուորութիւն խաչակրաց: — Առումն Կոստանդնուպոլսոյ 'ի Լատինացւոց:

ԳԵՂԵՑԻԿ և գովելի եռանդն իշխանաց քրիստոնէից 'ի խաչակիր զինուորութիւն՝ մինչ դեռ կայր տակաւին 'ի սրտի նոցա, թէպէտ և յառաջին ուղևորութիւնս անդ չէին յաջողեալք ըստ կարծեցեալ ակնկալութեանցն: Այն իսկ 'ի սկզբան երեքտասաներորդի դարուս գումարեցաւ այլ խումբ զինուորութեան 'ի Գաղղիացւոց անտի որք առաջնորդ իւրեանց ունէին զքաջազուն կոմն Ֆղանդրիոյ զԲաղդուինոս: Հասարակապետութիւն Վենետիկեցւոց խոստացաւ տալ նոցա նաւս կարևորս 'ի փոխադրութիւն զինուորաց, որք էին չորեք հազար ասպետք, ինն հազար այրուձիք և քսան հազար հետևակք, դաշն եդեալ ընդ Բաղդուինոսի զի 'ի փոխարէն ծախուց այնր ուղևորութեան՝ յանձն առցէ նախ դիմել 'ի վերայ Զարա քաղաքին Դալմատիոյ, և առեալ զայն յաւելցէ 'ի սահմանս իշխանութեան Վենետիկեցւոց:

Արդ յետ 'ի գլուխ հանելոյ Բաղդուինոսի զխնդիր Վենետիկեցւոց՝ խաչակիր զօրքն ուղևորեցան 'ի Կոստանդնուպոլիս, ուր թագաւորէր յայնժամ Աղեքս որդի Իսահակայ Կոմնենոսի, որ յափշտակեալն էր զթագ կայսերութեան յեղբօրէ իւրմէ յԻսահակայ Անգեղոսէ: Ի ժամանել անդր խաչակիր զօրաց՝ փախուցեալ Աղեքսի, էառ զթագաւորութիւնն մանուկն Աղեքս որդի Իսահակայ Անգեղոսի, որ յետ սակաւ ինչ սպանաւ 'ի Դուկասայ մականուանեալ Թառայօն՝ յաջորդեցէն իւրմէ: Յայնժամ մտեալ զօրացն Բաղդուինոսի 'ի Կոստանդնուպոլիս յամի 1204, և անյագ աւարառութեամբ գլխաւոր յեկեղեցիս, յարքունիս և 'ի տունս քաղաքացեաց, գործեցին ոճիրս անհնարինս. Բաղդուինոս ընտրեցաւ կայսր արեւելեան, և ապիրատն Դուկաս Թաւայօն 'ի բարձուէ եւս գահավէժ անկեալ սատակեցաւ։

Կարի 'ի ձախ պատահեաց ընտրութիւն Բաղդուինոսի յաթոռ իշխանութեանն. զի և չէր ոք 'ի խաչակիրսն ամենայն արժանաւոր քան զնա սակս քաղցր բարոյիցն, կրօնասէր վարուցն և արդարախոհութեան, որ և իւրովն իսկ ընտիր և գովելի օրինակաւ յորդորէր զամենեսին 'ի բարեպաշտութիւն. Առողջ գոլով հասակաւ իբր երեսուն և երից ամաց, յոյս մեծ էր հաստատելոյ կայսերութեանն Լատինացւոց յարեւելս. սակայն 'ի գլխել նորա 'ի պաշարել և առնուլ զԱդրիանուպօլիս՝ յամին 1208, յաղթեցաւ և սպանաւ 'ի Բուլղարաց։

Չորք կայսերք գաղղիացիք թագաւորեցին յետ նորա 'ի Կոստանդնուպօլիս՝ մինչև ցամ տեառն 1261, յորում ամի Բաղդուինոս Բ. մերժեցաւ յաթոռոյ 'ի Միքայէլ Պալէոլոգէ, և բարձաւ ընդ նմին և տէրութիւն Լատինացւոց 'ի Կոստանդնուպօլսոյ, յետ կալոյ նոցա անդէն զամս յիսուն և ութ։ Յոյնք՝ որ վաղու եւս զայրացեալ էին ընդդէմ Լատինացւոց, առաւել հաստատեցան յատելութեանն յետ ակնատես լինելոյ թըշուառութեանց քաղաքին իւրեանց 'ի պատճառս նոցա՝ յաւարառու անգթութենէ անօրէն խաչակրաց, և յայնմ ժամանակէ և առ յապա անհնարին եղև նոցա միաբանել ընդ եկեղեցւոյն Լատինաց։

ԳԼՈՒԽ Բ.

Նոր Թագաւոր Երուսաղէմի. — Առումն Դամիատա քաղաքի։

Ի ՏԻՐԵԼ Լատինացւոց քաղաքին Կոստանդնուպօլսոյ, ոմանք յիշխանաց նոցա ոչ կամելով հաստատել բնակութեամբ 'ի թագաւորեալ քաղաքին, անցեալ էին յԱսորիս ընդ խաչակրաց ոմանց։ Սալադին եղբայր Սալահադինայ սուլդանին, որ ունէր զԵրուսաղէմ, յետ մահուան Եմերիկեայ Լուսինեանց՝ յամին 1205 քանդեալ զպարիսպս քաղաքին՝ կարգեաց զԵրուսադէմ յաւան անպատսպար : Իսկ 'ի Պաղեստին ոչինչ այլ քաղաք մնաց 'ի ձեռս քրիստոնէից բայց 'ի Պտղոմայիսէ, և եպիսկոպոս նորա խնդրեաց յարքայէն Գաղղիոյ 'ի Փիլիպպոսէ Օգոստոսէ Թագաւոր զօր յԵրուսաղէմ, կամեցաւ Փիլիպպոս արքայ յուղարկել անդր զասպետն Յովհաննէս 'ի Բրիէննեան տոհմէ, որ 'ի Շամփայն գաւառի, զայրն հանճարեղ և զքաջազուն . որ ձեռնտուութեամբ բարեկամաց իւրոց և յորդորանօք քահանայապետին Հռովմայ գումարեաց բանակ 'ի հարիւր հազար զօրականաց :

Սորա փոխանակ դիմելոյ 'ի վերայ Երուսաղէմի՝ անցին նաւուք 'ի կողմն Եգիպտոսի, և պաշարեցին զԴամիատ քաղաք, որում և տիրեցին յետ երկուց ամաց պաշարմանն : Բայց սակաւաւուր եղև անդ իշխանութիւն քրիստոնէից . զի կամելով յառաջել ընդ մէջ երկուց թևոյն Նեղոսի 'ի ժամանակս յորդութեան գետոյն, պաշարեալ 'ի ջուրց ստիպեցան խօսել 'ի հաշտութիւն ընդ սուլտանին Եգիպտոսի, որ թոյլ ետ նոցա դառնալ յետս և գնալ 'ի Պաղեստին, պահեալ առ իւր 'ի պատանդ զասպետն Յովհաննէս Բրիէննեան, և յինքն առեալ անդրէն զԴամիատ քաղաք :

Ասպետն Յովհաննէս յետ սակաւուց դարձեալ զազատութիւն՝ փութացաւ գոյգն գնդաւ խաչակրաց խնդրել օգնութիւն 'ի բնակչաց Կոստանդնուպօլսոյ, ուր թագաւորէր յայնժամ Բաղդուինոս Բ., որում տուեալ իսկ էր կնութեան զմին 'ի դստերաց իւրոց : Եկաց անդ Յովհաննէս 'ի գլուխ տեսչութեան քաղաքին մեծաշուք պատուով 'ի յետին եօթն ամս կայսերուն Լատինացւոց յարևելս, և անդ 'ի փառաւոր իշխանութեանն պանծալի հանդիսացաւ ազգի ազգի և գեղեցիկ բարեմասնութեամբք որ փառս և պատիւ յաճախէին նմա : Որդի էր սա Երարդոսի կոմսին Բրիէննեան, և յանտիական 'ի մանկութ հասակին ստիպեցաւ 'ի հօրէն իւրմէ մտանել յեկեղեցական վիճակ, և առաքեցաւ 'ի մենաստան Կիստերեանց որ 'ի Պայծառաձոր . այլ քանզի բնաւ նորա տեղեակ էր ոչհաճութեան պատանւոյն ընդ այն պայման կենաց, եհան զնա անտի արտաքս : Արդ յետ ելանելոյ 'ի մենաստանէն սկսաւ ցուցանել զարիական քաջութիւն սրտի իւրոյ 'ի կենցաղական գործս և 'ի խաղամարտութիւնս. բայց քանզի ազգականք նորա չէին հաւանեալք ընդ այն՝ հարկեցաւ նպաստուք բարեկամացն սոսկական կեանս վարել. յայնմ աղքատութեան ընկալեալ զխաչ զինուորութեան երթալ 'ի Պաղեստին. և այն ինչ անցեալ յարևելս՝ պանծալի հանդիսացաւ քաջութեամբ և արիական գործովք, մինչև ստանալ իսկ զերկին թագս արքայական իշխանութեան՝ զԵրուսաղեմին և զԿոստանդնուպօլսոյ։

Նորալուրս այս դէպք, որպէս և ամենայն անցք խաչակիր զօրաց, ընդ առասպելս համարէին արդեօք, եթէ 'ի նախնի մատենագրացն ոք գրոշմեալ էր զայնոսիկ 'ի գիր. սակայն այնպէս ստուգապատումք են և հաւաստիք, զի ցարդ և ոչ 'ի մանրագոյնն խուզարկուաց ոք իշխեաց երբէք յերկբայս արկանել։

Քաջազնս այս Յովհաննէս Բրիեննեան զդուստր իւր զժառանգն աթոռոյ թագաւորութեան Երուսաղեմի տուեալ էր կնութեան Փրեդերիկեայ երկրորդի կայսեր Գերմանիոյ. վասն որոյ Փրեդերիկոս յորդորեալ 'ի քահանայապետացն Հռովմայ՝ անց 'ի Պաղեստին, և գաշն խաղաղութեան եդեալ ընդ Մէլէտին սուլտանին, ընկալաւ 'ի նմանէ զԵրուսաղէմ, ուր և զթագ արքայութեան էառ զկողմանցն այնոցիկ, և ապա դարձ արար յԵւրոպա յաղթական փառօք, զի ստացաւ զսուրբ տեղիսն առանց ինչ մարտի և արիւնհեղութեան։

ԳԼՈՒԽ Գ.

Քահանայապետութիւն Իննովկենտիոսի Գ.։ — Չորրորդ ժողով Լատերանու։

ՎՆԱՍՔ եկեղեցւոյ և ապականութիւն բարուց պատճառեալք 'ի խաչակրաց անտի վիշտ մեծ էին քահանայապետին Իննովկենտիոսի Գ., որ ամբարձաւ յաթոռ սրբոյն Պետրոսի յամի տեառն 1198։ Էր սա 'ի Կոնտեան զարմէ, ծնեալ յԱնագնի քաղաք Իտալիոյ, և զառաջինն անուանեալ կոչէր Լոթարիոս կարդինալ, և երեսուն և եօթն ամաց էր յորժամ ընտրեցաւ 'ի քահանայապետութիւն. բարեկիրթ քաղաքավարութիւն նորա, բարոյք սքանչելի և համաձայն իմաստութեան ամբարձին զնա յայն պատիւ, զոր յանձն էառ ակամայ՝ բազում անգամ հակառակ կացեալ արտասուախառն պաղատանօք։ Զընթացս ուսման իւրոյ կատարեաց նախ ՚ի Փարիզ քաղաք, և ապա ՚ի Պոլոնիա, և զարմանալի հանդիսացաւ ՚ի գերազանց վարժս փիլիսոփայութեան և աստուածաբանութեան։ Յերկրորդում ամի յետ օծման իւրոյ ՚ի քահանայապետութիւն ընկալաւ երդումն հաւատարմութեան ՚ի քաղաքապետէն Հռովմայ, և զգեցոյց նմա խիլայ իշխանութեան և կարգեաց հաս պաշտամանն՝ զոր մինչև ցայն դար քաղաքապետն ընդունէր ՚ի կայսերէ, և նմա խոստանայր զերդումն հաւատարմութեան։

Իննովկենտիոս քահանայապետ յառաջին ամի իշխանութեան իւրոյ խնամ կալաւ ՚ի ձեռս բերել զերկիր կալուածոյն, զոր եկեղեցին Հռովմայ յառաջ ժամանակաւ ստացեալ էր յԻտալիա, վանելով անտի զյափշտակիչսն։ Վասն որոյ առաքեաց յայլ և այլ գաւառս նուիրակս բազումս, և ինքն իսկ յայց ել դքսութեան Սպոլետոյի և ՚ի Թոսկանայ։ Զօրացաւ և զինուք ընդդէմ քաղաքաց ինչ, որք նշկահեալ էին զիշխանութիւն քահանայապետին, թէպէտ և չէր իսկ հաճ ընդ այսպիսի զբաղանս արտաքինս։ Յանկարգութիւնս ամենայն որք առ ժամանակօքն զօրացեալ յարքունիս Հռովմայ՝ ՚ի բազում ամաց հետէ ատելի առնէին զայն, էր և զօշաքաղութիւն, որում կարի թշնամի էր քահանայապետս. և առ բնաջինջ բառնալ զայն՝ երիցս յեօթնեկի առնէր ատեան հրապարակաւ, և անդ լսէր ինքնին զվիճս և զգանգատանս ամենեցուն։ Զդատս մանունս յանձնէր այլոց դատաւորաց, իսկ զծանունսն և զկարեւորս սովոր էր ինքնին քննել և որոշել։ Ամենեքին առհասարակ զարմանային ընդ իմաստութիւն նորա և ընդ նրբամտութիւն, որով առնէր զքննութիւն դատիցն, մինչև իրաւագիտաց բազմաց հետաքննին յօժարութ՟ երթալ ՚ի Հռովմ ՚ի լսել և ՚ի տես քննութեան ատենի քահանայապետին։ Ի դատս իւր, զի ոչ ակն առնոյր նա յումեքէ, յետ հասուն քննութեան տայր զվճիռն. վասն որոյ բազում դատք կարևորք և մեծամեծք ելանէին յատեան նորա։ Այսպիսի կարգ և օրինակք դատաստանի 'ի բաղում ժամանակաց հետէ չէին երբէք երեւեալք 'ի Հռոմ:

Ի սկզբան դահակալութեան իւրոյ եդեալ էր 'ի մտի գումարել ընդհանրական սինհոդոս. բայց 'ի պատճառս պատերազմաց որովք տագնապէր մասն ինչ Եւրոպիոյ, հազիւ ուրեմն յետ վեշտասան ամաց մարթացաւ կատարել զխորհուրդս մտացն. զի յելս 1215 ամին գումարեաց 'ի Հռոմ քաղաքի զչորրորդ ժողովն Լատերանու, որ երկոտասաներորդ համարի յընդհանուր սինհոդոս: Էին 'ի ժողովին չորեքհարիւր երկոտասան եպիսկոպոսունք, ութ հարիւր աբբայք և մեծաւորք, լատին պատրիարգունք Երուսաղեմի և Կոստանդնուպօլսոյ, պատրիարգն Մառոնեաց, և զոգցես ամենայն ուղղափառ իշխանք առաքեցին անդր զդեսպանս իւրեանց:

Քահանայապետն Իննովկենտիոս սկիզբն արար բանիցն ըստ այսմ օրինակի. « Ցանկանալով ցանկացայ զայս պասեք ուտել ընդ ձեզ »: Այս մեկնաբանեալ զբառդ պասէք, որ անցք թարգմանի, ամփոփեաց յերիս իմաստս, այսինքն նախ 'ի մարմնաւոր անցս՝ փոխադրութեամբ տեղւոջէ 'ի տեղի, զոր պատշաճեաց ուղեւորութեան 'ի տնօրինական տեղիս. երկրորդ՝ 'ի հոգեւոր անցս վիճակէ 'ի վիճակ 'ի ձեռն բարեկարգութեան եկեղեցւոյ. երրորդ՝ 'ի յաւիտենական անցս 'ի կենաց աստի յերկնային փառս: Ի վերայ այսոցիկ երրակի անցիցս են զոգցես ամենայն բանք այնր ատենախօսութեան, զի և առ ժամանակօքն պիտանիք էին այնպիսիք և կարեւորք յոյժ:

Փոյթ յանձին կալաւ ժողովն հաստատել նախ զվարդապետութիւնս հաւատոյ ընդդէմ մոլորութեանց Բերենգարիոսի և Ալբիգեանց, որք տակաւին չէին 'ի սպառ անհետացեալք. « Մի միայն է, ասէ ժողովն, կաթուղիկէ եկեղեցի, և արտաքոյ նորա չիք փրկութիւն: Քրիստոս է քահանայապետ և պատարագ. մարմին և արիւն նորա են իսկապէս 'ի սուրբ խորհուրդ հաղորդութեան փոխարկութեամբ հացին 'ի մարմին, և գինւոյն յարիւն Քրիստոսի աստուածային արարչագործ զօրութեամբ: Եւ այս խորհուրդ կատարի 'ի քահանայէ ձեռնադրելոյ օրինօք՝ իշխանութեամբ եկեղեցւոյ, զոր Քրիստոս տուեալ է առաքելոց և յաջորդաց նոցին,,։ Յայս ժողով նախ առաջին 'ի կիր առաւ և բառն ՏՐԱՆՍՈՒԲՍՏԱՆՑԻԱՑԻՈՆ, զոր յետ այնորիկ ամենայն ուղղափառ վարդապետք եկեղեցւոյ սկսան 'ի գործ ածել նշանակութեամբ փոխարկութեան հացին 'ի մարմին, և գինւոյն յարիւն, զոր Քրիստոս հրաշագործէ 'ի խորհուրդ սուրբ հաղորդութեան։ ՝Նորահնար բարդութիւն բառիս ընդդէմ ուղիղ կանոնաց լատին բարբառոյ՝ 'ի բացայայտութիւն եւեթ էր ուղիղ դաւանութեանն. որպէս և նախնի հարք ժողովոյն ՝Նիկիոյ վարեցին զբառդ ՀՈՄՈՈՒՍԻՈՆ՝ 'ի խորհուրդ ամենասուրբ Երրորդութեան։

Ժողովն Լատերանու սահմանեաց և ընդդէմ Ալբիգեանց, ՝՝ Եթէ որ զկնի մկրտութեան անկցի 'ի մեղս, կարող է միշտ վերականգնիլ 'ի ձեռն ճշմարիտ ապաշխարութեան,,։ Եւ թէ ՝՝ոչ միայն հրաժարեալքն յաշխարհէ և որք զկուսակրօն կեանս վարիցեն, այլ և ամուսնացեալքն գլխովին եթէ հաճոյ գտցին Քրիստոսի հաւատով և գործովք բարութեան՝ արժանի լիցին յաւիտենական երանութեան,,։

՝Նոյնպէս հերքեալ դատապարտեցան և ցնորք Յովակիմայ աբբայի վասն ապագայ վիճակի եկեղեցւոյ, որպէս և մոլար վարդապետութիւնք նորա 'ի վերայ խորհրդոյ ամենասուրբ Երրորդութեան։

Յետ այնորիկ եղեն և այլ սահմանադրութիւնք 'ի վերայ խորհրդական խոստովանութեան, 'ի վերայ հաղորդութեան աշխարհականաց միով եւեթ տեսակաւ, 'ի վերայ սրբութեան պահելոյ յեկեղեցիս զսուրբ հաղորդութիւնն։ Ի նմին ժողովի սահմանեցաւ զի հաւատացեալք ամենայն՝ գէթ մի անգամ 'ի տարւոջն խոստովան լինիցին զմեղս իւրեանց ժողովրդապետին՝ ընդ որոյ իշխանութեամբն իցեն, և հաղորդեսցին 'ի կենարար խորհրդոյն յաւուր զատկի յարութեան տեառն։ Արգելաւ մի եւս այլ հաստատել նորանոր կարգս կրօնաւորաց, և օրինադրեցաւ նորոգել զմի անգամ հաստատեալսն՝ վերածեալ զնոսա յառաջինն իւրեանց բարեկարգութիւն։

՝Քահանայապետն Իննովկենտիոս Գ. ոչ ժամանեալ տեսանել զարգասիս առաքելաջան վաստակոյն զոր եցոյց 'ի հռչակաւոր ժողովին, վախճանեցաւ յամին 1216, մեծարոյ լեալ յաչս ամենեցուն սակս բարեպաշտութեան իւրոյ և խոհեմութեան։ Չկամեցաւ երբեք վարել'ի պէտս իւր անօթս արծաթիս, և վաճառեաց զկահս պալատանն զաւելորդս, զի 'ի գնոց անտի նոցա նպաստամատոյց լիցի աղքատաց և կարօտելոց. եկաց 'ի քահանայապետութեան զամս ութուտասն և զամիսս վեց։

ԳԼՈՒԽ Դ.

Կագ և կռիւ Փրեդերիկոսի Բ. ընդ քահանայապետս Հռովմայ։

ՈՆՈՐԻՈՍ Գ. հռովմայեցի՝ յազնուական տոհմէ անտի Սաւելլեանց՝ յամին 1216 յաջորդեաց զԻննովկենտիոս Գ.։ Յաւուրս քահանայապետութեան սորա ծագեցան հակառակութիւնք Փրեդերիկոսի կայսեր ընդ քահանայապետս Հռովմայ, որ զառաջինն գոյզն ինչ բանակռուութիւն թուէր, բայց սաստկացաւ յոյժ առ քահանայապետութեամբ Գրիգորի Թ., որ էր յաջորդ և եղբօրորդի Ոնորիոսի, որպէս և նմանող նախանձու և արիութեան նորա։ Ի ժամանակս քահանայապետութեան Գրիգորի պառակտեցաւ Իտալիա յերկուս հերձուածս անուանեալս Կուելփեանց և Կիպելլեանց, յորոց առաջինքն կուսակիցք էին քահանայապետին, և յետինքն կայսեր։

Արդ քանզի Փրեդերիկոս արքայ ուխտիւք խոստացեալ էր երթալ յարեւելս և պատերազմել ընդ անհաւատս, Գրիգոր քահանայապետ ստիպեաց զնա կատարել զուխտն. վասն որոյ Փրեդերիկոսի կեղծեալ դիմել յերկիրն սուրբ՝ եմուտ 'ի նաւ, և յետ դեգերելոյ զաւուրս ինչ 'ի ծովու, կամելով յետս կալ յուղեւորութենէ անտի՝ դարձ արար անդրէն յԻտալիա։ Բայց Գրիգոր քահանայապետ սպառնալեօք նզովից 'ի նեղ էարկ զնա 'ի գլուխ հանել զխոստացեալն. վասն որոյ ուղեւորեալ Փրեդերիկեայ եհաս 'ի Պաղեստին յամի տեառն 1228։ Ընդ լուեալ եթէ Մէլէքին սուլտան Եգիպտոսի բանակեալ կայ առ Գազա քաղաքաւ, առաքեաց առ նա երկուս իշխանս ընծայիւք հանդերձ՝ ծանուցանել նմա զի թէ հաճեսցի տալ կայսեր զԵրուզօրագլխացս միաբանեալ և բազումք յուղղափառ իշխանաց՝ մտին ընդ դրօշու նորա ։

Զորինք առնէր յառաջ քան զձեռնարկելն 'ի մարտ՝ ջանացաւ քարոզութեամբք և յորդորմամբ խրատու յուղղութիւն ածել զմոլորեալս ։ Պետրոս Կաստելնովեցի եպիսկոպոս Կարկասոնի՝ դեսպան քահանայապետին, ուղեկից իւր ունելով զսուրբն Դոմինիկոս, որ հիմնարկու եղաւ ուխտին Խուզարկուաց, և զԱրնալդոս աբբայ Կիստերսեանց, գնացին 'ի Լանկըտոք գաւառ՝ յուղղութիւն ածել զմոլորեալ հերետիկոսս, որք կային ընդ պաշտպանութեամբ Ռայմոնդեայ դքսին Տոլոզայ և սահմանակից իշխանացն ։ քան զի և ինքեանք 'ի ծածուկ յօժարամիտք էին 'ի մոլորութիւնն, և կամ առ քաղաքական ինչ նկատմանց ձեռնտու էին մոլորելոց ։ Ռայմոնդոս տարագիր արար 'ի Լանկըտոքէ զդեսպան սրբոյ քահանայապետին, և առ Ռօդանոս գետով 'ի մտանել դեսպանին 'ի նաւակ անցանել յայնկոյս, ետ սպանանել զնա ։

Սպանութիւնս այս պատճառք եղև ազգի ազգի աղետից ։ զի քահանայապետն Իննովկենտիոս Գ՚ ընդ բանիւ արար զՌայմոնդոս, և յամին 1210 յարոյց խաչակիր զինուորութիւն ընդդէմ նորա ։ Սիմէոն Մոնֆորտեանց զօրագլուխ խաչակրաց եմուտ 'ի Լանկըտոք և տիրեաց բազում քաղաքաց, և յերկիւղէ սաստի զինուց նորա յոլովք 'ի մոլորելոց դարձան յուղղութիւն ։ սակայն անգթութիւն զօրացն Սիմէոնի ահարեկ արար զամենայն բնակիչս ։ Կատաղութիւն խաչակիր զօրաց յանխնայ կոտորումն՝ փոխարէն էր գոյցես յանդգնութեան Ալբիգեանց, որք բաց յայրելոց և 'ի քանդելոց զբազմաթիւ եկեղեցիս ուղղափառաց՝ սպանեալ էին և զյոլովս 'ի նոցանէ, որպէս և զանձինս 'ի մեծատոհմ իշխանաց խաչակիր զինուորութեանն ։ Ի բազմապատիկ պատերազմունսն յայնոսիկ զօրս ետուն ընդ միմեանս՝ անխնայ կոտորածք եղեն յերկաքանչիւր կողմանց, որպէս և սովոր իսկ է առնել դիպել 'ի կրօնական մարտս ։ Բայց սաստկագոյն պատերազմն տուաւ յամին 1213, յորում ամի իբրև կռուակիցքն հերետիկոսաց Պետրոս Թագաւոր Արագոնայ և կոմսն Տոլոզայ, Փուաքսի, Կոմինժէի պաշարեալ էին զՄուրետն քաղաք առ Կարոն գետով, յանկարծ սատանեցան 'ի կոմսէն Մոնփորտեան, որ ութ հարիւր այրուձիով կոտորեաց 'ի նոցանէ քան հազար զօրականս, ընդ որս մեռաւ և Պետրոս թագաւորն Արագոնայ։

Ի մեռանել Ռայմոնդեայ կոմսին Տօլոզայ՝ մականուանելոյ Ծեր (1222), որդի նորա համանուն սկսեցաւ խաղաղել զմրրիկ խռովութեան զյուզեալն ընդդէմ հօր իւրոյ և անձին իւր գլխովին. զի և ինքն ընդ բանիւ արարեալ էր 'ի քահանայապետէն 'ի պատճառս պատերազմին մղելոյ ընդդէմ Ամալրիկոսի որդւոյ երեւելոյն Սիմոնի Մոնփորտեանց, որ եկաց 'ի գլուխ նորոց խաչակիր զինուորութեան։ Այլ յետ ընդ երկար բաղխելոյ ընդ միմեանս 'ի կորզել զմասն ինչ սահմանաց Ռայմոնդեայ զոր գրաւեալ էին Սիմոն և Ամալրիկոս, 'ի վերջէ ուրեմն հաշտեցաւ ընդ եկեղեցւոյ, և արար խաղաղութիւն ընդ որդւոյն Լուդովիկոսի՝ որ պատրաստեալ էր 'ի պատերազմ ընդդէմ նորա։ Այս զմնացուածս կենաց իւրոց անցոյց 'ի պանդխտութեան, կամ լաւ ևս ասել՝ 'ի վէճս և 'ի դիմամարտութիւնս ընդդէմ ատենին խուզարկուաց նորոց հաստատելոյ 'ի Լանկըտոք։

ԳԼՈՒԽ Թ.

Ատեան խուզարկուաց։

ՅԵՏ բազմադիմի հնարից առ 'ի ջնջել 'ի սպառ զաղանդ Վալդեանց և Ալբիգեանց, դեռ ևս կային բազումք 'ի մոլորելոց որ փախստեամբ զերծեալ էին յընդերկար և յարիւնահեղ պատերազմաց անտի, զորս գոյզն բանիւք յիշատակեցաք վերագոյնդ։ Վասն որոյ քահանայապետք Հռովմայ խորհեցան կանգնել ատեան ինչ մասնաւոր, որոյ հոգ և սեպհական խնամք իցեն խոյզ և խնդիր առնել մոլորութեանց հերետիկոսացն այնոցիկ։ Եւ որք միանգամ կարգեցանն 'ի դատաւորութիւն այնր ատենի, անուանեցան Խուզարկուք[1]։ Եւ քանզի սուրբն Դոմինիկոս նախ առաջին կարգեցաւ յայն պաշտօն, նմին իրի Գրիգոր Թ. զինքն մահուան սրբոյն յամին 1239 զայն պատիւ իշխանութեան յանձն առար կրօնաւոր աշակերտաց նորա, որ կոչին Դոմինիկեանք :

---

[1] Ինքուիզիթօռ.

Իննովկենտիոս Դ. յամին 1251 կարգեաց զայս ատեան գոգցես յամենայն գլխաւոր քաղաքս Իտալիոյ՝ բաց 'ի Նէապօլսոյ. ապա յամին 1448 և համօրէն Սպանիա ընկալաւ զատեանն, և ապա (1557) Լուսիտանացիք հաճեցան ըստ օրինակին Սպանիացւոց սահմանել զայն և 'ի գաւառս իշխանութե՟ իւրեանց : Եւ նոյն ժամանակաւ իբր երկոտասան ամօք յառաջ՝ յամին 1545 Պօղոս Գ. կարգեալ էր զայս ժողով խուզարկուաց՝ և անուանեալ զայն Ատեան Սրբազան[1], որ և հաստատեցաւ 'ի Սիքստոսէ Ե. յամին 1588 :

Իշխանութիւն ատենիս 'ի սկզբան անդ էր ջանալ յուղղութիւն ածել զմոլորեալս քարոզութեամբ և հոգևոր հրահանգօք : Այլ թէ այսու օրինակաւ անպտուղ լինէր աշխատութիւն նոցա, յորդոր մատուցանէին իշխանաց և դատաւորաց պատուհասել զմոլորեալսն, որպէս և մահուամբ իսկ կարճել 'ի կենաց զյամառեալսն 'ի մոլորութեան իւրեանց : Ապա տանէին տեղեկանալ և ստուգել զթիւ և զվիճակ հերետիկոսաց, որպէս և զփոյթ նախանձու աստուածպաշտութեան եպիսկոպոսաց և դատաւորաց 'ի պատուհասել զնոսին. զոր և ծանուցանէին քահանայապետին Հռոմայ, և նա ըստ ընկալեալ ծանօթութեանցն դատաստան առնէր՝ որպէս զիարդ արժան և կարևոր համարէր : Իշխանութիւն խուզարկուացս առ փոքր փոքր այնչափ առաւելաւ՝ մինչև ահարեկ առնել և զիշխանս անգամ, որք 'ի յետին դարս գուն գործեցին ջնջել զայն ատեան 'ի Լուսիտանիոյ և 'ի Սպանիոյ, թէպէտ և դատաւորք այնր ատենի խառն էին յեկեղեցականաց և յաշխարհականաց միանգամայն :

Արդ 'ի ցրել զանիրաւ զրպարտութիւնս բողոքակու պարսաւագրաց ատենիս, յաւելցուք աստ և դոյզն ինչ բանս : Եւ նախ առաջին զայն եթէ ամենայն պաշտօնեայք խուզարկուաց ատենին պարտէին լինել այրք ընտիրք վկայեալք 'ի վարս բարիս և յիմաստութեան ։ Երկրորդ՝ ատեան այսր պաշտաման ոչ զոք երբէք արկանէր 'ի բանտ չև քաջ 'ի քննին առեալ զհանգամանս ամբաստանողին, և հաստ լեալ ճշգիւ թէ ընդէր ամբաստան կայցէ նա զընկերն, արդեօք յատելութենէ՞ եկեալ իցէ յայն կամ առ քինալ և կամ յայլ ինչ կրից ․ քանզի և պատուհասք սաստիկ սահմանեալ կային ընդդէմ սուտ ամբաստանողաց ։ Երրորդ՝ յանիրաւի բամբասեն ամենք զառեալս զայս իբրու թէ յանդէտս և անակնկալ բանտարկեալքն առ 'ի նմանէ սխալիցին գուշակել զյանցանսն վասն որոց ամբաստանեցան, որպէս թէ ատեանն անհարցուփորձ դատիցէ ․ այլ ընդ հակառակն՝ թոյլ տային բանտարկելոց կացուցանել զոք հոգաբարձու կամ փաստաբան պաշտպանել զդատ իւրեանց ։ Չորրորդ՝ ոչ ոք 'ի ստորակարգեալ ատենից կարէր դատակնքել զոք 'ի մահ կամ շնորհել ազատութիւն առանց բացայայտ հաճութեան և հրամանաց մեծի ատենին, որ սովոր էր առաքել անդր զմի ոք 'ի խորհրդականացն ։ Եւ հանդէս աւուրն այնորիկ սահմանելոյ յատենէ անտի խուզարկուաց 'ի պատուհասել կամ 'ի թողուլ ազատ զամբաստանեալսն վասն հերետիկոսութեան՝ կոչէր առ նոսա Հանդէս հաւատոյ, զոր ահեղակերպ կատարէին ։ Տանէին զյանցաւորն յեկեղեցի, ուր ընթեռնուին զվճիռ արձակման նորա կամ զպարտաւորութեան ։ Մահապարտքն զգենուին զհանդերձ նմանաձև զգեստու սարկաւագի, յորոյ վերայ նկարեալ կային դևք և բոցք հրոյ ․ ապա ատենակալք սրբազան ատենին մատնեալ զնոսա 'ի ձեռս աշխարհական դատաւորի՝ աղերսէին զնա չհեղուլ զարիւն մեղապարտին ։ Բայց որք միանգամ յամառեալ պնդեալ կային 'ի մոլորութիւնս իւրեանց՝ սովոր էին դատաւորք կենդանւոյն այրել զնոսա յանդիման բազմութեան ժողովրդոց ։ Խստութիւն պատուհասիս բազմաց մեղմացաւ ապա 'ի գթութենէ քահանայապետաց Հռովմայ, վասն որոյ ոչ ևս 'ի կիր առնուն զայս այժմ ։

---

[1] Սանթօֆֆիչիօ :

ԳԼՈՒԽ Ժ.

Հիմնարկութիւն կրօնաւորական կարգաց։

ԴՈՄԻՆԻԿԵԱՆՔ

ՀԻՄՆԱԴԻՐ այսր կրօնի եղաւ սուրբն Դոմինիկոս՝ որ էր սպանիացի յազգէ, և յազնուական տոհմէ անուանի Կուզմանեանց, կանոնիկոս աւագ սարկաւագ եկեղեցւոյն Օսմայի 'ի Հին Կաստիլիա։ Վառեալ սորա աստուածային սիրով և նախանձու փրկութեան ոգւոց, շրջեցաւ ընդ բազում գաւառս Սպանիոյ, և յառաջխաղացութիւն զմեղաւորսն կոչեցեալ՝ դարձոյց 'ի հաւատս ճշմարտութեան զյոլովս 'ի Մաւրիտանացւոց, և տայր զիմեաց 'ի Լանկըտոք յուղղութիւն ածել զԱլբիգեանս հերետիկոսս, զմոլորեալս յուղղափառ կրօնից. և առ 'ի գլուխ հանել զառաքելաջան վաստակին՝ ընտրեաց իւր օգնական ընկերս անձինս նոյնպէս բորբոքեալս նախանձու աստուածպաշտութեան. և տուեալ նոցա կանոն՝ անուանեաց զնոսին Քարոզիչս, զի գլխաւոր նպատակ վիճակի նոցա էր քարոզել, ուսուցանել և դարձուցանել զմոլորեալսն։ Այս կարգ օգտակար գտեալ և 'ի քահանայապետացն Հռովմայ, հաստատեցաւ 'ի ժողովին Լատերանու յամին 1215, նախ առաջին յԻննովկենտիոսէ Գ. որ թէպէտ հակառակ էր նորահնար կարգաց միաբանական վարուց և ցանկայր նորոգել ըզմիանգամ հաստատեալսն, սակայն ստիպեալ, որպէս պատմի, 'ի տեսլենէ անուանի յորում թուեցաւ նմա տեսանել զեկեղեցին Լատերանու 'ի վտանգի կործանման, և զի սուրբն Դոմինիկոս ուսովք իւրով բարձեալ զայն չթողոյր կործանել յերկիր, յօժարեցաւ հաւանել ընդ հաստատութիւն կարգի նորա. զկնի ամաց ինչ վերստին հաստատեցաւ յՈնորիոսէ Գ.։

Թէպէտ և ոչ երկարակեաց եղև սուրբն Դոմինիկոս, սակայն 'ի վախճանել իւրում յամին 1221 յիսուն և մի ամաց, 'ի սակաւ ամս մեծաւ մխիթարութեամբ ետես զբազմանալ աշակերտաց իւրոց, և զհաստատել նոցին բնակութեամբ 'ի Փարիզ քաղաքի։

Գրիգոր Թ. քահանայապետ կարգեաց զնա 'ի թիւս սրբոց յամին 1231: Նշանագն նախանձու աստուածպաշտութեան նորա և քաղցր բարոյք՝ մարդասէր ընտանութիւն և բարերարութիւն առ ամենեսին՝ մեծարոյ և արգոյ զնա կացուցին. վասն որոյ յանիրաւի բամբասեն զնա ոմանք 'ի չարալեզու բողոքականաց վասն նախանձուն որով վառեալն էր 'ի խրատ և յուղղութիւն դարձի հերետիկոսաց:

Ջերմեռանդն էր սուրբն Դոմինիկոս և 'ի պաշտօն սրբոյ Կուսին, և 'ի նմանէ եղև սովորութիւն 'ի սկզբան քարոզից ասելոյ զողջունատրութիւնն հրեշտակային: Նա զի մարթասցի յաւելուլ եռանդն յորդորել զմարդիկ 'ի պաշտօն սրբոյ Կուսին՝ վարժեաց զնոսա 'ի հրահանգս աղօթից վարդարանի, որով հաւատացեալքն իբրև զխաչակիրս զինեցան ընդդէմ մոլորութեանց Ալբիգեանց: Այս ազգ աղօթից՝ թէպէտ և կանուխ ժամանակաւ քան զսուրբն Դոմինիկոս ծանուցեալ էր և արկեալ 'ի կիր, սակայն երանելին առաւել ծաղկեցուցեալ պայծառացոյց զայն, և հաստատեաց ընկերութիւնս բարեպաշտից, որք առանձինն պաշտամամբք պատուէին զհնգետասան խորհուրդսն, յորս հաղորդ գտաւ սուրբ կոյսն Մարիամ: Առաջին հնգեկին տասնկն Խորհուրդք խնդութեան անուանեալք, են Աւետումն, Այցելութիւն սրբոյ Կուսին առ Եղիսաբեթ, Ծնունդ փրկչին, Քառասնօրեայ ընծայումն 'ի տաճարն, և գտանել Մարեմայ զերկոտասանամեայ մանուկն Յիսուս 'ի տաճարին, զի խօսէր ը̄ վարդապետս օրինաց: Երկրորդ մասն կամ հնգեկին տասնկ Ցաւոց և տրտմութեան անուանեալք, են Աղօթել Քրիստոսի 'ի պարտիզին, Չաղկիլ նորա 'ի զինուորաց, Պսակիլն փշովք, Բառնալ զխաչն, Խաչելութիւն և մահ: Երրորդ մասն կամ յետին հնգեկին տասնկ՝ Փառաց անուանեալք՝ իբր յաղթանակք փրկչին և մօր նորա, են Յարութիւնն, Համբարձումն, Գալուստ Հոգւոյն սրբոյ, Վերափոխումն սրբոյ Կուսին, և Փառաւորութիւն նորա յերկինս:

ՓՐԱՆԿԻՍԿԵԱՆՔ

Ի ԺԱՄԱՆԱԿԻՆ յորում սուրբն Դոմինիկոս հաստատէր զկարգ իւր 'ի Գաղղիա, սուրբն Փրանկիսկոս կամ Ֆրանչիսկոս գուն գործէր սահմանել յԻտալիա զկրօնն անուանեալ Կրտսեր եղբարց։ Էր նա որդի վաճառականի ուրումն ասսիզացւոյ, 'ի սահմանաց դքսութեան Սպոլէդոյի։ Սէր և փափաք խստամբեր վարուց յորդորեաց զնա 'ի հասակի քսան և հինգ ամաց թողուլ զհայրենի տուն բնակութե իւրոյ, և ընդ եօթն աշակերտաց փափաքողաց խստամբեր վարուց և ապաշխարողական կենաց նորա՝ մեկուսանալ յաղքատին ինչ յարկ հուպ յԱսսիզի քաղաք, որ եղև նոցա բնակարան առանձնութեան և տուն աղօթից։ Այս ընկալան 'ի Բենեդիկտեան կրօնաւորաց զփոքրիկ աղօթատեղին նուիրեալ սրբոյ կուսին Մարիամու՝ Փորցիունքուլա անուանեալ, որ առաջին օթեւան եկաց Փրանկիսկեան կարգին։

Սուրբն Փրանկիսկոս յաւուր միում ժողովեալ զեօթանեսին աշակերտս իւր, ծանոյց նոցա զխորհուրդս մտաց իւրոց, այս է առանձինն առաքել զնոսա յամենայն կողմանս աշխարհի 'ի քարոզել զապաշխարութիւն. « Ածցուք զմտաւ, սիրելի եղբարք իմ, ասէր ցնոսա, զի Աստուած կոչեաց զմեզ՝ ոչ միայն վասն փրկութեան անձանց մերոց, այլ և վասն այլոց բազմաց։ Շահեսցուք զամենեսին, և այն օրինակաւ վարուց՝ քան թէ բանիւք վարդապետութեան՝ ածել զապաշխարութիւն մեղաց իւրեանց։ Մի զանգիտիցէք եթէ երբեք անգոսնիցիմք 'ի մարդկանէ իբրև տգէտս և արհամարհս, այլ քարոզեցէք զապաշխարութիւն, և աներկեան լերուք՝ եթէ տէրն որ յաղթեաց աշխարհի, նա ինքնին խօսեսցի 'ի ձեզ հոգւովն իւրով։ Արթուն և զգոյշ կացցուք, զի յետ հրաժարելոյ յամենայն իրաց կենցաղոյս՝ մի լիցի մեզ կորուսանել զերկնից արքայութիւն վասն դոյզն մարմնաւոր օգտի։ Իսկ եթէ դէպ լիցի մեզ գտանել ուրեք արծաթ, համարեսցուք զայն իբր հող ընդ ոտիւք մերովք, զոր կոխեմք։ Մի զատեսցուք և մի անգոսնեսցուք զփափկակեացն. Աստուած է տէր և դատաւոր նոցա որպէս և մեր, որ կարող է առ ինքն կոչել զնոսին, և զի նոքա արարածք են՝ վասն որոյ եղբարք և տեարք մեր են, որք ձեռնտու լինին ծառայիցն Աստուծոյ 'ի քարոզել զապաշխարութիւն, տալով նոցա զօրըստօրէն կերակուր։ Իցեն բազումք յաշխարհի արք բարեսէրք և մտերիմք որք խնդութ՟բ ընդունիցին զձեզ, որպէս իցեն և այլք որք թշնամանօք և անարգանօք արհամարհեսցեն զձեզ. այլ դուք փոյթ կալջիք տանել ամենայնի համբերութեամբ և խոնարհութեամբ։ Քաջալերեցարուք և մի երկնչիք, զի յետ սակաւուց բազում ազնուականք և իմաստասէրք գործակից լիցին ձեզ 'ի քարոզել զբանն Աստուծոյ թագաւորաց անգամ և իշխանաց և ժողովրդոց,,։

Սուրբն Փրանկիսկոս ոչ շատ համարեալ զխրախոյս յորդորանացն բանիւ լոկով տանել առ ընկերս իւր, այլ և գործով կամեցեալ ցուցանել զնախանձ փրկութեան հոգւոց, ուղևորեցաւ յերկիրն սուրբ յամին 1219, յաւուրս պաշարմանն Դամիատ քաղաքի, ցանկացեալ ածել 'ի հաւատս զսուլտանն Եգիպտոսի. և 'ի խօսել ընդ նմա սրբոյն՝ պատկառեալ սուլտանին յերեսաց նորա, դարձոյց զնա յետս բազում պատուով և պարգևօք։ Դարձ արարեալ Փրանկիսկոսի յԻտալիա՝ առանձնացաւ 'ի փոքրիկ օթևան ինչ 'ի գլուխ միոյ յԱպեննեան լերանց. ուր հրաբորբոք տեսիլ վեցթևեան սերովբէի, որպէս պատմէ սուրբն Բոնավենտուրա, տպաւորեցան զսպիս վիրացն Քրիստոսի 'ի ձեռս, յոտս և 'ի կող սրբոյն։ Ի սրովբէատեսիլ յայտնութ՟է սորա անուանեցաւ և կարգն Սրովբէական։ Փրանկիսկոս յետ բազմապատիկ ճգնութեանց վախճանեցաւ յամի տեառն 1229 'ի հասակի քառասուն և չորից ամաց, և զսրբութիւն նորա և զառաքինի վարս պայծառացոյց Աստուած ազգի ազգի սքանչելեօք։ Մին 'ի գլխաւոր առաքինութեանց սրբոյն Փրանկիսկոսի էր խոնարհամիտ և պատկառելի համեստութիւն 'ի հպատակել առաջնորդաց եկեղեցւոյ. քանզի 'ի կամել բազմաց յաշակերտացն իւրոց խնդրել 'ի քահանայապետէն զիշխանութիւն քարոզելոյ յամենայն տեղիս առանց խնդրելոյ հրաման յեպիսկոպոսաց, իմաստուն հիմնադիրն շատ համարեցաւ պատասխանի առնել նոցա. « Դուք գործեցայք, ասէ, շահել զիշխանս խոնարհութեամբ եւեթ եւ պատկառանօք, իսկ զժողովուրդն բանիւ եւ օրինակաւ։ Առանձնաշնորհութիւն մեր պարտի լինել չունելն զայնպիսի առանձնական արտօնութիւնս »։

Կարգ Փրանկիսկեանց այնպէս բազմաթիւ էր եւ առ կենդանութեամբ իսկ սորայն, մինչեւ ՚ի նախկին ժողովին վանականն, որ եղեւ ՚ի դաշտին Ասիզեայ յամին 1219, ՚ի համար անկան իբրու հինգ հազար կրօնաւորք, եւ հաստատեցաւ միաբանութիւն նոցա յԻննովկենտիոսէ Գ.։ Սորա առաջինք կային ՚ի կրօնաւորս որք հրաժարեցան ՚ի սպառ յամենայն ստացուածոց կենցաղոյս, եւ արարին զուխտ աւետարանական աղքատութեան։ Կային եւ Չուանաւորք, զի չուանեայ գօտի ածէին ընդ մէջ։ Կրօնաւորքս այսոքիկ ՚ի բազում կարգս բաժանէին ՚ի պատճառս այլ եւ այլ խստամբեր նորոգութեանց, զորոց տեսցես յընթացս պատմութեանս։

ՕԳՈՍՏԻՆԵԱՆՔ

Ի ՍՄԻՆ դարու յետ սակաւ ինչ ամաց հաստատելոյ կարգին Փրանկիսկեանց՝ սահմանեցաւ կարգ անապատաւորաց սրբոյն Օգոստինոսի, որ եղեւ միաբանութիւն ինչ համախմբեալ ՚ի բազմատեսակ անապատականաց, որք ունէին այլ եւ այլ զգեստս եւ կանոնս։ Յաղագս սկզբնաւորութեան կարգի կրօնաւորացս այսոցիկ աւանդեն մատենագիրք՝ թէ սուրբն Օգոստինոս յետ դարձի իւրոյ առ Աստուած եւ գնալոյ յԱփրիկէ, մեկուսացաւ բնակել առանձինն ընդ ընկերաց իւրոց. զայն տեսեալ եւ այլոց բազմաց՝ սկսան վարել եւ նոքեանք անապատական վարս, եւ զսուրբն Օգոստինոս համարէին հիմնադիր իւրեանց։ Յետ վախճանի սրբոյն ՚ի դիմել արշաւեան Վանդալաց յԱփրիկէ, սուրբն Փուլգենտիոս նախանձաւոր աշակերտ սրբոյ եպիսկոպոսին Հիպպոնայ, առեալ զմարմին սրբոյն հանդերձ կրօնաւորօքն եկին ՚ի Սարդենիա, եւ ապա ՚ի կղզւոյ անտի փոխեցան ՚ի գաւառս Իտալիոյ. որով նոյն կարգ պահեցաւ եւ աճեցաւ յանապատաւէր կրօնաւորաց՝ մինչեւ ՚ի ժամանակս Գուլիէլմոսի դքսին

Նկուխանից, որոյ խնամօքն և ջանիւք անապատական բարեկարգութիւնն առաւ յառաջին վիճակ խստութեան կենաց.

Սոյնպէս զհարց և խոյզ սկզբնաւորութիւն և ծագումն այսր կարգի, զի բազում կարծիք և երկմտութիւնք եղեն զայսմանէ առ մատենագիրս, սակայն ստուգագոյն այն է, զի առ քահանայապետաւն Աղեքսանդրի Դ. յամին 1256 այլ և այլ անապատաւորք հրամանաւ նորին քահանայապետի հաւաքեցան ՚ի մի միաբանութիւն ընդ կանոնաւ սրբոյն Օգոստինոսի, և սահմանեցաւ նոցա զգեստ սևագոյն, և կոչեցաւ նոյնն առաջին ընդհանրական մեծաւոր Լանփրանկոս Սեպտալանի Մեդիոլանեցի. Այս կարգ դասի ՚ի թիւս մուրացիկ կրօնաւորաց.

ԳԵՐԵՀԱՆՔ

ԿԱՐԳ և կանոն այսր միաբանութեան, որ կոչի և Կարգ Երրորդութեան, է փրկանաւորել զքրիստոնեայ գերիս ՚ի ձեռաց անհաւատից. Այս գործ մարդասիրութեան և քրիստոնէական սիրոյ լինէր երբեմն ՚ի Սպանիա յերկոտասաներորդի դարու՝ յիշխանաց ոմանց, որք անուանէին Ասպետք փրկանաւորութեան. բայց նախկին առաջնորդ մեծի գործոյս սորա է համարել զայրն Յովհաննէս Մաթայեանց, որ էր ծննդեամբ փաւքոնացի ՚ի սահմանացն Նիցցայի, վարդապետ աստուածաբանութեան ՚ի Փարիզ քաղաքի. Յայս խորհուրդ և ՚ի գործ անզուգական բարեպաշտութեան ձեռնտու եղև նմա և սուրբն Փելիքս Վալեսեանց, որ մենակեաց վարէր կեանս առ Մոյ քաղաքաւ ուր և Գերեհան կրօնաւորքն կալան բնակութիւն.

Յովհաննէս և Փելիքս կամակար մտօք նուիրեալ զանձինս յազատել զքրիստոնեայս գերեալս յանհաւատից, յառաջնում ուղևորութեան իւրեանց զոր արարին ՚ի Մարոկանիա՝ գնոց առին հարիւր ութսուն և վեց գերիս, իսկ յերկրորդում ուղևորութեան ազատեցին հարիւր և տասն անձինս. Յաջորդեցին ուղևորութիւնք նոցա ըստ առաւելութեան սիրոյ բարեպաշտից, որք ինքնայօժար փութով նպաստաւորք եղեն բարե-

նախանձ ջանից երանելեացս այնոցիկ, որք առեալ եւ տարբերաշնորհ արիութեամբ պաշտպան կացին եւ ճշմարտութեան քրիստոնեական հաւատոյ։

Մեծիս այսորիկ եւ բազմաշահ գործոյ յորդոր եւ խրախոյս մատուցին առ հասարակ ամենայն քրիստոնեայք. եւ քահանայապետն Ինովկենտիոս Գ. յամին 1209 հաստատեաց զկարգ եւ զկանոնս, կոչելով զկրօնս Կարգ ամենասուրբ Երրորդութեան։ Ի միջոցս իբր քառասուն ամաց այնչափ բազմացան սոքա, մինչեւ ունել յԱշխարհս աւելի քան զվեցհարիւր վանս բնակութեան։ Զառաւելագոյն աճեցին 'ի Սպանիա, ուր զայնու ժամանակաւ 'ի նեղութեան էին քրիստոնեայք 'ի Մաւրիտանացւոց անտի. 'ի Գաղղիա անուանեցան սոքա Մատուրինեանք, 'ի տեղւոջն անուն՝ ուր կանգնեցին զեկեղեցի իւրեանց 'ի Փարիզ քաղաքի, յորում կայր եւ խորան հանգստեան մարմնոյ սրբոյն Մատուրինոսի։

Նախանձաւոր գտաւ երանելեացս եւ սուրբն Պետրոս Նողասկոս ազնուական Լանկըդոկեցի, որ երբեմն ընկալեալ էր զխաչ զինուորութեան ընդդէմ Ալբիգեանց. սա յամին 1225 'ի սահմանս Թագաւորութեան Արագոնայ հիմնեաց զմիաբանութիւն անուանեալ սրբոյ Կուսին փրկանաց կամ՝ ազատութեան գերեաց, եւ ինքնին տալով օրինակ նախանձու եւ արիութեան՝ գնաց անձամբ յԱփրիկէ եւ զերծոյց զբազումս 'ի բանտարկեալ գերեաց։ Նա յառաջնում եւեթ նուագի չորեքհարիւր գերիս զերծուցեալ առաքեաց 'ի Սպանիա եւ 'ի Սարդենիա։ Կանոնք սորա եւ սահմանադրութիւնք հաստատեցան 'ի Գրիգորէ Թ., եւ փոխանակեցաւ ընդ սրբեալսն յամին 1259, զհասցեալ քաջ ընդ արխային նախանձու ազատութեան գերեաց բերել յանձին եւ զվարս ընտիր կրօնաւորի։

ԿԱՐՄԵՂԱԿԱՆՔ

Այս կարգ սկզբնաւորեալ 'ի ճգնաւորաց զորս 'ի Պաղեստին 'ի վերայ լերին Կարմեղայ, որպէս կանխեցաք ասել վերագոյն, 'ի սմին ժամանակի ընկալաւ հաստատութիւն յԻննովկենտիոսէ Պ. զգեստ սոցա զառաջինն կազմեալ էր 'ի սպիտակ և 'ի սևու ժապաւինաց, այլ նոքա խնդրեցին սոյն յՈնորիոսէ Պ. առնել կրկնոց սպիտակ. փոփոխութիւնս այս եղև յամին 1287. և առ նմին ժամանակս սկսան կրել զուսանոց կամ զփոքրաւոր կախեալ զկրծոց և զթիկանց, որոյ վասն աւանդի լեալ յայտնութիւն 'ի սրբոյ Կուսէն առ երանելին Ստոք կարմեղական անգղիացի, որ եմոյծ յեկեղեցի զջերմեռանդութիւն հանդերձից Աստուածածնի.

Ամենայն կարգք կրօնաւորաց՝ որք եղեն 'ի մէջ եկեղեցւոյ ինքնայորդոր շարժեալք 'ի հոգւոյ բարեպաշտութեան, ծաղկեցան բազումք նախ քան զհաստատութիւն սրբոյ աթոռոյն. վասն որոյ անիրաւ զրպարտութիւն է զոր առեն թշնամիք եկեղեցւոյ, և զկարգս կրօնաւորաց համարին գիւտս քահանայապետաց՝ իբր զի արբանեակս կամ թէ ասել թիկունս հռովմական աթոռոյ սատարին ձեռս.

ԳԼՈՒԽ ԺԱ.

Նոր հակառակութիւնք յաջորդաց Փրեդերիկոսի Երկրորդի ընդդէմ քահանայապետաց Հռովմայ.

ՄԱՀ Փրեդերիկոսի Երկրորդի չբարձ 'ի սպառ զհակառակութիւնն յուզեալս ընդ մէջ կայսերութե և հռովմէական աթոռոյ. զի Կոնրադոս Դ. որդի Փրեդերիկոսի ժառանգ անմեհեր արիութեան նորա և խորհրդոց մտացն, յետ մահու հօրն ամբարձաւ յաթոռ կայսերութեան. Իննովկենտիոս Դ. քահանայապետ խելամուտ լեալ ընդդիմամարտութեան նորա առ խնդիրս սրբոյ աթոռոյն յաղագս խաչակիր զինուորութեան ընդդէմ կայսեր. Կոնրադոս յետ տիրելոյ մասին ինչ Պուլեայ, 'ի խորհելն սպառնանալ զդրաղուս իշխանութեան իւրոյ մեռաւ վաղահաս մահուամբ 'ի զուարթածաղիկ հասակի յամին 1254, թողեալ ժառանգ զմիակ որդին իւր զԿոնրադինոս ։

Յայնու ժամանակաւ Մանփրեդոս անհարազատ որդի Փրեդերիկոսի երկրորդի և եղբայր Կոնրադինոսի, որ կարգեալն էր 'ի տեսչութիւն թագաւորութեան Նէապոլսոյ, սուտ համբաւ հռչակեալ՝ որպէս թէ Կոնրադինոս մանուկն մեռեալ իցէ, թագաւորեաց 'ի Պանորմոն կամ 'ի Փալերմոյ քաղաքի՝ իբր իշխան և թագաւոր Սիկիլիոյ և Նէապոլսոյ ։ Աղեքսանդր Դ. քահանայապետ, որ յաջորդեաց զԻննովկենտիոս Դ., ոչ կամելով համաձայնակից իւր ունել զայնպիսի այր նենգաւոր, զօրս ժողովեալ եդև ընդդէմ Մանփրեդոսի. իսկ նա վրէժխնդիր լինել կամեցեալ այսմ գործոյ քահանայապետին՝ յանդգնեցաւ յաւարի առնուլ զսահմանս եկեղեցւոյ, և զրաւել զկոմսութին Փոնդեայ ։ Ընդ որ զայրացեալ Ուրբանոսի Դ., որ ընդ այն ժամանակս ունէր զաթոռ քահանայապետութեան՝ զկնի Աղեքսանդրի Դ., նզովեաց զՄանփրեդոս, և զթագաւորութիւն նորա շնորհեաց Կարոլոսի եղբօր սրբոյն Լուդովիկոսի արքային Գաղղիոյ յամին 1262 ։

Կարոլոս քաջախորժն 'ի զինուորական հրահանգս՝ յաղթահարեաց զՄանփրեդոս, որ թէպէտ արիաբար ոք էր և ահարկու 'ի մարտի, սակայն սպանաւ 'ի պատերազմին որ առ Բենեւենտ քաղաքաւ յամի տեառն 1266. որով Կարոլոս տիրեաց համօրէն սահմանացն, զորս շնորհեալ էր նմա քահանայապետն Ուրբանոս Դ. ։ Յետ մահուան Մանփրեդոսի Կոնրադինոս կայր հետամուտ լինել այնմ իշխանութեան, ընկալեալ զանուն թագաւորութեան Սիկիլիոյ և եկն յԻտալիա, յորդորեալ առ այն 'ի խռովայոյզ և 'ի յանդուգն ապստամբաց ։

Քահանայապետն Կղեմէս Դ., որ յաջորդեալն էր զՈւրբանոս, կոչեաց զնա 'ի դատ (1265) յանդիմանն լինել ապերախտութեան և ցուցանել օրինօք ատենի զիրաւունս պահանջմանց իւրոց, և ոչ զինուք բռնանալ. բարկանացաւ նմա դարձեալ ընդ բանին առնել զնա եթէ չառնուցու յանձն հպատակել օրինաց և դատաստանաց եկեղեցւոյ ։ Կոնրադինոսի արհամարհեալ զպատգամս քահանայապետին, չանսալով ասէր թէ դատաստան հրռոմէից նպաստաւոր լինելոյ դատին իւրոյ, խոստացաւ զօրօք 'ի Պուլիա քաղաք Լուչերիոյ։ Յայնժամ քահանայապետն եհան նզովս ընդդէմ նորա, յայտ արարեալ զյանդգնութիւն նորա որով կամէր տիրապետել սեպհական սահմանաց եկեղեցւոյ։ Բայց Կոնրադինոսի առ ոչինչ համարեալ զայն ամենայն՝ դիմեաց 'ի Հռոմ, և անտի 'ի սահմանս Նէապօլսոյ. սակայն ոչ յաջողեցաւ նմա անդ 'ի պատերազմին, զի Կարոլոս յաղթեաց նմա առ լճին Փուչինեայ յամին 1268, և կալանաւորեալ զնա 'ի մարտի անդ՝ ետ հատանել զգլուխն 'ի հրապարակին Նէապօլսոյ։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Երկրորդ ընդհանրական ժողով Լուգդունի։ — Հարեանցի միաբանութիւն եկեղեցւոյն Յունաց ընդ Լատինս։

ԻՑԱՄԱՔԵԼՈՅ անտի խաչակիր զինուորութեան Եւրոպէից 'ի անօրինական սուրբ տեղիս՝ ընտելացեալ ընդ միմեանս արևելեայց և արևմտեայց, խնամ կալեալ սէր և միաբանութիւն ընդ միմեանս հաստատել, և բառնալ զկրճիմն հերձուածոյն, որով 'ի քանի մի դարուց հետէ եկեղեցին Յունաց բաժանեալ էր 'ի Լատինացւոց։ Կայսերք Յունաց՝ որք յամին 1261 կորզեալ էին զմայրաքաղաք իւրեանց 'ի Լատինացւոց անտի, 'ի տկարութեան գոլով կարօտ էին օգնականութեան արևմտեան իշխանաց։ Միքայէլ Պաղէոլոգ կայսր տեսեալ զկարևորութիւն պաշտպանութեան նոցա, ջանահնար եղև 'ի ձեռս բերել զայն՝ առաջի արկեալ զխնդիր միաբանութեան և սիրոյ երկոցունց եկեղեցեաց։

Արդ յամին 1271, յորժամ երանելին Գրիգոր Ժ. 'ի Վիսքոնթեան զարմէ՝ ընտրեցաւ քահանայապետ Հռոմայ, յորդոր մատոյց կայսեր Յունաց գուն գործել 'ի գլուխ հանել զխորհուրդ միաբանութեան արևելեայց ընդ արևմտեայս։ Եւ 'ի կամել քահանայապետին 'ի սկիզբն 1274 տարւոյն կատարել զգործն զայն մեծ և կարևոր, գումարեաց ժողով ընդհանրական 'ի Լուգդոն քաղաք, և Միքայէլ կայսր ըստ օրինակի ամենայն իշխանաց Եւրոպայ առաքեաց անդր զդեսպանս իւր։

Գումարեցաւ ժողովն 'ի մայր եկեղեցւոջ սրբոյն Յովհաննու, ուր գտան հինգ հարիւր եպիսկոպոսունք, եօթանասուն աբբայք, և իբր հազար մեծարոյ և պատուական երիցունք։ Քահանայապետն նախագահ այնր սինհոդոսի՝ բազմեալ 'ի բարձրաւանդակ գահի քահանայապետական զգեստուք, առընթեր ունելով և զյոգունս 'ի կարդինալաց, առաջի արար զերեսին պատճառսն՝ որոց վասն գումարեալ էր այն ժողով, այն էր նախ 'ի բարեկարգութիւն վարուց, երկրորդ՝ 'ի ժամանել յօգնութիւն պանդխտելոյն 'ի անօրինական սուրբ տեղիս, և երրորդ՝ 'ի միաբանել ընդ եկեղեցւոյն Յունաց։

Յայս յետին առաջարկութիւն, յոր սակս եկեալ իսկ էին դեսպանք Յունաց, միաբան սիրով և յօժարական ձեռն եղին զաւանութեան հաւատոյ զոր քահանայապետն մատուցանէր. և 'ի հաստատութիւն բանիցն ածաւ 'ի մէջ և նամակ ինչ ստորագրութեամբ քսան և վեց մետրապօլտաց Ասիոյ, յորում յայտ առնէին զհաճութիւն իւրեանց և զհպատակութիւն առ խնդիրսն որք մինչև ցայնժամ պատճառք եղեն բաժանման երկուց եկեղեցեաց։

Յետ կատարման ժողովոյն ոմանք 'ի դեսպանաց Յունաց դարձան յետս 'ի Կոստանդնուպօլիս. և 'ի հնչել համբաւոյ միաբանութեան՝ ժողովուրդն առ հասարակ և ոմանք 'ի կղերց սկսան անգոսնել զմիաբանութիւնն՝ պատճառս զայն համարեալ տապալելոյ քրիստոնէական հաւատոյ։ Միքայէլ կայսր, որ 'ի ձեռն միաբանութեան ցանկայր օգնականութեամբ արեւմտեան իշխանաց յառաջ պահել զաթոռն կայսերական, կամ գէթ աներկիւղ լինել յարշաւանաց անտի Թշնամեաց, պատուհասակոծ արար զամենեսին որք միանգամ հակառակէին այնմ սիրոյ և միաբանութեան։ Բայց խրոխտութիւն պատուհասից նորա առաւել ևս զայրացոյց զժողովուրդն 'ի հակառակութիւն, մինչև լնուլ զԿոստանդնուպօլիս բազմապատիկ երգիծական զրուածովք ընդդէմ կայսեր։

Յայնմ ժամանակի՝ յետ իբր երկուց ամաց ժողովոյն

Լուգդունի 'ի սկիզբն ամին 1276 վախճանեցաւ Գրիգոր քահանայապետ. և սակաւօրեայ կենօք 'ի նմին ամի յաջորդեցին զնա Իննովկենտիոս Ե, ապա Ադրիանոս Ե և յետոյ Յովհաննէս ԻԱ։ Ապա յամին 1277, ընտրեցաւ Նիկողայոս Գ, որ յերկրորդ ամի իշխանութեն իւրոյ և զայլ դեսպանս Յունաց արձակեաց յետս 'ի Կոստանդնուպօլիս առ Միքայէլ կայսր, ուղեկից առնելով նոցա և չորս լատին կրօնաւորս իբր դեսպանս իւր առ 'ի լրումն ածել զդաշն միաբանութեան սահմանեալ 'ի ժողովն Լուգդունի։

Արդ լատին դեսպանացն այնուցիկ ժամանեալ 'ի խռովայոյզ ժամանակին, և տեսեալ զշփոթս խռովանէր անձանց՝ ստիպեցին զՅոյնս ուղղագրել զդաւանութի հաւատոյ իւրեանց, յաւելեալ 'ի նմա և զբանս և յօդուց։ Միքայէլ կայսր դժկամակեցաւ յոյժ ընդ այն, զի իբր քան եօթն ամօք յառաջ 'ի խօսելն վասն միաբանութե ընդ Լատինս, Իննովկենտիոս Դ թոյլ տուեալ էր Յունաց երգել զՀանգանակն ըստ նախնի սովորութեան իւրեանց. վասն որոյ կասկածեալ կայսեր՝ թէ 'ի ջանալն հաճել զկամս քահանայապետին անկցի 'ի վտանգ աղմկայոյզ ապստամբութեան հասարակաց, չէառ յանձն այլայլել զՀանգանակն որպէս կամէին Լատինք. վասն որոյ հարկեցան դեսպանքն դառնալ յետս 'ի Հռովմ, և քահանայապետն Նիկողայոս Գ բանիւ արար զՄիքայէլ կայսր իբր կուսակից նախնի հերձուածոյ և մոլորութեան. և արգել զամենայն Թագաւորս և զիշխանս և զհամօրէն ուղղափառ ժողովուրդս չառնել ընդ նմա ընտանութիւն և մի դաշնադիր լինել ցորչափ կացցէ և մնասցէ նա 'ի նզովս։

Յաջորդն Նիկողայոսի Մարտինոս Դ քահանայապետ նորոգեաց զնզովսն, որ և տևեաց մինչև ցամ տեառն 1283, յորում Միքայէլ կայսր մեռաւ տագնապեալ յոյժ 'ի վշտաց և 'ի ցաւոց սրտին, զի ատելի և արհամարհ կացոյց զանձն յաչս Յունաց 'ի ստիպելն զնոսա մտանել 'ի գոգ սուրբ եկեղեցւոյ. և զի անհաճոյ գտաւ դարձեալ և Լատինացւոց՝ պահանջելով 'ի նոցանէ զբազմապատիկ թուլութիւնս 'ի գլխացուցանել զհնարս միաբանութեան ընդ հերձուածողս։

Անդրոնիկոս Բ որդի նորա և յաջորդ՝ պատրեալ 'ի մոըղտամիտ նախանձաւորաց՝ զրկեաց զվախճանեալն յարքայավայել յուղարկաւորութենէ, և ունայնացոյց զաշխատութիւնս նորա ՚ի ջնջել զհերձուածն ՚ի միջոյ։ Ընկէց յաթոռոյ և զպատրիարգն Յովհաննէս, որ յօժարամիտ էր և ձեռնտու միաբանութեան, և փոխանակ նորա կացոյց վերստին զՅովսէփ, որ հակառակ գոլով այնմ միութեան՝ աքսորեալ էր ՚ի հօրէ իւրմէ։

Ընդունայն եղեն ամենայն ջանք Միքայելի կայսեր և պատրիարգին Յովհաննու ՚ի միաբանել զեկեղեցին Յունաց ընդ Լատինացւոց. վասն որոյ և այլ ամենայն արևելեան եկեղեցիք կային մնային զատեալ ՚ի հերձուածս իւրեանց, բայց ՚ի սակաւաթիւ անձանց ոմանց որք յամենայն ազգաց ընդ ժամանակս ժամանակս ծանուցեալ զճշմարտութիւնն՝ հպատակեցան սրբոյ աթոռոյն։

Նոյնպէս և առաջարկութիւն խորհրդոյ ժողովոյն վասն խաչակիր զինուորութեան յազատութիւն անօրէնական սուրբ տեղեաց՝ մնաց անգործ և անպտուղ. զի Գրիգոր Ժ. քահանայապետ վախճանեցաւ յամին 1276, իսկ յաջորդք նորա ոչ ինչ փոյթ յանձին կալան ՚ի գլուխ հանել զխորհուրդ փափաքանաց նորա. վասն որոյ յերկրորդում յայնմիկ լուգդունեան ժողովի կանոնք ինչ ևեթ սահմանեցան ՚ի բարեկարգութիւն եկեղեցւոյ։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Կաթուղիկոսունք և վիճակ եկեղեցւոյն Հայոց։

Ի ՍԿԻԶԲՆ երեքտասաներորդի դարու յետ վախճանելոյ Գրիգորի կաթուղիկոսի Ապիրատն կոչեցելոյ յամին 1202, կալաւ զաթոռն Յովհաննէս Ը., արքեպիսկոպոս Սսոյ, մականուանեալն Մեծաբարոյ։ Բայց եպիսկոպոսունք փոքուն Հայոց՝ որպէս և Շիրակացիք անհաւան գտեալ ընտրութեանն, կացուցին ընդ նորա երկուս կաթուղիկոսունս. առաջինքն զԱնանիա եպիսկոպոս Սեբաստիոյ, և Շիրակացիք զԲարսեղ անեցի։ Ընդ այն ժամանակս Լևոն արքայ Հայոց գժտեալ ընդ Յովհաննու կաթուղիկոսի, յետ տարւոյ միոյ ընկէց զնա յիշխանութենէն, և ետ ընտրել զԴաւիթ Գ. Արքակաղնեցի, որով եղեն չորք կաթուղիկոսունք. բայց զկնի երից ամաց մեռաւ Դաւիթ կաթուղիկոս, նոյնպէս վախճանեցաւ ՚ի նմին ամի և Անանիա առանձինն կաթուղիկոս փոքուն Հայոց. և զի Յովհաննէս կաթուղիկոս հաշտեալ էր ընդ Լեւոնի արքայի, վասն որոյ վերստին հաստատեցաւ յաթոռ կաթուղիկոսութեան, և եկաց յիշխանութեանն ընդ ամենայն զամս ութուտասն.

Յաւուրս կաթուղիկոսութեան Դաւթի՝ յամին 1204, ՚ի խնդրոյ Զաքարէ սպասալար իշխանին Հայոց՝ ազգային ժողովով սահմանեցաւ փոխել զշարժական սեղան պատարագի ՚ի բանակս զօրաց. Յայս սակս առաքեցան առ Զաքարէ իշխան քահանայք և սարկաւագունք հանդերձ ամենայն հանդերձանօք պաշտաման պատարագի. և անդ ՚ի մեծի հանդիսին Խաչատուր վարդապետ Տարոնացի յօրինեաց զկարգն զգեստաւորութեան ՚ի սկիզբն պատարագի զԽորհուրդ խորին, որ ցարդ եւս վարի ՚ի պաշտամունս հայաստանեայց եկեղեցւոյ.

Կոստանդին Ա. Բարձրբերդցի՝ ՚ի մեռանել Յովհաննու Զ. նստաւ յաթոռ կաթուղիկոսութեան յամին 1220. Էր սա այր խնամոտն և հոգեջան ՚ի բարեկարգութիւն ազգին, վասն որոյ յամին 1243 արար զժողով ազգային ՚ի Սիս քաղաքի. և զսա զսահմանեալ կանոնս ժողովոյն առաքեաց ՚ի վերին Հայս, առնուլ յառաջնորդաց նոցա հաճութիւն հաւանութեան երդմամբ և ձեռնագրովք ՚ի գործ դնել զկանոնսն զայսոսիկ.

Ի նմին ժամանակս յամի տեառն 1248 եկն դեսպան ՚ի քահանայապետէն Հռովմայ յԻննովկենտիոսէ չորրորդէ, և եբեր ընդ իւր նամակ առ Հեթում թագաւոր և առ Կոստանդին կաթուղիկոս, յորում քահանայապետն խնդրէր պատասխանի առնել ամբաստանութեանցն եղելոց զեկեղեցւոյն Հայոց. Ի լուծումն հարցուածոց քահանայապետին հաւաստի բանիւք և անկեղծ մտօք պատասխանի ետուն Հայք, յայտ արարեալ թէ, ամենայն մասունք ուղղափառ հաւատոյ ամբողջ և անվրէպ պահին յեկեղեցւոջ Հայոց. Իսկ արարողութիւնք պաշտամանց եկեղեցւոյ, յորս չէք ինչ ընդդէմ հաւատոյ և բարի վարուց՝ ’ի նախնի սովորութենէ ազգիս պահին անխախտ, և չէ հնար փոփոխումն առնել ’ի նոսին։ Զկնի երկուց ամաց այսր պատասխանատուութեան՝ յամին 1250 վերստին եհաս այլ նամակ ’ի նոյն քահանայապետէն առ Կոստանդին կաթուղիկոս և առ Հեթում թագաւոր, յորում խնդրէր զդաւանութիւն ազգին Հայոց յաղագս բղխման Հոգւոյն սրբոյ ’ի Հօրէ և յՈրդւոյ։ Զխնդիր քահանայապետին առաջի արար կաթուղիկոսն ազգային ժողովոյ ’ի Սիս քաղաքի, ուր համօրէն եպիսկոպոսունք և վարդապետք հաւանեալ ընդ ճշմարտութ՟ի այնր դաւանութեան՝ գրեցին և առ առաջնորդս մեծին Հայոց որպէս և առ եպիսկոպոսունս և իմաստուն վարդապետս այնց կողմանց՝ ծանուցանել նոցա զխնդիր քահանայապետին։ Իսկ նոքա միաբան խորհրդով և քննութեամբ հաստատելով զճշմարտութիւն իւրայն, գրեցին առ կաթուղիկոսն զհաւանութիւն իւրեանց ընդ ուղիղ դաւանութիւնն. վասն որոյ և Կոստանդին կաթուղիկոս գրեաց պատասխանի առ քահանայապետն, թէ և եկեղեցին Հայոց համաձայն Լատինաց ընդունի և դաւանէ զբղխումն Հոգւոյն սրբոյ ’ի Հօրէ և յՈրդւոյ։ Նոյն ուղղափառ վարդապետութեան ազգու և զօրաւոր և սքանչելի բանիւք պաշտպան եկաց Յովհաննէս վարդապետ Վանական. զորմէ լիցին դաւձեալ բանք ’ի կարգս եկեղեցական մատենագրաց։ Նոյն Կոստանդին կաթուղիկոսի յայսպիսի հոգևոր վաստակս զբաղեալ՝ վախճանեցաւ զկեանս ’ի խոր ծերութեան յամին 1267, կացեալ ’ի հայրապետութեան զամս քառասուն և եօթն։

Յակոբ Բ. Տարօնացի ընտրեցաւ կաթուղիկոս յամին 1268, և նստաւ ’ի Հռոմկլայ, վասն որոյ կոչեցաւ և Կլայեցի։ Նա զի այր իմաստուն էր և հրահանգեալ ’ի վարժս ուսմանց, յօրինեաց ձայնս և զշարական ծննդեան կուսին [illegible]։ Փոյթ յանձին կալաւ օգտի և բարեկարգութեան հօտին. վասն որոյ ետ գաղափարել բազմաթիւ օրինակս ընդհանրական թղթոց սրբոյն՝ Ներսեսի Շնորհալւոյ, և առաքեաց ընդ ամենայն տեղիս առ առաջնորդս ժողովրդեան ընթեռնուլ յաճախ և պահել զխրատսն ։ Մախճանեցաւ յամին 1287 , կացեալ 'ի հայրապետութեան զամս ինն և տասն ։ Յաւուրս սորա յամին 1272 յայտնեցան նշխարք սրբոյն Ներսէսի մեծի 'ի Թիլն աւանի . վասն որոյ Լևոն արքայ Հայոց կառոյց հոյակապ եկեղեցի յանուն սրբոյն , և Յովհան վարդապետ երզնկացի յօրինեաց զշարականն " Որ զլոյս անճառ շնորհաց „ և այլն , ուր յիշատակի յայտնութիւն նշխարաց սրբոյն ։

Կոստանդին Բ. արքեպիսկոպոս Կեսարիոյ՝ մնեալ և վարժեալ 'ի Սիս , յորմէ կոչեցաւ Սսեցի , նստաւ յաթոռ կաթողիկոսութեան յամին 1287 , բայց յետ երից ամաց 'ի գժտել իւրում ընդ թագաւորին Հեթմոյ՝ ընկեցաւ յաթոռոյ ։

Ստեփաննոս Դ. յԵկեղեաց գաւառէ՝ ընտրեցաւ կաթողիկոս փոխանակ Կոստանդեայ յամին 1290 ։ Նա զի 'ի մանկութենէ մնեալ էր 'ի Հռոմկլայ՝ անուանեցաւ Հռոմկլայեցի , և վերջին եղաւ 'ի կաթողիկոսունս՝ որք նստան 'ի Հռոմկլայ ։ Զի յաւուրս սորա յամին 1293 յաւարի առաւ կաթողիկոսարանն 'ի բռնաւորէն Եգիպտոսի , և գերեցան ընդ կաթողիկոսին և ամենայն սպասք եկեղեցւոյ , որպէս և աջ սրբոյ Լուսաւորչին . բայց 'ի պատուհասիլ բռնաւորին յԱստուծոյ՝ դարձոյց յետս զամենայն սպասս և զսուրբ աջն գերելովքն հանդերձ ։ Ի դառն վշտաց անտի վտարանդութեան վտանգեալ Ստեփաննոսի կաթողիկոսի վախճանեցաւ 'ի պանդխտութեան՝ կացեալ 'ի հայրապետութեան զամս չորս ։

Գրիգոր Է. Անաւարզեցի ընտրեցաւ կաթողիկոս յամին 1294 ։ Եւ զի աւերեալ էր Հռոմկլայ , նստաւ 'ի Սիս քաղաքի , յորմէ կոչեցաւ Սսեցի ։ Սա քանզի հակամէտ էր 'ի ծէսս պաշտամանն եկեղեցեացն Յունաց և Լատինացւոց , եղև քրթմնջիւն մեծ զնմանէ յազգին , մինչև արևելեան վարդապետաց ժողովական թղթով գրել առ նա զգուշանալ 'ի նորաձևութեանցն . և հակառակախիրայն ամենեցուն զայրացեալ ընդ այս գործ կաթողիկոսին , սկսան զխմախոսել դաւանութեան և աւանդութեանց այլոց ազգաց . սակայն և այնպէս ոչ ինչ զրդուեցաւ նա 'ի խորհրդոց մտացն , այլ 'ի խաղաղել սակաւիկ մի աշխարհին Կիլիկիոյ յամին 1305 , ժամ դիպաւոր համարեցաւ 'ի գլուխ տանել զխորհեալն, այս է բարեկարգել զեկեղեցի Հայաստանեայց, և փոփոխել զարարողութիւնս նոյն ազգին. վասն որոյ գրեաց թուղթ առ արքեպիսկոպոսունս և առաջնորդս մեծին Հայաստանի. սակայն երկպառակութի և խռով մեծ յարեաւ յազգին սակս այսցին իրաց ։ Եւ 'ի կամել իւրում գումարել ժողով ազգային յորոշումն առաջարկեալ իրաց, վախճանեաց զկեանս յամին 1306, կացեալ 'ի հայրապետութեան զամս չորեքտասան ։ Սակայն Լևոն արքայ Հայոց կամելով կատարել զկամս հանգուցելոյ կաթուղիկոսին, ետ գումարել ժողով յարքայանիստ քաղաքն 'ի Սիս, ուր գտան քառասուն և մի եպիսկոպոսունք, տասն ականաւոր վարդապետք, եօթն վանահայրք, բազում երիցունք և արեգայք, ընդ որս և թագաւորն հանդերձ բազում իշխանօք ։ Յայսմ ժողովի ընթերցեալ զնամակ դաւանութեան Գրիգորի Անաւարզեցւոյ, սահմանեցին կանոնս նոյն, և սոքա միաձայն հաւանութեամբ ընտրեցին յաթոռ կաթուղիկոսութեան զտէր Կոստանդին Բ. զարքեպիսկոպոսն Կեսարիոյ՝ զմերժեալն 'ի կաթուղիկոսութենէ յամին 1290. զորմէ ասասցուք 'ի յաջորդ դարու ։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Եկեղեցական մատենագիրք ։

ՅԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴԻ դարու թէպէտ և ոչ կացին ընտիր մատենագիրք, սակայն ճոխացաւ յոյժ դարս դպրոցական ուսմամբ աստուածաբանութեան, զոր հանդիսացուցին առաւելապէս Դոմինիկեան կրօնաւորք ։ Եւ 'ի նոցանէ մեծն Աղբերտ եպիսկոպոս Ռատիսպոնայ քաղաքի՝ վախճանեալն յամին 1280 'ի հասակի ութսուն և եօթն ամաց, պանծալի հանդիսացաւ բազմադիմի գրաւոր երկասիրութեամբքն՝ որք տպագրեցան յամին 1651 'ի քսան և մի հատորս մեծադիր ։ Ականաւոր ընտիր էր նա վարուք և եպիսկոպոս սրբակրօն, թէպէտ և չհամարի 'ի դասս ականաւոր մատենագրաց ։

Սուրբն Թովմաս ագուինացի՝ աշակերտ մեծին Աղբերտի, որդի էր Լանտուլփոսի կոմսին Ագուինոյ, և փափաքեալ միանձնական կենաց՝ մեկուսացաւ առ Դոմի-

նիկեան կրօնաւորս . վարժապետ կացեալ աստուածաբանութեան՝ պանծալի փառօք 'ի գլուխ տարաւ զպաշտօնն, և բանք նորա իբրև պատգամք յաստուածակոյս կողմանէ՝ այնպէս արգոյ էին կրօնակցացն ։ Կամակար հրաժարեցաւ յարքեպիսկոպոսութենէ՝ Նէապօլսոյ, զոր կամէին տալ նմա, և վախճանեցաւ յամին 1274, 'ի գնալ իւրում 'ի ժողովն Լուգդոնի ։ Աքանչելի խոնարհութիւն, խստամբերութիւն և իմաստութիւն մեծ միաբանակ փայլէին 'ի նմա ։ Բովանդակութիւն աստուածաբանութեանն զոր գրեաց, և վասն որոյ 'ի Պիոսէ հինգերորդէ անուանեցաւ Հրեշտակային վարդապետ, մինչև ցայժմ հիմն է դպրոցական աստուածաբանութեան ։ Ի հանգամանաց ժամանակին իւրոյ ստիպեալ հարկեցաւ հետևել դպրոցական ոճոյ այնր դարու, որպէս և հետազօտութեան խնդրոց ինչ՝ զորս յետին աստուածաբանք աւելորդս և անօգուտս համարին ։ Յօրինեաց զպաշտամունս աղօթից ամենասուրբ խորհրդոյ հաղորդութեան, զի և յայսմ դարու յՈւրբանոսէ Դ. ըստ առաջարկութեան սրբոյն Թովմայի հաստատեցաւ մեծահանդէս տօն մարմնոյ և արեան տեառն ։

Վինկենտիոս եպիսկոպոս Պովէ քաղաքի՝ մատենագրեաց զընդհանուր պատմութիւն ինչ Հայելի հանրական անուանեալ . սակայն ուրեք ուրեք ստերիւրի 'ի ճշմարտութենէ, զի ընդ հաւաստի անցից և զանհաւաստիս խառն դրոշմէ ։

Հուգոն կարդինալ մեկնաբան սուրբ գրոց, որ առաջին յօրինեաց զհամաբարբառ բառարան աստուածաշունչ մատենից ։

Հայմնդոս գրեաց զմատեանն Պաշտնակ հաւատոյ անուանեալ, և ներհուն հմտութեամբն համբաւաւոր հանդիսացաւ քան զամենայն մատենագիրս այնր դարու ։ Եւ նա 'ի դոմինիկեան կարգէ, որպէս և նախայիշատակեալքն ամենեքին ։

Այլին մատենագիրք ոմանք և 'ի Կրսեր անուանեալ եղբարց փրանկիսկեանց, յորոց միջի ականաւոր քան զամենեսին է սուրբն Բոնաւենտուրա՝ ծնեալ 'ի Թոսկանա յամի տեառն 1221, որ զարմանալի սրբութեամբն և պերճ գիտութեամբ յաճախեաց պարծանս իւրում կրօնի, և հանրական կարգապետ եկաց կրօնաւորացն այնոցիկ ։ Նոյնպէս զարդարեալ էր խորին խոնարհութեամբ, զի յորժամ 'ի Գրիգորէ Ժ. ամբարձաւ 'ի պատիւ կարդինալութեան, աւետաւորն նմին 'ի քահանայապետէն՝ եգիտ զնա 'ի խոհանոցին զի լուանայր ամանս սկաւառակս աղտեղիս ։ Կղեմէս Դ. կամեցաւ ամբառնալ զնա յարքեպիսկոպոսութիւն Եորք քաղաքի, այլ նա չէառ յանձն ։ Վախճանեցաւ յամին 1274 'ի ժողովն Լուգդունի, և անուանեցաւ Սրովբէական վարդապետ ։ Ի հոգելից բարեպաշտական գիրս իւր տեսանի օծումն ինչ անհամեմատ քաղցրութեան բանից, վասն որոյ դասի 'ի կարգս ընտիր վարդապետական մատենագրաց ։ Սակայն 'ի գրուածս նորա գտանին ինչ ինչ բանք պատմականք զվարուցն Քրիստոսի, որք չեն քաղեալք յաւետարանէ, վասն որոյ և դժպհիք մարթ լսելեաց ։ Հաւաքումն մատենից նորա տպագրեցաւ 'ի Վենետիկ յամին 1741 — 46, բովանդակի 'ի չորեքտասան քառածալ հատորս ։

Աղեքսանդր Հալէս կրօնաւոր փրանկիսկեան՝ Վարդապետ կամ Ուսուցիչ անդրդուելի անուանեալ, որ վարժապետ եղաւ սրբոյն Բոնաւենտուրայի ։ Կոչէր դարձեալ և Աղբիւր կենաց, Պարծանք գիտնոց և Ծաղիկ փիլիսոփայից ։ Սակայն վասն բարեկրօն գնացիցն սորա է մանաւանդ քան թէ գիտութեամբն, զի երկասիրութիւնք նորա են ըստ անհարթ ոճոյ այնր ժամանակի ։

Սուրբ Անտոն լուսիտանացի, որ և պատուացի, մեկնարան սուրբ գրոց, և անխոնջ քարոզիչ բանին Աստուծոյ, որ հրաշագործ նշանօք և հոգեբուղխ վարդապետութեամբն 'ի շահել զայլս՝ ստացաւ զանուն և զարդիւնս սքանչելագործութեան 'ի սահմանս Պատաւինի քաղաքի, վասն որոյ և կոչեցաւ Պատուացի ։

Գուլիելմոս Դուրանդոս եպիսկոպոս Մենդեայ՝ մականուանեալն Հետաքննին՝ վասն գրոյն, որում եդ անուն Հայելի իրաւանց, և այս մատեան նորա ժամանակս ոչ սակաւ խորհրդատու էր կանոնագիտաց ։

Յովհաննէս Վեկկոս պատրիարգ Կոստանդնուպօլսոյ, գոլով յաւուրս Միքայէլի կայսեր Յունաց՝ և յօժարամիտ 'ի միաբանել զՅոյնս ընդ եկեղեցւոյն Լատինացւոց, եթող զանազան գրուածս զօրաւորս ընդդէմ մոլորութեանց Յունաց ։

Գուլիէլմոս Սէնթամուրեան՝ վարդապետ Ճեմարանին Փարիզու. համբաւաւոր հանդիսացաւ 'ի պատճառս պաշտպանութեան իրաւանց միաբանութեան իւրոյ ընդդէմ մուրացիկ կրօնաւորաց՝ որոց 'ի գլխի հարաւ բուռն ատելութեամբ. բայց եղեւ իւր դիմամարտս զսուրբն Թովմաս ագուինացի եւ զսուրբն Բոնաւենտուրա, որք զօրաւոր փաստիւք հերքեցին զբանս նորա.

Ի մէջ ամենայն վարդապետացն Փարիզու բազմագիւն հանդիսացաւ Ռոբերտոս՝ Սորբոն կամ Սորբոնեան անուանեալ, 'ի գեղջէ անտի ուր ծնաւ նա հուպ 'ի Սէնս. Պոզգես ամենայն երկասիրութիւնք մատենագրաց ժամանակին թաղեցան ընդ մոռացութեամբ, եւ Ռոբերտոսին եւեթ կացին մնացին 'ի պարծանս քրիստոսական կրօնի. Յամին 1253 հիմն արկ դպրոցին, որ յիւր անուն Սորբոն կոչի, եւ նախ դիւրացոյց աղքատաց զուսումն աստուածաբանական. Եղ 'ի մտի եւ յաջողեցաւ կանգնել ընկերութիւն ինչ եկեղեցականս, որք միաբանական կենօք անդորր յաշխարհային հոգոց՝ ետուն զանձինս յուսումն գիտութեանց եւ 'ի վարժել զայլս ձրի ամենեքին. Սորբոնեան միաբանութիւնն հաստատեցաւ 'ի սրբոյ աթոռոյն, եւ ճոխացաւ առանձնական նպաստիւք սրբոյն Լուդովիկոսի արքային Գաղղիոյ, զի Ռոբերտոս ժամարար էր նորա եւ խոստովանահայր.

Ի մատենագիրս Հայոց համբաւաւոր հանդիսացան յայսմ դարու Յովհաննէս վարդապետ Վանական տաւուշեցի, աշակերտ Մխիթարայ Գօշի, ծաղկեալ խստութեամբ եւ սրբութեամբ. Գրեաց ժողովական նամակ յաղագս բղխման Հոգւոյն սրբոյ 'ի Հօրէ եւ յՈրդւոյ՝ ուր տեսութեամբ եւ այլով բանիւք հանդերձ վկայութեամբ հարց սրբոց, եւ վախճանեցաւ եօթանասնամեայ յամի տեառն 1251. Ի յորդորելոյ սորին Վանական վարդապետի Տէր Իսրայէլ յօրինեաց զՅայսմաւուրս իւր.

Կիրակոս վարդապետ գանձակեցի աշակերտ Յովհաննու Վանական վարդապետի, վախճանեալ յամին 1271. Գրեաց զպատմութիւն Հայոց 'ի սրբոյ Լուսաւորչէն մինչեւ ցաւուրս իւր՝ պարզ եւ անպաճոյճ բանիւք.

Վարդան վարդապետ բարձրբերդցի՝ աշակերտ Վանական վարդապետի, գրեաց զընդհանուր պատմութիւն համառօտ բանիւ, որպէս և զմեկնութիւն սաղմոսացն Դաւթի և մեկնութիւնս ինչ գրոցն Մովսէսի, Երգոցն Սողոմոնի, և մարգարէութեանն Դանիէլի։ Սորա են յօրինուածք և չքնաղ շարականքն, «Որ նախնեաց», «Ի յանսահման ծովէն», և «Որք զարդարեցին»։

Վահրամ վարդապետ ատենադպիր Լևոնի արքայի։ Գրեաց ոտանաւոր բանիւ զպատմութիւն Հայոց իբրու յաւելուած վիպասանութեան Շնորհալւոյն մինչև ցաւուրս իւր։

Յովհաննէս վարդապետ Երզնկացի, որ և Պլուզ յ̃ի Կապուտակ անուանեալ, որպէս և Ծործորեցի՝ ՚ի վանաց անտի բնակութեան։ Աշակերտ էր սա մեծին Վարդանայ բարձրբերդցւոյ, և հետամուտ ՚ի վարժս գիտութեանց. արար գիրս ՚ի վերայ շարժման աստեղաց, կարգի տարերաց և եղանակաց տարւոյ։ Յօրինեաց ճառս և ներբողս, որպէս և զշարական որդւոց Լուսաւորչին «Այսօր զուարճացեալ», որպէս և զմեծին Ներսէսի։ Թող զատս նորա և զերգ տօնին Քորհնեաց, որպէս և զխրատսն հոգեշահս։ Սա ինքն լրացոյց զմեկնութի Մատթէոսի աւետարանին զսկզբնաւորեալն ՚ի սրբոյ Շնորհալւոյն։

Յովհաննէս վարդապետ Արճիշեցի՝ Ոսկնակեր անուանեալ, արար զմեկնութիւն խորհրդոյ պատարագին պարզ և համառօտ բանիւք։

Յաւելցուք առել և զայս ինչ ՚ի պարծանս երեքտասաներորդի դարու, զի յարեւմուտս և յարեւելս առ հասարակ կացին արք բազումք զարդարեալք գիտութեամբ և իմաստութեամբ, և բանք նոցա և երկասիրութիւնք մեծարգոյ եղեն յոյժ։ Իսկ մին դարու պանծալի է և այն, զի ՚ի խնդիրս հաւատոյ և ՚ի բանակռուութիւնս ընդ Յունաց՝ երեւի մեկն և հաստուն քննութեամբ բացայայտութիւն մասանց ուղղափառ կրօնից։ Այնպէս և ՚ի ժողովսն գումարեալս տեսանի ոչ միայն պայծառ վարդապետութիւն, այլ և ստէպ կանոնադրութիւնք ՚ի նորոգումն նախնի բարեկարգութեանց և ՚ի պնդել զկապ միութեան եկեղեցւոյ։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Վիճակ եկեղեցւոյն Հռովմայ ։

ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՔ որք 'ի յետին ամս այսր դարու սակաւօրեայ կենօք կալան զաթոռ սրբոյն Պետրոսի, ոչ ինչ արժանի յիշատակաց գործ գործեցին ։ Զի յետ Գրիգորի տասներորդի՝ որ կալաւ զաթոռն զամս չորս և զաւուրս տասն, Նստաւ յաթոռ քահանայապետութեան Իննովկենտիոս Ե. զամիս հինգ · ապա Ադրիանոս Ե. զաւուրս երեսուն և ութ · յետոյ Յովհաննէս ԻԱ. լիսպոնացի զամիս երիս · զկնի նորա յամին 1277 Նիկողայոս Գ. հռովմայեցի՝ զամս երկու և զամիս հինգ · ապա յամին 1281 Մարտինոս Դ. գաղղիացի զամս չորս և զաւուրս չորս · զնա յաջորդեաց Ոնորիոս Դ. հռովմայեցի զամ մի · և ապա յամին 1288 Նիկողայոս Դ. զամս չորս և զաւուրս քառասուն և չորս ։ Յետ մահուան սորա մնաց աթոռն 'ի պարապութե զամս երկուս, մինչև յամին 1294 միաբանեալ կարդինալաց ընտրեցին զՊետրոս Մորոնեան, որ անուանեցաւ Կեղեստինոս Ե ։ Էր նա այր ճգնաւոր և անապատական՝ զարդարեալ ազգի ազգի բարեմասնութեամբք և ընտիր վարուք · սակայն առ ծերութեան հասակին և անբաւականութեն 'ի տեսչութիւն, յետ հաստատելոյ զկարգ միաբանութեանն՝ որ յանուն նորա կոչեցաւ Կեղեստինեան, զկնի հնգից ամսոց հրաժարեալ 'ի քահանայապետութենէն դարձ արար յառաջին առանձնութիւն իւր ։ Եւ փոխանակ նորա ընտրեցաւ Բենեդիկտոս Կայետանեան կարդինալ, որ 'ի ժամանակս քահանայապետութեան Կեղեստինոսի հոգաբարձու և խնամակալ էր սրբոյ աթոռոյն, և անուանեցաւ Բոնիփակիոս Ը ։ Այր իմաստուն էր սա և հմուտ քաղաքական և կանոնական իրաւանց, զարմանալի 'ի տեսչութե իշխանութե իւրոյ և քաջավարժ 'ի բազմապատիկ գործս պետութեան · 'ի քահանայապետութե անդ իւրում խնամ կալաւ վարել 'ի գործ զեկեղեցական և զաշխարհական իշխանութիս միանգամայն, ոչ միայն 'ի սահմանս տէրութեան իւրոյ, այլ և 'ի պահանջել հարկին ձեռն արկ մտել զանձն և 'ի հոգ տեսչութեան այլոց քրիստոնէից իշխանաց ։ Ի նստել իւրում յաթոռ քահանայապետութեան անդէն և անդ ջանացաւ 'ի դերև հանեալ յետս կոչել զամենայն առանձնաշնորհութիւնս անխտիր պարգևեալս 'ի նախորդէն իւրմէ ․ և զի առ կենդանութեամբ նորա երկնչէր առնել զայն՝ կասկածեալ 'ի վտանգէ անակնկալ խռովութեան, խորհեցաւ զառաջս առնուլ նախ զկարծեցեալ չփոթից ․ բայց յետ տասն ամաց վաղահաս մահուամբ Կղեմենտոսի անդորրացաւ յիշխանութեան իւրում ։ Աչալուրջ գոլով և մտադիր 'ի հոգս եկեղեցւոյ, խնամ կալաւ առնել զվեցերորդ հաւաքումն քահանայապետական կանոնաց յամին 1298 ։ Իսկ 'ի վեցերորդ ամի քահանայապետութեան իւրոյ, (1300) կամեցաւ հաստատուն օրինօք սահմանել զՅոբելեան ամն, յորդորեալ առ այն 'ի հասարակաց աւանդութենէ ժողովրդեանն Հռոմայ, որք յանյիշատակ ժամանակաց հետէ սովոր էին 'ի լման ամս հարիւր ամաց խուռն բազմութեամբ 'ի մերձաւոր սահմանաց անտի դիմել յայցելութիւն տաճարի սրբոյն Պետրոսի վասն ընդունելոյ զլիակատար ներողութիւն ։ Զայս աւանդութիւն ստուգեալ քահանայապետին 'ի վկայութենէ բազմամեայ ծերոց ականատեսից, յօժարեցաւ առանձին կոնդակաւ սահմանել և ծանուցանել ամենայն հաւատացելոց՝ զի 'ի 1300 ամի, որպէս և այսուհետև 'ի լման հարիւր ամաց, որք միանգամ խոստովանութեամբ մեղաց և ճշմարիտ ապաշխարութեամբ գնասցեն յայցելութիւն տաճարաց սրբոյն Պետրոսի և սրբոյն Պօղոսի, ընկալցին զլիակատար ներողութիւն ։ Յայսմ կոնդակի չիք յիշատակութիւն Յոբելեան անուան, զոր յետոյ Կղեմէս Զ. յաւել զայն 'ի յաջորդն, օրինադրեալ կատարել զայն յիսնամեայ միջոցաւ յամին 1350 ։ Իսկ ապա Ուրբանոս Զ. 'ի դիւրութիւն հաւատացելոց սահմանեաց առնել 'ի քսան և հինգ ամս միանգամ, որպէս և ցարդ իսկ կատարի ։

Բենեդիկտոս քահանայապետ յառաջնում աւուր հրապարակաւ յայտարարութեան յոբելինին՝ հայրապետական զգեստուք օրհնեաց զժողովուրդն ․ իսկ յերկրորդումն աւուր երևեցաւ նոյն արքայական զարդուք՝ 'ի ցուցանել թէ յանձին ունի զհոգևորական և զթագաւոբական իշխանութիւնն միանգամայն, որպէս յայտ արար զայն և 'ի յետին գործս իւր, զորս կարգեսցուք 'ի վէպս չորեքտասաներորդի դարու ։

ԳԼՈՒԽ Ժ.Զ.

Համրական տեսութիւն զհանգամանաց երեքտասաներորդի դարու ։

ՁԵՌՆԵՐԷՑ համարձակութիւն քահանայապետաց 'ի վերայ աշխարհական իշխանութեանց կարի առաւելաւ յերեքտասաներորդում դարու, և աստուածաբանք ևս ոմանք ջատագով և պաշտպան կացին քահանայապետաց ։ Վասն որոյ և սուրբն Լուդովիկոս արքայ Գաղղիոյ, թէպէտ և բազում ակնածութեամբ յարգէր զքահանայապետս առ հասարակ, սակայն ոչ կամելով նուազել զիրաւունս տէրութեան իւրոյ, խորհեցաւ 'ի չափու ունել զսահման եկեղեցական իշխանութեան, և յօժարական ձեռն եդ աղերսագրին զոր ժողովուրդն ամենայն մատոյց նմա, աղերսելով չափաւորել և 'ի կարգի դնել զբեռն վայրապար հարկաց ։ Քանզի քահանայապետք Հռովմայ 'ի պատճառս խաչակիր զինուորութեանց ընդդէմ անհաւատից և հերետիկոսաց՝ ստացեալ էին անչափ իշխանութիւն հրամանատարութե՛ առ ամենայն ազգս քրիստոնէից, և իբր ինքնիշխան թագաւորս սովոր էին զկալուածս հերետիկոսաց պարգևել այնոցիկ՝ որք միանգամ մարտիւ պատերազմի նուաճէինն զնոսա, և 'ի յիշատակ այսպիսի պարգևաց հատուցանէին տուրս ինչ առաքելական աթոռոյն ։

Ընդ այն ժամանակս ազնուականք ոմանք յուսացեալք 'ի պաշտպանութիւն քահանայապետաց՝ սովոր էին աներկիւղ 'ի թագաւորաց տալ պատերազմ ընդ հերետիկոսս, զի քահանայապետք Հռովմայ չթողուին թագաւորաց արգելուլ զնոսա յառաջիկայ գործոյն ։ Վասն որոյ ընդ անուամբ խաչակրաց գումարէին զօրս, և դնէին տասանորդս 'ի վերայ եկեղեցականաց 'ի ծախս զինուորութեանցն այնոցիկ, և առ սակաւ սակաւ լինէին ինքնիշխան տեարք առանձնաշնորհութեանց և ամենայն եկեղեցական բարեկարգութեանց, մինչև զրաւել զմեծագոյն մասն թոշակի ժառանգաւորաց և ըստ կամս պարգևել զայն այլոց ։

Սուրբն Լուդովիկոս կամեցաւ զարմանս տանել անկարգութեանցս այսոցիկ՝ յօժարական ձեռն եդեալ աղերսագրին մատուցելոյ նմա 'ի ժողովրդենէն, որով տեարք և պարգևաբաշխք թոշակաց պահեսցին անխափանք 'ի ժառանգութեան իրաւանց իւրեանց. միանգամայն ամենայն վէճք և հակառակութիւնք յայսմիկ և 'ի նմանօրինակ դէպս կարգաւորեսցին ըստ օրինի հասարակաց, և ոչ որ կարասցէ յանուն աթոռոյն Հռովմայ պահանջել տուրս 'ի վնաս սահմանաց տէրութեան։

ԳԼՈՒԽ ԺԷ.

Ազգային ժողովք։ — Ժողով Սսոյ Բ. յամի տեառն 1204։

ԶԱՔԱՐԷ սպասալար իշխան բարեպաշտօն և երկիւղած 'ի տեառնէ՝ տեսեալ զի հանապազ 'ի պատերազմունս գոլով զրկեալ մնայ 'ի տեսութենէ սրբոյ պատարագին, և զի Վրացիքն և այլք յազգաց բամբասէին իսկ զնա վասն այնորիկ և զզօրս իւր առհասարակ, առանձինն թղթով աղաչեաց զԼևոն թագաւոր և զկաթողիկոսն Յովհաննէս զի հաճեսցին շնորհել նմա իշխանութիւն շրջեցուցանել ընդ իւր սեղան պատարագի և ժամարար քահանայս, որպէս առնէին երբեմն և Տրդատ թագաւոր և Վարդանանքն զօրավարք։ Խնդրեաց դարձեալ հանդիսիւ կատարել զպաշտօն պատարագի սարկաւագօք և դպրօք, և զվերափոխումն սրբոյ կուսին և զտօն խաչի առնել ընդ Վիրս։ Յայնժամ Լևոն թագաւոր խորհուրդ արարեալ ընդ Դաւթայ կաթողիկոսի, հրամայեաց ժողով գումարել յեպիսկոպոսաց և 'ի վարդապետաց 'ի քաղաքն Սիս։ Եւ նոցա ամենեցուն յետ բազմապատիկ քննութեանց՝ յարդարահայց խնդրուածս Զաքարէի ոչ ինչ ընդդէմ նախնի կանոնաց եկեղեցւոյ տեսեալ՝ թողին նմա առնել զոր խնդրէրն։ Եւ սահմանեալ ապա ութ կանոնս բարեկարգութեան՝ լուծին զժողովն։

Ժողով Լոռւոյ յամի տեառն 1205:

ԻԲՐԵՒ հրեշտակք Լեւոնի արքայի մատուցին Զաքարեայ զվճիռս եւ զսահմանս ժողովոյն, ցնծացեալ նա յոյժ եւ բերկրեցաւ յանձն իւր. վասն որոյ անդէն եւ անդ գումարեաց զեպիսկոպոսունս եւ զվարդապետս 'ի սահմանաց իշխանութեան իւրոյ 'ի Լոռի քաղաք, եւ առաջի արար նոցա զկանոնս ժողովոյն Սսոյ: Եւ թէպէտ ոմանք 'ի նոցանէ հաճեցան յոյժ ընդ այն եւ ուրախ եղեն, սակայն եւ այլք ոմանք հակառակ կացին խորհրդոյ մտացն Զաքարէի, որպէս Գրիգոր Տուտէորդի, Դաւիթ քոբայրեցի, Յովհաննէս սանահնեցի եւ այլք: Տեսեալ Զաքարէի զի խռովս յուզել կամին նոքա, արգել զոմանս 'ի նոցանէ առ իւր, եւ պատուէր հրամանի արար 'ի քաղաքս եւ 'ի վանորայս՝ որ ընդ իւրով իշխանութեամբ էին՝ հպատակել կարգաց եւ կանոնաց ժողովոյն:

Ժողով Սսոյ Բ. յամի տեառն 1207:

ԻԲՐԵՒ տակաւ ազգի ազգի շփոթութիւնք յաճախէին 'ի պատճառս հրամանացն Զաքարէի, եւ բազումք այնպիսիք էին որք ոչ կամէին լսել բանից նորա, Զաքարէ այլով ժողովով խորհեցաւ լռեցուցանել զամենեսին. վասն որոյ գումարեաց զեպիսկոպոսունս ամենայն եւ զվարդապետս որք գտան 'ի ժողովին Լոռւոյ յԱնի քաղաք: Եւ Մխիթար վարդապետ՝ մականուանեալն Գոշ առ ծանրացեալ հասակին ոչ կարելով զերկայն ուղին հատանել, նամակագիր եղեւ առ Զաքարէ իշխան, եւ խոստացաւ հպատակել վճռոց ժողովոյն: Եւ իբրեւ ժողովեալքն ամենեքին բողոք բարձեալ աղաղակեցին ոչ ինչ սահմանել առանց Մխիթարայ, Զաքարէ եցոյց նոցա զթուղթն Գոշի: Եւ նոցա ոչ ինչ անսացեալ Զաքարէի՝ գրեցին թուղթ աղերսանաց առ Մխիթար վարդապետ զի մի ինչ դանդաղեսցի իջանել առ նոսա: Յայնժամ ել 'ի չու Մխիթար, եւ այն ինչ հասեալ էր յԱնի, Զաքարէ կոչեաց զնա առ ինքն, եւ ընկալեալ առ 'ի նմանէ հաւանութիւն վասն բարեկար-

գութեանցն զոր խորհէր մուծանել յազգն , արձակեաց ապա զժողովեալսն զամենեսին , պատուհաս աքսորանաց սպառնացեալ եթէ հակառակեսցի ոք սահմանելոցն յիւրմէ ։

Ժողով Սսոյ Դ. յամի տեառն 1243 ։

ՏԵՍԱՆՔ *առկաւուք յընթացս համառօտախօս պատմութեանս եթէ որպէս 'ի դարս յայսոսիկ մեղկութիւն և թուլութիւն կալեալ ունէր զեկեղեցականս արևելեայց և արևմտեայց ։ Եւ քանզի 'ի նոյն թերութիւնս ըմբռնեալ էին և եկեղեցականք ազգիս , Կոստանդին կաթուղիկոս հնարեցաւ ընդհանուր ժողովով բարեկարգել զեկեղեցականս և զաշխարհականս միանգամայն . վասն որոյ 'ի հրամանէ մեծի և բարեպաշտ արքային Հեթմոյ ժողովեցան եպիսկոպոսքն ամենեքին և վանահարք և վարդապետք և իշխանք ոմանք յարքայանիստ քաղաքն Սիս , և 'ի մէջ ածեալ զանկարգութիւնս ամենայն որք զօրացեալ էին յայնժամ յեկեղեցականս , սահմանեցին քսան և հինգ կանոնս , և առանձինն կանոնօք արգելին ոչ ամբառնալ զմանկահասակս յեկեղեցական իշխանութիւն , այլ զի ընծայեալքն 'ի սարկաւագութիւն իցեն զէթ քսան ամաց , և 'ի քահանայ քսան և հինգ , և յեպիսկոպոս՝ երեսուն . և զի արժանաւորք ևեթ ամբարձցին 'ի պատիւս , և մի լիցի աչառութիւն 'ի սակս արծաթոյ կամ շահից ։*

Ժողով Սսոյ Դ. յամի տեառն 1251 ։

ԹԷՊԷՏ *յաւուրց անտի սրբոյ հօրն Գրիգորի Լուսաւորչի ընդունէին Հայք զբղխումն Հոգւոյն սրբոյ 'ի Հօրէ և յՈրդւոյ , որպէս է տեսանել 'ի բանս նորա և այլոց մատենագրաց ազգիս , սակայն յեկեղեցական պաշտամունս իւրեանց չէին սովոր 'ի կիր առնուլ զայն յաճախ . վասն որոյ յամի տեառն 1250 Իննովկենտիոս քահանայապետ յղեաց պատգամաւոր առ Կոստանդին կաթուղիկոս և առ Հեթում թագաւոր , և խնդրէր 'ի նոցանէ բացայայտ բանիւք ընդունել զբղխումն Հոգւոյն սրբոյ 'ի Հօրէ և յՈրդւոյ ։ Յայնժամ ժողովեցան ե-*

պիսկոպոսունքն ամենեքին 'ի Թագաւորեալ քաղաքն Սիս, և համաձայն զխորհրդակցութիւնն զայն գտեալ գրոց որոց և բանից հարց՝ ընկալան զայն յօժարական, որպէս յայտնի և բացայայտ բանիւք վկայեն Կիրակոս Գանձակեցի և Վարդան պատմիչ ։

Ժողով Տարսոնի Բ. յամի տեառն 1267 ։

ՅԵՏ *մահուան Կոստանդեայ կաթուղիկոսի՝ Հեթում թագաւոր գումարեաց ժողով մեծ յեպիսկոպոսաց և 'ի վարդապետաց 'ի Տարսոն քաղաք, և ընտրեցին փոխանակ նորա զՅակոբ Տարսոնացի կամ Սսեցի, որ արքունի վարուքն և ընտիր բարեմասնութեամբք միայն արժանին էր մեծի պատուոյն ։ Եւ թէ զոր հնարս հնարեցաւ յանդորրու ունել զխաղաղութիւն ազգին, նշանակեցաք սակաւուք 'ի վէպս անցից կաթուղիկոսաց ազգիս ։*

Ժողով Տարսոնի Գ. յամի տեառն 1270 ։

Ի ՄԵՌԱՆԵԼ *մեծի թագաւորին Հեթմոյ՝ Լեւոն որդի նորա ժառանգ արքայութեան՝ առ անչափ վշտին ընդ մահ հօր իւրոյ հիւանդացաւ մինչև 'ի մահ. վասն որոյ իշխանն Եգիպտոսի և այլք ամենք հրեշտակս առաքեցին մխիթարել զնա, և համոզէին բանիւք յորդոր եղեն զի յանձն առցէ նստել. յաթոռ իշխանութեան հօր իւրոյ ։ Եւ մխիթարեալ Լեւոնի յանձն էառ զայն. վասն որոյ Յակոբ կաթուղիկոս ժողովեաց զեպիսկոպոսունս և զիշխանս Հայոց 'ի Տարսոն քաղաք, և մեծահանդէս շքով ամբարձ զԼեւոն յաթոռ իշխանութեան հօր իւրոյ ։*

Ժողով Սսոյ Ե յամի տեառն 1292 ։

ՅԱՄԻ *տեառն* 1292 *'ի չորրորդ ամի թագաւորութեան Հեթմոյ Բ. երկպառակութիւք և խռովութիւք ոչ սակաւք յուզեցան յազգի մերում 'ի պատճառս խոտորելոյ աւուրց զատկի և կամ ծառզատկի. քանզի ոմանք ընդ Յոյնս կամէին տօնել զզատիկն 'ի հինգերորդ աւուր ապրիլի, և այլք միով եօթնեկաւ յետոյ քան զնոսա ։*

Հեթում թագաւոր առ 'ի բառնալ զհերձուածն կոչեաց առ ինքն 'ի Սիս քաղաք զՍտեփանոս կաթողիկոս, և գումարեաց անդ ժողով յեպիսկոպոսաց և 'ի վարդապետաց, և նոցա ստոյգ հետազօտութեամբ 'ի վերայ հասեալ պատճառաց խոտորելոյ զատկին՝ սահմանեցին տօնել զայն ընդ Յունաց ։

ԴԱՐ ՉՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա.

Հակառակութիւնք ընդ Բոնիփակիոս Ը., քահանայապետն Հռոմայ և ընդ Փիլիպպոս արքայ Գաղղիոյ :

ՓԻԼԻՊՊՈՍ Թագաւոր Գաղղիոյ նախանձաւոր իրաւանց աշխարհական տէրութեան և Բոնիփակիոս նախանձայոյզ իբրու հօգեւոր իշխանութեան, գժտեցան ընդ միմեանս անողորմելի հակառակութբ. և պատճառք գժտութեանն այս ինչ էր : Յամի տեառն 1295, իբրև Փիլիպպոս արքայ հարկս ծանունս եդ ՚ի վերայ եկեղեցականաց՝ ամենք ՚ի նոցանէ բողոք կալան զնմանէ առ քահանայապետն Բոնիփակիոս. և նորա լուեալ զայն՝ անդէն և անդ գրեաց կոնդակ հանրական յորում պատուէրէր եկեղեցականաց առ հասարակ, եթէ կրօնաւորք իցեն և եթէ աշխարհիկ քահանայք՝ չտալ ամենեւին հարկս և տուրս աշխարհական իշխանի առանց թոյլտուութեան սրբոյ աթոռոյն :

Յայնմ կոնդակի թէպէտ և ոչ ինչ յիշատակ գոյր զարքայէն Գաղղիոյ, սակայն խնդացեալ Փիլիպպոսի՝ թէ ընդ քօղով բանիցն զնմանէ ակնարկիցէ, վասն որոյ և նա առանց յիշելոյ զանուն Բոնիփակիոսի արգել ամենեցուն տանել ՚ի դուրս արտաքոյ տէրութեան Գաղղիոյ առանց հրամանի իւրոյ զոհարս, դրամս, զէնս և պարէնս կերակրոյ : Զայն իբրև լուաւ Բոնիփակիոս քահանայապետ, յաւել առաքել միւս այլ կոնդակ ազդագոյն քան զառաջինն. յորում ՚ի սկզբան արդոյ և պատուական ցուցեալ զազատութիւն եկեղեցւոյ հարսին Քրիստոսի՝ որ ետ նմա իշխանութիւն հրամայել ամենայն հաւատացելոց միանգամայն, որպէս և իւրաքանչիւրում առանձին, ապա բանս 'ի մէջ առնու յաղագս խափանողն ասելոց 'ի դուրս դրանն, և յաւելու ասէ. «Եթէ որ արգելն զայն կամիցի տարածանել զպատուէր հրամանին մինչև առ մեզ և առ եղբարս մեր երիցակիցս և առ եկեղեցականս, ոչ միայն 'ի յանդգնութիւն համարեսցի, այլ և յանմտութիւն մեծ. զի ոչ դու, ասէ, և ոչ այլ ոք յիշխանաց աշխարհի ունիք իշխանութիւն 'ի վերայ նոցա, և 'ի նոցանէ անկանիք եթէ կամիցիք վայելել ազատութեան եկեղեցւոյ»։ Այս բացայայտէ զբանս առաջնոյ կանոնին, և յայտ առնէ թէ ոչ 'ի սպառ արգելուլ կամէր այսու զեկեղեցականս 'ի տալոյ թագաւորին նպաստ ինչ դրամոց 'ի պէտս տէրութեան նորա, այլ թէ արգելու առնել զայն առանց թոյլտուութեան սրբոյ աթոռոյն։ Յաւելու 'ի նոյն և զայն, թէ «Թագաւորն հռովմէական (այս է կայսրն Գերմանիոյ) որպէս և թագաւորն Անգղիոյ ոչ հրաժարին 'ի հպատակելոյ դատաստանի մերում՝ 'ի կարիս հակառակութեան զոր ունին ընդ Փիլիպպոսի, և յերանի մեզ անկ է այդ դատաստան. քանզի և յայտնի ցուցանեն, թէ դու ինքն պարտաւոր գտար առ նոսա»։ Եւ աւարտէ զկանոնն սպառնալեօք առ թագաւորն՝ վարել զառն և զօրեղ սպեղանեօք, եթէ ոչ զգաստասցի։

Այսմ կանոնի քահանայապետին տուաւ պատասխանի յանուն թագաւորին ըստ օրինակիս ըստ այսմիկ. «Եկեղեցի հարսն Քրիստոսի ոչ է 'ի կղերց ևեթ՝ այլ և յաշխարհականաց. Քրիստոս փրկեաց զնա 'ի գերութենէ մեղաց և 'ի լծոյ հնոյ օրինաց, և կամեցաւ զի ամենայն անդամք իւր վայելեսցեն յայնմ ազատութեան. ոչ մեռաւ նա վասն եկեղեցականաց ևեթ, և ոչ նոցա միայն խոստացաւ զշնորհս աստի կենաց և զփառս հանդերձելոյն, վասն որոյ սխալեն յոյժ կղերք յինքեանս ևեթ սեփհականելով զազատութիւն՝ զոր փրկիչն ստացաւ վասն ամենեցուն։ Սակայն են ազատութիւնք ինչ առանձնականք շնորհեալք պաշտօնէից եկեղեցւոյ 'ի քահանայապետացն Հռովմայ ըստ ինքեանց կամ գէթ ըստ ներողամիտ թոյլտուութեան աշխարհական իշխանաց. այլ ազատութիւնս այսպիսի ոչ եթէ *խափան ինչ լինէին բառնալ յիշխանաց զիրաւունս պահանջելոյ 'ի հպատակաց զկարեւորսն 'ի տեսչութիւն և 'ի պաշտպանութիւն տէրութեան իւրեանց ։ Եկեղեցականք անդամք էին տէրութեան իբրեւ զայլս 'ի մարդկանէ, վասն որոյ և հարկ է նոցա ձեռնտու լինել 'ի խաղաղութիւն հասարակաց, և այնչափ առաւել՝ որչափ զի ստացուածք նոցա 'ի խռովութիւնս պատերազմաց առաւելապէս 'ի վտանգի կան ։ Վասն որոյ հակառակի բնական օրինաց արգելուլ զնոսա՝ 'ի ձեռնտուութենէ, աստի. ուր անտանելի զի կայ նոցա իշխանութիւն պարգեւելոյ զայն լոկ կամօք բարեկամաց, որպէս և զեկամուտս իւրեանց վատնել 'ի մասին և յաւելորդս 'ի վնաս ժողովրդեան ։ Մե՛ք երկնչիմք յԱստուծոյ և պատուեմք զպաշտօնեայս եկեղեցւոյ. սակայն չզանգիտեմք յանիրաւ ստացողաց մարդկան, զխնդրել թէ արդարութիւն 'ի մեր կողմն է ,, ։*

Պետրոս Բարբէ արքեպիսկոպոսն Ռեմոյ տեսեալ զգայթակղութիւնս յուզեալ 'ի Գաղղիա 'ի պատճառս կոնդակի քահանայապետին՝ նամակագիր եղև առ Բոնիփակիոս Ը. 'ի գլխոց հանօրէն զառասոյն Գաղղիոյ աղերսելով զարման տանել այնմ ։ Բողոքեաց 'ի Հռոմ և եպիսկոպոսունս միաբան՝ առաջի առնել քահանայապետին կարեւոր հրահանգս ինչ 'ի զարման վնասուն ։ Յայնժամ Բոնիփակիոսի ակն ածեալ յազդարարութենէ նոցա՝ գրեաց այլ կոնդակ յամին 1297 առ ամենայն եպիսկոպոսունս և առ հանօրէն ազնուատոհմն Գաղղիոյ, յորում զանգատի՝ զի կոնդակ իւր ոչ յուղիղ միտս մեկնաբանեալ է յանոնց. վասն որոյ ինքնին բացայայտեալ ծանուցանէ, թէ կամք իւր չէին արգելուլ 'ի սպառ զինքնայօժար տուրսն պարգեւաց 'ի կղերց առ թագաւորն և առ իշխանս, այլ միայն զբռնի հարկահանութիւնս ։

Այս թէպէտ այսու առ երեւս հանդարտեցաւ աղմուկն, սակայն եկաց մնաց ընդ Փիլիպպոս արքայ և ընդ քահանայապետն Բոնիփակիոս թշնամութիւն ինչ գաղտնածածուկ, որ յայտնի եղև ապա յամին 1303 ։ Զի Բոնիփակիոս առաքեաց նուիրակ առ թագաւորն զԲեռնարդոս Սայսէ եպիսկոպոսն Պամիեռ քաղաքի. և 'ի շնորհս նորա հաստատեալ էր քահանայապեան զայն եպիսկոպոսութեան առանց հաւանութեան արքային ։ Նուիրակս այս այր խոստանայր զնոսա ածել զհպատակութիւն թագաւորին 'ի կանգնելն զնա եպիսկոպոսութեան, մանաւանդ համարձակութբ երեւել յարքունիսն՝ 'ի գլխոց քահանայապետին ծանոյց Փիլիպպոսի զառաջարկութիւն խաչակիր զինուորութեան ընդդէմ այլազգեաց. եւ 'ի հրաժարել Փիլիպպոսի արքային մտանել 'ի նոյն գործ՝ ժամ դիպաւոր համարեցաւ եպիսկոպոսն ազդու եւ երգիծական բանիւք 'ի հաւանութիւն ածել զթագաւորն ։ Նոյն որ կարի ցաւեցեալ Փիլիպպոսի՝ վկայութեամբ քանի եւ չարից արանց, որք լուան զնախատական բանսն ընդդէմ արքային, հրամայեաց արկանել զնա 'ի բանտ ։ Զայն իբրեւ լուաւ Բոնիփակիոս զայրացաւ յոյժ, եւ առաքեաց զաւագ սարկաւագն՝ Նարբոնայ առ թագաւորն, եւ հրամայեաց արձակել 'ի բանտէ զնուիրակն. եւ 'ի չանսալ թագաւորին՝ փութացաւ քահանայապետն հանել չորս կոնդակս ընդդէմ նորա, յորս յայտ առնելով զգերագոյն իշխանութիւն իւր 'ի հոգեւորս եւ 'ի մարմնաւորս միանգամայն՝ պատուիրէր եպիսկոպոսաց Գաղղիոյ միաբան գալ ժամանել 'ի Հռոմ եւ առաջի լինել ժողովոյն զոր հանդերձեալն էր գումարել, եւ ապա նզովեաց զՓիլիպպոս եւ զհամախոհս նորա ։

Փիլիպպոս արքայ ոչ շատ համարեցաւ դառն բանիւք պատասխանի առնել կոնդակաց քահանայապետին, այլ եւ գումարեալ զմեծամեծս տէրութեան՝ ետ նոցա բողոք հարկանել, թէ 'ի Գաղղիա ոչ ճանաչեմք այլ իշխանութիւն բաց 'ի տէրութենէ թագաւորին. եւ նոքա խոստացան մահու չափ պաշտպանել զիրաւունս եւ զազատութիւն տէրութեան իւրեանց ։ Զայնու ժամանակաւ առաքեաց արքայ զասպետն Նոգարէթ ընդ պատրուակաւ ծանուցանելոյ զբողոք իւր վասն կոնդակաց քահանայապետին. բայց էին նորա կամք ըմբռնել զնա գաղտ եւ բռնի ածել 'ի ժողովն զոր Փիլիպպոս արքայ խորհէր գումարել 'ի Լուգդան քաղաք ։

ԳԼՈՒԽ Բ.

Յանդուգն բռնութիւն ընդդէմ քահանայապետին, և մահ նորա։

Ընդ ժամանակին ընդ այնմիկ էին բազումք 'ի Հռոմ՝ ոխերիմ թշնամիք Բոնիփակիոսի, և զօրաւորագոյն 'ի նոսա էր ազգատոհմն Կոլոննեանց. քանզի քահանայապետն հալածեալ էր զնոսա վասն կուսակից լինելոյ նոցա Գիբելեանց. վասն որոյ առաքեալն՝ Նոգարէթ 'ի Փիլիպպոսէ յԻտալիա, միացաւ ը Յակոբայ Շարրայ Կոլոննեան, որ յամին 1303 եկեալ նմա հնարիւ և շաւիղ մուտ գտանելոյ յԱնագնի քաղաք 'ի հայրենիս Բոնիփակիոսի, ուր առանձնացեալն էր նա։ Մտանէ՝ Նոգարէթ 'ի քաղաքն ընդ Կոլոննայի և ընդ անձանց յարմարականաց անգոյն, որք ունէին ընդ իրեանս իբր երկերհարիւր այրուձի և բազմութիւն իտալացի հետևակ զօրաց թաշակաւորելոց 'ի Փիլիպպոսէ արքայէ. որոց մնեալ ընդ արքայական դրօշուն աղաղակէին բարձրաձայն. « Մեռցի քահանայապետն Բոնիփակիոս, և կեցցէ թագաւորն Փիլիպպոս »։ Ասպետն՝ Նոգարէթ խնդրեաց լռելեայն օգնականութիւն 'ի պահապանակալէ և 'ի դատաւորէ քաղաքին Անագնի, և 'ի լինել նոցա ձեռնտու՝ կալաւ զքաղաքն, և յետ գոյզն դիմադրութեան մարտի սիրելեաց և արբանեկաց քահանայապետին։ Յայնժամ փախեան կարդինալքն ամենեքին, որպէս և բազումք 'ի ծառայից և 'ի սպասաւորաց Բոնիփակիոսի։ Տեսեալ քահանայապետին զվտանգ մահուն, ասէ աներկիւղ. « Որովհետև մատնեցայ իբրև զՔրիստոս, մեռայց որպէս քահանայապետ »։ Զգեցաւ զպարեգօտն, զոր Գրկնոյ սրբոյն Պետրոսի՝ անուանէին յայնժամ, եդ 'ի գլուխ իւր ըզխոյրն, որ կոչէր Թագ Կոստանդիանոսի, և ապա առեալ 'ի ձեռս զբանալիսն և զխաչ՝ նստաւ 'ի վերայ քահանայապետական աթոռոյ։ Ասպետն՝ Նոգարէթ ժամն ոչ տալով մարտ եղեալ ընդ թշնամիս, ուր ուրեմն ընդ երեկս աւուրն կարաց ժամանել 'ի սենեակ քահանայապետին, և յետ անարգանաց փոխելոյ ընդ նմա՝ յանդգնեցաւ ապա կալանաւորել զԲոնիփակիոս. և 'ի կամելն հանել զնա 'ի քաղաքէն՝ ժողովուրդն Անագնեայ զայրացեալ ընդդէմ Գաղղիացւոց՝ վարեցին զնոսա հանդերձ զօրագլխաւն, և կորզեցին 'ի ձեռաց նոցա զքահանայապետն ։ Այլ այն առ սաստկութեան տագնապի և վշտացն զոր կրեաց յայնմ խռովութեան՝ վախճանեցաւ նա յետ իբր երեսուն և չորից աւուրց յերկոտասաներորդ աւուր ամսեանն հոկտեմբերի յամին 1303 'ի հասակի ութսուն և վեց ամաց, կացեալ 'ի քահանայապետութեան զամս ութ, զամիս ինն զաւուրս ութեւտասն ։ Թաղեցաւ 'ի սուրբն Պետրոս, և յետ երեքհարիւր ամաց 'ի պատճառս նորոգութեան շինուածոյ տաճարին բացեալ զտապանն՝ գտին անապական զմարմին նորա ։

Մեծարոյ եղև յոյժ քահանայապետս յիւրումն դարու սակս գիտութեան և իմաստութեան իւրոյ, որով բուռն նախանձախնդիր եկաց իշխանութեան և իրաւանց հռովմէական աթոռոյ ։ Աւուրբք յառաջ քան զըկալանաւորութիւն իւր եղեալ էր 'ի մտի հրատարակել այլ կոնդակ՝ յորում կրկնել կամէր դարձեալ զնզովսն ընդդէմ արքային Գաղղիոյ, և ազատ կացուցանել զհպատակս նորա յերդմանէ հաւատարմութեան, որպէս և զտէրութիւն նորա պարգևել այնմ՝ որ նախ առաջին յաղթող գտցի նմա ։ Առաջի արարեալ էր զայս և Ալբերտոսի կայսեր, զորոյ զընտրութիւնն հաստատեալ էր կանխաւ . բայց նա հրաժարեցաւ յընդունելութենէ կաշառելի և վտանգաւոր այնր պարգևաց ։

Ոմանք 'ի մատենագրաց թշնամանագիր բանիւք զըրպարտեն զքահանայապետս և զգործս նորա միանգամայն, որ արգասիքն էին արիութեան ոգւոյն ։

ԳԼՈՒԽ Գ.

Քահանայապետութիւն Բենեդիկտոսի ԺԱ ։

Յետ մահուանն Բոնիփակիոսի կալաւ զաթոռ քահանայապետութեան Բենեդիկտոս ԺԱ., որ էր 'ի դոմինիկեան կրօնաւորաց և կարդինալ եպիսկոպոս Ոստիա քաղաքի ։ Եւ զի այր հանդարտ էր նա և խաղաղասէր, 'ի քսան ամիս և եթ զահակալութեն իւրոյ վախջան արար խնդրոյն և բանակցութեանց յուղելոց ընդ մէջ Հռոմայ և Գաղղիոյ։ Ելոյծ զՓիլիպպոս արքայ ՚ի բանադրանաց սնոտի և խաղաղացոյց զպետութիւնն Գաղղիոյ։ Եւ վասն այնորիկ գրեաց զանազան կոնդակս յամին 1304 յամսեան ապրիլի և մայիսի։ Ի միումն յայնցանէ արձակէ ՚ի նզովից զամենեսին զայնոսիկ որք հակառակ կացեալ էին իշխանութեան եկեղեցւոյ առ նախորդաւն իւրով Բոնիֆակիոսիւ, բայց ՚ի՝ Նոգարէթ ասպետէն՝ զորոյ զարձակումն եթող առ յապա։

Աւանդի հաւանական կարծեօք, թէ բարեկրօն և առաքինասէր քահանայապետս վախճանեալ իցէ մահացու դեղով յամսեանն յուլիսի յամի 1304։ Սա ՚ի քահանայապետութեան իւրում ոչ կամեցաւ ճանաչել զմայր իւր սակս յանդգնման լինելոյ նորա որդւոյ իւրում զգեստուք՝ որք ՚ի վեր էին քան զվիճակ իւր։

ԳԼՈՒԽ Դ.

Քահանայապետութիւն Կղեմայ Ե., և փոխադրութիւն սրբոյ գահին յԱւենիոն քաղաք։

ՅԵՏ մահուան Բենեդիկտոսի ԺԱ. մնաց աթոռն ՚ի պարապութեան զամիսս երեքտասան։ Ապա ՚ի խնդրոյ Փիլիպպոսի արքային Գաղղիոյ՝ յամին 1305 ընտրեցաւ Պերթրանտ ոմն Կոթ՝ արքեպիսկոպոսն Պորտոյի, որ անուանեցաւ Կղեմէս Ե. Քահանայապետս այս առ յինքն ձգելոյ զՓիլիպպոս՝ նախ քան զա՟մ խնամ կալաւ ՚ի դերև հանել զամենայն կոնդակսն և զվճիռս Բոնիֆակիոսի ը՟դէմ նորա։ Եւ ապա յուղևորել իւրում ՚ի Պորտոյ, արար ՚ի ճանապարհին ծախս անթիւս, որով եկեղեցիք և մենաստանք ՚ի պատճառս նորա մերկացան ՚ի ճոխութէ. վասն որոյ Փիլիպպոս արքայ առաքեաց երկու դեսպանս բողոք ունել զատարապայման ծախուցն. այլ պատասխանի արար նոցա քահանայապետն, եթէ անպարտ եմ յանիրաւութենէ այսի և ՚ի զրկանացդ, և պատրաստ եմ պատուհասել զայնոսիկ որք միանգամ յիմոց սպասաւորաց և ՚ի պաշտօնէից յանդգնեալ իցեն յիմ անուն պահանջել դրամս ՚ի մենաստանաց և յեկեղեցականաց։

Հանդէս թագաւորութեան քահանայապետութեան կատարեցաւ 'ի Լուգդոն քաղաքի, և անդ դէպք ձախողք խռովեցին զպայծառութիւն տօնին. զի 'ի խուռն բազմութեան մարդկանն գումարելոց 'ի վերայ որմոյ 'ի տես հանդիսին՝ փլուցեալ որմոյն մեռան ոմանք ընդ փլատակօք և այլք յոլովք վիրաւորեցան, մինչև քահանայապետին ևս անկանել յերկիր։ Չարագուշակ համարեցան այս դէպք 'ի բազմաց, և յայս կարծիս առաւելագոյնս հաստատեցան Իտալացիք՝ յորժամ Կղեմէս Ե. ցանկացեալ մնալ 'ի Գաղղիա, յայտ արար զչկամութիւն իւր գնալ և նստել յԻտալիա, որ վրդովեալն էր 'ի ժամանակին 'ի խռովութեան Կուէլֆեանց և Կիպելեանց։ Սան որոյ յետ ժամանակս ինչ հաստատելոյ բնակութեամբ 'ի Լուգդոն, 'ի Պորտոյ, 'ի Փուաթիէ, 'ի Տուլուզա, և դնելոյ հարկս ծանունս 'ի վերայ ամենայն եկեղեցեաց, կալաւ զբնակութիւն իւր յԱւինիոն քաղաքի յամին 1309, և 'ի նմանէ սկիզբն կալան և ոմանք 'ի քահանայապետացն Հռովմայ բնակել յայնմ քաղաքի։

Իտալացի կարդինալք կարի դժկամակ եղեն ընդ այն, գուշակելով զվնաս որ հանդերձեալ էր հասանել 'ի վերայ մայրաքաղաքին Հռովմայ և սրբոյ աթոռոյն 'ի բացական հեռաւորութեան գլխոյ եկեղեցւոյն. մինչև համեմատել զայն աւերածոյն Երուսաղեմի գերութեանն ժողովրդեանն 'ի Բաբելոն։ Դժկամակութիւն Իտալացւոց ընդ գործս Կղեմայ Ե պատճառք եղեն անդէպ և անվայել պատմութեանց ինչ, որք յօդեցան 'ի վերայ քահանայապետիս։

ԳԼՈՒԽ Ե.

Բարձումն ասպետութեան Տաճարականաց։ — Համրական սինհոդոս 'ի Վիեննա Գաղղիոյ։

Ի ԽՕՍԵԼ երբեմն Փիլիպպոսի արքայի առանձինն ընդ քահանայապետին 'ի Փուաթիէ քաղաքի, յայտ արար նմա եթէ եղեալ է 'ի մտի ջնջել զկարգ Տաճարական ասպետաց, որք յանդուգն և ըմբոստ զնացիւք բազում այն էր զի հրամանաց թագաւորին ընդդիմանէին։ Յակոբ Մոլէ առաջնորդն Տաճարականաց հանդերձ իւրովք գլխաւոր խորհրդակցօք խնայեալ զվաստակն մերձենայեալ 'ի կործանումն կարգին, զնոյն սա քահանայապետն, և անկեալ յոտս նորա խնդրէր 'ի նմանէ ծանօթս տալ զամբաստանութեանցն՝ որովք ամբաստանէին զկարգակիցս իւրեանց ։ Նախ ամբաստանութիւնքն զնոցանէ, էին՝ թէ 'ի մտանելն յայն կարգ՝ ուրացեալ ըզՔրիստոս, երիցս թքանելով 'ի խաչելութիւնն, և թէ պաշտեն զգլուխ ինչ ոսկեզօծ քանդակեալ 'ի փայտէ. և թէ ուխտադիր լինելով կուսութեան՝ աղտեղէին զանձինս անհնարին պղծութեամբք ։

Ամբաստանութեանցս այսոցիկ սկիզբն եղև հետազօտ քննութեան՝ յորժամ երկու անօրէնք արկան 'ի բանտ վասն յանցանաց իւրեանց, յորոց մին էր տաճարական ոմն ուրացող կամ կարգընկէց. և միւսն սոսկական որ 'ի Պեզիէ քաղաքէ, ուր և առաջին դատախազք և ամբաստանք կացին տաճարականաց ։ Գուլիէլմոս Նօկարէթ՝ որում 'ի թագաւորէն յանձն եղեալ էր 'ի քննին առնուլ զամբաստանութիւնս, ստուգեալ զամենայն՝ իբրև առաջի արար արքային յամին 1307, հրաման ետ թագաւորն, զի յերեքտասաներորդ աւուր Հոկտեմբերի յանկարծակի 'ի միում ժամու վաթսուն ասպետք կարգապետաւն իւրեանց բանտարգել լիցին 'ի Փարիզ քաղաքի. և յիսուն և եօթն 'ի նոցանէ սպանան այս 'ի տանջանս յամին 1311 յելս մայիսի ։

Քահանայապետն Կղեմէս Ե. ոչ կամելով առանձին որոշել զայս դատ կարևոր, զի և բազումք յականաւոր մարդկանէ յօգնեալք էին և կամ ջատագովք ապարտութեանն, յետ բազմօրինակ քննութեան կամեցաւ գումարել ժողով հանրական 'ի Վիեննա Գաղղիոյ. յորում առաջիկայ գտան երեքհարիւր եպիսկոպոսունք, բազում արդեայ երիցունք և աբբայք և գործակալք ։ Առաջին գումարումն կամ նիստ ժողովոյն եղև յերեքտասաներորդ աւուր ամսեանն հոկտեմբերի յամին 1311. իսկ երկրորդ համախմբութիւնն յերրորդ աւուր ապրիլի յամի 1312 ։ Քահանայապետն՝ որ առանձին վճռով հնգետասան աւուրբք յառաջ քան զհամախմբութիւնն խափանեալ էր զկարգ տաճարականաց, 'ի ժողովի անդ առաջի արար զայն Փիլիպպոսի արքայի և եղբօր նորա, որդւոց և երից որդւոցն ։ Վերջական ինչ Տաճարականոնաց՝ պարգևեցան Հիւրընկալ ասպետաց կարգի սրբոյն Յովհաննու Երուսաղեմի, որք այժմ անուանին Ասպետք Մելիտեայ ։ Ի մանրախոյզ քննութեան անդ Տաճարականաց որք միանգամ անմեղ գտանեցանն՝ առին իւրեանց բաժին յեկամտից կարգին ։ Այնպէս արժանի ներողամտութեան գտան որք խոստովանեցան զյանցանս իւրեանց ։ Իսկ որք յետ առ երեսս խոստովանութեան յանդգնեցան վերստին պաշտպան կալ անձանց և կարգին, ընկալան զպատուհաս. յորոց մի էր և առաջնորդն կարգին Յակոբ Մոլա և երկոքին գլխաւոր պաշտօնատարք՝ Նորմանտիոյ և Ակուիտանիոյ, որք մատնեցան 'ի հուր. սակայն և 'ի մէջ բորբոքեալ բոցոյն աղաղակէին՝ վկայելով անմեղութեան իւրեանց և համօրէն կարգին ։

Պատճառք բնաջինջ լինելոյ այսր ասպետութեան, որպէս և մեծն Պօսիւէ վկայէ, եղև բուռն իշխանութիւն և ձոխութիւն իւրեանց, որովք զեղծան յանդուգն ամբարտաւանութեամբ. իսկ զի յոլովք 'ի նոցանէ անգթութեամբ մատնեցան յայրումն հրոյ՝ չէ մարթ հաւատալ 'ի միտ առնուլ՝ թէ պատճառք այնր գտան պատուհասի արդարադատութիւնն իցէ, թէ ագահութիւն և քինախնդրութիւն իշխանաց ։

ԳԼՈՒԽ Ջ.

Վէճք և կանոնք ժողովոյն Վիեննայի ։

ՎԵՆՆԱԿԱՆ ժողովս, որպէս կանխեցաք ասել 'ի վերոյ, գումարեցաւ յամի տեառն 1311, յաւուրս քահանայապետութեան Կղեմայ Ե. և հաւաքեալ դաս յոյժ 'ի պատճառս բազմապատիկ վճռոյն և օրինադրութեանց զօրս արար 'ի բարեկարգութիւն եկեղեցւոյ, և վասն անհետ առնելոյ մոլորանս անկարգութիւնս ։ Սահմանեաց զառաջին կենացն զոր պարտ էր պահել սևազգեաց միայնակեաց և կանոնիկոս կրօնաւորաց, զգուշացուցեալ զնոսա յամենայն աւելորդ կերակրոց, և պատուիրեալ նոցա կեալ առանձինն՝ որոշեալ 'ի քաղաքաժողով ընկերութենէ, և պարապել յուսումն ոչինչ յիշատակութիւն առնելով զձեռագործաց, զի չիջեալ էր եռանդն նախնի միայնակեցաց ։ Իսկ վասն միանձնուհեաց կացոյց ժողովն զանազան այցելուս յուղղել և 'ի կարգի դնել զանկարգութիւնս զոր 'ի համար արկանէ , որովք յայտնի լինին՝ թէ առ ժամանակօքն որչափ պէտք էին նոցա վերանորոգութեան ։

Պատուհասեցան 'ի ժողովէս և Բեգուինեան միանձնուհիք , որոց միաբանութիւն հարիւր յիսուն ամօք յառաջ հաստատեալ էր 'ի Լամբերտոսէ Բեգուայ առանց ինչ հաւանութեան սրբոյ աթոռոյն ։ Արդ քանզի 'ի սոցունց ազատամիտք ոմանք անգոսնելի արարին զանուն Բեգուինեանց 'ի պատճառս ցնորեալ վարդապետութեան , որով հնարաւոր համարէին յաստի կեանս ստանալ զերանական տեսութիւնն Աստուծոյ և վայելել իբրև 'ի հանդերձելումն , վասն որոյ մերժումն և դատապարտութիւն ժողովոյն հայի առ սոսա , և ոչ առ ողջամիտ Բեգուինեանս՝ որք կան մինչև ցայսօր 'ի Լիէժ քաղաք 'ի Ստորին անուանեալ նահանգս ։

Յանդիմանեցաւ 'ի ժողովէս և հռչակաւոր վէճն որ վասն անկելանոցաց ․ զի յանձն եղև հոգաբարձութիւն նոցա յիմաստունս , 'ի գործունեայ և 'ի բարեհամբաւ աշխարհիկ անձինս 'ի նախատինս և 'ի կշտամբութիւն եկեղեցականաց , որք 'ի յետին դարս անհաւատարիմ գտան յուղիղ տնտեսութեան և 'ի մատակարարութեան ընչից աղքատաց , թէպէտ և 'ի նախնի դարս քահանայք և սարկաւագունք կառավարէին զայն ։ Ի ժամանակէ անտի և առ յապա կարգեցան աշխարհիկ հազարապետք , որոց հաւատացան ստացուածք անկելանոցաց ։

Կղեմէս քահանայապետ արար ևս յանուն ժողովոյն երկուս այլ սահմանադրութիւնս պատշաճեալս 'ի նըպաստ առանձնաշնորհութեանց կրօնաւորաց ։ Առաջնովն պատուէր տայ եպիսկոպոսաց և առաջնորդաց չըհարստահարել զկրօնաւորս , իսկ երկրորդաւն զգուշացուցանէ զկրօնաւորս չեղծանել զիրաւունս իշխանութեան եպիսկոպոսաց և ժողովրդապետաց ․ ունայնացոյց դարձեալ զհամբաւաւորն զայն կանոնն Բոնիֆակիոսի Ը ընդդէմ Պապին՝ որ վասն ապահարկ լինելոյ եկեղեցականաց ։ Նոյնպէս պատուիրեաց ժողովել տասանորդս 'ի կորզել յայլազգեաց զսուրբ երկիրն , սակայն չեղաւ 'ի գործ այն խաչակիր զինուորութիւն ։

ԳԼՈՒԽ Է.

Մահ Կղեմայ Ե, և քահանայապետութիւն Յովհաննու ԻԲ:

Յետ ժողովոյն Վիեննայի և բառնալոյ կարգին Տաճարականաց՝ ոչ յերկարակեաց եղև Կղեմէս քահանայապետ. զի յուղևորել խորհեալ'ի Պորտոյ յիւր հայրենիսն՝ փոխեցաւ 'ի Ռոքմոր՝ հուպ յԱւենիոն քաղաք 'ի քսաներորդի աւուր ամսեանն ապրիլի յամին 1314, յետ իբր ինն ամաց քահանայապետութեան իւրոյ:

Զկնի մահուան նորա ժողովեալ կարդինալաց 'ի Լուգդուն քաղաք յընտրութիւն նորոյ քահանայապետի, երկպառակեցան յիւրեանս. զի ոմանք խնդրէին կացուցանել զիտալացի ոք, և այլք զգաղղիացի, որով աթոռն մնաց 'ի պարապութեան զամս իբր երկուս: Արդ յեօթներորդ աւուր օգոստոսի, յամին 1316, ընտրեցաւ Յակոբ կարդինալն Եւսեանց՝ եպիսկոպոս Փորթոյի ազնուատոհմ գաղղիացի, որ անուանեցաւ Յովհաննէս ԻԲ:

Հռոմայեցիք ակն ունէին՝ թէ նորընտիր քահանայապետս փոխադրեսցի 'ի Հռոմ, հաստատել անդ զաթոռ բնակութեան իւրոյ. բայց սէր հայրենեացն չէթող նմա հեռանալ 'ի Գաղղիոյ. վասն որոյ գնաց նստել յԱւենիոն քաղաք, ուր թագաւորեաց զամս իբր ութուտասն: Արիասիրտ էր նա և անյողդողդ 'ի գործս իւր, որով խնամ կալաւ 'ի զանազան եպիսկոպոսարանս հաստատել պէսպէս Աբբայութիւնս. առնել փոփոխութիւնս եպիսկոպոսարանաց, զոմանս նորոգ հիմնելով, և զայլս յարքեպիսկոպոսական պատիւս վերածելով: Մինչ դեռ զբաղեալ էր քահանայապետս յայս գործ բարեկարգութեան, դաւադրութիւն ինչ մեքենայեցաւ 'ի կործանել զկեանս նորա. սակայն 'ի յայտնել նենգութեանն՝ ըմբռնեցաւ գլխաւորն 'ի թշնամեաց Հուգոն Գերարդոս եպիսկոպոս և արկաւ 'ի բանտ, ուր յետ կարգընկեց լինելոյ մատնեցաւ 'ի ձեռս աշխարհական ատենի և պատուհասեցաւ հրով:

Զկնի այսր դիպուածոյ եղև և այլ առիթ տագնապաղատական վճռոյ քահանայապետին , զի Լուդովիկոս դուքսն Պաւերայի յամին 1328 առեալ էր զպսակն կայսերութեան Գերմանացւոց նախ քան զառնուլն զհաւանութիւն հաստատութեան ՚ի քահանայապետէն , որում անկ էր շնորհել զայն . և զի Լուդովիկոս չկամէր զիրաւունս տուչութեան այնր պատուոյ ճանաչել ՚ի նմանէ , վասն որոյ նզովեցաւ ՚ի քահանայապետէն ։ Ընդ որ ծանրացուցեալ լեալ կայսեր , առ ՚ի վրէժխնդրութիւն նզովիցն հրաման ետ ժողովրդեանն Հռովմայ ընտրել հակապապ զՊետրոս Կորվիէ , զոր և անուանեաց Նիկողայոս Ե ։ Բայց Յովհաննէս քահանայապետ փութացեալ դադարեցոյց զհերձուածն , յետ ձգեալ զՆիկողայոս , զոր կոչեաց առ ինքն յԱւինիոն քաղաք , ուր կատարեաց նա զկեանսն յանդորր խաղաղութեան ընդ քաղցր խնամարկութեամբ Յովհաննու ԻԲ ։ Քանզի սովոր էր Յովհաննէս քահանայապետ քաղցրութեամբ և սիրով վարել ընդ խոնարհս , և բուռն սաստկութեամբ ընդ անսաստ իշխանս ։

ԳԼՈՒԽ Բ.

Բանակռուութիւնք Փրանկիսկեան կրօնաւորաց ընդ միմեանս ։ — Վրիպակ կարծիք Յովհաննու ԻԲ , և մահ նորա ։

Ի ՀԱՍՏԱՏՈՒԹԵՆԷ անտի կարգին Փրանկիսկեանց , մնացեալ յետ մահու սրբոյ հիմնադրին , յուզէր հակառակութիւն մեծ ՚ի կրօնաւորսն վասն ձևոյ զգեստուց իւրեանց և վեղարի , զորոց Փրանկիսկոս չէր ինչ աւանդեալ յայտնապէս ։ Ոի Կոնվէնթուալ անուանեալքն կամէին զգենուլ հանդերձս լայնս և բարակամանս , իսկ Հոգևորական կոչեցեալքն՝ որք խստակրօնք էին քան զառաջինսն , խնդրէին նեղս և խոշորս ։ Ուր ջանացան քահանայապետք Հռովմայ հանդերձ բանիւք յորդորել զնոսա անսալ և հպատակել առաջնորդաց կարգին՝ զոր ինչ միանգամ օրինադրեսցեն վասն ձևոյ զգեստուց · քանզի խստակրօնիցն ինքնագլուխ որոշեալ յեղբարց իւրեանց , եղծիչս համարելով զնոսա կանոնաց սրբոյն Փրանկիսկոսի , ժողովեցան ՚ի Լանկըտոք ։ Վասն որոյ Կղեմէս Ե ՚ի խաղաղել զխռովութիւնսցա՛ս առանձինն կոնդակաւ 'ի ժողովին Սենայի ջան գործեաց միաբանել զնոսա, և հանդարտել զխիղճ մտաց նոցա ։ Եւ ինչ ըստ նմա խստակրօն խոշորազգեստք, որք ինքնակամ բաժանեցան 'ի կարգէն, և արտաքսեալ 'ի քանի մի վանաց զանհաւանս խոշորութեան և խստութեան, ընտրեցին իւրեանց առաջնորդս զորս և կամեցան, և զգեցան հանդերձս նեղս և վեղարս փոքունս ։ Եւ ոչ այսչափ միայն, այլ և յամի տեառն 1322, նախանձաւորք ոմանք 'ի խստակրօնիցն անցին ըստ չափ 'ի կարծիս իւրեանց ․ զի առէին եթէ աշակերտք սրբոյն Ֆրանկիսկոսի հրաժարեալքն 'ի սպառ յամենայն իրաւանց ստանալոյ զինչս՝ չեն տեարք և ոչ կերակրոց և ոչ ըմպելեաց անգամ զորս ճաշակեն ․ և յայնմ հրաժարմանն և անստացուածութեան համարէին հաստատեալ զկատարելութիւն աղքատութեանն Քրիստոսի և առաքելոց նորա, զոր ինքեանք կամակար ուխտիւք յանձն առեալ էին կատարել ։

Յովհաննէս քահանայապետ ցանկացեալ խաղաղութեան եկեղեցւոյ, ոչ կամեցաւ ունկն դնել նրբախոս վարդապետութե Հոգեւորականաց ․ այլ սահմանեաց թէ 'ի սպառնելի իրս չէ մարթ բաժանել զտէրութիւնն 'ի կիրառութենէ, և թէ աղքատութիւնն այն հրաժարելոյ 'ի տէրութենէն և ոչ 'ի կիրառութենէ՝ օտար է 'ի վարդապետութենէն Քրիստոսի և առաքելոց ։

Բազումք 'ի խստակրօն Ֆրանկիսկեանց անհաւանք վճռոյ քահանայապետին՝ միաբանեցան ընդ թշնամիս նորա յամբարտաւանութիւն, որպէս թէ քահանայապետս ունիցի թիւր կարծիս ընդդէմ ուղղափառ վարդապետութեան եկեղեցւոյ ․ և արդարև ունէր նա զանձնական ինչ կարծիս յաղագս հանդերձելոց երանական տեսութեան սրբոց, զոր և մթին բանիւք ասացեալ էր 'ի միում յատենախօսութեանց յառաջին աւուր նոյեմբերի յամին 1331, 'ի Տօղոսա քաղաքի ։ Սակայն քահանայապետս ուղղագրեաց զայն, կամ մեկնաբանեաց յուղղափառ իմաստ մերձ 'ի վախճան կենաց իւրոց, որ եղև յԴեկտեմբերին յամին 1334 ։ Ճարտարամիտ քահանայապետս եթող 'ի գանձ եկեղեցւոյ զստացուածս անբաւ ճոխութեան, յորոյ սակս բամբասեցաւ իբր ագահ և զօշաքաղ ․ բայց խորհուրդ մնաց նորա էր՝ զայն զանձս վարել 'ի պէտս աղքատութեան տնօրինական սուրբ տեղեաց Երուսաղեմի։ Էր այր անմեղ, զգուշաւոր և բարեկարգ, տալով օրինակ զգաստութեան վարուց յայսպիսում դարու, յորում կալեալ ունէր զմիտս ամենեցուն մեղկութիւն և իշխանասիրութիւն։ Պարապէր անընդհատ յուսմունս գիտութեանց, յորս յօժարամիտ էր 'ի մանուկ տիոց․ հմուտ գոլով եկեղեցական և աշխարհական իրաւագիտութեանց, աստուածաբանական հմտութե՟ն և ճարտարութեամբ մնայն երեւէր ձեռնհաս առ ամենայն ծանր խնդիրս․ անվեհեր էր նա զարձեալ և գործունեայ յամենայնի յոր ինչ միանգամ ձեռն արկանէր կատարել։ Յաւուրս սորա եղև սկզբնաւորութիւն Ունիթօռաց յազգիս, զորոց ասասցուք 'ի վերս վիճակի ազգիս և կաթուղիկոսաց Հայոց։

ԳԼՈՒԽ Թ.

Քահանայապետք Հռովմայ․ Բենեդիկտոս ԺԲ․ Կղեմէս Զ․ Իննովկենտիոս Զ․ և Ուրբանոս Ե։

ՅԵՏ մահուան Յովհաննու ԻԲ․ կոչու զաթոռ քահանայապետութեանն կարդինալն Յակոբ Ֆուռնիէ 'ի կիստերսեան սպիտակազգեստ կրօնաւորաց, որ և անուանեցաւ Բենեդիկտոս ԺԲ։ Ի նստել իւրում դադարեցոյց զհարկ տուրս զոր նախորդ իւր ծանրաբեռնեալ էր 'ի վերայ եկեղեցեաց․ միանգամայն խնամ կալաւ անհետ առնել զխաթար յօժարամտութիւն արքունի մարդկանն 'ի սեփհականութիւն, զյանձնեալն առ նախորդաւ իւրով։ Ի տալն և 'ի բաշխել զհասս ժառանգաւորութեանց՝ ոչ ինչ փոյթ յանձին կալաւ հաճել զիշխանս, որպէս և ոչ զազգականս իւր և զսիրեկանս, այլ զարժանաւորն եթէ գուն գործեաց ամբառնալ յայն պատիւ։ Խնամ կալաւ բարեկարգել զկրօնաւորս և զկանոնիկոսս․ վերածեալ զնոսա յառաջին վիճակ խստութեան վարուց։

Հռովմայեցիք առաքեցին առ նա զեսպանս իւր հրովարտակօք՝ յորդոր մատուցանելով փոխադրել զսուրբ աթոռն յԱւինիոնէ 'ի Հռովմ։ Զայսու ժամանակաւ համբաւեալն Պետրարքա գրեաց առ քահանայապետն նամակ լատին տաղաչափութեամբ, յորում նկարագրէ զՀռովմ իբրու հարսն յաւագին՝ որ արտօսրալից աչօք խնդրիցէ զգալուստ փեսային : Բենեդիկտոս եղեալ էր 'ի մօտ մեկնել 'ի Գաղղիոյ և դառնալ 'ի Հռովմ, բայց խռովութիւնք Իտալիոյ, և հրապոյրք խափանարարք արքունեացն Գաղղիոյ՝ արգելին զնա յԱւենիոն, ուր արկ զհիմն արքայավայել քահանայապետական պալատանն հոյակապ և բարձրաբերձ աշտարակօք : Մեծաւ սրբութեամբ վարուց 'ի նմին քաղաքի՝ յամին 1342՝ կացեալ 'ի քահանայապետութեան զամս եօթն և զամիսս չորս : Սովոր էր ասել միշտ 'ի կենդանութեան իւրում եթէ « Ի լինել ճշմարիտ քահանայապետ՝ հարկ է զի իցէ որ անհայր անմայր չհամարեալ յազգս, իբրև զՄելքիսեդեկ քահանայ Աստուծոյ »:

Յաւուրս սորին Բենեդիկտոսի երևեցան յԻտալիա խաբեբայք ոմանք հայազգիք ատեցեալք ուղղափառաց ազգին իւրեանց, զորս կոչէին Եւտիքականս, և յօդեալ յաւելուին բազում անհեթեթ ամբաստանութիւնս զնոցանէ . 'ի մայրաքաղաքին Հռովմայ Աթանաս ոմն եպիսկոպոս Մրաց կամ Մարաղայ վանաց անուանեալ՝ գուն գործէր ծաւալել զրպարտութիւնս 'ի վերայ Հայոց, մինչև կոչել զնոսա անկրօնս և ուրացօղս : Նոյնպէս և Պետրոս ոմն անուն՝ ձևացեալ իբր եպիսկոպոս՝ Նազարէթ քաղաքի և պատրիարգ Երուսաղեմի, նստեալ 'ի Պատաւին քաղաք, նմին ախտին զառածանէր, որպէս և Եզեկիէլ ոմն իբր փոխանորդ Պետրոսի նստէր 'ի Փլորենտիա : Սոքա ամենեքեան անկան ընդ արդարակշիռ պատուհասիւք քահանայապետին Բենեդիկտոսի, որոյ հրամանաւն եպիսկոպոսն Անոգնի փոխանորդ պապին 'ի Հռովմ, եպիսկոպոսունք Պատաւինի և Փլորենտիոյ կալեալ զնոսին բանտարգել արարին : Այլ սոքա որք թափառականք յամբոխէ անտի Ունիթօռ անուանելոց, որք անխոհեմութեամբ իւրեանց հալածականք եղեն 'ի Հայոց, որպէս տեսցուք համառօտիւ 'ի վէպս վիճակի եկեղեցւոյն Հայոց :

Զկնի մահուան Բենեդիկտոսի՝ յամին 1342 ընտրեցաւ Կղեմէս Զ., որ զառաջինն անուանեալ կոչէր

Պետրոս Հռոգերիոս՝ կարդինալ արքեպիսկոպոս Ռուան քաղաքի ։ Ի գահակալել իւրում զհետ երթեալ սորա ընթացից և խորհրդոց մօրս Յովհաննու ԻԲ․, նորոգեաց զփրոչէսն կամ զատենական քննութիւնն ընդդէմ Լուդովիկոսի կայսեր ։ Նա յետ բազմադիմի խրատուց և գրաւոր յորդորմանց յորս պատուիրէր նմա խոնարհել 'ի հպատակութիւն հրամանաց իւրոց, ապա յամին 1346 գրեաց զյետին դատակնիքն ընդդէմ նորա, և 'ի նմին կոնդակի հրատարակելով հանդիսիւ յաւուր աւագ հինգշաբաթու, արգել զամենեսին 'ի հպատակութենէ նորա. և զի մի որ գաղտ դիցէ ընդ նմա, կամ տացէ նմա տեղի ապաստանի. և ապա կարգաց 'ի վերայ նորա անէծս և նզովս զաւագինս ։

Այս մճիւ կայծակնահար յորդորեաց զբազումս 'ի հպատակաց կայսեր՝ թողուլ լքանել զԼուդովիկոս արքայ, և փոխանակ նորա ընտրեցաւ Կարոլոս Դ., որ առանց ինչ հակառակութեան նստաւ յաթոռ կայսերութեան. զի յետ սակաւուց Լուդովիկոս վախճանեցաւ զկեանսն յամին 1347 ։ Փոյթ խնամոց նախանձաւորութեան Կղեմայ էր պահել զպատիւ իշխանութեան քահանայապետական աթոռոյն. և զի ժամանակս ոչ սակաւ կացեալ էր նա բնակութեամբ յարքունիս Գաղղիոյ, վասն որոյ և մեծափառ ճոխութեամբ անցուցանէր զաւուրս իւր. առատաձեռն էր 'ի պարգևս, և դիւրապատրաստ 'ի խնամս բարերարութեան առ ամենեսին, և եկաց արդարև հայր գթած անուամբ և արդեամբք ։

Հռովմէական ժողովուրդն՝ որպէս առ նախորդսն նոյնպէս և առ սոյն առաքեցին դեսպանս հրաւիրմանց կոչել զնա 'ի Հռովմ ։ Պետրարքա որ մի էր 'ի դեսպանաց անտի՝ զուր ջանացաւ հաճել զքահանայապետն. զի կամեցաւ նա կալ մնալ յԱւինիոն. զի և զսեպհական ժառանգութիւն քաղաքին զաւառաւն հանդերձ այն ինչ ստացեալ էր 'ի Յովհաննայ թագուհւոյն Նէապօլոյ 'ի գին ութսուն հազար ոսկի ֆիորինաց յամին 1348 ։

Յաւուրս սորին քահանայապետի եղեն խնդիրք և քննութիւնք ամբաստանութեանց 'ի վերայ ազգին

Հայոց, զորոց տեսցես սակաւուք 'ի վէպս կաթուղիկոսաց։

Ի վախճանել Կղեմայ Զ., որ կալաւ զաթոռն զամս տասն և զամիսս եօթն, յամին 1352 ընտրեցաւ Ստեփանոս Ալբերտեան կարդինալ եպիսկոպոսն Ոստիայ քաղաքի, և կոչեցաւ Իննովկենտիոս Զ.։ Սա խափանեաց զօրինադրութիւն նախորդին իւրոյ սակս եկամտից ժառանգաւորութեանց որք կարգեալ էին 'ի պէտս կարդինալաց, և այլովք բարեկարգեաց զբազմապատիկ անկարգութիւնս յաճախեալս 'ի ժամանակին։ Զժառանգաւորս աստանդականս առաքեաց յիւրաքանչիւր վիճակս. պակասեցոյց զթիւ սպասաւորաց իւրոց, և զյաւելուած ծախուց պալատան իւրոյ բաշխեաց աղքատաց։ Էր այր բարեսէր, արդար և անմեղ, ձեռնտու իմաստնոց և ուսումնասիրաց, և բարեկրօն վարուքն օրինակ եկաց ուղղութե՟ գաղջացելոց։ Վախճանեցաւ յերկոտասաներորդ աւուր ամսեանն սեպտեմբերի յամին 1362, կալեալ զաթոռ քահանայապետութեան զամս իբր տասն։

ԳԼՈՒԽ Ժ.

Հանգամանք քաղաքին Հռովմայ, և գործք Նիկողայոսի Ռենցեան։

Ի ՓՈԽԱԴՐԵԼ աթոռոյ քահանայապետութե՟ յԱւենիոն և յանիշխանալ նախնի պայծառութեան քաղաքին Հռովմայ, յամին 1347 այր մի նուաստատոհմիկ՝ Նիկողայոս անուն Ռենցեան՝ խորհեցաւ վերածել զՀռովմ յառաջին վիճակ պայծառութե՟ իւրոյ։ Թէպէտ և որդի էր՝ Նիկողայոս լուացարարի ուրումն, սակայն դէպք 'ի բարի յաջողեալ նմա՝ եմուտ յարուեստ նօտարութե՟, և 'ի խռովասէր բարուցն զրգռեալ խորհէր 'ի մտի յուզել ապստամբութի՟ քաղաքականս. և զի հմուտ էր պատմական անցից նախնեացն Հռովմայ և արիական քաջութեանցն Կեսարու, զարթեաւ 'ի նմա ոգի ազատութեան և հաստատեցաւ 'ի միտս դնել 'ի գործ զխորհեալսն։

Ընդ այն ժամանակս յորդորեալ Հռովմայեցւոց 'ի պերճախօսութե՟ առն, ընտրեցին և զնա 'ի լինել մի 'ի դեսպանացն, որք իբր հրաւիրակք առաքեցան 'ի ժողովերդենէն առ Կղեմէս Զ. 'ի սկիզբն քահանայապետութեան նորա ։ Ի դառնալ՝ Նիկողայոսի անդրէն 'ի Հռոմ՝ յաւուր պենտեկոստէի առաջի արար ժողովրդեան զմեծ օգուտ եւս դեսպանութեան իւրոյ. և այնու զօրաւոր ատենախօսութեամբ իւրով 'ի միաբան հաւանութեան հասարակաց ընտրեցաւ տրիբուն ժողովրդեան, և տուաւ 'ի ձեռս նորա ատեանն Կապիտոլիոնի ։ Յայնժամ ձեռն 'ի գործ արկեալ՝ Նիկողայոսի ընկեց 'ի պատուոյ իշխանութեան զամենայն ազնուականս Հռոմայ. և բանտարգել արար զնոսա, որք միանգամ 'ի ծածուկ ձեռնտու էին զօրաց և աւազակաց 'ի կողոպտել զՀռոմ և յաւարի առնուլ զմերձաւոր սահմանս նորա ։ Զնոյն խստութիւն օրինաց եցոյց և յայլ կողմանս Իտալիոյ՝ որք ընդ իւրով տէրութեամբն էին, և յամենայն տեղիս հաստատեաց զխաղաղութիւն, զանդորրութիւն և զառատութիւն ։

Քահանայապետն Կղեմէս Զ. համարեալ թէ՛ Նիկողայոս գործիք է զայն 'ի պարծանս քահանայապետութեան իւրոյ և յօգուտ հայրենեաց, գովեաց զհնարս ճարտարամտութեան նորա՝ յորդոր մատոյց խնամ ունել տէրութեան Հռոմայ յիւր անուն ։ Կայսրն և Թագուհին՝ Եւրոպայ առաքեցին առ նա դեսպանս՝ իբր նորոգողի բարեկարգութեան Իտալիոյ ։ Ի պատուոյ աստի մեծամեծեալ՝ Նիկողայոսի՝ ցանկացաւ գերագոյն եւս իշխանութեան. և չարաչար վարեալ զպատիւն զոր ունէր՝ վատնեաց զձախութիւն իւր և ընկալաւ ազգի ազգի անուանս պատուոյ, և սկսաւ զանձնէ գոլ ˝Իշխանազուն ասպետ Հոգւոյն սրբոյ, ահարկու և գթած ազատարար Հռոմայ, նախանձաւոր փառաց Իտալիոյ, բարեկամ տիեզերաց, և տրիբուն օգոստոս ,,։ Իբր և զհանդէս թագաւորութեան իւրոյ, ապա ցնորեալ մտօք յանդըգնեցաւ կոչել յատեան իւր զկայսրն, զկայսրընտիրս, ըզքահանայապետն և զկարդինալս առ հասարակ ։ Զիշխանս Հռոմայ զարգելեալսն 'ի բանտի դատապարտեաց 'ի մահ. սակայն 'ի խնդրել ժողովրդեանն զազատութիւն նոցա 'ի մահուանէ, կամեցաւ առնել զհանդէս յաղթանակի իւրոյ նորօք հանդերձ շրջելով ընդ փողոցս քաղաքին ըստ սովորութեան նախնի հռովմայեցւոց ։

Զայրացեալ ընդ այն ազնուականացն Հռոմայ՝ ամրացան 'ի գղեակս իւրաքանչիւր, և զօրաժողով լեալ անդէն և զինեալ պատրաստութեամբ դիմեցին պաշարել զտրիբունն՝ Նիկողայոս. և նորա զանգիտեալ 'ի բռնութենէ ոմանց իշխանաց՝ ստիպեցաւ փախչել 'ի Նեապօլիս, և անտի 'ի Փռագա քաղաք Պօհեմիոյ, ուր կալանաւորեալ 'ի Կարոլոսէ կայսերէ առաքեցաւ առ Կղեմէս Զ, տալ զգաստակնիք պատուհասի նորա։ Նոյն օրհասն մահու քահանայապետին խափան եղև իրացն. իսկ Իննովկենտիոս Զ, որ յաջորդեաց զԿղեմէս, պատշաճ գտանելով վերստին առաքել զՆիկողայոս 'ի Հռոմ, տուեալ նմա զպատիւ պատրիկութեան։

Ընդ այն ժամանակս իշխանազունն ազգատոհմին Ուրսինեան ահարկու էր յոյժ և մեծարոյ 'ի քաղաքին Հռովմայ, մինչև քահանայապետաց անգամ առաւելագոյն զանգիտել 'ի նոցանէ քան 'ի նենգամիտ ճարտարութենէ Նիկողայոսի։ Սակայն Նիկողայոս գիտաց ստանալ իւր կուսակիցս, և զամենայն ինչ խնամ ունել տնտեսութեան քաղաքին անկախ իշխանութեամբ. բայց ժողովրդեան Հռովմայ նեղեալ 'ի բռնաւոր խստութենէն և 'ի հարկապահանջութենէ նորա՝ խորհեցան կորուսանել զնա. վասն որոյ միաբանեալ խուռն ամբոխիւ յարձակեցան 'ի վերայ նորա, արկին հուր 'ի պալատ բնակութեանն. ուստի փախուցեալ նորա անծանօթ երևոյթ իբր մուրացիկ ոք, և 'ի խուսելն յօտարութիւն՝ ծանեան զնա և սպանին յութերորդ աւուր հոկտեմբերի յամին 1354։ Իննովկենտիոս Զ, լուեալ զմահ նորա՝ պատուէր ետ դեսպանին իւրում՝ կարդինալ Եղիդիոսի Ալվարեզ հսկել 'ի վերայ քաղաքին Հռովմայ։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Գործք քահանայապետաց 'ի Հռոմ, և սկիզբն հերձուածոյ 'ի նոսա։

ԻՆՆՈՎԿԵՆՏԻՈՍ Զ, լցեալ զաւուրս կենաց իւրոց բազմութիւ ամօք և վշտալից տկարութեամբ փոխեցաւ յամին 1362, կացեալ 'ի քահանայապետութեան զամս ինն և զամիս ինն։ Զկնի նորա ընտրեցաւ Գուլիելմոս Կրիմոարտ՝ աբբայ վանաց սրբոյն Վիկտորի որ 'ի Մասսիլիա, և անուանեցաւ Ուրբանոս Ե, որ հետևեալ գոլով առատաձեռնութեան նախորդին իւրոյ՝ խնամ կալաւ բարւոք սննդեան և յառաջադիմութեան իբր հազար ուսանողաց ՚ի զանազան համալսարանս Եւրոպիոյ. Փոյթ յանձին կալաւ կառուցանել եկեղեցիս, սահմանել ուխտս կամ ժողովս կանոնիկոսաց. և խաղաղացոյց զկարգս և զկրօնս եկեղեցականաց՝ ջանալով բառնալ զանդգնութիւն վարուց նոցա. Հնարեցաւ խափանել և արգելուլ զսիմոնականութիւն և զյափշտակութիւն եկամտից ժառանգաւորաց. խորհեցաւ փոխադրել զաթոռ իւր ՚ի Հռովմ, զոր և արար իսկ յամին 1367. բայց յետ երից ամաց դարձաւ անդրէն յԱւենիոն միջնորդ լինել հաշտութե՛ ընդ Գաղղիա և ընդ Անգղիա. և եհաս յԱւենիոն յերեքտասաներորդ աւուր ամսեանն սեպտեմբերի յամին 1371. և վախճանեցաւ անդ ՚ի նմին ամի յիննևտասներորդ աւուր դեկտեմբերի. կացեալ ՚ի քահանայապետութեան զամս ութ և զաւուրս քառասուն և ինն, թողեալ զանմահական յիշատակ և զանուն սրբութեան. մինչև պսակաւորին Փեթրարքայի վկայել զնմանէ, թէ չեղև որ ձեռնհաս ստգտանել զքահանայապետս և զանբծութիւն նորա։ Ուրբանոս քահանայապետ գրեաց և նամակ պանծալի յամին 1365 առ արքեպիսկոպոսունս, եպիսկոպոսունս, վանականս, իշխանս և ժողովուրդս Հայոց, որով յորդորէ զնոսին հայրական սիրով ընդունել իւրեանց թագաւոր զԼևոն ՚ի լուսինեան տոհմէ զարմական Պետրոսի արքային Կիպրոսի. զոր և մտադիւր սրտիւ և հոժարակութեամբ ընկալեալ ազգին առ հասարակ, օծին զնա ՚ի թագաւոր Հայոց.

Երեք դէպք պանծալիք պայծառացուցին զքահանայապետութիւն Ուրբանոսի. Նախ՝ յորժամ ցնծալից հանդիսիւ հռովմէական ժողովրդեան և յաղթական փառօք եմուտ ՚ի Հռովմ. երկրորդ՝ զի յուղևորել նորա ՚ի Մոնթէ Ֆիասքոնէ մինչև ՚ի Հռովմ, իբր զերկօրեայ ճանապարհ, Կայսրն Կարոլոս Դ. հետևակ ածէր զսանձից սպիտակ երիվարին յորոյ վերայ նստեալ էր քահանայապետն, և ած զնա մինչև ՚ի տաճար սրբոյն Պետրոսի. և երրորդ՝ յորժամ եկեալ առ նա իւր ՚ի ծունկս անկեալ զարևելեան կայսրն զՅովհաննէս Պալէոլոգ հրաժարել ՚ի հերձուածողական դաւանութե՛.

Իշխանս այս յօժարեցաւ միաբանել զՅոյնս ընդ եկեղեցւոյն Լատինացւոց՝ ակն ունելով գտանել առ 'ի նոցանէ ձեռն օգնականութեան ընդդէմ անհաւատից . բայց ոչ կարելով 'ի հաւանութիւն ածել զքահանայապետն, որպէս և ոչ զիշխանս Եւրոպիոյ մտանել ընդ իւր 'ի դաշն , չհամարձակեցաւ ստիպել զհպատակս իւր զազգն Յունաց 'ի միաբանութիւն ընդ եկեղեցւոյն Լատինաց ։

Ի վախճանել Ուրբանոսի Ե., զկնի աւուրց սակաւուց միաբան հաւանութեամբ կարդինալաց ընտրեցաւ Պետրոս Ռոգերիոս կարդինալ եղբօրորդի Կղեմայ Զ., և անուանեցաւ Գրիգոր ԺԱ.։ Սա յետ հնգից առաջնոց ամաց քահանայապետութեանն յԱւենիոն քաղաքի, և տեսելոց զօրինազանցութիւն պէսպէսբարեկարգութեանց առ եպիսկոպոսունս և առաջնորդս, ստիպեցաւ 'ի թախանձանաց և յազդու բանից սրբուհւոյն Կատարինեայ Սենացւոյ և սրբուհւոյն Բրիճիթայ փոխադրել զբնակութիւն իւր 'ի Ռովմ, ուր եհաս յամսեանն սեպտեմբերի յամին 1376 և մեծահանդէս փառօք եմուտ 'ի մայրաքաղաքն անդր ։ Սակայն յետ իբր երկուց ամաց՝ իբրև խորհէր վերստին դառնալ յԱւենիոն քաղաք, եհաս նմա օր վախճանի 'ի Ռովմ, յամին 1378 յամսեանն սեպտեմբերի, կալեալ զաթոռ քահանայապետութեան զամս եօթն և զամիսս երիս ։ Սա եօթներորդ և յետին եկաց 'ի գաղղիացի քահանայապետս՝ որք ընդ ամս իբր եօթանասուն կացին արտաքոյ Ռովմայ ։

Փափաքելով Ռովմայեցւոց զի աթոռն առաքելական հաստատեսցի 'ի Ռովմ, խնդրէին զքահանայապետ որ իտալացի . և զի 'ի վեշտասան կարդինալաց անտի ժողովելոց յընտրութիւն նորոյ քահանայապետի՝ չորք և եթ իտալացի կարդինալք էին, կասկածեալ թէ գուցէ 'ի դերև ելցէ ակնկալութիւն իւրեանց՝ միաբանեալ առ հասարակ ժողովրդեան՝ խուռն բազմութեամբ դիմեցին 'ի փակարանն , կամ 'ի դուռն պալատին ուր սովոր էին ընտրել զքահանայապետն . յորմէ զանգիտեալ կարդինալացն՝ 'ի հանդարտել զխիտ ժողովրդեան խոստացան կատարել զկամս նոցա ։ Եւ վասն այնորիկ ընտրեցաւ Բարթուղիմէոս Պրինիան Նէապօլեցի՝ արքեպիսկոպոսն Պարի քաղաքի, որ անուանեցաւ Ուրբանոս Զ ։ Էր սա այր ազնուատոհմ, իմաստուն և օրէնսգէտ, Թշնամի անժուժկալութեան կղերց և սիմոնականութեան, վարժ և հմուտ 'ի գործս պաշտամանց եկեղեցւոյ. անաչառ 'ի խօսս և 'ի գործս, և համարձակ 'ի ստգտանել զթերութիւնս այլոց. վասն որոյ անհաճոյ գտաւ յաչս ամենեցուն ։ Ի կարի խստութենէն և յանաչառ բանից նորա զայրագնեալ կարդինալաց, որք մեծագոյն մասամբ գաղղիացիք էին, մեկնեցան 'ի Հռովմայ և գնացին յԱնագնի քաղաք, ուր 'ի խորհուրդ մտեալ գահընկէց առնել զՈւրբանոս, պատրուակ առին զահ իւրեանց 'ի ստահակ բռնադատութէ ժողովրդեանն Հռովմայ, իբրու այն թէ յակամայ կամս ընտրեալ իցեն զՈւրբանոս. վասն որոյ միաբան խորհրդով կացուցին հակապապ զՀռոբերտոս կարդինալ գենեւացի զարքեպիսկոպոս Կամբրէի, որ անուանեցաւ Կղեմէս Է ։ Տեսեալ սորա թէ Ուրբանոս նստի 'ի Հռովմ, կամեցաւ և ինքն հաստատել բնակութեամբ յԱւինիոն. զառաջինն ընդունելի եղև նա տէրութեանն Նէապօլսոյ և Փռովանս գաւառի, ապա ընկալաւ զնա և պետութիւնն Գաղղիոյ, որպէս և համալսարանն Փարիզու ։

Աշխարհքն սոքա միմեանց ընդդէմ ձեռն արկին 'ի հնարս հաստատելոյ զիշխանութիւն իւրեանց և լցին զԻտալիա աղմկաւ և արիւնհեղութեամբ ։ Քանզի կուսակիցք երկոցուն ևս կողմանց անհնարին կատաղութեամբ վառեալ սկսան մարտնչել ընդ միմեանս. և նզովք և նախատինք յորդեցին ընդ ամենայն տեղիս ։ Այսպէս սիրոյ և խաղաղութեանն վարդապետք՝ ատելութեան և խռովութեան կացեալ պատճառք, օրինակ աւաղելի մարդկային տկարութեան եղեն ։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Մահ Ուրբանոսի Զ.

ՈՒՐԲԱՆՈՍ քահանայապետ, որ գլխաւոր և նախկին պատճառք թուէր քաղաքական մարտից և աւերութեան Իտալիոյ, տարաւ ծանր և անտանելի վշտաց 'ի հռովմէական խռովայոյզ ամբոխէ ։ Որչափ մահու նո-

րա, որ դիպաւ յամին 1389, զերծոյց զնա 'ի վտանգէ չարեացն զոր ապառնային թշնամիք. եւ կալաւ զաթոռ քահանայապետութեան զամս մետասան եւ զամիս վեց։ Բայց մահուամբ նորա ոչ դադարեցաւ հերձուածն, զի չորեքտասան կարդինալք ծիրանաւորեալք 'ի նմանէ, յերկրորդ աւուր ամսեանն նոյեմբերի յամին 1389 ընտրեցին զկարդինալ մի Նէապօլսեցի Թոմաչէլլի անուանեալ՝ որ կոչեցաւ Բոնիփակիոս Թ.։

Իսկ հակապապն Կղեմէս զուգապատիւ համօրեայն Ուրբանոսի, որ նստէր յԱւենիոն, վախճանեցաւ յամին 1394, կացեալ յայն աթոռ զամս վեշտասան։ Սա ըստ որում պատմի, յամենայն 'ի կեանս իւր եղև ծառայ ծառայից իշխանացն․․, վասն որոյ և ստիպեցաւ համբերել թշնամանացն, և տառապել 'ի տագնապս թախանձողաց։ Առատ էր նա 'ի խառնուածս, անձին պարզեատու, և այլոց քաղցրանօք բանիւ յուսադիր. զեկեղեցականս արկ ընդ լծով իշխանաց, և տկարացոյց զիշխանութիւն քահանայապետական աթոռոյ։

Թուէր ինձ թէ 'ի մեռանել Կղեմէսի անդորրասցի եկեղեցի, բայց 'ի դերև ել յոյս անխռովութեան ամենեցուն. զի կարդինալքն զուգեալք յԱւենիոն՝ չկամելով անսալ խնդրուածոց Կարոլոսի արքային Գաղղիոյ, որ առանձին սուրհանդակաւ խնդրեալ էր յապաղել զընտրութիւն յաջորդին, կացուցին 'ի տեղի վախճանելոյն զհամբաւաւորն Պետրոս Լունայեան զկարդինալն արագոնացի, որ անուանեցաւ Բենեդիկտոս ԺԳ.։ Զինչս պատմութեան սորա՝ թէ զինչ հնարեցաւ նմա յայն պատիւ, և զհանապազորդելոյ հերձուածոյ աթոռոյն զրուցեցաք 'ի վերոյ անցից հնգետասաներորդի դարու։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Հերետիկոսք.

Առ անթերի 'ի լրումն ածել զկարգ նախապատմեալ անցից՝ զանց արարաք խօսել զհերետիկոսաց՝ որք յայսմ դարու 'ի պատճառս մոլորութեան իւրեանց 'ի տագնապս խռովութեան արկին զհաւատացեալս։

Ի նախնի դարս 'ի վեր երեւեցաւ այլ ինչ նորօրինակ ապաշխարողաց Ձաղկաւոր անուանելոց, որք էին խումբ ռամիկ ժողովրդեան՝ սկսեալք յԻտալիա. սոքա բոկոտն եւ խարազան 'ի ձեռին խմբովին շրջէին ընդ ամենայն սահմանս՝ յանխնայ ձաղկելով զմարմինս իւրեանց մինչեւ արիւնաներկել ։ Յայս այլ արտաքին ապաշխարութեան յաւելին յետոյ եւ մոլորութիւնս անբերելիս. զի թէպէտ եւ աշխարհիկք անձինք էին սոքա, սակայն յանդգնեցան բնել զկարգաւորական խոստովանութիւն եւ արձակել 'ի մեղաց ։ Մոլորութիւն այս որ անհետացեալ թուէր 'ի սպառ, 'ի չորեքտասաներորդի դարու վերստին երեւեցաւ 'ի Գերմանիա եւ 'ի Սաձոնա, որպէս եւ 'ի գաւառս ինչ Գաղղիոյ, ուր եւ դատապարտեալ հերքեցաւ յաստուածաբանից Փարիզու ։

Բեգուարտեանք, Բեգուինեանք եւ Ֆրաթիչելլի անուանեալքն թէպէտ եւ նզովեցան 'ի ժողովն Վիեննայի յամին 1311, սակայն ծաղումն մոլորութեան սոցա յառաջ էր քան զչորեքտասաներորդ դար ։ Պատմութիւն սոցա թէպէտ լի է անստոյգ եւ նսեմ աւանդութեամբք, սակայն ճշմարտանման թուի թէ Բեգուարտեանք եւ Ֆրաթիչելլիք էին կարգաւորեալք անձինք 'ի Ֆրանկիսկեան կրօնաւորաց, առաջնորդք մոլար վարդապետութեանց, որոց չգտեալ տեղի յԻտալիա՝ սփռեցան եւ յարեւելս, ուր զատարկապորտք եւ խռովագեացք, որք արտաքնայարդար ձեւովն կեղծէին բարեպաշտօրէն կեալ, սակայն վարէին անզգամ եւ գայթակղելի գնացս ։ Զմոլորութիւն սոցա նորոգեցին Հանգստականն անուանեալքն, զորս հալածական արար ատեանն Խուզարկուաց, զբազումս 'ի նոցանէ 'ի հուր դատելով. բայց չեղեւ հնար անհետ առնել զնոսա 'ի սպառ ։

Տուրլուպինեանք էին այլ ինչ Բեգուարտեանց, կամ լաւ եւս ասել, Մանիքեցւոց, որք երեւեցան յայսմ դարու 'ի Սաւոյիա եւ 'ի գաւառս դքսութեան Տոֆինէի. որք անօրէնք եւ զազրագործք, որք զազդումն բնութեան աստուածային օրէնս համարելով՝ անամօթ լրբէին յամենայն ազգս պղծութեանց ։ Գրեանս զազրալից վարդապետութեան սոցա այրեցան 'ի հրապարակի խոզավաճառաց 'ի Փարիզ քաղաքի ։

Ի Յունաստան առ միայնակեացս Աթոս լերին անսու աղանդ ինչ հանգստականաց , ոչ միայն վնասակար , այլ և ծաղրական ․ զի համարէին զանձինս ժամանել ՚ի ծայր կատարելութեան հոգևոր կենաց՝ մինչև մարմնական աչօք տեսանել զլոյս աստուածութեան ։ Այս և ցնորեալ մտօք դիտէին ականբ զշարժմունս սրտի , և ՚ի նոցունց գուշակէին զյօժարութիւնս և զվիճակ հոգւոյն ։ Կոչեցան սոքա և Պաղամեանք ՚ի Գրիգորէ Պաղամայ յառաջնորդէ մոլորութեան իւրեանց ։

Վնասակարագոյն և երկարատև քան զնախագրեալսն եղև մոլորութիւն Վիկլեփեանց , որոց հիմունք մոլորութեան արկան յայսմ դարու , և սաստկացաւ ճարակումն յետ հնգետասաներորդի դարու ։ Սոքա առին զիւրեանց կոչումն ՚ի Յովհաննէ Վիկլեփայ , որ էր ժողովրդապետ ՚ի վիճակին Լինքոլնի յԱնգղիա , այր խստակրօն վարուք , և յանդիմանէր միշտ զախտս և զանուղղայ գնացս եկեղեցականաց , զճոխութիւն եպիսկոպոսաց , զդատարկութիւն և զանգործ կեանս միայնակեցաց , զմեծութիւն և զճոխութիւն հռովմէական արքունեաց ։ Պարսաւէր դարձեալ և զգայթակղելի հերձուած քահանայապետական աթոռոյ , որպէս և զնզովսն և զբանադրանս զյաճախեալսն ՚ի ժամանակին՝ առանց ինչ օրինաւոր հարկի և պատճառաց ։ Մինչ ուսուցանէր սա զաստուածաբանութիւն յՕքսֆորտ քաղաքի , դէպ եղև նմա բանակռիւ լինել ընդ ոմանս ՚ի մուրացիկ կրօնաւորաց , և յայնմ հետէ և առ յապա ոսոխ դառն եկաց ամենայն կրօնաւորաց ։ Համարձակախօս բանիւքն հաճոյ գտեալ յաչս պալատականաց և խաժամուժ ամբոխին , յետ այնորիկ յանդուգն բերանով սկսաւ թշնամանել զամենեսեան ։

Ստէպ հակառակութիւնք ընդ մէջ աթոռոյն Հռովմայ և պետութեանն Անգղիոյ պատճառք եղեալ էին զաղջամաղջ ժողովրդեան ՚ի սիրոյ և ՚ի յօժարամիտ հպատակութենէ առ սուրբ դահն առաքելական ․ դառնացեալ էին յոյժ դարձեալ , տեսանելով զի արքայն իւրեանց եդ զթագ իշխանութեանն Անգղիոյ յոտս նուիրակին Հռովմայ , և նորա ընկալեալ զայն եդ ՚ի գլուխ իւր՝ որպէս թէ թագ այնր իշխանութեան ընծայեալ իցէ քահանայապետին Հռովմայ ․ յոյր սակս օրինադրեալ ՚ի վերայ տէրութեան և տուրս ինչ հարկաց . ծանր էր նոցա տեսանել և զեկամուտ ժառանգաւորաց անգղիական ազգութեանն բաշխեալ յօտարազգիս . և եկեղեցականք Անգղիոյ կամակիցք և կուսակիցք էին Հռոմայ պետութեանն , վասն որոյ արհամարհեալ ատեցան 'ի ժողովրդենէն՝ որ վաղու եւս մախայր ընդ ճոխութիւն ստացուածոց եկեղեցականաց : Տեսեալ Վիկլեփայ զի յօժարամիտ է ժողովուրդն ապստամբել 'ի գահէն Հռոմայ , զօրացաւ 'ի խրախուսելոց համախոհից իւրոց , և զինեցաւ ոչ միայն ընդդէմ եկեղեցւոյ , այլ և բազում վարդապետութեանց հաւատոյ . նորոգելով զմոլորութիւն Դոնատեանց , և 'ի յոլով իրս կարապետ լինելով և առաջնորդ յետոյն Բողոքարկուաց : Սա կամեցաւ մերժել և անգանել զխորհուրդս եկեղեցւոյ , զգրոշմ , զապաշխարութիւն զօծումն վերջին , զպատարագ և զյարգութիւն սրբոց . առաւել յանդուգն համարձակախօսութեամբն , սերմնացան եղև բազմապատիկ մոլորութեանց , զորս յետ նորա հանդիսացուցին այլ հերձուածապետք :

Եւ քանզի յանդուգն համարձակութեամբ ասէր՝ եթէ աշխարհիկ իշխանաց մարթ է և իրաւացի կողոպտել 'ի ստացուածոց զեկեղեցին զանկարգացեալն 'ի գնացս իւր , վասն որոյ զաւագունս յիշխանաց յինքն որսացաւ . Քրիստոս ոչ ետ , ասէր , իշխանութիւն առաքելոց իւրոց նզովել և անխտիր ընդ բանիւ առնել զայնոսիկ , որք ոչն կամիցին ընծայել եկեղեցւոյ զստացուածս իւրեանց : Եւ թէ ոչ միայն կղերիկոսունք և քահանայք , այլ և նոյն ինքն քահանայապետն մարթ է իրաւամբ կշտամբել և յանդիմանել յաշխարհականաց : Եւ եւս թէ չէ պարտ դրամատու լինել ոչ յարքունիս Հռոմայ , և ոչ յԱւենիոն , զի չունիք պատուէր 'ի սուրբ գրոց առ այս հարկաւորութիւն . և քանզի աստուածային մատեանք ոչ հրամայեն , ասէ , զայն , ապա որք պահանջեն զայլս են յափշտակողք : Եւ թէ չէ պարտ ծանրաբեռնել զժողովուրդն քան զչափն աւելի տրովք , այլ համեմատելի են տուրքն չափու պիտոյից եկեղեցւոյ :

Գուլիէլմոս Բուռթընէ արքեպիսկոպոսն Կանտըրբերիոյ շարժեալ 'ի չարեացն՝ զորս մատեանք Վիկլեփայ գործէին յեկեղեցւոջ Անգղիոյ յամին 1382 արկ զնոսին ընդ անաչառ քննութեամբ յերկոսին ժողովսն, այս ինքն Լոնդոնի և Օքսփորտի, որոց գտեալ 'ի նոսա ինն գլուխս հերետիկոսական բանից և հնգետասան պարզ մոլորութիւնս, դատապարտեցին զայնոսիկ ։ Սակայն անօրէնն Վիկլեփ ոչ զրկեցաւ 'ի պաշտամանէն, թերևս 'ի շնորհս պաշտպանութեան իշխանականաց իւրոց, և կամ՝ տակս պատ 'ի պատ երկդիմի բանիւքն որովք պատրուակէր զվարդապետութիւն իւր ։ Բայց վճիռ դատապարտութեանն զայրացոյց 'ի սիրտ նորա զատելութիւնն ընդդէմ՝ քահանայապետին և եկեղեցականաց ․ վասն որոյ զուն գործեաց յօրինել պէսպէս գիրս 'ի թափել զթոյնս դառնութեան իւրոյ, և տարածանել զայնուիկ ընդ Անգղիա համօրէն ։

Զայնու ժամանակաւ քանզի Ուրբանոս Զ և Կղեմէս Է․ կռուէին 'ի վերայ քահանայապետական աթոռոյ, բաժանեալ կայր և Եւրոպէ 'ի կրկին հերձուածս ․ քանզի տէրութի՟ Գաղղիոյ հպատակէր Կղեմէսի, իսկ Անգղիացիք Ուրբանոսի ․ նմին իրի յետինս այս ետ քաջողել յԱնգղիա խաչակիր զինուորութիւն ընդդէմ Գաղղիոյ, և շնորհեաց զներողութիւնս ամենայն որք սովոր էին բաշխել 'ի պատերազմունս անօրինական սուրբ տեղեաց՝ ընդդէմ անհաւատից ։ Նորէնն Վիկլեփ պատրուակ իւր առեալ զխրախոյս զինուորութեանն Ուրբանոսի՝ խնամ կալաւ գրգռել զժողովուրդն ընդդէմ իշխանութեան քահանայապետին, յօրինելով գրուած ինչ ազդու հակառակ խաչակիր զինուորութեանն ։ Նմին ճառի պարսաւելով զպատուէր քահանայապետին 'ի զինուորութիւն, յաւելու անդուռն բերանով նախատինս և անիրաւ թշնամանս ընդդէմ պապուց և իշխանութեան որոց աթոռոյն, զպարսաւելով՝ որպէս թէ վարիցէ զայն իշխանութիւն 'ի փառս քրիստոնեական հաւատոյ ։

Տեսեալ Ուրբանոսի զվնաս 'ի խռովայոյզ վարդապետութենէն Վիկլեփայ, կոչեաց զնա 'ի Հռոմ․ սակայն աստուածային պատուհասի ախտացեալ նորա անդամալուծութեամբ, մեռաւ յետ երկուց ամաց յամին 1394 ․ թողեալ բազմութիւն համախոհ աշակերտաց, որք ջատագովք կային մոլար վարդապետութեան նորա ։ Ժողովն Կոստանդեան յամին 1414 դատապարունելով զմոլորութիւնն՝ հրամայեաց հրապարակաւ այրել զգիրս այսր հերետիկոսապետի, որ և կատարեցաւ յամին 1428 ։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Կաթուղիկոսունք և վիճակ եկեղեցւոյն Հայոց։

Ի ՍԿԶԲԱՆ չորեքտասաներորդի դարու՝ յամին 1306 ՚ի վախճանել Գրիգորի Անաւարզեցւոյ, եղև ազգային ժողով ՚ի Սիս քաղաքի, յորում զկնի որոշելոյ ինչ ինչ ՚ի վերայ եկեղեցական բարեկարգութեանց, զորոց կանխեցաք ասել ՚ի վերայ ազգային ժողովոյ երեքտասաներորդի դարու, միաբան խորհրդով ժողովականաց ընտրեցին զԿոստանդին Բ., զանկեալն ՚ի կաթողիկոսութենէն յամին 1289 ։

Կոստանդին Բ. Պրօնագործ անուանեալ, արքեպիսկոպոս Կեսարիոյ, որ զառաջինն եկաց կաթողիկոս զամս երիս, և ապա վերստին ընտրեցաւ յայս աթոռ յամին 1307 ջանահնար եղև ՚ի գործ դնել զկանոնս ժողովոյն Սսայ. բայց ՚ի հակառակել բազմաց և ՚ի յառնել խռովութեան յանտպաց անձանց, հարկ եղև վերստին գումարել այլ ժողով յԱտանա քաղաք յամին 1316, ուր միաբանգամ հաստատեցան սահմանադրութիւնք նախընթաց ժողովոյն Սսայ, որպէս վկայէ և Յովհան Երզնկացի մին ՚ի ժողովականաց ։ Սակայն և այնպէս անողոքելի կամակորութիւնք խռովարարաց անձանց շփոթս յուզեցին ՚ի մէջ ազգին. յորում ժամանակի Սարգիս եպիսկոպոս Երուսաղեմի ապստամբեալ ՚ի հպատակութենէ կաթողիկոսին՝ էառ հրովարտակ ՚ի սուլդանէն Եգիպտոսի լինել անկախ յազգային գլխոյ, և ետ կոչել զինքն պատրիարք Երուսաղեմի, յորմէ սկսաւ պատրիարքութիւն Հայոց յԵրուսաղէմ, յամի տեառն 1311 ։

Յազգային շփոթութիւնս յայսմիկ յաւելան և քաղաքական մարտք ՚ի բռնութենէ այլազգեաց. վասն որոյ Լևոն թագաւոր Հայոց կաթողիկոսին հանդերձ և եպիսկոպոսօք գրեաց թուղթ առ սրբազան պապն Յովհաննէս ԻԲ., յայտ առնելով զվիճակ թշուառութեան աշխարհիս, և տարեալ զայն 'ի ձեռն դեսպանաց։ Լուեալ քահանայապետին զաղէտս ազգին և աշխարհին՝ ցաւագին սրտիւ գրեաց թուղթ մխիթարութե՟ և քաջալերութե՟, միանգամայն տարեալ և նպաստս դրամոց 'ի նորոգել զաւերեալ և զխաթարեալ աշխարհն. տալ և առանձինն կոնդակաւ յորդոր մեծաց հաւատացելոց ձեռնտու և օգնական լինել տառապելոյ ազգիս։ Տագնապք խռովութեան ներքին և արտաքին թշնամեաց կարճեցին զկեանս Կոստանդնի, որ վախճանեցաւ յամին 1322, կացեալ 'ի հայրապետութեան զամս վեշտասան։

Կոստանդին Գ. Լամբրոնացի՝ նստաւ յաթոռ կաթողիկոսութեան յամին 1323. էր սա այր խոհական և իմաստուն, որ իւրով ճարտարութեամբ հանդարտեցոյց զթշնամիս ազգին, և եդ դաշն խաղաղութեան ընդ սուլտանին Եգիպտոսի։ Վախճանեցաւ յամին 1327, կացեալ 'ի հայրապետութեան զամս չորս։

Յակոբ Բ. Սսեցի, քեռորդի Գրիգորի անաւարզեցւոյ, նստաւ կաթողիկոս փոխանակ Կոստանդեայ Գ. յամին 1327։ Յաւուրս սորա 'ի վեր երեւեցան 'ի Հայս Յովհաննէս վարդապետ ոմն քռնեցի, որոյ իբր տասն ամօք յառաջ 'ի կաթողիկոսութե Կոստանդեայ Բ. գնացեալ յԱտրպատական և աշակերտեալ էր Բարթուղիմէոսի լատին եպիսկոպոսի, և ուսեալ 'ի նմանէ զբարբառ լատինացւոց։ Նա 'ի դառնալ իւրում 'ի Հայս՝ յինքն ձգեաց զբազում յաշակերտութի, որք միաբան խորհրդով ջանս գործեցին այլայլել և փոփոխել զպաշտամունս և զարարողութիւնս ազգիս Հայոց. յորմէ անկաւ վէճ և խռովութիւն 'ի մէջ համօրէն ազգին, մինչև առիթեալ եպիսկոպոսաց և առաջնորդաց Թագաւորաւն հանդերձ՝ հալածական արարին զգլխաւորս նոցա, սակայն և այնպէս ոչ կարացին հանդարտել զխռովութիւնն. զի այնչափ սաստկացաւ վէճն և կռիւ, մինչև գժտել կաթողիկոսին ընդ Թագաւորին, որ և ցասուցեալ ընկէց զնա յիշխանութենէ կաթողիկոսութեան՝ յետ կալոյ նորա 'ի նմին զամս երեքտասան։

Մխիթար քռնեցի նստաւ յաթոռ հայրապետութեան յամին 1341։ Ի ժամանակս իշխանութեան սորա համարձակութիւն գտեալ բազմացան յոյժ անուանեալքն Անթիոքայ աշակերտք Յովհաննու, որք 'ի Կռախիջեան և յայլ գաւառս կանգնեցին իւրեանց վանորայս · և ընկալեալ զկարգ Դոմինիկեան կրօնաւորաց, ըստ ծիսից լատինացւոց կատարէին զեկեղեցական պաշտամունսն՝ փոփոխելով զարարողութիւնս ազգին : Նոյա 'ի կամել նոցա և զազգն առ հասարակ 'ի նոյն յորդորել, սկսան երկբայելի ցուցանել զխորհուրդ միութեանն Հայոց, զդրոշմն և զկարգ քահանայութեան · վասն որոյ ձեռն արկին վերստին կրկնել զխորհուրդսն, որով անկաւ աղմուկ շփոթութեան և խռովութիւն 'ի մէջ ազգին :

Ընդ այն ժամանակս երկուք անձինք համախոհք Ունիթօռաց՝ Ներսէս Պալիենց եպիսկոպոս Ուրմի քաղաքի, և Սիմէոն Պէկ կոչեցեալ իբր եպիսկոպոս Կարնոյ՝ յառաջադէմ գտեալ քան զՈւնիթօռսն, պաշտպան կացին կրկնակնունք մոլորութեան · վասն որոյ նզովք հատեալ 'ի հաղորդութենէ եկեղեցւոյ՝ հալածական եղեն 'ի Հայոց : Ներսէս Պալիենց կամելով առնուլ զվրէժ անարգանաց իւրոց, չոգաւ 'ի Գաղղիա յԱւինիոն քաղաք առ Բենեդիկտոս ԺԲ· քահանայապետ ամբաստան լինել զազգէն Հայոց · և 'ի վերայ անլուր և անհամար չարախօսութեանցն՝ յաւել գրել զեկեղեցւոյն Հայոց հարիւր եօթնևտասն մոլորութիւնս, զորս և մատոյց առ Սրբազան քահանայապետն : Զայն ամենայն ամբաստանութիւնս ընկալեալ Բենեդիկտոսի, առաքեաց առ Մխիթար կաթողիկոս և առ Լևոն արքայ Հայոց և խնդրէր զպատասխանի ամբաստանութեանցն այնոցիկ · Յայնժամ գումարեալ ժողով մեծ 'ի Սիս քաղաքի, գրեցին զպատասխանի թղթոյն, ցուցեալ զամենայն չարախօս զրպարտութիւնսն, և յայտ արարին թէ ստայօդ աղճատանք են թշնամեաց և բուռ արանց վտարելոց յաշխարհէս Հայոց : Իսկ զայս պատասխանի ժողովական թղթով առաքեցին առ սրբազան քահանայապետն Կղեմէս Զ· որ յաջորդեացն զԲենեդիկտոս՝ 'ի ձեռն դեսպանաց պապլին, որոց ուղեկից եղեն և իշխանն Գրիգոր և Դանիէլ վարդապետ Սսեցի, որ գրեաց առանձին ճառ մի ջատագովութեան զեկեղեցւոյն Հայոց : Ընկալեալ Կղեմայ քահանայապետի զնամակ պատասխանույ Հայոց, և տեսեալ զողջամիտ վարդապետութիւն նոցա և զհպատակութիւն առ սուրբ աթոռն՝ ուրախ եղև յոյժ, որպէս յայտ է 'ի կրկին կոնդակաց նորա գրելոց յամին 1345 և 1346 ։

Յայսու ժամանակաւ Յակոբ վարդապետ Սսեցի երբեմն կաթուղիկոս, զորմէ ամբաստանեալ էին չարախօսք եթէ հալածիչ եղև ուղղափառաց՝ ել և գնաց յԱւինեոն քաղաք, ուր բերան 'ի բերան խօսելով ընդ քահանայապետին՝ յանձն արար զթշնամիս իւր, և եգիտ պատիւ մեծ 'ի սրբազան պապէն ։ Ապա 'ի դառնալ իւրում 'ի Կիլիկիա յետ մահուան Մխիթարայ յամի տեառն 1355, վերստին կարգեցաւ կաթուղիկոս Հայոց, յորում եկաց զամս չորս, և վախճանեցաւ յամին 1358 ։

Մեսրովպ առաջնորդ վանաց սրբոյն Թադէի՝ նստաւ յաթոռ կաթուղիկոսութեան յամին 1359, և կալեալ զիշխանութիւն զամս երեքտասան՝ վախճանեցաւ յամին 1372 ․ սորա Կոստանդին Դ․ զամս երկու, և զկնի նորա յամին 1374 Պօղոս Բ․, որ եկաց զամս չորս ։ Յետ նորա յամին 1378 Թէոդորոս Բ․ զամս ութուտասն ․ ապա յամին 1396 Կարապետ Բ․ Բոկիկ անուանեալ, զամս երկու, և զկնի նորա յամին 1398 Դաւիթ Դ․ զամս չորս ։ Յիշխանութեան ամենեցուն սոցա քանզի 'ի շփոթս էր աշխարհս Հայոց յերեսաց այլազգեաց, չեղեն ինչ դէպք արժանիք յիշատակաց՝ բայց 'ի վշտալից քաղաքական անցից ։

ԳԼՈՒԽ ԺԷ․

Եկեղեցական մատենագիրք ։

ՄԱՏԵՆԱԳԻՐՔ չորեքտասաներորդի դարուս թէպէտ և նուազունք թուով՝ սակայն եղեն որք ականաւորք 'ի հաստատել զճշմարտութիւն ուղիղ վարդապետութեան ընդդէմ բանսարկու և չարամենոց հերետիկոսաց, որք գուն գործէին որոշել զհաւատացեալս 'ի միութենէ եկեղեցւոյ ։

Նիկողայոս Հիւրացի՝ ազգաւ հրեայ, ընկալեալ ըզքրիստոնէական հաւատ եմուտ 'ի կարգ կրօնաւորութեան սրբոյն Փրանկիսկոսի ․ և յետ 'ի լոյս ընծայելոյ պէսպէս ճառս աստուածաբանականս՝ վախճանեցաւ յամին 1340 ։

Յովհաննէս Ակոռի Տէռն՝ կրօնաւոր Փրանկիսկեան 'ի Կրտսեր անուանեալ եղբարց, 'ի Տանաթան քաղաքէ Ակոռւոյ. որոյ անցեալ 'ի Գաղղիա և 'ի Փարիզ քաղաք՝ քաջավարժ ուսմանցն ընկալաւ զպատիւ վարդապետութե. Սա նախ առաջին եկաց 'ի հաստատել զվարդապետութի անարատ յղութեան սրբոյ Կուսին՝ ընդդէմ կարծեաց այնոցիկ որք հակառակէին, թէ յղացեալ իցէ 'ի սկզբնական մեղս, և զպատճառս նոցա 'ի մէջ բերեալ և լուծեալ զայնոսիկ՝ յաւելու ասել. " Աստուած կարող էր առնել, զի սուրբ Կոյսն մի անկցի երբէք ընդ սկզբնական մեղօք. կարող էր դարձեալ զի անկցի նա ընդ նովաւ գոյզն ինչ վայրկեան. և կարող իսկ էր թողուլ զնա յայնմ ժամանակս ինչ, և ապա սրբել զնա ". Եւ յետ մի ըստ միոջէ տալոյ բանաւոր պատճառս զերեցունց այսոցիկ կարծեաց, կնքէ զբանն ասելով, " Ինքն Աստուած գիտէ՝ թէ զո՛ յերեցունց առաւել հրաշագործեալ իցէ. սակայն պատշաճագոյն թուի ընծայել Մարիամու զառաւել պանծալին և զնաշխարհիկն, որ չիցէ հակառակ սուրբ գրոց և վարդապետութե եկեղեցւոյ ". Նրբամիտ վարդապետ անուանեցաւ սա վասն խորագիտին մտացն, և նախանձաւոր կուսակից և հետևող եկաց վարդապետութե Սկոտոսի. սակայն հանճար սորա անուանի է մանաւանդ քան գրաւոր երկասիրութեամբք, որք մեծագոյն մասամբ են դպրոցական ուսմանց անհարթ ոճով.

Գուլիէլմոս Ոգամոս անգղիացի՝ կրօնաւոր Փրանկիսկեան, որ եղև գլուխ Անուանականաց. Էր սա այր ճարտարամիտ և խռովայոյզ, ոխերիմ թշնամի գահին Հռոմայ. գրեաց գիրս 'ի նպաստ Փիլիպպոսի մականուանելոյ Գեղեցիկ, և Լուդովիկոսի դքսին Բաւարիոյ. և զկարս նոցա ընդ քահանայապետաց Հռոմայ համեցաւ ջատագովել ստապատիր նրբախօսութեամբ, յորում գերազանցէր յոյժ քան զայլ ամենայն ճեմականս ժամանակին. Ի պատճառս յանդուգն համարձակախօսութեան սորա ամենայն Անուանականք անգանեալ մերժեցան 'ի համալսարանաց, և սաստ պատուհասի փակեաց զբերանս նոցա, և որք զաշխարհ ամենայն ուսուցանել խնդրէին յիւրեանց կարծիս՝ և յիշատակ անգամ աղանդոյ նոցա բարձեալ է արդ.

Կարգ և միաբանութիւն Փրանկիսկեան Կրտսեր անուանեալ եղբարց՝ ընդ բազմաթիւ ականաւոր արանց ընծայեաց և զՌայմունդոս, որ համբաւեալ գտաւ յաղագս հալածմանցն որոց տարաւ 'ի պատճառս տարրախուզական հմտութեանց իւրոց՝ քան վասն գրաւոր երկասիրութեանց։ Նոյնպէս և զԱլվարոս Պեղագիոս զեպիսկոպոս Սիլուայի 'ի Լուսիտանիա, որ համբաւաւոր եղև ճառիւքն զորս դրոշմեաց 'ի վերայ բարեկարգութեան եկեղեցւոյ, մակագրեալ «Յաղագս ողբոց կամ արտասուաց եկեղեցւոյ»։

Նիկեփորոս Կալլիստոս՝ յոյն մատենագիր (1340) գրեաց զեկեղեցական պատմութիւն և զզատակարգութիւն պատրիարգաց Կոստանդնուպօլսոյ։ Կայ և այլ Նիկեփորոս Գրեգորաս՝ (1360), որ գրեաց զպատմութիւն Յունաստանի 'ի 1204 ամէ ցամն 1251։

Նիկողայոս Որէզմոս (1384) վարդապետ Փարիզեան և դաստիարակ Կարոլոսի Ե. արքային Գաղղիոյ, որոյ հրամանաւն զաստուածաշունչ գիրսն թարգմանեաց 'ի գաղղիական բարբառ։ Ամբարձաւ յեպիսկոպոսութիւն Լիզիր քաղաքի, և վախճանեցաւ բարեկրօն վարուք. եթող զանազան գրուածս, յորս երևելի է ճառն զոր խօսեցաւ առաջի Ուրբանոսի Ե. 'ի խափանել զդարձ նորա 'ի Հռոմ։

Ի մատենագիրս այսր դարու գնեն ոմանք և զխորհրդական աստուածաբանս պարապեալս 'ի խոկմունս մտաւորական աղօթից, յորս երևելի հանդիսացան Յովհաննէս Տաուլերիոս կրօնաւոր դոմինիկեան, և Յովհաննէս Ռուսբրոքիոս, երկոքին եւս խորամուխք 'ի հոգևոր ուսմունս։

Սակայն 'ի համօրէն մատենագիրս այսր չորեքտասաներորդ դարու մեծարոյ ցուցաւ հմտու՟ք և ճարտարու՟ք Փեթրարքա իտալացի, զոր հայր պարտ է համարել նորոգութեան ազատական ուսմանց և եղծիչ ագիտութեան դարուն։ Պարապեցաւ նա 'ի հետազօտ ընթերցումն մատենից նախնեաց և հետևող եկաց ոճոյ նոցին. վարեցաւ աւերակօք հնութեան 'ի կանգնել զհիմն շէնուածոյ շքեղ արուեստից որք ծաղկեցան՝ 'ի վեշտասան և յեօթնևտասներորդ դարս։ Ի բազմադիմի գիրս իւր թէպէտ չէք յիշատակութիւն զեկեղեցական նիւթեց , սակայն նոքօք օգտակարք զօրս մտաց նա հմտութեան մարդկային մտաց՝ արժանի առնեն զնա առանձին յիշատակութեան . և դասելոյ 'ի կարգս մատենագրաց այսր դարու : Տեսաք 'ի նախընթացս պատմութիւնս զփոյթ նորա 'ի յորդորել զքահանայապետն դառնալ յԻտալիա . յերիտասարդութե իւրում գրեաց առ Բենեդիկտոս ԺԲ , յայլոսկան հասակի առ Կղեմէս Զ , և 'ի ծերութեան առ Ուրբանոս Ե : Նամակն գրեալ առ յետինս այս քահանայապետ՝ ակներև ցուցանէ զպերճախօսութի նորա և զարիական համարձակութի, որպէս և զճիշդ նկարագիր հանգամանաց մայրաքաղաքին Հռովմայ , "Դու ինքն , ասէ , սահմանեցեր կանոնս բարեկարգութե և Աւինիոն կարի վայելուչ շքեղազարդեալ կայ , բայց Հռովմ զինչ գործէ , որ այն հանգամանք իցեն նորա և զինչ ակնկալութիւնք . ունիցի իւր հիպատոս և քահանայապետ : Այժմ 'ի սուգ անմխիթար , զտիւ և զգիշեր յողբս համակեալ . աւաղ , զինչ քաղաքս ակամաւոր՝ երբեմն բազմաժողով այսօր անապատացեալ կայ : Աշխարհուհին ազգաց հեծէ և հաշի և 'ի սուգ տխրալից այրիութե 'ի վէրս անբերելիս հարուածեալ յարտաքին մարտից և 'ի քաղաքական զժտութեանց : Հռովմ ոչ ևս ակն ունի խաղաղութեան . պարիսպք նորա կործանեալք , ապարանքն հիմնայատակք , տաճարքն քանդեալք և պաշտամունք աստուածայինք անգոսնեալք , արդարութիւնն եղծեալ և օրէնքն այլայլեալք : Ժողովուրդն Հռովմայ տագնապեալ 'ի ծանրութենէ իւրոց արկածից՝ տարածեալ բազկօք և բարձրագոչ ձայնիւ զքեզ առ ինքն կոչէ , և դու ոչ լսես : Ո՜ գորովագութդ 'ի հայրս , զինչ կարիցես գտանել հանգիստ յոսկեձեղուն սենեակդ , յորժամ Լատերանեան պալատն յաւեր կայ , և մայրն եկեղեցեաց անծածկոյթ է , որպէս և բնակարանն առաքելոց պատեալ է աւերակօք " : Այս նամակ սակաւանի ուրուք ճարտարախօսի անուամբ լեալ ծանօթ եղելոյ քահանայապետին՝ այնչափ ազդու եղև յունկն նորա , մինչև առնուլ նմա փութալ 'ի Հռովմ . և այս դէպք ակն յայտնի ցուցանեն զճարտարախօս բանս Փեթրարքայի և զանվեհեր համարձակութիւն նորա :

Աղքատ է դարս 'ի մատենագրաց ազգիս , զի անընդհաս խռովութիւնք ժամանակին 'ի պատճառս ակարանալոյ տէրութեանն Հայոց, և չփոթութիւնք Ունիթոռ անուանելոյն խափան արկին յառաջադիմութեան ուսմանց, և փոխանակ նոցա մնոտի և վնասակար բանակռուութիւնք 'ի վեր երևեցան 'ի թշնամանել և յերգիծանել զմիմեանս ։ Յայսմ ալէկոծեալ ժամանակի յիշատակին անուանք վարդապետաց ոմանց առանց ինչ երևելի գրաւոր արդեանց ։

Սարգիս վարդապետ 'ի վանս Ապրակունեաց՝ այր գովելի վարուք և խաղաղասէր հոգւով, յորդորէր զամենեսին 'ի սէր միաբանութե՟ ընդ եկեղեցւոյն Հռովմայ ։ Յայնմ ժամանակի էր և այլ ոմն վարդապետ համանուն նորա՝ ճգնաւոր և անապատաւորն, որ 'ի նոյն ջանս խաղաղասիրութեան պարապէր ։

Յովհաննէս վարդապետ Կախիկ, որ և Որոտնեցի, վանահայր Տաթևու վանաց, վարժապետ և ուսուցիչ բազմաթիւ աշակերտաց ։ Գրեաց ազգի ազգի քարոզս և հատուկտոր մեկնութիւնս, յորս ընդ ուղղափառ վարդապետութիւն խառնէ և եպերանս ինչ և կշտամբութի՟ ընդդէմ Ունիթոռաց ։ Սորա աշակերտ եղև Մաղաքիա վարդապետ ճգնաւոր կոչեցեալ, որ զառաջինն բարեկամութեամբ էր ընդ Ունիթոռս, և ապա տեսեալ զանկարգութիւն նոցա 'ի վարդապետելն զկրկին մկրտութիւն՝ պատուհասակոծ արար զգլխաւորս նոցին ։

Գրիգոր Տաթևացի՝ մին յաշակերտաց Յովհաննու Կախիկ վարդապետի, վարժապետ 'ի վանս Ապրակունեաց ։ Էր սա այր հետաքննին, խռովայոյզ և հակառակասէր, հետամուտ ընթերցման գրոց, և անզգաստ ներհակախօս ։ Ունի զերկհատորեան քարոզագիրս՝ հաւաքեալ 'ի բանից Որոտնեցւոյն և 'ի թարգմանեալ գրոց անտի Լատինացւոց ։ Կայ նորա և գիրք Հարցմանց, յորում երևի ոգի հակառակութեան խորոյ ընդդէմ այլոց եկեղեցեաց ։

Գրիգոր վարդապետ Խլաթեցի, որ և Ծերենց մականուանեալ, այր ուսումնասէր և հետաքննին ։ Գրեաց ճառս և ներբողեանս 'ի վերայ սրբոց և տօնից սրբոյ կուսին . արար և երգս, տաղս և բազմապատիկ գանձս ։ Գրեաց և զպատմութիւն նահատակութեան մարտիրոսաց որք վկայեցին առ իւրովք ժամանակօք . և զի *տօնասէր էր և մարտիրոսասէր՝ արժանացաւ և ինքն վկայական մահուան յամին* 1425 ։

Առաքել վարդապետ եպիսկոպոս Սիւնեաց՝ արար գիրս զանազան ոտանաւորաց Ադամգիրք անուանեալ . շարադրեաց և ներբողեանս 'ի վերայ այլ և այլ սրբոց ոտանաւոր չափով ։

Գէորգ վարդապետ Երզնկացի՝ արար լուծմունս գրոց Գրիգորի Աստուածաբանին . գրեաց և քարոզս և խրատս վասն կիրառութե՟ մաշտոցի ։ Յաշակերտութենէ սորա որպէս և առ նովին ժամանակօք եղեն Յակոբ վարդապետ Ղրիմեցի, Յովհաննէս վարդապետ Կոլոտիկ, Մաթէոս վարդապետ, և Տիրատուր վարդապետ՝ որք արարին ինչ ինչ մեկնութիւնս սուրբ գրոց ։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Ազգային ժողովք ։ — Ժողով Սսոյ Զ. յամի տեառն 1307 ։

ԳՐԻԳՈՐ *անաւարզեցի քանզի ցանկայր փոփոխութիւնս ինչ մուծանել յազգային ծէսս՝ զայրացան յոյժ ամենեքին . և եպիսկոպոսունքն և վարդապետք միաբանական թղթով թախանձեցին զնա մի ինչ աւելի կամ պակաս մուծանել յեկեղեցի՝ քան զոր հարքն առաջինք սահմանեալ եղին ։ Այլ իբրև կաթուղիկոսն ոչ ինչ դրդուեցաւ 'ի խորհրդոյ մտացն, և շփոթք 'ի պատճառս այնորիկ յուզէին յաշխարհին, Լեւոն արքայ հրամայեաց ժողով գումարել յարքայանիստ քաղաքն Սիս ։ Եւ զի յառաջ քան զգումարել ժողովոյն մեռաւ Գրիգոր կաթուղիկոս, վասն որոյ 'ի ժողովել հարցն՝ ընթերցան նախ զթուղթ դաւանութեան նորա զաւանդակեալն յինն գլուխս բանից . և հաւանեալ ամենեցուն ձեռն եդին թղթոյն, և փոխանակ Գրիգորի կացուցեալ յաթոռ իշխանութեան զտէր Կոստանդին Պռնագործ՝ լուծին զժողովն ։*

Ժողով Տարսոնի Դ. յամի տեառն 1308 ։

ՔԱՆԶԻ *Լեւոն թագաւոր սաստկէր զամենեսին հնազանդել կանոնաց սահմանելոց 'ի ժողովին Սսոյ, երկ-*

պառակտութիւն և շփոթ մեծ յարեաւ յազգին. վասն որոյ և ոմանք յիշխանաց գնացին առ Գիլարդոս իշխան Խաթարայ. և զի զխաւսէին զտոյսն ատելութիւն ընդդէմ Լևոնի արքային և թագաւորահօրն Հեթմոյ, անհնարին չարախօսութիւնս հեղլին զնոցանէ, յանդգն իշխանին. Նա նորա կեղծաւորեալ մտերմութեամբ առնէր հրաւիրեալ զԼևոն և զՀեթում և քառասուն այր յաւագաց ազգին, զամենեսին զնոսա խողխողեաց միանգամայն. Զայն իբրև լուան իշխանք Հայոց, աւուրս ոչ տուին սուգ առնել ի վերայ նոցա, և ապա կաթողիկոսին հանդերձ ժողովեալ ի Տարսոն քաղաք՝ ամբարձին զՕշին յաթոռ թագաւորութեան Հայոց.

Ժողով Ադանայ յամի տեառն 1316.

ՕՇԻՆ արքայ բռնադատեալ զիշխանս և զառաջնորդս առ հասարակ՝ յանձնել պաշտպանութիւն կանոնաց ժողովոյն Սսոյ, իբրև եւս զի անփութէին նորա հրամանին, յորդոր մատոյց Կոստանդնի կաթողիկոսի՝ ժողով վասն այնորիկ գումարել. Սակայն ի սփռել հրամանաց թագաւորին և կաթողիկոսին՝ բազումք յառաջնորդաց և ի վարդապետաց մերժեցին զայն, և ուկաւք ոմանք ժողովեցան ի տաճար սրբոյն Սոփիայ յԱդանայ քաղաք, և ընթերցեալ զսահմանադրութիւնս Գրիգորի առաջարկելոց՝ հաստատեցին զայնոսիկ. սակայն յետ լուծանելոյ ժողովոյն չեղան ի գործ կանոնքն, վասն որոյ և Օշին թագաւոր դադարեաց այլ ևս ի տանջելոյ զնոսա.

Ժողով Սսոյ Է յամի տեառն 1342.

ՈՐՊԷՍ հակիրճ բանիւք կանխեցաք ասել վերագոյնդ՝ այլ ոմանք խաբեբայք և ստապատումք հատուածեալք յազգէս մերմէ յարեւմուտս, անհնարին չարիս զնոցանէ խօսէին. և մի ոմն ի նոցանէ՝ Ներսէս Պալիենց հարիւր և եօթանասուն գլուխս մոլորութեց զազգէս մերմէ յօդեալ՝ մատոյց Բենեդիկտոսի քահանայապետի որ նստէր յԱւինիոն քաղաք. Զարմացեալ յոյժ ընդ այն քահանայապետին՝ նամակացիր եղեւ առ Լեւոն թագաւոր եւ առ Մխիթար կաթուղիկոս, զի ժողովով եպիսկոպոսաց հերքեսցեն ըզմոլորութիւնս ։ Վասն որոյ 'ի հրամանէ թագաւորին ժողովեցան եպիսկոպոսունքն ամենեքին եւ վարդապետք 'ի Սիս քաղաք, եւ միաբան խորհրդով եւ զօրաւոր բանիւք գրեցին մի առ մի ընդդէմ ամբաստանեալ մոլորութեանցն, եւ յղեալ առ քահանայապետն՝ խցին զբերանս չարախօսաց ։

Ժողով Սսոյ Ը. յամի տեառն 1361 ։

ՄԵՍՐՈՎԲ կաթուղիկոս տեսեալ զհակառակութիւնս յուզեալս յազգին 'ի պատճառս խառնելոյ ոմանց ջուր 'ի բաժակ սրբոյ պատարագին եւ այլոց արհամարհելոյ զայն, ջան գործեաց խաղաղել զնոսա ։ Եւ իբրեւ 'ի դերեւ ելին վաստակք իւր, ժողով գումարեաց 'ի Սիս քաղաք յեպիսկոպոսաց եւ 'ի վարդապետաց աշխարհին Կիլիկեցւոց. եւ յետ բազմախնդրութիւն բանից իբրեւ չկարացին զելս իրացն գտանել՝ Մեսրովբ կաթուղիկոս արգել խառնել մի երբեք ջրախառն պատարագել ։

Եւ քանզի 'ի վախճան չորեքտասաներորդի դարու բարձաւ 'ի սպառ թագաւորութիւն ազգիս, եւ կաթուղիկոսացն եւս իշխանութիւն նուազեցաւ յոյժ 'ի պատճառս ոտնակոխ լինելոյ աշխարհիս մերոյ 'ի յարձակմանէ Թաթարաց եւ Պարսից եւ Օսմանեանց, առաւ եւ անդր զանց առնեմք եւ մեք զյիշատակութեամբ սակաւուցն այնոցիկ ազգային ժողովոց՝ որոց եւ արգասիք ինչ նշանաւորք չերեւեցան 'ի միջի ։

ԳԻՐՔ ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա.

Շարայարութիւն հերձուածոյ քահանայապետաց։

ԸՍՏ նշանակելոյ մեր 'ի նախընթաց դարու՝ կարդինալքն գումարեալք յԱւենիոն՝ զկնի մահուն Կղեմայ Է. կարգեցին յաթոռ իշխանութեան նորա զկարդինալն Պետրոս Լունայեան, որ կոչեցաւ Բենեդիկտոս ԺԳ։ Սա 'ի կարդինալութեան իւրում խօսէր յառաջ զմիաբանական սիրոյ և զհնարիցն որով մարթ իցէ խաղաղել զեկեղեցի. վասն որոյ նախ քան զընտրութիւն իւր խոստացեալ էր ինքնակամ հրաժարել 'ի քահանայապետութենէ՝ եթէ չիցէ մարթ այլով իւիք հանդարտել զհերձուածն։ Այսպիսի բարեմտախանձ ջանիւք սկիզբն արարեալ իշխանութեան իւրում, գրեաց առ Կարոլոս Զ արքայ Գաղղիոյ, թէ և քահանայապետականն իսկ պատմուճան յոչինչ թուի յաչս իւր, մինչև մերկանալ զայն կամակար՝ եթէ օգուտ եկեղեցւոյ զայն պահանջեսցէ։ Ընդունէր զնախորդացն իւրոց զխառամալ հպատակութիւն որով յերկարեաց հերձուածն. սակայն ոչ յետ բազմաց զնոցին տխուր բարուց յանձին իւրում կերպարանեաց. զի ջանահնար եղև բազմադէմ բաղբաղանօք խուսել 'ի հաստատութենէ առաջնոյ խոստման իւրոյ. և առ որս միանգամ յորդոր լինէին նմա առ այն՝ առնէր պատասխանի, թէ չհրաժարիմ երբէք 'ի պատուոյ աստի՝ մինչև Բոնիփակիոս Թ. հակառակապապին իմ ոչ տացէ ինձ օրինակ։

Ի մեռանել Բոնիփակիոսի յամին 1404, թուէր իմն եթէ Բենեդիկտոս ԺԳ. ծանիցէ յընդհանուր եկեղեցւոյ ճշմարիտ քահանայապետ, բայց 'ի դերև ել կարծեցեալ ակնկալութիւնն. քանզի հռովմայեցի կարդինալք ինն թուով անդէն և անդ ընտրեցին 'ի Հռովմ զԻննովկենտիոս Է. և պայծառ և մեծամեծ առաքինութիւնք նորա յուսադիր լինէին ամենեցուն խաղաղութեան եկեղեցւոյ. սակայն նա կամեցաւ մեռանել քահանայապետ, յանձն առեալ մտադիւր զդատաստանս վճռելոյ այնր ժամանակին. յորում բուռն իշխանազունք Կոլոնեան ազգատոհմին զրաւեալ ունէին զաշխարհական իշխանութիւնն Հռովմայ։

Յետ մահուան սորա՝ որ դիպեցաւ 'ի վեցերորդ աւուր նոյեմբերի յամին 1406, կալեալ զաթոռ քահանայապետութեան զամս երկու և զաւուրս քանի և մի՝ չորեքտասան կարդինալքն գտեալք 'ի Հռովմ դաշն եդին և ուխտադիր եղեն հանդիսական երդմամբ՝ զի որում ումեք 'ի նոցանէ վիճակեսցի ընտրութիւնն՝ կամակար յանձն առցէ հրաժարել 'ի պատուոյն, եթէ և համապատիւն իւր Բենեդիկտոս արասցէ զնոյն։ Այսպէս զի առանց երկմտութեան պահեսցի այս դաշն, յերեսներորդ աւուր նոյեմբերի յամին 1406, ընտրեցին քահանայապետ զյառաջադէմն 'ի նոյն յօժարամտութիւն զԱնգելոս Կորրարոյ վենետիկեցի զծերունին եօթանասնամեայ՝ զայրն առաքինի և զցանկացող օգտի եկեղեցւոյ, որ անուանեցաւ Գրիգոր ԺԲ։

Սա 'ի նստել իւրում յաթոռ քահանայապետութեն կամելով ցուցանել զփոյթ իւր առ 'ի կատար ածել զեդեալ դաշնն, և 'ի յորդորել զհամապատիւն իւր ըզԲենեդիկտոս հրաժարել 'ի պատուոյն, եցոյց յօժարութիւն յանձն առնլոյ կամակար պանդխտանալ 'ի Գաղղիա, զի լիցի խաղաղութիւն եկեղեցւոյ։ Գովելի էին առաջարկութիւնք և յորդորք երկոցունց քահանայապետացս, բայց սակայն մնային անգործք և անպտուղք, զի ոչ ոք 'ի նոցանէ յանձն էառ լինել նախկին գործադիր. վասն որոյ 'ի յերկարել խռովութեանն խորհեցան 'ի ձեռն հանրական ժողովոյ հնարս հնարել խաղաղութեան եկեղեցւոյ։

ԳԼՈՒԽ Բ.

Ժողով Փիզայի որ ընկէց 'ի գահակալութենէ զԳրիգոր ԺԲ և զԲենեդիկտոս ԺԳ : — Ընտրութիւն Աղեքսանդրի Ե :

Ի ԲԱՌՆԱԼ զհերձուածն որ տագնապէր զեկեղեցի երկփեղկեալ 'ի միմեանց զհաւատացեալսն 'ի Քրիստոս միաբան հաւանութեամբ կարդինալաց կուսակցաց Բենեդիկտոսի և Գրիգորի ժողովեցան 'ի Փիզա քաղաք Իտալիոյ յամին 1409, 'ի քսան և հինգերորդ աւուր մարտի. ուր ժողով գումարեալ կոչեցին յատեան զերկոսին համապատիւ քահանայապետսն. սակայն նոքա նզովս ընդ պատասխանւոյ առ ժողովականսն առաքեցին իբր առ ապստամբս 'ի գլխոյն եկեղեցւոյ, զի առանց հաւանութեան քահանայապետի ձեռն արկեալ էին յայն գործ : Բայց ժողովականքն ամենեքին որք էին քսան և չորս կարդինալք, և պատրիարգունք Աղեքսանդրիոյ, Անտիոքայ և Երուսաղեմի, բազում աբբայք, և դեսպանք քրիստոնեայ իշխանաց, որպէս և գործակալք ականաւոր համալսարանաց, առ ոչինչ համարեալ զնզովս նոցա, փութացան 'ի դատակնիք, կոչելով զնոսա հերձուածողս և խռովարարս եկեղեցւոյ :

Պետրոս Լուսնայեան որ նստէր յԱւենիոն, որպէս և Անգեղոս Կորրարոս յԻտալիա, զրկեցան 'ի քահանայապետութենէ, զի անարժան գտան այնմ երդմնազանցութեամբք իւրեանց. և փոխանակ նոցա ընտրեցաւ 'ի ժողովոյն նոր քահանայապետ Պետրոս Փիլարտոս կրետացի եպիսկոպոս Մեդիոլանու, որ անուանեցաւ Աղեքսանդր Ե : Սա յաննշան ազգատոհմէ՝ կրօնաւորեալ 'ի կարգ սրբոյն Փրանկիսկոսի, և առ փոքր փոքր եհաս 'ի պատիւ կարդինալութեան, և յետոյ ամբարձաւ յաթոռ սրբոյն Պետրոսի սակս իւրոց լուսափայլ առաքինութեանց, որովք ծանուցեալ և մեծարեալ էր 'ի բազում իշխանաց. բայց ոչ յերկարակեաց լեալ յիշխանութեանն՝ վախճանեցաւ յերկրորդ ամի քահանայապետութեան իւրոյ յամին 1410, կացեալ 'ի քահանայապետութեան զամիս տասն և զաւուրս ութ :

Յետ նորա յեօթնևտասներորդ աւուր նորին ամսեան ընտրեցաւ կաթողիկոսն Պաղտասար Կոսսա՝ ազնուատոհմ Նէապօլսեցի, որ անուանեցաւ Յովհաննէս ԻԳ ։ Նա քանզի դեռ ևս լոկ սարկաւագ էր, 'ի սակաւ աւուրս յետ ընտրութեան իւրոյ ընկալաւ զքահանայութիւն և զգերաստիճան պատիւ քահանայապետութեան ։ Սմանք 'ի մատենագրաց գովեն զբնաւոր բարեմտութիւնս նորա, որովք հաճոյացեալ երբեմն Վոնիփակիոսի Թ. ընկալաւ 'ի նմանէ զպատիւ կարդինալութեան և զլեգատութեանն Պոլոնիոյ, և ապա յընտրութենէ Փիզայեան ժողովոյն արժանացաւ քահանայապետութեան ։ Իսկ այլք պարսաւեն զնա իբրև զդաւադիր գահընկեցութեանն Գրիգորի ԺԲ. և Բենեդիկտոսի ԺԳ., միանգամայն, և զրաւելոյ յինքն զաթոռ քահանայապետութեան 'ի ձեռն Լուդովիկոսի դքսին Անժուի, որ եկեալ էր զօրօք տիրել թագաւորութեանն Նէապօլսոյ, և էր մտերիմ բարեկամ նորա ։ Սակայն ըստ վկայելոյ ամենեցուն զարդարեալ էր մեծամեծ ձրիւք որ կարևորքն են 'ի տեսչութիւն պետութեան ։

ԳԼՈՒԽ Գ.

Ժողով Կոստանդեան ։ — Գահընկեցութիւն Բենեդիկտոսի ԺԳ., Գրիգորի ԺԲ., և Յովհաննու ԻԳ. ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ քահանայապետ 'ի սկզբան անդ իշխանութեան իւրոյ մեծարոյ և ընդունելի եղև բազմաց 'ի հաւատացելոց՝ ընդ հակառակս կարծեաց Գրիգորի և Բենեդիկտոսի, որք թէպէտ տակաւին համարէին զանձինս իւրեանց քահանայապետս, սակայն օր քան զօր նուազէր իշխանութիւն նոցա . մինչև Գրիգորի ստիպեալ առ անձկոյ՝ ծպտեալ զգեստուք վաճառականի խոյս տալ 'ի Կայետա քաղաք Իտալիոյ, ուր Վլատիսլաւ արքայ Նէապօլսոյ ետ նմա տուն բնակութեան ։ Իսկ Բենեդիկտոս հալածական լեալ 'ի հրամանէ արքային Գաղղիոյ՝ փախեաւ 'ի Սպանիա և մեկուսացաւ 'ի բարձրաբերձ ամրոցի ուրեք առընթեր ծովու ։ Սակայն և այնպէս հարկ 'ի վերայ կայր սուրպել զնոսա հրաժեշտ տալ 'ի կարծեցեալ պատուոյն. քանզի ժողովն Պիզայի վաղու ևս գահընկէց արարեալ էր զնոսա:

Սիկիսմունդ արքայ խորհելով հնարս խաղաղութեան եկեղեցւոյ՝ յօդեալ զհաւատացեալսն ամենայն 'ի մի գլուխ, 'ի դէպ վարկաւ վերստին գումարել ժողով ընդհանրական. վասն որոյ հրամանաւ Յովհաննու ԻԳ. հաւաքեցաւ ժողովն 'ի Կոստանդիա կամ Քոնսթանցա քաղաք, յոր ուղևորեցաւ և ինքն իսկ քահանայապետն՝ բայց յակամայ կամս, զի միշտ 'ի կասկածանս էր, թէ ելք ժողովոյն անյաջող գտցին և վասն իւր. զոր և իբր գուշակելով ասէր. "Երկիւղ է ինձ մի գուցէ գնացեալ անդր ծայրագոյն քահանայապետ, դարձայց անտի մերկացեալ 'ի պատուոյս": Եւ 'ի մերձենալ իւրում 'ի Կոստանդիա յաւել ասել. "Տեսանեմ զքաղաքս որպէս զուր խոր, ուր թակարդին աղուեսունք": Եհաս անդր 'ի քսան երորդ ութերորդ աւուր ամսեանն հոկտեմբերի յամին 1414, երրեակ աւուրբք յառաջ քան զժամանակ սկզբնաւորութեան ժողովոյն: Ի նմին ժողովեալ անդամոք քսան և երկու կարդինալք, չորս լատին պատրիարգունք, քառասուն և եօթն արքեպիսկոպոսունք, հարիւր և վաթսուն եպիսկոպոսունք, հինգհարիւր վաթսուն և չորս աբբայք և վարդապետք. թող զբազմութիւն գործակալս տէրութեանցն Գերմանիոյ, Գաղղիոյ, Անգղիոյ և Իտալիոյ. և զամբոխ մեծ բազմութեան ժողովելոցն. զոր և աստի իսկ մարթ է 'ի միտ առնուլ, զի թիւ երիվարացն նոցա էր երեսուն հազար: Հասեալ անդր և կայսերն Սիկիսմունդեայ 'ի քսան և չորս աւուր դեկտեմբերի, 'ի վաղիւ անդր որ էր տօն ծննդեանն Քրիստոսի՝ սարկաւագական զգեստուք սպասաւորեաց պաշտաման քահանայապետական պատարագին, և ընթերցաւ զաւետարանն:

Յովհաննէս ԻԳ. թէպէտ և 'ի կասկածանս էր միշտ և յերկիւղի 'ի կուսակցաց անտի համապատիւ աթոռակցացն իւրոց, սակայն ակն ունէր դարձեալ՝ թէ ընտրութիւն իւր գոլով 'ի Պիզայեան ընդհանրական ժողովոյ՝ հաստատեսցի և 'ի Կոստանդեան ժողովս, որ էր իբր մասն կամ շարայարութիւն նորա. բայց զվրիպել ակնկալութեան իւրոյ ծանեաւ անյապաղ. յորժամ առաջի արարին նմա հրաժարել 'ի պատուոյն վասն խաղաղութեան եկեղեցւոյ ։ Եւ 'ի գալն գործել նորա ցուցանել եթէ անդէպ իցեն իւրքն , ժողովականքն ամենն 'ի մէջ բազմապատիկ ամբաստանութ̃իս 'ի վերայ վարուց և տեսչութեան նորա . վասն որոյ յերկրորդում գումարման ժողովոյն 'ի Հանդիսի անդ խոստացաւ հրաժարել 'ի քահանայապետութենէն , եթէ հնար իցէ նովաւ անհետ առնել յեկեղեցւոյ զհերձուածն ։

Յետ սակաւուց զղջացաւ ընդ խոստումնն . և խորհեցաւ խուսել գաղտ 'ի քաղաքէն՝ առ 'ի կարող լինելոյ համարձակ զինել ընդդէմ հակառակորդաց իւրոց . սակայն իմացեալ կայսերն զխորհուրդս մտաց նորա՝ ջանացաւ արգելուլ և խափանել զփախուստ նորա ։ Զայն տեսեալ Յովհաննու՝ 'ի Փրեդերիկոս 'ի դուքսն Աւստրիոյ եղև ապաստան , որոյ անմոլ յառաջ եկեալ էր 'ի Կոստանզիա՝ իբրև այլուր ուղևորել անտի կամելով , բայց ճշմարտութեամբ 'ի թիկունս օգնականութեան Յովհաննու , յորմէ վեր 'ի վերայ կեղծէր ուրանալ ։ Եւ զի 'ի հրամանաց կայսեր լրտեսէին խստիւ ամենայն գնացք Յովհաննու և Փրեդերիկոսի դքսին , և չմարթէր նոցա խլրտել ուրեք , խորհեցաւ դուքսն իբր հնարս յաջողութեան մտաց իւրոց՝ առնել հանդէս ինչ խաղամարտութեան 'ի տես հասարակաց 'ի քսաներորդ աւուր մարտի յամին 1415 ։ Եւ մինչդեռ ամենեքին առ հասարակ ժողովեալ էին 'ի տես հանդիսին , ընդ երեկս աւուրն քահանայապետն զգեցեալ զհանդերձ ձիավարի և հեծեալ յերիվար անպիտան՝ ել 'ի քաղաքէն . և զիշերայն մտեալ 'ի պատրաստական նաւակ ինչ , 'ի սակաւ ժամս եհաս 'ի Շաֆֆուզ , որ էր սահման իշխանութեան Փրեդերիկեայ դքսին ։

Ընդ այս գործ քահանայապետին թէպէտ և վշտացաւ յոյժ ժողովն , սակայն համապաղորդեալ զգումարմանն՝ մեղապարտ ցուցին զնա իբր վատնիչ եկեղեցական ստացուածոց , զօշաքաղ , գայթակղեցուցիչ և խռովիչ առաքելական աթոռոյն . վասն որոյ ընկեցին զնա 'ի քահանայապետական պատուոյ յամին 1415 , 'ի քսանևիններորդ աւուր ամսեանն մայիսի ։ Եւ գործակալքն մատուցին Յովհաննու զդատակնիք ժողովոյն , զոր մտադիւր յօժարութ̃ ընկալեալ նորա ետ բառնալ զպապական խաչն 'ի սենեկէ անտի իւրմէ, և խոստացաւ յետս կալ և հրաժարել յիրաւանց՝ զորս մարթ էր նմա ունել 'ի վերայ առաքելական աթոռոյ սրբոյն Պետրոսի ։

Յետ սակաւուց նմանող զսա Յովհաննու և Գրիգոր ԺԲ., որ մեկուսացեալն էր առ Կարոլոսի Մալաթեսթա իշխանին Արիմինոյ, որում յանձն արար զնալ 'ի գլխոյ իւրոյ առ ժողովն, և յանուն իւր հրաժարել յամենայն իրաւանց սրբոյ աթոռոյն ։ Հարք ժողովոյն 'ի փոխարէն կամակար նուիրանաց նորա՝ անուանեցին զնա նախապատիւ 'ի կարդինալս, և նուիրակ կամ կուսակալ Անքոնայի՝ հանդերձ ամենայն արտօնութեամբք որ անկ էին այնր պատուոյ ։

Իսկ հակապապն Պետրոս Լունայեան, որ եկաց միայն անյեղլի 'ի միտս իւր՝ լքաւ յամենայն կուսակցաց իւրոց, և զրկեալ 'ի պատուոյն և վերստին նզովեալ 'ի Կոստանդեան ժողովոյն, ապաստանեալ էր յամրոց ազգատոհմին իւրոյ 'ի Փանիսկոլա որ 'ի Քաթալոնիա գաւառին, ուր եկաց միայն հաստատուն 'ի հերձուածն մինչև ցմահ իւր որ եղև յամին 1424 'ի հասակի իննսուն ամաց ։ Ի մահու անդ իւրում յանձն արար երկուց կարդինալաց որք կուսակիցք իւր էին՝ ընտրել զոք փոխանակ իւր, և նոքա կացուցին զկանոնիկոս ոմն Պարսելոնայի, որ անուանեցաւ զանձն Կղեմէս Ը. · բայց յետ հնգից ամաց քահանայապետութեանն յամին 1429 կամակար հրաժարեցաւ 'ի պատուոյ անտի և ընկալաւ փոխարէն զեպիսկոպոսութիւն Մայորքայ կղզւոյն ։

ԳԼՈՒԽ Դ.

Տևել Կոստանդեան ժողովոյն, և ընտրութիւն Մարտինոսի Ե.

ՔԱՆԶԻ 'ի պատճառս գահընկէց լինելոյ հակապապիցն երեցունց մնաց եկեղեցի առանց օրինաւոր հովուապետի, հարկ համարեցաւ ժողովն ընտրել զոք յաթոռ քահանայապետութեան . և այսմ առաւելապէս յորդոր եղև կարդինալն Պետրոս Ալլեան եպիսկոպոսն Քամպրէի՝ նախանձաւորն բարեկարգութեան եկեղեցւոյ 'ի գլուխն և յանդամս իւր․ զի մինչև ձեռն արկեալ 'ի կանոնս բարեկարգութեան՝ ընտրեսցի որ քահանայապետ․" Զի իբր հնար իցէ, ասէր, բարեկարգել զմարմին առանց գլխոյ, և զանդամն որոց չիցէ գլուխ„։ Յայն ժողով միաբանեալ քսան և չորս կարդինալաց յամի տեառն 1417, ընտրեցին քահանայապետ զկարդինալն Օթոն 'ի Կոլոննեան զարմէ, որ անուանեցաւ Մարտինոս Ե։ Գերմանացիք և Գաղղիացիք հրաւիրեցին զնա յերկիր իւրեանց հաստատել անդանօր զընակութիւն իւր․ բայց քահանայապետն արար նոցա պատասխանի, թէ իւր կամք են կալ մնալ 'ի Հռոմ․ զի ուղղչին պարտ է, ասէ, կալ 'ի խելս նաւուն և ոչ յառաջակողմն կոյս։

Յետ ընտրութեան նորոյ քահանայապետին եղեն և այլ ժողովմունք, և սահմանեցան կանոնք, վճիռք և դատապարտութիւնք հերետիկոսաց, առաջիկայ գոլով և նորապսակ քահանայապետին, որպէս տեսցուք համառօտիւ 'ի գլուխն որ զկնի։ Ապա կամեցաւ քահանայապետն դարձ առնել 'ի Հռոմ․ և յուղևորել իբրուն ընդ Փլորենտիա քաղաք, ուր եկաց իբր զամ մի, Պաղտասար Կոսսա՝ անկեալն 'ի քահանայապետութէ, գնաց անդր անկանել յոտս նորա․ զոր տեսեալ Մարտինոս Ե զարմացաւ յոյժ ընդ անակնկալ խոնարհութիւն նորին, և գթացեալ 'ի նա՝ ընկալաւ քաղցրութեամբ, և կարգեաց նմա հասս եկամտից որով մարթ իցէ նմա արժանաւոր պատուով իբրև կարդինալ անցուցանել ըզկեանս իւր։ Միանգամայն և 'ի հրապարակական հանդէսս ետ նմա նստել 'ի բարձրաւանդակ տեղւոջ 'ի վեր քան զայլ կարդինալս․ բայց Կոսսա չկարաց ընդ երկար վայելել յայն պատիւ, զի փոխեցաւ զկնի վեցից ամսոց յամի տեառն 1419։ Զպատմութիւն վարուց սորա և զբարեմասնութիւնս այլ ազգ յոյժ 'ի միմեանց գրոշմեն պատմաբանք․ սակայն 'ի բանս նոցա երևի առաւելութիւն բանից՝ ոմանց 'ի գովելն և այլոց 'ի պարսաւել։

ԳԼՈՒԽ Ե·

Դատապարտել ժողովոյն զՎիքլէֆ և զՅովհաննէս Հուս, և պատուհաս երկրորդին և Հերոնիմոսի Փրակացւոյ ։

ՄԱՐՏԻՆՈՍ քահանայապետ մինչև մնեալ 'ի Կոստանդեայ՝ հաղորդ գտաւ գործոց ժողովոյն ։ Հարքն հանախմբեալք յանուն ընդհանրական եկեղեցւոյ՝ ոչ միայն կամէին բառնալ 'ի միջոյ զհերձուած քահանայապետութեան, այլ և քշտել զբողբոջս մոլորութեանց որ վնասաբերքն էին քնական հաւատոյ ։ Զդատապարտութիւն Վիքլէֆայ 'ի ժողովն Կոստանդեան գրեցաք կանխաւ, բայց մոլորութիւն նորա օր քան զօր առաւելեալ տարածեցաւ 'ի Գերմանիա ։ Յովհաննէս Հուս վարժապետ 'ի համալսարանին Փրակայի՝ նորոգեաց դարձեալ զմոլորութիւնս նորա 'ի Պոհեմիա՝ գրեալ գիրս 'ի ջատագովութիւն կարծեացն Վիքլէֆայ, կամ թարգմանեալ զգրուածս նորա ։ Սա ինքն Յովհաննէս ազդու պերճախօսութեամբ իւրով և բազմահմուտ գիտութեամբն ստացաւ իւր աշակերտս և կուսակիցս յեկեղեցականաց, յորս առաւելապէս յառաջադէմ և ճարտարահնար գտաւ 'ի ծաւալել զմոլորամիտ վարդապետութիւնսն Հուսեայ Հերոնիմոս Փրակացի վարժապետ արուեստից յայնմ համալսարանի, այր ուսումնասէր և ճգնազգեաց ։ Երկոքին սոքա հմուտք աստուածաբանութեան՝ կոչեցան 'ի ժողովն Կոստանդեան, և Հուս յամառեալ յիւրումն մոլորութեան՝ մատնեցաւ 'ի ձեռս աշխարհական ատենի, և կենդանւոյն այրեցաւ 'ի հուր յամին 1415 'ի չորրորդ աւուր ամսեանն յուլիսի ։ Իսկ Հերոնիմոս Փրակացի բարեկամ և աշակերտ նորա՝ առ նովին ժամանակաւ արկաւ 'ի բանտ, ուր 'ի յորդորելն կոչել յետս զմոլար վարդապետութիւնս իւր, յօժարամիտ յանձն էառ զայն՝ ձանձրացեալ 'ի վշտաց բանդարգելութեանն, միանգամայն զանգիտեալ և 'ի սպառնալեաց մահու. որով ազատեցաւ առ ժամն, բայց յետ սակաւուց վերստին խարդաւանեալ յառաջին իւր ցնորս, ընկալաւ և սա զպա-

տուհաս վարդապետին իւրոյ, այրեցեալ 'ի հուր յամին 1416, յերրորդ աւուր մայիսի:

ԳԼՈՒԽ Զ.

Վախճան կոստանդեան ժողովոյն:

ՅԱՌԱՋ քան զմեկնել հայրց ժողովոյն՝ սահմանեցին ազգի ազգի վճիռս կանոնաց 'ի բարեկարգել զանկարգութիւնս զորոց բողոքէին բազումք 'ի վաղ ժամանակաց հետէ, միանգամայն և 'ի հաստատել ողջամիտ վարդապետութիւնս: Միաբան հաւանութեամբ հաստատեցաւ սովորութիւն հաղորդելոյ խորհրդոյն զաշխարհականս միով տեսակաւ հացին, մերժելով զխնդիր Հուսեանց որք կամէին ընդունել զմարմին և զարիւն Քրիստոսի ընդ տեսակաւ հացի և գինւոյ: Դարձեալ սահմանեցաւ, զի ստէպ գումարեսցին ժողովք գաւառականք. արգելաւ եպիսկոպոսաց մի՛ փոփոխել զվիճակ իւրեանց առանց ծանր և կարևոր հարկի, ամփոփեցան առանձնաշնորհ արտօնութիք, դատապարտեցաւ սիմոնականութիւն. և եղեն յորդորք եկեղեցականաց վասն պարկեշտութեան զգեստուց: Արտաքոյ այսոցիկ չեղև ինչ որոշակի վճիռ սակս իրաց ինչ առաջարկելոց 'ի վերանորոգութիւն, ոչ զտարեւորական հասից ժառանգաւորացն վախճանելոց, որք առաքելական աթոռոյն էին պահեստք. ոչ զխոստմանց 'ի մուտս ապագայ ժառանգաւորութեան յեկեղեցական պաշտամունս, և ոչ զայլոց այսպիսեաց զորոց որոշմունս թողին քննութեան և կարգադրութեան այլում ժողովոյ՝ որ սահմանեցաւ լինել զկնի հնգից ամաց:

Այս ժողով ընդհանրական տևեաց զամս երիս և զամիս վեց, սկսեալ յամին 1414 'ի հինգերորդ աւուր նոյեմբերի, և աւարտեցաւ 'ի 1418 յապրիլի քսան և երկու: Յաւերժացին փառք ժողովոյս զի պատճառ եղև խաղաղութեան եկեղեցւոյ՝ ընկեցիկ առնելով 'ի պատուոյն զօրինաւոր քահանայապետն Յովհաննէս և զհակապապ զոք: Համբաւեալ է յոյժ ժողովս և վասն այնորիկ զի յամենայն եւրոպեան ազգաց քրիստոնէից գումարեցան արք ականաւորք, և մեծափառ կայսրն էր 'ի հանդիսին ։ Նաւելապէս նորանշան հանդիսացաւ 'ի ցուցանելն զգերակատար իշխանութիւն ընդհանրական ժողովոյ յընտրելն զՄարտինոս Ե., որ ընդունելի եղև ամենայն հաւատացելոց . թող և զայլ ամենայն վճիռս պիտանիս 'ի խնդիրս հաւատոյ և բարւոյ վարուց ։ Նախանձախնդիր կացին բարեկարգութեանցս կայսրն Սիկիսմունդոս, կարդինալն Պետրոս Այլեան, Փրանկիսկոս Զաբարելլայ կարդինալ, և մեծանուն ատենապետն համալսարանին Փարիզու Յովհաննէս Գերսոն՝ մի 'ի դեսպանաց թագաւորին Գաղղիոյ, ականաւորն իմաստութեամբ և առաքինութեամբ ։

ԳԼՈՒԽ Է.

Պատերազմ Հուսեանց ։

ՆՇԱՆԱԿԵԱԼ տեսաք զկարևոր սահմանադրութիւնս Կոստանդեան ժողովոյն, տեսցուք արդ և զարգասիս նոցին ։ Հրակէզ պատուհաս Յովհաննու Հուսեայ և Հերոնիմոսի փրակացւոյ, զորս կուսակիցք իւրեանց նահատակս համարէին, զարթոյց 'ի նոսա ոգի թշնամութեան և ատելութեան ընդդէմ ուղղափառաց. վասն որոյ գրեցին դաւանութիւնս հաւատոյ ըստ վարդապետութեան զոր ընկալան 'ի հերեսիովտապետացն, և որոշեալք 'ի հաղորդութենէն Հռովմայ վասն պահելոյ զանսասան ազատութիւն իւրեանց՝ կազմեցին բանակ մեծ, և շարժեալք 'ի մոլեգին կատաղութենէ այրեցին և քանդեցին զտաճարս և զսեղանս սրբութեան, և յանդգնեցան գործել ազգի ազգի անկարգութիւնս ։ Յովհաննէս Զիսքա ազնուատոհմն Բոհեմիացի՝ զօրագլուխ մոլեգնելոցս, 'ի ճակատամարտէն ընդ Սիկիսմունդոսի կայսեր՝ եօթն անգամ յաղթահարեաց զնա, մինչև ստիպել կայսեր խօսել ընդ նմա 'ի հաշտութիւն և կարգել զնա տեառն Բոհեմիոյ ։ Յետ մահուանն Զիսքայի՝ նովին հոգւով խրախուսեալ Հուսեանց ; ստացան նորանոր յաղթութիւնս . վասն որոյ ստիպեցան հաւատացեալք գումարել խաչակիր զինուորութիւն ընդդէմ նոցա ։ Բայց իբրև և այն իսկ անարգասաւոր եղև հարկ համարեցան գաշնագիր լինել ընդ նոսա, վասն որոյ գումարեցաւ ժողով. և հրաւիրեցան անդանօր հակառակորդք խօսել զիրացն և զխնդրոց որոց վասն բաժանեալ էին յեկեղեցւոյ ։

ԳԼՈՒԽ Ը.

Ժողով Բաւիոյ, ուստի փոխադրեցաւ 'ի Սիէնա, և անտի 'ի Պազիլէա ։

ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՆ Մարտինոս Ե. 'ի մեկնել անդ իւրում 'ի հարց ժողովոյն խոստացեալ էր նոցա՝ ոչ յետ բազում ժամանակաց վերստին գումարել այլ ժողով և կանոնագիր լինել ընդդէմ բազմապատիկ անկարգ սովորութեանց զորոց բողոք ունէին բարեպաշտք ։ Զայս ժողով խորհեցաւ նախ գումարել 'ի Բաւիա քաղաք Իտալիոյ՝ յամին 1423, բայց ընդ այն ժամանակս 'ի ծաւալել ժանտախտի յայն քաղաք և 'ի սահմանս նորա, փոխադրեցաւ ժողովն 'ի Սիէնա, և անտի 'ի Պազիլէա քաղաք. ուր սկիզբն եղաւ առաջին գումարման 'ի քսան և երեք աւուր ամսեանն յուլիսի 1431 ամին ։ Եւ զի 'ի նմին ամի 'ի քսան փետրուարի նախ քան զսկզբնաւորել ժողովոյն վախճանեալ էր Մարտինոս Ե., յաջորդ նորա Եւգինէոս Դ. առաքեաց անդր զկարդինալ Ջեզարինի՝ երեսփոխան իւր լինել և նախագահ ժողովոյն ։

Նախ ձեռն արկին հարք ժողովոյն նորոգել զվճիռ Կոստանդեան ժողովոյն վասն նախապատիւ իշխանութեան ընդհանուր սինհոդոսի քան զքահանայապետացն իսկ Հռովմայ, որով խորհէին կանոնագիր լինել և գլխոյն եկեղեցւոյ. ընդ որ դժգմնեալ Եւգինէոսի Դ. խորհեցաւ ցրուել զժողովն Պազիլէայի, և գումարել այլ ժողով 'ի Պոլոնիա քաղաք Իտալիոյ. բայց 'ի չյաջողել խորհրդոց մտացն կամեցաւ ծայրագոյն իշխանութեամբ իւրով փոխադրել զժողովն 'ի Ֆերրարա քաղաք յամին 1438, և ապա 'ի հետևեալ ամի 'ի Փլորենտիա ։

Հարք ժողովոյն Պազիլէայի բազում անգամ ընդդատեցին զքահանայապետն Եւգինէոս յետս կոչել զկոնդակն որ վասն ցրուելոյ ժողովոյն, և սպառնացան մերժել իսկ զնա 'ի գահակալութենէ աթոռոյն.

այլ տեսեալ զհաստատութիւն մտացն Եւգինէոսի 'ի չկոչել յետս զկոնդակ իւր, ձեռն արկին 'ի դատաւնիք՝ անվաւեր համարելով զժողովն Փլորենտիոյ, և դահընկէց առնելով զԵւգինէոս յաթոռոյ իշխանութեան՝ փոխանակ նորա կացուցին քահանայապետ զԱմեդէոս Դ· զդուքսն Սաւոյիոյ, որ հրաժարեալ գոլով յաշխարհական իշխանութենէ առանձնացեալ կայր 'ի Ռիփայլ աւան որ կայ առ եզր լճին Գենեւայի: Ամեդէոս այս կոչեցաւ Փելիքս Ե· բայց յետ ամաց ինչ յաւուրս Նիկողայոսի Ե, որ եղև յաջորդ Եւգինէոսի Դ, ծանուցեալ զանվաւերութիւն ընտրութեան իւրոյ՝ հրաժարեցաւ 'ի պատուոյն, և վերստին դարձ արար 'ի նախկին առանձնութիւն իւր, ուր վախճանեցաւ սրբութեամբ վարուց:

ԳԼՈՒԽ Թ·

Խնդիրք Հուսեանց 'ի ժողովն Պազիլէայի, և վախճան ժողովոյն:

ՔԱՆԶԻ հակառակութիւնք Հուսեանց ընդ եկեղեցւոյն Հռովմայ՝ էին վասն խնդրոց ինչ, հրաւիրեցան 'ի ժողովն առաքել զգործակալս իւրեանց անդր· վասն որոյ ընտրեցան 'ի նոցանէ այրք ականաւորք Պրոկոպիոս զօրագլուխ յաշխարհական կարգէ, և Յոհաննէս Ռոկեզանա հմտագոյնն յաստուածաբանս նոցա, և առաքեցան 'ի ժողովն: Եւ քանզի խնդիրք նոցա էին վասն չորից այսոցիկ գլխոց· նախ զի հաղորդութիւն մարմնոյ և արեանն Քրիստոսի լինիցի ընդ կրկին տեսակօք· երկրորդ՝ պահանջէին աշխարհական առենից ունել իրաւունս և իշխանութիւն դատելոյ և պատուհասելոյ զյանցաւորսն յեկեղեցականաց· երրորդ՝ զի տացի և նոքեանց իշխանութիւն և հրաման քարոզելոյ զկարծեցեալն նոքեանց զբանն Աստուծոյ· չորրորդ՝ ստիպէին զի եկեղեցականք չունիցին ինչ իշխանութիւն 'ի քաղաքական գործս:

Յետ բազմապատիկ և վայրապար խօսից ընդ երկոսին գործակալս Հուսեանց խորհեցաւ ժողովն փութանակի առաքել 'ի Պոհեմիա արս գործունեայս և իմաստունս, յորս ականաւոր էր Ենէաս Սիլուիոս 'ի Փիկ-

քոլոմինի զարմէ, որ յետոյ ընտրեցաւ քահանայապետ ընդ անուամբ Պիոսի Բ ։ Երթեալ սոցա անդր՝ գյոլովս 'ի Յունաց ածին յուղղութիւն, զիջանելով առ խնդիրն որ վասն հաղորդեցուցանելոյ ընդ կրկին տեսակօք հանդերձ պատշաճական պայմանօք ։ Որք միանգամ յանձն առին հաւանել բանից նոցա՝ անուանեցան Կալիքստինի, այն է Բաժակեանք, իսկ անհաւանքն և յամառք կոչեցան Թաբորականք՝ յանուանէ անտի լերինն որ առ Փրակա քաղաքաւ, զոր նմանութեամբ ձևոյն Թաբոր կոչէին, և յորոյ վերայ ունէին իւրեանց ամրոց ապաստանելոյ ։ Ապստամբքս յանդգնեցան զինուք պաշտպանել զմոլորամիտ խնդիրս իւրեանց, յոր սակս եղեն բազում պատերազմունք ընդ ամս ինչ, և յետ յոլով արիւնհեղութեանց 'ի բաց եդեալ զզէնս խաղաղացան ․ զի Թողաւ նոցա վարել ըստ կամս իւրեանց, որպէս և յետ դարու միոյ Թոյլ տուաւ և 'ի Գերմանիա եկեղեցեացն բողոքարկուաց, որով և Յուսեանք խառնեցան 'ի խումբս նոցա ։

Յայսմ ժամանակի ցրուեցաւ և ժողովն Պազիլէայի յետ քառասուն և հինգերորդ գումարման, որ եղև 'ի մայիսի յամին 1443 ։ Տևեաց սինհոդոսս զամս երկոտասան (1431 — 1443) ․ բայց յետին հնգեքին ամքն յորս սկզբնաւորեալ էր ժողով Ֆերրարայի՝ չեղեն համբաւեալք որպէս զառաջինն ․ վասն որոյ յարգ կամ հեղինակութիւն նորա ընդունելի համարի մինչև ցքսան և վեցերորդ գումարումն, յորում սկսաւ յուզումն խնդրոյ դահընկէցութեան Եւգինէոսի Դ ։

Որք միանգամ ընդունին զծայրագոյն և զբացարձակ իշխանութիւն քահանայապետին Հռովմայ, զժողովս Կոստանդեայ և զՊազիլէայի ոչ դասեն 'ի կարգս ընդհանրական սինհոդոսաց, զորս Թուեն ութևտասն ․ իսկ հակառակքն կարծեօք՝ դասեալ և զերկոսին զայնոսիկ բովանդակեն 'ի Թիւն քսան ։

ԳԼՈՒԽ Ժ·

Ժողով Ֆեռրարայի փոխադրեալ 'ի Փլորենտիա · ուր և միաբանութիւն Յունաց ընդ Լատինս :

ՅԻՇԱՏԱԿԵՑԱՔ վերագոյնդ՝ եթէ Եւգինէոս Դ· զժտեալ ընդ գործս հարցն ժողովելոց 'ի Բազիլէա քաղաք՝ ետ գումարել այլ ժողով 'ի քաղաքն Ֆեռրարա յամին 1438: Գլխաւոր և առիթողական պատճառք այսր ժողովոյ՝ բաց 'ի զժտութենէ քահանայապետին ընդ Բազիլեան վճիռն՝ եղև աղերս Յովհաննու Պալէոլոգի կայսեր Յունաց առ 'ի բառնալ զհերձուածն որ ընդ մէջ երկուց եկեղեցեաց : Զի տեսեալ կայսեր զարշաւանս Օսմանեանց, որք օր ըստ օրէ զօրանային յարևելս 'ի վնաս տէրութեան և եկեղեցւոյ, ծանեաւ զկարօտութիւն իւր ձեռնտուութեան քահանայապետին Հռովմայ և արևմտեան իշխանաց · վասն որոյ առաքեաց նախ դեսպանս առ Եւգինէոս Դ· խօսել ընդ նմա վասն միաբանութեան ընդ եկեղեցւոյն Հռովմայ · և ապա ինքնին անձամբ չոգաւ 'ի Ֆեռրարա ընդ եղբօր իւրում պատրիարգին Կոստանդնուպօլսոյ · որոյ ուղեկից եղեն և բազումք յիշխանաւորաց որպէս և յեկեղեցականաց, որք մեծայարգ շքով ընկալեալ եղեն 'ի քահանայապետէն և 'ի ժողովականաց, ընդ որս ապա միաբան սիրով աշխատ եղեն միութեան երկոցունց եկեղեցեաց :

Բանք նոցա էին 'ի վերայ բղխման Հոգւոյն սրբոյ, 'ի վերայ քաւարանի կամ կայանի հոգւոց, վասն կիրառութեան անխմոր հացի կամ բաղարջի, և յաղագս նախապատուութեան քահանայապետին Հռովմայ : Ի Ֆեռրարա քաղաքի եղեն վեշտասան գումարմունք յորս ընդ երկար վիճեցան 'ի վերայ այսոցիկ նիւթոց · և զի ընդ այն ժամանակս տագնապէր քաղաքն 'ի կոտորածոյ ժանտախտի, հարկեցան փոխադրել զժողովն յայլ քաղաք :

Եւգինէոս քահանայապետ ոչ կարելով բաւական լինել ծախուց՝ որ պիտոյ էին վասն եօթն հարիւր աւելելոց եկելոց անդր, և 'ի խնդրելն գտանել զդրամ 'ի փոխ՝ Փլորենտացիք յօժարեցան տալ զայն այսու պայմանաւ, զի քահանայապետն հաճեսցի փոխադրել զժողովն 'ի մայրաքաղաք իւրեանց 'ի Փլորենտիա, զոր կամակար յանձն էառ քահանայապետն, և եղև փոխադրութիւն յամին 1439 յամսեանն յունուարի.

Նախքան գումարումն Փլորենտեան այսր ժողովոյ, որ եօթնևտասներորդ համարի՝ դասելով 'ի թիւ ընդ գումարեալսն 'ի Ֆերրարա, եղև 'ի քսան և վեցերորդ աւուր ամսեանն փետրուարի. մինչ յետ բազմապատիկ խօսից և վիճմանց 'ի վերայ բղխման Հոգւոյն սրբոյ, և բացայայտ հաստատելոց Լատինացւոց զայն ճշմարտութիւն, Յոյնք առ հասարակ՝ բաց 'ի Մարկոսէ եպիսկոպոսէն Եփեսոսի ընկալան և ձեռն եդին զաւանութեանն. Կայսրն Պալէոլոգ յառաջ քան զամենեսեան հաւանեցաւ վճռոյ ժողովոյն, ընդ որ խնդացին յոյժ ամենեքին. քանզի վարժեալ էր նա 'ի կրօնական հրահանգս, և պատմի զնմանէ՝ թէ 'ի վիճել երբեմն ընդ ումեմն րաբունւոյ Հրէի՝ յաղթահարեալ զնա բռնադատեաց ընդունել զքրիստոնէութիւն և զմկրտութիւն.

Յետ աւարտելոյ զխնդիր բղխման Հոգւոյն սրբոյ՝ սկիզբն արարին խնդրոյ քաւարանին. յորում փութով և անընդդիմակ միաբանեցան ամենեքին, որպէս և յայլ խնդիրս. որով կատարեալ միութիւն երկոցունց եկեղեցեաց կնքեցաւ 'ի քսան և մի աւուր յուլիսի յամին 1439. Նոյն աւուր իբր հաստատուն առհաւատչեայ այնր միութեան՝ ձեռնագրեցան վարդապետութիւնքս, եթէ «Հոգին սուրբ ելանէ 'ի Հօրէ և յՈրդւոյ, իբր 'ի միոյ սկզբնէ». որով մարթ է յաւելուլ 'ի հանգանակին զբանս և յորդւոյ. Եւ թէ գոյ քաւարան մաքրութեան հոգւոց. և թէ քահանայագործութիւնն միօրինակ վաւեր է 'ի հաց խմորեալ և 'ի բաղարջ. և թէ քահանայք պարտին քահանայագործել ըստ արարողութեան իւրաքանչիւր եկեղեցւոյ յարևելս և յարևմուտս. Եւ հուսկ ապա եթէ քահանայապետն Հռովմայ իբր գլուխ ընդհանուր եկեղեցւոյ՝ նախադաս է ընդ ամենայն տիեզերս.

Ի վարդապետս Յունաց որք միանգամ ականաւոր հանդիսացան 'ի ժողովն Փլորենտիոյ՝ արժանի յիշատակաց է մեծանունն Բեսարիոն մետրապօլիտ Նիկիոյ, որ խոհական զգաստութեամբն և հանճարով գերազանցեաց զոգցես քան զամենայն զիմաստունս իւրոյ ժամանակին ։ Հոգեջան նախանձաւորութեամբն որով վաստակեցաւ 'ի կատար ածել զգործն մեծ՝ արհամարհեցաւ 'ի հերձասէր Յունաց. վասն որոյ առ 'ի խորշել 'ի մոլեգին կատաղութենէ նոցա՝ մնաց յԻտալիա, և յետ ժամանակաց ինչ ամբարձաւ 'ի պատիւ կարդինալութեան սակս արդեանց իւրոց ։

Յայս ժողով Փլորենտիոյ կամաւ ազդարարութբ՟ հրաւիրեալ էին և Հայք կոնդակաւ Եւգինէոսի Դ. առ Կոստանդին կաթուղիկոս վահկեցի. բայց վասն հեռաւոր ճանապարհին, և վշտալից խռովութեան մերոյ աշխարհիս, և տարաձայնութեան այլ և այլ կարծեաց ազգայնոց՝ յապաղեցաւ առաքումն դեսպանացն մինչև ցամ տեառն 1438. յորում ժամանակի Կոստանդին կաթուղիկոս հրաման ետ չորից վարդապետաց գնալ յԻտալիա 'ի գլխոց իւրոց, և հաստատել զսէր միաբանութեան զհիմնարկեալն 'ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէն ընդ սրբոյն Սեղբեստրոսի Հռոմայ հայրապետի ։ Արդ ժամանեալ դեսպանացն 'ի Փլորենտիա քաղաք յամին 1439, գտին աւարտեալ զժողով միաբանութեան Յունաց ընդ Լատինացիս, բայց Յոյնք դեռ ևս չէին մեկնեալ 'ի Փլորենտիոյ. վասն որոյ դեսպանք Հայոց յանդիման եղեն նախ քահանայապետին, և ապա կայսերն, որ և յորդոր մատոյց նոցա 'ի նոյն միաբանութիւն սիրոյ ։ Յետ մեկնելոյ Յունաց եղև երկրորդ գումարումն ժողովոյն, յորում մատուցան 'ի մէջ խնդիրք Հայոց, և ապա ընդ ամիս երկուս յետ հասուն քննութեան եկեղեցական կարգաց և դաւանութեան նոցա, Եւգինէոս քահանայապետ առաջի արար Հայոց զդաւանադրութիւնս ժողովոյն. և յընդունել զայն դեսպանացն կամակար, գրեաց կոնդակ պանծալի, սկզբնաւորեալ բանիւք սաղմոսին. "Ցնծացէք առ Աստուած, օգնական է մեր,,. յորում մի ըստ միոջէ բացատրեալ զամենայն դաւանութիւնս հաւատոյ և զխորհուրդս եկեղեցւոյ, պատուիրէ և զհնգեսին տօնն կատարել ընդ եկեղեցւոյն Լատինացւոց և Յունաց ։ Այս արարեալ զհամառօտ բովանդակութիւն այնր կոնդակի լատիներէն և հայերէն հանդերձ ստորագրութեամբ դեսպանացն Հայոց, ետ 'ի ձեռս նոցա տանել առ կաթուղիկոսն և առ ազգն համօրէն ։

Յետ մեկնելոյ Յունաց և Հայոց տևեաց ժողովն այլ ևս ամս երիս, և աւարտեցաւ ապա ՚ի Հռովմ յեկեղեցւոջ սրբոյն Յովհաննու Լատերանեան յամին 1442։ Եւգինէոս քահանայապետ ցնծայր յոյժ, զի առ կենդանութեամբ իւրով ետես զմիաբանութիւն արևելեան եկեղեցեաց ընդ աթոռոյն Հռովմայ, յորմէ ՚ի բազում դարուց հետէ բաժանեալ կային. զի գրեթէ յամենայն ազգաց քրիստոնէից եկեալ էին հրեշտակք և նամակք հպատակութ՟ե առ ժողովն. բայց ՚ի չարախօսութ՟է խռովայոյզ արանց ոչ ինչ երկարատև եղև միաբանութիւնն, այլ յետ ոչ բազմաց քակտեցաւ ՚ի պատճառս Մարկոսի եպիսկոպոսին Եփեսացւոց, որ հրաժարեցաւ ՚ի ստորագրութենէ վճռոյ միաբանութեանն. և այս կայծ փոքր բաւական եղև վերստին արծարծել և համապաղորդել զհրդեհ հակառակութեան և հերձուածոյ։ Եկեղեցականք Կոստանդնուպօլսոյ վրիպակ խորհրդովք պաշարեալ ընդդէմ գործեցելոյն ՚ի Փլորենտիա, զայրագին ցասմամբ ընկալան զեպիսկոպոսունսն որք գնացեալ էին ՚ի ժողովն անդր, մինչև քահանայից իսկ և ժողովրդեան, և մանաւանդ՝ միայնակեցաց որք համարեալ էին հոգևոր դաստիարակք, թշնամանել ընդ նոսա։ Վասն որոյ որք միանգամ դարձան ՚ի ժողովոյն՝ նախատակոծ եղեն անարգական բանիւք, մինչև ռամիկ ժողովրդեան կոչել զնոսա՝ բաղարջապաշտս, մատնիչս կրօնի և ուրացողս. իսկ ընդ հակառակն՝ զՄարկոս եպիսկոպոս Եփեսոսի ՚ի գովեստ առեալ համարէին ճշմարիտ ախոյեան հաւատոյ։

Կոստանդնուպօլիս, Յունաստան, որպէս և քաղաքք Ռուսիոյ լցան երգիծական գրուածովք, յորս երևէին զիմադրութիւնք առաջարկեալք ընդդէմ Լատինացւոց, յորոց վերայ եղեալ էին հերքմունք ՚ի ժողովն Փլորենտիոյ։ Իսկ որ յաւէտ յայտնի ցուցանէ զմարդկային մտաց յողդողդ տկարութիւն այն է, զի որք ձեռնամուխ եղեն ՚ի հակառակասէր գրուածոն՝ էին արք ականաւորք որք երևելի հանդիսացան ՚ի ժողովն անդ ՚ի վէճսն յուզեալս սակս սոցին իրաց։ Նոցա սակի էր և արքեպիսկոպոսն Հերակլեայ, իմաստասէրն Գեմիստոս, արքեպիսկոպոսն Պոնտոսի, և այլք բազումք որք կենդանի բարբառով և կամ գրուածովք յետոյ կոչեցին զհաւանութ՟ի իւրեանց ։ Գրուածքն հրատարակեալք 'ի նոցունց՝ պատճառք եղեն տարածելոյ անհամար ստութեանց 'ի ժողովրդեան . ոմանք հաստատէին՝ թէ Յոյնք 'ի Փլորենտիա կաշառակուրծք եղեն և դրամովք հաւանեցան բանից Լատինացւոց , այլք ասէին՝ թէ Լատինացիք 'ի ստիպել տան զՅոյնս 'ի հաւանութիւն և 'ի ստորագրութիւն սահմանաց՝ ժողովոյն սովամահ լլկեցին զնոսա . էին դարձեալ որք ասէին , թէ Լատինք խարդախեալ իցեն զօրինակս բնագրացն զորս ածէին 'ի վկայութիւն ։

Ընդդէմ չարախօս և սուտ զրպարտութեանցս այսոցիկ՝ հաւաստի բանիւ գրեցին Բեսարիոն և այլք ոմանք ողջամիտք , յայտ առնելով թէ Յոյնք 'ի ժողովի անդ գլխովին ազատ և անբռնադատք էին յասել և 'ի բացայայտել զկարծիս իւրեանց յընդդիմադրել անդ վարդապետութեան եկեղեցւոյ , որպէս և 'ի հաւանելն և 'ի ձեռն դնել ուղղափառ դաւանութեան ։ Բայց քանզի ջատագովութիւնս այսոքիկ ոչ հրատարակեալ յայտնեցան՝ բայց եթէ զկնի մահուան Մարկոսի Եփեսացւոյ , վարակեալքն կանխաւ 'ի խաբէական չարախօսութիւնս նորա՝ կացին մնացին հաստատուն և անշարժ 'ի մոլորամիտ կարծիս իւրեանց ։

Զնոյն յաջողող յեղանակութիւն 'ի գործ արկին և պատրիարգունք Աղեքսանդրիոյ , Անտիոքայ և Երուսաղեմի , որք 'ի ժողովն Փլորենտիոյ ընդ ձեռն գործակալաց իւրեանց ձեռն եդեալ էին սահմանադրութեան ժողովոյն , և ապա զղջացեալ ընդ այն՝ յամի տեառն 1443 գումարեցին սինհոդոս յԵրուսաղէմ , յորում յետս կոչեալ զհաւանութիւն իւրեանց՝ զժողովն Փլորենտիոյ անուանեցին խորշելի ժողովակ , և համարձակեցան սպառնալ կայսեր նզովս սաստիկս՝ եթէ հանապազորդեսցէ պաշտպան կալ սահմանաց ժողովոյն Փլորենտիոյ ։ Զանգիտեալ 'ի նոցանէ անարուոյն Պալէոլոգի՝ մեղմացոյց զառաջին խստութիւն իւր , որով Յոյնք մնացին 'ի հերձուածս իւրեանց , բաց 'ի պատրիարգէն Կոստանդնուպօլսոյ և յոմանց 'ի հպատակաց նորա ։

Բազմաշփոթ հակառակութիւնք Յունաց՝ թուի թէ առիթ եղեալ իցեն թուլութեան , և յերկմիտս կացուցեալ իցեն և զայլս յազգաց զօրութենէ Փլորենտեան ժողովոյ . յոր սակս չունիմք ինչ յիշատակութիւն՝ թէ *'ի զառնալ զեսպանացն Հայոց զինչ ինչ գործեալ իցէ նոցա յազգիս ։*

ԳԼՈՒԽ ԺԱ.

Նոր Ձիգն 'ի բառնալ զհերձուած Յունաց ։

ԿՈՍՏԱՆԴԻՆ Պալէոլոգ եղբայր և յաջորդ Յովհաննու՝ տեսեալ զյաջողութիւն զինու Օսմանեանց, ահիւ մեծաւ տագնապէր՝ եթէ ընդ հուպ կալցին նոքա և զԿոստանդնուպօլիս. վասն որոյ յանհնարս մտեալ՝ յամին 1451 առաքեաց դեսպանս առ քահանայապետն խնդրել 'ի Նմանէ օգնականութիւն, յայտ առնելով զջանս իւր և զխոստումն 'ի տանել զՅոյնս 'ի սորագրութիւն սահմանադրութեան ժողովոյն Փլորենտիոյ։ Քահանայապետն Նիկողայոս Ե, որ յաջորդեաց զԵւգինէոս Դ, առաքեաց 'ի Կոստանդնուպօլիս զկարդինալն Իսիդորոս՝ տուեալ 'ի ձեռս նորա զսահման միաբանութեանն։ Զայն իբրև ետես կայսրն Կոստանդին, ընկալաւ զսահմանն աւագանւոյն հանդերձ և գլերիւ, մինչև 'ի ժամ պատարագի յեկեղեցւոջ սըրբոյն Սոփիայ յիշել զանուն քահանայապետին և զպատրիարգին իւրեանց Գրիգորի որ խոյս տուեալ 'ի Յունաց նստէր 'ի Հռոմ։ Զայրացեալ ընդ այն խաժամուժ ամբոխին և կրօնաւորաց ոմանց՝ չկամեցան զհետ երթալ օրինակի իշխանացն իւրեանց. քանզի Գեննադիոս ոմն միայնակեաց հանդիպէր բանիւք յորդորեաց զնոսա հաստատուն կալ մնալ 'ի հերձուածս իւրեանց. և 'ի հարցանել ումանց խորհուրդ 'ի Նմանէ յաղագս այնր միաբանութեան, տայր պատասխանի. «Ո՛ եղկելիք, ախմէ զիմէք յԱստուծոյ՝ փախստեակ ապաւինելով 'ի բազուկ ամենակալին։ Ոչ կարէք հրաժարել 'ի դաւանութենէ հարց ձերոց առանց արժանի լինելոյ ընդ գերութեան»։ Գրեաց և տախտակ համառօտ բանիւս, «Վա՛յ որոց ընկալցին զանօրէն սահման Փլորենտիոյ», և հաստատեաց զայն 'ի վերայ դրան խրձթի իւրոյ։ Այս պատասխանի՝ իբր պատգամ հնչեցեալ յունկն քահանայից, միայնակեցաց և ժողովրդեանն առ հասարակ, մղեցին կատաղութեամբ լցոյց զամենեսին. մինչև ռամկին զինեալ 'ի պանդոկս իբր յաւուրս հասարակաց խնդութեան բաժակ 'ի ձեռին ժայթքէին բիւր նախատինս և թշնամանս ընդդէմ քահանայապետին Հռովմայ, և կայսեր զկնովին՝ զի զնորայն խնդրէր ձեռնտուութիւն ։ “Չունիմք մեք պէտս, գոչէին, ոչ զօրաց և ոչ դաշնակցութեան Լատինաց. քաւ 'ի մէնջ պաշտօն բաղարջից ,,։ Ապերասանն յանդգնութիւն ժողովրդեան զայրացոյց ևս քան զևս. քանզի բազումք հրաժարէին 'ի հաղորդակցութենէ ընդ այնոսիկ, որք ոչ մերժէին զսահման միաբանութեան ընդ եկեղեցւոյն Հռովմայ. ոմանք ևս գրեցին նամակ յանուն եկեղեցւոյն Կոստանդնուպօլսոյ առ Հուսեան հերձուածողս 'ի Պոհեմիա, գովելով զնոսին՝ զի ոչ կամեցան համաձայնել նորութեանց եկեղեցւոյն Հռովմայ, միանգամայն յորդորելով զհերձուածողսն զայնոսիկ միաբանել ընդ իրեանս, “Ոչ ըստ միաբանութեան, ասէին, եղելոյ 'ի Փլորենտիա, այլ ըստ մտաց նախնի հարց ,,։

Այս մինչդեռ տառապեալքս այսոքիկ յամառեալ կային յապստամբութեան յեկեղեցւոյն Հռովմայ, Ֆէթիհ սուլթան Մէհէմմէտ յարձակեալ 'ի վերայ կայսերութեան նոցա, մերձ էր առնուլ զԹագաւորեալ քաղաքն ։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Յառաջ խաղալ Օսմանեանց, և առումն Կոստանդնուպօլսոյ ։

Ի ԲԱԶՈՒՄ ամաց հետէ Թագաւորք Օսմանեանց խորհէին ջնջել զկայսրութիւն Յունաց ։ Սուլթան Մուրատ Բ. յամին 1422 պաշարեալ զԿոստանդնուպօլիս, ստիպեցաւ առ ժամն յետս կալ 'ի պաշարմանէ, և դիմել զօրօք ընդդէմ Հունգարաց կամ Մաճառաց ։ Վլատիսլաւ Թագաւոր նոցա երկուցեալ տալ պատերազմ, խօսեցաւ 'ի հաշտութիւն ընդ սուլթանին՝ երդմամբ հաստատեալ զդաշն խաղաղութեան. սակայն յետ ոչ բազում ամաց Յուլիանոս կարդինալ Չեզարինի՝ դեսպան քահանայապետին 'ի Հունգարիա, ստիպեաց զՎլատիսլաւ ցրել զդաշն. ընդ որ զայրացեալ սուլթան Մուրատայ՝ յամին 1444 հուպ 'ի

Վառնա ճակատեցաւ ընդդէմ ուխտազանցիցն, և տարաւ 'ի գլուխ յաղթութիւն մեծ, սպանեալ 'ի նմին մարտի զՎլատիսլաւ արքայ և զկարդինալն Ջեզարինի: Ըստ աւանդելոյ ոմանց յերկարել մարտին՝ 'ի կեղակարծ վիճակի յաղթութեան, սուլդան Մուրատ հանեալ զդաշինն հաշտութեան 'ի ծոցոյ իւրմէ ասացեալ իցէ. " Ո՛վ Քրիստոս, եթէ դու Աստուած իցես, որպէս խոստովանին քրիստոնեայքդ, պատուհասակոծ արա զուխտազանցութիւն նոցա, որք երդմամբ յանուն քո կնքելով ընդ իս զդաշն՝ յանդգնեցան զանցանել զնովաւ ": Յայնմ պատերազմի սուլդան Մուրատ ձեռնհաս էր բուռն արշաւանօք խաղալ յառաջ, եթէ չէր յետս ընկրկեալ յերկուց քաջազանց 'ի Յովհաննէ Հունեատեայ յիշխանազնէն Թրանսիլվանիոյ և 'ի Սքանտարպայ բռնակալէն Եպիրոսի:

Մէհէմմէտ Բ. որդի և յաջորդ Մուրատայ՝ ժառանգ գտաւ ոչ միայն արութեան, այլ և խորհրդոց մտաց հօր իւրոյ: Եւ քանզի ցանկայր յոյժ տիրել մայրաքաղաքին Կոստանդնուպօլսոյ՝ ձեռն արկ պաշարման յամին 1453, և յետ երկուց ամսոց էառ զայն բուռն յարձակմամբ: Կոստանդին կայսր 'ի խուռն փախստականաց գտաւ հեղձամահ. ապա գտաւ և մարմին նորա, և հրամայեաց սուլդանն հատանել զգլուխն և հարստեալ 'ի ծայր տիգի շրջեցուցանել ընդ քաղաքն ողջոյն. իսկ յընտանեաց անտի կայսեր զոմանս սպանին և զոմանս ապրեցուցին 'ի պէտս արքունեաց սուլդանին: Բազումք յազնուականաց սրոյ ճարակ եղեն, և վաթսուն հազարք 'ի բնակչաց վարեցան 'ի գերութիւն. պղծեցան եկեղեցիք և փոխեցան 'ի մզկիթս:

Զայսոսիկ աղէտս թշուառութեանց լուեալ Կալիստոսի Գ. քահանայապետին Հռովմայ, որ յաջորդեաց զՆիկողայոս Ե. զվախճանեալն յամին 1455, առաքեաց դեսպանս առ ամենայն արքայազուն քրիստոնեայս՝ յորդորել զնոսա 'ի միաբան դաշնակցութիւն ընդդէմ բուռն տէրութեան Օսմանեանց: Սակայն անարդիւնաւոր եղեն հոգեջան խնամք քահանայապետին, զի յետ երից ամաց վայրապար կատարածի եքան սրտաբեկութեամբ, տեսեալ զանպարտելի յառաջխաղացութիւն օսմանեան պետութեան:

Սուլթան Մէհէմմէտ յետ տիրելոյ մայրաքաղաքին Յունաց՝ անուանեաց զանձն ինքնակալ, և յառաջ վարեալ զարշաւանսն՝ եբարձ 'ի Տրապիզոնէ և զտէրութին Դաւթի Կոմնենոսի ։ Ապա կամելով հաստատել զաթոռ միահեծան իշխանուե իւրոյ 'ի Կոստանդնուպօլիս, պատշաճ վարկաւ յինքն ձգել զՅոյնս և շահել զնոսա 'ի մահմետականութի, վզի թոյլ ետ պաշտել համարձակ զկրօնս իւրեանց. և լուեալ ես զպարապութի պատրիարգական աթոռոյ, զպատիւն զայն ետ Գէորգիոսի Սկոլարոսի՝ համբաւաւոր պերճախօսի 'ի մէջ ազգին Յունաց ։ Իսկ զոր օրինակ սովոր էին կայսերք խոյր զգեցուցանել նորոց պատրիարգաց, կամեցաւ սուլթանն ինքնին կատարել զայն հանդէս. վասն որոյ ածեալ զԳէորգիոս 'ի մեծ սրահ արքունի պալատան յանդիման գահին, ետ նմա զաւազան հովուական, և ասէ բարձրաձայն. “ Աստուած ամենազօր ետ ինձ զտէրութիւնս զայս, և ես նոյնն իշխանութեամբ զոր առ 'ի նմանէ ընկալայ՝ կարգեմ զքեզ արքեպիսկոպոս նորոյ Հռովմայ, և պատրիարգ տիեզերական „ ։

Զկնի աւուրց ինչ երթեալ սուլթանին յայցելութի նորոյ պատրիարգին, որ 'ի պատրիարգանոցն ընկալեալ էր զանուն Գեննադիոս, կամեցաւ լսել 'ի նմանէ զգլխաւոր մասունս քրիստոնական հաւատոյ ։ Իսկ Գեննադիոս առաջի արար նմա այնպիսի մեկին և ազդու բանիւք, մինչև պատկառեալ սուլթանին 'ի խօսից նորա՝ սկսաւ քաղցրութեամբ վարել ընդ Յոյնս, միանգամայն պատուիրեաց նմա գրել զասացեալսն և մատուցանել առ ինքն ։ Այս գրեալ ընդ այլ յոլով գրուածոց Գեննադիոսի գտանի տպագրեալ 'ի մատենագրութիս Հռոմայ ։

Գեննադիոս պատրիարգ հոգեջան քաղաքութեամբ խնամ կալաւ 'ի միաբանութիւն ածել զժողովուրդ իւր ը̃ եկեղեցւոյն Հռովմայ, բայց դերևացեալ տեսանելով զջանս իւր՝ յետ հնգից ամաց հրաժարեալ 'ի հովուութենէ ապաստամբ և ապերասան ժողովրդեան՝ առանձնացաւ 'ի մենաստան ուրեք ։ Իսկ Յոյնք յետ այնորիկ և առ յապա կացին մնացին 'ի հերձուածս իւրեանց, որով վիճակեցան և բազմադիմի թշուառութեանց. զի պատրիարգութիւն նոցա կորոյս զնախնի պայծառութիւնն, և ընտրութիւն պատրիարգաց կապեցաւ 'ի կաշաւս , որով զպատիւն զայն սկսան յափշտակել 'ի միմեանց ։

Յայսու ժամանակաւ յամի տեառն 1461 սկսաւ և պատրիարգութիւնն Հայոց 'ի Կոստանդնուպօլիս ։ Զի սուլդան Մէհէմմէտ 'ի խօսել երբեմն ընդ Յովակիմայ եպիսկոպոսի առաջնորդին Պրուսայի , լուեալ զմաղթանս վասն յաջողութեան զինուց իւրոց՝ խոստացեալ էր նմա յառնուլն զԿոստանդնուպօլիս կացուցանել զնա գլուխ ազգին ։ Վասն որոյ յետ ութ ամաց տիրելոյ Կոստանդնուպօլսոյ՝ կոչեաց անդր զՅովակիմ եպիսկոպոս հանդերձ քանի մի ականաւոր տամբք , և ետ նոցա տեղի բնակութեան 'ի մայրաքաղաքին և 'ի Գալաթիա ։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Պաշարումն Ռոդոս կղզւոյ ։

ՍՈՒԼԴԱՆ Մէհէմմէտ քաջալերեալ 'ի յաջողութէ զինուցն , կամեցաւ կորզել 'ի քրիստոնէից և զՌոդոս կղզի , զպատուարն քրիստոնէութեան 'ի միջերկրական ծովու . քանզի էր յայնժամ այն կղզի 'ի ձեռս ասպետաց սրբոյն Յովհաննու , որք զուն գործէին խափանել զյառաջադէմ զարգացումն Օսմանեանց ։ Վասն որոյ Մէսիհ փաշա 'ի կայսերական տոհմէ բաղէօղեանց՝ սիրեցեալ 'ի սուլդանէն , առաքեցաւ անդր հարիւր վաթսուն նաւուք պաշարել զկղզին , և զամիս երկուս բուռն մարտ ընդ Ռոդացիսն եդեալ՝ չկարաց առնուլ զքաղաքն . զի առաջնորդ ասպետաց Օպիւսոն՝ մեծ մագիստրոս անուանեալ ազնուատոհմն գաղղիացի՝ արիական քաջութեամբ պատերազմեալ ստիպեաց զՕսմանեանս յետս նահանջել 'ի պաշարմանէն՝ յետ կորուսանելոյ նոցա աւելի քան ինն հազար զօրականս , թող զհնգետասան հազար վիրաւորսն ։ Նմին մարտի քաջազն ասպետն Օպիւսոն վէրս 'ի մարմնի ընկալեալ . սակս արիական քաջութեան իւրոյ անուանեցաւ Վահան եկեղեցւոյ և պատսպար քրիստոնէութեան ։

Սուլդան Մէհէմմէտ 'ի դարման վնասուն եղելոյ 'ի Ռոդոս՝ խորհեցաւ առաքել նաւատորմիղ և առնուլ զպատէրագման զերկիրն Անատօլույ ։ Ահմէտ փաշա հրամանատար զօրուն յամին 1480 ՚ի քսանեւութ օգոստոսի եհաս ՚ի ծովեզրն Օթրանթ քաղաքի Կալաբրիոյ , եւ յետ պատերազմելոյ զաւուրս եօթնեւտասն՝ էառ զայն , եւ անխնայ յատակեաց զքաղաքն հրով եւ սրով ։ Երկոտասան հազար քրիստոնեայք գտան սպանեալք կամ գերեալք . եւ ծերունի արքեպիսկոպոս քաղաքին , որ խաչ ՚ի ձեռին յորդորէր զժողովուրդն հաստատուն կալ ՚ի հաւատս՝ սղոցեցաւ յերկուս մասունս , կամ ըստ այլոցն ասելոյ կենդանւոյն մորթեզերծ եղեւ ։ Ութհարիւր քրիստոնեայք վարեցան մերկք արտաքս քան զքաղաքն , եւ կոտորեցան սրով ՚ի ձորամիջի , զոր մինչեւ ցայժմ անուանեն Ձոր մարտիրոսաց , քանզի կամակար յանձն առին մեռանել քան յետս կալ ՚ի հաւատոց ։

Աղետալի անցք Օթրանթ քաղաքի զարհուրեցոյց զամենայն բնակիչս Իտալիոյ , մինչեւ խորհել ամենեցուն դիմել ՚ի փախուստ քան ՚ի պաշտպանութիւն մարտի ։ Քահանայապետն եղեալ էր ՚ի մտի թողուլ զՀռոմ եւ խուսել ՚ի Գաղղիա , բայց քաջալերեալ ապա խորհեցաւ գտանել հնարս յապահովելոյ զսահմանս տէրութեան իւրոյ ։ Դաշն հաշտութեան եդ ընդ Փլորենտացիս , յորդոր մատոյց կայսեր , Թագաւորաց եւ իշխանաց Եւրոպիոյ՝ ժամանել յօգնութիւն քրիստոնէից ։ Փութացոյց ածել ՚ի ծովեզերս Պուլիոյ քսան եւ չորս ցռկանաւս , որք պատրաստեալ էին դիմել ՚ի ձեռնտուութիւն Հռոդացւոց ։ Ապա հրաւիրեաց զԹագաւորս եւ զեպիսկոպոսունս գալ ՚ի Հռոմ , եւ խորհել հնարս խափանելոյ զընթացս Օսմանեանց . զի Ահմէտ փաշա սկսեալ էր արշաւել ՚ի ծովեզերս Իտալիոյ , եղեալ ՚ի մտի դիմել ՚ի Լաւրետան քաղաք , եւ յաւարի առնուլ զգանձս տան սրբոյ Կուսին , վասն որոյ դեգերէր զեղերբ Ադրիական ծովուն . բայց տեսեալ զնաւատորմիղ քրիստոնէից՝ երկեաւ դիմադրաւ լինել , վասն որոյ փութացաւ յետս ՚ի փախուստ ։

Սուլդան Մէհէմմէտ ՚ի խորհել անդ պատրաստել այլ ահեղ նաւատորմիղ եւ առաքել վերստին յՕթրանթ քաղաք , յանկարծահաս մահուամբ վախճանեցաւ յամին 1481 . ՚ի հասակի յիսուն եւ երկուց ամաց ։ Անզի թէ՛ ՚ի մեռանել անդ խռում յեղյեղէր *միշտ զանուն Հռոդոս կղզւոյ, որ պատճառք եղեւ անյաջողութեան զինուց իւրոց, եւ մեռաւ 'ի միում փոքրիկ աւանի Բիւթանիոյ՝ որ ընդ մէջ Նիկոմիդեայ եւ Կոստանդնուպօլսոյ ։ Տիրեաց երկուց կայսրութեանց եւ երկոտասան թագաւորութեանց. կալաւ ընդ իւրով իշխանութեամբ երկերիւրս չափ քաղաքս ականաւորս, եւ ջանահնար եղեւ տիեզերակալութեամբ նմանել Աղեքսանդրի Մակեդոնացւոյ, սակայն վրէպ գտաւ 'ի յուսոյն ։*

ԳԼՈՒԽ ԺԴ.

Վիճակ եկեղեցւոյն Գաղղիոյ.

Ի ՄԵԾԱՄԵԾ *եւ 'ի հանրական անցից տիեզերական եկեղեցւոյ, զորոց կանխեցաք ասել վերագոյնդ, եթէ 'ի մասնաւոր եկեղեցիս զակն արկանիցեմք, տեսանեմք զի առ ժամանակօք շփոթութեան արեւմտեան հերձուածոյ եկեղեցին Գաղղիոյ խնամ կալաւ յօգուտ իւր շրջել զայնոսիկ. քանզի սահմանեաց կանոնս պիտանիս 'ի խափանել զպատճառս անկարգութեանց ։*

Գլխաւորագոյնն 'ի բարեկարգութիւնս եղեւ հաստատութիւն այնր օրինաց՝ զոր 'ի խնդրոյ եւ 'ի հաւանութենէ հասարակաց կանխաւ սահմանեալ էր սրբոյն Լուդովիկոսի արքայի ։ Զնոյն կանոն օրինադրութեան վերստին նորոգեալ հաստատեցին յայսմ դարու առ թագաւորութեամբ Կարոլոսի Է. յամին 1438 ։ Քանզի տեսեալ Կարոլոսի եթէ չարիս մեծամեծս սպառնան Գաղղիոյ անկարգութիւնքն յընտրութեան անդ եպիսկոպոսաց եւ 'ի բաշխման եկամտից ժառանգաւորաց եկեղեցւոյ, դուն գործեաց դարման ինչ ազդու մատուցանել անկարգութեանցս. վասն որոյ յամին 1431 ետ գումարել ժողով 'ի համօրէն գղերց տէրութեան իւրոյ 'ի Պուրժ քաղաք, ուր եպիսկոպոսունք գրեցին քսան եւ երիս կանոնական սահմանս՝ հաւաքեալ 'ի վճռոց ժողովոյն Պազիլէայի, եւ առաքեցին զայնոսիկ առ ժողովն գումարեալ 'ի Պազիլէա ընդունել զհաճութիւն եւ զհաստատութիւն սահմանացն այնոցիկ ։ Ընդ յետ բազմապատիկ քննութեց և բանակաւորութեանց իւր ընդ ամս եօթն՝ որոշեցան և հաստատեցան սահմանքն այնորիկ, որք եղեն հիմն բարեկարգութեան և ազատութեան եկեղեցւոյն Գաղղիոյ ։

Ի կանոնադրութիւնս յայնոսիկ սահմանեալս յազգային ժողովոյ էին ինչ ինչ բանք ծանունք և անհաճոյք քահանայապետացն Հռոմայ, զի վնասակարս զայնոսիկ համարէին օգտի սրբոյ աթոռոյն. վասն որոյ Պիոս Բ. խնամ կալաւ մեղմել և դիպաւոր պատեհաւ յայտ առնել զայն արքային Գաղղիոյ ։ Եւ զի ընդ այն ժամանակս սկսեալ էին զօրանալ Օսմանեան թագաւորք, պատճառս առեալ զայն՝ յամին 1459 գրեաց առ ամենայն արքայազունս քրիստոնէից գալ ժողովել 'ի Մանդուա քաղաք Իտալիոյ, կամ զէթ առաքել անդր զգեսպանս իւրեանց 'ի խորհուրդ դաշնակցութեան մարտի ընդդէմ այլազգեաց ։

Կարոլոս Գ. թագաւորն Գաղղիոյ առաքեաց զարքեպիսկոպոսն Տուրոնի զայրն ծերունի և մեծարու, և ուղեկիցս ընդ նմա կարգեաց զեպիսկոպոսն Փարիզու և զՊայն Մոսանայ ։ Արդ եպիսկոպոսն Փարիզու խօսելով առ քահանայապետն 'ի դիմաց արքային՝ արար ճառ ինչ երկմանեայ, որ տեւեաց ժամս երկուս, պանծալի ցուցանելով զարդիւնս թագաւորին Գաղղիոյ և զնախնի աշխարհակալաց այնր տէրութեան, գովելով զփոյթ խնամոց նոցա 'ի շահ օգտի եկեղեցւոյ, զնախանձ նոցա 'ի խաղաղել զհերձուածս. և վասն այսոցիկ բարեպաշտ և առաքինի գործոց սոցան, ասէ, զպատիւ անուանակոչութեան «Ամենաքրիստոնեայ թագաւոր» ։ Յաւարտ ճառին առաջի արար զանգատանօք և զխնդիր արքային, որ կամէր զի տէրութիւնն Սիկիլիոյ տացի Ռենաղդոսի կոմսին Անժուի ։ Կամելով քահանայապետին պատասխանի առնել բանից նորա, նախ մեծարգոյ և պատկառելի ցուցեալ զպատիւ սրբոյ Աթոռոյն՝ յաւել 'ի նոյն թէ կարի վայելչական և յանկաւոր է ամենայն թագաւորաց և իշխանաց հպատակել նմին. գովեաց զմեծամեծ արարս թագաւորացն Գաղղիոյ, մի առ մի թուելով զնախնին մինչև ցԼուդովիկոս և զմեծն Կարոլոս, և յայտ յանդիմանն ցուցանելով թէ քանի օգտամատոյց եղեն նոքա Հռոմէական եկեղեցւոյ , և մանաւանդ Կարոլոս , որ զի առանց օգնականութեան նորա անհնար էր , ասէ , զդէմ ունել արշաւանաց օսմանեան պետութեան ։

Յետ այսորիկ յաւել քահանայապետն ասել առ դեսպանս Գաղղիոյ . « Կարի յոյժ զարմացեալ եմ ընդ անակնկալ օրէնսն 'ի վերայ ժառանգաւորութեանց եկեղեցւոյ սահմանեալս 'ի թագաւորէն Գաղղիոյ , և տակաւին յոտին կան այսպիսի պախարակելի օրէնք որք վնասակարքն են և թշնամանողք պատւոյ և իշխանութեան քահանայապետացն Հռոմայ ,, ։ Նոյն յաւելեալ 'ի բանս իւր ասէ . « Յորչափ տէրութիւնն Գաղղիոյ վարակեալ իցէ այսպիսի անկարգ օրինօք , չհամաձայնիմ ես ասել զոր Պօղոս առաքեալ ասացեալ էր երբեմն զքրիստոնէից , Խօսեցայ զձեզ իբրև զհարսն յանդիման կացուցանել Յիսուսի Քրիստոսի՝ անբիծ և անարատ ,, ։

Պիոս Բ․, չև ամբարձեալ 'ի քահանայապետութիւն՝ հաւանեալ և հաստատեալ էր զսահմանադրութիւնն զայնոսիկ 'ի ժողովն Պազիլէայի , և էր մին 'ի պաշտպանաց օրինադրութեանցն այնոցիկ . բայց 'ի փոխել վիճակին փոխեցան և կարծիք մտաց նորա . վասն որոյ զամենայն հնարս արկ 'ի գործ խափանել զհռչակեալն զայն վճիռ գաղղիական եկեղեցւոյ ։ Յետ մահուանն Կարոլոսի Է․ իբրև յաջորդեաց զնա Լուդովիկոս ԺԱ․, քահանայապետն Պիոս առաքեաց առ նա իբր նուիրակ զեպիսկոպոսն քաղաքին Թէռնի , զայր զգաստ և հանճարեղ , որ իւրով ճարտարահնար պերճախօսութեամբն հաւանեցոյց զթագաւորն արքունի հրովարտակաւ խափանել զօրինադրութիւնն յամին 1461 ։ Թուղթ արձանագրութեան համբաւաւոր վճռոյն անարգանօք պատառեցաւ 'ի փողոցս Հռոմայ , և քահանայապետին զուարթացեալ յոյժ՝ 'ի նշան շնորհակալեաց առաքեաց առ թագաւորն սուր ականակապ և տաղս ինչ բանաստեղծական ։ Սակայն ոչ մինչ 'ի սպառ լռացան խղճք քահանայապետին . բանզի և յետ հրովարտակին Լուդովիկոսի արքայի տակաւին հանապազորդէր 'ի Գաղղիա պահպանութիւն սահմանեալ օրինացն ։

Քահանայապետն Պօղոս Բ․, որ յաջորդեաց զՊիոս

Ա., յամին 1464, կամելով 'ի սպառ անհետ առնել զայն օրէնս, հրեշտակ առաքեաց 'ի Գաղղիա վաղվաղել ըզխափանումն օրինացն, քանզի չէին ը̃ այն հաճ քահանայապետք Հռովմայ, մինչև յօժարել տալ կարդինալական պատիւ Յովհաննու ումեմն եպիսկոպոսի մաներմի Լուդովիկոսի արքայի, եթէ 'ի գլուխ տարցէ զկամս քահանայապետին: Արդ կամելով նորա հաճել զքահանայապետն՝ ընկալաւ հրովարտակ 'ի թագաւորէն, յորում յայտնապէս եղծանէ զայն ազգային օրէնսն: Բայց 'ի հաստատութիւն հրովարտակին հարկ էր ընդունել զհաւանութիւն և զստորագրութիւն ատեանցն. Իշխան ոմն Յովհաննէս անուն՝ այր ակնաւոր և համբաւեալ 'ի բարի վարս՝ ընդդէմ եկաց արձանագրութեան հրովարտակին, որ եղծանէր զկանոնս պիտանի և զօգտակար տէրութեանն Գաղղիոյ: Նոյնպէս և համալսարանն Փարիզու միաբանեցաւ ընդ ատեանւոյն, և 'ի ձեռն գլխաւորի իւրոյ գրեաց 'ի Հռովմ, ծանուցանելով զբողոք իւր առ ժողովն, եթէ երբէք գումարեսցին ընդդէմ հաւանեցելոյ ազգային այնր օրինաց, որ հաստատեալն էր յանուն գաղղիական եկեղեցւոյ:

Զկնի մահուանն Լուդովիկոսի ԺԱ. յամին 1483, գումարեցաւ ատեանն 'ի Տուրօն քաղաք, ուր եկեղեցականք խնդրեցին հաստատել վերստին զազգային սահմանադրութիւն. բայց արքեպիսկոպոսունք Լուգդոնի և Տուրօնի որք ունէին զպատիւ կարդինալութեան՝ հակառակ կացին այնմ. կուսակիցք նոցին եղեն և եպիսկոպոսունքն որք ոչ ըստ ազգային այնր օրինաց ընտրեալք էին 'ի թագաւորութեան Լուդովիկոսի ԺԱ.: Այսպիսի բանակռուութեամբ Թէպէտ 'ի գլուխ տարան զկամս քահանայապետին, սակայն վըշտացաւ յոյժ ընդ այն ազգն առ հասարակ. և յայսմ ազգային հանրական ժողովի խնամ կալաւ ցուցանել, եթէ քանզի չքաւոր յոյժ սահմանք քահանայապետացն էին, վասն այնորիկ պահանջէին զայն: Ազգային օրինագրութիւնքս մերթ հաստատելով և մերթ խափանելով պահեցան 'ի սպառ յամս թագաւորութեան Կարոլոսի Ը. և Լուդովիկոսի ԺԲ.: Իսկ զկնի խափանմանն նորա դրոշմեցաւ 'ի վեշտասաներորդի դարու:

ԳԼՈՒԽ ԺԵ.

Հակառակութիւնք ժողովրդապետաց և կրօնաւորաց Գաղղիոյ ։

Ընդ ժամանակս ընդ այնոսիկ ծագեցաւ 'ի Գաղղիա՝ և այլ մէջ բանակռուութեան, թէ արդեօք մուրացիկ կրօնաւորք կարիցե՞ն լսել զխոստովանութի՟ հաւատացելոց առանց հաւանութե՟ ժողովրդապետաց ։ Այս խնդիր նորոգեցաւ յամին 1456 'ի պատճառս կոնդակին՝ Նիկողայոսի Ե., որ նպաստամատոյց գտաւ կրօնաւորաց ։ Համալսարանն Փարիզու բողոք կալաւ ընդդէմ կոնդակին և արտաքսեաց յընկերութենէ իւրմէ զայնոսիկ որք ոչն կամեցան միաբանել 'ի կամս իւր ։ Կրօնաւորք դիմեցին գանգատանօք առ քահանայապետն Կալիստոս Գ., որ ըստ օրինակի նախորդաց իւրոց կուսակից եղև նոցին. բայց քանզի համալսարանն ոչ կամեցաւ լսել նոցա, և կրօնաւորաց չէին կամք մեկնել յընկերութենէ անտի համալսարանին, քահանայապետն հարկեցաւ ոչնչացուցանել զկոնդակն, որով բարձաւ խնդիրն ։ Սակայն յետ ամաց ինչ վերստին շարժեցաւ վէճն առ քահանայապետութեամբ Սիքստոսի Դ., որ միւսանգամ նորոգեաց զկոնդակն նպաստաւոր մուրացիկ կրօնաւորաց. և զի նոյն հակառակութիւնք որք երկփեղկեալ էին 'ի միմեանց զաշխարհիկ քահանայս և զկրօնաւորս՝ 'ի վեր երևեցան և 'ի Գերմանիա, քահանայապետն Սիքստոս խաղաղացոյց զժողովրդապետսն և զկրօնաւորս, չափաւորելով զարտօնութիւնս կրօնաւորաց, և մեկնաբանեալ զիրաւունս իշխանութեան ժողովրդապետաց ։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Քահանայապետք Հռովմայ յետ Նիկողայոսի Ե ։

Ի ԺԱՄԱՆԱԿՍ արևմտեան հերձուածոյ և հակառակութեանց քահանայապետք Հռովմայ միօրինակ գլուխ եկեղեցւոյ ծանուցեալ էին յամենեցունց և 'ի հանրական և 'ի մասնաւոր գործառնութիւնս ։ Յաղագս ործոյ Եւգինէոսի Դ., որ զամս վեշտասան կալաւ զքահանայապետութիւնն, կանխեցաք ասել 'ի պատմութիւնս ժողովոյն Պազիլէայի և Փլորենտիոյ, մնայ արդ յիշատակել և զյաջորդս նորա մինչև ցվերջ դարուս :

Նիկողայոս Ե., զառաջինն անուանեալ Թովմաս Պարէնտուչելլի 'ի Սարզանա քաղաքէ՝ յետ Եւգինէոսի կալաւ զաթոռն յամին 1447 : Բազմօք աշխատ եղեալ սորա 'ի խաղաղութիւն եկեղեցւոյ և Իտալիոյ՝ եհաս զլրումն փափաքանացն . այլ առաքինի էր սա և քաղցրր բարուք, և բազում մարդասիրութ՟բ վարեցաւ ընդ հակապապին Փելիքսի Ե., և այնպէս ստացաւ զբարեսէր ընտանութիւն ժողովրդեանն և զյարգ պատուոյ և մեծարանաց յամենայն իշխանաց : Նա զի սիրող էր բարգաւաճելոյ դպրութեանց, վասն որոյ իմաստունք ամենայն շնորհս գտին 'ի նմանէ : Վախճանեցաւ յամի տեառն 1455, կացեալ 'ի քահանայապետութե՟ն զամս ութ և զաւուրս քանի :

Զնա յաջորդեաց յիշխանութեանն Կալիստոս Գ., որ անուանեալն էր Ալփոնսոս Պորճիա յազնուական տոհմէ Սպանիոյ : Նա մինչդեռ 'ի պատուի կարդինալութեան էր՝ տեսեալ զյառաջադիմութիւն աշխարհաւէր արշաւանաց Օսմանեանց՝ եդ 'ի մտի պատերազմ յարուցանել ընդդէմ նոցա, եթէ երբէք ինքեան վիճակեսցի աթոռ քահանայապետութեան . բայց իբրև ամբարձաւ յայն պատիւ՝ ծանեաւ քաջ եթէ մեծամեծ խորհուրդք և ցանկութիւնք իշխանաց բազում այն է զի 'ի դերև ելանեն յանակնկալ դիպաց : Սակայն և այնպէս սփռեաց քարոզիչս ընդ ամենայն Եւրոպա վառել զեռանդն բարեպաշտութե՟ն իշխանաց և ժողովրդեան . բայց ամենեքին առ հասարակ ընդդէմ կային վասն բազմապատիկ խոչընդակաց . և այսպէս 'ի դերև ելին խորհուրդք մտաց քահանայապետին : Վախճանեցաւ յամի տեառն 1458, կացեալ 'ի քահանայապետութեան զամս երիս և զամիս չորս :

Պիոս Բ., անուանեալն Ենէաս Փիկքոլոմինի սէնացի՝ յաջորդն Կալիստոսի, ըստ օրինակի ն՟ր ցանկացաւ յարուցանել խաչակիր զինուորութ՟ի ընդդէմ այլազգեաց . վասն որոյ զամենայն քրիստոնեայ արքայազունս հրաւիրեաց 'ի Մանդուա քաղաք, ուր յորդորեալ զնոսին յայն դաշնակցութիւն, և պատրաստեալ նաւատորմիղ 'ի նոյն պէտս, ինքնին կամեցաւ լինել գլուխ այնր զինուորութեան. և յորժամ հանդերձեալ էր մտանել 'ի նաւ յԱնքոնայէ՝ հիւանդացեալ անդէն վախճանեցաւ յամին 1464, կացեալ 'ի քահանայապետութեան զամս հինգ և զամիս մետասան :

Պօղոս Բ., կոչեցեալն Պետրոս Պառպոյ վենետիկեցի՝ քեռորդի Եւգինէոսի Դ., կալաւ զաթոռ քահանայապետութեան զամս վեց և զամիս իբր մետասան. Պայծառացաւ սա յաւէտ արտաքին շքով քան հոգեկան բարեմասնութեամբք. զյիսնամեայ յոբելեանն սահմանեաց առնել 'ի քսանևհինգ ամ, և զեռապատիկ խոյրն պապական զխափանեալն 'ի բազում դարուց հետէ՝ վերստին հաստատեաց, ինքնին վարելով զայն 'ի գործ :

Սիքստոս Դ., անուանեալն Փրանկիսկոս Ռովէրեան, ծնեալ հուպ 'ի Սաւոնա. էր սա այր իմաստուն և գիտնական, որ վարէր կեանս իբր միայնակեցի, մինչև արքունեաց նորա բերել զնմանութ՟ի մենաստանի: Խորհէր գումարել ժողով 'ի Լատերան 'ի բարեկարգութիւն եկեղեցւոյ, բայց խոչընդոտք 'ի վեր երևեալ 'ի դերև հանին զխորհուրդս մտաց նորա : Վախճանեցաւ յամին 1484, կալեալ զաթոռ՟ քահանայապետութ՟ն զամս երեքտասան :

Իննովկենտիոս Ը., անուանեալն Յովհաննէս Մկրտիչ Չիպոյ գենուացի, այր ժրաջան և գործունեայ՝ որ իբրով խոհական ընթացիւքն զմեծամեծ արարս դժուարակնճիռ գործոց զարմանալի յաջողութեամբ 'ի գլուխ տարեալ՝ արժանի ցուցաւ աթոռոյ քահանայապետութեան : Եռանդն աստուածպաշտութեան նորա յորդոր մտաց նմա 'ի խաչակիր զինուորութիւն ընդդէմ այլազգեաց, վասն որոյ ժողովեաց դրամս. և սակայն զկէս դրամոցն վատնեաց 'ի ծախս մարտին որ ընդդէմ Թագաւորին Նէապօլոյ զոր ընդ բանիւ արարեալն էր, և զկէսն եթող ժառանգաց իւրոց. վախճանեցաւ յամին 1492, կացեալ 'ի քահանայապետութեան զամս եօթն և զամիս մետասան : Յաղագս յաջորդի սորա Աղեքսանդրի Զ. առասցուք 'ի վէպս անցից վեշտասաներորդի դարուն :

ԳԼՈՒԽ ԺԷ.

Նորանոր կարգք կրօնաւորաց և աշխարհիկ ասպետաց ։

ԶԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆ վարուց, զոր քահանայապետք Հռովմայ յետ Կոստանդեան ժողովոյն ցանկացեալ մածանել յաշխարհիկս և ոչ կարացին՝ կրօնաւորաց դասուն յաջողեաց յորդւնս ածել զայն փառօք։ Սուրբն Փրանկիսկոս պաւղայեցի՝ ծնեալ յամի տեառն 1418, 'ի քսանամեայ հասակի իւրում հիմնարկեալ հանդիսացոյց զկարգ Կրտսերագոյն եղբարց։ Սա թէպէտ անդստին 'ի մանուկ տիոց նուիրեալ էր Աստուծոյ ուխտիւք 'ի վանս Փրանկիսկեանց, սակայն յետ միոյ ամի ել անտի գնալ յուխտ, և ապա առանձնացաւ յանապատ կամ 'ի փապար ինչ առ ծովեզերբն. և անդ պայծառ առաքինութեամբքն ստացաւ իւր աշակերտս, և յամին 1467 կանգնեաց մենաստան հուպ 'ի Պաւլա քաղաք Կալաբրիոյ, տալով նոցա կանոնս միաբանական կենաց, յորս յաւել և զխստութիւն պահոց՝ ուխտիւք հրաժարել ոչ միայն 'ի մսեղէն կերակրոց, այլ և 'ի կթեղինաց, պատուիրելով շատանալ ձիթեղինօք և եթ և բանջարովք. և կանոնք նորա հաստատեցան 'ի Սիքստոսէ Դ., յԱղեքսանդրէ Զ., և 'ի Յուլիոսէ Բ.։ Աշակերտք սորայն զառաջինն անուանեցան Անապատաւորք, այլ յետոյ առ 'ի գերագոյն եւս խոնարհութիւն զանձինս կրթելոյ կոչեցան Կրտսերագոյն եղբարք անապատաւորք. քանզի և 'ի սկզբնաւորութենէ իւրեանց չէին յեկեղեցական կարգի, թէպէտ և յետոյ ընկալան զայն։ Սրբակրօն հիմնադիր նոցա բորբոքեալ սիրովն որ առ Աստուած և առ ընկերս՝ սահմանեաց 'ի սեպհական նշան կարգին իւրոյ զբառս ՔԱՐԻՏԱՍ, այս է Սէր։ Նա պայծառացեալ բազմապատիկ սքանչելեօք 'ի կենդանութեան և յետ մահու, փոխեցաւ առ Աստուած յամի տեառն 1507 'ի Գաղղիա, ուր 'ի բռնադատիչ հրամանաց քահանայապետին գնացեալ էր բժշկել զԼուդովիկոս ԺԱ. արքայ Գաղղիոյ։

Տիկինն Երանուհի կամ Պէաթրիչէ Սիլվեան լուսիտանացի՝ ականաւոր ոչ միայն լուսապայծառ առաքինութեամբ վարուցն , այլ և մեծապատիւ ազնուատոհմութեամբն , կանգնեաց 'ի Տոլեդոյ զկարգ միանձնուհեաց յանուն անարատ Յղութեան Կուսին , որք զառաջինն վարէին կանոնօք Կիստերսեանց , և յետ ժամանակաց յաւուրս Յուլիոսի Բ. ընկալան զկանոն Փրանկիսկեանց և զսրբուհւոյն Կլարայի :

Յայսմ դարու հաստատեցան և երրեակ կարգք զինուորական ասպետաց , որք կոչին Ասպետք սրբոյն Մաւրիկիոսի , Ոսկեգեղման և Սրբոյն Միքայէլի : Առաջինն հաստատեցաւ յԱմեդէոսէ Ը. 'ի դքսէն Սաւաւոյոյ . որ յետոյ յամին 1571 միացաւ ընդ կարգի ասպետաց սրբոյն Ղազարու , առանձին կոնդակաւ քահանայապետին , որ թոյլ տայ ասպետացս ամուսնանալ միանգամ ևեթ , և այն ընդ կուսից :

Ասպետութիւնն Ոսկեգեղման կարգեցաւ 'ի Փիլիպպոսէ դքսէն Պուրկոնի , որ յերկրորդ ամուսնութեան իւրում ընդ Իզապելլա դստեր Յովհաննու արքային Լուսիտանացւոց՝ կամեցաւ փառաւոր առնել զհանդէս հարսանեացն սահմանադրութեամբ այսր ասպետական կարգի , որ յետ ժամանակաց սեպհական եղև դքսից ևեթ աւագաց և թագաւորաց Սպանիոյ :

Ասպետութիւն սրբոյն Միքայէլի , զոր հաստատեաց յամին 1469 Լուդովիկոս ԺԱ. արքայ Գաղղիոյ , նախանձաւոր լեալ որպէս թուի քեռւոյ իւրոյ Հռենատոսի թագաւորին Սիկիլիոյ , որ հաստատեաց զասպետութիւնն անուանեալ Լուսնի : Օրէնք ասպետացս այսոցիկ էին երդնուլ 'ի պաշտպանութիւն պատուոյ և իրաւանց տէրութեան և իշխանութեան թագաւորին ընդդէմ ամենայն հակառակորդաց :

ԳԼՈՒԽ ԺԲ.

Կաթուղիկոսունք և վիճակ եկեղեցւոյն Հայոց :

Ի ԴԱԴԱՐԵԼ իշխանութեանն Հայոց և 'ի տիրել այլազգի իշխանաց՝ անշքացաւ և եկեղեցական բարեկարգութիւն ազգիս , մանաւանդ յաւուրս զօրանալոյ բռնաւորին Լանկթամուրայ , որ անողորմ հարուածովք և գերութեամբ ամայացոյց զաշխարհս Հայոց : Յայս պիսում դառնաղէտ ժամանակի բազումք 'ի կաթուղիկոսաց ազգիս ահաբեկք յարտաքին վտանգից և տագնապեալք յազգային խռովութենէ՝ սակաւօրեայ կենօք ելին յաշխարհէ ։

Յամի տեառն 1402 զկնի Դաւթի Գ.՝ նստաւ յաթոռ կաթուղիկոսութեան Կարապետ Ա. զամս եօթն. յաւուրս սորա տակաւին համապազորդէր խռովութիւն վարդապետաց Հայոց ընդ անուանեալ Ունիթոռս, վասն որոյ և ամբաստան եղեն զմիմեանց առ այլազգի իշխանս, և պատուհասակոծ եղեն խռովարարք ։

Յակոբ Գ. յամին 1409 նստաւ կաթուղիկոս 'ի ձեռն բռնութեան այլազգի իշխանին Կիլիկիոյ. այլ յետ երկուց ամաց միաբանք Սոյ դեղ մահու արբուցեալ նմա 'ի ծածուկ՝ բարձին զնա 'ի կենաց, վասն որոյ և չփոթ մեծ յուզեցաւ 'ի Սիս քաղաք ։

Գրիգոր Ը. յամին 1411 յաւուրս ազգային խռովութեան համոզկէր բանիւք յինքն որսացեալ զբազումս նստաւ կաթուղիկոս. այլ 'ի կամելն 'ի ձեռն այլազգեաց նուաճել զանհաւանսն, թշնամիք իւր զօրացան 'ի վերայ նորա, և ետուն արգելել զնա 'ի բերդ մի ամուր, ուր և վախճանեցաւ եղկելի մահուամբ, կացեալ 'ի հայրապետութեան զամս եօթն ։

Պօղոս Բ. յԱրարատեան գաւառէ՝ առաջնորդ Երուսաղեմի, որ եկեալ էր 'ի Սիս խաղաղել զմիաբանսն, կարգեցաւ կաթուղիկոս 'ի տեղի Գրիգորի. խնամ կալաւ սա բարեկարգութեան հօտին, բայց 'ի դառն հանգամանաց ժամանակին կարճեցան աւուրք կենաց նորա, յետ կալոյ 'ի հայրապետութեան զամս երկոտասան ։

Կոստանդին Ե. վահկեցի նստաւ կաթուղիկոս յամին 1430. յաւուրս սորա գումարեցաւ ժողովն Փլորենտիոյ, յոր հրաւիրեցաւ և ինքն յԵւգինէոսէ Դ. և զի չէր նմա հնար հեռանալ յաթոռոյն, փոխանակ իւր առաքեաց անդր չորս վարդապետս, որք 'ի դիմաց ազգին ընկալան զմիաբանութիւն ընդ Լատինս, որպէս կանխեցաք ասել 'ի վերոյ 'ի պատմութեան ժողովոյն ։ Վախճանեցաւ Կոստանդին կաթուղիկոս յամի տեառն 1439, կացեալ 'ի հայրապետութեան զամս ինն ։

Յովսէփ Գ. յերիցութեան նստաւ յաթոռ կաթուղիկոսութեան զամ մի. այլ զի խառնակեաց ոմն էր և անպիտան վարուք, վասն որոյ չհամարի հարազատ կաթուղիկոս, թէպէտ և դասի 'ի թիւս նոցա ։

Գրիգոր Թ. Մուսաբեկեանց՝ նստաւ կաթուղիկոս յամի տեառն 1440. և զի կարի անշքացեալ էր աթոռն Սսոյ և նուաղեալ յեպիսկոպոսաց, առ օրէն ձեռնադրեաց հինգ եպիսկոպոսունս առանց օրինաւոր ընտրութեան ։ Զայն լուեալ եպիսկոպոսաց և առաջնորդաց ազգին՝ ոչ հաճեցան ընդ գործն. վասն որոյ միաբան խորհրդով կամեցան սահմանել կանոնս բարեկարգութեան, և տեսեալ զանշքութիւն աթոռոյն՝ յօժարեցան փոխադրել զաթոռ կաթուղիկոսութեանն յԷջմիածին քաղաք, ուր տարեալ իսկ էին զաջ սրբոյ Լուսաւորչին ։ 'Ի մին իբր գումարեցան յԷջմիածին եպիսկոպոսունք, վարդապետք, երիցունք, վանահայրք և միայնակեացք թուով իբր եօթնհարիւր, և հրաւիրեցին պատուով 'ի նոյն ժողով և զԳրիգոր Մուսաբեկեանց. այլ 'ի չառնուլ նր յանձն թողուլ զՍիս և գնալ յԷջմիածին, ժողովականքն միաբան հաւանութ՟բ ընտրեցին զԿիրակոս վարդապետ 'ի Ռաջբերունոյ՝ զկոչեցեալն Վիրապեցի. զոր օծեալ եպիսկոպոս և կաթուղիկոս, հաստատեցին զաթոռ հայրապետութ՟ն յԷջմիածին յամին 1441 ։ Եւ այնուհետև յաջորդութիւն այնր աթոռոյ թէպէտ և օրինաւոր գլուխ համարեցաւ ամենայն ազգին, այլ և Սսեցիք ոչ կասեցան 'ի յաջորդութենէ իւրեանց մինչև ցայսօր ։

Կիրակոս Բ. Վիրապեցի՝ այր հեզ և խոնարհ և քաջավարժ յուսմունս աստուածային գրոց, խնամ կալաւ նորոգել և բարեկարգել զհայրապետանոցն. բայց յետ երկուց ամաց խռովարարք ոմանք անհաւան գտեալ ընտրութեան նորա, բռնութեամբ այլազգեաց ընկեցին զնա յաթոռոյ, և 'ի տեղի նորա եդին զԳրիգոր Մակուայեցի. վասն որոյ Կիրակոս առանձնացաւ 'ի վանս ուրեք և վախճանեցաւ անդ, կալեալ զաթոռն զամս երկուս ։

Գրիգոր Ժ. եպիսկոպոս Մակուայ՝ նստաւ կաթուղիկոս յամին 1443, և սկսաւ 'ի գլուխ տանել զնորոգութիւն շինուածոյն զսկզբնաւորեալն 'ի Կիրակոսէ. բայց յետ երկոտասան ամաց նեղեալ 'ի բռնութենէ այլազգեաց՝ ընտրեաց իւր ձեռնտու զԱրիստակէս վարդապետ, անուանեալ զնա Աթոռակալ. այլ զկնի ամաց ինչ 'ի կամել նորա յափշտակել զկաթողիկոսութիւնն 'ի Գրիգորէ, Զաքարիա կաթողիկոս Աղթամարայ փութացաւ գնալ յԵրեւան, եւ 'ի ձեռն այլազգեաց մերժեալ զԳրիգոր եւ զԱրիստակէս յիշխանութենէ կաթողիկոսութեանն՝ նստաւ ինքն յաթոռ իշխանութեան նորա. բայց զկնի միոյ ամի Գրիգոր եւ Արիստակէս միաբանեալ ընդ միմեանս՝ որսացան զայլազգի իշխանն, եւ վարեալ զԶաքարիա յիշխանութենէն՝ կալան դարձեալ զաթոռն ։

Արիստակէս Բ. նստաւ կաթողիկոս յամին 1462, առ իւր ունելով եւ զԳրիգոր մակուայեցի. եւ 'ի մեռանել նորա Արիստակէս կալաւ առանձին զաթոռ հայրապետութեանն զամս չորս ։

Սարգիս Բ., 'ի միաբանից անտի Էջմիածնի նստաւ կաթողիկոս յամին 1466. եւ զի առ յաւուրս Գրիգորի զաջ Լուսաւորչին տարեալ էր գաղտ 'ի Դաւրէժ եւ անտի յԱղթամար, ջան գործեաց դարձուցանել զայն անդրէն յԷջմիածին ։ Վախճանեցաւ յամին 1490, կացեալ 'ի հայրապետութեան զամս քսան եւ չորս ։

Արիստակէս Գ. նստաւ կաթողիկոս զկնի Սարգսի զամս ութ. ապա յամին 1496, Թադէոս Ա., որ էր աթոռակալ եւ գործակից Արիստակեայ, զամս հինգ ։ Ըզյաջորդս սորա կարգեսցուք 'ի վեշտասաներորդի դարու ։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Նահատակութիւնք վկայից Քրիստոսի 'ի բռնութենէ այլազգեաց ։

Ի ԲԱԶՄԱՊԱՏԻԿ աղետալի անցս հնգետասաներորդի դարուս ոչ սակաւ խնդութիւն եւ պարծանս յաճախեաց եկեղեցւոյ արիական նահատակութիւն սրբոց վկայից, որք կամակար ետուն զանձինս 'ի մահ վասն անուանն Քրիստոսի ։

Ստեփանոս եպիսկոպոս Սեբաստիոյ՝ այր բարեկրօն եւ մեծարգոյ յաչս աւագաց՝ սուտ ամբաստանութեամբ զրպարտեալ առաջի Պիւրհանէտտին իշխանին, ածաւ յանդիման նորա հանդերձ երկու աբեղայիւք. եւ 'ի չգտանել 'ի նոսա իշխանին յանցանս մեծապարտութեան, իբրև ստիպեաց ուրանալ զՔրիստոս՝ նոքա աներկիւղ դաւանեալ զՔրիստոս Աստուած և զամենասուրբ զԵրրորդութիւնն, կացին անդրդուելի 'ի հաւատս իւրեանց. և 'ի հրամայել իշխանին գլխատել զեպիսկոպոսն՝ բթացաւ սուր դահճին և ոչ կարաց հատանել զգլուխ նորա. ընդ որ սրտմտեալ բռնաւորին՝ ետ պատառել զբերան նորա, որ անդադար օրհնաբանէր զԱծ, և ապա անդամ անդամ յօշեցին զնա ։ Ընդ նմին ընկալան զբրաբիոն նահատակութեան և երկոքին աբեղայքն ընկերակիցք եպիսկոպոսին յամին 1387 ։ Սա այս իշխան մոլեգնեալ սրտմտութեամբ կալաւ ևս զերեսուն և վեց աբեղայս հանդերձ վանահարբն Միքայել վարդապետիւ, և յետ անտանելի տանջանօք ստիպելոյ զնոսա ուրանալ զՔրիստոս՝ ետ սպանանել զամենեսին ։

Այր ումն բաղիշեցի Աւագ անուն քաջակար արուեստիւ զամս բազումս աշխատէր ընդ ումեմն համարուեստ այլազգւոյ 'ի Սալմաստ քաղաքի. և յետ երեսուն ամաց 'ի դառնալ նորա 'ի Բաղէշ առ ընտանիս և ազգականս իւր՝ տեսեալ զնա այլազգեաց որք 'ի Սալմաստ համարէին զնա մահմետական՝ ամբաստան եղեն զնմանէ առ Ամիրշարափ, իբրու այն թէ Աւագն ուրացեալ իցէ 'ի դենէ իւրեանց և ընդ քրիստոնեայս բնակէ ։ Ի քննել զնա դատաւորին թէպէտ և ոչինչ յանցանս չարութեան եգիտ 'ի նմա, սակայն 'ի ստիպելոյ խաժամուժ ամբոխին յորդորեաց զԱւագ ուրանալ զՔրիստոս և զերծանել 'ի մահուանէ. այլ նորա արիական սրտիւ դաւանեալ զՔրիստոս Աստուած, կատարեցաւ սրով և քարկոծմամբ յամի տեառն 1390 ։

Ի գաւառին Մոկաց այլազգի ումն տեսեալ կին մի արամբի քրիստոնեայ Թամար անուն, որ և Գոհար կոչեցեալ վասն անհամեմատ գեղոյն, կամեցաւ յափշտակել զնա և սպանանել զայր նորա ։ Զայն իմացեալ Թամարայ փութացաւ ընդ առն իւրում և ընդ որդւոցն փախչել 'ի կղզին Աղթամար. և յետ քանի մի ամաց 'ի գնալն վասն իրիք գործոյ յՈստան քաղաք, տեսեալ զնա ծանօթ այլազգեաց՝ զրպարտութեամբ մատնեցին Ազզին ամիրային. և 'ի կամել նորա արձակել կին նորա Փաշա խաթուն ստիպեաց զԹամար ուրանալ զՔրիստոս, և 'ի չառնուլ նորա յանձն, յետ բազում խոստմանց և սպառնալեաց տեսեալ զհաստատութիւն մտաց նորա ընտրել զմահ քան զկեանս ուրացութեամբ, քարկոծեցին զերանելին յամի տեառն 1399, և զպատուական մարմին նորա առեալ քրիստոնէից թաղեցին պատուով ։

Առ նոյն ժամանակս 'ի Գանձակ Աղուանից նահատակեցաւ վկայական մահուամբ պատանի մի Խարով անուն, որ սակս գեղեցկատեսիլ դիմացն զոպարտեալ յայլազգեաց և բռնադատեալ յուրացութիւն հաւատոյ, յօժարակամ ընծայեաց զանձն Աստուծոյ, և կատարեցաւ քարկոծմամբ ։ Նոյնպէս և Մելքիսեթ և Կարապետ վանեցիք սուտ զրպարտութեամբ ամբաստանեալք իբր զխակողոպուտք այլազգւոյ ուրուք աղջկան, ստիպեցան յուրացութիւն. այլ արիական քաջութեամբ դաւանեալ զՔրիստոս, կատարեցան սրով, և մարմինք նոցա այրեցան 'ի հուր յամի տեառն 1403 ։

Ի նմին ամի կատարեցաւ 'ի տէր և Յովհաննէս քահանայ 'ի Զմշկածագ քաղաքէ. քանզի ընդ բարեպաշտութիւն նորա և ընդ նախանձ աստուածպաշտութեանն մախացեալ այլոց երիցանց, մատնեցին զնա այլազգի իշխանին. և զի Յովհաննէս կանգնեալ էր եկեղեցի փայտաշէն 'ի պէտս հաւատացելոց, սրտմտեալ իշխանին ստիպեաց զնա յուրացութիւն հաւատոյ, և 'ի չառնուլ նորա յանձն՝ ետ կործանել և այրել զեկեղեցին, և զՅովհաննէս ընկենուլ 'ի հուրն այն, յորում թէպէտ և աւանդեաց զհոգին, այլ մարմին նորա մնաց անկէզ և անապական, և ծագեաց լոյս յերկնից 'ի վերայ մարմնոյն. զոր տեսեալ ժողովրդեան՝ թաղեցին պատուով յեկեղեցւոջ Աստուածածնի ։

Յամին 1417 պարսիկ ոմն Յուսուփ անուն 'ի Դավրէժ քաղաքէ՝ թշնամի քրիստոնէից 'ի մանկութէ, տեսեալ յանուրջս զահաւոր ատեանն Քրիստոսի, և զի սպառնալիք տանջանաց 'ի վերայ նորա կային եթէ կացցէ 'ի նմին անհաւատութեան՝ զարհուրեցաւ յոյժ. և զարթուցեալ 'ի քնոյն գնաց առ Ստեփանոս վարդապետ Լաւուկ անուանեալ, և մկրտեալ 'ի նմանէ կոչեցաւ Սահակ ։ Զայն իմացեալ Պարսից կալան զնա, և յետ բազում դառն տանջանաց քարկոծեալ՝ այրեցին հրով զմարմին սրբոյն և ծագեաց լոյս սաստիկ 'ի նմին գիշերի ։

Եղեն և այլք յոլովք 'ի տեղիս տեղիս առ սահմանօք Պարսից, որք եդին զանձինս 'ի վերայ քրիստոսական հաւատոյ և կատարեցան վկայական մահուամբ ։

ԳԼՈՒԽ Ի·

Եկեղեցական մատենագիրք · որք համբաւեալք 'ի գիտութեան, և գիւտ տպագրութեան ։

ԵՐԿԱՐԺԱՄԱՆԱԿԵԱՑ բնակութիւն քահանայապետացն Հռովմայ յԱւինիոն քաղաք և հերձուած հակապապիցն թէպէտ և վնաս բազում հասուցին եկեղեցւոյ, սակայն փառս և պարծանս յաճախեցին հնգետասաներորդի դարու որք երևելիք գիտութեամբ և առաքինութեամբ որք պատճառք եղեն բարգաւաճելոյ եւրոպական ազանց ։

Յովհաննէս Գերսոն՝ ատենադպիր և պարծանք համալսարանին Փարիզու նախանձաւոր գտաւ բարեկարգութեան եկեղեցւոյ · վախճանեցաւ յամի տեառն 1429, թողեալ մեծարգի յիշատակ զօգտաշահ գիրս 'ի վերայ մասանց հաւատոյ, բարի վարուց և եկեղեցական բարեկարգութեանց ։

Պետրոս Այլեան՝ կարդինալ և եպիսկոպոս Կամպրէի, ծնեալ 'ի Կոմփէյն յանշուք և յաղքատ ազգատոհմէ · սա 'ի ձեռն անդուլ ջանից յուսմունս գիտութեան և գովելի վարուցն՝ եհաս յայն պատիւ, և գրեաց ճառս իմաստալիցս յաղագս բարեկարգութեան եկեղեցւոյ և իշխանութեան ընդհանրական ժողովոց · և վախճանեցաւ յամի տեառն 1425 ։

Նիկողայոս Կղեմէնկիսեան՝ մին 'ի համբաւեալ վարդապետաց Փարիզու՝ համազօր և հաւասար եկաց նախնի հարց եկեղեցւոյ ձրիւք պերճախօսութեան և վսեմութեան իմաստից ։ Նամականի նորա և ճառք յաղագս հերձուածոց յածին ցայսօր 'ի ձեռս իմաստնոց · կարծի վախճանեալ յամին 1440 ։

Կարդինալ Բեսարիոն մետրապոլիտ Նիկիոյ, որ 'ի ժողովն Փլորենտիոյ կարգեցաւ ատենախօս 'ի դիմաց եկեղեցւոյն Յունաց, բարենախանձ հոգւով միաբանական սիրոյ պանծալի փառօք տարաւ 'ի գլուխ զպարտս պաշտաման իւրոյ, յորոյ սակս արժանացաւ պատուոյ հռովմէական կարդինալութեան: Վախճանեցաւ յամին 1472 'ի հասակի եօթանասուն և եօթն ամաց: Տուն բնակութեան նորա առ կենդանութեամբն համարեալ էր ճեմարան իմաստասիրաց, ուր խմբէին իմաստունք ընդունել նպաստ 'ի բազմալեզու և 'ի հմուտ առնէն և յընտիր մատենիցն Յունաց զորս ժողովեալ էր առ իւր, և 'ի մահուն իւրում պարգևեաց զայնսիկ գրատան սրբոյն Մարկոսի որ 'ի Վենետիկ:

Ալփոնսոս Տոստատոս եպիսկոպոս սպանիացի, Պօղոս Բուրկոսեան, Դիոնեսիոս Ռիքէլ կարթուսեան՝ ծանուցեալն յաւէտ ընդ անուամբ Դիոնեսիոսի Վրաւերոյ, Լաւրենտիոս Վալլա և այլք՝ համբաւեալ գտան 'ի մեկնութիւնս սուրբ գրոց:

Թովմաս Գեմբացի կանոնիկոս կրօնաւոր 'ի կարգէ սրբոյն Օգոստինոսի՝ գրեաց զքաղցրելի գիրն մակագրեալ Յաղագս նմանող լինելոյ Քրիստոսի. որ և դասեալ է միշտ 'ի շարս ընտիր և հոգեշահ մատենագրաց, և թարգմանեալ 'ի բազում լեզուս:

Թէոդորիկոս Գիլէմեան եպիսկոպոս Քամբրէի՝ գրեաց զպատմութիւն արևմտեան հերձուածոց, յորում առանց կուսակցութեան պարզաբար յայտ առնէ զվէպս անցից այնր ժամանակի: Բլոնդոս և Պղատինա գրեաց զվարս քահանայապետացն Հռովմայ:

Առումն Կոստանդնուպոլսոյ և կործանել կայսերութեան Յունաց պատճառք եղեն անշքութեան արևելեան ազգաց. սակայն նոքօք բազմաց՝ գտան եւրոպեանք յընտիր և 'ի փայլաճիւս գիտութիւնս. զի յոլովք յիմաստնոց փախուցեալք 'ի Յունաստանէ անցին յԻտալիա, ուր և մեծին գրագիտութիւն յունական բարբառոյ 'ի ձեռն ընտիր նախնի մատենագրաց, որով համօրէն հեթանոսական և քրիստոնէական ճոխութիւնք Հելլենաց փոխադրեցան յԻտալիա: Առաւելագոյնք համարին նորանոր գանձուցս Թէոդորոս Գազացի, Գէորգիոս ապիտացի, Արգիրոպիլոս, Դեմետրիոս Կալքոնտիլաս, և այլք բազումք, որոց խնամարկութիւն գտեալ 'ի քահանայապետաց Հռովմայ՝ կային յԻ տալիա, և անտի լոյս գիտութեանց ծաւալեցաւ ընդ ամենայն Եւրոպա ։

Ի յառաջադիմութիւն ուսմանց և գիտութեանց մեծապէս նպաստամատոյց գտաւ և նորահնար գիւտ տպագրութեան, զոր յամին 1440 Յովհաննէս Կուտթեմպէրկ ազնուատոհմն մոգունտիացի ընծայեաց ՚ի լոյս․ և գիւտ նորա համարեցաւ դեղ դարմանոյ ՚ի փարատել զմէգ տգիտութեան ժողովրդոց և զհեղգամտութիւն առաջնորդաց ։

Կենցաղօգուտ և ճարտարարուեստ հնարիցս խնամածուք և յառաջացուցիչք եղեն բազմօք քահանայապետք Հռովմայ․ որք և ՚ի ձեռն գիւտի տպագրութեան ծաւալեցին ՚ի ժողովրդեան զօրինակս ընտիր մատենից առ ՚ի շահ օգտի հաւատացելոց․ սակայն չէք ՚ի կենցաղումս գիւտ պատուական զոր մարդկային չարութիւնն չառնուցու ՚ի կիր և ՚ի չարաչար պէտս․ քանզի սկսան ոմանք առ փոքր փոքր ծաւալել տպագրութեամբ և ախտալից մատեանս՝ որպէս և մոլորամիտ վարդապետութիւնս առ ՚ի վնաս հոգւոց․ մինչև նոցին իսկ քահանայապետաց վշտանալ և աւաղել, զի որ պատճառն էր օգտի հասարակաց՝ գործի եղև չարութեան և բազմապատիկ մոլորութեանց ։

* * *

ԳԻՐՔ ՎԵՇՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա.

Համառօտ տեսութիւն զհանգամանաց վեշտասաներորդի դարու ։

ՅԱՄԵՆԱՅՆ դարս եկեղեցւոյ վեշտասաներորդս այս դար յանդիման մեզ առնէ ընդ պանծալի գործոց և զաւաղելի անցս խռովութեան եկեղեցւոյ . քանզի յայսմ դարու այր ոմանք չարք և անօրէնք մոլորամիտ վարդապետութեամբք վեր՚ի վայր արարին զխաղաղութիւն հաւատացելոց ։ Մոլորութիւնք Լութերի քակեալ բաժանեցին զմի մասն հիւսիսական ազանց յուղղափառ վարդապետութենէ . իսկ Կալվին՚ի յոյժ խռովութեան էարկ զԳաղղիա , և զՀելուետիա , մինչև ողողել արեան ճապաղիս յաշխարհին յայնոսիկ ։ Օսմանեանք կալեալ բռնութեամբ զԵրուսաղէմ և զտնօրինական սուրբ տեղիս , գուն գործէին տարածել զբազուկս իշխանութեան իւրեանց յԻտալիա ։

Թէպէտ և ՚ի մասնաւոր վարդապետութեանց աստի վիշտք բազմապատիկք կալան զեկեղեցի , այլ նա ՚ի խնամոցն Աստուծոյ ընկալաւ զմխիթարութիւն հոգևոր ծաւալելոյ ճշմարիտ կրօնի ՚ի Հնդիկս և յԱմերիկա , որք մինչև ցայս դար կային ՚ի խաւարի կռապաշտութեան ։ Զյաջողութիւն բարեաց ընծայել պարտ է կրօնաւորական կարգաց , յորոց ոմանք հաստատեցան յայսմ դարու , և այլք ՚ի ձեռն վերանորոգութեան ստացան զնոր պայծառութիւն ։ Առաքելաջան առաջնորդք եկեղեցւոյ արիացեալք հոգւով նախանձու աստուածպաշտութեան , և ամրացեալք ՚ի հաստատուն կանոնս հանրական յետին ժողովոյն Տրիդենտոնի՝ խնամ կալան բանիւ և օրինակաւ ածել զհօտ իւրեանց յուղիղ դաւանութիւն ուղղափառ կրօնից և 'ի բարեկարգութիւն վարուց ։

ԳԼՈՒԽ Բ ·

Քահանայապետութիւն Աղեքսանդրի Զ., և պատուհաս Սավոնարոլայ կրօնաւորի ։

ՌՈԴԵՐԻԿՈՍ Պորճեան սպանիացի, քեռորդի Կալիստոսի Գ․ քահանայապետին Հռովմայ, ընկալաւ 'ի նմանէ զպատիւ կարդինալութեան յամին 1455 . և ապա յամին 1492 ընտրեալ քահանայապետ, կոչեցաւ Աղեքսանդր Զ . և զամս տասն կալաւ զքահանայապետութիւն, վախճանեալ յամին 1502 ։

Պատմիչք, ես և պարսաւագէտք վարուց քահանայապետիցն Հռովմայ, խոստովանին զի թէպէտ և չիցէ լեալ այլ ոք 'ի նոցունց՝ զորմէ այնքան պատմիցին չարիք, սակայն ոչ սակաւք 'ի չարախօսութեանց անտի աննմանք գտանին ճշմարտութեան ։ Բայց և ոչ մարթ է չեպերել զանկարգ վարս նորա, և զանարժան հնարս ընտրութեանն 'ի քահանայապետութիւն, և զանիրաւութիւնսն՝ զոր արար առ 'ի մեծացուցանելոյ զկլան ։

Կուիչչիարտինի դեղամահ առնէ զնա լեալ. բայց Պուրչիարտոյ արարողապետ նորին իսկ քահանայապետին պատմէ, զի ընդհատական ջերմամբ աւուրց եօթանասուն և հնգից վախճանեցաւ, ընկալեալ զսուրբ խորհուրդս ։ Ի նմանէ թագաւորք Սպանիացւոց ընկալան զպատիւ անուանակոչութեան “Ուղղադաւան Թագաւոր„ 'ի շնորհս Ֆերտինանդոսի և Իզապելլայ որք զՄաւրիս հալածեալ 'ի սահմանացն իւրեանց և զկրօնս քրիստոնէութեան մուծին յԱմերիկա ։

Քահանայապետութիւն Աղեքսանդրի համբաւեալ գտաւ և շնորհաբաշխութեամբ համաշխարհական յոբելինին 1500 ամին ։ Սակայն վրդովեցաւ հանդէսն յանդէպ քարոզութեց Հերոնիմոսի Սավոնարոլայ դոմինիկեան կրօնաւորի, որ 'ի քաղաքին Ֆլորենտիոյ յայտնի հրապարակախօս եղև ընդդէմ քահանայապետին . վասն որոյ 'ի ձեռն գործակալաց պապին՝ հրամանաւ նորա եղև քննութիւն և գաղտնիք մահու , որով Սավոնարոլա իբր հերետիկոս և վրդովիչ խաղաղութեան հասարակաց՝ պատժապարտ դատեցաւ կենդանւոյն այրել 'ի հուր ։ Նոյն գաղտնիք պատճառ եղև բազմադիմի հակառակութեանց . քանզի ոմանք գովեցին և այլք պարսաւեցին զպարսաւորն , մինչև ումեմն 'ի կրօնակցացն Սավոնարոլայ անուանել զնա աստուածախօս մարգարէ , և ընդ հակառակն՝ փրանկիսկեանի ումեմն կոչել զնա խաբեբայ , և յօժարել երկոցունց միանգամայն մտանել 'ի փորձ ստուգութեան բանից իւրեանց մտանելով 'ի խարոյկ բորբոքեալ . այլ ոչ եղաւ 'ի գործ , զի Սավոնարոլա խրատ ետ կրօնակցին իւրում մտանել 'ի հուր՝ առնելով 'ի ձեռին զսուրբ խորհուրդ հաղորդութեան , ընդ որ ոչ հաւանն գատաւ ժողովուրդն ։ Նա 'ի ժամէ անտի խրատտուութեան՝ Սավոնարոլա կորոյս 'ի սպառ զպատիւ իւր , և ապա արկաւ 'ի բանտ . յորմէ հանեալ յամին 1507 ընկեցան 'ի հուր բորբոքեալ , ուր տոչորեցան անմռունչ ամենեքին . որով չեղև մարթ ստուգիւ 'ի վերայ հասանել անմեղութեան նորա և կամ պարտաւոր գոլոյն ։

ԳԼՈՒԽ Գ.

Ընտրութիւն Պիոսի Գ., և քահանայապետութիւն Յուլիոսի Բ.։

ԲԱՐՁՐԱԳԱՏԻՒ իշխանութիւն առաքելական աթոռոյ դրգռէր զբազումս 'ի կարդինալաց ժամանել յայն պատիւ։ Յառաջադէմն 'ի հետամուտս այնր պատուոյ եկաց կարդինալն Ամբուազ առաջին պաշտօնատար Լուդովիկոսի ԺԲ., որոյ լուեալ զմահ Աղեքսանդրի Զ. փութացաւ ուղևորել 'ի Հռոմ, ակն ունելով ընտրիլ 'ի քահանայապետութի. զի 'ի ժողովին բազումք 'ի կարդինալաց կուսակիցք նորա էին, և Թագաւորք ինքնին առերեսս յօժարամիտք երևէին ընտրել զնա յաթոռ իշխանութեան քահանայապետին։ Կայսրն Գերմանիոյ յուսադիր եղև նմա ձեռնտու լինել 'ի լրումն փափաքմանցն. նոյնպէս և Ֆերդինանդոս արքայ Սպանիոյ պատրէր զնա մեծամեծ խոստմամբք. յորս վստահացեալ կարդինալին Ամբուազ՝ համարեցաւ արդէն ընկալեալ զեռապսակ խոյրն քահանայապետական. վասն որոյ դարձոյց յետս զբանակ գաղղիական զօրացն զոր կոչեալ էր 'ի Հռոմ 'ի թիկունս իւր։ Այս խորհուրդ յորդոր եղև նմա կարդինալին Յուլիանոս Հռովերեան, որոյ հաւաստի ցուցեալ զընտրութիւն նորա յայն աթոռ՝ հաւանեցոյց չտալ ժողովոյ կարդինալաց կասկած բռնութեան 'ի ձեռն զօրաց։ Բայց անդէն և անդ 'ի մուտս ժողովոյն նա ինքն Յուլիանոս քանզի 'ի խնդիր էր քահանայապետութեան՝ ետ խափանել զընտրութիւն կարդինալին Ամբուազի։

Կողմնակիցք առ հասարակ հաճեալ էին ընդ Յուլիանոս կարդինալ. և էր նա 'ի Հռովերեան զարմէ, եղբօրորդի Սիքստոսի Դ., ծնեալ 'ի Սաւոնա 'ի սահմանս Գենուայի. և սակս իւրոյ բազմահանճար գիտութեան ժամանեալ էր 'ի պատիւ կարդինալութեան, և առատաձեռնութեամբն յինքն որսացեալ զսիրտս ամենեցուն։ Եւ թէպէտ 'ի ժողովոյ կարդինալաց համարէր այր ամեհեր և արիասիրտ 'ի զինել ընդդէմ բռնութեան իշխանաց, սակայն իմացեալ նորա՝ թէ չէ հնար զամենեսին միանգամայն 'ի հաւանութիւն ածել յիւրն ընտրութիւն , ջան գործեաց կացուցանել զմի ումն 'ի ծերունի կարդինալաց , այն է զՖրանկիսկոս Փիկքոլոմինի սենացի , որ անուանեցաւ Պիոս Գ. սակայն առ ծերութե՟ն և ախտակիր մարմնոյն վախճանեցաւ զկեանսն յետ քսան և վեց աւուրց : Զկնի նորա միաբան խորհրդով հասարակաց ընտրեցաւ Յուլիանոս կարդինալն Հռովերեան որ անուանեցաւ Յուլիոս Բ. Անդէն և անդ փոյթ յանձին կալաւ նա մերկացուցանել զԿեսար Պորճեան ըզդուքսն Վաղենտեայ 'ի կալուածոց անտի իւրոց և յամենայն պատուոյ իշխանութե՟ : Նա քանզի ոչ ինչ ընդհատ 'ի Պորճեանն Կեսարէ՝ էր և 'ի նմա ոգի զինուորութե՟ և իշխանասիրութեան, ոչ հրաժարեցաւ յամենայն բանակութեանց նորա և յիշխանական պերճութեանց , և միաբանեաց ընդ Մաքսիմիլիանոսի կայսեր և ընդ արքային Գաղղիոյ և ընդ Սպանիացիս՝ հալածել զՎենետիկեցիս 'ի սահմանաց անտի զոր ունէին 'ի ցամաքակողմանն Իտալիոյ : Նա զի հասարակապետութիւնն Վենետկոյ ոչ կարաց զդէմ ունել զօրութեան դաշնակից պետութեանց , յաւարէ նոցա ճոխացան յաղթողքն, և Յուլիոս քահանայապետ վերստին կալաւ զՀռաւեննա , զՌիմինի և զՖաւենտիա համօրէն :

ԳԼՈՒԽ Գ.

Գժտել Յուլիոսի ընդ Լուդովիկոսի ԺԲ :

ՅԱՂԹՈՒԹԻՒՆՆ մեծ զոր կալան դաշնաւորք 'ի վերայ Վենետիկեցւոց՝ Լուդովիկոսի ԺԲ. քաջութեանն մանաւանդ էին արդիւնք , որ 'ի մարտին Կլիարադատայ խորտակեաց 'ի սպառ զզօրս Վենետիկեցւոց . բայց երկուցեալ յոյժ քահանայապետին 'ի յաջողելոյ զինուց նորա յԻտալիա , սկսաւ դաւաճանաբար դարան գործել նմա՝ յորդորելով զՀելուետացիս 'ի թշնամութիւն , որպէս և զՀենրիկոս թագաւոր Անգղիոյ զպատանին քաջ և յօժարամիտ 'ի մեծամեծ արարս պանծալիս : Ապա 'ի հզօր առնել զիւրակիցս իւր ջանահնար եղեւ քաղցրութեամբ որսալ զՎենետիկեցիս , և միաբանեալ ընդ նոսա կռեաց դաշինս ընդ որս չէին հաճ Գաղղիացիք : Լուդովիկոս արքայ չէր ևս անտեղեակ դաւաճա-

ծածուկ դաշինս, և բանադատեալ ապա հրատարակել պատերազմ ընդդէմ քահանայապետին՝ չկամեցաւ յանխորհուրդս ձեռնամուխ լինել յայն. վասն որոյ յամի տն **1510** *'ի վերջին աւուրս ամսեանն սեպտեմբերի կոչեաց 'ի ժողով զկղերն Գաղղիոյ 'ի Տուրոն քաղաք խորհուրդ 'ի մէջ առնուլ եթէ որպէս պարտ իցէ զէն առնուլ ընդդէմ Յուլիոսի, պահելով միշտ զպարտուպատշաճ մեծարանս որոյ աթոռոյն, և պաշտպանելով զիրաւունս նորա ։ Նա յետ բազմապատիկ խորհրդոց պատշաճ դատեցան գումարել այլ ժողով հանրական 'ի Փիզա քաղաք Իտալիոյ, ուր մարթ իցէ միաբան խորհրդով զարմանս մատուցանել անառակ ընթացից քահանայապետին. և զի ոմանք 'ի կարդինալաց կուսակիցք էին Լուդովիկոսի, սահմանեցին զսկզբնաւորութիւն ժողովոյն յառաջին աւուր ամսեանն սեպտեմբերի յամին* **1511** ։

ԳԼՈՒԽ Է.

Ժողով Փիզայի և Լատերանու ։

ԺՈՂՈՎՆ *Փիզայի սկսաւ յամին* **1511** *յառաջին աւուրս ամսեանն նոյեմբերի, ուր և գտան կարդինալք չորք, բազում եպիսկոպոսունք, աբբայք և վարդապետք ։ Ի նախկին գումարման անդ արկան առաջի պատճառք համախմբութեան ժողովոյն, այս է նախ 'ի նորոգութիւն բարեկարգութեանց եկեղեցւոյ 'ի գլուխն իւր և յանդամս. երկրորդ զի երդմամբ խոստացաւ Յուլիոս քահանայապետ յընտրութեան անդ իւրում գումարել ժողով ընդհանրական ։ Յերկրորդում գումարման եղան և կանոնք որոց պէտք էին յօրինաւոր բարեկարգութիւն ժողովոյն ։ Իսկ յերրորդումն համախմբութեան հարկ եղև առ ահի զօրաց Յուլիոսի քահանայապետի թողուլ զՓիզա, և պատսպարել 'ի Մեդիոլան քաղաք ։ Բայց Յուլիոս քահանայապետ աներկիւղն 'ի պատերազմաց ոչ շատ համարեալ վարել զհոգևոր զէնսն բանադրանաց ընդդէմ Լուդովիկոսի արքայի, անդէն և անդ դաշնադիր ընդ Թագաւորն Լեւոն միաբանեաց զնոսա ընդդէմ Գաղղիոյ, և դաշն կռեաց* ընդ Փերտինանդոսի արքային Կաստիլիոյ և ընդ հասարակապետութեան Վենետկոյ : Դաշնադրութիւն այս Սրբազան յորջորջեցաւ, զի նպաստակ կամ պատրուակ իւր ունէր ազատել զքաղաքս որոց աթոռոյն զյափշտակեալն յայլոց, և ցրուել զժողովն Փիզայի՝ զոր հերձուածողական կոչէին :

Քահանայապետն Յուլիոս ոչինչ հայեցեալ 'ի ծերացեալ հասակն իւր և ոչ 'ի տկարացեալ ախտակիր մարմինն՝ անց 'ի գլուխ բանակի զօրաց, և յարձակեցաւ 'ի սահմանս Փլորենտիոյ ընդ որոյ իշխանութ՟բ էր քաղաքն Փիզա : Վասն որոյ հարք ժողովոյն ստիպեցան խոյս տալ 'ի Մեդիոլան, ուր փոխադրեալ էին զհամախմբութիւն իւրեանց . և զի Հելուետիացիք ընդ այն ժամանակս արշաւեցին 'ի սահմանս դքսութեանն՝ նմին իբր չորրորդ գումարումն ժողովոյն եղև 'ի չորրորդ աւուր յունուարի յամին 1512 :

Զկնի չորրորդ գումարման եղեն և այլ չորք համախմբութիւնք, յորս հարք ժողովոյն յետ առաջի անելոյ Յուլիոսի որոշել քաղաք ինչ ուր մարթ իցէ անքոյթ 'ի կատար ածել զժողովն, և ստիպելոյ առաջիկայ լինել անդ և արդարացուցանել զանձն յամբաստանեալ ստգտանացն, հրատարակեցին զնա ընկեցեալ 'ի քահանայապետութենէ, և զգուշացուցին զամենեսեան մի ևս գլուխ եկեղեցւոյ դաւանել զնա :

Յուլիոս քահանայապետ առ 'ի դէմ դարմանոյ յետին հարուածոյս եդ 'ի մտի խմբել այլ ժողով ընդդէմ ժողովականին, և վաղվաղակի գումարեաց 'ի Հռոմ ընդհանուր սինոդոս 'ի մայր եկեղեցւոջ Լատերանու, և առաջին համախմբութ՟ի ժողովոյն եղև յերրորդ աւուր ամսեանն մայիսի յամին 1512 : Ընդ ինքն քահանայապետն նախագահ բազմեցաւ, և ունէր ընդ իւր հնգետասան կարդինալս, եօթանասուն և ինն արքեպիսկոպոսունս և եպիսկոպոսունս, և վեց աբբայս կամ առաջնորդս վանաց . իսկ թիւ վարդապետաց էր հարիւր և քսան, յորոց բազումք իտալացիք էին : Յերրորդում գումարման ընթերցաւ կոնդակ դատապարտութե ժողովականին Փիզայի և որոց կամակիցքն էին 'ի նոյն, և հաստատեցան բանադրանքն ուղղեալք 'ի քահանայապետէն առ չորեսին կարդինալս և եպիսկոպոսունս այնր ժողովակի :

Ի նմին ժամանակի Յուլիոս քահանայապետ եհան և գիր յայտարար կախման և նզովից առ համօրէն տէրութիւնն Գաղղիոյ, կոչելով զԹագաւորն, զեպիսկոպոսունս, զգղերն և զիշխանս տեսչութեանն գալ յանդիման լինել սրբոյ աթոռոյն 'ի ժամադրեալ միջոց վաթսուն աւուրց և ցուցանել զպատճառն որոց վասն չկամէին խափանել զկանխաղիր ազգային օրէնսն սակս ժառանգաւորութեանց, զոր քահանայապետն վնասակար համարէր իրաւանց իշխանութեան սրբոյ աթոռոյն ։

ԳԼՈՒԽ Զ։

Մահ Յուլիոսի Բ և ընտրութիւն Լևոնի Ժ ։

ՅՈՒԼԻՈՍ քահանայապետ 'ի տագնապս անդ բազմահոյլ խռովութեանց հարեալ ջերմախտիւ, ծանեաւ զմօտել մահուն. վասն որոյ անդորր սրտիւ և անշփոթ մտօք ընկալեալ զխորհուրդս եկեղեցւոյ, պատուիրեաց թաղել զմարմին իւր առանց մեծաշուք հանդիսի յուղարկաւորութե՟ ։ Ապա յաւել յուշ առնել նոցա և յաղագս ընտրութե՟ յաջորդին, 'ի բաց հանեալ 'ի թուոյ ընտրելեացն զչորեսին կարդինալսն որք գործակից գտան ժողովոյն Փիզայի, "Որոց ներեմ, ասէ, մտադիւր իբրև Յուլիանոս Ռովէրեան. սակայն որպէս Յուլիոս գլուխ եկեղեցւոյ՝ պարտիմ նախանձախնդիր լինել իրաւանց նորա, և մերժել զնոսա յաթոռոյ քահանայապետութեան"։ Յետ այնորիկ յիշելով և զբազմադիմի անցս որք անցին յաւուրս քահանայապետութեան իւրոյ, հառաչէր հեծեծանօք և աւաղէր զիւրոյն շահատակութեանց. և 'ի յետին պահուն ասէ. "Եղէ՛ թէ չէր իմ բնաւ կացեալ քահանայապետ, զորոյ զպարտսն ճանաչեմ արդ և ոչ կարեմ հանել 'ի գլուխ"։ Վախճանեցաւ յամի տեառն 1513 'ի հասակի եօթանասուն և երկուց ամաց, կացեալ 'ի քահանայապետութեան զամս ինն և զաւուրս քսան ։

Նշանոյն արիական քաջութեան վառեալ 'ի սիրտս նորա՝ յորդոր եղև նմա և 'ի գործս որ անպատեհք էին իւրումն վիճակի. քանզի յախուռն ընթանայր յարշաւանս մարտի, և յառաջադէմ հանդիսացաւ 'ի գլուխ զօրաց, 'ի մարտկոցս, 'ի պաշարմունս քաղաքաց. և քաջալերէր զզօրսն աներկիւղ դնել զանձինս 'ի վըտանգ մահու: Ոչ շատ համարեցաւ վարել ընդդէմ Գաղղիոյ զաշխարհական զէնսն, այլ և հոգևոր զինու ընդ բանիւ արար զԹագաւորն՝ զսիրելին ժողովրդեան, և արձակեաց նզովս առ համօրէն պետութիւն. խափանեաց զարձեալ և զիրաւունս տօնավաճառաց Լուգդոնի, զի տուեալ էր նա օթևան պատսպարութեան կարդինալաց ժողովականին Փիզայի: Յանսովոր գործոց անտի քահանայապետին թէպէտ և վտանգ մեծ 'ի վերայ կայր ծագելոյ անհնարին չարեաց, սակայն ընտրութիւն յաջորդի նորա Լևոնի Ժ. հանդարտեցոյց զշփոթմն:

Լևոն Ժ. փլորենտացի՝ զառաջինն Յովհաննէս անուանեալ 'ի Մէտիչեան զարմէ, ընտրեցաւ քահանայապետ յամին 1514 'ի մետասաներորդի աւուր ամսեանն մարտի: Էր սա այր ազնուատոհմ, առոյգանձն և ամաց իբր երեսուն և վեցից, հանճարեղ, լայնածաւալ մտօք և սքանչելի գիտօք, ճոխ և առատաձեռն, որ անմահացոյց զյիշատակ իւր՝ բարգաւաճեցուցանելով զգիտութիւնս և զգեղարուեստս: Իսկ զի խաղաղասէր էր բարուք՝ զուն գործեաց 'ի ձեռն եղբօր իւրոյ հաշտել ընդ արքային Գաղղիոյ Լուդովիկոսի ԺԲ., քանզի և խիթայր յոյժ 'ի հզօր զինուց սուլդանն Սելիմի, որոյ կալեալ զԵգիպտոս՝ սպառնայր դիմել և յԻտալիա, վասն որոյ և խորհէր քահանայապետն ձեռնտուութեամբ արքային Գաղղիոյ յետս նահանջել զնա յարշաւանացն: Իսկ Լուդովիկոս արքայ ստիպեալ յանյաջող դիպաց ինչ յօժարեցաւ խոնարհել 'ի հաշտութիւն ընդ սրբոյ աթոռոյն, և հրաժարեալ կամակար յօրինադրութեանց ժողովականին Փիզայի՝ ընկալաւ զսահմանս Լատերանեան օրինաւոր ժողովոյն, որ և աւարտեցաւ յամին 1518: Յայսմ ժողովի յիններորդ համախմբութեան նորա առանձին կոնդակաւ արձակեցան ամենայն նզովք և բանադրանք ընդդէմ Գաղղիոյ. նոյնպէս և եպիսկոպոսունք Գաղղիացիք ընկալան զարձակումն 'ի բանադրանաց՝ յոր անկեալ էին կուսակից գոլով ժողովականին Փիզայի, և բարձաւ գժտութիւնն որ 'ի բազում ամաց հետէ տագնապէր զԵւրոպա:

ԳԼՈՒԽ Է.

Տեսութիւն Լեւոնի Ժ ընդ Փրանկիսկոսի Ա. արքային Գաղղիոյ, եւ միաբանական դաշնադրութիւն նոցա։

ՈՉԻՆՉ երկարակեաց լեալ Լուդովիկոսի յետ հաշտելոյ իւրոյ ընդ սրբոյ աթոռոյն, կալաւ զթագաւորութիւնն Փրանկիսկոս Ա. արքայազն ծաղկահասակ եւ արիասիրտ՝ յօժարեալ ’ի մարտս պատերազմի։ Սա յառաջնում ամի թագաւորութեան իւրոյ մեծազօր բանակաւ ուղեւորեցաւ յԻտալիա. եւ թէպէտ ոչ հաճեցաւ ընդ այն Լեւոն քահանայապետ, սակայն խնամ կալաւ տեսանել զնա. որ եւ յաջողեցաւ իսկ ’ի քաղաքն Պոլոնիա յամին 1515 յամսեանն դեկտեմբերի։ Յայնմ քաղաքի թագաւորն Փրանկիսկոս ’ի յորդորելոյ ատենադպրին իւրոյ Տիւփրէի՝ եբարձ զհամբաւաւոր ազգային օրէնսն որ վասն ժառանգաւորութեանց, եւ արար ընդ քահանայապետին զմիաբանական դաշնադրութիւն զարձանագրեալն ’ի գործս Լատերանեան ժողովոյն իբրու կանոն, որով Գաղղիացիք հանդերձեալ էին առ յապա վարիլ յեկեղեցական իրս եւ յիրաւունս ժառանգաւորութեանց։

Այսու դաշնադրութեամբ սահմանեցաւ զի յետ ընտրելոյ արքային Գաղղիոյ զարժանաւորս յեպիսկոպոսութիւն եւ ’ի պատիւ աբբայական վիճակի, առաջի արասցէ զնա եւ սրբոյ աթոռոյն. նոյնպէս եւ քահանայապետն յանձն էառ հրաժարել յիրաւանց ինչ սեպհականելոց աթոռոյն Հռովմայ, զորս երբեմն ունէր քահանայապետաց որոշել ըստ իւրեանց հաճոյից։ Նոյն դաշամբ բարձան եւ ակնկալութիւնք որոց բայց ’ի նախկին տարեկանացն, այսինքն յեկամտից առաջին տարւոյ ժառանգաւորաց՝ զորս պարտ էր հատուցանել սրբոյ աթոռոյն։ Իսկ զի անթիւ հակառակութիւնք յարեան ընդդէմ տարեկանացս այսոցիկ, հարկ եղեւ ’ի խնդրոյ արքային չարձանագրել զայն ’ի գիրս դաշանց, այլ նշանակել առանձին կոնդակաւ։ Այսոցիկ դաշնադրութեանց կարի շատ հակառակեցան գղերն Գաղղիոյ եւ ժողով իշխանաց, որպէս եւ համալսարանն Փարիզու.

և ուր ուրեմն յետ բազում հրամանագրոց արքային հագիւ յիշատակագրեցաւ այն յաղթանակման դիւանի յամի տեառն 1518 ։

Ի վերայ այսր անցից կարի իմաստութեամբ յուշ առնէ երևելին Պոսիւէ թէ Թագաւորք Գաղղիոյ այսու դաշամբ անկան ընդ ծանր պարտեօք ընտրելոյ զարժանաւորսն եւեթ յաստիճան եպիսկոպոսութեան, զորմէ կախեալ կայ հոգևոր օգուտ և փառս համօրէն ժողովրդեան ։

ԳԼՈՒԽ Բ.

Ընդհարաչխութիւնք ներողութեանց 'ի Գերմանիա, և ծագումն մոլորութեան Լուտերի ։

Ի ԴԱԴԱՐԵԼ մասնաւոր խնդրոց հակառակութեան ընդ Գաղղիոյ, յարեաւ այլ խռովութիւն 'ի կողմանս Գերմանիոյ, որ հերձեալ բաժանեաց զհիւսիսաբնակ ազգս 'ի միութենէ եկեղեցւոյ ։

Յանկացեալ Լևոնի քահանայապետի օգտի և պայծառութեան սրբոյ եկեղեցւոյ՝ խորհեցաւ միաբանել զքրիստոնեայ թագաւորութիւնս, և պատերազմաւ ընդ ծով և ընդ ցամաք՝ խափանել զյառաջադէմ արշաւանս զօրացն Օսմանեանց ։ Իղձ լինէր դարձեալ կառուցանել և մեծապայծառ եկեղեցի յանուն սրբոյն Պետրոսի, և կամէր զի պերճ՝ գեղեցկութեամբն անզուգական ընդ ամենայն տիեզերս կացցէ այն տաճար ։ Եւ քանզի առ 'ի գլուխ հանել զխորհուրդս մտացն պէտք էին բազում դրամոց, պատշաճ վարկաւ քարոզութի՟ 'ի համօրէն արեւմտեան գաւառս Եւրոպիոյ բաշխել ներողութի՟ս, և խնդրել 'ի հաւատացելոց նպաստ ինչ 'ի ծախս ձեռնարկութեան առաջադրեալ խորհրդոյն ։ Ի կողմանս Գերմանիոյ առաքեցան Դոմինիկեանք ժողովել զտուրս բարեպաշտից. և զի 'ի վաղ ժամանակաց հետէ քարոզութիւնք այնց կողմանց շնորհեալ էին օգոստինեան կրօնաւորաց, զայրացեալ սոցա զարկեցան ընդդէմ Դոմինիկեանց. և գաւառապետ Օգոստինեանց Յովհաննէս Սթաուպից պատուիրեաց ոմանց 'ի կրօնաւորաց անտի իւրոց խայտառակել նշաւակել զանկարգութիւնս սպրդեալս 'ի Դոմինիկեանս ։

Մարտինոս Լուտեր կրօնաւոր օգոստինեան ժամ դիպաւոր համարեցաւ սերմանել զթիւր վարդապետութիւնս իւր, զորս 'ի բազում ժամանակաց յղացեալն էր 'ի սրտի։ Եւ սա ծննդեամբ յԱյզլեպէն քաղաքէ Սաքսոնիոյ, որդի ուրումն երկաթագործ դարբնի, և անդստին 'ի մանուկ տիոյ ճոխացեալ խորագէտ ճարտարութեամբ․ և յետ բազմավարժ հրահանգութեանց յառաջին ուսմունս, ահաբեկեալ 'ի մահուանէ աշակերտակցին իւրոյ կայծակնահար վախճանելոյ առընթեր իւր՝ ցանկացաւ մտանել 'ի կարգ կրօնաւորութեան Օգոստինեանց։ Արագամիտ էր նա և անյողդողդ 'ի խորհուրդս մտացն, և զկնի աւարտելոյ զուսումն իւր և բազմաջան հանդիսանալոյ 'ի քննութեան ընտրեցաւ ուսուցիչ աստուածաբանութեան 'ի համալսարանին Վիրթեմպէրկ քաղաքի, յորում կամեցաւ նորօրինակ կարգօք հաստատել զուսումն, անգոսնելով զընթացս դպրոցական աստուածաբանութեան․ սիրէր յոյժ դեգերել յընթերցուած գրուածոց Նախնի հարց, և ինքն յօժարամիտ էր յանսովոր և յառանձնական կարծիս։

Արդ ընկալեալ սորա պատուէր հրամանի 'ի մեծաւորաց անտի իւրոց քարոզել ընդդէմ անկարգութեանցն ծագելոց 'ի յաճախս շնորհաբաշխութենէ ներողութեանց, յանդգնեցաւ անգոսնել և զներողութիւնսն անգամ, որպէս և զիշխանութիւնն յորմէ բաշխին այս շնորհք։ Սակայն յերիս յառաջին ամս անընդհատ բանակռուութիւնս յուզեալ՝ ապա յերևան ած զկարծիս իւր իբր երկմտութիւնս, և յետ դոյզն ժամանակաց սկսաւ ջատագովել զայնոսիկ իբրու աներկմտելի ճշմարտութիւնս։

Լեոն քահանայապետ զանգիտեալ 'ի յանդուգն համարձակութենէ Լուտերի գրեաց առ Մաքսիմիլիանոս կայսր և առ Ֆրեդերիկոս դուքս Սաքսոնիոյ, ընդ որոյ իշխանութեամբ էր անօրէնն, կարկել զլեզու նորա․ բայց դուքսն ոչ միայն չարգել զնա 'ի խօսելոյ, այլ և յորդոր մատոյց նմա զէն ամբառնալ ընդդէմ եկեղեցւոյ։

Ի խորամանկ գրուածոց անտի նորա նենգեալ պատրեցան և ուսումնականք ժամանակին, որոց թերավարժ կամ անմարթ գոլով 'ի սպառ յաստուածաբանական հրահանգս՝ թակարդեալ որսացան յիմաստակական բանից Լուտերի. քանզի և զոյգն Ճարտարու՟ի բանից կամ տարփուած ինչ որով ծաղրէին զուղղափառսն ցուցանէր, կամ մեկնաբանիցն սուրբ գրոց վրիպակ ինչ մեկնութիւն նշաւակեալ առ 'ի նմանէ, և կամ զեղծումն իմն բարեկարգութեան տապանեալ և ուղղեալ, ազդեցութիւն մեծ գործէր 'ի նոսա։ Վասն որոյ և նորոգութիւնքն Լուտերի համարեցան իբրու պարծանք փառաւորութեան քրիստոնէական կրօնի, մանաւանդ 'ի գլխոց անտի նորատիրաց, որ արհամարհէին զԱծ՟ և զբանս գալլիցական աստուածաբանից։

ԳԼՈՒԽ Թ.

Առաջին դատապարտութիւն և նզովք Լուտերի.

ՏԵՍԵԱԼ քահանայապետին եթէ բազմանան համախոհք վարդապետութեանն Լուտերի, հարկ համարեցաւ յահ և յերկիւղ աշակերտաց նորա՝ նզովս արձակել ընդդէմ հերեսիովտապետին։ Վասն որոյ յամին 1520 յամսեանն յունիսի գրեաց կոնդակ, յորում հերքելով և դատապարտելով զվարդապետութիւնն Լուտերի իբրու հակառակս ողջամիտ վարդապետութեանն եկեղեցւոյ, պատուիրէր այրել զգիրս նորա, միանգամայն և զնա ինքն զԼուտեր համարէր նզովեալ՝ եթէ 'ի միջոցս վաթսուն աւուրց ոչ ապաշխարեսցէ և յետս դարձցի 'ի մոլորութենէ իւրմէ։

Լուտեր 'ի ծագմանէ անտի աղանդոյն կեղծէր զխոնարհութիւն, զերկիւղ և զհպատակութիւն, որպէս և ինքն իսկ վկայէ զանձնէ. "Երկչոտ գոլով, ասէ, 'ի բնութէ և առանձնացեալ, բռնի վարեցայ յատեան և յոչ կամաւ քան եթէ կամակար մտանեցայ 'ի յոյզս շփոթիցս այսոցիկ.."։ Եւ զի ակնածութ՟ մեծաւ սպասեալ մնայր դատաստանի եկեղեցւոյ, ծանուցանելով յայտնապէս թէ և ինքն արժանաւոր համարի զանձն դատապարտութե՟ եթէ ոչ հաւանեսցի որոշման եկեղեցւոյ, գրեաց և առ նա ինքն քահանայապետն յամին 1518 ըստ այսմ օրինակի. "Տէր իմ, ասէ, կեանս կամ մահ.

արդարացուցէք կամ դատապարտ արարէք, հաստատեցէք կամ հերքեցէք որպէս զկարգ հաճոյ թուեցի ձեզ. մնացլիք անսացից ձեզ իբրու ձայնին Քրիստոսի»։

Բայց յետ երկուց ամաց 'ի հրատարակել վճռոյ Լեոնի քահանայապետի, մոռացեալ Լուտերի զառաջին խոստմունս հնազանդութեան, որպէս թէ էին սնոտի զրոյցք քաղաքավարութեան և առ երեսս ակնածութիւն, փոխեցաւ դառնութեամբ 'ի մոլեգին կատաղութիւն, և սկսաւ սփռել գրուածս անթիւս ընդդէմ կենդանի քահանայապետին Հռովմայ։ Եւ նախ առաջին բանս երգիծականս հրատարակեալ 'ի վերայ կոնդակին, ապա յանդգնեցաւ գրել ճառ այսու մակագրութեամբ. «Ընդդէմ զազիր կոնդակին դերքաքրիստոսի»։ և զվախճան ճառին կնքէր բանիւս. «Նոյին օրինակաւ՝ որով ես նզովս 'ի նոցանէ ընկալայ, նոյնպէս և ես ինքն նզովեմ զնոսա»։ Ցնորք բանդագուշանաց։

Իսկ առ կանխագիր կոչումն քահանայապետին յանդիման լինել ատենին Հռովմայ, պատասխանի առնէ յանդուգն բանիւք. «Պարտիմ, ասէ, զի ուղեկից ընդ իս լինիցին և հինգ հազար հեծեալ. քանզի յայժմ հաւատասցեն ինձ ամենեքին»։ Յընթացս վարուց Լուտերի և 'ի գրուածս որպէս և յատենախօսութիւնս յայս յանդիման երևի անհաստատութիւն նորա և արհամարհութիւն և կատաղի մոլեգնութիւն, որովք յանդգնեալ ես այրել ընդ կոնդակին Լեոնի քահանայապետի և զամենայն մասունս կանոնական իրաւանց յանդիման համալսարանին Վիրթէմպէրկ քաղաքի։ Յանդգնեցաւ պարծել 'ի բանս իւր, թէ գրովք և եթ և բանիւք բերանոյ այնչափ վնասաբեր եղև եկեղեցւոյ և քահանայապետին, զի և ոչ որ 'ի հզօրագունիցն անգամ թագաւորաց մարթացաւ առնել բազմամբոխ բանակաւ։

ԳԼՈՒԽ Ժ.

Համախումբ ժողով կայսերական 'ի Վորմս քաղաքի ։

Ի ՊԱՏՈՒՀԱՍ ժպիրհ և յանդուգն գործոց Լուտերի քահանայապետն Լևոն Ժ. յամին 1520 յետ վարելոյ 'ի գործ զհատուսումներն հոգևոր, որով յայտնի և հրապարակաւ նզովս կարդայր ընդդէմ Լուտերի և համախոհից նորա, որպէս և այնոցիկ որ Թիկունք ամրութեան նորա եղեն, բողոք ցուագին կալաւ առ Կարոլոս կայսր, որ այն ինչ կալեալ էր զաթոռ իշխանութե Մ՝աքսիմիլիանոսի ։ Իսկ կայսրն նորապսակ ցանկացեալ ստանալ փառս պարծանաց առ 'ի գլուխ հանել անդ զայս գործ մեծ՝ հրաման ետ գումարել ժողով կայսերական 'ի Վորմս քաղաքի ։ Կոչեցաւ անդր և Լուտեր, բայց քանզի համախոհ բարեկամք նորա արգելուին զնա 'ի գնալոյ, նա ինքն բերելով յանձին զժպիրհ յանդգնութիւն աղանդապետի, ետ պատասխանի. "Կոչեցայ յատեան ըստ օրինաց, վասն որոյ անուամբ տեառն գնամ 'ի Վորմս, թէպէտ և հանդերձեալ իցեմ տեսանել անդ սոսկ հակառակամարտ զխումբ այնչափ բազմութեան դիւաց՝ որչափ աղիւսք իցեն 'ի տանիս բնակութեանց" ։

Աներկիւղ համարձակութեան Լուտերի պատճառ պարտ է համարել զվստահութիւնն յոր հաստատեալն էր յունել բազմութիւ կուսակիցս 'ի ժողովի անդ. և իբրև եհաս 'ի Վորմս քաղաք՝ բազումք 'ի ժողովրդենէն խուռն ընթացան տեսանել զնա ։ Սենեակք բնակութեան նորա լի էին իշխանաւք և ականաւոր արամբք, որք մեծապատիւ յարգանօք վարէին ընդ նմա իբր ընդ մարգարէի և պատգամախօս օրէնսդրի ։

Սնապարծ մտօք սնքացեալ Լուտերի 'ի փառաց անտի, անվեհեր համարձակութեամբ հանդիսացաւ 'ի ժողովի անդ, և խօսեցաւ բուռն սաստկութեամբ և յանդուգն լրբութեամբ, և չէառ յանձն անսալ և խոնարհել մինչև յանդիման ցուցեալ ստութեան կարծեաց իւրոց ։ Իսկ 'ի ստիպել զնա բազմապատիկ վկայութեամբ սրբոց հարց և աւանդութեանց եկեղեցւոյ , չկամեցաւ ընդունել այլ կամի 'ի դառնալ զիւր կարծիս՝ բայց զսուրբ գիրս ևեթ։ Արդ 'ի չառնուլ նորա յանձն յետս կալ 'ի մոլորութեանց իւրոց, խորհելով հնարս ազատութեան անձին՝ խնդրեաց և ընկալաւ 'ի ժողովոյն առանձնական ուրեք յապահովլի։ Բայց զկնի աւուրց ինչ մեկնելոյ նորա անտի՝ ել հրովարտակ յանուն կայսեր և ժողովոյն, յորում խորհրդով և համաձայնութեամբ կայսրընտիր իշխանաց և համօրէն աւագանւոյն կայսերութեան՝ կոչէն զԼուտեր յանցաւոր անսաստ, յանուն հերետիկոս և նզովեալ, ըստ կանոնագրոյն յայտարարութեան քահանայապետին Լեւոնի։ Օրէնս դնէր դարձեալ յարտաւնութեանց, յորս վայելէր նա իբրև հպատակ կայսերութեան, և զգուշացուցանէն զամենայն իշխանաւորեալս չտալ նմա տեղի ապաստանի կամ պաշտպան կալ նմին։ Եւ յուշ առնէն նոցա, զի 'ի լնանալ քսան և մի աւուրց պայմանեալ հրամանագրոյ ապահովութեան՝ կալանաւորեսցեն զնա և արկցեն 'ի կապանս։ Յայսմ կայսերական ժողովի՝ բաց յայլոց օրինագրութեանց արգելան և անխափան տպագրութիւնք մատենից առանց կանխագոյն քննութեան կարգեալ պաշտօնէից։

Հրովարտակս այս ոչ եղաւ 'ի գործ՝ կէս մի 'ի պատճառս վերահաս խռովութեան զբաղմանց Կարոլոսի Ե՛ վասն խռովութեանց Սպանիոյ, Իտալիոյ և Աւստրիանահանգաց, և կէս մի՝ մանաւանդ թէ առաւելագոյն 'ի պատճառս նախահոգական զգուշութեան դքսին Սաքսոնիոյ 'ի զերծուցանել զհերետիկոսապետն 'ի հետամտիցն իւրոց։

ԳԼՈՒԽ · ԺԱ.

Կալանաւորութիւն Լուտերի ։ — Համառօտ բովանդակութիւն մոլորութեանց նորա ։

ԴՈՒՔՍՆ Սաքսոնիոյ պաշտպան Լուտերի՝ կասկածեալ թէ 'ի դառնալ հերեսիովտապետին 'ի Վորմս քաղաք արկցի 'ի բանտ, փութացաւ 'ի ձեռն քանի մի ծպտեալ հեծելազօրաց տանել զնա յամրոց ուրեք 'ի Թուրինկիա գաւառի, ուր եկաց նա յարգելման զամիս ութ կամ տասն ։ Յայնմ առանձնութեան՝ զոր Լուտեր նմանեցուցանէ Պատմոս կղզւոյ ուր աքսորեալն էր Յովհաննէս աւետարանիչ, անձանձրոյթ մտադիր եղև հաստատել գրովք զվարդապետութիւն իւր, և դիմամարտել բանից ոսոխաց իւրոց ։ Անդանօր բովանդակեալ 'ի գլուխ եհան զնոր աղանդ իւր, յարմարեալ զայն յաւերակաց անտի մոլորութեանց Վալդեանց, Ալբիգեանց, Հուսեանց և այլոց աղանդաւորաց ։

Ըստ մոլար վարդապետութեանն նորա՝ մարդկային ազատ անձնիշխանութիւնն կեղծիք իմն է ցնորից, և հաւատք միայն բաւական են 'ի փրկութիւն . իսկ հաւատս պարտ է համարել զդաւանելն եթէ Քրիստոս չարչարեցաւ վասն մեղաց մերոց 'ի ջնջել զայնոսիկ . վասն որոյ չմնայ մեզ այլ ինչ բայց սերտիւ հաւատալ յայն ։ Այր ոք, ասէ, լի հաւատով, թէպէտ և կամեսցի, ոչ կարէ դատապարտ լինել . բայց առանց հաւատոյ ամենայն գործք մեր մեռեալք են, իսկ զգործս հեթանոսաց որք վրէպք իցեն յաստուածային հաւատոյ՝ դասել պարտ է 'ի կարգս մոլորութեանց և ախտից ։ Միակ կանոն հաւատոյ մերոյ պարտին լինել սուրբ գիրք կամ աստուածաշունչ մատեանք . իսկ ժողովք ընդհանուրք կարեն սխալել, վասն որոյ զսահմանս և զվճիռս նոցա յոչինչ պարտ է համարել ։ Ժուժկալութիւն կամ կուսակրօն կենցաղ քահանայից, ուխտադիրն լինել միայնակեցաց, խորհրդական խոստովանութիւն մեղաց, պահք և խստամբերութիւն դիւահնար մտապաշտութիւնք են ։ Երկու միայն են խորհուրդք եկեղեցւոյ, այս է՝ մկրտութիւն և հաղորդութիւն . իսկ 'ի հաղորդութեան գոյափոխութիւն անտեղի զրոյց է , ասէր , այլ Քրիստոս իսկապէս առաջիկայ է 'ի հաղորդութեան , բայց հացն և գինին ոչ եղծանին 'ի բանից քահանային · Սփու պատարագք՝ անկարգ և անհեթեթ սովորութիւնք են , որպէս և պաշտամունք պատկերաց , և հաւատալ քաւարանի հոգւոց · և թէ ամենայն կալուածք և ստացուածք եկեղեցականաց՝ անկ են թագաւորաց ։ Ոխ եկաց Լուտեր և մուրացիկ կրօնաւորաց , և զընտակարանս նոցա կամէր փոխարկել 'ի հրապարակական դպրոցս յուսումն և 'ի դաստիարակութիւն մանկտւոյն ։ Այսոքիկ են գլխաւոր ցնորք նորա , զորս ինքն բարեկարգութիւնս անուանէ ։

Յաւանձնութե՟ անդ Լուտերի մոլորամիտ վարդապետութիւնք նորա ծաւալեցան սփռեցան ընդ ամենայն երկիրն Սաքսոնիոյ · Օգոստինեանք Վիրթէմպէրկ քաղաքի գաղտնի ձեռնտուութե՟ դքսին զօրացեալք՝ ձեռն արկին փոխել ինչ ինչ 'ի հասարակաց պաշտամանս եկեղեցւոյ , որք կարի հաճոյական թուեցան նորասիրաց · խափանեցին զմատուցումն թիւ պատարագի , և սկսան կրկին տեսակաւ հացի և գինւոյ հաղորդել զաշխարհականս ։

Նա թէպէտ ցնծայր յոյժ ընդ այն Լուտեր , սակայն խոչընդոտք հակառակութե՟ որք այլուր ընդ առաջ ելին նմա ոչ ինչ սակաւ տագնապեցուցին զնա ։ Քանզի համալսարանն Փարիզու որ հռչակաւորագոյնն էր ընդ տիեզերս , դատակնքով նզովից խայտառակեալ նշաւակեաց զմոլորամիտ վարդապետութիւնս նորա՝ իբր նորոգութիւնս ցնորից և հայհոյութեանց Հուսեանց , Վիկլէփեանց , Վալդեանց , Բեգուարդեանց , Ալբիգեանց , ևս և Մանիքեցւոց և Գնոստիկեանց · և բովանդակեալ զամենայն մոլորութիւնս նորա 'ի թիւ հարիւրոց՝ հերքեաց զայնոսիկ ազդու և զօրաւոր բանիւք ։ Նոյնպէս և Հենրիկոս Ը արքայ Անգղիոյ խնամ կալաւ վտարանդի առնել զմոլորեալսն զայնոսիկ 'ի տէրութենէ իւրմէ , և գրեաց ևս կշտամբութիւն 'ի պատասխանի գրոյն Լուտերի որ Գերութիւն Բաբելոնի յորջորջէր ։

Ընդ կշտամբողական բանս երիտասարդ արքային յոյժ 'ի խոր խոցեցաւ Լուտեր , քանզի ետես յայտնապէս գրեալ զայն խորամանկ զննութեամբ քաջուսումն *տրամախօսի ։ Սակայն և այնպէս ոչ ինչ ակն ածեալ ՚ի դատակնքոյ անտի Համալսարանին Փարիզու , և ոչ յիշխանական պատուոյ Հենրիկոսի արքայի , փութացաւ հրատարակել զամբարիշտ և զպարսաւագիր գննութիւնս իւր ՚ի վերայ դատակնքոյ առաջնոյն և պատասխանւոյ երկրորդին , վարելով ՚ի խօսս իւր զաղն և երգիծական բանս իբրու առ դոյզն և տկար հակառակորդս անձինս ։*

ԳԼՈՒԽ ԺԲ.

Մահ Լևոնի Ժ., և յաղագս յաջորդաց նորա ։

ԼԵՒՈՆ քահանայապետ տեսանելով զեկեղեցին Գերմանիոյ տագնապեալ ՚ի թունալից մոլորութենէն Լուտերի , առ ցաւոց սրտին թաղծեալ տրտմութեամբ վախճանեցաւ յամին 1521 ՚ի հասակի քառասուն և չորից ամաց , կալեալ զաթոռ քահանայապետութեան զամս ութ և զամիսս իբր տասն ։ Աւուրք քահանայապետութեան նորա պայծառացան յոյժ , քանզի խնամակալ գտաւ իմաստնոց և գեղարուեստից . վասն որոյ և բազում մարդիկ առանձին ներբողենիւ պատուեալ անմահացուցին զյիշատակ նորա և զանուն ։

Յետ նորա ընտրեցաւ յաթոռ քահանայապետութե՟ Ադրիանոս Զ արքեպիսկոպոսն Դուրդոս քաղաքի՝ ծննդեամբ ՚ի Ստորին Նահանգաց , որ եղեալ էր ուսուցիչ և վարժապետ Կարոլոսի Ե ։ Մեծարոյ էր սա իմաստութեամբ , և խնամ կալաւ բազմապատիկ հնարիւք շիջուցանել զհրդեհ մոլորութեանն զբորբոքեալն ՚ի Գերմանիա , բայց ազդեալ գաւառք կայսրութեան փոխանակ հանդարտելոյ և անսալոյ խրատուց քահանայապետին , առաքեցին առ նա գիր և ցուցակ զանգատանաց ընդդէմ աթոռոյն Հռովմայ , և խնդրեցին զի հրաման տացէ գումարել ժողով ազգային ։

Յայնմ ժամանակի եհաս վախճան Ադրիանոսի՝ յետ կալոյ նորա ՚ի քահանայապետութեան զամ մի և զամիսս ութ ։ Յաջորդեաց զնա յիշխանութեան Յուլիոս կարդինալ փլորենտացի ՚ի Մետիչեան զարմէ , որ անուանեցաւ Կղեմէս Է . սա ինքն յամին 1524 առա-

քեաց Նուիրակ ’ի ժողովն Նորիմպերկ քաղաքի՝ ստիպել զժողովականսն դնել ’ի գործ զհրովարտակն հաստատեալ ’ի Վորմս քաղաք ընդդէմ Լուտերի և գործակցաց նորա ։ Զայս պատուէր քահանայապետին զօրացոյց և Կարոլոս կայսր, որ ընդ այն ժամանակս էր ’ի Սպանիա, և գրեաց առանձինն թուղթ յորդորանաց առ ամենայն սահմանս կայսերութեան. բայց ժողովեալքն ’ի Նորիմպերկ քաղաք արարին զնոյն պատասխանի առ Կղեմէս՝ զոր երբեմն գրեալ էին և առ Ադրիանոս Զ ։

Հոգեռանդն խնամ և ազդու դարմանք քահանայապետացն Հռովմայ ընդդէմ մոլորութեանցն Լուտերի ոչ ինչ օգտութե̃ց պատճառք եղեն, քանզի թոյնն ժանտ ծաւալեալ սփռեցաւ նախ յառանձին մարդիկ և ’ի նոցունց ապա յազգս, և ապականեաց զպետութիւնս ինչ գլխովին ։ Ի Սաքսոնիոյ էանց ’ի Հունգարիա կամ ’ի Մաճառս, անտի ’ի Շուետս և ’ի Դանիս, որով ’ի դոյն ժամանակի բարձաւ ուղղափառութիւն ’ի հիւսիսաբնակ ազանց ։

Եւ քանզի Լուտեր յայն թիւր կարծիս խարսխեալ էր զհիմունս վարդապետութեան իւրոյ, իբրու եթէ ամենայն ոք ’ի մարդկանէ իշխան իցէ ըստ մտի մեկնել զաստուածաշունչ մատեանս, ցանկութիւն մարդկան համբաւեալ հանդիսանալոյ նորանոր կարծեօք յորդոր մատոյց նոցա ձեռնամուխ լինել յանսովոր և յօտարոտի մեկնութիւնս. որով ’ի դոյն ժամանակի յարեան ’ի վարժարանէ անտի Լուտերի երկերիւրիւ չափ աղանդք ներհականք միմեանց, և ամենեքին առ հասարակ զլինեալք ընդդէմ ուղիղ և ճշմարիտ վարդապետութեան եկեղեցւոյն Հռովմայ. և քանզի համառօտախօս ոճ պատմութեանս չներէ զամենեցուն անուանսն և զկարծիս բովանդակել ’ի մատենիս, զհամբաւաւորացն ’ի նոցանէ կարգեսցուք զանուանս յառաջիկայդ ։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Քառլշթատ։

ԱՌԱՋԻՆ աշակերտ Լուտերի և նախանձախնդիր վարդապետութեան նորա՝ եղև Անդրէաս Բոնդեստինոս՝ ծանուցեալն յաւէտ ընդ անուամբ Քառլշթատ քաղաքի հայրենեաց իւրոց որ 'ի Ֆրանքոնիա։ Հրաժարեալ սորա 'ի քահանայութ՟է և յուխտից սրբութեան և զհետ երթեալ օրինակին Լուտերի, էառ իւր կին հրապարակաւ. և զի էր այր խօթամիտ, յանդուգն և մոլեգին, եղեալ 'ի մտի եթէ Լուտեր սկիզբն եւեթ տուեալ իցէ ձեռնարկեալ գործոյն, խնամ կալաւ 'ի կատարելութիւն ածել զկարծեցեալ նորոգութիւն բարեկարգութեան եկեղեցւոյ։ Վասն որոյ ոսոխ դառն արձանացաւ ընդդէմ ժուժկալութեան քահանայական կարգի, և յանդգնեալ խորտակել զխաչս, ջնջել զպատկերս, քանդել զսուրբ սեղանս, պարագլուխ հանդիսացաւ աղմկայոյզ մոլեգնելոց, և ապա ուրացաւ յայտնապէս զճշմարտութիւն մարմնոյ և արեանն Քրիստոսի 'ի սուրբ հաղորդութեան։

Զմոլեգին կատաղութիւն ցնորելոյս այսորիկ ոչ կարելով Լուտերի նուաճել բռնութեամբ և կամ թէ յինքն արկանել զնոսա քաղցրութեամբ, ստիպեաց ըզՔառլշթատ գլխաւոր նոցա հեռանալ 'ի Վիրթէմպէրկ քաղաքէ, և հաւանեցոյց զդուքսն Սաքսոնիոյ արգելուլ զնա հանդերձ կնաւն անդր քան զսահմանս իշխանութեան իւրոյ։ Այլ նորա յարտասահմանութ՟ն անդ իւրում ժամանեալ 'ի յետին անանկութիւն, ստիպեցաւ գործել զերկիր և փայտակիր լինել շալակաւ առ հայթայթել զաւուրն պարէն. ուղևորեցաւ ապա 'ի Պազիլէա քաղաք իբր 'ի քարոզութիւն, և մեռաւ անդ դառն մահուամբ։

Արդ ակնկառոյց 'ի վարս սորա և նմանեացն եղեալ, յապշութիւն կրթին իմաստախոհ միտք՝ 'ի տեսանել անդ զանհամեմատ խտիրն որ ընդ մէջ սոցա և աստուածառաք վարդապետաց՝ որք կարգեցան յԱստուծոյ հիմնել և հաստատել զաւետարանական ճշմարտթիւնս ։ Նախանձախնդիրք կարծեցեալ վերանորոգութեանս էին կրօնաւորք և քահանայք ուխտադիրք առ Աստուած , որք զինեցան ընդդէմ բարեպաշտութեան վարուց , անարգելով յանձինս իւրեանց և յայլս զժուժկալութիւն , զխոնարհութիւն , զօրէնս աստուածպաշտութեան և զբարեկարգութիւն եկեղեցւոյ ։ Եւ արգասիք վարդապետութեան նոցա այն եղև , զի սպրդեալ մտին 'ի միայնակեացս և 'ի միանձնուհիս թուլութիւն և մեղկութիւն , ուր նախնի վարդապետք և քարոզիչք ճշմարիտ և աստուածային ուղղութեան՝ խնամ կալան տնկել և ծաղկեցուցանել զվարս մաքրութեան և զժուժկալութեան , որպէս վկայէ և Սոկերերան ։ Իսկ սոքա ջանահնար եղեն արմատաքի խլել ոչ միայն զժուժկալութիւն , այլ և զապաշխարութիւն , ըզկամաւոր աղքատութիւն և զայլ ամենայն ազգս առաքինութեան , որովք 'ի զարս առաջինս պայծառացաւ եկեղեցի . և զճշմարտութիւն նոցա ծանուցեալ և նոցին իսկ աղանդապետաց վկայեն յամօթ և 'ի նախատինս իւրեանց . զի աւանիկ բարձրաբարբառ վկայէ Կալվին թէ " Բազումք յանջատելոյ անտի 'ի պապապաշտութենէ՝ լի են նենգութեամբ և անհաւատութեամբ , որք 'ի վերին երեսս ցուցանեն նախանձայուզութի՟ , բայց 'ի մատչելն և 'ի զննել 'ի մօտոյ՝ գտջիք զնոսա արս ապիրատս ":" ։ Զնոյն վկայէ և նա ինքն Լուտեր յասել անդ . " Տեսանեմք զի 'ի թելադրութենէ բանսարկուին մարդիկ ժամանակիս են առաւել ագահք , անգութք , անկարգք , ապիրատք և չարագոյնք քան զոր էին երբեմն ընդ իշխանութեամբ պապին ":" ։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Զուինկլիոս ։

ՄԻՆՉԴԵՌ Բառըքթատ մեկուսացեալ էր 'ի Հէլուետիա՝ յարեաւ անդ և երիտասարդ ոմն քահանայ Զուինկլիոս անուն՝ համբաւեալ յոյժ մտացն ճարտարութեամբ , որ նախ քան զքահանայանալն մտեալ էր 'ի կարգ աշխարհական զինուորութեան . և յետ քահանայանալոյ տուեալ զանձն 'ի պաշտօն քարոզութե՟ , յորում և յաջողեալ իսկ էր բազմապատիկ բարեմասնութեամբքն, և ամբարձաւ 'ի պաշտօն ժողովրդապետութեան Ցուրիք քաղաքի Հելուետիոյ։ Ընդ այն ժամանակս եկեալ էր անդր 'ի Մեդիոլանէ կրօնաւոր ոմն ֆրանկիսկեան քարոզել 'ի Հելուետիս ներողութիւնս, որպէս երբեմն դոմինիկեանք արարեալ էին 'ի Գերմանիա։ Զուինկլիոս շաղախեալն մոլորութեամբք Լուտերի յարձակեցաւ 'ի կռիւ ընդդէմ ֆրանկիսկեանին և վարդապետութեան նորա։

Ըստ բուն օրինակին Լուտերի սկսաւ քարոզել ընդդէմ ներողութեանց, բարեխօսութեան սրբոց և մաղթանաց առ նոսա, պաշտաման պատարագի, ուխտից և եկեղեցական օրինաց։ Սակայն տարաձայն գտաւ 'ի նմանէ յիւր ինչ. քանզի Լուտեր զամենայն ինչ ընծայէր ազդեցութեան շնորհաց Աստուծոյ, իսկ Զուինկլիոս՝ արգասիս զայնոսիկ համարէր անձնիշխան ազատութեան մարդկայինս բնութեան. Լուտեր ընդունէր զիսկական գոյութիւն Քրիստոսի 'ի սուրբ հաղորդութեան, թէպէտ և ուրանայր զգոյափոխութիւն հացին 'ի մարմին և գինւոյն յարիւն. իսկ սա ոչ այլազգ ընդունէր զխորհուրդ պատարագի՝ բայց իբրու լոկ պատկեր կամ յիշատակ և օրինակ մարմնոյ և արեանն Քրիստոսի, զոր ընդունիմք առէր հոգեւորապէս եւեթ։

Եւ զի բուռն տագնապ էր Զուինկլիոսի մեկնել զբացայայտ բանն տեառն մերոյ եթէ ԱՅՍ Է ՄԱՐՄԻՆ ԻՄ, 'ի վիճել երբեմն յերազի ընդ ումեք՝ յանակնկալս յուշ եղև նմա մեկնել զբանն Քրիստոսի իբրու նշան և օրինակ մարմնոյ և արեանն իւրոյ. որպէս թէ բայս է վարիցի փոխանակ ՆՇԱՆԱԿԷ բառին։ Եւ այս մեկնութիւն նորա հաճոյ գտաւ յոյժ բազմաց 'ի նորաղանդից, որք խափանել կամէին զմատուցումն պատարագի. և զի պայծառ վարդապետութիւն իրական գոյութեան տագնապէր յոյժ զմիտս նոցա, զդժուարութիւն խնդրոյն լուծեալ համարեցան մեկնութեամբ Զուինկլիոսի, որ ընկալաւ զաւետս յԵկոլամպադիոսէ, 'ի Կապիտոնեայ, յԲուցերոսէ և յայլոց։ Մոլորութիւն նորա սփռեալ տարածեցաւ 'ի Գերմանիա, 'ի Լեհաստան, 'ի Հելուետիս, 'ի Գաղղիա և 'ի Ստորին նահանգս.

որով ՚ի վեր երևեցաւ աղանդն Խորհրդականաց կամ Սաքրամենթարէէ կոչեցելոց։

Լուտէր որ իբրև զԶուինկլիոս զսուրբ զիրս ևեթ համարէր միայն կանոնս հաւատոյ՝ հերետիկոս զԽորհրդականսն համարեցաւ. վասն որոյ աշակերտք նորա եղեն ոխերիմ թշնամիք Խորհրդականաց, զորս հալածէին նոքին իսկ մոլեգին կատաղութեամբ որով զինեցան ընդդէմ ուղղափառաց։

Ի Հելուետիա ՚ի սաստկանալ ժամանակից մոլորութեան այսորիկ ՚ի վեր երևեցան անողորմելի քաղաքական պատերազմունք ընդ աղանդաւորս և ընդ ուղղափառս։ Զուինկլիոս գուն գործեաց զէն ՚ի ձեռին պաշտպանել զմոլորութիւն իւր, և զծերակոյտ կուսակալութեանն Ցուրիքի՝ զորոյ զգլխաւորսն յինքն որսացեալ էր՝ ընտրեաց դատաւորս և քննիչս վարդապետութեան իւրոյ, և հաւանեցուցեալ զնոսա ՚ի նոյն յորդոր եղև և համօրէն ժողովրդոց այնր կուսակալութեան։ Ի զուր հերքեալ դատապարտեաց զմոլորութիւնն ժողովն գումարեալ ՚ի Պազիլէա, քանզի անխափան տարածեցաւ և ՚ի կուսակալութիւնն Պեռնայի, Պազիլիոյ և Շաֆֆուզի։

Ի բորբոքել խռովութեանս ուղղափառ կուսակալութիւնք զինեցան ընդդէմ Զուինկլեանց, և յամին 1531 յարձակեալ արշաւանօք հասին մինչև ցդրունս Ցուրիք քաղաքի։ Եւ քանզի հազար և հինգհարիւր այր ՚ի հերետիկոսաց ՚ի պատրաստի մնացեալ խուճապեցան ՚ի փախուստ, Զուինկլեանք զօրաժողով եղեն դարձեալ և կազմեցին բանակ քսան հազար զինելոց, գլուխ և առաջնորդ իւրեանց ունելով զնա ինքն Զուինկլիոս։ Ի սկսանել մարտին ուղղափառք ստիպեցան զառաջինն խոյս տալ ՚ի նոցանէ. և ապա անակնկալ յարձակեցան ՚ի վերայ թշնամեաց ՚ի նեղ և յանձուկ վայրս ձորոյ, ուր սատակեցաւ Զուինկլիոս ՚ի մետասաներորդ աւուր ամսեանն Հոկտեմբերի յամին 1531, քաջութեամբ պատերազմեալ որպէս զզօրական մի արի, և էր ինքն յայնժամ ամաց քառասուն և չորից։

Աշակերտք Զուինկլիոսի ՚ի խնդրել զվրէժ մահու զօրավարին իւրեանց՝ կազմեցին այլ բանակ երեսուն հազար զօրաց. սակայն պարտեցան իբրև զառաջինն։

Արդ յետ բազմապատիկ մարտից և յաղթական լինելոյ միշտ ուղղափառաց, ցանկացեալ խաղաղութեան 'ի կարճել զանօգուտ հեղմունս արեանց, ուղղափառք զիջան ընդ պայմանն հաշտութեան մնալոյ իւրաքանչիւր կուսակալութեանց 'ի դաւանութեանն յորում էին յայնմ ժամանակի:

ԳԼՈՒԽ ԺԵ.

Լուտերականք ձեռնամուխ լինին 'ի զէնս:

Ի ԽՈԽՈՒՆ բանակաւոր հակառակութիւնս ընդ որք զօրացեալ էին գոգցես ընդ ամենայն գաւառս Գերմանիոյ, արծարծէր յամենեսին ոգի նորասիրութեան և ինքնօրէն ազատութեան: Փիլիպպոս սահմանապետն դքսութեան Հեսսիոյ պաշտպան և կուսակից աղանդոյն Լուտերի, եդ 'ի մտի յաղթական զինուք տարածել զայն մոլորութիւն, մոռացեալ զպատուէր վարդապետին իւրոյ որ հրաման ետ նմա չհաստատել զինուք զայն վերանորոգութիւն: Արդ Փիլիպպեայ 'ի մտանի կասկածանս գոլով իբրու թէ յուզիցի գաղտնի դաշն ընդ Գէորգ եղբօրորդի դքսին Սաքսոնիոյ և ընդ այլ ուղղափառ իշխանս 'ի ջնջել զհետևողս այնր նորոյ վարդապետութեան, յամին 1529 պատրաստ իւր առեալ զայն մտացածին դաշնադրութիւն՝ զլուտերականս առ հասարակ զինեաց 'ի պատերազմ. սակայն ոչ ինչ մարթացան առնել. քանզի Փիլիպպոս սահմանապետ շատացաւ բազմագումար դրամովքն զորս էառ յուղղափառ իշխանաց, իբր 'ի վճար ծախուց պատրաստութե՟ մարտին զոր հանդերձեալն էր գումարել սոսա և անհիմն կասկածանօք, որպէս և ինքն իսկ խոստովան եղեալ:

Գիտելով Լուտերի եթէ որքան վնասակար էր և պատճառ ատելութեան և խռովութեան ձեռնարկեալ գործն Փիլիպպոսի, ջանահնար եղև արգել առնել զնա, և իբր ստուգութեամբ վկայել՝ թէ դաշնադրութիւն Գէորգեայ դքսին չիցէ սուտ և մտացածին: Գրեաց ևս բազում նամակս ընդդէմ այնր իշխանազնի, յորս դառն բանիւք կշտամբէ զնա կոչելով *անհնարագոյն քան զանդրանս, և յաւելու ասել եթէ բողոք զքէն կալեալ առ Աստուած՝ զրգռեցի զիշխանազունս զի որոց Ճարակ տայցեն զայնոսիկ որք կամին տեսանել զԳերմանիա մատնեալ 'ի հուր և 'ի սուր ։*

Նա որչափ Գէորգիոս կշտամբեալն 'ի Լուտերէ, հակառակ էր նորահնար աղանդոյն, այնչափ առաւել նպաստամատոյց այնմ ցուցաւ հօրեղբայր նորին Փրեդերիկոս. վասն որոյ Լուտեր առանց իրիք ակնածութեան յիշխանական պատուոյն՝ մոլեգին կատաղութեամբ 'ի գուշակութիւնս անթիւս մտաբերէր ընդդէմ Գէորգեայ, և ջան գործէր 'ի գլուխ հանել զայնոսիկ ։

ԳԼՈՒԽ Ժ.Զ.

Զանազան ժողովք 'ի Գերմանիա 'ի պատճառս լուտերական աղանդոյն ։

ԸՆԴԱԴԱՐԵԼԻ *խռովութիւնք յուզեալք 'ի Գերմանիա 'ի պատճառս վերանորոգութեան Լուտերի, և անողոքելի հերձուածք 'ի ժողովրդեան՝ հարկեցուցին զԿարոլոս Ե. գումարել զանազան ժողովս ազգայինս և գաւառականս ։*

Ի ժողովն Սպիրայի յամին 1529 սահմանեցաւ զի մի ևս փոփոխութիւն լիցի կրօնի 'ի գաւառսն, յորս ընկալեալ եղև հրովարտակ Վորմս քաղաքի. բայց կայսրընտիր իշխանաւորքն Սաքսոնիոյ, Բրանտեպուրկի, դուքսն Լունէպուրկի, սահմանապետն Հեսսիոյ, և բազումք յիշխանաց որպէս և քաղաքք ինչ կայսերականք բողոք կալան ընդդէմ վճռոյն, յորմէ Փռոթէսթանթ *անունդ զծագումն կալաւ, որ* Բողոքական *'ի մեր բարբառ թարգմանի. և 'ի ժամանակէ անտի և այսր այսպէս կոչեցան լուտերականք ։*

Յամի տեառն 1530 յամսեանն յունիսի Կարոլոս Ե. վերստին գումարեաց այլ ժողով հանրական յԱւգսպուրկ քաղաքի յորում իւրքն իսկ կայսրն նախագահ բազմեցաւ ։ Գտան 'ի ժողովին և Փերտինանդոս թագաւորն Հունգարիոյ և բազումք 'ի կայսրընտիր իշխանաց և գործակալաց այլ և այլ քաղաքաց կայսերութեան ։ Յայնմ հանդիսական համախմբութեան Բողոքականք առաջի արարին զդաւանութիւն հաւատոյ իւրեանց՝ զյօրի-

նեալն 'ի Մելանքթոնէ, որ առաջնորդ էր Խաղաղասէր անուանեալ լուտերականաց. այր ճարտարամիտ և բազմահանճար յիւրումն դարու, և հեզահամբոյր յաստուածաբանս այնր աղանդոյ։ Դաւանութեանս այսմիկ որ էր իբր անխարդախ առաջարկութիւն կամ յայտարարութիւն վարդապետութեան իւրեանց՝ ձեռն եդեալ էին և նոքին իսկ Բողոքականք, զոր և մատուցին 'ի ձեռս կայսեր։ Իսկ նա ետ ընթեռնուլ զայն բարձրաձայն առաջի համախումբ ժողովոյն. բայց զի մի յետ ժամանակաց համբաւեսցի եթէ մոլորամիտ վարդապետութ՟ին եւեթ հանդիպեցեալ իցէ 'ի ժողովի անդ, հրամայեաց կայսրն ընթեռնուլ հրապարակաւ և զգիմադրութիւն այնր դաւանութեան, զոր յօրինեալ էին իմաստուն աստուածաբանք ուղղափառաց։ Ի լսել Մելանքթոնի զընդդիմադրութիւնն՝ յանձն էառ մեղմել զհատուածս ինչ բանից դաւանութեանն լուտերականաց, և գուն գործեաց հեշտալուր առնել զբանն զիւրընտել իմաստիւք. սակայն ոչ երկարատև ինչ եղև կարծեցեալ խաղաղութիւնն. քանզի նորանոր մոլորութիւնք օր ըստ օրէ 'ի վեր երևեալք՝ եղեն կռճիմն և պատճառք անկարկատելի բաժանման և հերձուածոյ։

Բողոքարկու իշխանք յամառեալ գտան 'ի կարծիս իւրեանց քան զանուանեալ աստուածաբանս իւրեանց. 'ի զուր յորդոր մատոյց կայսրն դքսին Սաքսոնիոյ, սահմանապետին Հասսիոյ և ամենայն պաշտպանաց աղանդոյն Լուտերի 'ի բաց կալ 'ի նմանէ, քանզի մոլորեալ նոցա խեղաթիւր մտօք կարծէին պաշտպան կալ ճշմարտութեան. վասն որոյ ոչ պատգամք կայսեր և ոչ քաղաքական օգուտք տէրութեան իւրեանց հաւանեցուցին ինչ զնոսա յետս կալ 'ի մոլորութենէն։

Կարոլոս Ե. ոչ կարելով շահել զնոսա քաղցրութ՟ք, ետ 'ի մտի վարել զատ իշխանութեան իւրոյ ընդդէմ վարդապետաց և կուսակցաց հերետիկոսութեան. վասն որոյ յամին 1530 յիննևտասներորդ աւուր նոյեմբերի հրովարտակ եհան, որով արգել զամենայն նորութիւն յիւր կրօնի, և պատուիրէր 'ի բաց թողուլ զամենայն նորանուտ փոփոխութիւն 'ի վարդապետութեան հաւատոյ, 'ի սովորութիւնս եկեղեցւոյ՝ մինչև ցօրինաւոր ժողովլ ինչ ընդհանրական յորդուածն ամենայն հակառակութեանց ։ Առ անվրէպ գործադրութիւն հրովարտակիս բռնադատեցան ամենայն պաշտօնատարք կայսերութեան ձեռնտու լինել անձամբք և ստացուածովք, քանզի սպառնալիք եղան 'ի վերայ նոցա որք միանգամ յետնեսցին 'ի գործադրութենէ այնր հրամանի, զի իբր անձեռնհաս պաշտաման իւրեանց՝ զրկեսցին 'ի պատուոյ դատաւորութեան, և մի կարասցեն երևել յարքունիս կայսերութեան ։

ԳԼՈՒԽ ԺԷ.

Դաշնակցութիւն 'ի Սմալքալտ ։

ԻՐԱԶԵԿ լեալ լուտերական իշխանաց խորհրդոյ և մտաց Կարոլոսի կայսեր՝ զի կամէր պատերազմաւ բառնալ 'ի սպառ զլուտերականութիւն, ժողովեցան 'ի Սմալքալտ քաղաք Սաքսոնիոյ առ զդէմ ունել մրրկին որ կործանումն սպառնայր նոցա . վասն որոյ յամի տեառն 1531 արարին միաբանական դաշնակցութիւն պաշտպան կալոյ միմեանց և դաւանութեան իւրեանց . և առ անպատիր առնելոյ զայս դաշնակցութիւն յաչս այլոց տէրութեանց՝ առաքեցին 'ի Գաղղիա և յԱնգղիա նամակս յայտարարութեան, յորում զուն գործէին ցուցանել թէ նպատակ միաբանութեան իւրեանց էր պաշտպանել ևեթ զամբողջութիւն աւետարանական հաւատոյ ։

Լուտեր որ մինչև ցայնժամ համարէր եթէ վերանորոգութիւն կարծեցեալ բարեկարգութեան իւրոյ համոզկէր բանիւք և երկայնամիտ համբերութեամբ միայն առցէ հաստատութիւն, զանգիտեալ 'ի մրրկալից սպառնալեաց անտի խնամ կալաւ սրտապնդել զդաշնակիցսն Սմալքալտայ, գրելով առ նոսա նամակս յորս ըզքահանայապետն Հռովմայ նմանեցուցանէր կատաղի գայլոյ, ընդդէմ որոյ, ասէ, հարկ է ամենայն ժողովրդեան զինել առանց սպասելոյ հրամանաց դատաւորի ուրուք . և զի ընդ այն ժամանակս քահանայապետն 'ի պատճառս խռովութեան քաղաքին ամրացեալ էր 'ի գղեակ սրբոյ Հրեշտակապետին, յաւելոյր յաղթատանս իւր, թէ զազանն այն առ ժամն փակեալ կայ յանձուկ գառագղի, և թէ մարթ է դիւրաւ հալածել զնա և աներկիւղ մարտնչել ընդ այնոսիկ որք ճըգնիցին պաշտպան կալ նմա. որ միանգամ, ասէ, յայսմ մարտի մեռանիցի նախ քան զմահ զազանին, ընդ այն ևեթ ցաւեսցէ զի չեղև ձեռնհաս մխել զսուր իւր 'ի սիրտ նորա: Ահա օրինակն որով պարտ է, ասէ, վարել և ընդ պաշտպանս նորա, թէպէտ և թագաւորք իցեն և կամ կայսերք. քանզի զամենեսին զնոսա զինաւորս աւազակապետի ուրուք պարտ է համարել:

Զայնու ժամանակաւ քանզի Կարոլոս Ե կարօտէր ձեռնտուութեան լուտերական իշխանաց 'ի վանել ըզՍիւլէյման թագաւոր Օսմանեանց՝ որ մտեալ էր 'ի սահմանս Աւստրիոյ, ստիպեցաւ մոռանալ զառաջին հրովարտակ իւր, և հաւանել զի դաշնակից իշխանքն առ հասարակ ազատ լիցին դաւանել զայն կրօնս որ հաճոյ և ախորժելի յաչս նոցա թուիցի: Այսու դաշանց խաղաղութիւն եղև ընդ կայսեր և համօրէն սահմանաց տէրութեան մինչև ցօրինաւոր գումարումն ընդհանրական ժողովոյ. և սահմանեցաւ զի ոչ ոք կարասցէ 'ի պատճառս կրօնի յարուցանել մարտ ընդ այլում, այլ թագաւորեսցէ յամենեսին անկեղծ բարեկամութիւն և սէր քրիստոսական: Յաւելաւ և այս պայման զի 'ի միջոցս միոյ ամի եթէ ոչ յաջողեսցի համախըմբութիւն ընդհանրական ժողովոյն, ամենայն իշխանութիւնք և կուսակալութիւնք Գերմանիոյ ժողովեսցին 'ի մի՝ բարեկարգել զիրս կրօնի: Արգելին դարձեալ ըզքննութիւն կրօնական դատից կայսեր ընդդէմ դքսին Սաքսոնիոյ և դաշնակցաց նորա մինչև ցհամախմբութիւն այնր ժողովոյ:

ԳԼՈՒԽ ՃԸ.

Մահ քահանայապետին Կղեմայ Է.

ԿՂԵՄԷՍ քահանայապետ խոցեալ կարեվէր ընդ անակնկալ յառաջադիմութիւն նորադանդ մոլորութեան, որ ներողամտութեամբ Կարոլոսի կայսեր սփռեալ ծաւալեցաւ 'ի Գերմանիա, հարկ համարեցաւ գումարել ժողով ընդհանրական. բայց լուտերականք յանդուգն ստահակութեամբ մերժեցին զպայմանսն առաջի արկեալս 'ի նմանէ : Եւ մինչդեռ խորհէր բազմապատիկ հնարիւք 'ի զգաստութիւն ածել զնոսա՝ եհաս օր վախճանի նորա յամին 1534, կացեալ 'ի քահանայապետութեան զամս մետասան :

Յորդորք և անարի քաղաքավարութիւն հանդերձ ակնկալութեամբ օգտի՝ ստէպ է յաճախ մթացնել զպայծառ տեսութիւն մտաց մարդոյ և զընդարձակ բարեմտութիւնս նորա. զի ուանիկ և երկչոտ բնոյթ քահանայապետիս յամենայն 'ի գործս իւր՝ պատճառք եղեն վշտացն որոց տարաւ : Նա նախ 'ի քահանայապետութեան Լեւոնի Ժ. հօրեղբօր իւրոյ՝ ունելով զպատիւ առաջին պաշտօնատարի, մեծապէս ցուցաւ առ ամենեսին սակս հանճարեղ ճարտարամտութեան իւրոյ. բայց յամբառնալն յաթոռ իշխանութեան՝ եցոյց յայտնապէս եթէ դիւրագոյն է կառավարել զայլս՝ կալով ընդ իշխանութեամբ այլոյ ուրուք՝ քան հրամայել անձամբ ևեթ :

Քահանայապետս յամին 1526 գժտեալ ընդ Կարոլոսի կայսեր, դաշնակից եղև ընդ Գաղղիոյ և ընդ Անգղիոյ, որպէս և ընդ հասարակապետութեան Վենետկեցւոց 'ի թշնամութիւն ընդդէմ Կարոլոսի. վասն որոյ զայրացեալ կայսեր առաքեաց զօրս պաշարել զՀռովմ քաղաք, զոր և առին յարձակմամբ 'ի վեցերորդ աւուր ամսեանն մայիսի յամին 1527, և ընդ ամիս երկուս յաւարի առին զքաղաքն, գործելով 'ի նմա անհնարին չարիս, զոր 'ի նախնի դարուց հետէ չէին երբէք տեսեալ Հռովմայեցիք : Քահանայապետն որ ապաստանեալն էր յամրոց սրբոյ Հրեշտակապետին և պաշաբեալ՝ի թշնամեաց, յետ եօթն ամաց փախեաւ անտի ծպտեալ զգեստուք վանականի ։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Հերձուած եկեղեցւոյն Անգղիոյ ։

Ոչ գոյզն վշտաց և աղետից պատճառք եղև Կղեմայ քահանայապետի և առաւել հերձուած Անգղիոյ՝ խուն ինչ յառաջ քան զմահ նորա 'ի լոյս ելեալ։ Պետութիւնն այն որ 'ի վաղ ժամանակաց հետէ ամենայնիւ հպատակ էր եկեղեցւոյն Հռովմայ՝ յամի տեառն 1533 անկուշեաց զնա վասն անձնահաճ կամաց արքային Հենրիկոսի Ը, յորմէ չէր մարթ այնմ ակն ունել. զի զառաջինն զիմանամարտ գրուածովք ասոխ հանդիսացեալ ընդդէմ մոլորութեանցն Լուտերի, արժանացեալ էր 'ի սրբոյ աթոռոյն կոչիլ Պաշտպան հաւատոյ ։

Սա նախ Հենրիկոս արքայ ամուսնացեալ ընդ Կատարինեայ դստեր Փերտինանտոսի թագաւորին Արագոնայ և Իզապելլա դշխոյին Կաստիլիոյ մօրաքեռ Կարոլոսի Ե, զամս ութուտասն եկաց ընդ նմա սիրով և խաղաղութեամբ և ստացաւ 'ի նմանէ երիս որդիս ։ Սակայն 'ի մեռանել երկուց առաջնոցն մնացեալ էր դուստր մի, և զի Հենրիկոս ցանկայր ունել և ուստր 'ի պայազատ թագաւորութեանն, յուսաբեկ կայր ստանալ զայն 'ի Կատարինեայ որ անցեալ էր զաւուրբք ։

Այս բնածին ցանկութիւն Հենրիկոսի արքայի չլինէր երբէք պատճառք բաժանել յամուսնոյ անտի իւրմէ, եթէ յընտանեաց թագուհւոյն օրիորդ ոմն Աննա Պոլենա անուն գեղեցկութեամբ իւրով և նենգապատիր հնարիւք չէր յինքն որսացեալ զսիրտ արքային, մինչև խնդրել ածել զնա իւր կնութեան. վասն որոյ խնամ կալաւ Հենրիկոս ունայնացուցանել զօրինաւորութիւն ամուսնութեան իւրոյ ընդ Կատարինեայ դշխոյի ։ Ընդ թելադրութեամբ Ուոլսեան կարդինալի ատենադպրին Անգղիոյ, որ 'ի նուաստ տոհմէ ամբարձեալ էր յայն աստիճան պատուոյ, աղերս մատոյց առ քահանայապետն Կղեմէս Է, և եցոյց նմա զանկա ւէր զօղ ամուսնութ՟է իւրոյ ընդ Կատարինեայ դշխոյի, իբր զի նա կանխաւ եղեալ էր կին եղբօր իւրոյ Արթուրայ վախճանելոյ. բայց քանզի երկրորդ ամուսնութիւն դշխոյին ընդ Հենրիկոսի եղեալ էր առանձնաշնորհ ներողամտութեամբ Յուլիոսի՝ դժուարին թուէր զի քահանայապետն Կղեմէս յանձն առնուցու անվաւեր առնել զհաստատեալն ՚ի նախորդաց իւրոց ։

Հանգամանք ժամանակին նպաստաւոր թուէին կատարման խնդրոյ Հենրիկոսի. քանզի Կղեմէս քահանայապետ յայնմ ժամանակի պաշարեալ գոլով յամրոց որոյ Հրեշտակապետին ՚ի Կարոլոսէ Ե, պէտս ունէր ձեռնտուութ՟է Հենրիկոսի արքայի, որ և խոստանայր զպաշտպանութիւն իւր և զօգնականութիւն ։ Քահանայապետն ոչ երկմտէր ՚ի վերայ կարօտութեան թագաւորին և անկեղծ խոստմանց նորա. սակայն գիտելով զանհեթեթ հրապոյրս կնոջ և զմարդկային տկարութեան, որ ժամանակաւ ևեթ մարթի բժշկել, խորհեցաւ յերկարաձգել զընթացս գործոյն ։ Եցոյց դարձեալ զհաճութ՟ի կատարման խնդրոյն՝ եթէ ստուգեսցի անվաւերութիւն առաջին ամուսնութեանն. և ՚ի քննութիւն խնդրոյս կարգեցան ՚ի քահանայապետէն գործակալք կարդինալն Վոլսեան, և կարդինալն Կամպէջջեան, երկոքին ևս մտերիմք թագաւորին ։

Յայս դժուարալոյծ խնդիր կարդինալն Կամպէջջեան տուեալ չափ զուն գործեաց ՚ի հաւանութիւն ածել զթագաւորն, և յօգնաթախանձ պաղատանօք աղերսէր ընդ թագուհին առնուլ զառաջս արկածից թշուառու՟ե, որ ՚ի վերայ կայր տէրու՟են Անգղիոյ, և թերևս համօրէն եկեղեցւոյ, եթէ խստասիրտ յամառութ՟բ պնդեսցէ նա զօրինաւորութիւն ամուսնութեան իւրոյ ընդ Հենրիկոսի ։ Սակայն ՚ի դերև ելին ջանք կարդինալին. զի թագաւորն յափշտակեալ ՚ի կնոջ՝ տռփէր ՚ի գլուխ տանել զխնդիրն զայն և զդատ, և թագուհին վստահացեալ յիրաւունս իւր՝ ցանկայր ՚ի դատ ընդ առնն ելանել ։ Երկոքին միանգամայն համարէին զանձինս իրեանց անդատապարտս. վասն որոյ գրեցան նամակք արքունի կնքով ըստ սովորութեանն ՚ի սկզբնաւորութիւն դատին, և կոչեցան յատեան թագաւորն և թագուհին ։ Յայն հանդէս մատոյց թագուհին զօրինակ կոնդակի անօրինին Յուլիոսի քահանայապետին ընդարձակագոյն քան զոր ատենակալք ունէին, և յորոյ վերայ հանդերձեալ էին դատաստան առնել ։

Հենրիկոսի կասկածեալ թէ այն օրինակ խարդախեալ իցէ, խնդրեաց ածել 'ի մէջ զբնագիրն. այլ քանզի պահեալ կայր այն 'ի Սպանիա, և տէրութիւնն չկամեցաւ տալ դեսպանին Անգղիոյ, ատենակալք մտին 'ի տագնապ, և յետ բազմադիմի պատճառս 'ի մէջ բերելոյ 'ի հաստատութիւն և յեղծումն վաւերականութեան այնր օրինակի անօրինին՝ լաւ համարեցան առաջի առնել զխնդիրն քահանայապետին ։ Խորհեցան դարձեալ յուշ առնել նմա, զի փոխանակ 'ի Հռոմ զդատն կոչելոյ՝ որպէս կամէին՝ առաքեսցէ կոնդակ մի ըստ խնդրոյն զորս թելադրեցին նմա ։ Եւ յաւելին ևս յայտ առնել թէ ինքեանք յայնմ ժամանակի խնամ տանին յորդորական և համոզիչ բանիւք հաւանեցուցանել զԹագուհին հրաժարել յաշխարհէ և առանձնանալ 'ի մենաստան ինչ միանձնուհեաց, և ասէին եթէ իցէ այս միակ դարման և հնարք քաղցրութեամբ առաջարկելոյ զայն խնդիր, և հանելոյ զկամս Թագաւորին, որ յամաց հետէ տագնապեալ էր 'ի խղճէ մտացն, և որ ըստ օրէ յաւելին վէճք յաստուածաբանս և յիրաւաբանս ։

Զանգիտեալ քահանայապետին զի մի դեսպան իւր դաւեսցի նենգութեամբ, գրեաց առ նոսա կոնդակ յորում յայտ առնէ՝ թէ ինքն յօժարամիտ իցէ յամենայնի հաճել զկամս Թագաւորին, բայց չկարէ ընդդէմ խղճի մտաց իւրոց գործել ինչ, և ակներև եղծանել զօրէնս արդարութեան. և զի խնդիրք Հենրիկոսի, ասէ, կարի անիրաւացիք են, և չէ իսկ հնար ներողամիտ այնպիսի լինել առանց գայթակղեցուցանելոյ զքրիստոնեայս համօրէն, և զի կայսրն և Թագաւորն Հունգարիոյ բողոք արկին, ասէ, կոչել զդատն 'ի Հռոմ, չէ մարթ մերժել զիրաւացի խնդիրս նոցա, թէպէտ ևս ինքն հրաժարէր պատճառելով զտկարութիւն մարմնոյ, որով չէր ձեռնհաս միտ դնել քննութեան ըստ հայցուածոց նոցա. վասն որոյ խորհիմ յապաղել զորոշումն խնդրոյս 'ի չբարկացուցանել զՀենրիկոս. և յորդորէր զատենակալս , զի և ինքեանք յերկպառակեցին զայն ոչաւի և մարթ իցէ ։

Այլաքիկ էին խորհուրդք մտաց Կղեմայ քահանայապետի յաղագս խնդրոյն Հենրիկոսի , վասն որոյ հարկեցաւ առնել զդատ նորա 'ի Հռոմ քաղաք․ և զի Հենրիկոս ոչ 'ի դէպ վարկաւ հնազանդել կոչմանն , յայնժամ և քահանայապետն քանզի յօժարամիտ էր 'ի բնէ յապաղել զիրսն , առաջի արար բազմապատիկ երկմտութիւնս զխնդրոյ արքային , և յաւել ևս ասել եթէ յորոշումն այնոցիկ բազում ժամանակաց պէտք էին ։

ԳԼՈՒԽ Ի․

Կղեմէս չառնու յանձն լուծանել զամուսնութիւն Հենրիկոսի արքային ։ — Յանդգնութիւն Կրամմերի 'ի տալ վճիռ լուծանելոյ ամուսնութեան նորա , և թագադրութիւն Աննայի Պոլենայ ։

ՀԵՆՐԻԿՈՍ Ը յափշտակեալ 'ի կրից ցանկութեան՝ անհամբեր մտօք տագնապէր յոյժ ընդ յերկարաձգութիւն կատարման խնդրոյն իւրոյ ։ Վասն որոյ Թովմաս Կրամմեր աստուածաբանն Կանտորբերիոյ , տեսեալ զյապաղումն որոշման քահանայապետին , խորհուրդ ետ արքային հարցաքննել և առնուլ զկարծիս իմաստուն աստուածաբանից և ամենայն համալսարանաց Եւրոպիոյ , յանձն առեալ ինքնին 'ի գլուխ հանել զգործն ։ Վասն որոյ ուղևորեցաւ 'ի Գաղղիա , յԻտալիա և 'ի Գերմանիա ժողովել զկարծիս նպաստաւորս կամաց թագաւորին․ և իբրև յաջողեցաւ նմա գտանել բաւականին , դարձաւ յԱնգղիա և ընտրեցաւ 'ի թագաւորէն յարքեպիսկոպոսութիւն Կանտորբերիոյ ։

Արդ իբրև ամբարձաւ նա յայն աթոռ , ձեռն արկ քննել զդատն և լուծանել զկապ ամուսնութեան արքային․ քանզի թախանձէր յոյժ զնա թագաւորն․ քանզի Աննա Պոլենա չորեքամսեայ յղի գոլով՝ չէր մարթ գաղտնի մնալ անօթոյն ։ Արքեպիսկոպոսն տեղեակ գաղտնութեան իրացն , գրեաց առ թագաւորն նամակ յայտարարութեան՝ անվաւեր և ապօրինի համարելով զամուսնութիւն նորա ընդ Կատարինեայ դշխոյի , և յաւել ևս ծանուցանել նմա թէ ինքն իբրև հովիւ հոգևոր չկարէ հանդուրժել և ներողամիտ լինել այսպիսում անկարգութեան ։ Վասն որոյ կոչեաց զԹագաւորն և զԹագուհին գալ յատեան իւր 'ի Տունսթէր աւանի յամին 1533 'ի քսաներորդ աւուր ամսեանն մայիսի ։ Արդ 'ի նմին սահմանեալ աւուր Կրանմեր գնաց անդր հանդերձ եպիսկոպոսօք Լոնդինի, Վինթերի, Պաթենայ, Լինքոլնի և բազում աստուածաբանօք և իրաւագէտ արամբք ։ Թագաւորն երևեցաւ ընդ ձեռն գործակալի իւրոյ, իսկ Թագուհին չկամելով գնալ անդր՝ յետ երրեակ հրաւիրանաց ըմբոստ համարեցաւ ։ Այս մատուցան 'ի մէջ բազմադիմի զրուածք պատշաճեալք առ այն խնդիր ։ և յետ ընդերկար քննութեան Կրանմեր ունայնացոյց զամուսնութիւն Հենրիկոսի ընդ Կատարինեայ դշխոյի, յայտ առնելով թէ ամուսնութիւնն այն անդստին 'ի սկզբանէ անվաւեր լեալ իցէ իբր հակառակ օրինացն Աստուծոյ ։ Ի վճռի անդ իւրում կոչեաց զանձն գեսպան որոյ աթոռոյն՝ ըստ սովորութեան արքեպիսկոպոսայն Կանտորբերիոյ ։

Այսպէս Կրանմեր որ 'ի սրտէ արհամարհէր զքահանայապետն և զգահն սուրբ՝ առ 'ի հաճել զԹագաւորն եառ զանձամբ զպատիւ իշխանութեան որ յաւելոյր նմա զօրութիւն յարդարացուցանել զանգամնելի կիրս Թագաւորին ։ Եւ յետ հնգից աւուրց իրաւացուցեալ հաստատեաց զգաղտնի ամուսնութիւն Հենրիկոսի ընդ Աննայի Պոլենայ ։ և նա յաւուրն երկրորդի փոխադրեցաւ յարքունիս Վիտէհալի զգեստք դշխոյի և մեծահանդէս շքով ։ Յառաջին աւուր ամսեանն յունիսի Աննա Պոլենա գնաց հետիոտս 'ի վերայ մեծագին դիպակաց սփռելոց 'ի փողոցս մինչև յեկեղեցին, ուր կատարեցաւ շքեղափառ թագադրութիւն նորա ։ և յետ հանդիսին եղեն կոչունք ուրախութեան, և զկնի ամսոց ինչ ընծայեաց 'ի լոյս զդուստր մի, որում անուն եդաւ Եղիսաբեթ ։

Ի հրատարակել վճռոյ լուծման ամուսնութեանն՝ Հենրիկոս ազդ արար Կատարինեայ դշխոյի չկարել այնուհետև զանուն Թագուհւոյ, և սպառնացաւ զրկել 'ի ժառանգութենէ զդուստր նորա զՄարիամ, թէ չանսասցէ հրամանաց իւրոց ։ Բայց ոչինչ իւիք կարաց խախտել զԹագուհին 'ի խորհրդոց մտացն ։ քանզի մինչև ցմահ իւր պնդէր զվաւերութիւն ամուսնութեան իւրոյ. յայնժամ Հենրիկոսի արքայի մոռացեալ զգութ հայրական, սկսաւ խստիւ վարել ընդ դստեր իւրում օրինաւորին Մարիամու, և արգել ՚ի տեսութենէ և յայցելութենէ մօրն. միանգամայն զրկեաց զնա և ՚ի ժառանգութենէ թագաւորութեան։

ԳԼՈՒԽ ԻԱ.

Հենրիկոս արքայ նզովի ՚ի քահանայապետէն, և նա ընդվզեալ ապստամբէ յեկեղեցւոյն Հռովմայ։

ԿԱՅՍՐՆ Կարոլոս զայրացեալ ընդ անարգանս մօրաքեռն իւրոյ Կատարինեայ դշխոյի, ստիպեաց զքահանայապետն ընդ բանիւ անել զՀենրիկոս Ը. թէպէտ և Փրանկիսկոս Ա. արքայն Գաղղիոյ գուն գործէր աղերսանօք խափանել զվճիռն, բայց Կղեմէս Է. հարկ համարեցաւ վարել զզէնն հոգևոր. վասն որոյ հրապարակաւ նզովս կարդաց ընդդէմ թագաւորին Անգղիոյ։ Յայնժամ մոլեգին կատաղութ̃բ զայրագնեալ Հենրիկոսի և ցնորեալ ՚ի միտս, առանց ինչ պատկառելոյ յաթոռոյն Հռովմայ՝ կոչեաց զանձն Գլուխ անգղիական Եկեղեցւոյ։ Եւ ապա հաւանախոհք նորա ՚ի ժողով գումարեալ սահմանեցին զձև երդմանն հնազանդութեան, զոր պարտ էր նոցա առնել տալ այնր նորահնար պատուոյ և իշխանութեան թագաւորին իւրեանց. և ՚ի ժամանակէ անտի և այսր պետութիւն այն հերձեալ բաժանեցաւ յուղղափառ եկեղեցւոյ, և ըստ վկայելոյ բազմահմուտն Պոսիւէի՝ անկարգ ցանկութիւն թագաւորին որոշեաց զԱնգղիա ՚ի սրբոյ աթոռոյն, յորմէ երբեմն ընկալեալ էր զհաւատս ճշմարտութեան. և վճիռ նզովից քահանայապետին թէպէտ և իրաւացի, սակայն զահավէժ, պատճառք եղև աւաղելի արկածիցս։ Հենրիկոս արքայ ջանահնար եղև և ևս ամրապնդել զապստամբութիւն իւր ՚ի Հռովմայ. վասն որոյ երանելի եպիսկոպոսն Ռոչեստըր քաղաքի Յովհաննէս Փիշէր, առ որ Պօղոս Գ. քահանայապետ առաքեալ էր զպատիւ կարդինալութեան մինչ կայր նա

՚ի բանտի, և հռչակաւոր ատենադպիր տէրութեանն Թովմաս Մորոս, գլխատեցան, զի չառին յանձն մատուցանել Հենրիկոսի զպատիւն զոր յափշտակեալ էր։ Ապա սկսաւ Հենրիկոս ՚ի կիր առնուլ զբռնաբարեալ կարծիս իւր. անգութ բռնաւոր եկաց նա ընդդէմ այնոցիկ որք չէին համաձայն ընդ նա, թէպէտ և ինքն սովոր էր փոխել յաճախ զկարծիս իւր։ Մոլեգին ոսոխ էր եկեղեցւոյ և քահանայապետին, սակայն և այնպէս կատաղի նախանձախնդիր մնաց հաւատոյ սահմանելոց ՚ի նոյն իսկ յեկեղեցւոյ։

Թագուհին Կատարինէ տարագրեալ ՚ի վշտալից հոգւոց աստի՝ վախճանեցաւ յամին 1536։ Նոյն օրհաս մահու անարգական զահընկէցութեամբ վիճակեցաւ և Աննայի Պոլենայ, որ պատճառք եղեալ էր տարապագին վշտաց և մահուան Կատարինեայ դշխոյի. զի Հենրիկոս արքայ շարժեալ ՚ի նախանձու պատուոյ իւրոյ, և իմացեալ եթէ Աննա կաթոգին տարփմամբ կապեալ իցէ ընդ ումեմն աւագի յարքունիս իւր, ետ գլխատել զնա հրապարակաւ. և յաւուրն երկրորդի էառ ՚ի կնութիւն զօրիորդն զՅովհաննա Սէյմուր, առ որ կանխաւ յօժարեալն էր անկարգ տարփանօք։

Իսկ քանզի բազումք յեկեղեցականաց և մանաւանդ ՚ի կրօնաւորաց հակառակ կային օրինադրութեանն որով ոչնչացուցանէր յԱնգղիա զիշխանութիւն քահանայապետին Հռոմայ, ցասուցեալ ընդ այն Հենրիկոսի՝ գրաւեաց յարքունիս զամենայն աբբայութիւնս և կործանեաց զոգցես զամենայն մենաստանս կրօնաւորաց։ Իսկ ապա ՚ի ցուցանել զնախանձ իւր յանվթար պահպանութիւն ուղիղ դաւանութեան հաւատոյ նախորդաց իւրոց, խնամ կալաւ պատուհասել հրով զհերետիկոս. և զի մի՛ սպրդեսցի երբէք փոփոխութիւն ինչ ՚ի հաւատս և ՚ի կրօնական ծէսս, յամի տեառն 1539 ժողովեաց զկղերն իւր և զխորհրդականս տէրութեանն, որք միաբան հաւանութեամբ յօրինեցին դաւանութիւն ինչ հաւատոյ՝ հակառակ ամենեւին նորաղանդից լուտերականաց. և բանք դաւանութեանն բովանդակին ՚ի վեցեսին յայտնի գլուխս բանից։

Նախ՝ թէ ՚ի խորհուրդ պատարագին յետ սրբագործութեան հացին և գինւոյն՝ ոչ ևս մնայ ՚ի խորհրդեան գոյացութիւն հացի և գինւոյ, այլ մարմին և արիւն Քրիստոսի է անդ ընդ տեսակաւ հացի և գինւոյ ։

Երկրորդ՝ թէ սուրբ գիրք ոչ պատուիրեն և կամ հարկ 'ի վերայ դնեն հաղորդել ընդ կրկին տեսակօք, և թէ աւանդ այնր մարթ է ժամանել փրկութեան. զի յերկաքանչիւր տեսակսն են մարմին և արիւն Քրիստոսի ։

Երրորդ՝ թէ աստուածային օրէնք ոչ թոյլ տան քահանայից ամուսնանալ յետ ձեռնադրութեան իւրեանց ։

Չորրորդ՝ ըստ նոյն աստուածային օրինաց պահել պարտ է զուխտ կուսութեան, եթէ խոստացեալ իցէ ոք զայն Աստուծոյ ։

Հինգերորդ՝ թէ պարտ է հանապազորդել զսովորութիւն թիւ պատարագաց, որք և 'ի սուրբ գրոց ունին զիւրեանց սկիզբն և օգտակարք են յոյժ ։

Վեցերորդ՝ թէ խորհրդական խոստովանութիւն մեղաց օգտակար և պիտանի է յոյժ, և զկիրառութիւն նորա անխափան պարտ է պահել յեկեղեցւոջ ։ Բայց որպէս գեղեցիկ իմաստասիրէ Պօսիւէ, ո՞ առիթեսցի 'ի խղճէ մտաց հպատակել 'ի հաւատոյս՝ վճռոյ և օրինաց որոց ամենայն հաստատութիւն 'ի հնարիմաց քաղաքավարութեան է և 'ի հրամանս թագաւորաց, որոց զլացաւ Աստուած զայն իշխանութիւն ։

Հենրիկոս թէպէտ և ջանահնար լինէր հաստատել զօրինադրութիւնս իւր՝ մահու չարաւ դատեալ ոչ միայն զուղղափառս որք անգոսնէին զպատիւ գլխաւորութեան եկեղեցւոյն, այլ և զլուտերականս և զզուինկլեանս որք հակառակէին մասանց հաւատոյ, սակայն և այնպէս ամենայն ազգք մոլորութեանց առ սակաւ սակաւ մուտ գտին յԱնգղիա, մինչև վարանել ժողովրդեան՝ և չգիտել թէ որում կանոնի միաբան գտցին յետ մերժելոյ նոցա զաթոռ սրբոյն Պետրոսի ։

Օրինադրութիւնքն հրատարակեալք իշխանութեամբ թագաւորին և ժողովոյ խորհրդականաց՝ կոչեցան Օրէնք արեան՝ 'ի պատճառս ծանր պատուհասիցն ընդ որով անկանէին նոքա՝ որք միանգամ բանիւք կամ գրովք հակառակէին այնոցիկ ։ Յանցուցելոցն առ մի նուազ պատուհաս բանտի 'ի վերայ կայր. իսկ վերստին սահելոց 'ի նոյն յանցանս՝ մահ դատն ։

Ի նմին հրովարտակի ժողով խորհրդականացն ունայնայուցանէր զամուսնութիւն քահանայից, և 'ի մահ պաշտպանէր զեկեղեցականսն որք ոչ հրաժարէին 'ի կանանց իւրեանց ։ Վաճառէր արքեպիսկոպոսն Կանտորբերիոյ որ անօրէն թելադրութեամբն գործադիր եկաց անկարգ կրից արքային, անկաւ 'ի վտանգ կորստեան կենաց վասն ամուսնութեան իւրոյ ․ և 'ի կշտամբել երբեմն զնա արքայի, եղև հնարս ազատութեան ստայօդ բանիւք, իբրու այն թէ արձակեալ իցէ զկին իւր 'ի Գերմանիա 'ի խափանելոյ անտի ամուսնութեան քահանայից ։

ԳԼՈՒԽ ԻԲ․

Մահ Հենրիկոսի Ը ։

ՅԱՒՈՒՐՍՆ յայնոսիկ յարեաւ աղմուկ շփոթի 'ի Լինգոն և յԱշողք սակս փոփոխութեցն զորս եմոյծ արքայ Հենրիկոս, այլ նա բուռն զօրութեամբ հանդարտեաց զխռովութիւն ․ քանզի և ոչ որ իշխէր երբեք հակառակել նմա, և ժողով անգամ խորհրդականաց Անգլից չհամարձակէր զդէմ ունել կամաց նորա, որպէս և ոչ որ 'ի պաշտօնատարացն ։ Ինքնիշխանաբար և ըստ հաճոյս անձին գործէր զամենայն, և ժողովն խորհրդականաց հաստատէր ևեթ զկամս նր ։ Իսկ թէպէտ և խորհրդականք և հպատակքն միանգամայն երկպառակք յուրեանս էին 'ի խնդիրս կրօնի, այլ ամենեցուն առ հասարակ ընկճեալ յահէ նորա՝ խնամ տանէին զգուշանալ 'ի վտանգէն՝ որ առաջի կայր նոցա եթէ երբէք հակառակէին կամաց նորա ։

Կուսակցաց հերձուածոյն ակն կալեալ եթէ Հենրիկոս սկիզբն առնելով վերանորոգումն կրօնի անցցէ ըստ չափ, լաւ համարէին զգուշանալ 'ի զայրացուցանելոյ զնա ․ իսկ ուղղափառք չհամարձակէին յայտնապէս ընդդէմ կալ բանից արքային, զի մի հակառակութեամբն առաւել ևս 'ի մոլեգնութիւն գրգռիցի ։ Վասն այսորիկ խաւարամած աղջուն կալեալ ունէր զամենեսին, որով բովանդակ աւերութիւն իբր առ հարկի և յակամայ կամս բռնադատեցաւ ճանաչել զհօգևոր իշխանութիւն զոր յանդէպս սեպհականեալ ունէր նա անձին ։ Սակայն *ինքն որ ըստ օրէ հաշեալ և տագնապեալ ՚ի խղճէ մտացն և յանձկութենէ, որովք՝ մեռաւ յամին* 1547.

Հենրիկոս ընդ վեցեան կանայս զուգեցաւ ամուսնութեամբ. նախ ընդ Կատարինեայ դշխոյի յորմէ ծնաւ զարքայազն Մարիամ. երկրորդ՝ ընդ Աննայի Պոլենայ, որ եկաց մայր Եղիսաբեթի. երրորդ՝ ընդ Յովհաննայ Սէյմուր, որ ծնաւ զԵդուարդ զիշխանազն Կալլէսի. չորրորդ՝ ընդ Աննայի Քլէվէս, զոր եթող փութով յետ վեցամսեայ ամուսնութեան. հինգերորդ՝ ընդ Կատարինեայ Հովարտ, զոր և ետ գլխատել վասն շնութեան. վեցերորդ՝ ընդ Կատարինեայ Պարրայ այրւոյ, առ որով մեռաւ Հենրիկոս։ Աւուրբք յառաջ քան զմահ իւր արար կտակս ինչ բարեպաշտութեան, բայց անբաւականս ՚ի հատուցումն անթիւ և անհամար յանիրաւութեանցն զորս արար ՚ի կեանս իւր։ Քանզի մոլեգին գազանութեամբ ետ գլխատել զերկուսին կանայս իւր զԱննա Պոլենա և զԿատարինէ Հովարտ. անգութ բռնաւորութեամբ սպան կարդինալ մի և եօթանասուն և եօթն եկեղեցականս, յորս ՚ի համար անկանին և եպիսկոպոսունք և աբբայք և առաջնորդք կամ ժողովրդապետք, երկոտասան դուքս կամ կոմս, ութ և տասն պարոնս կամ ասպետս։ Թող զբազմութիւն ժողովրդոց՝ որք մատնեցան ՚ի կախաղան մահու և յանխուս տանջանաց և ՚ի ջրահեղձոյց պատուհաս, որովք պատճառք եղև անշքութեան Անգղիոյ։

ԳԼՈՒԽ ԻԴ.

Մահ Լուտերի։

ԱՄԱՒ *յառաջ քան զմահ Հենրիկոսի արքայի մեռեալ էր Լուտեր յամի տեառն* 1546 *՚ի հասակի վաթսուն և երից ամաց, ախտացեալ բուռն տապով ներքին ախտնգանաց։ Եկաց նա արդարև այր ճարտարամիտ և ներհուն ՚ի վարժս գերմանացի բարբառոյ. և ՚ի բարեմասնութիւնս իւր բազմապատիկս ապստամբ եղեալ՝ յանդգնեցաւ աղմուկս յարուցանել ՚ի խնդիրս կրօնի և հաւատոյ։ Սակայն անսանձ լրբութիւնն նորա և անկարգ* կենցաղավարութիւն բնաւ իսկ անյիշատակ առնէին զնա՝ եթէ չէր զինեալ ընդդէմ եկեղեցւոյ ։

Ապաքէն նոքին իսկ բողոքարկու լուտերական պատմաբանք 'ի գովել անդ զնա և 'ի կոչել՝՝ Լուսափայլ պայծառութիւն եկեղեցւոյ, հաստատարան ազատութեան, փող ազգային ժողովրդեան, խթան ընդոստուցիչ 'ի մահահրաւէր թմրութենէ ,,, ստիպեցան խոստովան լինել զանզուսպ ստահակութի բարուց նորա ։ Յանձնապաստան էր նա 'ի կարծիս իւր և յանդուգն, սէգ և ամբարհաւաճ, և յամառ 'ի բանսն. և յամօթ առնել զհակառակորդսն կամեցեալ՝ դառն և տմարդի բանիւք թշնամանէր զնոսա ։ Ստիպէր իմն զամենեսին իւրոյն հաւանել կարծեաց, և կշտամբեալ անարգէր զամենեսին առ հասարակ որք հակառակք էին իւրում վարդապետութեան. և մոլեգին կատաղութեամբ 'ի գլխի հարկանէր նոցա առանց ինչ ակն ածելոյ 'ի պատուոյ նոցա և յարգեանց ։

Անօրէնս այս որ ելից խառնակութեամբ զԵւրոպա, և յանդուգն ունայնամտութեամբն էջ 'ի հող, արար կտակ անհեթեթ, յորում յիշատակին և անձնանի բանքս. ՝՝Երկինք, երկիր և սանդարամետք ծանեան զիս, և է յիս զօրութիւն իմն այնչափ՝ մինչև ինձ միայնոյ հաւատալ ամենեցուն ,, ։ Ասէր զանձնէ եթէ Աստուած Հայր աւանդեալ իցէ նմա զաւետարան որդւոյ իւրոյ. ստորագրութիւն նորա 'ի գիրս իւր էր այսպէս. ՝՝Տէր Մարտինոս Լուտեր՝ նօտար Աստուծոյ ,, ։

Համախոհ կուսակցաց նորա համարեալ զնա իբր երեքտասաներորդ առաքեալ, զկնի մահուանն մեծապէս պատուեցին զնա քանզի դուքսն Սաքսոնիոյ զմարմին նր ետ փոխադրել 'ի Վիրթեմպերկ քաղաք, և կանգնեաց նմա անդէն շիրիմ հոյակապ 'ի սպիտակ մարմարեայ քարանց, և առ նովաւ կանգնեցան և արձանք երկոտասան առաքելոց, իբրու այն թէ և Լուտեր հաւասար իցէ նոցին և համանման ։

Եթող իւր ժառանգ բազում որդիս 'ի Կատարինեայ Բորեայ միանձնուհւոյ, զոր հանեալն էր 'ի մենաստանէ և ամուսնացեալ ընդ նմա ։ Ամուսնութի Լուտերի անգոսնեալ էր յուղղափառաց՝ իբրու սրբապղծութիւն, և 'ի լուտերականաց որպէս գործ անվայել, զի ամուս-

նացեալ էր յամին 1526, յայնպիսում ժամանակի յորում հայրենիք նորա 'ի տառապանս կային յերեսաց բազմադիմի թշուառութեանց ։

ԳԼՈՒԽ ԻԴ.

Համառօտ տեսութիւն զաղանդոյն Լուտերի, և զժամանակէն յորում ծագեցաւ այս մոլորութիւն, և զբազմապատիկ արգասեաց նորա ։

ԸՍՏ *աւանդելոյ մատենագրաց վեշտասաներորդի դարուս յորժամ Լուտեր սկսաւ մարտնչել ընդդէմ ներողութեանց, սպրդեալ մտեալ էին յուղղափառ եկեղեցւոջ անկարգութիւնք ինչ որոց հարկ 'ի վերայ կայր ուղղութեան ։ Զի թէպէտ եկեղեցին Քրիստոսի անարատ էր 'ի վարդապետութիւնս հաւատոց և բարի վարուց, մինչև չհամարձակել բողոքականաց ստգտանել իւիք զուղղափառս, բայց թուլութիւնն և գաղջութիւն հաւատացելոց 'ի բարեկարգութիւնս եկեղեցւոյ՝ պատճառք եղև զայթակղութեան նոցա և արհամարհութեան ։*

Բազում արք ականաւորք իմաստնագոյնք քան զԼուտեր և համբաւեալք բարեպաշտութ̃բ՝ ցանկային և խնդրէին 'ի նախնին բարեկարգութիւն վերածել զհաւատացեալս․ բայց և զայն քաջ գիտէին՝ եթէ եկեղեցւոյ միայնոյ է անկ խնամ ունել այնմ նորոգութեան․ և զի ոչ ոք բայց 'ի նմանէ կարէ ձեռնամուխ լինել երբէք յայն գործ ։

Վերանորոգութիւն յոր Լուտեր յանդգնեցաւ ձեռներէց լինել, ոչ այլ ինչ էր՝ բայց եթէ վեր 'ի վայր տապալել զկարգաւորութիւն եկեղեցւոյ, քանդել զմենաստանս, 'ի մեղկութիւն զմիայնակեացսն յորդորել, աղդելով յունկն նոցա զշաղիր վարդապետութիւնն՝ որք ըստ խոստովանելոյ և նոցին իսկ աշակերտելոցն Լուտերի՝ էին պատճառք ունայնացուցանելոյ զկանոնս բարի վարուց, և խախտելոյ զհիմունս աստուածազգեցիկ և ուղղափառ կրօնից․ յայսպիսեաց սակի համարել պարտ է զաղճատանս նորա 'ի վերայ անձնիշխան ազատութեան և նախասահմանութեան ։

Ազատութիւնն յոր համարձակեցոյց անխտիր զամենայն քրիստոնեայս՝ ըստ հաճոյս մեկնել զսուրբ գիրս, և ոչ անսալ հպատակութեան եկեղեցւոյ, պատճառ եղև ընձիւղելոյ խառն աղանդոց և մոլորութեանց որք անչքացուցին զԳերմանիա, և 'ի վեր հանին դարձեալ զթունալից վարդապետութիւնս Վիկլեփեայ 'ի վնաս հաւատոյ և հանդարտութեան ժողովրդոց։

Լուտեր յանդգնեցաւ ձեռն արկանել յայն վերանորոգութիւն առանց իրիք իշխանութեան և առանց օրինաւոր առաքելութեան. և չունէր առաւելագոյն իրաւունս քան զոր ունէին կրկնակնունքն անուանեալ հերձուածողք 'ի կրկին մկրտել զքրիստոնեայս, ընդդէմ որոց մաքառէր նա ինքն Լուտեր յասելն՝ թէ յումմէ և ուստի ունիցին զառաքելութիւն։

Ի կարծեցեալ վերանորոգութեան անդ Լուտերի չէ մարթ գտանել ոչ զսէր, ոչ զքաղցրութիւն և ոչ զպատկառելին զայն երկայնմտութիւն, որք յայտ առնեն զնիշ առն առաքելոյ յԱստուծոյ. նա մանաւանդ յանդուգն ամբարտաւանութիւն և յանձնապաստանութիւն տեսեալ էր նա և յիւրոյն անգամ աշակերտաց։ Ուխտադրուժ գտաւ առ Աստուած, ինքնին էառ իւր կին 'ի գայթակղութիւն հասարակաց, և թոյլ ետ բազմակնութեան սահմանապետին Հասսիոյ։ Ի բանս նորա չիք վարդապետականն այն վսեմ օծութիւն, ոչ պատիւ ազնուաշուք, ոչ գութ զօրաւորական և ոչ սէր առաքինութեան. այլ անխտիր յաճախեն 'ի նմա անվայել կատականք և թշնամանալից բանք, զորս քաջ գիտեն որք միանգամ ընդ բանս գրոց նորա անցեալ իցեն. որպէս և գիտակք պատմութեան անցից վերանորոգութեան՝ գրելոյ 'ի նոցունց իսկ 'ի բողոքարկուաց՝ 'ի Մելանքթոնէ և յԷրասմոսէ։

Առ կենդանութեամբ Լուտերի ծագեցան յաշակերտս նորա երկպառակութիւնք և վէճք. իսկ յետ մահուն իմաստունքն 'ի նոսա ջանահնար եղեն միաբանել զերկպառակ կարծիս իւրեանց, բայց չեղև հնար. վասն որոյ 'ի վեր ելին ազգի ազգի աղանդապետք նորանոր մոլորութեանց, յորոց ոմանք յաւելին և այլք կրճատեցին և մեղմացուցին ինչ ինչ 'ի վարդապետութենէն Լուտերի. որպիսիք ոմանք եղեն Պաղոմա-

կալվինեանքն , Սվինկլեանք , Փլաւիանեանք , Օսիանդրեանք , Անտարբերեայք , Ամսդորֆեանք , Մաժիորեանք և այլք յոլովք ։ Յաղմուկս անդ աշակերտելոցն իւրոց՝ մեռաւ Լուտեր սնոտի և աւաղելի փառօք , և ծաւալեալ տարածեաց զթոյնս մոլորութեան իւրոյ 'ի մի մասն սահմանաց Գերմանիոյ ։

Կարոլոս կայսր , որ զառաջինն ոսոխ գտաւ և վրէժխնդիր եկաց վարդապետութեանն բողոքարկուաց՝ բռնադատեցաւ ապա առ հարկի հնարս հնարել հաշտեցուցանել ընդ իւր զապստամբեալսն յիւրմէ . և զարման հնարաւոր համարեցաւ 'ի խաղաղել զխռովութիւնն ծագեալս 'ի պատճառս կրօնի՝ յօրինել դաւանութիւն ինչ նոր բովանդակիչ կարևոր մասանց հաւատոց և կարգաւորութեան իրաց ինչ՝ զորոց հակառակութիւն էր ընդ ուղղափառս և ընդ բողոքարկուս ։ Առ 'ի գլուխ հանել զխորհուրդս կայսեր ընտրեցան Յոհաննէս Փլուկ և Միքայէլ Հելտինկ աստուածաբանք եկեղեցւոյն Հռոմայ և Յոհաննէս Ակրիգոլայ աստուածաբան լուտերական , քանզի էին սոքա այրք անուանաւորք գիտութեամբ , նախանձախնդիրք խաղաղութեան հասարակաց ։

Արդ իբրև կատարեցաւ յօրինուած առաջարկեալ իրացն , հանաւ 'ի հանդէս համախմբի կայսերական ժողովոյն Աւգուսթայի յամին 1548 , որ յետ ընթեռնլոյ առաքեցաւ 'ի կայսերէն առ քահանայապետն Պօղոս Գ , որ արկ զայն ընդ անաչառ քննութեամբ ։ Այս գիր դաւանութեան բաց 'ի համաձայն ինչ բացատրութեանց՝ այլովք մասամբք էր ըստ ուղղափառ վարդապետութեան կաթուղիկէ եկեղեցւոյ ։ Զի հասարակութեամբ դաւանէին 'ի նմա ամենայն մասունք հաւատոյ վկայութեամբ սուրբ գրոց , և պատուիրեալ լինէին պահպանութիւնք ամենայն արարողութեանց եկեղեցւոյ , զորս բողոքարկուք մերժեալ էին 'ի սպառ ։ Բայց սակայն 'ի շահել զսիրտս թիւրելոցն յուղղութենէ՝ 'ի վերջոյ յաւելեալ կայր թոյլտուութիւն ընդունելոյ զսուրբ հաղորդութիւնն ընդ կրկին տեսակօք , որպէս և ներումն ամուսնութեան քահանայից՝ հանդերձ յայտարարութեամբն՝ թէ այս թոյլտուութիւն շնորհեալ լինի առ տկարութեան նոցա 'ի քահանայից և առ ժամանակ մի եւեթ. սակայն և այնպէս հերքեցաւ դաւանութիւնս այս 'ի քահանայապետէն ։

Բայց 'ի վերայ այսր ամենայնի համարձակեալ Կարոլոսի Ե. յամին 1546 եհան հրովարտակ, յորում պատուիրէր զի ամենայն լուտերականք որ կցեն 'ի տէրութեան կայսեր՝ թէպէտ և չառնուցուն յանձն միաբանել ընդ կաթուղիկէ եկեղեցւոյ, սակայն հարկ 'ի վերայ կայ վարել նոցին սահմանեալ կարգաւորութեամբ մինչև ցորոշումն ընդհանուր ժողովոյ ։

Բազումք յողջամիտ ուղղափառ աստուածաբանից նախատէին և արհամարհութիւն եկեղեցական իշխանութեան համարեալ զհրովարտակն, նմանեցուցին զայն հրամանագրին Զենոնի կայսեր, և դաւանութեան Հերակլեայ ։ Նոյնպէս և նախանձաւորքն 'ի լուտերականաց ոչինչ նուազ քան զուղղափառսն մերժեցին զայն ձև դաւանութեան Կարոլոսի՝ զանուանեալն ԻՆԹԷՐԻՄ. և ընդդէմ ստիպողական բռնադատութեան կայսեր յընդունելութիւն այնր, յայտնի և անպատրուակ ցուցին՝ թէ ոչ իւիք օրինակաւ կամք են նոցա ընդունել զայն ։ Որք միանգամ բացէ 'ի բաց մերժեցինն՝ կոչեցան Խստակրօն լուտերականք, իսկ որ ընկալանն անուանեցան Կիսալուտերականք, զի պատշաճ վարկանէին յարմարել զանձինս հանգամանաց ժամանակին ։

ԳԼՈՒԽ ԻԵ.

Հնարիմաց ճիգն լուտերականաց, և մահ Կարոլոսի կայսեր ։

ԿՐԿԻՆ այսոքիկ դասք լուտերականաց, զորոց ահա կանխեցաք ասել, սոսկ և հակառակամարտ գոլ ուղղափառաց, ջանահնար լինէին իշխել և զօրանալ 'ի վերայ նոցա ըստ կանուխ ըղձից իւրեանց ։ Մաւրիկիոս կայսրընտիր դուքսն Սաքսոնիոյ կուսակից լուտերականաց՝ դաշն եդ 'ի ծածուկ ընդ Հենրիկոսի Բ արքային Գաղղիոյ և ընդ իշխանս ոմանս գերմանացիս, և զօրաժողով լեալ՝ յանակնկալս յարձակեցաւ 'ի վերայ Կարոլոսի կայսեր յամի տեառն 1552, և 'ի նեղ էարկ զնա, մինչև ստիպել Կարոլոսի ընդ եղբօր իւրում Փերտինանդոսի Թագաւորին Հունգարիոյ մազապուր զերծանել 'ի կողմանս Եթովպիոյ , ուր անկան և 'ի վտանգ կալանաւորութեան ։

Կարոլոս Ե. զարհուրեալ 'ի չարեաց աստի՝ յանձն ետու շնորհել ազատութիւն բողոքական իշխանաց , և քաղցրութե՟ կամեցեալ շահել զաղանդաւորսն՝ խոստացաւ նոցա յապահովս լինել, և համարձակութիւն շնորհեաց նորահնար պաշտաման կրօնի նոցա 'ի Գերմանիա ։ Եւ այս թոյլտուութիւն որ մի էր 'ի դաշանց հաշտութեանն Պասաւիոյ՝ հաստատեցաւ վերստին համախումբ հանդիսիւ 'ի ժողովն Աւգուսթայի յամին 1555 ։

Յայսմ համագումար ազգային ժողովի յօրինեցաւ արձանագրութիւնն որ հիմն եղև խաղաղութեան կրօնական պաշտաման 'ի Գերմանիա . և գլխաւոր բանք արձանագրութեանն յեօթանեսին յայսոսիկ գլուխս բովանդակին .

Նախ՝ իշխանաւորունք և քաղաքք որոց ընկալեալ իցէ զլուտերականութիւն՝ կարող իցեն վարել զպաշտմունս իւրեանց և դաւանել զայն վարդապետութիւն առանց իրիք խռովութեան . և ոչ կայսրն , ոչ թագաւորն Հունգարիոյ , ոչ 'ի կայսրընտիր իշխանաց ոք և ոչ յեպիսկոպոսաց մարթասցեն երբէք նեղել զնոսա վասն այսորիկ ։

Երկրորդ՝ ըստ նմին օրինակի և բողոքական լուտերականք մի իշխեսցեն երբէք նեղել զիշխանս և զժողովուրդն որք ունիցին զհաւատս և զպաշտմունս եկեղեցւոյն Հռովմայ ։

Երրորդ՝ զի յետ այնորիկ և առ յապա խաղաղասիրութեամբ և եթ և անդորրութեամբ զուն գործեսցեն վախճան տալ բանակռուութեանց կրօնի ։

Չորրորդ՝ զկղերն ուղղափառաց մի կարասցէ պահանջել զիրաւունս հոգևոր իշխանութեան 'ի սահմանս լուտերականաց ։

Հինգերորդ՝ որ միանգամ էին 'ի ժառանգութեան իրիք թոշակի կամ եկեղեցական եկամտից՝ կարող լիցի վայելել յայն անխափան՝ առանց հակառակութեան արքունի կամ կայսերական դրանն ։

Վեցերորդ՝ քաղաքական իշխանութիւնն ունիցի իրաւունս հաստատելոյ յիւրաքանչիւր սահմանս իւր զվարդապետութիւն և զեկեղեցական պաշտամունս որպէս և զիարդ պատշաճ դատեսցէ . իսկ եթէ ոմանք 'ի հպատակաց ոչ կամեսցին լսել ձայնի նորա , կարող լիցին աներկիւղ և անարգել ամենայն ստացուածովք իւրեանց փոխել զիւրեանց բնակութիւն ուր և կամք լիցին նոցա ։

Եօթներորդ՝ եթէ եպիսկոպոս ոք կամ եկեղեցական յօժարեսցի երբեք թողուլ զուղղափառ հաւատ , հարկ լիցի նմա հրաժարել 'ի վիճակէ անտի իւրմէ որպէս և 'ի թոշակէն կամ յեկամտից իւրոց՝ որ 'ի վիճակէն յայնմանէ . և աթոռն այն համարեսցի 'ի պարապութեան , որպէս սովոր է լինել 'ի դէպս փոփոխութեան վիճակի կամ մահու ժառանգաւորի ուրուք . վասն որոյ իշխանն կամ տէր երկրին այնորիկ ունիցի իրաւունս անուանելոյ յաջորդ զոք համակրօն նախընթացին , այս է զուղղափառ ոք ։

Այսքիկ եղեն գլխաւոր մասունք այնր համբաւաւոր դաշանց և պայմանաց՝ որ վաւերեալք եղեն բազմօք ուղղափառ կրօնից ։ Բայց Կարոլոս Ե. ներողամիտ յօժար լուտերականաց լեալ առ հարկի՝ բռնադատեցաւ դաշն խաղաղութե հաստատել ընդ տէրութինս այնոսիկ յորս նորանոր մոլորութիւնք օր ըստ օրէ սերմանէին զբազում խռովութեան և անմիաբանութեան ։ Եւ ապա ցանկացեալ անդորր կենաց , յամի տեառն 1556 յետ հրաժարելոյ 'ի կայսերական աթոռոյ և 'ի թագաւորութենէն Սպանիոյ , տաղտկացեալ 'ի զբաղմանց կենցաղոյս , և 'ի միտ առեալ զունայնութիւն աշխարհային մեծութեանց , առանձնացաւ 'ի մենաստան ուրեք Սպանիոյ , ուր կանխաւ պատրաստեալ էր վասն իւր սենեակս ինչ բնակութեան , և վախճանեցաւ անդէն զկեանս իւր յամին 1558 , 'ի հասակի յիսուն և ինն ամաց ։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Նոր մոլորութեանց 'ի Գաղղիա :

ՀԵՏԱՔՆՆԻՆ իղձ Գաղղիացւոց 'ի դեգերել յընթերցուածս գրոց հերետիկոսաց՝ պատճառք եղև մուտ գտանելոյ 'ի նոսա մոլորութեանցն որք երբեմն վիշտս ծանունս հասուցին Կարոլոսի կայսեր, և շաղախեցին արեամբ զԳերմանիա համօրէն. և ընդ նորահնար մոլորութեանցն սպրդեցան մտին 'ի նոսա և ախորժք մոլեգին նորասիրութեանց: Ոմանք 'ի նախանձաւոր լուտերականաց սփռեցին 'ի Փարիզ քաղաքի բանս հայհոյականս և թշնամանագիրս ընդդէմ խորհրդոց հաղորդութեան, և մանաւանդ ընդդէմ պաշտաման սրբոյ պատարագին. և ոչ շատ համարեալ մեծուցանել զայնոսիկ յորմունս շինից և ամենայն փողոցաց, համարձակեցան մեծանել զայն և 'ի սենեակս ապարանից Փրանկիսկոսի Ա. արքային Գաղղիոյ: Լուտերականք բազմօրինակ թելադրութեամբք ջանացեալ էին կանխաւ որսալ զնա 'ի կամս իւրեանց, մանաւանդ 'ի ժամանակի, յորում թագաւորն Անգղիոյ ապստամբեցաւ 'ի սրբոյ աթոռոյն, և զուն գործեաց ձգել ընդ իւր 'ի նոյն հերձուած և զարքայն Փրանկիսկոս առ մեծահանդէս կատարելոյ զքէն վրէժխնդրութեանն ընդդէմ Հռոմայ:

Բաց աստի երևելոյն Կալվինի՝ նորահնար վարդապետութիւնն այն ստացեալ ունէր և զմտաց յիշխանուհեաց ոմանց արքունի, որք զօր հանապազ զաղտնի և մեղմ հնարիւք թելադրէին զայն թագաւորին: Մարգարիտա քոյր նորա սիրեցեալ յարքայէն՝ գիտելով զախորժ և զյօժարամտութի եղբօր իւրոյ առ իմաստունս, խնամ կալաւ ածել յարքունիս զՄելանքթոն, որ էր մի յիմաստուն արանց այնր դարու և գլխաւոր ախոյեան մոլորուէ լուտերականաց: Պփուազրդիւ հրաւիրականօք դեղ զաղմանց մտաց կարդինալն Տուրնոն. բանզի յաւուր միում եմուտ սա 'ի սենեակ արքային ունելով գիրք ինչ ընդ անթովքն. իբրև զայն ետես զրաւէր արքայն՝ եհարց եթէ զինչ իցէ մատեանն այն, և 'ի պատասխանի առնել կարդինալին՝ թէ է մատեան մի ուրուք 'ի նախնի հայրապետաց եկեղեցւոյն Գաղղիոյ, առեալ արքային եբաց զայն, և ետես զի էին գործք սրբոյն Երանոսի եպիսկոպոսին Լուգդոնի նահատակելոյ յերկրորդում դարու։ Յայնժամ արքայն եհարց ցկարդինալն, թէ երանելիս այս զինչ կարծիս ունիցի 'ի վերայ նորահնար վարդապետութեան. և զի կարդինալն կանխագէտ էր հետաքննութեան արքային, ընթերցաւ անտի հատուածս ինչ պիտանիս բացայայտս և անժխտելիս 'ի վերայ խորհրդոյ սրբոյ հաղորդութեան, և վասն արժանահաւատ լինելոյ աւանդութեանց եկեղեցւոյ, որպէս և նախագահութեան աթոռոյն Հռովմայ, որ 'ի նախնի դարուց հետէ համարեցաւ միշտ կեդրոն միութեան եկեղեցւոյ։ Եւ յաւել ցուցանել նմա, թէ Լուտեր և համախոհք նորա մերժելով զնախնի աւանդութիւնս եկեղեցւոյ՝ կամին տապալել զհիմունս քրիստոնէութեան։ Բանք կարդինալին այնպէս ազդու եղեն 'ի սիրտ արքայի, զի յետ այնորիկ և առ յապա ոգւով չափ յետս եկաց 'ի նորութեանց անտի։

Յամի տեառն 1535 յիննևտասներորդ աւուր ամսեանն յունուարի հրաման եհան Թագաւորն առնել զհանդիսական թափօր սրբոյ հաղորդութեան, յորում առաջիկայ գնաց և ինքն իսկ արքայ մեծաեռանդեամբ, և խուռն բազմութիւն հաւատացելոց անյագ տենչմամբ փութացան յայն հանդէս։ Եւ տեսեալ արքայի զհոգելից եռանդն ժողովրդեան՝ առաջի արար նոցա զվնասս հերձուածոց որք և շփոթս յամենայն սահմանս տէրութեան յուզեցին. և եցոյց յայտնապէս թէ յետ ապստամբութեան Լուտերի և Ցուինկլիոսի 'ի սուրբ եկեղեցւոյն, ծաւալեցան 'ի ժողովրդեան խռովայոյզ կարծիք և վարդապետութիւնք որք զհպատակս զինեցին ընդդէմ միմեանց և իշխանաց իւրեանց, և հիմն 'ի վեր տապալեցին զխաղաղութիւն հասարակաց։ Յուշ առնէր նոցա և զայն՝ եթէ որպէս աւետարանական վարդապետութիւն էարկ զիւրոյ հաստատութեան զհիմունս. զի ոչ յարոյց երբէք խռովութիւնս և նենգուպատիր դաւաճանութիւնս 'ի նախնի հռովմէական կայսրութեան. այլ ընդհակառակն աճեաց և առաւելաւ միաբանական սէր 'ի քաղաքացիս և անխարդախ հնազանդութիւն առ իշխանս, մինչև կայսերաց չունել այլ հաւատարիմ հպատակս իբրու զնախնի քրիստոնեայս : Իսկ արդի նորահնար վարդապետութիւնք կամ թէ ասել՝ անուանեալ վերանորոգութիւնք, որ ըստ օրէ յուզեն զսիրտս մոլեգնելոց ձեռնամուխ լինել յամենայն ինչ ընդ պատրուակաւ բարեպաշտութեան : Ապա 'ի վախճան բանիցն յաւել ասել, թէ այսպիսի նորութիւնք վնասակարք են և կրօնի և աշխարհական տեսչութեան : Խնամ կալաւ ապա յորդոր մատուցանել ամենայն հպատակաց իւրոց կալ մնալ անփոփոխ և անշարժ 'ի դաւանութեան հաւատոյ նախնեաց իւրեանց . քանզի և ես ինքն, ասէ, հաստատութեամբ եղի 'ի մտի զհետ երթալ հաւատոյ և օրինակի թագաւորացն որք կացին յառաջ քան զիս, յորս յետ Լուդովիկոսի չգտաւ ոք երբէք օտարացեալ յեկեղեցւոյ սրբոյ :

Յայս հոգեշարժ և պերճ ատենախօսութիւն, ըստ ասելոյ Պօսիւէի, յաւել և հրովարտակ պատուհասի որով 'ի հուր դատապարտէր զհերետիկոսս - և այն պատուհասք եղան 'ի գործ ժամանակս ոչ սակաւ աններելի խստութեամբ : Սակայն հասու եղեալ ապա բազմապատիկ անպատեհ արգասեացն 'ի վեր երևելոյ 'ի տարօրինակ պատուհասիցն՝ 'ի չափու կալան զայնոսիկ, խելամուտ լեալ և 'ի փորձոյ եթէ չէ պարտ պատճառս տալ խստասիրտ յամառելոյ և ստիպել զնոսա դառնալ յուղղափառ դաւանութիւն : Թող զի ընդ հրակէզ պատուհասելոյն ոչ 'ի սպառ անհետացաւ և մոլորութիւն նոցա . քանզի ամբարտաւանութիւն և նորասիրութիւն մարդկայինս բնութեան և պատրուակ կարծեցեալ վերանորոգութեան ծնաւ 'ի նոսա յօժարամտութիւն ինչ անպայման բարեկարգելոյ զեկեղեցի, որ եղև առաւել վտանգաւոր և վնասակարագոյն քան զանկարգութիւնսն գլխովին : Քանզի յամառութիւն և յանդգնութիւն այնպէս անկակից էր բնութեան մոլեգնելոյն այնոցիկ, զի մոլորութիւնքն պատուհասեալք դառն տանջանօք՝ յորդոր լինէին նոցա հանապազորդել անընդհատ յատելութեան իւրեանց ընդդէմ քրիստոնէական կրօնի :

ԳԼՈՒԽ ԻԵ·

Պատմութիւն Կալվինոյ·

Ի ԿԵՆԴԱՆՈՒԹԵԱՆ անդ Լուտերի եարկ զհիմունս նորօրինակ վարդապետութեան իւրոյ և Յովհաննէս Կալվին՝ ծնեալ ՚ի Նոյոնքաղաք ՚ի սահմանս Պիկարտիոյ յամին 1509 ։ Հայր նորա որ գործակալ էր եպիսկոպոսի քաղաքին՝ պատրաստեալ էր նմա յիւրոց ընչից հասս ժառանգաւորութեան. այլ նա մտադիւր հրաժարեցաւ անտի, կամելով գնալ ընդ հետս աշակերտացն Քրիստոսի ։ Մելգոն ոմն Վոլմառ մականուանեալ՝ որ աշակերտեալն իսկ էր Լուտերի՝ մտերիմ ընտանութեամբ ծանօթացեալ ընդ Կալվինոյ յորժամ պարապէր նա յուսումն օրինաց ՚ի Պուրժ քաղաքի, քաղցրացոյց նմա զճաշակ նորահնար մոլորութեանց. և ՚ի բանից նորա զրգռեալ Կալվինոյ եդ ՚ի մտի ստեղծել վարդապետութիւն ինչ ՚ի Գաղղիա, յաւելեալ ինչ ինչ ՚ի մոլորութիւնս Լուտերի ։ Վասն որոյ փութացաւ գնալ ՚ի Փարիզ քաղաք, ուր ձեռնամուխ լեալ ՚ի գժուարալոյծ խնդիրս աստուածաբանականս յօրինեաց Ճառ ինչ՝ յորում ամբարեալ և ՚ի մի ժողովեալ էր զամենայն սկզբունս թունալից վարդապետութեան իւրոյ. և ապա տուեալ զայն քահանայի ումեմն որ համախոհ իւր էր՝ հրամայեաց նմա ատենաբանել զայն ՚ի տօնի ամենայն սրբոց ։ Եւ զի սաստիկ հրաման էր արքային Գաղղիոյ հոգալ ՚ի վերայ նորահնար վարդապետութեանց, Յովհաննէս Մորէն գլխաւոր պաշտօնեայ քրէական ատենին կամեցաւ ըմբռնել զԿալվին՝ որ ամրացեալ և պատսպարեալ էր ՚ի դպրոցի ուրեք, և իմացեալ եթէ ՚ի խնդիր են նորա՝ փախեաւ գաղտ ՚ի քաղաքէն ։

Եւ քանզի պերճացեալ էր Կալվին բազմապատիկ բարեմասնութեամբք, և ունէր ՚ի բնէ զամենայն ձիրս, վասն որոյ և մեծարոյ էր յոյժ՝ ոչ միայն յաչս պարզամտաց, այլ և նոցին իսկ իմաստնոց ։ Ըստ ասելոյ Պոսիւէի չեկաց ոք ուրեք երբէք որ ընդ պատրուակաւ պարկեշտութեան մարթասցի լաւ ևս քան զԿալվին ծածկել զանհնարին ամբարտաւանութիւն իւր ։ Ոչ ինչ փոյթ էր նորա զկենցաղական բարեաց և զստացուածոց , այլ փառասիրութիւն եւեթ տագնապէր զսիրտ նորա՝ առաւելուլ քան զայլսն հանճարով և գերազանցել գիտութեամբ և պերճախօսութեամբ ։

Այս այր նենգամիտ զառաջին հիմունս մոլորութեան իւրոյ արկ 'ի Փուաթիէ քաղաքի , յորում սկիզբն արար ուսուցանել և հրահանգել զհետևողս իւր՝ պաշտելով 'ի ստորերկրեայ նկուղս զխորհուրդն զոր Ընթրիս անուանեալ կոչէր ։ Եւ զի յետ յայտնի լինելոյ չարահաւմնոյցն վտանգ մեծ էր նմա բնակել 'ի Գաղղիա , հարկեցաւ խոյս տալ անտի , և մեկուսացաւ 'ի Բազիլէա քաղաք Հելուետիոյ , ուր 'ի լոյսն ածեալ զգիրսն համարձակեցաւ ընծայել զայն Փրանկիսկոսի արքային Գաղղիոյ ։ Այս գիրք մակագրեալ կոչէր․ Քրիստոնէական սահմանադրութիւնք , Թէպէտ և ստոխ զատն արձանացաւ այնու զօգցես ամենայն մասանց քրիստոնեական հաւատոյ ։ Փրանկիսկոս արքայ հասու եղեալ բազմապատիկ արգասեաց թունալից գրոցն՝ խնամ կալաւ խափանել և անհետ առնել զայն , սակայն 'ի դերև ել ամենայն ջիգն նորա և զգուշութի ։ Բայց ըստ ասելոյ Պոսիւէի՝ ոչ դոյզն ինչ օգուտ համարել պարտ է զայն՝ զի 'ի մարտնչել Կալվինոյ ընդդէմ վարդապետութեն Լուտերի 'ի վերայ խորհրդոյ հաղորդութեան՝ աճեաց և առաւելաւ երկպառակութիւնն 'ի կուսակիցս անդ և 'ի համամիտս բողոքական Լուտերականաց ․ քանզի աստուածայինն նախախնամութիւն սովոր է զսուրն 'ի ձեռն չարաց կորուսանել , և առ ընկճելոյ զհերետիկոսութիւն ուրուք՝ վարել 'ի գործ զառաւել ժանտն 'ի հերետիկոսս այնր ժամանակի ։

Կալվին որ զամենայն ջիգն դնէր 'ի գործ 'ի տարածել զվարդապետութիւնս իւր , 'ի Բազիլէա քաղաքէ ուղևորեցաւ 'ի Ֆերրարա , և անդ եգիտ ապաւինականութիւն մեծ 'ի Ռենատեայ դստերէ Լուդովիկոսի ԺԲ արքային Գաղղիոյ ։ Այլ 'ի Ֆերրարայէ անդ 'ի Ժընևս , անտի յԱրձէնթինա , և ապա դարձաւ անդրէն 'ի Ժընևս , ուր կալաւ զիւր բնակութիւն ․ և Թէպէտ աշակերտեալ էր քաղաքն մոլորութեանցն Զուինկլիոսի , բայց Կալվին նորօրինակ կարգաւ յօընկեաց զաղանդն զայն՝ կոչելով յիւր անուն ։ Որոյ վարդապետութիւնք նորա նոյն են գոգցես ընդ աւանդեալն 'ի Լուտերէ, բայց 'ի վարդապետութենէն որ 'ի վերայ խորհրդոյ հաղորդութեան. զի Կալվին համարի թէ մարմին Քրիստոսի տիրապէս և ըստ գոյացութեն է յերկինս եւեթ, իսկ 'ի հացն խորհրդոյ հաղորդութեան է լոկ առաջիկայ հոգեւորապէս. և թէ աղբիւր շնորհաց է վասն նոցա որք հաւատան յայն ։ Աստի դառն արձանացաւ Կալվին և արտաքին պաշտամանց եկեղեցւոյ. թշնամի եկաց երևելի գլխոյ նորա, այս է քահանայապետին Հռոմայ, և ամենայն եպիսկոպոսաց, քահանայից, տօնից, օրհներգութեանց և հանդիսական արարողութեանց՝ յորս ոչ իշխեաց յանդուգն Լուտեր ։

Գենեւա մտադիւր լսող գտաւ կամաց և համօրէն կարգադրութեան Կալվինոյ, որ սահմանեաց և արտաքին վարժս կամ դաստիարակութիւն կրօնի, յօրինեաց մատեան քաղաքական և եկեղեցական օրինաց, կարգաւորեաց զձև աղօթից և զհրահանգս պաշտամանց, զօրինակ կատարելոյ զմկրտութիւնն և զընթրիս, որք ըստ կարծեաց նորա կրկին եւեթ խորհուրդք են ընդունելիք ։ Սահմանեաց ապա խորհրդականս, համախոսութիւնս, ժողովս, և կարգեաց երիցունս պաշտօնեայս և վերատեսուչս ։ Բայց զի խիստ ոմն էր բարուք, վասն որոյ տարապայման իշխանաւորութիւն զրգռեաց զբազումս յատելութիւն. այլ ինքն ճարտարութեամբ իւրով և անյողդողդ հաստատութեամբ եգիտ հնարս ամենայն դժուարութեանց և զխուրեաց զխափանարարս ամենայն ։ Կամակոր էր նա 'ի խորհուրդս մտացն, անվեհեր 'ի ձեռներէցութիւն իւր՝ մինչև չկամայել յինչ առ հաստատուն պահելոյ և զգոյշն անգամ օրինադրութիւնս իւր իւր գլխաւոր մասունս հաւատոյ ։ Եւ զի զարմանալի էր նա պերճախօսութեամբ և խստամբեր վարուք, վասն որոյ բազումք աշակերտեցան նմա, մանաւանդ պարզամիտք որք յօժարամիտք են յաւէտ անսալ բանից ուրուք քան հակառակել նմա ։

Արդ յետ կարկելոյ զբերանս ամենայն թշնամեաց իւրոց, և ամրակուռ անդելոյ զշինուած կարծեցեալ վերանորոգութեանն, մեռաւ Կալվին 'ի Գենեւա քաղաքի յամին 1564 'ի հասակի յիսուն և հինգ ամաց ։ Ճարտարամիտ էր նա , բազմահմուտ , նախանձոտ բարուք , տխուր դիմօք , և դիւրամէտ 'ի բարկութիւն . և անվեհեր արիութեամբ հաստատեաց զհիմունս վարդապետութեան իւրոյ : Ոչ շատ համարեցաւ հիմնել զայն 'ի Ժնեւս , այլ և անընդհատ զգրուածս իւր սփռել 'ի Գաղղիա , 'ի Գերմանիա և 'ի Լեհս ընդդէմ կըկընակնունք անուանեալ հերձուածողաց , լուտերականաց և ուղղափառաց : Նամակք նորա և գրուածք կարի հետաքննինք էին ընթերցանիլոյ , զի գրէր բարեյարդար յօրինուածով և վայելուչ բանիւք . ոչ ոք 'ի հերձուածողաց մարթացաւ երբէք այնպէս ճարտարարուեստ յօրինուածով նկարագրել զկարծիս իւր որպէս Կալվին . քանզի և զԿանխաբանութի սահմանադրոց նորա համարին ոմանք գործ անզուգական . և առաջին եկաց 'ի գրել զաստուածաբանական խնդրոց վսեմ օրինակառանց գալլոցական ոճոյ : Ոչ մարթ ժխտել թէ իցէ նա հմուտ աստուածաբան և ընտիր տրամախօս 'ի ճառս յորս չիցէ կուրացեալ 'ի հոգւոյ հակառակութեան . բնատուր ձիրք նորա բազմապատիկք եղծան և խանգարեալ ապականեցան 'ի չարաչար կիրառութենէ անտի նոցին :

ԳԼՈՒԽ ԻԲ.

Նորոգումն կոտորած Վաղդեանց 'ի Քափրիէռ և 'ի Մերինդոլ . — Յառաջադիմութիւն աղանդոյն Կալվինոյ 'ի Գաղղիա :

ՅԱՆԿԱՑԵԱԼ Կալվին 'ի կենդանութեան անդ իւրում տարածանել զնորահնար վարդապետութիւն իւր՝ առաքեաց պաշտօնեայս 'ի Գաղղիա քարոզել զայն . բայց ելք իրացն աղետալիք եղեն յոյժ հերետիկոսացն Վաղդեանց , որք կանուխ ժամանակաւ սփռեալ և թագուցեալ կային 'ի լերինս դքսութեանն Տոֆինէի և Փռովանսայ , կարծեցեալ եթէ մարթ իցէ նոցա գտանել անդէն անքոյթ վայր ապաստանի : Յամին 1540 յութուտասներորդ աւուր ամսեանն նոյեմբերի՝ ժողով իշխանացն որ 'ի Փռովանս զանգիտեալ 'ի տարածելոյ մոլորութեանց , դատապարտեաց 'ի մահ իննտասն անձինս յաղանդաւորաց անտի , և յետ այնորիկ արար վճիռ հրամայական քանդել զտունս բնակութե՟ նոցա 'ի գիւղաքաղաքսն Քափրիէռ և Մերինտօլ, և կործանել և աւերել զաւանսն և զգիւղս զգրաւեալս 'ի նոցանէ, մինչև բնաջինջ առնել և զծառաստանիս նոցա։ Այս վճիռ ոչ եղաւ յայնժամ 'ի գործ 'ի խնդրոյ կարդինալին Սադոլետոսի, որ և խոստումն իսկ ապա ընկալաւ 'ի Վալդեանց հրաժարել 'ի մոլորութեանց իւրեանց։ Ապա յամի տեառն 1545 նախապատիւ դատաւորին Օփփէտ ջանահնար եղև ցուցանել արքային, թէ հերետիկոսքն այնոքիկ արք խռովարարք են և ձեռնհասք յապստամբութի՟. վասն որոյ ընկալաւ հրաման դնել 'ի գործ զվճիռն սահմանեալ հինգ ամօք յառաջ։ Արդ ատեանն Փռովանսայ միաբանեալ ընդ պարոնին Կառտայի, որ ընդ այն ժամանակս դարձ առնէր զօրօք յԻտալիոյ, թոյլ ետ զինուորացն սուր 'ի վեր առեալ կոտորել զամենայն բնակիչս երկրին. և յայնմ կոտորածի՝ որոյ ճարակ եղեն ոգիք երեք հազար յամենայն հասակէ և 'ի վիճակէ. և քաղաքք ն՟ց Մերինտօլ և Քափրիէռ հանդերձ քսան աւանօք այրեցան 'ի հուր։ Մոլեգին խումբ զինուորացն խրախուսեալք 'ի սուտ նախանձուէ իշխանին Օփփէտի, և ատենական փաստաբանին Կուէրինոսի՝ արարին այնպիսի անողորմ կոտորածս, զի լուեալ զայն Փրանկիսկոսի արքային՝ որ անկեալն էր 'ի մահիճս մահու՝ յանձն արար յաջորդի իւրում պատուհասել զորս միանգամ պատճառք եղեն այնմ կոտորածի, քանզի և հակառակ էր այն գլխովին քրիստոնէական կրօնից։ Հենրիկոս Բ. յաջորդն Փրանկիսկոսի պատուիրեաց ժողովոյ իշխանացն Փարիզու առնել հաւաստի քննութիւն զիրացն եղելոց։ Եւ զի փաստաբանն Կուէրինոս պարտաւոր և յայլ յանցանս ցուցաւ, վասն որոյ հատին զգլուխ նորա. իսկ իշխանին Օփփէտի ունելով իւր թիկունս յարքունիս անդ՝ զերծաւ 'ի պատուհասէն։

Կալվինականք զառաջինն առ թագաւորութեամբ Հենրիկոսի Բ. գտին իւրեանց խաչընդոտս 'ի Գաղղիա. զի Հենրիկոս արքայ հրովարտակ եհան ընդդէմ նոցա, պատուիրելով զի մի ոք 'ի ն՟ցէ կարասցէ երբէք ստանալ քաղաքական պաշտամունս, և ոչ ուսուցիչ լինել հրապարակական դպրոցաց ուսանց կանխաւ առնելոյ զդաւանութիւն ուղղափառ հաւատոյ ։ Տանտըլըյ եղբայր Քոլինի ծովակալին եղաւ 'ի բանտ վասն հայհոյելոյ զսուրբ պատարագն , և Աննա Պորձեան մին 'ի խորհրդականաց ժողովոյն Փարիզու և պաշտպան կալվինականութեան՝ կախեցաւ զփայտէ , և մարմին նորա այրեցաւ հրով 'ի մէջ հրապարակին Կրէվէի ․ վկայեաց զնմանէ և Պոսիւէ յասել անդ ․ “Արիական համբերութեամբ տարաւ դառնակսկիծ մահուն , և եցոյց թէ մոլորուէ՟ անգամ մարթ է ունել մարտիրոս ․ տանջանք նորա խրախուսեցին զհերետիկոսս , և երկմտութիւնք ծնան 'ի միտս տգէտ ուղղափառաց ։ Վասն որոյ անկարծելի օրինակաւ աճեաց 'ի Գաղղիա թիւ բողոքութեան կալվինական աղանդաւորաց , և 'ի զանազան գաւառս նորա կանգնեցին զեկեղեցիս իւրեանց ըստ օրինակի եկեղեցական սահմանադրութեանն Գենեւայի „ ։

Կալվինականք զհալածումն զայն վարդապետութեան իւրեանց և զիւրեանցն անյողդողդ հաստատութի՟ 'ի կշիռ դնէին ընդ արիական նահատակութե՟ նախնի քրիստոնէից հալածելոց 'ի հեթանոս կայսերաց ․ բայց վրիպէին անշուշտ 'ի համեմատութ՟էն և զամօթի հարկանէին՝ եթէ ածեալ էր նոցա զմտաւ զանգութ օրինակ աղանդապետի իւրեանց Կալվինոյ , որ 'ի Գենեւա յամին 1553 դատապարտեաց 'ի հուր զՍերվետոս զուրացողն խորհրդոյ ամենասուրբ Երրորդութեան ․ ապաքէն զնոյն գործէին և հետևողք նորա՝ եթէ էր նոցա իշխանութի՟ ։ Սակայն և զայն խոստովանել արժան է , զի զգուշու՟թիք թագաւորաց և խստութիւք պատուհասից առ 'ի կարճել և խափանել զաղանդ նոցա՝ չեղեն բաւական անհետ առնել զնոսին ․ զի օր քան զօր առաւելաւ թիւ նոցա և խստասրտութիւն , մինչև արքունիք , քաղաքք և գաւառք , որպէս և համօրէն վիճակք յաշխարհական կարգէ՝ շաղախեալ էին նորահնար մոլորութեամբքն ։ Եղեն և ոմանք յարքայազանց որք անկան 'ի ծուղակս մոլորելոց , որպէս Անտոն Պորպոնեան թագաւոր Նաւարրայի , Լուդովիկոս Քոնտէ եղբայր նորա ․ ծովակալն Քոլինի , դուքսն Սուանայ և այլ յոլով իշխանազունք յայտնապէս դաւանէին զմոլորութ՟ին ։ Յառաջ քան զմահ Հենրիկոսի Բ․ Կալվինականք արարին 'ի փա-

ընդ զառաջին ազգային սինհոդոս իւրեանց, և կարգեցին զդաւանութիւն հաւատոյ, որ եղև նոցա կանոն վարդապետութեան։

ԳԼՈՒԽ ԻԹ.

Հրաւէր համախմբութեան ընդհանուր ժողովոյ, և սկզբնաւորութիւն սինհոդոսին 'ի Տրիդենտոն քաղաք։

Ցաւ մեծ էր քահանայապետաց Հռովմայ տեսանել զվնասս ծանունս ուղղափառ եկեղեցւոյ. վասն որոյ Պօղոս Գ. 'ի Ֆառնէզեան տոհմէ, իբրև ընտրեցաւ քահանայապետ յամին 1534 զկնի մահուան Կղեմայ Է., խնամ կալաւ դարման մատուցանել անհնարին վէրացն՝ գումարելով ընդհանրական ժողով 'ի բարեկարգութիւն եկեղեցւոյ. վասն որոյ յամսեանն մայիսի յամին 1537 ազդ արար ամենեցուն զկամս իւր, և սահմանեաց գումարել զժողովն 'ի Մանտուա քաղաք Իտալիոյ. բայց հարկեցաւ յապաղել զհաւաքումն մինչև ցամն երկրորդ. քանզի խռովութիւք պատերազմաց ընդ ամենայն կողմանս Եւրոպիոյ խափան արկին ուղևորութեան եպիսկոպոսաց ժողովել անդր։ Այս յետ ութ ամաց 'ի լինել հաշտութեան ընդ կայսրն և ընդ թագաւորն Գաղղիոյ, յամի տեառն 1544 սկսան լինել պատրաստութիւնքն որ կարևորք էին 'ի գումարումն ժողովոյն, զոր անդ յառաջ որոշեալ էին գումարել 'ի Տրիդենտոն քաղաք Տիրոլի առ սահմանագլխովք Գերմանիոյ։

Յանկացեալ Պօղոսի քահանայապետի լրումն տալ մեծի գործոյն՝ առաքեաց զդեսպանս իւր 'ի Տրիդենտոն, ուր հասին 'ի սկիզբն մարտի յամի տեառն 1545։ Էին սոքա կարդինալն Մոնթի եպիսկոպոս Պրենեստեայ և կարդինալն Սանթա-Քրոչէ, այր արժանապատիւ և մեծարոյ, որք յետոյ ընտրեցան 'ի քահանայապետութիւն, և առաջինն 'ի սոցանէ կոչեցաւ Յուլիոս Գ. և երկրորդն Մարկեղոս Բ.։ Սոցա ուղեկից եղև և կարդինալն Հռեգինալդոս Պոլեան՝ արքայազունն Անգղիացի։ Սկզբնաւորութիւն ժողովոյն եղև 'ի մայր եկեղեցւոջ քաղաքին յերեքտասաներորդ աւուր ամսեանն դեկ-

տեմբերի, և եպիսկոպոսն Բիտոնտոնի մեծահամբաւ քարոզիչ Մուսիոյ՝ արար զառաջին ատենախօսութիւնն որ հաճոյ եղև յոյժ ամենեցուն ։

Յառաջին համախմբութեան անդ սակաւք էին յոյժ եպիսկոպոսունք, բայց որ ըստ օրէ առաւելաւ թիւ բազմութեան նոցա ։ Դեսպանք սրբոյ աթոռոյն նստան 'ի նախապատիւ տեղւոջ․ գտան անդ և այլ երկու կարդինալք, երեք պատրիարգունք, քսան և մի արքեպիսկոպոսք, բազմաթիւ եպիսկոպոսունք, եօթն աբբայք, եօթն ընդհանրական մեծաւորք կրօնաւորական կարգաց, և բազում դեսպանք քրիստոնեայ իշխանազանց ։

Յերեսին համախմբութիւն առաջինս 'ի կարգի եդաւ եղանակն քննելոյ զխնդիրսն, և սահմանեցաւ 'ի քնին առնուլ զայնոսիկ մի առ մի 'ի մասնաւոր ժողովս՝ չև եւս առաջի արարեալ ընդհանուր սինհոդոսի ։ Սահմանեցաւ դարձեալ՝ զի ամենայն խնդիրք որոշեսցին բազմութեամբ քուէից առանձնաւորաց, և ոչ ազգային քուէիւք՝ որպէս արարեալ էին երբեմն 'ի Կոստանդեան և 'ի Բասիլեան ժողովս ։ Եղեն 'ի Տրիդենտոն ութ համախմբութիւնք, յորս սահմանեցան բազում իրք պատշաճեալք առ վարդապետութիւնս հաւատոյ և բարի վարուց ։

Ի չորրորդ համախմբութեան՝ ըստ օրինի նախնի ժողովոց սահմանեցաւ թիւ սուրբ գրոց կանոնականաց հին և նոր կտակարանաց, և զի Լատինք զթարգմանութի սրբոյն Հերոնիմոսի զանուանեալն Վուլկաթա 'ի կիր առնուցուն իբրև միայն վաւերական ։

Ի հինգերորդ համախմբութեան սահմանեցան պատշաճեալքն 'ի հաւատս սկզբնական մեղաց, և թէ 'ի ձեռն մկրտութեան թէպէտ և սրբին այն մեղք՝ բայց մնան լուցկիք կամ ցանկութիւն որ է գործ այնր մեղաց ։ Յայս վճիռ յաւելին հարք ժողովոյն և զայն՝ թէ սահմանադրութեամբս այսուիկ յաղագս մեղացն Ադամայ հաղորդելոյ 'ի համօրէն սերունդս իւր՝ չեն նոցա կամք 'ի նոյն կարգ դասել և զսուրբ կոյսն Մարիամ․ այլ կամեցան զի պահեսցի պարտուպատշաճ ակնածութիւն օրինադրութեան Սիքստոսի Դ․, որ 'ի պատուել զյիշատակ անարատ Յղութեան կուսին՝ յամին 1476 սահմանեաց առանձինն պատարագ և ժամերգութիւն ։

Վեցերորդ համախմբութիւնն եղև 'ի վերայ արդարացուցման և շնորհաց ։ Հերքեցան 'ի նմա երեսուն և երեք նախադասութիւնք հակառակք ուղղափառ վարդապետութեան , յորոց կէսք Պեղագեանց էին՝ որք զամենայն ինչ ընծայէին մարդկային կամաց և ազատ անձնիշխանութեան՝ որ գործէ լոկ կարողութեամբ բնութեան , իսկ այլքն էին Լուտերականաց , որք զամենայնն շնորհացն Աստուծոյ ևեթ ընծայէին , որ ըստ ասելոյ նոցա՝ բռնի և անդիմադրելի ուժգնութեամբ շարժէ զկամս մեր ։

Խնդիրքս այսոքիկ խորագնինք այնպիսի կարգաւ և մեկին բացայայտութեամբ առաջի եդան , զի աստուածաբանք առ հասարակ երկոցունց կողմանց զարմացան ընդ յաջողակութիւն վարդապետացն՝ որք հարին 'ի գլուխ զխնդիրս ժողովոյն ։ Իսկ պատշաճեալքն առ խորհուրդս եկեղեցւոյ 'ի հասարակի՝ քննեցան յեօթներորդ համախմբութեան , և սահմանք ժողովոյն բովանդակեցան յերեսուն կանոնադրութիւնս , և յաւելան 'ի նոսա նզովք ընդդէմ օտարացելոյն յուղղափառ վարդապետութեանց աստի ։ Յայտնի վճիռս առաջի դնին զոր ինչ միանգամ պարտ իցէ ուղղափառաց հաւատալ վասն թուոյ , սահմանադրութեան , հարկաւորութեան , զօրութեան , նիւթոյ , ձևոյ , պաշտօնէի խորհրդոց եկեղեցւոյ , և առանձնաբար 'ի վերայ մկրտութեան և դրոշմի ։

ԳԼՈՒԽ Լ·

Փոխադրութիւն ժողովոյն 'ի Պոլոնիա քաղաք , և մահ քահանայապետին Պօղոսի Գ ։

Ընդ այն ժամանակս ահ տարածեալ ժանտամահու 'ի մերձաւոր սահմանս քաղաքին Տրիդենտեայ հարկեցոյց զքահանայապետն յամին 1547 փոխադրել զժողովն 'ի Պոլոնիա քաղաք Իտալիոյ , ուր եղեն երկու համախմբութիւնք ։ Եւ զի կայսրն Կարոլոս Ե· հակառակ էր այնմ փոխադրութեան՝ գժտեցաւ ընդ քահանայապետին , վասն որոյ և ժողովն մնաց անգործ և խափանեալ զամս չորս ։ Յայնմ ժամանակի բողոք կալեալ կայսեր ընդդէմ ժողովոյն Պոլոնիոյ՝ եհան զհամբաւ ուր ձև զաւանութեանն հաւատոյ որ կոչի ԻՆԹԷՐԻՄ, զորմէ և 'ի վերագոյնդ կանխեցաք ասել :

Պօղոս քահանայապետ ծանրացեալ հասակաւ և տառապեալ 'ի յաճախութենէ մշտոյ՝ վախճանեցաւ 'ի տասներորդ աւուր նոյեմբերի յամին 1548, կացեալ 'ի քահանայապետութեան զամս հնգետասան և զաւուրս բազմունս : Ճարտարամիտ էր նա 'ի խորհուրդս, նախանձաւոր օգտի և խաղաղութեան եկեղեցւոյ, ուսումնասէր և ազնիւ բարուք . սակայն հուպ 'ի վախճան կենացն թողեալ էր զտեսչութիւնն 'ի կամս որդւոյն իւրոյ զորս ստացեալ էր չև ամբարձեալ 'ի վիճակ եկեղեցական : Ի պատճառս մահու նորա լուծաւ ժողովն Պոլոնիոյ . քանզի դեսպանաց որոց աթոռոյն հարկ էր այնուհետև դառնալ 'ի Հռովմ յընտրութիւն նորոյ քահանայապետի . և յաջողեցաւ այն յետ երեքտասան ամսոյ 'ի հինգերորդ աւուր փետրուարի յամին 1550, և ամբարձաւ յաթոռ իշխանութեանն կարդինալն Մոնթի, որ անուանեցաւ Յուլիոս Գ., որ և փոյթ կալաւ ձեռն արկանել դարձեալ և 'ի կատարումն անել զընդհանուր ժողովն :

ԳԼՈՒԽ ԼԱ.

Վերստին սկզբնաւորութիւն և հանդարտեցուցանել ժողովոյն Տրիդենտեայ :

Յուլիոս քահանայապետ յետ ծանուցանելոյ կայսեր և թագաւորին Գաղղիոյ՝ եթէ ժողովն վերստին հանդերձեալ իցէ գումարել 'ի Տրիդենտոն քաղաք, անուանեաց երիս դեսպանս՝ որք նախագահ բազմեցան 'ի ժողովին : Յառաջին համախմբութեան անդ որ գումարեցաւ 'ի սկիզբն մարտի յամին 1551 և էր մետասաներորդ 'ի կարգս առաջնոցն, ընթերցաւ վճիռն վերանորոգութ̄է կամ կրկին սկզբնաւորութ̄է ժողովոյն :

Յերեքտասաներորդ համախմբութեան 'ի մետասան աւուր հոկտեմբերի հանդիսացաւ վճիռն պատշաճեալ առ սուրբ խորհուրդ հաղորդութեան, յորում սահմանեաց ժողովն ընդդէմ մոլորութեան խորհրդադաւանից զիրական և զէական գոյութիւն Քրիստոսի 'ի սուրբ խորհրդեան սեղանոյ, և ընդդէմ Լուտերականաց ըզգոյափոխութ̃ի և զերկրպագութի̃ն սրբոյ նշխարին, որպէս և զանընդհատ ներկայութ̃ի Քրիստոսի և արտաքոյ պատարագին 'ի սրբագործեալ նշխարի ։ Բայց 'ի սոցունց չկամեցան այլ ինչ սահմանել վասն հաղորդելոյ զաշխարհիկս ընդ կրկին տեսակօք, որպէս և ոչ առ պատշաճեալն յարարողութիւնս պատարագի, զի մի աստուածաբանք բողոքարկու Լուտերականաց՝ որք կարի նախանձախնդիրք էին այսոցիկ՝ պատճառս առցեն շաղփաղփանաց ։

Ի չորեքտասաներորդ համախմբութեան որ եղև 'ի քսանեհինգ նոյեմբերի՝ հանդիսացան վարդապետութիւնք ուղղափառ եկեղեցւոյ պատշաճեալքն առ խորհուրդս ապաշխարութեան և վերջին օծման ։ Վա̃ն ապաշխարութ̃ե որ հաշտեցուցանէ զմեղաւորն ընդ Աստուծոյ՝ յայտ արար ժողովն եթէ հարկաւոր և օգտակար է յոյժ հաստատելոյ այն խորհուրդ · սահմանեաց դարձեալ և զխտիրն ընդ այն խորհուրդ և ընդ մկրտութիւն ։ Ծանոյց ևս զկարևոր մասունս ապաշխարութեան, այս է զԶղջումն, զԽոստովանութիւն և զԱպաշխարանաց անթերի կատարումն ։ Իսկ յաղագս վերջին օծման՝ որ տայ հիւանդաց զարիութիւն ժուժկալելոյ վշտաց տկարութեանն, հարք ժողովոյն յայտ արարին զսահմանադրութիւն խորհրդոյն և զներգործութիւնս աստուածային ազդեցութեան ։

Ի հնգետասաներորդի համախմբութեան՝ որ եղև 'ի քսանեհինգ յունուարի յամին 1552, տուաւ վերստին գիր ապահովութեան բողոքարկու Լուտերականաց, որոց զանգիտելով անճթահոր լինել 'ի խումբս ժողովոյն յականաւոր աստուածաբանից եկեղեցւոյն ուղղափառաց, զանազան պատրուակօք յապաղէին առաքել անդր զգործակալս իւրեանց · վասն որոյ տուաւ նոցա 'ի ժողովոյն միջոց ժամանակի երից ամսոց մինչև 'ի սկիզբն մայիսի, զի աներկիւղ մարթասցին գալ և առաջիկայ գտանել ժողովոյն ։

Յայնմ ժամանակի բազմահմուտքն 'ի վարդապետս ժողովոյն ինամ կալան առանձինն խորհրդակցութ̃ի 'ի կարգի դնել և զկանոնս պատշաճեալս 'ի խորհուրդ պսակի և ամուսնութեան՝ վասն յօրինելոյ զմձիան զոր հանդերձեալ էին առաջի առնել 'ի վեշտասաներորդում համախմբութեան ։ Եւ մինչդեռ 'ի պատրաստի էին հանապազորդել զժողովն եւ բարեկարգել զեկեղեցի , եւ ահա շշուկ մարտի ընդդէմ կայսերն 'ի դքսէն Սաքսոնիոյ եւ ահ զօրաց նորա , որք դիւրաւ կարէին ժամանել 'ի Տրիդենտոն քաղաք , ստիպեաց զհարս ժողովոյն խուսել 'ի քաղաքէ անտի , քանզի եւ չէր իսկ նոցա հնար կալ անդէն յապահովի ։

Ի դադարել ժողովոյն եհաս եւ վախճան կենացն Յուլիոսի քահանայապետի յամին 1555 'ի հասակի վաթսուն եւ ութ ամաց , որ եկաց 'ի քահանայապետութեան զամս հինգ , զամիս մի եւ զաւուրս վեշտասան ։ Անխտիր ընտանութեամբն ընդ պաշտօնեայս իւր՝ պակասեցոյց զյարգ պատուոյ իւրոյ , եւ յանձնառութեամբք հարկաց նեղէր զհպատակսն , վասն որոյ եւ նոքա 'ի մահու անդ նորա ոչ ինչ սգացան զնա . սակայն եւ զայս յաւելցուք ասել վասն քահանայապետիս՝ եթէ զարդարեալ էր նախանձու աստուածպաշտութեան եւ բազմադիմի բարեմասնութեամբք ։

Յաջորդեաց զնա յիշխանութեանն Մարկեղոս Բ. Չերվինացի , եւ յոյս մեծ էր ամենեցուն եթէ կարասցէ նա բարեկարգել զեկեղեցի . եւ մինչդեռ յուսով եւեթ խնդայր՝ անքննին դատաստանաւն Աստուծոյ յետ քան եւ մի աւուրց ընտրութեան իւրոյ վախճանեցաւ նա յանկարծահաս օրհասիւ . զի անձկութիւն փակարանին արդէն իսկ ակնեալ էր տագնապել զառողջութիւն մարմնոյ նորա . յոր յաւելեալ յետոյ եւ երկարաձիգ հանդէս թագադրութեանն՝ հանդերձ խուռն մտածութեամբք զորս ունէր 'ի բարեկարգել զկղերսն եւ զպաշտօնատարս Հռովմայ՝ կարճեցին զկեանսն ։

Յետ Մարկեղոսի կալաւ զաթոռ քահանայապետութեան կարդինալն Յովհաննէս Պետրոս՝ մականուանեալն Կարաֆֆա նէապօլսեցի որ կոչեցաւ Պօղոս Դ ։ Սա քանզի ամս չորս եւեթ եկաց 'ի քահանայապետութեան , վասն որոյ եւ չեղեւ ձեռնհաս զարման մատուցանել վնասուց եկեղեցւոյ ։ Ի պատճառս ծանրացեալ հասակին ստիպեցաւ թողուլ զհոգ տեսչութեանն 'ի ձեռս եղբօրորդւոց իւրոց , որք այնպէս չարաչար վարէին իշխանութեամբն՝ մինչեւ հօրեղբայր նոցա հարկեցաւ զրկել զնոսա 'ի պաշտամանց և յաքսորս առաքել ։ Եւ քանզի անբերելի վշտաց տալով սա յընտանեաց՝ վասն որոյ և մեռաւ յութուտասն օգոստոսի յամին 1559, 'ի հասակի ութսուն և երից ամաց ։ Նախանձաւորութիւն Պօղոսի Դ. 'ի խափանել զնորահնար մոլորութիւնս՝ յաջողագոյն ևս գտանէր եթէ խառնեալ էր այն ընդ քաղցրութեան և ընդ խոհեմութեան . բայց սովոր էր քահանայապետս 'ի դատս Աստուծոյ և եկեղեցւոյ ոչ երբեք ակն ածել յումեքէ . վասն որոյ զայրացաւ յոյժ ընդդէմ կայսեր և իշխանաց, որք 'ի համբաւաւոր ժողովին Աւկուսթայի յամին 1555, ներողամիտ գտան բողոքարկուացն Գերմանիոյ ։ Անպայման եռանդն սրտի նորա և անյապաղ գործադրութիւն խորհրդոցն՝ անպատուղ արարին զհանճար նորա և զարեմասնութիւնս ։

Յետ Պօղոսի Դ., կալաւ զաթոռ քահանայապետութեան կարդինալն Յովհաննէս Անգելոս 'ի Մէտիչեան զարմէ, որ անուանեցաւ Պիոս Դ. ։ Սա 'ի զահակալել իւրում յամին 1559, փոյթ յանձին կալաւ անդէն ձեռնարկել 'ի կատարումն ժողովոյն Տրիդենտոյ սկզբնաւորելոյ 'ի հնգետասան ամաց հետէ, և զընդհատեալն 'ի պէսպէս խռովութեանց յարուցելոց ընդ ամենայն աշխարհս Եւրոպայ ։ Կոնդակ հրաւիրանաց սփռեցաւ յամսեանն նոյեմբերի յամին 1560 . բայց 'ի պատճառս զանազան խափանաց յապաղեցաւ սկզբնաւորութիւնն յութուտասն յունուարի յամին 1562 ։ Յորում ժամանակի իբրև հասին անդր դեսպանք ուղղափառ իշխանացն, սկսան համախմբութիւնք, որք ընդ քահանայապետութեամբ Պիոսի Դ. եղեն ինն թուով, և ընդ ամենայն բովանդակեցան 'ի քսան և հինգ համախմբութիւնս ։

Եւ թէպէտ 'ի համախմբութիւնսն յայնոսիկ չեղեն նոր ինչ սահմանադրութիւնք զխորհրդոյ պատարագի և վասն հաղորդելոյ զաշխարհիկս ընդ կրկին տեսակօք, և վասն խորհրդոց կարգի և պսակի՝ քան զորս ընդունէր և հաւատայր ընդհանուր եկեղեցի, սակայն եղեն ազգի ազգի վճիռք և կանոնք բարեկարգութեան արժանայարգք և ընդունելիք ։

ԳԼՈՒԽ ԼԲ.

Կանոնք բարեկարգութեան սահմանեալք 'ի ժողովին Տրիդենտայ, և լուծանել ժողովոյն ։

ԳԼԽԱՒՈՐՔՆ 'ի կանոնս այսր ժողովոյ են նախ վ՛ս կրօնաւորաց մենաստանաց և փակարանաց միանձնուհեաց · երկրորդ՝ վասն նզովից և բանադրանաց · երրորդ՝ վասն միջնակի կենաց զոր պարտին վարել եպիսկոպոսունք, որպէս և վասն խնամոց նոցա 'ի հրահանգս քարոզութեան բանին Աստուծոյ, և բնակելոյ 'ի սեպհական վիճակի իւրեանց, որք են բացայայտ օրինադրութիւնք ժողովոյն · յորս յաւելեալ լինին և ազդարարութիւնս, թէ շատասցեն պարկեշտ կահիւք և կարասեօք, որպէս և սակաւապէտ կերակրովք, և թէ մի փարթամացուսցեն զազգականս իւրեանց հարկապահանջութ՟ յիշելով հանապազ եթէ հովիւք են և ոչ հարըստահարողք · չորրորդ՝ վասն իշխանական իրաւանցն, որ կոչի jus patronatus · հինգերորդ՝ վասն տասանորդաց և իրաւանց յուղարկաւորութեան մեռելոց · վեցերորդ՝ 'ի վերայ պաշտպանողական խնամոց, զոր թագաւորք և իշխանաւորք պարտին եկեղեցականաց · եօթներորդ՝ վասն սովորութեան սուսերամարտ կռուոյ առանձին մարդկան, կամ որ նոյն է՝ մենամարտութեան, որ արգելեալ խակ է ընդ պատժով նզովից · ութերորդ՝ զհարձապահ կղերիկոսաց, զորս պատուհասել պարտ է պատժովք սահմանելովք 'ի նախինի կանոնաց եկեղեցւոյ · իններորդ՝ զներողութ՟ց զորոց զկիրառութիւնն սահմանեաց ժողովս պահել անխախտ · շատ է՝ ասէ, զի բաշխեսցին չափով և մեծաւ խոհեմութեամբ ըստ օրինակի և սովորութեան նախնի եկեղեցեաց · տասներորդ՝ 'ի վերայ խտրութեան կերակրոց և ծոմապահոց, որք կարգեալ են 'ի խստամբերութիւն մարմնոյ և 'ի նուաճել զանկարգ յօժարութիւնս ։

Կանոնքս այսորիկ բարեկարգութեան ընթերցան 'ի յետին քսանեհինգերորդ համախմբութեան, որ եղև 'ի հինգերորդի աւուր դեկտեմբերի ամին 1563 ։ Եւ լուծաւ ժողովն մեծապարգաւ ցնծալից գոհութ նութեամբ զոր արար կարդինալն Լորէնայի , բովանդակեալ 'ի մաղթանս , 'ի գովեստ և յերախտապարտ գոհութի՛ առ քահանայապետն, առ կայսրն , առ թագաւորս , առ ազնուականութիւնս միանգամայն . և աւարտեաց զբանսն պանծալի ներբողենիւ վասն վճռոց ժողովոյն՝ ասելով եթէ ՛՛ Այս է վարդապետութիւն առաքելոց և սրբոց հարց , այս իսկ է հաւատ և դաւանութիւն ուղղափառաց ,,։

Յետ այնորիկ արձանագրեցան ստորագրութեամբ անուանք համօրէն հարց ժողովոյն որք էին երկերիւր յիսուն և հինգ . և էին նոքա չորեքին դեսպանք քահանայապետին , երկու կարդինալք , երեք պատրիարգունք , քսան և հինգ արքեպիսկոպոսք , հարիւր վաթսուն և ութ եպիսկոպոսունք , երեսուն և ինն փոխանորդք կամ գործակալք հեռաւոր եպիսկոպոսաց , եօթն աբբայք և եօթն ընդհանրական մեծաւորք կրօնաւորական կարգաց ։ Զայս ժողով համբաւաւոր յոյժ հարկ է համարել քան զայլ ամենայն ընդհանուր սինհոդոսս , նախ՝ 'ի պատճառս խուռն խափանաց և դժուարութեանց զորս հարկ եղև դիւրել առ 'ի գումարել զժողովն . երկրորդ՝ սակս յոգնազգի մոլորութեանց որք հերքեցան անդ . երրորդ՝ վասն իմաստնալից վճռոյն և սահմանադրութեանց որք եղեն . չորրորդ՝ վասն բազմաթիւ իմաստուն և առաքինազարդ եպիսկոպոսաց գտելոց անդ 'ի ժողովն , որպէս Բարթուղիմէոս Մարթիրի արքեպիսկոպոսն Պրակայ քաղաքի 'ի Լուսիտանիա . կարդինալն Հերակլէս Կոնզակայ եպիսկոպոս Մանտուա քաղաքի . կարդինալն Ստանիսլաւոս Ոզիոս եպիսկոպոսն Վարմիա քաղաքի , որ սակս իւրոց պայծառ առաքինութեանց և լուսաւոր վարդապետութեանն անուանեալ էր ՛՛ Աստուած Բոլոնիացւոց կամ Լեհաց ,, . կարդինալն Սերիպանդոս ընդհանրական մեծաւոր օգոստինեան կրօնաւորաց . կարդինալն Կարոլոս Լորէնացի՝ արքեպիսկոպոսն Ռէմս քաղաքի , որ էր իշխանազն բարեհամբաւ սակս ազնուատոհմութեան իւրոյ և բազմապատիկ ծառայութեանցն՝ որովք նպաստամատոյց գտաւ եկեղեցւոյ ։ Թողից յիշատակել և զայլս յոգունս՝ զզարդարեալսն գիտութեամբ և մեծապայծառ առաքինութեամբք ։

Քահանայապետն Պիոս Դ․, խնդալից ցնծութեամբ տեսեալ զլուծանել ժողովոյն որ տեւեալն էր զամս ութեւտասն, 'ի համախմբումն խորհրդարանի իւրում կամակար հաճութեամբ հաւանեալ հաստատեաց զամենայն գործս եւ զվճիռս նորա. եւ ետ զնոսին բովանդակել 'ի մի հատոր մատենից, զոր եւ առաքեաց ընդ ամենայն սահմանս քրիստոսադաւան ազգաց, պատուիրելով հաւատացելոց անսալ եւ հպատակել օրինադրութեանցն որ 'ի նմա. եւ զայս կոնդակ քահանայապետին՝ ընկալաւ նախ հաճութեամբ ազնուապետութիւնն Վենետկեան, ապա Սպանիա, Լուսիտանիա, Բողոնիա, Փղանդրիա, Թագաւորութիւնն Նէապոլսոյ եւ Սիկիլիոյ: Բայց 'ի Գերմանիա՝ անամօթ բողոքարկուաց ոչ ինչ ամենեւին ակնածեալ յիշխանութենէ քահանայապետին եւ յիմաստութենէ հարց ժողովոյն՝ հրաժարեցան ընդունել զայն, վասն որոյ 'ի ժամանակէ անտի եւ այսր կանգնեալ արմատացաւ բաժանումն ընդ մէջ ճշմարտափառաց եւ մոլորելոց, զորոյ զկրծիմն բառնալ՝ խնամոցն Աստուծոյ է որ միայն կարէ լուսաւորելով զխաւարեալ միտս մոլորելոցն ածել 'ի մի փարախ զհօտն իւր:

Այս ժողովս ըստ մասանց վարդապետութեան հաւատոյ՝ ընդունելի եղեւ 'ի Գաղղիա. բայց մերժեցին զբազումս 'ի կանոնաց նորա, համարեալ թէ յայնոսիկ կանոնս հարքն ժողովոյն ոչ ինչ փոյթ յանձին կալեալ իցեն զարժանին պատիւ հատուցանել եւ իրաւանց աշխարհական տէրութեան: Ժողովն իշխաւորացն Փարիզու այնպէս վարկան, որպէս թէ սինհոդոսն շնորհելով եպիսկոպոսաց զիշխանութիւն դատելոյ զաշխարհականս եւ պատուհասելոյ զնոսա տուգանօք եւ բանտարկութեամբ, կամեցեալ իցէ ընդարձակել զեկեղեցական իշխանութիւն եւ նուազել զաշխարհականացն: Բողոք կալան դարձեալ, թէ յառաքելոյ անտի քրէական յանցանք եպիսկոպոսաց առ քահանայապետն Հռովմայ՝ վնաս մեծ էր եւ անպատուութիւն ազգային եւ դատաստանական ժողովոյ, որք յայսպիսի դատս եղեն միշտ օրինաւոր դատաւորք: Նա եւ թէ սահմանել զեպիսկոպոսունս գնալ 'ի Հռովմ յարդարացուցանել զանձինս՝ ոչ միայն ընդդէմ իցէ ազատութեան Գաղղիոյ, այլ և կանոնաց նախնի ժողովոց՝ որք պատուիրեն զայսպիսի դատաքննել 'ի գաւառական ժողովս իւրեանց։ Ահա այսոքիկ և այլ քանի մի պատճառք՝ եղեն միշտ խափանք ընդունելոյ Գաղղիացւոց զկանոնս ժողովոյն Տրիդենտեայ։

Յոլովք յեկեղեցականաց անտի Գաղղիացւոց ջանահնար եղեն յորդորանօք և աղերսանօք հաճել զազգն յընդունելութ՟ի և 'ի հպատակութ՟ի սահմանաց ժողովոյն, որպիսիք եղեն գդեղքն Բլոյեան, և զանազան ժողովք Մելունոյ, բայց վայրապար եղեն փոյթք խնամոց նոցա։ Նոյնպէս անպտուղ եղև և ձիգն զաղղիացի եպիսկոպոսաց որք առաջի արքային ժողովոյ իշխանաւորաց, զի կանոնք բարեկարգու՟ե սինհոդոսին հրատարակեսցին համդերձ յաւելուածովս, այսինքն է. «Անեղծ պահեսցին իրաւունք թագաւորաց և առանձնաշնորհութիւնք եկեղեցւոյն Գաղղիոյ»։ Բայց և այս յաւելուած չեղև բաւական 'ի վստահութիւն և յապահովութիւն ժողովոյ իշխանաւորացն Փարիզու, որք զինչ և իցէ օրինակաւ զհաւանութիւն և զընդունելութիւն կանոնաց ժողովոյն Տրէնտեայ միշտ հակառակ համարեցան սովորութեանց Գաղղիոյ։

ԳԼՈՒԽ ԼԳ.

Յառաջագիմել աղանդոյ կալվինականաց 'ի Գաղղիա։ — Անօրէն դաշնակցութիւն ամրոցին Ամբուազայ, և որ ինչ յետ այնորիկ դէպք։

ԶՈՒԳ 'ի վախճան ժողովոյն Տրիդենտեայ Գաղղիա առ հասարակ վրդովէր ներքին երկպառակութեամբ, և նորահնար մոլորութիւնք յուզեալ տագնապէին զքրիստոնեայս առ հասարակ։ Եւ 'ի մեռանել Հենրիկոսի Բ. յամին 1559 'ի մրցախաղս ուրեք հարուածով նիզակի, կալվինականք զօրացան առ թագաւորութեամբ Փրանկիսկոսի Բ. քանզի մանուկ գոլով նորա հնգետասանամեայ փափկասուն և դիւրամոք, զերասանակ վարչութեանն տուեալ էր 'ի ձեռս մօր իւրոյ Կատարինեայ Մետիչեան, որ էր դշխոյ ճարտարամիտ, խորամանկ և մոլի. և ցանկացեալ միայնակ թագաւորել՝ երկպառակութ՟ի էարկ յիշխանաւորս։ Եւ զի

Գիզեանք քեռիք Մարիամու Սթուարթայ թագուհւոյն Սկովտիոյ, որ էր կին Փրանկիսկոսի Բ., ակնածելիք էին յոյժ յաչս արքային, նմին իրի արքայազունք Գաղղիոյ նախանձեալ ընդ փառս Գիզեանց՝ դժուարէին յոյժ տեսանել զկառավարութիւն յանձնեալ 'ի ձեռս օտարազգի մարդկան. և կամելով 'ի չափու ունել զնոսին՝ իշխանազունն Լուդովիկոս Կոնտէ և զարմն Կոլինի անցին 'ի գլուխ կալվինականաց, որոց կուսակիցք օր ըստ օրէ բազմանային յոյժ յոյժ ։ Բայց սակայն ազնուական Գիզեանք նախանձախնդիրք նախնի դաւանութեան և հաւատոյ՝ նպաստաւորք էին ուղղափառաց ։

Ի նախանձուէ աստի գրգռեալ քաղաքական մարտից յուզեր և յապականութիւն եղին զԳաղղիա համօրէն. քանզի կուսակիցք արքայազանց յարուցին աղմուկ շփոթի 'ի կոչել զթագաւորն 'ի Գիզեանց անտի, և խորհեցան սպանանել զգլխաւորս այնր ազգատոհմի. բայց քանզի հարկ 'ի վերայ կայր մերկանալ զխորհուրդն և բազմաց 'ի կալվինականաց, վասն որոյ անհնար իմն էր թագուն մնալ այնմ. զոր և իմացեալ Գիզեանց՝ յապահովլի կոչեալ նախ զթագաւորն, ձերբակալ արարին ապա զգլխաւորս անօրէն դաշնակցութեան և զբազումս 'ի նոցանէ կախեցին 'ի ատամունս պարսպաց ամրոցին Ամպուազայ, և զՌընաւդիս զգլուխ այնր բազմամբոխ յանդգնութեան սպանին չարաչար, և զմարմին նոցա 'ի մասունս հատեալ՝ եղին 'ի տեսիլ հասարակաց ։

Պատուհասք տանջանացս ոչ ինչ զարհուրեցուցին զկալվինականս, այլ ընդ հակառակն մոլորութիւն նոցա սփռեալ տարածէր ընդ ամենայն գաւառս ։ Յամին 1560 արքայն Գաղղիոյ 'ի խափանել զյառաջադիմութիւն հերետիկոսաց՝ Ռոմորանտեան հրովարտակաւն պատուէր ետ համօրէն եպիսկոպոսաց դատել և պատուհասել զյանցանս հերետիկոսութեան. զայն պատուէր արքայի իմացեալ ժողովոյ աւագանւոյն՝ դժուարացան յոյժ և բազում հակառակութեամբ դատեցին զայն 'ի կարգս արքունի հրովարտակաց ։ Ելապիլն այնր հրովարտակի, որ էր հանդերձապետ արքունի անկելանոցին, անդամանեցաւ յոյժ սախս այնր. բայց փոխանակ թերագրութեան նորա՝ ըստ ասելոյ ոմանց՝ այն էր, զի մի սահմանեսցի 'ի Գաղղիա ատեան սրբաքննութեան, այլ եպիսկոպոսունք կատարեսցեն զգործս այնր ատենի: Սակայն և այնպէս հուր մոլորութեան՝ որ 'ի գաղտնիս ճարակէր 'ի ներքին սահմանս Թագաւորութեան, տագնապէր զարքունի ատենակալսն:

Ընդ ժամանակս ընդ այնոսիկ խորհուրդ 'ի մէջ առին բազմաթիւ իշխանաւորք 'ի Ֆոնթէնբլօյ հանդարտել զամբոխեալ ոգիս. յայնմ ժողովի Կոլինի առաջի արար ատենակալաց աղերսագիր ինչ յանուն կալվինականաց, յորում խնդրէին զազատութի՟ խղճի և զհամարձակ կիրառութի՟ պաշտաման կրօնի և դաւանութե՟ իւրեանց: Յովհաննէս Մոնլուքեան եպիսկոպոսն Վալանսի, որ յօժարամտեալ էր առ նորահնար կարծիս մոլորութեան, խօսեցաւ 'ի նպաստ նոցա. և 'ի կնիք բանից իւրոց յաւել ասել՝ թէ չարաչար և ապստամբ կալվինականք արժանաւորք են աններելի պատուհասից, բայց բարեմիտքն 'ի նոսա քաղցրաբարոյք և հանդարտք՝ արժանի ներողամտութե՟ են. զորս և պատշաճ է թողուլ ազատս և անխռովս 'ի դաւանութե՟ իւրեանց, պատուիրելով զգուշանալ 'ի խռովայոյզ միաբանութեանց: Այսմ խորհրդոյ հաւան եցոյց զանձն և Կարոլոս Մարիլլաք արքեպիսկոպոսն Վիէննայի Գաղղիոյ, քանզի և ինքն իսկ գաղտնի կուսակից էր մոլորութե՟ն. և Կոլինի տեսեալ զզիջումն ժողովականաց առ խնդիրս և աղերս կալվինականաց, սկսաւ խօսել ազդու և համարձակ բանիւք՝ ոչ ինչ ակնածեալ ամենևին յիշխանազանցն Կիզեանց. և վախճան և որոշումն ժողովոյն եղև թողուլ զկալվինականս 'ի հանդարտութեան, միանգամայն հաստատեցաւ՝ զի լիցի այլ ժողով իշխանաւորաց 'ի բարեկարգութիւն իրացս:

Յայն յետին ժողով իշխանաւորաց հրաւիրեցան Թագաւորն Նաւառրայի և եղբայր նորա իշխանազն Կոնտէ: Սա քանզի այր կասկածաւոր համարեալ էր յարքունիս՝ իբր սկզբնապատճառ խռովայոյզ դաւակցութե՟ն Ամպուազ, հարկ համարեցաւ պատառել զպատրուակն և յայտնապէս ցուցանել զկուսակցութիւն իւր ընդ նորաղանդս: Նա քանզի ամբաստանեալ իսկ էր նա վասն այլ իմն գաղտնի դաւակցութեան, նմին իրի որկաւ 'ի բանտ մահապարտաց, և յետ քննութեան կնքեցաւ 'ի պատիժ գլխապարտութե̃. բայց անակնկալ և յանկարծադէպ մահ Փրանկիսկոսի Բ. յամին 1560, պատճառ եղև յապաղելոյ գործադրութե̃ վճռոյն. և Թագուհին Կատարինէ Մետիչեան կամելով շահել զնա, շնորհեցաւ նմա զկեանսն և զազատութիւն ։ Այս հանճարէն ժողովոյ և համախմբութեանց լուծն տուաւ համբաւաւոր հրովարտակն յԱւրէզին քաղաքի յորում դատաստան արեան պահեցաւ ատենակալաց, և հաստատեցան անդրէն ազգային օրէնք ժառանգաւորութեանց՝ պատշաճեալքն առ ընտրութիւնս եպիսկոպոսաց և աբբայից ։

ԳԼՈՒԽ ԼԴ.

Կարգաւորութիւն եպիսկոպոսաց անանց ։

ԿԱԼՎԻՆԱԿԱՆԱՑ զօրավիգն և Թիկունս հզօր անձանց ունելով յարքունիս Թագաւորին, համարձակութիւն առին յոյժ առ մանկութեամբ Կարոլոսի Թ. որ էր եղբայր և յաջորդ Փրանկիսկոսի Բ. ։ Յովհաննէս Մոնլուքեան եպիսկոպոսն Վալանսի զվարդապետութիւնս Կալվինոյ քարոզեաց յարքունիս, և զարմն Գոլինեանց խնամածուք կալվինականաց՝ աննմանք բարեպաշտութեան հօրեղբօր իւրեանց գունստաբլին Մոնմորանսեայ, որ էր խորհրդակից Կիզեանց առ 'ի զդէմ ունել նորանոր մոլորութեանց, ջանահնար եղեն որսալ զկարդինալն Ոդետոս Շաթիլեան զերեց եղբայր իւրեանց, որ վատանունութեամբ անգամնեաց զուգախառութիւն, որում պարտական էր վիճակաւ եպիսկոպոսական պատուոյն և եկամտիցն յոր վայելէր ։

Ի նոյն ծուղակ առաւելի ուրացութեան անկաւ Հերմաննոս Վեյիդեցի արքեպիսկոպոսն Կողոնիոյ, որսացեալ յաղանդաւորացն 'ի Մարտինոսէ Պուցերոսէ և 'ի Մելանքթոնէ. և 'ի կամելն զմոլար վարդապետութիւնս նորա սերմանել 'ի Թեմի իւրում, ժառանգաւորք եկեղեցւոյն բարենախանձք՝ բուռն հակառակութեամբ զինեցան ընդդէմ. յորմէ զանգիտեալ նորա կամակար հրաժարեցաւ 'ի վիճակէն, և առանձնացեալ 'ի հայրենիս իւր 'ի Մէլիդէն, մեռաւ անդ 'ի մոլորութեան իւրում 'ի հասակի ութսուն ամաց ։

Յակոբ Սպիփամէ եպիսկոպոսն՝ Նեւեր քաղաքի մոլորեցաւ ոչ այնչափ 'ի նորահնար վարդապետութենէ, որչափ 'ի տռփմանցն զոր ունէր առ կին մի, ընդ որում յամին 1559 գնացեալ 'ի Գէնեւա յարեցաւ 'ի Կալվին, և նա առաքեաց զնա յԻւրեղին քաղաք իւր դեսպան առ իշխանն Քոնտէ․ և առաքեցաւ 'ի նմանէ 'ի ժողովն Ֆրանքֆորթի արդարացուցանել զհերետիկոսս որք զինուք յարուցեալ էին 'ի կռիւ մարտի, և խնդրել զձեռնտուութիւն նոցա ։ Ի ժողովի անդ համբաւեցաւ նա յոյժ սակս պերճախօսութեանն որով 'ի գլուխ տարաւ զխնդիրն․ և 'ի դառնալ իւրում անդրէն 'ի Գէնեւա, քանզի պարտաւոր յաչս պետութեանն գտաւ վասն սուտ թղթոց դաշանց և կնքոց, գլխատեցաւ յամին 1556, ընկալեալ զարժանին պատուհաս կարգուրացութեանն և խորամանկ բարուց ։

ԳԼՈՒԽ Լ։

Բանակռուութիւն ընդ կալվինականս ։

Ի ԲԱԶՄԱՆԱԼ կալվինականացն 'ի յաճախել զաղտնի և յայտնի խռովուեց՝ բազումք յիմաստնոց և յականաւոր մարդկանէ՝ խորհեցան պապանձեցուցանել և կարկել զբերանս նոցա ատենական վիճաբանութ՟բ, զի թերևս կարասցեն այսու խաղաղել զեկեղեցի ։ Յայս կարծիս էր ընդ այլոց բազմաց և կարդինալն Լօրէնոյ, որում բազմօրինակ բանիւք հակառակ եկաց կարդինալն Տօրնոնի, քանզի և տեղեակ իսկ էր կամակոր և յամառեալ մտաց մոլորելոյն, և ճանաչէր զանպատկառ յանդգնութիւն նոցա 'ի պարսաւել զպաշտօնեայս եկեղեցւոյ 'ի հանդիսական ժողովի անդ յանդիման թագաւորին և աւագանւոյն ։ Բայց 'ի զօրանալ խորհրդոյ ցանկացողացն բանակռուութեան, հաճեցաւ թագաւորն գումարել ժողով յամին 1561 յիններորդ աւուր սեպտեմբերի, յորում գտան առաջիկայ թագաւորն և թագուհի մայր նորա, այլեւս և արքայազունք, և ընդ նոսա վեց կարդինալք, քառասուն և չորս արքեպիսկոպոսունք, թող զայլ եպիսկոպոսս և աստուածաբանս յոգունս ։

Ուղղափառ վարդապետութիւնք հաւատոյ պերճ և ճոխ բանիւք հաստատեցան 'ի կարդինալացն Լօրենայ և Տօրնոնի, և ձեռամբ զտան նոցա և վարդապետքն Կղօդիոս Լապէնջեան, Կղօդիոս Սայլնտեան և Լայնէզ առաջնորդն Յիսուսեանց ։ Իսկ 'ի կողմն հակառակորդաց' Թէոդորոս Բեզա, Պետրոս Մարտիրոս, և Օգոստինոս Մարլորատ նպաստամատոյց եղեն բանիւք կալվինական աղանդոյ . և յանդգնագոյնն 'ի նոսա Բեզա' յակնարկել թագաւորին խօսել' սկիզբն արար բանից իւրոց, և քաղեալ մի ըստ միոջէ զամենայն մասունս հաւատոյ, իբրև եհաս 'ի խորհուրդ սրբոյ հաղորդութեան' ուրացաւ զիրական գոյութիւն մարմնոյն Քրիստոսի յասելն եթէ ‥ Այնչափ հեռի է մարմին Քրիստոսի, որչափ երկինք յերկրէ ‥ ։ Ընդ այս բան նորա խռովեցան ժողովականքն առ հասարակ, ոչ միայն ուղղափառք' այլ և նոքին իսկ համախոհք իւր . որք թէպէտ 'ի սիրտս իւրեանց հաճ և հաւան էին ընդ բանն, սակայն և չկամէին իսկ յայտնի հրապարակել զայն ։ Ընդ այնչափ յանդուգն հայհոյութիւն նորա զայրացաւ յոյժ կարդինալն Տօրնոնի, և ուղղեալ զբանն առ թագաւորն' անբերելի եցոյց զհայհոյութիւնն յանդիման ժողովականաց . վասն որոյ դադարեցուցեալ զխօսն խորհեցան լուծանել զժողովն և յայլ օր համախմբել դարձեալ ։

Ի ժամանել սահմանեալ աւուր համախմբութեանն կարդինալն Լօրենայ ըստ յառաջագոյն պատրաստութե՟ իւրոյ ատենախօս եղև պանծալի ճառիւք, յորում վըկայութեամբք սուրբ գրոց հերքելով զմոլորամիտ վարդապետութի՟ կալվինականաց 'ի վերայ խորհրդոյ հաղորդութե՟, եցոյց յայտնի զճշմարտութիւն դաւանութե՟ ուղղափառաց . և ապա պաշտպան կացեալ իշխանութեան եկեղեցւոյ, յաւել ցուցանել' թէ հակառակորդք ուղղափառաց առ պակասութեան 'ի նոսա առաքելական պաշտօնին, որպէս և յաջորդութեան եկեղեցական կարգի, չունին իրաւունս մտանել յայսպիսի դատս . վասն որոյ և չէ իսկ արժան ունկն մատուցանել նոցա ։ Ի բանից սորա զայրացեալ հակառակորդաց' ձեռն արկին բաղմասնաւորիկ առաջնօք արհամարհել զպաշտօնեայս եկեղեցւոյ. և 'ի պատասխանի առնել ուղղափառաց և 'ի հերքել զպարտաւանս նոցա, կարդինալին Լորենայ խափանել կամեցեալ զվայրապար աղճատանս հակառակորդաց՝ սկսաւ բանադատել զնոսա գալ 'ի հաւանութիւն և հաւասար ընծայել խորհրդոյ հաղորդութեան, ձեռնագրելով դաւանութեանն հաստատելոյ 'ի ժողովն Աւկուսթայ, յորում այս խորհուրդ աւանդի բացայայտ։ Եւ զի կալվինականք չէին հաճ ընդ այն վարդապետութիւն լուտերականաց, ջանահնար լինէին պէսպէս պատճառանօք խուսել անտի, զի մի յայտնի թշնամութիւն ծագեսցի ընդ լուտերականս. վասն որոյ յարեաւ շփոթութիւն և աղաղակ, մինչև անհնարին լինել նոցա լսել և իմանալ զբանս միմեանց. վասն որոյ ստիպեցան լուծանել զարձեալ զժողովն, և սահմանել այլ օր 'ի համախմբութիւն և 'ի միաբանական դաշնագրութիւն։ Սակայն ոչ ինչ արդասիք 'ի վեր երևեցան և յայնմ համախմբութենէ 'ի պատճառս խորամանկ նենգութեան թիւրելոցն 'ի ճշմարտութենէ, որք և յանդգնեցան ապա ստութեամբ համբաւել՝ որպէս թէ յաղթահարեալ իցեն զուղղափառս և զբազումս 'ի նոցանէ որսացեալ 'ի վարդապետութիւնս իւրեանց։

Յանկարծ տարաձայնութենէ կալվինականացն դայթակղեալ թագաւորին Նաւարրոյի խոյսեցաւ 'ի նոցանէ. բայց մոլորականացն օր քան զօր առաւելեալ չարութեամբ զօրացան յոյժ յոյժ, մինչև հարկ եղև պետութեան կրկին հրովարտակօք ներել նոցա զպաշտամունս դաւանութեան իւրեանց. յորոց առաջինն տուաւ յամսեանն յուլիսի յամին 1561, և երկրորդն 'ի յունուարի յամի 1563։ Թոյլտուութիւնս այս աներկիւղ պաշտամանն կալվինականաց՝ վնասուց մեծամեծաց պատճառք եղև Գաղղիոյ. քանզի բազումք յուղղափառաց որք դայթ 'ի դայթի կային 'ի դաւանութե՟ իւրեանց՝ համարձակութիւն առին միաբանել ընդ Հուգոնեան անուանեալ կալվինականս, մինչև 'ի մենաստանաց անգամ գտան յոլով ուխտաւորք և կարգաւորք, որք կատաղի մոլեգնութեամբ զինեցան ընդդէմ դաւանութեան և կրօնի զոր քարոզէին կանխաւ։

ԳԼՈՒԽ ԼԶ.

Դրգռել քաղաքական մարտի ։

Ընդ ժամանակն ընդ այնոսիկ երեք յականաւոր իշխանաց աքբունեաց, Գոնդստապլն Մոնմորանսի, դուքսն Կիզեան և մարաջախտն Սէնթ-Անտրէ, միաբանեցան նուաճել զկուսակիցս Հերետիկոսաց՝ որոց թիկունք պաշտպանութեան կային մեծն Քոնտէ, և ծովապետն Քոլինի ։ Միաբանութիւն երեցունց իշխանացս երգիծական բանիւ անուանեցաւ 'ի կալվինականաց Իշխանութիւն եռապետաց, և ահ մեծ 'ի վերայ կայր քաղաքական մարտի ։ Յայնու ժամանակաւ յամի տեառն 1562 զինուորք դքսին Կիզեան 'ի Վասի աւանին Շամփանիոյ սպանին 'ի Նորադաւանից զորս իբր վաթսուն՝ մինչ կատարէին նոքա զպաշտամունսն իւրեանց Ընթրիս անուանեալ. և ահա այն եղև սկիզբն և նշան թշնամութեան և պատերազմի ։

Պատմաբանք կալվինականաց ջան գործեն ցուցանել՝ եթէ զատուորն այնր աւանի 'ի ծանուցանել դքսին զհրովարտակն արքունի վասն ազատ և համարձակ պաշտաման կրօնի, դուքսն Կիզեան արկեալ զձեռն իւր 'ի սուր՝ ասացեալ իցէ. « Հա սա ոչնչացուցէ զանհանդուրժելին զայն հրովարտակ »։ Եթէ արդարև ասացեալ իցէ զայն դուքսն, հարկ 'ի վերայ կայ ասել եթէ առ ցաւոց դառնութեան սրտին բերեալ իցէ յայն. քանզի կոտորածն Վասեայ ընդդէմ էր կամաց նորա ։ Բայց Հերետիկոսքն խնդրէին իւրեանց պատճառս և պատրուակ յարուցանել զապստամբութիւն և մարտ քաղաքական, որպէս և արարին իսկ ։

Ի սաստիկ և յարիւնահեղ մարտի ուրեք, զոր ետուն 'ի սահմանս Դրէու, յամին 1562 ուղղափառք կորուսին զմարաջախտն Սէնթ-Անտրէ, և 'ի կալվինականաց անուի կալանաւորեցաւ իշխանն Քոնտէ ։ Յերկրորդում ամի դուքսն Կիզեան պաշարեաց զՕրլէան զգլխաւոր քաղաք և զամուր ապաստանի Նորադաւանից, և անդ 'ի մատնութենէ կալվինականի ուրումն սպանաւ դուքսն ։ Ի նոյն եղեան անօրէնութեան կանխաւ կամեցեալ էր գործել և այլ ամն իշխան կալվինական 'ի պաշարման անդ Ռուան քաղաքի, և խրաւէկ լեալ այնմ դքսին՝ եհարց զպատճառն. «Միթէ արարի ինչ, ասէ, քեզ չնաս»: Նա պատասխանի անօրէնն, «Արդարև ոչ, սակայն ոխերիմ թշնամի ես դու դաւանութեանս իմոյ»: Յայնժամ ասէ դուքսն. «Եթէ հաւատք քո ուսուցանեն քեզ շաղախել զձեռսդ արեամբ, իմ հաւատք խրատեն զիս ներել քեզ, վասն որոյ շնորհեմ զկեանսդ. այլ դու մտախոհ լեր, թէ ո՛ր 'ի հաւատոց առաւել ընտրելագոյն իցէ»:

Յետ պատերազմացս այսոցիկ դադարեցին ժամանակս ինչ յարիւնհեղութենէ՝ շնորհելով կալվինականաց ազատութեամբ պաշտել զկրօնս իւրեանց. և յայս խաղաղութիւն յորդորեցան յերկիւղէ Անգղիացւոց, որոց տուեալ էին կալվինականք զՀաւր քաղաք: Իշխանն Կոնտէ կուսակից կալվինականաց՝ յօժարամիտ էր և ձեռնհաս իսկ հաշտութեան և հանդարտութեան, եթէ թագուհին ըստ խոստման իւրում տուեալ էր նմա զաստիճան պատուոյ խորհրդականութեան, և ցուցեալ զվստահութիւն իւր առ նա՝ որպէս արար թագաւորն՝ Նաւարրայի եղբայր թագուհւոյն: Բայց յորժամ անգոսնեալ մերժեցաւ նա յաչաց թագուհւոյն, այնուհետև շիջաւ 'ի սիրտ իշխանազնն սէր հայրենեաց և խաղաղութե հասարակաց. վասն որոյ վերստին արծարծեցաւ պատերազմն յամին 1567, և իշխանն Կոնտէ ել ընդդէմ ուղղափառաց 'ի մարտ առ երի քաղաքին կոչեցելոյ Սէն-Տընի կամ սուրբ Դիոնեսիոս: Ի կռուի անդ վիրաւորեցաւ 'ի մահ և զունդստապլն Մոնմորանսի, որ մի էր յերից անուանի դաշնակից իշխանաց, զոր կալվինականք Իշխանութի եռապետաց անուանեցին: Սովոր էր նա ասել յաճախ. «Մի է հաւատ, մի օրէնք և մի թագաւոր»: Յետ այսորիկ յաղթեցան և այլ կրկին մարտք պատերազմի 'ի Ժառնաք և 'ի Մոնքոնտուր, յորս ոչ յաջողեցան կալվինականք. և յառաջնում մարտի անդ յամին 1569, իշխանազնն Կոնտէ սպանաւ 'ի Մոնթեսքեայ, որ հրացանաւ ջախջախեաց զգլուխ նորա մինչ մատուցանէր նա զանձն 'ի կալանաւորութիւն. վասն որոյ հրամանատարութիւն զօրացն կալվինականաց յանձնեցաւ Կոլինեայ՝ որ անակնկալ յաղթութեամբք զօրացաւ յոյժ:

Յամին 1570 ուղղափառք ստիպեցան շնորհել կալվինականաց զամենայն առանձնաշնորհութիւնս զսահմանեալն կանխաւ. և յաւելան յայնոսիկ վասն ապահովութեան նոցա և չորեքին ամուր քաղաքքն Ռոշել, Մոնթալպան, Կոնեա և Կարիտա. շնորհեցաւ նոցա դարձեալ համարձակ ունկնդրութիւն քարոզութեան վարդապետաց իւրեանց, թոյլ տուաւ նոցա մտանել անխտիր յամենայն քաղաքական պաշտամունս, և զի 'ի վէճս իւրեանց ընդ ուղղափառս՝ կարասցեն անպատճառ ընտրել և սահմանել զթիւ դատաւորաց։ Աւթեպէտ օգտակարք յոյժ կալվինականաց դաշինքս եղեն, սակայն 'ի պատճառս այսոցիկ մարտ պատերազմի յուզեցաւ 'ի սահմանս Կաղզիոյ, և բազումք որոց ճարակ եղեն 'ի կալվինականաց և յուղղափառաց միանգամայն։

ԳԼՈՒԽ ԼԶ.

Անողորմ կոտորած դաշնակից կալվինականաց 'ի տօնի սրբոյն Բարթուղիմէոսի։

Ոչ ինչ երկարատև եղև դաշինն խաղաղութեան. քանզի յետ իբր երկուց ամաց չարախորհուրդ ծովապետն Քոլինի երկնէր 'ի միտս՝ յուզել դարձեալ զմարտն քաղաքական. զայն իմացեալ արքային Կարոլոսի Թ. և Կատարինեայ դշխոյի մօր նորա, զայրագին ցասմամբ եդին 'ի մտի բնաջինջ առնել զամենայն կալվինականս որք գաղտնի դաւամբ միաբանեալ էին ընդ միմեանս ընդդէմ ուղղափառաց։

Արդ սկիզբն եղև անհանգուրժելի անգթութեանն 'ի գիշերին քսանեչորրորդ աւուր ամսեան օգոստոսի՝ յաւուր տօնի սրբոյն Բարթուղիմէոսի առաքելոյ յամին 1572։ Քանզի 'ի ժամադիր պահուն մոլեգնաբար յարձակեցան 'ի վերայ ամենայն նորաղանդիցն սփռելոց ընդ համօրէն թաղս Փարիզ քաղաքի, և կոտորեցին անխնայ զբազումս յաղանդաւորաց անտի։ Պարագլուխ և առաջնորդ անգութ դահճացս եկաց Հենրիկոս որդի Ֆրանկիսկոսի դքսին Կիզեան. յայնմ կոտորածի մեռաւ և անօրէն ծովապետն Քոլինի, և զդի նորա յետ բազմանախատ անարգանաց կախեցին զփայտէ ՚ի Մոնֆալքոն ։ Նոյնպէս և կոմսն Լռոշ-ֆուքոյ, Տելինի, Սէվէլ և այլ բազում իշխանք և պաշտօնատարք ՚ի կալվինեանց անտի թուով իբր երկու հազարք կոտորեցան սրով. ընդ որս և յոլովք յուղղափառ իշխանաց անպարտ սպանան ՚ի թշնամեաց իւրեանց ընդ պատրուակաւ՝ որպէս թէ և նոքա համակիցք իցեն կալվինականաց ։

Հենրիկոս թագաւորն Նաւարրայի՝ քեռայր Կարոլոսի արքայի, որպէս և Հենրիկոս իշխանազն Գոնտեան՝ յետ կալով ՚ի մոլորութենէն ապրեցան ՚ի մահուանէ. և ապա Կարոլոսի արքայի սրբել կամեցեալ յանձնէ զկեղտ վատանուանութեան վասն այսպիսի անիրաւ գործոյ, եհան գիր յայտարարութեան, յորում ծանուցանէր զդաւադրութիւն իբր առ այն գործ սակս ապահովութեան՝ առ ՚ի զդէմ ունել գաղտնի միաբանութեան կալվինեանց ընդդէմ կրօնից և ընդդէմ անձին իւրոյ ։ Օրինակ այնր յայտարարութեան առաքեաց և առ քահանայապետն Գրիգոր ԺԳ., իսկ նա վասն ատելութեան զոր ունէր ընդդէմ մոլորութեանց՝ որպէս վկայէ Պաւլէ՝ խնդամիտ ընկալաւ զայն լուր աղետալի, զոր յետոյ քահանայապետք անգոսնելի համարին. զի ընդդէմ է աստուածադիր օրինաց քրիստոնէութեան այսպիսի օրինակաւ պաշտպանութիւն առնուլ. այլ ընդ հակառակն՝ սիրով և քաղցրութեամբ շահել զամենեսին, որպէս ուսոյց զլուխ և առաջնորդ խաղաղութեան մերոյ Յիսուս Քրիստոս ։

Կարոլոս Թ. զկնի երից աւուրց այնր հարուածի իբրև եմուտ ՚ի ժողով խորհրդականաց՝ տեղեկակս առնել զնոսին հաւաստագրուժ միաբանութեան կալվինականաց ընդդէմ տէրութեան, նախադաս ժողովոյն առ ՚ի պահել զպատիւ արքային՝ յօժարեցաւ առ ժամն գովել զարթնութիւն ճարտարութեան նորա, զի մարթացաւ ՚ի գլուխ հանել զայնպիսի ծանր և դժուարին գործ ։ Բայց յետոյ յառանձնախօսութեան իւրում ընդ թագաւորին մայրոյ՝ ազդու բանիւ առաջի արար, թէ չէր օրէն յանխորհուրդս ձեռնամուխ լինել յայն, և տալ զէնս համարձակութեան ՚ի ձեռս խաժամուժ ամբոխին, յորոց կասկածութենէ յոլով անմեղք ընդ մեղապարտ պատուհասեցան. այլ պարտ էր զգլխաւորս յանցաւորացն նախ խրատել, և ապա պատժել ըստ օրինաց ։

Ընդորում կատարածս այս յանդուգն մոլեգնութեան, կատաղի ժողովրդեանն՝ կարօտացաւ բուռն հրամանի թագաւորին, զի դադարեսցեն 'ի կոտորելոյ. բայց չեղև հնար միանգամայն 'ի չափու ունել զմոլեգին կատաղութիւն նոցա, այլ տակաւ զիջաւ եռանդն նոցա և նախանձայուզութիւն ։

Յետ այնորիկ խուռն ընթացան ամենեքին 'ի Կրեվեան հրապարակն, և անդ յանդիման թագաւորին և թագուհւոյն հատին զգլուխ արձանին Կոլինեայ, և ապա ընդ քարշ ածեալ զայն 'ի վերայ տղմի՝ բերին 'ի Մոնֆաւքոն, ուր սովոր էին դնել զգլխատեալս աւազակաց և չարագործաց։ Ի հաւատարմացուցանել ապա ժողովրդեան զչարամիտ նենգութիւն գաղտնի դաշնադրութեան կալվինականաց 'ի փառս հաւատոյ՝ մատուցին հրապարակաւ գոհութիւն առ Աստուած, որ խայտառակեաց զմեքենայս չարութեան նոցա։ Բայց չեղև հնար 'ի հաւան ածել զամենեսին. մանաւանդ զեպիսկոպոսս, որոց ցաւեաց յոյժ ընդ անգութ կոտորածն, և մորմոքէին 'ի յաճախել անդ օր ըստ օրէ աղէտալի լրոյ յարտաքին գաւառաց և քաղաքաց ։ Հրամանն կոտորածի կալվինականաց աղետաբեր եղև յոյժ Գաղղիոյ, մանաւանդ 'ի Ռուան, 'ի Լիոն և 'ի Թուլուզ. քանզի յայսմ քաղաքի սպանան հինգ խորհրդականք դատաւորական զգեստուք իւրեանց, որպէս և յայլ տեղիս ուր ճարակ եղեն քսան և հինգ կամ երեսուն հազար ոգիք, մինչև գետոց լնուլ դիականբք 'ի սոսկումն ամենեցուն, և յապականութիւն օդոյ կողմանցն ընդ որս անցանէին ։ Եւ վասն անհանդուրժելի կոտորածին տագնապեալ թագաւորին 'ի խղճէ մտացն՝ յայտ արար ամենեցուն թէ այն անցք աղէտալիք գործեալ իցեն առանց իւրոյ հրամանի ։

Ի կոտորածէ անտի զերծան գաւառքն՝ որոց քաղաքապետք և դատաւորք բարեկամք էին ազգատոհմին Մոնմորանսի գունդստաբլին ։ Նորմանտ և Պայոն քաղաքք զերծան բարեգութ խնամակալութեամբ Մատինիոնի և Վիգոմթի Օրթեզեանց որք էին քաղարապետք քաղաքացն . զի 'ի ժամանել արքունի հրամանին՝ ետուն պատասխանի, թէ չէ հնար մեզ հաւատալ՝ եթէ յայտնի անդորր կատարած հրապարակեալ ինչ իցէ թագաւորն զհրովարտակս իւր .

Զնոյն մարդասիրութիւն յանձին բերին և ոմանք յեպիսկոպոսաց , որպէս Յովհաննէս Սթէնուէր եպիսկոպոս Լիզիէօ քաղաքի եկաց հայր և հովիւ հօտին իւրոյ . քանզի 'ի լսել անդ 'ի գաւառապետ տեղակալէ արքային զհրամանն կատարելոյ զամենայն կալվինականս գտեալս 'ի քաղաքին՝ ընդդէմ եկաց գործադրութեան և արգել 'ի կատարմանէն . վասն որոյ գովեստս և պարգևս ընկալաւ 'ի թագաւորէն վասն անզուգական գթոյն զոր եցոյց 'ի վերայ ժողովրդեան . Եւ որ զարմանալին է՝ զի մարդասիրութիւն եպիսկոպոսին ազդողագոյն գտաւ քան զսուր զինուորաց . որով ուղղեցան սիրտք , և հանդարտեցաւ ոգի խռովութեան կալվինականաց այնր թեմի , մինչև յոգունց 'ի նոցանէ յետս կալ 'ի մոլորութենէ իւրեանց , և դառնալ զուղղափառ հաւատս .

Կուսակիցք կալվինեանց թէպէտ և տկարացան յոյժ 'ի կոտորածէ անտի , բայց ոչ 'ի սպառ անհետացան . վասն որոյ զերծեալքն 'ի կոտորածէն ընդ նախնի մոլեգնութեանն զոր ունէին՝ առացան և ոգի անհաշտ թշնամութեան և վրէժխնդրութեան , որով առին զէն 'ի ձեռս , և զրաւեալ զքանի մի քաղաքս՝ ամրացան 'ի նոսին . Ի Սանսէռ քաղաքի մնացին պաշարեալք զամիս եօթն՝ տանելով անբերելի սովու , մինչև հարկ եղև տէրութեան գթասիրել 'ի նոսա և ներողամտութեամբ 'ի հաշտութիւն յորդորել զնոսա . Սակայն և այնպէս խռովայոյզքն և անհանդարտք միաբանեալ շարժեցան 'ի զէն , և առ հարկի բռնադատեալ տէրութեանն 'ի նոյն պատերազմութիւն , եհաս օր վախճանի Կարոլոսի Թ. յամին 1574 , որով կերպարանափոխ եղեն ամենայն խորհուրդք երկոցունց կողմանց . Յաջորդէր աթոռ արքայութեանն որով վախճանեցաւ թագաւորս , ըստ ասելոյ Պախուէի , եղև ահաւոր յոյժ . զի կալաւ զնա բուռն ցնցումն մկանանց , և 'ի սաստկութենէ զորմանն բացան քրտնահոս ծակտիք մարմնոյն , և բղխեցին աղբիւրք արեան , և արքայն թաւալէր յարեան իւրում . որով և ելոյծ զվրէժ պատուհասի անգութ արիւնահեղութեանն .

Կարոլոս արքայ անագան ուրեմն ծանուցեալ զվրիպակ յանցանացն, 'ի վերջին աւուրս կենաց իւրոց մեղմացոյց զխստութիւն բարուց իւրոց, և փոյթ յանձին կալաւ բարեկարգել զիշխանութիւն իւր, յայտ արարեալ թէ քանի հարկաւոր է արքայազանց խնամ բարւոք դաստիարակութեան, և որչափ զգուշալի անագան զգաստութիւն և յապաղումն բարւոք առաջադրութեանց.

ԳԼՈՒԽ ԼԸ.

Թագաւորութիւն Հենրիկոսի Գ., և անցք նորահնար դաշնակից միաբանութեան ուղղափառաց.

ԴՈՒՔՍՆ Անժուի եղբայր Կարոլոսի Թ., որ առաւ յառաջ ընտրեալ էր յաթոռ տէրութեանն Լեհաց, եթող զթագաւորութիւնն 'ի ժառանգել զթագ արքայութեանն Գաղղիոյ. Նա ստիպեալ 'ի հանգամանաց ժամանակին դաշնադիր լինել դարձեալ ընդ կալվինականս, յամին 1577 շնորհեաց նոցա զշահաւորագոյն պայմանս խաղաղութեան՝ որպիսի չէր երբէք լեալ յառաջին դաշնադրութիւնս. Քանզի ետ նոցա զլիակատար ազատութիւն խղճի մտաց, և համարձակութիւն կատարելոյ անխափան զպաշտամունս կրօնի կալվինականութեան՝ կրկին փարսախօք անդր քան զՓարիզ քաղաք. Ետ նոցա ատեան դատաստանի 'ի մէջ ութ խորհրդարանաց տէրութեան, և սահմանեցաւ զի անդամք նոցա կիսով չափ ուղղափառք իցեն և կիսով կալվինականք. Եւ եւս այնուհետև թշնամանադիր բանիւք արհամարհէին ուղղափառք զԱօլկինի, և գլխաւորք կալվինականաց համարեցան 'ի դաս բարի և հաւատարիմ հպատակաց տէրութեան. Շնորհեցաւ ևս ազատութիւն ուխտադրաց կրօնաւորաց և կարգաւորաց քահանայից 'ի պահել զկանայս իւրեանց, և որդիք նոցա համարեցան օրինաւոր ծնունդք. Ահա այս էին գլխաւոր մասունք համբաւաւոր դաշանցն.

Պայմանք հաշտութեան կարի անհաճոյ և վնասակար թուեցան ուղղափառաց. և զի կարդինալն Լորենայ՝ վախճանեալ յամին 1574 'ի կենդանութեան իւրում արկեալ էր զհիմն մասնաւոր ընկերութեան իւիք զինելոյ ընդդէմ հերետիկոսութեան, ձեռն արկին ուղղափառք նորոգել զայն միաբանութիւն, որ անուանեցաւ սրբազան դաշնակցութիւն։ Այս ընկերութեան յօդեցան գրեթէ ամենայն ականաւորքն յուղղափառս, ընտրելով իւրեանց գլուխ և առաջնորդ զիշխանազունն Գիզեան տոհմին 'ի պահել հաստատուն և անփոփոխ զնախնի հաւատս ուղղափառութե̃ ընդդէմ նորահնար վարդապետութեանց։ Եւ 'ի պատճէնի անդ թղթոյն զոր ամենայն ուրեք առաքէին հրաւիրել զամենեսեան յայն ընկերութիւն՝ գոյին և այս բանք սպառնալեաց եթէ “Որ միանգամ հրաժարեսցի կամ յապաղեսցէ մտանել յընկերութիւնս յայս՝ թշնամի համարեսցի Աստուծոյ, հաւատադրուժ, ապստամբ 'ի թագաւորէ, մատնիչ հայրենեաց, լքեալ և անգոսնեալ յամենեցուն„ և որ այլ ևս 'ի սոյին ասկի բանք։

Եւ քանզի կենդրոն այսր միաբանութե̃ էր 'ի Փարիզ քաղաք, բազումք 'ի միաբանելոյն շախողն համբաւոյ ամենայն ուրեք ծաւալեցին՝ իբրու այն թէ թագաւորն 'ի ծածուկ ձեռնտու իցէ կալվինականաց, և թէ 'ի մայրաքաղաքի անդ կայցեն առաւել քան զտասն հազար կալվինականս կամ նենգամիտ կեղծաւորս. քանզի այսպէս կոչէին զնոսա յորջորջումն յայնցանէ՝ որք հաւատարիմքն էին և խանդակաթք առ թագաւորն և փափաքողք բարւոյ հասարակաց։ Արդ 'ի ձեռն յորդորական խրախուսանացն բորբոքեցան քաղաքացիքն առ հասարակ խաժամուժ ամբոխիւն հանդերձ. և քարոզք բանին թշնամանագիր արհամարհանօք նախատէին զթագաւորն Նաւարրայի, և զարքայն իսկ Գաղղիոյ՝ զոր կուսակից և ձեռնտու համբաւէին հերետիկոս արքային. և զոր քարոզչացն չէր մարթ յայտնաբանել, խոստովանահարք մեկնաբանէին զնոյն։ Նա և այլ ինչ հնարեցան յայնժամ գործք բարեպաշտութե̃ 'ի յուզել զամբոխն. սահմանեցան թափօրք յամենայն եկեղեցիս քաղաքին, և խորանք զարդարեցան մեծագին ականմք և կահիւք ոսկւոյ և արծաթոյ 'ի խաղել զաչս ժողովրդեան։

Հենրիկոս դուքսն Գիզեան՝ մականուանեալն Պալաֆրէ, այս է, Զատագէմ, 'ի պատճառս վիրացն զոր 'ի դէմսն ընկալեալ էր 'ի պատերազմին ընդդէմ կալվինականաց, գլուխ լեալ և ընդհանուր հրամանատար դաշնակից միաբանութեանն՝ ջանայր և հնարէր 'ի ձեռն այսպիսի մեծահանդէս եկեղեցական պաշտամանց ահաբեկել զուղղափառս և գրգռել զնոսա ընդդէմ կալվինականաց. և 'ի բանս նորա հրապուրեալ բազմաց սկսան թշնամանօք վարիլ ընդ նոսա, և 'ի զօրանալ այնր միաբանութեան որ Սրբազանն յորջորջիւր՝ Հենրիկոս Գ. արքայ Գաղղիոյ բռնադատեցաւ առ հարկի հաստատել զայն միաբանութիւն, քանզի յայնմանէ առաւել քան 'ի կալվինականաց անտի երկնչէր. վասն որոյ և անուանեցաւ գլուխ այնր դաշնակից միաբանութեան։

Կալվինականք ունելով իւրեանց առաջնորդ զԹագաւորն Նաւառրայի և զիշխանազնն Քոնտէ, զինեցան վերստին 'ի մարտ, և տարան 'ի գլուխ զհամբաւեալ յաղթութիւն ընդդէմ ուղղափառաց առ Քութրէ քաղաքաւ յամին 1587։ Յայնմ պատերազմի Թագաւորն Նաւառրայի ընդ արիական քաջութեան եցոյց և զգութ մարդասիրութեան իւրոյ, խնամելով զվիրաւորեալսն յուղղափառաց, և առանց փրկանաց արձակելով զգերեալսն. և յետ այնորիկ մեծաշուք հանդիսիւ ետ թաղել զդուքսն Ժուայէօզ, զոր կալվինականք դաւաճանութեամբ սպանեալ էին արտաքոյ մարտի, որպէս և զդուքսն Փրանկիսկոս Կիզեան։

Հենրիկոս արքայ տեսեալ զազգային զայն խռովութիւն, համարեցաւ եթէ Սրբազանն անուանեալ միաբանութիւն ուղղափառաց՝ իցէ գիւտ և խորհուրդ սնափառութեան իշխանացն Կիզեանց, որք և պարագլուխ լեալ այնմ և առաջնորդ՝ յաւելուն զօրացուցանել զռանաւորութիւն դաշնակցաց. և եդ 'ի մտի նուաճել զնոսին և ջնջել 'ի միջոյ զայն միաբանութիւն. վասն որոյ նենգութեամբ ջանացաւ 'ի գլուխ հանել զխորհուրդս մտացն. քանզի 'ի սահմանս Պլուա քաղաքի 'ի ձեռն աւազակաց ետ սպանանել զերկոսին գլխաւորս այնր միաբանութեան, զՀենրիկոս դուքսն Կիզեան և զկարդինալ եղբայր նորա։

Ի լուր համբաւոյ այնր սպանութեան զայրացան յոյժ դաշնակիցքն, վասն որոյ դուքսն Մէնայի եղբայր սպանելոյն անց 'ի գլուխ դաշնակցաց, և ժողովլ Սորբոնեան վարդապետաց հրատարակեաց թէ հպատակք Հենրիկոսի արքային ազատ են յերդմանէ հաւատարմութե՟, յոր սակս դուքսն Մ՝ենայի ընտրեցաւ տեղակալ համօրէն ուխտութեան ։ Օրաժողով եղեն և խումբք դաշնակից միաբանութեանն և սկսան մարտ դնել ընդդէմ թագաւորին իւրեանց, և քաղաքք անուրք կուսակից եղեն դաշնակցաց․ յորմէ զանգիտեալ Հենրիկոսի արքայի՝ ստիպեցաւ դաշն հաշտութեան դնել ընդ արքային Նաւարրայի ։

Յայնմ՝ ազգային շփոթութեան 'ի Փարիզ քաղաքի՝ որպէս և յամենայն սահմանս Գաղղիոյ սփռեցան բազմապատիկ գրուածք խռովայոյզք, և ոչ ևս յաւելին այնուհետև յիշատակել զանուն թագաւորին յաղօթս և 'ի պաշտամունս եկեղեցւոյ՝ ըստ վճռոյ Սորբոնեան վարդապետաց․ և ապա հրատարակեցաւ դատակնիք նզովից Հենրիկոսի Գ․ 'ի քահանայապետէն Հռոմայ և 'ի Սորբոնեանց ։

Յետ այնորիկ գոգցես ամենայն քաղաքք պետութե՟ն զրգռեալք յապստամբութիւն 'ի պատգամաւորաց անտի դաշնակից միաբանութե՟ն՝ մոռացեալ էին զխրապէս ոգի քրիստոնէութե՟ ։ Խաժամուժ ամբոխն Տոլոզայ սպան չարաչար զնախապատիւ դատաւորն Տիւրանտ, և զգլխաւոր փաստաբանն Աֆֆի, զերկոսին արսն ականաւորս զբարեհամբաւեալսն հաւատարմութ՟ առ թագաւորն և անպարտութեամբ վարուց ։ Զմարմինս Տուրանտեայ, որ միշտ հակառակ դաւու խռովարարաց, հանին 'ի կախաղան․ յորմէ զարհուրեալ այլոց իշխանաւորաց խորհրդարանին Տոլոզայ՝ խառնեցան 'ի գունդս դաշնակցաց ։ Նա մինչ զի խաժամուժ ամբոխն համարձակեցաւ ապա հանել 'ի կախաղան զպատկեր թագաւորին 'ի հրապարակի, և զկենդանագիր նորա ձաւաղէմ վաճառէին բարձրագոչ ձայնիւ թէ „ Հընգից դանգաց բռնաւորն մեր վաճառի „ ։

Հենրիկոս արքայ պատուհասեալ բազմապատիկ բանադրանօքն՝ համարեալ էր 'ի ժողովրդենէն ախտապէս հերետիկոս, կամ գէթ դաշնակից հերետիկոսաց․ վասն որոյ չէին ինչ զարմանք եթէ պատրուակեալ նախանձ բարեպաշտութեան յորդոր լինի մարդկան անցանել ըստ չափ 'ի նախատինս և 'ի թշնամանս ։ Արդ առ 'ի նուաճել զբռնունն ժողովրդեան՝ Հենրիկոս արքայ յամին 1589 եկն զօրու ծանու պաշարել զՓարիզ քաղաք զապստամբեալն յիւրմէ, բայց յանակնկալս սպանաւ դաշնակաւ 'ի վրանի անդ իւրում 'ի ձեռն դոմինիկեան երիտասարդ կրօնաւորի ուրումն՝ անուանեալ Յակոբ Կղեմէս, որ հաւանեալ էր 'ի միտս իւր՝ թէ այնու սպանութեամբ հաճոյական ինչ գործ առնիցէ Աստուծոյ, և մարթասցի նովաւ ժամանել յաւիտենական փրկութեան ։ Դոմինիկեանք 'ի կշիռ բաղդատութեան դնէին զնա ընդ Յուդիթայ, և զՀենրիկոս ընդ Հողեփեռնեայ, իսկ զազատութիւն Փարիզ քաղաքի՝ ամրոցին Բետիղուայ ։ Բազմապատիկ ձայնք և գրուածք հանդիսացան 'ի գովեստ սորա, և նկարագիր դիմացն պատուեցաւ իբր զքաջազգին ուրուք և զանն սրբոյ ։

Ընթացք կենացն և եղանակ տէրութեան Հենրիկոսի արքայի պատճառս ետուն զայրագնելոյ բազմաց՝ ոչ միայն բարեպաշտ քրիստոնէից, այլ և համեստ քաղաքացւոց. զի տուեալ էր զանձն 'ի մեղկութիւն և 'ի դատարկութիւն. անառակ շռայլութեամբ յանարժանս վատնէր զստացուածս ժողովրդեան իւրոյ, որք հեծէին ընդ ծանր և անբերելի նորանոր հարկօք զորս յաճախէր 'ի վերայ նոցա. և ատելի եղև ոչ միայն ուղղափառաց, այլ և կալվինականաց գլխովին ։

ԳԼՈՒԽ ԼԹ

Թագաւորել Հենրիկոսի Դ., և արձակումն նզովից նորա 'ի քահանայապետէն Կղեմայ Ը ։

Ի ՄԵՌԱՆԵԼ Հենրիկոսի Գ. շիջաւ 'ի նմա և ցեղն Վալուեանց. վասն որոյ Հենրիկոս թագաւոր Նաւարրայի օրինաւոր ժառանգ էր թագաւորութեանն Գաղղիոյ ։ Այլ զի ընդ իրաւանց ծննդեան չէին նորա ոչ բարեկամք բազումք, ոչ ամրոցք հզօրք, ոչ բազմաձեռն գունդ զօրաց և ոչ արծաթ բաւական, անվեհեր արիութիւն սրտի և կենցաղագէտ ճարտար տեսչութիւն փոխանակեցին ընդ այնր ամենայնի, որովք զօրացեալ յաղթական գտաւ 'ի բազում պատերազմունս, յորս նշանաւոր պարտ է համարել զմարտն գումարեալ առ երի Իվր աւանի ընդդէմ դքսին Մենայի, զի սա յետ մահու դքսին Գիզեան եղբօր իւրոյ ամբարձեալ էր 'ի գլուխ դաշնակից միաբանութեան։

Հենրիկոսի տեսեալ զյաջողութիւն զինուց իւրոց՝ դիմեաց պաշարել զՓարիզ քաղաք, և 'ի միում ևեթ աւուր տիրեաց համօրէն արուարձանեայցն. և նովին յարձակմամբ մարթ լինէր նմա առնուլ և զքաղաքն, եթէ չէր զանգիտեալ յաւարահարութ՟է զօրաց իւրոց։ Այլ այս երկիւղ թուլացոյց զպաշարումն քաղաքին միանգամ և երկիցս, և ոչ կամեցեալ ապա զէն ամբառնալ ընդդէմ բնիկ ժողովրդեան իւրոյ և հպատակաց, ծանեաւ եթէ քաղաքացիքն ատեան զնա վասն մոլար դաւանութեան իւրոյ. վասն որոյ յանձին կալաւ յօժարակամ մտանել 'ի գոգ հռովմէական եկեղեցւոյ. զայսմանէ յետ աւուրց ինչ յերկարագոյն նուագօք խօսեցեալ ընդ ոմանս յեպիսկոպոսաց՝ յամին 1593 յետս եկաց 'ի մոլորութենէ իւրմէ՝ հերքելով զայն յեկեղեցւոջ սրբոյն Դիոնեսիոսի յանդիման արքեպիսկոպոսին Պուրժ քաղաքի, յորմէ ընկալաւ զարձակումն յամենայն բանադրանաց։ Այս գործ Հենրիկոսի արքային կերպարանափոխ արար զամենայն ինչ. քանզի յետ այնորիկ բազում քաղաքք կամակար մտօք մտին ընդ լծով իշխանութեան նորա, և խաղաղասէր Գաղղիացիք մեծաւ ակնկալութ՟բ սպասէին ցրուելոյ և անհետանալոյ դաշնակից միաբանութ՟են՝ որ առաւելապէս զօրացեալ էր 'ի Փարիզ քաղաքի, յոր սակս և ընդերկար եկաց յապստամբութ՟ե. քանզի անդ դեսպան քահանայապետին և միանձունք Դոմինիկեանք յորդորէին զամենեսին ընդդէմ թագաւորին։ Դուքսն Մենայի՝ որ ոչ համարէր զանձն յապահովի 'ի մայրաքաղաքին, խոյս տուեալ էր անտի, յանձնելով զտեսչութիւնն Պրիսաք կոմսի. իսկ նորա խաղաղացուցեալ զխռովս քաղաքացւոց՝ համարձակեցոյց զթագաւորն մտանել 'ի Փարիզ յամի 1594 'ի քսաներորդի առաջներորդի աւուր ամսեանն մարտի՝ գիշերայն։ Այլ զի մուտ նորա 'ի քաղաքն եղև անխռով խաղաղութեամբ, վասն որոյ պահել կամեցեալ արքային զյաւերժական յիշատակ այնր յաջողութեան, հրամայեաց ամի ամի 'ի քսաներորդի երկրորդի աւուր մարտի ամսեան 'ի փառիւ զՀանդէս Թափօրի ։

Յետ այնորիկ 'ի բառնալ զամենայն պատրուակ անհնազանդութեան ընդդիմամարտ դաշնակցաց՝ հարկ համարեցան Թագաւորին առնուլ զարձակումն և 'ի քահանայապետէն Հռովմայ ․ վասն որոյ Տիւփէրրան և Օսաթ, որք և ծիրանաւորեցան ապա 'ի Հռովմ վասն այսր գործոյ, աշխատ եղեն ամենայն փութոյ ինդութք և խոհական իմաստութք կատարել զխնդիրն ․ բայց քանզի Սպանիացիք խուլարար կուսակիցք դաշնակցացն բազում խոչս 'ի մէջ արկանէին, Կղեմէս քահանայապետ ոչ համարձակէր 'ի գլուխ տանել զխնդիր Գաղղիացւոց ։ Յայնժամ Օլիվիէրի մին 'ի դատաւորաց Ռոթա ատենին Հռովմայ, որ յոյժ ընտանութեամբ էր ընդ քահանայապետին՝ յաւուր միում համարձակեցաւ ասել ցնա ․ "Կղեմէս Է․ կորոյս զԱնգղիա 'ի հաճել զկամս Կարոլոսի կայսեր ․ իսկ Կղեմէս Ը․ կորուսցէ զԳաղղիա, եթէ անսասցէ Փիլիպպոսի Բ․ արքային Սպանիոյ ․․․" ։ Երկուցեալ քահանայապետին 'ի բանից աստի, կոչեաց առ ինքն զՏիւփէրրան և զՕսաթ զդեսպանս Գաղղիացւոց, և 'ի խորհուրդ մտեալ ընդ նոսա՝ հաճեցաւ արձակել զԹագաւորն 'ի նզովից այսու պայմանք, զի Թագաւորն Հենրիկոս վերստին հաստատեսցէ զուղղափառ հաւատս 'ի Պէառն գաւառի՝ որ կայ առ սահմանօք Պիրենեանց ․ զի խնամ կալցի հրահանգել և դաստիարակել զարքայազն պատանին Կոնտէ՝ զժառանգ Թագաւորութեանն՝ յուղղափառ հաւատս ․ զի անեղծ պահեսցէն դաշինքն սահմանեալք վասն եկեղեցական ժառանգաւորութեանց ․ զի Թագաւորն ստիպեսցէ զամենեսին հնազանդել վճռոց Ժողովոյն Տրիդենտոյ բաց յիրացն որք մարթ էին աղմկել զխաղաղութիւն հասարակաց ․ զի խնամակալ և պաշտպան լինիցի եկեղեցականաց ․ զի մի՛ շուք դիցէ և պատուադիր լիցի այնոցիկ որք չիցեն ուղղափառք ․ և զի օր ըստ օրէ ասասցէ զվարդարան սրբոյ Կուսին, իսկ 'ի չորեքշաբաթի և 'ի շաբաթու զլիթանիայս նորին ․ պահեսցէ զարձեալ զպահս և զծոմապահս հրամայեալս յեկեղեցւոյ, և անխափան յամենայն աւուր լուիցէ զսուրբ պատարագն, և կանգնեսցէ մենաստանս յամենայն գաւառս տէրութեան իւրոյ ։ Օ այսոսիկ պայմանս հանդերձ այլովք եւս յաւելուածովք յանձին կալան Տիւփէրրոն եւ Օսսաթ գեսպանք, եւ խոստացան սահպել զթագաւորն յանթերի լուծն դաշանցն · վասն որոյ 'ի Հինգերորդ աւուր ամսեանն սեպտեմբերի (1595) Սղեմէս Ը. հանդիսիւ մեծաւ եւ արձակմամբ հրազինաց յամրոցէ անտի սրբոյ Հրեշտակապետին ետ զարձակումն թագաւորին, ընդ որ խնդացին յոյժ ամենեքեան ։ Կարդինալն Տոլէդոյ, թէպէտ եւ սպանիացի, առաւել քան զամենեսին նպաստամատոյց գտաւ յաջողութեան գործոյս՝ յօգուտ հանդարտութեան Գաղղիոյ ։ Իսկ կարդինալն Պլակենտիոյ կամ՝ Փիաչէնցայի որ 'ի ժամանակս խռովութեան դաշնակցաց էր դեսպան կամ՝ նուիրակ 'ի Գաղղիա, եւ այլք զօրավիգն դաշնակցաց, 'ի դառնալ իւրում 'ի Հռովմ՝ փոխելով զառաջին կարծիսն՝ խնդակից եղեւ խաղաղութեանն, որով դադարեցին խռովութիւնք կրօնականք եւ հաստատեցաւ ուղղափառութիւնն 'ի Գաղղիա ։ Աստուծոյ միայնոյ է արդարեւ զկարծեցեալ չարիս 'ի բարին փոխել, եւ անակնկալ յաջողութեամբք հանդարտել զխիստ խռովեալս ։

ԳԼՈՒԽ Խ

Հրովարտակն Նանթեայ, եւ դաշնակից միաբանութիւն ուղղափառաց ընդ կալվինականս ։

ՅԱՆԴՈՐՐԱՆԱԼ Հենրիկոսի Դ. եւ 'ի հաստատել յաթոռ թագաւորութեան, խորհեցաւ զառաջս առնուլ զաւթից պատերազմաց եւ զթշնամութեանց՝ որք մինչեւ ցայնժամ յաւեր եւ յապականութիւն դնէին զԳաղղիա · վասն որոյ գուն գործեաց առատ պարգեւօք յինքն որսալ զխիստ գլխաւորացն դաշնակից միաբանութեանն, միանգամայն խոստացաւ եւ կալվինականաց զազատութիւն պաշտաման եւ կրօնի ։ Վասն որոյ յամին 1598 'ի Նանթ քաղաքի եհան հրովարտակ արքունի, յորում նորանոր յաւելուածովք հաստատէր զամենայն շնորհս եւ զազատութիւն՝ զորս կալվինականք սրով իւրեանց ստացեալ էին 'ի նախորդաց նորա · այս է՝ զկատարեալ ազատութիւն խղճի մտաց և զյայտնի պաշտօն դաւանութեանն 'ի քաղաքս յորս կայցէ ժողովն կամ խորհրդարան իշխանաւորաց ։ Թոյլ ետ նոցա տպագրել զամենայն գիրս 'ի քաղաքն յորս համարձակ էին 'ի պաշտաման իւրեանց . ետ նոցա իրաւունս մտանելոյ անխտիր յամենայն քաղաքական պաշտամունս և 'ի գործառնութիւնս . շնորհեաց նոցա և քաղաքս յերաշխաւորութիւն ապահովութեան նոցին ընդ միջոց ժամանակի ամաց ութից ։ Սահմանեցաւ դարձեալ զի ատենական ժողովք լիցին յուղղափառաց և 'ի կալվինեանց միանգամայն ։

Այսմ հրովարտակի՝ որ զլխաւոր իշխանութիւն և զհամարձակ ազատութիւն շնորհէր նորաղանդից՝ ընդդէմ զինեցան կղերք Գաղղիոյ, Սորբոնեան վարդապետք և համալսարանն Փարիզու և ատեանն ժողովոյ խորհրդականաց , որք և կամէին իսկ ոչ արձանագրել 'ի դիւանի զայն հրովարտակ ։ Արդ խաղաղել կամեցեալ արքայի զխռովս հակառակողաց՝ կոչեաց առ ինքն երկուս երկուս գործակալս յիւրաքանչիւր ատենից խորհրդականաց , և խօսեցաւ ընդ նոսա առանձինն և ասէ . «Ուղղափառ հաւատոց ոչ է մարթ այլով իւիք հաստատութիւն առնուլ՝ բայց եթէ խաղաղութեամբ , և խաղաղութիւն տէրութեան է խաղաղութիւն եկեղեցւոյ . . . . ։ Չէ պարտ յայսմ հետէ խտիր դնել ընդ ուղղափառս և ընդ կալվինեանս . շատ է զի ամենեքեան իցեն բարի Գաղղիացիք , և ուղղափառքն օրինակաւ բարեպաշտութեան իւրեանց շահելով զկալվինականս՝ առաջնորդեսցեն նոցա 'ի ծոց եկեղեցւոյ . . . . ։ Ես ինքն ուղղափառ եմ, և կամիմ իսկ ոչ զի յիմում տէրութեան ցուցցէ ոք զանձն ուղղափառագոյն քան զիս ։ Նման եմ ես հովուի՝ որ քաղցրութեամբ խնդրէ զհօտ իւր ածել 'ի փարախ . . . . .»։

Ի յորդորական բանից թագաւորին զիջեալ ատենի խորհրդականաց՝ յանձին կալաւ դնել զհրովարտակն 'ի կարգս արձանագրութեան արքունի հրամանաց ։ Սակայն այս ամենայն առանձնաշնորհ ազատութիւնք կալվինականաց ոչ կարացին երբէք սանձել զյօժարամտութիւն նոցա յապստամբութիւն , որպէս տեսցուք համառօտիւ 'ի վէպս պատմութեան հետագայ դարուց ։ Ընդ սմին տնկակից է գոգցես բարուց ամենայն աղանդաւորաց՝ ոսոխ յառնել ոչ միայն ուղղափառ կրօնից, այլ և պետութեանց և թագաւորաց գըլխովին ։

ԳԼՈՒԽ ԽԱ.

Ծագք և պատմութիւն հալածմանցն Անգղիոյ յԱնգղիատրեթէ գլխոյ ՚ի դառներէն Հենրիկոսի Ը. և մահ Մարիամու Եդուարդայ:

ԱՆԲԵՐԵԼԻ տագնապք խռովութեանցն՝ որոց տաբաւ ուղղափառ եկեղեցի յԱնգղիա, թէպէտ և ոչ ՚ի կէս բաղդատութեան գայցեն ընդ անբաւ արիւնհեղութիւնս Գաղղիոյ, սակայն և այնպէս արժանաւորք են հետաքննին ընթերցասիրաց ։ Գրեցաք կանխաւ զաւաղելի մահ Հենրիկոսի Ը. յամին 1547, զոր և արգասիս պարտ է համարել տագնապեալ խղճի մտաց նորա և թախծութեան սրտին . յետ նորա նըստաւ յաթոռ թագաւորութեան որդի նորին Եդուարդ ՚ի հասակի ինն ամաց ։ Դաստիարակութիւն մանկահասակ արքայազնին յանձն լեալ էր ՚ի խնամս երկոտասան անգղիացի իշխանաց, որք սնուցին զնա մոլորամիտ ուսմամբ նորահնար վարդապետութեանն ։ Եդուարդ Սէյմուր՝ դուքսն Սոմմըրսէթի՝ քեռի նորա, որ վարէր զամենայն իշխանութիւն տէրութեանն, և հաւանեալ էր վարդապետութեան Կալվինի և Զուինկլիոսի, զոր գործէր զբովանդակ Անգղիա աշակերտել այնմ դաւանութեան ։

Բայց քանզի կրօնական փոփոխութիւնս այս ծանր էր յոյժ և դժուարընտել հասարակաց, բազմադիմի խոչք ելին ընդ առաջ . զի ուղղափառք բուռն մարտնչէին ընդդէմ նորահնար վարդապետութեանն, պանծալի և օգտակար ցուցանելով զուղղափառ հաւատս հռովմէական եկեղեցւոյ . մանաւանդ զի բազումք ՚ի պատուական և ՚ի մեծարոյ արանց ազգին յօժարամիտք էին ՚ի նախնին դաւանութիւն ։ Այլ և նոքին իսկ նորաղանդք տարտամեալ կային, յերկմիտս գոլով թէ զո՞ր ընտրել պարտ իցէ յերկաքանչիւր կողմանց դէմընդդէմ հակառակութեանց ։ Հանապազ յօրինէին նորանոր դաւանութիւնս հաւատոյ, երբեմն յաւելլով և երբեմն յապաւելով ինչ ինչ 'ի յօրինեալ մասանց անտի խոստովանութեան ։ Այլայլեցին զեկեղեցական պաշտամունս . որ ըստ օրէ ելանէին հրամանք և օրինադրութիւնք 'ի թագաւորէն և 'ի ժողովոյ խորհրդականաց՝ 'ի ստիպել զժողովուրդն հաւատալ կամ հերքել զմասունս ինչ հաւատալեաց . սահմանէին արարողութիս եկեղեցականս և դնէին սահման իշխանութե եպիսկոպոսաց և առաջնորդաց ։ Ահա այսպիսի եղև հիմնարկութիւն վերանորոգութեան Անգղիականն անուանեալ եկեղեցւոյ, զոր խաւարեալք ոմանք կոչեցին գործ լուսոյ կամ լուսաւորութեան մտաց ։

Ի նորահնար դաւանութեան հաւատոյ նոցա բովանդակէին մոլորութիւնք բողոքարկու լուտերականաց զքաւութենէ մեղաց, և թէ 'ի ձեռն հաւատոյ եւեթ մարթ իցէ արդարանալ մեղաւորին . զխորհրդոյ սրբոյ հաղորդութեան, զխորհրդոց եկեղեցւոյ, զսուրբ գրոց, զքաւարանէ, զներողութեանց, զյարգութենէ պատկերաց, զնշխարաց սրբոց, զպաղատանաց առ սուրբըս, և զմաղթանաց վասն ննջեցելոց ։ Ի նմին դաւանութեան հաստատէր և ծայրագոյն իշխանութիւն թագաւորին 'ի մէջ եկեղեցւոյ . և հերքեալ դատապարտէր մոլորութիւն Կրկնակնունք հերետիկոսաց ։

Զկարգ և զօրէնս պաշտամանց եկեղեցւոյ յօրինեցին ըստ կարգի և կանոնաց նոցին իսկ բողոքարկուաց ։ Բարձան 'ի միջոյ սեղանք պատարագի, խաչք, պատկերք, կահք և հանդերձանք 'ի պէտս և 'ի սպաս աստուածային պաշտամանց . խափանեցաւ և սովորութիւն վերջին օծման հիւանդաց ։ Զայս ամենայն հաստատեալ ժողովով ատենի խորհրդականաց տէրութեան յամին 1547 յամսեանն դեկտեմբերի, ըստ վճռոյ նոցա հանդիսապէս տարագրեցին յԱնգղիոյ զուղղափառ հաւատս . և եկեղեցի նոցա՝ անուանեալն Անգղիական՝ խառնուրդ իմն եղև նորահնար մոլորութեցն լուտերականաց և խորհրդադաւանից ։

Յամի տեառն 1553 'ի մեռանել Եդուարդայ նստաւ յաթոռ թագաւորութեան Մարիամ դուստր Հենրիկոսի ութերորդի 'ի Կատարինեայ Արագոնացւոյ . և զի ունէր 'ի մտի վերստին հաստատել զուղղափառութիւն , սկսաւ ունայնացուցանել զամենայն հրովարտակսն արարեալս 'ի հօրէ իւրմէ և յեղբօրէն ընդդէմ իրաւանց և իշխանութեան ուղղափառ եկեղեցւոյ · տարագիր արար 'ի թագաւորութենէն զամենայն ստարականս զառածեալս 'ի նորահնար մոլորութիւնս · զզուինկլեան և զլուտերական եպիսկոպոսունս՝ որք յամառեալ գտան 'ի մոլորութիւնս իւրեանց՝ դատապարտեաց այրել 'ի հուր · և զԿրանմէր զարքեպիսկոպոսն Կանտըրպերիոյ՝ որ եղև գլխաւոր սատար բաժանման Հենրիկոսի Ը. 'ի Կատարինեայ դշխոյէ՝ եբարձ 'ի կենաց ։

Ընդ այն ժամանակս առաքեցաւ 'ի Հռովմէ և կարդինալն Փոլոս իբրու դեսպան յԱնգղիա · և 'ի ժամանել իւրում հակառակ եկաց անգութ խորհրդոց ոմանց 'ի պաշտօնատարաց թագուհւոյն ։ Պարտ է , ասէր , հովուաց ունել սիրտ գորովագութ , և կարեկից լինել մոլորելոց անգամ ոչխարաց , և իբրև հայր բարեգութ հայել յորդիս իւր կորուսեալս , և որպէս 'ի վէրայ հիւանդաց խնամ տանել նոցա 'ի բժշկութիւն և ոչ 'ի սպանութիւն ։ Այնպէս ցուցանէր՝ եթէ տարապայման խստութիւնն սովոր է զայրացուցանել զչարս , և թէ խտիր մեծ է ընդ տէրութիւն՝ յորում սակաւաթիւք իցեն ուսուցիչք , և ընդ թագաւորութիւն՝ յորում եկեղեցականք և աշխարհիկք թաղեալ կայցեն 'ի վիհս մոլորութեանց · վասն որոյ փոխանակ վարելոյ զխստութիւն 'ի խլել զմոլորութիւնս՝ պատշաճագոյն է տալ ժողովրդեան ժամանակ , զի տակաւ մարթասցին գալ յուղղութիւն ։ Գովելի և իմաստուն խորհուրդ կարդինալին թէպէտ և ազդու գտաւ առ 'ի չափու ունելոյ զսպանութիւնս , սակայն ոչ մարթացաւ դադարեցուցանել զնոսին 'ի սպառ ։

Ի վախճանել Մարիամու դշխոյի յամի տեառն 1551 , կալաւ զաթոռ թագաւորութեան երկրորդ դուստրն Հենրիկոսի արքայի Եղիսաբէթ անուն՝ ծնեալ յԱննայէ Պոլենայ ։ Կամեցեալ սորա հաստատել յիւրում իշխանութեան , շնորհեաց ազատութիւն խղճի ամենայն հպատակաց իւրոց · վասն որոյ և անուանեաց զանձն իւր Գերագոյն գլուխ Անգլիական եկեղեցւոյ · անուն արդարև ծաղրական յանձին կնոջ մարդոյ ։ Այպէս ահա անգղիականն անուանեալ կրօն Անգղիոյ՝ հաստատեցաւ առ Թագաւորութեամբ Եղիսաբեթի , և յայնժամ կարգաւորեցան անդ եկեղեցական պաշտամանք ըստ օրինակին որով վարին ցարդ յԱնգղիա . պահեցան դասակարգութիւնք արքեպիսկոպոսաց , եպիսկոպոսաց , կանոնիկոսաց և ժողովրդապետաց , և բազում ինչ յարարողութեանց ուղղափառաց . բայց 'ի վարդապետութիւնս հաւատոյ գոգցես ըստ ամենայնի միաբանեցին ընդ լուտերականս և ընդ կալվինականս :

Վարդապետութիւնք աղանդապետացն այնոցիկ վաղու ևս արմատացեալ էին 'ի Սկովտիա , որ զայնու ժամանակաւ ունէր իւր առանձինն Թագաւոր : Յովհաննէս ոմն Քնոքս մականուանեալ՝ անդստին յամէ 1552 քարոզէր ընդդէմ պաշտաման պատարագի և այլոց մասանց ուղղափառ հաւատոյ , և աշակերտեալ էր զլուղումն : Սա ինքն հալածեալ յեպիսկոպոսաց աշխարհին իբրև մոլորեցուցիչ ժողովրդեան՝ խոյս ետ 'ի Գենևա , և անտի դարձ արար անդրէն 'ի Սկովտիա 'ի ժամանակին՝ յորում Մարիամ Ստուարթ ժառանգ այնր Թագաւորութեան գնաց 'ի Գաղղիա հարսնանալ արքային Փրանկիսկոսի Բ : Քնոքսի ժամ դիպաւոր համարեալ զհեռանալ անտի դշխոյին Մարիամու՝ ջանահնար եղև մուծանել անդր զձև պաշտաման և զեկեղեցական կարգն սահմանեալ 'ի Կալվինոյ 'ի մէջս Գենևացւոց , և գուն գործեաց ապա հաստատել զայն հանդիսիւ 'ի ձեռն խորհրդարանին Սկովտիոյ . և յամի 1560 այսպէս սփռեալ տարածեցաւ վարդապետութիւնն Կալվինոյ յայնմ աշխարհի . և Մարիամու Ստուարթայ դարձ արարեալ 'ի հայրենիս իւր զկնի մահուան առն իւրոյ՝ հազիւ կարաց ընդունել զհրաման մատուցանել տալոյ զպատարագ յիւրում մատրան :

Դշխոյս այս տառապեալ նշաւակ եկաց բազմապատիկ վշտաց և նեղութեանց 'ի Սկովտացւոց անտի , և 'ի պատճառս նորա տագնապեցան յոյժ և ուղղափառք : Կենցաղ դշխոյիս , որպէս վկայէ Գոխէ , աճեցոյց զատելութիւն հպատակաց իւրոց ընդդէմ ուղղափառ կրօնից . քանզի սովորեալ գոլով նորա մեծափառ ճոխութեան արքունեացն Գաղղիոյ , անգոսնել կամեցեալ զՅակոբ կոմս Մըրրէի զանհարազատ եղբայր իւր, որ էր գլուխ կալվինականաց, ամուսնացաւ ընդ Հենրիկոսի Սթուարթեայ ազգականի իւրում, և պսակեաց զնա արքայական թագիւ. բայց յետ սակաւուց և զնա ևս արհամարհեալ՝ բարձրացոյց 'ի մեծագոյն պատիւ պաշտաման զերաժիշտ ոմն, ընդ որ զայրացան յոյժ ոչ միայն մեծամեծք տէրութեանն, այլ և ինքն իսկ թագաւորն. որ և վրէժխնդիր լինելով պատուոյ իւրում՝ սպան զերաժիշտն զամբարձեալն 'ի պաշտօն արքունի ատենադպրութեան և առաջին գործակալութեան թագուհւոյն։ Սրտմտեալ դշխոյն ընդ այն, թէպէտ և առ երեսս ներողամիտ գտաւ արքային առն իւրում, բայց զկնի ամաց ինչ ետ խեղդամահ առնել զնա յանկողնի, և գաղտնի ականահատութեամբ ցընդել յօդս զսենեակն՝ յորում ննջէր թագաւորն։ Կոմն Պոթվէլայ գործադիր էր անօրէնութեանն. և ոչ յետ բազում աւուրց համարձակեցաւ խնդրել զթագուհին 'ի կնութիւն. որում ոչ զիջաւ նա՝ մինչև փոքր մի արդարացոյց կոմն զանձն իւր յեղեռնագործութենէն։ Իսկ յայտնի եղև այսու թէ սպանող արքային չէր ատեցեալ 'ի թագուհւոյն. վասն որոյ և հպատակացն վառեալ 'ի ցասումն և յատելութիւն ընդդէմ դշխոյին, զինեցան 'ի մարտ պատերազմի, և կալանաւորեալ զՄարիամ դշխոյ արգելին յամրոց ուրեք. այլ նորա հնարիւք իմն զերծեալ անտի՝ անց 'ի գլուխ զօրաց իւրոց, և ոչ կարացեալ զդէմ ունել բռնութեան թշնամեաց՝ ստիպեցաւ փախչել յԱնգղիա, կարծելով լինել անդ յապահովի։ Բայց Եղիսաբէթ դշխոյ քանզի մախայր 'ի սրտէ ընդ գեղեցկութիւն նորա և ընդ հանճարեղ բարոյն, թելադրութեամբ այլոց ետ կալանաւորել զՄարիամ, և յետ խիստ և երկարատև բանտարգելութեան գլխատպարտ արար զնա։

Կատարեցաւ վճիռն 'ի սկիզբն 1587 ամի 'ի Ֆրանտինկէմ ամրոցի. խնդրեաց Մարիամ, զի 'ի հրապարակական տեղւոջ հատցեն զգլուխ իւր՝ որպէս զի կարող լիցի յանդիման ամենեցուն վկայել և յայտ առնել զուղղափառ հաւատս իւր ըստ օրինակի նախնեաց իւրոց։ Եւ 'ի բարձրաւանդակն արիական սրտիւ, մինչև յարտասուս շարժել և զոխերիմ թշնամիսն, խօսեցաւ առ ժողովուրդն որ խռնեալ էր անդէն, աղօթեաց առ

Աստուած վասն եկեղեցւոյ և վասն Թագուհւոյն Եղիսաբեթի, որպէս և վասն դահճի իւրոյ, և մեռաւ առնացի քաջութեամբ և քրիստոնէական բարեպաշտութեամբ։

Յաջորդեաց զՄարիամ ՚ի թագաւորութեան Սկովտիոյ Յակոբ Զ., որ ՚ի փախչել մօր իւրոյ յամին 1568 գոլով ՚ի հասակի երկուց ամաց՝ անուանեալ էր թագաւոր Սկովտիոյ, և ՚ի մանկութենէ անտի սնեալ և հրահանգեալ նորահնար աղանդովն յամբառնալ իւրում յաթոռ թագաւորութեան պաշտպան և խնամակալ եկաց հաստատութեան անգղիական եկեղեցւոյ, որ և յայնմ հետէ և այսր եղև գլխաւոր կրօն յԱնգղիա, ՚ի Սկովտիա և յԻռլանտա։

Եղիսաբեթ դչխոյ զերծեալ ՚ի կասկածանաց և յերկիւղէ համապատիւ ոսոխին իւրոյ Մարիամու, առաւել ևս զայրացաւ ՚ի թշնամութիւն ընդդէմ ուղղափառ հաւատոյ. մանաւանդ յետ կայծակնահար նզովից և կոնդակին Պիոսի Ե., որ զհպատակս թագուհւոյն ազատս կացուցանէր յերդմանէ հաւատարմութեան. ընդ որ զայրացեալ յոյժ Եղիսաբեթի՝ ապառնալեօք պատուհասից սահմանեաց բազմապատիկ օրէնս ՚ի խափանել ՚ի սպառ զուղղափառութիւն։ Զանցառութիւնք օրինացն նախ պատուհասեալ լինէին ծանր տուգանօք դրամոց. ապա զրաւելով յարքունիս զամենայն ստացուածս յանցուցելոյն, և յետոյ մշտնջենաւոր բանտարկելութեամբ, որով բազումք յուղղափառաց անհնարին վիշտս վտանգի կրեցին։

Ի սկզբան անդ թագաւորութեան Եղիսաբեթի եպիսկոպոսունք որք ոչ կամեցան ճանաչել զնա գլուխ անգղիական եկեղեցւոյ՝ կողոպտեցան յաւագութենէ իւրեանց, և յոլովք ՚ի նոցանէ բանտարկեալ եղեալ՝ վիշտս ծանունս կրեցին։ Ուղղափառ քահանայք փախուցեալք կամ աքսորեալք յԱնգղիոյ՝ համարեցան մեծեղեռն յանցաւորք յիրս արքունի, և ՚ի համարձակել ումանց ՚ի նոցանէ յանծանօթս դարձ առնել անդր՝ ըմբռնեցան և չարաչար տանջանօք զրկեցան ՚ի կենաց։

ԳԼՈՒԽ ԽԲ.

Հերձուածք 'ի պատճառս նորակրօնութեանն Անգղիոյ։

Ընդ թագաւորութեամբ Մարիամու դստեր Հենրիկոսի Ը., որ խնամ կալաւ անդրէն հաստատել զուղղափառութիւն յԱնգղիա, բազումք 'ի նորակրօն աղանդաւորաց փախուցեալ էին յԱնգղիոյ յահէ Մարիամու. առ ժամանակօք Եղիսաբեթի դարձ արարին նոքա անդրէն յԱնգղիա՝ աշակերտեալք մոլորութեանցն սփռելոց 'ի Հելուետիա և 'ի Գաղղիա։ Սոցա անհաւան գտեալ նորագործ կարգաւորութեանց կրօնին Անգղիոյ, որ կարի թոյլ և մեղմ թուեցաւ նոցա, քակեալ որոշեցան յանգղիական եկեղեցւոյն, և կազմեալ իւրեանց առանձինն միաբանութիւն՝ անուանեցան Ժողովականք. կոչեցան ապա և Երիցականք, զի չկամելով հպատակել իշխանութեան եպիսկոպոսաց՝ պնդէին թէ ամենայն քահանայք կամ պաշտօնեայք եկեղեցւոյ հաւասարք իցեն յիշխանութեան, և թէ պարտ է եկեղեցւոյ կառավարիլ յերիցանց՝ կամ 'ի ժողովոց խմբելոց 'ի պաշտօնէից և յանձանց 'ի ծերագոյն աշխարհականաց, որպէս սահմանեալ իսկ էր Կալւինոյ 'ի Գենեւա։

Ի հակառակութենէ աստի յերկուս դասս բաժանեցան նոքա, և փոխանակ գտանելոյ հնարս միաբանելոյ 'ի կարծիս իւրեանց՝ սկսան գժտիլ բանակռուութեամբ և գրուածովք ընդդէմ միմեանց։ Կուսակիցք անգղիական եկեղեցւոյ դժկամակ լինէին յոյժ ընդ այն՝ զի առանձնականք ոմանք գուն գործէին վերանորոգել այնպիսի խնդիրս, որք ազգային ժողովով և հաւանութեամբ խորհրդարանաց որոշեալք և հաստատեալք էին։ Նոյնպէս և Երիցականք չկարէին հանդուրժել և յանձն առնուլ զիրս ինչ՝ զորս խոչս խափանարարս համարէին անարատութեան կրօնի, վասն որոյ անուանեցան և Անարատականք։

Երիցականքն համարեալ էին իբրու հերետիկոսք յաչս եպիսկոպոսաց և խորհրդարանին Անգղիոյ, զի ոչ կամէին զհետ երթալ կարգաց և կանոնաց սահմանելոյ յԵղիսաբեթէ . իսկ կուսակիցք դշխոյին անուանեցան Եպիսկոպոսականք , զի հաճեալ էին ընդ տեսչութիւն եպիսկոպոսաց . կոչեցան եւս Համաձեւք կամ Համակրօնք , զի անխտիր համաձայնք էին պաշտամանն սահմանելոյ յեպիսկոպոսաց եւ 'ի խորհրդարանէն , իսկ Երիցականքն անուանեցան Անհամաձեւք կամ Անարատականք ։

Արդ յետ բաժանելոյ նոցա յերկուս դասս՝ երկաքանչիւր կողմանքն եւս ջանահնար եղեն յառաջադէմ քան զմիմեանս լինել՝ որսալով իւրեանց հետեւողս ։ Յայնմ ժամանակի 'ի վեր երեւեցան յԱնգղիա եւ ընկերութիւնք ինչ կենցաղագէտք , որոց միաբանեալ 'ի ջատագովութիւն կամ 'ի հակառակութիւն արքունական իշխանութեան՝ ջանացան շահել եւ ձգել 'ի կարծիս իւրեանց զերկոսին հակառակամարտ կուսակիցսն ։ Այլ քանզի Երիցականք 'ի սկզբանն սակաւաթիւք էին յոյժ եւ անգոսնեալք՝ սակս ընդդէմ լինելոյ իւրեանց արքայական եւ եկեղեցական իշխանութեանց , նմին իրի խառնեցան նոքա ընդ Թշնամիս արքայական իշխանութեան , եւ Եպիսկոպոսականք միաբանեցան ընդ արքայականս ։ Ի պատճառս հակառակամարտ կուսակցացս այսոցիկ ոչ դոյզն աղէտից տարաւ Անգղիա . եւ 'ի գրգռելոյ սոցա ընդդէմ միմեանց յուզեցաւ ապստամբութիւնն 'ի ժամանակս Կարոլոսի Ա. , եւ յետ այնորիկ բազմացան յոյժ Երիցականք ։

ԳԼՈՒԽ ԽԴ .

Մուտ հերետիկոսութեանց 'ի Ստորին նահանգս , որ է Հոլանտա ։

ՏՈՒՐԵՒԱՌՈՒՔ վաճառաց՝ զոր Անգղիացիք եւ բողոքականք Գերմանիոյ առնէին ընդ բնակիչս Ստորին նահանգաց , եւ թունալից մատեանքն զորս ընդ վաճառացն ածէին , յորդոր եղեն բազմաց 'ի նորահնար մոլորութիւնս նոցա ։ Կայսրն Կարոլոս Ե, որ տիրէր կողմանցն այնոցիկ՝ ջանահնար եղեւ զառաջս առնուլ մոլորութեանն , բայց ոչինչ մարթացաւ առնել . իսկ Փիլիպպոս Բ. արքայ Սպանիոյ՝ որդի եւ յաջորդ Կարոլոսի , պատշաճական եւ ազդու դեղ դարմանոյ համարեցաւ ՚ի խափանել զչարն՝ հիմնել եպիսկոպոսարանս նորս և առաքել անդր արիասիրտ քաղաքապետս և տեսուչս, և կամեցաւ հաստատել անդ զահարկու ատեան սրբաքննութեան։ Բայց տարապայման խստութիւն փոխանակ շահելոյ զսիրտս՝ յոլովակի բռնաւորեալ է զայրացուցանել զոգիս. ըստ որում տեսաւ և ՚ի ձեռներիցութիւնս կարդինալին Գրանվէլայ, որ թէպէտ տանջանօք սատանեցոյց զհերետիկոսս՝ սակայն չմարթացաւ երբէք հաւանեցուցանել զժողովուրդն զի ընկալցին զատեան սրբաքննութեան, մինչև հարկեցաւ ինքնին հեռանալ յերկրէ անտի։ Ի մեկնել կարդինալին զերծեալ հերետիկոսաց յահէ նորա՝ սփռեցան ընդ ամենայն գաւառս, և սկսան խնդրել զվրէժ յուղղափառաց՝ փոխարէն վշտացն և տանջանաց զորս ընկալեալ էին ՚ի կարդինալէն։ Մտին ՚ի քաղաքս, կողոպտեցին զեկեղեցիս, պղծեցին զտապանակս սրբութեան, խորտակեցին զարձանս սրբոց, հանին զմիանձնուհիս ՚ի մենաստանաց, և սպանին զեպիսկոպոսունս և զկրօնաւորս որք համարձակեցան ընդդէմ կալ նոցա։

Մարգարիտա դուստր Կարոլոսի Ե. կայր ՚ի տեսչութիւն Ստորին Նահանգաց. նորա կամելով հանդարտել զանկարգութիւնս մոլեգնելոյն՝ հարկ համարեցաւ վերստին հրատարակել զհրովարտակս հօր իւրոյ ընդդէմ նորաղանդից. այլ նոքա փոխանակ հանդարտելոյ առաւել ևս զայրագնեալ կատաղեցան։ Վասն որոյ և Մարգարիտա գրեաց առ եղբայր իւր Փիլիպպոս Բ. արքայ Սպանիոյ և ասէ. «Ստորին Նահանգքս ոչ ունին պէտս քաղցր տեսչութեան կնոջ մարդոյ, այլ արիական բազկաց բուռն զօրավարի»։ Նմին իրի առաքեցաւ ՚ի տեղի նորա դուքսն Ալպայ, որ յամին 1567 եմուտ ՚ի Փլանտրա բազմաթիւ զօրօք։

Մեծահամբաւ այս զօրավարն՝ խիստ և անողոքելի բնութեամբ, իբրև ժամանեաց ՚ի Պրուքսել քաղաք, արկ վաղվաղակի ՚ի բանտ զբազումս յականաւոր արանց Ստորին Նահանգաց, ընդ որս էին և կոմսքն Էկմոնտ և Օրն, որք գլխատեցան։ Իշխանազն Օրանժի՝ որ առաւել կասկածելին էր յաչս Սպանիոյ իբրև նիւթիչ գաղտնածածուկ դաշնակցութեան ընդդէմ տէրութեան , թէպէտ փախուցեալ ապրեցաւ 'ի Գերմանիա , բայց դատապարտեցաւ 'ի մահ իբրև յանառ և յանդուգն դաւաճան : Ի նոյն աւուրս սպանան հազար և ութհարիւր ոգիք :

Մինչդեռ հերետիկոսքն զահի հարեալ խնդրէին զօր ձեռնտու՝ առնուլ զվրէժ քինու իւրեանց , և ահա իշխանազն Օրանժի դարձաւ անդրէն 'ի Ֆլանտրա՝ ունելով ընդ իւր զօրս երեսուն հազար , որք մեծագոյն մասամբ զինեալ էին ծախիւք բողոքարկու իշխանազանց Գերմանիոյ : Արդ տիրեալ նորա գաւառացն որք ընդ իւրով իշխանութեամբ էին՝ տարադիր արար 'ի նոցունց զուղղափառութիւն : Զայնմ գործոյ իշխանին խրախոյս առեալ կալվինականաց Գաղղիոյ՝ խուռն ընթանային 'ի զինուորութիւն ընդ դրօշուն նորա որոց մտօք հաւատարեալ փութոյ և յօժարութեան գերմանացի բողոքարկուաց . զի զայս գործ իբրու խաչակիր ինչ զինուորութիւն համարէին նոքա : Ամենայն թշնամիք արքային Փիլիպպոսի Բ , որպէս և ուղղափառ հաւատոյ , յայտնի և 'ի ծածուկ ձեռնտու լինէին ապստամբ մոլեգնելոց . վասն որոյ և կալվինականութիւն եղև գլխաւոր կրօն դաշնակից գաւառացն այնոցիկ :

Վերակացու պաշտօնեայք կրօնի բողոքարկուաց բազմապատիկ ժողովովք սահմանեցին վասն եկեղեցւոյն Հոլլանտիոյ զայն կարգաւորութիւն՝ զոր Կալվին հաստատեալ էր 'ի Գենևա . և թէպէտ ծագեցան 'ի նոսա յոլով երկպառակութիւնք կարծեաց , սակայն ամենեքին առ հասարակ միաբանեցան յայնմ , զի 'ի սահմանս իւրեանց լիցի թոյլտուութիւն , զոր ինքեանք երբեմն խնդրեալ էին յուղղափառաց :

Արդ մինչդեռ եկեղեցին Հոլլանտիոյ յուզեալ էր 'ի ներքին գժտութեանց ինչ , նորածին հասարակապետութիւն նոցա բռնադատեցաւ 'ի մարտ ընդդէմ այլոց տէրութեանց . և յայնմ ժամանակի իշխանազն Օրանժի յետ ցուցանելոյ զարիական քաջութիւն իւր և զհանճար 'ի հնարս օգտի հայրենեաց յամին 1584 'ի տասներորդ աւուր ամսեանն յուլիսի սպանաւ հարուածով հրացանի 'ի Բաղտասարայ Գերարդեայ Պորկոյնացւոյ : Զկնի մահուան դքսին Օրանժի Մաւրիկոս որդի նորա զհետ երթեալ շաւղաց հօր իւրոյ՝ զինեցաւ 'ի մարտ նոցին քաջութեամբ և յաղթութեամբ, մինչև բռնադատիլ Սպանիացւոց յամին 1609 առնել զհաշտութիւն ընդ Հասարակապետութեան դաշնակից գաւառացն ։ Զբազմադիմի անցս և պատմութիւնս այնոցիկ տեսցեն խնդրողք 'ի վէպս արտաքին մատենագրաց ։

ԳԼՈՒԽ ԽԴ.

Նորակրօնութիւն հիւսիսաբնակ ազգաց ։

ՆՕՐԷՆՆ Լուտեր ապստամբեցուցեալ էր յեկեղեցւոյ զմի մասն Գերմանիոյ, իսկ աշակերտք նորա մոլորեցուցին գրեթէ զամենայն թագաւորութիւնս հիւսիսականս ։ Նորվեկիա և Դանիք մնացին միշտ յայնմ մոլորութեան, յորմէ շաղախեցաւ ապա և Շուեդարիա. զի Լուտերականաց ժամ դիպաւոր համարեալ զխոտորութիւն այնր թագաւորութեան, հաստատեցան 'ի վերին կողմն Շուեդարիոյ, իսկ Կալվինեանք 'ի ստորին սահմանս ։ Ի Թրանսիլվանիա յամին 1561 եղև թոյլտուութիւն անխտիր ըստ հաճոյս ուսուցանելոյ զամենայն ազգս կրօնից և դաւանութեան. վասն որոյ Լուտերականք, Կալվինականք և Սոկինեանք ստացան իւրեանց աշակերտս բազումս ։ Ի Լեհս, առ թագաւորութեամբ Սիկիսմոնդոսի Օգոստեայ՝ որ ընտրեցաւ յամին 1548, կանգնեցան եկեղեցիք Լուտերականաց. որպէս և Կալվինականքն առաքեցին անդր քարոզիչս. և թէպէտ երկոքին աղանդքս թշնամիք էին միմեանց, բայց միաբանեցան ընդդէմ ուղղափառ հաւատոյ ։ Այլ քանզի թագաւորք չէին օտարացեալք յուղղափառութենէ, նմին իրի ուղղափառ վարդապետութիւն եկաց մնաց անդ անդրդուելի ։ Շուետք կային յուղղափառութեան՝ յորժամ Լուտեր սկսաւ սփռել զթոյնս մոլորութեան իւրոյ. բայց ընդ այն ժամանակս երկուք ոմանք 'ի Շուետաց անտի աշակերտեալ Լուտերի 'ի Վիրթեմպերկ, տարան զմոլորութիւնն 'ի հայրենիս իւրեանց. և զի յայնժամ յուզեալ կայր երկիրն յապստամբութենէ ժողովրդեան, որք անհնազանդ եղեն Դանեաց և նստուցին յաթոռ թագաւորութեան զԳուստաւոս Վազա, նմին իրի ոչ ումեք փոյթ եղև արգելուլ զյառաջադիմութիւն լուտերականութեան։

Կուստաւոս Վազա յամին 1523 թագաւորեալ 'ի վերայ Շուետաց, վարեալ էր անտի զՔրիսթեռն զքեռայր Կարոլոսի կայսեր, յոյր սակս անկ էր նմա զանգիտել 'ի Կարոլոսէ և յիշխանութենէ քահանայապետին, որպէս և յեկեղեցականաց այնր տէրութեան՝ որք միշտ կուսակից գոան Քրիսթեռնի, թէպէտ և բռնութեամբ ունէր զՇուետս։ Կուստաւոս քանզի կամէր փոփոխել զտեսչութիւն աշխարհին և լինել ինքնիշխան թագաւոր յայնպիսում երկրի, յորում եկեղեցականք առ բռնաւորութեամբ Քրիսթեռնի պահեալ էին անխափան զիրաւունս իշխանութեան իւրեանց, եդ 'ի մտի ոչնչացուցանել 'ի Շուետս նախ զիշխանութիւն քահանայապետին, և ապա զեկեղեցականաց. և զի ընդ այն ժամանակս Լուտեր թշնամանագիր լուտանօք ընդդէմ եկեղեցականաց գործեալ էր զայսոսիկ երկոսին չարիս 'ի միում մասին Գերմանիոյ, Կուստաւոս յօժարամտեցաւ 'ի լուտերականութիւն, և 'ի ծածուկ պատուիրեաց պաշտօնատարաց իւրոց պաշտպան կալ Լուտերականաց, և կոչել անդր ուսուցիչս 'ի համալսարանացն Գերմանիոյ։

Բազումք 'ի նորակրօն վարժապետաց անտի իմաստնագոյնք էին և պերճախօսք քան զեկեղեցականսն Շուետաց. մանաւանդ և յարտաքին ձևս կերպարանաց նոցա երևէր տեսիլ ինչ բարեկարգութեան, որպէս սովոր է լինել 'ի սկզբնաւորութեան անդ ամենայն նորակրօն վարդապետութեանց. Նմին իրի եռանդեամբ ունկն դնէր նոցա ժողովուրդն՝ որ հետամուտ է նորասիրութեան և կամակար յանձնառու լինի այնր ամենայնի որ ոչ բերէ նոցա ծախս և աշխատութիւն։ Քարոզիչք Լուտերականաց առ երեսս բարեկրօնութեամբ իւրեանց ստացան շնորհս առաջի պալատականաց և այլոց ազնուականաց երկրին, որով և որսացան իսկ զնոսա։

Արդ մինչդեռ յայտնի և հրապարակաւ լինէր քարոզութիւն լուտերականութեան, Կուստաւոս արքայ ջան գործէր զանազան պատրուակօք խափանել զաշխարհական իշխանութիւն եպիսկոպոսաց և զեկեղեցականաց . զոր և տարաւ 'ի գլուխ , սկիզբն արարեալ յերիցանց և 'ի քահանայից , ապա և յեպիսկոպոսաց . և ընդդէմ սոցա յայլ և այլ ժամանակս եհան հրովարտակս 'ի նպաստ օգտի ժողովրդեան , ցանկացեալ կարճել զիշխանութիւն ժողովրդապետաց և եպիսկոպոսաց ։ Սահմանեաց զի եպիսկոպոսունք մի՛ կարասցեն սեպհականել զինչս և զստացուածս եկեղեցականաց 'ի վիճակի իւրեանց ։ Ի նորանոր կարգադրութեանց անտի ծանեաւ գղերն զգաղտնի խորհուրդս մտաց Կուստաւոսի , այլ ոչ կարաց խափանել զայն . զի Թագաւորն Ճարտարմտութեամբ իւրով առնոյր զառաջս ամենայն հնարից նոցա , և անզօրս առնէր զջանսն ։

Յետ այնորիկ մերկացոյց արքայ զեպիսկոպոսունս յամենայն իշխանութենէ և 'ի ստացուածոց իւրեանց , պատրուակելով միշտ թէ կամք իւր են մնալ յուղղափառութեան ։ Իսկ յորժամ ետես՝ եթէ բազումք 'ի հպատակաց իւրոց փոխեալ են զհաւատս դաւանութեան իւրեանց , հրապարակաւ յայտ արար զանձն լուտերական գոլ ։ Նուաճեաց յարքեպիսկոպոսութիւն Ուփսալ քաղաքի զԼաւրենտիոս Փեթրի զաշակերտեալն Լուտերի 'ի Վիթեմպերկ , և ետ նմա 'ի կնութիւն զօրիորդ մի յազգականութենէ իւրմէ , և ապա ընդ ձեռն նորա ընկալաւ զԹագ արքայական , որով Շուեդք համօրէն եղեն լուտերականք . զի 'ի նմին հանդիսի թագադրութեան՝ Թագաւորն , աւագանին , եպիսկոպոսունք և ամենայն ազնուականք արարին հրապարակաւ զդաւանութիւն այնր մոլար վարդապետութեան ։ Բայց քանզի յոլովք 'ի սորին եկեղեցականաց , որպէս և ժողովրդապետք գիւղից , առ բնութեան Թագաւորին կամ առ տկարութեան և տգիտութեան իւրեանց ընկալեալ էին զայն դաւանութիւն , նորատեսիլ խառնակութիւն էր 'ի բազում եկեղեցիս , յորս 'ի գործ դնէին ուղղափառ արարողութիւնք և լուտերական աղօթք ։ Ի տեղիս տեղիս քահանայք և ժողովրդապետք անուանեալք՝ տակաւին մատուցանէին պատարագս ըստ արարողութեան հռովմէական եկեղեցւոյ . մատակարարէին զխորհուրդ մկրտութեան մաղթանօք և երդմնեցուցութեամբ ուղղափառ եկեղեցւոյ . Թողէին զմեռեալս աղօթիւք և խնդրուածովք, և մաղթէին հանդիստ ննջեցելոց. Թէպէտ և վարդապետութիւն քաւարանի հերքեալ էր 'ի Լուտերականաց:

Գուստաւոս արքայ կամեցեալ հաստատել յիւրում տէրութեան զկարգ և զկանոն միօրինակ պաշտաման, գումարեաց զցեղերն Շուեդայ 'ի ժողով համախումբ, յորում նախագահ բազմեցաւ ատենադպիրն արքայի, և եպիսկոպոսունք և վարդապետք և հովիւք կամ տեսուչք գլխաւոր եկեղեցեաց հանդիսադիրք էին այնր Լուտերական սինհոդոսի, յորում սահմանեցաւ իբր կանոն հաւատոյ Լուտերեան դաւանութիւն ժողովոյն Աւկուսթայի: Եւ միակամ խորհրդով հրաժարեցան և յետս կացին հրապարակաւ 'ի հնազանդութենէ գլխոյն եկեղեցւոյ, և օրինադրեցին ջնջել 'ի սպառ զարարողութիւնս պաշտամանց հռովմէական եկեղեցւոյ. խափանեցան աղօթք և մաղթանք վասն մեռելոց, և ընկալան 'ի Լուտերականացն Գերմանիոյ զձև և զօրինակ պաշտելոյ զմկրտութիւն, և կատարելոյ զհաղորդութիւնն Ընթրիս առ 'ի նոցանէ անուանեալ: Ամուսնութիւն քահանայից հրապարակեցաւ օրինաւոր գոլ. վասն որոյ արգելաւ ուխտադրութիւն և կուսակրօնութիւն: Ի նմին սինհոդոսի վերստին հաստատեցաւ արքունի հրովարտակն, որով բարձան 'ի սպառ առանձնաշնորհութիւնք, և յաւարի առան զգոյս ամենայն ստացուածք եկեղեցականաց: Այս ամենայն կարգաւորութիւնս այն է զարմանալի, զի զօրինադրութիւնս զայսոսիկ հաստատեցին նորին իսկ եկեղեցականք, որք առաւել յառաջ վառեալ էին նախանձու պաշտպանութեան ուղղափառ հաւատոյ:

Ժողովական օրինադրութիւնք այս չեղեն բաւական և ձեռնհաս 'ի խափանել զօրէնս բարեկարգութե հռովմէական եկեղեցւոյ 'ի մատակարարութիւնս խորհրդոց. զի ընդ ամենայն սահմանս տէրութեան լսելի լինէին տրտունջք և գանգատանք զնորաձև փոփոխութեանցն, մինչև Գուստաւոսի արքայի զանգիտեալ յոխալց և 'ի քրթմնջմանց ժողովրդեան՝ պատուիրեաց Լուտերական հովուաց և առաջնորդաց ներողամտութեամբ վարել, և հաճել զկամս այնոցիկ որք թախանձանօք խնդրէին զպաշտամունս նախնի սովորութեան, և մի ճգնիլ հաստատել զնոյն՝ ուրանօր չգոյցէ 'ի ժողովրդեան յօժարական եռանդն և փոյթ առ այն ։

ԳԼՈՒԽ ԽԷ.

Մոլորութիւն Սոկինեանց ։

ՅԱՄԵՆԱՅՆ նորահնար մոլորամիտ վարդապետութիւնս վեշտասաներորդի դարուս վնասակարագոյն եղև յոյժ նորոգութիւն արիոսեան աղանդոյ, որ 'ի վեր երևեցաւ յԻտալիա և զարգացաւ 'ի Լեհաստան ։ Առաջնորդ այսր մոլորութեան՝ յետ Արիոսի դատապարտելոյ յառաջին ժողովն Նիկիոյ՝ եղև Միքայել Սերվէտոս բժիշկ սպանիացի, որ յամին 1531 յանդուգն մտօք ընդհարաւ ընդ գլխաւոր հիմն քրիստոնէութեան, այս է ընդդէմ վարդապետութեան երեքանձնեայ աստուածութեան ։ Սա յետ ուղևորելոյ ընդ մի մասն Եւրոպիոյ, գնաց վարել զարուեստ բժշկութեան իւրոյ 'ի Վիեննա քաղաք Գաղղիոյ, ուր վասն հայհոյական գրուածոց ինչ իւրոց արկաւ 'ի բանտ, բայց զերծեալ անտի՝ խոյս ետ 'ի Գենեւա ։ Անդ եգիտ զԿալվին զայրացեալ յիւր վերայ 'ի պատճառս բանակռուութեանց զորս արարեալ էին ընդ միմեանս նամակագրութեամբ. վասն որոյ Կալվին ամբաստանեալ զՍերվէտոս ետ արգելուլ զնա 'ի բանտ յամին 1553, և ապա յատենէ դատաւորաց քաղաքին էառ զվճիռ դատապարտութեան նորա 'ի մահ, և ետ այրել զնա կենդանւոյն ։

Ապաքէն չէր օրէն Կալվինոյ ըստ սկզբանց վարդապետութեան իւրոյ յանդգնել առ այն. զի ինքն իսկ տուեալ էր համարձակութիւն իւրաքանչիւր ումեք ըստ կամս մեկնելոյ զսուրբ գիրս՝ առանց դիմելոյ յեկեղեցին և 'ի մեկնիչս սուրբ գրոց. վասն որոյ անիրաւութիւն մեծ էր նմա դատապարտել 'ի մահ զՍերվէտոս, որ ոչ կամէր զհետ երթալ կարծեաց իւրոց ։ Իրաւացի ամբաստանոյս խելամուտ լեալ և Կալվինոյ, զուր գործեաց արդարացուցանել զանձն, յայտ առնելով զօրինակ զգուշաւոր գնացիցն զոր կալաւ ընդ Սերվէտոս. և ջանահնար եղև ցուցանել՝ եթէ պարտ իցէ մատնել 'ի մահ դատման հերետիկոսս ։ Այս ձեռն ջատագովութեան Կալւինոյ արձանագրեալ 'ի Բոլլատանէ, որ էր մի 'ի մեծատուն դատաւորաց մահապարտութեան Սերվետոսի, եղեւ այլոց օրինակ և ապացոյց յանդիմանութեան ընդդէմ բողոքականաց՝ որք ստգտանէին զուղղափառս 'ի սպանանել անդ նոցա զԿալվինականս ։

Կրուածոյ Սերվետոսի սփռեալ յԻտալիա, քառասուն ազնուականք Վիկենտիոյ կամ Վիչենցա քաղաքի յամին 1546 սահմանեցին ընկերութիւն ինչ բանասիրական և աստուածաբանական 'ի քննութիւն կրօնական խնդրոց ։ Եւ զի ընդ այն ժամանակս Եւրոպա առ հասարակ ընկղմեալ էր 'ի տգիտական սովորութիւնս ինչ, և զանազան սնապաշտութիւնք երեւէին յամենայն սահմանս, շարժեալ յայնց և ընկերութեանն՝ հարկ համարեցան ըստ միտս իւրեանց տալ նորոգութիւն կրօնից աստուածպաշտութեան. և զի ըստ խոստովանութեան հասարակաց պատգամքն Աստուծոյ պարզ և յայտնի բովանդակին 'ի սուրբ գիրս, ապահով շաւիղ վարկան մերժելոյ զհաւատս 'ի մոլար կարծեաց՝ հերքել և չընդունել այլ ինչ որ չիցէ վաւերացեալ յաստուածաշունչ գիրս ։

Արդ կաճառողք այսր ընկերութեան որովհետեւ միտ դնէին բանասիրական և փիլիսոփայական կարծեաց և մակացութեանց, սկսան մանրագնին կանոնօք ըստ իմաստասիրական սկզբանց բացայայտել զմիտս սուրբ գրոց. վասն որոյ չկամեցան ընդունել իբր յայտնութիւն Աստուծոյ որ ինչ միանգամ չէր բացայայտ աւանդեալ 'ի սուրբ գիրս ։ Սովին կանոնիւ զհաւատս Երրորդութեան ամփոփեցին 'ի հետեւեալ մասունս.
" Կայ մի Աստուած ամենակարող, որ ստեղծ զամենայն
„ էակս 'ի ձեռն կարողութեան բանին իւրոյ, և 'ի
„ ձեռն նորա խնամէ զամենայն ։ Բանն է որդի նորա, և
„ նոյն ինքն որդին՝ է Յիսուս Նազովրեցի որդի Մա-
„ րիամու, ճշմարիտ մարդ, բայց գերագոյն քան զայլ
„ մարդիկ՝ ծնանելովն 'ի կուսէ 'ի ձեռն Հոգւոյն սրբոյ.
„ սա ինքն է որդին, զոր Աստուած խոստացեալ էր նա-
„ հապետացն առաջնոց և զոր ետ մարդկան ։ Սոյն այս
„ որդի քարոզեաց զաւետարանն, եցոյց մարդկան զշա-
„ ւիղս արքայութեան խստամբեր վարուքն և բարեպաշ-

„ տութեամբ կենաց ։ Մեռաւ հաճութեամբ հօր իւ-
„ րոյ վասն ընդունելոյ զթողութիւն մեղաց մերոց. յա-
„ րեաւ կարողութեամբ հօր, և է փառաւորեալ յեր-
„ կինս ։ Որք միանգամ հպատակք են Յիսուսի Նա-
„ զովրեցւոյ՝ արդարանան յաստուածակոյս կողմանէ,
„ և որք ջերմեռանդքն են 'ի սէր նորա՝ ընդունին զան-
„ մահութիւնն զոր կորոյս Ադամ ։ Քրիստոս միայն
„ է տէր և գլուխ ժողովրդոց որք հպատակեն նմա.
„ է և դատաւոր կենդանեաց և մեռելոց. եկեսցէ միւ-
„ սանգամ առ մարդիկ 'ի կատարածի աւուրց „ ։

Ահա այսոքիկ են մասունք յորս ամփոփեցան քրիստոնական հաւատք 'ի վիկլեֆեան ընկերութենէն ։ Իսկ խորհուրդ սրբոյ Երրորդութեան, համագոյակցութիւն բանին, աստուածութիւն Քրիստոսի, այլովքն հանդերձ, էին ըստ նոցա բանից՝ կարծիք ընկալեալք յիմաստասիրացն Յունաց և ոչ առ 'ի յԱստուծոյ յայտնեալք և վարդապետեալք ։

Ի յայտնել դիւաշունչ գաղտնեաց այսր ընկերութեան՝ կալանաւորեցան 'ի պետութենէն ոմանք 'ի կաճառորդաց այնր միաբանութեան և սպանան ։ Բայց Լէլիոս Սոկինոս, Փարութա, Գէնթիլիս և Բեռնարդինոս Օքին վեղարաւոր կարգաւորաց, որք էին յայնմ ընկերութենէ՝ մազապուր զերծան փախստեամբ 'ի Հելուետիա ։ Սակայն Սոկինոս գլուխ հերետիկոսացն՝ ոչ կարելով հաստատել զբնակութիւն իւր անդ, յամին 1551 մեկուսացաւ 'ի Լեհաստան, ուր գտեալ համարձակութիւն և ժամ դիպաւոր յառաջխաղացութեան խորհրդոց իւրոց, սկսաւ զառաջինն ինքնին ուսուցանել գաղտնաբար. բայց աշակերտաց նորա համարձակագոյն գտեալ քան զվարդապետ իւրեանց՝ հրապարակաւ ուսուցին և ախորժելի ընծայեցին զայն մոլար վարդապետութիւն բազմաց յազնուականաց և յիշխանաւորաց տէրութեան, որոց հաւանութիւնն և ներողամտութիւն պատճառք եղև ծաւալելոյ անդ ամբարիշտ մոլորութեանն ։

Բայց քանզի յուղղափառ թագաւորութեան անդ էին և ողջամիտք բազումք, յամին 1566 խնամ կալան արքունի հրովարտակաւ տարագրել անտի զնորաղանդոլն զայնոսիկ. յորմէ առեալ յորդոր 'ի նոցանէ ցրուեցան յայլ և այլ սահմանս, բայց առաւելագոյն մասամբ թագուցեալ 'ի տունս աւագաց՝ գտին խնամարկութիւն առ 'ի նոցանէ, մինչև խաղաղացաւ մրրկին. յետ այնորիկ ձեռն արկին դարձեալ գրովք և քարոզութ՟ք տարածանել զմոլորութիւն իւրեանց, և գտեալ ձեռնտուութիւն յիշխանաց՝ կանգնեցին եկեղեցիս և դպրոցս ։

Փաւստոս Սոկինոս, եղբօրորդի Լելիոսի Սոկինոսի, 'ի գլուխ տարաւ զանօրէն գործս հօրեղբօր իւրոյ ։ Առանձնացաւ 'ի Լեհաստան, ուր ոչ կամելով միաբանել ընդ այլակրօնից՝ զուն գործեաց սերտ մտերմութեամբ կապիլ ընդ ամենեսին, որպէս զի մարթասցի հեշտեաւ ձգել զնոսին յիւր կարծիս. սովոր էր ասել թէ Լութեր և Կալվին յիրաւի մեծապէս օգտակարք եղեն հաւատոյ, և խնամով ջանահնար եղեն կործանել զտաճար նեռին Հռոմայ և ցրել զմոլորութիւնս վարդապետեալս առ 'ի նմանէ, բայց ոչ նորա և ոչ հետևողք նոցա խնամ կալան վերականգնել զճշմարիտ տաճարն Աստուծոյ 'ի վերայ աւերակաց տաճարին Հռոմայ, և ընծայել մեծին Աստուծոյ զպարտուպատշաճ պաշտօն և զերկրպագութիւն ։ Ի լինել ձեռնհաս այսպիսում գործոյ, հարկ է, ասէր, հաստատել զհիմն ճշմարիտ կրօնի և հաւատոյ, եթէ չիք այլ Աստուած՝ բայց 'ի միոյ անձի միայնոյ. և թէ Քրիստոս է որդի Աստուծոյ՝ լոկ որդեգրութեամբ և առանձնաշնորհութեամբք պարգևելովք նմա յԱստուծոյ. և թէ նա լոկն մարդ էր, որ վասն ձրից շնորհելոց նմա յերկնից 'ի վերուստ՝ եղև միջնորդ մեր, քահանայապետ և հաշտարար ընդ Աստուած ։ Եւ թէ պարտ է պաշտել զմի միայն Աստուած առանց զանազանութեան անձանց. և թէ չէ օրէն տագնապիլ խորհրդովք 'ի մեկնել թէ զինչ իցէ Բանն, և որով օրինակաւ ծագիցի 'ի Հօրէ նախ քան զյաւիտեանս, և զինչ մարդացեալ իցէ. զի այսպիսի հետազօտութիւնք զուրք են մտացածինք հնարեալք առ 'ի մարդկանէ ։ Յորոց ազգի է, ասէր, և իրական գոյացութիւն մարդկութեան և աստուածութեան Քրիստոսի 'ի խորհուրդ հաղորդութեան, որպէս և ազդուութիւն մկրտութեան 'ի ջնջել զսկզբնական մեղս, այլովքն հանդերձ ։

Այս վարդապետութիւն կարի յոյժ հաճոյ և սիրելի թուեցաւ այնոցիկ ; որք միանգամ անգանելով մերժեալ էին զդաւանութիւն բողոքարկու նորաղանդից, զի չկամէին ընդունել իբր վարդապետութիւն սուրբ գրոց՝ բայց յիմաստից անտի, որոց հաւատ լինէին միտք իւրեանց . վասն որոյ միացան ընդ բազմաթիւ թշնամիս աստուածութեան Քրիստոսի՝ հետևելով մոլորութեան Սոկինոսի, որ գլուխ եկաց աղանդաւորացն այնոցիկ : Կոչեցան սոքա և [illegible], իբրու ջատագովք Միանձնական աստուածութեան :

Սոկինոս չկարաց վայելել 'ի փառսն՝ որոց ցանկացեալ էր բուռն անձկանօք . զի ուղղափառք ամենայն, որպէս և բողոքարկու լուտերականք և կալվինականք, միաբան զինեցան ընդդէմ նորա . և ինքն վախճանեցաւ զկեանս իւր 'ի գիւղն Լուտաւիա, ուր առանձնացեալն էր յերկիւղէ հալածանաց թշնամեաց իւրոց : Մեռաւ 'ի հասակի վաթսուն և հնգից ամաց, յամին 1604 : Ի վերայ շիրմի նորա եդաւ այս տապանագիր . " Լուտեր քանդեաց զվերնայարկն Բաբելոնի . Կալվին կործանեաց զորմանսն, բայց Սոկինոս տապալեաց զհիմունս նորա ,, :

Աղանդն Սոկինեանց փոխանակ նուազելոյ և տկարանալոյ մահուամբ աղանդապետին՝ առաւել ևս զօրացաւ բազմութեամբ ականաւոր անձանց, որք անսացին այնմ վարդապետութեան, և ընկալան յազգային ժողովսն Լեհաց զհամարձակ ազատութիւն պաշտաման : Բայց յետոյ առ սակաւ սակաւ յոլովք 'ի նոցանէ յետս կացին յաղանդոյ անտի և միացան ընդ եկեղեցւոյն ուղղափառաց :

ԳԼՈՒԽ ԽԶ.

Մոլեգնութիւն Կրկնակնունք աղանդաւորաց :

ԱՅՍՄ աղանդոյ գլուխ և հիմնադիր եղև Թովմաս Մունչերոս Սաքսոնիացի՝ մին յերևելի աշակերտաց Լուտերի, որ միաբանեալ ընդ ումեմն մոլեգնելոյ Սլէզիացւոյ Ստորք անուն՝ սկսաւ զէն 'ի ձեռին քարոզել զմոլորութիւնս իւր : Նա քանզի Լուտեր որոսցեալ էր յիւր կողմն գլխաւորագունս , Մունչերոս ջան գործեաց շահել զգիւղականս , աւետելով նոցա թէ կամի վերածել զմարդիկ 'ի նախնի վիճակ ազատութեանն՝ զոր Քրիստոս եբեր յաշխարհ , և զերծուցանել զամենեսին 'ի ծառայութենէ իշխանաց և տեարց իւրեանց ։

Մոլեգնեալքս այսպիսի ջանահնար լինէին ուսուցանել թէ քրիստոնեայք ունելով զաւետարանն 'ի կանոն վարուց իւրեանց , և զհոգին Աստուծոյ առաջնորդ , չունին պէտս զատաւորի և ատենակալաց , որք ոչ միայն անօգուտք են՝ այլ և անիրաւ բռնաբարիչք հոգևոր ազատութեան հաւատացելոց ։ Նմին իրի պարտ է , ասէին , տարագրել 'ի սպառ զորոշումն վիճակի ծննդեան , պատուոյ և ճոխութեան՝ իբր հակառակս աւետարանական հոգւոյ , որ զամենեսին առ հասարակ համարի միօրինակ հաւատարս ։ Եւ թէ ամենայն քրիստոնէից պարտ է զամենայն ստացուածս իւրեանց տալ հասարակաց , և կեալ 'ի միասին անխտիր հաւասարութեամբ ըստ օրինակի անդամոց միոյ գերդաստանի ։ Հուսկ յետոյ ցնորեալ մոլք քարոզէին՝ թէ բնական օրէնս և աւետարանական օրէնք չեն սահմանեալ կանոնս վասն թուոյ կանանց , ըստ որս մարթ իցէ ումեք ամուսնանալ ․ վասն որոյ համարէին թէ հնար է վարել ազատութեամբն զոր տուեալ էր Աստուած նախնի նահապետաց ։

Բայց 'ի մոլար սկզբանց աստի ունէին ևս ինչ ինչ թիւր կարծիս 'ի վերայ մատակարարութեան խորհըրդոյ մկրտութեան ․ կամէին զի տացի այն միայն չափահասից , և այն ընկղմամբ՝ և ոչ ցօղմամբ ․ վասն որոյ կրկին մկրտէին զայնոսիկ որք մտանէին յընկերութիւն իւրեանց , և անգոսնէին զօրութիւն մկրտելոց զմանկունս ․ որոյ վասն և անուանեցան սոքա Երկնակնունք ։

Այս կարծիք նոցա և մոլորութիւն չնչին ինչ էր և ծաղրական առ համեմատութեամբ մոլեգնութեան՝ զոր ունէին առ ինքնագլուխ ազատութիւն , որ և պատճառք եղև աղետալի անցից ․ զի Մունչերոս և հետևողք նորա բռնացեալ զինուք տիրեցին Միւլհոզէն քաղաքի և ապստամբեցուցին զգիւղականս 'ի Սուեւիա, ՚ի Ֆրանքոնիա, ՚ի Թուրինկիա և յԱլզասիա. սպանէին զմիանձունս ամենայն, յափշտակէին զմիանձնուհիս, կողոպտէին զեկեղեցականս, և գործէին անհանդուրժելի չարիս և աղէտս թշուառութեանց. Զայն տեսեալ ուղղափառ և լուտերական իշխանացն՝ միացան ՚ի դաշնակցութիւն ընդդէմ կատաղի և արիւնարբու մոլեգնելոցս ։ Փրեդերիկոս կայսրընտիրն Սաքսոնիոյ՝ նախանձաւոր պաշտպան Լուտերի՝ յամին 1525 բուռն մարտիւ ՚ի գլխի հարաւ նոցա հուպ ՚ի Ֆրանքուսէն՝ ՚ի սահմանս կոմսութեանն Մանսֆելտեայ և պարտեաց զնոսա ՚ի սպառ ։ Մունչերոս առաջնորդ ապստամբացս ըմբռնեցաւ ՚ի նմին մարտի և առօրին գլխատեցաւ. բայց ընկեր նորա Ստորք փախեաւ ՚ի Սլեզիա, և զաշակերտս իւր առաքեաց ՚ի Լեհաստան և յայլ սահմանս ։

Չարաչար կատարածին Մունչերոսի չեղև հնար բնաջինջ առնել զաղանդն ՚ի Գերմանիա. զի երկու ցնորեալ աշակերտք նորա Յովհաննէս Մաթիաս հացագործ Հարլեմացի, և Յովհաննէս Պէքօլտ դերձակ Լէյտացի վառեալ փափաքանօք վերստին ծաղկեցուցանելոյ զաղանդ իւրեանց, որսացեալ էին բազում աշակերտս, և նոքօք զօրացեալ տիրեցին Մինսթեր քաղաքի ։ Մաթիաս յանդգնագոյնն ՚ի նոսա և գլուխ զինուորական այնր աղանդոյ՝ պատուիրեաց խանձաղանք բազմութեան զօրացն կողոպտել զեկեղեցիս և քանդել զվայելչութիւն զարդուցն. այրել զամենայն գիրս՝ իբր անօգուտս և անբարշտականս, բայց յաստուածաշունչ մատենից ։ Գրաւեաց զինչս և զկալուածս այնոցիկ որք փախուցեալք էին ՚ի քաղաքէն, և վաճառեաց զայնոսիկ բնակչաց մերձաւոր սահմանաց ։

Ապա կամեցեալ հիմնել նոր կարգ տեսչութեան, հրամայեաց քաղաքացւոյն բերել առ նա ոսկի և արծաթ զոր ունէին, և ետ դնել զայնոսիկ ՚ի գանձատուն հասարակաց, և սահմանեաց սարկաւագունս ՚ի բաշխել զայնս ըստ պէտս ամենայն անձանց այնր նորոյ հասարակապետութեան ։ Արդ իբրև հաստատեաց ՚ի նոսա զկատարեալ և զանխտիր հաւասարութիւն ընդ միմեանս, հրամայեաց ամենեցուն առնուլ կերակուր ՚ի միասին ՚ի հասարակաց սեղանի, ինքնին կարգադրելով զոր ինչ պարտ իցէ նոցա ճաշակել ։ Յայսօրինակ վարժելով զնոսա 'ի սակաւապիտութիւն և յարիութիւն՝ հանդերձ մոլորամիտ կատարելութեամբ , առնէր զաշակերտսն իւր զինուորս քաջամարտիկս և տոկունս 'ի պաշտպանութիւն մոլորութեան իւրեանց ։ Բազմացոյց զթիւ համախոհից իւրոց՝ առաքելով հրաւիրակս առ Կրկնակնունքս Ստորին նահանգաց , և կոչելով զնոսին 'ի Մ՝իւնսթեր քաղաք՝ զոր ինքն անուանէր լեառն Սիոնի , և ակն ունէր , ըստ ասելոյ իւրոց , ելանել անտի աշակերտօքն հանդերձ և հնազանդեցուցանել զամենայն ազգս երկրի ընդ իշխանութեամբ իւրով ։

Յայնմ ժամանակի եպիսկոպոսն Մ՝իւնսթեր քաղաքի , որ 'ի բռնութենէ անտի ապստամբաց տարագիր կայր 'ի վիճակէ և յաթոռոյ իւրմէ , գումարեալ խումբ զօրաց եկն պաշարել զքաղաքն . զայն տեսեալ Մ՝աթիասայ՝ ել ընդ առաջ նորա սակաւաձեռն զօրօք , և յարձակեալ 'ի մասն մի բանակին՝ յետ սպանանելոյ զյոլովս 'ի թշնամեաց դարձաւ 'ի քաղաքն բազում աւարաւ ։ Այս դէպք յաջողութեան յիմարեցուցին զնա ամբարտաւանութեամբ . վասն որոյ յաւուրն երկրորդի ել 'ի հրապարակ նիզակ 'ի ձեռին , և ծանոյց ժողովրդեանն՝ թէ ինքն իբրև նոր Գեդէոն հանդերձեալ է գնալ սակաւ արամբք 'ի ջնջել զամբարիշտս ։ Յայս յանդուգն խրախոյս նորա միաբանեալ ընդ նմա երեսուն արանց բանդագուշելոց՝ դիմեցին 'ի խումբս զօրաց եպիսկոպոսին , յորոց և կոտորեցան անխնայ հանդերձ առաջնորդաւն իւրեանց ։

Մ՝ահուամբ սորա մարգարէին լքաւ սիրտ կրկնակնունք հերձուածողաց . այլ Պ՝էքոլտ Լէյտացի խրախուսեաց զնոսին յարիութիւն , և զօրացոյց զյոյս նոցա ։ Սա յաւուր միում մերկանդամ ընթացաւ ընդ փողոցս քաղաքին՝ բարձրաձայն աղաղակելով , ,, Հա զայ թագաւորն Սիոնի ,, ։ Ապա մնեալ 'ի տան զգեցաւ զհանդերձն , և ոչ ևս յաւել երևել ժողովրդեանն յայնմ աւուր ։ Յաւուրն երկրորդի դիմեաց ժողովուրդն խուռն բազմութեամբ վասն իմանալոյ զպատճառս այնր նորանշան գործոյ . իսկ Յոհաննէս Պ՝էքոլտ ոչինչ խօսեցեալ բերանով , գրեաց առ նոսա՝ թէ Աստուած կապեաց զլեզու իւր մինչև ցերիս աւուրս . և ոչ որ 'ի ժո ղովրդեանն յերկմիտս եղև զնորայն, համարելով եթէ սքանչելիքն Զաքարիայ հօր Յովհաննու Մկրտչին նորոգեալ լիցին 'ի Պէքոլտ. վասն որոյ սպասէին կատարածի սահմանեալ աւուրցն։

Յետ 'ի լնանալ երից աւուրցն՝ Պէքոլտ յանդիման եղեալ ժողովրդեան, ծանոյց նոցա մարգարէաձայն բարբառով, որպէս թէ Աստուած պատուիրեալ իցէ նմա կացուցանել երկոտասան դատաւորս 'ի վերայ Իսրայէլի, զորս և անուանեաց իսկ 'ի տեսչութիւն Մինսթէր քաղաքի և զհաճոյականն նմա սահմանեաց օրէնս։ Իբրև ծանեաւ անօրէնն՝ եթէ որսացաւ զսիրտս ամենեցուն և մեծարոյ է յաչս ժողովրդեան, խրոխտ ևս խորհրդակցի իւրում ոսկերչի ումեմն մատուցեալ առ երկոտասան դատաւորսն՝ ասել. Այսպէս ասէ տէր Աստուած յաւիտենականն. զոր օրինակ երբեմն կացուցի թագաւոր 'ի վերայ Իսրայէլի զՍաւուղ, և յետ նորա զԴաւիթ՝ զայրն ռամկական և հովիւ, նոյնպէս հաստատեմ այսօր զՊէքոլտ մարգարէն իմ 'ի թագաւոր Սիոնի„։ Ընդէն յառաջ մատեաւ և այլ ոմն կեղծաւորեալ մարգարէ, և ընծայեալ սուսեր առ Պէքոլտ ասէ. “Աստուած կացոյց զքեզ թագաւոր՝ ոչ միայն 'ի վերայ Սիոնի, այլ և 'ի վերայ ամենայն երկրի„։ Զայսպիսի լուեալ ժողովրդեան լցան անսպառելի խնդութեամբ, և սկսան աղաղակել. “Կեցցէ Յովհաննէս Պէքոլտ թագաւոր Սիոնի„. և տուան նմա պսակ ոսկի, և հատան դրամք յանուն նորա։

Պէքոլտ փութացաւ սփռել քսան և վեց առաքեալս 'ի տարածել և 'ի հաստատել զուէրութիւն իւր։ Առաքեալքս այսոքիկ փոխանակ շահելոյ զմարդիկ՝ յարուցին աղմուկ խռովութեան յամենայն տեղիս ուր և մտին, մանաւանդ 'ի սահմանս Հոլլանդիոյ. ուրանօր Յովհաննէս Պէքոլտ կեղծէր՝ եթէ Աստուած տուեալ իցէ նմա զԱմստերդամ քաղաք և այլ բազում աւանս։ Մոլեգնեալ աղանդաւորքս պատճառք եղեն մեծամեծ վնասուց և խռովութեանց հասարակապետութեանն Հոլլանդիոյ. վասն որոյ յոլովք 'ի նոցանէ դատապարտեցան 'ի մահ։ Այս դէպք և անյաջողութիւնք առաքելոյն Պէքոլտի պատճառք եղեն դառնութեան սրտի նորա, և յուսաբեկ լցան բնակիչք Մինսթէր քաղաքի՝ որ ատաւ յեպիսկոպոսէն ։ Կալանաւորեալ Պէքոլտի և կապեալ շղթայիւք ածաւ քաղաքէ 'ի քաղաք առ 'ի տեսիլ հետաքրքրին ժողովրդեան , և ապա վերստին բերեալ 'ի Մինսթէր՝ դատն և նորօրինակ տանջանօք զրկեցաւ 'ի կենաց յամին 1536 'ի հասակի քսան և վեցից ամաց ։

Սակաւօրեայ իշխանութեամբ նենգաւորին Պէքոլտի թէպէտ և ունայնացաւ կեղծեալ թագաւորութիւն Կրկնակնունք հերետիկոսաց , բայց քանզի մոլորութիւնք նոցա խորարմատ ծաւալեալ էին՝ վասն որոյ չեղև հնար հեշտիւ և 'ի սպառ խլել զայնոսիկ ։ Ոմանք յաղանդաւորացս խաղաղականք և հանդարտաբարոյք՝ միաբանեցան ընդ աշակերտութեամբ Հութթերոյ և Գաբրիէլի աշակերտայն Մորաւեայ , և կազմեցին ընկերութիւն ինչ Կրկնակնքաց , որք յերկրէ անտի բնակութեան իւրեանց անուանեցան Եղբարք Մորաւիոյ ։ Հութթեր վասն այսր նորոյ ընկերութեան յօրինեաց դաւանութիւն հաւատոյ , յորում մերժէ և ուրանայ զաստուածութիւն Քրիստոսի , զզօրութիւն մկրտութեան 'ի ջնջել զսկզբնական մեղս , զխորհուրդ պատարագի , զքաւարան հոգւոց , զբարեխօսութիւն սրբոց ։

Հութթեր և Գաբրիէլ բանակոխ հակառակութեամբ բաժանեցան 'ի միմեանց՝ կազմելով երկուս դասս աղանդաւորաց , որք անուանեցան Հութթերեանք և Գաբրիէլեանք ։ Յետ ժամանակաց ինչ միաբանեցան Կրկնակնունք 'ի Հոլլանդիա ընդ աշակերտութեամբ Մեննոնի ուրումն , յորմէ կոչեցան Մեննոնեանք . և ապա վերստին բաժանեցան յերկուս աղանդս , և հետևողաց նոցա յետս կացեալ 'ի սկզբանց անտի արիւնարբու կատաղութեան նախնի աշակերտաց իւրեանց , յանցանս համարէին զպատերազմն , որպէս և զպարապելն 'ի քաղաքական պաշտօնատարութիւնս . նմին իրի խնամ՛ կալան միտ դնել պարտուց ևեթ ընտիր քաղաքացւոց , և անդորրութեամբ կենաց փութալ սրբել զաղտս անօրէնութեանցն գործեցելոց 'ի նախկին աշակերտացն ։ Երջանիկք ևս էին , եթէ 'ի խաղաղասիրութիւն իւրեանց յաւելուին և զսէր ճշմարտութեան ուղղափառ հաւատոյ ։

ԳԼՈՒԽ ԽԸ.

Կարգ և յաջորդութիւն քահանայապետացն Հռովմայ. — Յաղագս Պիոսի Դ., և սրբոյն Կարոլոսի Պորրոմէոսի.

ԶԱՆԱԶԱՆ աղանդք մոլորամիտ վարդապետութեանց երեւեալք 'ի վեշտասաներորդի դարու՝ թէպէտ և կորզեցին յիշխանութենէ քահանայապետացն զմասն ինչ 'ի հիւսիսային ժողովրդոց, սակայն Իտալիա եկաց մնաց յիշխանութեան նորա ։ Ժողովն Տրիդենտեան գումարեալն իշխանութեամբ քահանայապետաց՝ աւարտեցաւ յամին 1563 յաւուրս Պիոսի Դ., որ էր Միդուլեցի 'ի Մէտիչեան զարմէ . սա ամենայն փութով աջողութեամբ ջանահնար եղև հաստատութեան և պահպանութեան վճռոցն և կանոնաց այնր սինհոդոսի, պատուիրելով ամենայն եկեղեցականաց և կրօնաւորաց զանվրէպ կատարումն օրինադրութեանց այնոցիկ ։ Ոչնչացոյց զամենայն առանձնաշնորհութիւնս և զներողամիտ թոյլտուութիւնս որք կարէին ընդդէմ ելանել սահմանաց այնր ժողովոյ ։ Ստիպեաց զեպիսկոպոսունս նստել 'ի վիճակս իւրեանց և խնամել զհօտս . զատապարտեաց զխմմականսն, յօրինեաց զատեանս քաղաքին Հռովմայ, և սահմանեաց զցուցակ արգելեալ մատենից ։ Եւ յետ կալոյ 'ի քահանայապետութեան զամս իբր վեց՝ վախճանեցաւ յամին 1565, առընթեր նմին կալով կարդինալին Կարոլոսի Պորրոմէոսի և Փիլիպպոսի Ներեան, որք զկնի մահուան իւրեանց դասեցան 'ի կարգս սրբոց ։

Պիոս Դ. ունէր իւր ժրաջան ձեռնտու բարեկարգութեան եկեղեցւոյ զկարդինալն Կարոլոս Պորրոմէոս զքեռորդի իւր, որ էր արքեպիսկոպոս Մեդիոլան քաղաքի, և բազմադիմի անխոնջ աշխատութեամբն 'ի վերայ ժողովրդեան՝ համարեալ է մի 'ի բարեացապարտ առաջնորդաց այնր վիճակի ։ Յաւուրս ժանտամահու՝ յորժամ տագնապեցաւ քաղաքն Մեդիոլան, ոչ զանգիտեաց անձամբ ձեռնտու լինել հոգևոր և մարմնաւոր պիտոյից հօտին իւրոյ ։ Յաւարտել Տրիդենտեան սինհոդոսին գումարեաց 'ի Մեդիոլան վեց գաւառական ժողովս 'ի հաստատել և յընդունելի առնել զվճիռս այնր ընդհանրական ժողովոյ ։ Նախանձաւոր խնամարկու եկաց եկեղեցական բարեկարգութեանց, և եցոյց արիութիւն մեծ 'ի պահպանել զիրաւունս եկեղեցւոյ, որպէս և զխոնարհութիւն հոգւոյն 'ի մէջ ճոխութեան փառաց և պատուոյ ։ Վախճանեցաւ յամի տեառն 1584 'ի հասակի քառասուն և եօթն ամաց, օրինակ բարի կացեալ ամենայն եպիսկոպոսաց և եկեղեցականաց ։ Շնորհապարտ առ նա գտանի եկեղեցի այնու զի հաստատեաց զեպիսկոպոսական դպրոցսն անուանեալս Սեմինարիօ, յորս դեռահաս կղերիկոսունք սովոր են վարժիլ և հրահանգիլ 'ի վարս բարեպաշտութեան և յուսմունս գիտութեանց ։

ԳԼՈՒԽ ԽԷ.

Քահանայապետութիւն Պիոսի Ե. — Պատերազմ Լեփանթոյի.

Պիոս Ե կրօնաւոր 'ի դոմինիկեան կարգէ՝ զառաջինն Միքայէլ Կիսլիէրի անուանեալ, քահանայապետ վառեալ նախանձու աստուածպաշտութեան և զքանչելի վարուք սրբութեան՝ ընտրեցաւ յաթոռ սըրբոյն Պետրոսի յամին 1565 զկնի մահուան Պիոսի Դ ։ Եւ ամք քահանայապետութեան նորա հռչակաւորք եղեն յոյժ 'ի սակս ինչ ինչ երևելի և մեծամեծ դիպուածոց ։

Թագաւորն Օսմանեանց Սելիմ Բ. կամելով տիրել կղզեաց Միջերկրական ծովուն, ահարկու բանականաւախումբ զօրաց յարձակեցաւ 'ի վերայ կղզւոյն Կիպրոսի. վասն որոյ Պիոս Ե յորդոր մատոյց վենետակեան հասարակապետութեան և թագաւորին Սպանիոյ զինել ընդդէմ թշնամեաց քրիստոնէութեան, բայց 'ի դերև ել պատրաստութիւն և դաշնակցութիւն նոցա. քանզի կալան Տաճիկք զկղզին յամին 1570 ։ Սակայն 'ի հետևեալ ամի պարգևեցաւ յԱստուծոյ յաջողութիւն զինուց քրիստոնէից. զի Յովհաննէս դուքսն Աւստրիոյ՝ որդի Կարոլոսի Ե, արիական քաջութեամբ իւրով և ճարտարահնար արուեստիւն 'ի գլուխ տարաւ զնաւական պանծալի յաղթութիւնն ընդդէմ Թուրքաց՝ առ ծովածոցաւն Կորնթոսի, որ այժմ կոչի Լեպանթոյ, խորտակեալ 'ի սպառ զզօրութիւնս Թշնամեաց։ Յայնմ մարտի անկան 'ի ձեռս քրիստոնէից իբր երկերիւր գալէնաւք Օսմանեանց, և սպանան 'ի նոցանէ երեսուն հազար ոգիք, վարեցան 'ի գերութիւն վեց հազարք, և զերծան 'ի գերութենէ հնգետասան հազար քրիստոնեայք որ կալանաւորեալ էին 'ի Թուրքաց։ Հրաշալի յաղթութեանս հաղորդ գտաւ և Պիոս Ե. ձեռնտու լինելով աղօթիւքն առ Աստուած, յորդորանօք քաջալերութեան և նպաստիւք դրամոց։ Պատմի 'ի վարս նորա՝ թէ 'ի նմին աւուր և 'ի ժամու սաստկութեան այնր մարտի, յեօթներորդ աւուր Հոկտեմբերի յամին 1571, կալով նորա յաղօթս՝ յայտնութեամբ տեսանն ծանեաւ զքանչելի յաղթութիւնն քրիստոնէից, և 'ի համախումբ ժողովի կարդինալաց յանձն արար գոհանալ զԱստուծոյ։

Վախճանեցաւ քահանայապետս յամին 1572, յետ վարելոյ զիշխանութիւնն զամս վեց և զամիս երիս, և դասակարգեցաւ ապա 'ի թիւս սրբոց 'ի Կղեմայ ԺԱ.։ Նշանելի քահանայապետս յետ աստուածապարգև յաղթութեանն Լեպանթեայ՝ զամիս վեց մինչև ցվախճան իւր առաւելեալ սիրովն Աստուծոյ, նուիրեաց զանձն 'ի սէր աղքատաց՝ ծառայելով 'ի հիւանդանոցս, և բազմօգնումամբ դրամովք նպաստելով կարօտութեանն ամենայն ախտոյից նոցա։ Հաստատեաց զկարգ և զկանոն կրօնաւորաց սրբոյն Յովհաննու Աստուծոյ՝ 'ի ծառայութիւն ախտացելոց։ Նա յօրինել զուսումն կամ զհրահանգ քրիստոնէական վարդապետութեան Տրիդենտեան ժողովոյն։ Սա եւս նախանձու աստուածպաշտութեան՝ ընդ բանիւ արար զԵղիսաբէթ դշխոյ Անգղիոյ։ Պատուհասեաց զդաւաճանակցութի Կարոլոսի Թ. արքային Գաղղիոյ ընդ Թուրքս. սպառնացաւ և Մաքսիմիլիանոսի զրկել զնա 'ի կայսերական աթոռոյ, եթէ թոյլ տացէ Աւգուսթեան համախումբ աշխարհական ժողովոյն յանդգնել յափշտակել զիրաւունս սահմանելոյ ինչ 'ի խնդիրս հաւատոյ և կրօնի։ Սպառնալիք սրբոյ քահանայապետիս յառաջ եկեալք յուղիղ դիտաւորութենէ և յաստուածասէր փութոյ՝ կարէին լինել պատճառք աղետալի արգասեաց եթէ պակասէին

՚ի նմա արժանապատիւ յարգ և անճառութիւն գերապանծ առաքինութեանց ։ Յամին 1571 խափանեաց զկարգն Խոնարհեալք անուանելոյ, զի մի ոմն ՚ի կրօնաւորաց անտի յանդգնեցաւ հրացանս արձակել ՚ի վերայ սրբոյն Կարոլոսի Բոռոմէոսի՝ որ կամէր վերածել զնոսին յառաջին բարեկարգութիւն իւրեանց ։

ԳԼՈՒԽ ԽԸ.

Քահանայապետութիւն Գրիգորի ԺԳ ։ — Նորոգութիւն տումարին ։

ՀՈՒԳՈՆ բոլոնիացի մականուանեալն Պուոնքոմփանեի, ընտրեալն ՚ի կարդինալութիւն յամին 1565 ՚ի Պիոսէ Դ., յաջորդեաց զՊիոս Ե., և անուանեցաւ Գրիգոր ԺԳ.։ Արժանապատիւ գտցի սա յամենայն դարս ժամանակաց՝ ՚ի պատճառս նորոգելոյ զհին տումարն և ուղղելոյ զվրիպակ նորին ։ Զի գարնանային հաւասարակշռութիւնն սահմանեալ անխախտ ՚ի քսան և մի ամսեանն մարտի, վրիպակ հաշուով ընկրկեալ անկանէր ՚ի տասն նորին ամսոյ. քանզի ամն աստղաբաշխական վայրկենիւք ինչ նուազէր քան զամն Յուլեան շրջանին՝ որով վարէին յայնժամ. վասն որոյ տօն պասեքին վրիպեալ էր ՚ի պատճառս այնր թերութեան, որ հետ զհետէ յանցանել ժամանակաց եղև առաւել զգալի. զայն տեսեալ Գրիգորի ԺԳ. և խորհրդակցեալ ընդ երևելի աստեղաբաշխս, յամի տեառն 1582 քահանայապետական կոնդակաւ հրամայեաց նուազեցուցանել միանգամայն զաւուրս տասն ՚ի տարւոյն. զոր և արարին յամսեանն հոկտեմբերի, զչորրորդ օր ամսոյն թուելով հնգետասաներորդ. և այսպէս յանփոփոխ հաստատութիւն գարնանային հաւասարակածի ՚ի քսան և մի մարտի, սահմանեաց զի ՚ի միջոցս չորեքհարիւր ամաց թողցին ՚ի բաց երրեակ նահանջք, որով ընթացք հաշուի ժամանակաց գտին զանվրէպ հաւաստութիւն ։ Նորոգութիւն տումարին՝ ընկալեալն յեկեղեցւոյ ուղղափառաց՝ զառաջինն մերժեցաւ յամենայն սահմանաց տէրութեան բողոքական նորաղանդից. բայց յետոյ ծանուցեալ և նոքա զուղղութիւն հաշուին և զկարևորութիւն փոփոխութեանն՝ հարկեցան ընդունել և համաձայնիլ 'ի նոյն ։

Յետ սակաւ ամաց եղև Գրիգորի մխիթարութիւն անպատում՝ 'ի տեսանել անդ առ ոտս իւր զերիս արքայազուն դեսպանս Յափոնացիս յուղարկեալս 'ի Թագաւորէն և յայլոց իշխանազանց կղզւոյն , որոց նամականիւն առ քահանայապետն ունէին զմանկագրութիւնս . "Սա այն որ ունի յերկրի զփոխանորդութիւն Աստուծոյ „ ։ Դեսպանքս այսոքիկ մեծարեցան 'ի քահանայապետէն արժանաւոր պատուով , և զկնի սակաւ աւուրց տեսութեան ընդ նոսա՝ վախճանեցաւ Գրիգոր 'ի տասներորդ աւուր ամսեանն ապրիլի յամին 1585 , 'ի հասակի ութսուն և երից ամաց ։

Զմեծապայծառ յիշատակ որբազան քահանայապետիս Թէպէտ և ոմանք 'ի մատենագրաց խորհին աղօտացուցանել վասն խնդամտութեանն զոր եցոյց ընդ լուր կոտորածի կալվինեանց յաւուր տօնի սրբոյն Բարթուղիմէոսի , որով կարծէր նա եթէ 'ի սպառ ջնջեսցին կալվինականք 'ի Գաղղիոյ , բայց կարի մեծայարգ և բարեացապարտ գտաւ սրբոյ աթոռոյն , քաղաքին և տէրութեանն Հռովմայ . բարգաւաճեցոյց զարուեստս , կանգնեաց դպրոցս յուսումն գիտութեանց և 'ի հրահանգս վարուց բարեաց 'ի պէտս այնոցիկ որք հանդերձեալ իցեն գնալ 'ի քարոզութիւն յերկիր հեռաւոր ։ Արար և առանձինն կոնդակ կանգնել դպրատուն 'ի Հռովմ վասն ազգիս Հայոց , բայց 'ի պատճառս վաղահաս մահու նորա մնաց կոնդակն այն անգործ ։

ԳԼՈՒԽ ԽԹ.

Քահանայապետութիւն Սիքստոսի Ե.

ԶԿՆԻ մահուան Գրիգորի ԺԳ. մնեալ կարդինալաց 'ի խորհուրդ ընտրութեան նորոյ քահանայապետի , զառաջինն թէպէտ և երկպառակք էին 'ի զանազան կարծիս , բայց յետոյ միաբանեցան ամենեքին ընտրել զկարդինալն Մոնթալթեան , որ անուանեցաւ Սիքստոս Ե. (1585) ։ Օրինակ կենաց ականաւոր քահանայապետիս , և շաւիղն որով ամբարձաւ յաստջին և 'ի ծայրագոյն պատիւ եկեղեցւոյ՝ որ է և սքանչելի ։ Ծնեալ նա յամին 1531, 'ի գեղջ ուրեք սահմանացն Անքոնայի · յառաջին ամս մանկութեան իւրոյ պարապեալ 'ի խաշարածութիւն, ապա թողեալ զայն գործ՝ եմուտ 'ի ծառայութիւն Փրանկիսկեան կրօնաւորի ուրումն · և նորա տեսեալ զյաջողակութիւն մտաց նորա, յորդորանօք եմուծ զնա 'ի նոյն կարգ կրօնի ։ Ընդ յետ ստանալոյ նորա զյարգ պատուոյ 'ի գործս զանազան պաշտամանց քարոզութեան, դասատուութեան փիլիսոփայական և աստուածաբանական վարժից, ընտրեցաւ վերատեսուչ վանաց, ապա գաւառապետ, և յետոյ ուրեմն ընդհանրական մեծաւոր կարգին Փրանկիսկեանց 'ի Հռովմ ։ Պիոս Ե, որ ընտրեալ էր զնա 'ի խոստովանահայր իւր՝ զգեցոյց նմա զկարդինալական ծիրանի յամին 1569 ։

Յընթացս սակաւուց քահանայապետութեան իւրոյ յամս հինգ և յամիս չորս՝ արար ուղղութիւնս մեծամեծս յօգուտ եկեղեցւոյ և տէրութեան Հռովմայ ։ Նորոգեաց զքաղաքական տեսչութիւն՝ որ թուլացեալ էր 'ի սպառ յամենայն սահմանս նորա · ընաջինջ արար զաւազակս և զելուզակս, անհետ արար զվատթարսն որք ապականէին զվարս պարկեշտից ։ Զարդարեաց զՀռովմ բրգամբք, սեամբք, արձանօք, խրամօք, եկեղեցեօք, թանգարանօք, ապարանիւք · կանգնեաց և զգրատունն Վատիկանեան՝ որ մի է 'ի ճոխ մատենադարանաց Եւրոպայ ։ Ի փոխադրել և 'ի կանգնել զերևելի բուրգն Հրապարակին Վատիկանու՝ զամ մի ողջոյն զբաղեցոյց աւելի քան զութհարիւր ոգիս և հինգհարիւր երիվարս ։ Ի վախճանել իւրում 'ի քսանևօթն օգոստոսի յամին 1590, եթող միլիոն մի ոսկի սկուտից · բայց քանզի 'ի հաւաքել զայն զումար և 'ի լնուլ զծախս այլոց պիտոյից՝ ստիպեցաւ ծանրացուցանել զհարկս ժողովրդեան, վասն որոյ ոչ յոյժ կոծեցան զմահ նորա Հռովմայեցիք ։ Քահանայապետս ետ տպագրել զաստուածաշունչ մատեանն՝ զթարգմանեալն 'ի սրբոյն Հերոնիմոսէ, զուղղագիր և զհարազատն գտեալ 'ի ժողովոյն Տրիդենտեայ, պատուիրելով համարել զայն իբր միակ արժանահաւատ 'ի լատին թարգմանութիւնս ։

ԳԼՈՒԽ Ծ·

Յաջորդք Քսեստոսի Ե·

ՈՒՐԲԱՆՈՍ Է· հռովմայեցի՝ զառաջինն անուանեալ Քասթանեա կարդինալ, ընտրեցաւ յամին 1590 և եկաց 'ի քահանայապետութեան զաւուրս երեքտասան։ Ապա ընտրեցաւ Գրիգոր ԺԴ· մեդիոլանեցի՝ որ կալաւ զաթոռն զամիսս տասն և զաւուրս տասն։ Յետ նորա եղև Իննովկենտիոս Թ· որոյ նախկին անունն էր Յովհաննէս Անտոն Ֆաքինէթթի 'ի Բոնոնիա կամ Պոլոնիա քաղաքէ Իտալիոյ, և եկաց 'ի քահանայապետութեան զամիսս երկուս և աւելի։ Երեքին սոքա անընդմիջական յաջորդք Քսեստոսի Ե· սակաւօրեայ պատուով փոխեալ յաշխարհէ ոչ թողին ինչ արժանի յիշատակաց։

Յետ սորա յամին 1592 'ի քսանևմէկ աւուր փետրուարի ընտրեցաւ կարդինալն Ալտոպրանտինի փլորենտացի, որ անուանեցաւ Կղեմէս Ը· Քահանայապետս այս հաշտեցոյց ընդ եկեղեցւոյ զՀենրիկոս Դ· զարքայն Գաղղիոյ՝ անկարող եղեալ խռովայոյզ քաւթեց թագաւորին Սպանիոյ. և այնու խոհական օրինակաւ 'ի գլուխ եհան զգործն, զի շահեցաւ զՀենրիկոս արքայ, և զյարգ ակնածութեան և մեծարանաց հանձրէն ազգին Գաղղիացւոց։ Ի մեռանել Ալփոնսոսի դըքսին Էսթէի անժառանգ յօրինաւոր որդւոց, զդքսութիւնն Ֆերրարայի միացոյց ընդ սահմանաց իշխանութեան սրբոյ աթոռոյն։ Յաւուրս քահանայապետութեան իւրոյ 'ի կատարելն զհանդէս շնորհաբաշխութեան յոբելինի 1600 ամին, յորում խուռն բազմութեամբ դիմեցին 'ի Հռովմ իբր երեք միլիոնք ուխտաւորաց, քահանայապետս ինքնին ծառայէր և հոգայր զպէտս աղքատաց։ Բանակցութիւնքն 'ի վերայ շնորհաց՝ յուզեալք 'ի գրուածոց Բայոսի, տագնապեցին զքահանայապետութիւն նորա, զորմէ վճիռ բան 'ի հետևեալ դարու. քանզի Կղեմէս Ը· 'ի զուր վաստակեալ աւարտել զայնոսիկ, վախճանեցաւ յամին

1606, *կացեալ 'ի քահանայապետութեան զամս երեքտասան և զամիս մի ։*

Արթնամիտ տեսչութիւն նորա՝ համանման Սիքստոսի Ե, 'ի ցուցանել զվրէժխնդրութիւն արդարութեան՝ անդորրացոյց 'ի Հռովմ զխաղաղութիւն հպատակաց իւրոց և օտարականաց ։ Էր աստուածեան, զգաստ, զթամիտ, բարեպաշտ և նախանձաւոր 'ի տարածել զուղղափառ հաւատս, և փափաքող միաբանութեան եկեղեցւոյն Յունաց ընդ Լատինս ։

ԳԼՈՒԽ ԾԱ.

Կաթուղիկոսունք և վիճակ եկեղեցւոյն Հայոց ։

Ի ՍԿԶԲԱՆ *վեշտասաներորդի դարու՝ յամին* 1503 *զկնի Թադէոսի Ա, նստաւ յաթոռ կաթուղիկոսութեան յԷջմիածին՝ Եղիշէ զամս երկոտասան ։ Յետ նորա յամին* 1515 *Զաքարիա Գ զամս հինգ. ապա յամին* 1520 *Սարգիս Գ զամս վեշտասան. զկնի նորա՝ յամին* 1536 *Գրիգոր ԺԱ զամս հինգ. յաջորդեաց զսա յամին* 1541 *Ստեփանոս Ե 'ի Սալմաստ քաղաքէ, բայց կոչի Կոստանդնուպօլսեցի վասն ծննդեանն և դաստիարակութեան զոր ընկալաւ անդ ։*

Յաւուրս սորա 'ի պատճառս պատերազմաց Պարսից և Օսմանեանց տագնապեցաւ աշխարհս Հայոց, յորում նահատակեցան բազումք վկայական մահուամբ, զորոց զանուանս յիշատակեցուք 'ի յաջորդ գլուխ ։ Սա ինքն Ստեփանոս 'ի վեցերորդ ամի կաթուղիկոսութեան իւրոյ նեղեալ յայլազգեաց, ձեռնադրեաց յաթոռակալութիւն իւր զՄիքայէլ վարդապետ Սեբաստացի՝ զայր հաւատարիմ և խոհական, որում յանձն արարեալ զաթոռն իբրև փոխանորդի, գնաց ինքն 'ի Կոստանդնուպօլիս, և անտի յամին 1548 *չոգաւ 'ի Հռովմ յուխտ սրբոյն Պետրոսի և Պօղոսի՝ յաւուրս քահանայապետութեան Պօղոսի Գ, և պատուեցաւ յոյժ 'ի նմանէ, և եկաց անդ 'ի տեսութիւն յոբելինին* 1550 *ամին ։ Եւ ապա ելեալ անտի ուղեւորեցաւ 'ի Գերմանիա յայցելութիւն կայսերն Կարոլոսի Ե, և անտի անցեալ 'ի Լեհաստան և 'ի Սու-*

տաստան, եհաս յաջողութեամբ յաթոռն իւր յԷջմիածին, ուր ընկալեալ եղև արժանաւոր պատուով 'ի Միքայէլէ աթոռակալ փոխանորդէ. բայց յետ սակաւուց վախճանեցաւ, կացեալ 'ի կաթուղիկոսութեան հանդերձ ժամանակօք պանդխտութեանն՝ զամս հնգետասան։

Զկնի մահուան Ստեփանոսի՝ յամին 1556 նստաւ կաթուղիկոս Միքայէլ փոխանորդն 'ի Սեբաստիոյ՝ անուանեալն Աթոռակալ. որ և ըստ օրինակի նախորդին իւրոյ ձեռնադրեաց իւր աթոռակալ զԱռաքել վարդապետ, որում յանձն արար զհոգս աթոռոյն, և ինքն 'ի պատճառս խռովութեանց Արարատայ խոյս տուեալ մեկնեցաւ 'ի Սեբաստիա՝ բնակել անդ առ ժամանակ մի։ Յայնմ ժամանակի յամին 1562 խորհուրդ 'ի մէջ առեալ ընդ մտերմաց իւրոց յղեաց 'ի Հռոմ դեսպան զոմն Աբգար անուն, զայր խոհական և մեծարոյ, ուղեկից նմին առնելով և զքահանայ ոմն Աղեքսանդր անուն, և տալով 'ի ձեռս նոցա նամակ սիրոյ և հպատակութեան առ սրբազան քահանայապետն Պիոս Դ., հանդերձ ընծայիւք ինչ և զանազան պիտանի գրուածովք տեղեկութեանց 'ի վերայ վիճակին իւրոյ և վանորէից և նշխարաց սրբոց։ Զայս առեալ Աբգարու ել 'ի ճանապարհ հանդերձ որդւով իւրով, և յետ ընդ երկար ուղևորելոյ անագան ուրեմն հասեալ 'ի Հռոմ յամին 1564, ել յանդիման սրբազան քահանայապետին Պիոսի Դ., և եգիտ 'ի նմանէ սէր և պատիւ յոյժ։ Ի լինել պէսպէս հարցուածոց 'ի վերայ կարգաց և կրօնից, տեսեալ սրբազանին զուղղափառութիւն մտաց Աբգարու և զհմտութիւն 'ի պատասխանիս՝ հրամայեաց նմա գրել զհամառօտ բովանդակութիւն ինչ մասանց հաւատոյ և զաւանդութեանց ազգին Հայոց. զոր կամակար յանձն առեալ Աբգարու զործակցութեամբ Աղեքսանդրի քահանայի գրեաց հայերէն պարզ և ամփոփ բանիւ զամենայն հաւատոյ և զաւանդութիւնս ըստ դաւանութեան համօրէն ազգին. զոր և մատոյց առ սրբազանն հանդերձ թարգմանութեամբ 'ի լատին լեզու, զոր արար Մկրտիչ ոմն անուն 'ի Հնդկաց։ Իսկ թէ զինչ պատասխանի տուաւ նմա 'ի սրբազանէն, որպէս և նամակաց Միքայէլ կաթուղիկաւի, չունինք յիշատակութիւն ինչ 'ի գիրս․ բայց գտանեմք 'ի յիշատակարանս եկեղեցւոյն Հայոց 'ի Հռոմ, զի յամին 1563 նոյն ինքն քահանայապետն Պիոս Դ․ կամելով ցուցանել զհայրագութ խնամս իւր 'ի վերայ ազգիս և 'ի վերայ պանդխտելոցն 'ի Հռոմ քահանայից և ուխտաւորաց՝ առանձին կոնդակաւ շնորհեաց նոցա զեկեղեցին և զեկեղեցատունն սրբոյն Լաւրենտիոսի հանդերձ ընչիւքն, որպէս զի քահանայք հայազգիք յեկեղեցւոջ անդ պատարագեսցեն, և կատարեսցեն զպաշտօն ժամերգութեան 'ի բարբառ իւրեանց։ Եւ ոչ այսչափ միայն, այլ և 'ի խնդրել Աբգարու 'ի սրբազան քահանայապետէն շնորհս ձեռնտուութեան յօրինելոյ վասն ազգիս զգաղափարս տըպագրութեան հայերէն գրենց, յօժարամիտ կատարեաց զխնդիրն յօգուտ ազգիս․ որով յամի տեառն 1567 նախ առաջին տպագրեցաւ սաղմոսն Դաւթի, և 'ի հետևեալ ամի ժամագիրքն, և ապա հետ զհետ այլ և այլ մատեանք, որպէս յայտ է 'ի յիշատակարանաց տպագրեալ մատենիցն այնոցիկ։

Զնոյն հայրական խնամս եցոյց 'ի վերայ ազգիս և յաջորդ քահանայապետին սուրբն Պիոս Ե․, որոյ կամելով ընդարձակել զթաղ բնակութեան Հրէից 'ի Հռոմ՝ զսահմանակիցն հիւրանոցի ազգիս, առեալ 'ի Հայոց զեկեղեցի սրբոյն Լաւրենտիոսի՝ փոխանակ այնր պարգևեաց զեկեղեցի սրբոյն Մարիամու Եգիպտացւոյ հանդերձ շրջակայ տամբք, որ եղև հիւրանոց ազգիս մինչև ցամ՝ տեառն 1832․ յետ այնորիկ տուաւ ազգս և զեկեղեցի սրբոյն Վլասայ։

Արդ յետ ցնծալից յաջողութեամբ կատարելոյ Աբգարու զգործ դեսպանութեանն, 'ի դառնալ իւրում յամին 1569 վախճանեցաւ Միքայել կաթողիկոս՝ կացեալ 'ի հայրապետութեան զամս քսաներկու։ Եւ զի Բարսեղ աթոռակից նորա մեռեալ էր ամօք ինչ յառաջ, ընտրեցաւ յաջորդ Միքայելի Գրիգոր ԺԳ․ որ եկաց զամս չորս․ յետ նորա նստաւ յաթոռ կաթողիկոսութեան Ստեփանոս Զ զամս երկու։ Ապա Թադէոս Ա․ որ կացոյց իւր աթոռակալ զԱռաքել վարդապետ, և ինքն մնացեալ կենօք հասեալ 'ի վախճան՝ մեռաւ յամին 1584, կացեալ 'ի հայրապետութեան զանձ իւր ։ Նոյնպէս և Առաքել վարդապետ՝ անուանեալն Աթոռակալ եկաց 'ի կաթուղիկոսութեան զամս երկու . և ապա 'ի պատճառս դառնութեան ժամանակին յերևաց բռնութեան այլազգեաց հրաժարեցաւ յիշխանութենէ, և ձեռնադրեալ 'ի տեղի իւր զԴաւիթ վարդապետ՝ առանձնացաւ 'ի մենաստան ուրեք մինչև ցմահ իւր ։

Յաւուրս Առաքելի, որպէս և նախորդի նորա Գրիգորի, նստէր 'ի Հռոմ յաթոռ քահանայապետութեան Գրիգոր ԺԳ. որոյ լուեալ զաղէտս ազգին Հայոց 'ի բռնութենէ այլազգեաց, և զթշուառութիւն ստրկութեան նոցա, որով զրկեալ կային յամենայն կենցաղական բարեմասնութենէ, կամեցաւ հայրագութ սիրով նպաստամատոյց լինել ազգիս, թէ ոչ մարմնաւոր ձեռնտուութեամբ՝ գէթ հոգևորականաւ, կանգնելով վասն նոցա առանձին վարժարան 'ի Հռոմ, ուր հաւաքեալ հայազգի մանկանց վարժեսցին յուսմունս գիտութեանց, և լիցին զօրավիգն մխիթարութեան տառապեալ ազգին . յոր սակս յամին 1574 գրեաց կոնդակ հաստատութեան և հիմնարկութեան այնր դպրոցի . յորում յետ հայրագորով խանդաղատանաց 'ի վերայ Հայոց՝ յիշելով և գովելով զհնագոյն հպատակութիւն նոցա առ սուրբ աթոռն 'ի սկզբանէ անտի լուսաւորութեան իւրեանց յաւուրս սրբոյն Սեղբեստրոսի, և ապա զջանս երախտեաց և օգնականութեան նոցա առ զօրս խաչակրաց, հաւաստեաց 'ի մէջ բերեալ զտառապանս նոցա յայլազգեաց՝ յօժարակամ ցանկայ և պատուիրէ ծախիւք սրբոյ աթոռոյն կանգնել 'ի Հռոմ քաղաքի առանձին վարժարան Հայոց, ուր հրահանգեսցին 'ի վայր բարիս և յուսմունս գիտութեանց ։ Զայս կոնդակ արար նա 'ի յետին ամի քահանայապետութեան իւրոյ, այլ ոչ կարաց ինքնին կատարել՝ ըստ որում կանգնեալ էր կանխաւ վասն ազգին Յունաց . զի վախճանեցաւ զկնի վեց ամաց, որով և կոնդակն մնաց անգործ ։ Սակայն պտուղ կոնդակին յայտնի երևեցաւ . քանզի Ազարիա կաթուղիկոս Սսոյ գրեաց թուղթ դաւանութեան և հպատակութեան առ նոյն ինքն Գրիգոր քահանայապետ . և զի վախճանեալ էր յայն աւուրս, յօժարեցաւ կաթուղիկոսն կրկնել զթուղթն, և ստորագրութեամբ այլոց չորից թեմականն եպիսկոպոսաց ուղղել առ Քսեստոս Ե, յաջորդ Գրիգորի, որպէս պատմեն և լատին մատենագիրք։

Յայսմ ժամանակի հրաժարեալ յիշխանութենէ Առաքել կաթուղիկոսի, յամին 1586 նստաւ յաթոռ կաթուղիկոսութեան Դաւիթ Ե. սակայն և սորա տատանեալ 'ի հարկապահանջութենէ այլազգեաց, յեօթներորդ ամի իշխանութեան իւրոյ (1593) կացոյց զՄելքիսեթ եպիսկոպոս օգնական և աթոռակից իւր, թեթևանալ յանբերելի ծանրութենէ աթոռոյն. բայց երկոքին միանգամայն մատնեցան 'ի վիշտս անհնարինս, զորոց գրեսցուք 'ի հետևեալ դարու։

ԳԼՈՒԽ ԾԲ.

Նահատակութիւն բազմաց վասն 'ի Քրիստոս հաւատոյ։

Ի ՊԱՏՃԱՌՍ անընդհատ և ընդերկար պատերազմաց Պարսից և Օսմանեանց ոտնակոխ եղեն համօրէն սահմանք Հայաստան աշխարհի, և բնակիչք նորա յետ մերկանալոյ յամենայն ստացուածոց՝ իբրև ստիպեցան դառն տանջանօք յուրացութիւն հաւատոյ, յօժարական յանձն առին զմահ քան անջատել 'ի սիրոյն Քրիստոսի. զայսոսիկ աղետալի անցս մանրամասն նկարագրէ Թադէոս երէց ժամանակակից։ Ընդ անթիւ և անհամար կոտորեալսն 'ի հասարակ ռամկին ժողովրդենէ վասն անուան Քրիստոսի, առանձինն յիշատակէ զվանահայրն Յակոբ Արճիշեցի, որ մինչդեռ երեսուն միաբան աբեղայիւք կատարէր յեկեղեցւոջ զխորհուրդ սրբոյ պատարագին, ժամանեալ անօրէն Պարսից՝ անխնայ կոտորեցին զամենեսին, և զմարմինս նոցա այրեցին համդերձ եկեղեցեաւն։ Առ նոյն ժամանակաւ յԱմիդ քաղաքի կատարեցաւ հրով Խաչատուր կղերացի։ Յեդեսիա քաղաքի նահատակեցաւ վասն 'ի Քրիստոս հաւատոյ Թորոս անուն վկայ. որպէս և 'ի Սեբաստիա աբեղայ մի Հայրապետ անուն այրեցաւ հրով։ Նոյնպէս և երէց մի Թադէոս անուն 'ի նմին քաղաքի սպանաւ վասն հաւատոյն 'ի Քրիստոս։ Թող *և զայլս յօգուտս, զորս գտանեմք 'ի պատմութիւնս այսր դարու ։*

ԳԼՈՒԽ ԾԳ.

Նորանոր կարգք կրօնաւորաց, և վերանորոգութիւնք կարգացն եղելոց ։

ՅՈՒՍԱՓԱՅԼ բարեզարդութիւն զոր յայսմ դարու ստացան կարգք կրօնաւորաց՝ պատճառք եղև մխիթարութեան քահանայապետացն Հռովմայ ։ Կարգ սրբոյն Փրանկիսկոսի Ասիզացւոյ ընձիւղեաց երիս նորաբողբոջ շառաւիղս, որք են Կափուչինք՝ այսինքն Կնգղաւորք. Ձոքքոլանթք՝ այսինքն Սանդալաւորք, և Փենիթենթք՝ այսինքն Ապաշխարողք ։

Կափուչինքն կալան զսկիզբն ծագման 'ի Մատթէոսէ տէ Պասսի, որ էր մի 'ի փրանկիսկեան կրօնաւորաց անտի Օսսէռվանթից դքսութեան Սփոլէթոյի, որ յամին 1329 ետ նոցա կանոնս առանձնականս ։ Այս վերանորոգութիւն եգիտ իւր խոչընդոտն զհակառակութիւն Կրտսեր անուանեալ եղբարց, այսինքն փրանկիսկեանց, որոց անախորժ էր տեսանել զմօրուս և զերկայնութիւն կնգղի. բայց յաջողեցաւ անխափան և հանդիսապէս հաստատեցաւ 'ի Կղեմայ Է. յամին 1528, որպէս և 'ի Պօղոսէ Գ. յամին 1539 ։ Կրօնաւորքս այսոքիկ ընկալեալ եղեն 'ի Գաղղիա առ Կարոլոսիւ Թ. 'ի յանձնարարութենէ կարդինալին Լօրենայ, և 'ի նոյն ժամանակի ստացան անդ 'ի Գաղղիա՝ որպէս և յայլ տէրութիւնս վանս յոլովս ։ Թշնամիք Կափուչինաց կամէին զրկել զնոսա յանուանէ և յաշակերտութենէ սրբոյն Փրանկիսկոսի, բայց Ուրբանոս Ը. յամին 1627 սահմանեաց զի զնոյն անուանակրութիւն երանելի հիմնադրին ունիցին և նոքա ։

Սանդալաւոր անուանեալքն 'ի սանդալից զորս վարեն փոխանակ կօշկաց՝ կոչին և Ռէքոլէքթի, այսինքն Առանձնացեալք, զի հոգի առանձնութեան և մենակեցութեան յորդորեաց զնոսա խնդրել 'ի քահանայապետէն Կղեմայ Է. յամին 1531 թոյլտուութիւն մեկուսանալոյ յառանձին վանս 'ի պահել ճիշդ և ան-

փոփոխ զկանոն սրբոյն Ֆրանկիսկոսի ։ Ի սկզբան անդ վերանորոգութեան սորա չէր կարի օտար 'ի Կապուչինաց , զի երկոքին կարգք միանգամայն համարէին զինքեանս հետեւողս խստակրօն կանոնացն բերելոց 'ի նախնեաց իւրեանց . բայց յետինքս զկնի ժամանակաց ինչ Թուլացան յառաջին եռանդնէ , զերծին զմօրուսն , եւ մեղմացուցին զխստութիւն կենաց ։

Ապաշխարողք , որք 'ի Գաղղիա կոչին Փիքփիւս յանուանէ անտի գեղջն ուր կալան զառաջին բնակութիւն իւրեանց , են 'ի շառաւիղաց անտի կարգին սրբոյն Ֆրանկիսկոսի , սկսեալ յամի տեառն իբր 1595 ։

Ֆոլիացիք եւ կրօն սոյա էր նորոգութիւն ինչ կարգին Կլարիսեանց , որ եղեւ յամին 1571 , 'ի ձեռն Յովհաննու Գաբրիէլա աբբայի սրբուհւոյն Մարիամու 'ի վիճակին Սփիէօ քաղաքի ։ Օրինակ կենաց նոցա 'ի սկզբան կարի խիստ էր . զի հրաժարեալք 'ի մսոյ ոստէս եւ 'ի գինւոյ՝ շատանային լոկ ջրով . սակայն ոչ կարացին մինչեւ 'ի սպառ տեւել տոկալ անհնարին խստութեանն ։

Կարմելականք , որք 'ի բազում ժամանակաց հետէ Թուլացեալք էին 'ի բարեկարգութէ , նորոգեցան ընդ ձեռն սրբուհւոյն Թերեզայ միանձնուհւոյ , որ էր յԱւիլա քաղաքէն Կաստիլիոյ ։ Օ՛նորոգութեան կրօնից սկիզբն առաւ 'ի մենաստանէ անտի ուր ինքն կրօնաւորեալ էր , եւ յետ հաստատելոյ զբարեկարգութիւնն 'ի միանձնուհիս՝ վերանորոգեաց եւ զկրօնաւորսն , որով կարգ Կարմելականաց ստացաւ զնորատիպ պայծառութիւն , եւ կոչեցան Բոկոտն Կարմելականք , զի ունէին կանոն բոկոտն շրջելոյ ։ Սրբուհին Թերեզա վառեալ էր այնպիսի եռանդագին սիրով եւ բարեպաշտութեամբ , մինչեւ ժառանգել զպանծալի անուն «Նահատակ սիրոյն Աստուծոյ» ։ Տարաւ ծանր ծանր եւ անբերելի հալածանաց սակս նորանշան զբանելեացն զորս Աստուած գործէր նովաւ եւ 'ի նմա . սակայն ինքն ոչ ինչ դրդուեցաւ 'ի խստութենէ վարուցն մինչեւ ցմահ իւր , որ եղեւ յամին 1582 ։ Սովորական մաղթանք նորա առ Աստուած եւ յորդոր առ անձինսն էր չարչարիլ կամ մեռանել վասն սիրոյն Աստուծոյ ։

Յայսմ դարու յամին 1520 հանդիսացաւ եւ կարգն հիմնարկեալ 'ի սրբոյն Յովհաննու Աստուծոյ առ 'ի խնամակալութիւն ախտացելոց, ընդ անուամբ Բարերար եղբարց: Այս գործ բարեպաշտութեան յաւել փառս և պարծանս կրօնից աստուածպաշտութեան, և օգտակար եղև մարդկային կենաց ծառայելով Աստուծոյ 'ի պատկերս նորա յախտացեալսն մարմնով: Տարածեցաւ կարգս յԻտալիա, 'ի Գաղղիա, 'ի Գերմանիա, 'ի Լեհաստան, և յամենայն տեղիս գործեաց օգուտս և շահս մեծամեծս:

Թէաթինք եղեն առաջին կղերիկոս կրօնաւորք երևեալք 'ի մէջ եկեղեցւոյ: Սահման և նպատակ միաբանութեան սոցա էր հաստատել կամ նորոգել զնախնի առաքելական կեանսն, թողեալ 'ի խնամս Աստուծոյ զհոգս մարմնաւոր պիտոյից: Սուրբն Կայետանոս Թիենացի եղև հիմնարկու կարգիս. իսկ Պետրոս Կարաֆֆա նեապոլսեցի՝ եպիսկոպոս Թէաթէ քաղաքի՝ եղև առաջին մեծաւոր և կանոնադիր կրօնին, ինքնին կամակար մտեալ ընդ կանոնօքն զորս օրինադրէր այլոց: Քահանայապետն Պօղոս Գ. լսեալ զհամբաւ զխստութեան և զբարեպաշտութեան Կարաֆֆայի, կոչեաց զնա 'ի Հռոմ՝ խորհուրդ 'ի նմանէ հարցանել առ 'ի դարմանն նորանոր մոլորութեց, և 'ի նորոգել զնախնի բարեկարգութիւնս վարուց: Տեսեալ քահանայապետին զարիական միտս նորա և զատելութիւն ընդդէմ ամենայն նորութեանց 'ի խնդիրս հաւատոյ, և խելամուտ լեալ թէ Կարաֆֆա մարթի լինել օրինակ բարի վարուց ամենայն կարդինալաց, առիպեաց զնա ընդունել զպատիւ կարդինալութեան: Եւ նորա յանձն առեալ զպաշտօնն՝ զոր գործեաց ամենայն ջանիւ հաստատուն պահել զիրաւունս եկեղեցական իշխանութեան և զբարեկարգութիւնս եկեղեցւոյ, ոչ ինչ ակն ածեալ ամենևին յումեքէ 'ի սակս մարդկային նկատմանց. այլ յամենայնի ջանացաւ փառաւոր առնել զանունն Աստուծոյ: Յամի տեառն 1555 իբրև ամբարձաւ 'ի գահ քահանայապետութեան՝ ընդ անուամբ Պօղոսի Դ., մեծապէս խնամակալու եղև իւրում ազգատոհմի, և կարգին Թէաթինաց, քանզի զմիանձունսն զայնոսիկ որդիս իւր համարէր:

Բառնաբեան կրօնաւորք սկզբնաւորեալք 'ի Միլալան՝ անուանեցան յեկեղեցւոյ անտի սրբոյն Բառնաբայ առաքելոյ՝ յորում առաջին հիմնադիրք նոցա տեղի էին ժողովել ։ Կոչեցան եւս կղերիկոս կրօնաւորք սրբոյն Պօղոսի ․ ունին սոքա վարժարանս բազումս, յորս ուսուցանեն զգիտութ՟ի եւ զքրամատիկական դպրութիւնս ։

Միաբանութիւն Աղօթարանից հիմնեալ 'ի սրբոյն Փիլիպպոսէ Ներեան յամին 1575, է ժողով աշխարհական քահանայից անխտիր հաւասարութ՟բ միաբանական կենաց, որ պարապէին դիւրահաս բանիւք վարդապետութեան յորդորել զժողովուրդն 'ի քրիստոնէական բարեպաշտութիւն, յաճախել 'ի խորհուրդս եկեղեցւոյ, յաղօթատեղիս, յայցելութիւնս անկելանոցաց, եւ ունին առանձին խնամս 'ի սնունդ բարիոք հրահանգութեան մանկանց ։ Սահմանունք նոցա անկախք են 'ի միմեանց ․ չիք նոցա ընդհանրական մեծաւոր ․ եւ ամենայն անձինք միաբանութեանն ազատ են եւ անկապք ուխտիւք, վասն որոյ չէ ուղղապէս կարգ կրօնաւորութ՟ե ։ Զանազանին սոքա 'ի միաբանութենէ անտի քահանայից աղօթականացն Գաղղիոյ, որք հաստատեցան յեօթնեւտասներորդի դարու, զորոց տեսցես անդանօր ։

ԳԼՈՒԽ ԾԴ․

Ընկերութիւն Յիսուսեանց ։

Ի ՄԷՋ ամենայն կարգաց հանդիսացելոց յայսմ դարու՝ մեծագոյնն եւ բազմահամբաւ եղեւ միաբանութիւնն անուանեալ Ընկերութ՟ի Յիսուսի ․ որոյ հիմնադիր եղաւ սուրբն Իգնատիոս Լոյոլեան ազնուատոհմն Սպանիացի ․ սա 'ի մանկութեան իւրում տուեալ էր զանձն 'ի հրահանգս զինուորութեան, այլ ապա շարժեալ յընթերցմանէ վարուց սրբոց՝ եթող զզինուորութիւնն, ցանկացեալ նուիրել զանձն Աստուծոյ ։ Յորդորեալ 'ի փափաքանաց դարձուցանելոյ զանհաւատս 'ի լոյս աստուածպաշտութեան, եկաց ընդ իւր վեց ընկերս, եւ նոքօք հանդերձ արար զառաջին ուխտ իւր 'ի Փարիզ քաղաքի յաւուր սրբոյ պենտեկոստէին, յամի տեառն 1534 ։

Այս կարգ կրօնաւորութեան, որոյ նախկին եւ գըլխաւոր նպատակ էր տարածումն և քարոզութիւն քրիստոնէական հաւատոյ 'ի մէջ կռապաշտից, հաստատեցաւ 'ի Պօղոսէ Գ. յամին 1540. և 'ի ժամանակէ անտի յերեսին սովորական ուխտս կրօնաւորութեան յաւելին զչորրորդն, այն է հնազանդութիւն հրամանաց քահանայապետին յառաքելութիւնս օտար և հեռաւոր աշխարհաց.

Զայս յետին ուխտ ամենայն պատուով անվրէպ 'ի գլուխ տարաւ սուրբն Փրանկիսկոս Քսաւերեան լուսիտանացի ընկեր սրբոյն Իգնատիոսի, որ և իրաւամբ կոչի Առաքեալ Հնդկաց. զի եկեալ նախկին 'ի ճանապարհորդել անդր վասն դարձուցանելոյ 'ի հաւատս զբնակիչսն այնոցիկ կողմանց, ուր և եհաս յամսեանն մայիսի 1542, և ապա ուղևորեցաւ 'ի Ճափոն յամի 1549. և մինչ անցանէր անտի յաշխարհն Սինէացւոց վասն քարոզութեան աւետարանին, եհաս վախճան սրբասուն կենացն և փոխեցաւ առ Աստուած՝ ընդունել զվարձս բազմապատիկ վաստակոյն 'ի փրկութիւն բազմաթիւ անձանց.

Զնոյն նախանձելի օրինակ հետևէր ջանից կալան զնի և այլ Յեսուեանք, որոց նուիրեալ զանձինս 'ի շահել զհոգիս՝ դարձուցին զյոլովս 'ի կռապաշտ Հնդկաց, Ճափոնացւոց և Սինէացւոց. Ի դոյզն ժամանակի յաջողեցաւ նոցա 'ի Ճափոն քարոզութեամբ ածել 'ի հաւատս Ճշմարտութեան՝ ոչ միայն զբազումս 'ի ռամիկ մարդկանէ, այլ և զյոգունս յականաւոր անձանց և զիշխանաւորս, մինչև հաւաստի յուսով ակն ունել թէ համօրէն ընդարձակ թագաւորութիւնն այն հպատակեսցի քրիստոնական օրինաց. Այլ 'ի դերև ել ակնկալութիւնն. զի 'ի բանսարկութենէ թշնամեաց կասկածելի եղեն Յեսուեանք յաչս տէրութեան, և արտաքսեցան անտի իբրու խռովարարք, որպէս և աշակերտեալքն 'ի նոցանէ պատուհասեցան դառն տանջանօք.

Առ Սինէացիս յաջողեցաւ նոցա մուտ գտանել 'ի սակս աստեղաբաշխական գիտութեանց. Մատթէոս Ռիչչի Յեսուեան իտալացի ճարտար ուսմամբ իւրով շնորհս գտեալ առաջի մեծամեծաց և թագաւորին՝ ընկալաւ համարձակութի վասն կրօնակցաց իւրոց քարոգել զաւետարան Քրիստոսի, զոր և արարին բազմաշահ պտղովք :

Նա այսպիսի եղև վիճակ բարեյաջող գործոց ընկերութեանն Յիսուսեանց յԵւրոպա և յԱսիա. որով կարգ նոցա և կրօն աճեաց և պայծառացաւ յոյժ 'ի մէջ բազմադիմի վշտաց և հակառակութեանց զորս կրեացն 'ի վեշտասաներորդ և յեօթնևտասներորդ դարս : Բայց 'ի յաճախել առաւելութեամբ անթիւ ոսոխաց՝ ստիպեցաւ Կղեմէս ԺԴ. յամին 1774 ջնջել զկարգ նոցա. սակայն յետ քառասուն ամաց վերստին հաստատեցաւ 'ի Պիոսէ Է. յամին 1814, որով ակներև ցուցաւ պիտանութիւն նոցա յօգուտ եկեղեցւոյ, 'ի դաստիարակութիւն մանկանց և 'ի պայծառութիւն ուսմանց :

Գլխաւոր ոսոխք ընկերութեան Յիսուսեանց զառաջինն հանդիսացան համալսարանք՝ 'ի կամել նոցա կանգնել առանձնական դպրոցս յայլ և այլ քաղաքս. որով գուն գործեցին շահել զսիրտս ամենեցուն, և ճարտար ուսմամբ յամենայն ազգս գիտութեանց՝ գերազանց գտան քան զայլ ամենայն ուսումնարանս : Նորանոր կարգօք դիւրեցին զդաստիարակութիւն մանկանց, և համբաւեալ հանդիսացան 'ի հմտութիւնս գրաւորականս. և պարապելով 'ի մատեանս նախնեաց՝ ցուցին նորահնար շաւիղս 'ի ծանօթութիւն ազգի ազգի բարբառոց, և օգտակար գտան հասարակաց հաւատարիմ թարգմանութեամբ ոչ միայն հոգևոր գրոց, այլ և արտաքին մատենագրաց :

Յընկերութենէ աստի Յիսուսեանց ելին արք երևելիք և նշանաւորք, հմուտ վարժապետք յամենայն ազգս դպրութեանց, որ և արգասիք են իմաստախոհ կանոնացն զոր ունէին. զի իւրաքանչիւր անձինք միաբանութեան յայն ուսմունս և եթ պարապէին, յորս ձգէր զնոսա բնածին յօժարութիւն իւրեանց. աստուածաբան ոք չէր ստիպեալ 'ի կանոնաց միտ դնել և երկրաչափական ուսմանց, և ոչ երկրաչափ ոք ելանել 'ի բեմբ քարոզութեան : Զխորհուրդս հաւատոյ և բարի վարուց 'ի մխիթարութիւն կամ յերկիւղ լսողաց՝ սովոր էին քարոզել ճարտարամիտք և վայելչախօսք առ 'ի նոցանէ. քանզի և նոքա միայն կարէին ազդել զբանս 'ի սիրտ և 'ի հոգիս ունկնդրաց ։ Այս կարգ և շաւիղ տածելոյ զընածին ձիրս ճարտարախօսութեան իւրաքանչիւրոյն՝ առանց բանի հպատակութե, պատճառք եղեւ յարուցանելոյ նոցա արս զօրաւորս և համաճարեղս առ ամենայն գործ ․ ոչ պակասէին 'ի նոսա արք խորհրդականք, արդարակշիք և ուղղադատք 'ի պէտս արտաքին օգտի և տեսչութեան իշխանաց և ժողովրդոց ․ յառաջատես նախահոգութեամբ դարմանս մատուցանէին առ յապա հանդերձեալ կասկածելի վտանգուց ․ զի ստէպ թղթակցութեամբ հաղորդելով միմեանց զվիճակ ազգացն յորս շրջէին, և զբարս ժողովրդեան և զօրինակ տեսչութեան այլ և այլ տէրութեանց՝, դիւրին էր նոցա գտանել հնարս և զառաջս ունել ամենայն դիպաց որոց վտանգաւոր մարթ է լինել ժողովրդեան ։

Ընձիւղք միաբանութեանս կարի սակաւաթիւք էին 'ի սկզբան անդ՝ յորժամ սուրբն Իգնատիոս յամին 1540 խնդրեաց զհաստատութիւն կանոնացն ․ բայց յամին 1608 յետ վաթսուն և ութ ամաց 'ի համար մտին տասն հազար հինգ հարիւր ութսուն և մի կրօնաւորք ։ Իսկ յետոյ յամին 1710 միաբանութի նոցա ունէր քսան և չորս վանս ուխտելոց, յիսուն և ինն նորընծայ ուսանողաց, երեքհարիւր և քառասուն վանս քահանայացեալ միաբանից, վարժարանս վեց հարիւր երկոտասան, երկերիւր վիճակս առաքելութեան, հարիւր և յիսուն դպրոցս եպիսկոպոսարանաց և ուսումնարանս հրապարակականս ։ Իսկ համօրէն թիւ անձանց ընկերութեանն Յիսուսեանց էր յայնժամ իննևտասն հազար իննհարիւր իննսուն և ութ ։

ԳԼՈՒԽ ԾԵ ․

Կարգք ասպետաց, և առանձինն յաղագս ասպետութե Մալթայի ։ — Պատերազմունք նոցա, և անգթութիւնք Օսմանեանց ։

ՅԱՅՍՄ դարու կարգ հիւրընկալ ասպետաց սկզբնաւորեալն յԵրուսաղէմ յերկոտասաներորդի դարու՝ տագնապեցաւ 'ի դառն և 'ի դժուարակիր թշուառութեանց ․ քանզի կղզին Հռոդոս, որ յերկերիւր ամաց հետէ կայր ընդ իշխանութեամբ ասպետացս այսոցիկ, և զոր կորզեալ էին 'ի Սարակինոսաց, յամին 1522 առաւ 'ի Սուլէյմանայ արքայէ Օսմանեանց՝ բուռն և սաստիկ պատերազմաւ, որում զարմանալի արիութեամբ զդէմ կալան ասպետքն. քանզի զօրականք աւելի քան զերկերիւր հազար պաշարեցին զկղզին, և ետուն նմա հարուածս հարիւր և քսան հազար և աւելի թնդանօթաց. սակայն նոքա զդէմ կալան քաջութեամբ հնգից յարձակմանց՝ յորս անկան սրով, հրով և հիւանդութեամբ իննսուն հազար և աւելի ոգիք 'ի պաշարողաց։ Հուսկ յետոյ Պետրոս Վիլլիէր Լիլլատամ գաղղիացի գլուխն ասպետաց՝ տեսեալ զաւեր քաղաքին, յանձն էառ դաշնադրութեամբ ելանել 'ի կղզւոյ անտի, և միայն իւրովքն հանդերձ գնալ 'ի Կրետէ։ Ապա էանց 'ի Սիկիլիա, և յետ խնդրելոյ զտեղի պատսպարութեան անձին և իւրոյն առ հասարակ, Կարոլոս Ե. ետ նոցա զկղզին Մալթա յամին 1530. քանզի զանգիտեալ կայսեր յահէ Թուրքաց՝ թէ դիմեսցեն և 'ի Կրետէ, և անտի 'ի Սիկիլիա, խորհեցաւ զՄալթա պատուար կանգնել ընդդէմ նոցա 'ի ձեռն ընկերութեան ասպետացս, և 'ի ժամանակէ անտի սկսան անուանիլ Ասպետք Մալթայի կամ Մելիտեայ։

Երկայնութիւն կղզւոյն է իբր ութ փարսախ, և լայնութիւնն իբրև հինգ. իսկ շրջապատ նորա է քսան և հինգ փարսախ։ Քաղաքն, յորմէ անուանի և կղզին համօրէն, էր 'ի միջին տեղւոջ՝ եօթն մղոնաւ հեռի 'ի նաւահանգստից, պատեալ զոյգ և տկար պարսպաւ իբր երեքհարիւր քսանևերեք քայլիւ։ Երրեակ մասունք էին կղզւոյս. այս է քաղաքն, աւանն և կղզեակն սրբոյն Միքայելի։ Քաղաքն պարագրէր յինքն զՎալէթթա և զՖլորիանա կամ զՆոր քաղաքն, իսկ աւանն և կղզեակ սրբոյն Միքայելի էին յարևելս կոյս. 'ի Վալէթթա էին պալատն, զինարանն, անկելանոցն, եկեղեցի մեծաւորութեան սրբոյն Յովհաննու, և հիւրանոցք օտարաց։

Յամի տեառն 1530 յորժամ գլուխն ասպետաց եմուտ 'ի ժառանգութիւն կղզւոյս, եգիտ զաւանն աւեր և անշէն՝ խարխուլ հիւղակք և սակաւք ձկնորսաց. որպէս և կղզին առ հասարակ ապառաժ էր և անբեր. բայց 'ի միջոցս սակաւ սակաւ կանգնեցան տունք բնակութեն և պատեցան պարսպաւ ։ Յետոյ անխոնջ աշխատութեամբ խնամ կալան բերել նաւուք հող 'ի Սիկիլիոյ , և ծածկելով զապառաժն արարին քաջայարմարս 'ի մշակութիւն . որով հետ զհետէ աճեաց և առաւելաւ թիւ ժողովրդեան . զի ուր յառաջն հազիւ ժամանէին ցերկոտասան հազար , յետոյ 'ի լինելն ընդ ձեռամբ ասպետաց եղեն աւելի քան զերեսուն հազար . իսկ այժմեան թիւ բնակչացն է իբր հարիւր հազար ։

Բնակիչք Մալթայի համօրէն զանձինս նախընծայս 'ի քրիստոնէութի քան զայլ մերձաւոր բնակիչս կղզեաց . զի ունին աւանդութիւն՝ թէ դարձ իւրեանց 'ի հաւատըս եղեալ իցէ քարոզութեամբ սրբոյն Պօղոսի առաքելոյ , որ նաւաբեկութեամբ զերծաւ յայն կղզի ։

Ի պատսպարել ասպետացն յայս նոր ապաստանարան, զայրեալ Օսմանեանց ոխային մեծապէս . վասն որոյ յամին 1565 սուլթան Սիւլէյման կամելով վարել զնոսա 'ի կղզւոյ անտի , եւ պաշարել զայն աշխարհաւ զինուք բազմախումբ նաւուց , հրամանատար կարգեալ զՄուստաֆա փաշա և զՏրաղութ հուղկահար ։ Արդ յետ երից ամսոց և յոգունց մարտից , կորուսեալ Օսմանեանց անթիւ զօրս՝ ստիպեցան հեռանալ 'ի կղզւոյն ։ Յայնմ պատերազմի գլուխն ասպետաց Յովհաննէս Վալէթթա զարդարեալ արիական քաջութեամբ և զգօն տեսչութեամբ իւրով ստացաւ փառս պարծանաց՝ պատճառ գոլոյ ազատութեան կղզւոյն ։ Եւ զի հարուածք թընդանօթիցն Օսմանեանց քանդեալ էին 'ի սպառ զքաղաքն Մալթա , խորհեցաւ վերստին կանգնել զայն , զոր և սկսաւ յամին 1566 , և հաճութեամբ հաւանութեան խորհրդոյ համօրէն ասպետաց՝ անուն քաղաքին կոչեցաւ Վալէթթա , յանուանէ անտի գլխաւորին իրեանց ։ Սուրբն Պիոս Ե. ձեռնտու եղև ծախուցն՝ ամսոյ յամիս առաքելով նմա հնգետասան հազար սկուդս , որպէս և 'ի յորդորմանէ նորին սրբոյ քահանայապետի եղեն նպաստք և յայլոց իշխանաց քրիստոնէից ։ Շինութիւն քաղաքին տևեաց զամս երկուս , յորս անընդհատ վաստակակից գործաւորացն էր գլուխն ասպետաց , անխոնջ կերակրելով ընդ նոսա , և առէպես անդ առ տեղեաւն լինէր զգաստ ։

Նմանք նախահոգակ պատրաստութեանցս այսոցիկ կարի յոյժ պիտանիք էին, զի թշնամիք քրիստոնէից ապառնային նուաճել զամենեսին զնոսա ընդ տէրութեամբ իւրեանց. քանզի և 'ի նմին ամի 1566 տիրեցին Քիոս կամ Սագըզ կղզւոյ, որ 'ի հարիւր և յիսուն ամաց հետէ կայր ընդ իշխանութեամբ Ջենուացւոց, և կողոպտեցին զմայր եկեղեցին նուիրեալ սրբոյն Պետրոսի. և զի բնակիչք կղզւոյն կամակոր յանձն առին հպատակել յաղթականին՝ չարչարեցան կեանք նոցա: Ի կողոպտել անդ զեկեղեցին՝ այր մի յանհաւատից առեալ 'ի ձեռին զսրբատուփն, յորում կային բազմաթիւ նշխարք սրբագործեալք, եհարց ցեպիսկոպոսն որ կայր առընթեր՝ թէ արդարև սա՞ իցէ Աստուածն քրիստոնէից. և 'ի պատասխանի անել եպիսկոպոսին՝ թէ այո՛, կատաղեալ անօրէնին ընկէց զսրբատուփն 'ի գետին. զոր տեսեալ եպիսկոպոսին և յարտասուս հարեալ՝ ասէ ցանօրէնն. « Ցանկալի ևս էր ինձ մեռանել 'ի քէն, քան տեսանել զայդպիսի անօրէն յանդգնութիւն »: Ապա 'ի մեկնել անտի բարբարոսին, եպիսկոպոսն անկեալ 'ի ծունկս հաւաքեաց զսուրբ նշխարսն: Նոյն 'ի Քիոս քանդեցան 'ի Թուրքաց ամենայն եկեղեցիք՝ բաց յեկեղեցւոյ սրբոյն Դոմինիկոսի, զոր փոխեցին 'ի մզկիթ. և տուաւ բնակչացն դատաւոր մահմետական: Ապա ընտրանօք զատուցան քանի մի պատանեակք գեղեցիկք երեսօք յազգատոհմէն Ջուստինեանց կալ 'ի սպասծառայութեան սուլտանին, որք թէպէտ և թլփատեցան ակամայ, այլ ոչ եղև հնար ածել զնոսա յուրացութիւն հաւատոյ. խոշտանգեցան հարուածովք գանից, և ոմանք 'ի նոցանէ մեռան 'ի տանջանս: Ընտանիք քաղաքապետին՝ որպէս և երկոտասան իշխանաց կղզւոյն ածան 'ի Կոստանդնուպօլիս, և անտի վարեցան յայլ և այլ տեղիս:

Ի նմին ամի սուլտանն Սիւլէյման դիմեաց 'ի Մաճառս 'ի պատերազմ և պաշարեաց զՍիկէթ քաղաք առ սահմանօքն Պաննոնիոյ և Խրուաթից, որ երեք աւուրբք յառաջ քան զառումն քաղաքին վախճանեցաւ արքայն 'ի հասակի եօթանասուն և վեց ամաց, թագաւորեալ զամս քառասուն և վեց: Սելիմ

Բ՝ որդի և յաջորդ նորա՝ գնաց 'ի Մ՝աճառս , ուր 'ի զօրաց իւրոց ծանուցաւ և անուանեցաւ թագաւոր , ապա 'ի հետևեալ ամի արար հաշտութիւն ընդ կայսերն Մ՝աքսիմիլիանոսի Բ՝ ութամեայ պայմանաւ ։

Յամի տեառն 1570 'ի քակտել դաշինն խաղաղութեան երդմամբ հաստատելոյ ընդ մէջ սուլթան Սուլէյմանայ և հասարակապետութեան Վենետկոյ . Սէլիմ արքայ առաքեաց զՄ՝ուստաֆա փաշա տիրել Կիպրոսի ։ Վենետկեցիք խնդրեցին զօգնութիւն 'ի քրիստոնեայ թագաւորաց ընդդէմ հասարակաց թշնամւոյն . և առ նոյն ժամանակաւ սուրբ քահանայապետն Պիոս Ե՝ եհան կոնդակ ընդհանուր յոբելինի առ 'ի խրախոյս մարտակցութեան 'ի պաշտպանութիւն հաւատոյ . բայց կայսրն հրաժարեցաւ 'ի ձեռնտուութենէ այնր պատերազմի . վասն որոյ միաբանեցան թագաւորն Սպանիոյ , քահանայապետն և տէրութիւն Վենետկոյ ։ Մ՝ուստաֆա փաշա պաշարեաց զՆիկոսիա քաղաք Կիպրոսի , և յետ քառասնեւութ աւուրց առաւ քաղաքն բռնի յարձակմամբ , և մոլեգնաբար կոտորեցաւ 'ի Թուրքաց ։ Ի գերելոց անտի պահեցան վասն թագաւորին բազում կանայք , և աղջկունք և գեղատեսիլ պատանիք , որպէս և կահք չքնաղագիւտք և պատուականք , զորս բարձին յերիս նաւս վասն փոխադրելոյ 'ի Կոստանդնուպօլիս . և մինչդեռ ապասէին յաջողակ հողմոյ ելանել 'ի ճանապարհ , մին 'ի տիկնայց կղզւոյն հուր արկեալ 'ի նաւսն՝ յաձխին դարձոյց զպատրաստեալսն վասն թագաւորին ։

Մ՝ուստաֆա փաշա յետ տիրելոյ՝ Նիկոսիա քաղաքի՝ դիմեաց պաշարել և զՖամակոսթա , ուր զառաջինն եգիտ դիմադարձութիւն մեծ . բայց յետոյ 'ի ծագել երկպառակութեան 'ի մէջ քրիստոնէից , և 'ի յապաղել օգնականութեանն զոր խոստացեալ էին Սպանիացիք՝ զօրացան թշնամիք , և սաստկացուցեալ ըղմարտն՝ 'ի յետին սահման անձկութեան հասուցին զքաղաքն ։ Սովն տագնապէր զնոսա 'ի ներքուստ առաւել քան զբռնութիւն զինուց թշնամեացն արտաքուստ . վասն որոյ գլխաւորք քաղաքին աղերս մատուցին առ իշխանապետն Պրագադին՝ խնդրելով 'ի նմանէ դաւանել հնարս անվնաս ազատութեան կանանց և որդուոյ իւրեանց ։ Նմին իրի առաջի արարին Օսմանեանց դուլ առնել զինուց , և խօսել 'ի հաշտութիւն և տալ զքաղաքն 'ի ձեռս նոցա ։ Սահմանեցան դաշինքն , և ձեռնադրեալ 'ի Մուստաֆա փաշայէ՝ եղան 'ի նաւ վիրաւորք և հիւանդք · ապա մտին Օսմանեանք 'ի Ֆամակոսթա , ուր ընդդէմ՛ դաշանցն արարին մեծամեծ չարիս և անօրէնութիւնս ։

Մուստաֆա փաշա յանիրաւի խնդրելով պատճառս կռուոյ և թշնամութեան ընդ Պրակատին իշխանապետին՝ ետ կապել զնա 'ի շղթայս , և ածեալ առաջի իւր հրամայեաց սպանանել զայնոսիկ , որք ընդ նմա եկեալ էին 'ի բանակ Օսմանեանց · ապա եղին և զիշխանապետն յանդիման դահճի , որ իբրև պատրաստէր հատանել զգլուխ նորա , Մուստաֆա փաշա կամելով իբր շնորհս առնել՝ հրամայեաց կտրել զունչ և զականջս նորա եւեթ · յետոյ տարածեալ զնա 'ի գետնի առ ոտս իւր , թշնամանելով ասէր · « Ո՞ւր է Քրիստոսն որ 'ի քէն պահէր՝ ոչ գայ փրկել զքեզ 'ի ձեռաց իմոց » ։ Պատուէր ետ ապա զօրացն գերել և կողոպտել զորս միանգամ եղեալ էին 'ի նաւս , և յետ աւուրց ինչ ածեալ զՊրակատին 'ի հրապարակ՝ մորթեզերծ արարին զնա կենդանւոյն · որոյ սքանչելի արիութեամբ ժուժկալեալ անհնարին տանջանացն , ոչ դադարէր 'ի կարդալոյ զանուն Քրիստոսի ։ Ոչ շատացեալ անօրինին զայն չարչարանօք եւեթ սպանանել զայրն ականաւոր , կամեցաւ անպատիւ առնել զդի նորա · վասն որոյ յարդալից արարեալ զմորթն՝ հրամայեաց հովանաւոր պատգարակաւ շրջեցուցանել ընդ քաղաքն ողջոյն , և ապա տանել 'ի Կոստանդնուպօլիս ընդ այլոց հատեալ գլխոց իշխանացն Ֆամակոսթայի ։ Յետ այնորիկ հանեալ զոսկերս մեռելոց 'ի գերեզմանացն որք կային յեկեղեցւոջ սրբոյն Նիկողայոսի , և քանդեալ զխորանն՝ փոխեաց զտաճարն 'ի մզկիթ ։ Ի ձեռն յաղթութեանս տիրեցին Օսմանեանք համօրէն կղզւոյն Կիպրոսի · բայց 'ի հետևեալ ամի (1571) պարտութիւն նոցա և 'ի ծովու խորտակումն 'ի լեփանտեան պատերազմի՝ յաւուրս քահանայապետութեան սրբոյն Պիոսի Ե. կասեցոյց զյառաջադիմութիւն նոցա ։

ԳԼՈՒԽ ԾԶ.

Ասպետութիւն Հոգւոյն սրբոյ:

ՅԱՄԻ տեառն 1579 'ի սկիզբն յունուարի Հենրիկոս Գ. Թագաւոր Գաղղիոյ սահմանեաց զկարգ ասպետաց Հոգւոյն սրբոյ, որում նիշն եղև գլուխ և կարգապետ. իսկ թիւ ասպետացս հարիւր եւեթ զօլ սահմանեցաւ: Հենրիկոս արքայ ունէր 'ի մտի կարգել և հասոյթս իւրաքանչիւր ասպետաց ըստ սովորութեանն Սպանիոյ. բայց արքունիք Հռոմայ յորդորեալ 'ի գըղերց Գաղղիոյ՝ հակառակ կացին այնմ: Իսկ Թագաւորին յայտ արարեալ զխոստաւորութիւն իւր՝ թէ սահմանելով զայն կարգ ասպետութեան փափաքէր ջնջել զհերետիկոսութիւնս և տարածել նորօք զառաքելական և զհռովմէական ուղղափառ հաւատս, ըստ դաշանց երդմանն զոր առնէին ասպետքն, թոյլ տուաւ նոցա պահել զպատիւ թոշակաւորի, և իւրաքանչիւրում 'ի նոցանէ կարգեցան յարքունուստ հազար սկուդք ոսկիք, իսկ յետոյ չափաւորեցան յերիս հազար փրանկս: Յորդոր Հենրիկոսի 'ի սահմանել զասպետութիւնս զայս Հոգւոյն սրբոյ այն առի լեալ, զի յաւուր պենտեկոստէի ծնեալ, և 'ի նմին աւուր ընտրեալ էր 'ի Թագաւոր Լեհաստանի, և 'ի նմին աւուր ամբարձեալ յաթոռ տէրութեանն Գաղղիոյ:

ԳԼՈՒԽ ԾԷ.

Եկեղեցական մատենագիրք:

ՎԵՇՏԱՍԱՆԵՐՈՐԴՍ այս դար մեծարգի է յոյժ 'ի պատճառս բարգաւաճելոց դպրութեանց. քանզի խռովութիւնքն յուզեալք 'ի մոլորութեանց Լուտերի և Կալվինոյ 'ի միջոցս աւելի քան վաթսուն ամաց, ընծայեցին 'ի լոյս զբազմութիւն մատենագրաց՝ որք գոն գործեցին բանալ 'ի սպառ զմոլորութիւնս զայնոսիկ: Ի յաջողութի բանակռուութեանց հարկ էր ուսանել զարևելեան լեզուս. Նմին իրի յոլովք պարապեցան 'ի լեզուագիտութիւն բազմաշահ արդասեօք․ արդ զերեւելիս 'ի մատենագրաց այսր դարու նշանակեսցուք յառաջիկայդ։

Յաստուածաբանական մատենագիրս մեծահամբաւ են Ըոան Լեփլիւքացի վախճանեալ յամին 1522․ կարդինալն Թովմաս տէ Վիօ՝ մականուանեալն Կայետանոս․ գրեաց սա մատեան ինչ յաղագս իշխանութեան քահանայապետացն Հռովմայ եւ ժողովոց, եւ Յովհաննէս Տրիետոյ։ Սոյին ժամանակակից գոլով եւ ականաւորն 'ի մատենագիրս Էրասմոս աստուածաբան եւ քաջահմուտ գիտնական, որ զառաջինն եղեւ կանոնիկոս կրօնաւոր սրբոյն Օգոստինոսի, եւ ապա ազատ քահանայ․ ծնեալ 'ի Ռոթթերտամ յամին 1465, եւ վախճանեալ 'ի Պազիլէա քաղաքի յամին 1536։ Արդիւնաւոր ցուցաւ յոյժ 'ի զարգացումն դպրութեանց եւ յողջամիտ հետազօտութիւնս․ 'ի ձեռն սորա եղեն նախկին տպագրութիւնք մատենից բազում որոց հարց եկեղեցւոյ, որով հանդիսացոյց զանյիշատակ թաղեալ հնութիւնս, եւ զարթոյց զախորժ զրաւոր երկասիրութեանց նոցա․ յորոց վերայ վարժեալ ստացաւ եւ ինքն ոճ մաքուր, ընտիր եւ պերճ։ Եղեւ 'ի գլխաւորաց անտի որք ազնուական իմն օրինակաւ գրեցին զաստուածաբանական խնդրոց՝ պարզ եւ անխառն 'ի մանր նրբութեանց եւ յանհարթ դպրոցական բացատրութենէ, բայց կարի համարձակախօս գոլով 'ի խնդիրս կրօնի եւ 'ի թշնամանել զանկարգութիւնս եւ զթերութիւնս իւրում դարու, կշտամբելով զագիտութիւնս, զսնապաշտութիւն, զարհամարհութիւն պիտանի դպրութեանց, զպղերգութիւն ոմանց 'ի կրօնաւորաց, զմեղկութիւն ընչասէր եկեղեցականաց, որովք ստացաւ իւր ոսոխս բազումս։ Ունելով սորա նախանձ ընդ ումեք, չեղեւ երբեք առաջին 'ի դիմախօսել այլում․ բայց 'ի բանակաւ լինել այլոց ընդ նմա՝ զուն գործէր համարձակ պայքարել։ Ուսումնասիրութեամբն եւ անընչասիրութեամբ անգոսնեաց զպատիւ, զմեծութիւնս եւ զստացուածս․ քանզի քահանայապետքն Պօղոս Գ. եւ Կղեմէս Է., որպէս եւ թագաւորքն Ֆրանկիսկոս Ա. եւ Հենրիկոս Ը. ջանահնար եղեն ձգել զնա առ իւրեանս, բայց 'ի դերեւ ելին․ զի ախորժ առանձնութեան կենացն և պարապելոյ յուսմունս յիւրում սենեկի՝ ընտրելագոյն եղև նմա քան զշնորհս արքունեաց ։

Յովհաննէս Կլէքթօվ յաստուածաբանս փարիզու եղև առաջին ՚ի հերքել զմոլորութիւնս Լուտերի ։ Յովհաննէս Էքքիոս՝ որոյ պիտառութիւնն յաղագս բանակռուութեանց յարգի է յոյժ մինչև ցայժմ ։ Յովհաննէս Կրոփփեր՝ կարի համբաւաւոր է սակս Ճառին որ յաղագս Հաղորդութեան․ զի եղև առաջին որ վասն սրբոյ խորհրդոյս գրեաց հետաղօտ հմտութեամբ ։ Մելքոն Կանոս, որ ստացաւ անմահական անուն վասն գրոյն որ Յաղագս աստուածաբանական տեղեաց ։

Կղօդիոս Տեփանս վարդապետ փարիզու՝ մեծարգոյ հանդիսացաւ սակս գրաւոր երկասիրութեանցն ՚ի վերայ վարդապետութեան հաւատոյ, բարի վարուց, և եկեղեցական բարեկարգութեան ։ Նիկողայոս Սանտեր մատենագիր պատմութեան հերձուածոյն Անգղիոյ, որպէս և այլոց ինչ ինչ գրուածոց բանակռուութեան՝ որք օգտակար գտան յայնմ դարու ։

Ելին և յոգնաթիւ մեկնիչք և այլ բազմահմուտ գիտնականք ։ Կարդինալն Քսիմենէս արդիւնաշատ ցուցաւ եկեղեցւոյ տպագրութեամբ բազմալեզուեան սուրբ գրոց ։ Նոյնպէս և կարդինալն Ջիաքօպացիոյ արժանապատիւ ցուցաւ մատենիւն որ յաղագս ժողովոց, որ է ութուտասներորդ ՚ի հատորս հաւաքման հօրն Լապպէի ։ Յովհաննէս Լուդովիկոս Վիվէս սպանիացի ընծայեաց ՚ի լոյս հինգ գիրս յաղագս ճշմարտութեան քրիստոնէական հաւատոյ ։ Նշանաւորագոյն եւս և Յակոբայ Լըֆեվրի վասն բազմահմուտ մեկնութեանն ՚ի վերայ նորոց կտակարանաց, որպէս և Յակոբայ Մերլինոյ յաղագս հաւաքման պատմութեան ժողովոց, որք տպագրեցան ։ Թողում յիշատակել և զայլ յոգնաթիւ մեկնիչս սուրբ գրոց, որք կարի շատք են, զորոց զբազմահատոր մատեանսն ոչ բաւեն ժամանակք յընթեռնուլ, բայց օգտակարք են ՚ի լուծումն երկբայութեանց՝ թէ ուրեք երբեք ընդ առաջ եկեսցեն ։ Նոյնպէս անթիւ են և այլ մատենագիրք ՚ի զանազան խնդիրս, զորս չէ հնար բովանդակել ՚ի համառօտ պատմութեանս ։

Ի բովանդակ ընթացս այսր վեշտասաներորդի դարու ուսումն աստուածաբանական կարի յառաջադէմ գտաւ հետաքննին ընթերցմամբ մատենից նախնի հարց եկեղեցւոյ. ուշադիր քննութ՟բ պարապելով քան զգրագէտն անցելոց դարուց՝ յուսումն սուրբ գրոց և աւանդութ՟ց եկեղեցւոյ. որով աստուածաբանութիւնն սկսաւ հաստատուն հիմամբ ծաղկիլ 'ի ձեռն քրտնաջան մշակութեան ճարտարամիտ արանց, որք գուն գործեցին միա դնել զպիտանի և օգտակար խնդրոց հաւատոյ և բարի վարուց, զորոց և խօսեցան պայծառ և մեկին բանիւք, թողեալ 'ի բաց զանօգուտ բառան փիլիսոփայութեան և զգժուարիմաց խնդիրս բնազանցութեան: Պետրոս Այիլլի և Յովհաննէս Գերսոն՝ ականաւոր 'ի ժողովն Կոստանդեան, Նիկողայոս Քլեմանժիս, և այլք ոմանք եռուն օրինակս այսմ ոճոյ և կարգի ընթացից: Ուսումն եկեղեցական հնութեանց պատճառք եղև վտարելոյ նոցա 'ի գրուածոց իւրեանց զանտաշոր ոճս և զնսեմութիւն բանից, որք զառաջինն հասարակ էին ամենայն աստուածաբանից: Տարագրեցին 'ի մէջ զդպրոցական խնդիրս՝ միա եղեալ վարդապետութեանց հաւատոյ և բարի վարուց, որպէս և եկեղեցական բարեկարգութեանց. և խնամ կալան յերեւան ածել զհոգի իմաստին որովք հաստատին հաւատք՝ և կանոնաւորի ուղղութիւն վարուց:

ԴԻՐՔ ԵՕԹՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա.

Ընտրութիւն քահանայապետութեան Լեւոնի ԺԱ., և Պօղոսի Ե: — Գժտել Պօղոսի ընդ ազնուապետութեանն Վենետկոյ:

Ի ՊԱՏՃԱՌՍ *մահուան Կղեմայ Ը., որ եղև յամին 1605 'ի պարապութեան գոլով աթոռոյ սրբոյն Պետրոսի, ժողովեալ վաթսուն և մի կարդինալաց 'ի փակարան ընտրութեան, երբ և խորհէին ամենեքին առ հասարակ յաջորդ կացուցանել Կղեմայ զբազմահմուտ և զականաւոր կարդինալն Բարոնիոս, տէրութիւնն Սպանիոյ ոչ հաճեցաւ ընդ ընտրութիւն նորա: Զի այրս այս գիտնական 'ի մատենի տարեգրութեան իւրոյ 'ի հատորն մետասաներորդ, գրեալ էր ընդդէմ երկբայելի իրաւանց իշխանութեան զոր թագաւորն Սպանիոյ ջան գործէր ունել 'ի վերայ Սիկիլիա կղզւոյն: Յայնժամ ժողովականքն միաբանեցան ընտրել 'ի պատիւ քահանայապետութեան զկարդինալն Աղեքսանդր Օկտաւիոս յազնուազարմ տոհմէ Մետիչեանց՝ զարքեպիսկոպոսն Փլորենտիոյ, զբարեհամբաւն 'ի բազում դեսպանութիւնս իւր յայլ և այլ կողմանս Եւրոպիոյ: Անուանեցաւ նա Լեւոն ԺԱ., բայց յետ քսանևօթն աւուրց ընտրութեան իւրոյ վախճանեցաւ 'ի հասակի եօթանասուն ամաց: Բարեմտութեամբք կանոնաւոր կենաց իւրոց, ազնուական վեհանձնութեամբն, և նախանձու բարեկարգութեան յոյս մեծ էր ամենեցուն բազմապատիկ բարեաց ակն ունել 'ի նմանէ. և թէպէտ զրկեցան անակնկալ մահուամբն, բայց յետ-*

տակ նորա 'ի պատուի է յոյժ առ ամենայն հաւատացելս ։

Զկնի մահուան Լեւոնի ԺԱ. ընտրեցաւ քահանայապետ կարդինալն Կամիլլոս Պորկեզէ, որ անուանեցաւ Պօղոս Ե. 'ի սկզբան քահանայապետութեան իւրոյ խնամ կալաւ չափաւորել զհարկս ժողովրդեան, և նուազելով զգինս պարենից՝ արար լիութիւն ամենայն բարեաց 'ի Հռովմ ։ Արիութիւն նորա 'ի պաշտպանել զիրաւունս սրբոյ աթոռոյն յայտնի եղև 'ի բազում դէպս, յորս համբաւեալ է յոյժ գժտութիւն նորա ընդ տէրութեանն Վենետկոյ ։

Քանզի ազնուապետութիւնն այն յամին 1603 և 1605 արարեալ էր երկուս հրովարտակս որք պատճառք եղեն ընդերկար և անողոքելի հակառակութեանց ընդ գահին Հռովմայ ։ Յառաջնումն հրովարտակի արգելեալ լինէր շինութիւն և կանգնումն նոր եկեղեցեաց, մենաստանաց և անկելանոցաց առանց հրամանի և թոյլտուութեան ծերակուտին . իսկ երկրորդն արգելոյր աշխարհականաց յօտարացուցանել զստացուածս իւրեանց 'ի նպաստ եկեղեցականաց ։

Կղեմէս Ը. զանգիտեալ 'ի յուզմանէ խնդրոց հակառակութեան ընդդէմ հրովարտակացս այսոցիկ, կալաւ զշաւիղ զգուշաւոր՝ կեղծելով զանգիտութիւն ։ Բայց Պօղոս Ե. արիացեալ հոգւով նախանձու պաշտպանութեան իրաւանց և իշխանութեան աթոռոյն՝ փոյթ կալաւ դարման մատուցանել իրացն եղելոց ։ Եւ քանզի ծերակոյտն Վենետկոյ զայնու ժամանակաւ արկեալ էր 'ի բանտ զկանոնիկոս ոմն, և զայլ ոմն աբբայ սակս ծանր ինչ յանցանաց, համարեցաւ քահանայապետն թէ բռնաբարութիւն իցէ այն եկեղեցական ազատութեան . վասն որոյ խնդրեաց 'ի ծերակուտէն զհատուցումն այնր անպատուութեան, և հրամայեաց նմա ունայնացուցանել զերկոսին վճիռն զորս արարեալ էր յամին 1603 և 1605 ։

Վենետկեցիք ոչ միայն չկամեցան յետս կոչել զվճիռսն, այլ և ոչ զերկոսին բանտարկեալսն յանձնել 'ի ձեռս նուիրակին Հռովմայ ըստ խնդրոյ քահանայապետին . նմին իրի Պօղոս Ե. ազդ արար սպառնալեօք ընդ բանիւ անել զամենայն սահմանս ազնուապետութեան, և նզովել զծերակոյտն հանդերձ նախագահ գլխու, եթէ 'ի միջոցս քսան և չորից աւուրց ոչ հաճեսցեն զկամս նորա : Ծերակոյտն շատ համարեցաւ առ ժամն բողոքել ընդդէմ ազդարարութեան քահանայապետին, և արգելուլ զհրատարակումն կոնդակին Հռովմայ. բայց քանզի կրօնաւորքն Յիսուսեանք, Թէատինք և Բարնաբայինք, յօժարամիտքն 'ի հնազանդութիւն քահանայապետին քան ծերակուտին, հպատակեցան արգելմանցն և փակեցին զեկեղեցիս իւրեանց, վասն որոյ արտաքսեցան 'ի սահմանաց տէրութեանն :

Յայնմ ժամանակի սկսան երկուստեք պատրաստիլ 'ի պատերազմ, և սփռեցին գրուածք 'ի ջատագովութի երկաքանչիւր կողմանց : Ի կողմն Վենետկեանց պաշտպանէր ճարտարամիտն Պօղոս Սարբի կրօնաւոր Սերվիթեան. իսկ Բարոնիոս և Բելլարմինոս գրէին 'ի ջատագովութիւն սրբոյ աթոռոյն. սակայն գրուածք երկոցունցն ևս կողմանց ոչ ինչ օգտեցին 'ի հանդարտել զյուզեալ ոգիս նոցա :

Չանգիտեալ Պօղոսի Ե. թէ բանակռուութիւնքն 'ի չարաչար կատարած յանգիցին, յօժարամիտ ընկալաւ զմիջնորդութիւն Հենրիկոսի Դ. արքային Գաղղիոյ՝ քան զձեռնտուութիւն Փիլիպպոսի Գ. թագաւորին Սպանիոյ, որ խոստանայր օգնել նմա զօրօք : Վասն որոյ դեսպանք Գաղղիոյ որ 'ի Հռովմ և 'ի Վենետիկ՝ յօրինեցին զօրինակ դաշանց միաբանական հաշտութեան, զոր փառօք 'ի գլուխ տարաւ կարդինալն Ժոյօզա : Պայմանն դաշնադրութեանս եղև, զի յանձնեսցեն 'ի ձեռս գործակալի քահանայապետին, և զի ծերակոյտն յետս կոչեսցէ զվճիռն որ ընդդէմ բանադրանաց, որպէս և քահանայապետն լուծցէ զբանադրանսն : Ծերակոյտն փութացաւ առաքել 'ի Հռովմ դեսպան զոք, զոր քահանայապետին ընկալեալ սիրով մեծաւ և զուարթերես բանիւք յիշելով զբան առաքելոյն՝ ասէ. “ Հինն անց և արդ նոր եղև ամենայն ,, :

Պօղոս Ե. աւարտեալ զայս գործ տաղտկալի, սկսաւ միտ դնել խնամոց քահանայապետութեան : Միջնորդ եղև հաշտութեան և խաղաղութեան թագաւորաց, զի ընդ այն ժամանակս էր անողոքելի կռիւ մարտի 'ի Գերմանիա ընդ կայսրն Հռոտոլփոս Բ. և ընդ արքիդուքսն Մաթիաս եղբայր նորա . նոյնպէս և յԻտալիա ընդ մէջ դքսին Սաւոյիոյ և Սպանիացւոց , զորս խնամ՛ կալաւ քահանայապետն ածել 'ի հաշտութիւն : Յայնու ժամանակաւ թագաւորն Ֆրանկոյ յԱնգլիկէ , և թագաւորն Պարսից առաքեն դեսպանս 'ի Հռոմ՝ յայտ առնել զանընդդիմակ հաւանութիւն իւրեանց՝ եթէ քահանայապետն յօժարեսցի առաքել քարոզիչս 'ի սահմանս տէրութեան իւրեանց . ընդ որ ուրախ եղև յոյժ քահանայապետն : Այլ ոչ դոյզն վշտաց պատճառք եղեն նմա անյաջողութիւնք առաքելութեան 'ի Հնդիկս . զի 'ի Յապոն դաւաճանութեամբ Հոլլանդացւոց կասկածելի ցուցաւ նախանձ աստուածպաշտութեան քրիստոնեայ քահանայից , վասն որոյ տարագրեցան 'ի կղզւոյն : Նոյնպէս ցաւեաց յոյժ նմա և ընդ հաստատութի լուտերական աղանդոյ 'ի Շուետս . զի Կարոլոս Սուտերմանիացի լուտերական բռնակալեալ յափշտակեաց զթագաւորութիւնն զայն 'ի ձեռաց արքային Լեհաց Սիկիսմունդայ հօրեղբօր իւրոյ :

ԳԼՈՒԽ Բ.

Մահ Պօղոսի Ե . և ընտրութիւն Գրիգորի ԺԵ և Ուրբանոսի Ը.

ՊՕՂՈՍ Ե. վախճանեցաւ յամին 1621 յետ իբր վեշտասան ամաց քահանայապետութեան , թողեալ անուն և յիշատակ պանծալի 'ի սակս հոյակապ շինուածոց բազմապատիկ եկեղեցեացն և վարժարանաց՝ որովք շքեղացոյց զՀռոմ քաղաք : Ոչ ոք 'ի քահանայապետաց հոգ յանձին կալաւ իբրև զնա 'ի հաստատել կարգս կրօնաւորաց և օգտակար միաբանութիւնս . զի զամուրս ապաստանի և զվարժարանս առաքինութեանց չհամարէր երբէք փոյթապարս :

Նա քանզի ընդ այն ժամանակս կարի նուազեալ էր ուղղափառութիւն յարևելեան կողմանս , փութայր առաքել անդր հոգեջան քարոզս բանին 'ի մշակութիւն հոգւոց : Յանկացաւ անձկանօք միաբանել զքրիստոնեայ թագաւորս և զիշխանազունս 'ի դաշնակցութիւն ընդդէմ անհաւատից. բայց քաղաքական խոչ խափան եղեն նմա 'ի լրումն ածել զյօժարութիւն կամաց իւրոց։ Ջեռանդուն էր նա յոյժ 'ի սպասաւորութիւն եկեղեցւոյ, որ և արգասիք էին հոգևանցն բարերարութեան իւրոյ, որով զօր ամենայն անխափան մատուցանէր զսուրբ պատարագն մինչև ցաւուրս յետին հիւանդութեան իւրոյ։

Զկնի մահուան Պօղոսի Ե. յամի տեառն 1621 ընտրեցաւ կարդինալն Ալեքսանդր Լուտովիզից արքեպիսկոպոսն Բոնոնիա քաղաքի, յորմէ էր և բնիկ հայրենեօք, և անուանեցաւ Գրիգոր ԺԵ։ Սա 'ի նստել իւրում յաթոռ քահանայապետութե՝ առ խափանելոյ զվէճսն որք սովոր են ծագել յընտրութեան քահանայապետաց՝ հրամայեաց զի յետ այնորիկ և առ յապա՝ ընտրութիւնն լիցի ծածուկ քուէիւք։ Զեպիսկոպոսութիւն Փարիզ քաղաքի ամբարձ յարքեպիսկոպոսական պատիւ, և դասակարգեաց 'ի թիւս սրբոց զերանելին Իգնատիոս Լոյոլեան զհիմնադիրն ընկերութեան Յիսուսեանց, զՖրանկիսկոս Քսաւերեան զառաքեալն Հնդկաց, և զՖիլիպպոս Ներեան՝ զհիմնադիրն հարց Որաթօրեանցն Իտալիոյ։ Վախճանեցաւ յամին 1623, կացեալ 'ի քահանայապետութեան զամս երկու և զամիս հինգ։

Յետ մահուան Գրիգորի ԺԵ. յամի 1623 ընտրեցաւ կարդինալն Պարպերինեայ, որ անուանեցաւ Ուրբանոս Ը։ Էր սա ականաւոր՝ ոչ միայն խոհական տեսչութբ արտաքին գործոց, այլ և ճարտարութբ միայն 'ի բանաստեղծական ուսմանս լատին քերթողութե։ զդքսութի Ուրպինոյ գաւառի զոր Քսեստոս Դ. ընծայեալ էր եղբօրորդւոյ իւրոյ Ռովերեան ազնուականաց՝ միացոյց ընդ սրբոյ աթոռոյն։ Պայծառացոյց զվիճակ ծիրանաւորացն՝ մեծապատուեալ զնոսին Էմինէնթիա կամ Էմինէնթիսիմուս անուամբ որ Էմինէնցա և Էմինէնթիսիմօ յԻտալացւոց կոչի։ Դասակարգեաց 'ի թիւս սրբոց զերանելին Կայետանոս Թիենացի՝ յորմէ Թէատինք, զերանելին Անդրէաս Քորսինի, և զսրբուհին Եղիսաբեթ Թագուհի Լուսիտանիոյ։ Վախճանեցաւ Ուրբանոս Ը. յամին 1644, կալեալ զաթոռ քահանայապետութեան զամս քսանևմի և զամիս հինգ։

Համբաւեալ էր սա ճարտար պերճախօս և ընտիր բանաստեղծ, և կարի հմուտ էր յոյն բարբառոյ, մինչև անուանիլ Մեղու Աթենացի ։

Սա ինքն Ուրբանոս զժողովն տարածման ուղղափառ հաւատոյ, զհիմնադրեալն 'ի Գրիգորէ ԺԵ. յամին 1622 ծաղկեցուցեալ ճոխացոյց ։ Վերակացուք ժողովոյս են կարդինալք երեքտասան, որ հսկեն 'ի լրումն պիտոյից առաքելութեան ընդ ամենայն կողմանս աշխարհի. վասն որոյ և դպրոց սահմանեալ է, ուր կրթին և ուսանին սանք առաքելացուք 'ի բազում այլ և այլ ազգաց՝ աւելի քան զհարիւր ։ Է 'ի տարածմանցի անդ և տպարան, ուր բազմալեզու տպագրին մատեանք, և են 'ի նմա տառք լեզուաց իբր յիսնից ։ Կայ անդ և մատենադարան ճոխ 'ի պէտս սանից ։

ԳԼՈՒԽ Գ.

Յաղագս Մարկոսի Անտոնիոսի տէ Տոմինիս, և Պօղոսի Սարպիեայ ։

Առ քահանայապետութեամբ Ուրբանոսի Ը. մեռաւ Մարկոս Անտոնիոս տէ Տոմինիս, համբաւեալն հակառակամարտ կռուով զոր յարոյց ընդդէմ եկեղեցական իշխանութեան ։ Էր սա այր ամբարտաւան, մեծապարծ և յողդողդ, բայց ճարտարամիտ և եռանդուն, և զամս քսան կրօնաւորեալ առ յիսուսեանս, և մեծարոյ յոյժ երևեալ ցանկացաւ ամբառնալ յեպիսկոպոսական պատիւ, և մեկնեցաւ յընկերութենէ անտի. և զի ազգատոհմն իւր խնամացեալ էր ընդ տոհմին Գրիգորի ԺԵ., հեշտիւ յաջողեցաւ յօժարութիւն նորա ձեռնտուութեամբ զօրաւոր միջնորդաց ։ Եղև եպիսկոպոս Սենի քաղաքին Խաւլից. և ապա 'ի շնորհս Հռոդոլփոսի կայսեր ամբարձաւ յարքեպիսկոպոսութիւն Սփալաթրոյ քաղաքին Դալմատիոյ ։ Յայսմ վիճակի նախատինքն զոր կրեաց 'ի Հռովմայ վասն պաշտպանութեան դատին Վենետկոյ ընդդէմ սրբոյ աթոռոյն, որպէս և ոխն զոր ունէր առ ատեանն սրբազնութեան սակս դատակնիք կարգելոյ 'ի վերայ գրուածոց իւրոց, միանգամայն և յոյս ազատութեան և հանդարտութեան իւրոց 'ի հակառակութենէ թշնա-

մեայ՝ յօժարեցուցին զնա անցանել յԱնգղիա յամին 1616։

Ի հեռանալ սմի անդ 'ի Լոնդոն ընծայեաց 'ի լոյս զառաջին հատոր ընդարձակ մատենին որ յաղագս Եկեղեցական հասարակապետութեան, և յամին 1620 տպագրեաց զերկրորդ հատորն։ Գլխաւոր նպատակ մատենիցն էր ունայնացուցանել զնախագահութիւն երեւելի գլխոյն եկեղեցւոյ։ Ջան գործէր ցուցանել եթէ սուրբն Պետրոս ոչ էր միայնակ գլուխ եկեղեցւոյ զի և սուրբն Պօղոս միօրինակ հաւասար էր նմին յիշխանութեան։ Յայսոսիկ մատեանս գտանին և խնամք ինչ ըստ մտաց Կալվինայ, որք առ հասարակ հանդերձ ամբողջ մատենիւն հերքեալ դատապարտեցան 'ի սորբոնեան վարդապետաց Փարիզու։

Անգղիացիք, որպէս և թագաւոր նոցա Յակոբ Ա. մեծարեալս 'ի պատուի ունէին զՄարկոս Անտոնիոս զարքեպիսկոպոսն Սպալաթրոյի, բայց ինքն տագնապէր 'ի խղճէ մտաց՝ անհաւան գոլով գրեցոյն յիւրմէ։ Ի յաճախել զայրանալ յուզմանց խղճին ընդ վրիպակս իւր՝ յաւուր միում 'ի Լոնդոն քաղաքի ելեալ 'ի բեմն յանդիման յոգնախուռն ունկնդրաց կոչեաց յետս զամենայն ասացս և զգրուածս իւր ընդդէմ եկեղեցւոյ։ Ընդ որ զայրացեալ թագաւորին Յակոբայ՝ զրկեաց զնա յառատապարգև թոշակացն զոր տուեալ էր նմա. և պատուիրեաց յերիս աւուրս մեկնել 'ի սահմանաց տէրութեան իւրոյ։

Մարկոս Անտոնիոս ընդ ձեռն դեսպանին Սպանիոյ հաստատելով զներողամտութիւն քահանայապետին Գրիգորի ԺԵ., որ էր իւր մտերիմ և աշակերտակից, աներկիւղ դարձաւ 'ի Հռոմ։ Բայց ոչ յետ բազում ժամանակաց յողդողդ և անհաստատ բնաւորութիւն զղջացաւ ընդ ապաշխարութիւնն, որպէս յայտ է 'ի նամակաց անտի նորա գրելոց առ այլ և այլ անձինս 'ի Լոնդոն քաղաք։ Վասն որոյ Ուրբանոս Ը. ետ բանտարգել առնել զնա յամրոց սրբոյ Հրեշտակապետին, ուր և վախճանեցաւ յամին 1625, վերստին յետս կոչելով զմոլորանս իւր և ընդունելով զհաւատս եկեղեցւոյ։ Զկնի մահուանն փոխան յուղարկաւորութեան 'ի թաղումն, մարմին նորա հանդերձ գրուածովք խուրձք այրեցաւ 'ի դաշտին Փլորայ՝ 'ի պատուհաս կրկնապատիկ ուրացութեանն ։

Սա ինքն Մարկոս Անտոնիոս յորժամ էրն 'ի Լոնդոն՝ ետ տպագրել զպատմութիւն ժողովոյն Տրիդենտոնի զյօրինեալն 'ի Պօղոսէ Սարփեայ, որ համամիտ եւ համախոհ իւր էր ։

Պօղոս Սարփի 'ի կարգէ Սերվիթեանց ծնեալ 'ի Վենետիկ յամին 1552, բնածին յաջողամտութեամբ խորով վարժեցաւ 'ի լատին, 'ի յոյն եւ յեբրայական բարբառս, եւ եղեւ ականաւոր յուսմունս փիլիսոփայութեան, բնաբանական վարժից, պատմական անցից, իրաւաբանութեան եւ աստուածաբանութեան ։ Սակայն ծանօթութիւն եւ մտերմութիւն ընդ կարդինալս եւ ընդ այս ականաւորս Իտալիոյ. եղեւ գաւառապետ եւ ընդհանրական գործակալ կարգին Սերվիթեանց, որպէս եւ 'ի տէրութենէն Վենետկոյ ընտրեցաւ խորհրդական եւ աստուածաբան այնր տէրութեան. եւ զդատ նորա խնամ կալաւ պաշտպանել ընդդէմ քահանայապետին Պօղոսի Ե., յորմէ նզովեցաւ իսկ յամին 1606 ։ Բայց քանզի էր ընդ հովանեաւ պաշտպանութեան ծերակուտին Վենետկոյ՝ առ ոչինչ գրեաց ըզշանթս արձակեալս 'ի Վատիկանեան ապարանից, եւ քաջալերեաց զքաղաքացիս իւր չերկնչել 'ի վճռոյն Հռովմայ ։ Յանդուգն համարձակութեանս պատճառք ոչ եթէ արիութիւն սրտի նորա էր, այլ թիւրութիւն մտացն, զոր ունէր 'ի վերայ իշխանութեան գլխոյն եկեղեցւոյ. եւ թուի ստացեալ զայն 'ի յաճախ ընթերցմանէ թունալից գրուածոց Բողոքականաց, որք նոյնպէս առ ոչինչ համարին զվճիռս սրբոյ աթոռոյն ։ Վախճանեցաւ 'ի Վենետիկ յամին 1623 ։

ԳԼՈՒԽ Դ.

Ապստամբութիւն կալվինականաց 'ի Գաղղիա :

ՀՐՈՎԱՐՏԱԿՆ Նանթի տուեալ 'ի Հենրիկոսէ Դ. յամին 1598 'ի շնորհս կալվինականաց, թուէր բաւական զօղ 'ի հանդարտել զխռովութիւնս յուզեալս 'ի Գաղղիա ընդ միջոցս երեսուն և աւելի ամաց, սակայն 'ի դերև ել այս ակնկալութիւն : Զի աղանդաւորքն այնոքիկ 'ի ժամանակէ անտի ստացեալ ունելով բազմապատիկ առանձնաշնորհութիւնս քան զոր մարթ էր նոցա ակն ունել, միանգամայն ունելով իբրու գրաւ 'ի ձեռին զանազան քաղաքս ապաստանի, և զազատութի պաշտաման կրօնից, տակաւին չէին հաճեալ ընդ վիճակ իւրեանց. բայց բարեսէր քաղցրութիւն և արթնամիտ տեսչութիւն Հենրիկոսի Դ. կալաւ զնոսին 'ի չափու անխռով խաղաղութեան :

Յետ աշխարելի մահուան մեծահամբաւ թագաւորիս, առ տկարութեան յաջորդին և երկպառակութեան արքունի պալատականաց՝ զարթեան ոգի նորաղանդից առ 'ի վարել յանկարգութի զառանձնաշնորհութիւնս իւրեանց : Կալվինականք, որ և Ուկոնոթք, վաղու եւս ունէին հաստատեալ 'ի Գաղղիա զանազան սահմանս կամ գաւառս Շրջանակ անուանեալս ըստ նմանութեան Գերմանից : Գործակալք գաւառացն այնոցիկ մեծագոյն մասամբ էին ազգ խռովայոյզք, որք ունէին իւրեանց կուսակիցս զիշխանս ամբարտաւանս : Դուքսն Պուլիոնի, և մանաւանդ դուքսն Ռոհանայ, որք կարի յոյժ մեծարոյ էին յաչս կալվինականաց, շարժեցին զպղտորեալ ոգիս զյօժարեալս յապստամբութիւն, որպէս և զկոյր նախանձ ռամիկ ամբոխին : Վասն որոյ միաբանեալ 'ի ժողով հանրական՝ յամին 1615, մատուցին յարքունիս գրուած ինչ յայտարարական, յորում բաց 'ի նախատական և յերգիծական բանից՝ ստիպէին խնդրել զնորոգութիւն կամ զփոփոխութիւն արքունի խորհրդականաց : Եւ ապա յամին 1616 ամենք 'ի գաւառացն խրախուսեցին 'ի զէն, ընդ որս միաբանեալ և յանդգնութիւն կալվինականաց հանդերձ տարաձայնութեամբ արքունի պաշտօնատարաց, և ատելութեամբն զոր ունէին ընդդէմ մտերմաց արքային, ընդ երկար ժամանակս յուզեցան աղմուկք խռովութեանց. զոր ամենայն լսելի լինէին դաւք, նենգութիւնք, սպանմունք, հաւաքումն զօրաց առ 'ի հանդարտութիւն անողոքելի կասոյն։ Ի հանգամանս այսր ժամանակի Ճշգրիտ նկարագրեաց կարդինալն Պենթիվոլիոյ նուիրակ պապին 'ի Գաղղիա, յասելով իւրում. «Եւ ինչ այլ տեսի անդանօր բաց 'ի մրրկէ..»։

Յամի տեառն 1621 կալվինականք կամեցան տալ զպատիւ զօրագլխութեան զօրաց իւրեանց Լեսդիկիեռի ումեմն, որ 'ի նուաստ տոհմէ ամբարձաւ 'ի պաշտօն գնդապետի, խոստանալով նմա առնել յանձն հարիւր հազար սկուտս 'ի վարձ. բայց նորա գիտելով զողղգ և զամբոխեալ միտս ապստամբացն, յորոց վերայ երբեմն կացեալ էր զօրապետ, յօժարեցաւ մանաւանդ զինել ընդդէմ նոցա՝ քան կալ նոցա զօրավար. վասն որոյ հրաժարեալ 'ի պատուոյ անտի՝ ընկալաւ զուգափառ հաւատս, և յետոյ եկաց 'ի նոցանէ։ Կալվինականք զիմեցին յայնժամ առ մարաջախտն Պուլիոնի, այլ նա ևս հրաժեշտ ետ 'ի պատուոյն վասն ծերութեան իւրոյ. վասն որոյ մատուցին զպատիւն զայն դքսին Ռոհանի, որոյ միաբանեալ ընդ եղբօր իւրում Սուպիսեայ՝ յանդգնեցաւ պատերազմել ընդ թագաւորին Գաղղիոյ։

Լուդովիկոս ԺԳ. թեւակից և օգնական իւր ունելով զգոնդեստաբլն Լուինեայ յամին 1621 յարձակեցաւ յամենայն գաւառս 'ի նուաճել զապստամբս։ Տիրեաց յինից և աւելի ևս քաղաքաց, աւանաց և գիւղից, որք ինքնակամ անձնատուր եղեն առանց ինչ հակառակութեան, բաց 'ի Մոնթոպան քաղաքէ, որ փակեաց զդրունս և չկամեցաւ հպատակել. վասն որոյ ստիպեցաւ թագաւորն պաշարել զայն։ Նոյնպէս և Ռոշէլ քաղաք՝ պատուար կալվինականութեան՝ ոչ ինչ նուազ քան զՄոնթոպան դիմամարտ եկաց արքային։ Կարդինալն Ռիշըլիէօ յաջորդ լեալ պաշտաման և շնորհաց Լուինեայ, պաշարեաց զքաղաքն իբր 'ամ մի, և ապա տիրեաց այնմ կանգնելով ամբարտակ բարձրաբերձ. հինգհարիւր ոտնաչափ յանդիման նորա՝ ընդ օրինակին մեծին Աղեքսանդրի առ Տիւրոս քաղաքաւ ։ Անշէլ անձնատուր եղև յերեսներորդ աւուր ամսեանն հոկտեմբերի յամի 1628, և Թագաւորն եմուտ անդր յառաջին աւուր նոյեմբերի ։

Յարխական քաջութենէ կարդինալին որ կործեաց 'ի կալվինականաց զայն քաղաք, բռնադատեցան և այլք հպատակել Թագաւորին ։ Յետ յաղթութեանցս Լուդովիկոս ԺԳ. եհան զհրովարտակն որ հռչակեալ է անուամբս " Հրովարտակ շնորհաց կամ ներողամտութեան ". յորում Թագաւորն խօսի իբրև ինքնակալ, և ներողամիտ լինի առ ամենայն յանցաւորսն ։ Արգելան պաշտամունք հերետիկոսութեան 'ի քաղաքսն Անշէլ, 'ի Կըզլին արքայի, յՕլէռն, 'ի Փռիվա և 'ի Պամիէռ ։ Նա նոյնս կարդինալն Ռիշըլիէօ խորհեցաւ զտանել հնարս ուղղութեան մոլորելոց, 'ի ձեռն վիճաբանութեան կամելով ածել զնոսին 'ի ճշմարտութիւն. բայց ծանեաւ անյապաղ՝ եթէ այն շաւիղ ոչ միայն երկարատև է, այլ և 'ի սպառ անպտուղ՝ ցորչափ ոգի հակառակութեան արմատացեալ իցէ 'ի սիրտս մոլորելոց ։

ԳԼՈՒԽ Ե.

Վէճք և բանակռուութիւնք յաղագս շնորհաց ։ — Եւ յաղագս Մոլինեան վարդապետութեան ։

ՕԱՅՆՈՒ ժամանակաւ անհանդարտքն հոգւով յարուցին նորօրինակ վէճս հակառակութեան 'ի Գաղղիա ։ Լուդովիկոս Մոլինա կրօնաւոր յիսուսեան՝ ազգաւ սպանիացի, վարժապետ 'ի համալսարանին Էւօրայ՝ յամին 1588 տպագրեալ էր 'ի լատին բարբառ գիրսն մակագրեալ " Համաձայնութիւն շնորհաց և ազատ անձնիշխանութեան ". յորում կայր նորաձև ինչ վարդապետութիւն, որ յոյժ տատանաբանից ցուցաւ շաւիղ ճարտար և աներկևան, զոր ինամ կալան և այլք 'ի վարդապետաց զօրաւոր բանիւք ջատագովել, մանաւանդ յընկերութեան անդ յիսուսեանց ։

Ըստ վարդապետութեան Մոլինայի՝ ամենայն շնորհք տան մարդկան նպաստ բաւական ՚ի գործել զբարի, և զնէն զկամն յայնպիսում հաւասարակշիռ վիճակի՝ յորում մարթ է կամաց յօժարամտել յայն կողմն՝ յոր առաւել խիղճ լինի։ Բաւական շնորհս անուանէ զայն, որում հակառակի մարդ, թէպէտ և տայցէ նմա զշնորհաւորն ՚ի գործել զբարի. իսկ Շնորհս ազդու և գործօնեայ զայն՝ որում ոչ հակառակի, թէպէտ և իցէ ձեռնհաս ընդդիմանալ այնմ։ Վասն որոյ բառ կարծեաց Մոլինայի՝ յեղյեղուկ են շնորհք, և ազդութիւն նոցա կախեալ կայ զգործակցութենէ մարդկան։

Ի հրատարակել այնր գրոց, յորում կայր այսպիսի վարդապետութիւն, Դոմինիկեան կրօնաւորք ծանուցին զայն ատենի սրբազնութեան Իսպանիոյ։ Իսկ յետ բազմապատիկ վիճից և բանակռուութեանց ՚ի Սպանիա, զոր արարին աստուածաբանք յայլ և այլ կարգաց կրօնաւորաց, յետոյ ուրեմն մատուցաւ ՚ի Հռովմ յատեան քահանայապետին Կղեմայ Ը. և նա ՚ի քննութիւն առաջարկեալ խնդրոյն սահմանեաց ժողով բազմաթիւ կարդինալաց։ Որք յետ ընդերկար հակառակութեանց՝ խնդիր բանակռուութեան ամփոփեցաւ յայս բան եթէ արդեօք գործունէութիւն կամ ազդութիւն շնորհաց իցէ ՚ի բնական նախաշարժութեան՝ որ որոշէ զկամն, որպէս պնդէին Դոմինիկեանք, եթէ յառաջ գայցէ ՚ի պարագայից անտի՝ յորս Աստուած պարգևէ ումեք զշնորհաշարժ նպաստն ՚ի գործադրութիւն, որպէս հաստատէին Յիսուսեանք։ Ի քննութիւն խնդրոյս եղեն երեսուն և եօթն գումարմունք, և մինչդեռ քահանայապետն ՚ի պատրաստի կայր տալ վճիռն, եհաս օր վախճանի նորա յամի տեառն 1605։

Բանակռուութիւնքս յուզեալք և առ սակաւօրեայ քահանայապետութեամբ Լեւոնի ԺԱ., աւարտեցան յառաջ Պօղոսի Ե. յաջորդի նորա. որոյ չկամեցեալ որոշ ինչ վճիռ հատանել, պատուիրեաց լռել երկոցունց կողմանց միանգամայն, խորշելով ՚ի հերքելոյ զմիջական գիտութիւնն, որում պաշտպան կային Յիսուսեանք, և զվարդապետութիւն կանխաշարժ բացորոշութեան՝ զոր հաստատէին Դոմինիկեան կրօնաւորք։

ԳԼՈՒԽ Զ․

Կոռնելիոս Յանսենիոս ։

ՊԱՏՈՒԷՐ լռութեան եւ սպառնալեաց քահանայապետին Պօղոսի Ե. չեղեւ բաւական 'ի խափանել զվէճ սոյն . այլ տակաւին ոչ պակասէին բանակռուութիւնք 'ի Ֆլանտրս , 'ի Սպանիա եւ յԻտալիա գլխովին ։ Կոռնելիոս Յանսենիոս՝ որ զայնու ժամանակաւ յետ վարժապետութեան յաստուածաբանական վարժս 'ի համալսարանին Լովանիոյ՝ ամբարձաւ յեպիսկոպոսական պատիւ Իպրա քաղաքի , առաւել եւս զայրացոյց զայս վէճ . եւ քանզի ոսոխ դառն էր հակառակամարտ վարդապետութեանն Մոլինայի , եւ հմուտ նորահանճար գրոցն սրբոյն Օգոստինոսի , յորս ոչ սակաւ ժամանակս հետազօտ քննութեամբ պարապէր , խորհեցաւ յայտնաբանել զսկզբունս սրբոյ վարդապետին որ յաղագս կարողութեան անձնիշխան ազատութեան , եւ վասն հարկաւորութեան շնորհաց . վասն որոյ յօրինեաց զընդարձակ մատեանն Օգոստինոս մականուանեալ ։

Տպագրեցաւ մատեանս յամին 1640 , այն է յետ միոյ ամի մահուան Յանսենիոսի , որ 'ի վախճանել իւրում յանձն արարեալ էր զգիրսն քննութեան եւ դատաստանի եկեղեցւոյ ։ Ընդ հրատարակել գործոյն դիմամարտ ոսոխ հանդիպացան յիսուսեան կրօնաւորք . բայց պաշտպան կային նմա ոչ սակաւք 'ի գաղղիացի եւ Ֆլանտրացի աստուածաբանից , ուստի եղեն անողոքելի բանակռուութի՟ք ընդ միմեանս ։ Եւ 'ի դարման հանդարտութե՟ կոչոյ՝ տեառնն սրբազնութեան պատշաճ վարկաւ ուրոյն վճռով արգելուլ զընթերցումն մատենին Յանսենիոսի , եւ զգլխաւորութիւնս յիսուսեանց՝ հանդերձ այլ եւ այլ գրուածովք հրատարակելովք 'ի նոյնս եւ 'ի հերքումն միմեանց ։

ԳԼՈՒԽ Է.

Դատապարտութիւն գրոցն Յանսենեայ: — Վէճք և կռիւք յուզեալք 'ի պատճառս նորա:

Ի ՅԱՃԱԽԵԼ *բանակռուութեանց և 'ի զայրանալ խռովութեան տագնապեալ ոգւոց երկաքանչիւր կողմանց,* **Ու**րբանոս **Ը.** *յամին* 1642 *դատապարտեաց զմատեանն* **Յ***անսենեայ եպիսկոպոսին* **Ի***պրայ՝ իբր պատճառս վերանորոգութեան մոլորութեանցն* **Բ***այուսի, զորս կանխաւ դատապարտեալ էին քահանայապետք* **Հ***ռոմայ:* **Կ***րկին հաստատեցաւ դատապարտութիւնս այս և այլով նոր վճռով յամին* 1644, *բայց և այնպէս յարեալքն 'ի* **Յ***անսենիոս և 'ի վարդապետութիւն նորա՝ յոլովք յաստուածաբանից* **Գ***աղղիոյ և* **Ֆ***լանդրիոյ ոչ դադարեցան ընդդիմախօս լինել երկոցունց վճռոց քահանայապետին:* **Ի** *նոյն միտս եղեն և համօրէն միայնակեացք* **Փ***ոռոյալ քաղաքի, որպէս և բարեկամք նոցա արք գիտնականք, որք գրեցին ոչ միայն 'ի ջատագովութիւն անձին և պատուոյ եպիսկոպոսին* **Ի***պրայ, այլ և ջանացան արհամարհ և ատելի ցուցանել զհակառակորդս նորա, բայց ոչ մարթացան արգելուլ և խափանել զհանդիսացեալ դատապարտութիւն գրոցն* **Յ***անսենեայ 'ի* **Հ***ռոմ:* **Ք***ոռնէ ոմն վարդապետ աստուածաբանութե՟ արար զքննադատութիւն նորոյ վարդապետութեանն, ամփոփելով զայն 'ի վեց մասունս, զորս յետոյ վերածին 'ի հինգ գլուխս բանից ըստ առաջիկայ օրինակիդ:*

Ա. **Ի***նչ ինչ 'ի պատուիրանացն* **Ա***ստուծոյ անհնարինք են արդարոց, որք կամին և ջան գործեն պահել զայնոսիկ, եւ պակասին նոցա շնորհք՝ որով կարասցեն կատարել:*

Բ. **Ի** *վիճակի յանցուցեալ կամ ապականեալ բնութեան չէ մարթ երբէք ընդդիմանալ կամ հակառակել շնորհաց:*

Գ. **Ի** *վիճակի ապականեալ բնութեան՝ յարդիւնաւորութիւն կամ յապախտաւորութիւն՝ ոչ խնդրի 'ի մարդն ազատութիւն 'ի հարկէ, այլ շատ է ազատութիւնն 'ի բռնութենէ:*

Դ. Աստուածաբանք ընդունէին զհարկաւորութիւն ներքին շնորհաց, որ կանխէ ժամանել յոր և իցէ գործառնութիւնս. և էին հերետիկոսք զի կամէին՝ թէ այն շնորհք իցէ այնպիսի, որում մարդկային կամք կարասցէ հակառակիլ և կամ մտադիւր հպատակել այնմ։

Ե. Աստուածաբանից է ասել եթէ Քրիստոս մեռաւ անխտիր վասն ամենայն մարդկան։

Հնգեքին այսոքիկ առաջարկութիւնք մատուցան առ գահն Հռոմայ յութսուն և ութ եպիսկոպոսաց, որք խնդրեցին ՚ի քահանայապետէն բացայայտ վճռով սահմանել ինչ զայնցանէ։ Իննովկենտիոս Ժ. յետ զանազան ժողովոց և հասուն քննութեան՝ յամին 1653 յերեքտասաներորդի աւուր ամսեանն մայիսի հերքեաց զհնգեսին առաջարկութիւնսն քաղեալս ՚ի մատենէ անտի Յանսենիոսի։ Անդակ դատապարտութեան մի՛ մի՛ յառաջարկութեանցն զպատշաճ դատակնիքն այսպէս ածէ ՚ի վերայ։

Զնախկինն որ յաղագս անհնարութեան պատուիրանացն Աստուծոյ՝ կոչէ յանդգնական, նզովեալ, և այնպէս դատապարտէ զայն։ Նոյնպէս հերետիկոսական անուանէ և զերկրորդն վասն բնաւ իսկ անընդդիմակալութեան շնորհաց։ Մերժէ դարձեալ և զերրորդն՝ որ յաղագս արդիւնաւորութեան կամ ապախտաւորութեան շատ համարէր զազատութիւն ՚ի բռնութենէ. վասն չորրորդին յաւելու ասել՝ եթէ սուտ է և հերետիկոսական. իսկ զհինգերորդն որ յաղագս արդեանց մահուան Քրիստոսի՝ սուտ դաւանէ, յանդգնական և գայթակղական. և եթէ առցի ըստ իմաստիցն՝ որպէս թէ Քրիստոս մեռեալ իցէ վասն նախասահմանելոց եւեթ, դատապարտելի է իբրու ամբարշտական, հայհոյական, հերետիկոսական, անարգական և հակառակ բարութեանն Աստուծոյ։ Զի ըստ վարդապետութեանն՝ Աստուած լինէր խիստ և անողորմ, և չէր հնար միաբանել զգթութիւն նորա ՚ի կամելն զփրկութիւն ամենեցուն՝ ընդ անսահման արդարութեանն, եթէ կամեցեալ էր մեռանել վասն սակաւաթիւ ընտրելոց եւեթ, թողեալ արտաքոյ զանհամար բազմութիւն մարդկան ՚ի վիճակի մեղացն Ադամայ, յոր գթեցին յանցանօք նախահօրն։

Ի հրատարակել կոնդակիս Իննովկենտիոսի Ժ., գործակալքն առաքեալք 'ի Հռովմ յարքեպիսկոպոսէն Սէնս քաղաքի և յայլոց երկոտասան եպիսկոպոսաց համախոհից իւրոց 'ի կուսակցութիւն Յանսենիոսի, ընկալան 'ի քահանայապետէն հրաման դառնալոյ յետս. այլ ծանոյց և յայտ արար նոցա քահանայապետն, եթէ ոչ են կամք իւր և դիտումն հերքել զվարդապետութիւնս սրբոյն Օգոստինոսի և Թովմայի, որք գրեցին յաղագս շնորհացն Աստուծոյ ։

Ի սկիզբն բանից կոնդակին Իննովկենտիոսի քանզի հնգերին նախադասութիւնքն ընծայէին Յանսենիոսի, յոյժ կասկածելի էր՝ թէ կոնդակն գոյցէ բազում հակառակութիւն 'ի Փռանսա, ուր անուն և յիշատակ եպիսկոպոսին Իպրայ կարի յոյժ արգոյ էր և ակնածելի. բայց նոքա ընկալան զայն առանց ինչ ընդդիմութեան ։ Սակայն Պաղղիացիք եռանդունք և յօժարամիտք 'ի բանակռուութիւն՝ հակառակեցան յոյժ յոյժ ։

Նոյնպէս Պաղղիոյ Լուդովիկոս ԺԴ. ընկալեալ 'ի նուիրակէն զկոնդակն Իննովկենտիոսի, յաւել 'ի նոյն և զիւր առանձնական յայտարարութիւն յամի 1653, որով յորդոր մատուցանէր եպիսկոպոսաց ընդունել և հրատարակել զայն ։ Կարդինալն Մազարինոյ յօժարամիտ յանձն էառ 'ի գլուխ տանել զգործն, և զի առ նոյն ժամանակաւ կային 'ի Փարիզ քաղաքի և յարքունիս բազմաթիւ եպիսկոպոսունք, Մազարինոյ 'ի մետասան աւուր ամսեանն յուլիսի գումարեաց յարքունիս իւրում երեսուն այր 'ի նոցանէ, որք գրեցին նամակ առ քահանայապետն՝ զի ընկալեալ զդատակնիք սրբոյ գահուն զհնգեցունց առաջարկութեանցն, որում անժոյժ սպասեալ մնային, խնդամիտ սրտիւ հպատակին այնմ ։ Միանգամայն առաքեցին զկոնդակն և առ այլ ամենայն եպիսկոպոսունս տէրութեան՝ հանդերձ օրինակաւ ինչ հովուական յորդորանաց իբրու գաղափար հրատարակելոյ զբան 'ի թեմի իւրեանց ։ Յայնմ հովուական ձեռն չլինէր յիշատակութիւն ըզՅանսենիոսէ, այլ լոկ մատուցանէին յորդոր և խրախոյս 'ի հրատարակել զվճիռ քահանայապետին, և մի օտարանալ յորոց և 'ի բազմաց դատապարտութենէ հնգեցունց նախադասութեանցն, և մի՛ իշխել երկիծանել զոք:

Կոնդակ սահմանադրութեան Ունիգենիտոսի ընկալեալ և հրատարակեալ եղև յամենայն եպիսկոպոսաց Գաղղիոյ, բայց յոլովք 'ի նոցունց ոչ 'ի դէպ համարեցան վարել յորդորական հովուականաւն, զոր իբր զաղափար առաքեալ էին առ նոսա: Որք միանգամ կուսակից կամ հետևողք էին Յանսենիոսի՝ յօժարական յանձն առին զատապարտել զհնգեսին նախադասութիւնս՝ իրաւամբ հերքեալս 'ի քահանայապետէն, հաստ եղեալ թիւր և պարսաւելի իմաստից մտացն. բայց հակառակէին թէ և այն բանք իցեն Յանսենիոսի: Որով կամէին իմն յայտ առնել եթէ յանսենեանն անուանեալ վարդապետութիւն՝ կեղծիք ինչ իցէ հնարեալ 'ի յիսուսեանց անտի, որք կամեցան իմն ահարեկ առնել զեկեղեցի. թէպէտ և բանից կոնդակի քահանայապետին 'ի դատապարտելն զհնգեսին նախադասութիւնս՝ այն ևեթ կամք էին՝ հերքել զվարդապետութիւնն Յանսենիոսի, որպէս յայտնի երևի և 'ի բանից անտի կոնդակին:

Կուսակիցք Յանսենիոսի ոչ կարելով ընդդիմախօս լինել բացայայտ բանից քահանայապետին, յայլ հնարս ձեռն արկին. զի պնդէին թէ զդատապարտեալ վարդապետութիւնս զայնուիկ ընծայել Օգոստինոս անուանեալ գրոյն Յանսենիոսի՝ ոչ գոլով ճշմարտութի յայտնեալ և ծանուցեալ, ոչ քահանայապետն, և ոչ եկեղեցին գլխովին կարէ յայտնապէս սահմանել և ստիպել զոք 'ի հաւանութիւն կամ 'ի դաւանութիւն իբր 'ի մասն ինչ հաւատոյ: Ի բանակռուութենէ աստի ծագեցաւ ճարտարահնար զանազանութիւնն որ ընդ մէջ գործոյ և իրաւանց: Միաբան ընդ քահանայապետին և ընդ այլոց եպիսկոպոսաց ընդունէին թէ հնգեքին նախադասութիւնքն իցեն իրաւամբ դատապարտեալք, և ահա այն իսկ էր խնդիր իրաւանց. բայց ժխտէին՝ թէ նախադասութիւնքն այնորիկ իցեն վարդապետութիւնք Յանսենիոսի, որ էր խնդիր գործոյ: Այս նորին զանազանութիւն պատճառ եղև ևս քան զևս զրգռելոյ վիճիցն:

Առ նովին ժամանակաւ բաց 'ի դժուարակնճիռն

խնդրոյս 'ի վեր երեւեցան և դէպք ինչ մանաւորք ։ Ի Ջատագովս Յանսենիոսի երեւելի գոլով Անտոն Արնոլտ՝ վարդապետ սորբոնեան, ակնածելին 'ի յոգունց իւր պաշտպանմանս, առ որ մատուցեալ էին ամենայն խնդիրքս հակառակութեան առ 'ի քննութիւն և 'ի տալ զիւր կարծիսն ։

Եւ եղեւ երբեմն 'ի գնալ դքսին Լիանուրի 'ի խոստովանութիւն, քահանայ մի Փիքոլթ անուն չկամեցաւ արձակել զնա 'ի մեղաց. զի ոչ ընդունէր՝ թէ հնգեքին դատապարտեալ նախադասութիւնքն իցեն 'ի գիրսն Յանսենիոսի, և զի դուքսն բարեկամ էր միաբանեցացն Փոռռոյալ քաղաքին, և ունէր 'ի տան իւրում զմի ոմն 'ի բարեկամաց նոցա ։ Եւ իբրեւ հարցաւ վարդապետն Արնոլտ՝ թէ զինչ կարծիք իցեն նորա 'ի վերայ զգուշաւորութեան խոստովանահօրն, անգոսնեաց զգործ նորա իբր հակառակ ամենայն կարգի և կանոնաց, և գրեաց նամակ մակագրեալ այսպէս. «Թուղթ ուրումն սորբոնեան վարդապետի առ ազնուատոհմ մի »։ Ի հրատարակել այնր թղթոյ՝ յորդեալ ծաւալեցան 'ի Փարիզ քաղաքի զանազան թուղթք, պատասխանիք, ծանուցմունք, քննութիւնք, խօսակցութիւնք և ճառք, յորս ջանահնար լինէին անպարտ ցուցանել զգործ Փիքոլթեայ քահանայի, միանգամայն անզօր և անբաւական զբացատրութիւնս արարեալս յԱրնոլտայ 'ի վերայ հնգեցունց նախադասութեանցն Յանսենիոսի ։

Յայնժամ Առնոլտ ձեռն արկ գրել 'ի ջատագովութիւն իւր զքառածալ հատոր ինչ երկերիւր և յիսուն թղթահամարօք, մակագրեալ զգիրսն «Երկրորդ թուղթ Առնոլտայ առ դուքս մի և խորհրդական ատենի, 'ի պատասխանի բազմադիմի գրուածոց ընդդէմ առաջնոյ նամակին իւրոյ »։ Յերկայն բանից նորա քաղեցան երկու առաջարկութիւնք կամ խնդիրք և վարդապետութիւնք կասկածելիք, և տուան ժողովոյ աստուածաբանից Փարիզու. և նորա անդէն և անդ հերքեալ դատապարտեցին զայնոսիկ ։

Առաջինն 'ի խնդրոց կամ յառաջարկութեանց Առնոլտի էր, եթէ Յանսենիոս ոչ ուսոյց երբէք զհնգեսին դատապարտեալ նախադասութիւնս ։ Մերժեցաւ վարդապետութիւնս 'ի չորեքտասաներորդ աւուր ամսեանն յունուարի յամին 1656 իբր զրոյց յանդգնական և գայթակղական. իսկ երկրորդն էր՝ թէ շնորհն առանց որոյ չէ հնար գործել ինչ՝ պակասեցաւ արդարոյն Պետրոսի առաքելոյ յաջորդութեան անդ, և չէ մարթ ասել՝ եթէ չիցէ նորա մեղուցեալ յայնժամ։ Այս վարդապետութիւն 'ի քաննելինն այնր ամաց հերքեալ դատապարտեցաւ իբր բովանդակիչ մոլորութեանն որ փակի յառաջինն 'ի հնգեցունց առաջարկութեանց Յանսենիսի. վասն որոյ կոչեցաւ յանդգնական, ամբարշտական, հայհոյական, հերետիկոսական և նզովեալ։

Այսմ դատակնքոյ ոչ կամելով հպատակել Առնոլտ տարագրեցաւ 'ի սորբոնեան ընկերութենէն։ Եւ դատակնիքն այն հաստատեցաւ ձեռագրով ամենայն վարդապետաց, և որք միանգամ հրաժարեցանն 'ի ստորագրութենէն՝ մերժեցան 'ի կաճառակցութենէ այնր ընկերութեան։ Եւ քանզի ժողովն այն սորբոնեանց կարի յոյժ աղմկալից թուէր, Առնոլտ բողոք կալաւ առաջի նոտարի ուրումն ընդդէմ անիրաւութեանն զոր համարէր եղեալ ընդդէմ իւր. և ծանոյց եթէ վէճն այն և բանակռուութիւն ոչ այնչափ օգուտս գործէ եկեղեցւոյ՝ որչափ նպաստս մատուցանէ յաղթութեան և պարծանաց կալվինականաց, որք օր ըստ օրէ բազմանան ընդ համօրէն Եւրոպա. “Փոխանակ միաբանելոյ մեր, ասէ, ընդդէմ հասարակաց թշնամեաց, մարտնչիմք ընդ միմեանս վասն դոյզն իրաց. նմանեալ առն ախտացելոյ՝ որ զկարևորագոյն և զպատուականագոյն անդամն թողեալ անդարման և զեղնգունսն խնամով յարդարիցէ„։

ԳԼՈՒԽ Բ.

Գաւառական նամակք Փասքալի. Դատապարտութիւն ներողամիտ բարոյականաց։

ԱՌՆՈԼՏ առ որսալոյ զխիստ հասարակաց 'ի նպաստ իւրումն դատի՝ միաբանեցաւ ընդ գիտնական մատենագրի ումեմն որ զայնու ժամանակաւ ծաղկէր 'ի Պօռռոյա, այն ինքն է Փասքալ այր պերճախօս և իմաստուն. որոյ կարեկից եղեալ նախատանաց մտերիմ բարեկամին իւրոյ Առնոլտի յամին 1656 'ի քսան և երրորդ աւուր ամսեանն յունուարի ընծայեաց 'ի լոյս զնախկինն յութևտասն գաւառական անուանեալ նամակաց, զի առ մի ոմն 'ի գաւառականաց անտի ուղղեալ էին տասնեքին առաջինքն 'ի նամակաց անտի։ Այսցիկ գրուածոց բազմօք ձեռնտու էր և Առնոլտ. իսկ վախճան մատենագրին էր զոլելի ցուցանել զառաջարկութիւն վարդապետութեան իւրոյ, և ծաղրել առնել զՄոլինեանսն և զԹովմայականաց։ Շնորհքն բաւականք զոր դնէին յետինքս, և միջական գիտութիւնն վարդապետեալ յառաջնոյ, միօրինակ պարսաւէին 'ի գաւառական անուանեալ նամակսն գրեալս պարսաւագէտ մտօք, հանդերձ ծաղրալից նախատանօք և կծողական բանիւք՝ քան զորս երբէք չէին երևեալ ընդդէմ ընկերութեան յիսուսեանց։

Առնոլտ և Փասքալ 'ի բանակռուութենէ անտի շնորհաց՝ անցին 'ի խնդիրս բարոյականս հնարեալս յիսուսեանց ժամանակին։ Ի դարէ հետէ յոլովք յաստուածաբանից կարի ներողամիտ մեկնաբանք աւետարանին՝ զուն գործէին մեղմել զօրինադրեալն 'ի նմանէ զխստութիւն քրիստոնէական պարտուց։ Կարծիք նոցա կարի յոյժ վտանգաւորք էին, և բազմաց 'ի նոցանէ անուն և համբաւ անհաճոյք և անարգեալք 'ի ժողովրդենէ, որպիսիք էին Վասքէզ, Ֆիլիւցիոյ, Լէսսիոս, Սանչէզ, Սա, Սթոռշ, Թամպուրինոյ և այլք յոլովք՝ որք էին առ հասարակ յընկերութենէն յիսուսեանց, զորոց զվարդապետութիւնս առ թշնամութեան Փասքալ և Առնոլտ յանիրաւի ընծայեցին համօրէն ընկերութեանն ։ Երգիծանք և պարսաւք Փասքալի շարժեցին զամենեսին 'ի ծաղր , և ցոյցք փաստից նորա վառեցին զնախանձ ժողովրդապետաց 'ի դարման վնասուցն ։ Ժողովրդապետք Ռուան և Փարիզ քաղաքաց 'ի մի հաւաքեալ՝ զառաւել վնասակարսն 'ի վարդապետութեանց անտի նշաւակելոյ 'ի Փաքալէ առաջի ատենին ժողովոյ գղերցն յամին 1658 ․ որով կամէին ցուցանել՝ թէ նորահնար ուսումն բարոյականութեան տածէ 'ի մարդիկ զսկզբունս անկարգութեանց և մեղաց , խափանէ զդարմանսն , մթագնէ զտեսութ՟ի հոգւոյն 'ի ճանաչել զառանձնական պարտս իւրաքանչիւր վիճակի , անբասիր առնէ զհեղգամիտս և յորդորէ զնոսա 'ի զանցառութ՟ի պարտուց իւրեանց ։

Ժողովն թէպէտ և ծանեաւ զվտանգ կասկածելի չարեացն և զանկարգութեանց , այլ քանզի արձակեալ էր՝ չկամեցան ժողովականք 'ի քնին առնուլ զառաջարկեալսն ․ բայց հրամանն ետուն առ ժամն իբր պատուար և խափան նորահնար վարդապետութեանցն որք առաջնորդէին յաւեր և յեղծումն քրիստոնեական բարի վարուց՝ տպագրել զկանոնական սահմանս սրբոյն Կարոլոսի Բորրոմէոսի ․ և ապա գործակալք գղերցն գրեցին նամակ առ ամենայն եպիսկոպոսունս՝ ծանուցանելով նոցա զգուշացուցանել զվիճակս իւրեանց 'ի վնասակար վարդապետութեանց անտի ։

Ատեանն սրբազան քննութեան Հռովմայ՝ նախանձաւորն և խնամատար աւետարանական բարեկարգութեան վարուց՝ յամին 1664 և 1669 դատապարտեաց զքառասուն և հինգ առաջարկութիւնս բանից քանդիչս հիմանց բարեպաշտութեան ։ Զնոյն արար և քահանայապետն Իննովկենտիոս ԺԱ․ յամին 1679 , դատապարտելով զայլ ևս վաթսունևհինգ հատուածս բանից ․ որպէս և ժողով գղերցն Գաղղիոյ յամին 1700 դատապարտեաց հարիւր և քսան յօդուածս ։

Մատենագիրք ոմանք պարսաւագէտք պատճառս առին 'ի թոյլ բարոյականաց անտի՝ անգոսնել զհամօրէն ընկերութիւն յիսուսեանց զրպարտելով զօգտաշահ վաստակս այնր միաբանութեան ․ և զառանձնական կարծիս մասնաւորաց ոմանց՝ որք համարէին թէ իշխանաւորունք և խաժամուժ ամբոխ ռամկին չիցէն կշռելի նովին չափով և կանոնիւ. այլ արժանի ներողամտութեան իցեն մեծապատիւքն առ նուաստագունիւք, որում զհետ եկին թուլութիւնք 'ի պալատականս. զայս վարդապետութիւն ասեմ առեալ ընծայեցին համօրէն ընկերութեանն յիսուսեանց, իբր կանոն նոցա և օրինադրութիւն կարգի իւրեանց առ ամենայն քահանայս ընկերութեանն.

Բայց զգուշաւոր հետազօտութեամբ հայելով 'ի տարեգրութիւնս եկեղեցւոյ՝ գտանեմք զի թուլութիւնն 'ի բարոյական կանոնս վաղուց կանխագոյն է քան զծագումն յիսուսեանց. քանզի ըստ աւանդելոյ Ֆլէօրեայ սկսաւ այն յերեքտասաներորդի դարու, յորում իրաւագէտք կամ մատենագիրք բարոյականութեան առաւելագոյն մասամբ էին մարդիկ կրօնաւորք, որք միայն պարապէին յուսումն և 'ի մատակարարութիւն խորհրդոց ապաշխարութեան. Աղքատութիւն կրօնաւորացն այնոցիկ պատճառ եղև տարապայման ներողամտութեանն և ակնառութեան առ 'ի գտանել զոգեպահիկն իւրեանց. Միանգամայն իրաւագէտքն այնոքիկ անտեղեակք էին այլոց բարեկարգութեանց և կանոնաց պատշաճելոց առ խորհուրդ ապաշխարութեան՝ բաց 'ի սակաւ սահմանաց անտի՝ որք գտանին 'ի Վճիռ անուանեալ գիրսն Գրատիանոսի բենեդիկտեան կրօնաւորի յերկոտասաներորդի դարուն, յորմէ առնուն զիւրեանց վկայութիւն. Անհմուտք էին նախնի կանոնաց և զանազան վիճակի ապաշխարութեան, որպէս և իրաւացի փաստիցն և պատճառաց յորոց սակս սահմանեալ էին այն կանոնքն. Ի գիտութեանց աստի վրիպեալք՝ ետուն համարձակութիւն յաճախութեան մեղաց, անբասիր առնելով զյոլովագոյնս, և անխտիր շնորհելով զարձակումն՝ ուսուցին չխղճել յորոց միանգամ համարէին մարդիկ թէ յանցանք իցեն. Զայս շաւիղ կալան և վարդապետք ոմանք յայսմ դարու 'ի ձեռն նորանոր մտացածին զանազանութեանց և դպրոցական նրբախօսութեանց, և մանաւանդ հետևելով վարդապետութեան հաւանական կարծեաց.

ԳԼՈՒԽ Թ.

Ժողով 'ի Գաղղիա վասն յանսենեան վարդապետութեան : — Կոնդակ Աղեքսանդրի Է :

ՅԱՅՆՈՒ ժամանակաւ նորահնար զանազանութիւն աստուածաբանական որ ընդ մէջ գործոյ և իրաւանց' սկսեալ էր յուզել աղմուկ բանակռուութեան 'ի Գաղղիա. վասն որոյ բազում եպիսկոպոսունք համարելով զզանազանութիւնն զայն իբր դուռն համարձակութեան նորանոր վէճիցն' փութացան բողոք առնել ընդդէմ այնորիկ : Ամէն իսկ ժողով եկեղեցականացն Գաղղիոյ յամին 1656 յառաջնում աւուր ամսեանն սեպտեմբերի' ծանոյց վճռով եթէ եկեղեցին նոյին անսխալ առաջնորդութեամբն որով դատէ զհաւատոյս' նոյնպէս դատէ և զխնդիրս գործոյն այնորիկ որք անբաժան իցեն 'ի հաւատոյ կամ յընդհանրական սովորութենէ եկեղեցւոյ' զհիմնեալսն 'ի սուրբ գիրս, որոյ թարգմանութիւն ողջամիտ իմաստից կախեալ կայ զուգընթաց աւանդութենէ հաւատոյ եղելոյ վկայութեամբ հարց դարուց 'ի դարս :

Եպիսկոպոսունք նախ քան զցրուել ժողովոյն ժամ բարեպատեհ համարեցան առ 'ի ճանաչելոյ զկուսակիցս յանսենեանց' առնել զամենայն եկեղեցականս 'ի ձեռնագիր ստորագրութիւն ձեւոյ բանից ինչ յօրինելոյ 'ի գիտնական առնէն Մարքա կոչեցելոյ ըստ օրինակիս ըստ այսմիկ. « Ես ներքոյ գրեալս անկեղծ մտօք ընդունիմ զսահմանադրութիւն տեառն մերոյ Ինովկենտիոսի Ժ. տուեալ յերեսուն և մի աւուր ամսեանն մայիսի յամին 1653, ըստ ուղիղ իմաստից նորա բացայայտելոց 'ի ժողովոյ անտի եպիսկոպոսացն Գաղղիոյ 'ի քսանեւութ մարտի յամին 1654, և հաստատելոյ կոնդակաւ նորին քահանայապետի 'ի քսանեւինն սեպտեմբերի այնր ամի. և առնիմ 'ի խղճէ մտացս հնազանդել այնմ սահմանադրութեան, և դատապարտեմ սրտիւ և բերանով զվարդապետութիւն հնգեցուն առաջարկութեանցն Կոռնելիոսի Յանսենիոսի բովանդակելոց 'ի գիրսն Օգոստինոս անուանեալ, զոր դա-

տապարտեցան 'ի քահանայապետէն և յեպիսկոպոսաց. զի վարդապետութիւնն այն ոչ է սրբոյն Օգոստինոսի, զոր Յանսենիոս հակառակ մտաց և իմաստից սրբոյ վարդապետին կամակորեաց ,, : Առ այս յաւել ժողովն և այլ նամակ շրջաբերական առ ամենայն եպիսկոպոսունս՝ յորդորելով զնոսա խնամ ունել զի յամենայն վիճակս ընդունելի լիցի կոնդակ Իննովկենտիոսի քահանայապետի :

Ի նմին ժամանակի միաբան խորհրդով հաստատեցին գրել և առ քահանայապետն Աղեքսանդր Է. յաջորդ Իննովկենտիոսի, և խնդրել 'ի նմանէ ծանուցանել բացայայտ և վճռել տիրապէս՝ թէ հնգեքին նախադասութիւնքն դատապարտեալք էին ըստ մտաց Յանսենիոսի : Ընդ առնուլ քահանայապետին զնամակ եպիսկոպոսացն Գաղղիոյ՝ եհան կոնդակ 'ի վեշտասաներորդի աւուր ամսեանն հոկտեմբերի յամին 1656, յորում դատապարտէր զայնոսիկ որք երկմտէին՝ թէ հնգեքին գլուխք վարդապետութեանցն չիցեն 'ի նորին իսկ Յանսենիոսի Օգոստինոս անուանեալ գրոցն, և թէ դատապարտեալք են այնոքիկ ըստ մտաց նորին իսկ Յանսենիոսի :

Կոնդակ քահանայապետին իբրև եհաս 'ի Փարիզ 'ի սկիզբն մարտի յամին 1657, վաղվաղակի ժողովեցան եպիսկոպոսունքն որք էին 'ի քաղաքին, և մտադիւր հպատակութեամբ ընկալան զսահմանադրութիւն, և պատուիրեցին ամենայն եպիսկոպոսաց հրատարակել զայն 'ի վիճակս իւրեանց . և ատենական օրինօք սպառնացան որոց միանգամ յանդգնեսցին հակառակ կալ այնմ կոնդակի, համարելով զնոսին պաշտպանս դատապարտեալ կարծեաց և վարդապետութեան : Հարկ համարեցան դարձեալ ընդ նոր կոնդակին յաւելուլ և զօրինակ ձեւոյ բանիցն սահմանելոց յառաջին աւուր սեպտեմբերի յամին 1656, զի կղերն, աշխարհիկ քահանայք և կրօնաւորք առհասարակ ձեռնագրեսցեն այնմ 'ի միջոցս ամսօրեայ ժամանակի : Արդ կոնդակ քահանայապետին հանդերձ յաւելուածովն առաքեցաւ 'ի գլխոց ժողովոյ եպիսկոպոսացն այնոցիկ առ համօրէն արքեպիսկոպոսս և առ եպիսկոպոսունս Գաղղիոյ : Նոյնպէս և Թագաւորն 'ի զօրացուցանել զեկեղեցական պատուէրն 'ի ձեռն քաղաքական իշխանութեան՝ գրեաց հրովարտակ, որով հրամայէր ամենայն եկեղեցականաց տէրութեան իւրոյ ձեռն դնել կոնդակի քահանայապետին և յաւելուածոյ բանիցն. և զգուշացոյց զամենայն ատեանս խորհրդականաց չանսալ բողոքոյ ընդդէմ այսօրիկ խնդրոյ։ Զայս հրովարտակ կամ զհրամանագիր արքային՝ ատեան խորհրդականաց քաղաքին Փարիզու չկամեցաւ արձանագրել 'ի դիւանն արքունի. վասն որոյ ատենադպիրն Սեկիէ յորդորեաց զԹագաւորն գնալ անձամբ յատեան խորհրդականաց և ստիպել 'ի դիւանագրութիւն, որ և կատարեցաւ յիննևտասն նոյեմբերի յամին 1657։

Համակամ միաբանութիւն եկեղեցական և աշխարհական իշխանութեան բաւական և ազդոյ դարմանք էին 'ի խափանել զամենայն բանակռուութիւն. սակայն փոխանակ հանդարտելոյ՝ առաւել ևս յուզեցան 'ի հակառակութիւն, և յերկարեալ ձգեցաւ վէճն։ Նմին իրի յամին 1660 վերստին գումարեցաւ ժողով եկեղեցականաց, որ տևեաց մինչև ցյաջորդ ամն, յորում հաստատեցան ամենայն սահմանք նախընթաց ժողովոց։ Հարլէ արքեպիսկոպոսն Ռուան քաղաքի, որ եղև նախագահ և զօրացուցիչ յառաջադիմութեան ժողովոյն, խնամ կալաւ պատուհաս 'ի վերայ դնել որոց միանգամ հրաժարեսցին 'ի հպատակութենէ և չառնուցուն յանձն ստորագրել։ Ըստ այնորիկ որոց անկ համարեցան ձեռնագրել սահմանեալ ձևոյ բանիցն՝ 'ի համար մտին և հաւատաւոր կուսանք, և ուսուցիչք դպրոցաց և վարժապետուհիք։ Յաւել ժողովն գրել և նամակ շրջաբերական առ ամենայն եպիսկոպոսունս, յորդորելով զնոսին վրէժխնդիր լինել և դատախազ գնոցունց՝ որք ոչն կամեսցին ստորագրել այնմ սահմանի։ Օրինադրեցաւ դարձեալ 'ի ժողովոյն՝ զի թէ գտցին եպիսկոպոսունք որք ոչ փոյթ տարցին պահանջելոյ զձեռնագրութիւնն զայն 'ի վիճակս իւրեանց, զրկեսցին յիրաւանց քուէարկութեան 'ի ժողովս գղերց, և անկցին ընդ դատաստանօք սահմանեալ կանոնաց։

Եպիսկոպոսունք որք նպաստամատոյցք էին կուսակցացն Յանսենիսի՝ զայրացեալք ընդ տարօրինակ խստութիւն եպիսկոպոսակցացն , աղերս մատուցին առ թագաւորն խափանել զգործադրութիւն հրամանոյն իւրոց , զանգատելով զեպիսկոպոսացն այնոցիկ , զի զամարեալք 'ի պատճառս աշխարհական գործոց՝ համարձակին վարել իշխանութեամբ ազգային ժողովոյ . բայց աղերսք նոցա և զանգատք չեղեն լսելի : Եւ ոչ այսչափ միայն , այլ և հանրական փոխանորդք Սեց կարդինալին , որք 'ի միում հովուական ձեռի պահանջէին ևեթ զհաւանութիւն ընդ խրատուն և զլռութիւն ընդ գործըս , ստիպեցան յետս կոչել զայն իբր հակառակ պապական ձևոց և սահմանադրութեանց :

ԳԼՈՒԽ Ժ.

Կուսակցութիւն միանձնուհեաց Փոռռոյալ աւանին 'ի վէճս յանսենեան վարդապետութեան : — Պատմութիւն այնր մենաստանի :

Ի ՅՈՒԶԵԼ վէճից և բանակռուութեց 'ի վերայ շնորհաց՝ միանձնուհիք Փոռռոյալ մենաստանին շփոթեալ յոյժ անկան 'ի վարանս տարակուսի : Արքայական այս մենաստան կանգնեալ առ երի Շեվրէօզ քաղաքի , էր 'ի վաղեմի մենարանաց կարգին Կիստերսեանց , և 'ի փոխման վեշտասաներորդի դարուն պակասեալ 'ի բարեկարգութենէ՝ անկեալ էր 'ի մեղկութիւն : Մարիամ Անճէլիքա քոյր Առնոլտայ երևելւոյ յազնուական ազգատոհմէ՝ օրիորդ ութամեայ՝ առեալ էր անդ զքեմ կուսութեան , և իննամեայ արարեալ զուխտ կրօնի՝ յետ երկուց ամաց ընտրեցաւ աբբայուհի այնր մենաստանի : Հասանեալ նորա 'ի հասակ եօթնևտասն ամաց՝ձեռն արկ վերանորոգութեան կարգաց մենաստանին , սկիզբն արարեալ 'ի նորոգութենէ ուխտից իւրոց , զի անբաւական համարելով զառաջին ուխտն իւր՝ արար և զերկրորդն : Ապա 'ի միջոցս հնգից ամաց օրինակաւ վարուց իւրոց յօժարեցոյց զամենայն միանձնուհիս կամակար ընդունել զամենայն խստութիւն կանոնաց սրբոյն Բենեդիկտոսի :

Այս եղև առաջին վերանորոգութիւն կարգին Կիստերսեանց , որում կամեցան հետևել և այլ մենաստանք : Աբբայուհին Անճէլիքա լի եղև բերկրութեամբ 'ի տեատնել անդ զի տիկին Արնոլա մայր իւր, որ էր դուստր ընդհանրական փաստաբանին Մարիոնի՝ այրիացեալ յառնոյ հետէ, կամեցաւ կրօնաւորել ընդ տեսչութ̅բ դստեր իւրոյ ։ Սոյն այս տիկին ստացաւ 'ի Փարիզ տուն մի յարուարձանն անուանեալ սրբոյն Յակովբայ 'ի պէտս հիւրանոցի միանձնուհեաց Փառայալ մենաստանին ։ Ապա հաճութեամբ թագաւորին և արքեպիսկոպոսին Փարիզու փոխադրեցան անդր համօրէն միանձնուհիք, և թագուհին Մարիամ Մեդիչեան կամեցաւ անուանիլ հիմնարկու և բարերար այնմ նորակերտ մենաստանի ։

Միանձնուհիքն մինչդեռ կային 'ի վանսն Փառայալ աւանին, բազումք յականաւոր մատենագրաց առանձնացեալ էին 'ի հիւրանոց մենաստանին՝ իբր 'ի խաղաղական տեղի մտադրութեան ուսմանն իւրեանց. և քանզի ոմանք 'ի մատենագրաց անտի համարեալ էին ջատագովք Յանսենիոսի, վասն որոյ և միանձնուհիքն եղեն կասկածելիք իբրու կուսակիցք վարդապետութեան նորա. և քարոզիչ ոմն ամբաստան եղև զնոցանէ յառենախօսել իւրում, և յերգիծական գիրս ուրեք կոչէ զնոսա անապաշաւս, յուսահատս, խորհրդականապաշտս (ըստ մոլորութեան կալվինեանց), և խելայեղս ։ Այսոցիկ նախատական բանից ոչ կարելով հանդուրժել և ներողամիտ լինել արքեպիսկոպոսին Փարիզու, դատապարտեաց զգիրսն և զգրոյցս քարոզչին, ծանուցանելով ամենեցուն զանմեղութ̅ի կուսանացն այնոցիկ 'ի զրպարտութենէ անտի, որով մատենագիրն կամէր վատահամբաւ առնել զնոսին ։ Յայսր ամենայնի վերայ 'ի հանապազորդել կասկածանացն՝ եթէ կուսանքն այնոքիկ իցեն ձայնակիցք և համախոհք յանսենեան վարդապետութեան, խնամ կալան հանել 'ի հիւրանոցէ անտի նոցա զմիայնակեացս անձինս որք բնակէին անդ. նոյնպէս բարձան 'ի միանձնուհեաց և հասութաւորք և նորընծայ օրիորդք ։

Սթարտուլինոյ Փէրէֆիքս ամբարձեալ յաթոռ արքեպիսկոպոսութ̅ե Փարիզու՝ յամին 1664 յեօթներորդ աւուր ամսեանն յուլիսի արար ձեռն հովուական 'ի յորդոր անկեղծ հնազանդութ̅ե և ստորագրելոյ Սահմանի բանիցն առաջարկելոյ 'ի ժողովոյն ։ Յայնմ ժամու զդուշաւոր և անպարտ բանիւք խօսի զՅանսենիոսէ՝ յաւելու, թէ նա ինքն զգիրս իւր յանձն արար դատաստանի եկեղեցւոյ և քննութեան սրբոյ աթոռոյն, վասն որոյ չէ պարտ դատապարտել զանձն նորա։ Ցանուցանէ դարձեալ թէ կոնդակն քահանայապետին և յաւելուածն 'ի նոյն չեն ինչ այնպիսի, մինչև ասել մեզ թէ պահանջիցեն զհպատակութիւն աստուածային հաւատոյ՝ պատշաճեալ առ գործ ինչ եւեթ. այլ խնդրեն միայն զմարդկային և զեկեղեցական հաւատս, որ սահալէ զմտադիւր հպատակութիւն մտաց առ դատաստանս օրինաւոր առաջնորդաց։

Արքեպիսկոպոսն Փարիզու առաջի արար միաբանուհեաց մենաստանին Փօռըյալի ստորագրել Սահմանի բանից ժողովոյ կղերցն՝ ըստ բացատրութեան մտաց և իմաստից հովուական ճառին իւրոյ, յայտ առնելով թէ չխնդրէ 'ի նոցանէ զաստուածաբանական հաւատս 'ի վերայ գործոյ, այլ լոկ զմարդկայինն 'ի հաւանութիւն գործոյն։ Իսկ բանզի միաբանուհիքն ոչ կամէին լսել նմա, արքեպիսկոպոսն յորդոր մատոյց նոցա տալ գէթ զստորագրութիւն մտադիւր հպատակութեան առ սահմանադրութիւնս քահանայապետացն Իննովկենդիոսի Ժ. և Աղեքսանդրի Է. սակայն և ոչ այնմ հաւան գտան միաբանուհիք։ Վասն որոյ զայրացեալ արքեպիսկոպոսին ընդ կամակոր յամառութիւն կուսանացն, ասէ. «Հրեշտակս անմեղս գիտէի զձեզ, բայց արդ տեսանեմ իբրև զդևս ամբարհաւանս»։

Յետ այնորիկ խորհուրդ արարեալ միաբանուհեաց առաքեցին առ արքեպիսկոպոսն զօրինակ ինչ բանից հաւանութեան, բայց արքեպիսկոպոսին ոչ հաճելով ընդ այն՝ խնդրեաց 'ի նոցանէ զստորագրութիւն պարզ և մեկին բանիւ. և 'ի հրաժարել կուսանացն՝ զատոյց զաբբայուհին ընդ երկոտասան միաբանուհեաց յայլ մենաստան։ Այլք միանգամ յամառեալ մնոք ըմբոստ գտան արքեպիսկոպոսին՝ հրատարակեցան անհնազանդք և անարժանք ընդունելութեան խորհրդոց եկեղեցւոյ. վասն որոյ փոխադրեցան յառաջին մենաստանն իւրեանց որ 'ի Փօռըյալ 'ի Շանփ գաւառի 'ի միասին ընդ առաջնոց երկոտասանիցն զատուցելոց, յորոց վերայ եդան պահապանք՝ զի մի կարասցեն խօսել ընդ ումեք . իսկ որք ձեռնագիր ստորագրութեամբ հաւանեալ էին սահմանաց ժողովոյ գղերցն՝ կացին մնացին 'ի նորակերտ մենաստանն Փոռոյալ 'ի Փարիզ :

Ընդ կուսանացս յայսմ տագնապի էին մինչև ցամն 1669 , յորում ժամանակի միաձնուհիքն ըստ օրինակի եպիսկոպոսացն Փամիէի , Ալէթայ , Անժէի և Պովէի հնազանդեցան սահմանադրութեանց սրբոյ աթոռոյն , և վայելեցին 'ի ցանկալի խաղաղութեան իւրեանց : Ի նմին ամի Լուդովիկոս ԺԴ. հրամանագրով առանձնական ժողովոյ յամսեանն մայիսի՝ զատոյց զերկոքին մենաստանն յերկուս աբբայութիւնս անկախս 'ի միմեանց , զմին 'ի Փարիզ՝ արքունի անուամբ , և զմիւսն 'ի Շանփ , օրինադրելով զի յամենայն երիս ամս ընտրեսցին նոր աբբատուհիք :

Մենաստանն որ 'ի Շանփ ծաղկեցաւ յոյժ խաղաղական հանգստեամբ ընդ միջոցս տասն ամաց , և բազումք յաշխարհականաց դնէին անդ զգստերս իւրեանց 'ի դաստիարակութիւն վարուց բարեաց : Միանգամայն և յոլով անձինք յամենայն վիճակէ առանձնանային 'ի հիւրանոց այնր մենաստանի՝ վայելել յանդորրութիւն կենաց , և զօրինակ կանոնաւորեալ վարուց այնր սրբակրօն միաբանութեան : Նոյնպէս և բազում եպիսկոպոսունք գնային անդր յայցելութիւն մենաստանին , ուր կատարէին զաստուածային պաշտամունս և մատակարարէին զխորհուրդ դրոշմի :

Մենաստանս այս թէպէտ և ունէր իւր բազում պաշտպանս և ծաղկեալ եւս էր բարեպաշտութեամբ , բայց արքունի մարդիկն միշտ 'ի կասկածանս էին 'ի վերայ կարծեաց և վարդապետութեան միանձնուհեացն այնոցիկ : Քանզի և արքեպիսկոպոսն Փարիզու Հարլէ համարէր զայն մենարան իբրու միակ տեղի ապաստանի վարդապետութեանն . վասն որոյ յամին 1678 ընկալեալ զհաճութիւն թագաւորին՝ եհան արտաքս 'ի մենաստանէն զթոշակաւորսն ամենայն և զորս միանգամ 'ի հանգիստ առանձնացեալ էին անդ . արգել դարձեալ միանձնուհեաց չընդունել զօրիորդս 'ի նորընծայութիւն . ընդ որ վշտացեալ կուսանաց՝ գրեցին աղերսական նամակ առ Քրիստոս ընդդէմ հալածչաց իւրեանց, զոր և եդեալ 'ի ձեռս միանձնուհւոյ ուրումն մեռելոյ՝ թաղեցին ընդ նմա 'ի գերեզմանի ։

Զաւեր և զկործանումն այնր մենաստանի պատմեսցուք 'ի սկիզբն ութևտասներորդի դարուն ։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Նոր սահման բանից առաջի արարեալ յԱղեքսանդրէ Է. 'ի ստորագրութիւն, և հակառակել այնմ եպիսկոպոսաց ոմանց ։

ԲԱԶՈՒՄՔ յեպիսկոպոսաց Գաղղիոյ հնազանդեալք վճռոյ սրբոյ աթոռոյն՝ ստորագրեալ էին ձեւոյ բանից ժողովոյ գղերջն Գաղղիոյ. բայց ոչ հետևեցան նոցա ոմանք յեպիսկոպոսաց, որք անհաւան գտան ձեւոյ բանիցն յօրինելոյ յերիցակցաց իւրեանց ։ Վասն որոյ ժողովլ երիցանցն 'ի դէպ համարեցաւ խնդրել 'ի քահանայապետէն՝ զի իշխանութեամբ իւրով վաւերացուսցէ զայն ձեւ բանից. բայց Աղեքսանդր Է. չկամելով անսալ նոցա՝ առաքեաց նոր սահման բանից՝ կոնդակաւն 'ի հնգետասան փետրուարի յամին 1665 բովանդակեալ զայս ձեւ բանի. " Հպատակիմ առաքելական սահմանադրութեանցն Իննոկենտիոսի Ժ., որ յերեք մայիսի յամին 1653, և Աղեքսանդրի Է., որ 'ի վեշտասան հոկտեմբերի յամին 1656, և անկեղծ մտօք հերքեմ և դատապարտեմ զհնգեսին վարդապետութիւնս քաղեալս 'ի Կոռնելեայ Յանսենիոսի գրոցն կոչեցելոյ Օգոստինոս, ըստ իմաստից նորին իսկ մատենագրի, որպէս դատապարտեաց սուրբ աթոռն նախայիշատակեալ սահմանադրութեամբք ։ Այս ինքն խոստանամ զայս. և տէր լիցի ինձ օգնական, և սուրբ աւետարանն Քրիստոսի " ։

Յայս կոնդակի քահանայապետին զօրավիգն եղև Լուդովիկոս ԺԴ. առանձին հրովարտակաւ իւրով 'ի քսան և հինգ ապրիլի յամին 1665, յորում պատուիրէր համօրէն արքեպիսկոպոսաց և եպիսկոպոսաց տէրութեան իւրոյ ձեռն դնել սահմանին տուելոյ 'ի քահանայապետէն, և տալ ստորագրել համօրէն եկեղեցականաց յաշխարհականն և 'ի կրօնաւորական կարգէ, որպէս և միանձնուհեաց և վարժապետաց դպրոցաց անխտիր՝ առանց ինչ յաւելուածոյ բացատրութեան և կամ ամփոփման ։

Եպիսկոպոսունք կարգեալք 'ի Թագաւորէն՝ բարենախանձ հոգւով խնամ տանէին առնուլ ստորագրութիւն ․ բայց չորք եպիսկոպոսունք Թեմականք յայտնապէս որոշեցան յայլոց, և գրեցին Ճառ հովուական առ հնազանդեալս իւրեանց, յորում խոստովանէին՝ թէ 'ի խնդիրս հաւատոյ հարկ է ամենեցուն հպատակել վճռոյ եկեղեցւոյ ․ բայց ոչ որ բռնադատի հաւանել սահմանելոյն զիրաց յինքնուրոյն գործս պատշաճելոյ ․ որք քանզի չեն 'ի յայտնութենէն Աստուծոյ, ոչ է անկ եկեղեցւոյ սահմանել ինչ զայնցանէ, և առ սահմանադրութիս այսպիսիս հպատակութիւն ևեթ լռութեան և ակնածութեան ընծայելի է ։

Լուդովիկոս ԺԴ․ զայրացեալ ընդ հակառակութիւն չորեցունց եպիսկոպոսացն այնոցիկ, որք պատճառք լինէին տևելոյ կռուոյն, զոր ինքն կամէր փութով աւարտել, եդ 'ի մտի դատաստանաւ վարիլ ընդ նոսա ։ Բայց Աղեքսանդր քահանայապետ մինչև անուանեալ զինն եպիսկոպոսունս ըստ խնդրոյ արքային 'ի քննութիւն յանցաւորութեան և դատի նոցին, վախճանեցաւ զկեանս ․ վասն որոյ Կղեմէս Թ․ յաջորդ Աղեքսանդրի՝ յառաջին աւուրս քահանայապետութեան իւրոյ նոր կոնդակաւ հաստատեաց զսահմանեալն 'ի նախորդէն ։

Արդ քանզի վասն դատի չորեցունց դաղղիացի եպիսկոպոսաց դիմել 'ի Հռովմ ոչ 'ի դէպ էր յոյժ և վայելուչ, զի եպիսկոպոսունքն կուսակիցք Յանսենիոսի պնդէին՝ թէ այդու հիմն 'ի վեր տապալին կարգք եկեղեցական դատաստանաց, բայց տեսեալ թէ բռնի սաստկին առ այն՝ զուն գործեցին արագ և թիկունս առնել ինքեանց զայլ եպիսկոպոսունս, և զդատ իւրեանց եդին առաջի ինն և տասն եպիսկոպոսաց, որք թէպէտ և ստորագրեալ էին ձևոյ բանից քահանայապետին, սակայն և այնպէս ցուցան թևարկուք և պաշտպանք դատախազեալ եպիսկոպոսացն, և ամենեքին միաբան գրեցին առ քահանայապետն, յայտ առնելով՝ զի եթէ մոլորութիւն իցէ հրաժարելն 'ի հպատակութենէ վճռոյ սուրբ աթոռոյն վասն իրիք գործոյ որ չիցէ 'ի յայտնութենէն Աստուածոյ, ապա վրիպակ չորեցունց եպիսկոպոսացն հաստատակաց էր համօրէն եկեղեցւոյն ։ Զնոյն բանս գրեցին և առ Թագաւորն. բայց նամակք նոցա չկարացին խափանել զվիճակամ առաջադրութիւն մտաց եկեղեցական և աշխարհական իշխանութեանց՝ 'ի տալ ձեռնադրել այնմ ձևոյ բանիցն առաջարկելոց ։

Ի յուզմանէս վիճից և շփոթութեանցս այսոցիկ այլք խաղաղասէրք և բարեպաշտք ցանկային 'ի լռութիւն ածել զհակառակութիւնն՝ որք առելութեան և թշնամութեանց էին պատճառք ։ Այսմ ցանկայր քահանայապետն Կղեմէս Թ., որ 'ի ժամանակս վիճիցն յուզելոց 'ի Հռովմ յաւուրս նախորդին իւրոյ սակս խնդրոյն Յանսէնիսի՝ յամենայն դէպս ցուցանէր զանձն ցանկացող խաղաղութեան ։ Կոնդրին արքեպիսկոպոսն Սէնս քաղաքի տեսեալ զյօժարութիւն Կղեմայ Թ., սկսաւ 'ի խորհուրդ հաշտութեան մտանել ընդ նուիրակին Հռովմայ, որ էր Պետրոս Պարձէլլինի արքեպիսկոպոս Թեբէի, այր խոհական և խաղաղասէր իբրև զքահանայապետն ։

Մարգիզն Լիոնեան գործակից գտեալ յառաջադիմութեան իրացն, յուշ արար նուիրակին՝ եթէ խրատութիւն փոխանակ հանդարտելոյ զյուզեալ ոգիս առաւել ևս զայրագնէ, որպէս տեսաւ առէ 'ի դատս չորեցուն եպիսկոպոսացն, որոց պաշտպանք եղեն և այլ իննևտասն եպիսկոպոսունք. և զի այժմ բազմաթիւ են կուսակիցք, խիթալի է թէ երկպառակեսցին եպիսկոպոսունք. բայց հնար է ներողամիտ քաղցրութեամբ խափանել զչարն 'ի սկզբան անդ և խաղաղել զամենայն ըստ հաճոյս աթոռոյն Հռովմայ և տէրութեանն Գաղղիոյ ։

Յայս խորհուրդ խաղաղութեան յօժարամտեալ գոլով և նուիրակին՝ խնամ կալաւ աւարտել զվէճն. և 'ի պահել զպատիւ չորեցունց եպիսկոպոսացն՝ չկամեցաւ պահանջել 'ի նոցանէ զյետս կոչումն հովուական ճառի իւրեանց, այլ զմիաբան ստորագրութիւն սահմանեալ ձևոյ բանիցն, և զի յանձն առցեն տալ ստորագրել յայն և եղելոյն 'ի թեմի իւրեանց, որպէս զի 'ի ժողովն գումարելիս սակս սոյն իրաց՝ ծանուսցին ստորագրութիւնք եպիսկոպոսացն և ժողովրդեան իւրեանց.

և զի չորեքին եպիսկոպոսունքն գրեցին թուղթ առ քահանայապետն՝ ՚ի ցուցանել զկատարեալ հպատակութիւն իւրեանց ։

Կղեմէս Թ. տեղեկացեալ ՚ի Նուիրակէ անտի իւրմէ յաղագս պայմանեալ դաշանցն, գրեաց պատասխանի՝ թէ չխնդրէ զյետս կոչումն հովուական գրուածոց, այլ հաւանեալ է ընդ ստորագրութիւն սահմանեալ ձևոյ բանիցն, շատ է թէ լինիցի անկեղծ մտօք . վասն որոյ չորեքին եպիսկոպոսունքն անյապաղ գրեցին նամակ խոնարհ հպատակութեան առ քահանայապետն . և զի տարածեալ էր համբաւ, եթէ ՚ի ստորագրութեան նոցա կայցէ ինչ ամփոփումն, կամեցաւ քահանայապետն ստուգել զայն և տեղեակ այնմ լինել . և եպիսկոպոսն Շալոնի, որ մի էր ՚ի միջնորդաց հաշտութեան, գրեաց առ քահանայապետն, թէ "Չորեքին եպիսկոպոսունք և այլ եկեղեցականք դնեալք ՚ի միաբանական դաշնակցութեան՝ վարեցան անկեղծ մտօք, և տիրապէս դատապարտեցին զհնգեսին առաջարկութիւնս . իսկ առ խնդիրն վերածելոյ զայնոսիկ Օգոստինոս անուանեալ գրոցն Յանսենիոսի՝ ցուցին զամենայն պարտուպատշաճ յարգութի՛ և զհպատակութի՛ սրբոյ աթոռոյն . բայց որում ուսուցանեն ամենայն աստուածաբանք ակն ածել ՚ի նմանէ վասն համօրէն դատապարտեալ գրոց . այս է չասել չգրել և ոչ ուսուցանել ինչ որ հակառակ իցէ քահանայապետական վճռոյ .." ։

Շատացեալ քահանայապետին ընդ այս յայտարարութիւն, պատուեաց մեծարանօք զչորեսին եպիսկոպոսունս առանձին կոնդակաւ յիննետասն աւուր ամսեանն յունուարի յամին 1669, ծանուցանելով նոցա, թէ նամակք իւրեանց գրեալք առ ինքն թէպէտ և հաւաստի առնէին զանկեղծ ստորագրութիւն նոցա Սահմանին առաջարկելոյ յԱղեքսանդրէ Է., սակայն ծաւալումն կասկածելի համբաւոյն ստիպեաց զինքն վարիլ ամենայն զգուշաւորութեամբ, "Զի մի լիցի մեզ, ասէ, երբէք յայսմ մասին ներողամիտ լինել բացասութեան կամ ամփոփման, այլ կամիմք զի յամենայնի պահեսցին սահմանադրութիւնք բարեյիշատակ նախորդին մերոյ ։ Իսկ զի այժմ ստուգեալ ծանեաք զկատարեալ հպատակութիւն ձեր, հարկիւք ցուցանել և զհայրական բարեհաճութիւն մեր»։

Այսու օրինակաւ հաստատեցաւ խաղաղութիւն ցանկացեալ 'ի բազում ամաց հետէ, զի ամենեքին առ հասարակ տաղտկացեալ էին 'ի բանակռուութենէն։ Բազում եկեղեցականք արգելեալք 'ի հոգևոր պաշտամանց՝ հաստատեցան վերստին 'ի ստորագրելն առաջարկեալ Սահմանի քահանայապետին Աղեքսանդրի Է։ Առնոլդ եւ արտաքս 'ի թագուցեալ տեղւոջէն. որ և 'ի յանդիման լինելն առաջի թագաւորին՝ ցաւագին բանիւք յայտ արար զթախծութիւն սրտին, իբրու զի պատճառք եղև բանակռուութեանց, որք 'ի յոյժ չփոթութեան արկին զեկեղեցին Գաղղիոյ. և պատասխանի արար թագաւորն քաղցրութեամբ և ասէ. «Ոչ պարտ յիշել զանցեալս»։ Այս հայեցեալ 'ի Պոմփոնիոս պաշտօնեայ տէրութեան՝ եղբօրորդի Առնոլդի, ասէ ցնա. «Փութի ինձ թէ և քեզ մխիթարութիւն մեծ լիցի յաջողել իրացս»։ Ի մարդասէր քաղցրութենէ անտի թագաւորին յորդորեալ և համօրէն պալատականաց սկսան պատուել և մեծարել զԱռնոլդ, և յանդիման կացուցին զնա որդւոց արքայի։

Դուքսն Աւրելիանի եղբայր թագաւորին ընթացաւ քանի մի քայլափոխս ընդ առաջ նորա ասելով. «Արժան է գոյզն աշխատութիւն յանձն առնուլ 'ի տեսանել զայրն անուանաւոր և զմեծարոյ»։ Ի գնալ նորա յայցելութիւն նուիրակին Հռովմայ, անուանեցաւ 'ի նմանէ Գրիչ ոսկի. և տուեալ նմա զգովեստս բազմադէմիս վասն հանճարոյ ճարտարամիտ յաջողակութեանն, «Այն ունիմ, ասէ, թէ առ յայս վարեցեր զաշխատութիւնդ 'ի պաշտպանութիւն ուղղափառ հաւատոյ ընդդէմ հերետիկոսաց»։

Նոյնպէս և չորեքին եպիսկոպոսունք գտին շնորհս առաջի թագաւորին, որ սիրաբար գրեաց առ նոսա՝ աւետելով նոցա զխաղաղութիւն, և ստուգելով զբարեհաճութիւն կամաց իւրոց 'ի պահել զայն հաստատուն, միանգամայն և զակնածութիւն և զյարգ իւր ընդ առաքինաջան վաստակս նոցա։ Առ 'ի յաւերժացուցանել զյիշատակ յաջող ելիցն՝ 'ի նմին ամի տպեցան և մետալք խորհրդաւոր նշանօք, յորս երևէր Հոգին *սուրբ աղաւնակերպ՝ պատճառ և աղբիւր խաղաղութեան. և ՚ի ներքոյ աստուածաշունչ մատեանն բացեալ ՚ի վերայ սեղանոյ, և ՚ի վերայ մատենին բանալիք սրբոյն Պետրոսի և արքունի գաւազան հանդերձ կշռով արդարութեան՝ յօդակապք ընդ միմեանս, ՚ի ցուցանել զհամակամ գործակցութիւն եկեղեցական և արքայական իշխանութեանց :*

ԳԼՈՒԽ ԺԲ.

Քահանայապետք Հռովմայ՝ յետ Ուրբանոսի Ը. մինչև ցԿղեմէս Թ.

Ի ՊԱՏՃԱՌՍ *պատմութեան յանունեանց թէպէտ և յիշատակեցաք զանուանս քահանայապետացն յՈւրբանոսէ Ը. մինչև ցԿղեմէս Թ., սակայն ՚ի սուղ զորոշ տեղեկութիւն զգահակալութենէ նոցա և զգործոյն յաւելցուք և դոյզն ինչ սակս յառաջիկայդ :*

Իննովկենտիոս Ժ. Հռովմայեցի՝ զառաջինն Յովհաննէս Մկրտիչ անուանեալ ՚ի Պամփիլեան զարմէ, ՚ի մտանել իւրում յարքունի պաշտամանս սրբոյ աթոռոյն՝ անպակաս գտաւ երևելի և ականաւոր յամենայն տեղիս նուիրակութեան իւրոյ. վասն որոյ յՈւրբանոսէ Ը. պատուեցաւ կարդինալական ծիրանեաւ, և ապա յամին 1644 ՚ի հնգետասաներորդ աւուր ամսեանն սեպտեմբերի ընտրեալ ՚ի քահանայապետութիւն եղև յաջորդ նորին : Կալաւ զաթոռն զամս մետասան, և վախճանեցաւ յամին 1655 ՚ի հասակի ութսուն և մի ամաց : Էր այր հանճարեղ, աչալուրջ, զգօն, և պերճացեալ բարեմասնութեամբք : Անվեհեր ՚ի ծանր և ՚ի դժուարին խնդիրս, անյողդողդ և հաստատուն յորոշմանն զոր առնէր յետ ընդերկար քննութեան և խորհրդոց. էր զգաստ, ժուժկալ, սակաւապէտ, ատեցող զեղխութեան և շռայլութեան, թշնամի աւելորդ ծախուց, բայց և առատաձեռն ՚ի հարկաւորս և ՚ի պիտանիս : Խոհական տնտեսութեամբ և խնայելով ՚ի ծախսն՝ եթող ՚ի մահուն իւրում եօթնհարիւր հազար սկուտս : Գորովագութ էր առ հպատակս իւր, արդարակորով ՚ի դատաստանի և ուղղադատ ՚ի վճիռս : Ցօհմանխրութեամբն իւրով և դիւրամատոյց զիջմամբն առ-

ազգականս՝ պատճառք եղև անկարգութեան ինչ նոցա. մինչև Ողոմպիայ կնոջ եղբօր իւրոյ առնուլ համարձակութիւն վաճառել զպաշտօնատարութիւնս քաղաքին, և հալածել զազգատոհմն Պարպերինեանց՝ զեղբօրորդիս Ուրբանոսի Ը., որք 'ի բռնութենէ անտի նորա առիպեցան խոյս տալ 'ի Գաղղիա ։

Յետ Իննովկենտիոսի Ժ. յամին 1655 ընտրեցաւ քահանայապետ Աղեքսանդր Է. 'ի Քիճի ազգատոհմէ, որ զառաջինն գտաւ արխաւիրօ՝ խորշելով 'ի տոհմասիրութենէ, բայց յետոյ յաղթեցաւ 'ի կրից անտի իբրև զնախորդն իւր ։ Ի նորին յաթոռ քահանայապետութեան եդ 'ի սենեկի իւրում դագաղ մեռելոյ առ 'ի յիշել զօրհանապազ զժամն յորում դադարեսցեն ամենայն մեծութիւնք և ճոխութիւնք աշխարհի ։ Յաւուրս քահանայապետութեան սորա Թագուհին Քրիստինէ հրաժարեցաւ 'ի թագաւորութենէն Շուեդայ ընդգրկելով զուղղափառ հաւատս, և եկեալ բնակեցաւ 'ի Հռոմ ։ Վախճանեցաւ քահանայապետս յամին 1667 'ի քսանևերկու ամսեանն մայիսի, կալեալ զաթոռ քահանայապետութեան զամս երկոտասան և զաւուրս քառասուն և վեց ։ Նշանաւոր գտաւ 'ի տուրս ողորմութեան յաւուրս սովու, յորում տագնապեալ տանջէին Հռոմայեցիք. և ես խնամ կալաւ նորոգութեան և վայելչազարդութեան բազում եկեղեցեաց Հռոմայ, սակայն և այնպէս չեղև կարի սիրելի ժողովրդեան, զի 'ի ծախս հոյակապ շինուածոց առաւել անայր ինքնախորժ մեծագործ ճարտարապետութեան քան ձեռնհասութեան տրոց ժողովրդեան ։

Յետ սակաւ աւուրց պարապութեան աթոռոյն, յերկրորդ աւուր յունիսի ընտրեցաւ Յուլիոս կարդինալ Ռոսփիլեօզի 'ի Փիսթոյա քաղաքէ, այր բազմարգիւն, հանճարեղ և խաղաղարար, որ անուանեցաւ Կղեմէս Թ. ։ Կեաց 'ի քահանայապետութեան զամս երկուս և զամիսս վեց. վախճանեցաւ յամին 1669, թողեալ յիշատակ պանծալի խաղաղասիրութեան, սակաւապէտ կենաց, առատաձեռնութեան, ուսումնասիրութեան և հայրագութ խնամոց 'ի վերայ ժողովրդեան ։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Քահանայապետութիւն Կղեմայ Ժ., և Իննովկենտիոսի ԺԱ։ —
Վէճ յաղագս հասից ժառանգաւորութեան։

ԿՂԵՄԷՍ Ժ. յԱլթիերի տոհմէ, քահանայապետ նախանձախնդիր խաղաղութեան և բարեկարգութեան եկեղեցւոյ, ընտրեցաւ յամին 1670, և կալեալ զաթոռ քահանայապետութեան զամս վեց և զամիս երիս վախճանեցաւ յամին 1676, 'ի հասակի ութսուն և եօթն ամաց։ Ի նմին ամի յետ երկուց ամսոց մահուանն Կղեմայ ընտրեցաւ Իննովկենտիոս ԺԱ. 'ի զարմէ Օտեսքալքեանց 'ի Քոմոյ քաղաքէ Լոմպարտիոյ։ Էր սա այր անձնեայ, վտիտ մարմնով, եռանդուն հայեցուածովք, խիստ բարուք, արդարակորով և հանճարամիտ, նախանձախնդիր բարեկարգութեան վարուց և իրաւանց եկեղեցւոյ. միօրինակ անաչառ յանձն և յայլս առ հասարակ. և զնախկին ազգեցուին յամենայնի արդարացի համարեալ և բանաւոր՝ չթուլանայր երբէք 'ի նոցունց։ Արդ քանզի ծնեալ էր յերկիր դքսութեան Մեդիոլանու, վասն որոյ և հպատակ տէրութեանն Սպանիոյ, Լուդովիկոս ԺԴ. ոչ հաճեցաւ ընդ բարձրանալ նորա յառաջին պատիւ կաթուղիկէ եկեղեցւոյ. քանզի և չէր իսկ նա ամենեւին կուսակից և նպաստաւոր տէրութեն Գաղղիոյ. վասն որոյ անվեհեր մխեցաւ 'ի վէճսն ծագեալս առ նովին ժամանակաւ յայնմ թագաւորութեան 'ի պատճառս իրաւանց սեպհականութեան հասից, կամ զրաւելոյ զեկամուտս դատարկացեալ աթոռոց եպիսկոպոսաց։

Քանզի 'ի նախնի և յանյիշատակ դարուց հետէ թագաւորք Գաղղիոյ ստացեալ էին զիրաւունս զրաւելոյ կամ ժառանգելոյ զեկամուտս արքեպիսկոպոսարանաց և եպիսկոպոսարանաց այնր տէրութեան՝ ցորչափ ժամանակս 'ի պարապութեան էին այն աթոռք. Նոյնպէս սակայն էին ըստ հաճոյս շնորհել այլոց զթոշակս վախճանեալ ժառանգաւորաց, բաց 'ի ժողովրդապետական հասից և պաշտամանց կարգելոց 'ի խնամ ժողովրդեան։ Արդ արքայական իրաւունք սեպհականութեան հասից՝ ըստ իրաւագիտացն գաղղիացւոց թէպէտ և տարածէր առ համօրէն եկեղեցիս այնր թագաւորութեան, բայց յոլով եպիսկոպոսունք քաղաքացն այնոցիկ, որք յետ ժամանակաց յաւելան միանալ ընդ տէրութեանն Գաղղիոյ, բազմօք հակառակ կացեալ չկամեցան ճանաչել և ընդունել զայդ առանձնաշնորհութի իրաւանց տէրութեան. այլ չեղև նոցա հնար զերծանել անտի։ Այսպէս հաստի է 'ի դիւանական յիշատակարանաց, զի եպիսկոպոսական վիճակք ինչ ընդ բազում դարս ազատ գտան յարքունի իրաւանց անտի։

Ի սկիզբն դարուս առ ժամանակօք Հենրիկոսի Դ. եպիսկոպոսն Պէլլէ քաղաքի համարելով եթէ վիճակ իւր ազատ իցէ անտի, կամեցաւ պաշտպանել զինքն իրաւանց իւրոց. բայց ժողով խորհրդականացն Փարիզու յամին 1608 յայտ արար առանձին վճռով, թէ օրէնք արքունի իրաւանց սեպհականութեան հասից՝ միօրինակ և անխտիր հասարակաց է ընդ ամենայն սահմանս տէրութեան։ Նոյն եպիսկոպոսն Պէլլէի, և որք միանգամ ունէին վիճակս հուպ սահմանացն Սպեան և Պիրենեան լերանց՝ պնդեալ 'ի խնդիրս իւրեանց, մատուցին աղերս գանգատանօք հանդերձ առ Հենրիկոս արքայ. իսկ նորա խորշելով 'ի կռուոյ և 'ի հակառակութենէ ընդ եպիսկոպոսունս և ընդ քահանայապետին՝ եթող անորիշ զխնդիրն։

Յամի տեառն 1637 կարդինալն Ռիշըլիէօ յօժարելով պաշտպան կալ իրաւանց թագաւորին 'ի ժառանգել զեկամուտս եպիսկոպոսաց, և միանգամայն ըստ հաճոյս անուանել զոք 'ի ժառանգաւորութիւն ընդ միջոցս պարապութեան աթոռոյ վախճանելոց եպիսկոպոսաց մինչև ցընտրութիւն և ցհաստատութիւն նորոյ եպիսկոպոսի, խնամ կալաւ առնուլ հաւանութիւն յարքայէն՝ զի եպիսկոպոսունք որք համարին զթեմս իւրեանց ազատս 'ի պարտուց անտի, ցուցցեն զպատճառս ազատութեան իւրեանց։ Նոյնպէս և յամին 1651 նմանօրինակ պատուէր տուաւ և 'ի Մածարինոյ կարդինալէ առ նոյն եպիսկոպոսունս առաջի առնել զիրաւացի փաստս իւրեանց, սակայն չեղև հնար հաւանեցուցանել զթագաւորն։ Համագումար աղգայլն ժողովն էր զի կուսակից լինէր եպիսկոպոսաց, բայց ժողովն խորհրդականաց Փարիզու պնդէր մինչ եթէ իրաւունք ժառանգութեան հասից անմերձենալիք լիցին յարքայական իշխանութենէ ։

Նա քանզի կարծիք և վարդապետութիւնք իրաւագիտաց երկպառակք էին 'ի վերայ խնդրոյս, վասն որոյ 'ի խափանել զամենայն վէճս՝ Լուդովիկոս ԺԴ. յամին 1673 'ի տասներորդ աւուր ամսեանն փետրուարի յայտ արար հրովարտակաւ զարքունի իրաւունս սեպհականութեան նախայիշատակեալ հասից ընդ ամենայն վիճակս տէրութեան Գաղղիոյ, բայց 'ի նոցանէ որք 'ի պատճառս ծանունց հարկաց ազատք էին անտի ։ Ի հրովարտակէն Լուդովիկոսի տագնապեալ եպիսկոպոսաց վասն վնասու օգտի իւրեանց՝ բողոք կալան առ նա ինքն թագաւորն, յայտ արարեալ զդժպատեհս գոլ իրացս ։ Ընդ որ ցասուցեալ արքայն եհան զերկրորդ հրովարտակն յամին 1675 յամսեանն ապրիլի 'ի հաստատութիւն բանից առաջնոյ հրովարտակին ։ Այլ սակս մեծագոյն մասն եպիսկոպոսաց հարկեցան հնազանդել կամաց թագաւորին . բայց Նիկողայոս Փավիլլոն եպիսկոպոս Ալէթ քաղաքի, և Փրանկիսկոս Գոլէթ՝ եպիսկոպոս Փամիէռ քաղաքի՝ այր ահաւորք բարեպաշտութեամբ, անհաւան գտեալ՝ հակառակ կացին Լուդովիկոսի ԺԴ. ։ Նա արքայն անտեղեակ գոլով առաքինի վարուց եպիսկոպոսացս և գըրգռեալ 'ի թշնամեաց անտի նոցա, համարեցաւ թէ երկոքին եպիսկոպոսունքն հակառակ կալով արքայական իշխանութեան՝ խորհէին վէճս յարուցանել ընդ մէջ Գաղղիոյ և աթոռոյն Հռովմայ, և յուզմանէ բանակռուութեանց ժամանել զդիտամանն իւրեանց . վասն որոյ առաւել ևս զայրացաւ ընդ թիւր դիտաւումն զոր ինքն վրիպակ կարծեօք ստացեալ էր զնոցանէ 'ի չարախօսութենէ անտի թշնամեացն ։

Այս վէճ և խնդիր այնչափ սաստկացաւ՝ մինչև յաղել քաղաքական մարտի, մանաւանդ յերկոսին վիճակս Ալէթ և Փամիէռ քաղաքաց ։ Զի Լուդովիկոս ԺԴ. յերկոսին վիճակսն յայնսիկ արարեալ էր օրինադրութիւնս ինչ 'ի վերայ կանոնիկոսութեանց, համարելով թէ տակաւին զօրիցեն իրաւունք իշխանութեան իւրոյ · քանզի երկոքին եպիսկոպոսունքն դեռ ևս չէին արարեալ զերդումն հաւատարմութեան իւրեանց առ Թագաւորն ։ Բայց Փավիլըն և Կոլէթ հաստատունքն 'ի խնդիրս որպէս և 'ի կարծիս իւրեանց , մերժեցին զանուանեալսն 'ի Թագաւորէն , և արգելին զկղերն չընդունել զպատիւ պաշտամանցն ։ Սակայն անուանեալքն 'ի կանոնիկոսութիւն դիմեցին առ արքեպիսկոպոսունս Նարբոնայ և Տոլոսայ , որք էին նախագահք վիճակացն Ալէթ և Փամիեռ քաղաքաց , ընդունել զվկայութիւն նպաստաւոր արքունի օրինադրութեան ։ Իսկ երկոքին ստգտեալ եպիսկոպոսունքն հարկեցան բողոք ունել առ սուրբ աթոռն Հռովմայ , որով բանակռուութիւնն տարածեցաւ առ հասարակ յամենեսին ։

Քահանայապետն Իննովկենտիոս ԺԱ. յօժարամիտ յանձն էառ զքննութիւն դատի երկոցունց եպիսկոպոսացն · վասն որոյ ազդու և զօրաւոր բանիւք գրեաց կոնդակս առ Թագաւորն և առ արքեպիսկոպոսն Տոլոսայ , նոյնպէս և առ եպիսկոպոսն Փամիեռ քաղաքի , որ յետ մահուան Փավիլըն եպիսկոպոսի , վախճանելոյ յամին 1677 , ջուն գործեաց միայնակ 'ի գլուխ տանել զծանր վէճ բանակռուութեանն ։ Ի կոնդակին գրեալ առ Թագաւորն յիննևտասներորդ աւուր ամսեանն դեկտեմբերի յամին 1679 , ազդու բանիւք յորդորէ զնա չարկանել ընդ լծով արքունի իրաւանց զազատութիւն եկեղեցեաց · և ապա մեղմով յայտ առնէ , զի եթէ չառնուցու յանձն անսալ հայրական խրատուցն և յորդորանաց՝ բռնադատի վարել զիշխանութիւն պարտուց պաշտաման իւրոյ ։ Ստգտանէ դարձեալ և զգործադրութիւն պարսաւելի իրացս , և արգասիս զայնոսիկ համարի չարամիտ խորհրդոյ մարդելոյզ և նենգաւոր մարդկան ։

Եպիսկոպոսն Փամիեռ քաղաքի զօրացեալ 'ի քաջալերութենէ քահանայապետին , ջուն գործեաց ամենայն հնարիւք պաշտպան կալ խնդրոյն · վասն որոյ յամին 1679 ստանձնեցաւ նզովել զայնոսիկ որք բանիւ արքունի իրաւանց մտեալք 'ի ժառանգաւորութիւն՝ ընկալցին թոշակս հասից յիւրում վիճակի ։ Անմեղկելի արիութիւն եպիսկոպոսիս զայրացոյց զարքունիս

Գաղղիոյ · վասն որոյ հրամանաւ արքային գրաւեցան յարքունիս ամենայն ինչք նորա , և կողոպտեցաւ եպիսկոպոսական բնակութիւնն յամենայն կահուց և 'ի կարասեաց , որով ժամանեալ նորա 'ի յետին աղքատութիւն՝ սկսաւ հայթայթել զպէտսն 'ի տրոց բարեպաշտից ։ Ազնուական ոմն Փէլլըթիէ Տէթուշ անուն առաքեաց առ եպիսկոպոսն գումար ինչ դրամոց յողորմութիւն · զայն լուեալ ուրումն 'ի թշնամեաց եպիսկոպոսին՝ կամեցաւ զառաքողն յանցաւոր ցուցանել առաջի արքային վասն առատապարգև ողորմութեանն , և 'ի խնդրելն զհրաման աքսորելոյ զազնուականն զայն , Լուդովիկոս ԺԴ ետ պատասխանի · “ Չկամիմ թողուլ յետնոց պարսաւելի յիշատակ , թէ յաւուրս թագաւորութեան իմոյ ընկալեալ իցէ ոք զպատուհաս սակս առնելոյ զողորմութիւն ” ։

Յայնմ ժամանակի յամին 1680 մեռաւ եպիսկոպոսն Փամիէռայ · բայց և ոչ այնու հանդարտեցին վէճք և խնդիրք հակառակութեանն · զի գղերք նորա և ընդհանրական փոխանորդն անուանեալ 'ի հանգուցելոյն՝ միօրինակ և անդուլ հակառակ կացին արքունի իրաւանց սեփականութեան հասից ։ Մետրապօլիտն կամ արքեպիսկոպոս Տոլոզայ քաղաքի 'ի զուր անուանեաց զայլ ոք փոխանորդ հանրական 'ի գըրաւել զպտղաբերեալսն յիրաւանց անտի ։ Նոյնպէս վայրապար եղև վճիռ ժողովոյ ատենակալացն Տոլոզայ քաղաքի · զի հայրն Սէռլէ՝ մի յանդամոց գղերն Փամիէռ քաղաքի , և ընդհանուր փոխանորդ և տեղակալ հանգուցելոյ եպիսկոպոսին ունայնացոյց զվճիռն արքեպիսկոպոսին և զատենակալացն Տոլոզայի ։ Ընդ որ զայրացեալ ժողովոյ աշխարհական ատենին՝ դատապարտեցին զնա 'ի մահ , և վճիռ մահուն կատարեցաւ 'ի յարդալից պաճուճապատանս նորա · զոր յետ շրջեցուցանելոյ անարգ սայլիւ ընդ փողոցս Տոլոզայ քաղաքի , հանին 'ի կախաղան ։ Իսկ հայրն Սէռլէ՝ որ փախստեամբ ապրեցաւ , 'ի թաքուցեալ տեղւոջէ անտի իւրմէ ելից զԳաղղիա բազմապատիկ գրուածովք , յորս բողոք ունէր վասն անիրաւութեանցն գործեցելոյ ընդդէմ նորա ։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Համագումար ժողով կղերց Գաղղիոյ յամին 1681 և 1682

ԼՈՒԴՈՎԻԿՈՍ ԺԴ. տեսեալ զօրըստօրէ զայլացումն հակառակութեանց և վիճից ընդ մէջ Հռովմայ և տէրութեան, խորհեցաւ աւարտել զայն 'ի ձեռն ժողովոյ կղերց. Վասն որոյ յամին 1681 գումարեցան քառասուն արքեպիսկոպոսունք կամ եպիսկոպոսունք, որք զառաջինն թէպէտ և պատշաճ վարկան գրել նամակ առ քահանայապետն, բայց երկմտեալ թէ գուցէ իրաւացի փաստք իւրեանց անզօր և ապարդիւն իցեն առ սորա աթոռոյն, կարծիս ինչ տալով նմա կուսակցութեան և համախոհութեան ընդ թագաւորին, խնդրեցին յարքայէն գումարել ժողով ազգային կամ սինհոդոս ընդհանուր համօրէն կղերց Գաղղիոյ, որոց միաբան բողք և ձայնակցութիւն ազդողագոյն եւս գտաւ առ քահանայապետն.

Արդ քանզի ազգային ժողովն ունէր բազում խոչընդակս և բազում ժամանակաց պէտք էին, շատ համարեցաւ թագաւորն գումարել ժողով հանրական, և սահմանեցին կատարել զայն յիններորդ աւուր Նոյեմբերի յամին 1681. Հարլէ արքեպիսկոպոսն Փարիզու նախագահ բազմեցաւ 'ի ժողովին. և պերճախօս եպիսկոպոսն Պօսիւէ յաւուր սկզբնաւորութեան ժողովոյն ատենախօս եղև պերճ և վայելուչ բանիւ, յորում խօսեցաւ նախ 'ի հաստատութիւն նախապատուութեան գահին Հռովմայ, և ապա 'ի գովեստ եկեղեցւոյն Գաղղիոյ. Իսկ յերկրորդում մասին ճառին խօսեցաւ յաղագս կարևոր և պատշաճական հնարից առ 'ի զառաջս առնուլ հերձուածոց և տարաձայնութեանց, և 'ի խափանել զաւիթս հակառակութեանց. հոգեւանդն ճարտարխօսութեամբ իւրով առաջի արար դարձեալ զգեղեցկութիւն և զմիութիւն կաթուղիկէ եկեղեցւոյ յինքն և յանդամս իւր, որպէս և զանընդհատ տեւողութիւն նորա 'ի ձեռն միաբանական սիրոյ.

Առաջին խնամք ժողովականացն եղև քննութիւն

'ի վերայ արքունի իրաւանց սեպհականութեան հայոց եկեղեցւոյ 'ի պարապութեան եպիսկոպոսական աթոռոց. ընդ որ հաւան գտան ամենայն եպիսկոպոսունք, խելամուտ լեալ հաւաստեաւ՝ թէ թագաւորն ունի իրաւունս 'ի վերայ ամենայն եկեղեցական վիճակաց տէրութեան իւրոյ. բայց խնդրեցին 'ի թագաւորէն մեղմել զգործադրութիւն այնր իրաւանց և առանձնաշնորհ իշխանութեան։ Զի ըստ սովորութեանն վարելոյ մինչև ցայնժամ՝ 'ի պարապութեան աթոռոց թագաւորն առնուներ զոք 'ի պտուղ գահերիցութեան, աւագարկաւագութեան, ժառանգաւորութեան և այլոց թոշակաւոր պաշտօնէից. և անուանեալքն 'ի թագաւորէն սովոր էին համարձակ վարել զպաշտամունս իրեանց առանց յանդիման լինելոյ եպիսկոպոսին կամ այլում ումեք եկեղեցական մեծաւորի. և զի այդ սովորութիւն հակառակ էր իրաւանց եպիսկոպոսական իշխանութեան, հայցեցին 'ի թագաւորէն դարման գորաւոր մատուցանել այսմ։ Լուդովիկոս ԺԴ. խելամուտ լեալ իրաւացի խնդրոյ նոցա՝ պատուէր ետ առանձին հրովարտակաւ յամին 1682, զի որք միանգամ ընդունին թոշակս կամ ժառանգաւորութիւնս պաշտամանց 'ի սեպհականեալ արքունի հասից, պարտին յանդիման լինել և ազդ առնել ընդհանրական փոխանորդաց ընտրելոց 'ի ժողովոյ կղերց, եթէ 'ի պարապութեան իցեն աթոռքն. իսկ եթէ կայցեն եպիսկոպոսունք՝ պարտ է ժառանգաւորացն այնոցիկ յանդիման լինել եպիսկոպոսաց և ընդունել 'ի նոցանէ զհաստատութիւն և զկանոնական թոյլտուութիւն։

Ընդ վաւերագրել հրովարտակիս 'ի խորհրդարանի իշխանաւորաց՝ ժողովք եպիսկոպոսացն ամենեքեան 'ի մի բերան շնորհս մատուցին թագաւորին, և ապա միաբան խորհրդով ձեռն եդին վճռոյ ժողովոյն՝ որ վասն արքայական իրաւանց 'ի վերայ համօրէն եկեղեցեացն Գաղղիոյ. և գրեցին նամակ առ քահանայապետն՝ ծանուցանելով նմա զպատճառս որոց վասն զիջան հաւանել այնմ։ Ի նմին նամակի զկնի յայտ առնելոյ զկարեւորութիւն միաձայնութեան ընդ մէջ եկեղեցական և թագաւորական վիճակի, աղերս մատուցին առ քահանայապետն պարգևել զհաշտութիւն խաղաղութեան կղերց Գաղղիոյ, որք վասն բարւոյ եւեթ ընդհանուր եկեղեցւոյն խորհէին և ոչ հաճելոյ զկամս մեծին 'ի թագաւորս ժամանակին յանձն առին ժողովական վճռով իւրեանց հրաժարել յառանձնական ինչ իրաւանց եպիսկոպոսաց անձանց ։

Իննոկենտիոս քահանայապետ անհաւան գտեալ գործոց և միաբանական նամակի եպիսկոպոսացն, առանձին կոնդակաւ խոտել ունայնացոյց զոր ինչ միանգամ որոշեալ էին վասն արքունի իրաւանց սեպհականութեան հասից, և յորդորեաց զնոսա պահել զպատիւ պաշտաման իւրեանց, և 'ի չարատաւորել զխիղճ մտաց՝ փութալ անյապաղ յետս կոչել զստորագրութիւն հաւանութեան իւրեանց ։

Այս բանք և այս գնացք քահանայապետին կարի յոյժ անհաճոյ գտան խաղաղասէր անձանց, և պատճառք եղեն ծագելոյ դժպատեհ արգասեաց, որոց և ոչ ինքն քահանայապետն ակն ունէր ։ Զի 'ի կոնդակէ անտի նորա պատճառս առեալ քննութեան իրաւանց քահանայապետին, յամի տեառն 1682 յամենայն մասանէ գումարեալ նոր ժողով ընդհանուր՝ հրատարակեցին զմեծահամբաւ յայտարարութիւն զայն, որ պատուար ազատութեան համարի եկեղեցւոյն Գաղղիոյ ։ Ի նախաշաւիղ բանս այնր յայտարարութեան ծանուցանեն եպիսկոպոսունք, եթէ հարկն ստիպեաց զնոսա ձեռնամուխ լինել յայն խնդիր և 'ի քննութիւն՝ ոչ այնչափ 'ի հաստատութիւն իրաւանց եկեղեցւոյն Գաղղիոյ, որչափ 'ի խափանել զբամբասս կալվինականաց, որք զուն գործէին առաւել ցուցանել զիշխանութիւն քահանայապետական աթոռոյն ։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Չորք յօդուածք յայտարարութեան ժողովոյ կղերոյն Գաղղիոյ յամին
1682.

ՔԱՆԶԻ այս յայտարարութիւն 'ի վերայ աշխարհական և եկեղեցական իշխանութեան՝ է մի 'ի կարևոր անցից այսր դարու, հարկ համարիմք որպէս և էն անթերի զայն 'ի մէջ մատուցանել, և ունի այսպէս.

«Յոգունք առ մեզ 'ի ժամանակս յայսմիկ ջանին եղծանել և ունայնացուցանել զվճիռս և զազատութիւնս եկեղեցւոյն Գաղղիոյ, զորս նախնիքն մեր հոգւով նախանձու խնամ կալան պաշտպանել ընդդէմ ոսոխաց՝ 'ի կամել նոցա տապալել զհիմունս հաստատեալս 'ի սրբազան կանոնս և յաւանդութիւնս նախնի հարց։ Այլեն և այլք ոմանք՝ որ ը̅ պատրուակաւ պաշտպանելոյ զայնոսիկ յանդգնեցան մաքառել ընդդէմ նախագահութեան սրբոյն Պետրոսի և յաջորդաց նորա քահանայապետացն Հռովմայ սահմանելոց 'ի Քրիստոսէ. և զուն գործեն խափանել զհնազանդութիւնն զոր աշխարհ ամենայն պարտի ընծայել նոցա, միանգամայն ջանահնար լինին նուազել զյարգ մեծութեան սրբոյ առաքելական աթոռոյն՝ զոր պարտ է պատուել և մեծարել համօրէն ազգաց, զի 'ի նմա քարոզին ուղղափառ հաւատք և պահպանի միութիւն եկեղեցւոյ։ Բաց 'ի սոցունց անպակաս են և հերետիկոսք ոյք անտանելի թագաւորաց և ժողովրդոց հնարին ցուցանել զիշխանութիւն առաքելական աթոռոյն, որ խնամակալն է խաղաղութեան եկեղեցւոյ. և սովին հնարիւք օտարացուցանել զպարզամիտս 'ի հաղորդութենէ եկեղեցւոյ։ Արդ առ 'ի դարման մատուցանել այսոցիկ անպատշաճութեանց՝ մեք արքեպիսկոպոսունք և եպիսկոպոսունք ժողովեալք 'ի Փարիզ մայրաքաղաքի հրամանաւ արքային, երեսփոխանքս եկեղեցւոյն Գաղղիոյ հանդերձ այլովք եկեղեցական գործակալօք՝ յետ ընդերկար և հասուն քննութեան հարկ համարեցաք առնել զհետագայ յայտարարութիւնս։

«Նախ՝ թէ սուրբն Պետրոս և յաջորդք նորա՝ փոխանորդք Քրիստոսի, որպէս և առ հասարակ ամենայն եկեղեցի չընկալան այլ իշխանութիւն՝ բայց միայն ՚ի վերայ իւրոց հոգեւորաց պատշաճելոց առ յաւիտենական փրկութիւն, և ոչ ՚ի վերայ աշխարհական և ժամանակաւոր իրաց. որպէս ուսուցանէ մեզ և նոյն ինքն Քրիստոս յասել անդ թէ “Իմ թագաւորութ՟ի չէ յայսմ աշխարհէ„. և յայլում վայրի՝ թէ “Տուք զկայսերն կայսեր, և զԱստուծոյն Աստուծոյ„։ Նմին իրի հարկ է անսալ խրատու և պատուիրանի սրբոյն Պօղոսի. “Ամենայն անձն որ ընդ իշխանութեամբ իցէ՝ ՚ի հնազանդութեան կացցէ. քանզի ոչ ուստեք է իշխանութիւն եթէ ոչ յԱստուծոյ, և որ են՝ յԱստուծոյ կարգեալ են. այսուհետև որ հակառակ կայ իշխանութեան՝ Աստուծոյ հրամանին հակառակ կայ„։ Վասն որոյ յայտ առնեմք, թէ թագաւորք ՚ի հրամանէն Աստուծոյ ոչ են ներքոյ անկեալք եկեղեցական իշխանութեան յաշխարհական և ՚ի ժամանակաւոր գործս. վասն որոյ չէ մարթ նոցա ուղղակի կամ անուղղակի գահընկէց լինել ՚ի ձեռն եկեղեցական իշխանութեան. և թէ հպատակք նոցա չկարեն ազատանալ ՚ի պարտուպատշաճ հնազանդութենէ և յերդմանէ հաւատարմութեան իւրեանց առ թագաւորն։ Այս վարդապետութ՟ի պիտանի և խաղաղական անդորրութեան հասարակաց, և օգտակար ոչ միայն եկեղեցւոյ այլ և տէրութեան գլխովին՝ համարձայն է սուրբ գրոց, աւանդութեանց հարց եկեղեցւոյ և բազմադէմ օրինակաց սրբոց։

“Երկրորդ՝ անթերի լրութ՟ի իշխանութեան առաքելական սրբոյ աթոռոյն և յաջորդաց սրբոյն Պետրոսի փոխանորդացն Քրիստոսի՝ զոր ունին ՚ի վերայ հոգևոր իրաց, և այնպիսի՝ որպիսի յայտ առնեն վճիռք սրբոյ ընդհանրական ժողովոյն Կոստանդեայ, բովանդակեալքն ՚ի չորրորդ և ՚ի հինգերորդ համախմբութիւնս, հաւանեալքն ՚ի սրբոյ առաքելական գահէն, և հաստատեալք ՚ի գործադրութենէ ամենայն եկեղեցեաց և քահանայապետացն Հռովմայ, և անընդհատ խնամով պահեալք յեկեղեցւոյն Գաղղիոյ, որով անպակաս ունին զուժգնութիւն իւրեանց։ Եւ զի եկեղեցին Գաղղիոյ մերժէ զկարծիս որոց հակառակինն այնոցիկ վճռոց, և ջանահնար լինին անզօր ցուցանել զայնոսիկ՝ որ ասեն թէ ոչ որպէս պարտն է վաւերացեալք են վճիռքն և ոչ իսկ հաստատեալք . կամ թէ առ 'ի դէպս և 'ի ժամանակս հերձուածոյ սահմանեալք լիցեն այնոքիկ ։

“Երրորդ՝ կիրառութ՟ի առաքելական իշխանութ՟ե պարտի լինել ըստ կանոնացն սահմանելոց 'ի Հոգւոյն Աստուծոյ և սրբազնացելոց յընդունելութ՟է հասարակաց ընդ բովանդակ տիեզերս ։ Եւ ևս կանոնք , սովորութիւնք և սահմանադրութիւնք ընկալեալք 'ի տէրութեան և յեկեղեցւոջ Գաղղիոյ պարտին ունել զազդուութիւն իւրեանց , որպէս և սովորութիւնք նախնի հարց մերոց պարտին մնալ անփոփոխք և հաստատունք , որք միօրինակ կարգեալ են յօգուտ առաքելական սըրբոյ աթոռոյն , և նորին հաճութեամբն հաստատեալ ։

“Չորրորդ՝ քահանայապետն Հռովմայ թէպէտ և ունիցի զնախապատիւ իշխանու՟ի 'ի քննութ՟իս խնդրոց հաւատոյ , և վճիռք իւր պատշաճիցեն առ հասարակ ամենայն եկեղեցեաց և առ իւրաքանչիւր 'ի նոցանէ առանձինն , սակայն դատաստան նորա մարթի ուղղագրել՝ եթէ ոչ համաձայն գտցի հաւանութեան եկեղեցւոյ ։

“Ահա այսոքիկ են սահմանք զորս ընկալաք 'ի հարցն մերոց յառաջնոց , և միաբան հաւանութեամբ կամ եղև մեզ առաքել առ ամենայն եկեղեցիս Գաղղիոյ և առ ամենայն տեսուչս , որք առաջնորդութեամբ Հոգւոյն սրբոյ հովուեն զժողովուրդս , զի ամենեքին միաբան զնոյն քարոզեսցուք , և համաշունչք միախորհուրդք կալցուք զնոյն վարդապետութիւն ,, ։

Արդ 'ի տալ զտևական հաստատութ՟ի չորեցունց յօդուածոցս այսոցիկ (որք առժամն ծանր թուեցան բազմաց , բայց յետոյ ընդունելի եղեն բազմաց յուղղափառաց), պատուէր ետ թագաւորն զօրինակ նորին սփռել յամենայն սահմանս տէրութեան իւրոյ , և արձանագրել 'ի համօրէն դիւանս ատենակալաց և յամենայն վարժարանս աստուածաբանութեան ։ Ուսումնարանն Փարիզու յետ ժամանակաց ինչ անպատրուակ ծանոյց և յայտ արար զկարծիս իւր 'ի վերայ իշխանութեան ժողովոց և եպիսկոպոսաց ։ Նոյնպէս հերքեաց զվարդապետութիւնն քաղեալ 'ի հովուական մատենէ արքեպիսկոպոսին Ստրիգոնիոյ՝ ընդդէմ նախայիշատակեալ յայտարարութեան գղերց Գաղղիոյ։ Բովանդակութիւն այնր հովուական ճառի էր՝ թէ դատաստանն 'ի հակառակութիւնս հաւատոյ պատշաճի աթոռոյն և եթ։ Զհովուական ճառս ընթերցումն արգել ժողով խորհրդականացն Փարիզու յամին 1683։

Չորեցունց յօդուածոց ժողովոյ գղերցն Գաղղիոյ հակառակեցան յոյժ այլք յաստուածաբանից. վասն որոյ տպագրեցան իսկ բազում մատեանք ընդդէմ վարդապետութեան եկեղեցւոյն Գաղղիոյ։ Յովհաննէս Թովմաս Ռոքաբերթի յամին 1670 ընտրեալն յընդհանրական մեծաւոր կարգին Դոմինիկեանց, և յամին 1676 արքեպիսկոպոս Վալենցա քաղաքի, և ապա հանրական գլուխ ատենի սրբազննութեան Սպանիոյ, յամին 1693 եհան 'ի լոյս զերեքհատորեան մատեանսն կանոնական վարդապետութեանց ընդդէմ յայտարարութեան գղերցն Գաղղիոյ։ Յետ այնորիկ հաւաքեաց 'ի քսան և մի հատորս մեծամեծս զամենայն գրուածսն պատշաճեալս 'ի նոյն խնդիր, և ծախիւք իւրովք ետ տպագրել 'ի Հռովմ զընդարձակ հաւաքումն զայն։ Մատեան նորա յաղագս իշխանութեան քահանայապետին կարի յոյժ հաճելի գտաւ 'ի Սպանիա և յԻտալիա, բայց 'ի Գաղղիա համարեցան վարդապետութիւնք նորա բազում ուրեք հակառակ սուրբ գրոց, աւանդութեան և բանից հարց։

Ի հերքումն կարծեաց մատենագրիս, որպէս և այլոց համախոհ կուսակցաց նորա, կարգեցաւ 'ի թագաւորէն ականաւորն Պոսիւէ պաշտպան կալ չորեցունց յօդուածոց յայտարարութեան գղերցն Գաղղիոյ։ Զյանձնարարութիւն արքային տարաւ նա 'ի գլուխ մեկն և ամոք բանիւք ըստ իւրումն իմաստութեան. և 'ի Ջատագովութեան անդ իւրում յայտ առնէ՝ զի վարդապետութիւն եկեղեցւոյն Գաղղիոյ վասն եկեղեցական և աշխարհական իշխանութեանց՝ բովանդակեալն 'ի չորեսին յօդուածսն՝ է նոյն իսկ վարդապետութիւն սուրբ գրոց և աւանդութեան եկեղեցւոյ, և թէ օտար է յոյժ 'ի կարծեաց անտի՝ որով համարին տկարացուցանել կամ նուազել զնախագահութիւն և զիշխանութիւն սրբոյ աթոռոյն և զծայրագոյն քահանայապետին , այլ մանաւանդ զօրացուցանէ զնոսին և պայծառացուցանէ , վերածելով 'ի նախնին իւրեանց վայելչութիւն , մերժելով 'ի բաց զսուտ և զարհամարհ առանձնաշնորհութիւնս զորս տգիտութիւն և մարդահաճութիւն անխտիր յաճախութեամբ յաւելեալ էին 'ի նուաստացուցանել զփառս սրբոյ առաքելական աթոռոյն :

Արտաքին աստուածաբանք զխմանմորաք Գաղղիոյ ոչ դադարեցին երբեք 'ի պնդելոյ՝ թէ յայտարարութիւն կղերոյ Գաղղիոյ իցէ լեալ 'ի յօժարամտութենէ հաճելոյ զկամս թագաւորին՝ քան 'ի նախանձուէ ճըշմարտասիրութեան . Թէպէտ և ոչ թեթև ինչ ասդիւտ իցէ այդ ազգային ժողովոյն , որում և յոլովք 'ի գիտնական և 'ի բազմարդիւն եպիսկոպոսաց գտան բաժանորդք :

Ջանք և խնամք թագաւորին և եկեղեցւոյն Գաղղիոյ 'ի պաշտպանել զյայտարարութիւն ժողովոյ իւրեանց , զայրացոյց յոյժ զաթոռն Հռովմայ , մինչև Ինովկենտիոսի ԺԱ. չկամել շնորհել կոնդակ եկեղեցականացն այնոցիկ գտելոց 'ի նմին ժողովի , որք 'ի թագաւորէն անուանեալ էին 'ի վիճակ եպիսկոպոսութեան : Եւ Լուդովիկոս ԺԴ. ոչ կամելով զի ապա յետինքս այլազգ քան զնախկին անուանեալն յիւրմէ եղիցին 'ի վիճակ հովուական պատուոյ , արգել նոցա չդիմել 'ի Հռովմ վասն ընդունելոյ զկոնդակն : Այս դըժուարութիւն և խափանումն տևեաց ցվախճան քահանայապետութեան Ինովկենտիոսի ԺԱ., որ եկաց մնաց անդրդուելի 'ի կարծիս իւր և 'ի դատաստան մըտացն :

ԳԼՈՒԽ ԺԶ.

Նորոգ գրգռել խռովութեան ընդ մէջ արքային Լուդովիկոսի ԺԴ. և քահանայապետին: — Վախճան բանակցութեանց ընդ մէջ Հռովմայ և Գաղղիոյ:

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ էր 'ի Հռոմ՝ զի պալատք դեսպանաց արքայից և բնակարանք պաշտօնէից նոցա առանձնաշնորհ ազատութեամբ էին տեղիք ապաստանի յանցաւորաց, յորս գողք և աւազակք սովոր էին խուսել և զերծանել 'ի պատուհասից. վասն որոյ չէր հնար դատաւորաց նուաճել զչարագործս, և խնամ տանել անդորրութեան հասարակաց: Ինովկենտիոս ԺԱ. կամելով զարման մատուցանել այնմ անկարգ սովորութեան, որ նպաստաւոր էր չարագործաց եւեթ, յամին 1687 առանձին կոնդակաւ ունայնացոյց զայն առանձնաշնորհ ազատութիւն ամենայն դեսպանաց, սպառնալով նզովս այնոցիկ որք կամիցին պաշտպանել զչարագործս:

Իմաստուն և օգտակար իրացս անընդդիմակ հաւանեցան կայսրն Գերմանիոյ և Թագաւորք Սպանիոյ և Լուսիտանիոյ. բայց Լուդովիկոս ԺԴ. արքայն Գաղղիոյ անհաւան գտեալ այնմ, ծանոյց նուիրակին Հռովմայ զդժհաճութիւն իւր, և առաքեաց 'ի Հռոմ իւր դեսպան զմարգիզն Լաւարտէն տանել 'ի գլուխ զկամս Թագաւորին և անփոփոխ պահել զառանձնաշնորհութիւն պալատան իւրոյ: Եկեալ դեսպանն 'ի Հռոմ ութհարիւր արամբք զինու վառելովք, և այնպիսի հանդիսիւ մեծաւ՝ որ թուէր յաւէտ յաղթանակ մարտի քան մուտք լռիկ դեսպանի: Քահանայապետն Ինովկենտիոս ԺԱ. նզովեաց զդեսպանն, բայց նորա առ ոչինչ համարեալ զնզովսն յաճախէր յեկեղեցին Գաղղիացւոց, ուր և ընկալաւ զհաղորդութիւն յաւուր ծննդեանն Քրիստոսի. զոր լուեալ քահանայապետին արգել և փակեաց զեկեղեցին:

Բողոք կալաւ դեսպանն՝ որպէս թէ յիւրում անձին անարգեալ իցեն իրաւունք ազգաց, և թէ յանիրաւի նզովեցաւ 'ի քահանայապետէն: Զոր լուեալ և Լուդովիկոսի ԺԴ. ծանրացատումն եղև յոյժ, և տիրեաց Աւենիոնի գաւառի, որ էր ստացուած սրբոյ աթոռոյն, և զդատ քննութեան նզովիցն յանձն առալ խորհրդոյ ատենականաց, որք նոյնպէս բողոքելով ընդդէմ կոնդակի քահանայապետին՝ պատշաճ վարկան գումարել ժողով, և կացուցանել առանձին պատրիարգ զոք անկախ 'ի Հռովմայ :

Լուդովիկոս ԺԴ. զանգիտեալ 'ի խորհրդոյ անտի՝ որ պատճառք էր երկպառակութեան, գրեաց ինքնին ձեռամբ իւրով առ քահանայապետն, և առանց զեկուցանելոյ ինչ իւրում դեսպանին՝ առաքեաց 'ի Հռովմ զայն 'ի մտերմաց իւրոց, յորոյ 'ի ժամանելն անդր չեղև նմա հնար մատչել առ քահանայապետն, որ մնացեալ 'ի խօսս իւր գլացաւ միշտ տալ զկոնդակս հաստատութեան և ձեռնադրութեան եպիսկոպոսաց անուանելոց 'ի թագաւորէն : Զայն տեսեալ արքեպիսկոպոսաց և եպիսկոպոսաց գտելոց 'ի Փարիզ քաղաքի՝ հաճեցան ընդ բողոքսն եղեալս յընդհանրական արքունի գործակալէն . ընդ որս միաբանեցաւ և համալսարանն հանդերձ զգերօք մայրաքաղաքին :

Թուէր իմն եթէ մահուամբ Ինովկենտիոսի քահանայապետի դադարեսցեն յոյզք շփոթիցն . քանզի մեռաւ նա յամին 1689, կալեալ զաթոռ քահանայապետութ՟է զամս իբր երեքտասան և յաջորդեաց զնա Աղեքսանդր Ը Օթթոպոնի վենետիկեցի, որ 'ի նստել իւրում յաթոռ քահանայապետութեան յօժարամիտ զանձն եցոյց 'ի հաշտութիւն ընդ Լուդովիկոսի արքայի. վասն որոյ և թագաւորն 'ի դիւրացուցանել զայն՝ կամակար հրաժարեցաւ յառանձնաշնորհութենէ ազատութեան դեսպանական պալատան Հռովմայ, և դարձոյց յետս զԱւենիոն քաղաք և զկոմսութիւն այնր գաւառի : Այլ յայն և այնպէս ոչ յաջողեցաւ Աղեքսանդրի կատարել զհաշտութիւնն 'ի պատճառս ժամանելոյ օրհասին յետ վեշտասան ամսոց գահակալութեանն :

Զկնի նորա յամին 1691 ընտրեցաւ 'ի քահանայապետութիւն Ինովկենտիոս ԺԲ. Նէապոլսեցի 'ի Փինիաթելլի տոհմէ, այր խաղաղասէր և հանճարեղ : Այլ զի ընդ այն ժամանակս և արքայն Լուդովիկոս 'ի հոգս էր վասն ընդերկար պատերազմութեան երեսնից և ւելի եւ եպիսկոպոսական աթոռոյ յիւրում Թագաւորութենէ, յետ ըստ կարի մեղմելոյ երկուստեք ըղձահանջմունս իւրեանց, եւ առաջի ածելոյ զանազան հնարս խաղաղութեան, հաստատեցաւ զի անուանեալքն յեպիսկոպոսութիւն գրեսցեն առանձինն նամակս հպատակութեան առ քահանայապետն 'ի հանդերձ զնա, յայտ առնելով զմիտս իւրեանց ընդ գործեցեալն 'ի հանրական ազգային ժողովոյ անտի գեղջն Կաղզւոյ յերկուսին ամսն 1681 եւ 1682։ Եւ թէ նոքեանք անհաւանք էին սահմանելոյն 'ի նոսա 'ի մեծ իրաւանց եկեղեցւոյ։

Տեսեալ քահանայապետին ընդ հպատակութիւն եպիսկոպոսացս՝ եւ նոցա զկոնդակն. սակայն չորեքին վարդապետութիւնքն մերժեալք 'ի ձեռնադրելի եպիսկոպոսացն յայնցանէ՝ անպակաս քարոզեցան 'ի Գաղղիա իբր ճշմարտութիւն հիմնեալս 'ի բանաւոր փաստս եւ 'ի հնաւանդ սովորութիւն. ըստ որում եւ խորհրդարան իշխանաւորաց Փարիզ քաղաքի վարեցաւ միշտ նոյին սկզբանց՝ թէ չորեքին յօդուածքն այնքան իցեն սատարք եւ ջատագովք ազատութեան եկեղեցւոյն Գաղղիոյ։ Այնպէս գիրք ազգին անխախտ մնալով 'ի սահմանադրութիւն իւրեանց՝ չեղեն մանաւանդ անհաւանութեան եպիսկոպոսացս, որք եւ նախատես զգուշաւորութեամբ առանձնաբար գրեցին առ քահանայապետն՝ զի մի նման իւրեանց համարեսցի յետ կոչման գործեցելոյն յերիցակցաց իւրեանց։

Վախճանեցաւ Ինովկենտիոս ԺԲ. յամին 1700, կալեալ զաթոռ քահանայապետութեան զամս ինն եւ զամիսս երիս։ Եթող անմահական անուն եւ պատկառելի յիշատակ առաջի այնոցիկ որք ճանաչեն զյարգ առաքինութեան եւ զխաղաղութեան։ Ի նմին ամի ընտրեցաւ 'ի քահանայապետութիւն Կղեմէս ԺԱ. Ալբանեցի յԱլբանի տոհմէ, որ ցուցաւ բարեկամ եւ պաշտպան ուսումնական գիտնականաց, մեծագործն եւ պանծալի օրինակ բարեպաշտութեան եկեղեցւոյ, եւ սիրելի հռովմէական ժողովրդեան։

ԳԼՈՒԽ ԺԷ.

Կրօնական վիճակ տէրութեանն Անգղիոյ յեօթնևտասներորդի դարուն ։

Ի ԴԷՊՍ նախընթաց դարու տեսաք՝ եթէ որպէս թագաւորութիւն այն երբեմն բարեխնամն ճշմարիտ և ուղղափառ կրօնից, յետ արքային Հենրիկոսի Ը, որ մոլեգնութեամբ ախտաւոր կրից անուանեաց զանձն գլուխ եկեղեցւոյ, եղև խշտի կամ տեղի ապաւինի մոլորութեանց ։ Փոփոխութիւնքն եղեալք 'ի Հենրիկոսէ 'ի պաշտամանս կրօնի՝ չէին ինչ ծանունք, բայց խնամակալք Եդուարդայ որդւոյ նորա ջանահնար եղեն հիմնել զկալվինականութիւն. զոր և թագուհւոյն Եղիսաբեթի ընկալեալ, կամեցաւ միանգամայն պահել զեպիսկոպոսունս և զձեւս ինչ յեկեղեցական դասակարգութեանց ։

Անգղիացիք տակաւ սովորեցան զհետ երթալ այնմ նորատարած աղանդոյ, որ եղև կրօն համօրէն տէրութեան ։ Բայց իշխանութիւն եպիսկոպոսաց՝ օրինաւոր և պիտանի համարեալն 'ի բազմաց 'ի նոցանէ անգոսնեալ էր 'ի խմբէ երիցականաց, որք 'ի տէրութեան անդ ունէին բազում կուսակիցս ։ Երիցականն անուանեալքս՝ կոչէին ևս Փուրիթանի, այսինքն՝ մաքրականք կամ յստակասէրք, զի համարէին զանձինս հետևողս ճշգրտութեան բանից և խրատուց աւետարանին. վասն որոյ ջան գործէին հաստատել՝ թէ եկեղեցին Քրիստոսի 'ի նախկին յերեսին դարս կատարելապէս լինէր 'ի ծերոց կամ յերիցագունից հասարակաւ. Նմին իրի մերժէին զդասակարգութիւնն սահմանեալ 'ի կաթուղիկէ յեկեղեցւոջ ։ Եւ մոլեգին ապշութեամբ աշակերտեալք անհեթեթ և անամօթելի կարծեաց Կալվինականաց, ոգւով չափ ատէին և անգոսնէին զհակառակորդս իւրեանց ։

Յայսմ վիճակի մոլորանաց աղխտութեան 'ի մեռանել թագուհւոյն Եղիսաբեթի յամին 1603, ամբարձաւ յաթոռ թագաւորութեան Անգղիոյ Յակոբ Ա. արքայ Սկովտիոյ ։ Երիցականք կարծէին եթէ այս թագաւոր սնեալ և դաստիարակեալ 'ի ծոցի իւրեանց՝ նախատաւոր գոլի ազանդոյ նոցա , բայց վրիպեցան յակնկալութենէն . զի Յակոբ նախանձաւորն իշխանութեան իւրոյ և անձնահաճ՝ զխուրութեան մարմնոյ և զբօսանաց , կարի յոյժ խնդամոլ էր բաղձանաց ինքնագլխութեան նոցա , վասն որոյ ոչ 'ի դէպ համարեցաւ հաճել զնոսին և անսալ թելադրութեան նոցա յիրաւամտութեան , յորում ազանդ երիցականաց չէր կրօն հասարակաց . Սակայն և այնպէս կամք եղեն թագաւորին , զի գրեթէ անդրդուական անուանեալ եկեղեցւոյն՝ յամին 1604 գումարեալ 'ի Հեմփթընքուր աւանի , խօսակից լիցին ընդ նոսա սակս սոցին իրաց . Նոյն 'ի ժողովի չեղեն զոյգք 'ի վերայ հիմնական մասանց հաւատոյ , այլ միայն անտղոքելի բանակռուութիւնք սակս արարողութեանց ինչ որք պատճառք էին հակառակութեան և բուռն տարաձայնութեան երկոցունց կողմանց , որպիսիք էին սովորութիւնն խաչակնքելոյ , վասն մատանւոյ ամուսնութեան , վասն կիրառութեան վառուակի կամ՝ կարճ՝ պճղնաւորի , վասն խոնարհելոյ զգլուխ 'ի լսել անուանն Յիսուսի , և այլոց այսպիսեաց որք էին գլխաւոր նախատակք վիճից . Պատճառ բանակռիւ խօսակցութեանս եղև զոյգն ինչ փոփոխութիւն 'ի մաշտոցս պաշտամանց՝ անբաւական 'ի հանդարտել զամբոխեալ ոգիս և զսիրտս հակառակողաց .

Ի համախոսութենէ աստի առաւել ևս զայրացան երիցականք , զի ոչ կարացին ժամանել զխնդրանս իւրեանց անհետ առնելոյ զեպիսկոպոսական պատիւն . Յակոբ թագաւոր 'ի համախոսութեան անդ առէպ ասացեալ էր առ նոսա .“ Ոչ եպիսկոպոս ոք , և ոչ թագաւոր„ . որով կամէր յայտ առնել զկարևորութիւն եպիսկոպոսական պատուոյ . զի և ոչ դադարեցաւ երբէք 'ի պաշտպանելոյ զեպիսկոպոսական իշխանութիւնն , զոր համարէր կարի օգտակար իշխանութեան թագաւորաց . յոր սակս իսկ ինքնին կանխաւ հաստատեալ էր զնոյն 'ի Սկովտիա , ուստի բողոքականք նորաղանդք անհետ արարեալ էին զայն .

ԳԼՈՒԽ ԺԲ.

Թագաւորել և եղերեն մահ Կարոլոսի Ա.

ԿԱՐՈԼՈՍ Ա. արքայ Անգղիոյ, որ յամին 1625 յաջորդեաց զՅակոբ հայր իւր՝ զհետ երթեալ շաւղաց նորա՝ կուսակից էր եպիսկոպոսաց. և զի սիրող էր եկեղեցական արարողութեանց, վասն որոյ և կամէր մուծանել զայնոսիկ իբր կարևոր մասունս աստուածային պաշտաման։ Եւ խրախուսեալ առ այն 'ի խրատուէ Գուլիելմոսի Լաւդայ եպիսկոպոսին Լոնդոնի, որ և յետոյ արքեպիսկոպոս եղաւ Կանտորբերիոյ, առաքեաց առ Սկովտացիս զկանոնս կամ զմաշտոյն որովք պարտ էր նոցա վարիլ 'ի պաշտամանս և յեկեղեցական կարգաւորութիւնս։

Ժողովուրդն Սկովտիոյ տխմարք և մոլեգինք՝ անյօժարամիտք յընդունելութիւն այնպիսի կանոնաց և մանաւանդ մոլար ուսմամբք՝ զրգռեցան յանդիմուականաց տէրութեան, և 'ի դասէ անտի երիցականաց՝ որք առ հասարակ թշնամիք էին եպիսկոպոսական պատուոյ, ոմանք առ նախանձու իշխանութեան, և այլք առաւելագոյն յորդորեալ 'ի նորասիրութենէ ռամկապետական տեսչութեան, որում ցանկային յոյժ։

Արդ 'ի հանդիսանալն յատեան եպիսկոպոսին Էդինպուրկի վասն հրատարակելոյ զմաշտոյն կամ զկանոնագիրն Կարոլոսի, անդէն առ նմին 'ի խուժելոյ մոլեգնեալ ամբոխին ընկալաւ եպիսկոպոսն հարուածս գաւազանաց 'ի գլուխ իւր և արտաքսեցաւ յեկեղեցւոյն, և ժողովուրդն առ հասարակ խրախուսեալ յապստամբութիւն։ Ի հանդարտել զխաղաղութիւն խռովեալ ամբոխին գումարեցան չորեքին ազգային ժողովք յԷտինպուրկ քաղաք Սկովտիոյ. և ապա յամին 1638 յօրինեցին զհամբաւաւորն զայն Դաշնակցութիւն, որով երդմամբ չափ խոստացան պաշտպան կալ զաւանութեան հաւատոյ իւրեանց ընդդէմ հռովմէական աթոռոյ, և մերժել զամենայն նորաձեւութիւնս նորատուորս այնմ. միանգամայն թեակից լինել միմեանց 'ի պահպանութիւն անգղիական կրօնի և ազգային իշխանութեան ։ Ձեռն արկին 'ի զէնս և յարուցին մարտս պատերազմի, որ միօրինակ վնասակար եղև անգղիական եկեղեցւոյն, և թագաւորին և համօրէն ազգութեան ։ Երիցականք Անգղիոյ միաբանեալ ընդ համախոհս Սկովտացւոց՝ ունայնացուցին զեպիսկոպոսական պատիւ յերկուսին թագաւորութիւնս, և 'ի նմին ժամանակի ջնջեցին զմնացոյն կամ զեկեղեցական սահմանադրութիւնս և զամենայն կարգս պաշտամանց եկեղեցւոյն Անգղիոյ ։ Իսկ որք միանգամ չկամեցան հնազանդել այնմ նորանոր օրինադրութեան՝ զրկեցան յամենայն իշխանական պատուոյ ։

Կարոլոս թագաւոր բռնադատեցաւ զօրաժողով լինել 'ի մարտ ընդդէմ ապստամբ ժողովրդեան իւրոյ, բայց հարկ էր նմա կռուիլ ոչ միայն ընդ Սկովտացիս, այլ և պատերազմել զանձն յընտանի թշնամեաց անտի զորս ունէր յԱնգղիա 'ի ժողովն անդ խորհրդականաց ։ Զայն ժամ պատեհ համարեալ նոցա՝ պատառեցին զպատրուակ կեղծաւորութեանն և յայտնեցին զթըշնամութիւն իւրեանց առ թագաւորն ։ կարգեցին բանակ զօրաց և ետուն 'ի ձեռս երեցունց քաջամարտիկ զօրավարացն Ֆէրֆէքսի, Կրոմուէլի և Լամպերթի, որք յամենայն մրցմունս իւրեանց յաղթող գտան ընդդէմ զօրացն Կարոլոսի, որ հուսկ յետոյ յամին 1645, զկնի կորուսանելոյ զպատերազմն որ 'ի Նազէբըյ, անձն ունելով դաւանել հաւատարմութիւն 'ի Սկովտացիս՝ անկաւ 'ի բանակս նոցա ։ Նոքա զառաջինն ընկալան զնա սիրով, բայց յետոյ մատնութեամբ նոցին իսկ Սկովտացւոց իբրև գերի ածաւ 'ի Լոնդոն քաղաք, և Կրոմուէլ զօրագլուխ նենգամիտն և չարամտախոհն՝ քան զերկոսին ընկերս իւր՝ շահեցաւ զսիրտ ամենայն զօրաց, և ետ յանձնել զթագաւորն 'ի ձեռս գործակալաց ատենին, որք առ հասարակ էին երիցականք, առնել ըղձուրիչ յանցանաց նորա ։

Կարոլոս Ա. դատապարտեալ 'ի գլխատութիւն, կատարեցաւ մճիւ մահու նորա յելս փետրուարի յամին 1649, ծանր ապստամբութեամբ 'ի նախատինս համօրէն ազգին ։ Արիութիւնն որով ընկալաւ զանարգական մահն՝ շարժեաց զամենեսին 'ի կարեկցութիւն ընդ հանօրէն Եւրոպա, և 'ի նոյա առնելս և անդամնելս եցոյց զգործադիրս ամենայն դատաստանին ։

Արդ 'ի բառնալ արքայական իշխանութեան՝ տէրութիւն յանձն եղև յարիւնաշաղախ ձեռս ժողովրդեան ։ Եւ Կրոմուէլ գլխաւոր պատճառք այսր արքայասպանութեան՝ կարգեցաւ ընդհանուր գլուխ ամենայն զօրաց տէրութեան, և ընդ անուամբ խնամակալուի թագաւորութեան՝ եղև բռնակալ ։ Առ իշխանութեամբ նորա երիցականք 'ի կարգի եղեն զամենայն ինչ ըստ հաճոյս իւրեանց, որով Անգղիական անուանեալ եկեղեցին էառ զճաշակ վատթարագոյն վիճակի քան զոր ունէրն կանխաւ ։ զի նախանձ զխռեալ բարեկարգութեան նորա եղեն ցնորք և անհեթեթ մոլեգնութիւնք ։ Ոմանք 'ի նոցանէ համարէին զանձինս աստուածազգեցս, և էին այլք անօրէնք և չարագործք, վրիժառուք ծանր ծանր յանցանաց, որոց վարդապետութիւն և առած ամբարշտութե էր՝ թէ « Ամենայն ինչ օրինաւոր է այնոցիկ որք կարգեալ իցեն 'ի կատարել գործս մեծամեծս, մանաւանդ յորժամ՝ առհամանք տէրութեանց իցեն 'ի վտանգի անսալոր աստուածպաշտութեան » ։ Այսմ վարդապետութեան զհետ չոգաւ և Կրոմուէլ յիւրում տեսչութեան, որպէս և յընթացս կենաց իւրոց ։

Աղանդ երիցականաց նշանաւոր հանդիսացաւ 'ի մէջ մոլեգնելոց, զի յոլովք 'ի նոցանէ հանապազօր սպասէին վերստին գալստեանն Քրիստոսի առ 'ի հիմնել 'ի վերայ երկրի զնոր թագաւորութիւն, զոր կոչէին Հինգերորդ միապետական իշխանութիւն ։ Այլք փափաքէին յաստուածուստ նորոյ յայտնութեան լուսանի և պայծառագունի քան զկանխաւ եղեալն, որոյ վասն անուանեցան Ակնկալք ։

Անսանձութիւնս այսոքիկ պատճառք և թելադիրք եղեն անհաստատութեան և անզգամ յանդգնութեանց, որք ազդեցութեան կրօնի ընծայելով զնոցա մոլեգնութեան՝ զօրացուցին զգաղափարս անհաւատութեան ։ Կրոմուէլ որ զաւազանն ծանր առնէր զամենայն զայնպիսի աղանդօքն՝ Հեթանոսս կոչելով զնոսին, ապա միաբանէր ընդ անհաստատս՝ սակս ամրութեան իւրոյ ընդդէմ ուղղափառ եկեղեցւոյ ։

ԳԼՈՒԽ ԺԹ․

Թագաւորութիւն Կարոլոսի Բ․ և Յակոբայ Բ։

ՅԵՏ մահուան նենգամիտ և արիւնախանձ բռնակալին Կրոմուէլայ՝ որ կերպարանափոխ արար զպետութիւնն ՚ի գլխովին, և զանգղիական եկեղեցին, յամին 1660 Կարոլոս Բ․ որդի Կարոլոսի Ա․ ՚ի հաւանութենէ ազգին ամբարձաւ յաթոռ թագաւորութեանն՝ յորմէ զրկեցաւ հայր նորա ։ Նա եկեղեցին Անգղիոյ բռնաբար նուաճեալն իբր ՚ի քսան ամաց հետէ՝ ստացաւ զառաջին պայծառութիւն իւր ․ և յանդրէն հաստատիլ եպիսկոպոսաց յաթոռ իւրեանց՝ դարձուցան ՚ի նոսա եկեղեցիքն յափշտակեալք յիշխանութենէ նոցա յառաջին ՚ի բռնակալ կառավարութենէն , և կրօնական պաշտամունք և կարգադրութիւնք առին զնոյն ձև կերպարանաց՝ զոր ունէին յաւուրս թագաւորութեան Եղիսաբեթի դշխոյի ։

Յամի տեառն 1661 առանձին հրամանաւ ժողովոյ խորհրդականաց ամենայն երիցական պաշտօնատարք ստիպեցան հպատակել օրինաց մեծի եկեղեցւոյ տէրութ՟են , և զի որք ոչն հպատակեսցին՝ մերժեսցին յիւրաքանչիւր պաշտամանց ։ Նա այսպէս բռնադատեալք ՚ի հանդարտութիւն երիցականք և ամենայն ժողովուրդն անգղիական եկեղեցւոյ զմոլեգին կատաղութ՟ի իւրեանց դարձուցին ընդդէմ հռովմէական եկեղեցւոյ ։ Ատելութիւն նոցա կանգառեալ արմատացաւ անդէպ և անիրաւ զրպարտութե՟ իմն ՚ի վերայ ուղղափառաց , զի յամին 1678 , անօրէն ոմն Տիտոս Օաթէս անուն երբեմն յիսուսեան կրօնաւոր և քարոզիչ , ապա կարգուրաց և յետոյ անաստուած , ամբաստան եղև երդմամբ՝ թէ համօրէն ուղղափառք Անգղիացւոց միաբանեալ իցեն ընդ քահանայապետին , ընդ յիսուսեանց՝ և ընդ Գաղղիացւոց և ընդ Սպանիացւոց դաւաճանել կենաց Կարոլոսի արքայի , և զինել ընդդէմ բողոքարկու անգղիացւոց , և վախճան միաբանութեան նոցա , ասէր անօրէնն , իցէ մահուամբ թագաւորին և հաւատարիմ հպատակաց նորա հաստատել յԱնգղիա ղուղղափառ հաւատս. և զԹագաւորութիւնն տալ դքսին Եորքայ, որ իբրև 'ի պարգևի մասին ընկալցի զայն 'ի պապէն. և թէ ընդհանրական մեծաւորն յիսուսեանց հանդերձեալ իցէ լինել ուղղիչ և կարգադիր ամենայն գործոց և պաշտամանց տէրութեանն. Եւ 'ի փափագել զցասումն վրէժխնդրութեան ունկըն դրաց՝ յաւել անօրէնն և զայն, թէ վաղու ես խոստացեալ կայցէ բազմաթիւ զումար դրամոյ այնմ՝ որ սպանցէ զԿարոլոս Բ.:

Թէպէտ և անհեթեթ էին զրպարտութիւնքն, թէպէտ և ամենևին ցուցաւ ստութիւն ամբաստանութեանցն և յայտ յանդիման նշմարեցաւ յեղյեղուկ վկայիցն չարութիւն, սակայն և այնպէս իշխանացն Սթաֆֆորտ և այլ ականաւոր բազմարգին անձինք ընդ քանի մի յիսուսեան քահանայից դատապարտեցան 'ի մահ իբր վնասապարտք յանցանաց մատնութե հայրենեաց: Վասն որոյ ուղղափառ կրօնն յանիրաւի կասկածելի ցուցաւ ամենայն Անգղիացւոց, և յայնմ հետէ հատաւ յոյս վերստին հաստատութեան ուղղափառ հաւատոյ 'ի կղզւոջն յայնմիկ. ուր սկսան անպակաս զաւան զրպարտութիւնք 'ի շարժել զատելութիւն հասարակաց ընդդէմ ուղղափառաց:

Յետ իրացս այսոցիկ մահուանն Կարոլոսի Բ. որ եղև յամին 1685 յոյս իմն արծարծեցաւ յուղղափառս բարեգուշակ ելից. զի կալաւ զաթոռն դուքսն Եորքայ՝ եղբայր փոխանցելոյն, և անուանեցաւ Յակոբ Բ.: Սա 'ի բազում ժամանակաց հետէ յօժարամիտ յուղղափառ հաւատս, զոր յայտնապէս դաւանէր, իբրև նստաւ յաթոռ թագաւորութեանն՝ ջանացաւ տեսանել զնոյն դաւանութիւն և 'ի հրապարակի իւր. բայց զովելի փափաք նորա անխոհեմ օրինակաւ 'ի գործ եդեալ՝ մեծաց վնասուց եղև պատճառք: Քանզի 'ի սկզբանն անդ կամեցաւ ցրել և յետս կոչել զանիրաւ երդումն ազգին ընդդէմ ուղղափառ վարդապետութեան, և ոչնչացուցանել զպատիժս սահմանեալս վասն ուղղափառաց, զորս նախատական անուամբ պապադաւանս կամ պապականս կոչէին: Արդ 'ի սկզբանէ սաջարկութն իրացս գուշակէին ապագայքն՝ որք հանդերձեալ էին զհետ գալ. զի 'ի վերին և 'ի ստորին անեակս ատենից, որպէս և 'ի խումբս կամ 'ի բանակս ցամաքային և ծովական զօրաց յաճախեսցեն պաշտօնատեարք կուսակիցք և կրօնակիցք արքայի, և այս շատ էր 'ի յուզել զանհանդարտ և զկասկածոտ սիրտս Անգղիացւոց: Յայս կասկած երկիւղի հաստատեցան և ևս 'ի շնորհել անդ թագաւորին ամենայն հպատակաց իւրոց զազատութիւն խղճի մտաց, և համարեցան թէ թագաւորն խնդրէ տալ համարձակութիւն պաշտաման ուղղափառ կրօնից: Խեղաթիւր մտօք 'ի կարծիս եղեն դարձեալ թէ հայրն Փիթէռ յիսուսեան կրօնաւոր՝ խոստովանահայր արքայի՝ ակնկալութեամբ պատուոյ կարդինալութեան, կամ գէթ ժամանելոյ յաթոռ նախագահութեան Անգղիոյ, թելադրեալ իցէ արքային զայս խորհուրդ: Ի նոյն կարծիս առաւելապէս հաստատեցան՝ տեսանելով զթագաւորն օտարացեալ յանգղիական եկեղեցւոյ, և զի առանց ինչ ակնածութեան երկիւղի խորհեցաւ առաքել 'ի Հռովմ դեսպան զոք անսովոր, և ընդունել 'ի Լոնդոն մայրաքաղաք զնուիրակ պապին:

Նմին իրի արք խռովարարք, որք յոյժ բազմաթիւ էին յերկրի անդ, անհանդարտ և խռովասէր բարուքն զանգիտեալք կամ կեղծեալ զահ և զերկիւղ վտանգելոյ անգղիական կրօնին իւրեանց և ազատութեան, յամին 1688 կոչեցին 'ի ձեռնտուութիւն զԳուլիելմոս Նասաւ զդուքսն Օրանժի զփեսայն Յակոբայ, որ և յորդորեալ յիշխանասիրութենէ՝ եկն բառնալ յաներոյ իւրմէ զթագ արքայութեանն, զոր և 'ի բազում ամաց հետէ գաղտնի հնարիւք խորհէր յինքն կորզել: Արդ իբրև անց նա յԱնգղիա, բազումք արք ականաւորք և զօրագլուխք անգղիացիք խուռն ընթացան միաբանել ընդ նմա և զօրացուցանել զբանակ նորին: Յակոբ թագաւոր լքեալ 'ի բարեկամաց իւրոց և 'ի Գէորգեայ փեսայէ իւրմէ յարքայէն Դանիմարքայ, և 'ի դստերէ իւրմէ սիրելւոյ, գոչեաց յերկինս և ասէ. “Ո՛վ տէր, դու ինքնին գթասցիս յիմ վերայ, զի աւանիկ և որդիք իմ հարազատք լքին զիս և օտարացան յինէն„:

Յայնմ ապստամբութեան կոմսն Թիրքոնէլ փոխարքայն Իռլանտոյ, որոյ հաւատարմութիւնն յաւերժական յիշատակաց արժանի է, միայնակ կալու զկղզին զայն 'ի հպատակութեան արքային իւրոյ ։ Եւ զի էին 'ի կղզւոջ անդ յոլով ուղղափառք, գումարեաց 'ի նոցունց բանակ բազմաթիւ զօրաց՝ վառեալ նախանձու ճշմարիտ կրօնի ։ Յայն հանդէս զինուորութեան երևեցաւ արիական քաջութիւն և անվեհեր սիրտ բնակչաց կղզւոյն . որոց ինքնակամ ժողովեալ ընդ դրօշու արքայի՝ հանդիսացան իբր զինուորք քաջամարտք 'ի հրահանգս . ալեորեալ ծերք մառչէին 'ի կրթութիւն զինուց իբրև զատոյգ երիտասարդս , մանկունք ձեռնամուխ լինէին 'ի զէնս՝ զորս և տանել իսկ չէին բաւական . նոյնպէս և կանայք՝ թէպէտ և տկարք բնութեամբ՝ կամեցան հաղորդ լինել զինուորական վաստակոց և պատուոյ պաշտպանութեան թագաւորի իւրեանց և ուղղափառ կրօնից ։

Սակայն անարգասաւոր եղև անդրդուելի հաստատութիւն նոցա և անպայման արութիւն և հաւատարմութիւն . զի Յակոբ թագաւոր տեսեալ զապերախտութիւն արքունի պալատականացն , և զոհել դքսին Օրանժի 'ի վերայ հպատակաց իւրոց , բեկաւ սիրտ նորա , և առանց ինչ մառչէից 'ի փոքր պաշտպանութեան անձին՝ լքեալ զաթոռ թագաւորութեան դիմեաց ապաստանել 'ի Գաղղիա , ուր սիրով մեծաւ ասպնջականեցաւ 'ի Լուդովիկոսէ ԺԴ. ըստ արժանի մեծութեան իւրոյ ։ Անդ 'ի Գաղղիա անցոյց զմնացեալ աւուրս կենացն՝ պարապելով 'ի պարտս քրիստոնէական վարուց . և վախճանեցաւ 'ի վեշտասաներորդ աւուր ամսեանն սեպտեմբերի յամի 1701 , 'ի հասակի վաթսուն և ութ ամաց ։ Յաւուրս ինչ յառաջ քան ըզմահն իբր յետին կտակ ասաց առ որդի իւր . " Եթէ երբեք յաջողեսցի քեզ տանել զգահ հայրենեացդ , ներեսցես առ հասարակ իմոց թշնամեացս , սիրեսցես զհպատակս քո , պահեսցես զուղղափառ հաւատս , և կորստական աթոռոյ երկրաւոր թագաւորութեան նախադաս արասցես զյոյս յաւիտենական երջանկութե,, ։

Ուղղափառ հաւատոյ կորուսեալ յԱնգղիա զնեցուկ աջակցութեան իւրոյ արքայից՝ ժամանակս ոչ սակաւ տարագիր եղև անտի ։ Նախանձ բարեկրօնութեան մնացելոյն անդ հաւատացելոց նուաղեաց ևս 'ի պատճառս հանրական ապականութեան բարուց , զոր 'ի ներքս ած անկրօնութիւնն ։ Ալբիոնիք, մայրաքաղաքն և յորդնաթիւ ուսումնականք ծրգեալք անհաւատութեամբ յաւուրս Թագաւորին Կարոլոսի Բ. սկսան սերմանել 'ի ժողովրդեան զմահառիթն զայն ոգի մոլորութեան, որով սակաւ տեսաւ առ նոսա ատելութիւն և անխտրութիւն կրօնի, և արհամարհութիւն ամենայն ակնածելի ճշմարտութեանց հաւատոյ՝ որք զօրացուցանեն և ամրապնդեն զյոյս և զբարեկրօնութիւն մարդկան ։

ԳԼՈՒԽ Ի.

Նուաճումն աղանդոյ կալվինականաց 'ի Գաղղիա ։

Առ 'ի բովանդակել միահաղոյն զամենայն անցս անցեալս յԱնգղիա՝ զանց արարաք յիշատակել որ ինչ յամին 1685 արժանի յիշատակաց դէպք եղեն պակասելոյ 'ի սպառ և ուժաթափ լինելոյ կալվինականացն 'ի Գաղղիա ։ Յետ զօրանալոյ Լուդովիկոսի ԺԳ. և կործանելոյ 'ի ձեռաց կալվինականաց զՌոշէլ քաղաք, աղանդ նոցա սկսաւ տկարանալ 'ի նմին թագաւորութեան. վասն որոյ և Լուդովիկոս ԺԴ. զկնի հաշտութեն որ 'ի Նիմէկ խորհեցաւ 'ի սպառ խափանել և ջնջել զայն աղանդ, առիթեալ իբր 'ի պարտուց սեպհական պատուոյն՝ որով անուանեալ էր 'ի քահանայապետաց «Ամենաքրիստոնեայ թագաւոր»։ յորմէ յորդորեալ չկամէր յիւրում տէրութեան համարձակութի տալ այլում կրօնի բաց յուղղափառութենէ ։ Սորին վասն առ սակաւ սակաւ բարձան առանձնաշնորհութիւնքն պարգեւեալք բողոքարկու նորաղանդից ։ Քանդեցաւ և ասձարն Սամիւրի շնորհեալ Տիւփլէսիսեայ վասն ազգատոհմին իւրոյ ։ Նոյնպէս խափանեցան ընկերութիւնք համախմբութեանց բողոքարկուաց. որպէս և սենեակք ատենակալացն, որոց կէսք կալվինականք էին և կէսքն ուղղափառք, և եդաւ դարձեալ մարդահարկ 'ի վերայ քարոզչաց նոցա ։ Արգելան և ամուսնութիւնք ընդ այլակրօնս. ուղղափառ մանկաբարձք ընկալան զհրաման 'ի դիպուածս վտանգի մահուան մկրտելոյ զնորածին մանկունս կալվինականաց. որոց և թոյլ տուեալ էր ընդունել զուղղափառութիւն 'ի ժամանէն 'ի հասակ եօթն ամաց. այս 'ի լինել նոցին չորեքտասանամեայ՝ պարտական էին ծնողքն տալ իւրեանց թոշակօք զնել զնոսա 'ի դպրոց մի ուր հրահանգեալ հաստատեսցին 'ի հաւատս ուղղափառութեան: Յայսոսիկ զգուշաւորութիւնս յաւել Թագաւորն և զայն, չտալ երբէք բողոքարկուաց զպաշտամունս ատենակալութեան և ոչ զարքունի գործակալութիւնս. և ընդ հակառակն առատապարգև թոշակօք ձոխացուցանէր զդարձեալսն յուղղափառութիւն:

Ընդ նոյն ժամանակս յորում Լուդովիկոս ԺԴ. ահաբեկ առնէր զբողոքարկուս՝ յայտնի և անպատրուակ ցուցանելով զտհաճութիւն իւր ընդ նոսա, բազմաթիւ քարոզիչք առաքելաշնորհք սփռեալք 'ի գաւառս գաւառս՝ ջանահնար լինէին աստուածային բանիւք վարդապետել, բարի օրինակօք և հոգեշահ հրահանգօք ածել զնոսին 'ի ճշմարտութի: Բայց քանզի պաշտօնեայք կալվինական աղանդոյ բուռն հակառակէին դարձի ժողովրդեան յուղղափառութիւն, Լուդովիկոս արքայ անբաւական և անզօր համարելով զհնարս քարոզութեան և հրահանգութեան առաքելաքան մշակաց՝ կամեցաւ ազդողագոյն ևս հնարս 'ի կիր արկեալ բնաջինջ առնել զկալվինեանսն 'ի թագաւորութենէն. վասն որոյ խորհեցաւ ունայնացուցանել և յետս կոչել զհրովարտակն Նանթեսի, զոր հարկ ժամանակին և ներողամտութիւնն Հենրիկոսի Դ. յորդորեալ էր առնել:

Զայս ծանր և դժուարին խորհուրդ առաջարկեալ յիւրում ժողովի 'ի լսել զհաւանութիւն և զորոշումն խորհրդականաց, եղեն այլ և այլ կարծիք և ոչ սակաւ երկմտութիւնք, զի մի գուցէ շահել կամելով զանձն 'ի հպատակութիւն եկեղեցւոյ՝ զրկեսցի տէրութիւնն 'ի բազմաթիւ ժողովրդենէ:

Այլ մինչդեռ զգուշաւոր խորհրդով հաւանեալ էին զհետ երթալ քաղցրանոյշ ընթացից 'ի շահել զմոլորեալսն, առաջի առնէին՝ թէ զխիղճ մտաց չէ մարթ յաղթահարել բռնութեամբ, և թէ խստութիւնն փոխանակ շահելոյ զմիտս՝ սովոր է յուզել և խռովուցանել զոգիս. և թէ բարի նախանձուն հարկ է կանոնաւորիլ խոհեմութեամբ. և թէպէտ և պատշաճ է թագաւորաց խնամ տանել օգտի ազգին հաւատոյ ժողովրդեան, բայց և զհասարակաց խաղաղութիւնն անվրդով պահել՝ անհրաժեշտ պարտք են նոցա: Զի եթէ խափանեսցի կալվինականաց կիրառութի պաշտամանն աղանդոյ իւրեանց, զայրագնեալ մտօք ձգեսցին 'ի կատաղի յուսահատութիւն. և զի թիւ բազմութեան նոցա 'ի բովանդակ թագաւորութեան է իբր միլիոն մի և կէս, յորս կան և յոլով փարթամ վաճառականք, բազում նաւավարք և զինուորք, յաճախագոյն ևս արհեստաւորք ճարտարք յամենայն ազգս ձեռակերտաց, շատ ևս զօրապետք փորձք և հմուտք զինուորական արութեանց, եթէ ոչ շահեսցուք զնոսա քաղցրութեամբ, ստիպեսցին հարկաւ կամ կամովին վտարանդի լեալ տարագէմ երթալ 'ի հայրենեաց և հաստատել բնակութիւն յերկիր օտար, և կամ ըմբոստանալ և մարտերել յապստամբութիւն. առաջնոյն լեալ պատճառք յոգունց վնասուց աւերութեան, և երկրորդումն դառն և անողոքելի խռովութեան. վասն որոյ լաւ ևս իցէ, ասէին, շնորհել նոցա տաճարս կամ աղօթատեղիս ինչ ու 'ի չափաւորացանել զյորդումն 'ի նոցունց. թող զի և կարի յամառքն 'ի նոսա տեսեալ զներողամտութիւն տէրութեան կատարելոյ զպաշտամանս կրօնի իւրեանց՝ մնասցեն 'ի հանդարտութեան. իսկ ընդ հակառակն՝ 'ի սպառ հարստահարութեամբ բռնադատեսցին հաւաքիլ 'ի գաղտնածածուկ արգելեալ համախմբութիւս, առ ան հարկեալ զպատուէրս արքայի, և ստահակութեամբ լինիցին յայտնի յանցաւորք, զորս հարկն ստիպեսցէ պատուհասակոծ առնել:

Նմանաւոր պատճառօք այսոքիկ՝ ըստ իւրոյ ինչ արժանիք ակնածութեան՝ անհաճոյ թուեցան յօժարամտելոյն 'ի խստութիւն, որք պնդէին թէ չիք երկիւղ 'ի սակաւաթիւ, յընկճեալ, յերկչոտ և յանզօրս ամբոխէ: Եթէ, ասեն, հեծեալք մանք եթէ բաւական եղեն շահել զբազմութիւ անձինս 'ի նոցունց, ևս և զքաղաքս ողջոյն, զինչ ոչ արասցէ յայտարարութի կամաց և հաճութեան արքայի: Նշանաւորքն 'ի նոցանէ աներկիւղ յառաջադէմ լիցին 'ի սոյն զօրինակ բարի, և աներկմիտ զհետ երթիցեն նոցա բազմութիւնք ժողովրդոց ։ Եւ ընդէր չիցէ արդ դէպ ժամանակ 'ի տալ զյետին հարուած մոլորութեանն և ապըստամբութեանց ։ Նոյն ինքն ոգի խռովութեան և ստահակութեան՝ որ եղև միշտ կնիք կալվինականաց, տիրէ և ցայսօր 'ի սիրտս նոցա ։ Ապաքէն յայտ սահման մեծութեան և իշխանութեան, յոր հլու և անկեղծ սրտիւ հպատակաց և յաջողութեամբ զինուց եհաս ինքնակալս մեր արքայ, չէք երկիւղ թէ համարձակեսցին նոքա գործել ինչ. բայց թէ յանկարծ յաջողութիւն դադարեսցի լինել մեզ ձեռնտու, խլրտեսցի դարձեալ 'ի նոսա նոյն ոգի խռովութեան և ապստամբութեան, որ միշտ և անպակաս յամենայն ժամանակս տեսաւ 'ի նոսա ։ Վասն որոյ խաղաղութիւն թագաւորութեան և օգուտ կրօնի միօրինակ ստիպեն արմատաքի խլել զայն ։ Արքայդ մեծազօր՝ ահարկու սահմանակցաց իւրոց յոգնաթիւ և քաջավարժ զինուորօք, յումմէ՞ երկնչիցի ։ Եւ միթէ չիցէ՞ պատշաճ բարեպաշտութեան նորա և փառացն 'ի կատարումն ածել զայն ինչ՝ որում վեցեքին նախորդք իւր զհետ եղեալ և ո՛չ մարթացան ։

Պատճառքս այս առաջարկեալք 'ի Թէլլիէ ատենադպրէ և յորդւոյ նորա՝ հաւանեցուցին զմիտս Լուդովիկոսի արքայի ունայնացուցանել զհրովարտակն Նանթէսի. առ որ այնչափ յօժարամիտ գտաւ արքայ, որչափ զի մնացեալ էր անուանն և եթ այնր հրովարտակին՝ ունայնացեալ զօրով ամենայն բովանդակելոյն 'ի նմա 'ի ձեռն զանազան հրովարտակաց նորին իսկ Լուդովիկոսի ԺԴ. յամին 1682, որպէս և 'ի հետագայն ամսն 1683 և 1684 ։ Զի բազում տաճարք և աղօթատեղիք նոցա քանդեալ էին, քարոզիչք կալվինականաց չունէին համարձակութիւն երևել 'ի ժողովրդեան. միանգամայն և պատանիք յօժարամտեալք յուղղափառութիւն զատուցեալ էին 'ի ծնողաց իւրեանց ։ Ակնկալութիւն վարձուց և պարգևաց, ահ պատուհասից դրդուեցուցեալ էին զյոլովս 'ի յամառութենէ ։ Ոմանք ևս դարձեալ էին յուղղափառութիւն առ երկիւղի՝ զի մի՛ տունք բնակութեան իւրեանց գրաւեսցին ընդ երկար 'ի պէտս իջևանի զինուորաց ։ Քանզի 'ի հրամանէ Լուվուայի որդւոյ ատենադպրին՝ խաղացին զօրք նախ 'ի գաւառն Պիէմոն, և տակաւ տարածեալ սփռեցան ընդ համօրէն սահմանս տէրութեանն, ոչ ուրեք գտեալ զօր զինուորս, զի ամենեցուն յետս կացեալ 'ի մոլորութենէ իւրեանց դիւրապատրաստք երևէին 'ի դարձ:

Սոյն սակս եղաւ 'ի գործ յընդերկար ժամանակաց հետէ խորհեալն 'ի Լուդովիկոսէ ԺԴ. և 'ի ձեռն հրովարտակին որ յերեքտասան հոկտեմբերի՝ յամին 1685 ջնջեցաւ հրովարտակն Նանթեսի: Այսու նորոգ յայտարարութեամբ հրաման էր բառնալ ամենայն ազատութեանցն շնորհելոց կալվինականաց, քանդելոյ տաճարաց նոցա և խափանելոյ ամենայն միաբանական հանդիսութեանց 'ի կատարումն պաշտամանց իւրեանց. եղաւ և պատուէր սաստիկ ամենայն քարոզչիւ վարդապետաց նոցա յաւուրս հնգետասան յետ հրովարտակին սփռելոյ՝ ելանել և հեռանալ 'ի սահմանաց տէրութեան Գաղղիոյ: Միանգամայն 'ի յորդորել զմոլորեալսն 'ի դարձ և յուղղութիւն դաւանութեան՝ խոստանայր թագաւորն բազմապատիկ շնորհս այնոցիկ որք դարձցին յուղղափառութիւն. պարգևել ազատութիւն 'ի հարկաց, և յաւելուածս անել 'ի թոշակս պաշտօնատարաց:

Յոլով քարոզչաց մոլորութեանն յորդորեալք յօգտակար և 'ի շահաւոր խոստմանց սորա, կամ խեղամտեալ լեալ ստութեան կալվինական աղանդոյն, յանձն առին յօժարակամ պատսպարիլ 'ի գոգ սրբոյ եկեղեցւոյ: Իսկ այլք բազումք իբր վեցհարիւր թուով լքին զԳաղղիա, կարեվէր խոցեալք 'ի հոգի, և լցեալք ատելութեամբ և քինախնդիր ոխութեամբ:

Ըստ օրինակի չարախորհուրդ հոլովոյն այնոցիկ և յոլով գերդաստանք կալվինականք զհետ եղեն խնդրել իւրեանց ապաստանարան 'ի գաւառս յորս տակաւին 'ի պատուի էր կալվինականութիւն: Եւ քանզի չու նոցա և փոխադրութիւնն յերկիր օտար՝ կարէր յանչուք ամայութիւն ածել զԳաղղիա, դարձեալ զի և ոմանք 'ի նոցանէ սկսեալ էին զանխլաբար խուսել և նախ քան զոչնչացումն հրովարտակին Նանթեսի, նմին իրի ուրոյն յաւելուածով հրամանագրոյ արգելու բողոքականաց ոչ միայն չերթալ յօտար երկիր, այլ և ու զինչս ստացուածոց իւրեանց փոխադրել այլուր, ապաստանելոյ պատուհասի 'ի վերայ եղեալ արանց տարագրութեան, և կանանց զրկելոյ ընչից նոցա յարքունիս և բանտարգել լինելոյ ։

Նա այսպիսի եղև հանրաւոր հրովարտակն, որում Լուդովիկոս արքայ ցնծալից սրտիւ ձեռն եդ. նոյնպէս և արքունի ատենադպիրն Թէլլիէ ալևորեալ հասակաւ՝ յետ կնքելոյ զհրովարտակն գոչեաց մեծաձայն զնմանութեամբ ծերունւոյն Սիմէոնի. "Տէր արձակես զծառայս քո, տէր, զի տեսին աչք իմ զփրկութիւն քո.." ։ Նա արդարև այն իսկ եղև յետին հրամանագիր ստորագրեալ առ 'ի նմանէ ։

Հրովարտակս այս Թէպէտ և օգտակար կրօնի, սակայն պատճառք եղև անբաւ վնասուց Գաղղիոյ. զի իբր երկերիւր հազար հպատակք տէրութեանն փոխադրեցան յօտար երկիր հանդերձ գործարանօք ձեռակերտաց իւրեանց, և իբր երկերիւր միլիոն դրամոց սացուածովք ։ Ոչ ի անհնար էր անդորր խաղաղութեամբ 'ի գլուխ ելանել այնպիսում հրովարտակի՝ որ 'ի ներքս ածէր զմեծ փոփոխութիւն կրօնի ։ Խստութիւն արքունի հրամանաց, և մոլեգնութիւն անուանեալ հպատակաց պատճառք լինէին ապստամբութեանց և յանցուածոց, զորս հարկ էր ատենականաց պատուհասել ըստ խստութեան հրովարտակաց ։ Եդան պահապանք յանցս սահմանագլխոց և պատուհասեցան իբր ապստամբք որք միանգամ խնդրէին փախչել 'ի Գաղղիոյ. սակայն և այնպէս անթիւ կալվինականք պատրելով զպահապանս մեկնեցան 'ի Հելուետիա, 'ի Գենեւա, 'ի Գերմանիա, 'ի Հոլլանդիա և յԱնգղիա. և մատուցեալ զլինել իւրեանց քրիստոնեայ և գաղղիացի, երգիծական բանիւք և գան Թշնամանօք զինեցան ընդդէմ հրովարտակին Լուդովիկոսի ԺԴ., և ընդդէմ քահանայապետին Հռովմայ, յորոց Թելադրութենէն համարէին զհրովարտակն, որպէս և զդերց Գաղղիոյ՝ զորոց կասկածէին գործակիցս գոլ այնմ. բայց մոլեգնեալ կատաղութիւն նոցա էր առաւելապէս ընդդէմ եղանակին՝ որով կատարէր պատուէր հրովարտակին ։

Ընդ այն ժամանակս սփռեցան անհամար գրքոյկք Թշնամութեան և երգիծանաց ընդդէմ Գաղղիոյ և առաքելական աթոռոյն՝ չարագուշակ ապառնալեօք մօտալուտ կործանման և անհետանալոյ ուղղափառ կրօնից · բայց վրիպեցան յակնկալութ̃է իւրեանց · զի ուղղափառութ̃ի ոչ միայն ամբողջ և անարատ կալաւ զիւրն պայծառութիւն, այլ և բազումք 'ի բողոքարկու պաշտօնէից կրօնի նոցա ծանուցեալ զճշմարտութիւնն, ազդու և իմաստալից գրուածովք հաստատեցին զայն, և եղեն պատճառք յոգնաթիւ մոլորելոց դառնալոյ անդրէն 'ի ծոց սրբոյ եկեղեցւոյ ։

ԳԼՈՒԽ ԻԱ·

Աքսորիլ վալդեանց 'ի Փիեմոնթ գաւառէ ։

Առ ժամանակօք Լուդովիկոսի ԺԴ· դուքն Սաբաւդիոյ խստագոյն եւս վարեցաւ ընդ վալդեանս քան Լուդովիկոս ընդ կալվինականս ։ Վանեցին սոքա 'ի Փիեմոնթ գաւառի 'ի ձորամիջոյն Լուշեռնայի, որոյն Սարտինոսի և Փեռոզայի, զորս չեղև երբէք հնար բազմապատիկ և ընդերկար քարոզութեամբ ածել յուղղութիւն և 'ի փարախ սուրբ եկեղեցւոյ ։

Ամրապինդ յամառեալ կային 'ի մոլորութեանն սոքա սերտ միաբանութեամբ իւրեանց ընդ Հելուետեանս, ընդ Գենեւացիս, և ընդ այնոսիկ որք 'ի վտարանդութենէ կալվինականացն Գաղղիոյ բազմացեալ էին 'ի գաւառն և 'ի քաղաքն յայնոսիկ ։ Վասն որոյ Վիկտոր Ամեդէոս՝ յամին 1685 յամսեանն նոյեմբերի ազդ արար եկամուտ օտարականաց ելանել և հեռանալ 'ի ձորոց անտի, սահմանելով նոցա միջոց ժամանակի հնգետասան աւուրց ։ Ապա այլով հրովարտակաւ 'ի սկիզբն յունուարի յամին 1686 ընդ պատժով մահապարտութեան արգելու վալդեանց համախմբութիւն նոցա 'ի կատարումն պաշտաման կրօնի իւրեանց, և որոց ոչն կամիցին դառնալ 'ի մոլորութենէ իւրեանց՝ վտարանդի լինել 'ի հնգետասան աւուրս ։

Այս սաստիկ հրաման զայրացոյց յոյժ զհերետիկոսս ապստամբութեամբ զինիլ ընդդէմ թագաւորի իւրեանց, յուսացեալ առաւելապէս յամրութիւնս դժուարակոխ լերանց քան 'ի թիւս զօրաց իւրեանց ։

Բայց իբրև տարեցան անդր զինուորք 'ի Թագաւորէն, տագնապ մեծ եհաս նոցա 'ի պատսպարեալ պարեխս իւրեանց՝ և կոտորեցան 'ի նոցանէ ոգիք երեք հազար և աւելի, և իբր բիւր մի վարեցան 'ի գերութիւն ։ Իսկ մնացեալքն կամ ապրեալք 'ի սրոյ զինուորաց՝ մազապուր փախեան 'ի Հելուետիա՝ մերկք և թափուրք յամենայն ընչից և ստացուածոց ․ յորոց վերայ գթացեալ Վիկտորի արքային՝ փութապէս ազդ արար նոցա դառնալ յետս յինքնահաճ տարագրութենէն ։ Զի ցաւէր նմա յոյժ 'ի պատճառս նոցա անապատ և անմարդի տեսանել զերկիր իշխանութեան իւրոյ ․ վասն որոյ կոչեաց յետս զպանդխտացեալսն յերկիր օտար, խոստանալով նոցա 'ի դառնալն անդրէն 'ի հայրենիս իւրեանց շնորհել զամենայն արտօնութիւնս կարգեալս 'ի նոցանէ ։

Յայս ներողամտութիւն յորդորեաց զդուքսն և այլ պատճառ քաղաքական ․ զի գոլով սորա ստէպ դաշնակցութեամբ ընդ Գուլիելմոսի իշխանազնին Օրանժի, որ բարձրացաւ 'ի գահ թագաւորութեանն Անգղիոյ, խորհեցաւ զի չմարթէր նմա հզօրագոյն և անողոքելի թշնամիս յարուցանել ընդդէմ Գաղղիոյ քան զվալդեանսն ։

ԳԼՈՒԽ ԻԲ․

Մոլորութիւնք անդորրականաց որք երևեցան յԻտալիա և 'ի Գաղղիա, և դատապարտութիւն նոցին ։

Ի ՅԵՏԻՆ ամս այսր դարու հանդիսացաւ և այլ մոլոր վարդապետութիւն՝ ոչինչ նուազ վտանգաւոր քան զմոլորութիւն Վալդեանց ։ Քահանայ ոմն սպանիացի Միքայէլ Մոլինոս անուն, բարեպաշտ վարուքն և պերճախօս քաղցրաբանութեամբ մեծարգոյ լեալ 'ի հայրենիս իւր, և ապա 'ի Հռոմ քաղաքի ստացեալ յաշակերտութիւն բազմաթիւ ականաւոր անձինս յարանց և 'ի կանանց, յամին 1675 յերևան ածեալ հանդիսացոյց զհիմունս մոլորութեան իւրոյ 'ի գիրս մակագրեալ Առաջնորդ հոգևոր՝ 'ի բարբառ սպանիացի, որ և թարգմանեցաւ յիտալական լեզու յամին 1681 ։

Ի գլուխ ասելի քաղեցան վաթսուն և ութ մոլար վարդապետութիւնք համանմանք անդէպ և անտոլոր կարծեաց Բեգուարդեանց և Բեգուինեանց՝ ՚ի հորդել շաւիղ անառակ ցոփութեան։

Ի վարդապետութեանց նորա հաւաքի, թէ վիճակ կատարելութեան քրիստոնէին է յանդորրութեան հոգւոյ, որ այնպէս խորասուզեալ իցէ ՚ի միաւորութեան ընդ Աստուծոյ՝ մինչև չունել նմա կամս և յօժարութիւն կամ բերումն ինչ առանձնական։ Զի Աստուած ազդէ կամ գործէ ՚ի նմա զամենայն, և ինքն ոչ այլ ինչ է բայց եթէ էակ պատրաստական յազդեցութիւնս նորա։ Ի ձեռն այսր կատարեալ նուիրմանց և պատրաստականութեան առ աստուածային ազդեցութիւնս՝ քրիստոնեայն ժամանէ ՚ի սիրել զԱստուած խակապէս սիրով, այսինքն անխառն յամենայն դիտաւորութենէ անձնական օգտի։ Ոչինչ փոյթ է նմա զվարձուց և ոչ զպատժոց. չտագնապի երբէք վասն փրկութեան անձին և ոչ վասն դատապարտութեանն, միօրինակ և անթերի անխռովութեամբ հայելով յայսոսիկ. և յայսպիսում վիճակի չէ նմա հնար մեղանչել։ Չունի պէտս արտաքին պաշտամանց. և յոր ինչ միանգամ ախտաւոր կիրս անկղխտացի՝ յայնմ անզգայութեան վիճակի չհամարեսցին նմա ՚ի մեղս։ Ի կեղծեալ վիճակէ աստի պատիր անդորրութեան, զոր քարոզէր Մոլինոս, հետևողք նորա անուանեցան Անդորրականք կամ Հանգստականք։

Մոլար վարդապետութիւնքս այսոքիկ իբրև առաջարկեցան ՚ի Հռովմ առ ատեանն սրբազան քննութեան յամին 1687, Մոլինոս վստահացեալն ՚ի հզօր պաշտպանութիւն բարեկամաց իւրոց և ՚ի խնամս սիրոյ Իննովկենտիոսի ԺԱ., ոչ զերծաւ ՚ի վճռոյ դատապարտութեան, որով բանադատեցաւ ՚ի հրապարակական ապաշխարութիւն և ՚ի յետս կոչումն մոլորութեանց իւրոց. միանգամայն արգելաւ ՚ի մշտնջենաւոր կալանս բանտի, ուր և վախճանեցաւ յամին 1696։ Բայց մահուամբ նորա ոչ շիջաւ մոլորութիւնն, զի ստացաւ իւր բազմաթիւ կուսակիցս յԻտալիա, ՚ի Գաղղիա և ՚ի Սպանիա։

Տիկին ոմն Գյիոն անուն, որ ձախողեալ էր բաղմահանճար գիտութեամբ, քարոզիչ եկաց նորահնար վարդապետութեանս, մերժեցուցեալ զմիտս իմաստից մոլորութեանն առ 'ի չխայթելոյ զունկն լսողաց։ Ընծայեաց 'ի լոյս բազում գիրս նովին բանիւք և անսովոր խրթնաբանութեամբ։ Ի մեկնել իւրում ըզգիրս յայտնութեան Յովհաննու աւետարանչի՝ մարգարէական հոգւով գուշակէ զդէպս որ լինելոց են առ յապա, և սպառնայ տեսիլս նորանշանս՝ որք սովոր են շփոթել զմիտս բարեսէր ընթերցողաց։ Կարծելով սորա զանձն իւր հաղորդ շնորհացն որով ճոխացեալ էր սրբուհին Թերեզա, ըստ օրինակի նորա կամեցաւ գրել զվարս իւր․ յորում յաւել և այլ բազում նորանոր ամբարշտական զրոյցս և պէսպէս յայտնութիւնս ախմարականս։ Էր սա կին հանճարեղ և քաղցրաբան, մինչև ծանօթից նորա որք տեղեակք էին ճարտարութեան մտացն՝ զարմանալ յոյժ ընդ սքանչելի և յորդաբուղխ եղանակ բանիցն, որով խօսէր զԱստուծոյ և զաստուածայնոց․ վասն որոյ կրկին ձրիւքս այսոքիւք որսացաւ զմիտս բազում իմաստնոց և բարեսիրաց։

Վարդապետութիւնք տիկնոջս 'ի վերայ ներանձնական կենաց լի էին կասկածելի բանիւք, և այնչափ բազում կուսակիցք և հետևողք էին վարդապետութեանցն, մինչև խռովեալ նախանձայոյզ եպիսկոպոսացն Կաղղիոյ, Հարլէ արքեպիսկոպոսն Փարիզու, Նոայլ եպիսկոպոսն Շալոնի, և Պոսիւէ եպիսկոպոսն Մեղդայ դատապարտեցին զվարդապետութիւն տիկնոջն, որ և հլու հպատակութեամբ յանձն էառ լռել կոչել զայն։ Ապա հակառակ այնոցիկ կասկածելի վարդապետութեանց յօրինեցին զանազան յօդուածս բանից բովանդակիչս ճշմարիտ և ուղիղ հաւատոյ 'ի վերայ այնոցիկ խորաղնին խնդրոց։

Էին տիկնոջն Կիոնի բարեկամք երևելիք և անուանիք, որ կարեկիցք էին նմա, և մեծարէին զհանճար մտաց նորա և զանարատութիւն վարուց։ Մի էր 'ի նոցանէ և Ֆենելոն արքեպիսկոպոսն Կամպրէի, որ յօրինեաց զգիրսն Առածք սրբոց մականուանեալ․ յորում պատշաճ համարեցաւ ըստ իմիք արդարացուցանել զվարդապետութիւն Կիոնի տիկնոջն, հիմնելով զայն 'ի ճառս աստուածաբանից՝ որ 'ի վերայ ներանձնական կամ աստուածաբեալ կենաց ։ Զայս գրուած մանրախոյզ քննութեամբ հետազօտեալ Պօսիւէի, եգիտ 'ի նմա վարդապետութիւնս մոլորականս, որոց դատաստանն փոխադրեցաւ 'ի Հռոմ. վասն որոյ և ծագեցաւ գիմնամարտ հակառակութիւն սաստիկ 'ի մէջ երկուց եպիսկոպոսացն, և աւարտեցաւ այն վճռով Իննովկենտիոսի ԺԲ., որ յամին 1699 դատապարտեաց զգիրսն Ֆենելոնի արքեպիսկոպոսին քսան և երեք հատուածովք բանից որ քաղեալ էին 'ի գրոց անտի ։

Ֆենելոն արքեպիսկոպոս հպատակեցաւ վճռոյ սրբոյ աթոռոյն այնպիսի կամակար մտօք, որ յայտ առնէր ոչ միայն զանխարդախ միտս նորա, այլ և զվեհանձնութիւն հոգւոյն և զանդորրութիւն սրտին. զոր պարսաւադէտք ոմանք 'ի մատենագրաց ոչ կարելով աննախանձ աչօք տեսանել և լսել, կեղծ և բռնի համարեցան զհպատակութիւնն, պատճառս առեալ 'ի հովուական ճառէն զոր արար առ համօրէն հօտ իւր, յորում առանց ինչ յիշատակութեան դատապարտեալ իւրն գրոյն՝ մեղմաբար վարդապետէ զհոգեւորական կենաց ։ Բայց ճշմարտասիրացն զննելով զխոնարհամիտ հնազանդութիւնն՝ չինեցան 'ի գիւրանոց հլու հաւանութենէ ճարտարամիտ առն այնպիսւոյ, որ ոչ գուն գործեաց նրբախօս ճարտարութեամբ բանից 'ի դերեւ հանել զդատապարտութիւն իւր, ոչ ևս պնդեալ թէ դաւադիր խաբէութեամբ եղեալ իցէ վճիռն, որպէս սովոր են առնել յամառեալքն 'ի թիւր կարծիս. այլ անդէն 'ի հերքելն վարդապետութեան իւրոյ՝ խոստովան եղև զյանցուած իւր, և այնու սքանչելի ևս ցուցաւ պարտութիւն նորա քան զյաղթականն լինել ։ Նա 'ի թողուլ յետնոց յիւրում վիճակի զյիշատակ հպատակութեան իւրոյ առ սուրբ աթոռն՝ ետ յօրինել ճաճանչաւէտ անօթ սրբոյ հաղորդութեան առ 'ի դնել 'ի բագինի, զոր ամբառնային 'ի վեր հրեշտակք երկու. միումն 'ի նոցանէ ընդ ոտիւք կոխան դնէին զանազան հերետիկոսք, յորոց միոյն վերայ ետ քանդակել զիւր անունն ։ Յայլ սակս Իննովկենտիոս ԺԲ., որ քաջ ճանաչէր զզգաստութիւն, զբաղցր բնաւորութիւն, որպէս և զդիւրամատոյն լինել Ֆենելոնի արքեպիսկոպոսին, համեմատելով զնա ընդ ումեմն յոսոխաց նորա՝ ասէ. “Եթէ Ֆենելոն վրիպեցաւ ՚ի տարապայման առաւելութենէ սիրոյն Աստուծոյ, թշնամիք նորա յանցեան ՚ի պակասութենէ սիրոյ ընկերին„։

ԳԼՈՒԽ ԻԳ.

Կաթուղիկոսունք և վիճակ եկեղեցւոյն Հայոց։

Ի ՅԵՏԻՆ ամս նախընթաց դարու (1593) գրեցաք կանխաւ զկաթուղիկոսութիւն Դաւթի և զաթոռակցութիւն Մելքիսէթ եպիսկոպոսի գառնեցւոյ, որով եղեն երկու կաթուղիկոսք՝ իբր օգնականք և ձեռնտուք միմեանց ՚ի գտանել ելս հնարից ծանրակշիռ պարտուցն ընդ որովք հեծէր աթոռն Էջմիածնի։

Մելքիսէթ կաթուղիկոս տագնապեալ ՚ի պարտատեարց և ՚ի բռնութենէ հարկապահանջից Պարսից, ել գնաց ՚ի Կոստանդնուպօլիս գտանել նպաստ յիշխանաց ազգին, որք ընկալան զնա սիրով, և յետ ամաց ինչ հրաժարեցուցեալ ՚ի կաթուղիկոսութենէ՝ ետուն նմա զպատիւ պատրիարգութեան մայրաքաղաքին փոխանակ Տիրատուր վարդապետի. բայց զկնի տարւոյ միոյ ընկեցին զնա յաթոռոյ։ Իսկ նորա դարձ արարեալ անդրէն յԷջմիածին, և գտեալ զԴաւիթ կաթուղիկոս՝ միաբան խորհրդով թագեան յանծանօթ վայրս, զի մի՛ նեղեսցին ՚ի պարտատեարց։

Ընդ այն ժամանակս՝ յամին 1600 ՚ի լինել սովու և սրածութեան, որպէս և ՚ի յաճախել ելուզակաց յարեւելս աշխարհին Հայոց, ծանրացան պարտք աթոռոյն, և առաւելան վիշտք երկոցունց կաթուղիկոսակցացն։ Նա զի առ նովին ժամանակաւ Սրապիոն եպիսկոպոս եդեսացի նստէր առաջնորդ յԱմիդ քաղաքի, այր իմաստուն և առաքինի, ազնուատոհմ և ճոխ ստացուածովք, խորհեցան երկոքին կաթուղիկոսակիցք հանդերձ հաւանութեամբ այլոց վարդապետաց կոչել զնա ՚ի պատիւ կաթուղիկոսութեան, եթէ յանձն առնուցու հատուցանել զպարտս աթոռոյն։ Ընկալեալ Սրապիոնի զհրաւէրն՝ ուղեւորեցաւ ՚ի Ջուղա քաղաք, ուր ժողովեալ կաթուղիկոսացն և այլոց խորհրդակից եպիսկոպոսաց՝ 'ի լինել ինչ ինչ ամբաստանելի զրուցաց սակս անխոհեմ միաբանութեան աթոռոյն, Մանուէլ եպիսկոպոս յարոյց խռովութիւն 'ի ժողովականսն, և դժտեալք ընդ միմեանս ցրուեցան առանց օգտակար ինչ գործ 'ի գլուխ հանելոյ ։ Բայց Սրապիոն եպիսկոպոս մնալով 'ի Պօլս՝ առաքինի վարուքն և քաղցրաբան բարոյութեամբ հաճոյ գտաւ յաչս ամենեցունց . վասն որոյ միաբանեալ իշխանաց և ժողովրդեան Պօլսոյ տարան զնա յԷջմիածին, ուր հաւանութեամբ ժողովոյն եպիսկոպոսաց և վարդապետաց ետուն ձեռնադրել կաթուղիկոս, անուանելով զնա Գրիգոր ԺԳ. ։

Զլուր կաթուղիկոսութե՛ Սրապիոնի առեալ Դաւթի և Մելքիսեթի, որք նստէին 'ի վանսն Սուաթեա, և պարտք աթոռոյն էին յանուն նոցա, խորհեցան դիմել յԱսպահան առ հայազգի ժողովուրդս՝ ընդունելոյ պատիւ 'ի նոցանէ ։ Բայց Դաւիթ մնաց 'ի Հայաստան, իսկ Մելքիսեթ գնաց յԱսպահան . ուր յանդիման եղեալ Շահաբասայ արքային Պարսից՝ ակն ունէր նպաստից առ 'ի նմանէ . իսկ նորա կեղծաւորիր բանիւք ափոփեալ զնա, տեղեկանայր զել և զմուտ աշխարհին Հայոց զոր 'ի վաղուց երկնէր առնուլ ։ Յոր սակս զօրաժողով լեալ դիմեաց 'ի Հայաստան՝ առեալ ընդ իւր և զՄելքիսեթ կաթուղիկոս իբր առաջնորդ արշաւանացն . որով տիրեալ վերին կողմանցն Հայաստանի, էառ զԵրեւան քաղաք, և ապա կոչեալ առ ինքն զԴաւիթ և զՄելքիսեթ կաթուղիկոսակիցսն՝ ստիպեաց հատուցանել ինքեան զպարտսն զոր ունէին առ այլազգի պարտատեարս իւրեանց ։ Զանգիտեալ կաթուղիկոսացն 'ի սպառնալեաց Շահաբասայ, գտին դոյզն ինչ դրամս ծանր տոկոսեօք, և զերծան 'ի ձեռաց նորա ։ Զնոյն տագնապ անբերելի վշտաց հասոյց արքայ և Սրապիոնի կաթուղիկոսի 'ի Պօլս, ուր դառն տանջանօք խոշտանգեալ զնա մերկացոյց յամենայն ստացուածոցն, որով վտանգեալ 'ի կենաց դարձ արար յԱմիդ քաղաք, և վախճանեցաւ անդ յերրորդ ամի կաթուղիկոսութեան իւրոյ ։

Յայնմ ժամանակի՝ յամին 1605 'ի զինել Օսմանեանց ընդդէմ Պարսից՝ Շահաբաս արքայ հրաման ետ զօրաց իւրոց աւար հարկանել զերկիրն Հայոց, և 'ի գերութիւն վարել զբնակիչս նորա. ընդ որս վարեցան և Դաւիթ և Մելքիսեթ կաթողիկոսակիցք համգերձ քանի մի եպիսկոպոսօք և վարդապետօք. կողոպտեցան և ամենայն զարդք և կահք Էջմիածնի։ Դառնաղէտ եղեն յոյժ այս անցք գերութեան ազգիս, որով վարեցան 'ի Պարսկաստան իբր չորեքտասան հազար գերդաստանք, և ազնուականքն և ճոխք 'ի նոցանէ բնակեցան համդէպ Սպահանայ, ուր շինեցին իւրեանց տունս բնակութեան, և կանգնեցին եկեղեցիս, որպէս և մենաստանս կրօնաւորաց, և անուանեցին զքաղաքն՝ Նոր Ջուղա։

Ի պատճառս անընդհատ պատերազմաց և տարագիր գերութեան և ինքնակամ վտարանդի լինելոյ բնակչաց աշխարհիս Հայոց՝ քանդեալ և աւերեալ կային գրեթէ համօրէն մենաստանք։ Վասն որոյ յամին 1610 Սարգիս եպիսկոպոս առաջնորդ Սաղմոսավանից՝ Պարոն Տէր կոչեցեալ, վառեալ 'ի սէր հոգևոր կենաց և միանձնութեան, եգիտ իւր կամակից և գործակից զտէր Կիրակոս 'ի Տրապիզոն քաղաքէ, զայր կրօնասէր և զառաքինի. որոց միաբանեալ 'ի խորհուրդ շինութեան և նորոգութեան աւերեալ վանորէից՝ ստացան աշակերտս բազումս, և սահմանեցին նոցա կանոնս բարեկարգութեան կրօնաւորական կենաց. որով ծաղկեցան յոլով արք նշանաւորք, և ծաղկեցուցին զվարս աբեղայութեան 'ի զանազան կողմանս աշխարհին Հայոց։

Ընդ նոյն ժամանակս յամին 1611 յաշխարհին Արարատայ երևեցան երկու լատին կրօնաւորք, արք հետաքննիք և հնախոյզք, և համդիպեալ Մելքիսեթ կաթողիկոսի՝ ընկալան 'ի նմանէ հրաման յայց ելանել ուխտատեղեաց հայաստան աշխարհի. և զի ելեալ էին 'ի խնդիր նշխարաց սրբոց, գնացին յԷջմիածին, և գաղտ խուզեալ 'ի մատրունս ուխտատեղեաց՝ հանին զնշխարս սրբուհւոյն Հռիփսիմեայ։ Բայց անդէն առ նմին 'ի յայտնել գողութեանն, թէպէտ և կողոպտեցան 'ի նոցանէ գողօնքն, սակայն մնացին արտաքոյ քանի մի մանր հատուածք նշխարացն այնոցիկ, որք ցրուեցան յայլ և այլ տեղիս։ Իսկ կրօնաւորքն այնոքիկ 'ի շրջելն 'ի կողմանս Գեղարքունեաց՝ սպանան 'ի Պարսից ։

Ընդ այն ժամանակս Մելքիսեթ կաթուղիկոս, որ գաղտ փախեաւ 'ի գերութենէն Շահաբասայ, նստէր յԵրեւան քաղաքի ․ ընդ որ զայրացեալ միաբանից Էջմիածնի՝ ամբաստան եղեն զնմանէ առ Դաւիթ՝ որ նստէր 'ի Նոր Ջուղա, որ և 'ի յորդորելոյ ժողովրդեանն ել և գնաց յԷջմիածին, բայց արգելաւ 'ի Մելքիսեթէ մուտ գտանել անդր ։ Ապա 'ի վերստին դառնալ Շահաբասայ արքայի 'ի կողմանս Երեւանայ, զայրացեալ 'ի վերայ Մելքիսեթի կամէր սպանանել զնա ․ բայց 'ի խնդրոյ Ամիրկէն նախարարին ազատեցաւ 'ի մահուանէ՝ յանձնառութեամբ ծանր տուգանաց, զորս չէր նմա հնար հատուցանել ։ Ապա յամին 1620 տագնապեալ 'ի վշտաց աղքատութեան եպիսկոպոսացոյց զՄովսէս վարդապետ, և ետ նմա իշխանութիւն օրհնելոյ զմեռոն յԷջմիածին ․ զի 'ի հաւաքիլ ժողովրդոց խնդրեսցէ նպաստ ողորմութեան 'ի լնուլ զպակ տուգանացն ․ բայց 'ի պակասել ակնկալեալ ձեռնտուութեանն խորհեցաւ հրաժարել 'ի կաթուղիկոսութենէ, և ձեռնադրեալ զեղբօրորդի իւր զՍահակ եպիսկոպոս՝ 'ի նա յանձն արար զհոգս պարտուցն և ինքն փախեաւ 'ի Կոստանդնուպօլիս ։ Սակայն և անդ չգտեալ կայան ոտից, չոգաւ 'ի Լեհս 'ի քաղաքն Լվով, ուր կային բազմութիւնք հայազգի ժողովրդոց, որք և ընկալան զնա սիրով ։ Ընդ յամին 1624 ընդդէմ կամաց ժողովրդեան ձեռնադրեաց նոցա եպիսկոպոս զՆիկողայոս Թորոսովիչ՝ զայր անհանդարտ բարուք, յորմէ ծագեցան խռովութիւնք և հալածանք 'ի քաղաքին ։ Իսկ Մելքիսեթ կաթուղիկոս յետ ձեռնադրութեանն Նիկողայոսի մեկնեցաւ անտի և գնաց 'ի Կամենից քաղաք, ուր և վախճանեցաւ՝ կացեալ 'ի հայրապետութեան զամս երեսուն և մի ։

Սահակ Գ․ եղբօրորդի Մելքիսեթի և յաջորդ նորին 'ի կաթուղիկոսութեան, յամին 1624 մատնեցաւ 'ի նոյն տառապանս հօրեղբօր իւրոյ 'ի բռնութենէ պարսիկ հարկապահանջից, և խնդրելով հնարս ազատութեան փախեաւ գաղտ 'ի Վան քաղաք տէրութեան Օսմանեանց, ուր եկաց զամս հինգ ։ Ի խուսել Սահակայ միաբանեալ համօրէն ազգին ընտրեցին զՄովսէս Գ. որ փակակալ էր Էջմիածնի, և կացուցին զնա կաթուղիկոս յամին 1629։ Իսկ զի ընդ այն աւուրս մեռեալ էր Շահաբաս արքայ և յաջորդեալ նմին Շահսէֆի, իշխանք Հայոց կոչեցին զՄովսէս յԱսպահան, և ընկալան ՚ի Թագաւորէն զհրովարտակ հաստատութեան նորա, միանգամայն և զազատութիւն ՚ի տարեկան արքունի հարկաց, որով Էջմիածին զերծաւ ՚ի պարտուց, և Մովսէս կաթուղիկոս դարձ արար յաթոռ իւր։

Յամին 1630 լուեալ Սահակայ զկաթուղիկոսանալ Մովսէսի զուն գործեաց և ինքն վարել զկաթուղիկոսութիւն իւր յերկրի տէրութեան Օսմանեանց, այլ չեղև հնար նմա գտանել յաջողութիւն. վասն որոյ կամակար խոնարհեալ առաջի Մովսէսի հրաժարեցաւ ՚ի պատուոյն և առանձնացաւ յԷջմիածին մինչև ցմահ իւր։ Յետ այնորիկ մնալով Մովսէսի անկասկած ՚ի հակառակորդաց՝ սկսաւ յամին 1631 նորոգել և վայելչացուցանել ոչ միայն զշինուածս Էջմիածնի, այլ և սահմանել կարգս և կանոնս ՚ի մէջ միաբանից, որոշելով զժամանակ աստուածային պաշտամանց ըստ կանոնադրութեան նախնի հարց սրբոց։ Կանգնեաց և զպալատուն մեծ յուխտն Յովհաննավանք, և արար բազում ուղղութիւնս ՚ի մենաստանս Հայաստան աշխարհի։ Գրեաց երկու նամակս սիրոյ և հպատակութեան առ սրբազան քահանայապետն Ուրբանոս Ը. յոր սակս կրեաց հակառակութիւն մեծ ՚ի Գրիգորէ կեսարացւոյ, սակայն ոչ մեկնեցաւ ՚ի ճանապարհէ ճշմարտութեան և ՚ի հովուելոյ զհօտ իւր յամենայն ուղղութիւնս։ Վախճանեցաւ յամի տեառն 1633, կացեալ ՚ի հայրապետութեան զամս երկու և զամիսս չորս։

Փիլիպպոս վարդապետ Աղբակեցի՝ այր բարեկրօն և խաղաղասէր, աշակերտ Մովսէսի, ընտրեցաւ կաթուղիկոս յամին 1633, և հոգ յանձին կալաւ շինութեան աւերեալ շինուածոց Էջմիածնի ձեռնտուութեամբ ժողովրդեան Հայոց բնակելոց յԱսպահան։ Իսկ զի ընդ այն ժամանակս անկարգութիւն մեծ էր ՚ի Կոստանդնուպօլիս ՚ի պատճառս բռնաւորաց յափշտակութեան պատրիարգական աթոռոյ ՚ի ձեռաց միմեանց, Փիլիպպոս կաթուղիկոս յօժարեցաւ գնալ անդր ՚ի խաղաղել զխռովութիւնն. վասն որոյ յամին 1651 եւ 'ի Ճանապարհ, եւ 'ի ժամանել իւրում 'ի Կարին քաղաք՝ ուղեւորեցաւ երթալ նախ յԵրուսաղէմ. ուր տեսաւորեալ ընդ Ներսեսի կաթուղիկոսին Սսոյ՝ արար ընդ նմա ժողով եպիսկոպոսօք եւ վարդապետօք վասն սիրոյ եւ բարեկարգութեան երկուց աթոռոյն, յորում եւ սահմանեցան երեքտասան կանոնք: Ապա յամին 1652 մեկնեալ Փիլիպպոսի յԵրուսաղեմէ եհաս 'ի Կոստանդնուպոլիս, ուր հայրագորով ազդու քարոզութեամբ արար խաղաղութիւն, եւ կացոյց նոցա նոր պատրիարգ, եւ դարձաւ յԷջմիածին: Ի հանդարտել իւրում յարտաքին զբաղանաց՝ ձեռն արկ հիմնել զմեծակառոյց զանգակատուն տաճարին, զոր չեւ աւարտեալ՝ վախճանեցաւ 'ի հասակի վաթսուն եւ երից ամաց յամի տեառն 1655, կացեալ 'ի հայրապետութեան զամս քսան եւ երկու: Առ կենդանութեամբ իւրով գրեաց թուղթ սիրոյ եւ հպատակութեան առ սրբազան պապն Իննովկենտիոս Ժ:

Յակոբ Դ 'ի նոր Ջուղայէ ընտրեցաւ յԷջմիածին, եւ օծաւ կաթուղիկոս յամին 1655, եւ էր այր առաքինի եւ խոհական. սա 'ի կատարումն ած զկիղնաւորեալ շինուածն 'ի նախորդէն իւրմէ, եւ յաւել 'ի նոսին այլ եւս բազում 'ի վայելչութիւն հայրապետանոցին: Խնամ կալաւ պայծառացուցանելոյ զտպագրութիւն հայերէն գրոց 'ի ձեռն Մատթէոսի սարկաւագի ծարեցւոյ, որոյ դիմեալ յԱմստերդամ քաղաք՝ 'ի ձեռն ճարտար արուեստաւորաց վայելչացոյց զգաղափար կամ զձեւ գրոյն, զոր յետոյ ընտիր եւս շքեղացոյց Ոսկան վարդապետ:

Յաւուրս սորա վերստին սկսաւ անողոքելի կռիւ եւ խռովութիւն 'ի պատճառս յափշտակելոյ 'ի միմեանց զպատիւ պատրիարգութեան աթոռոյն Կոստանդնուպոլսոյ, մինչեւ աշխարհականաց անգամ գրաւել զայն պատիւ ընդ անուամբ տեղակալի, եւ պատճառք լինել բանտարկութեան եւ մահուան Խոլմայի վարդապետին բերիացւոյ:

Ընդ այն ժամանակս յամին 1656 Եղիազար վարդապետ անթապցի որ երբեմն լեալ էր պատրիարգ Կոստանդնուպոլսոյ՝ կարգեցաւ յԵրուսաղէմ փոխանորդ պատրիարգի. եւ զի էր այր աշալուրջ եւ հեռաքնին՝ խուզեալ զմատեանս յիշատակարանաց որոյն Յակոբայ եղեւ այլաբանական նշանօք զյայտարարութիւն նոյն թաղեալ գանձուց ակնց և արծաթոյ, զոր հանեալ գաղտ և 'ի ծածուկ՝ սկսաւ նոքօք նախ առաջին զինել ընդդէմ Յունաց որք կամէին զրաւել զուխտատեղիս Հայոց, և ապա նովին դրամովք գերծեալ 'ի զանազան վտանգաց և կորզեալ 'ի ձեռաց Յունաց զուրբն Յակոբ, ջանահնար եղև յամին 1663 տանալ ոչ միայն զպատրիարգութիւնն Երուսաղեմի, այլ և զպատիւ կաթուղիկոսութեան Հայոց եղելոց ընդ տէրութեամբ Օսմանեանց ։ Յայս խորհուրդ միաբանեալ և Խաչատրոյ կաթողիկոսին Սսոյ՝ էօծ զնա շքով 'ի կաթողիկոսութիւն 'ի Մերխս քաղաքի, և յետ այնորիկ փութացաւ Եղիազար գրել անտի նամակս օրհնութեան և ծանուցման առ ազգայինն հպատակս օսմանեան տէրութեան, և ապա ուղևորեցաւ յԵրուսաղէմ յաթոռ իւր, այլ ոչ կարաց նստել անդ. զի Ածատուր պատրիարգ Երուսաղեմի բռնացեալ 'ի վերայ նորա՝ վարեաց զնա 'ի քաղաքէն. վասն որոյ Եղիազար շրջէր թափառական յԵգիպտոս և 'ի կողմանս Ասորւոց գտանել հնարս հաստատութեան իւրոյ ։

Լուեալ Յակոբայ կաթողիկոսի զանընդունելի գործս Եղիազարու, գրեաց նամակս աղաչարարութեան յայլ և այլ տեղիս զգուշանալ 'ի միաբանութենէ խռովայոյզ գործոյն, և բաժանելոյ զաթոռ Լուսաւորչին ։ Նա 'ի յորդորելոյ բազմաց յանձն էառ գնալ 'ի Կոստանդնուպոլիս 'ի խափանել զազգային խռովութիւնն ։ Տեսեալ Եղիազարու զհակառակութիւն թշնամեաց իւրոց, զուն գործեաց զաղտնածածուկ հնարիւք զինել առ եպարքոսն յԱդրիանուպոլիս, ուր վերստին նորոգեալ զհրովարտակ հաստատութեանն 'ի կաթուղիկոսութիւն ազգին՝ դարձաւ 'ի Պրուսա քաղաք. սակայն և անդ կրելով հակառակութիւն 'ի թըշնամեաց, ճարտարութեամբ իւրով զերծեալ 'ի նոցանէ գնաց 'ի Կոստանդնուպոլիս և պատուեցաւ 'ի յոգունց իբրև կաթուղիկոս ։

Ի նոյն աւուրս յամին 1666 Յակոբ կաթուղիկոս յուղևորիլ իւրում 'ի Կոստանդնուպոլիս՝ գնաց նախ յԵրուսաղէմ, ուր յետ խորհելոյ ազգի ազգի հնարս 'ի մերժել զԵղիազար 'ի գործակալութենէն Երուսաղեմի, իբրև կամեցաւ գնալ 'ի Կոստանդնուպօլիս, Եղիազարու ընկալեալ միւսանգամ զհաստատութիւն կաթողիկոսական և պատրիարգական իշխանութեանն Երուսաղեմի՝ ել 'ի ճանապարհ երկերիւք և յիսուն ուխտաւորօք գնալ յԵրուսաղէմ, ուստի մեկնեալ էր յայնժամ Յակոբ կաթողիկոս։ Արդ ժամանեալ Յակոբայ 'ի Կոստանդնուպօլիս և լուեալ զգործս Եղիազարու, քաջալերական խորհրդով կուսակցաց իւրոց չոգաւ յԱդրիանուպօլիս, և ծանրակշիռ ընծայիւք ընկալաւ 'ի Թագաւորէն զհրովարտակ լինելոյ կաթողիկոս 'ի վերայ համօրէն ազգին Հայոց, խափանելով զհրովարտակս իշխանութեան Եղիազարու. և նորա լուեալ զայն՝ հարկեցաւ առ ահի խոյս տալ յԵրուսաղեմէ և պանդխտել 'ի Հալէպ։ Իսկ Յակոբ կաթողիկոս յետ կատարելոյ զգործն դարձ արար յԷջմիածին յամի տեառն 1667։

Յետ այնորիկ 'ի նորոգիլ և 'ի զօրանալ խռովութեանց պատրիարգական աթոռոյն Կոստանդնուպօլսոյ և Երուսաղեմի՝ ստիպեցաւ Յակոբ կաթողիկոս միւսանգամ ուղևորիլ 'ի Կոստանդնուպօլիս յամին 1679. գրեաց և առ Եղիազար փութալ և անյապաղ ժամանել անդր 'ի խորհուրդ խաղաղութեան և հանդարտութեան աղմկալից աթոռոյն այնորիկ. բայց 'ի յամել գալստեան նորա հիւանդացեալ Յակոբայ կաթողիկոսի մեռաւ 'ի Կոստանդնուպօլիս և թաղեցաւ 'ի գերեզմանատան Պերայի որ է Պէյօղլու։ Զայն իբրև լուաւ Եղիազար՝ գնաց յԵրուսաղէմ և սկսաւ համարձակ վարել անդէն զիշխանութիւն կաթողիկոսութեան 'ի վերայ հպատակաց ամենայն տէրութեան։

Զկնի մահուան Յակոբայ՝ որ եկաց 'ի հայրապետութեան զամս քսան և հինգ՝ աթոռն Էջմիածնի մնաց 'ի պարապութեան զամս երկուս. մինչև միաբանից այնր աթոռոյ հաճեալ ընդ կաթողիկոսութիւն իշխանն Եղիազարու, և հաւանեցուցեալ զպարսիկ իշխանն Երևանայ՝ հրաւիրեցին զնա յԷջմիածին զի իշխեսցէ 'ի վերայ ամենայն ազգին Հայոց։ Վասն որոյ ելեալ Եղիազարու յԵրուսաղեմէ գնաց 'ի Կոստանդնուպօլիս, և առեալ հրովարտակ հաստատութեան գնաց նստիլ յԷջմիածին. և ձեռն արկեալ անդ 'ի շինութիւն՝ կանգնեաց երիս փոքր զանգակատունս, և նորոգեաց զեկեղեցին Զորագեղոյ։ Յաւուրս սորա ծագեցաւ 'ի մէջ ազգին նոր աղմուկ բաժանման և երկպառակութեան, զոր յարոյց Սարգիս անուն ոմն վարդապետ Եւդոկիացի, (որ յետոյ անկաւ 'ի հաւատոյ,) քարոզելով և սերմանելով զատելութիւն և զխռովս 'ի մէջ ազգին, որով ուղղափառք և ողջամիտք տարան ծանր և դառն հալածանս, որպէս և անբաւ տուգանս. զոր լուեալ Եղիազարու կաթողիկոսի իբրև կամէր խնամ ունել խաղաղութեան և սիրոյ, եհաս վախճան կենաց նորա յամին 1691, կացեալ 'ի հայրապետութեան Էջմիածնի զամս իննս։

Ի նմին ամի ընտրեցաւ յաջորդ Եղիազարու աշակերտ նորա Նահապետ Եդեսացի՝ այր բարեսէր և հեզահոգի, որ խնամ կալաւ խաղաղութեան ազգին և բառնալոյ զխռովութիւն ազգային բաժանման։ Յամին 1695 գրեաց նամակ սիրոյ և հպատակութեան առ քահանայապետն Ինովկենտիոս ԺԲ, յորում պաղատի չմատուցանել ունկն չարախօսութեան վատաբանողի Հայոց, որք ստութեամբ ամբաստան լինէին զազգէս մերմէ։ Նոյն նամակի ընկալաւ պատասխանի 'ի սրբազան քահանայապետէն յամին 1697 ընդ ձեռն Խաչատուր վարդապետի կարնեցւոյ, միանգամայն և պարգևս ազնիւս, որոց վասն գրեաց վերստին շնորհակալութիւն խոնարհ հպատակութեամբ։

Օայսուիկ թղթակցութիւնս Նահապետ կաթողիկոսի ընդ սրբազան պապին՝ լուեալ Եփրեմայ պատրիարգին Կոստանդնուպօլսոյ և զայրացեալ՝ խորհէր խռովութիւնս յարուցանել 'ի մէջ ազգին. բայց տագնապ աքսորանաց հասեալ 'ի վերայ նորա, մոռացաւ զկաթողիկոսն և սկսաւ մաքառել ընդ նախանձորդս իւր, միանգամայն յուզել կռիւս ընդդէմ համազգեացն ուղղափառաց, զորոց զլուծ ետուն խռովարար յաջորդք նորա՝ ծանր ծանր տուգանօք և բանտարկութեամբ, մինչև մատնել 'ի մահ և զերանելին Կոմիտաս քահանայ յամին 1705, յորում ամի վախճանեցաւ և Նահապետ կաթողիկոս՝ կացեալ 'ի հայրապետութեան զամս չորեքտասան։

ԳԼՈՒԽ ԽԴ.

Մոլորութիւնք ի վեր երևեալք յեօթնևտասներորդի դարու.

ՔՈՒԱՔԷՐՔ

ՆՈՐԱԾԻՆՍ այս աղանդ մոլեգնելոց ճանաչի ընդ անուամբ Քուաքէրք, որ Դողդոջօղ կամ դեղևեալ ՚ի մեր բարբառ թարգմանի. զի ՚ի հասարակաց պաշտամունս իւրեանց տատանէին շարժմամբ բովանդակ մարմնոյ։ Աղանդապետ եկաց նոցա կօշկակար ոմն Գէորգ Ֆոքս անուանեալ, որ ՚ի հասակի քսանևերից ամաց լքեալ զկրպակ հօր իւրոյ և զգործ կօշկակարութեան՝ սկսաւ շրջել ընդ գաւառս Անգղիոյ քարոզելով զխօլական ցնորս իւր ՚ի վերայ ներքին կամ հոգևոր լուսաւորութեան մտաց, և յորդորելով զամենեսին ՚ի բարեկրօնութիւն և տալով զանձն իւր յօրինակ ուղիղ վարուց։ Եւ քանզի ինքն կարի յոյժ հաճեալ էր ընդ վարդապետութիւնն զոր քարոզէր՝ հաւանեցոյց և զայլս յոգունս. որով ՚ի դոյն ժամանակի ստացաւ իւր հետևողս բազումս, որք կարծէին վարուք իւրեանց նմանող լինել նախնի քրիստոնէից։ Համարէին զանձինս ընդունակս ներքին ազդեցութեան, զոր անուանէին Հոգի. և որ նախ ընդունէրն՝ եթէ այր և եթէ կին, անխտիր սկիզբն առնէր քարոզելոյ այլոց։ Զախորժէին սոքա տեսանել ոչ տաճարս և ոչ եկեղեցիս, ոչ սեղանս պատարագաց, ոչ արարողութիւնս եկեղեցւոյ, այլ միայն անհրաժեշտ պարտս համարէին անձանց զգութ և սէր ունել առ ամենեսին. վասն որոյ ունէին քսակ հասարակաց ՚ի ձեռնտուութիւն աղքատաց և կարօտելոց։

Ի զայրանալ ցնորից նոցա՝ ըստ աճել համախոհից իւրեանց յաւուրս խռովութեան և ապստամբութեան՝ որ եղև առ ժամանակօք Կարոլոսի Ա. արքային Անգղիոյ յանդգնեցան սոքա համարձակ խափանել զարարողութիւնս եկեղեցական պաշտամանց, և մոլեգին կատաղութեամբ մարտնչել ընդ այնոսիկ որք պաշտպան կային նոյին։ Մոլեգնութեան նոցա սանձարկու եղև

Քրոմուէլ բռնաւոր զառն պատուհասիւք, որովք մեղմացան 'ի դաժանութենէ. և զի յաղանդաւորս իւրեանց ոչ պակասէին այր ճարտարամիտք և խաղաղասէրք, որպիսի եղեն Ռոբերտոս Պէրքլէ և Գուլիէլմոս Փէնն, որոց խնամ կալան զուսումն աստուածաբանութեան իւրեանց յերիւրել զէթ ըստ բանաւոր ինչ ընտրութեան մտաց, և սահմանել զձև եկեղեցական բարեկարգութեան ։

Գուլիէլմոս Փէնն՝ այր ականաւոր և անվեհեր՝ նուաճելով զգաւառ ինչ հիւսիսային Ամերիկոյ 'ի հընազանդութիւն տէրութեան Անգղիոյ, գնաց անդր հինգհարիւր արամբք՝ հաստատել անդ զընակութիւն, և կոչեաց զանուն երկրին այնորիկ Փէնսիլվանիա, որ երբեմն անշէն անապատ էր, և այժմ ծաղկեալ քաղաքականութեամբ ։ Եւ զի Քուաքերք Անգղիոյ 'ի սկըզբանն հեռի հրաժարեալ էին 'ի տալոյ յատեանս դատաւորաց զերդումն հնազանդութեան եկեղեցական կարգաց տէրութեան սահմանելոյ յամին 1638, որ ըստ սովորութեան նոցա վարի մինչև ցայժմ, առեալ կրէին հալածանս անբերելիս. յորմէ նեղեալք՝ խոյս տային յԱմերիկա, ուր բազմացաւ յոյժ թիւ ժողովրդեանն Փէնսիլվանիոյ ։ Կարոլոս Բ. արքայ Անգղիոյ տեսեալ թէ աղանդաւորքս այսոքիկ են այր սակաւապէտք, զգաստք, պարկեշտք, արդարակորովք և գթասիրտք, դադարեցոյց զհալածանսն, և թոյլ ետ նոցա կալ ՚նմին 'ի խաղաղութեան ։ Նոյնպէս և Յակովբ Բ. նպաստամատոյց եղև նոցա. որպէս և Գուլիէլմոս Գ. շնորհեաց նոցին ազատութիւն համարձակ վարելոյ զկրօն իւրեանց ըստ նախնի սովորութեանն ։ Անգղիացի խաժամուժն՝ որ ժամանակս ոչ սակաւ թշնամանօք վարէր ընդ նոսա իբրու ընդ ցնորելոց ոմանց, և կամէր ջնջել զնոսա յաշխարհէ, այժմ սիրէ յոյժ զքաղցրամբ բարս նոցա, և յարգէ և գովէ զբարեկարգ ընթացս խստակրօն կենաց նոյին ։

ՌԱԶՄԱԴԻՄԻ մոլորութիւնք վերընձիւղեալք յԱնգղիա, և ծաւալումն անթիւ աղճատանաց նոյին, որպէս և օրինակն՝ որով արդդյ ընծայեցան վարդապետութիւնքն քարոզեալք յանհեթեթ և 'ի տղայամիտ անձանց, պատճառք եղեն աւաղելի արգասեաց 'ի սիրտս և 'ի միտս արանց անձնահաճից։ Ոմանք յանդգնեցան ասել՝ թէ աշխարհս կարգադրեալ իցէ 'ի կոյր տեսչութենէ. այլք համարեցան՝ թէ վարդապետութիւնք հաւատոյ քրիստոնէութեանս պղտորեալք և դեղեալք իցեն յաղբերականս իւրեանց. վասն որոյ կամեցան զամենայն ինչ վերածել յառաջին վիճակ և 'ի ծագումն։ Այսպիսի համարձակախօսութեամբ յորդեցան հեղեղք ամբարշտութեանց, որք յայնմ դարու ուղխօրէն լցին զԵւրոպա։

Սոկինեան աղանդաւորք որջացեալքն յԱնգղիա՝ պնդեցան զինիլ ընդդէմ խորհրդոյ ամենասուրբ Երրորդութեան, և որսացան կուսակից իւրեանց զերևելի մատենագիրս՝ որք յայտնապէս պաշտպան կացին հերետիկոսութեանն։ Տեսան և անգղիացի գրագէտք որք ոչ զանգիտեցին գրել 'ի նպաստ արիոսեանց, և անպատուհաս կացին մնացին 'ի հաղորդութեան ընդ Անգղիական եկեղեցւոյն, և ժամանեցին 'ի բարձրագոյն պատիւս արքունեաց։

Ախոյեան արիոսեանց երևեցաւ յայնմ դարու և Սփինոզա հոլանդացի՝ 'ի հրէութենէ եկեալ 'ի քրիստոնէութիւն, այլ Թափուր 'ի հաւատոց. գրեաց սա յոլով աղճատանս անաստուած մոլորութեան, որովք անմտութիւն նորա հրապարակագոյժ եղև. քանզի վարդապետութիւնք նորա այնպէս տարապայմանք են և անհեթեթք, զի ոչ այլ ոք յանաստուածից մարթացաւ երբէք երազել։ Ըստ մտաց նորա չիք այլ ինչ բայց 'ի միոյ միայնոյ յաւիտենական և անբաժանելի գոյացութենէ, զոր նա ինքն Աստուած անուանէ. իսկ այլ ամենայն էակք՝ զորս մեք կարծեմք գոյակս զանազանեալս 'ի միմեանց՝ ոչ այլ ինչ են բայց եթէ պէսպէս յեղանակաւորումն այնր յաւիտենական և անբաժանելի գոյացութեան՝ յայնչափ զանազան ձեւս կերպացեալք որչափ էակք իցեն այլ և այլ տեսլեամբք ։ Ըստ այսմ վարդապետութեան աստուածն Սփինոզայի լինի միանգամայն հոգի և մարմին, մարդ և անասուն, բարի և չար, արդար և ամբարիշտ, ցուրտ և ջերմ, այլովքն հանդերձ ․ մինչև կամելով խօսել տիրապէս ըստ կարծեաց նորա՝ չէ օրէն ուղղութեամբ ասել թէ արեգակն ջեռուցանէ զերկիր, ծովն վերամբարձ ունի զնաւս, դատաւորն պատուհասէ զյանցաւորս, և որ ՚ի սոյն սակի բանք իցեն ․ այլ պարտ է ասել՝ թէ Աստուած յեղանակաւորեալն յարեգակն՝ ջեռուցանէ զԱստուած զեղանակաւորեալն յերկիր ․ Աստուած յեղանակաւորեալն ՚ի ծով՝ վերամբառնայ զԱստուած զեղանակաւորեալն ՚ի նաւ ․ սոյն նման և այլքն ։

Ի հերքել զայսպիսի անդէպ և խեղայեղ վարդապետութիւն՝ թէպէտ բաւական էր և նմին իսկ Սփինոզայի միտ դնել անտեղի արգասեաց բանիցն, սակայն նա ջանահնար եղև վարել ՚ի բանս իւր զխորութիւն մտաց ։ Բայց քանզի ոճ գրութեան նորա անպիտան էր, և գրուածքն ՚ի լատին բարբառ, մատեան նորա ոչ այնպէս փառաւոր եղև՝ որպէս մատեանք անկրօն մատենագրին Պայլի, որ էր մի յընտիր օրինակագրաց Գաղղիոյ ։

Համբաւաւորս այս սոփեստէս ծնեալ ՚ի Լանկըտոք և մեկուսացեալ ՚ի Հոլանդիա սակաւ մի յառաջ քան զունայնանալ Նանթեսեան հրովարտակին՝ ոչ էր առաւել յօժարամտեալ ՚ի կալվինեան ուսումն քան յուղղափառութիւն ․ թէպէտ և արտաքուստ նոյնադաւան կարծէր ընդ կալվինեանս, սակայն և այնպէս գուն գործէր դարձ առնել ՚ի Գաղղիա ։ Խնդրէր ևեթ հրաման յօրինելոյ զօրագիրն անուանեալ Լրաբերոյ ․ միանգամայն և թոյլատուութիւն բնակելոյ ՚ի թագաւորութեան անդ զամ մի նախ քան զյայտնի հրաժարումն ՚ի կալվինեան վարդապետութենէ ։ Սակայն ըստ գրելոյ իւրոյ առ մի ոմն ՚ի բարեկամաց իւրոց, ոչ կամէր թէ Պոսիւէ եպիսկոպոս հանդիսացուցէ զյաղթանակ դարձի իւրոյ յուղղափառութիւն ։

Ի չյաջողել փափաքմանց և խնդրոյ նորա՝ եկաց ՚ի Ռոթթերտամ քաղաքի, ուրանօր գրեաց զմատեանս իւր անսանձ և արձակերասան լեզուաւ, մինչև 'ի նոյն իսկ 'ի Հոլլանդիա համարեցաւ անկարգ և անզգամելի։ Սա այս անօրէն գրելով իբր քրիստոնեայ ոք՝ գործէ վերս անհնարինս պօղեալ ձեռօքն, որովք արձակէ շանթս հրալիցս։ Խոկմունք նորա 'ի վերայ գիսաւոր աստեղ, որպէս և ճառքն յաղագս ներողամտութեան, և մանաւանդ բառարանն՝ են աղբիւրք՝ յորոց ամենք 'ի յետամիտ սերմանաքաղ իմաստակաց հաւաքեցին իւրեանց կանոնս բարուց և աստուածաբանութեան։ Ոչ ոք այնպէս չարաչար վարեցաւ ճարտարամտութեան ձրիւքն և հմտութեամբք 'ի ցուցանել զերկբայութիւն 'ի վերայ ամենայնի, և աղօտացուցանել զյայտնի և զպայծառ վարդապետութիւնս հաւատոյ, որպէս անօրէնս այս Պայլ յիւրում բառարանի։ Մեռաւ 'ի Ռոթթերտամ քաղաքի յամին 1706։

ԳԼՈՒԽ ԻԵ.

Նորոգութիւնք զանազան կարգաց կրօնաւորաց։

ՏՐԱՊՊԵԱՆՔ

ԵԿԵՂԵՑԻՆ Քրիստոսի վշտակիր 'ի նորանոր ազգի ազգի տառապանաց՝ սփոփեցաւ ոչ սակաւ 'ի նորոգութենէ խստամբեր ճգնութեանց և առաքինի վարուց նախնի միայնակեցացն Եգիպտոսի։

Յովհաննէս լը Պութիլլի Ռանսէ յետ վարելոյ զաւուրս երիտասարդութեան իւրոյ յախտալից կեանս և 'ի մոլութիւնս, զգաստացեալ 'ի տեսութենէ մահուան տիկնոջ ուրումն սիրելւոյ իւրոյ՝ դարձաւ առ Աստուած սրտի մտօք, և ծանուցեալ զունայնութիւն ճոխութեան և զհաճոյից մնոտի կենցաղոյս, գնաց թագչել յառանձնութեան անապատին Տրապպայի, որ 'ի Գաղղիա. ուր եղեալ մեծաւոր՝ հաստատեաց զխստակրօն նորոգութիւն վարուց, սահմանելով զկանոնս սրբոյ հօրն Բենեդիկտոսի ըստ նախնի բարեկարգութեանն։ Նոյն ընկալաւ յորդոր քաջալերութեան յայցելութենէ մեծամեծ իշխանաւորաց. զի Յակոբ Բ. Թագաւոր Անգղիոյ՝ որ զտէրութիւն իւր կորուսեալ էր 'ի պատճառս նախանձու ուղղափառ հաւատոյ ։ որպէս և դշխոյ կին նորա , նոյնպէս և դուքսն Աւրելիոնի եղբայր Լուդովիկոսի ԺԴ , և այլ բազում իշխանաւորք ստէպ յայց ելանէին այնմ առանձնութեան , տեսանել զհրեշտակակերպ վարս և զանընդհատ լռութիւն միայնակեցացն և օգտիլ 'ի նոցանէ ։ Թիւ աշակերտաց նորա առաւելու յոյժ յոյժ · մինչև ասել բազմաց զնմանէ որ ինչ միանգամ ասացաւ երբեմն զսրբոյն Փրանկիսկոսէ , թէ “ Անստացութիւն քարոզելով աշակերտս հաւաքէ ,, ։

Այս այր ականաւոր՝ վերանորոգող կրօնից , կատարեաց զկեանս իւր 'ի քսան հոկտեմբերի յամին 1700 'ի հասակի եօթանասուն և հինգ ամաց , թողեալ իւր յիշատակ յոլով մատեանս հոգևորս , յորոց բազումք ճառեն զպարտուց միանձնական կենաց ։ Սահմանեաց կանոնս կրօնաւորաց իւրոց՝ պարապիլ 'ի ձեռագործս , որպէս և ինքն իսկ տկար և գիրգ մարմնով 'ի նոյն լինէր մտադիր ։ Սակայն էր նոցա և ժամանակ ուսմանց և ընթերցուածոց · քանզի և ինքն իսկ սովոր էր պարապիլ յուսումն և 'ի թղթակցութիւն ընդ ազնուազգիս , յորոց բազումք 'ի ձեռն խրատու և յորդորանաց նորա ածան 'ի բարեկարգութիւն կենաց ։ Օրինակ գրուածոյ նորա ընտիր է և վսեմ , շքեղ և պայծառ · խօսի վայելուչ եղանակաւ , և յոլովակի միտ դնէ պերճախօսութեան քան ընտրութեան իմաստից ։ Ունէր զնմանութիւն սրբոյն Բեռնարդոսի 'ի շահելն և 'ի հաստատել զերևելի և զականաւոր անձինս 'ի շաւիղս բարեպաշտութեան կենաց · սակայն չունէր զշնորհս ոգելից եռանդեան նորա ։

Վերանորոգութիւն Տրապպեան կարգին որ եղեն 'ի սմանէ՝ կանուխ ժամանակաւ 'ի վեշտասաներորդի դարու հիմնեալ և հաստատեալ էր յԱբբայական վիճակին ուրեք մերձ 'ի Պուրպոն-Լանսի քաղաք · որպէս և յառաջիկայ դարուս հաստատեցաւ և 'ի Վալ-տէ-Շու 'ի վիճակին Լանկրեայ ։ Երկոքին մենաստանքս այսոքիկ են վարժարանք խստակրօն կենաց և առանձնութեան ։

ԳԼՈՒԽ ԺԶ·

Նորանոր կարգք կանոնականք ։

ԿԱՐԳ ԱՂՕԹԱՎԱՆԻՑ ԳԱՂՂԻՈՑ

ՊԱՂՋՈՒԹԻՒՆ և անկարգութիւն սպրդեալ մուծեալ էր ոչ միայն 'ի մենաստանս կրօնաւորաց, այլ և եկեղեցական վիճակք չէին գլխովին ազատք 'ի ցոփութենէ․ վասն որոյ 'ի նորոգել զվարս բարեպաշտութեան և զուսումն կարևոր մակացութեանց 'ի դղերս՝ Պետրոս Պէրուլլ, որ յետոյ ընկալաւ զպատիւ կարդինալութեան յՈւրբանոսէ Ը՛, հիմն արկ միաբանութեան քահանայից Աղօթավանիցն Գաղղիոյ յամի տեառն 1611։ Նա զի նա ինքն 'ի մանկութենէ հետէ տուեալ էր զանձն յուսումն եկեղեցական գիտութեանց, և 'ի հրահանգս բարեպաշտութեան առաքինի վարուց, նոյնպէս համղխացոյց զաշակերտսն՝ բարեկիրթս, առաքինասէրս և մեծարուս։ Վախճանեցաւ զկնի երկուց ամաց կարդինալութեան իւրոյ 'ի հասակի յիսուն և վեց ամաց՝ 'ի ժամու անդ մատուցանելոյ զպատարագ, և զոր ոչն կարաց աւարտել իբրև քահանայ՝ լրացոյց զայն որպէս ողջակէզ նուիրմամբ անձին։

Միաբանութիւն առաքելաշնորհ առնս եղև վարժարան մեծապատիւ գիտնականաց, առաքինազարդ քահանայից, և լուսաւորեալ հանճարեղ արանց, որք մինչև ցյետին ժամանակս ծաղկեցան պիտանի ուսմամբք պատշաճականօք պաշտաման իւրեանց։ Անձինք միաբանութեանս չէին կապեալ ուխտիւք, այլ իւրաքանչիւր 'ի նոցանէ այնպէս միացեալ էր ընդ մարմնոյ ընկերութեանն՝ զի և ըստ հաճոյս մարթ էր նոցա մեկնել 'ի միաբանութենէն երբ և կամք էին նոցա։ Մեծաւոր նոցա էր որպէս երիցագոյն 'ի հաւասարակիցս իւր․ յայն սակս ասաց վասն նոցա երևելի ատենակալ ոմն, թէ “Աղօթավանիցն կարգ է միաբանութիւն ինչ, յորում ամենեքին հնազանդին, և չիք ոք որ հրամայէ”։

Միաբանութիւնս այս համանման է յոյժ, և իբր գաղափարեալ յընկերութենէ անուն սրբոյն Փիլիպպոսի Ներեան, որ հաստատեցաւ 'ի վեշտասաներորդի դարու:

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ՍՈՍԿԱԿԱՆ ՔԱՀԱՆԱՅԻՑ

ԸՍՏ օրինակի այսր միաբանութեան սահմանեցան և այլ ընկերութիւնք բարենախանձ ծառայից Տեառն յաճումն և յառաւելութիւն արգասաւորութեան քահանայական պաշտաման: Յայսպիսեաց սակի էր և Կեսար անն Պուս մականուանեալ քահանայ Վենասինոյ, հիմնարկու միաբանութեան քահանայից՝ որք պարապին 'ի հրահանգել զոգէսս 'ի քրիստոնէական վարդապետութիւն:

Նոյնպէս և սուրբն Վինկենտիոս Պաւղեցի խնամ կալաւ հաստատել զընկերութիւն քահանայից 'ի գործս առաքելութեան, որք անուանեցան Ղազարեանք 'ի տեղւոջէ անուն բնակութեան իւրեանց 'ի Փարիզ քաղաքի, որ էր անկելանոց յանուն սրբոյն Ղազարու: Միաբանեալքն յայսմիկ յերկսին ընկերութիւնս կապեալք պարզ և դիւրալոյծ ուխտիւք՝ ազատք են 'ի վտանգէ ապաշաւանաց. զի մարթ է նոցա ելանել 'ի միաբանութենէն երբ և կամեսցին:

Ի սմին դարու եղեն և այլ կրկին ընկերութիւնք սոսկական քահանայից համանմանք վերոգրելոցդ: Օլիէ ժողովրդապետ սրբոյն Սուլպիկիոսի, որ և մեծաւոր էր դպրոցի նորա, նոյնպէս և Եւդոս հիմնեցին երկուս միաբանութիւնս, յորս չլինէին և ոչ պարզ ուխտք. սակայն եղեն կարի օգտակարք յոյժ 'ի բարեկարգութիւն վարուց եկեղեցականաց:

ՍԱԼԵԶԵԱՆՔ

ՍՈՒՐԲՆ Փրանկիսկոս Սալեզացի՝ եպիսկոպոս Գենեւա քաղաքի, և վախճանեալ 'ի Լուգդոն Գաղղիոյ յամին 1612, այր արժանապատիւ և մեծարոյ, որ հոգեշահ քաղցր քարոզութեամբն և գթասիրտ բարուք դարձոյց յուղղափառութիւն արս իբր ութսուն հազար 'ի հերետիկոսաց, եղև հիմնադիր կարգի հաւատաւոր *կուսանաց ընդ անուամբ Այցելութեան · որում ձեռնտու եղև ստացուածովք և մեծազգի տիկինն Շանթալ, որ ապա յաղագս եռանդագին բարեպաշտութե՟ իւրոյ դասեցաւ 'ի կարգս սրբոց ։*

Միանձնուհիքս այսոքիկ կարգեալք 'ի պատիւ այցելութեան սրբոյ կուսին առ Եղիսաբեթ, զառաջինն սովոր էին յայց ելանել աղքատաց և հիւանդաց · բայց յետոյ պատշաճ դատեալ սրբոյն Փրանկիսկոսի փակել զնոսին 'ի մենաստանս, կամեցաւ զի գէթ մենաստանք նոցա լինիցին ապաստանարանք վատառողջից և ցաւագարաց, սահմանելով կանոնս՝ զի պակասութիւն առողջութեան փափաքողացն մտանելոյ 'ի մենաստան մի՛ լիցի պատճառք մերժելոյ զնոսին 'ի բաց, ըստ որում սովոր է լինել յայլ մենաստանս ։ Ընդ կրօնաւորական կանոնապահութեան իւրեանց պարապեն և 'ի դաստիարակութիւն աղջկանց ։

Սոցին համանման գործով և վախճանաւ եղեն և հաւատաւոր կուսանքն հիմնեալք յազնուազգի տիկնոջէ ումեմնէ Լեսթոնա անուանելոյ, որ էր այրի մանկահասակ 'ի Պորտոյ քաղաքէ, և ունէր զամենայն ձիրս պիտանիս 'ի հիմնարկութիւն, իբր զի ազնուատոհմ ոք էր, մեծատուն, բարեպաշտ, արիասիրտ և իմաստուն ։ Ի կանոնս իւր հաստատեալս 'ի քահանայապետէն Պօղոսէ Ե՝ յամին 1607, սահմանեալ էր կատարել զպաշտօն գործոց Մարթայի հանդերձ հոգւով ջերմեռանդութեան Մարիամու քերցն Ղազարու, այս է բերել զնախանձ փրկութեան ընկերին՝ հանդերձ խնամով կատարելութեան անձին ։

ՈՒՐՍՈԼԵԱՆՔ

ՅԱՄԻ *տեառն* 1611 *քահանայապետն Պօղոս Ե՝ հաստատեաց և զայլ կանոն միանձնուհեաց համեմատ նախագրելոցդ, որք անուանեցան Ուրսոլեանք · զի հիմնադիր կարգի նոցա սրբուհին Անգեղա կամ Անձելա ընծայեաց զմիաբանութիւն զայն պաշտպանութե՟ սրբուհւոյն Ուրսոլայի ։ Միանձնուհիքս այսոքիկ յամին* 1604 *ստացան իւրեանց բնակութի՟ 'ի Փարիզ քաղաքի խնամարկութ՟ք այրի տիկնոջն կոչեցելոյ Լուլլիէ, որ մեծարգի* էր 'ի քաղաքին և պատուեալ 'ի պալատականաց, ապա 'ի մայրաքաղաքէ անտի սփռեցան ընդ ամենայն գաւառս։ Հանգամանք կանանց այսր կարգի միօրինակ պատշաճականք զօրաւոր և քաջառողջ խառնուածոյ որպէս և գիրգ բնութեան՝ պատճառք եղեն և յորդոր բազմանալոյ նոցա 'ի Գաղղիա յօգուտ հասարակաց. զի պարապէին 'ի դաստիարակութիւն օրիորդաց, մինչև արդիւնք բարենախանձ վաստակոց և գթասիրութեան նոցա տարածեցաւ և յԱմերիկա։

ՔՈՐՔ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ԵՒ ՍԻՐՈՅ

Ի ՍՄԻՆ դարու կանգնեցաւ 'ի Գաղղիա միաբանութիւն ինչ բարեպաշտ կանանց 'ի խնամս ձեռնտուութեան տնանկաց և ախտացելոց, ծառայելով նոցա յանկելանոցս և դարման մատուցանելով ոչ միայն մարմնական ախտից, այլ և հոգւոյն ապաքինութեան. յոր սակս անուանեցան Քորք ողորմութե՟ և սիրոյ։ Հիմնարկու բարեպաշտութեանս եղև ազնուական տիկին Լը Կրա, որոյ վառեալ եռանդագին ըղձիւ օգնելոյ այլոց՝ կանգնեաց զայս միաբանութիւն, որք ընդ հոգևոր կրթութեան և աղօթից նուիրեն Աստուծոյ զզուարթածաղիկ հասակն իւրեանց և զազնուատոհմութիւն զկեանսն 'ի պէտս կարեաց թշուառ մարդկան, միօրինակ հսկելով յառողջութիւն ախտացեալ մարմնոց և 'ի փրկութիւն հոգւոց նոցա։

Այսոսիկ նորանոր միաբանութե՟ց սահմանադրութիւնս 'ի դէպ է յաւելուլ և զվերանորոգութիւն նախնի կարգաց և կանանց միակեցական վարուց՝ որք եղեն յայսմ դարու։

Միաբանութիւնք Բենեդիկտեանց սրբոյն Մաւրոսի 'ի Գաղղիա, որպէս և սրբոյն Վաննէսի և սրբոյն Իդուլփոսի, յորոց ելին երբեմն արք՝ գիտնականք որք բազմահմուտ մատենիւք իւրեանց ճոխացուցին զգրատունս Եւրոպայ, առ ժամանակօքս կարօտացան վերանորոգութեան. քանզի 'ի մէջ մենաստանացս այսոցիկ 'ի պակասութենէ խոհական կառավարութեան ծագեցան վէճք, տրտունջք և երկպառակութիւնք, ոռովք թուլացան 'ի նախնի բարեկարգութենէ իւրեանց և յուսումնասիրութենէ ։ Վերանորոգութեան նոցա յորդոր և հեղինակ գտաւ կարդինալն Ռոշֆուքոյ այր ազնուատոհմ և առաքինազարդ, որ բազմօք աշխատ եղև նորոգութեան կարգաց՝ մանաւանդ սրբոյն Օգոստինոսի և սրբոյն Բենեդիկտոսի ։ Եւ զի էր աբբայ մենաստանի սրբուհւոյն Ժընվիէվի լերինն, յաջողեցաւ նմա զառաջինն առնել բարեկարգութիւն յաբբայական մենաստանի իւրում ։ Բայց ջանահնար եղև վարել զնոյն նախանձ բարեպաշտութեան իւրոյ և 'ի վերայ այլոց յոլով մենաստանաց բենեդիկտեանց և կիստերսեանց, զորս ած կացոյց 'ի շաւիղս հարց իւրեանց ։

Ջանք նորա և խնամք ոչ միայն յաճումն կրօնաւորական կարգաց, այլ և յօգուտ մարդկութե՟ն՝ առաւելապէս տեսաւ 'ի ստիպել զկրօնաւորս սրբոյ Երրորդութե՟՝ զազատիչս գերեաց՝ 'ի կիր առնուլ և վարել զերրորդ մասն եկամտից իւրեանց յազատութիւն գերեաց՝ ըստ կանոնացն զոր ունէին սահմանեալ 'ի Կղեմայ Գ. ։ Քանզի մենաստանն Փարիզու, որպէս և այլոց գաւառաց, տկար էին վարել 'ի վայելս հանգստեան կենաց իւրեանց ստացուածոցն զորս բարեպաշտ հաւատացեալք կարգեալ էին 'ի նպաստ ազատութեան քրիստոնէից գերի վարելոց յանհաւատից ։ Ի դարման մատուցանել կարդինալն այսմ անկարգութեան՝ նորոգեաց և զկանոնս բարեկարգութեան կենաց նոցա ։

ԳԼՈՒԽ ԻԴ.

Եկեղեցական մատենագիրք ։

ԵՕԹՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴՍ այս դար ճոխացեալ գտաւ ականաւոր և հոյակապ արամբք, յորոց բազումք էին 'ի կրօնաւորական կարգաց ։ Յիսուսեանց 'ի մի լծորդեալ զուսումն բանասիրութեան ընդ եկեղեցականին՝ ծաղկեցուցին զերկաքանչիւրն ։ Քաջածանօթ է ամենեցուն Բելլարմինոս կարդինալ, Կրեցէր, Սիրմոնտ, Պետաւիոս, և այլ նմանիք նոցին որք բազմահանճար հմտութեամբ իւրեանց պայծառացուցին զմիաբանութի՟ն յս՟եանց ։ Յովհաննէս Բոլլանդ 'ի նոյն ընկերութենէ՝ գամագլուտ եղև ըղձակերտ դիտաւորութեանն 'ի լոյս ընծայելոյ զվարս սրբոց , հաւաքելով զայնոսիկ 'ի սկզբնագիր մատենից և ունելով իւր ձեռնտու աջակից ընկերս յառաջադիմութեան տաժանակիր գործոյն՝ զՀենսքենիոս և զՊաբեպրոք , և յետ նոցա զայլ յս՟եանս՝ բազմահմուտ և քաջավարժս յընտրութիւն ճշմարտութեան 'ի ստայօդ պատմութեանց անտի որք խառնեալ կային 'ի նոսին ։ Եղեն 'ի նոցունց և մեկնաբանք սուրբ գրոց՝ որք բազմօք պայծառացուցին զխմաստըս աստուածաշունչ տառից , որպիսի են Մենոքիոս , Տիրինոս , Վիլլալպանդ , Կոռնելիոս Լապիդէ , և այլք յոլովք ։ Յընկերութենէ աստի էր և Հայրն Պուրտալու , որ անուանեցաւ “ Թագաւոր քարոզչաց և քարոզիչ թագաւորաց „ · համբաւի սա առաջին 'ի սրբազան պերճախօսս · յորդաբուղխ վարդապետութիւնք նորա , բանական ցուցակութիւնք ճշգրիտք և բռնադատիչք , եղանակ խօսիցն պարզ և ազդու՝ բնական և վայելչահիւս , սքանչելի կիրառութիւն բանից սուրբ գրոց և սրբոց հարց զորս ածէ 'ի մէջ , խորամուխ հմտութիւնքն կրօնի և ճշմարիտ հոգւոյ բարեպաշտութեան՝ պատճառք եղեն հռչակելոյ անուան նորա 'ի քաղաքս և յարքունիս ։ Եւ զի ինքն տիրապէս զգածեալ էր ճշմարտութեամբքն զորս քարոզէր , նմին իրի ցանկալի եցոյց զայնս և օրինակաւ վարուցն՝ ոչ ինչ նուազ քան բանիւք վարդապետութեան իւրոյ ։ Վախճանեցաւ յամի տեառն 1704 , թողլով յիշատակ արգոյ և առ թշնամիս իսկ ընկերութեանն Յիսուսի ։ Հետևողք գտան հետոց նորա և այլ անթիւ անձինք 'ի նոյն միաբանութենէ , նմանեալք ազդու և հոգեշարժ պերճախօսութեան նորա ։

Քահանայք աղօթավանից Գաղղիոյ յորդորեալք 'ի գովելի նախանձաւորութենէ՝ հանդիսացան 'ի հաւասարութիւն մեծարոյ արանց ընկերութեանն Յիսուսի, և եղեն ականաւորք ընտիր մատենագրութեամբ · յայսպիսեաց աստի է Կաբասսուտ , Լը Քօէն , Մորին , Լամի , Մալպրանշ , արք արժանապատիւք 'ի դասս ուսումնականաց ։ Ի վերջ կոյս եօթնևտասներորդի դարուս յարեաւ Մասիլլոն , որ գիտաց զմարդկային կիրս այնպիսի Ճշգրիտ օրինակաւ նկարագրել՝ մինչև ազդել 'ի սիրտս ունկնդրաց, ամոքել զնոսին և 'ի զգաստութիւն ածել։ Ճարտարութիւն արուեստի նորա է՝ խուզել և մանր կրկտել 'ի մարդկային բնութիւնս զգաղտնի հրապոյրս զոր սովոր են մոլեկան ախտք հընարիմաց Ճարտարութեամբ վարել 'ի կամին կուրացուցանել և պատրել զմարդիկ։ Արդ 'ի ցրել և հիմն 'ի վեր տապալել զսնոտի իմաստակական հրապոյրս զայնոսիկ շատ էր Մասիլլոնի յերևան ածել զնոսին քաղցրութեամբ բանից և բռնադատել 'ի հաւանութիւն։ Եղանակ բանից նորա դիւրահաս էր, պերճ և յստակ, յամենայնի վարելով զազնուականն զայն պարզութիւն խօսից՝ առանց որոյ չէ հնար լինել ախորժելի և ոչ տիրապէս պերճախօսութիւն։ Այս այր բարեհամբաւ սակս արդեանց իւրոց ամբարձաւ յաթոռ եպիսկոպոսութեան Կլերմոնի, ուր և վախճանեցաւ յամի տեառն 1742. ընդ որ սուգ էառ առ հասարակ ամենայն հօտն նորա։

Ի սմին դարու կարգ բենեդիկտեանց ստացաւ նոր պայծառութիւն բազմահմուտ գիտնական տպագրութեամբք զանազան մատենից սրբոց հարց, որովք Ճոխացան գրատունք Եւրոպայ։ Թող և զայլ տաժանակիր աշխատութիւնս հետազօտ քննութեանց 'ի վերայ պէսպէս պատմական իրաց և հնութեանց, յորս առաւելապէս քրտնաջան եղեն Աշերի, Մաբիլն, Ռուինարդ, Մարթէնէ, Մոնֆոքոն, և այլք։

Անտոնիոս Փաճի փրանկիսկեան կրօնաւոր՝ ուղղագրեաց զվրիպակս Բարոնիոսի։ Առ նոյն ժամանակաւ Նատալիս Աղեքսանդր և Կոմբեֆիս դոմինիկեան կրօնաւորք պարապէին յուսմունս օգտաշահս 'ի վերայ աստուածաբանութեան։

Եթէ 'ի կրօնաւորական կարգաց անցցուք յաշխարհական դպիրս, գտանեմք բազում մատենագիրս արժանաւորս յաւերժական յիշատակաց։ Բարոնիոս և Բելլարմինոս, առաջինն 'ի միաբանութենէ սրբոյն Փիլիպպոսի Ներեան, և երկրորդն յընկերութենէ Յիսուսեանց, երկոքին եւս կարդինալք մեծահամբաւք, մին 'ի պատմագրութեան եկեղեցական անցից, և միւսն 'ի դիմամարտութեան ընդ հերետիկոսս։ Սոցին հետեսողք գտան և կարդինալքն Պոնա և Նորիս։ Յետինս այս զարմանալի եղև հմտութեամբ և պարծանս յաճախեաց կարգի անապատաւորաց սրբոյն Օգոստինոսի, որոց էր կարգակից։

Յայսմ դարու պարծանք Գաղղիոյ եղեն ականաւոր եպիսկոպոսունք մեծարոյք և պատկառելիք ոչ միայն բարեկրօն վարուք քաղաքավարութեան այլ և խորինց վարդապետութեամբ և պերճախօսութեամբ իւրեանց. որպիսիք եղեն Լոպեսփինս եպիսկոպոս Աւրելիանի, Մարքա արքեպիսկոպոս Փարիզու, Կոտոյ եպիսկոպոս Վանս քաղաքի, Մասքարոն եպիսկոպոս Տուլեայ, Ֆլեշիէ եպիսկոպոս Նիմեսայ, որ ոչ ստորին գտաւ քան զայլ հովիւս հսկողութեամբ և քաղցրաւէր գթովք, որպէս և այլ ամենայն առաքելաշնորհ արդեամբք. միանգամայն առաւելեալ և ՚ի պերճախօսութեան՝ յորում՝ նուաղ գտաւ քան զանուանահռչակեալն Պոսիւէ եպիսկոպոս Մեղզայ, որ անուանի արծուի գաղղիացի ատենաբանից։ Եւ քանզի յիշատակեցաք զՊոսիւէ զայրն երևելի, տացուք դոյզն տեղեկութիւն ՚ի վերայ նորա։ Ծնաւ նա ՚ի Տիժոն քաղաքի յազնուական ազգատոհմէ յամին 1627, և բարեսնունդ դաստիարակուք վարժեալ յուսմունս, մեծանուն հանդիսացաւ ՚ի գործ առաքելաշնորհ քարոզութեան, առաւելապէս գերազանց ցուցեալ ՚ի դամբանական ճառս, յորս խնդրելի նրբազնին և ազնուական իմաստք, որովք պերճացեալ էր հանճար մտացն Պոսիւէի։ Լուդովիկոս ԺԴ. որ ամբարձեալ էր զնա յաթոռ եպիսկոպոսութե. Կոնտոմ քաղաքի՝ յետ սակաւուց անուանեաց զնա դաստիարակ արքայորդւոյ իւրոյ, և ապա գլխաւոր Ողորմաբաշխ դստերն, միանգամայն եպիսկոպոս Մեղզայ, խորհրդական տէրութեան, և առաջին Ողորմաբաշխ դքսուհւոյն Պուրկոյնի։ Յայսոսիկ զանազան պատիւս պաշտամանց՝ ըստ վկայելոյ Մասիլիոնի "Յացու այր հանճարեղ, և ընդարձակ խորհրդով. էր ՚ի նմա անկեղծ պարզութիւն, որ է սեպհական կնիք մեծահանձնութեան հոգւոյ. եպիսկոպոս անպարտ ՚ի մէջ արքունեաց. այր պերճացեալ հանճարովն և բազմապատիկ գիտութեամբք, վարդապետ համօրէն եկեղեցեաց, ահարկու ամենայն աղանդոց, և հայր սուրբ եօթնևտասներորդի դարուս․ որ թէ ծնեալ էր 'ի նախնի դարս, լեալ էր արդեօք լուսատու սիւնհոդոսացն առաջնոց, և հօգի հարցն որոց գումարեցան 'ի Նիկիա, յԵփեսոս և յայլ ժողովս,,։ Վախճանեալ քաջ անատղիւ յօդել զպաշտօն հաւատութեան ընդ այլոց պաշտամանց, ոչ պակասեաց երբէք 'ի խնամոց անտի հօտին իւրոյ, թէպէտ և զբաղեալ էր 'ի բազմապատիկ գործս աշխատութե. Յայսր ամենայնի վերայ ջանահնար եղև դարձի յօգնութիւն կալվինականաց, ածելով զնոսին 'ի գոգ սուրբ եկեղեցւոյ. յամենայն գրուածս իւր յաղթական գտաւ մերժողն հերետիկոսաց, առաւելապէս 'ի սքանչելի գիրսն մակագրեալ [illegible]. որպէս և 'ի գիրսն [illegible]։ Այս այր ականաւոր վախճանեցաւ 'ի Փարիզ քաղաքի յերկոտասաներորդ աւուր ամսեանն ապրիլի յամին 1704, 'ի հասակի եօթանասուն և եօթն ամաց։

Ի բազմահատոր գրուածս գործոց իւրոց մեծապէս արժանայարգ են Խօսք նորա 'ի վերայ ընդհանուր պատմութեան, յորում 'ի մի նկար տեսութեան ամփոփեալ պարագրէ զօրէնսդիրս, զաշխարհակալս և զազգս, զմոլութիւնս և զառաքինութիւնս, միանգամայն համառօտ և ազդու բանիւ նկարագրէ զընթացս ժամանակին' որ ծախէ և սպառէ զամենայն. ցուցանէ և զձեռն ամենակալին 'ի վերայ մարդկային մեծութեանց, զպակասիլ և զջնջիլ թագաւորութեանց ըստ օրինակի աշխարհակալաց իւրեանց, և թէ զիարդ հաւատք աստուածայինք կան և մնասցեն յանփոփոխ յաւիտեանս

Հաւասարապատիւ Պոսիւէի գտաւ և Ֆենելոն արքեպիսկոպոս Քամպրէյի, որոյ քաղցրահամբոյր բնաւորութիւն և ճարտարահիւս յօրինուածք ազդու բանիցն զբազմութիւն հերետիկոսաց ածին 'ի փարախ սուրբ եկեղեցւոյ։

Բաց 'ի մեծարգոյ եպիսկոպոսաց աստի Գաղղիոյ' եղեն և 'ի կղերց անտի նորա արք մեծարգոյք 'ի դաս գիտնականաց, որպիսի է Լանուա, Հերման, Քոթլիէ, Բալուզիոս, Մաբիլոն, Ռիքոլ, Տիլլեմոն, Ֆլէօրի, և այլք յոլովք, որոց արդիւնք և անխոնջելի հնաքննութիւնք յիշատակելոյն անպակաս 'ի կարգս եկեղեցական վիպասանից ․ զի քրտնաշխատ հետազօտութիւն նախնի եկեղեցական մատենից եղեւ նոցա յորդոր պարապելոյ յայտնի երկասիրութեանս ։ Առ սոքօք եղեն եւս ընդերկար եւ տաժանակիր ուղեւորութիւնք դիմելոյ 'ի հեռաւոր երկիրս առ 'ի խնդիր ձեռագիր մատենից եւ ստուգելոյ զնախնի արձանագրութիւնս, գնալ 'ի տեսութիւն հնաշէն աւերակաց եւ գաղափարել զօրինակ ձեւոյ եւ դրից նոցա ։ Յուզեցան ամենայն գրատունք, եւ ամենայն անկիւնք մենաստանաց, եւ 'ի յայտ եկին 'ի նոցանէ անհամար ճոխութիւնք գրուածք անյայտք եւ անծանօթք բնակչաց տեղւոյն ։ Թող զի եւ ուրեք ուրեք թուլացեալք 'ի բարեկրօնութենէ միակեցական վարուց, եւ հեղգացեալք յուսումնասիրութենէ՝ ոչ միայն անփոյթք էին պահպանութեան այնոցիկ մատենից, այլ եւ ըստ մասին ցրուեալ եւ ցեցակեր լեալ եւ անպիտանացեալ էին ։ Հաւաքեցան անգին մնացորդքն այնոքիկ, յորոց յոլովք ընծայեցան 'ի լոյս տպագրութեամբ, եւ այլք եղան յերեւելի դրատունս հասարակաց, ուր մարթ է ուսումնասիրաց վարել զայնոսիկ ըստ պէտս ։

Փափաք հնախոյզ հետազօտութեանց այնպէս զօրացեալ էր 'ի սմին դարու, զի եւ միաբանութիւնք կրօնաւորաց յորդորեալք յուսումնասիրութենէ, եւ 'ի խափանել զպարապորդ դատարկութիւն միաբանից, առաքեցին ծախիւք իւրեանց արս յաջողակս 'ի խնդիր հնագիր մատենից եւ այլոց հնութեանց ։ Եղեն եւ անձինք 'ի հասարակաց մարդկանէ, որք առ 'ի գիւտ եւ 'ի ստուգութիւն իրաց ինչ կարեւորաց չխնայեցին 'ի ծախս եւ յաշխատութի, յանձն առեալ զամենայն առ սէր ճշմարտութեան ։ Այսպիսի հնախնդիր ուղեւորութիւնք ստէպ եւս եղան 'ի գործ հաճութեամբ եւ յորդորմամբ թագաւորաց եւ իշխանաւորաց, տալով ուղեւորաց զկարեւոր ծախսն՝ որով մարթասցին դիւրաւ եւ համբերութեամբ կատարել զաշխատութիւն իւրեանց ։ Յայսմ ժամանակի եւ արքունի մատենադարանն Փարիզու ճոխացաւ ընտիր հայագիր մատենիւք ինչ ։

Գովելի եւ օգտակար հետազօտութեամբքս՝ բաց յանթիւ եւ յանհամար նախնի յիշատակարանաց փոխադրելոյ յԵւրոպա պայծառացաւ եւ ուսումն աշխարհազլրական 'ի ձեռն ուղևորութեանց ։ Յաւել 'ի սոսին և զօգուտս մեծամեծս զոր քաղեցին աստղաբաշխութիւն , նաւարկութիւն և այլ ամենայն արուեստք ։ Թող և զայն , զի ուղևորութեամբք տարածան մարդիկ նորանոր տեղեկութիւնս զայլ և այլ բարուց , սովորութեանց և կրօնից ազգացն յորս շրջեցան ։ Միանգամայն ծանեան զօրինակ քաղաքական տեսչութեան , զիմաստախոհ և կամ զանհեթեթ կարգս օրինաց նոցին , զխռովութիւն և զաղմուկ ապստամբութեան , որովք այլայլեցան վիճակք ազգացն այնոցիկ ․ խելամուտ եղեն պատճառացն և յառաջադիմութեան խռովայոյզ անցից նոցա ։ Այս ամենայն ծանօթութիւնք եղեն ևս օգտակարք կրօնի , զի ուր պակասէին հաւատք ճշմարտութեան՝ առաքեցան մշակք 'ի քարոզութիւն , և ուրանօր կային՝ հաստատեցան և ծաղկեցան ։ Ընդ այսոսիկ տարածան և զհմտութիւն պէսպէս ուսմանց եղելոց 'ի զանազան գաւառս , զորս առեալ 'ի քննութիւն՝ ժամանեցին ցծագումն ազգացն այնոցիկ , և վէպք տեղափոխութեան նոցա յայլ և այլ երկիրս՝ պատճառք եղեն բացայայտութեան հատուածոց ինչ բանից սուրբ գրոց , որք առանց այնոցիկ մնային դժուարահասք 'ի մեկնչաց ։ Զնոյն լոյս և զպայծառութիւն ընկալան անդր եկեղեցական և աշխարհական պատմութեանց ։

ԳԻՐՔ ՈՒԹԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա.

Համառօտ տեսութիւն հանգամանաց առաջիկայ ութեւտասներորդի դարուս ։

ՀԱՍԵԼՈՎ յընթացս նախընթաց դարուն՝ ՚ի մէջ ամենայն դարուց անցելոց գտանեմք զայն առաւելեալ յուսմունս մոլորամիտ սկզբանց եւ զառածեալ վարդապետութեան, որք պատճառք եղեն յաճախութեան յեղծուածս եւ յապականութիւն բարուց, յորմէ մուտ գտին սերմանք անհաւատութեան ՚ի մշակութենէ արբանեկացն սատանայի՝ զինել եւ մարտնչել ոչ միայն ընդդէմ աստուածային պաշտամանց կրօնի եւ բարեպաշտութեան, այլ եւ քաղաքական օգտի եւ խաղաղութեան հասարակաց ։ Պարագլուխք եւ առաջնորդք չարեացս աւանդին լինել անաստուածք ոմանք յԱնգղիոյ եւ ՚ի Հոլանդիոյ, որք զառաջինն թունալից գրուածովք խրեանց ապականեցին զմերձաւոր սահմանակիցսն, եւ ՚ի նոցունց սփռեալ տարածեցաւ ՚ի Գաղղիա եւ ՚ի Գերմանիա ։ Ընդ միջոցս իբր քսան կամ երեսուն ամաց հանդիսացան անհամար մատեանք պատմականք եւ իմաստասիրականք, կեղծապատիր վիպասանութիւնք, երգիծական բանաստեղծութիւնք, հեգնական կատակաբանութիւնք, եւ այլ անթիւ գրուածք դիւաշունչք ՚ի մեղկել զսիրտս ընթերցողաց, պղտորել զմիտս եւ յետս նահանջել զնոսին ՚ի բարեպաշտութէ ։ Ունայնք եւ հրահանգեալք ժանտաժուտ սկզբամբքս կանգնեցին զդրօշ անաստուածութեն, որով բազմագոյնք ՚ի մարդկանէ մեղկեալ թուլացան ՚ի պաշտամանց եկեղեցւոյ, մինչև հուպ 'ի վախճան եօթնևտասներորդի դարուն ծաւալեալ տեսաւ ժանտալից ուսմանն անհաստատութեան ընդ ամենայն կողմանս Եւրոպայ ։ Ի սոցունց աստի առին համարձակութիւն դիմախօսութեան և ըմբոստանալոյ ընդդէմ եկեղեցական կարգաց և իշխանութեան․ յանդգնեցան ստել և զաստուածային յայտնութիւնս, որպէս և զարարչագործ նշանս սքանչելեաց՝ զհիմունս քրիստոնէական կրօնից ։ Այս աւաղելի վիճակ թերահաւատութեան եգիտ իւր նպաստամատոյց և զոմանս 'ի մոլորամիտ իշխանազանց, որոց յորդորեալ 'ի նորասիրութենէ ջանահնար եղեն փոփոխութիւնս մուծանել յեկեղեցական կարգս և 'ի կանոնս, բռնի նուաճել կամելով զնոսին ընդ աշխարհական իշխանութեամբ, մինչև համարձակիլ քանդել զեկեղեցիս և զմենաստանս և ցրուել զխումբս կրօնաւորաց՝ տարագրելով 'ի բնակութենէ իւրեանց և գրաւելով զստացուածս նոցա ։

Ահա յայսպիսի չարարմատ տնկոց ընծայեցան պըտուղք դառնահամք, որոց յիշատակք՝ աւաղելի վէպք են յառաջիկայ ութևտասներորդի դարուս զոր ունիմք քաղել փոքր 'ի շատէ ըստ եկեղեցական անցից, թողեալ 'ի բաց զաշխարհաւեր գործս աղետալիս որք զեկեղեցին Քրիստոսի արկին 'ի ծուփս անբերելի վըշտաց ։

ԳԼՈՒԽ Բ.

Աղմուկ 'ի պատճառս առաջարկութեան դիպուածոց ինչ խղճի մտաց ։

ՀՈԳԻ հակառակութեան և բանակռուութեան՝ որ 'ի դարս առաջինս բնացաւ 'ի մարդիկ յամենայն տեղիս, ոչ շիջաւ և յայսմ դարու ։ Կարծիք յանսենեանց որ պատճառք եղև դառն երկպառակութեանց յանցելում դարու՝ տակաւին խռովէր զեկեղեցի ։ Բազում քահանայապետք մերժեալ և հերքեալ էին զայն վարդապետութի՟, բայց աշակերտք Յանսենիոսի պընդէին՝ թէ դատապարտութիւնն այն ոչ էր 'ի վերայ մտաց վարդապետին իւրեանց, այլ 'ի վերայ մոլորութեանցն ընծայելոյ նմին 'ի թշնամեաց նորա : Այս զանազանութիւն պատճառք եղև անվախճան հանապազորդելոյ քննականութեանն : Ապա յամին 1701 հանդիսացաւ ձեռագիր վարդապետութիւն ինչ աստուածաբանական Դէպք խղճի հարց անուանեալ, որ պատճառք եղև խռովութեան և քրթմնջմանց :

Յայնմ հանդիսացեալ վարդապետութեան խոստովանահայր ոմն հարցանէր՝ եթէ մարթ իցէ արձակել զեկեղեցականն որ 'ի հարցաքննիլ իւրում 'ի վերայ յանսէնեան վարդապետութեանց տուեալ իցէ պատասխանի. Նախ՝ եթէ ինքն դատապարտէ զհնգեսին զառաջարկեալ վարդապետութիւնսն ըստ ամենայն մտաց որովք դատապարտեցան յեկեղեցւոյ, բայց ինքն եղեալ է 'ի մտի թէ առ դատաստան գործոյն՝ շատ իցէ ցուցանել զհպատակութիւն լռութեան և ակնածութեան, և թէ ցորչափ չիցէ հնար ակներև ստուգել թէ որ պաշտպան կայցէ միումն 'ի դատապարտեալ վարդապետութեանց անտի՝ չունի որ իրաւունս և իշխանութիւն նեղելոյ զնա, և կասկածելի դատելոյ զհաւատս նորա : Երկրորդ՝ թէ ինքն հաւանեալ է, եթէ նախասահմանութիւնն ձրիական է, և շնորհքն իւրև գործունեայ : Երրորդ՝ ոչ հաւատալով յանարատ յղութիւն սրբոյ Կուսին Մարիամու, ոչ ևս տայ ինչ ընդդէմ այնոցիկ՝ որք այլազգն խորհիցին : Չորրորդ՝ թէ ինքն համարձակ և անխիղճ ընթեռնու զգիրսն Առնոլտի, և այլոց քանի մի անձանց իբր մատեանս ընտիրս և ընդունելիս, զէթ 'ի վիճակին յորս չիցէ արգելեալ յեպիսկոպոսաց :

Յայտ է ամենեցուն՝ թէ այս դիպուած խղճի մտաց կեղծիք էր և մտացածին, առաջարկեալ ևեթ 'ի տալ պատասխանիս նպաստաւորս կուսակցաց Յանսենիոսի : Այնմ գրուածոյ քառասուն վարդապետք սորբոնեանց, որք ականաւորք և գիտնականք, անզգոյշ գտեալք՝ արարին պատասխանի, թէ դիտաւորութիւն մտաց և պատասխանատուութիւնք այնր եկեղեցականի՝ ոչ նորք էին և ոչ դատապարտեալք յեկեղեցւոյ . և ոչ ևս յայնպիսեաց անտի, յորոց սակս օրէն իցէ ժխտել կամ զըլանալ զարձակումն :

Այս գրուած և վարդապետութիւն զաղտ ծաւալեալ զառաջինն, 'ի հրատարակել անդ յամին 1703 դատապարտեցաւ 'ի Նոայլ կարդինալէն՝ իբր հակառակ վճռոց քահանայապետաց, և որպէս զրգռիչ խռովայոյզ նորոգութեան վաղու ևս աւարտեալ և որոշեալ խնդրոց, նպաստաւոր կիրառութեան համաձայն բառից և բանից, և խափանարար իշխանութեն եկեղեցւոյ: Արգել դարձեալ զի մի ոք վասն չարահամբաւելոյ զասոխ իւր կամ զհակառակորդ՝ համարձակեսցի պարսաւագէտ մտօք բամբասել զնա որպէս յանսենեան, իբրև զի բանիւ կամ գրով պաշտպան կացեալ իցէ միումն 'ի հերքեալ առաջարկութեանց անտի: Այլ սակս ամենայն վարդապետք որք ձեռնագրեալ էին այնմ գրուածոյ խղճի մտաց՝ խոստովան եղեն զվրիպել իւրեանց, բայց 'ի Պէտիփիէլեայ որ խոյս տուեալ 'ի Հոլանդիա՝ պարծէր ընդ յամառութիւն իւր և արհամարհէր զայնոսիկ որք որպէս ինքն ասէր՝ շահախնդրութեամբ յետս կոչեալ էին զհաւանութիւն իւրեանց:

ԳԼՈՒԽ Գ.

Կոնդակ Կղեմայ ընդդէմ յանսենեանց: Աւերումն կուսաստանին որ 'ի Փոռռոյալ:

ԳԱՀՆ Հռովմայ խնամ կալաւ զառաջս առնուլ խռովութեն 'ի ձեռն զանազան կոնդակաց, յորս զօրաւոր և բացայայտագոյն բանիւ յայտ առնէր զայն Կղեմէս ԺԱ. յամին 1705 'ի կոնդակին սկզբնաւորեալ "Զայգի տեառն զօրութեանց". յորում դատապարտէ զակնածութեն լռութիւնն՝ իբր օժանդակ ծածկելոյ զչարն քան յաղթութիւն վերածելոյ, և որպէս պատճառք տալոյ մոլորութեան քան ջնջելոյ և անհետանալոյ: Յայտ առնէ 'ի կոնդակին, թէ կուսակիցք կամ ջատագովք այնր լռութեան կամին ծածկել զթոյն մոլորութեանն վասն համարձակ ծաւալելոյ զայն ըստ դէպս առթից. և թէ կեղծեօք համարին պարտուպատշաճ հնազանդութիւն առ պատգամս եկեղեցւոյ զչընդդիմախօսելն ևեթ հրապարակաւ, թէպէտ և 'ի ծածուկ պարսաւեն և ստգտանեն զայնոսիկ: Այս կոնդակ քահանայապետին 'ի հաճութենէ Լուդովիկոսի ԺԴ. դիւանագրեալ 'ի ժողովս խորհրդականաց, և առաքեալ առ ամենայն եպիսկոպոսունս տէրութեան, միաբան հաւանութ՟բ ընկալեալ եղև 'ի համօրէն ժողովոց կղերցն Գաղղիոյ։

Կարդինալն՝ Նոայլ որ հանդիսիւ մեծաւ հրատարակեալ էր զայն կոնդակ յիւրում թեմի, պարտ վարկաւ առաքել և առ միանձնուհիս Փոռոյալ մենաստանին որ 'ի Շամփ, պահանջելով 'ի նոցանէ գրաւոր յայտարարութիւն կամակար հպատակութեան իւրեանց առ այն կոնդակ։ Իսկ նոքա ետուն պատասխանի, թէ յօժարամիտ հնազանդին այնմ, բայց առանց վնասու և խափանելոյ զեղեալսն առ Կղեմէս Թ. 'ի տալ նորա զխաղաղութիւն եկեղեցւոյ։ Ընդ այս բան նոցա զայրացաւ յոյժ Լուդովիկոս արքայ. վասն որոյ առաքեաց անդր զտեղակալ քաղաքին Փարիզու հանդերձ երեքարիւր զօրականօք՝ հանել 'ի մենաստանէն զմիանձնուհիսն, որք առանձնացան յայլ և այլ վանս, և մեծագոյն մասն 'ի նոցանէ մտադիւր հպատակեալ ստորագրեցին առաջարկեալ ձևոյ բանիցն։

Յետ այնորիկ ջնջեցաւ աբբայութիւնն այն և հիմնայատակ քանդեցան շինուածք այնր մենաստանի՝ մինչև չմնալոյ ամենևին հետոց բնակութե՟, որ երբեմն օթևան էր հանճարեղ արանց և գիտնականաց, և ապաստանարան բարեպաշտութեան. բայց 'ի բազում ժամանակաց հետէ համարեալ էր յաչս Լուդովիկոսի ԺԴ. իբր խշտի մոլորութեանց և ամրոց յանսենեան վարդապետութեան։ Եկամուտք և ստացուածք այնր մենաստանի պարգևեցան միանձնուհեացն որ էին 'ի Փարիզ քաղաքի։

Որք միանգամ 'ի վարդապետաց խնամածուք և հարք համարեալ էին մենաստանին քանդելոյ՝ յօրինեցին 'ի վերայ աւերակաց նորա պէսպէս եղերերգութիւնս ցաւագինս, որք ազդողագոյն ևս լինէին արդեօք եթէ չէին յերիւրեալ երգիծական և թշնամանալից բանիւք ընդդէմ թագաւորին և՝ Նոայլ կարդինալին։

ԳԼՈՒԽ Դ.

Ապստամբութիւն կաթոլիկականաց 'ի Սեւաննեան լերինս.

ՅՈՒՆԱՅՆԱՆԱԼ հրովարտակին Նանթի թէպէտ և նուաղեալ էր աղանդն կալվինեան 'ի Գաղղիա, այլ ոչ 'ի սպառ անհետացեալ: Զի բազմաթիւ անձինք՝ մանաւանդ յաշխարհականաց և 'ի ձոխ մեծատանց, առ երկիւղի կամ առ ակնածութե՟ ընկալեալ էին ուղղափառութիւն. և այլք բազումք յամառեալ մտօք՝ զինչս և զստացուածս իւրեանց փոխադրեալ էին յերկիր օտար. ուստի պաշտօնեայք աղանդոյն թունալից գրուածովք արծարծանէին զմոլեգնութիւն համակրօն եղբարց իւրեանց գտելոց 'ի Գաղղիա: Հուր մոլորութե՟ս գաղտնածածուկ դարանեալ գոլով 'ի սիրտս խաժամուժ ամբոխին կալվինեանց՝ բորբոքեցաւ յամի տեառն 1702:

Ոմանք յաղանդաւորաց անտի մեկուսացելոց 'ի Սեւաննեան լերինս, տեսեալ եթէ Լուդովիկոս ԺԴ զբաղեալ է 'ի հոգս մարտի ընդդէմ մասին ինչ Եւրոպիոյ 'ի պաշտպանութիւն իրաւանց Փիլիպպոսի առ թագաւորութիւնն Սպանիոյ, ժամ դիպաւոր համարեցան յայտնի և համարձակ կատարել զպաշտամունս կալվինականութեան, վստահացեալ յանմատոյց դիրս բնակութե՟ իւրեանց: Վասն որոյ խմբէին 'ի հեռաւոր վայրս ապահովս 'ի պատերազմէ՝ առնել սաղմոսերգութիւնս ըստ կրօնից իւրեանց:

Ընդ այն ժամանակս Շէլա քահանայ բարենախանձ քարոզիչ, հրամանաւ արքային զերկոսին դստերս աշխարհականի ուրումն 'ի կալվինեանց ետ ածել 'ի մենաստան ուրեք 'ի դաստիարակութիւն, ուր յետ ընդունելոյ նոցա զուղղափառ հաւատս՝ խորշէին 'ի հայրենի աւանդից պաշտաման: Այս դէպք, զորոյ զբէն վրիժուն խորհեցան առնուլ կալվինեանք, եղև մի 'ի գլխաւոր պատճառաց մոլեգնութեան նոցա: Նոյնպէս և այլ անցք դիպեալ յամին 1703 առաւել ևս դառնացոյց զոգիս նոցա: Ի բազում ժամանակաց հետէ տրտնջէին կալվինեանք, թէ 'ի պատճառս ատելութե՟ կրօնի իւրեանց կարի ծանրաբեռնեալք իցեն քաղաքական հարկօք, և ընդհակառակն թեթևացեալ էին անտի ուղղափառք ։ Ի ժամանակօք յաճախութեան քրթմնջմանց նոցա երկու հարկապահանջք 'ի գեղջ ուրեք Սեւեննեան բարձրաբերձ լերանց՝ 'ի խնդրել հարկս 'ի նոցանէ՝ բռնի վարեցան արտաքս 'ի բնակութենէն և կախեցան հարկապահանջն ցուցական զպարանոցէ իւրեանց ։

Մարգիզն Պրոլիօ՝ արքունի կուսակալ գաւառին, և Պասվիլ հրամանատար՝ առաքեալ անդ զօրս, պատժեցին զյանցաւորսն · բայց մահ նոցա զայրացոյց զչարիսն · քանզի Քամիզարտ անուանեալքն 'ի նոցանէ ('ի պատճառս սպիտակ շապկաց զոր կրէին 'ի վերայ զգեստուց,) կատաղեալք յոյժ 'ի տանջանաց անտի համախոհ ընկերաց իւրեանց, և միաբանեալք ընդ դրօշակաւ մոլեգնութեան և ինքնօրէն ազատութեան, յորդորեալք 'ի վայրագասուն պատգամախօսաց իւրեանց՝ ծպտեալ հանդերձիւք կերպարանափոխ գնային գիշերային կողոպտել զտունս · ապա ընդ գողութե̃ն յաւելին և զսպանութիւն և զսեղանակապտութիւն, որպէս և զայլ ամենայն եղեռն անօրէնութեան՝ 'ի պատճառս ատելութե̃ իւրեանց ընդդէմ ուղղափառ հաւատոյ և պաշտօնէից նորա ։ Աբբայն Շէլաւ եղև առաջին ողջակէզն զենեալ 'ի նոցանէ · զի 'ի միում երեկոյի զրոհ տուեալ խորտակեցին զդրունս բնակութեան նորա, և չարաչար սպանին ընդ քանի մի այլոց եկեղեցականաց որք էին ընկերք բարենախանձ վաստակոց նորա ։

Ընդ այն ժամանակս նորոգեցան 'ի Սեւեննեան լերինս ամենայն չարիք և անօրէնութիւնք գործեցեալք յայլ և այլ ժամանակս 'ի կալվինեանց 'ի Գաղղիա ։ Խաչք և արձանք սրբոց խորտակեցան, սրբազան անօթք գողացեալք, և նշխարք քահանայագործեալք ոտնակոխ, եկեղեցիք հրդեհեալք և պաշտօնեայք սրբոյ սեղանոյն սպանեալք ։ Ըստ աճելոյ խուռն բազմութեան առաւելոյր և թիւ ցնորելոցն · նաև կանայք իսկ գլխովին համարէին զանձինս ազդեալս 'ի քարոզել զպատգամս երկնից · իսկ խաժամուժ ամբոխն ունկն մատուցանէր ցնորից նոցա իբրև ճշմարիտ մարգարէից ։ Հրամայէին իբր յաստուածակոյս կողմանէ սպանանել զամենայն ուղղափառս, և մանաւանդ զքահամայս, և պատուէր նոցա անյապաղ կատարէր ։ Ի մէջ ամենայն ցնորեալ մարգարէիցս նշանաւոր գտաւ ծեր ոմն կալվինեան Տիւսէռ անուն, որ ժողովեալ իւր աշակերտս, և 'ի մերձաւոր սահմանաց անտի ընտրեաց մանկունս հնգետասան, որպէս և աղջկունս նոյնչափ թուով, զորս ծնողք նոցա կամակար մտօք տային նմա, և ետ կնոջ իւրում 'ի դաստիարակութիւն, քանզի և նա գործակից էր առն իւրոյ ։ Մանկունքս այսոքիկ փոխանակ ուսմանց քրիստոնէութեան հրահանգեալք յատելութիւն և 'ի թշնամութիւն ընդդէմ հռովմէական եկեղեցւոյ, տուեալ էին զընդարձս բերումն 'ի մոլեգնութիւն ։ Յայնր ամենայնի վերայ լեռնաբընակ կենօք տգէտք և անօրէնք փակեալք յանտառախիտ վայրս, ամրացեալք յապառաժ և 'ի դահավէժ լեռնամէջս ձորոց, հեռի յամենայն ընկերութենէ մարդկան՝ ուսան մեծարել եւեթ զՏիւսէռ, զոր և համօրէն բողոքարկուք այնց կողմանց յարգէին իբր զդիւցազն աղանդոյ իւրեանց ։

Եթէ որ 'ի փախչողաց անտի առ ստացումն շնորհաց մարգարէութեան՝ յանձին բերէր զախտս կերպարանաց սոյ մարգարէի, Տիւսէռ ժողովեալ զաշակերտս իւր և դասեալ 'ի մէջ նոցա զհետամտումն այնր պարգևի կամ շնորհաց, ասէր ցնա. “Ահա եհաս ժամանակ վերջին ազդեցութեան և փչման„. և ապա հանդարտութեամբ իմն և մեղմով համբուրեալ զնա, փչէր 'ի բերան նուիրելոյն և յայտ առնէր զընդունել նորա զհոգի մարգարէութեան ։ Երբև այն ինչ զարմացեալ այլոց ընդ ծնունդ նորոյ մարգարէի և մեծափափաք անձկանօք սպասեալ միւսոյն ժամուն՝ զի և ինքեանք հաղորդակից լիցին այնր պարգևի, անդէն Տիւսէռ ոչ կարելով բանիւք հանդարտել զեռանդն բորբոքեալ աշակերտաց իւրոց, կարգէր և զնոսա 'ի մարգարէս, և առաքէր 'ի տեղիս՝ ուրանօր համարէր լաւ եւս յաջողութիւն գտանել նոցա ։ Ի պահու անդ մեկնելոյ նորածին մարգարէիցն՝ Տիւսէռ յորդորէր զնոսա հաղորդել զշնորհ մարգարէութեան ամենեցուն նոցա զորս արժանաւորս տեսցեն այնմ պարգևի, յետ հրահանգելոյ զնոսա նովին օրինակաւ՝ որով ինքն վարեցաւ ընդ նոսա . քաջալերէր դարձեալ զնոսին հաւաստի առնելով եթէ աներկբայ կատարեսցին նախագուշակեալքն 'ի նոցունց ։

Ժողովուրդք առ որս սփռեցան սորա՝ մտադիւր լուան մարգարէիցս այսոցիկ. քանզի պաշարեալ էին միտք նոցա՝ ոչ միայն կանխակալ մոլորութեամբք, այլ և ըստէպ ընթերցմամբ թռուցից և վնասակար գրոց, առանձնութեամբն յորում վարէին զկեանս իւրեանց, ապառաժ լերամբքն յորս բնակէին, ոխերիմ ատելութեամբն ընդդէմ ուղղափառաց, և 'ի պատճառս խըստութեանն որով տէրութիւնն վարէր ընդ նոսա, պատրաստականք էին ամենեքեան անսալ և յօժարամիտ ունկն մատուցանել պատգամախօսացս, որք անսովոր եղանակաւ իբր պատգամս աստուածազդեցիկս աւետաւորէին զաւեր կաթուղիկէ ուղղափառ կրօնից ։ Մարգարէքս այսոքիկ ոչ ամենեքին միօրինակ վարէին 'ի տալն զպատգամս. սովորական կանոն էր նոցա անկանել յերկիր, նիրհել կամ ուշաթափ տատանիլ ուժգին շարժմամբ և ցնցմամբ մարմնոյ, երբեմն եւս յարթմնի տագնապեալ մարմնով մարգարէանային, և մերթ իբր յապշութեան և 'ի յափշտակութեան մտաց պատգամախօսէին, և ստէպ խռովայոյզ տատանմամբ ։

Գուշակութիւնք մարգարէից դքսութեանն Տոփինէի շփոթք էին և խառնիխուռն բացատրութեամբ, յանհարթ լեզու գաղղիական և անհեթեթ ոճով, զոր դժուարին էր իմանալ որոց միանգամ չէին տեղեակ և սովոր Վիվարէզեան և Տոփինեան բարբառոյ ։ Քարոզք նոցա նմանատիպք էին գուշակութեան իւրեանց, կցկցէին 'ի դէպս և յանդէպս զիմաստս և զբանս սուրբ գրոց՝ զորս 'ի մէջ բերէին. բայց յաչս ունկնդրաց նոցա համարեալ էին ազդու և չքնաղ յորդորք քարոզութեան՝ մինչև շարժել նոցա յարտասուս ։

Արդ յանդուգն արիութեամբ խրախուսեալ ապըստամբեացս այսոցիկ վարեցին 'ի փախուստ զզօրս թագաւորին, որք կային 'ի Սևեննեան լերինս, և այս առաջին յաջողութիւն նոցա եղև յորդոր բազմանալոյ իւրեանց, և սաստկանալոյ կատաղութեան նոցա ։ Յոգնաթիւ նորադարձք յուղղափառութիւն 'ի Վիվարէզեան գաւառն և 'ի սահմանն Լանկըտոք միացան ընդ նոսա, և առած պատերազմի նոցա էր, «Ազատութիւն 'ի հարկաց, ազատութիւն խղճի մտաց„ :

Լուդովիկոս ԺԴ. ընդդէմ ապստամբացս այսոցիկ առաքեաց զմարաջախտն Մոնրեւէլ, որոյ եկեալ բազմաթիւ զօրօք փակեաց զնոսա 'ի գառադէղ փապարաց նոցին յորս որջացեալ կային. զգլխաւորս 'ի նոցանէ հան 'ի կախաղան, և զայլս յոգունս տարագրեաց 'ի մետաղս: Ապա մարաջախտն Վիլլառ՝ որ յաջորդեաց նմա յայն գործ դժնդակ և ահարկու, թէպէտ յօժարագոյն էր 'ի մարտ քան 'ի խաղաղութիւն, սակայն և այնպէս կամեցաւ վարել քաղցրաւէր գթով, և խոստացաւ ներումն և թողութիւն ամենեցուն նոցա որք յանձն առնուցուն հպատակել արքային: Սոյն և Կաւալիէ՝ պարագլուխք մոլեգնելոցն յանկուցան խոստմամբ ներողամտութեան զօրապետին, և եկին 'ի հնազանդութ՟ի թագաւորին. միանգամայն պատճառք եղեն հանդարտութեան բազմաց յապստամբաց, մինչև առ ժամն թուեցաւ հաստատիլ խաղաղութեան:

Բայց ձախորդութիւնք զինուցն զօրոյ զփորձ էառ Լուդովիկոս արքայ 'ի պատերազմին որ յաղագս յաջորդութեան Փիլիպպոսի Ե. արքային Սպանիոյ, վերստին արծարծեցին զխռովս կալվինականաց 'ի թելադրութենէ թշնամեաց Գաղղիոյ, որք 'ի ձեռն դրամոց և զօրականաց ձեռնտու էին նոցա: Մաժինէլ՝ որ էր ախոյեան այնր ապստամբութեան, նիւթէր 'ի ծածուկ զգաղնակիցս չարութեան, յորդորելով զի նորադարձքն Վիւարէզեանք պատրաստեսցին առնուլ զէնս օգնականութեամբ Անգղեան գնդին, 'ի մտանել անդ թշնամեացն 'ի Դոֆինէ կամ 'ի Փռովանս քառասուն հազար զօրօք: Մեքենայեալ դաւն այն սպասեալ մնայր յաջողութեան, բայց հելուետիացի ոմն որ լրտեսն էր դքսին Պերվիքայ, ազդ արար տեառն իւրում սակս երից կասկածելի օտարական անձանց զորս տեսեալ էր 'ի մտանել նոցա 'ի Մոնփէլիէ: Կալանաւորեցան երեքին արքն այնոքիկ, և 'ի սպառնալիս տանջանացն խոստովանեցան, եթէ Կամիզարդքն անուանեալ կալվինականք յետ տիրելոյ Ալէջս քաղաքի, զորոյ զաւառն դիւրին համարէին, հանդերձեալ էին դիմել և 'ի Մոնփէլիէ, և սպանեալ զդուքսն Պերվիք զկուսակալ գաւառին՝ յապստամբութիւն շարժել զԼանկըտոք համօրէն ։ Զայն խնդրեալ գրոյն՝ զգլխաւորսն ՚ի մոլեգնելոց արկեալ ՚ի բանտ, չարաչար մահուամբ կորզեաց զնոսա ՚ի կենաց, և այսպէս դարձ արար հանդարտութիւնն ՚ի Սեւեննեան լերինս ։

ԳԼՈՒԽ Ե.

Դատապարտութիւն բարոյական խոկմանց Հօրն Քէնէլի, զորս արար ՚ի վերայ Նորոց Կտակարանաց ։

ՔԱՆ գրագիտական խռովութիւնս կարի յոյժ դըժուարին եղև խաղաղել զեկեղեցին Գաղղիոյ՝ զտագնապեալն անընդհատ ՚ի բանակռուութե՞ յանսենեան վարդապետութե՞ ։ Մատեան ինչ ականաւոր վարդապետի ուրումն ՚ի հայրսն Աղօթավանից նորոգեաց զայն զօրաւորագոյն ևս քան զառաջինն ։ Հայրն Քէնէլ աշակերտ Արնոյի՝ այր իմաստուն և ընտիր մատենագիր, յամին 1693 և 1694 ընծայեալ էր ՚ի լոյս զգիրսն անուանեալ Խոկմունս բարոյականս ՚ի վերայ Նորոց Կտակարանաց, հաւանեալ և հաստատեալ ՚ի Նոայլ կարդինալէ, որ զայնու ժամանակաւ էր լոկ եպիսկոպոս Շալոնի, և համարէր զայն գիրս իբր հաց չափահասից և կաթն տղայոց ։

Գովեստ և հաճութի՝ զոր կուսակիցք Յանսենիսի ցուցանէին առ այն գիրս՝ ետ կասկած յիսուսեանց, եթէ ծածկեալ կայցեն ՚ի նմա թոյնք մոլորամիտ վարդապետութեան. վասն որոյ ՚ի սկզբան ութուտասներորդի դարուն յարձակեցան ՚ի վերայ այնր գրոց կրկին փոքր մատենիւք, յորոց միումն եդաւ մակագիր, Հայրն Քէնէլ դաւաճան ՚ի խոկմանս իւր որ ՚ի վերայ Նորոց Կտակարանաց ։ Իսկ երկրորդն մակագրեալ էր. Հայրն Քէնէլ հերետիկոս ։

Զայն տեսեալ Հօրն Քէնէլի՝ զուն գործեաց արդարացուցանել զանձն. բայց ջատագովութիւնք նորա չեղեն ձեռնհաս խափանել զվճիռ դատապարտութեանն որ տուաւ ՚ի Հռովմ յամին 1708 ՚ի ձեռն Կղեմայ ԺԱ. կոնդակաւն որ սկսանի [illegible] ։ Բայց ՚ի վճռոյ աստի կամեցան և եպիսկոպոսունք Լուզոնի, Ռոշելայ և Կափայ դատապարտել զգիրս Քէնէլի հոլովական Ճառիք. և քանզի հարկ էր առ գործադրութիւն Ճառիցն ընդունել զհաճութիւն թագաւորին և զհաւանութիւն բազում եպիսկոպոսաց Գաղղիոյ, գրեցաւ նամակ և առաքեցաւ առ նոսա։ Բայց ոչ յաջողեցան 'ի խորհուրդս մտաց իւրեանց. զի ծրար նամակին զոր Պօշառ Սարընեան առաքէր առ հօրեղբայր իւր առ եպիսկոպոսն Կլէրմոնի, և 'ի նմին ծրարի ամփոփեալ էր և նախագիր օրինակ նամակին գրելոյ առ թագաւորն, անկաւ 'ի ձեռս Նոայլ կարդինալին, որով խափանեցաւ գործադրութիւնն։

Եւ քանզի Խոկմունք բարոյականք Հօրն Քէնէլի սկսեալ էին աղմուկս յարուցանել, յամին 1711 ժողովական օրինադրութեամբ արգելան այն գիրք, և յամին 1713 հերքեցան 'ի Նոայլ կարդինալէն։ Հուսկ յետոյ դատապարտեցան կոնդակաւն Միածին՝ որ հրատարակեցաւ 'ի Հռովմ յութերորդ աւուր սեպտեմբերի այնր ամին 'ի խնդրոյ Լուդովիկոսի արքայի։

Կղեմէս ԺԱ. 'ի գրոց անտի Հօրն Քէնէլի եառ քաղել հարիւր և մի վարդապետութիւնս դատապարտելիս իբր սուտս, համաձայնս, կեղակարծս, փառաբերս ողջամիտ լսելեաց, թշնամանագիրս եկեղեցւոյ և սովորութեանց նորա, նպաստաւորս հերետիկոսաց և մոլորութեանց և հերձուածոց։

Յայսմ համբաւաւոր կոնդակի ասէ քահանայապետն, թէ յետ ուշադիր մտօք խոյզ և խնդիր առնելոյ յիմանալ զպատճառս հեշտալուր յաջողութեան բարոյական խոկմանցս, ծանեաք եթէ գործն այն լցեալ մոլորութեամբ՝ եգիտ շնորհս առաջի ամենեցուն, զի դաղտնածածուկ էր թոյնն։ Եւ զի մահաբեր էին վէրքն, և չէր հնար մերժել և 'ի դուրս հանել զապականութիւնն՝ առանց 'ի գործ վարելոյ զհատու սուսեր, որոյ վասն կամեցաք զառաջս առնուլ չարեացն, ոչ միայն սակս պարտուց և փութոյ հովուապետական խնամոցս մերոց, այլ զի և ազդարարութիւնք յոգունց եպիսկոպոսացն Գաղղիոյ և առէկ ևս աղերս թագաւորին բռնադատեցին զմեզ չյապաղել զդարմանն։

Բազմագոյնք 'ի դատապարտեալ վարդապետութեց պատշաճելոյ առ շնորհս՝ բովանդակէին զխնամոտս մտացն Յանսենիոսի։ Նա և այլք ոմանք հայէին 'ի խորհուրդ ապաշխարութեան , յընթերցումն սուրբ գրոց , և յանիրաւ բանադրանս . Բայց քանզի ինչ ինչ 'ի սոցանց կարէին և յուղիղ միտս վերածիլ , վասն որոյ և ոչ դոյզն քրթմնջմանց և շշնջման պատճառ եղև դատապարտել քահանայապետին զամենեսին առ հասարակ .

Սոյնգամ քահանայապետին ընկալեալ եղև 'ի ժողովոյ կղերցն Գաղղիոյ , և ինչ ինչ փոփոխութեամբ արձանագրեցաւ 'ի դիւանի խորհրդականաց տէրութեան յամին 1714 . Ի քառասուն և ութ եպիսկոպոսաց որք գտան 'ի ժողովի անդ կղերն , քառասունք ընկալան զկոնդակն , և յամին 1714 հրատարակեցին զբացայայտութիւն իմաստից նորա . բայց Նոայլ կարդինալ ընդ այլոց եօթն եպիսկոպոսաց՝ ոչ բաւական համարելով զբացատրութիւնն զայնուիկ , հրաժարեցաւ յընդունելութենէ . Լուդովիկոս արքայ զայրացեալ ընդ այն՝ գրեաց նամակս ազդու և սպառնական բանիւք առ հակառակորդն . բայց զկնի մահուան Թագաւորին յամին 1717 եպիսկոպոսունք Միրեփուայ , Սենեզի , Մոնփելիէի և Պուլոնի բողոք կալան վասն կոնդակին առ ժողովն ընդհանուր . Հետևողք գտան սոցա և այլք ոմանք յեպիսկոպոսաց , ընդ որս և Նոայլ կարդինալ .

Հայրն Քէնէլ յետ քանի մի ամաց դատապարտութեան գրոյն՝ ապաստանեալ կենօք վախճանեցաւ յԱմստերտամ քաղաքի յամին 1719 . Բռնադատեալ փախչել 'ի հայրենեաց իւրոց , խոյս տուեալ էր 'ի Պրուսէլ քաղաք . ուր կալանաւորեալ ածաւ 'ի Մալին , և անդ արգելաւ 'ի բանտ արքեպիսկոպոսարանին , յորմէ զերծաւ անակնկալ հնարիւք ազնուականի ուրումն սպանիացւոյ , որ խորամանկեալ զորմն բանտին ազատեաց զնա , և փախստական տարաւ 'ի Հոլանդիա . Յայս յետին ապաստան անկեալ յիւրոց Թշնամեաց՝ ձեռն արկ գրել 'ի ջատագովութիւն անձին մինչև ցյետին շունչ կենացն , և մեռաւ որպէս Թէ զէն 'ի ձեռին .

Այլ այս ականաւոր վիճաբանեալ էր արքական որդւոյ և համաձայնոց մտաց 'ի գրականութիւն՝ հանդերձ սեփական առողջութեամբ՝ որ ոչ այլայլեցաւ երբէք , ոչ յուզևորութենէ և ոչ յամբոխհաս ժրաջանութենէ միայն ։ Հանդերձ այլովք էր 'ի նմա և անապատութիւն վարուց , և փափաք կանոնաւորելոյ զխիղճ մտաց ։ 'ի բազմանց անտի առ միայն զատ արժանի լինել զաւակի Մխիթարի՝ որ 'ի վերայ բազկաց սորա փոխանակեալն էր ։

Ըստ աւանդելոյ ուրումն մատենագրի 'ի յիսուսեանց անտի , Մխիթար 'ի մեռանել իւրում զԴանիէլ կարգեալ էր գլուխ և առաջնորդ կուսակցաց իւրոց ։ նոյնպէս և յանձնեալք յետ մահուան Մխիթարի զնա անուանեալ էին Հայր և Աբբայ իւրեանց ։ բայց նորա հրաժարեալ յայնպիսի պատուոյ , կրէր եւեթ զանուն մեծաւորի ։ Վերպերան բենեդիկտեան կրօնաւոր այր գիտնական , և Պրիկոս անուն քահանայ , որպէս և այլ երեք կամ չորս անձինք միաբանեալ էին 'ի նոյն ընկերութիւն , որոց առաջնորդ գոլով Հայրն Դանիէլ վարէր զամենայն հնարաւոր շաւիղս 'ի խրախուսել զընկերս իւր , պահել զբարեկամս և զպաշտպանս իւրեանց , շահել նոր կուսակիցս , և 'ի գաղտնիս նախանձայոյզ լինել ընդ յոլովունց որ 'ի մենաստանս կրօնաւորաց , 'ի գզերս , յատենակալս , և 'ի յոլով արքունիս Եւրոպայ ։ Բայց պակասեն հաւաստիք ստուգութեան բանիցս ։ զի հայելով 'ի բանս կտակի նորա , զոր գրեաց հայ 'ի փոխման կենաց իւրոց՝ վիճակ աստ մեծի կարի յոյժ այլազգ երեւի քան զպատմութիւն 'ի յիսուսեան մատենագրէն ։ Քանզի ծանուցանէ նա 'ի դաւանութեան ուղիղ հաւատոյ , թէ ինքն փափաքի մեռանել որպէս եկեաց միշտ 'ի գոգ կաթուղիկէ եկեղեցւոյ , և թէ հաւատայ և ընդունի զամենայն ճշմարտութիւնս վարդապետեալս յեկեղեցւոյ , և դատապարտէ զամենայն մոլորութիւնս հերձեալս 'ի նմանէ ։ միանգամայն դաւանի և ճանաչէ զծայրագոյն քահանայապետն իբրև առաջին փոխանորդ Քրիստոսի , և զաթոռն առաքելական որպէս կենդրոն միութեան կաթուղիկէ եկեղեցւոյ ։

ԳԼՈՒԽ Ձ։

Մահ Լուդովիկոսի ԺԴ., և Կղեմայ ԺԱ.։

ԸՆԴԴԻՄԱՄԱՐՏ հակառակութիւնն՝ զոր 'ի Գաղղիա եգիտ կենդանւոյն Կղեմայ ԺԱ., ելից դառնաղէտ վշտօք զյետին ամս կենաց Լուդովիկոսի ԺԴ., յորս տըկարութիւնք մարմնոյ առաւելութեամբ իմն զայրագնէին զտագնապ հոգւոյն։ Վախճանեցաւ թագաւորս 'ի սկիզբն սեպտեմբեր ամսոյ յամին 1715. մահ նորա եղև այնու արիական վեհանձնութեամբ, որով և անցոյց զկեանս իւր։ Ամենայն բանք նորա եղեն արժանի հաւատացեալ արքայի. և բարեպաշտական խոկմունքն զորս ամբարեալ ունէր 'ի սրտի՝ յայտնեցան յայնժամ լուսափայլ պայծառութեամբ։ Ի վերջս հիւանդութեան յետին աւուրց կենաց իւրոց, որպէս և 'ի տագնապումն անդ հոգեվարութեան 'ի մէջ անբերելի ցաւոց այս եւեթ գանգատ էր 'ի բերանոյ նորա, զի 'ի քաւութիւն մեղաց իւրոց՝ ոչ ըստ արժան բաւականին կրէր վիշտս։ Ի մատուցանել նմա դեղս զօրացուցիչս և յուշ առնել՝ թէ կեանք նորա փափաքելի է ամենեցուն, ետ պատասխանի. “Կեանք կամ մահ, որ զինչ և հաճոյ իցէ Աստուծոյ„։ Իսկ առ ընտանիսն, որք արտասուալից աչօք կային առ նմա, ասէ. “Անմա՞հ արդեօք կարծէիք զիս„։ Խոստովան եղև զվրիպանս իւր, և կոչեալ առ ինքն զարքայազն որդեակս իւր, խօսեցաւ ընդ նմա համդարտ և անտագնապ. ապա դարձուցեալ զերեսս իւր առ երէցն 'ի նոցանէ, որ համդերձեալ էր յաջորդել զնա յարքայութեան, ասէ. “Որդեակ իմ, մնայ քեզ յետ սակաւուց լինել թագաւոր մեծի տէրութեան. մի հետևեսցիս յօժարամտութեանս իմում 'ի պատերազմ. խնամ կալցիս պահել զխաղաղութիւն ընդ սահմանակիցս քո։ Հատուսցես Աստուծոյ զպարտս պաշտամանց զոր ունիս։ Գուն գործեսցես սիրելի և պատկառելի լինել հպատակաց քոց։ Անպակաս զհետ երթիցես խորհրդոց բարեաց, թեթևացուսցես զբեռն ծանրութեան 'ի ժողովրդենէդ, զի ես վասն անբարեբաղդութեամս իմոյ չեղէ երբէք ձեռնհաս առնել զայն,,։

Ապա յորդոր մատոյց և եպիսկոպոսացն որք առ ընթեր կային՝ խնամ տանել անընդհատ պաշտպանութեան իւրեանց եկեղեցւոյ։ Արիաբար զօրեալ մինչև ցյետին շունչ կենացն՝ արդեամբք եցոյց զանուանն Մեծ, զոր ետ նմա Եւրոպա համօրէն։

Նոյն հանդէս արիական սրտի, որ ուղեկից եղև Լուդովիկոսի ԺԴ. մինչև ցգերեզման, զօրացոյց և զքահանայապետն Կղեմէս ԺԱ., որ յօժարական մտօք առ հրաւէր կոչմանն՝ կամակար հպատակելով զանձն աստուածային հրամանաց. 'ի կեանս իւր չեցոյց երբէք զայնպիսի արիութիւն, որպիսի տեսաւ 'ի նմա յայնմ աչաւոր պահու։ Եկեղեցին Քրիստոսի զրկեցաւ 'ի նմանէ յամին 1721 յիննևտասներորդ աւուր մարտի, յաւուր տօնի սրբոյն Յովսեփայ աստուածահօր, զորոյ զպաշտօն ժամերգութեան ինքնին էր յօրինեալ։ Կամեցաւ թաղիլ 'ի շիրմին զոր 'ի կենդանութեան իւրում պատրաստեալ էր անձին, և արձանագիր անպաճոյճ գրեալ 'ի վերայ եթէ ,,Աստ թաղեցաւ Յովհաննէս Փրանկիսկոս Ալբանոս,,։ Կոծեցան զնա ամենեքին վասն անկեղծ բարուցն և անարատութեան վարուց, և 'ի սակս քաղցրագութ բարեբարութեան իւրոյ առ ամենեսին։ Առատաձեռն էր յոյժ առ այլս, և կարի ժլատ առ անձն. սակաւապէտ և դուզնաքեայ էր սեղան նորա, թէպէտ և աղքատք և տնանկք խուռնընթացք առ նա գտանէին 'ի գորովալից գթութենէ նորա նպաստս և ձեռնտուութիւն 'ի կարօտութեան իւրեանց։ Մարսիլիա քաղաք տագնապեալ յահարկու պատուհասէ՝ զչափ էառ կարեկցութեան սրտի նորա։ Բարետիպ հանգամանք հոգւոյն նկարեալ էին և 'ի դէմսն, մինչև լոկ տեսիլ կերպարանացն շարժէր զտեսողս 'ի սէր առաքինութեան որով զարդարեալ էր անձն նորա։

Յաւուրս նորա և հաճութեամբ հաւանութեան նորին կանգնեցաւ միաբանութիւն մեր 'ի ձեռն բարեյիշատակ Հօր մերոյ Մխիթարայ վարդապետի Սեբաստացւոյ, ըստ որում ունիմք գրել զկնի։

ԳԼՈՒԽ Է.

Քահանայապետութիւն Իննովկենտիոսի ԺԳ., և Բենեդիկտոսի ԺԳ.:

Յետ քառասուն և հինգ աւուրց պարապութեան աթոռոյն՝ յամին 1721 ընտրեցաւ 'ի քահանայապետութիւն կարդինալն Միքէլ Անճելօ Հռովմայեցի եպիսկոպոս Վիթէրպոյ քաղաքի, 'ի Կոնթեան զարմէ, ուստի լեալ էին կանխաւ և այլ երկոտասան քահանայապետք: Վաթսուն և վեց ամաց էր 'ի բարձրանալն յաթոռ քահանայապետութեան, և անուանեցաւ Իննովկենտիոս ԺԳ., այր խոհական, իմաստուն, խաղաղասէր, վեհանձն և համբերող. որ և ծանուցեալ զյարգ գիտութեան, խնամարկու էր և պաշտպան իմաստնոց: Բայց հանգամանք ժամանակին՝ յորում ընտրեցաւն, չեղեն նպաստաւորք անդորրութեան քահանայապետին մեծի. զի բողոքարկուք ունելով իւրեանց թեակից զբազում իշխանս հզօրս, ջանահնար լինէին տարածել զաղանդ իւրեանց 'ի Գերմանիա. Իսկ ուղղափառ իշխանաց անմիաբան գոլով ընդ միմեանս՝ չէին այնչափ յօժարամիտք առ գահն առաքելական: Գաղղիա յուզեալ կայր 'ի պատճառս բանակռուութեան որ վասն կոնդակին Կղեմայ ԺԱ.: Կայսրն 'ի խնդիր էր ժառանգութեան դքսութեանցն Փարմայի և Փլաչենցայի, և Սպանիա պահանջէր զդքսութիւնս Կաստրոյի և Ռոնչիլիոնի: Արդ իբրև ակն ունէին՝ թէ Իննովկենտիոս ԺԳ. վախճան տացէ այսոցիկ հակառակութեանց, և հարթեսցէ զամենայն դժուարութիւնս, անակնկալ եհաս օր վախճանի նորա յետ իբր երից ամաց քահանայապետութեանն, և մեռաւ յեօթներորդ աւուր ամսեանն մարտի յամին 1724: Աւուրբք ինչ յառաջ քան զմահ նորա իբրև յորդոր մատուցանէին նմա լնուլ զթիւ պակասութեան կարդինալացն, ետ պատասխանի. «Ես ոչ ես եմ այսր աշխարհի»:

Յետ մահու նորա հաւաքեալ կարդինալացն 'ի ժողով ընտրութեան՝ անուանեցին յաջորդ զՎինկենտիոս Մարիա Օրսինի կրօնաւոր դոմինիկեան, զայր հոգեւանդն և սրբակրօն, որ կոչեցաւ Բենեդիկտոս ԺԳ. ։ Բարեմասնութիւնք նորին քահանայապետին ակնածելիք և 'ի նոցունց իսկ 'ի թշնամեաց եկեղեցւոյ՝ պատճառք եղեն դարձուցանելոյ յետս առ սուրբ աթոռն զՔոմաքիոյ քաղաք, որ 'ի բազում ամաց հետէ ցանկալի էր աթոռութեանն Հռոմայ ։ Քանզի 'ի չկամել Կղեմայ ԺԱ. հաւանել և ճանաչել զարշիդուքսն Կարոլոս 'ի թագաւոր Սպանիոյ, կայսրն Յովսէփ Ա. յամին 1708 տիրեալ էր Քոմաքիոյ քաղաքի, որ առ երի կայ սահմանաց Ֆերրարայի, զոր և բռնի կալաւ նաև յետ հաշտութեան քահանայապետին ընդ նմա ։ Պատիւ վերադարձի քաղաքիս առ սուրբ աթոռն՝ պահեալ էր Բենեդիկտոսի ԺԳ., որ ստացաւ եկեղեցւոյ զայն քաղաք, հաւանեցուցեալ զԿարոլոս Զ. հանել անտի զկուսակիցս իւր յամին 1725 'ի փետրուարի ։

ԳԼՈՒԽ Բ.

Քարոզութիւն քրիստոնէութեան առ Սինէացիս ։ — Վէճք 'ի վերայ ծիսից և արարողութեանց նոցա ։

ՑՆԾՈՒԹԻՒՆ քահանայապետին Բենեդիկտոսի ԺԳ. ընդ յաջողութիւն նախապատուեալ իրացն խռովեցաւ յանակնկալ լրոյ ձախորդութեան և դժնդակ հալածմանց որոց տանէր քրիստոնէական կրօն յաշխարհին Սինէացւոց ։ Արդ քանզի 'ի վեշտասաներորդի դարու վեր 'ի վերոյ և իբր հարևանցի յիշատակեցաք զառաքելութիւն յիսուսեան կրօնաւորաց յայնմ ընդարձակ տէրութեան, և զխոչընդոտսն որք ընդ առաջ եկին հոգեշահ ջանից նոցա, ժամ զիպաւոր համարիմք կարգել աստանօր զհամառօտութիւն պատմութեանցն այնոցիկ ։

Յետ մահուան սրբոյն Փրանկիսկոսի Քսաւերեան կրօնաւորք ոմանք յորդորեալք յօրինակէ նորա գտին շաւիղս և հնարս մտանելոյ յաշխարհն Սինէացւոց ։ Հայրն Մատթէոս Ռիչչի կրօնաւոր յիսուսեան քարոզեաց անդ զաւետարանն Քրիստոսի այնպիսի արգասաւոր յաջողութեամբ, մինչև 'ի կրօնակցաց իւրոց անուանիլ « Առաքեալ Սինէացւոց » ։ Բազմադիմի դժուարութեանց տարաւ նա առ 'ի գլուխ հանել զայս գործ ։ Նախ՝ զի Սինէացիք սովոր են անգոսնել զայլ ամենայն ազինս , և առ ոչինչ համարել զնոսա · այսմ դժուարութեան ջանահնար եղև հայրն Ռիչչի ըստ մասին զարմանս մատուցանել խոհական գիտութեամբն և անպարսաւ քաղաքավարութեամբ ։ Երկրորդ՝ հարկ էր նմա ուսանել զլեզու Սինէացւոց , որ կարի դժուարին և տաժանելի է քան զամենայն բարբառս Եւրոպայ · զի Սինէացիք չունին ալփաբետս ըստ այլոց ազգաց , որք սահմանեալ թուով տառից կարեն գրել և բացատրել զամենայն · այլ ընդ հակառակն՝ փոխանակ տառից են նոցա երեքհազար և երեքհարիւր իննսուն տառք կամ գրաձև նշանք , յորոց մէն մի յայտարար է և բացայայտիչ իրիք զաղափարի կամ նշանակութեան · որով բարբառ նոցա յօրինեալ և կազմեալ է 'ի բազմութենէ ձևոց կամ գրանշանաց , և 'ի պահանջել հարկին օր ըստ օրէ հնարեն նորանոր նշանագիրս 'ի բացատրել զայնսիկ ։

Հայրն Ռիչչի ճարտարութեամբ իւրով ձեռնհաս եղև հարթել զամենայն դժուարութիւնսն · քանզի համարձակ խօսէր զլեզուն , զոր յոլովք 'ի քարոզչաց կենօք չափ աշխատ եղեալ՝ հազիւ կարէին կակազել ։ Ընդ ձրից լեզուախօսութեան զարմանալի էր և արթնամիտ զգօնութեամբն և քաղցր կենցաղավարութեամբ 'ի շահել զժողովուրդն ։ Եւ քանզի Սինէացիք պաշտօնասէրք և փոյթեռանդք յանթերի կատարումն սովորութեանց իւրեանց և արարողութեանց , խնամ ունէին պահպանութեան կարգաց ինչ պատշաճելոց առ վախճանեալ ծնողս իւրեանց , որպէս և առ Կոնփուկիոս ոմն անուն իմաստասէր և օրէնսդիր , որովք թուէին կասկածս տալ կռապաշտութեան , Հայրն Ռիչչի զգօնօք համարեցաւ զայնսիկ իբր քաղաքական սովորութիւնս ինչ անմեղս և արժանիս ներողամիտ թոյլտւութեան առ ժամանակ մի · զի խորարմատ հաստատեալ էին 'ի սիրտս տխմար ժողովրդեան ։

Բայց ներողամտութիւն Հօրն Ռիչչեայ ոչ հաճոյ թուեցաւ դոմինիկեան կրօնաւորաց , որք նոյնպէս մտեալ էին յայն աշխարհ 'ի քարոզել զաւետարանն Քրիստոսի · վասն որոյ Հայրն Մորալէ՝ մին 'ի դոմինիկեանց, դարձ արար անտի յԵւրոպա բողոք ունել առ Ինոկենտիոս Ժ. ընդդէմ քարոզչաց կարգին յիսուսեանց. և յամին 1645 ընկալաւ վճիռ 'ի ժողովոյն տարածման հաւատոյ, որ հերքէր և դատապարտէր զարարողութիւնս Չինէացւոց։ Զայն վճիռ հաստատեալ էր և քահանայապետն Ինոկենտիոս Ժ.. բայց յամին 1656 յիսուսեանք զնոյն խնդիր բարեձև կերպարանօք առաջի արարեալ նորին ժողովոյ՝ ընկալան այլ վճիռ հակառակ առաջնոյն որ զնոյն արարողութիւնս Չինէացւոց համարէր լոկ քաղաքական սովորութիւնս ։

Յայնմ ժամանակի՝ յորում յուզէին բանակռուութիւնքս այսորիկ յԵւրոպա, յիսուսեանք յաշխարհին Չինէացւոց գտանէին զյաջողութիւն յառաջադիմութեան իւրեանց, զի խորամուխ ուսումն և տեղեկութիւնք նոցա 'ի բնաբանական վարժս ընդունելի և հաճոյ արարին զնոսա յաչս ինքնակալացն Չինէացւոց ։ Առաւելապէս համարձակութիւն գտին յաւուրս տէրութեան Քան-հի Թագաւորին, որ էր այր հանճարեղ, բարեսէր և պաշտպան ուսումնականութեան ։ Սա ինքն յամին 1692 առանձին հրովարտակաւ ծանոյց ժողովրդեան, թէ քրիստոնեական կրօնք վարդապետութիւն ինչ է անվնաս, վասն որոյ թոյլ ետ անխափան զքարոզութիւնն ։

Ի քարոզչացն յուղարկելոց յաշխարհն Չինէացւոց՝ էր յիսուսեան ոմն կրօնաւոր 'ի Պորտոյ քաղաքէ Լըքօնթ անուն, որոյ դարձ արարեալ յԵւրոպա՝ յամին 1700 ընծայեաց 'ի լոյս զերկհատորեան գիրս յիշատակարանաց 'ի վերայ վիճակի այնր տէրութեան . յորում յայտ առնէր՝ թէ ժողովուրդ այնր աշխարհի յերկուց հազար ամաց հետէ և այսր ունիցի զծանօթութիւն ճշմարտին Աստուծոյ, և թէ 'ի նախնի յանյիշատակ ժամանակս աշխարհի պաշտօնատար լեալ իցէ ամենաստեղծ արարչին . և թէ Չինէացիք 'ի կիր արկեալ իցեն զանստգիւտ ուսմունս բարոյականութե առ ժամանակօքն՝ յորս այլ կողմանք տիեզերաց թաւալեալ կային 'ի մոլորութիւնս և յապականութեան վարուց ։

Դոմինական ոմն Պուալոյ անուն եղբայր այնորիկ որ զերգիծարան քերթութիւնն շարագրեաց՝ յընթեռնուլն զայն գովեստ Սինէացւոց խռովեցաւ յոյժ. և զի էր ինքն վարդապետ Սորբոնեան, ամբաստան եղև առ ժողովն վարդապետաց զհօրէն Լըքօնթէ, համարելով զնա հայհոյիչ, որ զժողովուրդն Սինէացւոց հաւատաբեր ժողովրդեանն Աստուծոյ։ Յորմէ շարժեալ ընկերութեանն Սորբոնեանց՝ դատապարտեաց զվարդապետութիւնն զայնոսիկ համդերձ համօրէն մատենիւքն յորոց քաղեալ էին այնոքիկ. Յոր սակս յետ ժամանակաց ինչ յամին 1762 խորհրդարանն Փարիզու հրաման ետ այրել զմատեանն զայն։

Առ ժամանակօք դատապարտութեան մատենին ՚ի Սորբոնեան վարդապետաց յամին 1701, յաճախեցին խնդիրք և բանակռուութիւնք ՚ի վերայ օրինաւորութեան սովորութեանց Սինէացւոց. և ՚ի կարի զայրանալ խնդրոց հակառակութեան՝ Կղեմէս ԺԱ. համարեցաւ պատշաճական դարման ՚ի հանդարտութիւն հակառակամարտից՝ առաքել դեսպան զոք առ Սինէացիս յամին 1702։ Ընտրեալն յայն դեսպանութիւն էր եպիսկոպոսն Թովմաս Մայլարտ Փիեմոնթեցի. որոյ ուղևորեալ անդր եհաս ՚ի Փէքին մայրաքաղաք Սինէացւոց յամին 1705, և ընկալեալ համարձակութիւն՝ տեսաւորեցաւ ընդ Թագաւորին, և արար ազգի ազգի կարգադրութիւնս, զորս քարոզիչքն ոչ կամեցան դնել ՚ի գործ։ Ապա յամին 1710 եպիսկոպոսն այն վախճանեցաւ ՚ի բանտի, յետ երկուց ամաց ընդունելոյ նորա զպատիւ կարդինալութեան։

Կղեմէս ԺԱ. վշտացեալ յոյժ ընդ մահ կարդինալին, գովեաց զնա ՚ի համագումար ժողովի յասելն. « Կարդինալն Մայլարտ որպէս զոսկի մաքուր փորձեցաւ ՚ի բովս անհնարին տանջանաց, որոց տարաւ զքանչելի արիութեամբ »։ Հրամայեաց ապա զի առ յապա անվրէպ դիցեն ՚ի գործ համօրէն վճիռք աթենի սրբազան քննութեան պատշաճեալք առ սովորութիւնս և յարարողութիւնս Սինէացւոց, և պաշտօն Ճշմարտին Աստուծոյ մի ևս խառնեսցի ընդ պաշտամանն Բահաղու։

Ի պատճառս անողոքելի բանակռուութեան քարոզչաց ընդ միմեանս՝ եռանդն քրիստոնական հաւատոյ թուլացաւ 'ի սիրտս իշխանաց, որպէս և թագաւորին Չինէացւոց. վասն որոյ 'ի մեռանել Քան-Հի արքային՝ յամին 1724 յաջորդ նորա Եոն-չինկ հրամայեաց ելանել 'ի սահմանաց տէրութեան իւրոյ ոչ միայն քարոզչաց քրիստոնէութեան, այլ և նոցա որք դաւանէին զայն կրօն. Եւ զի թագաւորս այս քաղցրաբարոյ ոք էր, չկամեցաւ պատուհաս սաստիկ կարգել 'ի վերայ անհնազանդիցն, այլ մանաւանդ կալաւ առ իւր զերևելիս ոմանս 'ի յիսուսեան կրօնաւորաց իբր գիտնականս և ճարտարարուեստս. Զկնի այսորիկ անցից պակասեցան ստուգագիր ծանօթութիւնք 'ի վերայ վիճակի քրիստոնէութեան կողմանցն այնոցիկ. զի յետին պատմաբանք ներհակախօսք միմեանց՝ իւրաքանչիւր ըստ քմաց բարդելով կամ կարճելով գրեն զյաջողութիւն քարոզչացն ուղևորելոց անդր.

Երկբայելի թուին և գովեստքն զորս ածեմք 'ի քարոզչաց ետուն ժողովրդեան այնր աշխարհի, թերևս վասն հաճոյական ընծայելոյ զհոգևոր արդիւնս աշխատութեան իւրեանց. Քանզի ըստ վկայելոյ յետին աշխարհայած ուղևորաց այնր կողման, Չինէացիք չեն արժանի կոչել առաջին կամ նախապատիւ ժողովուրդ աշխարհիս, որպէս ոմանց յիմաստասիրաց կամք եղեն այսպէս կոչել զնոսա. Իսկ յաղագս համբաւեալ գիտնականաց այնր ազգի՝ չիք երկբայութիւն թէ յաճախեալ է 'ի նոսա մնապաշտութիւն, մոգութիւն, դիւրահաւանութիւն երազոց և ցնորից, դիւակոչութիւն, տխմար կռապաշտութիւն, և անզգամելի ապշութիւն մտաց.

ԳԼՈՒԽ Թ.

Ժողով գաւառական յԷմբրուն քաղաքի, և ընդունելութիւն կոնդակին Կղեմայ.

Ոչ ամենայն եպիսկոպոսունք Գաղղիոյ ընկալեալ էին զկոնդակ քահանայապետին Կղեմայ. զի և ոմանք 'ի նոցանէ յանդուգն մտօք անգոսնեալ և մերժեալ էին զայն 'ի սպառ՝ իբր անհեթեթ և հերքելի վճիռ. Յայսպիսեաց աստի էր եպիսկոպոսն Սենեզ քաղաքի՝ Սամէն անուն, այր ծեր և պատկառելի, որ ստէպ և անընդհատ յաճախելով 'ի վանս ընկերութեան Հարց աղօթավանից, և կենակցեալ ընդ Հօրն Քեռնելի, հաճեալ էր ընդ կարծիս մտաց նորա։ Սա յամին 1726 գրեաց հրահանգ հովուական, յորում պանծալի բանիւք ներբողէր զգիրս բարոյական խոկմանց Հօրն Քեռնելի, և տխուր բանիւք նկարագրէր զկոնդակ սահմանադրութեան Կղեմայ ԺԱ., եպերելով և զնոսա որք պատճառք եղեն և յորդորք հրատարակելոյ այնր կոնդակի։

Արքեպիսկոպոսն Ամբրուն քաղաքի՝ Թանսէն անուանեալ, որ էր մետրապօլիտ եպիսկոպոսին Սենէզի՝ հրաման ընկալաւ գումարել ժողով գաւառական յարքեպիսկոպոսական քաղաքի իւրում, և սկիզբն արար ժողովոյն 'ի վեշտասաներորդ աւուր ամսեանն օգոստոսի յամի 1724, ուր կոչեցաւ եպիսկոպոսն Սենէզի, որ յետ բազմադիմի պատասխանատուութեանց ընդդէմ բանիցն զորս 'ի մէջ բերին ժողովականք, և բողոքելոյ նորա առ ապագայ սինհոդոս, անընդունելի լեալ պատասխանատուութեանցն՝ հրատարակեցաւ արգելեալ յամենայն իշխանութենէ իրաւանց եպիսկոպոսութեան. և հովուական հրահանգ նորա դատապարտեցաւ իբր յանդգնական, գայթակղական, խռովայոյզ, թշնամանաւոր եկեղեցւոյ՝ եպիսկոպոսաց և արքայական իշխանութեան։ Այս հրամանաւ ժողովոյն ծերունի եպիսկոպոսն այն փակեցաւ յարքայական մենաստանի ուրեք յԱւվէռնիա գաւառի, ուր և վախճանեցաւ յամին 1740 'ի հասակի իննսուն և երկուց ամաց։ Տեղի արգելմանց նորա և առանձնութեան կարի յաճախեալ էր 'ի կուսակցաց իւրոց, զի ընդ բազմահանճար իմաստութեանն երևէին 'ի նմա և գովելի արժանապատիւ առաքինութիւնք։

Զկնի միոյ ամի դատապարտութեան եպիսկոպոսին Սենէզի կարդինալն՝ Նոայլ արքեպիսկոպոս Փարիզ քաղաքի՝ հրապարակաւ յայտ արար զհաւանութիւն իւր ընդ կոնդակ քահանայապետին Կղեմայ ԺԱ. 'ի ձեռն հովուական ճառին զոր հրատարակեաց 'ի մետասան հոկտեմբերի յամին 1725. յորում յետս կոչելով զնախկին հովուականն իւր որ յիննևտասան յանուարի 1719, դատապարտէր զբարոյական խոկմունս Հօրն Քեսնելի՝ ըստ մտացն և իմաստից որով հերքեալ դատապարտեցան 'ի Կղեմայ ԺԱ։ Ի նմին ժամանակի գրեաց կարդինալս այս և նամակ շրջաբերական առ ամենայն եպիսկոպոսունս տէրութեն, որպէս և առանձին գիր յայտարարութեան առ քահանայապետն Բենեդիկտոս ԺԳ. որ լցաւ անպատում խնդութբ, և շնորհս կալաւ ընդ անկեղծ ցոյց հպատակութեան նորա առ կոնդակն առաքելական։

Նկատաւոր կարդինալս այս վախճանեցաւ 'ի հետեւեալ ամի 'ի հասակի եօթանասուն և ութ ամաց։ Էր նա այր բարեկիրթ և առաքինասէր, ծանրաբարոյ, համեստ 'ի կենակցութիս, միօրինակ քաղցր և անխտիր առ ամենեսին։ Գութ նորա առ աղքատս և տուրք ողորմութեան անթիւք էին, մինչև 'ի մեռանել նորին վաճառեալ զամենայն կահս նորա 'ի հատուցումն ծախուց թաղմանն, հազիւ յաւելան հինգհարիւր լիրայք եւեթ. զի և թշնամիք նորա ոչ կարացին ստգտանել զանպարսաւ վարս նորա։ Սիրէր պարապել ընթերցումն աստուածաշունչ տառից, սրբոց հարց և աւանդութեց եկեղեցւոյ, և աստուածաբանական և բարոյական ուսմանց. համառօտ ասել, խնամ կալաւ գիտել զամենայն որ միանգամ պէտք իցեն առ փառօք և գովութեամբ 'ի գլուխ հանել զպարտս եպիսկոպոսութեն։

ԳԼՈՒԽ Ժ.

Համբաւ ստոյգ սքանչելեաց սարկաւագի ուրումն մեռելոյ.

Ի նմին ամի յորում վախճանեցաւ կարդինալն Նոայլ, շիրիմ սարկաւագի ուրումն Փարիզացւոյ Պարիս անուն, որ էր եղբայր խորհրդականի ուրումն ժողովոյ իշխանաւորաց, յորոց ազմուկ շփոթից 'ի մայրաքաղաքն Փարիզ. զի յոգունք 'ի ռամիկ ժողովրդոց սկսան ընծայել այնմ շիրմի անթիւ նշանս սքանչելեաց, յորս առաւելապէս զարթուցիչ եղև դիւրահաւանութեան ամբոխին՝ կարծեցեալ բժշկութիւնն աղջկան ուրումն կուրի և կարկամեալ անդամոց նորա, որպէս թէ ընկալեալ էր աղջկանն զշնորհն յետ կատարելոյ զիննօրեայ պաղատանս առ գերեզմանին Պարիսի ։ Ի հրատարակել մանրամասն պատմութեան այսր սքանչելեաց հանդերձ բազում վկայագրովք, արքեպիսկոպոսն Փարիզու Լուք՝ յաջորդ Նոայլ կարդինալին՝ հրամայեաց առնել ատենական քննութիւն ։

Գործակալքն կարգեալք յարքեպիսկոպոսէն ծանեան զստութիւն բժշկութեանն, հասու լեալ ստուգութեամբ ստայօդ վկայութեանցն և եղեալ գործոյն ։ Զի կոյր համբաւեալն չէր երբէք կորուսեալ զտեսութիւն աչացն. և զի յետ ինն օրեայ պաղատանաց դժուարէր դարձեալ յընթացս սակս կարկամեալ անդամոցն ։ Վասն որոյ հրատարակելով զստութի սքանչելեացն, դատապարտեաց պատմական ճառն այնր հրաշից, և արգելաւ չհամբաւել նոր սքանչելիս առանց քննութեան և հաւանութե արքեպիսկոպոսին ։ Այս արգելք չեղեն ձեռնհաս խափանելոյ զեռանդն ժողովրդեան. քանզի յորդորեալ նոցա 'ի պատմութենէ հրաշից այնր չիրմի, զտիւ և զգիշեր խուռն ընթանային աղօթել առ տապանի նորա որ էր 'ի գերեզմանատան սրբոյն Մեդարտոսի ։

Յանհեթեթ ջերմեռանդութենէ աստի ծագեցան խնդիրք և վէճք աստուածաբանականք, 'ի պնդել ոմանց զստուգութիւն եղելոցն, և 'ի ցուցանել այլոց զստութիւն իրացն, մինչև լինել պատճառք ծաղու բազմաց 'ի վնաս հաւատոյ ։ Հայրն Պուժան 'ի յիսուսեանց գրեաց կատակերգութիւն 'ի վերայ հրաշից սարկաւագին Պարիսի, սակայն ծաղրածութիւնք նորա առ կարծեցեալ սքանչելիսն՝ վարեցան յետոյ 'ի թշնամեաց հաւատոյ ընդդէմ ճշմարիտ աստուածագործ հրաշից ։

Յիրաւի երբեմն ուժգին ազդումն երևակայութեան մարթի գործել սքանչելատիպ հարևանցի բժշկութիս ախտից, ըստ որում թերևս լեալ իցեն 'ի տապանէ անտի Պարիսի. սակայն 'ի պատմութիւնս համբաւեալս վասն նորա չերևին ոչ մեռելոց յառնել, ոչ լերանց տեղափոխել, ոչ գետոց ցամաքել և ոչ կուրաց և կամ խլից տեսանել և լսել. զի այսպիսի սքանչելիք յիշատակեալքն 'ի սուրբ գիրս և յեկեղեցական պատմութիւնս՝ գործք են արարչին բնութեան, կամ այնոցիկ որոց 'ի շնորհացն Աստուծոյ ընկալեալ իցեն զզօրութիւն կամ զիշխանութիւն գործելոյ հրաշս։ Յայս սակս եկեղեցին Քրիստոսի փոյթ մեծ յանձին ունի և զգուշաւոր է յոյժ 'ի քննութիւնս սքանչելեաց, զի մի թերահաւատք պատճառս առցեն անգոսնելոյ, և մի դիւրահաւանք անխտիր հաւատս ընծայեսցեն հրաշանշան համբաւեալ գործոց։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Քահանայապետութիւն Կղեմայ ԺԲ, և Բենեդիկտոսի ԺԴ։

Ի ՎԱԽՃԱՆԵԼ Բենեդիկտոսի ԺԳ յամին 1730, 'ի հասակի ութսուն և մի ամաց, միակամ հաւանութեամբ ամենայն կարդինալաց ընտրեցաւ կարդինալն Լաւրենտիոս Կորսինի փլորենտացի, որ անուանեցաւ Կղեմէս ԺԲ։ Եւ քանզի յաւուրս քահանայապետութեան նախորդին իւրոյ կարդինալն Կոշիա գլխաւոր պաշտօնատար աթոռոյն բազմապատիկ տուրս հարկաց արկեալ էր 'ի վերայ ժողովրդեան Հռովմայ, վասն որոյ յերկրորդում աւուր թագադրութեան Կղեմայ ԺԲ գումարեցաւ ժողովուրդն, և բարձրաձայն աղաղակաւ գոչէր. “Կեցցէ Կղեմէս ԺԲ, և պատուհասեսցին անօրէնութիւնք յետսամիտ պաշտօնէին„։ Լսելի եղեն աղերսք ժողովրդեան, և պատուհասեցան վնասապարտք սրբոյ աթոռոյն, և կարդինալն Կոշիա արգելաւ յամրոց սրբոյ Հրեշտակապետին, ուր խնամ կալաւ սրբել զյանցանսն որոց վասն ստգտեալն էր 'ի ժողովրդենէն։

Յայնու ժամանակաւ ընդ մէջ աթոռոյն Հռովմայ և տէրութեանն Սաբաւդիոյ յուզէին զանազան վէճք և հակառակութիւնք 'ի վերայ բազմապատիկ իրաց, և մանաւանդ վասն եկամտից ժառանգաւորութե՟ Փիէմոնթի. և քանզի երկոքին տէրութիւնք միօրինակ փափաքէին խաղաղութե՟, ջանահնար եղեն վախճան առնել խնդրոց. որով թագաւորն Սաբաւդիոյ ընկալաւ զառանձնաշնորհութիւնն զոր ունէին այլ ուղղափառ տէրութիւնք՝ առաջարկելոյ կամ ընծայելոյ զոք 'ի կարդինալական պատիւ։

Առ սովաւ մեծապէս մխիթարութիւն և անպատում ցնծութիւն եղև քահանայապետիս տեսանելն զԹագաւորն Վիրթէմպէրկի յետս կալ և հրաժարել 'ի լուտերական աղանդոյ, ճանաչելով զառաքելական աթոռն կենդրոն միութեան սուրբ եկեղեցւոյ:

Քահանայապետն Կղեմէս քանզի անցեալ էր յոյժ զաւուրբք վախճանեաց զկեանսն յամին 1740 'ի վեցերորդ աւուր ամսեանն փետրուարի 'ի հասակի ութսուն և մի ամաց, և կալաւ զաթոռն զամս ինն, զամիսս վեց և զաւուրս քսանևհինգ: Առատաբաշխ ողորմութեամբքն և պայծառափայլ առաքինի վարուքն սիրելի և արգոյ եղև հպատակաց իւրոց: Եկամուտք նորա սահմանեալ էին 'ի նպաստ տնանկաց և կարօտելոց: Յաւուր միում 'ի տալ գանձապետի նորա զհաշիւ դրամոցն, տեսեալ զնուազութիւն գումարին եղելոյ յարկեղ՝ յորում մնացեալ էին հազար և հինգ հարիւր սկուդք և եթ, ասէ. “Ի կարդինալութեան իմում ճոխագոյն էի քան այժմ 'ի քահանայապետութեան„:

Զկնի մահուան Կղեմայ ԺԲ. աթոռն առաքելական մնաց 'ի պարապութե՟ զամիսս վեց և աւելի. ապա անակնկալ վիճակաւ ել ընտրութիւնն 'ի վերայ կարդինալին Պրոսպերայ Լամպերթինի պոլոնիացւոյ, որ էր այր մեծահամբաւ յիմաստունս Եւրոպայ սակս բազմահմուտ գրաւոր երկասիրութեանց իւրոց, և խորիմաց վարդապետութեանն 'ի կանոնական գիտութիւնս: Սա յետ վարելոյ զզանազան պաշտամունս յեկեղեցական վիճակի՝ ամբարձաւ յաթոռ արքեպիսկոպոսութե՟ Պոլոնիա քաղաքի, յորում զուարթամիտ քաղցրութեամբն և շնորհալի կենցաղավարութեամբ, որպէս և խոհական և արդարակորով դատաստանաւ շահեցաւ զսիրտս ամենեցուն:

Ապա 'ի բարձրանալ իւրում 'ի ծայրագոյն պատիւ քահանայապետութեան՝ յօժարեցաւ անուանիլ Բենեդիկտոս ԺԴ., 'ի յիշատակ Բենեդիկտոսի ԺԳ. յորմէ ընկալեալ էր զպատիւ կարդինալութեան: Հայրագութ սէր նորա անխտիր առ ամենեսին՝ առաւելապէս յայտնեցաւ միօրինակ յընդունել նորա յունկնդրութիւն զազնուականս և զռամիկս: Ախորժ նորա և սէր առ գիտութիւնս չմեղկացաւ երբէք 'ի քահանայապետութեան իւրում. վասն որոյ յամին 1741 սահմանեաց երիս ակումբս կամ Ճեմարանս ուսումնասիրաց, զորոց զանձինսն ինքնին ընտրեաց յառաւել գիտնականացն Հռոմայ։ Միումն յընկերութեանց աստի հրաման ետ պարապել 'ի գործս եկեղեցական պատմութեան. երկրորդին պատուիրեաց միտ դնել արտաքին պատմութեանց, իսկ երրորդին պարապել կանոնական գիտութեան և վճռոց քահանայապետաց. խոստացեալ վարձս մեծամեծս այնոցիկ որք միանգամ ականաւոր և երևելի հանդիսացին 'ի նոյն աշխատասիրութիւնս. յորմէ յորդորեալ բազմաց՝ ժըրացան 'ի մտադրութիւն ուսմանց։

Ընդ այն ժամանակս ծագեցաւ խնդիր և վէճ ընդ մէջ ՝աթոռոյն Հռոմայ և տէրութեանն Նէապօլսոյ 'ի պատճառս եկեղեցական իրաւանց ինչ իշխանութեան, զոր խնամ կալաւ քահանայապետն փութապէս աւարտել յամին 1742։ Ի նմին ամի եղև և այլ նոր դաշն ընդ մէջ քահանայապետին և թագաւորին Սարդենիոյ։ Ի ձեռն այնր դաշնադրութե կարգեցան եպիսկոպոսունք քանի մի վիճակաց Փիեմոնթի, որք յերկար ժամանակաց հետէ կային առանց հովուի։ Նա քահանայապետն շնորհեաց արքային զպատուանուն փոխանորդի մեծի սեպհականեալ կալուածոց սրբոյ աթոռոյն 'ի Փիեմոնթ. որով պարտական իսկ կացոյց զթագաւորն ամ ըստ ամէ 'ի տօնի սրբոյն Պետրոսի առաքել առ սուրբ գահն զսկիհ մի համակ յոսկւոյ։

Ընդ ամենայն ամս քահանայապետութե իւրոյ Ջանահնար եղև բարեկարգել զանկարգ սովորութիս ինչ, և յաւելուլ զօգտակարսն յուղղուն վարուց։ Նորոգեաց զվճիռս եղեալս կանխաւ ընդդէմ այնոցիկ՝ որք ներողամտութեամբ պաշտպան կային և ջատագովք հեթանոսական արարողութեանց 'ի քարոզութիւնս Հնդկաց և Չինէացւոց։ Խորհեցաւ գտանել հնարս միաբանութե այլ և այլ հերձուածողաց զատուցելոց 'ի միութէ սուրբ եկեղեցւոյ. նոյնպէս ցանկայր վախճան առնել խնդրոցն յուզելոց 'ի խնդիրս շնորհացն Աստուծոյ. եդեալ էր 'ի մտի յօրինել և ճառ ինչ իբր դաշն հաւատոյ բովանդակիչ ամենայն ճշմարտութեանց և դատապարտեալ մոլորութեանց · սակայն անգործ մնաց գովելի փափաք և իմաստախոհ կամք նորա ։

Արթնամիտ զգօնութիւն խոհական ընտրողութեանն որով առաւելեալ էր յոյժ քահանայապետս, մեծապէս հանդիսացաւ ’ի խնդիրն յուզեալ ’ի Գաղղիա յամին 1751, ուր զյանսենեանսն կամէին զրկել ’ի խորհրդոց եկեղեցւոյ, և պահանջէին գիր դաւանութեան ’ի հիւանդացն յորոց վերայ գոյր կասկած՝ իբրու եթէ կուսակիցք իցեն յանսենեանց ։ Ի յուզմանէ խնդրոյս խռովեցաւ հանդարտութիւն եպիսկոպոսաց, ատենակալ իշխանաց և յոգունց ’ի ժողովրդենէ ։ Լուդովիկոս ԺԵ· կամելով խաղաղել զգաղտնի զայս պատերազմ՝ յորմէ տագնապէր թագաւորութիւն իւր, գրեաց առ Բենեդիկտոս ԺԴ· խնդրելով ’ի նմանէ հնարս հանդարտութեան · իսկ նա առաքեաց առ թագաւորն կոնդակ շրջաբերական վասն ամենայն եպիսկոպոսացն Գաղղիոյ, յորում յետ հաստատութեամբ ցուցանելոյ՝ թէ կոնդակ և սահմանադրութիւն Կղեմայ ԺԱ· սկզբնաւորեալն Ունիճէն էր օրէնք հանրական, որում չէ հնար հակառակիլ առանց վտանգի յաւիտենական փրկութեան, ապա կարգէ հնարս դարմանոյ ’ի հանդարտութիւն ամենայն սրտի ։ Իբր զի ասէ, ապստամբքն ’ի կոնդակէ անտի դատեսցին անարժանք խորհրդոց եկեղեցւոյ որպէս մեղապարտք, եթէ անհնազանդութիւն նոցա և հակառակութիւն յայտնի լեալ իցէ բանիւ կամ գործով ։ Նամակ քահանայապետիս գրեալ ’ի վեշտասան հոկտեմբերի յամին 1756, ընդունելի եղև գղերց Գաղղիոյ, և առ փոքր փոքր հաստատեցաւ խաղաղութիւն ։

Բենեդիկտոս ԺԴ· յետ եօթնևտասն ամաց և ութից ամսոց քահանայապետութե՛ իւրոյ վախճանեցաւ յամին 1758 ։ Սիրելի եղև ուղղափառաց, որգոյ յաչս բողոքարկու հերետիկոսաց, թագաւոր անաչառ, քահանայապետ առանց տոհմասիրութեան, մատենագիր առանց սնապարծութեան · և արժանացաւ գովեստից և ’ի նոյնն իսկ ’ի թշնամեաց եկեղեցւոյ ։ Չունելով ինչ փոյթ ճոխութեան և ստացուածոց, ’ի բարձրանալ իւրում յաթոռ սրբոյն Պետրոսի՝ և զքահանայապետական սահմանեալ եկամուտս իւր եթող առաքելական գանձուն · վասն որոյ և զազգատոհմն իւր եթող 'ի նմին վիճակի յորում կային 'ի քահանայապետանալ նորա ։ Համառօտ ասել, օրինակ եկաց ճշմարիտ առաքինութեան, խիստ և անաչառ առ անձն, իսկ առ այլս գթած և ներողամիտ գոլով ։

Զկնի մահուան նորա ընտրեցաւ 'ի քահանայապետութիւն կարդինալն Կարոլոս Ռեցցոնիքոյ վենետիկեցի, այր քաղցր բարեսէր և հոգեւանդն, և անուանեցաւ Կղեմէս ԺԳ. ։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Տարագրութիւն յիսուսեանց 'ի Լուսիտանիոյ, և առաքելութիւն Փարակուայի ։

ՅԱՒՈՒՐՍ քահանայապետութեան Կղեմայ ԺԳ. բազմաթիւ ընկերութիւնն յիսուսեանց մեծարգոյ իմաստութեամբ և առաքելաջան վաստակօք՝ ընկալաւ զնախկին հարուածն՝ նախագուշակ կարապետ մօտալուտ կործանման ։ Ամօք ինչ յառաջ Բենեդիկտոս ԺԴ. ազդեալ 'ի թագաւորէն Լուսիտանիոյ՝ թէ յիսուսեան կրօնաւորք 'ի Փարակուայ գաւառի Ամերիկոյ յանդգնեալ իցեն գրաւել անձանց իրաւունս աշխարհական իշխանութե՝ հակառակ կրօնաւորական վիճակի, և 'ի վնաս տէրութե թագաւորաց, գրեաց կոնդակ առ կարդինալն Սալտանհա ստուգել զիրսն, և յուղղութիւն բարեկարգութեան ածել զընթացս կրօնաւորացն այնոցիկ · բայց կոնդակ քահանայապետին ոչ ինչ գամագիտ եղև 'ի սիրտս նոցա ։ Եւ քանզի յիսուսեանք միշտ անհաճոյ էին թագաւորին, վասն որոյ յամին 1758 մերժեաց զնոսա 'ի պաշտամանէ խոստովանահայրութեան պալատականաց, և առաջի իւրոյն բանիւք թշնամանաց արհամարհեալ մերժեաց զնոսին ։

Պատճառք ամենայնի այսոցիկ աւանդի լինել հոգևոր և մարմնաւոր փոյթ մշակութե յիսուսեանց 'ի հրահանգել զվայրենի ժողովուրդս Փարակուայ գաւառին Ամերիկոյ, որ է առ սահմանագլխովք տէրութեցն Լուսիտանիոյ և Սպանիոյ 'ի վերայ Փլաթա գետոյ ։ Քանզի յայս գաւառ 'ի սկզբան անցելոյ դարուն զառաջինն մուտ գտին քանի մի կրօնաւորք 'ի յիսուսեանց. և զի բնակիչք երկրին այնորիկ էին վայրենիք, տգէտք և անարուեստք, կէին որսովք թռչնոց և ձկանց, կրօնաւորքն այնոքիկ 'ի հրահանգելն զնոսա յուսումն աստուածպաշտութեան 'ի փրկութիւն հոգւոց՝ ցուցանէին նոցա և շաւիղս հայթհայթելոյ զմարմնաւոր պէտս իւրեանց ։

Արդ յետ հաւաքելոյ 'ի մի ընկերութիւն զվայրենամիտ ժողովուրդն, ուսուցին նոցա շինել տունս, մշակել զերկիր և դարմանել զընտանի անասունս ։ Կարգ և կանոն հպատակութեան և քաղաքականութեան՝ երբեմն անծանօթ այնր ժողովրդեան, յետ վարժելոյ 'ի նոսին քաղցրացաւ նոցա, և սկսան առնուլ զճաշակ միաբանական ընկերութեան և օգտի բարեկարգ կենաց ։ Յիսուսեան հարք գորովագութ սիրով և քաղցրութեամբ կառավարելով զժողովուրդն հրահանգեալ 'ի վիճակ քաղաքական կենաց, խնամ կալեալ ըստ օրինակի նախնի հաւատացելոց պահել 'ի նոսա զանխտիր հաւասարութ̃ի ընչից և ստացուածոց ։ Ամենայն պտուղք և բերք ագարակաց և այլ մթերք արդեանց ճարտարամտութեան նոցա ամբարեալ լինէին 'ի մթերանոցս հասարակաց առ 'ի պէտս ամենեցուն անխտիր ։ Սահմանեալ կային և սակաւաթիւ դատաւորք՝ ընտրեալք 'ի նոցունց անտի ազգաց, հսկել 'ի վերայ խաղաղութեան հասարակաց ։ Էին և պատուհասք ինչ մանունք պատժապարտից, որպիսի են նշանք վատանունութեան, և բուռն աշխատութիւնք սակս ծանր յանցանաց, որք բաւական էին առնել յուղղութիւն զբարեմիտ ժողովուրդն զայն ։

Մինչդեռ յիսուսեանք ջանահնար լինէին երջանկացուցանել զվայրենի ամերիկացիսն զայնոսիկ, 'ի կողմանս Եւրոպայ տարածեցաւ համբաւ չարախօսութեան 'ի վերայ նոցա, որպէս թէ հրահանգիցեն զժողովուրդն զայն առ 'ի կանգնել առանձինն իշխանութիւն ինչ վասն իւրեանց ։ Յաւելան կասկածանքս և այնու՝ զի յիսուսեանք պատուիրեալ էին ժողովրդոցն այնոցիկ զգուշանալ 'ի հաղորդակցութ̃է սահմանակցացն իւրեանց Սպանիացւոց և Լուսիտանացւոց. միանգամայն չէր թոյլ տուեալ ումեք 'ի վաճառականաց անտի երկոցունց ազգային մտանել յերկիր սահմանաց նոցա ։ Եւ զի քրիստոնեան հարք 'ի հրահանգելն զայն ժողովուրդ՝ ոչ ուսուցանէին նոցա զեւրոպեան լեզուս, այլ առ սակաւ սակաւ 'ի շահելն և 'ի վարժել զհատուած մի ժողովրդեան՝ առաջնորդէին նոցա յուսումն գաւառական լեզուին, զոր գուն գործէին առնել լեզու հասարակաց ամենայն նորակիրթ ժողովրդոցն այնոցիկ ։

Ընդ այսոսիկ գովելի կարգաւորութիւնս՝ յաւելուն պատմիչք իբրև ստգտանս, թէ քրիստոնեանք կազմեալ իցեն 'ի ժողովրդենէ անտի խումբս ձիաւոր զօրաց քաջազէնս և հրահանգեալս՝ համդերձ ամենայն կարևոր պիտոյիւք պատերազմի, մինչև ձեռնհաս լինել ահաբեկ առնել զՍպանիացիս և զԼուսիտանացիս, որոց 'ի կողմանսն յայնոսիկ սակաւ էին զօրք և անհրահանգք ։ Թագաւորք երկոցունց ազգացս առեալ զլուր ամենայնի այսոցիկ 'ի քաղաքապետաց գաւառացն սահմանակցաց Փարակուայի՝ զահի հարան, զի մի՛ քրիստոնեանք զիշխանութիւն տէրութեան կարգի իւրեանց տարածեսցեն ընդ բովանդակ երկիր հարաւային Ամերիկոյ ։

Ընդ այն ժամանակս յայտնեցաւ և գաղտնի դաւաճանութիւն իմն ընդդէմ կենաց Յովսեփայ արքային Լուսիտանիոյ, որ 'ի հարուած հրացանի սպանաւ յերրորդ աւուր ամսեանն սեպտեմբերի յամին 1758 ։ Ի փուրսիչ դաւաճանութեանն 'ի հարցփորձ մատուցան և ոմանք 'ի քրիստոնեան կրօնաւորաց, իբրև զի գլխաւորք 'ի դաւաճանացն աւանդէին լեալ խոստովանորդիք նոցա, և որպէս թէ խորհրդով նոցին ձեռնամուխ լեալ յայն եղեռն անօրէնութեան ։ Բայց ամբաստանութիւնս այս և կասկած՝ թէպէտ և չունէր զհաւաստի հիմն ստուգութեան, սակայն և այնպէս թագաւորն Լուսիտանիոյ յամին 1759 տարագիր արար զքրիստոնեանս առ հասարակ 'ի սահմանաց տէրութեան իւրոյ, յետ բանտարկելոյ զերեսին 'ի նոցանէ, որք համարէին առաւելապէս յանցաւորք ։ Ի թուոյ սոցա էր հայրն Մալակրիտա իտալացի՝ քարոզիչ 'ի Լիսբոնա քաղաքի, որ յամին 1761 հրամանաւ ատենի սրբաքննութեան մատնեցաւ 'ի պատուհաս հրոյ, ոչ իբր մեղապարտ մահու թագաւորին, այլ որպէս սուտանուն մարգարէ՝ որ համարէր զանձն ընկալեալ շնորհս գուշակութեան և սքանչելեաց ։ Գրեալ էր և ճառս ինչ լի անսովոր և անհեթեթ ջերմեռանդութեամբք ։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Տարագրութիւն յիսուսեանց 'ի Գաղղիոյ ։

ԹՇՆԱՄԻՔ յիսուսեանց որք էին 'ի Գաղղիա՝ դէպ բարեպատեհ վարկան զտարագրութիւն նոցա 'ի Լուսիտանիոյ՝ առ 'ի կասկածաւորս առնելոյ զնոսա և գրգռելոյ զատելութիւն հասարակաց 'ի ջնջել զնոսա 'ի սպառ ։ Այս խորհրդոյ և յօժարութեան թշնամեաց օժանդակեաց և աշխարհական զբաղումն ուրումն 'ի յիսուսեանց Լաւալէթ անուն գաղղիացւոյ, որ էր գլխաւոր պաշտօնեայ և գործակալ առաքելութեանցն Ամերիկոյ ։ Սա այր ճարտար և քաջավարժ 'ի կենցաղական գործս՝ պարապէր 'ի վաճառաշահութիւն 'ի կղզւոջն Մարթինիկէ, ունելով իւր վաճառակիցս 'ի Գաղղիա ։ Արդ 'ի պատերազմին որ յամի 1756, 'ի գրաւել Անգղիացւոց նաւս ինչ Գաղղիացիս՝ յորս էին բազում վաճառք յիսուսեան կրօնաւորին, զուն գործեաց կրօնաւորն այն ցուցանել թէ կորուստք այնոցիկ իցեն 'ի վնաս վաճառակցացն իւրոց որ 'ի Լիոն քաղաք և 'ի Մարսիլիա, վասն որոյ կոչեցաւ 'ի նոցանէ յատեան ոչ միայն ինքն՝ այլ և կրօնակից եղբարք նորա ։ Արդ իբրև ել խնդիրն այն 'ի մեծ ատեան խորհրդականայն Փարիզու, միաբանական վճռով ժողովոյն պարտապան ցուցան յիսուսեանք, և բռնադատեցան հատուցանել զպարտսն՝ ընդ որով անկեալ էր Լաւալէթ իբր յանցաւոր անվայել գործառնութեամբն որ չէր իսկ 'ի դէպ կրօնաւորական վիճակի ։ Միանգամայն և 'ի դատաստանական յիշատակագիրսն տպագրեալս ընդդէմ յիսուսեանց ջանահնար եղեն հակառակորդքն ցուցանել՝ թէ հարք ընկերութեանն ըստ կանոնաց կարգի իւրեանց ստիպին հատուցանել զպարտս միմեանց, վասն որոյ եղեալքն 'ի Գաղղիա պարտապանք իցեն վճարել զպարտս յիսուսեանցն որ յԱմերիկա ։ Եւ մինչդեռ այս վէճք յուզէին, յամին 1761 ել հրամանն 'ի խորհրդարանէ ատենակալ իշխանաց զի 'ի սկիզբն հոկտեմբերի այնր ամի փակեցին դպրոցք յիսուսեանց, Զայս վճիւ Լուդովիկոս ԺԵ ետ յապաղել մինչեւ ցսկիզբն ապրիլի 1762 ամին, եւ յայնմ ժամանակի կամեցաւ խորհուրդ հարցանել յեպիսկոպոսացն որք էին 'ի Փարիզ քաղաքի · եւ զի առաւելագոյն մասն 'ի նոցանէ յօժարամիտ էր պահպանութեան յիսուսեանց, Լուդովիկոս ԺԵ զհետ երթեալ խորհրդոյ նոցա՝ եհան հրովարտակ վասն մնալոյ յիսուսեանց 'ի պաշտաման իւրեանց, բայց խոստացաւ առնել բարեկարգութիւն 'ի մասունս ինչ սահմանադրութեան նոցա: Այս հրովարտակ եւ յայտարարութիւն արքային իբրեւ մատուցաւ 'ի խորհրդարան իշխանաւորաց՝ ընդունել զհատատութիւն դիւանագրութեամբ, կրեաց հակառակութիւն մեծ եւ անակնկալ բուռն զիմամարտութիւն, մինչեւ ստիպել թագաւորին լռելեայն յետս առնուլ զհրովարտակն:

Յետ սակաւուց ազդ արար թագաւորն առ տեսուչ դպրոցին Փարիզու հպատակել հրամանաց խորհրդարանին, եւ վախճան առնել դասատուութեանց 'ի սկիզբն ամսոյն ապրիլի յամին 1762: Եւ 'ի պայմանեալ ժամանակին փակեցան դպրոցք յիսուսեանց, եւ միաբանութի՟ նոցա կորոյս զգլխաւոր աւիթ պատուոյ եւ մեծարանաց զոր ունէր 'ի ժողովրդեան դաստիարակութեամբ մանկանց· վասն որոյ իրաւամբ սկսան կասկածիլ եւ զանգիտել յապագայ արկածից տարադրութեան իւրեանց 'ի տէրութենէ անտի, ըստ որում եղեւ իսկ · զի 'ի վեց օգոստոսի այնր ամի միաբան հաւանութեամբ եւ վճռով ատենակալաց խորհրդարանին Փարիզու՝ առանց ինչ հակառակութեան արքային բարձաւ 'ի Գաղղիոյ կարգ ընկերութեան յիսուսեանց, եւ վաճառեցան ստացուածք նոցա: Վասն որոյ անձինք այնր միաբանութե՟ ստիպեցան հրաժարիլ 'ի կրօնաւորական վիճակէ եւ լինել իբրեւ զաշխարհիկ քահանայս: Բազումք 'ի նոցանէ ցրուեցան յայլ եւ այլ երկիր, եւ սրտաբեկք յանակնկալ հարուածոյ անտի՝ հարկեցան թողուլ 'ի բաց զցանկալին իւրեանց զգեստ կրօնաւորութեան, զպայծառացեալն 'ի նոցանէ բազմահանճար երկօք հոգւոր եւ կենցաղօգուտ վաստակոց իւրեանց:

Զնոյն արարին եւ խորհրդարանք այլոց քաղաքացն

Գաղղիոյ՝ զհետ երթեալ ատենակալացն Փարիզու. մինչև թագաւորն իսկ բռնադատեցաւ հաւանիլ քակտելոյ միաբանութեանն յիսուսեանց՝ հրովարտակաւն յամին 1764, յորում յայտ առնէ զտարագրութիւն այնր ընկերութեան յամենայն սահմանաց տէրութեան իւրոյ. սակայն թոյլ տայ առանձնական անձանց մնալ 'ի թագաւորութեան իւրում ընդ իշխանութեամբ թեմական եպիսկոպոսաց, որք զյոլովս 'ի նոցանէ կարգեցին 'ի զանազան հոգևոր պաշտամունս վիճակի իւրեանց: Ահա այսպիսի օրինակաւ 'ի միջոցս իբր երից ամաց առանց ինչ խռովութեան բարձաւ 'ի Գաղղիոյ ականաւոր միաբանութիւնն յիսուսեանց, և բազումք 'ի նոցանէ վշտակիրք և թախծեալք ընդ աղէտալի անցսն՝ սփոփանս համարեցան անձանց հպատակութ՟ք կամացն Աստուծոյ զմնացուածս կենաց իւրեանց անցուցանել յօգուտ հասարակաց 'ի պէտս ժողովրդեան:

Այս զատն և անսովոր դէպք պատճառք եղեն մեծապէս ցաւոց և տխրութեան քահանայապետին Կղեմայ ԺԳ. որ էր պաշտպան և բարեկամ յիսուսեանց: Առաւելաւ թախծութ՟ին 'ի տեսանել անդ զի և թագաւորք Սպանիոյ և Նէապօլսոյ, որպէս և դուքսն Փարմայի զնոյն արարին ըստ օրինակին Գաղղիոյ, ջնջելով զայն ընկերութիւն յերկրէ իւրեանց: Յայնմ ժամանակի ծագեցաւ և մասնաւոր խնդիր հակառակութեան և գժտութեան ընդ դքսին Փարմայի, որ օրինադրութեամբք ինչ կամէր խափանել և ամփոփել զիրաւունս եկեղեցական իշխանութեան, թիկունս առնելով իւր զԳաղղիա, զՍպանիա և զՆէապօլիս, որով սաստկացան վիշտք և տագնապք ծերութեան սրբոյ քահանայապետին. զի ետես ակներև թէ իրաւունք սրբոյ աթոռոյն բռնաբարին 'ի գլխաւոր հրամանատարէն Փարմայի. վասն որոյ եհան կոնդակ քահանայապետական՝ նորոգելով զնախնի վճիռս նախորդաց իւրոց 'ի վերայ օրինաց ժառանգաւորութեան, ընդ որ զայրացան ամենայն արքայազունք Բորպոնեանց, և բռնութեամբ գրաւեցին զԱւենիոն և զԲենեւենտ գաւառս սրբոյ աթոռոյն: Վախճանեցաւ Կղեմէս ԺԳ. 'ի սկիզբն 1769 ամին, կալեալ զաթոռ քահանայապետութեան զամս տասն և զամիս եօթն: Միշտ անբերելի և խոց մահառիթ եղև նմին տեսանելն զանբարի դիտմունս բազում տէրութեանց, և զանբաւականութիւն իւր 'ի հաճել և 'ի հաշտել ընդ նոսա :

ԳԼՈՒԽ ԺԴ.

Քահանայապետութիւն Կղեմայ ԺԴ., և բնաջինջ բարձումն ընկերութեանն Յիսուսեանց :

ՅԱՅՍՊԻՍՈՒՄ դժնդակ և 'ի բազմակնճիռ հանգամանս ժամանակի չէր ինչ դիւրին ծիրանաւոր կարդինալաց փութալ և անյապաղ ընտրել զքահանայապետ ոք արի, ճարտար և զգօն, որում պէտս ունէր յոյժ եկեղեցի : Օկնի բազմապատիկ խորհրդոց և պերճ ատենախօսութեան Պերնիսեան կարդինալին՝ յամին 1769 յիններորդ աւուր ամսեանն մայիսի ընտրեցաւ յաջորդ Կղեմայ ԺԳ. կարդինալն Լաւրենտիոս Կանկանելլի 'ի կարգէ կրօնաւորաց սրբոյն Փրանկիսկոսի՝ Քոնվէնթուալ անուանելոց, այր ականաւոր և բարեհամբաւ՝ նմանեալ Բենեդիկտոսի ԺԴ. ներհուն գիտութեամբ, ճարտարամիտ հանճարով և քաղցրասէր բարոյիւք որ անուանեցաւ Կղեմէս ԺԴ. :

Սակաւք 'ի քահանայապետաց ընտրեալ էին յայսպիսի դառն և ալէկոծեալ ժամանակս. զի Լուսիտանիա գժտեալ ընդ սրբոյ աթոռոյն՝ յետ տարագրելոյ զՅիսուսեանս՝ կամէր հաստատել իւր առանձին ինքնագլուխ պատրիարգ. Թագաւորք Գաղղիոյ, Սպանիոյ, Նէապօլսոյ և դուքսն Փարմայի չէին հաճեալք ընդ աթոռն Հռովմայ. ազնուապետութիւն Վենետիկեցւոց ջանահնար լինէր ըստ կամս իւր կանոնաւորել զմիաբանութիւնս կրօնաւորաց՝ առանց ինչ խորհրդակցութեան ընդ գահին Հռովմայ. Լեհք գուն գործէին կարճել զիշխանութիւն քահանայապետական աթոռոյն 'ի թագաւորութեան իւրեանց : Թող զի և նոքին իսկ Հռովմայեցիք տժգոհք էին ընդ տեսչութիւն սրբոյ աթոռոյն : Համառօտ ասել, առ հասարակ յամենայն տեղիս Եւրոպայ ծաւալեալ էր ոգի խռովութեան և ապստամբութեան 'ի մաքառել ընդ աշխարհական և ընդ եկեղեցական իշխանութիւնս :

Արդ 'ի մատուցանել դեղ դարմանոյ այսպիսում և այսչափ զանազան և անբերելի չարեաց, Կղեմէս ԺԴ. Հայրապետ սիրով խնամ կալեալ զառաջինն որսալ ըզմիտս ամենայն թագաւորաց և հաշտել ընդ նոսա։ Փութացաւ առաքել նուիրակ 'ի Լիսպոնա՝ 'ի մեղմել զզայրագին սպառնալիս այնր տէրութեան։ Խափանեաց զընթերցումն նզովակից կոնդակին որ կոչէր "Ընթրեաց Տեառն", որ ընթեռնոյր ամ ըստ ամէ յաւուր աւագ հինգշաբաթի, և 'ի բազում ժամանակաց հետէ դժգոհ լեալ էր թագաւորաց և իշխանաց։ Խոհական ընտրութեամբ անդորր եղև գործոյ ազնուապետութեանն Վենետկեցւոց՝ ակն ունելով շահել զնոսին քաղցրութեամբ։ Իսկ ընդ տէրութիւնն Գաղղիոյ և Սպանիոյ այնպիսի եղանակաւ վարեցաւ, զի ոչ ոք կարէ ստգտանել զնա իբրև երկչոտ կամ նուաստախոհ. քանզի խոհեմացաւ իբրև զայր զգօն և մեծախորհուրդ։

Ի յորդորելն ամենեցուն զԿղեմէս ԺԴ. փութալ և անյապաղ որոշել ինչ վասն միձանկի յիսուսեանց, զորս բազում թագաւորք աղերսագրովք ստիպէին զբնաջինջ բարձումն, խնդրեաց 'ի նոցանէ ժամանակ 'ի պէտս հասուն քննութեան, զի ծանր էր գործն և բազմախոհանց։ "Ահա, ասէ, հայր եմ ամենայն հաւատացելոց, բայց առանձինն օրինակաւ կրօնաւորաց. վասն որոյ չկարեմ հեշտեաւ հաւանել ընդ բարձումն բարեհամբաւ կարգի միոյ առանց բանաւոր և այնպիսի իրաւացի պատճառաց՝ որք արդարացուսցեն զիս առաջի Աստուծոյ և եկեղեցւոյն առ յապա"։ Յոր սակս յետ երեքամեայ հետազօտ քննութեան, յամին 1773 'ի յուլիսի քսան և մի բռնադատեցաւ հրատարակել զհամբաւաւոր կոնդակն ջնջելոյ զընկերութիւն կարգի յիսուսեանց։ Բայց 'ի խափանել անգամ զայս միաբանութիւն՝ պատուիրէ 'ի նմին կոնդակի ամենայն պատուով և ակնածութեամբ վարիլ ընդ անձինս այնր ընկերութեան, գովելով զյարգ արժանապատիւ կրօնաւորացն այնոցիկ՝ որք օգուտս մեծամեծս ընծայեցին եկեղեցւոյ։ Այս եղև նշանաւոր ամն յորում դարձուցան յետս 'ի թագաւորէն Գաղղիոյ և յարքայէն Նէապօլսոյ գաւառքն գրաւեալք որք համարէին 'ի սպառ օտարացեալք յիշխանութենէ սրբոյ աթոռոյն։

Կղեմէս ԺԴ. յետ խափանելոյ զկարգ յիսուսեանց սկսաւ հիւծիլ և տկարանալ, տագնապեալ և տառապեալ 'ի տաժանակիր աշխատութեանց իւրոց, և հաս 'ի վերջն յուլիսի յամին 1774 'ի սպառ ուժաթափ՝ իբր ընդ մեռեալս համարեալ էր, մինչև ապա փոխանեցաւ 'ի քսան և երկու սեպտեմբերի այնր ամի, ողջակեզ լեալ անբերելի աշխատութեանց և խստամբերութեան վարուց իւրոց՝ըստ վկայելոյ բժշկի նորա։ Եկեղեցին Հռովմայ կորոյս 'ի նմա զքահանայապետ իմաստուն, արիասիրտ, արդարակորով և ուսումնասէր։ Ի նսեմ առանձնութենէ մենաստանին վերամբարձեալ յաթոռ մեծապայծառ իշխանութեան, պատկառելի եղև թագաւորաց և իշխանազանց. ժուժկալ էր նա և խստամբեր, անինչ և խոնարհ, զի յայնպիսում բարձրապատիւ վիճակի քահանայապետութեան վարէր զկեանս ըստ կրօնաւորի. և 'ի յուշ առնել նմա երբեմն՝ թէ վիճակ բարձրութեան նորա պահանջէ առաւելագոյն ինչ սպաս, շատ համարեցաւ պատասխանի առնել, եթէ «Սուրբն Պետրոս և սուրբն Փրանկիսկոս ոչ ուսուցին ինձ մեծածախս հանդերձանօք ճոխել»։ Գլխովին պարապեալ 'ի հոգս պաշտաման իւրոյ՝ զմեծագոյն մասն գիշերոյ հսկէր զբաղեալ 'ի գործս եկեղեցւոյ՝ որոյ էր գլուխ, և 'ի տեսչութիւն ժողովրդեանն՝ որոյ էր հայր և հովիւ։ Սովոր էր ասել եթէ «Որ օրինակ կանոն կրօնաւորաց ուղեցոյց և առաջնորդ է նոցա, նոյնպէս և կարիք ժողովրդեան պարտին լինել ուղեցոյց թագաւորաց. զի յորում ժամու և պէտս ինչ ունիցին, անկ է մեզ պատրաստ լինել յանձնդրութիւն»։

Գաղտնածածուկ էր 'ի խորհուրդս, 'ի բանս և 'ի գործս իւր, մինչև ասել վասն նորա խնամոց ումեմն կարդինալի՝ թէ քահանայապետութիւն նորա ոչ էր նորախնդրիր հետազօտաց. քանզի և ինքն քահանայապետս սովոր էր ասել, թէ «Թագաւոր՝ որ տանէ իւր մտերիմս յոլով՝ դաւեսցի անշուշտ»։ Ընդդիմացիք 'ի կենդանութեան քահանայապետիս կանգնեցին զկիսարձան նորա 'ի մէջ հոյակապ և նշանաւոր արանց. և Կղեմէս լուեալ զայն, ասէ. «Տացէ տէր, զի զոր առնենն վասն իմ՝ արասցեն վասն կրօնի և ուղղափառ հաւատոյ» · զորոյ զօգուտն և զպայծառութիւն անպակաս ունէր 'ի սրտի : Բարեպաշտութիւն նորա անկեղծ էր, պարզ և մեծավայելուչ ըստ քրիստոնէական օրինաց, զոր սովորեալ ունիմք՝ ջանահնար եղեն նմանեցուցանել զհամբաւ քահանայապետին · բայց անուն նորա պայծառ է և անընդհատ գովելի 'ի մէջ ականաւոր քահանայապետաց և մեծափառ թագաւորաց :

Ուսումնասիրութ̃ի նորա և փափաք գիտնական հմտութեանց՝ յորդորեաց զնա կանգնել 'ի Հռոմ թանգարան վասն հաւաքելոյ անդր բազում անգին և սակաւագիւտ նշխարս հնութեանց : Գրեաց զցուցակ քաջահմուտ կենդանի մատենագրաց գտելոց 'ի սահմանս տէրութեան իւրոյ · և կամէր տալ նոցա յօրինել զանազան գործս պիտանիս և օգտակարս 'ի նպաստ կրօնի և հայրենեաց, խոստանալով նոցա վարձս մեծամեծս ըստ արժանաւորութ̃ իւրաքանչիւր վաստակոց · բայց օրհաս մահուն խափան եղև գործադրութ̃ փափաքանացն : Քանզի ասէր քահանայապետն · «Արժան է թագաւորաց և իշխանաց վարձահատոյց լինել մատենագրացն, որք հրահանգեն զմարդիկ և յորդորեն 'ի սէր առաքինութեան : Զդրամն չէ հնար յայլ լաւագոյն պէտս ծախել քան 'ի վարձ գովելի արդեանց, և 'ի քաջալերութիւն իմաստնոց : Ամօթ մեծ է կարգել հետազօտս 'ի խնդիր չարագործաց, և չլինել հետամուտ գիտելոյ զվիճակ և զընակութիւն արանց որք լուսաւորեն և պայծառացուցանեն զաշխարհ» :

ԳԼՈՒԽ ԺԵ.

Կաթողիկոսունք և վիճակ եկեղեցւոյն Հայոց :

Ի ԽՌՈՎԱՅՈՅԶ տագնապեալ դարուս 'ի միջոցս հարիւր ամաց կային երկոտասան կաթողիկոսք Հայոց, յորոց սակաւք ոմանք գովելի ցուցան խաղաղասէր մտօք · իսկ այլք զզօրութիւն իշխանութեան իւրեանց փոխանակ յօգուտ ազգին 'ի վար արկանելոյ, յանպէտս վատնեցին և 'ի վնաս նորին :

Ի սկիզբն դարուս յամին 1705 'ի վախճանել Նահապետի կաթողիկոսի՝ աթոռն Էջմիածնի մնայ 'ի պարապութեան զամ մի և աւելի, մինչև ցընտրութիւն յաջորդի նորա որ եղև Աղեքսանդր Ջուղայեցի զոր յամին 1707 հաւանութեամբ ազգին կացուցին կաթուղիկոս ։ Սա նախ քան զընտրութիւն իւր հակառակ էր քաղկեդոնականաց, որպէս և սրբոյ գահին Հռովմայ, յոյր վասն գրեալ էր դոյզն պիտակ թշնամանաղիր բանիւք հակառակասիրութե․ բայց սակայն ընկալեալ զպատասխանի կրկին զրուածովք 'ի Ստեփանոսէ դաշտեցւոյ, զղջացեալ 'ի կաթուղիկոսանալն, և ստացաւ սէր մեծ և ընտանութի ընդ առաքելական աթոռոյն ․ գրեաց և նամակ հպատակութեան և սիրոյ առ քահանայապետն Կղեմէս ԺԱ. 'ի դիմաց համօրէն ազգին ։ Ընդ այն ժամանակս անհնարին խռովութիւնք պատրիարգական աթոռոյն Կոստանդնուպօլսոյ, և հարստահարութիւնք բռնակալ պատրիարգաց 'ի վերայ համազգեացն ուղղափառաց՝ վասն վիշտք էին և անդադար տխրութիւն սրտի Աղեքսանդրի կաթուղիկոսի ․ որ և վտանգեալ 'ի հոգոց սրտի վախճանեցաւ յամին 1714, կացեալ 'ի հայրապետութեան զամս ութ ։

Աստուածատուր համատանեցի ընտրեցաւ կաթուղիկոս զկնի վեցից ամսոց մահուան Աղեքսանդրի յամին 1715 ։ Ի նստել իւրում յԷջմիածին՝ խնամ կալաւ բարեզարդութեան աթոռոյն ․ ազնիւ վիմօք և չքեղ զարդուք վայելչացոյց զմատուռն էջման միածնին ։ Ընդ և զայլ նորոգութիւնս պիտանիս ըստ ներելոյ վրդովեալ ժամանակին, յորում զօրացեալ գոլով Թահմազղուլի խան՝ սաստկեցոյց զարշաւս ․ նմին իրի և Աստուածատուր կաթուղիկոս զանգիտեալ յահէ նորա՝ չկարէր նստել յԷջմիածին, այլ թափառական շրջէր 'ի գիւղս և յաւանս այնր գաւառի ։ Ապա յամին 1725 'ի գըտանել իւրում յՕշական գեղջ՝ ելեալ 'ի տեսութիւն խաւարման լուսնոյ, անզգոյշ ընթացիւք գլորեալ 'ի տանեաց անկաւ 'ի խոնարհ և վտանգեցաւ 'ի մահ, զոր տարեալ թաղեցին 'ի վկայարանի սրբուհւոյն Հռիփսիմեայ ։ Եկաց 'ի հայրապետութեան զամս տասն ։

Կարապետ ուլնեցի՝ արքեպիսկոպոս Պաղատիոյ, այր ախմանաւոր և գովելի վարուք, ընտրեցաւ և օծաւ կաթուղիկոս 'ի Կոստանդնուպօլիս յամին 1725 ․ և մինչև մեկնեալ էր անտի արար ժողով և սահմանեաց երիս կանոնս բարեկարգութեան վասն աթոռոյն Երուսաղեմի ։ Եւ ապա գրեաց նամակ յորդութեան և հպատակութեան առ սրբազան պապն Կղեմէնտիոս ԺԲ ։ Նորա գնացեալ յաթոռ իւր յԷջմիածին վախճանեցաւ անդ զկնի չորից ամաց կաթողիկոսութեան ։

Աբրահամ Բ. յերկրէն Մշոյ՝ կարգեցաւ կաթողիկոս 'ի տեղի Կարապետի յամին 1740 ։ Արար նորոգութիւնս շինուածոց յԷջմիածին , և կանգնեաց երկուս խորանս 'ի մեծի տաճարին յանուն սրբոյ Լուսաւորչին և Յակովբայ Մծբնայ . և կացեալ 'ի հայրապետութեան զամս իբր հինգ՝ վախճանեցաւ ։

Աբրահամ Գ. 'ի Կրետէ կղզւոյ , առաջնորդ սահմանացն Թեքիրտաղու , 'ի մահուան Աբրահամու կաթուղիկոսի գնաց յԷջմիածին , և սիրելի լեալ յամ միաբանից՝ կարգեցաւ կաթուղիկոս 'ի տեղի վախճանելոյն յամին 1734 ։ Հրաւիրեցաւ սա 'ի Դահմազղուլի խանէն 'ի դաշտն Մուղան օրհնել զսուր և ածել զմիջով նորին՝ իբր 'ի նշան թագաւորութեան իւրոյ 'ի վերայ Հայոց , և բազում պարգևօք դարձոյց զնա յԷջմիածին , ուր յետ կալոյ նորա զամս իբր երիս՝ վախճանեցաւ յամին 1737 ։ Յետ մահուան Աբրահամու անկաւ երկպառակութիւն 'ի միաբանս , յորոց ոմանք կամէին ընտրել զԳրիգոր պատրիարք Երուսաղեմի , և այլք զՂազար Ջահկեցի առաջնորդ Զմիւռնիոյ , զորոյ զանունն ոսկեգիր դրոշմեալ յուղարկեցին 'ի Կոստանդնուպօլիս , որում և վիճակեցաւ ընտրութիւնն ։

Ղազար Ջահկեցի որ նստէր 'ի Զմիւռնիա , իբրև լուաւ զընտրութիւն իւր յաթոռ կաթողիկոսութեան յամին 1737 , փութացաւ մեծաշուք հանդիսիւ գնալ յԷջմիածին . և զի արքունի հրովարտակ իշխանութեան ևս եկեալ էր 'ի Կոստանդնուպօլսոյ՝ չոգաւ 'ի Կարին , ուր այլազգի իշխան քաղաքին զայրեալ ընդ տարապայման հանդէս նորուն՝ կամեցաւ պատուհասել զնա . իսկ Ղազար 'ի ձեռն մեծագին ընծայից որսացեալ զսիրտ իշխանին որպէս և զայլոց իշխանաւորաց , ել 'ի Կարնոյ և գնաց 'ի Կարս . և զի կասկածէր մնալ 'ի սահմանս օսմանեան տէրութեան վասն խռովութեանն զոր եարկ 'ի Կարին՝ զրպարտելով զՍահակ վարդապետ զառաջնորդ Կարնոյ, փութացաւ անցանել յերկիր տէրութեանն Պարսից, և հասեալ յԷջմիածին յամին 1737 օծաւ կաթուղիկոս ։ Յետ ամաց ինչ գժտեալ ընդ Շահմահմուտ խանին արկաւ 'ի բանտ մահապարտաց, և 'ի ձեռն բազմագումար դրամոց զորս հատոյց Դահմազղայ՝ հազիւ զերծաւ 'ի մահուանէ ։ Նա 'ի ծագել նորոյ գժտութեան ընդ այլում նախարարի Պարսից, վերստին անարգանօք բանտարգել եղև 'ի Դահմազղայ արքայէ ․ յորմէ և կողոպտեալ յամենայն ընչից՝ զրկեցաւ 'ի կաթուղիկոսութենէ զամիս իբր հինգ ․ բայց 'ի ձեռն եղբօր իւրոյ տեառն Յովսեփայ երիցու բազմապատիկ կաշառօք միւսանգամ եառ զիշխանութ՟ի կաթուղիկոսութ՟ե ։ Եւ 'ի դառնալ իւրում յԷջմիածին՝ տանջեաց և անխնայ չարչարեաց զԿիւթիւր անուանեալ Պետրոս վարդապետն և զԱղեքսանդր վարդապետ, զորս արկեալ 'ի բանտ՝ անհնարին տառապանօք մերկացոյց զնոսա յամենայն ստացուածոց ․ և ապա ստիպեալ 'ի խնդրոյ իշխանաց ոմանց՝ արձակեաց զնոսա 'ի բանտէ ։ Նա և յետ այնորիկ կալաւ դարձեալ զՊետրոս վարդապետ յամին 1746 և արտասահման արար զնա 'ի Սևան կղզի ։ Յետ այնորիկ գժտեալ Ղազարու և ընդ այլոց ոմանց, մատնեցաւ 'ի ձեռս Դահմազղայ արքայի, և տուգանեալ 'ի նմանէ բազմագումար դրամովք՝ վաճառեաց զգանձս աթոռոյն Էջմիածնի 'ի հատուցումն տուգանացն ․ ընդ որ զայրացեալ միաբանից բողոքեցին 'ի Կոստանդնուպօլիս առ իշխանաւորս ազգին, որք և ընկեցին զնա յիշխանութենէ և առաքեցին զնա յաքսոր 'ի Սևան կղզի, և փոխանակ նորա եդին զՊետրոս վարդապետ ։ Բայց զկնի սակաւ ամաց դարձաւ Ղազար յԷջմիածին, և 'ի ձեռն Պարսից բռնացեալ 'ի վերայ Կիւթիւր Պետրոս վարդապետի, արտաքսեաց զնա 'ի Ջահուկ, ուր վախճանեցաւ 'ի վըշտաց սրտին և 'ի նեղութ՟է սովուն ։ Իսկ ինքն Ղազար յայս յետին նուագ բռնակալութեան իւրոյ նստաւ զամս երկու և կէս, բայց 'ի մետասան ամաց առաջնոց, յորս խռովութեամբ ելից զազգն և զաթոռ Էջմիածնի, որ և մեռաւ իսկ յամին 1750 ։

Մինաս ակնեցի պատրիարք Կոստանդնուպօլսոյ ընտրեցաւ յաջորդ Ղազարու յամին 1751, և գնացեալ յԷջմիածին օծաւ կաթուղիկոս. սակայն աւուրք իշխանութեան նորա նուազ եղեն յոյժ, զի եկաց 'ի հայրապետութեան զամ մի ։

Աղեքսանդր կոստանդնուպօլսեցի՝ որ ընտրեցաւ 'ի մայրաքաղաքի անդ յամին 1754, և երթեալ յԷջմիածին օծաւ կաթուղիկոս. կացեալ յիշխանութեան զամ մի և կէս վախճանեցաւ ։

Սահակ Ահագին 'ի նահանգէն Խորձենայ՝ ընտրեցաւ յաջորդ Աղեքսանդրի, և կացեալ 'ի Կոստանդնուպօլիս զամ մի և զամիսս ինն՝ գնաց 'ի Կարին և բնակեցաւ անդ զամս իբր երիս, քանզի չկամէր երբէք գնալ յԷջմիածին ։ Իսկ զի ոչ հաճեցաւ ընդ այն ազգն առ հասարակ, ընկեցաւ յիշխանութենէ յետ իբր հինգ ամաց՝ առանց ընդունելոյ զօծումն կաթուղիկոսութե՟, և թաղեցաւ 'ի վանս սրբոյ Լուսաւորչին որ 'ի Կարին յամին 1759 ։

Յակոբ շամախեցի ընտրեցաւ կաթուղիկոս 'ի նմին ամի և օծաւ յԷջմիածին, այր հանդարտ և բարեգութ, որ եկաց 'ի կաթուղիկոսութեան զամս իբր չորս և վախճանեցաւ ։

Սիմէոն երեւանեցի ընտրեցաւ յամին 1763, և վարեաց զիշխանութիւն կաթուղիկոսութե՟ զամս եօթնետասն ։ Սա յիրս իրս հակառակ էր լատինացւոց, և կամելով բարեկարգել զտօնացոյց ազգիս՝ փոխեաց ինչ ինչ 'ի նմա յաւանդելոցն և յանխախտ պահելոց 'ի նախնի հարց հետէ. վախճանեցաւ յամի տեառն 1779 ։

Ղուկաս 'ի գաւառէն Կարնոյ եղև յաջորդ Սիմէոնի յամի տեառն 1780, և կալաւ զաթոռն զամս քսան ։ Էր սա յաշակերտութենէ Յարութիւն արքեպիսկոպոսի բասենցւոյ, և զի հմուտ էր ուղղափառ ճշմարտութեան՝ ուսեալ 'ի վարդապետէ իւրմէ, աշակերտակից նորին Սարգիս վարդապետ Թէքիրտաղցի գնաց առ նա 'ի գտանել հնարս միաբանութե՟ ազգին Հայոց ընդ եկեղեցւոյն Հռոմայ. բայց 'ի հակառակութենէ միաբանից ոմանց Էջմիածնի չկարաց 'ի լրումն ածել զկամս սրտին, այլ մատնեցաւ 'ի ձեռս նոցա, և խոշտանգեալ պէսպէս չարչարանօք և աքսորանօք զամս իբր հինգ, ապա ձեռնտուութեամբ Հերակլի արքային Վրաց ազատագնաց փախստեամբ զերծաւ 'ի

Տփխիս , և անտի յԵւրոպա ։ Ի նոյն ժամանակս զնոյն անցս չարչարանաց և մահուան կրեաց և տէր Սահակ երէց ախալցխացի , որպէս գրէ նա ինքն Սարգիս վարդապետ Թէքիրտաղցի ։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Համառօտ յիշատակութիւն խռովութեանց որք յուզեցան յազգիս ։

Ընդ վէպս եկեղեցական անցից ութուտասներորդի դարուս համարին դէպք ազգային հալածանաց , զորս ծածկել պարտ էր մանաւանդ՝ եթէ ոչ կարգ պատմութեանս ստիպէր զմեզ անցանել և փոքրօք համառօտիւ ։ Քանզի յընթացս հարիւր և աւելի ամաց պատրիարգունք քան բռնակալեցին զաթոռ պատրիարգութեան 'ի Կոստանդնուպօլիս՝ յափշտակութեամբ 'ի միմեանց , և գործեցան աղէտք անհնարինք ընդդէմ համազգի ժողովրդեան ։

Յամի տեառն 1687 , 'ի յետին աւուրս կաթողիկոսութեան Եղիազարու՝ Սարգիս անուն ոմն վարդապետ եւդոկիացի , անհանդարտ բարուք և անհանճար մտօք եարկ զսերմն խռովութեան և բաժանման ազգին , խնդիրս յուզելով 'ի վերայ հաւատոյ . յորմէ ծագեցան վէճք և կռիւք 'ի նախատել զմիմեանս անարգական անուամբ , և անտի առ յապայ ոչ պակասեցան խռովութիւնք յազգիս՝ չարախօսութեամբ , զրպարտութեամբ և մատնութեամբ , հանդերձ ծանր ծանր տուգանօք ։

Յամին 1700 յաւուրս պատրիարգութեան Եփրեմի , ունելով իւր ոսոխս բազումս 'ի դաւանակից ազգէ իւրմէ , և կասկածելով զրկիլ 'ի պատրիարգութենէ , ընկալաւ նա հրովարտակ 'ի Թագաւորէն հալածել զուղղափառս՝ ստոյգ զրպարտութեամբ , որպէս թէ օտարացեալ իցեն 'ի հայութենէ և 'ի հպատակութենէ տէրութե՟ , և թէ կուսակիցք իցեն Եւրոպացւոց ։ Ի գործադրութեան արքունի հրամանացն տագնապեցաւ ազգն առ հասարակ . յոլովք մատնեցան 'ի տանջանս և 'ի տուգանս , յոլովագոյնք եւս խոյս ետան յերկիրս բրիտանեայ, և փոխանակ նուաղելոյ ուղղափառաց՝ յաւելու թիւ բազմութեան նոցա յօր յօր։

Յամին 1702 Աւետիք վարդապետ առաջնորդ Եւդոկիոյ եկեալ 'ի Կոստանդնուպոլիս՝ կեղծաւորաւ բանիւք խաղաղասիրութեան շահեցաւ զսիրտ ժողովրդեան, և վարեալ զԵփրեմ յԷջմիածին՝ յափշտակեաց նախ զպատրիարգութիւնն Կոստանդնուպոլսոյ, և ապա զԵրուսաղէմին 'ի Մինասայ Ամիդեցւոյ, ամբաստանեալ զնոցանէ որպէս թէ համախոհք իցեն եւրոպացւոց և ապստամբք 'ի տէրութենէ։ Յառնուլ անդ զերկուսին պատիւ իշխանութեան՝ առաւելաւ և բռնաւորութիւն նորա 'ի վերայ ազգին և ժողովրդեան սովորական զրպարտութեամբ՝ եթէ կուսակիցք են ֆռանկաց և դաւաճանք տէրութեան. վասն որոյ կալեալ զանձնս յերևելի իշխանաց և երիցանց Հայոց՝ մատնեաց 'ի բանտ և 'ի պատուհաս գանից, որով տուգանեալ զնոսին՝ հաւաքեաց գանձս բազումս։ Յետ այնորիկ կամեցաւ առաւել ևս սաստկացուցանել զբռնութիւն իւր 'ի վերայ ազգին. սակայն 'ի մեռանել դենպետին յոր ապաւինեալն էր՝ զրկեցաւ և ինքն յիշխանութենէ և վարեցաւ յաքսորս։

Ապա յամին 1703 հրամանաւ արքային եղաւ պատրիարգ Կոստանդնուպոլսոյ Գալուստ վարդապետ Կայծակն կոչեցեալ. բայց կուսակիցք Աւետիքի ջանահնար եղեն կաշառօք դարձուցանել զնա յետս յաքսորանաց, և դնել պատրիարգ փոխանակ Գալուստ վարդապետի, զորմէ ամբաստան լեալ էին եթէ ֆռանկ իցէ և վնասակար ազգին։ Յամին 1705 Աւետիք վարդապետ վերստին առեալ զիշխանութիւն՝ սկսաւ չար քան զառաջինն բռնանալ 'ի վերայ ժողովրդեան և կեղեքել զբազումս սովորական ամբաստանութեամբ ֆռանկութեան, որով արկեալ 'ի բանտ տուգանեաց զնոսին։ Ընդ որ զայրացեալ համօրէն ազգին՝ ետուն աքսորել զնա 'ի Տենեդոս կղզի. ուստի փախուցեալ նորա գաղտ գնաց 'ի Մարսիլիա քաղաք Գաղղիոյ, և ապաշխարութեամբ վախճանեցաւ 'ի վանս լատին կրօնաւորաց։

Յամին 1707 զկնի Աւետիք վարդապետի նստաւ պատրիարգ Մատթէոս վարդապետ Կեսարացի. բայց յետ երկուց ամաց ընկեցեալ զնա յիշխանութենէ՝ եդին զՄարտիրոս վարդապետ Բիւզանդի, որ եկաց զամիս չորս: Ապա նստաւ Միքայէլ երէց ամն զամիս ութ, յետ որոյ եղաւ Սահակ վարդապետ ակնեցի, որ այն ինչ ընկալեալ զիշխանութին՝ ընկեցաւ 'ի պատրիարքութենէ, և նստաւ 'ի տեղի նորա Յովհաննէս վարդապետ զմիւռնացի:

Սա ինքն Յովհաննէս զհետ երթեալ բռնաւորական ընթացից Աւետիք վարդապետի՝ զայրացոյց զխաղաղութիւն ազգին, և սուտ և անիրաւ ամբաստանութեամբ փռանկութեան պատճառ եղև բաժանման ազգին և ատելութեան առն ընդ եղբօր իւրում, զյոգունս մատնեալ 'ի բանտ և 'ի մահ, մինչև ոմանց իսկ տկարանալ 'ի հաւատս. սակայն եղեն և ոմանք որոց զմահ մանաւանդ՝ քան զկեանս ուրացութեամբ՝ յանձին կալեալ, վկայեցին զբարուոք վկայութիւնն. 'ի սոցունց արի էր և երանելի այրն Աստուծոյ Կոմիտաս քահանայ Քէօմիւրճեան, որ վասն 'ի Քրիստոս հաւատոյն նահատակեցաւ յայլազգեաց, և թաղեցաւ 'ի Պալըգլը: Ի պարսաւելի գործոց աստի Յովհաննու տաղտկացեալ առ հասարակ ժողովրդեան Հայոց, ընկեցին զնա 'ի պատրիարքութէ, և եդին 'ի տեղի նորա վերստին զՍահակ ակնեցի յամին 1708: Սա յառաջին ամն իշխանութեան իւրոյ եկաց 'ի հանդարտութեան, բայց յետոյ սկսաւ հալածել զուղղափառս. և քանզի ատեցեալ էր իւր ոսոխս յիշխանաց ազգին՝ զրկեցաւ յաթոռոյ, և փոխանակ նորա կարգեցաւ պատրիարք Յովհաննէս երէց գանձակեցի յամին 1714: Նոյնպէս և սա անհրահանգ բարուքն՝ յառնուլ անդ զիշխանութին ձեռնարկ չարչարել զուղղափառս, ընդ որ անհնարինս նեղեալ նոցա՝ խորհեցան որոշիլ 'ի սորա և ելանել յիշխանութէ նորա, գնելով իւրեանց ուրոյն պատրիարք և տաճար եկեղեցի սեպհական. յայս սակս վաճառեցան անբաւ դրամք յերկոցունց կողմանց. և 'ի չյաջողել խորհրդոյ ուղղափառաց՝ անկան 'ի վիշտս մեծամեծս, մատնեալ 'ի բանտ, յաքսորս և 'ի տուգանս, ոչ միայն 'ի Կոստանդնուպօլիս՝ այլ և յարտաքին քաղաքս:

Յայսմիկ դառնադէտ շփոթս հալածմանց էին և այլ յուսաբեկ տագնապք դիպեցեալ պարտուց աթոայն Երուսաղէմի զոր ոչ կարէին հատուցանել. և զի յայն աւուրս եկեալ էր 'ի Կոստանդնուպօլիս Յովհաննէս վարդապետ Բաղիշեցի Կոլոտ անուանեալ՝ խնդրել ողորմութիւն վասն վանաց սրբոյ Կարապետին, և էր այր զօրաւոր 'ի բան և 'ի գործ, իշխանք Հայոց ընտրեցին զնա պատրիարգ Կոստանդնուպօլսոյ յամին 1715, և ապա 'ի խնդրոյ նորա կացուցին պատրիարգ Երուսաղէմի զԳրիգոր վարդապետ Շիրվանեցի, որոյ միաբանեալ ընդ միմեանս՝ ջանահնար եղեն 'ի սակաւ ամս հատուցանել զամենայն պարտս Երուսաղէմի։

Յանդորրանալ երկոցունց սոցա յիշխանութեան իւրեանց, Յովհաննէս վարդապետ Կոլոտ բռնադատեալ 'ի ժողովրդենէն և 'ի խռովասէր արանց՝ յարոյց հալածանս 'ի վերայ ուղղափառաց ընդ ամենայն սահմանս օսմանեան տէրութեան յամին 1720։ Եւ յետ չարաչար վնասուց և անասելի վշտաց զոր կրեցին ուղղափառք զամս ինչ, Յովհաննէս Կոլոտ մեղմացեալ 'ի խստութենէն՝ սկսաւ քաղցրութեամբ վարել ընդ ուղղափառս, և հասու եղեալ ճշմարտութեան՝ գրեաց թուղթ սիրոյ առ քահանայապետն Հռովմայ և առաքեաց զայն ընդ ձեռն լատին եպիսկոպոսի, ուստի էառ նա թուղթ սիրոյ և օրհնութեան։ Վախճանեցաւ յամի տեառն 1741, և թաղեցաւ առ դրան եկեղեցւոյ Լուսաւորչին որ 'ի Գալաթիա։

Ի նմին ամի ընտրեցաւ պատրիարգ Յակոբ վարդապետ Նալեան զմմառացի՝ մին յերկոտասան աշակերտացն Կոլոտի. իշխանաւորութիւն նորա պատճառ եղև բազմապատիկ հալածանաց ընդդէմ ուղղափառաց, մանաւանդ 'ի Կոստանդնուպօլիս և 'ի Գաղատիա։ Ապա յամին 1759 վարդապետ ոմն սիլիստրացի Պրոխորոն անուն եկեալ յԵրուսաղէմէ՝ բռնութ՟բ յափշտակեաց զպատրիարգութիւն 'ի Յակոբայ. բայց յետ եօթն աւուրց ընկեցաւ յիշխանութենէ, և փոխանակ նորա եդաւ Մինաս վարդապետ ակնեցի. այլ յետ սակաւուց յընտրել նորա 'ի կաթուղիկոսութիւն յամին 1751, կացուցաւ պատրիարգ Գէորգ վարդապետ յերկրէն Աբանգայ, որ էր փոխանորդ Մինասայ. բայց զկնի միոյ ամի Յակոբ Նալեան մեկուսացեալն յԵրուսաղէմ՝ վերստին էառ զիշխանութիւն պատրիարգութեան, զոր և վարեաց ընդ ամս երկոտասան ։ Ապա յամին 1764 կամովին հրաժարեալ յիշխանութենէ, կացոյց 'ի տեղի իւր զԳրիգոր վարդապետ Պասմաճեան զայրն խաղաղասէր, որ յետ ինն ամաց տաղտկացեալ 'ի խռովայոյզ արանց որք ստիպէին զնա նորոգել զհալածանսն՝ հրաժարեաց յիշխանութէ̃ և խոյս ետ յԵւրոպա, և վախճանեցաւ անդ ։ Ի մեկնել Գրիգորի ընտրեցաւ Զաքարիա վարդապետ կաղզուանեցի յամին 1773 որ 'ի նստել իւրում կամելով հաճել զկամս խռովարար անձանց, սկսաւ հալածել զբազումս յազգականաց իւրոց, և տևեաց խռովութիւնն զամս եօթն, յորս բազումք մատնեցան 'ի բանտ և յաքսորս հանդերձ ծանր ծանր տուգանօք ։

ԳԼՈՒԽ ԺԷ․

Պատմութիւն վարուց Մխիթարայ աբբայի և սկզբնաւորել
միաբանութեան մխիթարեանց ։

ՅԱՆՄԽԻԹԱՐ յուզմունս ազգային տառապանաց հանդիսացան նորանշան խնամք աստուածային այցելութեան 'ի հանդարտել զոգիս ամբոխեալս, և 'ի մխիթարել զվշտակիրս, ազդու սպեղանիս պատրաստելով խղխայթեալ վիրացն որովք տագնապէր ազգս մեր ։ Եւ զի գլխաւոր պատճառք խռովութեանցն էր անհրահանգութիւն ազգիս յաստուածային և 'ի մարդկայինն՝ որպէս և 'ի քաղաքական ուսմունս գիտութեանց, հաճեցաւ տէր ազդել 'ի սիրտ աստուածարեալ արանց կանգնել դպրոցս և վարժարանս յուսումն բարեպաշտութեան առաքինի վարուց, և օգտակար մակացութեանց, 'ի փարատել զմէգ տգիտութեան՝ յորմէ սովոր են ծագել աղէտք պարսաւելի գժտութեանց և երկպառակութեան ։

Սոյին աստուածահրաշ խնամօք զարթոյց տէր զոգի երանաշնորհ նախահօրս մերոյ Մխիթարայ վարդապետի, որ ծնաւ յամի տեառն 1676 'ի Սեբաստիա քաղաքի փոքուն Հայոց ․ ուր և սնեալ և վարժեալ հոգեջան դաստիարակութեամբ երկուց սրբասնեալ կուսանաց 'ի վարս բարիս և յուսումն գրոյ, ընկալաւ զշընորհս աստուածային կոչման, այնչափ զարգացեալ 'ի հրահանգս եկեղեցական պաշտաման՝ մինչև հնգետասանամեայ արժանանալ կարգի սարկաւագութեան. և ապա փափաքանօք կրօնաւորական միանձնութեան շրջեցաւ 'ի զանազան մենաստանս հայաստան աշխարհի, աշակերտեալ վարդապետաց ոմանց յուսումն հոգեշաւիղ ընթացից միակեցական վարուց։ Այլ քանզի խորհուրդք աստուածային կամաց կարգեալ էին զնա յայլ մեծագոյն նպատակ նորանշան գործոց, չգտեալ նորա հանգիստ 'ի հայաստան աշխարհի, և սրտառուչ մաղթանօք ապաւինեալ 'ի խնամս պաշտպանութեան տիրամօր սուրբ Կուսին, մինչ կայր յաղօթս յեկեղեցւոջ Սևանայ՝ քաջալերեցաւ 'ի տեսլենէ և 'ի խոստմանց նորա. վասն որոյ խորհեցաւ ելանել յերկրէ իւրմէ և դէմ եդեալ գնալ անդր ուրանօր տէր ինքնին առաջնորդեսցէ նմա։ Եւ յամին 1696 ձեռնադրեալ 'ի քահանայութիւն՝ ուղևորեցաւ 'ի Կոստանդնուպոլիս, ուր զամ մի ողջոյն պարապեալ 'ի քարոզութիւն ուղղափառութեան, հետազօտ եղև հանգամանաց Եւրոպայ, ապա դարձ արար վերստին 'ի սահմանս փոքուն Հայոց, և անդ զկնի երկամեայ շրջելոյ քարոզութ՟ յայլ և այլ քաղաքս, և ընդունելոյ զաւազան վարդապետութեան յառաջնորդէ Կարմիր վանացն Կարնոյ, միաբանեաց ընդ իւր և զոմանս 'ի գործակցութիւն դիտման իւրոյ, և ապա դարձաւ անդրէն 'ի Կոստանդնուպոլիս յամին 1700։ Ի մայրաքաղաքի անդ ստացեալ և այլ հոգեսէր աշակերտս, սկիզբն արար միաբանութեանն՝ նուիրեալ զանձինս յորդեգրութիւն տիրամօր սուրբ Կուսին, որոյ խնամօքն և քաջալերութեամբ ձեռնարկեալ էր յայն գործ։

Եւ քանզի ընդ այն ժամանակս հալածումն մեծ էր 'ի Կոստանդնուպոլիս, յորում խնդրէին կալանաւորել և զՄխիթար վարդապետ զքարոզն և զանվեհեր ախոյեանն ճշմարտութե՟, նմին իրի թագեաւ նա 'ի մենաստանի եւրոպացի կրօնաւորաց, և փութացաւ առաքել զաշակերտս իւր 'ի Մոռա, ուր էր յայնժամ ընդ տէրութեամբ ազնուապետութեանն Վենետիկոյ. ապա յամին 1703 և ինքն իսկ ծպտեալ զգեստուք ուղևորեցաւ անդր, ուր գտեալ շնորհս առաջի մեծի կուսակալին՝ 'ի գթութենէ նորա ընկալաւ ձրի տեղի բնակութեան 'ի Մեթոն քաղաքի, ետ եւ երկուս կալուածս յեկամուտ եւ 'ի պարէն կենաց ։

Բայց նախ քան զսկզբնաւորութիւն շինուածոյ մենաստանին յամին 1705 փութացաւ առաքել 'ի Հռովմ զերկուս 'ի պատուաւոր գործակցաց իւրոց 'ի խնդրել եւ ընդունել զհաստատութիւն սրբոյ աթոռոյն վանամիաբանութեան իւրոյ, յայտ առնելով զփափաք իւր եւ զդիտեալ վախճան, այս է կանգնել տեղի ապաստանի հոգեւոր անձանց 'ի հրահանգութիւն կրօնաւորական վարուց, եւ վարժարան աստուածաբանական եւ արտաքին գիտութեանց, առ 'ի լուսաւոր լինելոյ ազգին եւ առաջնորդելոյ նոցա 'ի ճշմարտութիւն ։ Զայս խնդիր եւ առաջարկութիւն Մխիթարայ վարդապետի յետ ընդերկար քննութեան՝ ընկալեալ առաքելական աթոռոյն գրեաց առ նա կոնդակ հաստատութեան յամին 1712, անուանելով Աբբայ Միաբանութեանն զնա ինքն զերանաշնորհ Հայրս մեր ։

Յայնմ ժամանակի գերապատիւ Մխիթար Աբբայ շինեաց վայելուչ մենաստան եւ եկեղեցի 'ի Մեթոն քաղաքի · սակայն վայելք բնակութեանն սակաւօրեայ եղեն, զի յետ երկոտասան ամաց տիրելով այլազգեաց երկրին Մօրայի բռնադատեցաւ խոյս տալ անտի հանդերձ աշակերտօքն, եւ ապաստանել 'ի մայրաքաղաքն Վենետիկ յամին 1715 ։ Անդ ապաւինեալ 'ի խնամս պաշտպանութեան ամենօրհնեալ Տիրամօրն՝ ընկալաւ 'ի տէրութենէ զկղզին սրբոյն Ղազարու, յոր եմուտ յամին 1717 'ի տօնի ծննդեան սրբոյ Կուսին ։ Իսկ քանզի ոչ գոյր 'ի կղզւոջն տուն բնակութեան, ձեռն արկ առ սակաւ սակաւ կանգնել մենաստան նորակերտ, զոր եւ 'ի գլուխ եհան յամին 1740 ։

Շինութիւն մենաստանին չեղեւ ինչ արգել եւ խափան առաջադրեալ վախճանին իւրում, զի սկսաւ հաւաքել ազգային մանկունս 'ի նորընծայութիւն, եւ հրահանգել զնոսա կրօնաւորական կարգօք եւ կանոնօք, զինելով զնոսին նախանձու աստուածպաշտութեան, եւ 'ի ջանս առաքելական պաշտաման առ 'ի մշակութիւն հոգւոց ։ Բայց զի բարւոյն յաջողութիւն դժուարին է միշտ ; եւ չարակամեն այնմ զխանձարարք, յարեան եւ ընդդէմ նորատունկ միաբանութեանս ամբոխք, յորմէ ամբոխեալ հարկ համարեցաւ գերապատիւ Աբբահայրն Մխիթար գնալ անձամբ 'ի Հռոմ, և անդ ունայնացուցեալ զամենայն ստայօդ ամբաստանութիւնս հակառակորդաց, և ընկալաւ 'ի սրբոյ առաքելական դահէն ոչ միայն զյաղթական վճիռ անմեղութե., այլ և զանպայման իշխանութիւն առաքելոյ քարոզիչս յարեւելեան կողմանս ուր և կամք իցեն նմա : Յետ այնորիկ դարձ արարեալ 'ի Վենետիկ խնամ կալաւ յառաջադիմութեան սկզբնաւորեալ գործոյն, բանիւք և արդեամբք լինելով յորդոր և օրինակ բարեկրօն քաղաքավարութեան համօրէն միանձանց յաստուածահաճոյ վարս և 'ի կարևոր ուսմունս առ 'ի շահ հաւատացելոց :

Յայսոսիկ ծանրակիր վիշտս աշխատութեանս պարապելով անընդհատ զամս իւր յիսուն, 'ի գլխաւորել անդ զպտուղ բազմարդիւն վաստակոյն՝ ստացաւ տկարութիւն մահաբեր, յորում և տառապեալ իւր զամ մի ողջոյն հրաշալի համբերութեամբ, և ամենայն հոգևոր պատրաստութեամբ առ Աստուած ճանապարհին՝ կատարեաց զկեանս իւր 'ի քսանևօթներորդ աւուր ամսեանն ապրիլի յամին 1749, 'ի հասակի եօթանասուն և չորից ամաց, և թաղեցաւ յեկեղեցւոջ վանաց սորին Ս. Ղազարու առաջի աւագ սեղանոյն :

ԳԼՈՒԽ ԺԲ.

Միաբանութիւն Վիեննական կրօնաւորաց :

Յետ վախճանի երանաշնորհ նախահօրս մերոյ Մխիթարայ աբբայի 'ի նմին ամի յաջորդ աբբայութեան ընտրեցաւ Ստեփաննոս վարդապետ Մելքոնեան, այր արժանապատիւ և սիրելի յաչս բարեյիշատակ հանգուցեալ հիմնադրին . որ խոհական տեսչութեամբն 'ի միջոցս քսան ամաց ժամանակի աճեցոյց զմիանձունս կրկնապատկեալ թուով քան զոր ընկալեալն 'ի նախորդէն : Յորոց 'ի թիւս վերջին հպատակաց նորա վիճակեցաւ և ինձ մանկան, և զամս քսան և երկուս վայելել 'ի հայրագութ խնամս նորա :

Յաւուրս սորա անկաւ 'ի սիրտս միաբանից ոմանց կրտսերագունից՝ պատճառանօք բարեկարգութեան հակառակել յերս ինչ ընդդէմ աբբային և իշխանութեան նորա. զոր չկարացեալ որպէս կամէինն յառաջ վարել՝ ստիպեցան անջատիլ 'ի միաբանութենէ վանաց սրբոյն Ղազարու, և մեկուսացեալ 'ի քաղաքն Տրիեստ կանգնեցին դպրոց, և սկսան վարել միաբանական կեանս ոչ ինչ ընդհատ 'ի նախկինն կանոնաց անտի մենաստանին յորմէ բաժանեալն էին. որով սկսաւ միաբանութիւն նոցա յամին 1774, և ապա 'ի պատճառս խռովութեանց Եւրոպայ 'ի տիրել Գաղղիացւոց Տրիեստ քաղաքի՝ փոխադրեցան 'ի Վիեննա քաղաք կայսերական, ուր գտեալ նպաստ և՝ տեղի բնակութեան 'ի գթութենէ կայսերն Փրանկիսկոսի առաջնոյ՝ առ սակաւ սակաւ յաջողութեամբ Տեառն սկսան ծաղկել, և յամին 1837 կանգնեցին անդ նոր մենաստան հանդերձ ընդարձակ տպագրատամբ.

Վախճան միաբանութեանս և սահմանադրութիւն կանոնացն որպէս և տարազ զգեստուցն նոյն գոլով ընդ միաբանութեան միանձանց սրբոյն Ղազարու, անուանին և սոքա Մխիթարեանք, և որդիք և աշակերտք Մխիթարայ աբբայի.

ԳԼՈՒԽ ԺԹ.

Միաբանութիւն Անտոնեան կրօնաւորաց 'ի Լիբանան.

Ի ԲԱԶՄԱՎՐԴՈՎ դարու աստուածային խնամոց պտուղ է և միաբանութիւնն հայազգի կրօնաւորաց պատսպարելոց 'ի լեառն Լիբանանու ընդ կարգօք սրբոյն Անտոնի աբբայի. Հիմնարկու միաբանութեանն եղեն հոգեւորականքն բերիացիք ոմանք, որոց գլխաւորք էին տէր Յակոբ Յովսէփեան քահանայ, և Աբրահամ Աթար աստուածասէր վաճառական, որք 'ի պատճառս ազգային հալածանաց յետ պանդխտութեամբ շրջելոյ 'ի Պաղեստին և յայլ բազում տեղիս՝ մեկուսացան 'ի Լիբանան յամին իբր 1705, ուր տեսեալ զապահովութիւն վայրացն որ էին ընդ իշխանութեամբ ուղղափառ իշխանացն Մառոնւոց, յօժարեցան մնալ անդ, և կանգնել միաբանութիւն ինչ կրօնաւորաց՝ ըստ օրինակի

Մխիթարայ աբբահօր, որ ընդ այն ժամանակս կանգնեալ էր զմենաստան իւր ՚ի Մոռա։ Վասն որոյ գրեցին ՚ի Հռովմ առ սուրբ աթոռն և ծանուցին զվախճան փափաքանաց իւրեանց. ապա յետ ամաց ինչ ժամանելով հաճութեան առաքելական աթոռոյն, ՚ի մարդասիրութենէ պատրիարգին Մառոնեաց՝ որպէս և ուղղափառ իշխանաց տեղւոյն՝ ընկալան ձրի տուն մի և արտ փոքրիկ, զոր և հաստատեցին մուրհակաւ յամին 1710, և սկսան կարգաւորել զընակութիւն վանացն, և առ նովաւ կանգնել եկեղեցի յանուն Յիսուսի Փրկչին։

Զկանոնս միաբանական կենաց առին ՚ի միայնակեցացն Մառոնեաց, ինչ ինչ փոփոխելով և յարմարելով սովորութեան և արարողութեան ազգիս ըստ խորհրդոց և առաջնորդութեան Աբրահամու եպիսկոպոսին Բերիոյ, որ ՚ի պատճառս հալածանաց և յետ կրկին աքսորանաց՝ յամին 1722 խոյս տուեալ ՚ի Թեմէ իւրմէ բնակէր ՚ի մենաստանին ընդ կրօնաւորսն, յորոց յոլովք էին յաշակերտութենէ նորա։

Վախճան միաբանութ՟ես է կրօնաւորական կարգօք պարապել յուսումն պիտանի և հոգեշահ գիտութեանց, նպատակ ունելով զհոգևոր օգուտ ազգիս Հայոց։

ԳԼՈՒԽ Ժ.

Պատրիարգութիւն Հայոց ուղղափառաց ՚ի Լիբանան։

ՅԱՒՈՒՐՍ ազգային խռովութեան և հալածանաց յորս պատրիարգունք Հայոց ՚ի Կոստանդնուպօլիս միմեանց զկնի տիրապետէին աթոռոյն, Աբրահամ վարդապետ Արծիւեանց՝ ծնեալ յԱյնթապ քաղաքի յամին 1678, և երկոտասանամեայ կղերիկոսացեալ փոքր աստիճանաց ընդունելութեամբ ՚ի Պօղոս եպիսկոպոսէ այնր քաղաքի, չոգաւ ՚ի Մանկուտ, այն է Մէրտին, աշակերտիլ Մելքոն եպիսկոպոսին՝ որ էր ուսեալ ՚ի Հռովմ ՚ի գպրոցին տարածման հաւատոյ. առ որով զամս ինչ վարժեալ յուսմունս կարևորս, յօժարեցաւ շրջել պանդխտութ՟բ ՚ի Կերմանիկ, այն է Մարաշ, յԱմիդ և յԷջմիածին։ Ապա ՚ի հասակի քսան և չորից ամաց գնացեալ 'ի Սիս՝ կարգեցաւ նոտար և գանձապահ կաթողիկոսարանին Հայոց. և յետ կալոյ անդ զամ հինգ՝ ժամանեալ 'ի հասակ քսանեւինն ամաց՝ ձեռնադրեցաւ քահանայ և ընկալաւ զաւազան վարդապետութեան 'ի Պետրոսէ կաթողիկոսէն Սսոյ յամին 1706։ Յետ չորից ամաց 'ի խնդրոյ ժողովրդեանն Բերիոյ օծաւ եպիսկոպոս 'ի նոյն կաթողիկոսէն յամի տեառն 1710, ըստ որում նշանակի յեպիսկոպոսական կնիք նորա։ Եւ զի 'ի թեմի իւրում հոգեւանդն քարոզիչ էր ուղղափառ դաւանութեան հռովմէական եկեղեցւոյ, յերկրորդ ամի եպիսկոպոսութեան իւրոյ կոչեցաւ 'ի Կոստանդնուպօլիս յաւուրս Սահակայ ակնեցւոյ, յորմէ արգելաւ 'ի մետաղս արքունի ծառայութեան, և ապա 'ի զերծանելն անտի դարձաւ անդրէն յաթոռ իւր 'ի Բերիա։ Բայց յետոյ յամին 1716 յաւուրս պատրիարգութեան Յովհաննու Կոլոտի վերստին կալանաւորեալ տարագրեցաւ յաքսոր 'ի կղզին Արուատ կոչեցեալ հուպ 'ի Կիպրոս, ուր մնաց զամ չորս, մինչև եգիտ շնորհս ազատութեան 'ի ձեռն աշակերտաց իւրոց Հայոց Լիբանանեայց և զերծաւ յաքսորանացն. սակայն ոչ կարացեալ դառնալ յաթոռ իւր 'ի Բերիա, պատսպարեցաւ 'ի լեառն Լիբանանու առ նոյն հայազգի կրօնաւորս, որոց և հաւանեցաւ իբր նախահայր և տէր՝ ձեռնադրելով զկղերիկոսունս նոցա 'ի քահանայս, և տալով զգաւազան վարդապետութեան, միանգամայն 'ի բացուստ հովուելով զհօտ իւր 'ի ձեռն միաբանից այնր մենաստանի մինչև ցամ տեառն 1738. յորում ժամանակի ուղղափառ ժողովուրդք Բերիոյ յետ կորզելոյ զեկեղեցի իւրեանց 'ի ձեռաց հակառակորդաց, ընկալան զհրովարտակ աներկիւղ ազատութեան Աբրահամու եպիսկոպոսի, որով դարձաւ նա յաթոռ իւր 'ի Բերիա վեց քահանայիւք հովուել զհօտ Քրիստոսի։

Ընդ այն ժամանակս յամին 1737 'ի մեռանել Միքայէլ կաթողիկոսին Հայոց 'ի Սիս, ուղղափառ ժողովուրդք կողմանցն Ասորւոց միաբանեցան ընտրել իւրեանց ուրոյն պատրիարգ զԱբրահամ եպիսկոպոս. յորոյ սակս յամին 1740 հարկեցաւ գնալ 'ի Հռովմ ընդունել զհաստատութիւն պատրիարգական իշխանութեան 'ի սորա աթոռոյն. վասն որոյ ձեռնադրեալ 'ի տեղի իւր եպիսկոպոս Ալեպայ զՀայր Յակոբ Յովսեփեան, չոգաւ 'ի Հռովմ, ուր յետ ամաց ինչ առեալ զպատիւ պատրիարգութեան դարձաւ անդրէն 'ի Լիբանան 'ի վանս ազգային կրօնաւորաց և անդ կատարեաց զկեանս իւր սրբութեամբ։ Այս է առաջին ծագումն պատրիարգական աթոռոյն որ տևէ մինչև ցայսօր։

Յաջորդ նորա եղև Յակոբ եպիսկոպոս Ալեպայ, որ ըստ կտակի նախորդին իւրոյ Աբրահամու կառոյց զվերին վանսն Զմմառ կոչեցեալ՝ 'ի բնակութիւն պատրիարգին և եպիսկոպոսաց։

ԳԼՈՒԽ ԽԱ.

Պատրիարգութիւն ուղղափառ Ասորւոց։

Ի քահանայապետութեան Կղեմայ ԺԳ. արքեպիսկոպոսն Ասորւոց յակոբեանց Գրիգորիոս Միքայէլ Ճարուէ որ նստէր 'ի Ալեպա, այր խոհական և խաղաղասէր տեսեալ զանգութ բռնաւորութիւն պատրիարգին իւրեանց Գէորգեայ Գ. 'ի հալածել զուղղափառս ազգին իւրոյ, միանգամայն ընթերցեալ զազդու նամակ մեղադրանաց ընդ գործս Գէորգեայ Գ. և յորդորանաց խաղաղութեան առ նա ինքն, զոր հրամանաւ քահանայապետին գրեալ էր ժողովն տարածման հաւատոյ, յաղթահարեալ 'ի ճշմարտութենէ ծանեաւ զվրիպակ դաւանութիւն իւր, և շարժեալ 'ի շնորհաց Աստուծոյ՝ ցանկացաւ միանալ ընդ եկեղեցւոյն Հռովմայ։ Վասն իրի գրեաց առ սուրբ աթոռն նամակ սիրոյ և հպատակութեան, որ եհաս յառաջին աւուրս քահանայապետութեան Պիոսի Զ. յամին 1775. ընդ որ մեծապէս ցնծացեալ քահանայապետին՝ մատոյց նմա յորդոր քաջալերութեան հաստատուն մնալ 'ի խոստմունս իւր, միանգամայն ըստ խնդրոյ և գովելի վկայութեան ուղղափառ քահանայից և եպիսկոպոսաց նմին, որպէս և լատին քարոզչաց, անուանեցաւ հոգաբարձու աթոռոյն Ալեպայ։ Զդարձ նորա յուղղափառութիւն լուեալ Գէորգեայ պատրիարգին Յակոբեանց, որ նստէր 'ի Մերտին, յորոյ հալածանս ընդդէմ Ճարմէ արքեպիսկոպոսին, զոր և կալեալ արկ 'ի բանտ, ուր յետ բազմապատիկ վշտաց և տառապանս կրելոյ իբրև զերծաւ 'ի կապանացն սկսաւ պանդխտութեամբ շրջել յԵգիպտոս և 'ի Միջագետս՝ շահելով և դարձուցանելով յուղղափառութիւն զչորս եպիսկոպոսունս և զայլ բազում ժողովուրդս: Յաղագս այսպիսի հոգեջան արդեանց նորա Պիոս Զ հաստատեաց զնա սեպհական հովիւ եկեղեցւոյն Բերիոյ. զոր իմացեալ Գէորգեայ պատրիարքին և դառնացեալ յոյժ՝ տառապեցոյց զհալածումն ծանր ծանր տուգանս ածելով 'ի վերայ Ջարվէի և ամենայն ուղղափառաց. բայց և ինքն պատուհասեալ յԱստուծոյ կարճեցաւ 'ի կենաց յամին 1781:

Ընդ այն ժամանակս 'ի կամել Յակոբկաց ընտրել յաջորդ վախճանելոյն՝ միաբան հաւանութեամբ և աղերսանօք գրեթէ համօրէն ազգին յորդորեցաւ և արքեպիսկոպոսն Ջարվէ վասն բարեհամբաւութեան իւրոյ գնալ 'ի Մերտին 'ի ժողով ընտրութեան նորոյ պատրիարքի: Ընդ աստուածային խնամոց առաջնորդութեամբ միաձայնեցաւ ընտրութիւնն 'ի վերայ նորա. բայց ինքն ոչ կամեցաւ յանձն առնուլ առանց հաւանութեան սրբոյ աթոռոյն. վասն որոյ գրեաց նամակ յայտարարութեան, որում ձեռն եդին ոչ միայն գլուխք Մերտինոյ և բազմաթիւ ժողովուրդք, այլ և պատրիարքն Քաղդէացւոց և արքեպիսկոպոսն Հայոց ուղղափառաց Մերտինոյ, որպէս և չորեքին եպիսկոպոսունք Ասորւոց ընկալեալք զուղղափառ հաւատս 'ի ձեռն Ջարվէի:

Զնամակ յայտարարութեանս ընկալեալ քահանայապետին Պիոսի Զ ցնծալից սրտիւ հաճեցաւ կատարել զխնդիր նորոգ ընտրելոյն և զաղերս ժողովրդեանն, առաքելով կոնդակ հաստատութեան և պատիւ պալլիումի հանդերձ ամենայն պատրիարքական իշխանութեամբ յամին 1783. յորմէ սկսաւ ուղղափառ պատրիարքութիւն Անտիոքայ Ասորւոց:

Յանակնկալ յաջողութենէ աստի յառաջադիմութեան ուղղափառ հաւատոյ՝ տագնապեալ ոմանց 'ի չարամիտ և յամառ առաջնորդացն Յակոբկաց՝ երկու ամօք յառաջ փութացան ծանուցանել 'ի Կոստանդնուպոլիս առ խնամակալ իւրեանց պատրիարգն Հայոց , որ 'ի ժամանակին յայնմիկ էր Յովհաննէս Համատանեցի Պանըր անուանեալ . որ և ընկալաւ 'ի տէրութենէն հրովարտակ տարագրութեան նորընտիր պատրիարգին Ճորլէի , և փոխանակ նորա կացուցաւ ոսոխն ուղղափառութեան Մատթէոս եպիսկոպոս Կինուէի , որ բռնութեամբ մնեալ 'ի Մերոխն՝ տիրեաց պատրիարգարանին և եկեղեցեաց . ապա սկսաւ դառն և անողորմ հալածանօք չարչարել զուղղափառս . յորմէ ստիպեալ Ճորլէ պատրիարգին խոյս ետ 'ի լեառն Սանձոր , և անտի փափաքէր գնալ յաթոռ իւր 'ի Բերիա . բայց զանգիտեալ 'ի սպառնալեաց հակառակորդին իւրոյ մեկուսացաւ 'ի լեառն Լիբանան , որ եղև նմա և յաջորդաց նորա տեղի ապաստանի մինչև ցամ տեառն 1832 , յորում ժամանակի 'ի զատանել ուղղափառաց հայազգի ժողովրդեան յիշխանութենէ պատրիարգին Հայոց , ազատեցան և ուղղափառ Ասորիք՝ յօժարակամ մնեալ ընդ իշխանութեամբ ուղղափառ ազգապետին Հայոց զոր կացոյց պետութիւնն Օսմանեանց . Եւ այժմ երրորդ պատրիարգն 'ի յաջորդս Ճորլէի , որ և է յազգականութենէ նորա , նստի 'ի Բերիա յաթոռ իւր .

ԳԼՈՒԽ ԻԲ.

Քահանայապետութիւն Պիոսի Զ. և ամ յոբելեան .

ՅԵՏ մահուան Կղեմայ ԺԴ. դահն առաքելական մնաց 'ի պարապութեան զամիսս հինգ , մինչև միաբան հաւանութեամբ ժողովականաց ընտրեցաւ կարդինալն Պրասքի Չեզենացի յազնուական տոհմէ , որ եղև քահանայապետ 'ի հնգետասաներորդ աւուր փետրուարի յամին 1775 , և անուանեցաւ Պիոս Զ., այր ականաւոր՝ ուղղադատ խորհրդով, վեհանձն , արիասիրտ և բարեսէր , որ հոգելից բարեպաշտութեամբ սկիզբն արար քահանայապետութեան իւրոյ 'ի յոբելեան ամի զոր Կղեմէս ԺԴ. հրատարակեալ էր 'ի նախընթաց ամին , և Պիոս Զ. տարաւ զայն 'ի գլուխ .

Ի շրջաբերական կոնդակին զոր գրեաց առ ամենայն

եպիսկոպոսունս վասն բանալոյ զգանձս ներողութեանց՝ յայտ առնէ զցաւ սրտի իւրոյ 'ի վերայ յոգնադէմ վշտաց եկեղեցւոյ ։ Առաւելապէս գանգատի զանսանձ ազատութենէ նորասիրութեան, որ առ ժամանակօքն համարեալ էր իբրու իմաստասիրութիւն ինչ գոլէր ։
„ Յետ ծաւալելոյ, ասէ, ընդ ամենայն տեղիս զխաւար
„ և զմէգ ամբարշտութեան իւրեանց, և օտարացուցա-
„ նելոյ զկրօնս բարեպաշտութեան 'ի սրտից մարդկան,
„ փիլիսոփայքս այսպիսիկ ապականեալք մտօք՝ հնարին
„ խզել զկապանսն որով մարդիկ յօդին ընդ միմեանս
„ և ընդ այնոսիկ որք ունին զհոգ տեսչութեան նո-
„ ցա ։ Յանդգնին բարձրաբարբառ քարոզել և ուսու-
„ ցանել, թէ մարդ ազատ և անձնիշխան է ծնեալ,
„ և ընդ ոչ ումեք անկեալ իշխանութեամբ. և թէ
„ բազմութիւն ռամիկ ժողովրդեան ոչ այլ ինչ է,
„ բայց խումբ անհրահանգ տգիտաց, որոց ապշութիւն
„ մտաց ստիպէ անսալ և խոնարհիլ քահանայից՝ որք
„ պատրեն զնոսա, նոյնպէս և թագաւորաց՝ որք բռ-
„ նանան 'ի վերայ նոցա ։ Որով կամին ասել ըստ խեղա-
„ թիւր կարծեաց իւրեանց՝ թէ յօդ միութեան ընդ
„ մէջ քահանայական պատուոյ և արքունի իշխանու-
„ թեան է բարբարոսական դաշնակցութիւն ինչ ընդ-
„ դէմ կարծեցեալ բնածին ազատութեան մարդոյ ։ Ա-
„ պաքէն ո՞ ոչ տեսանէ, թէ այսպիսի ահաւոր հրէշք
„ և որ սոյին նման ցնորք պօղեալք հնարիմաց արուես-
„ տիւք ճարտարութեան՝ այնչափ առաւել վտանգեն
„ զխաղաղութիւն հասարակաց՝ որչափ յապաղին դար-
„ մանք 'ի սանձել զամբարիշտ յանդգնութիւն որոմնա-
„ ցան առաջնորդաց նոցա ։ Թունալից վարդապետու-
„ թիւնք անօրինացս կարի յոյժ մահաբերք են հոգւոյ
„ գնելոց անգին արեամբն Քրիստոսի, զի իբրև քաղց-
„ կեղ ճարակեալ ապականեն զանդամս առողջս, և
„ ծաւալին մինչև յարքունիս թագաւորաց. բայց որ
„ ևս սոսկալին է ասել, սպրդին մտանել և 'ի տաճար
„ սրբութեան Աստուծոյ„ ։

Լուր և հռչակ քահանայապետութեան Պիոսի Զ. ցնծութիւն եղև հասարակաց. որպէս և ինքն յերկարատև և 'ի մեծախառն գահակալութեան իւրում վեհապանծ գործովքն արժանաւոր եղև մեծահռչակ գովութեանցն որովք պանծացուցանէն զնա մատենագիրք։ Կեանք նորա եղև լի փառօք, իսկ յետին ամս քահանայապետութեանն՝ կարի ևս պանծալի, որպէս և վախճան կենաց նորա հանդէտ խոստովանողի և մարտիրոսի։ Յաւուրս գահակալութեան իւրոյ խնամ կալաւ բարեզարդել զգաւառս կալուածոց սրբոյն Պետրոսի, հոգ տարեալ կարևորացն զորս միանգամ խորհեալն էր կանխաւ 'ի ժամանակս կարդինալութեան իւրոյ։ Մեղմացոյց զխստութիւն վիճակի պատուհասեալ յիսուսեանց, որք բանտարգել տառապէին յամրոց սրբոյ Հրեշտակապետին։ Մեծաջուք պատուով և խոհական խնամութեամբ հիւրընկալու եղև թագաւորաց և արքայազանց տանն Աւստրիոյ երթելոց 'ի Հռովմ յայցելութիւն նորա։ Կանգնեաց բազմապատիկ շինուածս յօգուտ հասարակաց և 'ի զարդ վայելչութեան Վատիկանեան տաճարին, որպէս և 'ի պայծառութիւն համօրէն մայրաքաղաքին։ Ճոխացոյց զթանգարանն սկըզբնաւորեալ 'ի նախորդէ իւրմէ՝ ազգի ազգի յիշատակօք հնութեանց, պղնձագործ և քարակոփ արձանօք և անօթովք ընտիր և պատուական քարանց։ Զօրավիգն գտաւ ճարտարամիտ արանց 'ի կատարելութիւն ածելոյ զազատական արուեստս· յորում ժամանակի ծաղկեցան ականաւոր վարժապետք նկարչութեան և արձանագործութեան, յորոց մի է և անմահականն Քանովա։ Յամս քահանայապետութեան իւրոյ եցոյց զմեծագործութիւն սրտին և զընդարձակութիւն խորհըրդոց միտացն 'ի տալն ցամաքեցուցանել զՓոնթինեան անուանեալ ճախինան՝ զանհնարաւոր կարծեցեալն և 'ի նախնի կայսերաց։

Աղէն նորա և տագնապք վշտաց 'ի պատճառս Ութրէքթեան հերձուածոյն ծագելոյ իբր վաթսուն ամօք յառաջ, և անակնկալ ծաւալելոյ առ քահանայապետութեամբ իւրով· յոր սակս ստիպեցաւ անյապաղ բացէ 'ի բաց հերքել և ունայնացուցանել զկոչումն և զձեռնադրութիւն եպիսկոպոսութեան Հարլէ քաղաքին՝ եղելոյ 'ի սուտ արքեպիսկոպոսէն Ութրէքթի։ Այնպէս վշտառիթք եղեն նմա պատրուակեալ բարեկարգութիւքն Տոսքանայի զորս արար եպիսկոպոսն Փիսթոյա քաղաքի և ժողովքն նորա՝ 'ի կարգադրելն և յայլլել զպաշտամանս և զարարողութիւնս եկեղեցւոյ առանց հաւանութեան սրբոյ աթոռոյն ։ Յաւելան 'ի սոսին և անտանելակալ օրինադրութիւնքն Յովսեփայ կայսեր 'ի վերայ կրօնաւորաց 'ի նուազել զթիւ նոցա, և 'ի զրաւել բռնի զմենաստանս և զկալուածս նոցին, յոյր սակս հարկ համարեցաւ քահանայապետս գնալ 'ի Վիեննա առ կայսրն և անձամբ խօսել ընդ նմա, որով խափանեցան անկարգութիւնքն ամենայն ։ Յայնմ ուղևորութեան որ եղև յամին 1782, տեսաւ հոգի բարեպաշտութեան ժողովրդոյն Իտալիոյ և Գերմանիոյ, յընդունելն և 'ի մեծարել արժանաւոր պատուով ըզքահանայապետն ուղևոր ։

Եւ սոքօք պատրաստեալ կային նմա ծանրագոյն ևս վիշտք վտանգի 'ի հանդէս արիութեան սրտի նորա, զոր եցոյց զկնի յաւուրս խռովալից ապստամբութեանն Գաղղիոյ, որ յերից ամաց հետէ տագնապեալ յուզէր զազգն զայն ողջոյն ։ Եւ զի էր կասկած մեծ՝ եթէ խռովարար ապստամբքն հորդան տայցեն 'ի կողմն Իտալիոյ, նախ իբր զօրք սահմանակից տէրութեանն Սարդինիոյ, Փիէմոնթի, և աշխարհակալութեանն Գենուայի՝ համդերձ օգնականութեամբ կայսեր 'ի պատրաստի կային առ սահմանագլխովք առ 'ի պաշտպանութիւն Իտալիոյ ։ Ի նոյն դաշնակցութիւն հրաւիրեցան և թագաւորք Իտալիոյ, որոց առաջին եղև Պիոս Զ գլուխն եկեղեցւոյ և թէպէտ առաջարկեալ դաշնակցութեան. բայց 'ի պատճառս յաչաղկոտութեան և երկչոտութեան միոյն յիշխանութեանց անտի, որ հեղգացաւ ժամանել յօգնութիւն դաշնակցելոյն, ոչ կարացան զդէմ ունել խուռն և անթիւ բազմութեան Գաղղիացւոց, որք հորդան տուեալ սփռեցան յԻտալիա աւար հարկանել ։

Պիոս Զ զգօն խորհրդով փութացաւ զառաջս առնուլ աշխարհաւեր բռնութեան Գաղղիացւոց, 'ի Թոլենթին քաղաքի առնելով զդաշնադրութիւն խաղաղութեան ընդ Նափոլէոնի Պոնափարթեայ զօրապետի, որով զդէմ կալաւ մրրկին որ սպառնայր 'ի վերայ ամենայն սահմանաց սրբոյ աթոռոյն. յանձն էառ յետս կալ 'ի չորեցունց գաւառայն [illegible] անուանելոյ. պարգևեաց զօրապետին անգին և չքնաղ ընծայս, որով առ ժամն զերծոյց զմեծագոյն մասն գաւառաց եկեղեցւոյ՝ ըստ օրինակի արիութեան սրբոյն Լեւոնի Ա.՚ի հինգերորդ դարու։ Ապաւինեալ ՚ի խնամս վերին այցելութեան՝ վեհանձնական կառավարութեամբն զօրացոյց զլքեալ սիրտս ժողովրդեան, բայց յանքննին դատաստանացն Աստուծոյ մինչ նախ մեծագոյն եւս ձախորդութեանց լինել ականատես եւ փորձառու. զի ետես զնորահնար իշխանութիւն ինչ հասարակապետութեան Հռովմայ, եւ զբռնի փոխադրութիւն իւր ՚ի բացական երկիր եւ ՚ի տէրութիւն, ուր եհաս ժամ վախճանի վշտակիր կենաց նորա։

Երկիր օտար ընկալաւ զնշխարս մարմնոյ նորա ՚ի գաւառն դքսութեան Տոֆինէի, ուստի փոխադրեցան ապա ՚ի Հռովմ՝ ՚ի սեպհական աթոռ իւր եւ ամփոփեցան ՚ի գերեզման Վատիկանեան տաճարի։ Եղեւ մեծագործ յաւուրս իւր, եւ յաւերժական ՚ի յիշատակին իբրեւ թագաւոր, յառաջատես եւ զգօն խնամակալ որպէս գլուխ տէրութեան, վեհապանծ տեսլեամբ եւ պատկառելի զինքն որպէս քահանայապետ, արիասիրտ եւ անխռով իբր մարտիրոս եկեղեցւոյ։

ԳԼՈՒԽ ԻԴ.

Եկեղեցական մատենագիրք։

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆՔ դարուս բազմաթիւք էին եւ իբր անհամարք յեւրոպեան կողմանս, զի ՚ի ծաղկելոյ ուսմանց աւելան եւ մատենագիրք յամենայն ազգս դպրութեանց։ Այլ զի յաճախեալ էին եւս անօրէն արբանեակք սատանայի մոլար վարդապետութեամբք պատրել զպարզամիտս, յարոյց Աստուած արս ականաւորս յեկեղեցական կարգէ, որք բանիւ եւ գրով որպէս եւ սքանչելի վարուք իւրեանց եղեն յորդորք եւ օրինակք բարեպաշտութեան ամենայն հաւատացելոց, զօրաւորք ՚ի գիրս, եւ ազդուք ՚ի բանս առաքելաջան քարոզութեան, որով զինեցան ընդդէմ աստուածամարտից ՚ի պաշտպանութիւն եկեղեցւոյ։

Ի բազմաց անտի անխոնջ մատենագրաց՝ անվեհեր ախոյեան ցուցան ընդդէմ թուլամորթ թշնամեաց եկեղեցւոյ և բարեպաշտութեան՝ Անտոն Մալեքքի և Յովսէփ Օգոստինոս Օրսի՝ կրօնաւորք դոմինիկեանք, որ բաց 'ի զանազան բազմաթիւ մատենից՝ ունին ճառս ազդուս 'ի վերայ հաւատոյ և աստուածային յայտնութեանց ընդդէմ անաստուածից · և ևս 'ի վերայ անսխալութեան քահանայապետաց Հռովմայ 'ի խընդիրս հաւատոյ , և այլ ջատագովութիւնս իրաւանց և իշխանութեան սրբոյ աթոռոյն ընդդէմ հակառակորդաց ։ Ի նոյն վաստակս գովելի հանդիսացան և Կամիլլոս Ալմիչ քահանայ աղօթավանից, և Հայրն Բաթոյ Անսալդի , որպէս և Գաւդենտիոս Մառան կրօնաւոր բենեդիկտեան արժանայարգ գրուածովք իւրեանց ընդդէմ հերետիկոսաց , և 'ի հաստատութիւն աստուածագործ հրաշից և սքանչելեաց ։

Մեծարոյ գտան յաստուածաբանական և 'ի բարոյական գիտութիւնս բաց 'ի յոգունց այլոց՝ Հոնորատոս Տուռնէլ, Իգնատիոս Յակինթոս կրօնաւոր դոմինիկեան, Յովհաննէս Հարտուին և Գաբրիէլ Դանիէլ յիսուսեան կրօնաւորք ։

Արժանապատիւ հանդիսացաւ լայնածաւալ հմտութեամբ յիմաստասիրական և 'ի կանոնական գիտութիւնս՝ Լուդովիկոս Անտոն Մուրաթորի , այր անխոնջ 'ի գրաւոր երկասիրութիւնս , հմուտ իրաւագիտութեան , քաջավարժ 'ի փիլիսոփայական ուսմունս , ընտիր աստուածաբան , գովելի բանաստեղծ , հետազօտ հնութեանց և հետաքննին վիպասան ։ Լամբերտինոս որ և Բենեդիկտոս ԺԴ քահանայապետ բազմահմուտ 'ի քաղաքական և յեկեղեցական իրաւագիտութիւնս , տեղեակ սրբազան և արտաքին պատմութեանց ։

Ի մեկնութիւնս ա՟ծաշունչ գրոց և 'ի պայծառութիւն մատենից սրբոց հարց քրտնաջան աշխատասէր գտան Օգոստինոս Կալմէթ , Բենեդիկտոս Փաքքինի , և Պետրոս Կոստանդինոս կրօնաւորք բենեդիկտեանք ։ Թողում յիշել և զայլս անթուս , որք բազմապատիկ հոգեշահ արդեամբք ճոխացուցին զսրբազան ուսմունս 'ի փառս պարծանաց սրբոյ եկեղեցւոյ ։

Ի յետին դարս յայսմիկ ուսումնասէր եռանդն տակաւ արծարծեալ վառեցաւ և յազգս մեր , և կացին իսկ ոմանք՝ որք յետ տպագրութեան գիւտի ծաղկեցին և ՚ի մեզ՝ ինքնագիր և թարգմանածոյ գրենով ջանահնար եղեն փարատել ՚ի մերայոցն զթանձրամած խաւարն տգիտութեն, և հոգևոր բանիւքն դաստիարակելոյ մտաց մխիթար մատուցանել ։ Այլ աւա՛ղ, զի եթէ իցէ ինչ որ զվաստակս նոցա անարգելիս ինչ գոցցես և անարգասաւորս ցուցանիցէ, այն և եթ է զի ոմանք ՚ի նոցանէ, որպէս Ոսկան Երեւանեցի, Յոհաննէս Մարդան, Յակոբ Հոլով և Բարսեղ, ոչ միայն ձեռնամուխ լեալ ՚ի վաստակս հարցն մերոց՝ սուտերածս զպայծառ գեղեցկութի շարագրածոյ նոցա ածին, այլ և աղխատորդոց բառիւք և բանիւք զբնիկ մերոյ հայրենի բարբառոյս զպերճութիւն աղաւաղեալ խանգարեցին ։ Եւ զփառս պարծանաց վերականգնելոյ հայերէն դպրութեանց պահեալ էին երկինք երանաշնորհ նախահօր ուխտիս Մխիթարայ մեծի, և աշակերտաց նորա. վասն որոյ աստէն ՚ի համառօտագիծ պատմութեանս ընդ մատենագրաց ազգիս կարգեսցուք զանուանս և զոմանց ՚ի նոցանէ ։

Ստեփանոս վարդապետ Լեհացի ՚ի միաբանից Էջմիածնի վանացն, ՚ի հրամանէ Յակոբայ կաթողիկոսի թարգմանեաց ՚ի հայ բարբառ զգիրս Դիոնէսիոսի արիսպագացւոյ և զՅովսեպոսի որ Յաղագս պատերազմացն Հրէից ։ Շարագրեաց և բառարան ՚ի հայ և ՚ի լատին բարբառս ։

Առաքել վարդապետ Դաւրիժեցի շարագրեաց զվէպս անցից ազգիս յամէ տեառն 1601 ցամն 1662 ։

Ոսկան վարդապետ Երեւանեցի և Ղուկաս Վանանդեցի աշխատ եղեն յորժ ՚ի բարգաւաճեցուցանել ՚ի մեզ զգիւտ տպագրութեան, և օգտակար գործել զնոյն ազգի ազգի մատենից ծաւալմամբ ։

Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեան, բաց ՚ի պատմականաց գրեաց գիրս և ընդդէմ Հրէից առ ՚ի ցուցանել նոցա եթէ վաղու եւս եկեալ է Մեսիայն, և ՚ի զուր ակնկալեալ սպասեն նմա ։ Պաշտպան եկաց և եկեղեցական ծիսից և արարողութեանց ազգիս ընդդէմ այնոցիկ որք ճշմարտակաւ ուղղափառ կրօնից համարեալ զուն գործէին խափանել զայնոսիկ ։

Կոմիտաս քահանայ Քէօմիւրճեան եղբայր Երեմիայ Չէլէպւոյ՝ որ վասն ՚ի Քրիստոս հաւատոյ վկայեաց նահաստատութեամբ, գրեաց զՀամառօտ յիշատակութիւն անցիցն որք անցին յաւուրս իւր, և ստանաւոր բանիւ մեկնեաց զԳործս առաքելոց։

Խաչատուր վարդապետ Կարնեցի ժամանակակից և պաշտպան Մխիթարայ աբբայի, շարադրեաց ընդարձակ քարոզգիրս, զբարոյական աստուածաբանութիւն, և զտեսականն ստանաւոր բանիւք։ Գրեաց ինչ ինչ և 'ի լատին բարբառ, զորս մի ոմն 'ի միանձնուհեաց աշակերտելոց նմա Մարիամ անուն Գարագաշեան փոխաբերեաց 'ի հայ։

Մխիթար Աբբահայր Պետրոսեան նախահայր մերոց ուխտիս, աստուածահաճոյ վարուքն և մտացն հանճարով զարմանալի, գրեաց զմեկնութիւն աւետարանին Մատթէի ճոխ բանիւք և լուսաւոր վարդապետութեամբ, և տպագրեաց զայն 'ի Վենետիկ յամի 1737։ Թարգմանեաց 'ի հայ և զաստուածաբանութիւն Թովմայի Ագուինացւոյ որ անտիպ կայ տակաւին։ Են նորա և այլ վաստակք բազմապատիկք, յորոց բազումք հրատարակեալ են տպագրութեամբ, և են բազմագոյնք չև ևս դրոշմեալք։

Մատթէոս վարդապետ Գարագաշեան ծնեալ յԵւդոկիա քաղաքի փոքուն Ասիոյ, և մի 'ի ձեռնասուն աշակերտաց Մխիթարայ, ծագեցեալ յաստուածաբանականին և աստուածահաճոյ վարուքն արդարև այր Աստուծոյ։ Գրեաց ընդարձակ և ճոխ բանիւ զյիսնամեայ ժամանակագրութիւն ուխտիս. շարադրեաց և զգիրս մականուանեալ Խորհուրդ աստուածպաշտութե՛, զհիւսեալն բարեբանութեանց 'ի գովեստ սրբոյ Կուսին, զՄտածութիւն չարչարանացն Քրիստոսի հոգեռանդն բանիւք, և այլն։

Մովսէս վարդապետ Ագամալեան Ռոդոսթեցի, բաց յայլոց չափաբանական երկասիրութեանց՝ հերքեաց զօրաւոր բանիւք և զցնորս մոլորութեան Աքմաքեշ Սամուէլի աննշան անուն։

Վրթանէս վարդապետ Ասկերեան Կոստանդնուպօլսեցի, բազմապատիկ ուսումնական և օգտաշահ գրոց թարգմանութեամբք զարդարեալ ճոխացոյց զմատենագրութիւն մեր։

ԳԻՐ ԻՆՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա.

Քահանայապետութիւն Պիոսի Է.

ԱՐԺԱՆԻՆ անմահ յիշատակաց և մեծ քահանայապետն Պիոս Զ. 'ի թողուլ անդ յաջորդի իւրում ընծայաբերեան աթոռ քահանայապետութեան՝ եթող և զպանծալի օրինակ արիական համբերութեան և անվեհեր տեսչութեան ։

Արդ 'ի պատճառս աղմկալից խռովութեան Իտալիոյ ցրուեալ կարդինալաց 'ի քաղաքս քաղաքս, քանզի հարկ 'ի վերայ կայր նոցա գումարել 'ի միասին յընտրութիւն նորոյ քահանայապետի, խնդրեցին 'ի կայսերէն Աւստրիոյ շնորհել նոցա տեղի անքոյթ և ապահով, ուր մարթասցին անխափան ժողովել և կատարել զընտրութիւնն, ըստ կանոնականն աւանդելոյ 'ի Պիոսէ Զ.։ Հաճեցն և նախապատուէ 'ի կարդինալս Ալպանի՝ որ նստէր 'ի Վենետիկ առ սրբակրօն Ջիովանելլի պատրիարգին, ընկալեալ զլուր հաճութեան կայսեր, զի ժողով ընտրութեանն գումարեսցի 'ի Վենետիկ քաղաքի, որ առաւել անդորր և անխափան էր, հեռի գոլով 'ի պատերազմական աղմկաց մանաւանդ որ տագնապէին զԻտալիա համօրէն ։ Այդր ժողովեցան կարդինալք ընդ նախագահութ՟ երիցագունի նոցա Ալպանեայ կարդինալի. և արարեալ նախ զտխրական հանդէս թաղման քահանայապետին հանգուցելոյ, ապա յառաջնում աւուր դեկտեմբերի ամսին 1799 ամենեքին առ հասարակ թուով երեսուն և չորք փակեցան 'ի կղզին սրբոյն

Գէորգեայ, որ էր մենաստան բենեդիկտեան կրօնաւորաց, համզերձ ամենայն պաշտօնէիւք իւրեանց. որ նախ առաջին իշխանացն Կիձի զօրապետ անուանեալն տէրութեան Հռովմայ, արար զերդումն հաւատարմութեան իբր պահապան ժողովատեղւոյ՝ առաջի նախապատիւ կարդինալին. զնոյն արարին և եպիսկոպոսունք, որպէս և այլ մեծարոյ անձինք կարգեալք 'ի սպասահարկութիւն այնր ընտրութեան. յետոյ փակեցաւ խորհրդարանն, և զինուորք տէրութեան կարգեցան 'ի զգուշութիւն ժողովականացն, որ կացին անդ զաւուրս վաթսուն և երկու. և ապա յերեքտասաներորդ աւուր ամսեանն մարտի յամին 1800 եկն վիճակ ընտրութեանն 'ի վերայ կարդինալին Քիարամոնթեայ եպիսկոպոսին Իմոլա քաղաքի Իտալիոյ. և 'ի հետևեալ առաւօտուն երէցն 'ի սարկաւագ կարդինալս Տօրիա՝ 'ի պատուհանէ անտի, որ 'ի վերայ մեծի դրան մենաստանին՝ աւետեաց յոգնախումբ ժողովրդեան զընտրութիւն նորոյ քահանայապետի որ անուանեալն էր Պիոս Է։

Ի տարածել համբաւոյ ընտրութեանս՝ ամենայն քաղաքք եկեղեցական սահմանացն լցան անպատում ցնծութեամբ, և մատուցին գոհաբանութիւս առ Աստուած։ Բենեդիկտեան կրօնաւորք մեծապէս խնդացին ընդ ընտրութիւն կրօնակից եղբօր իւրեանց, զի ընտրեալն կրօնաւոր էր 'ի նոյն կարգէ։ Նոյնպէս և քաղաքն Իմոլա՝ ուրոյ էր հովիւ և առաջնորդ՝ խնդալից ուրախութեամբ ժողովրդեանն առ հասարակ մեծաշուք հանդիսիւ կատարեցին տօն ցնծութեան։ Այլ քանզի վիճակ խռովութեան ժամանակին ոչ ներէր նորապսակ քահանայապետին գնալ յաթոռ իւր, հարկ եղև նմա մնալ անդ 'ի Վենետիկ զամիս չորս, ուր ընկալաւ զդեսպանութիւնս խնդակցութեան յամենայն սահմանաց տէրութեան իւրոյ, որք եկին 'ի համբոյր ոտից հովուապետի և թագաւորի իւրեանց։

Թագադրութիւն նորա եղև 'ի Վենետիկ 'ի քսան և մի ամսեանն մարտի յամին 1800, յաւուր տօնի սրբոյն Բենեդիկտոսի 'ի կղզւոջ անդ սրբոյն Գէորգեայ, որ 'ի ժամուն համարեալ էր նմա իբրև պալատ Վատիկանեան։ Ապա յերեքտասան ապրիլի յաւուր սրբոյ Զատկին մատոյց հանդիսաւոր պատարագ 'ի պատրիարգական եկեղեցւոջ սրբոյն Պետրոսի, և յայն հանդէս մեծապայծառ կոչեցան 'ի սպասաւորութիւն սրբոյ պատարագին և երկուք ոմանք 'ի յունադէտ քահանայից մերոյ միաբանութեանս իբր սարկաւագ և կիսասարկաւագ յընթերցումն յունարէն ընթերցուածոց և աւետարանի ։

Նորապսակ քահանայապետս յերկամենայ միջոցին յորում եկաց 'ի Վենետիկ քաղաքի՝ յելանելն յայցելութիւն վանաց կրօնաւորաց, յօժարեցաւ հայրական սիրով գալ և 'ի մենաստան մեր 'ի կղզին սրբոյն Ղազարու, ուր գորովալիր գթով լիացոյց զմիաբանսն օրհնութեամբ և հոգևոր շնորհաբաշխութեամբ ։ Առաւելութիւն խնամոց նորա 'ի մեր վերայ մեծապէս յայտնեցաւ զկնի երից ամաց՝ 'ի պարգևել աբբահօր մերում Ստեփանոսի վարդապետի Ագոնց զպատիւ և զաստիճան արքեպիսկոպոսութեան ։

Ի մեղմանալ խռովութեանց Իտալիոյ, յետ զկրելոյ դժուարութեանց ինչ և արգելմանց վասն ուղևորութեան նորա 'ի Հռոմ, եդ 'ի մտի գնալ յաթոռ իւր, առ որ փութացուցանէր և կայսրն Գերմանիոյ. վասն որոյ ընտրելի և անվտանգ համարելով զուղևորութիւնն ընդ ծով, յամին 1800 յիններորդ աւուր յունիսի ել 'ի ճանապարհ, և յետ երկոտասան աւուրց եհաս 'ի նաւահանգիստն Փեզարոյ քաղաքի. ուր ելեալ 'ի նաւէն՝ կամեցաւ ընդ ցամաք գնալ յԱնքոնա, և անտի մեծահանդէս փառօք եհաս 'ի Հռոմ յաթոռ քահանայապետութեան իւրոյ յերրորդ աւուր յուլիսի ։

ԳԼՈՒԽ Բ.

Ողորմ հանգամանք եկեղեցւոյն Գաղղիոյ ։

ՈԿՆԻ խռովայոյզ պատահմունք ընդ ամենայն սահմանս Գաղղիոյ՝ յալէկոծեալ տագնապս անիշխանութեան, մինչայն զհետ անսանձ ազատութեան ջանահնար եղեն եղծանել զօրէնս քրիստոնէութեան և ուղղափառ հաւատոյ, փոխանակելով ընդ այնց զբնածին ազդեցութիւնս, զոր անուանեցին Օրէնս բանի, և իբր նորահնար աստուածուհւոյ սպասաւորս և ղեալ նմա , սկսան տարապարտ մահուամբ բռնաւորութեան զոհել անխնայ զընտիր քաղաքացիս, զպարկեշտս և զբարեսէրս ։ Միանգամայն 'ի խափանել զնախնի կարգս բարեպաշտութե՛՝ սահմանեցան օրէնք փակելոյ զեկեղեցիս և ջնջելոյ զմենաստանս կրօնաւորաց, որում կամակից և գործակից գտան կարգաւորացն ոմանք յեպիսկոպոսաց և 'ի քահանայից ։ Բայց յետ սակաւուց 'ի բողոքելոյ բարեպաշտ ժողովրդեան մեղմացան օրէնք բռնաւորութեանն , և եղև թոյլտուութիւն բանալոյ զեկեղեցիս ։ Ընդ նմին տուաւ և ազատութիւն ամենայն ազգաց այլակրօնից համարձակ և անխտիր պաշտել զհաւատս իւրեանց , այլ առանց յայտնի արտաքին նշանաց և հանդիսից . որով ստիպեցան եկեղեցականք ծպտեալ զգեստուք վարիլ իբր զաշխարհիկս . սակայն բացան 'ի Փարիզ քաղաքի երկոտասան եկեղեցիք և մատրունք՝ կատարել յանելայն զհոգևոր պաշտամունս իւրեանց 'ի ցնծութիւն կրօնասէր ժողովրդեան ։ Իսկ այսպէս բազում մոլորեալք եկին 'ի զղջումն , կամակար յանձն առեալ զպատուհաս հրապարակական ապաշխարութեան ։

Իսկ քանզի բռնաւոր կառավարք Գաղղիոյ՝ յետ զլխապարարութեան Լուդովիկոսի Ժ.Զ. ցանկացողք էին հասարակապետական տեսչութեան , ոչ կարելով նուաճել զխաղաղութիւն ընդոստ մոլեգնելոյ՝ թոյլ ետուն արձակերասան յանդգնութեան նոցա , որով զօրացան սահմանք և լցին զԳաղղիա ամենայն ապականութեամբ բարուց , և առ ոտն հարեալ զաստուածային և զքաղաքական օրէնս՝ բազմացան գողութիւնք և աւազակութիւնք , որոց զհետ եկին աղետալի թշուառութիւնք ընդ ամենայն սահմանս Գաղղիոյ , և անտի տարածեալ սփռեցան 'ի սահմանակից գաւառս Գերմանիոյ և 'ի Հոլանտա զոր կալան Գաղղիացիք ։

Այս ամենայն աղետալի անցս եկեղեցւոյն Գաղղիոյ լուեալ Պիոսի Է . յերկամեայ միջոցի անդ յորում կայր 'ի Վենետիկ , յամին 1800 'ի քսան և հինգ մայիսի փութացաւ հովուապետական կոնդակաւ առ ամենայն եպիսկոպոսունս մատուցանել խրախոյս քաջալերութեան, ցուցանելով նոցա շաւիղս և հնարս 'ի դարման եղելոց վնասուց , և 'ի զգաստութիւն առ յարամեծագոյն ևս խիթալի չարեաց, որք 'ի թոյլտուութենէն Աստուծոյ հանդերձեալ էին ժամանել հօտին Քրիստոսի. նմին իրի յորդորէ հսկել արթուն մտօք 'ի խափանել զգլխաւոր որոգայթս լարեալս 'ի բանսարկուէն ընդդէմ ուղղափառ հաւատոյ։ Առ նուաարար ըստ սովորութեան և կոնդակ մանաւանդ յոբելեան ներողութեան. բայց 'ի պատճառս քաղաքական խռովութեանց ժամանակին ոչ կարացին մեծահանդէս կատարել զայն։

Ընդ այն ժամանակս յետ արշաւանաց Նափոլէոնի Պօնափարթեայ յԵգիպտոս, և անդրէն դառնալոյ յետս 'ի Գաղղիա, տեսեալ զտրտունջ և զտագնապ ժողովրդեան, որ 'ի տասն ամաց հետէ կային 'ի վիշտս խռովութեան և հալածմանց, գուն գործեաց հնարիմաց ճարտարութեամբ այլայլել զկարգ կառավարութեան Գաղղիոյ 'ի հիւպատոսական իշխանութիւն, և անուանեաց զանձն Առաջին հիւպատոս. որով առեալ 'ի ձեռին զամ՟ձ տեսչութե՟ խաղաղացոյց զամենեսին, ջնջելով ազատութի՟ ամենայն բանտարկեալ և աքսորեալ քահանայից և եկեղեցականաց, հաստատելով վերստին զուղղափառ հաւատս, և տալով համարձակութիւն աներկիւղ կատարելոյ զպաշտամունս եկեղեցւոյ, որով եղև բարեպատճառ համօրէն տէրութեանն Գաղղիոյ 'ի ցնծութիւն քրիստոսասէր ժողովրդեան, և եգիտ շնորհս առաջի ամենեցուն. միանգամայն բացաւ նմա այնու շաւիղ բարձրանալոյ 'ի պատիւ ինքնակալութեան։

ԳԼՈՒԽ Գ.

Հայրապետութ. խնամք Պիոսի Է 'ի հոգալ զօգուտ և զերջանկութիւն ժողովրդեան։

ՄԻՆՉԴԵՌ Նափոլէոն դեգերէր յԵգիպտոս, միաբանեալ գրեթէ համօրէն տէրութեանց Եւրոպայ 'ի դաշնակցութիւն ընդդէմ աւարահարութե՟ Գաղղիացւոց յԻտալիա, յաջողեցան կորզել 'ի ձեռաց նոցա զմեծագոյն մասն սահմանաց եկեղեցական իշխանութեան, և ջնջել 'ի Հռովմայ զնորահնար և զանգլուխ հասարակապետական տեսչութիւնն. վասն որոյ Պիոս Է. իբրեւ դարձաւ յաթոռ իւր խաղաղութեամբ, անդէն եւ անդ փոյթ յանձին կալաւ նորոգել եւ հաստատել զօրինակ հայրական եւ մարդասիրական տեսչութեան, յորմէ զրկեալ էր ժողովուրդն յամաց հետէ։ Հրաման եհան ազատ տուրեւառութեան ցորենոյ եւ այլոց իրաց 'ի դիւրութիւն ժողովրդեան. նուազեցոյց զծախս պալատան իւրոյ 'ի չծանրանալ հարկապահանջութեամբ 'ի վերայ ժողովրդեանն։ Հաստատեաց վերըստին զկողոպտեալ զանձս արկեղ փոխատուութեան 'ի նպաստ եւ 'ի ձեռնտուութիւն աղքատաց եւ կարօտելոց։ Արգել զխաղս վնասակարս քաղաքական կենաց, որպէս եւ զանպարկեշտ հանդերձս նորաձեւս 'ի գայթակղութիւն տեսողաց։ Զնոյն բարեկարգութիւն ջանացաւ մուծանել եւ 'ի գաւառսն որք յայնժամ էին ընդ նորա իշխանութեամբ, այսինքն 'ի Վիթերպոյ, 'ի Սպոլետոյ, 'ի Փերուճիա, 'ի Կամերինոյ, 'ի Մաչերաթա, յԱնքոնա եւ յՈւրպինոյ. եւ զտեսչութիւն քաղաքացն այնոցիկ յանձն արար 'ի խնամս բարեպաշտից եւ ականաւոր արանց։

Ապա 'ի յաջորդ ամի (1801) կամելով քահանայապետին զվրդովեալ սահմանս տէրութեան իւրոյ վերածել 'ի նախնի վիճակ եկեղեցական եւ հայրական տեսչութեան, ներումն շնորհեաց ամենայն ապստամբ յանցաւորաց, յորդորելով զնոսին 'ի հանդարտութիւն եւ 'ի խնամս մտադրութեան քաղաքաշէն եւ կենցաղօգուտ գործոց եւ արուեստից։

Ի նմին ամի հիւպատոսն Նափոլէոն կամելով վերստին ստանալ զԻտալիա, զկորուսեալն 'ի Գաղղիացւոց յաւուրս դեգերելոյ իւրոյ յԵգիպտոս, զօրաժողով եղեւ, եւ հորդան տուեալ յայսկոյս Ալպեան լերանց դիմեաց եւ տիրեաց համօրէն վերին կողմանց Իտալիոյ, եւ անտի տակաւ սփռեցան զօրք Գաղղիացւոց մինչեւ յԱնքոնա. որով այլայլեցաւ վիճակ եկեղեցական սահմանաց, եւ եղեւ ասպարէզ արիւնահեղ պատերազմաց։ Սակայն Նափոլէոն հիւպատոս ջանահնար լինէր՝ գէթ առ երեսս ցուցանել բարեկամութի̃ ընդ սրբոյ աթոռոյն. յոր սակս ստիպեաց զնէապօլեցի զօրսն մեկնել 'ի Հռովմայ եւ տալ զայն 'ի ձեռս զինուորաց քահանայապետին։ Միանգամայն կամեցաւ առնել նոր դաշնադրութիւն ընդ քահանայապետին 'ի նշան հաշտութեան. և հաճեցաւ ընդ այն Պիոսի Է. յուղարկեալ 'ի Փարիզ երիս դեսպանս՝ իբր գործակալս այնր դաշնադրութեան, յորում եղան զանազան պայմանք զեկեղեցական վիճակէն Գաղղիոյ։ Յայնմ դաշնադրութեան բազմօք ներողամիտ գտաւ քահանայապետն 'ի շահել զսիրտ հիւպատոսին, և 'ի հանդարտել զմիտս ամբոխելոց. բայց պատճառս ստգտանաց ետ այնու և Հռովմայեցւոց և Գաղղիացւոց, որք ընդ հակառակս միմեանց համարէին զպայմանսն դաշնադրութեան վնասակարս պատուոյ երկաքանչիւր կողման. սակայն առժամն եղան 'ի գործ վասն խաղաղութեան եկեղեցւոյ։

Յետ դաշնադրութեանն Պիոս Է. խնդրեաց 'ի Նափոլէոնէ թոյլ տալ նմա փոխադրել զնշխարս Պիոսի Զ. 'ի Վալենցա քաղաքէ 'ի Հռոմ, զոր և կատարեաց հանդիսիւ մեծաւ յամին 1802 յեօթնևտասն փետրուարի։

ԳԼՈՒԽ Դ.

Հանդարտութիւն եկեղեցւոյն Գաղղիոյ։

ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ եպիսկոպոսական վիճակացն, որ եղև 'ի ձեռն դաշնադրութե Պիոսի Է. ընդ Նափոլէոնի հիւպատոսի, գժգոհեցոյց զբազումս 'ի թեմական եպիսկոպոսաց, առաւելապէս զայնոսիկ որք խոյս տուեալ 'ի Գաղղիոյ՝ մեկուսացեալ կային յԱնգղիա, և էին թուով եօթնևտասն։ Նա գրեցաւ նոցա կոնդակ քահանայապետական յորդորանաց հպատակել բարեկարգութեանն, առաջի առնելով նոցա զհարկ օգտի և զխաղաղութեան եկեղեցւոյ։ Այնմ կոնդակի թէպէտ և գժկամակ գտեալ եպիսկոպոսացն՝ գրեցին պատասխանի, աղերսելով խափանել զորոշումն և զգործադրութիւն պայմանաց դաշնադրութեանն, սակայն կամք քահանայապետին եղան 'ի գործ ըստ հաճութեան հիւպատոսին. և փոխանակ նոցա կացուցան այլ եպիսկոպոսունք ըստ առաջարկելոյ տէրութեանն, և ընկալան զարձակումն անկանոն ընտրութեան իւրեանց։

Յետ այնորիկ յամին 1802 յութևտասն ապրիլ

յաւուր զատկի յարութեան տեառն, եղեւ 'ի Փարիզ քաղաքի մեծահանդէս հրատարակումն դաշնադրութեանց եղելոց ընդ քահանայապետն եւ ընդ Նափոլէոն հիւպատոս․ եւ յայն հանդէս արքայական փառօք երեւեցաւ հիւպատոսն յեկեղեցւոջ սրբոյ Կուսին՝ հանդերձ համօրէն աւագանւոյն, եւ կատարեցան գոհացողական մաղթանք առ Աստուած վասն հաստատութեան ուղղափառ հաւատոյ 'ի նմին տէրութեան։ Յոյր սակս եւ քահանայապետն Պիոս Է՝ 'ի պատճառս ցնծութեան հաւատացելոց եհան կոնդակ ութեւտասնօրեայ յորելեան ներողութեան 'ի Գաղղիա եւ 'ի Հռոմ։ Միանգամայն եւ 'ի շահել զսիրտ ազգին Գաղղիացւոց՝ ետ զպատիւ կարդինալութեան ոմանց յեկեղեցականաց նոցա․ յորոց մին եղեւ Յովհաննէս Ֆէշ՝ քեռի Նափոլէոն հիւպատոսի, որ մեծաշուք փառօք 'ի Փարիզ քաղաքի ընկալաւ զօծումն արքեպիսկոպոսութեան Լուգդունի, որպէս յայտ առնէր նա ինքն քահանայապետն 'ի ժողովի կարդինալաց յամին 1803։ Հոգեջան խնամոք Պիոսի ոչ միայն հանդարտութիւն եղեւ եկեղեցւոյ, այլ եւ քաղաքական խաղաղութիւն 'ի Գաղղիա, որով ինքնակամ փախուցեալքն յաշխարհէ անտի՝ եկեղեցականք եւ աշխարհիկք իբր հարիւր յիսուն հազարք՝ դարձան յետս 'ի հայրենիս իւրեանց։

ԳԼՈՒԽ Է.

Փոփոխութիւն եկեղեցական վիճակաց Գերմանիոյ։

Ի ժամանակս խռովութեան Գաղղիոյ աղմկեցան եւ սահմանք գաւառաց աշխարհին Գերմանիոյ․ զի ըստ օրինակի փոփոխութեան եկեղեցական վիճակաց նոցա՝ կամեցան եւ Գերմանացիք այլայլել զվիճակս եպիսկոպոսաց Գերմանիոյ։ Յայնմ աշխարհի 'ի վաղ ժամանակաց հետէ կային երեք արքեպիսկոպոսունք՝ կայսրընտիր անուանեալք, քսան եւ երկու եպիսկոպոսք իշխանաւորք, եւ իբր վեշտասան աբբայութիւնք, որք ընդ հոգեւոր իշխանութեան վարէին եւ զաշխարհական տէրութիւն, ունելով իւրեանց առանձին կալուածս եւ բազմութիւն հպատակաց։

Յամի տեառն 1648 ազգային համրական ժողովով զԹիւ վիճակացս այսոցիկ ամփոփեցին յերկուս արքեպիսկոպոսութիւնս և 'ի չորեքտասան եպիսկոպոսարանս, բաժանելով զվիճակս երկրի նոցա 'ի ժառանգութիւն աշխարհական իշխանազանց: Իսկ 'ի յետին խռովութեան՝ յամին 1802 'ի մետասան հոկտեմբերի ջնջեցան և այլքն առ հասարակ՝ բաշխելով զերկիր նոցա յութևտասան գերդաստանս իշխանազանց, յորոց միջի առաւելապէս ճոխացաւ ժառանգութեամբ տունն Պրանտէպուրկի: Յայսմ բաժանման դոյզն ինչ էր որ վիճակեցաւ տանն Աւստրիոյ՝ որպէս և այլոց դքսից սահմանակցաց:

Ի քանդեալ աւերակաց աստի աշխարհական իշխանութեան եպիսկոպոսաց՝ պահեցաւ լոկ արքեպիսկոպոսական աթոռն Մոգունտիոյ, փոխադրելով զայն 'ի վիճակն Ռաթիսպոնայի, և տալով նմա զամենայն պատիւ իշխանական ըստ միջնորդութեան թագաւորին Ռուսաց և Նափոլէոնի հիւպատոսի: Ապա 'ի համրական ազգային ժողովոյ սահմանեցան ճոխ եկամուտք եպիսկոպոսացն զրկելոց յաշխարհական իշխանութենէ, որպէս և այլոց կողոպտեալ եկեղեցականաց, առ 'ի կարող լինելոյ վարել զհոգևոր պաշտամունս իւրեանց:

Աւեր եպիսկոպոսական վիճակացն Գերմանիոյ վիշտ մեծ եղև Պիոսի քահանայապետի. յոյր սակս կանխագոյն գրեաց առ արքեպիսկոպոսն Մոգունտիոյ, որպէս և առ Նափոլէոն հիւպատոս, գտանել հնարս անեղծ պահպանութեան նախնի վիճակին, որ առաւել նպաստաւոր է, ասէ, եկեղեցական բարեկարգութեան, գոլով եպիսկոպոսին հայր հոգևոր, միանգամայն և դատաւոր աշխարհական. սակայն ոչ ինչ օգտեցաւ:

Ընդ այն ժամանակս զնոյն փոյթ տարաւ քահանայապետն և 'ի կանգնել զցրուեալ ասպետութիւնն Տեւտոնեան և զՄալթային, սակայն եգիտ հակառակութիւն յայլ և այլ տէրութեանց, մանաւանդ յԱնգղիոյ, որ չկամեցաւ հրաժարիլ 'ի Մալթա կղզւոյն. վասն որոյ գլուխն ասպետաց Մալթայի հաճութեամբ քահանայապետին հաստատեաց զբնակութիւն իւր նախ 'ի Մեսինա, և ապա 'ի Կաթանիա քաղաք Սիկիլիոյ:

ԳԼՈՒԽ Զ.

Պաշտպանութիւն ընկերութեանն յիսուսեանց 'ի սահմանս տէրութեանցն Բրուսաց և Ռուսիոյ։

ՅԱՄԻ տեառն 1773 'ի ջնջել կրօնաւորաց ընկերութեանն Յիսուսի կոնդակաւ Կղեմայ ԺԴ., Թագաւորն Բրուսաց Փրեդերիկոս Բ. թէպէտ և ոչ ուղղափառ կրօնից և խորհրդակից թշնամեաց եկեղեցւոյ, սակայն գիտելով զօգուտ այնր ընկերութեան 'ի դաստիարակութիւն մանկանց, կամեցաւ պահել զնոսին 'ի սահմանս տէրութեան իւրոյ. և գրաւելով յարքունիս ըզմեծագոյն մասն եկամտից նոցա, թոյլ ետ փոփոխութեամբ զգեստուցն հանապազորդել 'ի գործս իւրեանց։

Նոյն խնամս պաշտպանութեան նոցա առաւելապէս եցոյց և Թագուհին Ռուսաց Կատարինէ Բ. քանզի գնացեալ սորա երբեմն 'ի Խերսոնիսոն Տաւրիոյ, այն է Խրիմ, և տեսեալ զօգուտ քաղաքական շինութեան կրօնաւորացն այնոցիկ, մտադիւր հաճութեամբ կամեցաւ անեղծ պահել զնոսա յիւրում տէրութեան. և ծանոյց զայն Պիոսի Զ. ինքնագիր նամակաւ յամին 1783, և ետ նոցա հրաման վարելոյ եւս զառաքելական պաշտօն իւրեանց 'ի Փեթրպուրկ և 'ի Մոսքուա։ Արդ 'ի մեռանել Կատարինեայ Թագուհւոյն յաջորդեալ նմին որդւոյ նորա Պօղոսի՝ եղև ժառանգ ոչ միայն տէրութեանն, այլ և բարեսէր հաճութեան նորա առ ընկերութիւնն յիսուսեանց. նմին իրի յամին 1800 'ի նստել Պիոսի Է. յաթոռ քահանայապետութեան՝ խնդրեաց 'ի նմանէ հրաման դարձեալ հաստատել զայն ընկերութիւն 'ի սահմանս իշխանութեան իւրոյ, և քահանայապետն կամեցաւ յօժարամիտ կատարել զխնդիր նորա. վասն որոյ յամին 1801 գրեցաւ կոնդակ քահանայապետական առ յիսուսեանս որք կային 'ի տէրութ՟ե Ռուսաց՝ շնորհելով նոցա համարձակութ՟ի վարել զմիաբանական կեանս ըստ կանոնաց սահմանելոց 'ի սրբոյն Իգնատիոսէ Լոյոլեան։ Եւ ապա յամին 1802 ընտրեցաւ նոցա նախապատիւ հանրական մեծաւոր Հայրն Գաբրիէլ Կռուպէր, այր բաընկրձն և ականաւոր յամենայն ազգս գիտութեանց, բազմարդիւն և սիրելի յաչս իշխանաց, որ ըստ նախակարգ օրինաց ընկերութեան ջանահնար եղև պայծառութեան և յառաջադիմութեան կրօնին ։ Յամին 1804 կային 'ի Ռուսաստան երկերիւր վաթսուն և երկու անձինք յընկերութենէ յիսուսեանց յայլ և այլ քաղաքս, յորս պարապէին ոչ միայն 'ի դաստիարակութիւն մանկանց այլ և 'ի պաշտօն քարոզութեան և առաքելութեան ։

Վերականգնումն ընկերութեանս 'ի տէրութեան Ռուսաց՝ յորդոր եղև Ֆերտինանդոսի Դ. արքային Նէապոլսոյ և Սիկիլիոյ նորոգել զայն կրօն և յիւրում տէրութ̃ե, վասն որոյ խնդրեաց 'ի Պիոսէ Է. և նորա մտադիւր հաւանեալ աղաչանաց արքային՝ յամին 1804 արար կոնդակ, ուղղելով զայն առ Հայրն Կռուպէր հանրական մեծաւոր յիսուսեանց, և աւետելով նմա զլուր յաջողութեան 'ի յառաջադիմութ̃ի կարգին ։ Միանգամայն գրեաց և առ Ֆերտինանդոս Դ. արքայ զնոյն կոնդակ հաստատութեան կրօնին, զոր առաքեալ էր վասն Ռուսաստանի, յորդորելով զցրուեալ յիսուսեանս 'ի նմին թագաւորութեան՝ հաւաքիլ 'ի մի միաբանութիւն ըստ օրինակի վանական կենացն զոր ունին 'ի Ռուսաստան՝ իբրև մասն այնր ընկերութեան, և 'ի նոյն հոգևոր վաստակս փոյթ ունել հրահանգելով զմանկունս յուսումն և 'ի վարս բարիս, քարոզելով զբանն Աստուծոյ և մատակարարելով զխորհուրդս եկեղեցւոյ ։

Ֆերտինանդոս արքայ 'ի խնդութ̃ե սրտին շնորհեաց նոցա զնախկին վանսն և զդպրոցս իւրեանց. յորս յաւել և այլ շնորհս պարգևաց, որով յօժարեցան 'ի սակաւ ժամանակի հաւաքիլ անդր կրօնաւորք հարիւր և յիսուն թուով և կանգնեցին նորընծայարանս և տունս ուխտելոց ոչ միայն 'ի Նէապօլիս և 'ի զանազան քաղաքս այլ և 'ի Սիկիլիա ։ Եւ թէպէտ այս ամենայն յառաջադիմութիւնք յետ ամաց ինչ խափանեալ ընդհատեցան 'ի պատճառս վերստին արշաւանաց Գաղղիացւոց ընդ բովանդակ Իտալիա, յորում ընդ համօրէն կրօնաւորական կարգաց խափանեցաւ և նորածին միաբանութիւնն յիսուսեանց, բայց յետ սակաւ ամաց 'ի նուձիլ ամբարտաւանութեանն Նափոլէոնի, յամին 1814 յեօթներորդ աւուր ամսեանն օգոստոսի վերստին կանգնեալ հաստատեցաւ 'ի Պիոսէ Է. յետ յաղթական փառօք դարձի նորա 'ի Հռովմ, որպէս նշանակեսցուք 'ի կարգս վերանորոգութեան կրօնաւորաց։

ԳԼՈՒԽ Է.

Հրաւէր Նափոլէոնի հիւպատոսի առ Պիոս Է, և ուղևորութիւն քահանայապետին 'ի պսակել զնա կայսր Գաղղիոյ, և անդրէն դարձն 'ի Հռովմ։

Ի ՄԻՋՈՑՍ սակաւ ամաց յետ զօրանալոյ Նափոլէոնի և ընդարձակելոյ զիշխանութիւն գաղղիական տէրութեան 'ի Գերմանիա, 'ի Սաբաւդիա և 'ի վերին կողմանս Իտալիոյ՝ զոր անուանեաց Հասարակապետութիւն յայսկոյս լերանցն Ալպեանց, և յետ կռելոյ նոր դաշինս ընդ քահանայապետին վասն փոփոխութեան եպիսկոպոսական վիճակաց իտալական հասարակապետութեանն՝ ամփոփելով զհնգետասան թեմն նախնիս յութեակ թիւս եպիսկոպոսարանաց, յօժարեցաւ բարձրանալ 'ի պատիւ և յաթոռ ինքնակալութեան. վասն որոյ շահելով իւր կուսակիցս՝ յամի 1804 յութերորդ աւուր ամսեանն մայիսի 'ի Փարիզ քաղաքի ետ հռչակել զանձն կայսր Գաղղիոյ։

Զայս պատիւ ինքնակալութեան թէպէտ և ստացեալ էր նա արդեամբք զինուց, սակայն պէտս ունէր հանդիսական հաստատութեան 'ի ձեռն օրինաւոր օծութեան քահանայապետին Հռովմայ, որպէս երբեմն մեծն Կարոլոս որ յամին 800 եկն 'ի Հռովմ և օծաւ անդ կայսր արևմտեան 'ի քահանայապետէն Լևոնէ Գ.։ Ըստ նմին օրինակի յօժարամտեալ և Նափոլէոնի առ ստանալոյ զիրաւունս ժառանգութեան պատուոյն և իշխանութեանն՝ հրաւիրեաց զՊիոս Է. ուղևորիլ 'ի Փարիզ առ 'ի կատարել զայն հանդէս։

Եւ քահանայապետն Պիոս յետ բազմադիմի հասուն խորհրդոց 'ի ժողովս կարդինալաց՝ յօժարեցաւ կատարել զխնդիր Նափոլէոնի, ածեալ զմտաւ զօգուտ եկեղեցւոյ և 'ի խափանել զխիթալի արգասիս որք կարէին ծագել եթէ հակառակէր ինչ կամաց նորա ։ Վասն որոյ 'ի նմին ամի (1804) յերկրորդ աւուր Նոյեմբերի առեալ ընդ իւր չորս ականաւոր կարդինալս և չորս երեւելի եպիսկոպոսունս և զերկուս այլ պատուաւոր անձինս, ել 'ի Հռովմայ և մեծապայծառ փառօք անցեալ ընդ Փլորենտիա, ընդ Փարմա, ընդ Փիաչենցա և ընդ Աղեքսանդրիա Իտալիոյ, 'ի չորեքտասան Նոյեմբերի եհաս 'ի Թուրին քաղաք․ ուր ընդ առաջ եկին նմա դեսպանք և հրաւիրակք 'ի Փարիզէ յարժանաւոր ընդունելութիւն քահանայապետին ։ Իսկ ապա 'ի հնգետասան ամսոյն ելեալ 'ի ճանապարհ և անցեալ ընդ Ալպեան լերինն՝ եհաս 'ի Լուգդուն քաղաք, յամենայն տեղիս մեծարեալ 'ի ժողովրդոց իբրև փոխանորդ Քրիստոսի ։

Անդ 'ի Լուգդուն քաղաքի վախճանեցաւ Պորճիա կարդինալ՝ մին 'ի չորից անտի որք էին ուղեկիցք Պիոսի Է․ Սակայն քահանայապետին փութացեալ յընթացս՝ 'ի քսանեւութ Նոյեմբերի եհաս 'ի Փարիզ․ ուր մեծահանդէս փառօք հիւրընկալեալ 'ի Նափոլէոնէ և յաւագանւոյն՝ օթեւանեցաւ յարքայական պալատան ։ Ապա կանխայարդար պատրաստութեամբ ամենայն հանդերձանաց յերկրորդ աւուր դեկտեմբերի ըստ հաճութեան Նափոլէոնի անյապաղ կատարեցաւ հանդէս օծութեան և թագաւորութեանն 'ի մայր եկեղեցւոջ․ յորում յետ մատուցանելոյ զպատարագ Պիոսի Է․ յօրհնել անդ զթագն՝ Նափոլէոն ինքնին յառուցեալ էառ զայն 'ի սեղանոյն և եդ 'ի գլուխ իւր, իբր նշան իւրովի և անձամբ ստանալոյ զպատիւ ինքնակալութեանն ։

Յետ հանդիսի թագաւորութեան Նափոլէոն ինքնակալ պատուէր ետ երկոտասան արքեպիսկոպոսաց և վաթսուն եպիսկոպոսաց որք էին յիւրում տէրութեան՝ առնել գոհացողական աղօթս առ Աստուած, 'ի տարածել ընդ ամենայն տեղիս զանուն և զպատիւ ինքնակալութե՟ իւրոյ որ ընդ ձեռն քահանայապետին Հռովմայ ։

Պիոս Է․ 'ի չորեքամսեայ ժամանակին յորում եկաց 'ի Փարիզ, գնաց 'ի տեսութիւն երեւելի տեղեաց և գործարանաց քաղաքին, եւ յայցելութիւն անկելանոց, և դպրոցաց խլից և համերց․ այլ յաճախէր յոյժ յեկեղեցիս, և առ 'ի հաճել զջերմեռանդութիւն բարեպաշտից՝ ինքնին տայր նոցա զսուրբ հաղորդութիւնն։

Այլ զի հոգ անընդհատ խնամոց նորա էր խորհել զպէտս ընդհանուր եկեղեցւոյ, նմին իրի յամին 1805 յառաջին աւուր փետրուարի արար ժողով յարքեպիսկոպոսարանին Փարիզու, յորում ետ զկարդինալական պատիւ արքեպիսկոպոսացն Փարիզու և Ռուան՝ քաղաքի։ Ի նմին ժողովի զաթոռն Ռաթիսպոնայի հաստատեաց 'ի մետրապօլտութիւն Գերմանիոյ, որ ամօք յառաջ որոշեալ էր յազգային ժողովոյ իշխանազանցն Գերմանիոյ։ Ապա յերկրորդ աւուր փետրուարի ձեռնադրեաց երկուս եպիսկոպոսունս Ռոշէլ և Փուաթիէ քաղաքաց։

Ուղևորութիւն Պիոսի Է 'ի Փարիզ ոչ անարդասաւոր ինչ եղև. քանզի 'ի խնդրոյ նորա եղև թոյլտուութիւն եպիսկոպոսաց անբռնադատ ազատութեամբ վարել զիշխանութիւն իւրեանց՝ զամփոփեալն յաշխարհական տեսչութենէ։ Շնորհեցաւ և ազատութիւն որոց միանգամ կամեցին մտանել 'ի կարգ եկեղեցական. կանգնեցան և դպրոցք 'ի դաստիարակութիւն մանկանց՝ խափանեալքն յամաց ինչ։ Սահմանեցան և եկամուտք 'ի տէրութ̃է 'ի նորոգութիւն երևելի տաճարաց զրկելոցն 'ի ժառանգութենէ ստացուածոց. ընդ որս նորոգեցաւ և հասոյթ Լատերանեան տաճարին Հռովմայ, որ 'ի նախնի ժամանակս ունէր եկամուտ 'ի տէրութենէն Գաղղիոյ։ Նոյնպէս ընկալաւ և այլ բազում շնորհս յօգուտ եկեղեցւոյ։

Յետ կատարելոյ զայսոսիկ՝ 'ի ժամանել աւուրց գարնայնոց յամին 1805 'ի չորրորդ աւուր ապրիլի ել 'ի ճանապարհ դառնալ 'ի Հռովմ. և իբրև եհաս 'ի Թուրին քաղաք՝ եգիտ անդ զՆափոլէոն կայսր, որ երկաւուրբ յառաջ քան զինքն ելեալ էր 'ի Փարիզէ գնալ 'ի Միլան վասն կատարելոյ և անդ զհանդէս թագադրութեան իւրոյ 'ի թագաւոր Իտալիոյ։ Անդ 'ի Թուրին Պիոս Է վերստին տեսաւորեալ ընդ Նափոլէոնի, անկաւ յուղի և անցեալ ընդ Փլորենտիա՝ 'ի վեշտասան մայիսի եհաս փառօք 'ի Հռովմ. ուր խնդալից սրտիւ սկիզբն արար բարեզարդութեան քաղաքին՝ շինութեամբ և նորոգութեամբ աւերեալ տեղեաց. խնամ կալաւ յառաջադիմութեան ազատական արուեստից, Ճոխացոյց զԹանգարան Վատիկանեան պալատին, մեծարեաց զքաջարուեստսն, եւ զպատիւ ասպետութեան անխահականն Բանալոյ, որում յետոյ յաւել տալ և զվերակացութիւն համօրէն ազատական արուեստից ընդ բովանդակ սահմանս տէրութեան իւրոյ.

ԳԼՈՒԽ Ը.

Խռուացի գժտութիւն Պիոսի Է. ընդ Նափոլէոնի։

ՆՈՐԱՊՍԱԿ ինքնակալն յետ դնելոյ 'ի գլուխ և զերկաթի անուանեալ թագն Իտալիոյ, զանուն հասարակապետութեանն փոխելով 'ի թագաւորութիւն՝ եդ 'ի Միլան քաղաքի զորդեգիր իւր զԵւգինէոս իբր փոխարքայ, և ինքն անցեալ ընդ վերին գաւառն Իտալիոյ՝ յաւել 'ի տէրութիւն իւր զհասարակապետութիւն Գենուայի և զայլոց իշխանութեանց։

Եւ քանզի եղեալ էր 'ի մտի տիրանալ եւ եկեղեցական սահմանաց պապական իշխանութեան, յանակնկալս առաքեաց զօրս յԱնկոնա քաղաք՝ պատրուակաւ պաշտպանութեան երկրին առաքելական աթոռոյն, պատճառելով զաղշաւանս թշնամեացն ընդ որս ունէր պատերազմ։

Դժուարեալ ընդ այն Պիոսի Է., յայտ արար զտհաճութիւն իւր ընդ յանդուգն համարձակութիւն նորա՝ բռնաբարելով զօրէնս հաւատարմութեան և զդաշն խոստման իւրոյ. մանաւանդ զի նովին գործով պատճառք լինէր խռովութեան սահմանաց իւրոց, և թշնամութե այլոց տէրութեանց ընդ որս տածէր զիւր բարեկամութի։ Վասն որոյ խնդրեաց 'ի Նափոլէոնէ անյապաղ հեռացուցանել զզօրս իւր 'ի քաղաքէ անտի. սակայն Նափոլէոն ոչ միայն չկամեցաւ լսել նմա, այլ և յանդգնեցաւ առաջի առնել քահանայապետին կրկին անիրաւ պահանջմունս. նախ՝ արտաքսել 'ի Հռովմայ զդեսպանսն Ռուսաց, Անգղիացւոց, Շուեդաց և Գենուացւոց, զի ոխութեամբ էր ընդ նոսա. և երկրորդ՝ արգելուլ զնաւս նոցա 'ի մտանելոյ 'ի նաւահանգիստս իւր, որով կամէր բանադրանել զքահանայապետն 'ի թշնամութիւն ընդդէմ պետութեանցն այնոցիկ։

Այսոցիկ կրկին պահանջմանց՝ որպէս և այլոց անդէպ ինչ խնդրոց՝ Նափոլէոնի պատասխանի տուաւ Պիոս Է. ազդու և զօրաւոր բանիւք, ցուցեալ զանպատշաճութիւն պահանջմանցն։ Սակայն՝ Նափոլէոնի անսաստեալ խրատու և խորհրդոց քահանայապետին, ոչ միայն չարար պատասխանի այլ և ստայօդ և սնոտի բարբառօք դուն գործեաց անդամանելի ցուցանել զկարգ տեսչութեան եկեղեցւոյ, և ջնջել զիշխանութիւն սրբոյ աթոռոյն, և տիրել համօրէն Իտալիոյ։

Իսկ զի յայնժամ զբաղեալ էր 'ի կռիւ մարտի ընդ Աւստրիոյ և ընդ Նէապօլսոյ, նորոց վշտաց պատճառ եղև Պիոսի Է., յանուանել իւրում զեղբայրն իւր զՅովսէփ Բոնափարթէ 'ի թագաւոր Նէապօլսոյ, և 'ի ստիպելն տալ նմա զօծումն թագաւորութեան, յորմէ հրաժարեցաւ քահանայապետն՝ չկամելով ճանաչել զնա օրինաւոր արքայ։ Ընդ որ զայրացեալ Նափոլէոնի պատուէր ետ զօրաց իւրոց դիմել 'ի սահմանս իշխանութեան սրբոյ աթոռոյն. վասն որոյ տիրեցան զօրք Գաղղիացւոց 'ի քաղաքս Ադրիական ծովեզերեայ մինչև յԱնքոնա. և անտի անցեալ 'ի ցամաքակողմն գրաւեցին և զՉիվիթավէքքիա նաւահանգիստ առ Թոսքանեան ծովուն։ Յաւել 'ի սոյն բռնութեամբ կորզել և զերկուսին գաւառս սրբոյ աթոռոյն զԲենեւենտ և ըզՓոնթեկորվոյ։ Տեսեալ Պիոսի Է. զանտանելի վնաս եկեղեցւոյ և զանսաստ յանդգնութիւն Նափոլէոնի, գրեաց բողոքս յայտարարութեան առ ամենայն տէրութիւնս Եւրոպայ՝ խնդրելով զպաշտպանութիւն իրաւանց իւրոց։

Իսկ քանզի խորհուրդ միայն Նափոլէոնի էր բառնալ 'ի սպառ զաշխարհական տէրութիւն սրբոյ աթոռոյն, ընդ նմին ամփոփել և զհոգևոր իշխանութիւն քահանայապետին, սկսաւ տալ յԻտալիա զմատեանն օրինաց զոր ինքնին էր յերիւրեալ, յորում ընդ աշխարհական օրինադրութեանց կային և կարգադրութիւնք հակառակք եկեղեցական կանոնաց, որպէս և յետին դաշնադրութեանցն կնքելոց ընդ Պիոսի Է.։ Յոր սակս 'ի զգուշութիւն ամենայն եպիսկոպոսաց Իտալիոյ առանձնական Թղթով ծանուցաւ նոցա 'ի Հռովմայ հսկել 'ի վերայ եկեղեցական օրինաց, և չխոտորիլ 'ի նախնի կանոնաց եկեղեցւոյ: Զնոյն ազդարարութիւն արար քահանայապետն և առ ուղղափառ կուսակալութիւնս Հելուետիոյ, որք ըստ օրինակի Գաղղիացւոց խորհէին աւերել զմենաստանս և զեղծել զեկամուտս եկեղեցականաց՝ առ 'ի կանգնել նորօք դպրոցս և որբանոցս հասարակաց:

Զայս ամենայն վիշտս անընդհատ տառապանաց սրբոյ քահանայապետին ցուցաւ 'ի Գաղղիա նորանշան բարեկարգութիւն՝ գէթ առ երեսս կրօնասիրութեան ՙՆափոլէոնի. զի յամին 1806 յառաջին աւուր յունուարի տարագիր արար զնորահնար տօմարն գաղղիական, վերստին հաստատելով զնախնի Գրիգորեանն: ՙՆոյնպէս ետ սրբել և նորոգել զերկոսին պղծեալ տաճարսն զսրբուհւոյն Ժընուիէւի և զսրբոյն Դիոնեսիոսի. արգել զամուսնութ̃ի քահանայից յանցանս համարելով ընդդէմ կրօնի և բարեպաշտութեան: Թոյլ ետ առանձնաւորաց կատարել համարձակ զնշան ջերմեռանդութեան, որով կանգնեցաւ օրինակ լերինն Գողգոթայ 'ի Վալէրեան բլրի: Կամեցաւ սահմանել զտօն սրբոյն ՙՆափոլէոնի մարտիրոսի, և կատարել զայն 'ի հնգետասան օգոստոսի յաւուր տօնի վերափոխման սրբոյ Կուսին: Ետ տպագրել հրահանգ քրիստոնէական ուղղափառ վարդապետութեան, յորում յաւել և զայն՝ թէ 'ի խղճէ մտաց ստիպին հպատակք հնազանդիլ արքունի հրամանաց նորին իսկ ՙՆափոլէոնի:

Զայսոսիկ կերպարանեալ բարեպաշտութիւնս դիտումն նորա էր նենգամիտ խորհրդով ցուցանել ժողովրդեան՝ թէ հակառակութիւն իւր ընդ սրբոյ աթոռոյն ոչ էր վէճ կրօնական այլ լոկ քաղաքական:

ԳԼՈՒԽ Թ.

Բուռն և անիրաւ խնդիրք Նափոլէոնի ՚ի Պիոս Է.

ՅԵՐԿԱՐԵԱՑ միջոցս ժամանակի յորում Նափոլէոն զբաղեալ էր ՚ի մարտս հիւսիսակողմանց, եղև դոյզն ինչ հանդարտութիւն Պիոսի Է. պարապելոյ ՚ի քահանայապետական պաշտամանս. վասն որոյ յամին 1807 եղեն ՚ի Հռովմ հանդէսք դասակարգութեան հնգից երանելեաց ընդ սուրբս, ևս և այլոց չորեցունց ծառայից Աստուծոյ գրիլ ՚ի կարգս երանելեաց. Նոյնպէս տուան և կոնդակք հաստատութեան եպիսկոպոսաց ոմանց և այլ և այլ աթոռոց որք էին ՚ի պարապութեան.

Ընդ այն ժամանակս ՚ի դառնալ Նափոլէոնի ՚ի Փարիզ՝ յետ յաղթութեանցն և հաշտութեան ընդ Ռուսաց, նորոգեցան ՚ի միտս նորա անօրէն խորհուրդք ՚ի վերայ վիճակի եկեղեցական և աշխարհական իշխանութեանն Հռովմայ. Վասն որոյ ՚ի նմին ամի (1807) յաշնանային աւուրս առեալ ընդ իւր զիշխանագունս ամենայն ել յայցելութիւն Լոմպարտիոյ մինչև ցՎենետիկ քաղաք. Նա աստ դարձ արարեալ ՚ի Միլան, ունայնացոյց զտէրութիւն դքսութեան Թոսքանայի՝ զոր միացուցեալ ընդ ինքնակալութեանն Գաղղիոյ՝ ետ քեռն իւրում Էլիզայի.

Այս ՚ի կամելն եղծանել և զկարգ տէրութեանն Հռովմայ, զանգիտէր յոյժ անպատճառ դիմել ՚ի վերայ իշխանութեան քահանայապետին, որ բազմօրինակ բարերար գտաւ իւրում անձին, վասն որոյ ջանահնար եղև ծանր և անիրաւ առաջարկութեամբք թշնամի ցուցանել զՊիոս Է. կայսերութեան Գաղղիոյ. Սկսաւ նախ առնուլ զնա մտանել ՚ի դաշնակցութիւն մարտի ընդդէմ թշնամեաց իւրոց. զոր ՚ի մերժել քահանայապետին իբր անիրաւ և անպատշաճ առաջարկութիւն, յաւել այլ խնդիր անպատեհ քան զառաջինն, որով խնդրէր զի ինքն որպէս ինքնակալ՝ կարող լիցի ընտրել և անուանել զէթ զերրորդ մասն թուոյ կարդինալաց. Սակայն և այս մերժեցաւ ՚ի քահանայապետէն իբր հակառակ սահմանադրութեն կանոնաց և պաշտաման կարդինալական վիճակի, որք ոչ միայն խորհրդականք էին աթոռոյն այլ և ընտրողք քահանայապետաց:

Հուսկ յետոյ յանդգնեցաւ Նափոլէոն յամին 1808 ընդ ձեռն նուիրակին Հաուլեայ որ 'ի Փարիզ՝ առաքել առ քահանայապետն յայտարարութիւն վերջեակ առաջարկութեանց իբրև փորձ յետին, որք եթէ անընդունելի լինին սրբոյ աթոռոյն, համարեսցի այն 'ի նշան թշնամութեան և մարտի: Այս առաջարկութիւնքն էին այսոքիկ. Ա, Հրապարակումն և գործադրութիւն մատենին Նափոլէոնեան օրինաց յամենայն սահմանս եկեղեցական իշխանութեան. Բ, Անխտիր ազատութիւն և համարձակ պաշտօն ամենայն օտար կրօնից. Գ, Սերմանորդութիւն կամ նոր փոփոխութիւն եպիսկոպոսարանաց, և անկախութիւն եպիսկոպոսաց 'ի սրբոյ աթոռոյն. Դ, Ունայնացուցումն կանոնակաց պապական իրաւասութեան 'ի տալ զվիճակ եպիսկոպոսաց և ժողովրդապետաց. Ե, Ջնջումն համօրէն կարգաց կրօնաւորաց և միանձնուհեաց. Զ, Պատուէր առ քահանայապետն կատարել զհանդէս թագադրութեան եղբօր իւրոյ Յովսեփայ Պոնափարթեայ 'ի թագաւոր Նէապօլսոյ: Յայսոսիկ յանդուգն պահանջմունս յաւելեալ էր 'ի վերջոյ և պայման հնգից աւուրց 'ի տալ ընդպատասխանի առաջարկութեանցս, ընդ նմին և սպառնալիս զրկելոյ զՊիոս Է. յամենայն իշխանութենէ:

Իբրև այդ եղեն քահանայապետին անդէպ և անձանձի առաջարկութիւնքն Նափոլէոնի, անդէն և անդ ետ զարժանաւոր պատասխանին որպէս վայել էր փոխանորդին Քրիստոսի և արիական յաջորդի սրբոյն Պետրոսի, մերժելով զամենայն անօրէն պահանջմունս նորա: Այլ զի Նափոլէոն յառաջարկել անդ զխնդիրսն գուշակեալ էր կանխաւ զհերքումն Պիոսի Է., ընդ որ պատճառաւ այն պատուէր տուեալ էր Միոլիս զօրավարին վեցհազար և հինգհարիւր զօրօք մտանել 'ի Հռոմ. և նա կատարեաց փութով զպատուէր հրամանին. զի յերկրորդ աւուր փետրուարի յամին 1808 եմուտ 'ի Հռոմ, և խաբէութեամբ մերկացոյց 'ի զինուց զզինուորս քահանայապետին. տիրեաց և ամրոցին որ կոչի յանուն սրբոյ Հրեշտակապետին, և ետ դնել ութ թնդանօթս յանդիման քահանայապետական պալատան, յորում ընակէր Պիոս Թ· Սակայն քահանայապետին ոչ ինչ զանգիտեալ յեղելոց իրացն՝ անդորր սրտիւ կատարեաց զհանդէս տօնախմբութեան աւուրն, այս է զտօն քառասնօրեայ գալստեան Քրիստոսի 'ի տաճարն ։

Զարմացաւ աշխարհ, և զայրացաւ առ հասարակ ժողովուրդն Հռովմայ ընդ անիրաւ բռնաբարութիւն օրինաց ազգաց, և ընդ անօրէն դաւաճանութիւն Նափոլէոնի 'ի դրժել անդ դաշինն հաւատարմութեան զոր խոստացեալ էր Պիոսի Թ· Սակայն քահանայապետն 'ի խաղաղել զամբոխեալ սիրտս հպատակաց իւրոց՝ խօսս և յորդոր հայրական մտաց ամենեցուն 'ի հանդարտութիւն, և խրախուսեաց զնոսա ապաւինել յաստուածային նախախնամութիւն · բայց 'ի նմին իսկ յերկրորդ աւուր փետրուարի արար զրով բողոք յայտարարութեան առ դեսպանս ամենայն թագաւորաց որք կային 'ի Հռովմ, խնդրելով իրաւանս ընդդէմ բռնական յանդգնութեանցն Նափոլէոնի, և պահանջելով զստացուածս սրբոյ աթոռոյն յանիրաւ յափշտակութենէ նորա ։

ԳԼՈՒԽ Ժ·

Նորանոր հնարք Նափոլէոնի 'ի բառնալ զտէրութիւն սրբոյ աթոռոյն ։

Յետ տիրելոյ Գաղղիացւոց մայրաքաղաքին Հռովմայ, ջան գործեցին բազմադիմի հնարիւք անտանելի ցուցանել ժողովրդեան զաշխարհական տէրութիւն քահանայապետին և զեկեղեցականաց · յայս սակս սփռեցան զօրք 'ի զանազան թաղս քաղաքին իբր յապահովութիւն ընակչաց, եղան պահապանք զգուշութեան 'ի տպագրատունս, 'ի տեղիս թղթատարաց և թղթաբերաց · և զքաղաքական զօրս քահանայապետին խառնեցին ընդ զօրս Գաղղիացւոց ։ Իսկ զի կասկածէին 'ի գաղտնի թելադրութենէ իշխանաց և պաշտօնատարաց քաղաքին, մանաւանդ թէ կամելով զըրկել զքահանայապետն 'ի հաւատարիմ խորհրդականաց իւրոց՝ տարագրեցին 'ի Հռովմայ քսան և չորս կարդինալս, և փոխանակ նոցա Պիոս Թ· կարգեաց առժամանակեայ տեղակալս ։

Ի քանդել և յեղծանել զկարգ տնտեսութեան քաղաքին՝ ծաւալեցին ստայօդ զրպարտութիւնս 'ի վերայ քաղաքապետին, որպէս թէ պաշտպան իցէ նա ապըստամբաց և աւազակաց պատսպարելոց 'ի Հռոմ, յոր սակս իսկ բանտարգել արարեալ զնա՝ աքսորեցին ապա 'ի քաղաքէն ։ Ընդդէմ անիրաւ և տարապարտ բռնութեանցս կրկին անգամ բողոք կալաւ Պիոս Է. առ զօրագլուխն Միոլիս և առ Նափոլէոն. բայց ընդհակառակս այսոցիկ բողոքմանց բռնագոյն ևս հրաման տուաւ 'ի Նափոլէոնէ զի չորեքին գաւառքն Ուրպինոյ, Անքոնա, Մաչէրաթա և Քամէրինոյ հատցին յիշխանութենէ քահանայապետին, և միասցին ընդ իտալական թագաւորութեան ։ Եւ ևս զի կարդինալք և այլ պաշտօնեայք Հռոմայ՝ կամակար խոյս տուեալք յԻտալիոյ դարձցին անդրէն յերկիր ծննդեան իւրեանց, և հպատակեսցին նորադիր օրինաց իտալական տէրութեան ։ Ընդդէմ այսոցիկ հրամանաց և օրինադրութեանց՝ Նափոլէոնի, որպէս և գործադրութեան վճռոց նորա՝ 'ի մետասան ապրիլի յամին 1808 գրեցաւ 'ի Հռոմայ յանուն Պիոսի Է. ազդու և անաչառ պատասխանի, մի առ մի ունայնացուցանելով զսնոտի փաստ պատճառանաց նորա՝ որովք կամէր յանիրաւի գրաւել զտէրութիւն քահանայապետին ։

Եւ քանզի Նափոլէոն անսաստ կամակորեալ էր 'ի խորհուրդս մտաց իւրոց, ետ հրաման զբռնութիւն 'ի վեր արկանել ընդդէմ գլխաւոր պաշտօնէութեանց Հռոմայ, որովք մաքառէր Պիոս Է. ընդ Նափոլէոնի ։ Վասն որոյ 'ի վեշտասան յունիսի հրամանաւ Միոլիսի զօրագլխի երկու ստորին զօրականք հանդերձ զինուորօք ոմանք մտին յեղակարծ 'ի պալատ քահանայապետին, ուր նստէր առաջին գործակալ կամ ատենադպիր տէրութեան Հռոմայ կարդինալն Գապրինէլի. զորոյ զպահարան գրուածոցն կնքեալ, և զնա ինքն հանեալ 'ի պալատէն աքսորեցին 'ի Սինիկալիա՝ յաթոռ եպիսկոպոսութեան իւրոյ ։ Զնոյն արարին և է այլ չորեսին երևելի և հաւատարիմ պաշտօնէայս Պիոսի Է., զորս արգելին յամրոց սրբոյ Հրեշտակապետին ։ Սակայն քահանայապետն կացոյց զկարդինալ Փաքքա փոխան ատենադպրին տարագրելոյ 'ի Հռոմայ ։

Եւ զի ընդ այն աւուրս կարի յաճախեալ էին բռնաւորական ըմբոստութիւնք՝ ոչ միայն 'ի Գաղղիացւոց, այլ և յանզգամ ստամբակաց ոմանց 'ի խաժամուժ ամբոխէն Հռովմայ, կարդինալն Փաքքա 'ի քանանչորս օգտատուի եհան յայտարարութիւն առ ժողովուրդն չգրիլ 'ի զինուորութիւն արտաքին տէրութեան ընդ որով և իցէ պատրուակաւ, յուշ առնելով նոցա զկանոնական նզովս որոց միանգամ զինեցին ընդդէմ եկեղեցւոյ և պատկառելի օրինաց նորա։ Այս յայտարարութիւն կարդինալին 'ի յանցանս գրեցաւ յաչս Միոլիսի, վասն որոյ կամեցաւ բռնի աքսորել զնա 'ի Բենեւենտո քաղաք. զոր իմացեալ Պիոսի Է, էջ անձամբ առ զինուորսն, և յանդիմանեալ զյանդգնութիւն նոցա յիւրում պալատան կալաւ զձեռանէ կարդինալին՝ և տարաւ ընդ իւր 'ի վեր, և բնակեցոյց զնա առ իւր։ Ապա 'ի վեց սեպտեմբերի ծանոյց գրով առ ամենայն դեսպանս թագաւորութեանց զբռնութիւնն գործեալս 'ի պալատան քահանայապետին։

Յետ այնորիկ կարդինալն Փաքքա եկաց 'ի պալատան անդ զամիս տասն իբր բանտակից ընկեր սրբոյ քահանայապետին, յոյր սակս տուաւ 'ի Պիոսէ պատուէր պաշտպանաց իւրոց չընդունել զոք 'ի գաղղիացի զինուորաց 'ի պալատն. ընդ որ զայրացեալ Միոլիս զօրավարն՝ յաւել զամրափակ զգուշութիւն և պաշարումն առ պարսպօք պալատին, ոչ զոք թողլով մտանել 'ի ներքս կամ ելանել արտաքս առանց մանրախոյզ քննութեան և հետազօտութեան անձանցն և իրաց զորս բերէին կամ 'ի բաց տանէին։

Զայրացեալ Գաղղիացւոց ընդ անակնկալ ազատութիւն կարդինալ Փաքքայի՝ 'ի նմին իսկ աւուր ութ զինուորք վարեցին արտաքս 'ի Հռովմայ զԱնթոնէլլի կարդինալ, նոյնպէս և զԱրէցցոյ տեղակալ քաղաքապետին Հռովմայ երեսուն զինուորք արտասահման արարին մինչև ցսահմանագլուխ Փոքանայ։ Զնոյն անցս կրեցին և այլ բազում քաղաքապետք սահմանաց քահանայապետին, որք զյայտարարութիւն կարդինալ Փաքքայի հրատարակեալ էին 'ի քաղաքս իւրեանց. վասն որոյ ածեալ 'ի Հռովմ՝ արգելան յամրոց սրբոյ Հրեշտակապետին։

Յայսմ ժամանակի զօրք և աւազակք գտեալ զպաշտպանութիւն Գաղղիացւոց՝ բազմացեալ էին 'ի մերձաւոր սահմանս Հռովմայ և գործէին անօրէնութիւնս անթիւս. վասն որոյ բողոք կալաւ զնոցանէ կարդինալ Փաքքա առ զօրագլուխն Միոլիս, սակայն ոչ ինչ փոյթ եղև նմա զանկարգութենէ ժողովրդեան:

ԳԼՈՒԽ ԺԱ.

Յանդուգն վճիռ Նափոլէոնի 'ի ջնջել զաշխարհական տէրութիւն սրբոյ աթոռոյն: — Փոխադրութիւն Պիոսի Է. 'ի Գաղղիա:

ԸՆԴ այն ժամանակս՝ յորում 'ի Հռովմ և 'ի սահմանս նորա գործէին այս անցք աղետալիք, Նափոլէոն զբաղեալ էր 'ի մարտ պատերազմի ընդ տէրութիւնս Սպանիոյ և Լուսիտանիոյ, յորս առաւելապէս քաջազէն հանդիսացան քահանայք և կրօնաւորք 'ի մարտնչել ընդդէմ Նափոլէոնի. սակայն պատճառք եղեն այնու զրգռելոյ բուռն կատաղութեան նորա. զի 'ի յաղթել իւրում և 'ի մտանել յարքայանիստ քաղաքն Մադրիտ՝ կողոպտեալ զամենայն եկեղեցական ստացուածս, արար վճիռ խափանել զկրօնաւորական կարգս, և ջնջել զատեան սրբազննութեան. և ապա խնդրեաց 'ի գլխաւորաց քաղաքին զերդումն հաւատարմութեան առ թագաւորն իւրեանց, զոր խոստացաւ վերստին հաստատել յաթոռ իւր:

Յետ երկուց ամսոց կարգաւորելոյ զՍպանիա, 'ի քսանևերկու ամսեանն դեկտեմբերի մեկնեցաւ Նափոլէոն 'ի բանակէ անտի իւրմէ և դարձաւ 'ի Փարիզ, զի լուաւ եթէ 'ի Գերմանիա պատրաստութիւն մեծ է մարտի ընդդէմ Գաղղիոյ: Յայնմ ժամանակի զնոյն վիշտս տառապանաց կրեցին 'ի Գաղղիացւոց և Սպանիացիք պատսպարեալքն 'ի Հռովմ, որք մերկացան յամենայն պատուոյ և 'ի պաշտամանցն զորս ունէին անդ: Ընդդէմ այսոցիկ բռնութեանց բողոք կալաւ դարձեալ սրբազան քահանայապետն առ զօրագլուխն Միոլիս և առ ամենայն դեսպանս այլոց տէրութեանց, բայց ոչ ինչ օգտեցաւ:

Իսկ յամին 1809 'ի քսանևօթն մարտի կայսրն

Աւստրիոյ Ֆրանկիսկոս յարոյց պատերազմ ընդդէմ Նափոլէոնի · բայց 'ի թոյլատուութենէն Ռուսաց, քանզի չև էր հասեալ ժամ կործանման Նափոլէոնի, զօրացաւ նաև յայս նուագ, զի անակնկալ արշաւանօք քանդելով զահեղ պատրաստութիւնս Աւստրիոյ, 'ի մետասան մայիսի եհաս և եմուտ 'ի Վիեննա մայրաքաղաք, ուր մեծամեծեալ փառօք յաղթութեան, յեօթնեւտասն մայիսի 'ի բանակի անդ եհան վճիռ ոչնչացուցանելոյ զաշխարհական իշխանութիւն սրբոյ աթոռոյն, յոր 'ի հազար ամաց հետէ վայելէին քահանայապետք Հռովմայ ։

Յայնմ վճռի մերկացուցանէր զքահանայապետն 'ի քաղաքական տէրութենէ՝ միացուցանելով զամենայն սահմանս երկրի նորա ընդ ինքնակալութեան Գաղղիոյ, և զՀռովմ անուանէր ազատ քաղաք կայսերական ։ Իսկ վասն քահանայապետին օրինադրէր զեկամուտ երկու միլիոն ֆռանքաց, և ազատութիւն յամենայն հարկաց և 'ի քաղաքական օրինաց ։ Պատուիրէր 'ի նմին վճռի, զի յառաջին աւուր ամսեանն յունիսի յանուն իւր մտցեն 'ի ժառանգութիւն ամենայն սահմանաց · Իսկ քահանայապետին կորզաւորութիւնն քաղաքական սկիզբն առցէ յառաջնոյ օրէն յունուարի յամին 1810 ։

Ի ժամանել այսր վճռոյ 'ի Հռովմ, 'ի տասն յունիսի ընդ առաւօտն եդաւ 'ի գործ թնդանօթահար հանդիսիւ յամրոցէ Հրեշտակապետին, յորմէ բարձին զդրօշակ սրբոյ աթոռոյն և պարզեցին զեռագոյն դրօշակն գաղղիական ։ Զայն տխրալից հանդէս տեսեալ և լուեալ Պիոսի Է., ապաւինութեամբ յԱստուած զօրացաւ արիական հոգւով, և 'ի հանդարտել զխռովեալ սիրտ հաւատարիմ հպատակաց իւրոց՝ հայրական գթով եհան յորդոր խրատու, մնալ անվրդով և սպասել աստուածային խնամոցն այցելութեան ։ Սակայն ինքն շարժեալ յաստուածային ազդեցութենէ՝ մերկեաց 'ի պատենից զսուրն հոգևոր նզովից ընդդէմ հրամանատուի և գործակցաց այնր յանդգնութեան, առանց յիշելոյ զանուն Նափոլէոնի ։

Ի հրատարակել նզովիցն՝ զարմացեալ ընդ աներկիւղ և անվեհեր արիութիւն քահանայապետին, ցնծացաւ առ հասարակ ամենայն ժողովուրդն Հռովմայ, միազամենայն խորախոյս բարձին մահ սպառնալ այնոցիկ որք յանդգնեսցին բանի վարել զքահանայապետն արտաքոյ Հռովմայ. յոյր սակս միաբանեալ 'ի խումբս խումբս պատրաստէին 'ի մարտ քաղաքական ընդդէմ Գաղղիացւոց որք առ ժամն կարի սակաւաթիւք էին 'ի Հռովմ. զի Նափոլէոն զմեծագոյն մասն զօրաց իւրոց սփռեալ էր առ գետեզերբն Դանուբայ. վասն որոյ հարկեցան Գաղղիացիք կոչել 'ի Հռովմ նպաստս զինուորս 'ի Թոսքանայէ, զի զանգիտէին յոյժ 'ի յուսահատ կատաղութենէ ժողովրդեանն Հռովմայ։ Այլ և այլ պատճառք մեծապէս զանգիտելոյ գաղղիականն զօրաց, զի նաւք Անգղիացւոց յածէին 'ի ծովու հուպ 'ի Չիվիլթավէքքիա քաղաք, և խորհէին գաղտնի հնարիւք յափշտակել զՊիոս Է., և ազատել զնա 'ի վտանգից բանտարկութենէն։

Արդ կամելով Գաղղիացւոց զառաջս առնուլ զկասկածելի հետևանացն, ըստ խորհրդոյ Թագաւորին Նէապօլոյ՝ որ էր քեռայր Նափոլէոնի, փութացան հեռացուցանել 'ի Հռովմայ զքահանայապետն, զորոյ զառաջիկայութիւնն 'ի Հռովմ՝ պատճառս խռովութեան համարէին ժողովրդեան։

Զայս խորհուրդ կամելով դնել 'ի գործ, պատրաստեցան կարևոր զգուշութեամբ. զի գիտէին զհսկել ժողովրդեանն 'ի պաշտպանութիւն քահանայապետին։ Վասն որոյ 'ի վեցերորդ աւուր ամսեանն յուլիսի, յաւուր յորում հանդերձեալ էին կատարել զդիտումն իւրեանց՝ կարգեցան պահապանք 'ի գլուխս կամրջաց առ 'ի խափանել զարշաւանս բնակչաց յայնկոյս Տիբերիս գետոյ. սփռեցան և ձիաւոր զօրք սուսերամերկք 'ի շաւիղս պալատան քահանայապետին։ Իսկ Ռատէ զօրապետ 'ի հրամանէ Միոլլիս զօրավարին խումբ հատեալ 'ի պատուար պալատին, և խորտակելով զդրունս և զպատուհանս մտին 'ի ներքս խուռն բազմութբ. յետոյ դիմեալ 'ի նախասենեակ քահանայապետին, ուր կային քառասուն հաւատարիմ զինուորք նորա, հրամայեաց նոցա Ռատէ զօրապետ զէնընկեց լինել և խոնարհել 'ի հնազանդութիւն։ Նոքա մտին 'ի սենեակն քահանայապետին՝ ուր զեկաւորսն սովոր էր ընդունել, և տեսեալ անդ զՊիոս Է. ուսանոցիւ և ուրարաւ նստեալ 'ի գահոյս, եւ շուրջ զնովաւ Փաքքա կարդինալ եւ անձինք ամենք նախապատիւք, պատկառեալ 'ի դիմաց քահանայապետին կարկեցաւ բերան Ռատէի առ վայր մի, եւ ապա աչիւ եւ գողութեամբ մերձեալ առ քահանայապետն՝ ծանոյց մեղմով զկամս Նափոլէոնի, առաջարկելով նմա՝ զի թէ հրաժարեսցի յաշխարհական իշխանութենէն, կարէ մնալ անդ խաղաղութեամբ. ապա թէ ոչ, հարկ է նմա հեռանալ 'ի Հռովմայ։ Պատասխանի ետ նմա քահանայապետն եւ ասէ. « Լաւ է ինձ մեռանել՝ քան եթէ յանձն առնուլ զգաղտնիս պայմանացդ որոց չեմ ինչ լսեալ »։ Վասն որոյ կամակար ինքնին յարուցեալ 'ի գահոյիցն անտի եւեթ զժամագիրս աղօթիցն, եւ իջանէ 'ի դուռն պալատին հանդերձ Փաքքա կարդինալիւ, ընդ որում եմուտ 'ի կառս պատրաստական, եւ փակեաց զօրավարն զդուռն կառացն, եւ ուղեկցութեամբ պահապան զինուորաց երագ ընթացիւք պատեալ զպարսպաւ քաղաքին՝ հուպ ընդ արշալոյսն հանին զնա արտաքս ընդ դուռն որ անուանեալ կոչի Պոպոլոյեան, եւ անտի հապճեպ եւ անընդհատ արշաւանօք վարեցին զկառսն արտաքոյ եկեղեցական սահմանաց։ Իսկ ապա ընդ Ճանապարհս Թոսքանայի եւ Փիէմոնթի տարան 'ի Կրընոպլ եւ անտի 'ի Սաւոնա. ուր տուաւ նմա տեղի բնակութեան հանդերձ զգուշութեամբ պահապան զինուորաց։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Կամքն Նափոլէոնի գրաւել զիշխանութիւն քահանայապետին։

ԶԿՆԻ յաղթութեանն որ 'ի Վեննա՝ դարձ արարեալ Նափոլէոնի 'ի Փարիզ, յետ այնորիկ տարագրութեամբն Պիոսի Է. 'ի Հռովմայ համարեցաւ զանձն տէր աշխարհական իշխանութեան քահանայապետին, եւ ոչ շատացեալ այնու՝ դուն գործեաց ունել եւ զհոգեւոր իշխանութիւնն։ Վասն որոյ կամեցաւ նախ առաջին զի կարդինալքն գտեալք 'ի Հռովմ թուով քառասնեքին՝ եկեսցեն 'ի Փարիզ, նոյնպէս փոխադրեսցին անդր ամենայն դիւանագիրք մատեանք զանազան ատենից։ Նենգամիտ խորհուրդ Նափոլէոնի 'ի ժողովելն առ իւր զկարդինալսն՝ այն էր զի նոքօք կատարեսցէ զկամս չարութե՟ իւրոյ, սակայն վրիպեցաւ 'ի յուսոյն. քանզի երեքտասան կարդինալք հակառակելով կամաց նորա, չկամեցան անսալ առաջարկութեանցն, վասն որոյ զրկեցան 'ի ծիրանեաց և յեկամտից, և յամին 1810 յերեքտասան աւուր ապրիլի աքսորեցան յայլ և այլ քաղաքս Գաղղիոյ.

Յայնմ ժամանակի քանզի պակասէին 'ի զանազան թեմս Գաղղիոյ և Իտալիոյ բազում եպիսկոպոսունք, և կարօտէին կենդանի հաստատութեան պապին, զոր Պիոս Է. ոչ կամէր շնորհել 'ի պատճառս տարագրութեանն՝ յաթոռոյ իւրմէ, և զրկելոյ յառաջիկայութենէ խորհրդականաց իւրոց կարդինալաց, նմին իրի խորհեցաւ Նափոլէոն առանձնական ժողովով քանի մի գաղղիացի կարդինալաց և համախոհ եպիսկոպոսաց յանցաւոր ցուցանել զՊիոս Է., որ 'ի պատճառս աշխարհական իշխանութե՟ զլանայ զհոգևոր օգուտ եկեղեցւոյ. Սակայն յայնմ ամենայնի ոչ այլ ինչ կամք էին նորա, բայց եթէ յափշտակել յինքն զհոգևոր իշխանութի՟ քահանայապետին 'ի տալ զհրաման հաստատութեան եպիսկոպոսաց և ըստ կամս այլայլելոյ զվիճակս եպիսկոպոսարանաց, ըստ որում և արար առ նովին ժամանակաւ 'ի մահուան արքեպիսկոպոսին Փարիզու, որում փոխանակ անուանեաց զկարդինալն Մօռի. զնոյն արար և արքեպիսկոպոսին Ֆլորենտիոյ, կարգելով զնոսին իբր տեսուչ նոցին եկեղեցեաց: Զոր լուեալ Պիոսի Է. գրեաց 'ի Սաւոնայէ թուղթ յանդիմանութեան առ կարդինալն Մօռի, որ գոլով եպիսկոպոս Մոնթէֆիասքոնի քաղաքին՝ յանձն առեալ էր զպաշտօն աթոռոյ Փարիզու առանց հաւանութեան իւրոյ: Ի լսել Նափոլէոնի զգրութ՟ն նամակի և յանդիմանութեան Պիոսի առ կարդինալն, զայրացաւ յոյժ. և կասկածեալ թէ իցէ այն 'ի թելադրութենէ խորհրդականաց քահանայապետին, բանտարգել արար զնոսին, և գրեաց ևս նամակ սպառնալեաց առ Պիոս Է. մի ևս նամակագիր լինել ընդ ումեք:

Յետ այնորիկ կամեցաւ Նափոլէոն գումարել և երկրորդ ժողովակ 'ի քանի մի եպիսկոպոսաց և 'ի համախոհ կարդինալաց, առաջարկեալ նոցա երկուս խնդիրս՝

իբրև լուծանելի երկբայութ՟իս ։ Նախ՝ թէ 'ի դադարել ամենայն հաղորդակցութեան ընդ քահանայապետն և ընդ ժողովուրդս ինքնակալութեան իւրոյ , առ ո՞ ոք պարտ իցէ դիմել 'ի դիպուածս տնօրինմանց ։ Երկրորդ՝ թէ 'ի զլանալ քահանայապետին զկոնդակս եպիսկոպոսացուաց, զի՞նչ իցէ օրինաւոր և հնարաւոր դարման 'ի տալ նոցա զհաստատութիւն կանոնական ։ Այսոցիկ խնդրոց եղև պատասխանի 'ի ժողովակէն առ Նափոլէոն , թէ առաջին երկբայութեան դարման դիւրահնար է 'ի ձեռն թեմական եպիսկոպոսաց՝ եթէ տնօրելի դէպքն մասնաւորք իցեն և առանձնականք ։ Իսկ առ երկրորդ խնդիրն տուաւ այսպիսի պատասխանի որ 'ի պարսաւանս էր տեսչութ՟ե Պիոսի Է ։ Զայն լուեալ Նափոլէոնի բորբոքեցաւ ընդդէմ քահանայապետին՝ ստայօդ զրպարտութեամբ անգոսնելով զնա յանդիման խորհրդականաց , կարդինալաց և եպիսկոպոսաց , յորոց ոչ ոք համարձակեցաւ դիմախօսել նմա բաց 'ի յարգոյ քահանայէ ումեմնէ գաղղիացւոյ , որ ազդու բանիւք աներկիւղ առաջի արար զկարևորութիւն ազատութեան գլխոյն եկեղեցւոյ , և թէ անզօր և ընդունայն են ամենայն ժողովք՝ եթէ չիցեն հաւանեալ և հաստատեալ 'ի քահանայապետէն ։ Ընդ որ զարմացեալ Նափոլէոնի՝ լռեաց 'ի խօսիցն , և քաղցր դիմօք հայեցեալ առ նա , ասէ ․ “ Այդպէս ախորժեմ թէ ոք խօսեսցի ընդ իս „ ։

Յանպտուղ ելանել կրկին առանձնական ժողովակաց , կամք եղեն Նափոլէոնի գումարել ազգային ժողով ․ վասն որոյ յամին 1811 յապրիլի քսանևհինգ գրեաց հրաւէր առ ամենայն եպիսկոպոսունս Գաղղիոյ և Իտալիոյ գալ ժողովել 'ի Փարիզ քաղաք վասն խորհելոյ զօգուտ եկեղեցւոյ , որոյ հօտք , ասէ , 'ի բազում տեղիս կարօտին հովուաց , և զրկեալ կան 'ի պակասութենէ կոնդակաց կանոնական հաստատութեան ։ Ի նմին ժամանակի առաքեցաւ և առանձինն դեսպանութիւն առ Պիոս Է 'ի Սաւոնա՝ 'ի ձեռն եպիսկոպոսաց ումանց հանդերձ թղթով և ստորագրութեամբ երկոտասան եպիսկոպոսաց՝ խնդրել 'ի նմանէ զի գէթ առ ժամն տացէ զկոնդակս հաստատութեանն անուանեալ եպիսկոպոսացուաց՝ ըստ դաշնադրութեան եղելոյ յամին

1801. Իսկ վասն առ յապա եպիսկոպոսացուաց յաւելուին զայս պայման, զի եթէ 'ի միջոցս երից ամսոց զլասցի տալ զկոնդակն եպիսկոպոսացուաց, կարող լիցի մետրապոլիտն տալ զայն քորեպիսկոպոսաց, որպէս և քորեպիսկոպոսն երիցագոյն հասակաւ և պատուով շնորհեսցէ զայն մետրապօլտաց։ Յայսմ դեսպանութեան խոստացաւ ևս Նափոլէոն դարձուցանել զՊիոս 'ի Հռոմ, եթէ տացէ նմա երդումն հաւատարմութեան և հնազանդութեան. ապա թէ ոչ, առաքեսցէ զնա յԱւինիոն քաղաք՝ նստել անդ և վարել զհոգևոր իշխանութիւն ևեթ. սակայն և յայնժամ պարտի, ասէր, խոստանալ չառնել ինչ՝ որ հակառակ իցէ չորեցունց առաջարկութեանց գաղղիական եկեղեցւոյն։

Ի ժամանել դեսպանացն 'ի Սաւոնա առ քահանայապետն՝ հայրական սիրով ընկալաւ նա զեկեալսն, բայց 'ի լսել անդ զառաջարկութիւնսն անհաւան գտաւ զործադրութեան խնդրոյն, յուշ առնելով նոցա զտարագրութիւն իւր յաթոռոյ իւրմէ, և զզրկիլն 'ի խորհրդականաց իւրոց, առանց որոց չէ հնար տալ պատասխանի առաջարկեալ բանիցն։ Այլ 'ի կարի թախանձել զնա դեսպանացն՝ առաջի առնելով զվնաս եկեղեցւոյ և զվըտանգ հերձուածոյ, որ կասկածելին էր 'ի հանդերձեալ ազգային ժողովոյ անտի, յանձն էառ քահանայապետն տալ կոնդակ հաստատութեան անուանեալ եպիսկոպոսացուաց ևեթ. իսկ առ այլ առաջարկութիւնսն յաւել ասել՝ թէ կարօտին առանձին խորհրդոյ և որոշման, զոր մարթ է նմա առնել 'ի զերծանել անդ իւրում և 'ի միանալն ընդ խորհրդակից կարդինալացն։ Բայց զայս յետին յաւելուած, որ կարէր լինել պատճառք վնասուց եկեղեցւոյ, փութացաւ վաղվաղակի յետս կոչել։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Ազգային ժողով 'ի Գաղղիա։

ՏԵՍԵԱԼ Նափոլէոնի եթէ 'ի դերեւ ելին նենգամիտ խորհուրդք մտաց իւրոց, վաղվաղեաց զհաւաքումն ազգային ժողովոյն՝ յորում գտան իննսուն եւ եօթն եպիսկոպոսունք, յորոց երեսուն եւեթ էին յԻտալիոյ։ Սոքա ամենեքին, որպէս եւ որք միանգամ պատճառաւ իւիք չէին եկեալ 'ի ժողովն, նոյնպէս եւ գլերք աթոռոյն որք էին 'ի պարապութեան՝ ընկալան պատուէր 'ի Նափոլէոնէ ծանուցանել գրով զկարծիս իւրեանց 'ի վերայ չորեցունց համբաւեալ առաջարկութեանց եկեղեցւոյն Գաղղիոյ, եւ 'ի վերայ կանոնական հաստատութեան ընտրեալ եւ անուանեալ եպիսկոպոսացուաց։

Յետ այնորիկ յեօթնեւտասն յունիսի եղեն պատրաստութիւնք ժողովոյն, եւ 'ի քսան ամսոյն եղեւ առաջին գումարումն, եւ նախագահ բազմեցաւ կարդինալն Ֆէշ։ Յառաջինն արարաւ երդումն հպատակութեան եւ հնազանդութեան առ քահանայապետն, եւ յետ նպաստաւոր բանից ինչ 'ի վերայ իշխանութեան քահանայապետին Հռովմայ՝ իբրեւ մինն 'ի քննութիւն առաջիկեալ խնդրոց, մեծագոյն մասն ժողովականաց ընդ մի բերան ծանուցին անպատրուակ, թէ ազգային ժողովն չունի զօրինաւոր իշխանութիւն 'ի լնուլ զպակասութիւն քահանայապետական կոնդակաց։ Այլ սակս եղեւ դժուարութիւն 'ի ժողովականսն ոչ միայն յայնմ առաջին գումարման՝ այլ եւ 'ի հետեւեալսն. մինչ զի 'ի վեցերորդ համախմբութեանն 'ի սաստ ալեկոծ եւ տագնապեալ էին ամենեքեան, ոչ ինչ կարելով վճարել ըստ մտաց եւ հաճոյից Նափոլէոնի. եւ նորա լուեալ զարիասիրտ հակառակութիւն երեցունց գաղղիացի եպիսկոպոսաց, զատոյց զնոսին 'ի ժողովականացն եւ բանտարգելս արար։ Նա զայրոյթ սրտին տագնապէր 'ի խորհուրդս իւր. քանզի կամք նորա էին 'ի ձեռն այնր ազգային ժողովոյ լինել գլուխ եկեղեցւոյն Գաղղիոյ, կամ բաժանել զԳաղղիա 'ի սրբոյ աթոռոյն՝ կացուցանելով առանձին պատրիարգ։

Ի դերևանալ ըղձիցն առժամն ցածուցեալ 'ի կատարութենէն՝ վերստին ջանահնար եղև 'ի ձեռն պարգևաց և սպառնալեաց հաւանեցուցանել զհակառակորդն 'ի ժողովականաց գէթ ստորագրել հնգեցունց առաջարկութեանց, զորս մատոյց առաջի նոցա իբր վճիռ որպէս թէ սահմանեալս 'ի ժողովոյն։ Եւ առաջարկութիւնք էին այսոքիկ. Նախ՝ ըստ եկեղեցական կանոնաց եպիսկոպոսունք չկարեն մնալ անհովիւք առաւել քան զմի ամ, և յայնմ ժամանակի ընտրութիւն, հաստատութիւն և օծումն ձեռնադրութեան պարտին անպատճառ կատարիլ։ Երկրորդ՝ համախումբ ազգային ժողովս թախանձեսցէ զինքնակալն անուանել զեպիսկոպոսացուս վասն աթոռոցն որք են 'ի պարապութեան, և անուանեալքն խնդրեսցեն 'ի քահանայապետէն զկանոնական հաստատութիւն իւրեանց։ Երրորդ՝ 'ի միջոցս վեցից ամսոց լսելով քահանայապետին զընտրութիւն անուանելոյն, տացէ նա զկանոնական հաստատութիւն Չորրորդ՝ յանցանել վեցից ամսոց եթէ քահանայապետն չկամիցի տալ զկանոնական հաստատութեանն, մետրապօլիտն կամ 'ի պակասել նորա երիցագոյնն յեպիսկոպոսաց գաւառին լիցի ձեռնհաս շնորհել զհաստատութիւն իշխանութեանն, ոչ միայն լոկ եպիսկոպոսաց, այլ և նոյին իսկ մետրապօլտաց, եթէ 'ի պարապութեան իցէ աթոռն։ Հինգերորդ՝ վճիռք ժողովոյս առաքեսցին առ քահանայապետն ընդունել զհաւանութիւն նորա, յորս սակս մատուցի և 'ի ժողովոյն աղերս առ ինքնակալն տալ հրաման յուղարկել զդեսպանութիւն վեց եպիսկոպոսաց առ Պիոս Է., ընդունել զհաստատութիւն վճռոց ժողովոյս, որով և եթ հնար է խափանել զվնաս եկեղեցեաց ինքնակալութեան։

Ի յայսցիկ հնգեցունց սահմանաց թելադրելոց 'ի Նափոլէոնէ ազգային ժողովոյն ձեռնադրեցին երեք գլխաւոր արքեպիսկոպոսունք և երկու եպիսկոպոսք. իսկ զընտրութիւնն յուղարկելի դեսպանաց, որ անկ էր ժողովականաց, ինքնին Նափոլէոն արար, յորս յաւել և հինգ կարդինալս 'ի ծիրանազգեստից՝ իբր խորհրդականս քահանայապետին 'ի յորդոր հաւանութեան նորա։ Յետ այնորիկ տուաւ դեսպանացն և վկայագիր ստորագրութեամբ ութսուն և հինգ եպիսկոպոսաց. որպէս և այլ նաեւ 'ի Ֆէշ կարդինալէ նախագահէ ժողովոյն առ քահանայապետն ։

Դեսպանքս այսպիսի հասին 'ի Սաւոնա, և 'ի հինգ սեպտեմբեր ամսոյ իբրև յանդիման եղեն Պիոսի Է., պատկառեցան 'ի տեսութենէն, որ և քահանայապետական իշխանութեամբն իբրև տեղեակ եղելոց իրացն՝ կշտամբեաց զեպիսկոպոսունսն, որք անգէտ գոլով հովուական բեռանց և պաշտամանն՝ լքեալ էին յանարժան ձեռս զխնամս հօտի իւրեանց ։ Ընդ որ զարմացեալ լուեալն առ վայր մի 'ի խօսելոյ, և ապա համարձակեալ ամենայն խոնարհութեամբ և աղերսական բանիւք մատուցին առ նա զորոշմունսն. և բազմադիմի յորդորանօք հաճեցուցեալ զնա, 'ի քսան սեպտեմբերի ընկալան 'ի նմանէ կոնդակ հաւանութեան ընդ վճիռս ժողովոյն. բայց այսու պայմանաւ՝ զի 'ի տալ մետրապօլտին զկանոնական հաստատութիւն եպիսկոպոսացուն, պարտաւոր լիցի առնել զայն յանուն քահանայապետին, և զվաւերական գաղափար այնր հաստատութեան առաքեսցէ առ նոյն ինքն քահանայապետն ։ Զկնի հաւանութեան այնր կոնդակի հաճեցաւ եւս շնորհել զկոնդակին կանոնական հաստատութեան ամենայն նախանուանեալ եպիսկոպոսացուաց. միանգամայն և զորովագութ սիրով գրեաց եւս նամակ հայրական առ նա ինքն Նափոլէոն ։

Կոնդակ հաւանութեանն Պիոսի ընդ սահմանս ժողովոյն՝ փութապէս առաքեցաւ առ Նափոլէոն, որ զբաղեալն էր յայնժամ յարշաւանս կողմանցն Հոլլանդիոյ. այլ նորա դժպատեհ համարեալ զպայմանաւորական հաւանութիւն քահանայապետին, չկամեցաւ ընել զայն 'ի գործ իբր նուաստութիւն վարկանելով եկեղեցւոյն Գաղղիոյ. վասն որոյ մերժեաց զկոնդակն, և ոչ իսկ պատասխանի արար թղթոյ քահանայապետին. ընդ որ զարմացան և տրտմեցան յոյժ գործադիր դեսպանքն, որք և առ անհնարինս իսկ զլխովին զամենագիւտ և ձեռնհաս զանձինս համարէին ։ Սակայն Նափոլէոն հրամայեաց չորից եպիսկոպոսաց դառնալ վերստին 'ի Սաւոնա առ Պիոս Է., և միւսանգամ ստիպել զնա հաւանել ոչ միայն նախկին առաջարկութեանցն, այլ և խնդրոց ինչ զորս ունէր 'ի մտի ։ Բայց քահանայապետն արիական հոգւով և անդրդուելի հաստատութեամբ ընդդէմ եկաց թախանձանաց նոցա, չկամելով հաւանել ընդ իրս զորս և հակառակս տեսանէր խղճի մտաց իւրոց։ Ահա այսպէս անարգասաւոր եղև ազգային ժողովն Փարիզու։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Յանդգնութիւն Նափոլէոնի ՚ի խափանել զեպիսկոպոսարանս, և ՚ի ջնջել յԻտալիոյ զամենայն կարգս կրօնաւորաց։

ՏԵՍԵԱԼ Նափոլէոնի զանօգուտ վաստակս հնարից ազգային ժողովոյն, և յամառեալ ՚ի խեղաթիւր կամս մտաց իւրոց, խորհեցաւ բռնաւորական շաւղօք յառաջ վարել զկամս իւր և այլայլել զկարգս եկեղեցւոյ. վասն որոյ առաջի արար թեմական եպիսկոպոսացն եղելոց ՚ի սահմանս Հռոմայ՝ տալ երդումն հաւատարմութեան և հպատակելոյ ամենայն օրինաց ինքնակալութե. սակայն բազում արիասիրտ եպիսկոպոսունք, բայց ՚ի սակաւուց ոմանց, մերժեցին զառաջարկութիւն նորա. ընդ որ ցասուցեալ՝ հրաման ետ անիրաւել զթիւս եպիսկոպոսարանացն, որով խափանեցան եօթնևտասն եպիսկոպոսարանք, և վիճակք նոցա տուան այնոցիկ որք տուեալ էին զերդումն։

Առ նովին ժամանակաւ յանդգնեցաւ ևս ջնջել յԻտալիոյ զամենայն կարգս կրօնաւորաց, կարծելով եթէ նոքա իցեն թելադիրք և խրատուք անշարժութեան մտաց Պիոսի Է., որպէս և յորդորիչք ատելութեան ընդդէմ Կաղղիոյ. Վասն որոյ տուաւ հրաման, զի ՚ի միջոցս քսան և չորից ժամուց դատարկեսցեն ՚ի Հռոմ քաղաքի ամենայն մենաստանք կրօնաւորաց և միանձնուհեաց. պատուիրեցաւ դարձեալ զի համօրէն օտարական կրօնաւորք գնասցեն յերկիր հայրենեաց իւրեանց։ Այս հրաման նովին խստութեամբ եղաւ ՚ի գործ ընդ բովանդակ սահմանս Իտալիոյ մինչև ցՎենետիկ։ Ողբալի էր վիճակ անակնկալ աղետիցս, որով կողոպտեցան մենաստանք յամենայն ստացուածոց, և կրօնաւորք իբր մերկացեալ ցրուեցան յայլ և այլ տունս բարեկամաց և ծանօթից. յոլովք ևս մեկնեցան արտաքոյ սահմանաց գաղղիական տէրութեան և պատսպարեցան 'ի մենաստանս կրօնակցաց իւրեանց։ Ի յամ աղետից կամէին խաղացի գործադրիչք բաժանորդս առնել և զմիաբանութիւն մեր. սակայն յառանձին խնամոյն Աստուծոյ և պաշտպանութեամբ օրհնաբանեալ տիրամօրն, ոչ միայն պահեցաւ անեղծ և անվնաս, այլ և միջնորդութեամբ գաղղիացի իշխանաց, և մանաւանդ Եւգինէոսի փոխարքային Իտալիոյ, ընկալան մերքն 'ի Նափոլէոնէ առանձինն հրովարտակ հաստատութե՛ և մնալոյ անփոփոխ 'ի կարգի կրօնաւորութեան իւրեանց։

Սմանք յիշխանաց յորդորեալ 'ի կրօնասիրութենէ, և կամ 'ի մեծարանաց նախնի յիշատակաց, միջնորդք եղեն պահպանութեան երկուց մենաստանաց, յորոց մի էր միաբանութիւն յունածէս բարսեղեան կրօնաւորաց 'ի Կրօթթաֆէռռաթա, և միւսն Կամալդուլեցի անապատաւորաց 'ի Ս՝ն Թէքորմոս։ Սակայն պայման եդաւ նոցա առնել երդումն հպատակութեան առ օրէնսդրութիւնս Նափոլէոնի, և 'ի չառնուլ նոցա յանձն՝ հարկեցան մեկնել 'ի մենաստանաց իւրեանց։ Յարկածից առաւ զերծ գտան 'ի Տոսքանա երկու ուխտատեղիք եւեթ, այս ինքն՝ Սրբազան Կամալդուլի, և Ճգնարան խորձիլթն սրբոյն Փրանկիսկոսի ասսիզացւոյ՝ որ յԱպեննինեան լերին, զորս ապրեցոյց եպիսկոպոսն Արեցցոյ քաղաքի։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Փոխադրութիւն Պիոսի Է. 'ի Սաւոնայէ 'ի Ֆոնթէնպլօ։ — Պատերազմ Նափոլէոնի ընդ Ռուսս։

ԽՈՐՀՈՒՐԴ տագնապեալ մտացն Նափոլէոնի յուզէր զմիտս նորա յարուցանել մարտ և ընդդէմ տէրութե՛ Ռուսաց. և չևս համարեալ զոր ինչ միանգամ արարն յԻտալիա, եթող առ ժամն անփորձ զՊիոս Է. 'ի Սաւոնա. մանաւանդ զի յայնմ ժամանակի ունեցեալ էր և որդի 'ի դստերէ անտի կայսերն Աւստրիոյ, զոր 'ի խանձարուրսն անուանեաց թագաւոր Հռովմայ։ Սան որոյ դաշն եղեալ նախ ընդ կայսեր և ընդ արքային Պրուսաց իբր ընդ մարտակցաց, յինն մարտի յամին 1812 մեկնեցաւ 'ի Փարիզէ անթիւ և անհամար զօրօք մինչև 'ի Տրեզտա քաղաք, ուր վերստին երկմտեալ 'ի խորհուրդս վասն քահանայապետին որ էր յայնժամ 'ի Սաւոնա, զի կասկածէր զապահովութենէ նորա՝ խիթացեալ 'ի նենգութենէ Անգղիացւոց որք խնդրէին զերծուցանել զնա 'ի վշտալից բանտարգելութենէն, ետ հրաման զի զաղտնի և 'ի ծածուկ փոխադրեսցեն զՊիոս 'ի Սաւոնայէ 'ի Ֆօնթէնըպլօ։ Խիստ էր հրամանն, բայց խստագոյն եւս և գժնդակ եղանակ գործադրութեանն. զի յիններորդ աւուր յունիսի Լակօս գնդապետ մտեալ գիշերայն 'ի սենեակ քահանայապետին՝ ծանոյց զհրամանն, և ապա արկ զնովաւ չնչին վերարկու, և գլխարկ աշխարհականի եդ 'ի գլուխն, որպէս և յոտս նորա կօշիկ սեւագոյն, և իբր ծպտեալ հեծուցին 'ի կառս, ուղեկից առնելով նմա զբժիշկ քահանայապետին եւեթ, յոր յաւելին յետոյ զՃանապարհայն և զՊէռթացօլի եպիսկոպոս իբր խնամարկու։ Այս անընդհատ և երագ ընթացիւք եհաս 'ի Մօնթէ-Չէնիզ, և առ տագնապ սաստկութե̃ վշտաց՝ անկաւ 'ի մահիճս մահու, մինչև խնդրել և ընդունել զյետին թոշակ սրբոյ հաղորդութեան։ Յետ կալոյ անդ զաւուրս ինչ և զօրանալոյ սակաւիկ մի՝ վերստին եդեալ 'ի կառս աղխեցին զդուռն, և հանապազորդեալ զընթացսն՝ 'ի քսան յունիսի հասուցին 'ի Ֆօնթէնըպլօ, ուր տուաւ նմա բնակութիւն պահպանութեամբ զինուորաց։

Նափոլէոն յետ տալոյ զհրաման տեղափոխութեան քահանայապետին փոխադրեցաւ և ինքն զօրօք առ Նէմէն գետով յերկիրն Ռուսաց. ուր սկզբնաւորեալ զմարտն կատաղի յարձակմամբ՝ յաջողեցաւ նմա ցրուել զզօրս Ռուսաց, և 'ի չորեքտասաներորդ աւուր ամսեանն սեպտեմբերի մտանել 'ի Մոսքուա քաղաք՝ երբեմն արքայանիստ. սակայն եգիտ զայն հրդեհեալ 'ի Ռուսաց։ Այն հրդեհ նշան համարեցաւ բնակչաց երկրին խորհելոյ առ հասարակ 'ի մարտ պատերազմի ընդդէմ Գաղղիացւոց. զոր տեսեալ Նափոլէոնի ծանեաւ զանհրաժեշտ վտանգ մնալոյ կորստեան բանակին իւրոյ, վասն որոյ հրաման ետ զօրաց նահանջել յետս. բայց մինչև աճապարեալ նոցա 'ի փախուստ, 'ի վեցերորդ աւուր նոյեմբերի կալաւ զնոսա ձիւն սաստիկ և փոթորիկ հողմոյ, ընդ որով հեղձան և թաղեցան անհամար զօրք և երիվարք Գաղղիացւոց, և սառեցան իբր հարիւր և քսան և հինգ հազար զօրականք։ Այնչափ բուռն էր յանկարծադէպ կոտորածն, մինչև հազիւ քսան և հինգ հազար զօրականաց անցանել ընդ գետն Նեմէն. և կորեան զինուորք երեքհարիւր հազար, երիվարք հարիւր հազար, թնդանօթք հազար, որք անկան 'ի ձեռս Ռուսաց։ Ի միջոցի աստ դառնացեալ արկածից Նափոլէոն թողեալ զառաջնորդութիւն զօրացն 'ի ձեռս Մուրատայ քեռայն իւրոյ, մազապուր անկաւ 'ի Վարսաւիա քաղաք Լեհաց, և անտի եհաս գիշերայն 'ի Փարիզ յութուտասն դեկտեմբերի յամին 1812։

Այս հարուած երկնառաք սասանեցոյց զհիմնակալութիւն Նափոլէոնի. սակայն նա 'ի շահել և 'ի կազդուրել զսիրտ ժողովրդեան, որք զկոտորածն համարէին պատուհաս Աստուծոյ, խորհեցաւ նենգութեամբ հաշտիլ ընդ քահանայապետին, և կռել ընդ նմա նոր դաշնադրութիւն. յոյր սակս յառաջին աւուր յունուարի յամին 1813 առաքեաց առ նա զոմն յարքունի մարդկանէ ծանուցանել նմա զկամս իւր։ Նա յետ աւուրց ինչ ինքն իսկ անձամբ գնաց առ քահանայապետն, և զաւուրս հինգ խօսեցեալ ընդ նմա բուռն թախանձանօք' առաջի արար տասն առաջարկութիւնս իբր նախաշաւիղ պատրաստութիւնս, յորոց վերայ հիմնելի էին պայմանք գործադրելի դաշնադրութեան։ Նշանակութիւն առաջարկութեանցն էր' նոր կարգաւորութիւն կամ փոփոխութիւն վիճակի նորին իսկ քահանայապետին ըստ իշխանութեան և տեղւոյ բնակութեան, որպէս և չափու եկամտից նորա. դարձեալ' այլայլութիւն թեմական սահմանաց և թուոյ եպիսկոպոսարանաց 'ի Գաղղիա, յԻտալիա, 'ի Թոսքանա և 'ի կողմանս Հոլլանդիոյ։ Նա ևս փոխադրել զՏարածանոյն և զժողով ապաշխարահայրութեան, որպէս և զդիւանս մատենից' հուպ 'ի բնակութիւն պապին։ Յետ առաջարկութեանցս տուան 'ի Նափոլէոնէ չորհք ազատութեան կարդինալաց, եպիսկոպոսաց, քահանայից և աշխարհականաց, որք պատուհասեալ էին 'ի պատճառս նախկին խռովութեանցն։

Այսոցիկ առաջարկութեանց Նափոլէոնի' թէպէտ ստրագրեալ էր Պիոս Է. իբր նախաշաւիղ պատրաստութիւն կարելի դաշնադրութեան, սակայն Նափոլէոն նենգամիտ խորհրդով համարեալ զայնոսիկ որպէս դաշնադրութիւնս վաւերս և լրացեալս, սկսաւ տպագրութեամբք ծաւալել յամենայն տեղիս. զոր լուեալ Պիոսի Է., և 'ի ծածուկ խորհրդակցեալ ընդ կարդինալս, գրեաց զյայտարարութիւն դաւաճանեալ հրատարակութեանն Նափոլէոնի, յորում ծանուցանէ, թէ առաջարկութիւնքն ոչ են դաշնադրութիւնք, այլ նիւթք քննութեան և կարգաւորութեան կարելի դաշանց. Կան, առէ, 'ի նոսա բազում ինչ ուղղագրելիք, և ինչ ինչ 'ի սպառ մերժելիք՝ իբր հակառակք արդար իրաւանց և կանոնաց սահմանելոց 'ի Քրիստոսէ տեառնէ մերմէ. Զայս յայտարարութիւն գրեաց առ նա ինքն Նափոլէոն 'ի քսան և չորս մարտի, և առաքեաց 'ի ձեռն Լակոս զօրապետին. Ապա կոչեալ առ ինքն զկարդինալսն՝ ծանոյց նոցա զեղեալսն, և մատոյց յորդոր և խրախոյս արիութեան և համբերութեան վասն փառացն Աստուծոյ.

Ընկալեալ Նափոլէոնի զնամակ քահանայապետին, կեղծեաց զանգիտութիւն գործելոյն 'ի Ֆոնթենպլօ. վասն որոյ նորոգեաց մերստին զոր կանխաւ յերեքտասան փետրուարի հրատարակեալ էր, ստիպելով զարքեպիսկոպոսունս և զամենայն ժողովս եկեղեցականաց վարել նոքօք իբր հարազատ և հաստատ դաշնադրութեամբք եղելովք ընդ քահանայապետին. Սակայն մինչ կարծեօք համարելով թէ պատճառ այլայլութեան միայն Պիոսի իցէ կարդինալն կոչեցեալ տի Փիեթրօյ, աքսորեաց զնա և պատուիրեաց ևս ամենայն գաղղիացի եկեղեցականաց օտարանալ 'ի քահանայապետէն. Նա ապա զայրագին ցասմամբ արգել կարդինալաց որք կային առ քահանայապետին՝ չխօսել և չտալ նմա խորհուրդ գիրաց ինչ, և ոչ ևս առնել թղթակցութիւն ընդ ումեք 'ի Գաղղիա. Որով և ինքն յայտ արար զստութիւն դաւաճանեալ դաշնադրութեանն, զոր համարէր կնքեալ ընդ Պիոսի. Սակայն քահանայապետն 'ի փարատել զերկմտութիւն ամենեցուն, յայտնի և անպատրուակ ունայնացոյց զհրատարակեալն զայն կարծեցեալ դաշնադրութիւն.

ԳԼՈՒԽ ԺԶ.

Յետին պարտութիւն Նաբոլէոնի 'ի դաշնակից տէրութեանց . և փոխադրութիւն Պիոսի Է. անդրէն 'ի Ռովմա ։

Ի ՄԻՋՈՑՍ երից ամաց ըստ անձուկ հանգամանաց ժամանակին 'ի կարգի եղեալ Նաբոլէոնի զներքին տագնապս սահմանաց իշխանութեանն , անյապաղ փութով և հնարիմաց ճարտարութբ գումարեաց զբանակ չորեքհարիւր հազար զինուորաց , և դիմեաց 'ի Գերմանիա մարտնչել ընդ Ռուսս ։ Բայց անակնկալ եգիտ անդ և այլ ոսոխ մարտակից Ռուսաց զօրութիւնն Բրուսիոյ՝ ութսուն հազար զօրօք ։ Սակայն և այնպէս զօրացաւ Նաբոլէոն և յաղթական գնաց 'ի Լուցէն 'ի մարտին որ եղև յերկրորդ աւուր մայիսի . բայց ոսոխք նորա խուսելով յետս 'ի կատաղի արշաւանաց Գաղղիացւոց , ստացան ինքեանց թիկունս օգնականութեան 'ի Շուեդաց , որք նոյնպէս թշնամի արձանացան Նաբոլէոնի ։ Յայս վիճակ անողորմելի թշնամութեան մինչդեռ 'ի պատրաստի կային բանակք երկոցունց կողմանց մատչել 'ի գէն , կայսրն Աւստրիոյ եհաս անդր զօրուծանու լինել միջնորդ հաշտութեան և խաղաղութեան համօրէն Եւրոպայ . և հաւանեցուցեալ զառաջնորդս հակառակամարտ բանակացն , տուաւ դադար զինուց 'ի չորս յունիսի , և որոշեցաւ ժողով միաբանական խորհրդոյ 'ի Փրակա քաղաք ։

Զխորհուրդ թագաւորացն ժամ գիտացող համարեալ Պիոսի , յօժարեցաւ 'ի քսան յուլիսի առնել ինքնագիր կոնդակ աղերսանաց առ կայսրն Աւստրիոյ Փրանկիսկոս՝ վասն ստանալոյ զկորուսեալ սահմանս իշխանութեան իւրոյ ։ Այս նամակ քահանայապետին մինչև ժամանեալ 'ի ձեռս կայսեր՝ անմխաբան գտեալ թագաւորաց 'ի խստասրտութենէ Նաբոլէոնի , ցրուեցաւ ժողովն ։ Բայց սակայն 'ի նուաճել զյանդուգն ամբարտաւանութիւն Նաբոլէոնի , միացաւ և կայսրն ընդ Ռուսս և ընդ այլ դաշնակիցս նորա , յաւելեալ 'ի զօրս նոցին և բանակ երկերիւր հազար զինուորաց ։ Ապա սկսեալ զմարտն 'ի քսանևեօթն օգոստոսի , յետ բազմապատիկ արիւնահեղ կռուոց յութուտասն հոկտեմբերի առ Լիփսիա քաղաքաւ յետին հարուած Նափոլէոնի , որով զերծան 'ի բուռն գերութենէ Գաղղիացւոց ամենայն սահմանք Գերմանիոյ :

Ընդ ժամանակն ընդ այնոսիկ այլով պարտութեամբ մարտի՝ Գաղղիացիք վարեցան և 'ի Սպանիոյ 'ի ձեռն Վելինկթոն զօրապետին անգղիացւոյ , որով բեկաւ բազուկ ամբարտաւանութեան Նափոլէոնի , և կորակոր դարձաւ յետս 'ի Փարիզ , անագան խելամուտ լեալ՝ թէ պարտ է 'ի չափու ունել զանյագութիւն բաղձանաց՝ քան ձգնել յաւելուլ սահմանս երկրի 'ի ստացուածս ժառանգութե : Նմին իրի փութացաւ անյապաղ յերրորդ աւուր ամսեանն դեկտեմբերի արձակել զՓրեդերիկոս Է. զարքայն Սպանիոյ 'ի չորեքամեայ արգելանաց , և տալ նմին զտէրութիւնն զոր նենգութեամբ և յափշտակութեամբ առեալ Նափոլէոնի և տուեալ էր եղբօր իւրում Յովսեփայ Պոնափառթեայ : Նոյնպէս խորհեցաւ թողուլ ազատ և զՊիոս Է. զբանտարկեալն յութևտասն ամաց հետէ 'ի Ֆոնթէնպլօ , բայց կամեցաւ նախ առնել ընդ նմա նոր դաշնադրութիւն . սակայն քահանայապետն մերժեաց զամենայն առաջարկութիւնս նորա :

Յայնմ տագնապեալ ժամու , որովհետև յաղթական զօրք դաշնակից տէրութեանց օր ըստ օրէ յառաջէին յընթացս դէպ 'ի Գաղղիա , փութացաւ Նափոլէոն փոխադրել զՊիոս 'ի Ֆոնթէնպլօյէ անդրէն 'ի Սաւոնա , պատուէր տուեալ Լակոս զօրապետին գործադիր լինել այնմ ըստ առաջնոյ օրինակին : Վասն որոյ 'ի քսան և երկու դեկտեմբերի իբրև ծանուցաւ քահանայապետին հրաման փոխադրութեան նորա , ընդ առաւօտն յետ լսելոյ զսուրբ պատարագն՝ ընկալաւ զայցելութիւն կարդինալաց , և զուարթագին դիմօք զեկոյց նոցա զուղևորութիւնն . և 'ի տալ անդ զյետին ողջոյնն հրաժարական՝ յաւել յորդոր քաջալերութեան հսկել և զգուշանալ 'ի դաւադիր բանից և 'ի կասկածելի առաջարկութեանց Նափոլէոնի 'ի վերայ հոգևոր և աշխարհական իշխանութեան սրբոյ աթոռոյն . Միանգամայն յուշ արար նոցա , զի 'ի դիպուածս հերձուածոյ, զոր տէր մի արասցէ՝ ասէ, զգուշասցին չօտարանալ յիւրմէ, որպէս և ոչ 'ի միմեանց· այլ միաբան և միախորհուրդ լիցին ընդ միմեանս, և մի երբէք կալցին հաղորդութիւն ընդ հերձեալսն, մանաւանդ ընդ նոսա որք առանց կանոնական հաստատութեան առաքելական աթոռոյն առեալ իցեն զպատիւ եկեղեցական պաշտամանց։ Զգուշասցին յընդունելոյ 'ի նոցունց զինչ և իցէ պատիւ մեծարանաց առանց նախընթաց իւրոյ հաւանութեան։ Նա եւ արթունք և անձնապահք իցեն չերևել յոր և է հրապարակական հանդէսս հերձուածողաց, որ կասկած տացէ հաւանութեան ընդ գործս նոցա, և պատճառ գայթակղութեան ուղղափառաց։ Արգել նոցա ընդունել 'ի հերձուածողաց ըղհասս և զեկամուտս 'ի պարէն, զի մի գործակից համարեսցին հերձուածոյ նոցա· այլ ակն ունել խնամոց տեսչութեանն Աստուծոյ և ողորմութեան բարեպաշտից որք ոչ պակասեն։

Յետ առանձնախօսութեանս հարկեցաւ զատանիլ 'ի կարդինալաց ցաւալից տխրութեամբ նոցա, և անկաւ յուղի ընդ Պէռթացցոլի եպիսկոպոսին ևեթ՝ իբր ծպտեալ և անծանօթ կերպարանօք որպէս լոկ եպիսկոպոս Իմոլա քաղաքի· և իբրև եհաս յՕռլէանս քաղաք՝ յայտնի եղև անդ 'ի ծանօթից, և պատուեցաւ 'ի ժողովրդենէ որպէս քահանայապետ Աստուծոյ։ Նա յետ այնորիկ ընդ ամենայն տեղիս հռչակ հարեալ՝ ուր և հասանէր՝ մեծահանդէս շքով ընդունէին զնա մինչև եհաս 'ի Սաւոնա։ Յետ մեկնելոյ Պիոսի Է. 'ի Ֆոնթէնպլոյէ՝ ել հրաման տարագրութեան և վեշտասան կարդինալացն որք կային առ քահանայապետին, աքսորելով զնոսին յայլ քաղաքս Գաղղիոյ։

ԳԼՈՒԽ ԺԷ.

Պիոսի Է. յաղթական փառօք դարձն 'ի Հռոմ։

Ի ՑԱՃԱԽԵԼ որ քան զոր ձախորդ արկածից 'ի Գաղղիա, և 'ի յառաջադիմել ստուար բանակի դաշնակից տէրութեանց՝ տագնապեալ՝ Նափոլէոնի՝ վայրապար ջանահնար լինէր վերստին միաբանել զսարտուցեալն յիւրմէ սակս անգութ և պատերազմասէր բարուցն, և լսել վասն ն̃ց 'ի խորհրդականաց անտի տէրութե̃ Գաղղիոյ դառն յանդիմանութիւնս ։ Սակայն և այնպէս անյուսահատ մտօք 'ի խորհէլն հաւաքել 'ի մի գէթ զհամախոհս իւր, և ահա դաշնակից տէրութիւնք ահեղ պատրաստութեամբ մերձենային յամենայն կողմանց 'ի մայրաքաղաք տէրութեան Գաղղիոյ ։ Ընկալութիւն օգնութեանն զոր ունէր՝ Նափոլէոն 'ի բանակէ անտի Թագաւորութեանն Իտալիոյ ունայնացաւ, 'ի լսելն ոչ միայն զաւեր բանակի իւրոյ, այլ և զմիանալ քեռայն իւրոյ Մուրատայ ընդ դաշնակից տէրութիւն· որով համօրէն վերին մասն Իտալիոյ զերծաւ 'ի ձե̃ռ Գաղղիացւոց ։

Տեսեալ՝ Նափոլէոնի զանդարմանելի հարուածն, փութացաւ ինքնաշարժ կամօք թողուլ յազատութիւն զՊիոս Է. վասն որոյ 'ի քսան մարտի ամին 1814 պատուէր ետ Լակօռս զօրապետին՝ գնդաւ միով ուղեկից լինել քահանայապետին մինչև յԻտալիա և 'ի Հռոմ յաթոռ տէրութեան իւրոյ ։ Ելեալ Պիոսի 'ի Սաւոնայէ 'ի քսանևհինգ մարտի, իբրև ժամանեցին 'ի հեղեղատն Թառօ, գտին անդ յայնկոյս հեղեղատին զխումբ մի աւստրիական դաշնակից զօրաց· լուեալ նոցա զազատութիւն քահանայապետին և զդարձն 'ի Հռոմ, խնդրեցին առնուլ զնա և տանել յաթոռ իւր· և Լակօռս զօրապետ յետ բազմադիմի երկմտութեանց՝ հուսկ ապա զիջաւ 'ի խնդիր աւստրիական զօրագլխին, որոյ կանգնեալ կամուրջ փայտաշէն էանց ընդ հեղեղատն, և ցնծալից սրտիւ ընկալաւ զՊիոս Է. 'ի ձեռաց Գաղղիացւոց· և իբրև անցոյց զնա յայնկոյս հեղեղատին, առ հասարակ զօրք երկոցունց կողմանց 'ի ծունկս անկեալ՝ մեծաձայն խնդրէին զօրհնութիւն նորա . իսկ քահանայապետն խնդալից դիմօք խաչակնքեալ 'ի վերայ երկոցունց բանակացն՝ հայրագութ սիրով օրհնեաց զամենեսին ։ Եւ ապա ել անտի 'ի Ճանապարհ՝ ուղեկից ունելով զխումբ մի աւստրիական զօրաց . և իբրև եհաս 'ի Մոտէնա քաղաք՝ ընդ առաջ եկին ցնծութեամբ բազմաթիւ ժողովուրդք , և դաս մի առոյգահասակ ազնուազգի երիտասարդաց լուծեալ զերիվարս կառաց քահանայապետին՝ ինքեանք ձգեցին զկառսն ընդ ծաղկասփիւռ փողոցս քաղաքին ։ Եւ յերեսներորդի առաջներորդի աւուր ամսեանն մարտի իբրև ժամանեաց 'ի Պոլոնիա՝ յերկիր տէրութեան իւրոյ , նովին մեծաշուք հանդիսիւ մուծին զնա 'ի քաղաքն . ուր տեսաւորեալ ընդ անգղիացի Լօրտ Պէնթինքայ՝ խնամակալուն արքայազնին Վալլեսի , ընկալաւ 'ի նմանէ զխնդակցութիւն սքանչելահրաշ ազատութեանն , և զուգերձ նպաստից յիսուն հազար ոսկւոյ 'ի պէտս ծախուց վերադարձին 'ի Հռովմ ։ Անդ 'ի Պոլոնիա եկն և Մուրատ քեռայր Նափոլէոնի , որ յուսով ապագայ օգտի իւրոյ՝ առ երեսս ցուցանէր զանձն խնդակից և պաշտպան իրաւանց քահանայապետին . նմին իրի և գրեաց յայտարարութիւն և յորդոր առ ժողովուրդն Հռովմայ դալ 'ի հպատակութիւն Պիոսի Է ։

Յետ կալոյ քահանայապետին զաւուրս ինչ 'ի Պոլոնիա , ուղևորեցաւ անտի յԻմոլա քաղաք յեպիսկոպոսարան իւր , ուր կատարեաց զհանդէս աւուրց սրբոյ շաբաթուն , և զկնի չորեքտասան աւուրց մեկնեցաւ անտի գնալ 'ի Չեզէնա քաղաք ծննդեան իւրոյ , տեսանել և սփոփել զվշտակիր քոյր իւր ։ Եկաց անդ զաւուրս տասն մինչև ցպատարկանալ քաղաքաց 'ի զօրաց թշնամեացն . և յինն մայիսի ամին 1814 գրեաց անտի կոնդակ յայտարարութեան առ հպատակս իւր , ծանուցանելով զհնգամեայ վիշտս տառապանացն և զնժդեհութեան զոր կրեաց 'ի հալածանս եկեղեցւոյ , և զհզօր ձեռն ամենակալին 'ի խնամարկելն զժողովուրդ իւր և յաղթեցուցանելն զնա անակնկալ հրաշիւք ։ Միանգամայն յորդոր մատուցանէր ամենեցուն 'ի հանդարտութեան և 'ի հպատակութեան կալ ընդ հայրական խնամովք տեսչութեան իւրոյ ։ Յոր սակս առաքեաց և գործակալս յայլ և այլ քաղաքս իշխանութեան իւրոյ, տալով հրաման առժամանակեայ կարգաւորութեան մինչև ցժամանել իւր 'ի Հռովմ։

Յետ այնորիկ եկեալ 'ի ճանապարհ, և անցեալ ընդ Սինիկալիա և ընդ Փոլինից անպատում խնդութեամբ ժողովրդեան և առ հասարակ բնակչաց երկրին՝ ընդ որս անցանէր, 'ի քսանևչորս մայիսի կամելով մուտ առնել 'ի Հռովմ՝ քսանևչորք ազնուատոհմ երիտասարդք սեւազգեստք լուծին զերիվարսն 'ի կառացն, և ցնծալից խնդութեամբ ձգեալ զկառս քահանայապետին՝ մեծանդէս փառօք մուծին 'ի Հռովմ։

Ի նոյն աւուրս ազատութեան Պիոսի 'ի Սաւոնայէ նոր տեսչութիւնն Գաղղիոյ եհան հրովարտակ ազատութեան և այլոց աքսորելոցն 'ի Նափոլէոնէ. յայս սակս արձակեցան կարդինալք, որք հետզհետէ աճապարեցին յընթացս ժամանել առ քահանայապետն նախ քան զմուտ նորա 'ի Հռովմ։ Ի սոցունց աստի էր և կարդինալն Փաքքա, որ որպէս հաղորդ գտաւ ծանրակիր վշտաց քահանայապետին յաքսորին 'ի Հռովմայ, նոյնպէս եմուտ ընդ նմա 'ի Հռովմ 'ի նոյն կառս բազմեալ։

Գլխաւոր և առաջին խնամք Պիոսի եղև կարգադրութիւն պաշտամանց սրբոյ աթոռոյն, որով բաշխեցան 'ի կարդինալս նախագահութիւնք զանազան հոգևոր ատենից։ Ապա կացուցան և այլ խնամատարք քաղաքական պաշտամանց. առաքեցան դեսպանք առ այլ և այլ տէրութիւնս, և առանձնակի 'ի Վիեննա քաղաք 'ի ժողով խորհրդոյ դաշնակից թագաւորաց։

Յայնմ ժամանակի յամենայն երևելի քաղաքաց իշխանութեանն Հռովմայ յաճախեցին դեսպանութիւնք առ քահանայապետն 'ի խնդակցութիւն դարձին, և 'ի նշան մտադիւր հպատակութեան ընդ հայրախնամ տէրութեամբ նորա։ Ի նոյն աւուրս յերեքտասան յունիսի յամին 1814 փութացաւ և դերապատիւ աբբահայրն միաբանութե Մխիթարեանց Ստեփանոս վարդապետ Ագոնց արքեպիսկոպոս՝ ուղեկցութեամբ մատենագրիս գնալ 'ի խնդակցութիւն քահանայապետին, յորմէ տասն ամօք յառաջ ընկալեալ էր զպատիւ արքեպիսկոպոսութեան։ Ընկալեալ երթ նարա 'ի Սենեակս 'ի ծերութեն հասակի եօթանասուն և հինգ ամաց՝ զարմացոյց զքահանայապետն, որ հայրագութ սիրով կրկին անգամ ընկալեալ զնա յունկնդրութիւն լիացոյց զմիաբանութիւնս առաքելական օրհնութեամբ :

ԳԼՈՒԽ ԺԲ.

Վերականգնումն ընկերութեան յիսուսեանց, և Նորոգութիւն այլոց կարգաց կրօնաւորաց :

ՊԻՈՍ Է. 'ի դարձին իւրում յաթոռ քահանայապետական իշխանութեան, տեսեալ զվնաս եկեղեցւոյ 'ի պակասութենէ կրօնաւորաց զորս թշնամիք հաւատոյ կանխաւ մենքենայեցին 'ի սպառ ջնջել նախ զմիաբանութիւն յիսուսեանց, և ապա ընդ ձեռն Նափոլէոնի զայլ կարգս կրօնաւորաց, անյապաղ խնամ կալաւ բարեկարգել զամենեսին : Նախ առաջին ձեռն էարկ կանգնել զմիաբանութիւն յիսուսեանց, առ որ յորդոր լինէին նմա և թագաւորք և իշխանք որպէս և ժողովուրդք առ հասարակ յամենայն հեռաւոր ազգաց, ըստ որում յայտ առնէ նա ինքն քահանայապետն յիւրում կոնդակին զոր արար 'ի նմին ամի 1814 յօգոստոսի եօթն : Պիւրացուցիչ վերանորոգութեան եղև կանխագոյն անեղծ պահպանութիւն կարգի նոցա 'ի Ռուսաստան, ուր 'ի յետին ժամանակս կային երեքհարիւր քառասուն և երկու անձինք ընդ առաջնորդութեամբ նախապատուն Հօրն Թադէոսի Պուրցովսքի, և ունէին վեց դպրոցս, մի նորընծայարան, և այլ հինգ վանատունս բնակութեան, պարապելով 'ի քարոզութիւն և 'ի հրահանգս դաստիարակութեան մանկանց :

Ի հրատարակել կոնդակի հաստատութեան կարգին յիսուսեանց, 'ի նմին ամի հաւաքեցան խմբովին ոչ միայն որոց ակամայ մերկացեալ էր զգեստ կրօնին, այլ և յոգունք յեկեղեցականաց և յաշխարհականաց, որք 'ի վաղուց հետէ փափաքէին այնմ միաբանութեան՝ մտանել ընդ լծով կանոնաց կարգին, որով 'ի դոյզն ժամանակի այնչափ բազմացան, մինչև սփռիլ 'ի մշակութիւն հոգւոց 'ի դաստիարակութիւն մանկանց 'ի դպրոցս ընդ բովանդակ Իտալիա, Լուսիտանիա, Սպանիա, Գաղղիա և յայլ ամենայն տէրութիւնս Եւրոպայ և Ամերիկայ.

Ի նմին ամի հրաման եղև վերանորոգութեան և այլոց կարգաց. բայց քանզի ստացուածք մենաստանացն կողոպտեալք և վաճառեալք էին 'ի Գաղղիացւոց, փոխարէն տուաւ նոցա 'ի քահանայապետէն չափաւոր թոշակ 'ի պարէն ըստ թուոյ անձանց և վիճակի կրօնաւորական կանոնաց իւրեանց։ Յաւուրս աւարհարութեան Հռովմայ եղեն և բարեպաշտք ոմանք յաղնուականաց, որոց գնոյ առեալ զմենաստանս կրօնաւորաց՝ 'ի վերանորոգել կարգին դարձուցին զայնոսիկ յետս առ նախկին տեարս իւրեանց.

ԳԼՈՒԽ ԺԹ.

Անդորրութիւն Պիոսի Է. և երջանիկ մահ նորա։

ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ քահանայապետն Պիոս զկնի ծանրակիր վշտաց իւր ընդ ամս չորեքտասան՝ 'ի դառնալ իւրում փառօք յաթոռ իշխանութեան իբրև ակն ունէր անդորր կենօք բարեկարգել զշփոթեալ կարգս կառավարութեան սահմանաց տէրութեան իւրոյ, և ահա յանակնկալս յամին 1815 յամսեանն մարտի յարեաւ մրրիկ խռովութեան փախստեամբ Նափոլէոնի յԷլբա կղզւոյ, որով վերստին նորոգեցաւ տագնապ տատանեալ ժողովրդեանն Եւրոպայ, մինչև Պիոսի ևս հարկ եղև խուսել 'ի Հռովմայ։ Բայց արթնութիւն և արիութիւն պատրաստագէն դաշնակից տէրութեանց՝ անյապաղ ժամանեալ 'ի վերայ շիջուցին զհրդեհն զոր կամէր կրկին արծարծանել. և կալեալ զնա տարագրեցին յՈվկիանոս 'ի հեռաւոր կղզին սրբուհւոյն Հեղինեայ, ուր վախճանեցաւ զկեանս իւր յամին 1821 'ի մայիսի հինգ։

Ի դադարել այնր հարևանցի մրրկի որ տևեաց իբր զամիս չորս, դարձ արարեալ քահանայապետին 'ի Հռովմ՝ ընկալաւ զաւետիս միաբանութեան 'ի ժողովոյ անտի դաշնակից թագաւորաց, որք միաբան հաւանութեամբ դարձուցին 'ի նա զամենայն աւարեալ սահմանս հռովմէական տէրութեան Իտալիոյ. և դատարկացին քաղաքք և ամրոցք 'ի դաշնակից զօրաց՝ տալով զամենայն 'ի ձեռս պարսկական զինուորաց ։ Յետ այնորիկ ըստ խորհրդոց և հաճութեան թագաւորացն իւրեանց համարեցան դարձուցանել առ իւրաքանչիւր տեարս և 'ի տեղիս զանգին յիշատակս հնութենց զկողոպտեալսն յայլ և այլ քաղաքաց ․ յոր սակս առաքեցաւ 'ի քահանայապետէն ճարտարարուեստն Կանովա , որ գնացեալ 'ի Փարիզ՝ զգուշաւոր խնամով դարձոյց յետս զամենայն աւարեալսն ոչ միայն 'ի քաղաքէն Հռովմայ , այլ և 'ի բովանդակ Իտալիոյ ։

Այս յամին 1816 հանդարտեալ Պիոսի յօտարոտի հոգոց և յահէ բռնամիտ ոսոխաց , ձեռն էարկ բարեկարգութեան եկեղեցական և քաղաքական վիճակաց ։ Եւ նախ 'ի մետասան մարտի ամբարձ 'ի պատիւ կարդինալութեան վեշտասան անձինս արժանաւորս զվշտակիրսն ընդ իւր 'ի հալածանս եկեղեցւոյ ։ Եւ յետ այնր 'ի նմին ամի 'ի քսանևերեք սեպտեմբերի յաւել 'ի նոսին և այլ հինգ այս արժանիս մեծի պատուոյն ։

Այս սկիզբն արար սահմանելոյ զնորանոր օրինադրութիւնս 'ի նորոգումն եղծեալ և աւերեալ կարգաց ընդ ամենայն գաւառս տէրութեան իւրոյ ։ Թեթեւացոյց զծանրաբեռն հարկսն եդեալս 'ի Գաղղիացւոց ․ արար զմատեան օրինաց տուրևառութեան ․ արգել զպատուհաս տանջանաց զոր երբեմն սովոր էին վարել 'ի յանցաւորս ․ խափանեաց զպատիժ մահապարտութեան հերետիկոսաց ․ մեղմացոյց զխստութիւն առ այլակրօն ժողովուրդս , որով շահեցաւ զսիրտս սառուցելոցն 'ի պապական իշխանութենէ , որք և յետ այնր սկսան յաճախել 'ի մտերիմ ընտանութիւն ընդ սրբոյ աթոռոյն ․ մինչև Անգղիացւոց 'ի շնորհս քահանայապետին ազատել զհարիւր յիսուն և վեց հպատակս պապին 'ի ստրկութենէ բարբարոսաց և ընծայել Պիոսի Է., և հանդէս ազատութեան նոցա կատարեցաւ 'ի Հռոմ 'ի քսանևչորս սեպտեմբերի յամին 1816 ։

Ընդ այն ժամանակս նորոգեցան վէճք 'ի վերայ բռնադատեալ դաշնադրութեանն եղելոյ ընդ Նաբոլէոնի յամին 1801 , որով զրկեալ կային յաթոռոյ բազում եպիսկոպոսունք , և ստացուածք եկեղեցւոյ զրաւեալ էին յարքունիս ․ նմին իրի 'ի խաղաղել զսիրտս ամբոխեալ՝ յամին 1817 'ի յունիսի մետասան արարաւ նոր դաշնադրութիւն ընդ Լուդովիկոսի ԺԸ. արքային Գաղղիոյ. Զնոյն դաշն եկեղեցական բարեկարգութեան արար քահանայապետս և ընդ արքային Պաւերայի 'ի հնգետասան նոյեմբերի այնր ամի. Յաջողութիւն դաշանցս այսոցիկ յորդոր եղև և թագաւորին Բրուսաց առնել ընդ քահանայապետին նոյնօրինակ կարգաւորութիւնս ինչ 'ի վերայ ուղղափառ հպատակաց տէրութեան իւրոյ, ըստ որում յայտ առնէ նա ինքն քահանայապետն յատենախօսութեան իւրում առ կարդինալս յամին 1821 'ի մարտի քսանևհինգ. Ապա ըստ խնդրոյ թագաւորացն Սաբաւդիոյ և Նէապօլսոյ նորոգեցան 'ի ձեռն քահանայապետիս բարեկարգութիւնք եկեղեցական վիճակաց՝ այլայլեալքն 'ի պատճառս բռնակալութեան Նափոլէոնի.

Նոյն և այլ պանծալի յաջողութիւնք 'ի խնդութիւն սրտի վշտակիր քահանայապետիս. զի յամին 1821 'ի ձեռն հոգևոր զինու նզովից նուաճեցան խաժամուժ ամբոխք ապստամբաց 'ի Բենեւէնտա, 'ի Փոնթէքորվօ, և յայլ գաւառս տէրութեան իւրոյ. Յայսոսիկ աստուածահրաշ յաջողութիւնս մեծապայծառ ցուցաւ և հոգևոր հանդէս երանութեան երեցունց ծառայիցն Աստուծոյ, որք կարգեցան 'ի նմանէ 'ի դասս երանելեաց. Նոցին զատակցութեան փափաքելով և ինքն՝ երկամսեայ տկարութեամբ յաղթ ծերութեան ութսուն և մի ամաց լի արդեամբք փոխեցաւ առ Աստուած 'ի քսան օգոստոսի յամին 1823, կացեալ 'ի քահանայապետութեան զամս քսանևերեք, զամիսս հինգ և զաւուրս վեց.

ԳԼՈՒԽ Ի.

Քահանայապետութիւն Լևոնի ԺԲ. և Պիոսի Ը.

ՅԵՏ մահուանն Պիոսի Է. յաջորդ քահանայապետութեան ընտրեցաւ կարդինալն Աննիբաղ Ճէնկա որ անուանեցաւ Լևոն ԺԲ. Թագադրութիւն նորա եղև 'ի հինգ հոկտեմբերի յամին 1823. Այր իմաստուն, արդարակորով և զգաստ 'ի տեսչութիւն. հայրագութ սիրով թեթևացոյց 'ի ժողովրդեանն ինչ ինչ 'ի քաղաքական հարկաց զորս նախորդ իւր առ կարօտութեան ժամանակին յաւելեալ էր 'ի սահմանս եկեղեցական տէրութեան · արար և հանրական փոփոխութիւնս պաշտօնատարաց ։

Ընդ այն ժամանակս յետ գաղղիական խռովայոյզ ապստամբութեանն զօրացեալ էր հոգի անխտրութեան 'ի հաւատոյս ինքնահաւան մտօք մեկնելով զբանս սուրբ գրոց · այսմ աղանդոյ հեղինակ ճանաչի ընկերութիւն ինչ Անգղիացւոց, որք 'ի սկիզբն դարուս սկսեալ 'ի 1805 ամէն մինչև 'ի 1825 ընդ պատրուակաւ բարենախանձ ջերմարտասիրութեան և օգտի հասարակաց տպագրեալ էին հինգհարիւր հազար օրինակս Աստուածաշունչ մատենից 'ի հարիւրիւ չափ այլ և այլ լեզուս, զորս դիւրագին վաճառելով և ստէպ ձրի բաշխելով տարածեցին ընդ ամենայն կողմանս աշխարհի առ 'ի տալ համարձակութիւն ամենեցուն ըստ կամս իմանալոյ և բացատրելոյ զսուրբ գիրս ։ Ի գարնան այսմ չարահնար պատրանաց Լեւոն ԺԲ. գրեաց կոնդակ հանրական առ ամենայն եպիսկոպոսունս և առաքելական փոխանորդս՝ պատուիրելով նոցա հսկել 'ի թեմս իւրեանց, և զառաջս առնուլ դաւադիր նենգութեան թշնամեացն հաւատոյ ։ Մանաւանդ զի յոլովք 'ի նորանոր թարգմանութեանց անտի չէին հարազատք և վաւերք ։

Յետ այնորիկ յօժարեցաւ քահանայապետս 'ի հոգևոր մխիթարութիւն ուղղափառ ժողովրդեան բանալ զգանձս հոգևոր բարեաց եկեղեցւոյ, հրատարակելով զամ յոբելեան շնորհաբաշխութեան զընդհատեալն քսանևհինգ ամօք յառաջ 'ի պատճառս խռովութեանց Եւրոպայ ։ Վասն որոյ յամին 1824 յաւուր համբարձման տեառն ըստ սովորութեանն եհան յայտարարութիւն 'ի պատրաստութիւն սրբոյ տարւոյն, որ հանդերձեալ էր սկզբնաւորիլ 'ի քսանևչորս դեկտեմբերի այնր ամի ։ Յայնմ ժամանակի մինչև ցժամանել սահմանեալ աւուրն խուռն բազմութեամբ յամենայն քաղաքաց հաւաքեցան 'ի Հռոմ կատարել զուխտս ջերմեռանդութեան իւրեանց, և ստանալ զշնորհս անգին գանձուց արդեանցն Քրիստոսի ։ Գլխաւոր օրինակ բարեպաշտութեան հանդիսացաւ նոյն ինքն քահանայապետն, որոյ պարագլուխ լեալ եօթանասուն և երկուց *պանդուխտ ուխտաւորաց՝ հետիոտս և անկօշիկ գնալ յայցելութ՟ի չորեցունց տաճարացն սահմանելոց յուխտագնացութիւն ։ Իսկ որ առաւել զարմանալին է և պատճառք շինութեան հասարակաց՝ ախորժանօք գնալ և յայցելութիւն հիւրանոցաց պանդխտից և աղքատաց՝ լուանալ զոտս նոցա և կերակրել զնոսին ։ Յետ այնորիկ 'ի լրանալ համդիսի 1825 տարւոյն արար կոնդակ շնորհաբաշխութեան և ընդ համօրէն տիեզերս՝ բաշխելով ամենեցուն զնոյն շնորհս յոբելեան ներողութեանց, պայմանեալ ժամանակաւ վեցամսեայ աւուրց ։*

Յայս ամենայն հոգւոր զբաղմանս իւր ոչինչ թուլացաւ և 'ի հայրախնամ տեսչութ՟էն յաղագս հպատակաց իւրոց, վերածելով 'ի լաւագոյն վիճակ բարեկարգութ՟ զսահմանադրութ՟իւ նախորդին իւրոյ Պիոսի Է ։ Զվարժարանն Հռոմէական (Գօլլէճիօ Ռօմանօ) որ 'ի նախնի ժամանակս էր 'ի ձեռս յիսուսեան կրօնաւորաց, և յորմէ զրկեալ էին 'ի յիսուն և չորից ամաց հետէ, Լևոն քահանայապետ առանձին կոնդակաւ վերստին յանձն արար նոցա, միանգամայն պատուիրեաց կանգնել և զայլոց դաստիարակութեան մանկանց ազնուականաց 'ի հրահանգել զմիտս նոցա յուսմունս գիտանիս և 'ի սէր աստուածպաշտութեան ։ Զնոյն խնամ կալաւ և 'ի համալսարանն Սաբիէնցա կամ Իմաստութիւն անուանեալ, նորակարգ օրինօք սահմանեալ կանոնս յառաջադիմութեան ուսմանց, խլելով զարմատս մոլար սկզբանց և վարդապետութեանց ծաւալելոց ընդ համօրէն Իտալիա յաւուրս գաղղիական խռովութեանց ։

Ընդ հոգս բազմազբաղ տեսչութեանն կամեցաւ մտանել և քաղաքաշէն պայծառութեան մայրաքաղաքին ․ յոյր սակս ձեռն արկ վերստին շինութեան հոյակապ տաճարի սրբոյն Պօղոսի, որ իբր երկամօք յառաջ դիպուածական հրդեհիւ յաճիւն դարձեալ էր ․ վասն որոյ յամին 1825 եհան կոնդակ առ ամենայն ուղղափառս նպաստամատոյց լինել 'ի վերականգնումն այնր մեծագործ տաճարի, և արդիւնացաւ յորդոր քահանայապետին առատանուէր նպաստիւք յամենայն կողմանց աշխարհի, որով եդին զհիմն, և որ ըստ օրէ սքանչելի յօրինուածով 'ի գլուխ ելանէ գործն ։

Յամին 1826 զկնի յոբելեան ամի ետ զպատիւ կարդինալութեան զանազան անձանց արժանաւորաց, որպէս և զկոնդակ հաստատութեան եպիսկոպոսացուաց այլ և այլ վիճակաց և անհովիւ աթոռոց ։ Ընդ որս ընկալաւ 'ի նմանէ և գերապատիւ ընդհանրական արքահայրն միաբանութեան մերոյ Սուքիաս վարդապետ Սոմալեան՝ զաստիճան արքեպիսկոպոսութեան . որոյ օծումն ձեռնադրութե՛ն եղև 'ի պատրիարգէն Վենետկոյ 'ի Վլատիսլաւայ Փիրքէր ։

Յաւուրս քահանայապետութեան սորա 'ի կողմանս Գաղղիոյ յարեաւ խռովութիւն ընդդէմ առաքելաշնորհ քարոզչաց՝ որք ըստ նախնի սովորութեան կամէին կանգնել զնշան խաչի 'ի բացօթեայ վայրս 'ի ջերմեռանդութիւն հաւատացելոց ։ Ի սաստկանալ աղմկին յերեսաց յանդուգն թերահաւատից՝ առ խափանելոյ զայն գործ բարեպաշտութեան, 'ի գիւղն Մ՝ինիէ՝ հուպ Փուաթիէ քաղաքի յամսեանն դեկտեմբերի յամին 1826 'ի կանգնելն հանդիսիւ զնշան խաչին առ երի եկեղեցւոյ գեղջն՝ 'ի մուտս արեգական լուսափայլ տեսլեամբ երևեցաւ յօդս երկրպագելի նշան սրբոյ Խաչին, հարիւր և քառասուն ոտնաչափ տարածութեամբ հովանացեալ 'ի վերայ համօրէն ժողովրդեան՝ իբր երից հազարաց . ընդ որ հրաշացեալ առ հասարակ տեսողացն, գրեցաւ 'ի զանազան մատեանս քաղաքական յիշատակարանաց, և հաւաստի նամակօք ծանուցաւ առ քահանայապետն Լևոն . նորա լուեալ զնորահրաշ սքանչելիսն, գրեաց առ եպիսկոպոսն Փուաթիէ քաղաքի կոնդակ յութուտասն ապրիլի յամի 1827, յորում խնդակցեալ ընդ նորանշան տեսիլ աստուածագործ յայտնութե՛ն՝ առանձնական պատմամբ հաւանի ընծայել զայն հրաշիցն Աստուծոյ, և ոչ բնական դիպաց ։ Յոր սակս պարգևեաց եկեղեցւոյն Մ՝ինիէի ոսկեղէն խաչ, ամփոփեալ 'ի նմա զմասն 'ի կենաց փայտէն Քրիստոսի, շնորհելով եկեղեցւոյն և զլիակատար ներողութիւն ամ ըստ ամէ յաւուր յիշատակի հրաշանշան երևմանն ։

Հոգեջան արթնութիւն բարեյիշատակ քահանայապետին յօգուտ հասարակաց ընդ վաստակս եկեղեցական բարեկարգութեան՝ յաւել ճոխացուցանել զվատիկանեան գրատունն ընտիր մատենիւք ազատական արուեստից ։ Նորոգեալ ծաղկեցոյց զդպրոցն Իերնեան՝

առ 'ի դաստիարակութիւն առաքելական քարոզչաց, խնամարկու լինելով ոչ միայն պաշտպանութեան հօտին Քրիստոսի յերեսաց հակառակորդաց, այլ և շահելով զբազումս յերևելի արանց որք դարձան 'ի Ճշմարիտ կրօնս աստուածպաշտութեան, և կենդանութեամբ իւրեանց վկայք են ցարդ ասացելոցս.

Յամին 1828 որ էր յետին ամ ցանկալի կենաց նորա, մեծափառ հանդիսիւ կարգեաց 'ի դասս երանելեաց զքանի մի սրբակրօն ծառայս Աստուծոյ. Սակայն 'ի վերայ ամենայն պանծալի գործոց իւրոց հրաշափառագոյն հանդիսացոյց զհայրական խնամս զօրավիգ հովուապետութե իւրոյ առ վշտակիրս ոմանս յազգէս մերմէ, որք 'ի սմին ամի տագնապեալ 'ի դառնաղէտ հալածանաց համազգեաց դիմեցին առ հայրագորով գթասիրութե նորա, և գտին զձեռնտուութիւն 'ի մարմնաւոր և 'ի հոգևոր պէտս կարօտութեան իւրեանց. Նաև 'ի հասարակաց աղօթից՝ զոր պատուիրեաց ամենայն ուրեք վասն նոցա, ինքն իսկ քահանայապետն հանդերձ պալատականօք կանխէր յաղօթս յեկեղեցւոջ Ուրբանեան դպրոցին, ուր իննօրեայ հանդիսիւ մատչէին աղօթք և պաղատանք առ Աստուած վասն հալածելոցն. Ի վտարանդի տարագրելոց անտի պատսպարեալքն 'ի Հռովմ անձինք իբր յիսունք՝ դարմանեցան յառատապարգև ողորմութենէ նորա. Նոյնպէս և աքսորեալքն յայլ և այլ սահմանս Փոքուն Ասիոյ և 'ի Յունաստան՝ ընկալան ընդ մարմնաւոր պիտոյից և զհոգևոր մխիթարութիւնս, առաքելով առ նոսա ծպտեալ կերպարանօք հոգեջան քարոզիչս առ մատակարարութիւն խորհրդոց եկեղեցւոյ՝ 'ի քաջալերութիւն վշտաց նոցա.

Զայսոսիկ հայրական խնամս բարեգթութեան իւրոյ ոչ շատ համարեալ, յաւել ևս ինքնագիր նամակօք առնել զաղերս միջնորդութեան առ Թագաւորս Աւստրիոյ և առ կայսրն Ռուսաց՝ որ զայնու ժամանակաւ զբաղեալ էր 'ի կռիւ մարտի ընդ օսմանեան տէրութեան, խնդրելով 'ի նոցանէ՝ զի 'ի յաջողել աստուածապարգև հաշտութեան շնորհեսցի ուղղափառաց համարձակութիւն պաշտաման իւրեանց. Ազդուութիւն խնդրուածոյ սրբազան քահանայապետիս պտղեցաւ փառօք, թէպէտ և ինքն չեղև ականատես բարեյաջող ելից իւրն դրոյն ։ Զի յամին 1829 յերկրորդ աւուր փետրուարի յետ կատարելոյ զհանդէս տօնախմբութե աւուրն անկաւ 'ի մահիճս, և սակաւօրեայ դժուարակիր հիւանդութեամբ վախճանեցաւ յերեքտասան այնր ամսոյ, կացեալ 'ի քահանայապետութեան զամս հինգ, զամիս չորս և զաւուրս երեքտասան ։

Յետ վախճանի նորա գումարեալ կարդինալաց 'ի ժողով ընտրութեան, յերեսներորդի առաջներորդի աւուր ամսեանն մարտի այնր տարւոյ վճռեցաւ զահակալութիւն քահանայապետութեան կարդինալ Քասթիլիոնեայ, որ անուանեցաւ Պիոս Ը. Թագադրութիւն նորա եղև 'ի հինգ ապրիլի յաւուր յիշատակի սրբոյն Պիոսի հինգերորդի . սակայն հանդէս ժառանգութեան աթոռոյն կատարեցաւ 'ի քսանեչորս մայիսի ։

Բարեբաստիկ գտաւ քահանայապետութիւն սորա, զի յաւուրս սորա գահակալութեանն երևեցան խնամք աստուածային այցելութեան յուղղափառս Անգղիացւոց, որք 'ի տէրութենէ իւրեանց ընկալան շնորհս ազատութեան յազգային հարստահարութենէ, որով մեղմացաւ սաստկութիւն զոր ունէին նոքա ընդդէմ ուղղադաւան ազգայնոց իւրեանց, և եղև անարգել համարձակութիւն եկեղեցական պաշտամանց՝ 'ի յորդոր դարձի բազմաթիւ մարդկանց 'ի ճշմարիտ կրօնս աստուածպաշտութեան ընդգրկելով զդաւանութիւն հռովմէական սուրբ եկեղեցւոյ ։

Նոյնպիսի պարգև աստուածային խնամոց ցուցաւ 'ի նմին ամի և առ ազգս մեր որ յերկուց ամաց հետէ տագնապէր 'ի վիշտս հալածանաց ։ Քանզի 'ի դադարել մարտի Ռուսաց ընդ օսմանեան տէրութեան՝ միով 'ի պայմանաց անտի հաշտութեանն որ եղև յԱդրիանուպօլիս 'ի չորեքտասան սեպտեմբերի յամին 1829, սահմանեցաւ ազատութիւն ամենայն աքսորելոց, և շնորհք համարձակութե անարգել պաշտամանն ուղղափառ հաւատոյ . միանգամայն 'ի կարճել առ յապա զամենայն պատճառս հակառակութեան՝ կարգեցաւ 'ի տէրութենէն առանձին գլուխ՝ իբր ազգապետ ուղղափառաց, անուանելով զնա պատրիարգ Կաթոլիկ ժողովրդեան ։ Զայս ազատութիւն հրաշագործ փառօք պայծառացոյց սրբազան քահանայապետն Պիոս Ը., կանգնելով 'ի Սր տանդնուպոլիս զաթոռ արքեպիսկոպոսութեան ուղղափառաց, որոց առաջին նախագահ անուանեցաւ Անտոն վարդապետ՝ Նուրիճանեան, և ընկալաւ զօծումն ձեռնադրութեան 'ի Հռովմ՝ յամին 1830 'ի մետասաներորդ աւուր ամսեանն յուլիսի :

Ընդ բերկրական մխիթարութեանս եղեն և վիշտք տխրականք 'ի յետին ամիս ցանկալի կենդանութեան նորա : Այն 'ի գլխաւոր պատճառաց վշտաց նորա և ցաւոյն եղև օրէնադրութիւն բողոքական լուտերական իշխանաւորաց Գերմանիոյ, որք ազգային հաւանութեամբ սահմանեցին կանոնս 'ի խափանել զամենայն հաղորդակցութիւն ընդ աթոռոյն Հռովմայ : Ի սոյն վիշտս յաւելաւ և տագնապ անակնկալ խռովութեան Գաղղիացւոց՝ 'ի մերժելն զթագաւոր իւրեանց զԿարոլոս Ժ., և փոխանակ նորա դնել զՓիլիպպոս Լուդովիկոս, յորում ժամանակի վտանգեցաւ և խաղաղութիւն եկեղեցւոյն Գաղղիոյ : Ի հոգետանջ խորհրդոցն զայրացեալ տկարութեան սրտակիր մարմնոյ քահանայապետին, վախճանեցաւ յերեսներորդ աւուր նոյեմբերի յամին 1830, կացեալ 'ի հովուապետութեան զամիս ութևտասն :

ԳԼՈՒԽ ԻԱ.

Կաթուղիկոսունք և վիճակ եկեղեցւոյն Հայոց :

Ի ՎԱԽՃԱՆԵԼ Գուկասու կաթուղիկոսի կարնեցւոյ, զոր յիշատակեցաք 'ի նախընթաց գլուխ, միաբանք Էջմիածնի ծանուցին 'ի Կոստանդնուպոլիս առ իշխանս ազգին որոց անկ է ընտրութիւն նորոյ կաթուղիկոսի. և մինչդեռ 'ի խորհրդեան էին անուանել զոք, Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեան Երկայնաբազուկ անուանեալն, նուիրակ Ռուսաստանի՝ ջանահնար եղև 'ի ձեռն այնր տէրութեան զրաւել զաթոռն Էջմիածնի. և զի իշխանք ազգին չէին ձեռնհաս զդէմ ունել առաջարկութեան և խնդրոյ կայսերն Ռուսաց, բռնադատեցան յակամայ կամս հաւանել այնմ, և առնուլ զհրովարտակ հաստատութեան նորա 'ի տէրութէ Օսմանեանց, և հրաւիրեցին զնա յաթոռ իշխանութեան :

Յովսէփ Գ. Արղութեանց յամին 1800 ուղեւորեալ յԷջմիածնէն, իբրև եհաս 'ի քաղաքն Տփխիս, մեծահանդէս փառօք հիւրընկալեալ յազգայնոց՝ 'ի սակաւ աւուրս անակնկալ մահուամբ փոխեցաւ և թաղեցաւ 'ի նմին քաղաքի։ Ի լուր մահուն Յովսեփայ եբեր 'ի Կոստանդնուպօլիս Դաւիթ եպիսկոպոս տփխիսեցի միաբան Էջմիածնի. վասն որոյ իշխանք Հայոց ընտրեցին 'ի կաթողիկոսութիւն զԴանիէլ պատրիարգ Կոստանդնուպօլսոյ, յոր սակս փութացաւ Դաւիթ եպիսկոպոս դառնալ յԷջմիածին իբր աւետաւոր ընտրութեան Դանիէլի. սակայն 'ի ժամանելն նորա՝ կալաւ ինքն զաթոռ կաթողիկոսութեան, որով եղեն վէճք 'ի մէջ Դաւթի և Դանիէլի իբր ընդ ամս երկուս, մինչև զօրացեալ Դանիէլի ձեռնտուութեամբ իշխանաց ազգին եմուտ յԷջմիածին և նստաւ յաթոռ կաթողիկոսութեան յամին 1802, և վարեաց զիշխանութիւնն զամս ութ։

Յետ նորա յամին 1810 կալաւ զաթոռն Եփրեմ վարդապետ զամս իբր քսան և մի։ Յաւուրս սորա 'ի պատրիարգութեան Պօղոսի և Կարապետի 'ի Կոստանդնուպօլիս՝ անցին աղետալի անցք թշնամութեանն և հալածմանց ընդ համազգիսն ուղղափառս, որք քաջածանօթք են ամենեցուն, և զորոց զկարևորագոյն դէպսն ցուցեալ վերագոյն 'ի նախընթացս գլուխն՝ ոչ պատշաճ համարիմ մանրապատում կրկնագրել զաշխարհածանօթ նախատինս ազգիս։

Ի կնի մահուան Եփրեմայ կաթողիկոսի, յամին 1831 հրովարտակաւ կայսեր Ռուսաց կալաւ զաթոռն Յովհաննէս վարդապետ կարբեցի, որ յետ մետասան ամաց կաթողիկոսութեան փոխեցաւ յամի տեառն 1842 'ի քսանևվեց մարտի, և յաջորդեաց զնա՝ Ներսէս Ե. արքեպիսկոպոս, որ և ունի արդ զաթոռն։

ԳԼՈՒԽ ԻԲ․

Քահանայապետութիւն Գրիգորի ԺԶ․

ՅԱՒՈՒՐՍ յետին խռովութեան Գաղղիոյ փոխանեցաւ Պիոս Ը․ և մինչդեռ ժողով կարդինալաց 'ի Հռոմ պատրաստէր 'ի խորհուրդ ընտրութեան նորոյ քահանայապետի՝ յուզէին և յԻտալիա գաղանի խորհուրդք ապստամբութեան, յորդորեալք յօրինակէ անտի Գաղղիացւոց, յորոց ակն ունէին գտանել իրեանց թիկունս օգնականութեան ։

Արդ 'ի յաջողել տեառն յետ յիսուն աւուրց խորհրդոց կարդինալաց յամին 1831, 'ի փետրուարի 2 միաձայնեցաւ ընտրութիւն կարդինալ Մաւրոսի Քափելլարեայ պէլլունեցւոյ, որ անուանեցաւ Գրիգոր ԺԶ․ և 'ի 6 այնր ամսոյ կատարեցաւ հանդէս թագադրութեան նորա ։ Այլ մինչդեռ քաղաքն 'ի ցնծութեան էր ընդ ընտրութիւն արժանաւորի անձին, և ահա լսելի եղև գոյժ ապստամբութեան Պոլոնիա քաղաքի, ուստի յանդգնեցան խաժամուժ ամբոխն դիմել մինչև 'ի մօտաւոր սահմանս Հռոմայ․ սակայն թուլացան յարշաւանաց իւրեանց՝ տեսեալ զարիական խրոխտս առ հասարակ ժողովրդեան մայրաքաղաքին 'ի զինել ընդդէմ նոցա առ 'ի պաշտպանութիւն նորընտիր քահանայապետին և իշխանութեան սրբոյ Աթոռոյն ։ Միանգամայն ընդ այն աւուրս վաղվաղեցին և արտաքին տէրութիւնք ժամանել 'ի թիկունս օգնականութեան առ 'ի նուաճել զապստամբս, որով առիթեցան գլխաւորք խռովարարաց խուսել յԻտալիոյ և փախչել յայլ և այլ կողմանս աշխարհի ։ Իսկ Գրիգոր քահանայապետ ընդ գահակալել իւրում խնամ կալաւ բառնալ զառիթս տհաճութեան հպատակաց իւրոց, և բարեկարգ տնտեսութեամբն գրաւել զսիրտս ամենեցուն ։ Ջան էարկ ապա զարդարել զՀռոմ գեղեցիկ շինուածովք․ ընդարձակեաց և ճոխացոյց զթանգարան հնութեանցն որ 'ի Վատիկան․ յաւել հաստատել և թանգարան նոր հնութեանց Եգիպտացւոց ։ Փոյթ և խնամ կալաւ 'ի յառաջադիմութիւն շինուածոց հոյակապ տաճարի սրբոյն Պօղոսի, որում ընծայարէր եղև փոխարքայն Եգիպտոսի Մէհէմմէտ Ալի ազնիւ և մեծագին ապարաւոր քարամբք, յորոց տաշեցան սիւնք գեղեցիկք 'ի զարդ վայելչութեան տաճարին, և քահանայապետն փոխարէն առաքեաց նմա ընծայս ազնիւս և մեծագինս ։

Այլ յայս ամենայն յաջողութիւնս չարակամեցին և վիշտք 'ի ցաւս սրտի քահանայապետին ։ Սպանիա 'ի բազում ամաց հետէ ասպարէզ լեալ քաղաքական ընդանի մարտից և հերձուածոց՝ եգիտ իւր պատճառս ծանրացուցանելոյ զձեռն իւր 'ի վերայ եկեղեցեաց և եկեղեցականաց. յափշտակեաց կալաւ զինչս նոցա և զստացուածս, խափանեաց զթոշակն և հալածէր զնոսա, մինչև բազմաց քահանայից և եպիսկոպոսաց խոյս տալ և անկանել 'ի Գաղղիա, և մանաւանդ 'ի Հռոմ, զորս գթութեամբ բազմաւ ընկալեալ խնամարկէր քահանայապետն. և թէպէտ քաղցրութեամբ և աղերսիւ բողոք ևս կալաւ առ պետութիւնն Սպանիացւոց դարման առնել չարեացն և անտերունչ մնացելոցն եկեղեցեաց, բայց չեղև լսելի ։

Նա և 'ի Ռուս և 'ի Լեհաստան ուժգին ևս բորբոքեցաւ հալածումն 'ի վերայ ուղղափառաց 'ի հրամանէ պետութեանն, որոյ կամք էին միաբանել զնոսա 'ի մի խոստովանութիւն դաւանութեան եկեղեցւոյն իւրոյ. որպէս և միաբանեցին իսկ Ռութէնքն անուանեալք յունադաւան ուղղափառք քահանայիւք և եպիսկոպոսօք հաստատեալք 'ի հռոմէական եկեղեցւոյ։ Ընդ որ հաբեկեալ վշտացեալ Գրիգորի ԺԶ, ուժգին և արիաբար բողոքեաց առ պետութիւն Ռուսաց, և ուժգնագոյն ևս խօսեցաւ ընդ ինքնակալին Նիկողայոսի յուղևորել նորա յԻտալիա յամի 1845 ։ Զի 'ի գնալ նորա և 'ի Հռոմ իբրև յայց էր քահանայապետին, ասէ ցնա քահանայապետն առաքելական իմն համարձակութեամբ. «Տարաբաղդ յոյժ զանձն իմ համարիմ զի երկայնակեաց եղէ ցայսօր ցուցանել մեծի ինքնակալիդ զերկնաւորն Ճշմարտութիւն»։ Խռովեցաւ ինքնակալն ընդ յեղակարծ բանն և ասէ. «Սակայն չէ պարտ հաւատալ ամենայնի զոր պատմեն լրագիրք»։ Այլ քահանայապետին բազում հաւաստեօք ցուցեալ զատուգութիւն բանից լրագրացն, իբրև զօրէնս պետութեան առնոյր պատճառել ինքնակալն՝ ասէ. «Օ մարդկային օրէնաց մարթ է ինքնակալին փոփոխել. իսկ իմքն աստուածայինք են, որոց հարկ է ինձ հպատակել։ Երկոքեան իսկ թագաւորք եմք, բայց այս խտիր է ընդ իս և ընդ քեզ, զի քոյդ թագաւորութեանդ օրէնք փոփոխելիք, իսկ իմքս անփոփոխք են։ Երկոցուն մեզ յանդիման լինել կայ առաջի գերագոյն դատաւորին. և թէպէտ անագան՝ սակայն զհետ իմ եկեսցես, տէր արքայ, և երկոքին տացուք համարս զտեսչութենէ թագաւորութեանս մերոյ։ Այս է ահա որ ստիպէն զիս պաշտպան կալ որդւոցն իմոց հաւատացելոց որ յերկրի քում են»։ Յահեղ և 'ի հզօր բանից քահանայապետին խռովեցաւ յոյժ ինքնակալն, և բուռն հարեալ զաջոյ նորա համբուրէր յարգութեամբ կրկին և երեքկին. խոստանայր քննել իմանալ զամենայն և հաճել զկամս նորա։ Եւ թէպէտ ոչ ըստ խոստմանն և արդիւնք իրացն եղեն, բայց քահանայապետին չեղև ժամանակ տեսանելոյ զայն. զի ոչ եւս յերկարեալ 'ի կեանս իւր վախճանեցաւ յառաջնում աւուր ամսեանն յունիսի յամի 1846։ Սակաւ ինչ յառաջ քան զվախճան իւր 'ի նշանակ սիրոյ իւրոյ և մեծարանաց առ ուխտս Մխիթարայ յղեաց զանդրի իւր ճարտարագործ 'ի նուէր յաւերժական յիշատակի։ Եւ ամենայն աւուրք քահանայապետութեանն Գրիգորի ԺԶ. եղեն ամք հնգետասան և ամիսք չորք։

Յետ մահուան նորա և յետ հանդիսից յուղարկաւորութեանն, փութացան ծիրանաւորքն 'ի 14 նորին ամսեանն յունիսի մտանել 'ի փակարանն յընտրութիւն նորոյ քահանայապետի, և անակնկալ յաջողութեամբ յաւուրն երրորդի որ օր 16 էր ամսոյն՝ ընտրեցաւ ծիրանաւորն Յովհաննէս Մարիա Մասթաի Ֆերրէթթի, որ եպիսկոպոսն էր Իմոլա քաղաքին, և կոչեցաւ ՊԻՈՍ Թ., և եղաւ զթագ քահանայապետութեան։

Փութով և առժամայն ընտրութիւն նորա հաւաստիք էին մեծի հանճարոյն և արժանաւորութեան այնմ բարձրագոյն գահու, զոր և արդիւնք իրացն հաստատեցին։ Ի բազմախռովանաց ժամանակի և 'ի դժուարին հանգամանս եկեղեցւոյ կացեալ քահանայապետ, մինչ ստիպք բազումք և թշնամիք խժոռ ակամբ հայէին 'ի

Հռովմ, և ժողովուրդ իսկ Հռովմայ տժգոհք և դժկամակք մնացեալ սպառնային խռով և ամբոխութիւն, անդէն 'ի գահակալել իւրում գիտաց խնամոտն տեսչութեամբ և խոհական հնարիւք յինքն պարուրել ըզմիտս ամենեցուն, և կերպարանափոխ առնել ոչ զԻտալիա միայն, այլ և զԵւրոպա համօրէն: Ազգք այլադաւանք թշնամիք եկեղեցւոյ, որոց և անուն իսկ Հռովմայ գժպհի էր, անդր կան արդ ակնկառոյցք զարմացմամբ և մեծարանօք. և որդիք եկեղեցւոյ՝ հերձուածքն և պառակտեալք ատելութեամբ 'ի կարգս և 'ի կռիւս քաղաքականս, եղբայրաբար սիրով համբուրին ընդ միմեանս իբրև միոյ հօր որդիք և միոյ երկնաւոր հօտապետին խաշինք աւանդեալք 'ի խնամս Հռովմին, որ յերկրի աստ զնորայն ունելով զփոխանորդութիւն՝ զգութ սիրոյ իւրոյ անխտրաբար տարածէ առ ամենեսին: Փոփոխումն արդարև մեծ և զարմանալի, որ մեծագունից ևս առ յապա բարեաց տայ ակնկալութիւն: Հաճեսցին երկինք որ յարուցին զհովիւ այնպիսի, երկայն աւուրբք շնորհել զնա 'ի փառս և 'ի պայծառութիւն սրբոյ առաքելական եկեղեցւոյ:

ՑԱՆԿ

Աբբոն աբբայ Փլէօրեայ . 413 :
Աբգար Թագաւոր . 52 :
Աբգար դեսպան . 776 :
Աբդաւ եպիսկոպոս Շօշայ . 249 :
Աբդաւ եպիսկոպոս պարսիկ . 228 :
Աբդլլահ ոստիկան . 339 :
Աբդլմելէք ամիրապետ . 354 :
Աբէյելարդոս . 512 :
Աբիբաս վկայ . 152 :
Աբրահամ Աթար վաճառական . 945 :
Աբրահամ Արծրուեանց . 946 :
Աբրահամ եպիսկոպոս Արտաւիլ քաղաքի . 159 :
Աբրահամ եպիսկոպոս Բերիոյ . 946 :
Աբրահամ Ա կաթուղիկոս . 300 :
Աբրահամ Բ կաթուղիկոս . 934 :
Աբրահամ Գ կաթուղիկոս . 934 :
Աբրահամ քահանայ աշակերտ Ղեոնդեանց . 242 :
Աբրահամ քահանայ ընկեր Ղեոնդեանց . 242 :
Ագաբոս մարգարէ . 60 :
Ագաթա կոյս . 114 . 149 :
Ագաթանգեղոս պատմագիր 201 :
Ագապ կամ Սէր . 82 :
Ագոբարդոս արքեպիսկոպոս Լուգդունի . 395 :
Ագրիպպայ Հերովդի հալածումն . 58 :
Ագրիպպաս Թոռն Հերովդի եդոմայեցւոյ . 5 :
Ադալբերտոս գաղղիացի . 343 :
Ադդէ հայրապետ . 57 :
Ադելայիդէ ամուսին Ոթոնի Մեծի . 418 :
Ադելմոս եպիսկոպոս . 350 :
Ադեմարոս կրօնաւոր . 459 :
Ադոլփոս Թագաւոր Անգղիոյ . 347 :
Ադոնիէս վեննացի . 395 :
Ադրիանոս կայսր . 93 :
Ադրիանոս Ա պապ . 348 :
Ադրիանոս Բ պապ . 369 . 385 :
Ադրիանոս Գ պապ . 387 :
Ադրիանոս Դ պապ . 490 :
Ադրիանոս Ե պապ . 567 :
Ադրիանոս Զ պապ . 674 :
Ադրիանոս վկայ . 152 :
Ազատագրեալ քրիստոնեայք . 116 :
Աթանագինէ որդի Յուսկան : 210 :
Աթանաս եպիսկոպոս Վրաց . 590 :
Աթանաս Մեծն Աղեքսանդրու հայրապետ . 159—170 :
Աթանաս պատրիարգ Ասորւոց . 355 :
Ալապիդէ Կոռնելիոս . 888 :
Ալարիկոս արքայ Գոթաց . 220 :
Ալբերիկոս որդի Կուիդոնի . 408 :
Ալբերտ դոմինիկեան եպիսկոպոս . 562 :
Ալբերտ իշխան Պրանտէպուրկի . 509 :
Ալբերտոս մարքէզ Թոսկանայի . 386 :
Ալեքս կայսր Յունաց որդի Իսահակայ Կոմնենոսի . 524 :
Ալեքս կայսր Յունաց որդի Իսահակայ Անգեղոսի . 524 :
Ալմերիկոս լատին պատրիարգ Անտիոքայ . 504 :
Ալպայ դուքս . 752 :
Ալպանի կարդինալ . 958 :
Ալվարոս Պեղագիոս եպիսկոպոս Սիլուայի . 608 :

Ալփրեդոս Թագաւոր Անգղիոյ . 396 :
Ալփրիկոս մանէնացիր . 434 :
Ակակ պատրիկ . 264 :
Ակեփսիմէ եպիսկոպոս . 159 :
Ակումիտացն կամ Անհանգստից միաբանութիւն . 285 :
Ագաթոն քահանայապետ . 322 :
Ագապետոս Ա. քահանայապետ . 290 :
Ագապետոս Բ. քահանայապետ . 409 :
Աղբիգենսք . 491 . 529 . 541 :
Աղբինոս իշխան Հռետից . 70 :
Աղեքսանդր կաթուղիկոս . 933 :
Աղեքսանդր Հալէս փրանկիսկեան . 564 :
Աղեքսանդր հայրապետ . 163 :
Աղեքսանդրոս որդի Հերովդի և գամայեցւոյ . 4 :
Աղեքսանդրոս ասմոնացի . 83 :
Աղեքսանդր Սեւերոս . 113 :
Աղեքսանդր վարդապետ . 935 :
Աղեքսանդր քահանայ . 776 :
Աղեքսանդր Ա. պապ . 104 :
Աղեքսանդր Բ. պապ . 442 :
Աղեքսանդր Գ. պապ . 490 :
Աղեքսանդր Դ. պապ . 515 :
Աղեքսանդր Ե. պապ . 616 :
Աղեքսանդր Զ. պապ . 657 :
Աղեքսանդր Է. պապ . 819 . 825 . 831 :
Աղեքսանդր Ը. պապ . 846 :
Աղօթական հերետիկոսք . 193 :
Աղօթամանք Գաղղիոյ 883 :
Ամալրիկոս որդի Սիմէոնի կոմսին Մոնփորտականաց . 543 :
Ամբրոսիոս (Ս.) 184-265 :
Ամմիանոս Մարկեղինոս . 208 :
Ամմոնիոս . 131 :
Այետիոս . 173 :
Այխաթալա սարկաւագ . 159 :
Անակ հայր Լուսաւորչին . 128 :
Անակղետոս Ա. քահանայապետ . 68 :
Անակղետոս Բ. հակապապ . 484 :
Անանէ թագաւոր . 57 :
Անանիա աշակերտ Քրիստոսի . 51 :
Անանիա Ա. կաթուղիկոս . 430 :
Անանիա Բ. կաթուղիկոս . 555 :
Անանիա շիրակացի . 328 :
Անապատական կենաց սկիզբն . 138 :
Անաստասիոս գրադարան Եկեղեցւոյն Հռովմայ . 395 :
Անաստասիոս հակապապ . 385 :
Անաստաս կաթուղիկոս . 324 :
Անաստաս կայսր . 281 :
Անաստաս սինացի . 302 :
Անաստաս պատրիարգ Անտիոքայ . 310 :
Անաստաս Ա. պապ . 207 :
Անաստաս Բ. պապ . 246 :
Անաստաս Գ. պապ . 408 :
Անաստաս Դ. պապ . 490 :
Անաստասածեանք . 879 :
Անգեղա կամ Անճեղա (սրբուհի) . 885 :
Անգղիական հերետիկոսք . 864 :
Անդրէաս առաքեալ . 65 :
Անդրէաս Բոնդեղմոնտեան Փառլըշթառ . 676 :
Անդրէաս Կողլիպիդաս . 341 . 351 :
Անդրէաս հրէայ . 92 :
Անդրոնիկոս Բ. կայսր Յունաց . 557 :
Անթիմոս եւտիքական . 291 :
Անթիպաս Հերովդէս . 5 :
Անթոնէլլի կարդինալ . 979 :
Անիկետոս քահանայապետ . 105 :
Անձեռագործ պատկեր Քրիստոսի . 54 :
Անմեղ մանկունք Բեթղեհեմի . 4 :
Աննա քոյր Վասլի հայկազնոյ թագուհի Ռուսաց . 390 :
Աննա Պօղէնա . 686 :
Աննա Պօրճեան . 711 :
Աննա քահանայապետ . 36 .
Աննիբաղդոս եղբօրորդի Մեծին Կոստանդիանոսի . 169 :
Անսեղմոս եպիսկոպոս Լուքքայի . 460 :
Անսկարիոս կրօնաւոր . 390 :
Անտերոս քահանայապետ . 120 :
Անտիպատրոս որդի Հերովդի և գամայեցւոյ . 4 :
Անտոն աբբայ . 138 . 201 :
Անտոն ընկեր Կրանիգեայ . 145 :
Անտոն Լեպրիգեացի . 793 :
Անտոն Պուրպոնեան թագաւոր Նաւառրայի . 711 :
Անտոն (Ս.) պադուացի . 564 :

Անտոն [illegible]. 955։
Անտոնինոս Պիոս. 96։
Աշերի մատենագիր. 889։
Աշխեն թագուհի. 146։
Աշոտ Բագրատունի. 304։
Աշոտ Ողորմած. 426։
Ապողինար. 106. 285։
Ապողինարեանք. 196։
Ապողինար Կրտսեր. 205։
Ապողոնիոս տիանացի. 83։
Ապուպեքիր. 318։
Առաքել կաթողիկոս. 778։
Առաքել վարդապետ դաւրիժեցի. 956։
Առաքել վարդապետ եպիսկոպոս Սիւնեաց. 611։
Առնալդոս պրեշիացի. 487։
Առեցցոյ [illegible]. 979։
Առնոբիոս մատենագիր. 134. 200։
Առնոլտ Անտոն. 842։
Առնոլտ մատենագիր. 891։
Առնոլտ տիկին. 822։
Առնուլփոս արքեպիսկոպոս Ռեմսայ. 411։
Ասպետք Մելիտեայ. Տես Հիւրընկալք։
Ասպետք սրբոյն Մաւրիկիոսի. 647։
Ասպետք սրբոյն Յովհաննու Երուսաղեմացւոյ. 508։
Ասպետք սրբոյն Միքայելի. 647։
Ասպետք Ոսկեգեղմեան. 647։
Ասպետք փրկանաւորութեան. 551։
Ասպուրակէս կաթողիկոս. 212։
Աստուածատուր կաթողիկոս. 933։
Աստուածատուր քահանայապետ. 321։
Ատոմ անձեւացի. 865։
Ատոմ Գնունի 238։
Ատտիկոս դատաւոր. 50։
Ատտիկոս պատրիարք Յունաց. 229։
Ատտիլա. 245։
Ատտոն Վերչելլիոս. 434։
Ատրորմիզդ մարզպան. 241։
Արեւելեան վկայք. 250։
Արիոս երէց. 160։
Արիոսեանք. 160։
Արիստաբուղոս Երէց. 4։
Արիստաբուղոս Կրտսեր. 4։
Արիստակէս լաստիվերտցի. 460։
Արիստակէս որդի Լուսաւորչին կաթողիկոս. 129. 156։
Արիստակէս Բ. կաթողիկոս. 450։
Արիստակէս Գ. կաթողիկոս. 450։
Արիստիդէս Ջատագով քրիստոնէից. 95։
Արկադէոս կայսր. 187։
Արձան Թարգմանիչ. 256։
Արշէն քահանայ. 242։
Արտաշիր Ա. արքայ Պարսից. 128։
Արտաշիր Բ. արքայ Պարսից. 309։
Արտաւազդ արքայ Հայոց. 91։
Արքեղայոս որդի Հերովդի Եդովմայեցւոյ. 5։
Աւագ բաղիշեցի մարտիրոս. 651։
Աւդիոս հերետիկոս. 199։
Աւետիք պատրիարք Կոստանդնուպոլսոյ. 938։
Աւստրեմոնիոս Կղերմոնեայ եպիսկոպոս. 119։
Աւրելիոս կայսր. 97։
Բաբգէն կաթողիկոս. 254, 260։
Բաբելաս [illegible]. 152։
Բաբելաս հայրապետ. 114։
[illegible]. 868։
Բաժանեկեան հերետիկոսք. 627։
Բալուտիոս. 591։
Բալդուինոս Ա. Թագաւոր. 471։
Բալդուինոս Բ. 535։
Բալդուինոս կոմս Փլանդրիոյ. 524։
Բալթասար Գերարդէս. 753։
[illegible] Սիւնեաց. 388։
Բառնաբաս առաքեալ. 58։
Բասիլիդէս հերձուածող. 101։
Բասիլիոս հերձուածող. 83։
Բասիլիսկոս վկայ. 180։
Բասոս վկայ. 152։
Բարդաս քեռի Միքայելի կայսեր. 367։
[illegible]. 56։
Բարթուղիմէոս առաքեալ. 64, 128։
Բարթուղիմէոս Մարթիրի. 720։
Բարծումա 261։
Բարշապուհ [illegible]. 354։
Բարոնիոս. 798։
Բարսեղ [illegible] առաջնորդ. 330։

Բարսեղ եպիսկոպոս Անւոյ . 502 :
Բարսեղ Ա. կաթողիկոս . 496 :
Բարսեղ Բ. կաթողիկոս . 558 :
Բարսեղ մեծն կեսարացի . 203 :
Բարքոքեբաս Հրէայ . 94 :
Բեգուարդեանք հերետիկոսք . 599 :
Բեգուինեանք հերետիկոսք . 585 :
Բեդա երանելի . 350 :
Բելլարմինոս կարդինալ . 798 , 887 :
Բեղիսարիոս . 284 :
Բենեդիկտոս սուրբ . 294 :
Բենեդիկտոս առաջնորդ Անիանեան մենաստանի . 344 , 391 :
Բենեդիկտոս Ա. պապ . 285 :
Բենեդիկտոս Բ. պապ . 322 :
Բենեդիկտոս Գ. պապ . 385 :
Բենեդիկտոս Դ. պապ . 407 :
Բենեդիկտոս Ե. պապ . 410 :
Բենեդիկտոս Զ. պապ . 410 :
Բենեդիկտոս Է. պապ . 410 :
Բենեդիկտոս Ը. պապ . 440 :
Բենեդիկտոս Թ. պապ . 441 :
Բենեդիկտոս Ժ. պապ . 442 :
Բենեդիկտոս ԺԱ. պապ . 580 :
Բենեդիկտոս ԺԲ. պապ . 539 :
Բենեդիկտոս ԺԳ. հակապապ . 598 :
Բենեդիկտոս ԺԳ. պապ . 920 . 955 :
Բենիամին վկայ . 228 :
Բեռնարդինոս Ոքին . 760 :
Բեռնարդոս (Ս.) 471 , 504 , 510 :
Բեռնարդոս Սայսէ եպիսկոպոս . 577 :
Բեսսարիոն կարդինալ . 625 :
Բերենգարիոս արքայ Իտալիոյ . 409 :
Բերենգարիոս հերետիկոս . 454 . 529 :
Բերտա ազգակից Ռոբերդոսի արքային Գաղղիոյ . 413 :
Բղխումն Հոգւոյն սրբոյ 'ի Հօրէ և յՈրդւոյ . 560 . 572 :
Բողոքարկուք կամ Լուտերականք . 681 :
Բոյետիոս մատենագիր . 301 :
Բոնաւենտուրա . 583 :
Բուրգարդոս եպիսկոպոս . 459 :
Բուրգարդոս Վորմեան . 434 :
Բուք քահանայ . 159 :
Բրգիշոյ . 253 :
Գաբրիէլ աշակերտ Սարգսեայ . 767 :
Գաբրիէլ ասորի . 354 :
Գաբրիէլ Դանիէլ . 955 :
Գաբրիէլ Կռուպէր . 967 :
Գագիկ վարդապետ . 397 :
Գալուստ Կայծակն պատրիարք Կոստանդնուպօլսոյ . 938 :
Գաղերիոս կայսր . 127 :
Գաղղիենոս կայսր . 126 :
Գաղղոս . 115 :
Գամաղիէլ օրէնսուսոյց . 50 :
Գայիանէ կոյս . 130 :
Գայիոս քահանայապետ . 121 :
Գառնիկ . 209 :
Գաւդենտիոս Մառան . 955 :
Գաւդենտիոս եպիսկոպոս . 174 :
Գելասիոս Ա. պապ . 224 . 246 :
Գելասիոս Բ. պապ . 289 . 481 :
Գենարիոս եպիսկոպոս . 152 :
Գենեսիոս վկայ . 127 :
Գեննադիոս . Տես Գէորգիոս Սկոլարոս :
Գեննադիոս երէց . 266 :
Գեննադիոս միայնակեաց . 633 :
Գենսերիկոս . 245 . 251 :
Գերարդոս Թում. 508 :
Գերբերտոս 411 :
Գերեհանք . 551 :
Գերմանոս եպիսկոպոս Օգսերոյ . 248 :
Գերմանոս պատրիարք Կոստանդնուպօլսոյ . 333 :
Գերուասիոս վկայ . 64 :
Գերութիւն սրբոյ խաչին . 308 :
Գէորգ եղբօրորդի դքսին Սաքսոնիոյ . 680 :
Գէորգ (մեծն) վկայ . 152 :
Գէորգ պատրիարք Կոստանդնուպօլսոյ . 940 :
Գէորգ Ա. կաթողիկոս . .
Գէորգ Բ. կաթողիկոս . 393 :
Գէորգ Գ. կաթողիկոս . 948 :
Գէորգ Հողոցմեցի կաթողիկոս 350 :
Գէորգ վարդապետ Երզնկացի . 611 :
Գէորգ վարդապետ Լոռեցի . 458 :
Գէորգ վարդապետ Սկեւռացի . 514 :
Գէորգ Ֆօքս . 877 :
Գէորգիոս Սկոլարոս պատրիարք

Կոստանդնուպօլսոյ. 636։
Գիլբերտոս Պորրետանոս. 511։
Գիւտ կաթուղիկոս. 254։
Գիւտ սրբոյ խաչին. 167։
Գնոստիկեանք. 101. 136. 197։
Գուշաֆեռեն բառիւ կերպարանութիւն. 530։
Գորդիանոս կայսր. 114։
Գուլիելմոս Դուրանդոս. 564։
Գուլիելմոս դուքս Աքուիտանիոյ և Փուատիեի. 419։
Գուլիելմոս Լոտ արքեպիսկոպոս Լոնդոնի. 850։
Գուլիելմոս Նասաու. 855։
Գուլիելմոս Ոգամոս. 607։
Գուլիելմոս Սենթամուրեան. 565։
Գուլիելմոս Տիւրոսեան. 511։
Գուլիելմոս Փենն. 878։
Գուլիելմոս Քուրթընէ արքեպիսկոպոս Կանտորպերիոյ. 601։
Գուրիաս վկայ. 152։
Գրանիոս Սեւերոս. 95։
Գրատիանոս միայնակեաց. 511։
Գրատիանոս Տուրոնի եպիսկոպոս. 119։
Գրիգորապատուր վարդապետ. 324։
Գրիգոր արիանեան. 169։
Գրիգոր եպիսկոպոս Տուրոնի. 301։
Գրիգոր Լուսաւորիչ. 128 և այլն։
Գրիգոր Բ. կաթուղիկոս. 458։
Գրիգոր Գ. կաթուղիկոս. 497։
Գրիգոր Դ. կաթուղիկոս. 498. 501։
Գրիգոր Ե. կաթուղիկոս. 498։
Գրիգոր Զ. կաթուղիկոս. 498։
Գրիգոր Է. կաթուղիկոս. 561։
Գրիգոր Ը. կաթուղիկոս. 648։
Գրիգոր Թ. կաթուղիկոս. 649։
Գրիգոր Ժ. կաթուղիկոս. 649։
Գրիգոր ԺԱ. կաթուղիկոս. 775։
Գրիգոր ԺԲ. կաթուղիկոս. 777։
Գրիգոր ԺԳ. կաթուղիկոս. 868։
Գրիգոր Մագիստրոս. 373։
Գրիգոր մեծն քահանայապետ. 289։
Գրիգոր Նազիանզացի կամ Աստուածաբան. 204։
Գրիգոր Նարեկացի. 427. 435։
Գրիգոր Նիւսացի. 204։
Գրիգոր Շիրվանեցի պատրիարք Երուսաղեմի. 940։
Գրիգոր Պահլաւունի. 496։
Գրիգոր Ա. պապ. 289։
Գրիգոր Բ. պապ. 347։
Գրիգոր Գ. պապ. 347։
Գրիգոր Դ. պապ. 384։
Գրիգոր Ե. պապ. 407։
Գրիգոր Զ. պապ. 441։
Գրիգոր Է. պապ. 442, 445։
Գրիգոր Ը. հակապապ. 481։
Գրիգոր Թ. պապ. 531։
Գրիգոր Ժ. պապ. 567։
Գրիգոր ԺԱ. պապ. 596։
Գրիգոր ԺԲ. պապ. 615. 617. 620։
Գրիգոր ԺԳ. պապ. 732. 774, 772։
Գրիգոր ԺԴ. պապ. 774։
Գրիգոր ԺԵ. պապ. 800։
Գրիգոր ԺԶ. պապ. 1012։
Գրիգոր Պասմաճեան պատրիարք Կոստանդնուպօլսոյ. 941։
Գրիգոր եպիսկոպոս Սասիմայ. 204։
Գրիգոր Սիւնեցի. 351։
Գրիգոր սկեւռացի. 514։
Գրիգոր Աքանչելագործ. 134։
Գրիգոր վարդապետ խլաթեցի Ծերենց. 610։
Գրիգոր Վկայասէր. 458։
Գրիգոր տաթեւացի. 610։
Գրիգոր Տղայ. 501. 522։
Գրիգոր Տուտէորդի. 502։
Գրիգորիս Արշարունի. 328։
Գրիգորիս եղբայր Շնորհալւոյն. 497։
Գրիգորիս որդի Վրթանիսի. 210։
Գրիգորիս Ռաժիկ 299։
Դաստառակին յայտնութիւն. 293։
Դամասոս Ա. պապ. 183. 207։
Դամասոս Բ. պապ. 441։
Դաւիթ Անյաղթ. 267։
Դանիէլ ասորի 211։
Դաշնակցութիւն ի Սմալքալտ. 631։
Դաւանութիւն Կարոլոսի Ե. կայսեր. 699։
Դաւիթ գլանեցի 336։
Դաւիթ Երանելի եպիսկոպոս աշխարհին Մոկաց. 426։
Դաւիթ Երանելի հայկազն. 428։
Դաւիթ արքեպիսկոպոս Աղթամարայ. 520։
Դաւիթ Ա. կաթուղիկոս. 349։

Թորոս վկայ. 779։
Ժընուիէւ կոյս. 248։
Ժողովակ Անտիոքայ. 169։
Ժողովակ Արիմինոյ. 173։
Ժողովակ Կոստանդնուպոլսոյ. 334։
Ժողովակք Նափոլէոնի 'ի Փարիզ. 985։
Ժողովակ Սելևկիոյ. 173։
Ժողովակ Տիւրոսի. 116։
Ժողովակ Փիլիպպուպոլսոյ. 170։
Ժողով Անւոյ Ա. 436։
Ժողով Անւոյ Բ. 436։
Ժողով Անւոյ Գ. 437։
Ժողով Անւոյ Դ. 437։
Ժողով Անւոյ Ե. 438։
Ժողով Անւոյ Զ. 438։
Ժողով Անւոյ Է. 464։
Ժողով Անւոյ Ը. 464։
Ժողով Անւոյ Թ. 571։
Ժողով Աշտիշատու Ա. 217։
Ժողով Աշտիշատու Բ. 256։
Ժողով Աշտիշատու Գ. 257։
Ժողով Առաքելոց յԵրուսաղէմ. 58։
Ժողով Արելատայ. 172։
Ժողով Արտաշատու. 258։
Ժողով Աւկուսթայի. 701։
Ժողով Աւկսպուրկայ. 681։
Ժողով Աֆրիկեայ. 191։
Ժողով Արուխակրանայ. 344։
Ժողով Բասլեայ. 625։
Ժողով Բիւթանիոյ. 162։
Ժողով Գաղղիոյ ազգային. 987։
Ժողով Գաղղիոյ վասն Յանսենեանց. 818։
Ժողով Դըւնայ Ա. 260։
Ժողով Դըւնայ Բ. 305։
Ժողով Դըւնայ Գ. 305։
Ժողով Դըւնայ Դ. 306։
Ժողով Դըւնայ Ե. 329։
Ժողով Դըւնայ Զ. 330։
Ժողով Դըւնայ Է. 354։
Ժողով Դըւնայ Ը. 354։
Ժողով Երնջակայ. 404։
Ժողով Եփեսոսի. 231։
Ժողով Զմիւռնոյ. 193։
Ժողով ընդդէմ գրոց Յանսենիոսի. 810։
Ժողով ընդդէմ նորահնար ուսմանն բարոյականութեան. 816։
Ժողով Լատերանու Ա. 482։
Ժողով Լատերանու Բ. 486։
Ժողով Լատերանու Գ. 491։
Ժողով Լատերանու Դ. 527։
Ժողով Լոնդոնի. 516։
Ժողով Լոււոյ. 571։
Ժողով Լուգդունի Ա. 535։
Ժողով Լուգդունի Բ. 555։
Ժողով Կարնոյ. 329։
Ժողով Կարթագինոյ. 116։
Ժողով Կոստանդեան. 617։
Ժողով Կոստանդնուպոլսոյ Ա. 183։
Ժողով Կոստանդնուպոլսոյ Բ. 287։
Ժողով Կոստանդնուպոլսոյ Գ. 314։
Ժողով Կոստանդնուպոլսոյ Դ. 369։
Ժողովք երկրին գումարեալք 'ի Կոստանդնուպոլիս. 184։
Ժողովք երկրին գումարեալք յԱղեքս. Եգիպտոսի. 162։
Ժողով Հարքայ Ա. 463։
Ժողով Հարքայ Բ. 465։
Ժողով Հենրիկոսի Ը. արքային Անգղիոյ. 692։
Ժողով Հեմփթոնքուրայ. 849։
Ժողով Հռոմայ. 466։
Ժողով Հռոմկլայի Ա. 520։
Ժողով Հռոմկլայի Բ. 521։
Ժողով Հռոմկլայի Գ. 522։
Ժողով Մեղիոլանու. 172։
Ժողով յաղագս Շնորհաց գումարեալ 'ի Հռոմ. 807։
Ժողով Նիկիոյ Ա. 163։
Ժողով Նիկիոյ Բ. 336։
Ժողով Շահապիվանու Ա. 257։
Ժողով Շահապիվանու Բ. 259
Ժողով Շիրակաւանայ Ա. 405
Ժողով Շիրակաւանայ Բ. 405։
Ժողով Շիրակաւանայ Գ. 406։
Ժողով Շուղրայ. 519։
Ժողովք չորք գումարեալք յԼամբպուրկ. 850։
Ժողով Պազելիոյ. 639, 679։
Ժողով Պարտաւայ Ա. 353։
Ժողով Պարտաւայ Բ. 355։
Ժողով Պոլոնիոյ. 714։
Ժողով Պուրժայ. 639։
Ժողով Սարդիկեայ. 170։
Ժողով Սեաւ լերին Ա. 465։
Ժողով Սեաւ լերին Բ. 520։
Ժողով Սպիրայ. 681։
Ժողով Սսոյ Ա. 523։

Ժողով Սսայ Բ. 570։
Ժողով Սսայ Գ. 572։
Ժողով Սսայ Դ. 572։
Ժողով Սսայ Ե. 573։
Ժողով Սսայ Զ. 611։
Ժողով Սսայ Է. 612։
Ժողով Սսայ Ը. 613։
Ժողով Սսայ Թ. 559։
Ժողով Վաղարշապատու Ա. 216։
Ժողով Վաղարշապատու Բ. 218։
Ժողով Վաղարշապատու Գ. 218։
Ժողով Վաղարշապատու Դ. 255։
Ժողով Վաղարշապատու Ե. 256։
Ժողով Վաղարշապատու Զ. 260։
Ժողով Վիեննայի 584։
Ժողով Վորմիզայ. 670։
Ժողով Տարսոնի Ա. 523։
Ժողով Տարսոնի Բ. 573։
Ժողով Տարսոնի Գ. 573։
Ժողով Տարսոնի Դ. 611։
Ժողով Տոլեդոյ. 198։
Ժողով Տուրոնի. 515։
Ժողով Տրիդենտեան. 712։
Ժողով Տրուլլեան կամ Հինգվեցեան. 315։
Ժողով Փիզայի. 616։
Ժողով Քաղկեդոնի. 235։
Ժողով Ֆերրարայի. 626։
Ժուայէօզ դուքս. 737։
Իբաս քահանայ Եդեսացի. 256։
Իգնատիոս աստուածազգեաց. 89։
Իգնատիոս Լոյոլեան. 783։
Իգնատիոս Յակինթեա. 955։
Իգնատիոս պատրիարգ Կոստանդնուպոլսոյ. 367։
Իգնատիոս վարդապետ. 513։
Իլարիոս եպիսկոպոս. 173։
Ինա Թագաւոր Սաքսոնաց. 347։
Իննովկենտիոս Ա. պապ. 223։
Իննովկենտիոս Բ. պապ. 484։
Իննովկենտիոս Գ. պապ. 542։
Իննովկենտիոս Դ. պապ. 544։
Իննովկենտիոս Ե. պապ. 567։
Իննովկենտիոս Զ. պապ. 592։
Իննովկենտիոս Է. պապ. 615։
Իննովկենտիոս Ը. պապ. 645։
Իննովկենտիոս Թ. պապ. 774։
Իննովկենտիոս Ժ. պապ. 811։
Իննովկենտիոս ԺԱ. պապ. 832։
Իննովկենտիոս ԺԲ. պապ. 846։
Իննովկենտիոս ԺԳ. պապ. 910։
Իսահակ Կոմնենոս կայսր. 444։
Իսիդորոս Սեւիլիոյ եպիսկոպոս. 301. 326։
Իսրայէլ կաթուղիկոս. 324։
Իտարիկոս եպիսկոպոս. 198։
Իլդեփոնսոս տոլեդացի. 326։
Լակտանտիոս. 209։
Լակուա գնդապետ Նափոլէոնի. 992։
Լամբերտինոս կարդինալ. 955։
Լամբերտոս դուքս Սպոլետոյի. 358։
Լամի մատենագիր. 888։
Լամպերթ զօրավար. 851։
Լանֆրանկ արքեպիսկոպոս. 469։
Լանֆրանկ Սեպտալանի. 551։
Լավալէթ յիսուսեան. 926։
Լատերանեան տաճար. 186։
Լավարդէն մարքէզ. 845։
Լաւրենտիոս վկայ. 125։
Լաւրենտիոս Փեթրի. 756։
Լելիոս Սոկինոս. 760։
Լէանդրոս եպիսկոպոս. 303։
Լէոնարդոս Մոնտալտոս. 434։
Լէսթոնա աբիկին. 885։
Լէտինկէուսի. 805։
Լըկլրս աբիկին. 886։
Լըքոնթ յիսուսեան. 913։
Լըքոէն Կարտասուս. 888։
Լիբանիոս իմաստակ. 180։
Լիբերիոս քահանայապետ. 179. 207։
Լիբերատոս սարկաւագ. 301։
Լինոս քահանայապետ. 69։
Լիսայիոս կանոնիկոս. 455։
Լիւսիոս մատենագիր. 178։
Լիւք արքեպիսկոպոս. 918։
Լոնտուան. 891։
Լոպեափինոս եպիսկոպոս. 890։
Լորէնա կարդինալ. 726. 735։
Լուդովիկոս Անտոն Մուրատորի. 955։
Լուդովիկոս դուքս Պաւերայի. 587։
Լուդովիկոս Ը. արքայ Գաղղիոյ. 471։
Լուդովիկոս Ժ. արքայ Գաղղիոյ. 591։
Լուդովիկոս ԺԱ. արքայ Գաղղիոյ. 641։
Լուդովիկոս ԺԲ. արքայ Գաղղիոյ. 660։

Լուդովիկոս ԺԳ. արքայ Գաղղիոյ . 805–903 ։
Լուդովիկոս ԺԴ. արքայ Գաղղիոյ . 922 ։
Լուդովիկոս Մոլինա . 806 ։
Լուդովիկոս Պիոս . 356 ։
Լուդովիկոս Գրանատէ . 711 ։
Լուինէզ . 727 ։
Լուիտպրանդոս պատմաբան . 434 ։
Լուկիա կոյս . 149 ։
Լուկինա տիկին հռովմայեցի . 64 ։
Լուկիփերեան հերետիկոսք . 196 ։
Լութեր . 666–699 ։
Լևոն բիւզանդացի . 302 ։
Լևոն իսաւրացի . 332 ։
Լևոն Դ. կայսր . 335 ։
Լևոն Իմաստասէր . 371 , 421 ։
Լևոն Հայկազն , կայսր . 361 ։
Լևոն Ա. պապ . 235 ։
Լևոն Բ. պապ . 322 ։
Լևոն Գ. պապ . 382 ։
Լևոն Դ. պապ 384 ։
Լևոն Ե. պապ . 407 ։
Լևոն Զ. պապ . 409 ։
Լևոն Է. պապ . 409 ։
Լևոն Ը. պապ . 409 ։
Լևոն Թ. պապ . 441 ։
Լևոն Ժ. պապ . 664 ։
Լևոն ԺԱ. պապ . 796 ։
Լևոն ԺԲ. պապ 1004 ։
Լևոնիդէս վկայ հայր Որոգինի . 132 ։
Լօռտ Պէնթինք . 999 ։
Խաղ սարկաւագ . 217 ։
Խաչակիր զինուորութիւն Ա. . 524 ։
Խաչակիր զինուորութիւն Բ. . 537 ։
Խաչակիր զինուորութիւն Գ. . 538 ։
Խաչակիր զինուորութիւն Դ. . 602 ։
Խաչակիր զինուորութիւն ընդդէմ Ալբիգեանց 541 ։
Խաչատուր վարդապետ կարնեցի ։ 956 ։
Խաչատուր վարդապետ կողբացի 779 ։
Խաչատուր վարդապետ տարօնացի . 514 ։
Խաչիկ Ա. կաթուղիկոս . 432 ։
Խաչիկ Բ. կաթուղիկոս . 457 ։
Խնդրակք հերետիկոսք . 852 ։
Խոռեմ . 309 ։
Խոսրով արքայ Պարսից 293 , 309 ։
Խոսրովիդուխտ . 143 ։
Խոսրով Մեծ արքայ Հայոց . 128 ։
Խոսրով Մեծ եպիսկոպոս Անձևացեաց . 435 ։
Խոստովանողքն եօթանք . 308 ։
Խորէն աշակերտ Ղևոնդեանց . 242 ։
Խորհրդական հերետիկոսք . 679 ։
Խուզարկութեան ատեան . 543 ։
Խուժիկ . 238 ։
Խստակրօն Լուտերականք . 700 ։
Խրիւսի կամ Ոսկի քահանայ . 57 ։
Կաղիստոս Ա. պապ . 120 ։
Կաղիստոս Բ. պապ . 481 ։
Կաղիստոս Գ. պապ . 644 ։
Կաղվին . 706 ։
Կամիլլոս Աղտիչ . 955 ։
Կայետանոս Թիենացի , 782 ։
Կայիափա քահանայապետ . 33 ։
Կանոն սուրբ գրոց . 141 ։
Կանոն սուրբ գրոց Գելասիոսի Ա. քահանայապետի . 246 ։
Կանդիդիանոս իշխան . 233 ։
Կամպէճճեան կարդինալ . 687 ։
Կապրիէլլի կարդինալ . 978 ։
Կատափրիգոսք . 301 ։
Կատարինէ Բ. կայսրուհի Ռուսաց . 967 ։
Կատարինէ Բորէ կին Լութերի . 696 ։
Կատարինէ դուստր Փերդինանդոսի արքային Արագոնայ . 686 ։
Կատարինէ Մետիչեան . 722 ։
Կարապետ Ա. կաթուղիկոս . 606 ։
Կարապետ Բ. կաթուղիկոս . 933 ։
Կարմելականք . 553 ։
Կարոլոս Ա. արքայ Անգղիոյ . 850 ։
Կարոլոս Բ. արքայ Անգղիոյ . 853 ։
Կարոլոս դուքս Լօրէնայ . 412 ։
Կարոլոս Ե. կայսր . 684 , 699 ։
Կարոլոսեան մատեան . 338 ։
Կարոլոս եղբայր արքային Լուդովիկոսի . 554 ։
Կարոլոս Է. արքայ Գաղղիոյ . 639 ։
Կարոլոս Թ. արքայ Գաղղիոյ . 725 , 731 ։
Կարոլոս թագաւոր Սիկիլիոյ . 539 ։
Կարոլոս կարդինալ . 720 ։
Կարոլոս Կունդ . 377 ։
Կարոլոս Մարթէլլոս . 724 ։
Կարոլոս Մեծ . 345 ։

Կարողոս Մուրճ. 320:
Կարողոս Պորրոմէոս. 768:
Կարողոս սուտերմանիացի. 799:
Կաւատ արքայ Պարսից. 255:
Կեղսոս. 268:
Կեկիլիանոս. 189:
Կեղեստինոս Ա. պապ. 223, 231:
Կեղեստինոս Բ. պապ. 489:
Կեղեստինոս Գ. պապ. 496:
Կեղեստինոս Դ. պապ. 534:
Կեղեստինոս Ե. պապ. 567:
Կեղեստինեան միաբանութիւն. 567:
Կեղեստիոս աշակերտ Պեղագիանոսի. 223:
Կեսարիոս Արեղատայ եպիսկոպոս. 301:
Կեսար Պուս. 884:
Կերինթոս հերետիկոս: 81:
Կինճի զօրապետ. 959:
Կիոն տիկին գաղղիացի. 365:
Կիպրիանոս Կարթագինեայ եպիսկոպոս. 121:
Կիսալուտերականք. 700:
Կիսապեղագեանք. 224:
Կիսարիոսեանք. 173:
Կիրակոս կաթողիկոս. 649:
Կիրակոս վարդապետ. 460:
Կիրակոս վարդապետ գանձակեցի. 565:
Կիրակոս տրապիզոնցի. 870:
Կիւրեղ աղեքսանդրացի. 132:
Կիւրեղ Երուսաղեմի. 206:
Կիւրիոն կաթողիկոս Վրաց. 300:
Կիւրոս եպիսկոպոս Աղեքսանդրիոյ. 310:
Կղարպոս միայնակեաց. 459:
Կղեմէս ազգական Դոմետիանոսի. 75:
Կղեմէս աղեքսանդրացի. 132:
Կղեմէս Ա. պապ. 68:
Կղեմէս Բ. պապ. 441:
Կղեմէս Գ. պապ. 495:
Կղեմէս Դ. պապ. 554:
Կղեմէս Ե. պապ. 581:
Կղեմէս Զ. պապ. 590:
Կղեմէս Է. հակապապ. 597:
Կղեմէս Ը. պապ. 741, 774:
Կղեմէս Թ. պապ. 826:
Կղեմէս Ժ. պապ. 832:
Կղեմէս ԺԱ. պապ. 847, 914:
Կղեմէս ԺԲ. պապ. 919:
Կղեմէս ԺԳ. պապ. 923:
Կղեմէս ԺԴ. պապ. 929:
Կղեմէս սկովտացի. 343:
Կղոդիոս Էսպէնսէան. 727:
Կղոդիոս կայսր. 58:
Կղոդիոս Սայնտեան. 727:
Կղոդիոս եպիսկոպոս Տուրինոյ. 375:
Կղոդիոս Տէփանոս. 794:
Կղոթարիոս արքայ Գաղղիոյ. 357:
Կոլլիրիդեանք. 199:
Կոլոմբանոս. 326:
Կոլումբիա սրբուհի. 127, 149:
Կոմբեֆիս. 889:
Կոմիտաս կաթողիկոս. 323:
Կոմիտաս քահանայ Քէօմիւրճեան. 939, 956:
Կոնգրապէ. տես Կաստափրեստոս Պօղոսին:
Կոնգրրին. 827:
Կոնոն քահանայապետ. 322:
Կոնրադինոս որդի Կոնրադոսի Դ. կայսեր. 554:
Կոնրադոս Դ. կայսր. 553:
Կոստանդին Բալեօղոգ կայսր. 633:
Կոստանդին Ա. կաթողիկոս. 559, 572:
Կոստանդին Բ. կաթողիկոս. 561:
Կոստանդին Գ. կաթողիկոս. 604:
Կոստանդին Դ. կաթողիկոս. 606:
Կոստանդին Ե. կաթողիկոս. 648:
Կոստանդին Կոպրոնիմոս. 334:
Կոստանդին հակապապ. 348:
Կոստանդիանոս Մեծն. 149, 157, 168:
Կոստանդին Մոնոմախ կայսր. 444:
Կոստանդին պապ. 347:
Կոստանդին Պողոնատ. 314:
Կոստանդ Քղորոս. 127:
Կոտեպայլրոս միայնակեաց. 375:
Կաստափրեստոս Պօղոսին. 469:
Կորգաս թագաւոր Ղեկաց. 282:
Կորիւն. 228, 233:
Կորրադոս կայսր. 472:
Կուադրատոս կամ Կոդրատոս ջատագով քրիստոնէից. 95:
Կուիդոն դուքս Թոսկանայ. 408:
Կուիդոն Լուսինեան թագաւոր Երուսաղեմի. 474:

Կումանոս գաւառաւոր Հրէից · 70։
Կուռնելիոս երէց Հռովմայեցի · 121։
Կուռնելիոս Հարիւրապետ · 55։
Կուռնելիոս Յանսենիոս · 208։
Կուռնելիոս պապ · 115։
Կուստաւոս Վազա արքայ Շուէտաց · 955։
Կուսայ եպիսկոպոս · 890։
Կրանվէլ կարդինալ · 752։
Կրեսկենտիոս · 410։
Կրեցեր · 887։
Կրոդեկանդոս · 392։
Կրուսեր եղբարց կրօն · 548։
Կրուսերագոյն եղբարց կրօն · 646։
Կրոնիդէս · 146։
Հարկէլ քահանայ ասորի · 255։
Հալածումն առ Աւրելիանոսիւ · 126։
Հալածումն առ Դեկոսիւ · 114։
Հալածումն առ Դիոկղետիանոսիւ · 127։
Հալածումն առ Դոմետիանոսիւ · 73։
Հալածումն առ Մաքսիմիլիանոսիւ · 154։
Հալածումն առ Ներոնիւ · 62։
Հալածումն առ Վաղերիանոսիւ · 124։
Համազասպ արծրունի · 340։
Համամ վարդապետ · 397։
Հայրապետ աբեղայ · 779։
Հայր Մատթէոս Ռիչչի · 911։
Հայր Մորալէ դոմինիկեան · 912։
Հայր Պուժան յիսուսեան · 918։
Հանգստականք, հերետիկոսք · 599։
Հանդերձից Աստուածածնի ջերմեռանդութիւն · 553։
Հարլէ արքեպիսկոպոս · 824, 866։
Հարոն ամիրապետ · 340, 364։
Հեղինոս դշխոյ Գերմանիոյ · 418։
Հեթում թագաւոր Հայոց · 559։
Հելվետիոս հերետիկոս · 264։
Հեղինէ դշխոյ մայր Կոստանդիանոսի · 167։
Հեղինէ կին Յուլիանոսի Ուրացողի · 170։
Հենրիկենիոս · 888։
Հենրիկոս Բ. արքայ Անգղիոյ · 515։
Հենրիկոս Բ. արքայ Գաղղիոյ · 710։
Հենրիկոս Գ. արքայ Գաղղիոյ · 736։
Հենրիկոս Դ. արքայ Գաղղիոյ · 804։
Հենրիկոս Գ. կայսր · 441։
Հենրիկոս Դ. կայսր · 446։
Հենրիկոս Ե. կայսր · 450։
Հենրիկոս Ը. արքայ Անգղիոյ · 673. 695։
Հենրիկոս Բրուիսեան միայնակեաց · 488։
Հենրիկոս թագաւոր Նաւարայի · 732։
Հենրիկոս իշխանազն Քոնտեան · 732։
Հենրիկոս Հաւորս կայսր · 417։
Հենրիկոս որդի Փրանկիսկոսի Սիգեան · 731։
Հենրիկոս Պալաւիճէ · 736։
Հենրիկոս Սթուարթ · 748։
Հերակլ կայսր · 309։
Հռայմոնդոս դուքս Տոլոսայ · 542։
Հերակլէս Կոնզագայ · 720։
Հերակղէս փիլիսոփայ · 83։
Հերձուած Եկեղեցւոյն Անգղիոյ · 684։
Հերձուած Եկեղեցւոյն Յունաց · 632։
Հերման · 891։
Հերմանոս միայնակեաց · 459։
Հերմանոս վեյիդեցի · 725։
Հերմաս · 85։
Հերոնիմոս · 209 · 247 · 263։
Հերոնիմոս Պրակացի հերետիկոս · 622։
Հերովդէս եդովմայեցի · 315։
Հերովդէս թոռն Հերովդի Եդովմայեցւոյ · 5։
Հերովդիա · 12։
Հերովդիանոսաց մոլորութիւն · 5։
Հիլարիոս եպիսկոպոս · 202։
Հիլարիոս քահանայապետ · 245։
Հինկմարոս արքեպիսկոպոս Հռեմսայ · 375։
Հինկմարոս եպիսկոպոս Լայոնայ · 377։
Հիպպողիտոս վկայ · 134։
Հիպպողիտոս քահանայ · 116։
Հիւրոնեան ատեանք · 508, 532։
Հիւրկանոս · 4։
Հոնորատոս Տուռնէլ · 955։
Հովսէպոս · 96։

Հուգոն արքայ. 505։
Հուգոն Գերարդոս եպիսկոպոս. 586։
Հուգոն եպիսկոպոս Լինքոլնի. 518։
Հուգոն կարդինալ. 563։
Հուգոն մեծաւոր Մարկինեան վանաց. 506։
Հուգոն սրբոյն Վիկտորի. 511։
Հուգոն փէյլենեան. 507։
Հուգոն Քապէթ. 412։
Հուլթթէր. 767։
Հուինարդ. 889։
Հույլիէ անկլին. 885։
Հուսեան հերետիկոսք. 624։
Հռամոնդոս փրանկիսկեան. 608։
Հռայմոնդոս դոմինիկեան. 563։
Հռայմոնդոս իշխան Տրիպոլւոյ. 474։
Հռայմոնդոս կոմս Տուլուզայ. 535։
Հռատերիկոս եպիսկոպոս. 433։
Հռեգինալդոս Պոլեան կարդինալ. 712։
Հռեգիոմն արքայ. 395։
Հռեմիգիոս արքեպիսկոպոս Հռեմսայ. 247։
Հռենաւդիոս. 723։
Հռեսփիկիպալոս վկայ. 114։
Հռիփսիմեանք. 130։
Հռիքարդոս Առիւծասիրտ արքայ Անգղիոյ. 477։
Հռիքարդոս սրբոյն Վիկտորի. 511։
Հռոբերտոս ժողովրդապետ Բէնայ. 503։
Հռոբերտոս Պէլլէ. 878։
Հռոդրաւս գուսար Պոլեսլաւայ դքսին Պոհեմիոյ. 417։
Հռոզատոս եպիսկոպոս Սուտանի. 376։
Հռոմուալդոս հիմնադիր Կամալդուլեցւոց. 420։
Հռոսեմոնդէա հոմանի Հենրիկոսի Բ. 519։
Հռոսկեղինոս քահանայ. 455։
Հռուբերտոս Մոլեսմեան. 452։
Հռուբերտոս սորբոնեան. 565։
Հռուգերիոս կոմս Սիկիլիոյ. 484։
Հռուստիկոս վկայ. 127։
Հռուփինոս գրագէտ. 227։
Հռուփինոս փորագլուխ. 281։
Հռուփինոս երէց. 265։
Հռուտուլփոս դուքս Սուեւիոյ. 448։
Հռչէ արքայ Գոթաց. 129։
Հրովարտակ Զենոնի կայսեր. 243։
Ձաղկաւոր ապաշխարողք. 599։
Ղազար կաթուղիկոս. 934։
Ղազար փարպեցի. 267։
Ղուկաս արքայ. 422։
Ղուկաս աւետարանիչ. 179։
Ղուկաս կաթուղիկոս. 936։
Ղուկաս միայնակեաց. 422։
Ղուկաս վանանդեցի. 956։
Ղուկիոս Ա. պապ. 131։
Ղուկիոս Բ. պապ. 489։
Ղուկիոս Գ. պապ. 495։
Ղեւոնդ կաթուղիկոս. 299։
Ղեւոնդեանք քահանայք. 242։
Ղեւոնդ երէց. 239–242։
Ղեւոնդիոս Կեսարիոյ հայրապետ 145։
Ղեւոնդ պատմագիր. 351։
Ճէնթիլիս. 760։
Մագնենտիոս. 171։
Մաթիլդէ դքսոյ Գերմանիոյ. 417։
Մալաքիաս յիռլանտեան. 925։
Մալպրանջ մատենագիր. 838։
Մախոտ կամ Ռիզարուգո վկայ. 300։
Մածարինոյ կարդինալ. 511։
Մակար որդի իշխանին Հայոց Միքայելի. 428։
Մակարիոս Անտիոքայ պատրիարք. 314։
Մակարիոս պատրիարք Երուսաղեմի. 210։
Մակեդոնեանք հերետիկոսք. 192։
Մակեդոն Բ. պատրիարք Կոստանդնուպոլսոյ. 280։
Մակրիանոս մոգ. 124։
Մահմէտ օրէնսդիր Արաբացւոց. 159, 316։
Մաղաքիա վարդապետ Ճգնաւոր. 610։
Մամաս վկայ. 127։
Մամբրէ վերծանող. 267։
Մայորոս. 419։
Մայորինոս հերետիկոս. 189։
Մանաճիհր Ռշտունի. 238։
Մանէ կոյս. 156։
Մանէ պարսիկ. 136։

Մանիքեցիք. 136։
Մանուէլ եպիսկոպոս. 869։
Մանուէլ Կոմնենոս կայսր. 521։
Մանթինիուն քաղաքապետ. 733։
Մանփրետոս որդի Փրեդերիկեայ Բ. կայսեր. 554։
Մաշտոց Ա. կաթուղիկոս։ Տես Մեսրոպ։
Մաշտոց Բ. կաթուղիկոս. 394։
Մապիլլոն. 889։
Մասքարոն եպիսկոպոս. 890.
Մաստոքանոսիոս. 125։
Մասսիլլոն եպիսկոպոս. 888։
Մատաթիա առաքեալ. 66։
Մատթէոս առաքեալ. 65։
Մատթէոս եպիսկոպոս Նինուէի. 951։
Մատթէոս ուռհայեցի. 513։
Մատթէոս պատրիարգ Կոստանդնուպոլսոյ. 938։
Մատթէոս Ռիչչի. 784։
Մատթէոս վարդապետ. 611։
Մատթէոս վարդապետ Գարագաշեան. 957։
Մատթէոս Տէպասքի. 780։
Մատուրինեանք։ Տես Գերեհանք։
Մարաթոնեանք հերետիկոսք. 192։
Մարաթոնիոս. 192։
Մարգարիտա դուստր Կարոլոսի Է. 752։
Մարգարիտա քոյր Փրանկիսկոսի Ա. արքային Գաղղիոյ. 703։
Մարդուղիոս մատենագիր. 326.
Մարդակերպեայք հերետիկոսք. 199։
Մարթենէ. 889։
Մարիամ Անճէլիքա. 821։
Մարիամ Աստուածածին. 1։
Մարիամ Մէտիչեան. 822։
Մարինոս Ա. պապ. 386։
Մարինոս Բ. պապ. 409։
Մարիս պարսիկ եպիսկոպոս. 287։
Մարկեղիանոս պապ. 207։
Մարկեղինոս վկայ. 127։
Մարկեղոս Ա. պապ. 149։
Մարկեղոս Բ. պապ. 207։
Մարկեղոս Գ. պապ. 717, 768։
Մարկիանոս կայսր. 235։
Մարկիանոս քաղաքապետ. 174։
Մարկիոն. 132։
Մարկիոնեանք. 132։
Մարկոս Անտոնիոս Տէտոմինիս. 801։
Մարկոս առաքեալ. 63։
Մարկոս եպիսկոպոս Եփեսոսի. 629։
Մարկոս Մեմփիացի. 197։
Մարկոս վկայ. 127, 149։
Մարկոս քահանայապետ. 207։
Մարոսիա իշխանուհի. 408։
Մարտիաղէս եպիսկոպոս. 119։
Մարտինոս Լութեր. 667։
Մարտինոս Ա. պապ. 321, 371։
Մարտինոս Բ. պապ. 409։
Մարտինոս Գ. պապ. 409։
Մարտինոս Դ. պապ. 567։
Մարտինոս Ե. պապ. 621։
Մարտինոս Պուչերոս. 725.
Մարտինոս տուրոնեցի. 198։
Մարտիրոսաց Թուական. 149։
Մարտիրոս պատրիարգ Կոստանդնուպոլսոյ. 939։
Մարքա արքեպիսկոպոս Փարիզու. 818, 890։
Մաւրիկիոս կամ Մորիկ կայսր. 293։
Մաւրիկիոս կայսրընտիր Սաքսոնիոյ. 700։
Մաւրիկիոս որդի դքսին Օրանժի. 753։
Մաքսենտիոս բռնաւոր. 219։
Մաքսիմիանոս կայսր. 113։
Մաքսիմիանոս Հերակլէս. 127։
Մաքսիմինոս պատրիարգ Կոստանդնուպոլսոյ. 256։
Մաքսիմինոս քահանայ Կարթագինոյ. 118։
Մաքսիմոս (սուրբ). 206։
Մաքսիմոս բռնաւոր. 198։
Մեթոդիոս եպիսկոպոս Տիւրոսի. 134։
Մեթոդիոս պատրիարգ Կոստանդնուպոլսոյ. 363։
Մելանքթոն հերետիկոս. 682, 725։
Մելքոն եպիսկոպոս Մերտինոյ. 946։
Մելքոն Կանոս. 794։
Մելքոն վոլմառ. 706։
Մելիտէ կաթուղիկոս. 254։
Մելքիադէս քահանայապետ. 207։
Մելքիսեթ եպիսկոպոս. 779։
Մելքիսեթ կաթուղիկոս. 868։

Մենայի դուքս. 737։
Մեննոն. 767։
Մենոքիոս մատենագիր. 888։
Մենիուքիոս. 189։
Մեսսալեանք հերետիկոսք. 193։
Մեսրովպ (մեծն). 225։
Մեսրովպ երէց պատմագրան. 435։
Մեսրովպ կաթուղիկոս. 606, 613։
Մեհեմմետ Բ. արքայ Տաճկաց. 636։
Մժէժ գնունի. 299։
Միաբանութե Անտոնեան կրօնաւորաց կամ Լիբանանեանք. 945։
Միաբանութե եկեղեցւոյն Հայոց ընդ Յոյնս և ընդ Լատինս. 630։
Միաբանութիւն եկեղեցւոյն Յունաց ընդ Լատինս. 628։
Միաբանութիւն Մխիթարեան կրօնաւորաց 941։
Միաբանութիւն Սորթոնեանց. 565։
Միաբանութիւն սրբոյ կուսին փրկանաց կամ ազատութեան գերեաց. 552։
Միաբանութիւն Վենետկան կրօնաւորաց. 944։
Միակամադաւանք. 310։
Միհրներսեհ հազարապետ Պարսից. 237-258։
Մինաս կաթուղիկոս. 935։
Մինաս պատրիարգ Կոստանդնուպոլսոյ. 940։
Մինուտիոս փելիքս. 134։
Մինուտիոս փոնդանոս. 95։
Միջիսլաւ Ա. դուքս Լեհաց. 417։
Միոլիս զօրագլուխ Նափոլէոնի. 978։
Միքայէլ Բաղէոլոգ կայսր Յունաց. 555։
Միքայէլ Եղափինկ. 699։
Միքայէլ Թլուատ կայսր. 363։
Միքայէլ կաթուղիկոս. 776։
Միքայէլ կաթուղիկոս Սսոյ. 947։
Միքայէլ կայսր. 367։
Միքայէլ կերուլարիոս պատրիարգ Կոստանդնուպոլսոյ. 443։
Միքայէլ կիւրապաղատ կայսր. 360։
Միքայէլ Մոլինոս. 864։
Միքայէլ պատրիարգ Կոստանդնուպոլսոյ. 939։
Միքայէլ Սերվէտոս. 756։
Մխիթար Աբբահայր. 941, 957։
Մխիթար բժիշկ հերացի. 513։
Մխիթար Գանձակեցի կոչ Գոշ. 514, 571։
Մխիթար կաթուղիկոս. 604։
Մոհամմատ հագարացի. 325։
Մոնթէսքիէօ. 730։
Մոնթի կարդինալ. 712։
Մոնմորանսի. 725։
Մոնտանոս հերետիկոս. 133։
Մոնրեվէլ մարաջախտ Գաղղիոյ. 903։
Մոնֆոքոն. 889։
Մոսի կարդինալ. 984։
Մովսէս եպիսկոպոս Սիւնեաց. 328։
Մովսէս խորենացի. 266։
Մովսէս Ա. կաթուղիկոս. 254։
Մովսէս Բ. կաթուղիկոս. 299։
Մովսէս Գ. կաթուղիկոս. 872։
Մովսէս վարդապետ տարոնացի. 426։
Մուշէ երէց. 242։
Մուշէ կաթուղիկոս. 299։
Մուստաֆա փաշա. 788.
Յազկերտ Ա. արքայ Պարսից. 228։
Յազկերտ Բ. արքայ Պարսից. 237։
Յակովբ Ալփեան. 67։
Յակոբ արճիշեցի. 779։
Յակոբ Բ. արքայ Անգղիոյ. 854։
Յակոբ Զ. արքայ Սկովտիոյ. 748։
Յակոբ եղբայր տեառն. 60։
Յակոբ եպիսկոպոս Սիւնեաց. 430։
Յակոբ Զեբեդեայ. 59։
Յակոբ Ա. կաթուղիկոս. 560։
Յակոբ Բ. կաթուղիկոս. 604։
Յակոբ Գ. կաթուղիկոս. 648։
Յակոբ Դ. կաթուղիկոս. 873։
Յակոբ Ե. կաթուղիկոս. 936։
Յակոբ կղեմէս կրօնաւոր դոմինիկեան. 739։
Յակոբ կոմս Մըրրէի. 747։
Յակոբ կրտսեր. 67։
Յակոբ Հոլով. 956։
Յակոբ Մծբին. 794։
Յակոբ Մծբնայ հայրապետ. 201։
Յակոբ Մոլա առաջնորդ Տաճարականաց. 582։
Յակոբ Յովսէփեան քահանայ. 945։
Յակոբ Նալեան պատրիարգ Կոստանդնուպոլսոյ. 940։
Յակոբ Սպիփանէ. 726։

Յակոբ վարդապետ Ղրիմեցի . 611 :
Յակոբոս եպիսկոպոս առաջնորդ Հալպայ . 373 , 463 :
Յիսուսեանք . 923 , 926 , 929 :
Յղութեան կուսին միանձնուհիք . 647 :
Յոբելեան ամ . 568 :
Յովակիմ արքայ . 530 :
Յովակիմ եպիսկոպոս Պրուսայի . 637 :
Յովինիանոս հերետիկոս . 199 :
Յովինոս քահանայ . 118 :
Յովբ կամ Յովաբ կաթողիկոս . 350 :
Յովիանոս կայսր . 181 :
Յովինիանոսեանք հերետիկոսք . 199 :
Յովհան եկեղեցացի Թարգմանիչ . 227 :
Յովհան իմաստասէր . 354 :
Յովհաննէս Ա. կաթողիկոս . 254 :
Յովհաննէս Բ. կաթողիկոս . 299 :
Յովհաննէս Գ. կաթողիկոս . 307 :
Յովհաննէս Դ. կաթողիկոս . 349 :
Յովհաննէս Ե. կաթողիկոս . 372 :
Յովհաննէս Զ. կաթողիկոս . 394 , 429 , 435 :
Յովհաննէս Է. կաթողիկոս . 558 :
Յովհաննա Սէյմուր . 692 :
Յովհաննէս Ակրիկոլայ . 699 :
Յովհաննէս Անտիոքայ եպիսկոպոս . 234 :
Յովհաննէս առաքեալ . 526 :
Յովհաննէս Աստուծոյ . 782 :
Յովհաննէս աւետարանիչ . 77 :
Յովհաննէս Բալէոլոգ , կայսր Յունաց . 628 :
Յովհաննէս գանձակեցի , պատրիարգ Կոստանդնուպոլսոյ . 939 :
Յովհաննէս Գերսոն . 653 , 795 :
Յովհաննէս Գուալբերտոս . 452 :
Յովհաննէս դամասկացի . 341 , 351 :
Յովհաննէս երզնկացի . 561 :
Յովհաննէս Եկքիոս . 794 :
Յովհաննէս Զիզքա . 624 :
Յովհաննէս Թովմաս Ռոզասպերթի . 843 :
Յովհաննէս Լուդովիկոս Վիվէս . 794 :
Յովհաննէս Կալվին . 706 :
Յովհաննէս Կասսիանոս . 224 , 266 :
Յովհաննէս Կիւրապաղեան . 72 :
Յովհաննէս Կլիմաքոս . 302 :
Յովհաննէս Կլեքթոլ . 794 :
Յովհաննէս Կոլոտ . 940 :
Յովհաննէս Կութթեմպերկ . 655 :
Յովհաննէս Կրոփփեր . 794 :
Յովհաննէս համատանեցի . 95 :
Յովհաննէս Հարտուին . 955 :
Յովհաննէս Հուս . 622 :
Յովհաննէս Մաթայեանց . 551 :
Յովհաննէս Մաթիաս . 764 :
Յովհաննէս Մամիկոնեան . 327 :
Յովհաննէս մանազկերտցի . 324 .
Յովհաննէս Մանդակունի . 254 :
Յովհաննէս մարտիրոս , քահանայ . 602 :
Յովհաննէս Մոնլուքեան . 724 :
Յովհաննէս Մոռէն . 706 .
Յովհաննէս Մոսկոս . 327 :
Յովհաննէս Ոսկեբերան . 261 :
Յովհաննէս Պահեցող . 302 :
Յովհաննէս Ա. պապ . 283 :
Յովհաննէս Բ. պապ . 284 .
Յովհաննէս Գ. պապ . 285 :
Յովհաննէս Դ. պապ . 221 :
Յովհաննէս Ե. պապ . 322 :
Յովհաննէս Զ. պապ . 346 :
Յովհաննէս Է. պապ . 346 :
Յովհաննէս Ը. պապ . 386 :
Յովհաննէս Թ. պապ . 387 :
Յովհաննէս Ժ. պապ . 408 :
Յովհաննէս ԺԱ. պապ . 409 .
Յովհաննէս ԺԲ. պապ . 409 .
Յովհաննէս ԺԳ. պապ . 410 :
Յովհաննէս ԺԴ. պապ . 410 :
Յովհաննէս ԺԵ. պապ . 410 :
Յովհաննէս ԺԶ. պապ . 410 :
Յովհաննէս ԺԷ. պապ . 410 :
Յովհաննէս ԺԸ. պապ . 440 :
Յովհաննէս ԺԹ. պապ . 440 :
Յովհաննէս Ի. պապ . 440 :
Յովհաննէս ԻԱ. պապ . 567 :
Յովհաննէս ԻԲ. պապ . 586 :
Յովհաննէս ԻԳ. պապ . 617 .
Յովհաննէս պատրիարգ Աղեքսանդրիոյ . 281 :
Յովհաննէս պատրիարգ Կոստանդնուպոլսոյ . 558 :
Յովհաննէս պատրիարգ Կոստանդնուպոլսոյ . (որէն յառաջնոյն) 939 :

Յովհաննէս Պարրիէրա . 781 ։
Յովհաննէս Պէքրղա . 764 ։
Յովհաննէս Պոյեգանա . 626 ։
Յովհաննէս Ռուսպրոյքիոս . 608 ։
Յովհաննէս Սթէննուէռ . 734 ։
Յովհաննէս Սկոտ Տունս . 607 ։
Յովհաննէս Սկոտոս . 375 , 454 ։
Յովհաննէս Վալէթթա . 788 ։
Յովհաննէս վանահայր . 425 ։
Յովհաննէս վանահայր Մոնագրիոյ . 341 ։
Յովհաննէս վարդապետ արճիշեցի . 566 ։
Յովհաննէս վարդապետ Կախիկ կամ Որոտնեցի . 610 ։
Յովհաննէս վարդապետ Կոզեռն . 460 ։
Յովհաննէս վարդապետ Կոլոտ . 611 ։
Յովհաննէս վարդապետ Սարկաւագ . 460 ։
Յովհաննէս վարդապետ Վանական . 560 ։
Յովհաննէս վարդապետ քռնեցի . 604 ։
Յովհաննէս Վեկկոս պատրիարգ Կոստանդնուպոլսոյ . 564 ։
Յովհաննէս Տաուլերիոս . 608 ։
Յովհաննէս Տիեսոյ . 793 ։
Յովհաննէս Փիշէր . 691 ։
Յովհաննէս Փլուկ . 699 ։
Յովհաննէս Քնոքս . 747 ։
Յովհաննէս Ֆէշ . 965 ։
Յովսեպոս . 87 ։
Յովսէփ աստուածահայր . 2 , 6 ։
Յովսէփ արեմաթացի . 46 ։
Յովսէփ Բարսաբա . 49 ։
Յովսէփ Ա. կաթողիկոս . 239 , 242-253 ։
Յովսէփ Բ. կաթողիկոս . 350 ։
Յովսէփ Գ. կաթողիկոս . 648 ։
Յովսէփ կայսր . 954 ։
Յովսէփ պաղնացի , թարգմանիչ . 227 ։
Յովսէփ Պոնափարթէ . 973 ։
Յովսէփ Օգոստինոս Օրսի . 955 ։
Յորնանդէս . 301 ։
Յուդա յակովբեան . 67 ։
Յուլիանոս կարդինալ Չեզարինի . 634 ։
Յուլիանոս Ուրացող . 170 ։
Յուլիոս Ա. պապ . 247 ։
Յուլիոս Բ. պապ . 660 ։
Յուլիոս Գ. պապ . 715 ։
Յուլիոս Սեւերոս . 95 ։
Յուսիկ հայրապետ . 210 ։
Յուսուֆ ոստիկան հագարացւոց . 365 ։
Յուստինէ կոյս . 174 ։
Յուստինէ թագուհի . 278 ։
Յուստինիանոս կայսր . 290 ։
Յուստինոս զօրավար . 292 ։
Յուստինոս կայսր . 243 ։
Յուստինոս կայսր Թրակացի . 281 ։
Յուստինոս վկայ . 81 , 98 ։
Յուստինոս փոքր . 291 ։
Յուեթէոս աթենացի . 86 ։
Նահապետ կաթողիկոս . 878 ։
Նանա սարկաւագ . 397 ։
Նանթէականն հրովարտակ . 859 ։
Նատալիս Աղեքսանդր . 889 ։
Նափոլէոն Պոնափարթէ . 962 ։
Նեղոս աբբայ . 263 ։
Նեստոր հերետիկոս . 229 ։
Ներգուլթեանց ծագումն . 118 ։
Ներուաս կայսր . 76 ։
Ներսէս աբեղայ . 300 ։
Ներսէս Բակուր կաթողիկոս Աղուանից . 333 ։
Ներսէս Լամբրոնացի . 501 , 513 , 522 ։
Ներսէս Ա. (Մեծն) կաթողիկոս . 193 , 501 ։
Ներսէս Բ. կաթողիկոս . 299 ։
Ներսէս Գ. կաթողիկոս . 323 ։
Ներսէս Դ. (Կլայեցի կամ Շնորհալի) կաթողիկոս . 497 , 513 , 520 ։
Ներսէս Պալիենց . 605 , 612 ։
Նեկտարիոս պատրիարգ Կոստանդնուպոլսոյ . 262 ։
Նէարխոս վկայ . 114 ։
Նիկեփորոս գանձապետ Երինէ թագուհւոյն . 339 ։
Նիկեփորոս Գրեգորաս . 608 ։
Նիկեփորոս Կալլիստոս . 608 ։
Նիկեփորոս պատրիարգ Կոստանդնուպոլսոյ . 360 ։
Նիկողայոսեանք . 83 ։
Նիկողայոս Թոլոստայիչ արքեպիսկոպոս Խլմոյ . 871 ։
Նիկողայոս Ա. կայսր Ռուսաց . 1013 ։

Նիկողայոս Կղեմենկիանեան . 653 , 795 :
Նիկողայոս Հիպացի մատենագիր . 606 :
Նիկողայոս Որէզմա . 608 :
Նիկողայոս Ա. պապ . 367 , 385 :
Նիկողայոս Բ. պապ . 442 :
Նիկողայոս Գ. պապ . 557 , 567 :
Նիկողայոս Դ. պապ . 567 :
Նիկողայոս Ե. պապ . 633 , 644 :
Նիկողայոս պատրիարք Կոստանդնուպօլսոյ . 421 :
Նիկողայոս Ռէնցեան . 593 :
Նիկողայոս Սանտեր . 794 :
Նիկողայոս Փավիլլեան եպիսկոպոս . 834 :
Նիկոն միայնակեաց . 422 :
Նիքոլ . 891 :
Նոայլ կարդինալ . 897 , 906 , 917 :
Նոկարէթ ասպետ . 578 :
Նաւկլերոս եպիսկոպոս պատմաբան . 434 :
Նորբերդոս կզանտիացի . 504 :
Նորիս . 890 :
Նովատոս հերետիկոս . 118 :
Նովատիանոսեանք . 120 :
Նուռնէ կայս . 158 :
Շահակ կաթուղիկոս . 212 :
Շապուհ Ա. արքայ Պարսից . 125 , 158 , 181 :
Շապուհ Բ. արքայ Պարսից . 226 :
Շապուհ Երկայնակեաց . 249 :
Շապուհ որդի Յազկերտի արքայի Պարսից . 228 :
Շեշտա քահանայ . 899 :
Շիղա առաքեալ . 60 :
Շին սարկաւագ . 159 :
Շմաւոն ազգականն Փրկչին . 91 :
Շմաւոն եպիսկոպոս Տիզբոնի . 159 :
Շմաւոն զօրավար Հրէից . 72 :
Շմաւոն Կանանացի . 66 :
Շմաւոն Նախանձայոյզ . 66 :
Շմուէլ կաթուղիկոս . 253 :
Շուշան դուստր Վահանայ կամսարականի . 340 :
Շրջմոլիկ հերետիկոսք . 190 :
Ոգեգդոս Շաթլիլեան . 725 :
Ոգոստր . 245 .
Ոթոն արքեպիսկոպոս կանտուրբերիոյ . 414 :
Ոթոն եպիսկոպոս Փրիսինկայ . 447 . 511 :
Ոթոն Մեծն՝ կայսր Գերմանիոյ . 409 , 418 :
Ոնորիոս . 187 :
Ոնորիոս Ա. պապ . 321 :
Ոնորիոս Բ. պապ . 484 :
Ոնորիոս Գ. պապ . 531 :
Ոնորիոս Դ. պապ . 567 :
Ոսկան վարդապետ . 956 :
Ոսկեանք . 58 :
Ովսիոս . 164 :
Որմզդան վկայ . 228 :
Որմիզդ քահանայապետ . 281 :
Որոգինեանք . 137 :
Որոգինէս . 131 :
Ունիթոոսք կամ Միաբանողք . 604 :
[illegible] Մանիքեցիք . 137 :
Ուաստարդոս բենեդիկտեան . 395 :
Ուրբանոս Ա. պապ . 120 :
Ուրբանոս Բ. պապ . 449 :
Ուրբանոս Գ. պապ . 495 :
Ուրբանոս Դ. պապ . 554 :
Ուրբանոս Ե. պապ . 594 :
Ուրբանոս Զ. պապ . 596 :
Ուրբանոս Է. պապ . 774 :
Ուրբանոս Ը. պապ . 800 :
Ուրսիկինոս . 207 :
Ուրսուլեանք . 885 :
Չուանաւոր փրանկիսկեանք . 548 :
Պաղամեանք հերետիկոսք . 599 :
Պայլ . 880 :
Պապ արքայ Հայոց . 195 :
Պապիոս եպիսկոպոս . 141 :
Պաւթաջջոյի եպիսկոպոս . 99 :
Պասքաղէս Ա. պապ . 383 :
Պասքաղէս Բ. պապ . 450 :
Պատկերամարտից մոլորութիւն . 332 :
Պատրիարգութեան աթոռ՚ի Կոստանդնուպօլիս սկզբնաւորել . 637 :
Պատրիկիոս . 282 :
Պարագլուխ կամ Սրբագլուխ Սիկարեանք . 191 :
Պարիս սարկաւագ փարիզացի . 917 :
Պարոյր կամ Պրոյերեսիոս . 179 :
Պաւլինոս Նոլայեցի . 265 :
Պաւղիկեան հերետիկոսք . 135 , 325 , 354 :

Պաւղինոս. 114:
Պեղագեանք հերետիկոսք. 221:
Պեղագիոս Ա. պապ. 285:
Պեղագիոս Բ. պապ. 285:
Պետաւիոս. 887:
Պետրարքա. 591:
Պետրոնիոս Մաքսիմոս. 251:
Պետրոս Այիլլի. 653, 795:
Պետրոս անապատականն. 467:
Պետրոս առաքելապետ. 63:
Պետրոս Բարբէ արքեպիսկոպոս. 577:
Պետրոս Բրուիսեան. 487:
Պետրոս դամասկացի. 340:
Պետրոս Դամիանոս. 459:
Պետրոս Թափիչ. 237:
Պետրոս Լոմբարդացի. 511:
Պետրոս Ա. կաթուղիկոս Գետադարձ. 373, 457:
Պետրոս Բ. կաթուղիկոս. 947:
Պետրոս կաստելնովեցի եպիսկոպոս. 542:
Պետրոս Կոստանդինոս. 955:
Պետրոս մայրումացի. 341:
Պետրոս մարտիրոս. 727:
Պետրոս Մաւրիկիոս. 506:
Պետրոս Նողասկոս. 552:
Պետրոս Պարճէլլինի. 827:
Պետրոս Պերուճի. 883:
Պետրոս Պլոյեան. 511:
Պետրոս Վալդոս. 491:
Պետրոս Վիլլիեռ Լիլլադամ. 787:
Պետրոս Քարաֆֆա. 782:
Պետրոս Քերթող. 305:
Պերնոն բուրգունտացի. 419:
Պերուիկք դուքս. 903:
Պէնթիվօլիոյ կարդինալ. 805:
Պիղատոս դատաւոր. 41:
Պիպինոս արքայ Գաղղիոյ. 347:
Պիոս Ա. պապ. 105:
Պիոս Բ. պապ. 640:
Պիոս Գ. պապ. 660:
Պիոս Դ. պապ. 718:
Պիոս Ե. պապ. 769:
Պիոս Զ. պապ. 948:
Պիոս Է. պապ. 777-959:
Պիոս Ը. պապ. 1009:
Պիոս Թ. պապ. 1014:
Պղինիոս կրտսեր. 88:
Պղատինա. 654:
Պղաւտոս հռետոր. 227.
Պօլեսլաւ դուքս Պոհեմիոյ. 417.
Պողիկարպոս վկայ. 114:
Պողիկրատէս եպիսկոպոս Եփեսոսի. 65:
Պողէրրան միայնակեաց. 314:
Պոնա կարդինալ. 890:
Պոնտիանոս քահանայապետ. 113:
Պոնտիոս պատանին. 205:
Պոսիւէ արքեպիսկոպոս Մելդայ. 866, 890:
Պորճիա կարդինալ. 970:
Պուալոյ վարդապետ սորբոնեան. 913:
Պուրտալու. 883:
Պրակմատիկն իշխանապետ. 790:
Պրաքսիաս հերետիկոս. 135:
Պրիմոս վկայ. 127:
Պրիսկիլլիանեանք. 197:
Պրիսկիլլիանոս եպիսկոպոս. 197:
Պրիստոլ կոմս. 741:
Պրոկոպիոս պատրիարք Կոստանդնուպօլսոյ. 940:
Պրոկղ պատրիարք Կոստանդնուպօլսոյ. 234:
Պրոկոպիոս զօրագլուխ, հերետիկոս. 626:
Պրոտերէս Աղեքսանդրիոյ եպիսկոպոս. 265:
Պրոտասիոս. 64:
Պրուդենտիոս. 266:
Պօղոս առաքեալ. 63:
Պօղոս ակուիլէացի. 351:
Պօղոս Ա. կաթուղիկոս. 606:
Պօղոս Բ. կաթուղիկոս. 648:
Պօղոս Նարբոնայ եպիսկոպոս. 119:
Պօղոս Որոզիոս. 266:
Պօղոս Ա. պապ. 348:
Պօղոս Բ. պապ. 641, 645:
Պօղոս Գ. պապ. 712:
Պօղոս Դ. պապ. 717:
Պօղոս Ե. պապ. 797:
Պօղոս պատրիարք Կոստանդնուպօլսոյ. 312:
Պօղոս պատրիարք Կոստանդնուպօլսոյ (ուրիշ 'ի վերնոյն). 1011:
Պօղոս սամոսատացի. 126:
Պօղոս Սարփի. 798:
Պօղոս վանահայր. 341:
Ռաբանոս Մաւրոս արքեպիսկոպոս Մոգունդիոյ. 375, 395.
Ռադբերտոս Պասքասիոս միայնա-

կեաց . 380 ։
Ռամիէլ կալվինական . 903 ։
Ռաստէ զօրավար . 982 ։
Ռատրամնոս միայնակեաց ։ 381 ։
Ռաֆֆի փաստաբան . 738 ։
Ռեւէլ իշխան . 732 ։
Ռէց կարդինալ . 821 ։
Ռըշըլիէօ կարդինալ . 805 ։
Ռոբերտոս դուքս Լորենայ . 413 ։
Ռոգզաֆոգ կոմս . 732 ։
Ռոմանոս կայսր . 294 ։
Ռոմանոս կայսր Հայկազն . 421 ։
Ռոմանոս միայնակեաց . 294 ։
Ռոմանոս պապ . 387 ։
Ռոշֆուքոյ կարդինալ . 887 ։
Սա աստուածաբան . 815 ։
Սաբբաս հերետիկոս . 193 ։
Սաբելեանք . 135 ։
Սաբէլ հերետիկոս . 135 ։
Սաբինիանոս . 266 ։
Սաբինիանոս եպիսկոպոս . 127 ։
Սաբինիանոս քահանայապետ . 320 ։
Սադուկեցիք . 18 ։
Սաթոլետոս կարդինալ . 710 ։
Սալադին սուլթան Երուսաղեմի . 525 ։
Սալէզեանք . 884 ։
Սահակ ակնեցի . 947 ։
Սահակ արծրունի . 340 ։
Սահակ եպիսկոպոս Ռշտունեաց . 241 ։
Սահակ երէց ախլցխացի . 937 ։
Սահակ Ա. կաթուղիկոս, կամ Սահակ Պարթև . 225—252 ։
Սահակ Բ. կաթուղիկոս . 299 ։
Սահակ Գ. կաթուղիկոս . 324 ։
Սահակ Դ. կաթուղիկոս . 871 ։
Սահակ Ե. կաթուղիկոս . 936 ։
Սահակ պատրիարք Կոստանդնուպոլսոյ . 939 ։
Սահակ և Յովսէփ կարմնեցիք . 364 ։
Սահման Կոստանդեայ կայսր . 312 ։
Սամոնաս վկայ . 152 ։
Սամուէլ երէց անեցի . 513 ։
Սամուէլ ընկեր Ղևոնդեանց . 242 ։
Սամուէլ կաթուղիկոս . 255 ։
Սայլին վկայ . 228 ։
Սանատրուկ արքայ Հայոց . 57 ։
Սանդուխտ վկայուհի . 54 ։
Սանթաքրոչէ կարդինալ . 712 ։
Սանչէզ . 815 ։
Սավոնարոլա կրօնաւոր դոմինիկեան . 658 ։
Սատուռնինոս եպիսկոպոս . 119 ։
Սատուռնինոս հերետիկոս . 83 ։
Սարգիս աշակերտ Մայրագոմեցւոյն . 326 ։
Սարգիս առաջնորդ Սաղմոսավանից . 870 ։
Սարգիս եպիսկոպոս Երուսաղեմի . 603 ։
Սարգիս երէց . 460 ։
Սարգիս Ա. կաթուղիկոս . 432 ։
Սարգիս Բ. կաթուղիկոս . 450 ։
Սարգիս Գ. կաթուղիկոս . 773 ։
Սարգիս Շնորհալի . 513 ։
Սարգիս վարդապետ յԱպրակունեաց . 610 ։
Սարգիս վարդապետ Եւդոկիացի . 876 ։
Սարգիս վարդապետ Թէքիրտաղցի . 936 ։
Սարգիս վարդապետ ՚ի Հնձուց վանուց . 426 ։
Սարգիս Վ եառ . 464 ։
Սեբաստիանոս վկայ . 127 , 149 ։
Սեղբեստրոս Ա. պապ . 157 ։
Սեղբեստրոս Բ. պապ . 411 , 440 ։
Սերգիոս Ա. պապ . 322 ։
Սերգիոս Բ. պապ . 384 ։
Սերգիոս Գ. պապ . 407 ։
Սերգիոս Դ. պապ . 407 , 440 ։
Սերգիոս Պօղոս . 55 ։
Սերիպանդոս կարդինալ . 720 ։
Սերվետոս ուրացող . 711 ։
Սեւերինոս քահանայապետ . 321 ։
Սեւերոս եգիպտացի . 433 ։
Սէլիմ Բ. արքայ Օսմանեանց . 769 ։
Սէկիէ ատենադպիր . 820 ։
Սէնթա Անտրէ մարաջախտ . 729 ։
Սէռլէ փոխանորդ եպիսկոպոսի Փամիէռ քաղաքի . 836 ։
Սէր ի—ն Ադամայ նախնի քրիստոնէից . 81 ։
Սթաֆֆորտ իշխան . 854 ։
Սթարտավինոյ Փէրէֆիքս . 822 ։
Սթորշ . 815 ։
Սիդոնիոս Ապողինար . 266 ։
Սիկարեան հերետիկոսք . 190 ։
Սիկիբերտոս Կլէմբուր . 511 ։
Սիկիսմունդ արքայ . 618 ։
Սիղուերիոս քահանայապետ . 284 ։

Սիմէոն կոմս Մոնփորտեանց · 541 ։
Սիմէոն Մետափրաստէս · 433 ։
Սիմէոն միայնակեաց հայկազն · 427 ։
Սիմոն առաքեալ · 46 ։ 66
Սիմոն երևանեցի կաթուղիկոս · 936 ։
Սիմոն մոգ · 53 ։
Սիմպլիկիոս քահանայապետ · 245 ։
Սինեսիոս եպիսկոպոս · 263 ։
Սիմփորոզա սրբուհի · 96 ։
Սիոն կաթուղիկոս · 350 · 353 ։
Սիոն Ճգնաւոր · 425 ։
Սիսիննիոս քահանայապետ · 346 ։
Սիրմոնտոս մատենագիր · 887 ։
Սիւլէյման արքայ Օսմանեանց · 787 ։
Սիւմաքոս քահանայապետ · 246 ։
Սիւրիկիոս քահանայապետ · 207 ։
Սմբատ աղանդապետ Թոնդրակեցւոց · 372 ։
Սմբատ Բագրատունի · 365 ։
Սմբատ վարազտիրոցեան · 329 ։
Սոանէն եպիսկոպոս · 916 ։
Սոզոմենոս պատմագիր · 263 ։
Սոկինեանք աղանդաւորք · 879 ։
Սոկինոս · 760 ։
Սողոմոն կաթուղիկոս · 350 ։
Սոտէր պապ · 105 ։
Սոտադէս քերթող · 162 ։
Սոփիա դայեակ Լուսաւորչին · 128 ։
Սոփիա կին Յուստինիանոսի փոքու · 292 ։
Սոփրոնիոս միայնակեաց · 311 ։
Սոփրոնիոս պատրիարք Երուսաղեմի · 327 ։
Սուգերիոս աբբայ · 506 ։
Սուլպիկիոս Սեւերոս · 266 ։
Սուրհան կամ Դաւիթ դըւնեցի · 339 ։
Սուրմակ կաթուղիկոս · 253 ։
Սուքիասեանք վկայք · 91 ։
Սուքիաս վարդապետ Ագամալեան · 937 ։
Սուքիաս վարդապետ Սոմալեան · 1007 ։
Ստանիսլաւոս Ոզիոս կարդինալ · 720 ։
Ստեփաննոս առաջին սիւնեցի · 267 ։
Ստեփաննոս երկրորդ սիւնեցի · 351 ։
Ստեփաննոս եպիսկոպոս Սեբաստիոյ · 450 ։
Ստեփաննոս Թագաւոր Մաճառաց · 417 ։
Ստեփաննոս լեհացի · 956 ։
Ստեփաննոս Ա. կաթուղիկոս · 350 ։
Ստեփաննոս Բ. կաթուղիկոս · 430 ։
Ստեփաննոս Գ. կաթուղիկոս · 432 ։
Ստեփաննոս Դ. կաթուղիկոս · 561 ։
Ստեփաննոս Ե. կաթուղիկոս · 775 ։
Ստեփաննոս Զ. կաթուղիկոս · 777 ։
Ստեփաննոս կոն · 365 ։
Ստեփաննոս Մելքոնեան, աբբահայր Մխիթարեանց · 944 ։
Ստեփաննոս Նախավկայ · 30 ։
Ստեփաննոս ուռնեցի · 180 ։
Ստեփաննոս Ա. պապ · 124 ։
Ստեփաննոս Բ. պապ · 347 ։
Ստեփաննոս Գ. պապ · 348 ։
Ստեփաննոս Դ. պապ · 348 ։
Ստեփաննոս Ե. պապ · 387 ։
Ստեփաննոս Զ. պապ · 387 ։
Ստեփաննոս Է. պապ · 387 ։
Ստեփաննոս Ը. պապ · 409 ։
Ստեփաննոս Թ. պապ · 409 ։
Ստեփաննոս Ժ. պապ · 442 ։
Ստեփաննոս վանահայր Սանահնոյ · 341 ։
Ստեփաննոս վարդապետ Ըգոնց · 1000 ։
Ստեփաննոս վարդապետ տարօնացի Ասողիկ · 435 ։
Ստոք կարմեղական անգղիացի · 553 ։
Ստորք հերետիկոս · 762 ։
Սրբազան ատեան · 544 ։
Վաղդեան հերետիկոսք · 491 ։
Վահան գողթնացի · 339 ։
Վահան կաթուղիկոս · 431 ։
Վահան Մամիկոնեան · 255 ։
Վահրամ սպարապետ · 464 ։
Վահրամ վարդապետ, ատենադպիր Լեւոնի արքայի · 566 ։
Վահրիճ · 255 ։
Վաղենտիանոս կայսր · 177 ։
Վաղենտինեան հերետիկոսք · 132 ։
Վաղենտինոս պապ · 384 ։
Վաղէս կայսր · 212 ։
Վառվառէ կոյս · 113 ։
Վասակ մարզպան · 237–257 ։
Վասիլ կայսր հայկազն · 369 ։
Վազքէզ · 815 ։
Վարագայ խաչ · 319 ։
Վարդան Մամիկոնեան · 237–257 ։

Վարդան Յունանեան · 956 ։
Վարդան վարդապետ բարձրբերդցի · 565 ։
Վարդապետութիւն անարատ յղութեան սրբոյ կուսին · 607 ։
Վարդարան սրբոյ Կուսին · 547 ։
Վեսպասիանոս կայսր · 69 ։
Վերանիոն՝ կոմս · 181 ։
Վերացման խաչ · 309 ։
Վիգիլանտոս հերետիկոս · 264 ։
Վիգիլիոս քահանայապետ · 284 ։
Վիլալպանդ մատենագիր · 888 ։
Վիլառ մարաջախտ գաղղիացի · 903 ։
Վիկլէփեանք հերետիկոսք · 600 ։
Վիկլեֆ Յովհաննէս հերետիկոս · 600 ։
Վիկտոր Ամեդէոս · 863 ։
Վիկտոր ափրիկեցի · 179 ։
Վիկտոր եպիսկոպոս Տուռնոնի · 301 ։
Վիկտոր Ա. պապ · 105 , 120 , 165 ։
Վիկտոր Բ. պապ · 442 ։
Վիկտոր Գ. պապ · 449 ։
Վիկտոր Դ. հակապապ · 490 ։
Վինկենտիոս եպիսկոպոս Պոմէ քաղաքի 563 ։
Վինկենտիոս Լիւրինեան · 266 ։
Վինկենտիոս պաւղայեցի · 884 ։
Վինկենտիոս վկայ · 149 ։
Վիսքոնթի քաղաքապետ · 773 ·
Վիտալիանոս · 280 ։
Վիտալիանոս քահանայապետ · 322 ։
Վլատիմիր արքայ Ռուսաց · 390 ։
Վոլուսիանոս · 115 ։
Վոլսեան կարդինալ · 686 ։
Վոնիփակիոս անգղիացի · 346 ։
Վոնիփակիոս եպիսկոպոս Մոգունտիոյ · 350 ։
Վոնիփակիոս Ա. պապ · 244 ։
Վոնիփակիոս Բ. պապ · 225 , 284 ։
Վոնիփակիոս Գ. պապ · 321 ։
Վոնիփակիոս Դ. պապ · 321 ։
Վոնիփակիոս Ե. պապ · 321 ·
Վոնիփակիոս Զ. պապ · 387 ։
Վոնիփակիոս Է. պապ · 410 ։
Վոնիփակիոս Ը. պապ · 567 , 575 ։
Վոնիփակիոս Թ. պապ · 598 ։
Վուլկաթա , Թարգմանութիւն սուրբ գրոց · 264 ։
Վռամ արքայ Պարսից · 249 ։
Վռամշապուհ արքայ Հայոց · 228 ։
Վրթանէս որդի Լուսաւորչին · 210 ։
Վրթանէս վարդապետ · 300 ։
Վրթանէս վարդապետ Ասկերեան · 957 ։
Տաճարական ասպետք · 507 , 532 , 582 ։
Տանտըլըյ եղբայր Քոլէյնի զօրավարի · 711 ։
Տերտուղիանոս · 132 ։
Տեւտոնեան ասպետք · 509 ։
Տէլէյնի իշխան · 732 ։
Տէր Խորայէլ · 565 ։
Տիբերիոս կայսր · 6 , 69 ։
Տիլլեմոնտ մատենագիր · 891 ։
Տիմոթէոս առաքեալ · 70 ։
Տիմոթէոս պատրիարգ Կոստանդնուպօլսոյ · 280 ։
Տիտոս առաքեալ · 70 ։
Տիտոս Օաթէս յիսուսեան · 853 ։
Տիրատուր վարդապետ · 611 ։
Տիրինիոս · 888 ։
Տիւսէռ մարգարէ կալվինական · 901 ·
Տիւրանտ դատաւոր · 738 ։
Տիւփերոն · 741 ։
Տոռնոն կարդինալ · 703 , 727 ։
Տուրլուպինեանք հերետիկոսք · 599 ։
Տրաղաթ հուղկահար · 788 ։
Տրայիանոս կայսր · 65 ։
Տրդատ Թագաւոր Հայոց · 129–143 ։
Տրդատ Ա. կաթուղիկոս · 349 ։
Տրդատ Բ. կաթուղիկոս · 349 ։
Տրիփոն վկայ · 114 ։
Տրուղղեան կամ Հինդմէյեան ժողով · 315 ։
Տրոփիմոս եպիսկոպոս · 119 ։
Տօն մարմնոյ և արեան տեառն · 563 ։
Փաբիանոս քահանայապետ · 114 ։
Փաճի Անտոնիոս · 889 ։
Փառներսեհ կաթուղիկոս · 211 ։
Փասքալ մատենագիր · 815 ։
Փարիսեցիք և վարդապետութիւն նոցա · 5 , 18 ։
Փարութա · 760 ։
Փաւստինոս · 97 ։
Փաւստոս եպիսկոպոս · 224 ։
Փաւստոս Սոկինոս · 761 ։

Փաքքա կարդինալ · 978 ։
Փաքքինի Բենեդիկտոս · 955 ։
Փեթրարքա · 608 ։
Փելիքս դատաւոր · 60 ։
Փելիքս ուրկելացի, հերետիկոս · 344 ։
Փելիքս Ա. պապ · 121 ։
Փելիքս Բ. պապ · 201 ։
Փելիքս Գ. պապ · 225 ։
Փելիքս Դ. պապ · 284 ։
Փելիքս Ե. հակապապ · 626 ։
Փելիքս Վալոյեանց · 551 ։
Փելիքս քահանայ կարթագինեցի · 118 ։
Փեղիկկիանոս վկայ · 127 ։
Փեղիկկիսսիմոս · 118 ։
Փեստոս դատաւոր · 61 ։
Փերտինանտոս Գ. արքայ Սպանիոյ · 968 ։
Փէլլըթիէ Տէթուշ ։ 836 ։
Փիթէռ յիսուսեան · 855 ։
Փիլիպպոս առաքեալ · 65 ։
Փիլիպպոս Բ. արքայ Սպանիոյ · 751 ։
Փիլիպպոս Գեղեցիկ արքայ Գաղղիոյ · 508 ։
Փիլիպպոս կաթուղիկոս · 872 ։
Փիլիպպոս կայսր · 114 ։
Փիլիպպոս Ներեան · 768 · 783 ։
Փիլիպպոս որդի Հերովդի եդոմայեցւոյ · 5 ։
Փիլիպպոս սահմանապետ դքսութեանն Հասսիոյ · 680 ։
Փիլիպպոս Օգոստոս թագաւոր Գաղղիոյ · 477 ։
Փիլոն աղեքսանդրացի · 86 ։
Փիլոն տիրակացի · 328 ։
Փիլոստրատոս · 83 ։
Փիքոլթ քահանայ · 813 ։
Փլաբիանոս եպիսկոպոս · 195 ։
Փլաբիանոս պատրիարգ Կոստանդնուպօլսոյ · 234 ։
Փլորոս սարկաւագ եկեղեցւոյն Լուգդոնի · 395 ։
Փոլոյ կարդինալ · 746 ։
Փոխադրութիւն աթոռոյ քահանայապետացն յԱւենիոն · 582 ։
Փոտ պատրիարգ Կոստանդնուպօլսոյ · 368 ։
Փոտինոս եպիսկոպոս · 193 ։
Փորմոսոս պապ · 387 ։
Փորտունատոս · 118 ։
Փուլբերտոս եպիսկոպոս · 459 ։
Փուլգենտիոս աշակերտ սրբոյն Օգոստինոսի · 273 ։
Փուլգենտիոս · 224 ։
Փրանկիսկոս (կամ Ֆրանչիսկոս) աբբայ · 548 ։
Փրանկիսկոս Ա. արքայ Գաղղիոյ · 703 · 725 ։
Փրանկիսկոս Ա. կայսր Աւստրիոյ · 981 ։
Փրանկիսկոս Կիզեան · 737 ։
Փրանկիսկոս պաւլայեցի · 646 ։
Փրանկիսկոս սալեզացի · 884 ։
Փրանկիսկոս Քոլէթ եպիսկոպոս · 834 ։
Փրանկիսկոս Քսաւերեան · 784 ։
Փրանկփորտիոյ ժողով · 337 ։
Փրեդեգարիոս · 351 ։
Փրեդերիկոս դուքս Աւստրիոյ · 619 ։
Փրեդերիկոս Բ. կայսր Գերմանիոյ · 509, 527, 531, 535 ։
Փրեդերիկոս Բ. արքայ բրուսաց · 967 ։
Փրեդերիկոս կայսրընտիր Սաքսոնիոյ · 764 ։
Փրեդերիկոս Պարպառոսսա կայսր 475 ։
Փրուդեգարդոս միայնակեաց · 381 ։
Փրումենտիոս · 159 ։
Քամիզարտ կալվինականք · 900 ։
Քանովա անդրիագործ · 1003 ։
Քաջաջ սարկաւագ · 242 ։
Քասթոյ Անսալտի · 955 ։
Քեսնէլ վարդապետ · 897 ։
Քիլբերիկոս արքայ Գաղղիոյ · 247, 347 ։
Քիւթիւր Պետրոս վարդապետ · 935 ։
Քլոդիլտէ թագուհի · 247 ։
Քլովիս արքայ Գաղղիոյ · 247 ։
Քղորոս Կոստանդ, կայսր · 69 ։
Քոթլիէ · 891 ։
Քոլիյնի ծովակալ · 711, 729 ։
Քոլլատոն դատաւոր · 759 ։
Քոնտէ իշխանազն · 724, 729 ։
Քոշիա կարդինալ · 919 ։
Քունէ · 809 ։
Քորք ողորմութեան և սիրոյ · 886 ։
Քուաքէրք · 877 ։
Քսեստոս Ա. պապ · 121 ։
Քսեստոս Բ. պապ · 244 ։

Քսեստոս Գ. պապ. 244։
Քսեստոս Դ. պապ. 645։
Քսեստոս Ե. պապ. 772։
Քսիմենէս կարդինալ. 794։
Քրիստափոր Ա. կաթուղիկոս. 254։
Քրիստափոր Բ. կաթուղիկոս. 299։
Քրիստափոր Գ. կաթուղիկոս. 323։
Քրիստափոր պապ. 407։
Քրիսթեան. 755։
Քրոմուէլ իշխան. 851։
Օգոստինեանք. 550։
Օգոստինոս առաքեալ Անգղիացւոց. 297։
Օգոստինոս Կալմէթ. 955։
Օգոստինոս Մարլորատ. 727։
Օգոստինոս Մեծն եպիսկոպոս Հիպպոնայ. 264։
Օգոստոս կայսր. 1, 4։
Օգոստուղոս. 245։
Օլիվիէրի դատաւոր. 741։
Օլիէ. 884։
Օմար ամիրապետ Հագարացւոց. 318, 334։
Օշին թագաւոր Հայոց. 612։
Օպիւսսոն առաջնորդ ասպետաց սրբոյն Յովհաննու. 637։
Օսմաթ. 741։
Օտա Նախարար. 143։
Օրն կոմս. 752։
Օփփէտ դատաւոր. 710։
Ֆենելոն արքեպիսկոպոս Քամպրէյի. 866, 891։
Ֆէշ կարդինալ. 987։
Ֆէրֆէքս զօրավար. 851։
Ֆիլինցիոյ. 815։
Ֆլեշիէ եպիսկոպոս. 890։
Ֆլէօրի. 891։
Ֆրաթիչելլի հերետիկոսք. 699։

[illegible]
[illegible]
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ՎՐԻՊԱԿՔ ԻՆՉ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

ԵՋ.	ՏՈՂ.	ՍԽԱԼ.	ՈՒՂԻՂ.
68	5	յայպխի	յայսպխի
84	17	որդւոյ նոցա	որդւոյ նորա
89	14	բազմուէ	բազմուէ՟
99	23	՚ի սաատկութենէ	՚ի սաստկութենէ
128	20	զսուրբն , Գրիգոր	զսուրբն Գրիգոր ,
135	24	Սամոստացիս	Սամոստացի
141	30	Յոգւոյն սրբոյ	Հոգւոյն սրբոյ
178	32	Իեսիոդոս	Հեսիոդոս
183	3	ԹԵՈԹՈՍ	ԹԷՈԴՈՍ
218	5	յարքաայնիստ	յարքայանիստ
223	5	եօթներորրդ	եօթներորդ
243	19	բավանդակն	բովանդակն
247	32	արիացեալ էր զինուորաց	արիացեալ զինուորաց
248	31	կուսանեայ	կուսան
344	1	այսոկիկ	այսոքիկ
371	31	ջանահնար են ղեն	ջանահնար եղեն
377	40	Կարոլոս իբրև կամեցաւ արքայ	Կարոլոս արքայ իբրև կամեցաւ
423	12	Հունաց	Յունաց
458	26	եկաց ՚ի ՚ի հայրապետութե՟	եկաց ՚ի հայրապետութե՟
522	1	ժողով Հռոմկլայի Դ.	ժողով Հռոմկլայի Գ.
525	4	՚ի բարձուէ եաւ	՚ի բարձուէ
590	22	զլպատութ՟իս	զլպարտութ՟իս
606	33	հաւատ եմուտս	հաւատս եմուտ
632	6	ստիպել առ զՅոյնս ՚ի	ստիպել զՅոյնս առ ՚ի
656	23	որդել	յորդել
701	5	քաղցրութե՟	քաղցրութէ՟
721	34	յանցանք	յանցանաց
830	18	Իննովկենտիոս Թ.	Իննովկենտիոս Ժ.
834	21	պիսկոպոս	եպիսկոպոս
850	21	յանզնուականաց	յազնուականաց
858	9	Ճախացուցանէր	Ճոխացուցանէր
956	28	յորժ	յոյժ

4: 29